Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАСИКИ

АЛЕКСЕЙ ТОЛСТОЙ

ПЕТР ПЕРВЫЙ

РОМАН

ПЕРЕВОД И ПРИМЕЧАНИЯ
АРМЕНА ОГАНЕСЯНА

ЕРЕВАН
«СОВЕТАКАН ГРОХ» 1987

ԱԼԵՔՍԵՅ ՏՈԼՍՏՈՅ

ՊԵՏՐ ԱՌԱՋԻՆ

ՎԵՊ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ
«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» 1987

ԳՄԴ 84Ռ7—4
Տ 800

Տոլստոյ, Ալ.
Տ 800 Պյոտր Առաջին: Վեպ: Ալեքսեյ Տոլստոյ (թարգմ. ծանոթ. Ա. Հովհաննիսյանը— Եր.: Սովետ. գրող, 1987.— 720 էջ— (Ռուս դաս. գ-բան)

«Պյոտր Առաջին» վեպը, որի վրա հեղինակը աշխատել է 16 տարի, մի էպոպեա է Ռուսաստանի, ռուս ժողովրդի ճակատագրի մասին՝ նրա զարգացման բեկումնային շրջաններից մեկում: 1941 թ. «Պյոտր Առաջին» վեպի համար Ա. Ն. Տոլստոյին շնորհվել է ՍՍՀՄ պետական մրցանակ:

Տ $\frac{4702010100\ (179)}{705\ (01)\ 87}$ 87 «Տ»

ԳՄԴ 84Ռ7—4

© А. Толстой, Собр. соч., в 10-и томах, т. VII, Москва. «Худ. лит.» 1984.

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1987

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1.

Սանկան ցած թռավ վառարանից. հետույքով խփեց ներսի տաքությունից ուռած դռանը: Նրա ետևից արագ-արագ իջան Ցաշկան, Գավրիլկան ու Արտամոշկան՝ հանկարծ բոլորն ուզեցին ջուր խմել, ընկան խավար հաշտը, ծուխ ու գոլորշու քուլաներ բերելով գաղջահոտ խրճիթից: Պատուհանից, ձյան արանքներից աղոտ երկնագույն լույս էր թափանցում: Ցուրտ էր: Ջրի տակառը սառույց էր բռնել, փայտյա շերեփը՝ սառցակալել:

Երեխաները ոտքից ոտք էին ցատկոտում հաշտում՝ բոլորն էլ բոբիկ էին, Սանկան գլխաշորով էր, Գավրիլկան ու Արտամոշկան մեկտակ, պորտահատ շապկով:

— Դո՜ւռը, խելառ անտերներ, — ներսից բղավեց մայրը:

Նա կանգնած էր վառարանի մոտ: Հնոցատակին դրված մարխերը վառվեցին: Մոր կնճռապատ դեմքը լուսավորվեց: Ամենասարսափելին պատռված ճակատկապի տակից փայլփլող աչքերն էին՝ արցունքից ցամաքած, սրբապատկերի պես: Անորոշ վախից Սանկան ամբողջ ուժով շրխկացրեց դուռը: Հետո հոտ բռնած ջուր առավ շերեփով, խմեց, սառույցը կոտրեց ատամով, ջուր տվեց եղբայրներին: Կամացուկ ասաց.

— Սառեցի՞ք: Վազ տանք բակ, նայենք՝ հայրիկը ձիև է լծում...

Հայրը բակում սահնակն էր լծում: Հանդարտ ձյուն էր իջնում, երկինքը ձնաբեր էր, բարձր ցցապատի վրա ագռավներ էին թառել, ու հաշտի պես ցուրտ չէր այստեղ: Հայրը կոնաձև գդակը քաշել էր խոժոռված հոնքերին: Մայրը Իվան Արտեմիչ էր ասում նրան, գյուղացիք՝ Իվաշկա, գեղամիջում ինքն էլ էր իրեն այդպես կոչում, ազգանունը Բրովկին էր: Շեկ մորուքը Աստվածածնի տոնից սանրի երես չէր տեսել: Փորի տակից քուղով կապած կոշտ մաճուդե կափտանի տակից ցցվել էին թաթմանները, տրեխները չարացած ճզճզում էին թրիքախառն ձյան վրա, լծելը դժվար էր... Փտած էր լծասարքը, գունդ ու կապ էր լրիվ: Հայրը բարկությունից գոռում էր պավուկ ձիու վրա, որն իր նման կարճոտն էր, փորը ուռած.

— Հանգի՜ստ, սատանի ծնունդ...

Երեխաները մուտքի առաջ կարճ պետքները հոգացին ու կծկվել էին սառցակալած շեմին, չնայած ցրտից սառել էին: Ամենափոքրը՝ Արտամոշկան, հազիվհազ ասաց.

— Բան չկա, ներսը կտաքանանք...

Իվան Արտեմիչը լծեց ձին ու ջուր տվեց փայտյա դույլով: Ձին երկար խմեց, ուռեցնելով փոչոտ կողերը՝ «Կուշտ փորով կեր չեք տալիս, գոնե ուզածիս չափ խմեմ» ...Հայրը հագավ թաթմանները, սահնակի վրայից, ծղոտի տակերից մտրակը վերցրեց:

— Կորեք տուն, ես ձեր, — բղավեց երեխաների վրա: Կողքով ընկավ սահնակին և, դարպասից ելնելով, վարգասահ գնաց բարձր եղևնիների կողքով, դեպի ազնվական Վոլկովի տղայի կալվածատունը:

— Էս ինչ ցուրտ է, — ասաց Սանկան:

Երեխաներն իրենց գցեցին մութ խրճիթը, ելան վառարանի վրա՝ ատամ ատամի զարկելով: Սևացած առաստաղի տակ չոր ու տաք ծուխ էր գնդվում, քշվելով դռան վերևի ծխանցքի կողմը՝ վառարանն անձնվեիրություն էր: Մայրը խմոր էր հունցում: Համենայն դեպս, ուներ տուն էր՝ ձի, կով, չորս աքլոր: Իվաշկա Բրովկինի մասին ասում էին, թե պինդ մարդ է: Մարխի ածխիկները մարխատակից թշշալով ընկնում էին ջրի մեջ: Սանկան իր ու եղբայրների վրա քաշեց ոչխարենու քուրքը և սկսեց քուրքի տակ շշնջալ զանազան վախենալի բաներից՝ թե գիշերներն ովքեր են խշխշացնում հատակի տակ, ոչուփուչ լինեն դրանք...

— Մի քիչ առաջ հո չվախեցա՜, աչքս դուրս գա, թե սուտ եմ ասում... Դռան շեմին աղբն էր, աղբի վրա՝ ավելը... Վերևից նայեմ, ի՜նչ տեսնեմ, խաչը մեզ օգնական: Ավելի տակից՝ փոչոտ, կատվի բեխերով...

— Ո՜ղ, օ՜ղ, օ՜ղ, — քուրքի տակ վախեցան փոքրերը:

2.

Թեթևակի տափանված ճանապարհն անտառով էր անցնում: Դարավոր կեչիները ծածկել էին երկինքը: Հողմակործան ծառեր, թավուտներ՝ դժվարանցանելի տեղեր էին: Նախանցյալ տարի այս հողերը շնորհվել էին Վոլկովի տղա Վասիլիին, պետական ծառայության մեջ գտնվող մոսկովյան ազնվական հորից բաժանվելիս: Կալվածատիրի վարչատունը Վասիլիին էր հատկացրել չորս հարյուր հիսուն դեսյատին, հողին կից երեսունչորս շունչ գյուղացի՝ ընտանիքներով:

Վասիլին դաստակերտ էր շինել, սակայն փողը ծախսել, ստիպված հողի կեսը գրավ էր տվել մենապատանին: Վանականները խոշոր վաշխով էին փող տալիս՝ ռուբլուն քսան կոպեկ: Ըստ կարգի, թագավորական ծառայության մեջ էլ պիտի լիներ՝ իր կարգին ձիով, զրահով, թուր ու հրացանով, հետն էլ երեք գյուղացի ուզմիկ՝ էլի ձիերով, կարճաթև ու բարձրօձիք կաֆտաններով, թրերով, աղեղ-կապարճով... Մենաստանի փողերով հագիվհազ գենք ու հանդերձ ձեռք բերեց: Հապա իր ապրո՞ւստը: Հապա աղխը կերակրե՞լը: Հապա վանականների վաշխը վճարե՞լը:

Ցարի գանձատունը՝ անխնա, տարին մեկ նոր նակազ, նոր փոդեր՝ սենդի տուրք, ճամփի տուրք, հարկ ու բահրա: Տակն ի՞նչ պիտի մնա: Բոլորը կալվածատիրոջից են ուզում՝ հարկն, իբր, լավ չես քամում: Մի տակ կաշուց ավելի ի՞նչ պիտի մաշկես մուժիկից: Հանգուցյալ ցարի՝ Ալեքսեյ Միխայլովիչի օրոք պետությունն աղքատացավ պատերազմներից, խառնակություններից ու խռովություններից: Հենց անիծյալ գող Ստենկա Ռազինը ոտատակ տվեց երկիրը, գյուղացիներն աստծուն մոռացան: Մի քիչ սեղմեցիր թե չէ, գայլի պես ատամները կբացեն: Կարիքից փախչում են Դոն՝ այնտեղից ոչ գրով, ոչ էլ թրով ետ բերել չի լինում:

Ձին քարշ էր գալիս թեթև վարգով, ամբողջովին եղյամով ծածկված: Ծյուղերը քսվում էին աղեղին, ձնափոշի էր թափվում: Բներին կպած, անցվորներին էին նայում փարթամապոչ սկյուռները՝ անտառը լիքը սկյուռ էր: Իվան Արտեմիչը, սահնակի մեջ թիկն տված, մտմտում էր. մենակ մի բան է մնացել մուժիկին՝ միտք անել...

«Ասենք, լա՜վ... Էս տուր, էն տուր... Մեկին փող տուր, մեկելին տուր... Տերություն հո չի, անտակ հոր է՝ լցնե՞լ կլինի: Գործից փախս չենք, անում ենք: Մոսկվայում էլ բոյարները սկսել են ոսկե կառքերով մաս գալ: Ուրեմն, կառքի փողն էլ տուր էդ կուշտուկուռ ատամին: Է, լա՜վ... ինչ քեզ պետք է, ստիպողական վերցրու, բայց համը մի հանի... Տղերքիս ասեմ, երկու տակ կաշի քերթելն արդեն համը հանել է: Ինչքա՞ն են շատացել պետության մարդիկ, թքես կընկնի մի ատենավորի, կամ պաշտոնավորի, պաշտոնավորի օգնականի վրա՝ նստած գրո՞ւմ են... Մուժիկն էլ՝ մեն-մենակ... Էհ, տղերք, ավելի լավ է, գլուխդ առնես փախչես, անտառում գել ու գազանի բաժին դառնաս, սատկես պրծնես, քան դիմանաս... Էսպես մեր տվածով դուք երկար չեք դիմանա...»:

Իվաշկա Բրովկինը գուցե այսպես էր մտածում, գուցեև՝ ոչ: Անտառից ճամփա ելավ սահնակի մեջ ծնկած Գնչուն (մականունն էր), դարձյալ վոլկովյան գյուղացիներից էր, թխամաշկ, մազերը տեղ-տեղ սպիտակած մի մարդ: Տասնհինգ տարի փախստական էր, թափառում էր գյուղից գյուղ: Բայց հրաման եղավ՝ բոլոր փախստականներին վերադարձնել կալվածատերերին, առանց վաղեմության ժամկետի: Գնչուին բռնել էին Վորոնեժի մոտերքում, ուր հողագործություն էր անում, ետ տվել Վոլկով-ավագին: Նորից էր փորձել ծլկել, բռնել էին ու հրաման տվել մտրակով անխնա ծեծել ու բանտ գցել՝ հենց Վոլկովի կալվածատանը. մաշկը լավանալուց հետո բանտից հանել ու նորից անխնա մտրակահար անել, որ փախչելը մտքից հանի գող խաբեբան: Գնչուն գլուխն ազատել էր նրանով, որ Վասիլիի ամառանոցն էին ուղարկել:

— Բարաջողում, — ասաց Իվանին ու նրա սահնակը նստեց:
— Բարաջողում:
— Բան-ման չե՞ս լսել:
— Լավ բան կարծեմ թե չկա...
Գնչուն հանեց թաթմանը, բեղ-մորուքը սղալեց՝ դեմքի խորամանկությունը թաքցնելով.
— Անտառում մեկին տեսա, ասեց, թե ցարը մեռնելու վրա է:
Իվան Արտեմիչը բարձրացավ տեղից: Վախ իջավ վրան... «Փը՞ռռռ»... Գդակը հանեց, խաչակնքեց.
— Հիմի ո՞ւմ են տեղը դնելու:
— Ասեց, թե փոքրից՝ Պյոտր Ալեքսեևիչից բացի, ուրիշը չկա: Նա էլ ծծից նոր կտրած...
— Է՜, տղա: — Իվանը գդակը դրեց, աչքերն անշարժացան:— Է՜, տղա... Հիմի բոյարներն են թագավորելու: Կորանք բոլորով...
— Կամ կկորենք, կամ էլ՝ չէ, Էդպե՞ս է:— Գնչուն կիպ մոտեցավ: Աչքով արեց:— Էն մարդն ասեց՝ խառնակություն է լինելու... Կարող է որ կյանք անենք, կուշտ փորով հաց ուտենք, գլխներովս ինչքա՞ն բան է անցել:— Գնչուն մերկացրեց իր չարքի ատամներն ու ծիծաղեց, հազաց անտառով մեկ:
Սկյուռը պոկվեց բնից, թռավ ճամփի վրայով, ձյուն թափվեց, շեղ լույսի տակ պպզաց ձնափոշու պյունը: Մորեգույն խոշոր արեգակը կախվել էր ճամփի պռնկին, թմբի վրա, վոլկովյան դաստակերտի բարձր ցանկապատից, թեք տանիքներից ու ծխերից վեր...

3.

Իվաշկան ու Գնչուն ձիերը թողեցին բարձրակամար դարպասի մոտ: Դարպասի վրա, երկթեքված տանիքի տակ տիրոջ սուրբ խաչի պատկերն էր: Ամբողջ դաստակերտի բոլորքով անանցանելի ցանկապատն էր: Թաթարների հարձակմանն էլ կդիմանար... Գդակները հանեցին: Իվաշկան բռնեց դարպասաթակը, ընդունված կարգով ասաց.
— Տեր Հիսուս Քրիստոս, ողորմա մեզ...
Տրեխները ճոճոացնելով տնակից ելավ պահակ Ավերյանը, ճեղքից նայեց, ճանաչեց: Ասաց՝ ամեն, դարպասը բացեց:
Մուժիկները ձիերը ներս արեցին: Գլխաբաց կանգնել, բոյարական խրճիթի փայլարապատ լուսամուտներին էին նայում խեթ-խեթ: Թեք սանդուղքով առմուտքը տանում էր ներսի սենյակները: Նախաշավարդ փայտից էր առմուտքը՝ գեղեցիկ, տանիքը տխաձև: Առմուտքից վեր վրանաշար կղմինդրն էր, երկու կիսաղեղներով, ռոկեզօծ երկայնակի կատարով: Խրճիթի ներքևի նկուղները հաստաբետոն գերանակապ էին: Վասիլի Վոլկովը դրանք սարքել էր ձմռան ու ամռան պաշարների համար՝ հաց, աղ դրած միս, զանազան թրթվեղեն: Սակայն մուժիկները գիտեին, որ նկուղներում միայն մրկներն են վազվզում: Իսկ առմուտքին իշխանն էլ կնախանձեր՝ հարուստի մուտք էր...
— Ավերյան, բոյարինն ինչի՞ համար է մեզ ձիերով կանչել, չլինի՞ նոր պարհակից-բանից կա...— հարցրեց Իվաշկան:— Ոնց որ թե պարտք-մարտք չունենք...
— Զորական մարդկանց եք Մոսկվա տանելու...
— Էլի ձիերի հերն անիծելո՞ւ ենք...
— Ի՞նչ են խոսում,— առաջ գալով, հարցրեց Գնչուն,—կոի՞վ ունենք մեկի հետ: Խառնակությո՞ւն կա:
— Ոչ քո խելքի բանն է, ոչ իմ:— Ալեհեր Ավերյանը գլուխ տվեց:— Հրաման կա՝ պիտի տանես: Էսօր մի սել բիր ու ճիպոտ են բերել ձեր նմանների համար...
Ավերյանը, ոտքերը չծալելով, գնաց իր տնակը: Զմռան մթնշաղի մեջ մի լուսամուտ փայլփլեց: Բակում ինչ տեսակ շինություն ասես կար՝ գոմեր, նկուղներ, տնակներ, դարբնոց: Կեսը՝ պարապ մնացած: Վոլկովն ընդամենը տասնհինգ շունչ ճորտ ծառա ուներ, որոնք էլ ցամաք հացով մի կերպ ապրում էին: Խոսք չկա, աշխատում էին, ձեռի հետ վարուցանք անում, անտառ կտրում ու տեղափոխում, բայց դրանով ապրե՞լ կլինի: Ճորտի աշխատանք: Ասում էին՝ իբր Վասիլին դրանցից մեկին Մոսկվա է ուղարկում, եկեղեցիների առաջ կրոնախևություն անելու, ու սա փող է բերում: Երկու ուրիշ ճորտ, արկղները վզները գցած, էլի Մոսկվայում գդալ ու տրեխ, սուդիչ-բան էին ծախում... Ինչ էլ լինի, հիմքը մուժիկներն են: Կերակրողը նրանք են...
Իվաշկան ու Գնչուն, մթնշաղի մեջ բակում կանգնած, մտածում էին: Շտապելու տեղ չունեին: Սպասելիք լավ բան էլ չունեին ոչ մի տեղից: Իհարկե, ծերերը պատմում են, թե առաջ ավելի հեշտ էր՝ թե սրտովդ չէր լինում, գնում էիր ուրիշ կալվածատիրոջ մոտ: Հիմա արգելված է՝ ուր հրամայել են, էնտեղ էլ մնա: Հրամայել են կերակրել Վասիլի Վոլկովին՝ ինչ ուզում ես արա, կերակրիր: Բոլորը ճորտ են դարձել: Ու սպասում են, որ ավելի է վատանալու...
Մի դուռ ճռռաց, ձյան միջով վազելվազ եկավ գլխաբաց մի աղջիկ-ծառա՝ ամոթ չկար երեսին.
— Բոյարինը հրաման տվեց ձիերն արձակեք: Հրաման տվեց գիշերն էստեղ մնաք: Աստված չանի, բոյարինի խոտից տաք ձիերին...
Գնչուն ուզեց մտրակով մի լավ շրմփացնել աղջկա կլորիկ հետույքին, բայց նա փափավ-գնաց... Անշտապ արձակեց ձիերը: Գնացին ծառաների խրճիթը՝ գիշերելու: Մի ութ ծառա, բոյարից գողացած ճարպամոմի լույսի տակ, ճարպոտած խաղաթղթերը շփշփացնում էին սեղանին՝ իրարից կոպեկներ տանելով... Գոռգոռոց, կռիվ, մեկն ուզում էր փողը թշի տակ պահել, մյուսը մատով շրթունքն էր պատռում: Անքան-անգործ մարդիկ, բայց արի ու տես, որ կուշտ էին:
Կողմ քաշված, թախտին նստած էր կտավե երկար շապիկը հագ-

գին, պատռված տրեխներով մի տղա՝ Ալյոշկան էր, Իվան Արտեմիչի տղան: Աչքերը ստիպված էր սովի պատճառով, ապառքի դիմաց տալ նրան՝ ցմահ ճորտության: Մոր պես մեծաչափ տղա էր: Մազափնջից երևում էր, որ ծեծ է ուտում այստեղ: Իվանն աչքը գցեց որդու վրա, խղճաց, բան չասաց: Ալյոշկան լուռ, խոր գլուխ խոնարհեց հորը:

Մատով մոտ կանչեց որդուն, շշնջալով հարցրեց.

— Բան կերե՞լ եք:

— Կերել ենք:

— Էհ, տնից հաց չվերցրի հետս: (Խաբեց՝ կտավի մեջ փաթաթած մի կտոր հաց ուներ ծոցում:) Գլխիդ ճարը տես էստեղ... Լսի, ասեմ, Ալյոշա... Ուզում եմ առավոտը տիրոջ ոտն ընկնեմ, գործերս շատ են: Վայ թե խղճա, իմ տեղը դու գնաս Մոսկվա:

Ալյոշկան գլխով արեց ծանրումեծ. «Լավ, հայրիկ»: Իվանն սկսեց տրեխների կապերն արձակել, ու զվարթ շուտասելուկով, կարծես կուշտ էր և ուրախ, վրա բերեց.

— Էս ի՞նչ է, տղերք, ամեն օ՞ր եք էսպես ուրախանում: Էհ, լավ եք ապրում, տեղը տեղին...

Թինկեղ մի ծառա, խաղաթղթերը գցելով, շուտ եկավ.

— Էդ դո՞ւ ով եղար, որ մեզ էլ բան ես ասում...

Իվանը, չսպասելով մինչև հասցնեն վզակոթին, եղավ վերնախտի վրա:

4.

Վասիլի Վոլկովի մոտ գիշերելու մնաց հյուրը՝ հարևան Միխայլա Տրյոտովը, մանրակավաճառ մի ազնվականի որդի: Վաղ ընթրեցին: Զնարակած վառարանի մոտ, լայն օթոցների վրա թաղիքներ էին փռված, բարձեր, պոչի մորթիներ: Ջահել էին՝ քունները չէր տանում: Շոգ էր: Նստած էին մեկտակ սպիտակեղենով: Զրուցում էին կիսախավարի մեջ, հորանջում՝ բերանները խաչակնքելով:

— Քեզ դեռ շատերն են նախանձում, Վասիլի,— ասում էր հյուրը ծանրումեծ և ցածրաձայն:— Բայց քեզ իմ տեղը դիր: Տասնչորս երեխա ենք: Յոթը հորից բաժանվել, չարչարվում են անպետք հողերի վրա, մեկն երկու շունչ մուժիկ ունի, մյուսը՝ երեք, մնացածը փափաստական են: Ութերորդը ես եմ, նոր-նոր ծառայության եմ մտել, վաղը հող են տալու: Կրակ բռնած մի գյուղ կտան, գորտ ու ճահիճ մի տեղ... Ո՞նց ապրեմ: Հը՞:

— Հիմա ամենքի համար էլ դժվար է,— Վասիլին մի ձեռքով գցում էր նոճենու տերողորմյան, կախ արած ծնկների արանքը:— Ամենքս էլ չարչարվում ենք... Ո՞նց ապրենք...

— Պապս Գոլիցինից էլ բարձր տեղ էր,— ասաց Տրյոտովը,— Միխաիլ Ֆյոդորովիչի դագաղի մոտ օրուգիշեր նստած էր: Իսկ մենք տանը տրեխներով ենք մաշ գալիս... Ամոթին սովորել ենք: Ոչ թե

պատվի մասին ենք մտածում, այլ՝ թե ոնց ողջ մնանք... Կալվածատիրոջ վարչատանը հայրիկը ճակատը գետին տալով մեռավ. հիմա առանց կարգին կաշառքի ի՞նչ պիտի խնդրես: Ատենավորին՝ տուր, դրա օգնականին՝ տուր, փոքրավորին՝ տուր: Ու չեն էլ վերցնում, բերանները են ծռմռում... Մի փոքր գործով գնացել էինք օգնականի՝ Ստյոպկա Ռեմեզովի դուռը, կաշառքը տվել էինք՝ տասը ալտին, էն էլ հազիվհազ էինք հավաքել, ու մի փութ չորացրած ծածան: Փողն առել էր անկշռում հարբեցողը, հրամայել էր ձուկը դուրս շպրտել... Ով ճարպիկ է, մի բանի հասնում է... Վոլոդյա Զեմոդանովը խնդրագրով հասել էր ցարին, երկու գյուղ ցմահ իրեն տվեցին: Վոլոդյան էլ՝ ով չգիտի, լեհերի հետ վերջին պատերազմին գլխապատառ փախել էր կռվի դաշտից, հերն էլ էր Սմոլենսկի տակ երեք անգամ փախել... Ու փոխանակ դրանց գրկեն հողաբաժնից, հանեն շպրտեն կալվածքներից, գյուղ են տալիս... Արդարություն չկա...

Լռեցին: Վառարանից տաքություն էր փչում: Զոր նոճոում էին ծղրիդները: Լուռ էր, տրտմալի: Նույնիսկ շները դադարել էին հաչել դրսում: Վոլկովը մտազբաղ ասաց.

— Մի թագավոր լիներ, մեզ ծառայության վերցներ՝ Վենետիկ, կամ էլ Հռոմ, կամ էլ Վիեննա... Առանց ետ նայելու կգնայի... Վասիլի Վասիլևիչ Գոլիցինը կնքահորս մի գիրք էր տվել, վերցրեցի կարդացի... Բոլոր ազգերը հարստության, լիության մեջ ապրում են, մենակ մենք ենք աղքատ... Վերջերս Մոսկվայում էի, գինագործ էի մաս գալիս, ինձ ուղարկեցին Կուկույ-ավան, գերմանացիների մոտ... Ինչ անենք, որ ուղղափառ չեն՝ ասված նրանց դատավոր... Պարիսպն անցա, թե չէ՝ փողոցներն ավլած, տները մաքուր, ուրախ, տների առաջ՝ ծաղիկներ... Գնում ու մի տեսակ վախենում էի, ու զարմանք բան էր՝ կարծես երազում լինեի... Մարդիկ ժպտերես, բայց հենց մեր կողքին են ապրում, չէ՞: Ու ի՞նչ հարստություն: Մենակ Կուկույը ավելի հարուստ է Մոսկվայից, կողքի գյուղերն էլ հաշված...

— Առևտրով թե զբաղվեմ, էլի փող է պետք:— Միխայլան նայեց բոբիկ ոտքերին:— Գնամ դառնամ ստրելե՞ց: Դա էլ մի եկամուտ բերող գործ չի: Մինչև դառնաս հարյուրապետ, հոգիդ կհանեն: Օրերս Դանիլո Մենշիկովն էր եկել հորս մոտ, ցարական ախոռի ձիապաններից է, պատմում էր, թե գանձատունը երկուսուկես տարվա ոռճիկ է պարտք ստրելեցների գնդերին: Զեն հանողին էլ բռնում, գցում են բանտը: Գնդապետ Պիժովը ստրելեցներին քշում է Մոսկվայի մոտերքի իր պապական կալվածքները, ճորտի տեղ բանացնում... Գնացել են գանձատի, մեծավորի տան առաջ գանձատավորներին մտրակի են քաշել: Է՛հ, ստրելեցները չարացած են... Մենշիկովն ասել էր, թե սպասեք, դրանք ցույց կտան...

— Լսել եմ, ասում են, թե ով բոլարի մուշտակ ունի հագին, Մոսկվա գետից դենը վախենում է անցնի:

— Հապա ի՞նչ ես ուզում: Բոլորը դարձել են չքավոր... Տուրք ու հարկից էնքան են տուժել, որ թող ու փախի... Մենշիկովը պատ-

մել է, թե օտարերկրացիք առևտուր են անում Արիսանգելսկում, Խոլմոգորում քարե տներ են շինել: Արտասահմանում մի ռուբլով առնում, բերում էստեղ, երեքով են ծախում... Մեր վաճառականներն էլ ագահությունից ապրանքը փտեցնում են: Պոպոդի մարդիկ անխիղճ հարկերից թողել փախել են՝ որը գավառները, որը՝ տափաստան: Սկսել են սառցածակի հարկ էլ առնել, գետի մեջ ծակ բացեցիր՝ առ՛ր... Բայց ո՞ւր է գնում փողը: Մենշիկովը պատմել է, թե Վասիլի Վասիլևիչ Գոլիցինը Նեգլինենայա գետի մոտ պալատներ է սարքել: Դրսից պղնձի թերթերով է պատված, ներսից՝ ոսկու կաշվով...

Վասիլին գլուխը բարձրացրեց, նայեց Միխայլային: Սա ոտքերը մտցրեց օթոցի տակ ու նույնպես նայեց Վասիլիին: Քիչ առաջ հանգիստ նստած էր, կարծես ուրիշ մարդ դարձավ՝ քթի տակ ծիծաղեց, ոտքը խաղացրեց, թախտը ճռնվեց նրանց տակ...

— Քեզ ի՞նչ եղավ,— ցածրաձայն հարցրեց Վասիլին...

— Անցած շաբաթ Վորոբյովո գյուղի մոտ էլի սելեր են թալանել: Մահուդի վաճառականները լավ ապրանք են տանելիս եղել... Ուզել են միջով Մոսկվա հասնել, որ ընթրիքը տանն անեն, տեղ չեն հասել... Մի վաճառական է ողջ մնացել, իմաց է տվել: Ընկել են ավազակների ետևից, մենակ հետքերն են գտել, էն էլ ձյունը սրբել, տարել է...

Միխայլայի ուսերը ցնցվեցին ծիծաղից.

— Մի վախենա, էնտեղ չեմ եղել, Մենշիկովից եմ լսել... (Նա թեքվեց Վասիլիի կողմը:) Ասում են, թե հետքերն ուղիղ բերել են Վարվառկա, Ստյոպկա Օդոևսկու կալվածքը... Իշխան Օդոևսկու փոքր տղի... իմ ու քո տարիքին է...

— Պառկենք, քնենք, ժամանակն է,— մոայլված ասաց Վասիլին:

Միխայլան նորից անուրախ ծիծաղեց.

— Լավ, կատակ արեցինք, արի քնենք:

Թեթև վեր ելավ թախտից, ձգմգվեց ու հոդերը ջարդջրդեց: Կվառ լցրեց փայտյա գավի մեջ ու խմում էր, գավի պռնկի վրայից Վասիլիին նայելով:

— Ստյոպկա Օդոևսկին քսանհինգ շունչ ճորտ ունի, թուր ու հրացանով զինված... Գլխից ձեռ վերցրած մարդիկ են... Սովորեցրել է՝ մի տարուց ավել ուտելու բան չի տվել, մենակ գիշերներն է բաց թողել, որ գլխների ճարը տեսնեն... Գելի պես են...

Միխայլան պառկեց, արջի քուրքը քաշեց վրան, ձեռքը դրեց գլխատակը, աչքերը փակում էին.

— Սառածներիկ մասին գնալու ես մատնե՞ս:

Վասիլին կախ արեց տերողորմյան, լուռ պառկեց, երեսն արած սոճենու հարթ պատին, որից խեժ էր ծորացել: Բավական ժամանակ անց պատասխանեց.

— Չէ, չեմ մատնի:

Հողապատնեշի դարպասից այն կողմ դարուփոս ճանապարհը պտույտ տվեց փողոցներով, բարձր ու նեղ, երկշար ու գերանակապ խրճիթների մոտով: Ամենուրեք մոխրակույտեր էին, լեշ ու ջարդված ամանեներ, լաթուլաթ՝ ամեն ինչ փողոց էին շպրտում:

Երասանները բռնած Ալյոշկան քալում էր սահնակի կողքով, որի մեջ երեք ճորտ էին նստած՝ խծուծով լցված զինվորական բամբակյա գդակներով, մգդակած, թաղիքե անթևք ու բարձրօձիք հաստ կաֆտանեներով՝ տեգիլեյ են ասում դրանց: Վասիլի Վոլկովի ռազմիկներն էին: Ջրահի համար փողը չէր բավականացրել, տեգիլեյ էր հագցրել, թեև վախենում էր՝ ստուգելիս հանկարծ չխայտառակեն իրեն ու ամոթանք տան. ըստ կանոնի չեն ներկայացրել, փողը կերել ես...

Վասիլին ու Միխայլան Գնչուի սահնակն էին նստել: Ետևից ճորտերը ձիերն էին բերում. Վասիլիինը շքեղ թամբատակով էր ու պարսկական թամբով, Միխայլայի հոգնատանջ, կոտած ձին աղքատիկ ու վատ էր թամբած:

Միխայլան նստած էր խոժոռված: Բղավելով ու ձիերը մտրակելով նրանցից անցնում էին բազմաթիվ ազնվականներ ու բոյարների տղաներ՝ պապական զենք ու զրահով, նուշ-նոր ֆերյազ ու տեռլիկներ, ցլամորթու կաֆտաններ հագած-ամբողջ գավառը ժողովվում էր Լուբյանկայա հրապարակում՝ զորատեսի, հողաբաժանքի ու վերաբաժանքի: Բոլորն անհատիր ծիծաղում էին Միխայլայի յարուն տեսնելիս. «Էյ, էդ ո՞ր գերեզմանատունն ես տանում: Տես հա՜, տեղ չի հասնի...»: Անցնելիս, դաղում էին մտրակներով՝ ձին ճկռում էր... ծիծաղ, քրքիջ, սուլոց...

Ցառուզա գետի վրայի կամուրջն անցան, որի զառիթափ ափին հարյուրավոր մանր ջրաղացներ էին պտտվում: Սահնակների և գումակների ետևից վարգով գնացին քառակուսի աշտարակներով, ատամնավոր կատարի արտանքներում թնդանոթներ շարած, ճերմակ ներկը թափված պարսպի երկարությամբ: Նեղլիկ Մշասնիցկիյի դարպասի մոտ հրմշտոց էր, բղավում ու հայհոյում էին՝ ամենքն ուզում էին առաջինն անցնել, զարկում էին միմյանց բռունցքներով, գդակներ էին ցած ընկնում, ճռճռում էին սահնակները, ձիերը ծառս էին լինում: Դարպասի վերևում անմարելի մի ճրագ կար վառված, մգադեմ սրբապատկերի առաջ:

Մտրակ էր որ իջավ Ալյոշկայի մեջքին, գդակը կորցրեց՝ հագիվ գլուխն ազատեց: Դարպասն անցան... Քթից հոսող արյունը սրբելով, չորս կողմն էր նայում՝ ա՜յ քեզ բան...

Նեղլիկ ու թրիքապատ փողոցում անհամար ժողովուրդ կար: Տախտակապատ կրպակների միջից կես մարմնով դուրս բռնված՝ բղավում էին առևտրական կանայք, քաշքշում անցնող-դարձողի փեշերից, մարդկանց գլխարկներն էին հանում, հրամեցեք անելով: Բարձր ցանկապատերից այն կողմ քարաշեն տներ կային, կարմիր ու արծաթագույն թեք տանիքներով, եկեղեցիների գույնզգույն գըմ-

բեթներն էին երևում: Հազար հատ եկեղեցի կար: Մեծերը հնգագլխ-բեթ էին, խաչմերուկների վրա փոքրերը կային՝ դռնից մի մարդ հազիվ մտներ, ներսում էլ տասը հոգի հազիվ տեղ անեին: Բաց գավիթներից երևում էին մոմերի տաք կրակները: Ծնկաչոք պառավները կարծես քնած լինեին: Մազախով, զարհուրելի մուրացկանները թափահարում էին ցնցուղները, բռնում մարդկանց ոտքերից, քթի մեջ խոսելով մերկացնում արնածոր ու թարախակալած մարմինները... Ծխազուրկ, անարկու աչքերով տերտերները անցորդների քիթն էին խոթում կալաչները, բղավելով. «Վանառական, զբնանք աղոթենք, թե չէ՝ կալաչը կկծեմ...»: Ագռավների երամներ՝ եկեղեցիների վրա...

Հազիվ հասան Լուբյանկա, ուր հրապարակով մեկ խումբ-խումբ խոնված էին ձիավոր զորականները: Հեռվում, Նիկոլսկիյե դարպասի մոտ երևում էր բոյարի՝ խողովակի պես ցից սամույրե գլխարկը, ատենավորների մորթե գդակները, ընտրովի երևելիների մգագույն կաֆտանները: Նիհար ու բարձրահասակ, երկար մորուքով մի մարդ բղավում էր այնտեղից, ձեռքի թուղթը թափահարելով: Այդ ժամանակ խմբերից զատվում էր որևէ ազնվական՝ շուքով կամ անշուք զինավորված, մենակ կամ զորականներով, ձին քշում սեղանի մոտ: Իջնում էր, խոր գլուխ տալիս բոյարին և ատենավորներին: Նրանք գնում էին հանդերձանքն ու ձիերը, կարդում գրանցումները՝ ինչքան հող է շնորհված նրան: Վիճում էին: Ազնվականը երդում էր ուտում, կուրծք պատռում, ոմանք լաց էին լինում խնդրելիս, որ վերջնականապես աղքատացել են մի պատառ հողի վրա, մեռնում են ցրտից ու սովից:

Հինավուրց սովորությամբ, ամեն տարի, գարնանային զորախաղերից առաջ այսպես էր անցնում պետական ծառայության մեջ եղողների՝ ազնվական աշխարհազորի ստուգատեսը:

Վասիլին ու Միխայլան չիջան ձիերից: Գնչուն և Ալյոշկայի ձիերը արձակեցին, Վոլկովի երկու ճորտերին անթամբ հեծյալ դարձրեցին, երրորդին հրամայեցին ասել, որ ձին իբր ոտքը կոտրել է ճանապարհին: Սահնակները թողեցին:

Գնչուն ձեռքը գցեց երասաններին. «Էս ո՞ւր ես տանում ձիս: Բոյարի՞ն: Ողորմա՞ծ...»: Վասիլին սպառնաց մտրակով. «Ջե-ե՞նը...»: Իսկ երբ հեռացավ, Գնչուն հերումեր իրար խառնեց, անուրն ու աղեղը շպրտեց սահնակի մեջ, ինքն էլ պառկեց, ջղայնությունից թաղվելով ծղոտի մեջ...

Ալյոշկային մոռացան: Լծասարքը հավաքեց, տարավ սահնակի մեջ: Նստել, անգդակ մրսում էր, հագուստն էլ էր բարակ: Ինչ սրած՝ մուժիկի բախտ է, պիտի դիմանաս: Հանկարծ մի ախորժաբեր հոտ ընկավ քիթը: Կողքով գիրուկ մի պուպդական էր անցնում, նապաստակի մորթու գդակով, մանրիկ աչքերով: Փորին կապած արկղիկի մեջ, փալասների տակից գոլորշի էին արձակում տակալոխ բլիթներ: Խեթեց Ալյոշկային, փալասի տուտը բարձրացրեց սատանան՝ «տաք-տա՞ք, կարմրա՞ծ»: Տղայի աչքը մնաց վրան.

— Քանի՞ս ես ասում, հորեղբայր:

— Երկուսը՝ կես գռոշ: Լեզուդ էլ 'հետը կով կտաս:

Ալյոշկան կես գռոշ՝ քառորդ կոպեկ ուներ-որ ճորտության էր գնում, մայրն էր տվել. խե՞ղճ լինես դու: Թե՝ փողն էր ափսոսում, թե՝ փորն էր վեց-վեց անում:

— Դե լավ, տուր,— կոպտաձայն ասաց Ալյոշկան: Առավ ու կերավ: Կյանքում նման բան չէր կերել: Իսկ երբ ետ եկավ սահնակի մոտ, ոչ մտրակը կար, ոչ անուրն ու աղեղը, ոչ շլնոցը՝ տարել էին: Վազեց Գնչուի մոտ՝ ծղոտի տակից սա հայհոյեց: Ալյոշկայի ոտքերը թուլացան, գլուխը զնգում էր: Ուզում էր նստել սահնակի կողքին ու լաց լինել, տեղից պոկվեց, անցնող-դարձողին հարցնելով. «Գողին չտեսա՞ք...»: Ծիծաղեցին վրան: Ի՞նչ աներ: Հրապարակով վազեց, բոյարին գտնելու:

Վոլկովը, ձեռքերը կողերին կանգած, նստած էր ձիու վրա: Պղնձե սաղավարտով էր, կրծքի ու փորի վրա ցրտից եղյամակալել էր երկաթյա շերտավոր զրահը: Վասիլին ճանաչել չէր լինի՝ արծիվ էր, արծիվ: Ետևում, նույնպես ձիավոր, երկու ճորտերն էին՝ տակառի պես տեգիլեյներով, գեղարդներն ուսերին: Իրենք էլ էին հասկանում, որ զորականի տեսք չունեն, ապուշ վիճակի մեջ են: Քթի տակ խնդմնդում էին:

Արցունքները սրբելով, խեղճացած ու քթի մեջ մրթմրթալով՝ Ալյոշկան պատմեց գլխին եկած փորձանքը:

— Ինքդ ես մեղավոր,— բղավեց Վասիլին,— հերը ջարդդ կտա: Ու եթե ինքն էլ նոր լծասարք չբերի, իրեն էլ ես կճիպտեմ: Կորի գնա, ձիու առաջ մի ցցվիր:

Այստեղ նրա անունը տվեց բարձրահասակ ատենավորը, թուղթը թափ տալով: Վոլկովը տեղից պոկվեց, ետևից՝ ճորտերը, տրեխներով խփելով ձիերի կողերին, գնացին դեպի Նիկոլսկիյե դարպասը, ուր սեղանի մոտ մորթե գլխարկով, երկու մուշտակով—թավշյան տակից, բրդերս ոչխարենին վրայից—նստած էր անարկու իշխան Ֆյոդոր Յուրևիչ Ռոմոդանովսկին:

Ի՞նչ աներ հիմա: Ոչ գդակը կար, ոչ լծասարքը... Ալյոշկան կամացուկ լաց էր լինում, հրապարակում քարշ գալով: Նրան ձայն տվեց և ուսից բռնեց Միխայլա Տրյոտովը, կռացավ ձիու վրայից:

— Ալյոշկա,— ասաց նա, աչքերն արցունքոտ, շրթունքները դողում էին,— Ալյոշկա, ատոծու սիրուն, վազ տուր Տվերսկիյե դարպասի կողմերը, կհարցնես ձիապան Դանիլա Մենշիկովի տունը... Կմտնեն, երեք անգամ խոր գլուխ կտաս Դանիլային... Կասես Միխայլան շատ բարև էր անում... Կասես՝ ձին քանի պետք չի... Ամոթ է՝ կասես... Ինչ ձի ուզում է, թող մի օրով տա, որ ցույց տամ: Կհիշե՞ս: Կասես՝ պարտքի տակ չեմ մնա... Ջիու համար հիմա մարդ էլ կկպանեմ... Լաց կլինես, աղաչանք կանես...

— Աղաչելը կաղաչեմ, բայց որ չտվե՞ց,— հարցրեց Ալյոշկան:

— Մինչև բուկդ կթաղեմ հողի մեջ,— Միխայլան չոեց աչքերը, ունգերը փքվեցին:

Ալյոշկան, իրեն կորցրած, վազ տվեց ասած տեղը:

Միխայլան պառել էր թամբի վրա, ամբողջ օրը ոչինչ չէր կերել... Արևը գլորվում էր սառնաշունչ մշուշի մեջ: Ջրումը կապտին էր տալիս: Ձիերի սմբակներն ավելի հնչեղ էին զնգզնգում: Մթնշաղն էր իջնում, և Մոսկվայով մեկ, զանգակատներում զանգեր հնչեցին, կանչելով երեկոյան ժամերգության: Կողքից ձիով անցավ խոժոռված ու գլխահակ Վասիլի Վոլկովը: Ալյոշկան չէր երևում: Այդպես էլ չեկավ բոլորովին:

6.

Ցածրաստաստաղ, շատ տաք սրահում ձիթաճրագները լուսավորում էին ցածրիկ կամարներն ու մգագույն որմնանկարները՝ դրախտային հավքեր էին, հյուսված խոտ ու ցողուն:

Սրբապատկերների գորշ դեմքերի տակ, լայն օթոցի վրա, կարապի փետրի բարձերի մեջ լղարիկ մարմնով խրված, մեռնում էր Ֆյոդոր Ալեքսեևիչ ցարը:

Վաղուց էին սպասում՝ ցարը լնդախտ ուներ և ոտքերն էին ուռչում: Առավոտյան ժամերգությանն այսօր չէր կարողացել կանգնել, նստել էր աթոռին, ապա ընկել ցած: Մոտ էին վազել ու տեսել, որ փիրտը հազիվ է բաբախում: Պառկեցրել էին սրբապատկերների տակ: Ջրգողությունից ոտքերն ուռել, գերանաչափ էին դարձել, փորն էլ էր սկսել փքվել: Կանչեցին գերմանացի բժշկին: Սա ջուրը բաց թողեց, ցարը հանգստացավ ու սկսեց կամաց-կամաց հանգչել: Ակնախոռոչները մգել էին, քիթը՝ սրվել: Մի պահ ինչ-որ բաներ շշնջաց, չկարողացան հասկանալ, թե ինչ: Գերմանացին կռացավ նրա անարյուն շրթունքների վրա. Ֆյոդոր Ալեքսեևիչն անկապակցված ու միայն շնչելով ուտանավորներ էր ասում լատիներեն: Ցարի շշնջոցից բժշկին թվաց, թե Օվիդիոսի բանաստեղծություններից էր... Մահվան մահճում՝ Օվիդիո՞ս: Անկասկած, ցարը կորցրել էր գիտակցությունը...

Հիմա շնչառությունն էլ չէր լսվում: Եղյամապատ լուսամուտի մոտ, որի կլոր ապակիների մեջ լուսնի լույսն էր թրթռում, իտալական ծալովի աթոռի վրա նստած էր պատրիարք Յոսակիմը՝ խստահայաց ու մոմեղեն, սև պատմուճանով ու վեղարով, ոսթաթև ապիտակ խաչը վեղարին: Նստած էր կորացած ու անշարժ, որպես մահվան տեսիլ: Պատի տակ միայնակ կանգնած էր թագուհի Մարֆա Մատվեևնան՝ արցունքի շղարշի միջից նայում էր այնտեղ, ուր բաթձերի խրձի արանքից երևում էր մեռնող ամուսնու փոքր ճակատն ու սրված քիթը: Ընդամենը տասնյոթ տարեկան էր թագուհին, նրան պալատ էին բերել Ապրակսինների աղքատ ընտանիքից, գեղեցկության պատճառով: Միայն երկու ամիս եղավ թագուհի: Մգահոն ու հիմարիկ դեմքն ուռել էր լացելուց: Սոսկ հեծկլտում էր մանկավարի, մատները կոտրատում, բարձրաձայն ողբալուց վախենում էր:

Սրահի մյուս ծայրում, կամարների մթան մեջ փսփսում էին ցարի մեծաքանակ ազգականները՝ քույրեր, հորաքույր-մորաքույրեր, քեռի-հորեղբայրներ ու մերձավոր բոյարներ, Իվան Մաքսիմովիչ Յազիկովն էր՝ կարճլիկ ու գիրուկ, բարի, քաղցրալեզու, մեծ ճարպկության տեր, պալատական վարվելակերպի խորագույն գիտակ, ապա ծոմապահ ու բարեպաշտ ծերուկ, գրասեր, առաջին մահճապետ Ալեքսեյ Տիմոֆեևիչ Լիխաչևը և իշխան Վասիլի Վասիլևիչ Գոլիցինը՝ մի պատկերք տղամարդ, զանգուր ու բաժան մորուքով, բեխերը ցից, կարճ, լեհական կտրած մազերով, լեհական կունտուշով, թեքկրունկ ու փափուկ ճտքավոր կոշիկներով. միջահասակ էր իշխանը:

Նրա կապույտ աչքերը բորբոքված փայլում էին: Վճռական էր պահը՝ նոր ցարի անունն էր տրվելու: Ո՞ւմ: Պյոտրի՞ն, թե՝ Իվանին: Նարիշկինների՞ որդո՞ւն, թե՝ Միլոսլավսկայայի: Երկուսն էլ անհասկացող երեխաներ, երկուսի ետևում էլ ուժեր կան կանգնած՝ տոհմերը: Պյոտրը խելքը գլխին է, պնդակազմ, Իվանը տկարամիտ է ու հիվանդ, ուր թեքես, կգնա... Ո՞րը նախընտրել: Որի՞ն:

Վասիլի Վասիլևիչը կողքով կանգնեց երկփեղկ. պղնձյա եզրազարդերով դռան մոտ ու ականջը մոտեցրեց՝ հարևան գանձարանում գվվում էին բոյարների ձայները: Առավոտից սոված ծարավ լցվել էին, մուշտակները հագներին. Նարիշկինները՝ յուրայիններով, Միլոսլավսկիները՝ յուրայիններով: Դահլիճը լեփ-լեցուն էր. կռվշտում էին, հինը քամում տալիս, զգում էին, որ այսօր ոմանք վեր են բարձրանալու, ոմանք աքսոր քշվելու:

— Ժխոր է, ներող եղեք,— շշնջաց Վասիլի Վասիլևիչը և մոտենալով Յազիկովին, ցածրաձայն ասաց լեհերեն.— Իվան Մաքսիմովիչ, գուցե դո՞ւ հարցնես պատրիարքին, թե ինքն ում կողմից է:

Գանգրահեր, շեկ ու թավ բեխ-մորուքով Յազիկովը՝ կարմրատակած, անուշ ժպտաց, վարից վեր նայելով, շոգից քրտնել էր, վարդագույն բույր էր արձակում.

— Հովվապետն էլ, ես էլ քո խոսքին ենք սպասում, սիրելի իշխան... Մենք կարծես թե որոշել ենք...

Մոտեցավ Լիխաչևը, հոգոց հանեց, ճերմակ ձեռքը զգուշությամբ մորուքին դնելով.

— Պառակտվել չի կարելի, Վասիլի Վասիլևիչ, այս մեծ պահին: Այսպես ենք մտածել՝ Իվանի համար դժվար կլինի թագավորելը, անհասատատ՝ թույլ է: Մեզ ուժ է հարկավոր:

Վասիլի Վասիլևիչը կախեց արտևանունքները, ժպտաց գեղեցիկ շրթունքների ծայրով: Հասկացավ, որ վիճելը հիմա վտանգավոր է:

— Թող այդպես լինի,— ասաց,— թող Պյոտրը թագավորի:

Բարձրացրեց կապույտ աչքերը, որոնք հանկարծ ցնցվեցին և ընքշությամբ օղակվեցին: Նայում էր ներս մտած արքայադստերը, ցարի վեցերորդ քրոջը՝ Սոֆյային: Ոչ թե սահաքայլ, կարապի պես, ինչպես վայել է օրիորդին, այլ թափով ներս մտավ նա, բացվեցին ամառային գունեղ զգեստի փեշերը, փարթամ կրծքի կոճակները

արձակ էին, ծածանվում էին եղջրավոր պսակի կարմիր ժապավենները: Սուր ու շպարի տակից տգեղ դեմքին բծեր էին հայտնվել: Արքայադուստրը պետոպկր էր, ամրակազմ ու թիկնեղ, խոշորագլուխ: Կոր ճակատը, կանաչավուն աչքերը, սեղմված բերանը ոչ-օրիորդական էին թվում, այլ տղամարդկային: Նա նայեց Վասիլի Վասիլևիչին և, ըստ երևույթին, հասկացավ, թե ինչի մասին էր հենց նոր խոսում ու ինչ պատասխան տվեց:

Ռունգերը թրթռացին արհամարհաբար: Շրջվեց դեպի մահամերձի անկողինը, ձեռքերն իրար զարկեց, սեղմեց ու ծնկեց գորգին, ճակատը սեղմելով անկողնուն: Պատրիարքը գլուխը բարձրացրեց, նրա խամրած հայացքը հառվեց Սոֆյայի ծոծրակին, կախ հյուսերին: Սրահում գտնվող բոլորը լարվեցին: Հինգ արքայադուստրեր սկսեցին խաչակնքել: Պատրիարքը ոտքի ելավ ու երկար նայում էր ցարին: Սև թևքերը ետ գցեց ու լայն-լայն խաչակնքելով, հրաժեշտի աղոթքն ասաց:

Սոֆյան բռնեց ծոծրակը, զիլ ու վայրենաձայն բղավեց, ապա ոռնում էր թավաձայն: Բղավեցին նրա քույրերը... Թագուհի Մարֆա Մատվեևնան երեսնիվար ընկավ օթոցին: Նրան մոտեցավ ավագ եղբայրը՝ բարձրահասակ ու գեր, երկար մուշտակ հագած Ֆյոդոր Մատվեևիչ Ապրակսինը, սկսեց շոյել թագուհու մեջքը: Ցագիկովն արագ-արագ մոտեցավ պատրիարքին, ձեռքը համբուրեց ու իր կողմը քաշեց: Պատրիարքը, Ցագիկովը, Լիխաչևը և Գոլիցինը փութով գնացին գահադահլիճ: Բոյարները նախրի պես շարժվեցին նրանց կողմը, թևքերը թափահարելով, մորուքներն առաջ պարզած, առանց ամաչելու՝ աչքերը չուած. «Ի՞նչ, ի՞նչ կասես, հովվապետ...»:

— Ֆյոդոր Ալեքսեևիչ ցարը վախճանվեց... Լաց լինենք, բոյարներ...

Նրան չէին լսում՝ խառնիխուռն, դռան մեջ հրմշտվելով, բոյարները շտապում էին հանգուցյալի մոտ, ընկնում էին ծնկաչոք, ճակատները խփում գորգին և, վեր կենալով, համբուրում ցարի արդեն խաչված, մոմանման ձեռքերը: Հեղձուկից սկսեցին չրթչրթալ ու հանգչել ճրագները: Սոֆյային տարան: Վասիլի Վասիլևիչը չքացավ: Ցագիկովին մոտեցան իշխաններ Պյոտր և Բորիս Ալեքսեևիչ Գոլիցին եղբայրները, սևահեր, հաստ հոնքերով ու սարսափազդու տեսքով իշխան Յակով Դոլգոռուկին ու եղբայրները՝ Լուկան, Բորիսը և Գրիգորին: Յակովն ասաց.

— Մենք դաշույններով ենք ու զրահ ունենք հագուստի տակ... Ի՞նչ անենք, հոչակե՞նք Պյոտրին:

— Գնացեք առմուտք, ժողովրդի առաջ: Պատրիարքը դուրս է գալու, այնտեղ էլ կհոչակենք... Թե սկսեն Իվան Ալեքսեևիչի անունը տալ՝ դաշունահարեք ավազակներին...

Մեկ ժամ անց պատրիարքը ելավ Գլխադուռ և օրհնելով հազարամարդ ամբոխը՝ ստրելեցներին, բոյարական ընտանիքների որդոց, ծառայող մարդկանց, վաճառականներին, պոսադականներին,

հարցրեց, թե արքայազններից ո՞ր մեկը ցար դառնա: Խարույկներ էին վառվում: Մոսկվա գետից այն կողմ լուսինն էր իջնում, և սառցեղեն լույսը ցոլցլում էր գմբեթների վրա: Ամբոխի միջից բղավեցին.

— Պյոտր Ալեքսեևիչի՞ն ենք ուզում...

Մի խոպոտ ձայն կանչեց.

— Ուզում ենք Իվա՞նը ցար դառնա...

Մարդիկ վրա պրծան ձայնողին, և ամբոխի մեջ ավելի բարձր հնչեցին բղավոցները. «Պյոտրի՞ն, Պյոտրի՞ն...»:

7.

Դանիլայի բակում շրթայակապ երկու որձ շուն վրա պրծան Ալյոշկային՝ կատաղությունից իրենց կտրատելով: Շրթունքները վերքոտ մի աղջնակ, կարճ վերարկուն գլխին գցած, նրան ասաց, որ սառցակալած աստիճաններով բարձրանա վերնասենյակ, անտեղի քրքջաց, անհետացավ առմուտքի տակի խորդանոցը, ուր մթության մեջ վառվում էին վառարանի փայտերը:

Սանդուղքով բարձրանալիս Ալյոշկան լսեց, որ վերևում ինչ-որ մեկը շատ վատ գոռում է... «Օհո՜,— մտածեց նա,— էստեղից ոդջ պրծնողը չեմ...»: Պարանով կապած տաշած բռնակը քաշեց ու հազիվ բացեց ուռած դուռը: Քթին խփեց տաք խրճիթի, բողկի, օղու հոտը: Սրբապատկերների տակ, գցած սեղանի մոտ երկու մարդ էին նստած՝ գանգուրները թափած, ավելաձև, շիկամորուս տերտերը ու կարճլիկ, չեչոտ, սրաքիթ մեկը:

— Խելքը գլո՞ւխը մտցրու քամակից,— բղավում էին, բաժակները սեղանին զարկելով:

Երրորդը՝ ծանրամարմին, մորեգույն ու արձակ շապկով մի մարդ, ծնկների արանքը խցկած երեխայի մերկ հետույքին էր շրջափաթաթում գոտիով: Շերտ-շերտ կապտած, վտիտ հետույքը ցնցվում էր, դեսուդեն շպրտվում: «Ա՛յ-ա՛յ, հայրի՞կ»,— ծղրտում էր ծեծվողը: Ալյոշկան պատեց տեղում:

Չեչոտն անարտահանունք կոպերը ճպճպացրեց Ալյոշկայի վրա: Տերտերը բացեց մեծ բերանն ու թավաձայն գոռաց.

— Մի լակոտ էլ եկավ, դրան էլ հասցրու միանգամից:

Ալյոշկան ոտքերը ձգեց, վիզն առաջ պարզեց: «Է՛հ, կորա...» Ծանրամարմին մարդը շրջվեց: Նրա ոտքերի տակից, շալվարը բռնած, դուրս պրծավ ճերմակ-երկնագույն, կլորաչ մի տղա: Դեպի դուռը վազեց ու անհետացավ: Այդ ժամանակ Ալյոշկան, ինչպես հրամայվել էր, ծնկի ընկավ ու երեք անգամ ճակատը հպեց հատակին: Ծանրամարմինը բռնեց շլինքից, բարձրացրեց ու մոտեցրեց իր պղնձագույն, քրտնած դեմքին, թունդ հարբածի հոտ էր փչում.

— Ինչի՞ ես եկել: Գողությա՞ն: Տեղ անելո՞ւ: Ուրիշի բակերում թրև գալո՞ւ:

Առամներն իրար զարկելով՝ Ալյոշկան սկսեց պատմել Տրյուտո-

մի մասին: Պղնձագույն մարդու վզի երակները փքվեցին՝ ոչինչ չէր հասկանում... «Ի՞նչ Տըլրտով: Ի՞նչ ձի: Ուրեմն, եկել ես ձիո՞ւ: Զիագո՞ղ ես...»: Ալյոշկան լաց եղավ, երդվեց, եռամատ խաչակնքեց... Դրանից հետո պղնձե մարդը բռնեց նրա մազերից, սապոգները թխկթխկացնելով քարշ տվեց, դուռը ոտքով բացեց, սառցակալած սանդուղքից ցած շպրտեց Ալյոշկային...

— Էս գողին բակից հանեք,— ճոճվելով բղավեց նա,— Ծուրոկ, Բրովկա, գգեք սրան...

Դռան մեջ ցուլի պես կռանալով, Դանիլա Մենշիկովը ետ եկավ սեղանի մոտ: Ֆսֆսացնելով, լցրեց բաժակները: Պտղունցով կտրած բողկ վերցրեց.

— Տերտեր մարդ ես, Ավետարան ես կարդացել, պիտի իմանաս,— թնդաց նա,— տղես ձեռից գնացել է... Լրիվ գող է դարձել շան ցկնածը: Զապանե՞մ դրան: Ավետարանում ո՞նց է գրված: Հը՞:

Տերտերը՝ Ֆիլկան, ծանրումեծ պատասխանեց.

— Ավետարանով էսպես է. փոքրուց պատժիր զավակիդ, որ հանգիստ անցնես ծերությունը քո: Ու ծեծով մի թուլացրու նրան, քանի որ գավազանով թե խփես, չի մեռնի, ավելի կպնդանա, վերքերը շատացրու, որ հոգին ազատես մահից...

— Ամեն,— հոգոց հանեց սրաքիթը...

— Համբերի, շունչս տեղը գա, նորից եմ կանչելու,— ասաց Դանիլան:— Էհ, տղերք, վատ է... Տարին տարու վրա վատանում է... Երեխեքը ձեռից գնում են, առաջվա հարգ ու պատիվը չկա... Ցարական ոռճիկն երկու տարի չեն տվել... Ուտելու բան չի մնացել... Ստրելեցներն ասում են տալիս, թե Մոսկվան չորս ծերից վատելու են... Ժողովրդի մեջ դժգոհությունը շատացել է... Էդ է, ամենքս էլ կորելու ենք, գնանք...

Ձեչոտ ու սրաքիթ դպիր Ֆոմա Պոդչիպանն ասաց.

— Նիկոնականները հին հավատը պղծեցին, բայց դրանո՛վ էր (մատը վեր պարզեց) երկիրն ապրում... Նոր հավատ չկա... Երեխաները մեղքի մեջ են ծնվում՝ թեկուզ մեռցնես ծեծելով, օգուտ չկա՝ հոգի չունեն մեջերը... Սոյն դարի զավակնե՞րը... Նիկոնականնե՞րը: Անհովիվ հոտ, սատանայի բաժին... Ավագերեց Ավվակումը գրել է. «Եվ դո՞ւ ես արդյոք, նիկոնական, որ քրիստոսական բաժինն ես ուզում գայթակղել ու զոհ մատուցել ծնող հորը քո՝ սատանային...»: Սատանայի՞ն: (Մատը նորից բարձրացրեց:) Ապա՝ «Ո՞վ ես դու, նիկոնական: Աղբ ես դու, գարշահոտություն, շուն ես դու աղտոտ»...

— Ծնե՞ր,— Դանիլան շրմփացրեց սեղանին:

— Նիկոնական տերտերներն ու ավագերեցները մետաքսե պարեգոտներ են հագնում, կշտությունից տրաքում են նզովյալ շները,— ասաց տերտեր Ֆիլկան:

Ֆոմա Պոդչիպանը պպասեց հայհոյեն վերջացնեն, նորից խոսեց.

— Հետևյալն էլ է ասել ավագերեց Ավվակումը. «Իմ բարեկամ Իլարիոն, ռյազանյան արքեպիսկոպոս: Հիշիր, թե ինչպես էր ապրում Մելքիսիդեկը անտառի թավուտում, Ֆավորյան սարի վրա: Ծառերի բողբոջն էր ուտում, ջրի փոխարեն ցող էր լիզում: Ծիտակ հոգևորական էր, չէր փնտրում հռեռոպան ու ռոմանական, և օդի, և զտված գինի, և գարեջուր հիլով: Բարեկամդ իմ, Իլիարիոն, ռյազանյան արքեպիսկոպոս: Տեսնում ես, թե ինչպես էր ապրում Մելքիսիդեկը: Սնաթույր ձիերով կառք չէր նստում: Ու թագավորական էր տոհմը նրա: Հապա դո՞ւ ով ես, ողորմելի տիրացու: Կառքեր ես նստում, փքվելով, հանց ջրի փուչիկ, կառքի բարձերին նըստած, մազերդ լրբի պես սանրած, գնում ես, ոեխդ առաջ պարզած, հրապարակով, որ լիրբ կույսերը քեզ սիրեն... Օյ, օյ, խեղճ լինես դու... Սատանան կուրացրել է քեզ հաստատ... Ու չես տեսել ու չգիտես հոգևոր կյանքը...»:

Աչքերը փակելով, Ֆիլկան թշերը ցնցեց, ծիծաղեց: Դանիլան նորից լցրեց: Խմեցին:

— Ստրելեցներն արդեն նիկոնական գրքերը ճղում են ու դեն շպրտում,— ասաց նա:— Աստված տար, ստրելեցները հնին պաշտպան կանգնեին...

Նա շրջվեց: Ծները հաչեցին: Մոռացին սանդուղքները: Դռան ետևում Հիսուսի աղոթքն արեցին: «Ամեն»,— պատասխանեցին երեք գրուցակիցները: Ներս մտավ Պիժովի գնդից բարձրահասակ ստրելեց Օվսեյ Ռժովը՝ Դանիլայի աներձագը: Խաչակնքեց անկյունը: Մազերը ետ գցեց.

— Քեֆ եք անում,— ասաց հանգիստ:— Ու թե ինչ գործեր են կատարվում վերևներում, չգիտե՞ք... Ցարը մեռավ... Նարիշկինները Դոլգոռուկիների հետ Պյոտրին դրեցին տեղը... Մի փորձանք էր, որ չէինք սպասի... Բոլորով մտնելու ենք բոյարների, մեկ էլ նիկոնականների լծի տակ...

8.

Աստիճաններից թավալգլոր ձնաթմբի մեջ ընկավ Ալյոշկան: Դեղնատամ շները վրա պրծան: Տղան թաքցրեց գլուխը: Աչքերը փակեց... Ու շները չգգեցին... Հրաշքի պես բան էր՝ ատամած փըրկեց: Գոմռալով ետ քաշվեցին: Ինչ-որ մեկը պպզեց Ալյոշկայի գլխավերևում, մատով բոթբոթեց գլուխը.

— Էյ, ո՞վ ես:

Ալյոշկան մի աչքը դուրս հանեց: Քիչ հեռու կանգնած շները նորից գոմռացին: Ալյոշկայի գլխավերևը քիչ առաջվա տղան էր պպզել, որին հենց նոր ծեծեցին:

— Անունդ ի՞նչ է:

— Ալյոշկա:

— Ուրնցի՞ց ես:

— Բրովկիններից, գյուղից:

մեղրախմիչք։ Առևտուր կգնար, գործարքներ կկնքվեին, միմյանց ձեռք-ձեռքի կխփեին։ Գործերից կխոսեին, գործերն էլ հիմա այնպես էին, որ գլուխդ առ ու փախիր...

Առաջին սրահում, վաճառասեղանի մոտ գոռգոռում էին, աղմկում, հայհոյում։ Խմիր, քեֆ արա, միայն թե վճարիր։ Խիստ էր։ Փող չունես՝ մուշտակդ հանիր։ Եթե մեկնումեկը ունեցած-չունեցածը խմիչքի տված լիներ, օդեվաճառն աչքով կաներ սեղանի եզրին նստած փոքրավորին։ Սագի փետուրն ականջի ետևը խրած, թանաքամանը վզից կախ, սա կսկսեր գրել։ Օհ, ուշքի եկ, անխելք հարբած։ Ճարպիկ փոքրավորը հո նորտագիր չի՞ սարքում։ Անկախ ու ազատ մտել ես ցարապատկան օդետուն, դուրս կգաս որպես տկլոր մի նորտ։

— Հիմի խմելը հեշտացել է,— կասեր օդեվաճառը՝ կանաչավուն հեղուկը լցնելով անագե գավի մեջ։— Հիմի ընկերդ կգա քեզ տանելու, ազգականդ կամ էլ կնիկդ վազեվազ կհասնեն, որ եղած-չեղածդ խմելու չտաս։ Հիմի էդ տեսակ մարդկանց բաց ենք թողնում, կոպեկի ետևից ընկած չենք։ Ասված քեզ հետ՝ գնա՛։ Բայց հանգուցյալ թագավոր Ալեքսեյ Միխայլովիչի օրոք եթե գային հարբածին տանելու, որ վերջին գոռը խմելու չտա...Կասեիք՝ սպասի՞... Գանձարանին վնաս է։ Էդ գոռն էլ է գանձարանին պետք... Տեղնուտեղը ձեն կտային, պրիստավը կգար, խմողի ձեռը բռնողին կտաներ ու կտաներ Գողության գործերի ատյան։ Գործը կնայեին, ձախ ձեռն ու աջ ոտը կկտրեին ու կգցեին սառույցի վրա... Խմե՛ք, խմե՛ք, արծիվ տղերք, ոչ մի բանից մի վախեցեք, հիմի ձեռ ու ոտ կտրող չկա։

10.

Օդետան մոտ այսօր մարդիկ, միմյանց շալակ ելնելով, լուսամուտներից ներս էին նայում։ Բակում, առմուտքի վրա ասեղ գցելու տեղ չկար։ Ծարունակ երևում էին ստրելեցների կարմիր, կանաչ, ալ կապտանները։ Նեղվածք էր, հրմշտոց։ «Ի՞նչ է եղել։ Ո՞ւմ։ Ինչի՞ համար...»։ Այնտեղ՝ օդետանը կանգնած էին ստրելեցներն ու առևտրական շարքերի վաճառականները։ Նեղվածքի մեջ մարդկանց շնչառությունից գոլորշին առու-առու հոսում էր պատուհանների վրայից։ Ստրելեցները ներս էին բերել կիսամեռ մի մարդու՝ հատակին պառկած տնքում էր աղեկտուր։ Հագուստը ծվեն-ծվեն էր, մարմինը՝ պարարտ։ Մոխրագույն մազերի մեջ արյունն էր չոքացել։ Քիթը, այտերը լրիվ ջնջված էին։

Նրան ցույց տալով, ստրելեցները բղավում էին.

— Ձեզ հետ էլ շուտով նույնը կլինի...

— Քնա՞ծ եք։ Իսկ Կուկույում նրանք քնած չեն...

— Տղերք, գերմանացիք ինչի՞ են ծեծում մերոնց...

— Լավ էր, անցնում էինք, մեջ ընկանք... Թե չէ ծեծելով սպանելու էին...

— Լուսահոգի ցարի օրոք էս տեսակ բան կլինե՞ր։ Կթողնեի՞ն, որ անիծված օտարները նեղացնեն մերոնց։

Պիժովի գնդի ստրելեց Օվսեյ Ռժովը հանգստացնում էր ընկերներին, վաճառականներին գլուխ խոնարհելով ասում էր.

— Չքավորությունից ենք ձեր դուռն եկել, ազնիվ պարոններ, երևելի վաճառականներ։ Էլ գնալու տեղ չունենք մեր կնանոց ու մանր երեխեքի հետ... Վերջին աղքատն ենք դարձել... Երկու տարի է ոռճիկ չեն տալիս։ Գնդապետները հոգիներս հանել են ծանր աշխատանքով։ Ինչո՞վ ապրենք։ Քաղաքում առուտուր անել չեն թողնում, գյուղերում տեղ չկա... Գերմանացիք ամեն բան գավթել են։ Հիմի արդեն վուշն էլ, կածն էլ է՛ն գլխից առել են։ Կաշին առնում, իրենք են ճմլում սատանեքը, Կուկույում... Կնանիք մեր գեղական կոշիկն էլ չեն առնում, գերմանականն են ուզում... Ապրելու հնար չկա... Ու թե պաշտպան չկանգնեք մեզ՝ ստրելեցներիս, վաճառականներդ էլ եք կորչելու... Նարիշկինները ձեռքներն են գցել ցարական գանձարանը... Ախորժակ հո չունե՞ն... Հիմի էն տեսակ հարկ ու պարհակի սպասեք, որ ունեցած-չունեցածներդ էլ տաք, չեք պրծնելու... Մոսկվայում է՛լ ավելի վատին սպասեք՝ բոյարին Մատվեևն է աքսորից գալիս... Զարությունից փիրտը քարի կտոր դարձած, Մոսկվան լրիվ կուլ է տալու...

Ծեծված մարդու տնքոցնե՛րն էին սարսափելի։ Ստրելեցի խոսքերն էին մութ ու սարսափելի։ Վաճառականները միմյանց նայեցին։ Շատ էլ հավատալի չէր, թե կուկույցի գերմանացիք ծեծել են այդ մանր առևտրականին։ Մութ գործ էր։ Բայց ճիշտ բաներ էլ էին ասում ստրելեցները։ Կյանքը տարեցտարի վատանում էր՝ ավելի չքավոր ու տագնապալի դառնալով... Ինչ թուղթ գար՝ «Ցարն ասաց, բոյարները հաստատեցին», մի նոր փորձանք կբերեր՝ վճարի՛ր, փող տուր, անտակ հորը լցնելու համար... Ո՞ւմ բողոքես, ո՞վ պաշտպան կկանգնի։ Վերևներում նստած բոյարնե՛րը։ Նրանք մի բան գիտեն՝ փող քամել գանձարանի համար, իսկ թե ինչպես, նրանց համար մեկ է։ Վերջին շապիկդ հանիր ու տուր։ Ոնց որ թշնամիներ լինեն Մոսկվայի մեջ։

Ծեծվածին օղակած մարդկանց արանքը մտավ մի վաճառական, խաղացնելով արծաթյա մատանիներով մատները։

— Մենք՝ Վորորյովներս, հում մետաքս էինք տարել Արխանգելսկի տոնավաճառ։ Ու գերմանացիք, խոսքները մեկ արած, մեր մետաքսից մի ալտինի ապրանք չառան։ Ու դրանց մեծը, ուրեմն, գերմանացի Վոլֆին բղավում էր. «Էնպես ենք անելու, որ մոսկվացի վաճառականները մեր պարտքերից բրածեռ լինեն, ու կստիպենք նրանց, ասել է թե մեզ՝ մոսկովցիներիս, մենակ տրեխի առուտուր անեն...»։

Խրճիթով բվվոց անցավ... Ստրելեցները, թե՝ «Ի՞նչ էինք ասում։ Շուտով տրեխ էլ չի լինի»... Երիտասարդ վաճառական Բոգդան Ժիգուլինը շրջան մտավ, թափահարեց գանգուրները։

— Ես Պոմորյեից եմ,— ասաց նա թափով,— գնացել էի հաղած

մեղրախմիչք։ Առևտուր կգնար, գործարքներ կկնքվեին, միմյանց ձեռք-ձեռքի կխփեին։ Գործերից կխոսեին, գործերն էլ հիմա այնպես էին, որ գլուխդ առ ու փախիր...

Առաջին սրահում, վաճառասեղանի մոտ գոռգոռում էին, աղմկում, հայհոյում։ Խմիր, քեֆ արա, միայն թե վճարիր։ Խիստ էր։ Փող չունես՝ մուշտակդ հանիր։ Եթե մեկնումեկը ունեցած-չունեցածը խմիչքի տված լիներ, օդեվաճառն աչքով կաներ սեղանի եզրին նստած փոքրավորին։ Սագի փետուրն ականջի ետևը խրած, թանաքամանը վզից կախ, սա կսկսեր գրել։ Օհ, ուշքի եկ, անխելք հարբած։ Ծարպիկ փոքրավորը հո ճորտագիր չի՞ սարքում։ Անկախ ու ազատ մտել ես ցարապատկան օդետուն, դուրս կգաս որպես տկլոր մի ճորտ։

— Հիմի խմելը հեշտացել է,— կասեր օդեվաճառը՝ կանաչավուն հեղուկը լցնելով անագե գավի մեջ։— Հիմի ընկերդ կգա քեզ տանելու, ազգականդ կամ էլ կնիկդ վազեվազ կհասնեն, որ եղած-չեղածդ խմելու չտաս։ Հիմի էդ տեսակ մարդկանց բաց ենք թողնում, կոպեկի ետևից ընկած չենք։ Ասված քեզ հետ՝ գնա՛։ Բայց հանգուցյալ թագավոր Ալեքսեյ Միխայլովիչի օրոք եթե գային հարբածին տանելու, որ վերջին գոռոշը խմելու չտա...Կասեինք՝ սպասի՞... Գանձարանին վնաս է։ Էդ գոռոշն էլ է գանձարանին պետք... Տեղնուտեղը ձեռ կտային, պրիստավը կգար, խմողի ձեռը բռնողին կտուներ ու կտաներ Գողության գործերի ատյան։ Գործը կնայեին, ձախ ձեռն ու աջ ոտը կկտրեին ու կգցեին սառույցի վրա... Խմե՛ք, խմե՛ք, արծիվ տղերք, ոչ մի բանից մի վախեցեք, հիմի ձեռ ու ոտ կտրող չկա։

10.

Օդետան մոտ այսօր մարդիկ, միմյանց շալակ ելնելով, լուսամուտներից ներս էին նայում։ Բակում, առմուտքի վրա ասեղ գցելու տեղ չկար։ Ծարունակ երևում էին ստրելեցների կարմիր, կանաչ, ալ կաֆտանները։ Նեղվածք էր, հրմշտոց։ «Ի՞նչ է եղել։ Ո՞ւմ։ Ինչի՞ համար...»։ Այնտեղ՝ օդետանը կանգնած էին ստրելեցներն ու առևտրական շարքերի վաճառականները։ Նեղվածքի մեջ մարդկանց շնչառությունից գոլորշին առու-առու հոսում էր պատուհանների վրայից։ Ստրելեցները ներս էին բերել կիսամեռ մի մարդու՝ հատակին պառկած տնքում էր աղեկտուր։ Հագուստը ծվեն-ծվեն էր, մարմինը՝ պարարտ։ Մոխրագույն մազերի մեջ արյունն էր չորացել։ Քիթը, այտերը լրիվ ջնջված էին։

Նրան ցույց տալով, ստրելեցները բղավում էին.

— Ձեզ հետ էլ շուտով նույնը կլինի...

— Քնա՞ծ եք։ Իսկ Կուկույում նրանք քնած չեն...

— Տղերք, գերմանացիք ինչի՞ են ծեծում մերոնց...

— Լավ էր, անցնում էինք, մեջ ընկանք... Թե չէ ծեծելով սպանելու էին...

— Լուսահոգի ցարի օրոք էս տեսակ բան կլինե՞ր։ Կթողնեի՞ն, որ անիծված օտարները նեղացնեն մերոնց։

Պիժովի գնդի ստրելեց Օվսեյ Ռժովը հանգստացնում էր ընկերներին, վաճառականներին գլուխ խոնարհելով ասում էր.

— Չքավորությունից ենք ձեր դուռն եկել, ազնիվ պարոններ, երևելի վաճառականներ։ Էլ գնալու տեղ չունենք մեր կնանց ու մանր երեխեքի հետ... Վերջին աղքատն ենք դարձել... Երկու տարի է ոռնիկ չեն տալիս։ Գնդապետները հոգիներս հանել են ծանր աշխատանքով։ Ինչո՞վ ապրենք։ Քաղաքում առուտուր անել չեն թողնում, գյուղերում տեղ չկա... Գերմանացիք ամեն բան զավթել են։ Հիմի արդեն վուշն էլ, կաժն էլ է՛ն գլխից առել են։ Կաշին առնում, իրենք են ճմլում սատանեքը, Կուկույում... Կնանիք մեր գեղական կոշիկն էլ չեն առնում, գերմանականն են ուզում... Ապրելու հնար չկա... Ու թե պաշտպան չկանգնեք մեզ՝ ստրելեցներիս, վաճառականներդ էլ եք կորչելու... Նարիշկինները ձեռքներն են գցել ցարական գանձարանը... Ախորժակ հո չունե՞ն... Հիմի էն տեսակ հարկ ու պարհակի սպասեք, որ ունեցած-չունեցածներդ էլ տաք, չեք պրծնելու... Մոսկվայում է՛լ ավելի վատին սպասեք՝ բոյարին Մատվեևն է աքսորից գալիս... Չարությունից պիրտը քարի կտոր դարձած, Մոսկվան լրիվ կուլ է տալու...

Ծեծված մարդու տնքոցն ե՛րն էին սարսափելի։ Ստրելեցի խոսքերն էին մութ ու սարսափելի։ Վաճառականները միմյանց նայեցին։ Ծատ էլ հավատալի չէր, թե կուկույցի գերմանացիք ծեծել են այդ մանր առևտրականին։ Մութ գործ էր։ Բայց ճիշտ բաներ էլ էին ասում ստրելեցները։ Կյանքը տարեցտարի վատանում էր՝ ավելի չքավոր ու տագնապալի դառնալով... Ինչ թուղթ գար՝ «Ցարն ասաց, բոյարները հաստատեցին», մի նոր փորձանք կբերեր՝ վճարի՛ր, փող տուր, անտակ հորը լցնելու համար... Ո՞ւմ բողոքես, ո՞վ պաշտպան կկանգնի։ Վերևներում նստած բոյարնե՞րը։ Նրանք մի բան գիտեն՝ փող քամել գանձարանի համար, իսկ թե ինչպես, նրանց համար մեկ է։ Վերջին շապիկդ հանիր ու տուր։ Ոնց որ թշնամիներ լինեն Մոսկվայի մեջ։

Ծեծվածին օդակած մարդկանց արանքը մտավ մի վաճառական, խաղաղացնելով արծաթյա մատանիներով մատները։

— Մենք՝ Վորոբյովներս, հում մետաքս էինք տարել Արխանգելսկի տոնավաճառ։ Ու գերմանացիք, խոսքները մեկ արած, մեր մետաքսից մի ալտինի ապրանք չառան։ Ու դրանց մեծը, ուրեմն, գերմանացի Վուլֆին բղավում էր. «Էնպես ենք անելու, որ մոսկվացի վաճառականները մեր պարտքերից բրածեծ լինեն, ու կստիպենք նրանց, ասել է թե մեզ՝ մոսկովցիներիս, մենակ տրեխի առուտուր անեն...»։

Խրճիթով բվվոց անցավ... Ստրելեցները, թե՝ «Ի՞նչ էինք ասում։ Շուտով տրեխ էլ չի լինի»... Երիտասարդ վաճառական Բոգդան Ժիգուլինը շրջան մտավ, թափահարեց գանգուրները։

— Ես Պոմորյեից եմ,— ասաց նա թափով,— գնացել էի հալած

ճարպ առնելու։ Ոնց որ գնացել էի, էդպես էլ ետ եկա՝ պելերս դատարկ։ Օտարները՝ Մակսելինն ու Բիրկոպովը, պոմորներից տասը տարով ճարպն առել են լրիվ։ Ու պոմորները բոլորով խրված են պարտքերի մեջ։ Օտարները ճարպը քառորդ գնով են առնում նրանցից, չեն թողնում ուրիշի ծախեն, իրենցից բացի։ Պոմորներն աղքատացել են, էլ ծով չեն գնում որսի, ցրիվ են եկել դեսուդեն... Ռուսներիս համար հյուսիսի ճամփեն փակ է հիմի...

Ստրելեցները նորից բղավեցին, թևքերը քշտելով։ Օվսեյ Ռժովը թուրը կիսով հանեց, շրխկացրեց տեղը, ատամները մերկացրեց.

— Ժամանակ տվեք, գնդապետների հախից կգանք... Հետո էլ բոյարներին կհասնենք... Ձանգեր կգարկենք Մոսկվայով մեկ։ Բոլոր պուսադները մեր կողմն են։ Մենակ թե դուք՝ վաճառականներդ, մեզ պաշտպան եղեք... Դե, տղերք, դրան վերցրեք, գնանք մեր գործին...

Ստրելեցները բարձրացրին Ֆեդվաձին,— սա ոռնաց, գլուխը թափ տալով. «Օյ, պպանեցի-ի-ի-ի՜ն»,— և քարշ տալով հանեցին խրճիթից, մարդկանց հրմշտելով շարժվեցին Կարմիր հրապարակ՝ ցույց տալու։

Խրճիթում մնացին վաճառականները՝ խառն էր ամեն ինչ։ Օ՜հ, խառն էին գործերն ու վտանգավոր։ Ի՞նչ անել, կապվել ստրելեցների հետ՝ անկուրջ մարդիկ են, կորցնելու բան չունեն... Չկապվես՝ մեկ է, բոյարները կուլ կտան...

11.

Այս անգամ, երեկոյան աղոթքից հետո, Ալեքսաշկային անխնա էին ծեծել՝ հազիվհազ հասավ խորդանոց։ Ծածկվեց ու սկսվեց, ատամները կրճտացնելով։ Այլոշկան կաթնապուր էր տալիս նրան, պառկած տեղը։ Ծատ էր խղճում. «Է՜, էդ ո՞նց են ծեծել, ալ տղա...»։

Ալեքսաշկան մի օր պառկած մնաց ծխնելուղի մոտ, տաք տեղում, խելքը գլուխը եկավ, սկսեց խոսել.

— Էդ տեսակ հորը կապես անիվին ու ջարդես, անխիղճ օձը... Այլոշկա, սրբապատկերի ետևը ձեթ կա, թաքուն վերցրու, քսեմ քամակիս, առավոտը կչորանա ու կգնանք... Էլ տուն չեմ գալու, առուների մեջ պառկած կսատկեմ, չեմ գա...

Ամբողջ գիշեր բուքը ոռնում էր գերանակապ պատերից այն կողմ։ Ծխնելուղի մեջ չարքերի ձայներ էին վնգում։ Խոհարարուհի աղջիկը կամացուկ լալիս էր։ Այլոշկան երազում մորը տեսավ՝ խրճիթի մեջտեղ, ծխի մեջ կանգնած լալիս էր, առանց աչքերը կկոցելու, ձեռքերն անընդհատ գլխին էր տանում, գանգատվում... Քնի մեջ Այլոշկան շատ կարոտեց մորը։

Լույսը չբացված, Ալեքսաշկան ցնցեց նրան. «Հերիք քնես, վեր կաց»։ Քորբրվելով, ոտքերը տաք փաթաթեցին, ոտնամանները հագան։ Կես հաց գտան, վերցրեցին։ Ծներին սուլելով, դարպասատակն անցան ու ելան բակից։ Խաղաղ, մշուշոտ առավոտ էր։ Խոնավություն կար։ Շրթալով ընկնում էին պառցպուլաները։ Ոլոր-մոլոր, գերանակապ փողոցները սև էին։ Փայտաշեն քաղաքից այն կողմ, շատ մոտ, արշալույսն էր սփռվում՝ մշուշի արնաներկ շերտերով։

Դանդաղաշարժ պահակները փողոցներից հավաքում էին ուղեփակ գերանները, որ գիշերներն էին դնում գողերից ու շրջմոլիկներից պաշտպանվելու համար։ Վախվխելով քարշ էին գալիս մուրացկանները, հաշմանդամները, կրոնախևերը՝ վաղ առավոտից տեղ գրավելու եկեղեցիների գավիթներում։ Վոզդվիժենկայում թրքապատ ճամփով նախիրն էին քշում Նեգլինննայա գետակը՝ ջրելու։

Նախրի հետ տղաները հասան Բորովիցկիյե դարպասի կլոր աշտարակին։ Թուջե թնդանոթների մոտ ոչխարենու քուրքի մեջ փաթաթված ննջում էր գերմանացի հրացանակիրը։

— Էստեղ զգույշ կգնաս, ցարն էս կողմերում է ապրում,— ասաց Ալեքսաշկան։

Նեգլիննայայի թեք ափով, մոխրի ու աղբերի կույտերի վրայով նրանք հասան Իվերսկի կամուրջը, անցան։ Լուսացավ։ Քաղաքի վրայով մոխրագույն ամպեր էին լողում։ Կրեմլի պարսպի տակով խոր փոս էր փորված։ Տեղ-տեղ փտած գերաններ էին տնկված՝ վերջերս քանդված ջրաղացներից էին մնացել։ Ափին կախաղաններ էին դրված, երկուական գերան, վրան՝ չորսու։ Մեկից տրեխավոր մի մարդ էր կախված, բազուկները ետ ոլորած։ Թռչունները կոտցահարել էին կախ ընկած դեմքը։

— Հրեն՝ երկուսն էլ էնտեղ,— ասաց Ալեքսաշկան. փոսի հատակին, ձնով կիսածածկ, երկու դիակ էին ընկած,— գողեր կլինեն, դրանց էդպես են անում...

Ամբողջ հրապարակը՝ Իվերսկայայից մինչև սպիտակ, կապույտ գետնախարսխով, կապույտ գագաթներով Վասիլի Երանելու տաճարը, ամայի էր։ Սահնակների ճանապարհը հրապարակով պտույտ էր տալիս, մինչև Սպասսկիյե դարպասը։ Վերևում, ոսկյա չոգաթաթ արծվի վրա ագռավների երամն էր պտույտ տալիս՝ անհանգիստ, գարնանամուտի կռնչոցով։ Սև ժամացույցի սլաքները հասել էին ութին, զանգերն օտար երաժշտություն հնչեցրին։ Այլոշկան գդակը հանեց ու խաչակնքեց՝ աշտարակին նայելով։ Սարսափելի էր այստեղ։

— Ալեքսաշկա, գնանք, թե չէ մեզ կտեսնեն...

— Որ ինձ հետ ես, ոչնչից մի վախենա, անխելք։

Նրանք կտրեցին հրապարակը։ Մյուս կողմում, կողք-կողքի, իրար կպած փայտաշեն կրպակներն էին, բալագաները, խսիրե վրանները։ Խանութպանները արդեն դռների կողպեքները բացում, ձողերի վրա ապրանք կախ տալով։ Կալաչ ծախողների շարքում ծուխ բարձրացավ՝ թխված խմորի հոտ տարածվեց։ Բոլոր նրբանցքներից ժողովուրդ էր հավաքվում։

Ալեքսաշկան ուշադրություն չէր դարձնում վզակոթին կհասցնեն, թե կհայհոյեն. քիթն ամեն տեղ խոթում էր։ Ամբոխի արանք-

ներից խցկվում էր կրպակների առաջ, խոսքի բռնվում խանութպանների հետ, գները հարցնում, կատակներ անում: Ալյոշկան, բերանը բաց մնացած, հազիվ էր հասնում նրան: Մահուդե վերարկուով, գլխաշորի վրայից աղվեսամորթու գլխարկով գիրուկ մի կնոջ տեսնելով, Ալեքսաշկան կանչեց տվեց, քարշ գալով դեպի կինը, ցնցվելով ու կմկմալով. «Խե-եղմ որբու-ու-կի՛ս ողորմա-ցե-ե՛ք, սովի-ից մեռնու-ու-ո՛ւմ եմ...»: Վաճառականի այրին շրջազգեստը բարձրացնելով, փորին կախ արած քսակից երկու կեսկոպեկանոց հանեց, տրվեց, ծանրումեծ խաչակնքեց: Վազեցին բլիթ առնելու, տաք մեղրախմիչք խմելու:

— Քեզ ասում եմ՝ ինձ հետ չես կորչի,— ասաց Ալեքսաշկան:

Ժողովուրդը գնալով շատանում էր: Ոմանք գալիս էին մարդամեջ՝ լսելու, թե ինչ են խոսում, ոմանք՝ նոր հագած-կապածը ցույց տալու, ոմանք էլ աչքից հեռու դրածը թոցնելու: Նրբանցքում, ուր ձյան վրա, թաղիքի պես կտրած մազեր էին թափված, վարսավիրները հաճախորդ էին կանչում, մկրատները շխկշխկացնելով: Մեկին արդեն նստեցրել էին գեռնի մեջ խրված փայտին, կլոր ամանը գլխին էին հագցրել ու մազերն էին կտրում: Ամենաշատ աղմուկը թեյավաճառների շարքում էր: Կանայք այստեղ գոռում էին, ինչպես հրդեհի ժամանակ, ծախելով ու առնելով թել, ասեղ, կոճակ, կարուձևի ապրանք: Չկորելու համար Ալյոշկան բռնել էր Ալեքսաշկայի գոտուց:

Երբ նորից հրապարակ մտան, վազեվազ անցավ մեկը, ինչ-որ բաներ բղավելով: Վարվառկայից մեծ ամբոխ էր բարձրանում: Գոռում ու խլացուցիչ սուլում էին: Ստրելեցները ծեծված մարդուն էին բերում ձեռքերի վրա:

— Ուղղափառնե՞ր,— արցունքակալած աչքերով գոռում էին այս ու այն կողմ,— տեսեք, թե ի՞նչ օրն են գցել առևտրական մարդուն...

Մարդուն դրեցին ինչ-որ մեկի սահնակին: Ստրելեց Օվսել Ոժովը, սահնակի վրա բարձրանալով, դարձյալ նույն բաներից խոսեց. թե ինչպես գերմանացիք քիչ էր մնացել ծեծելով մեռցնեին խեղճ առևտրականին ու թե ինչպես վերևներում նստած բոյարները շուտով ամբողջ Մոսկվան կապալով ծախելու են օտարերկրացիներին... Ալեքսաշկան ու Ալյոշկան կիպ մոտեցան սահնակին:

Ալյոշկան պպզեց, նայեց ու ճանաչեց ծեծված մարդուն. գնդիկ, փոքր աչքերով, նապաստակի մորթու գլխարկով այն պոսադականն էր, որը Լուբյանկայում տակաթուխ երկու բլիթ ծախեց իրեն: Օղու հոտ էր փչում վրայից: Հոգնել էր տնքալուց: Կողքի պառկած, մտրթը ծղոտի մեջ թաղած, ցաքրանայն կրկնում էր միայն.

— Օ-օ՛խ... բաց թողեք ինձ, ապտծու սիրուն...

Օվսել Ոժովը, խաչակնքելով, գլուխն էր խոնարհում եկեղեցիների ու ժողովրդի առաջ: Ստրելեցները փափսում էին ամբոխի մեջ: Զարացածությունը բորբոքվում էր: Հանկարծ բղավեցին. «Գալի՞ս են, գալի՞ս են...»:

Սպասկիյե դարպասից սահնակի ճամփով երկու հեծյալ էին սլանում: Առջևինը ստրելեցի այլ կափտանով էր, թեք դրած գդակով: Այմաստներով զարդարված կեռ թուրը զարնվում էր թավշյա թամբատակին: Առանց վարգը դանդաղեցնելու, երասանները թողած, մխրճվեց ամբոխի մեջ: Վախեցած տասնյակ ձեռքեր բռնեցին ձիու սանձը: Հեծյալը գլուխն էր պտտում դեսուդեն, դեղին ատամները բացած, լայն ճակատ ուներ, ներս ընկած աչքեր, կոշտ մորուք... Մոսկվայում Տարարուլ էին կոչում նրան, իշխան Իվան Անդրեևիչ Խովանսկին էր՝ վոլեվոդա, հնագույն ծագում ունեցող բոյարին և վատատոհմիկ Նարիշկինների անչափ ատող մեկը: Տեսնելով, որ ստրելեցի կափտանով է, ստրելեցները բղավեցին.

— Մեզ հե՞տ, մեզ հե՞տ, Իվան Անդրեևիչ,— ու մոտ վազեցին:

Երկրորդը, որ այնքան էլ կտրինավարի չկանգնեցրեց ձին, Վասիլի Վասիլևիչ Գոլիցինն էր: Ձիու պարանոցին թփթփացնելով, հարցրեց.

— Խռովությո՞ւն եք անում, ուղղափառ մարդիկ: Ձեզ ո՞վ է նեղացրել, ինչի՞ համար: Խոսեք, խոսեք, մեր հոգին օրուգիշեր մարդկանց համար է ցավում... Թե չէ ցարը վերևից ձեզ տեսավ, փոքր երեխա է, վախեցավ, մեզ ուղարկեց՝ իմանանք...

Մարդիկ, բերանները բաց մնացած, նրա դիպակե մուշտակին էին նայում՝ Մոսկվայի կեսն այդ մուշտակով գնել կլիներ, ձիուն թփթփացնող նրա ձեռքի քարերով մատանիներին՝ կրակ էր ցայտում մատանիներից: Մարդիկ ետ-ետ էին քաշվում, ոչինչ չպատասխանելով: Քթի տակ ծիծաղելով, Վասիլի Վասիլևիչը մոտեցավ ու կանգնեց Խովանսկու կողքին՝ սանձերը հավասար:

— Գնդապետներին տվեք մեր ձեռքը, ինքներս դատաստան կըտեսնենք՝ գլխիվար կկախենք զանգակատնից,— բղավում էին ստրելեցները:— Ի՞նչ են մտածում վերևները նստած բոյարները: Ինչի՞ համար երեխին ցար կարգեցին մեր գլխին, Նարիշկինների վիժվածքին:

Ձեռնոցի եզրով Խովանսկին ալեխառն բեխերն էր սղալում: Ձեռքը բարձրացրեց: Բոլորը սակրեցին...

— Ստրելեցնե՞ր:— Նա բարձրացավ թամբի վրա, լարվածությունից շառագունեց, նրա կոկորդային ձայնը լսեցին ամենահեռվում կանգնածները:— Ստրելեցնե՛ր: Հիմա ինքներդ եք տեսնում, թե ինչ անտանելի լծի տակ եք բոյարների ձեռքին... Հիմա աստված գիտե, թե ինչ ցար են կարգել: Ե՞պ չեմ նրա անունը տվել... Ու կտեսնեք՝ ոչ թե փող, ուտելիք էլ չեն տալու ձեզ... Մորտի պես էլ պիտի աշխատեք... Ու ձեր երեխաներն էլ ցմահ ճորտության կգնան Նարիշկիններին... Ավելի վատ... Ձեզ էլ, մեզ էլ կծախեն օտարերկրացիներին... Մոսկվան կկործանեն և ուղղափառ հավատն արմատախիլ կանեն... Է՛հ, կար ռուսական ուժը, ո՞ւր է հիմա:

Այստեղ բոլորն այնպես բղավեցին, որ Ալյոշկան վախեցավ. «Է՛, հիմի ոտատակ կտան...»: Ալեքսաշկա Մենշիկովը, սահնակից սահնակ թռչելով, երկու մատը բերանը խոթած, սուլում էր: Ու լսվեց

միայն, թե ինչպես Տարարույը, թամքի վրա տեղավորվելով, բղավեց.

— Ստրելեցնե՞ր: Հայդա՛ գետի ափը, գնդերը, էնտեղ կխոսենք...

12.

Հրապարակում մնացին մենակ չծարձակ սահնակները, մեկ էլ՝ Ալյոշկան ու Ալեքսաշկան: Ծեծված պոսադականը պատկած տեղից բարձրացավ, շուրջը նայեց ուռած ու նեղլիկ աչքերով, երկար փոքշտում էր:

— Հորեղբայր,— ասաց Ալեքսաշկան, աչքով անելով Ալյոշկային,— մենք քեզ տուն կհասցնենք, մեղք ես:

Պոսադականի խելքը գլուխը դեռ չէր եկել: Տղաները նրան տանում էին, նա մրթմրթում էր, գայթում: Հանկարծ՝ «Կանգնե՞ք», դեմ էր հրում տղաներին, սպառնում ինչ-որ մեկին, թրջված վալենկան գետնին խփելով: Գետն անցան, մոտեցան Սերպուխովսկիյե դարպասին: Ճանապարհին իմացան, որ Ֆեդյա Զայաց է անունը: Մեծ չէր նրա բակը պոսադում, մի ծառ կար բանջարանոցում, սերմնագոավի բներով, բայց դարպասն ու խրճիթը նոր էին: «Էս են, հա՞, իմ բլիթ ու կազաչները,— ուրախացավ Զայացը, իր տունուտեղը տեսնելով.— Էս են հա՞, իմ մեղրահացերը, իմ ապրուստը»:

Դուրս պրծած աչքով ու չեչոտ մի կնիկ բացեց դռնակը: Զայացը դեմ հրեց նրան, և Ալեքսաշկան ու Ալյոշկան ետևից մտան: «Դո՞ւք՝ ուր: Ինչի՞»,— ընկավ ետևներից, բայց ձեռքը թափ տվեց ու դեպի խրճիթը գնաց: Նստեց նոր խոհրով պատված նստարանին, ինքն իրեն տնտղեց՝ ամեն ինչ պատառոտված էր: Գլուխն օրորեց, լաց եղավ:

— Սպանեցին ինձ,— ասաց նա շիլ կնոջը:— Թե ո՞վ ծեծեց, ինչի համար, չեմ հիշում: Մաքուր բան տուր, հագնեմ:— Ու հանկարծ բղավեց, ձեռքը խփելով նստարանին:— Բաղնիքը վառի, առում եմ, քոռ շուն:

Կինը քիթը քաշեց, գնաց: Տղաները կպել էին խրճիթի կեսը բռնած վառարանին: Զայացը խոսում էր.

— Ինձ փրկեցիք, տղերք: Հիմի ինչ կուզեք, խնդրեք... Ոտից գլուխ ծեծված եմ, մի անկնաս տեղ չունեմ... Հիմի ո՞նց եմ տուփս շաղակած բան ծախելու: Վայ իմ գլխին... Բայց գործը գործ է, չէ՞...

Ալեքսաշկան նորից աչքով արեց Ալյոշկային: Ասաց.

— Մեզ ոչինչ պետք չի, թող գիշերն էստեղ մնանք:

Երբ Զայացը քարշ գալով գնաց բաղնիք, տղաները եղան վառարանի վրա:

— Վաղը նրա փոխարեն կգնանք բլիթ-մլիթ ծախելու,— շշնջաց Ալեքսաշկան,— ապացի, չէ՞, ինձ հետ չես կորչի:

Լույսը չբացված, շիլ տանտիրուհին վառարան մտցրեց խմորի գնդեր, միջուկով թերթաբլիթներ, կեղով կազաչներ ու տակաթուխ բլիթներ, պասուցը՝ պիսեռով, շաղգամով, աղ դրած սնկով, ուտիստուցը՝ նապաստակի մսով, տավարի մսով, լափշայով: Ֆեդկա Զայացը թախտի վրա տնքում էր քուրքի տակ, ձեռուտ շարժել չէր կարողանում: Ալեքսաշկան խրճիթն ավեց, բակ թռավ ջուր բերելու, ցախ կրելու, մոխիրն ու կեղտաջուրը դուրս տարավ, Ալյոշկային ուղարկեց Զայացի անասունը ջրելու: Գործը եռում էր ձեռքերի մեջ, և ամեն ինչը կատակով էր անում:

— Ճարպիկ տղա ես,— տնքաց Զայացը,— Է՛հ, քեզ կուղարկեի շուկա՝ առուտուրի... Բայց ախր փողերը կառնես, կփախչես... Ծատ ես աչքաբաց...

Այստեղ Ալեքսաշկան սկսեց հանբուրել կրծքի խաչը, որ փող չի գողանա, պատից վեր բերեց քառասուն սրբոց պատկերն ու համբուրեց: Ինչ աներ՝ Զայացը հավատաց: Կինը արկղերի մեջ, քրջերի տակ երկու հարյուրի չափ թխվածք դրեց, Ալեքսաշկան ու Ալյոշկան գոգնոցներ հագան, թաթմանները խրեցին գոտիների տակ և, արկղերն առած, ելան բակից:

— Տակաթուխ, մեղրաթուխ բլիթնե՞ր, զուգը կես գոռ՞շ, ուտես՝ վառվի քո սրտ՞շ,— զոնգում կանչում էր Ալեքսաշկան, անցնողդարձողին նայելով:— Ծուտ արեք, պրծա՞վ բլիթը:— Տեսնելով խմբով կանգնած ստրելեցների, երգաձայն էր կանչում, հետը պար գալով.— Պրծա՞ն բլիթները ցարական ու բոյարական, Կրեմլում առան, վիզս գցին պարան, Նարիշկինները կերան, ամենքը լուծ ընկան:

Ստրելեցները ծիծաղում էին, ձեռքից ձեռք խլելով բլիթները: Ալյոշկան նույնպես կանչում էր երգեցիկ: Գետը չհասած, ստիպված էին ետ գնալ՝ նոր ապրանք բերելու:

— Տղերք, ձեզ աստված ուղարկեց ինձ,— գարմացել էր Զայացը:

13.

Միխայլա Տրյուտովը երրորդ շաբաթն էր թափառում Մոսկվայում՝ ոչ գործ կար ձեռքին, ոչ փող: Այն ժամանակ Լուբյանկայա հրապարակում ատենավորները ծաղրուծանակի ենթարկեցին նրան: Ոչ հող տվեցին, ոչ մուժիկ: Իշխան Ռոմոդանովսկին խայտառակ արեց, հրամայեց հաջորդ տարի գալ, բայց արդեն առանց գողանալու՝ ձին լավը պիտի լիներ:

Հրապարակից գնաց պանդոկ՝ քնելու: Ճանապարհին ավազ եղբորը հանդիպեց, սա նույնպես ամոթանք տվեց ձախորդության համար ու ձեռքից առավ լաբուն: Խելքը չկտրեց թուրն էլ խլել, պապական գոտին էլ՝ շերտավոր մետաքսից էր, արծաթյա ճարմանդներով: Նույն երեկոյան պանդոկում, սխտորով օղուց տաքացած, Միխայլան օղեվաճառին գրավ դրեց թուրն ու գոտին:

Երկու ճարպիկ մոսկվացի կպան Միխայլայից. մեկն ասաց, թե վաճառականի տղա է, մյուսը՝ փոքրավոր, ավելի ճիշտ ու հասարակ՝ օղետան թափթփուկներից էին: Սկսեցին գովել Միխայլային,

թերանը համբուրեցին, խոստացան ուրախացնել։ Մի շաբաթ նրանց հետ խմում էր Միխայլան։ Տարան գաղտնի մի տեղ, ինչ-որ հույնի մոտ, կովի՝ ջրով լի պոզերից ծխախոտ ծխելու, ծխում էին ու թրմրում, աչքերին դիվական բաներ էին երևում՝ քաղցր ու զարհուրելի։

Տարան ցարապատկան քաղաքը, որ ժողովրդի համար էր բացվել Մոսկվա գետի վրա, ոչ այնքան շոգեհարվելու, որքան նայելու և զվարճանալու, երբ գոլորշու ամպերի միջից ընդհանուր նախաքաղաքը էին լցվում տկլոր կանայք, ավելներով ամոթատեղերը ծածկելով։

Համոզում էին գնալ միջնորդ կնոջ մոտ։ Բայց ջահելության բերումով Միխայլան վախենում էր արգելված պտուղից։ Հիշեց, թե ինչպես հայրը մեկ-մեկ, երեկոյան աղոթքից հետո, մատներով մոմի այրուկը հանելով, կաշեպատ և մետաղյա փակերով մի հին գիրք էր բացում, շրջում տուտը ճարպոտած թերթն ու կարդում կանանց մասին.

«Ի՞նչ է կինը։ Գայթակղիչ ցանց է մարդոց։ Դեմքն է լուսեղեն, աչերն են խոշոր ու թարթող, ոտքերը խաղացկուն ու դրանով հոգեհան, մեջն անդամաց սատանի կրակ բորբոքող... Ի՞նչ է կինը։ Ճի կծիկ, սխտ ու տապակ դժոխքի, չարություն անիմաստ, հրապույր դիվական, հորդոր սատանեական»...

Էլ ինչպե՞ս չերկնչեր։ Միխայլային մի անգամ տարան Պոկրովկիչե դարպասի մոտի պանդոկը։ Դեռ չէին նստել, խսիրե վարագույրի ետևից դուրս պրծավ կարճլիկ մի աղջիկ՝ մազերն արձակ, հոնքերը քթարմատից քունքերը սև ներկած, աչքերը կլոր, ականջները կախ, թշերը ճակնդեղի հյութից կապտած։ Վրայից դեմ գցեց լաթեղեն ծածկոցը, մերկ, գիրուկ ու ճերմակ՝ սկսեց պար գալ Միխայլայի առաջ, պղնձյա մատանիների, զնգզնգուն օղերի մեջ կորած ձեռքերով կանչելով նրան։

Ցղային թվաց, թե չարք է՝ այնքան սարսափելի, այնքան զարհուրելի էր մերկությունը... բերանից օղու և մարմնից պուր քրտինքի հոտ էր փչում... Միխայլան վեր թռավ, բղավեց վայրենաձայն. ձեռքը բարձրացրեց, բայց չխփեց աղջկան, դուրս վազեց փողոց։

Գարնանային դեղին վերջալույսը խամրում էր խաղաղված փողոցի խորքերում։ Արբեցնող էր օդը։ Սառույցի բարակ շերտը խշշրտվում էր սապոգների տակ։ Ամրոցի՝ երկաթյա փոքրիկ դրոշակով գորշագույն աշտարակի, սրածայր տանիքի ետևից ելնում էր պղնձյա-կարմրավուն լուսնի շրջանը, շողալով Միխայլայի դեմքին... Սարսափելի էր... Ատամներն իրար էին զարկվում, կուրծքը սառել էր... Մոռաց պանդոկի դուռը, մուտքին ճերմակ պտվերի պես երևաց նույն աղջիկը. «Ինչի՞ց վախեցար, ետ արի, սիրուն տղա»։

Միխայլան գլխապատառ հետու վազեց։

Ծուտով փողը վերջացավ։ Ընկերները չերևացին։ Կերածն ու խըմածը, տեսածն ու չփորձածը ափսոսելով, Միխայլան դեսուդեն էր թափառում։ Հոր մոտ՝ գավառ վերադառնալու մասին մտածել իսկ չէր ուզում։

Վերջապես հիշեց իր տարեկից ու կնքահոր որդու՝ Ստյոպկա Օդոևսկու մասին և նրա դուռը գնաց։ Ծառաները լավ չընդունեցին, ավազակի ոեխ ունեին բոլորը. «Ո՞ւր ես գլխարկով՝ քշում առաջ»՝ մուտքի մոտ մեկը Միխայլայի գլխից թոցրեց գլխարկը։ Բայց վախեցնելուց հետո ներս թողեցին։ Տաք ու ընդարձակ նախասենյակում, ուր թախտերի վրա գազանների մորթիներ էին գցված, նրան դիմավորեց ատլասե շապկով, սեկե հրաշալի ոտնամաններով, պրյանիկի պես սիրունիկ մի պատանյակ.

— Ի՞նչ գործ կա բոյարինի հետ։

— Ստեպան Սեմյոնիչին ասա, որ ընկերը՝ Միշկա Տրյոտովը, խոնարհ բարև է անում։

— Ասեմ,— երգեցիկ ձայնեց պատանյակը, ծույլ-ծույլ գնաց, մետաքս գանգուրները շարժելով։ Ստիպված էր սպասել։ Աղքատը հրպարտ չի լինի։ Պատանյակը նորից հայտնվեց, մատով արեց. «Ներս գնա»։

Միխայլան մտավ հյուրասրահ։ Վախվորած՝ մոլեռանդությամբ խաչակնքեց, անկյունին նայելով, ուր սրբապատկերները կախված էին ոսկյա ժանյակներով զարդարված դիպակե վարագույրի վրա։ Աչքերը դեսուդեն տարավ՝ ա՞յ թե ինչպես են ապրում հարուստները։ Ապարանքի պես էր։ Պատերին խավոտ թավիշ էր քաշված։ Հատակին մեծ ու փոքր գորգեր էին փռված՝ գույնզգույն։ Օթոցների վրա թավշե ծածկոցներ էին գցված։ Լուսամտագոգերին՝ մարգարտանախշ կտորներ։ Պատերի տակ՝ մետաքս ու թավշով ծածկված սնդուկներ և արկղներ։ Ծածկոցներից որն էլ վերցնեիր զիպունի կամ ֆերյազի համար՝ երազի պես բան կլիներ... Լուսամուտների դիմաց փայտյա մեծ արկղիկ կար, ժամացույցով, վրան՝ պղնձյա մի փիղ։

— Ա՛, Միշա, բարև,— ասաց Ստյոպկա Օդոևսկին, դռան մոտ կանգնած։ Միխայլան մոտեցավ, մատները գորգին կպցնելով խոնարհվեց։ Ի պատասխան, Ստյոպկան գլխով արեց։ Համենայն դեպս, խոնավ ձեռքը պարզեց՝ սեղմելու. դիմացինը ճորտ չէր, ազնվականի զավակ էր։— Նստիր, հյուրս կլինես։

Ձեռնափայտը խաղացնելով, տանտերը նստեց։ Միխայլան էլ նստեց։ Ստյոպկայի ածիլված գլխին թանկարժեք քարերով դրվագված գլխարկ կար։ Ճակատը տակառանման էր, հոնք չուներ, կոպերը կարմիր, քիթը մի քիչ ծռած, պստիկ ծնոտին՝ ցանցառ մազեր։ «Էս վիժվածքին փչես կընկնի, ու հարստությունը սրան են տվել»,— մտածեց Միխայլան, և նվաստացած, ինչպես վայել է չքավորին, պատմեց իր ձախորդությունների, ջահել կյանքը մաշող աղքատության մասին։

— Ստեպան Սեմյոնիչ, ի՞նչ ասեմ, սովորեցրու քո խոնարհ ծառային, թե գլուխը ինչտեղ դնի... Քիչ է մնացել, գնամ մենաստան... Քիչ է մնացել, լախտն առնեմ ու սրա-նրա ճամփան կըտրեմ...— Այս խոսքերի վրա Ստյոպկան գլուխը պատի կողմը դարձրեց, ուռած աչքերն ապակյա դարձան։ Սակայն Միխայլան նկատե-

լու չդրեց՝ լախտի մասին կարծես հենց այնպես էր ասել, անխելքությունից...— Ստեպան Սեմյոնովիչ, էլ ուժ չունեմ էպ անիծված աղքատությանը դիմանալու...

Լռեցին: Միխայլան ոչ բարձրաձայն, հարկը պատշաճին հոգացեր էր հանում: Քթի տակ չարությամբ ծիծաղելով, Ստյոպկան ձեռնափայտի ծայրն էր տանում-բերում գորգի թանավոր վիշապի վրայով:

— Քեզ ինչ խորհուրդ տամ, Միշա... Խելոքի համար շատ հնար կա, անխելքինը մուրացկանի տոպրակն է ու բանտը... Հրեն, թեկուզ հենց Վոլոդկա Զեմոդանովը, երկու կարգին գլուղ խլեց հարեվանից... Լեոնտի Պուստոռոսլևը օրերս մի լավ ագարակ խլեց Մոսկվայում Զիժովներից...

— Լսել եմ, զարմացել... Էդ տեսակ գործն ինչպե՞ս են անում, կատակ բան հո չի՞ խլելը:

— Աչքդ մի գլուղի վրա դիր ու կալվածատիրոջը շատով տուր: Ամենքն էլ էդպես են անում...

— Ո՞նց տամ շատով:

— Էսպես. մի կոպեկով թուղթ ու թանաք ես առնում հրապարակում նստած գրագրից ու մատնագիր սարքում...

— Ինչո՞վ եմ մեղադրում: Ինչի՞ վրա եմ մատնում:

— Զահել եղ, Միշա, կաթից դեռ չես կտրվել... Հրեն, Լյովկա Պուստոռոսլևը գնացել էր Զիժովների տուն՝ կնունքի, ավելի շատ ականջ էր դրել, քան խմել, տեղն եկած տեղն ինքն էլ էր խոսք գըցել... Մերուկ Զիժովը սեղանի վրա բերանից թոցրել էր. «Ասված երկար կյանք տա մեր մեծ թագավոր Ֆյոդոր Ալեքսեևիչին, թե չէ ասում են մինչև թաթախում ապրողը չի, Կրեմլում երեկ գիշեր հավն աքլորի պես կանչել է»... Պուստոռոսլևը հիմար հո չի, վեր է թռել ու գոռացել. «Խոսք ու Գործ»: Բոլոր հյուրերին, տանտիրոջ հետ միասին բռնել ու քարշ են տվել Գաղտնի գործերի ատյան: Պուստոռոսլևը, թե՝ «Էսպես-էսպես, Զիժովը թագավորի մասին գեշ-գեշ խոսքեր է ասել»: Զիժովի ձեռներն ոլորել ու քաշել են պրկոցի: Ու գործ բացել աքլորի պես կանչող հավի մասին: Հավատարմության համար Պուստոռոսլևին են տվել Զիժովի ագարակը, Զիժովին ցմահ աքսորել Սիբիր: Խելքով մարդիկ էսպես են գործ բռնում...— Ստյոպկան Միխայլայի վրա հառեց իր ձկան անթարթ աչքերը:— Վոլոդկա Զեմոդանովն ավելի հեշտ է արել. մատնել է, թե հարևանի բակում քիչ էր մնացել ծեծելով սպանեին իրեն, ատիճանավորներին էլ խոստացել իլաձի մեկ երրորդն իրենց տալ: Հարևանը պատրաստ է եղել վերջին շապիկը նրանց տալ, մենակ թե գլուխն ազատի դատարանից...

Մտածմունքի մեջ ընկած Միխայլան, գլխարկը ճմռելով, ասաց.

— Ստեպան Սեմյոնիչ, դատական գործերում վարժ չեմ:

— Վարժ թե լինեիր, չէի սովորեցնի... (Ստյոպկան այնքան չար ծիծաղեց, որ Միխայլան ետ-ետ գնաց, նրա մանրիկ, փչացած ատամներին նայելով:) Դատարաններում քարշ գալու համար փորձ է պետք... Մեկ էլ տեսար, քեզ հանեցին ցցի... Էդպես է, Միշա, ուժեղի հետ գործ չունենաս, թույլի գլխին տուր... Տեսնում եմ, առանց վախենալու մոտս ես եկել...

— Ստեպան Սեմյոնիչ, ո՞նց թե առանց վախենալու:

— Սուս մնա, սուս մնալ էլ պիտի սովորես... Քեզ հետ էպես հանգիստ գրույց ենք անում, գիտե՞ս ուրիշների հետ ինչ եմ անում... Ասենք, քեֆդ տեղը չի... Մի հատ ծափ կտամ... ծառաները կթափվեն ներս... Ինձ ուրախացրեք, կասեմ, հավատարիմ նորտեր... Զեռները կծպեին ու կտանեին ցած, որ հետդ մուկն ու կատվի խաղ անեն...— Նոյից ծիծաղեց՝ մենակ բերանը բացելով, աչքերն անկենդան:— Մի վախենա, էսօր առավոտից հանաք եմ անում:

Միխայլան զգուշությամբ վեր կացավ, պատրաստվելով գլուխ տալ ու գնալ: Ստյոպկան ձեռնափայտի ծայրը նրան դիպցրեց, ստիպելով նստել:

— Ներող կլինես, Ստեպան Սեմյոնիչ, թե որ անխելքությունից մի ավել բան ասացի:

— Ավել բան չես ասել, բայց համարձակվել ես՝ ոչ ըստ աստիճանի, ոչ ըստ տեղի ու տոհմի,— սառն ու մեծավայել պատասխանեց Ստյոպկան:— Լավ, աստված կների: Մյուս անգամ ինձ հաշտում կսպասես, ներս կկանչեն, չեմուչում կանես, ներս չես գա, կասեմ նստի, չնստես: Ու ինձ գլուխ կտաս ոչ թե քիչ առաջվա նման, այլ ուրբս կընկնես:

Միխայլայի ոունգերը թրթռացին, բայց և այնպես զսպեց իրեն, նվաստացած շնորհակալ եղավ խրատի համար: Ստյոպկան հորանջեց, բերանը խաչակնքեց:

— Պետք է օգնել, որ դուրս գաս էդ վիճակից, պետք է... Մըտքիս մի բան ունեմ... Լեզուդ քեզ պահել կարո՞ղ ես... Լա՛վ... Տեսնում եմ, հասկացող տղա ես... Մոտ նստիր... (Զեռնափայտը խրեց հատակին: Միխայլան փութով նստեց կողքը: Ստյոպկան ուշադիր զննում էր նրան:) Որտե՞ղ ես ապրում, պանդոկո՞ւմ: Կգաս, իմ տունը կմնաս: Զիպուն ու ֆերյազ կտամ քեզ, շալվար, սիրուն սապոգներ, ունեցած ջուլուփալասդ կպահես: Մի բոյարի կին կա, սիրտը պիտի շահես:

— Էն գործո՞վ,— Միխայլան թունդ կարմրեց:

— Հենց քո ասած գործով՝ դևերը կհանգստացնես: Առանց քըրտինք թափելու եֆիմոկ է որ կլցվի գրպանդ... Մի երևելի բոյարուհի կա... Գանձերի վրա նստած, մարմինը եռ բռնած... Հասկացա՞ր, Միշկա... Հնազանդ եղար, դու ու քո բախտը... Իսկ թե գողություն արեցիր, հրամանն կտամ գցեն արջերի փոսը՝ ոսկորներդ էլ չեն գտնի: (Մարգարտաշար թևնոցների տակից հանեց ձեռքերն ու ծափ զարկեց: Ներս մտավ քիչ առաջվա լկտի պատանյակը:) Ֆեոկտիստ, ազնվականի որդուն տար բաղնիք, սպիտակեղեն տուր ու կարգին շորեր... Կերերես մոտս, ընթրիքի:

14.

Արքայադուստր Սոֆյան վերադարձավ եկեղեցուց՝ հոգնել էր։ Մեծպասյա երկու ժամերգություն կանգնած էր անցկացրել։ Սև հաց, մեկ էլ կաղամբ էր ուտում, այն էլ՝ շատ քիչ։ Նստեց հեռու երկրներից բերած հոր աթոռին, ծնկներին դրեց ասեղնագործ թաշկինակի մեջ փաթաթած ճշխարքը։ Աթոռը նրա հրամանով վերջերս էին բերել Նստատաշ պալատից։ Այրին՝ Նատալյա թագուհին, իմանալով, աղմուկ բարձրացրեց. «Արքայադուստրը շուտով կհրամայի գահն էլ իր սենյակը տանել»... Թող բարկանա Նատալյա թագուհին։

Երկու փոքր պատուհանների մանր ապակիների միջից գույնզգույն ճառագայթներով մարտյան տաք արևն էր թափանցում... Սենյակը մաքուր էր, պարզ, չոր խոտերի բույրն էր տարածվել։ Պատերի ճերմակ էին՝ խցի պես։ Հախճաղյուսե, պտակելատեղերով վառարանը լավ վառվում էր։ Ամբողջ կարասին, թախտերը, սեղանը կտավներով էին ծածկված։ Ուղղաձիր ժամացույցի վարդանախշ թվատախտակը դանդաղ պտտվում էր։ Գրքերի փոքր պահարանը շղարշով էր ծածկված. մեծ պաս էր, գիրք ու գրաղմունքի ժամանակ չէր։

Սոֆյան մահուդե ոտնամաններով ոտքերը դրեց ոտնդիրին, աչքերը կիսախուփ ճոճվեց նիրհի մեջ։ Գարուն էր, գարուն, մեղքն՝ աշխարհն առած շրջում էր, անուշ-անուշ թափանցելով կույսի սենյակը... Այն էլ մեծ պասի օրերին... Պատուհանների վարագույրներն իջեցներ, քողարկեր գույնզգույն շողերը՝ ցանկություն չուներ տեղից ելնել, ցանկություն չուներ աղախին կանչել։ Գլխի մեջ դեռ հնչում էին հինավուրց բարեպաշտության եղանակները, իսկ ականջները տագնապած լսում էին՝ չե՞ն ճոճում հատակի տախտակները, չի՞ գալիս արդյոք կյանքիս լույսը, ա՜հ, ներս չի՞ մտնի մեղքը... «Հետո՞ ինչ, կքավեմ... Բոլոր սուրբ մենաստանները ոտքով կշրջեմ... Թո՛ղ ներս գա»։

Սենյակը ննջաբեր էր, միայն ճոճանակն էր թկթկում։ Շատ արցունք էր թափվել այստեղ։ Քանի անգամ էր պատեպատ զարկվել Սոֆյան այստեղ։ Բղավիր, ձեռքերդ կրծոտիր՝ միևնույն է, տարիներն անցնում են. ջահելությունդ թառամում... Ցարի աղջիկը հավերժ կուսության է դատապարտված, սև փեղույրի... Այս սենյակից մի դուռ կա՝ դեպի մենաստան։ Քանի-քանի արքայադուստր է բղավել այստեղ վայրենաձայն, դեմքները բարձերի մեջ թաղած, մազերը պոկոտելով՝ լսող չի եղել, տեսնող չի եղել։

Քանի-քանիսն են անպտուղ ավարտել կյանքը, հավերժ ննջել մենաստանների քարերի տակ։ Մոռացված են տարաբախտ այն կույսերի անունները։ Մեկին է բախտ վիճակվել՝ խելառ թոչունի պես դուրս է պրծել այս կույսի բանտից։ Ազատ է թողել սիրտը՝ սիրի՞ր... Եվ աչքի լույս, Վասիլի Վասիլևիչը գեղեցկատես, մտրակ ու սապոգով այր մարդ չէ հասարակ, սիրահար է քաղցրալեզու, սիրեկան է փաղաքուշ ու անհամբեր... Օ՜հ, մեղք է, մե՜ղք։ Սոֆյան, ճշխարքը դեն դնելով, ձեռքերը թույլ-թույլ թափահարեց, ասես դեն էր վանում նրան, և առանց աչքերը բացելու, ժպտաց պատուհանից թափանցող տաք շողերին, ջերմացնող տեսիլներին...

15.

Հատակը ճռռաց։ Սոֆյան վեր թռավ, ակնապիշ նայեց դռանը, կարծես հիմա ոսկեկար հանդերձով հրաթև մահսաբերն էր ներխուժելու։ Շրթունքները դողացին՝ նորից կոթնեց թավշապատ բռնակին, դեմքն ափին հենեց։ Սիրտը սաստիկ բաբախում էր։

Ցածր բարավորի տակ կռանալով, զգուշությամբ ներս մտավ Վասիլի Վասիլևիչ Գոլիցինը։ Անխոս կանգնեց։ Սոֆյան իսկույն կգրկեր նրան՝ ծովի պես ալեկոծված ամբողջ մարմնով։ Բայց ձևացրեց, թե ննջում է՝ սույնն ավելի բարեպատշաճ էր. հոգնել է ժամերգությանը կանգնած արքայադուստրը և ննջում է ժպտալեմ։

— Սոֆյա,— կամացուկ ձայն տվեց Գոլիցինը։ Դիպակը խշխշացնելով, կռացավ։ Սոֆյայի շրթունքները բացվեցին։ Այդ ժամանակ բուրումնավետ բեխերը խտղտացրեցին այտերը, տաք շրթունքները մոտեցան, պինդ համբուրեցին։ Սոֆյան ալեկոծվեց, անբացատրելի մի ցանկություն անցավ ողնաշարով, վառող ջղաձգությամբ հալվեց նրա լայն կոնքերի մեջ։ Ձեռքերը բարձրացրեց՝ Վասալի Վասիլևիչի գլուխը գրկելու, և ետ հրեց.

— Օ՜հ, հեռացիր... Ինչ ես անում, մեղք կլինի ուրբաթ օրով...

Բացեց խելացի աչքերն ու, ինչպես միշտ, զարմացավ Վասիլի Վասիլևիչի գեղեցկությամբ։ Զգաց, որ անհամբեր է նա։ Գլուխն օրորեց, ամբողջովին բերկրանքով համակված...

— Սոֆյա,— ասաց Գոլիցինը,— ներքևում Իվան Միխայլովիչը և Իվան Անդրեևիչ Խովանսկին մեծ լուրերով են եկել մոտս։ Գնանք։ Գործն անհետաձգելի է...

Սոֆյան բռնեց նրա ձեռքերը, սեղմեց փարթամ կրծքին ու համբուրեց ափերը։ Արտևանունքները թաց էին ափեափ սիրուց։ Մոտեցավ հայելուն՝ պսակն ուղղելու, և մտացրիվ նայեց իր արտացոլմանը. գեղեցիկ չէր, բայց չէ որ սիրո՞ւմ է...

— Գնանք։

Կողափայտերով պատուհանի մոտ, մորթե գլխարկները կամաթավոր առաստաղին քսելով, կանգնած էին Խովանսկին և արքայադստեր քեռին՝ լայն այտոսկրերով, ճեղքի պես նեղ աչքերով, քրտինքի մեջ կորած, ընծայված մուշտակով, կշտությունից ու հուզմունքից կարմրատակած Իվան Միխայլովիչ Միլոսլավսկին։ Արագաքայլ մոտենալով, Սոֆյան գլուխը խոնարհեց միանձնուհու պես։ Իվան Միխայլովիչը հնարավորին չափ առաջ պարզեց մորուքն ու շրթունքները՝ ավելի մոտենալուն փորձ էր խանգարում։

— Մատվենն արդեն Տրոիցեում է։ (Սոֆյայի կանաչավուն աչքերը լայնացան։) Վանականները նրան ցարի պես են ընդունում... Մայիսի տասներկուսին Մոսկվայում պիտի լինի։ Տրոիցեի մոտերքից ազգականս՝ Պետկա Տոլստոյն էր ձին քշել, եկել... Պատմում

էր, որ ժամերգությունից հետո Մատվեևը ժողովրդի առաջ շան պես հաչացել ու խայտառակ է արել մեզ՝ Միլոսլավսկիներիս: «Ագռավներ են հավաքվել ցարական գանձարանի վրա՝ ասել է... Ստրելեցների նիզակների վրայով պալատ են ուզում խցկվել... Մենակ թե դա լինելու բան չէ... Խռովությունը կճզմեմ, ստրելեցների գնդերը ցրիվ կտամ քաղաքներում և կուղարկեմ սահմանների վրա: Վերևներում նստած բոյարների թևերը կջարդեմ: Խաչը կհամբուրեմ Պյոտրը Ալեքսեևիչի առաջ: Անչափահասության համար էլ թող մայրը թագավորի՝ Նատալյա Կիրիլովնան, ու չեմ մեռնի, մինչև ամեն ինչ այդպես չլինի...»:

Սոֆյայի դեմքը մոխրագույն դարձավ: Կանգնած էր՝ գլուխն ու ձեռքերն իջեցրած: Միայն եղջրաձև պապկն էր ցնցվում ու լալն հյուսն էր շարժվում մեջքի վրա: Վասիլի Վասիլևիչը քիչ հետո էր կանգնած, տվերի մեջ: Խովանսկին, մոտլված նայելով ոտքերին, ասաց.

— Կլինի, մենակ թե ուրիշ բան... Մատվեևը Մոսկվա չի մտնի...

— Բոլորից վատ խայտառակել ու հաչացել է իշխան Վասիլի Վասիլևիչի վրա,— ավելի փութկոտ շշնջաց Միլոսլավսկին:— Ասել է՝ «Վասկա Գոլիցինը ցարական թագը ուզում է ձեռը գցել, գլուխն է պետք թոցել...»:

Սոֆյան դանդաղ շրջվեց, աչքերը հառեց Վասիլի Վասիլևիչի աչքերին: Վերջինս քթի տակ ծիծաղեց՝ նվազ ու անուժ մի կնճիռ գոյացավ բերանի անկյունում: Սոֆյան հասկացավ. նրա կյանքի հարցն է վճռվում, խոսքը նրա գլխի մասին է... Հանուն այդ կնճիռի Մոսկվան կրակ կտար հիմա... Հուզմունքը կոծկելով, Սոֆյան հարցրեց.

— Հապա ստրելեցնե՞րն ինչ են ասում:

Միլոսլավսկին փսփսացրեց: Վասիլի Վասիլևիչը փափուկ քայլերով անցավ պալատով, դռների ետևը նայեց, ետ եկավ ու կանգնեց Սոֆյայի ետևում: Չկարողանալով իրեն զսպել, Սոֆյան ընդհատեց Խովանսկուն, որն սկսել էր պատմել.

— Թագուհի Նատալյա Կիրիլովնան արյուն է ուզում.... Ինչի՞ց կլինի՝ տեսնես: Դեռ չի կարողանում մոռանալ, որ նվազ տոհմից է, հորական տանը տրեխով էր ման գալիս... Ամենքը գիտեն, որ երբ Մատվեևը խղճաց ու իր պալատները տարավ, փոխնորդ շապիկ չուներ հագին... Օրում ապտարանք չէր տեսել, մուժիկների հետ մի սեղանի շուրջ նստել ու խմել էր:— Սոֆյայի գեր, մարգարտաշար օձիքով պինդ օղակված պարանոցը զայրույթից ուռել էր, այտերին բծեր երևացին:— Լա՞վ կյանք է արել թագուհին, թե լուսահոգի հայրիկի, թե պատրիարք Նիկոնի հետ քիչ քեֆեր չի քաշել... Մենք հո գիտենք, պալատում ապրողներս... Պետրուշա եղբայրս ոչ դեմքով, ոչ շարժումներով հորը նման չէ՝ ի՞նչ հանելուկ է, ի՞նչ հրաշք:— Մատանիները չխկացնելով, մատներն ազուցեց ու կրծքին սեղմեց...— Եվ կինարմատ եմ, ինձ համար ամոթ է ձեզ հետ թագավորական գործերից խոսել... Բայց եթե Նատալյա Կիրիլովնան արյուն է ուզում, արյուն կթափվի... Կամ էլ՝ բոլորիդ գլուխը կթոցնեն, ես էլ ջրհորը կնետվեմ...

— Շատ, շատ հանելի է այդպիսի խոսքեր լսել,— ասաց Վասիլի Վասիլևիչը:— Իշխան Իվան Անդրեևիչ, պատմիր արքայատստերը, թե ինչ է կատարվում գնդերում...

— Ստրելեցներից բացի, բոլոր գնդերը քո կողմն են, Սոֆյա Ալեքսեևնա,— ասաց Խովանսկին:— Ամեն օր ստրելեցները հավաքվում են մեծավորների տների առաջ, քար ու փետ շարտում պատուհաններին, գնդապետներին հայհոյում... («Քո՛ն»,— այս ասելիս Միլոսլավսկու թութը կատվի թոռալ, Վասիլի Վասիլևիչը վախեցած ճնճղացրեց աչքերը, իսկ Սոֆյան հոնքն իսկ չշարժեց...) Գնդապետ Բուխվոստովին ու հարյուրապետ Բոբորիկինին, խիստ խոսելու և զսպել փորձելու համար, ստրելեցները հանել են զանգակատուն ու ցած շպրտել, բղավելով. «Շատ լավ եղավ, շատ լավ...»: Հրաման լսել չեն ուզում. արվարձաններում, Սպիտակ քաղաքում ու Կիտայում խմբվում են և շուկաներում խառնակություն գցում ժողովրդի մեջ, գնում են բաղնիքներն ու բղավում. «Չենք ուզում, որ Նարիշկինները ու Մատվեևը տեր դառնան մեր գլխին, նրանց վիզը կոլորենք...»:

— Բղավելու համար մի հատ են, բայց մենք նրանցից մեծ գործեր պետք է տեսնենք:— Սոֆյան ձգվեց, հոնքերը զայրույթին աղեղվեցին:— Թող չվախենան ոչ նիզակներից անեն Արտամոն Մատվեևին, Ցազիկովին ու Լիխաչևին՝ իմ թշնամիներին, Նարիշկինների ամբողջ ազգությունը... Նրա լակոտին թող չվախենան սատկացնել... Խորթ մա՛յր, խորթ մա՛յր: Նզովված արգա՛նդ... Ահա՛, վերցրու...— Սոֆյան միանգամից բոլոր մատանիները հանեց մատներից, սեղմեց ափի մեջ ու պարզեց Խովանսկուն:— Ուղարկիր նրանց... Ասա՝ ինչ ուզեն, ամեն ինչ կտամ... Ոսկիկ էլ, հող էլ, ազատություն էլ... Թող չվախենան պետք եկած ժամանակ: Ասա նրանց՝ թող ինձ հրդեհակեն թագավորելու:

Վախեցած Միլոսլավսկին միայն ձեռքերն էր թափահարում Սոֆյայի վրա: Խեղահեղությունից բորբոքված Խովանսկին ատամներն էր մերկացրել... Վասիլի Վասիլևիչն աչքերը ծածկել էր ձեռքի ափով, հասկանալի չէ, թե ինչու՝ թերևս չէր ուզում, որ այդ խոսքերը լսելիս իր ինքնագոհ դեմքը տեսնեն...

16.

Ալեքսաշկան ու Ալյոշկան ամբողջ գարունը կուշտ կերան: Ավելի լավ ապրուստ չէր լինի: Զայացը նույնպես ճարպակալել էր, ծուլացել. «Ինձ հասանելիքը բանել եմ արդեն, հիմի էլ դուք բանեք ինձ համար, տղերք»: Ամբողջ օրը շեմին նստած, հավերին էր նայում, ծաղրին: Սիրում էր ընկույզ ուտել: Ծուլությունից ու ճարպակալելուց զանազան մտքեր եկան գլուխը. «Տեսնես, տղերքն ինձնից փող չե՞ն պահում: Չի լինի, որ գոնե մի քիչ չգողանան»:

Երեկոները, փողերը հաշվելիս, սկսեց հարցուփորձ անել, փոքր բաներից կպչել, գրպաններն ու բերանների մեջ ստուգել՝ թաքցրած փող փնտրելով: Գիշերները վատ էր քնում, շարունակ մտածում էր. «Մարդ պիտի որ գողանա՝ թե որ փողի հետ գործ ունի»: Մի միջոց էր մնացել՝ ահ տալ տղաներին:

Մի անգամ Ալեքսաշկան ու Ալյոշկան ուրախ-ուրախ տուն եկան՝ ընթրիքի: Փողերը տվեցին: Զայացը հաշվեց ու ձեռը գցեց գլուխը՝ մի կոպեկը չկա... Գողացել եք: Ո՞ւր է մի կոպեկը: Դեռ առավոտից կտրած, դալար ճիպոտն առավ, բռնեց Ալեքսաշկայի ականջից ու սկսեց խփել, հետն էլ խոսելով. մեկ՝ Ալեքսաշկային, երկու՝ Ալյոշկային: Տղաներին լավ ջարդելուց հետո ասաց ընթրիք տան:

— Ալ էդպե՛ս,— բերանը լիքը քացախ ու տաքդեղով դոնդող լցրած, ասաց նա,— ծեծից մենակ խելքն է ավելանում... Ձեզնից մարդ կդարձնեմ, տղերք, հետո կասեք՝ շնորհակալ ենք:

Խոզի մսով շչի կերավ Զայացը, մեղր ու պղպեղով համեմված հավի քարջիկ, հավի մսով լափշա, տապակած միս: Կաթով քաշովի խմեց: Գդալը դնելով անսփոռց սեղանին, բարակիկ ձայնով զկըռտում էր: Այտերը դողդողում էին կշտությունից, աչքերը փակվում էին: Ծալվարի կոճակներն արձակեց.

— Ատծուն եք աղոթելու ինձ համար, թանկագին երեխեք... Ես բարի մարդ եմ... Կերեք, խմեք, իմացեք, թե ձեր հերն եմ...

Ալեքսաշկան լուռ էր, բերանն էր ծռմռում, աչքերին չէր նայում: Ընթրիքից հետո Ալյոշկային ասաց.

— Ծեծի երեսից հորիցս փախա, սրանից կփախչեմ ու կփախչեմ: Հիմի էս կռատած խոզը ծեծին սովորեց:

Ալյոշկայի համար սարսափելի էր կուշտ կյանքը թողնելը: Իհարկե, առանց ծեծ ավելի լավ կլիներ: Բայց աշխարհում ինչպե՞ս գտնես նման մի տեղ՝ բոլորն են ծեծում: Վառարանի վրա ծածուկ լաց եղավ: Բայց ընկերոջից բաժանվել չէր կարելի: Առավոտյան, լիքը արկղերն առած, տղաները փողոց ելան:

Մայիսյան թարմաշունչ առավոտ էր: Կապտավուն ջրափոսեր: Կեչիների բորոմնավետ սաղարթ: Ճովողում էին սարյակները՝ գըլխիկներն արևին պարզած: Դռների առաջ ժիր-ժիր աղջիկներ էին կանգնած՝ գործ անելու ցանկություն չունեին: Մեկը ոտաբոբիկ էր, կանեփե կտավի շապկով, գլխին կեչու կեղևից պսակ էր դրել, մազերը ժապավենով հյուսել: Խրտնած էին աչքերը: Տանիքների վրա սարյակները սոխակի դայլայլ էին ձգել, աղջիկներին հրապուրելով գնալ բացատները, խոտերի մեջ: Գարուն էր, գարուն... «Տակա-թո՞ւխ, մեղրաթո՞ւխ բլիթներ...»:

Ալյոշկան ծիծաղեց.

— Էսօր Զայացն իր փողերը լա՞վ կհաշվի...

— Է՞հ, Ալեքսաշկա, ախր էդ կլինի թալան...

— Անխելք գեղացի... Մեր վարձը սատանե՞ն պիտի տար: Երկու ամիս ձրի մեջք ենք ծռել նրա համար... Էլ, պտրելեց, նապաստակի մսով բլիթ կուզե՞ս, տաք-տաք, զոյգը մի գոռշ...

Դռների առաջ կանգնած կին ու աղջիկ շատացան, խաչմերուկներին ժողովուրդ էր խռնվում: Վագրով անցան ստրելեցները, տապարները զրնգացնելով՝ մարդիկ ետ քաշվեցին, վախեցած նրանց նայելով: Քանի մոտենում էին Մոսկվա գետի վրա գցված Ամենասրբոց կամրջին, այնքան շատանում էին ստրելեցներն ու մարդիկ: Ափով մեկ ժողովուրդ էր հավաքվել ճանճերի պես, ելնում էին թրիքի կույտերի վրա՝ Կրեմլի կողմը նայելու: Հոսանքից հազիվ ծածանվող ջրի հայելու վրա հանգիստ արտացոլվել էին կանաչկատար աշտարակները, աղյուսե ատամնավոր պարիսպն ու կրեմլյան եկեղեցիների, ժամատների ու տաճարների ոսկյա գմբեթները: Սակայն հանգիստ չէին ժողովրդի մեջ տարածվող խոսակցությունները: Հաստաբեստ պարապից այն կողմ, ուր բոյարական ապարանքների և թագավորական պալատի անսովոր, գեղեցիկ տանիքներն էին շողշողում, մայիսյան այդ անդորրի մեջ մի վատ բան էր խմորվում... Թե ինչ էր հաստատ՝ դեռ չգիտեին: Ստրելեցներն աղմկում, բայց չէին անցնում կամուրջը, որը Կրեմլի կողմից երկու թնդանոթով էր պաշտպանված: Այնտեղ երևում էին հետիոտն ու հեծյալ բնակիչները՝ բոյարների զավակները, որոնք թագավորական ծառայության մեջ էին: Ծերմակ կաֆտանների վրայից, պղնձյա աղեղների վրա ձգված կարապի թևեր ունեին մեջքներին: Սակավաթիվ էին Կրեմլի բնակիչները և, ըստ երևույթին, երկնչում էին տեսնելով, թե ինչպես է հազարամարդ ամբոխը գալիս Բալչուգի կողմից:

Ալեքսաշկան դևի պես պտույտ էր տալիս կամուրջի մոտերքում: Բլիթները վաղուց ծախել էին, արկղները՝ շպրտել: Ի՞նչ առևտրի ժամանակ էր: Սարսափելի էր և ուրախ: Ամբոխի մեջ, այնուայն կողմ մարդիկ էին բղավում: Բոլորը բորբոքված էին: Նման կարգերի պայմաններում բոլորն էին հոգեհան եղել: Սպառնում էին Կրեմլի աշտարակներին: Մի ծեր պոսադական, աղբակույտի վրա բարձրացած, ճաղատ գլխից պոկեց գդակն ու սկսեց դանդաղ խոսել.

— Հանգուցյալ Ալեքսեյ Միխայլովիչի օրոք ժողովուրդն էլի էսպես ոտքի ելավ... Հաց չկար, աղ չկար, փողի գինն ընկել էր, արծաթ ռուբլիանոցները գանձարանը պղնձե էր դարձնում... Բոյարները ժողովրդի արյունն էին ծծում անկշտում... Ժողովուրդն ապստամբեց, ձիուց վեր բերեց Ալեքսեյ Միխայլովիչին ու հագի մուշտակը պատռեց... Շատ ու շատ բոյարների տներ ավերեցին ու վառեցին, ահագին բոյար ջարդեցին... Ներքևներում ոտքի ելավ մեծ սրտի տեր կազակ Ռազինը... Ազատություն էր գալու էն ժամանակ, ժողովուրդն ազատ ու ապահով կապրեր... Բայց պաշտպան չեղան... Ժողովուրդը թույլ էր, մենակ գոռգոռալու համար գլուխն իրենը չէր: Հիմի էլ, տղերք, առանց միաբան լինելու, մեզ կախաղան ու կառափնարան է սպասում, բոյարները ձեզ կջարդեն...

Նրան էին լսում, բերանները բաց արած... Ծփոթմունքն ու վախը սաստկանում էին: Հասկանում էին սոսկ, որ Կրեմլում իշխանություն չկա, և ժամանակը կարծես թե հարմար էր՝ հավերժական ամրությունը պասանելու համար: Բայց ինչպե՞ս:

Մի ուրիշ տեղ ստրելեց էր բղավում, ժողովրդին դիմելով.

— Էլ ինչի՞ եք սպասում: Բոյար Մատվեևը, լուրը չբացված, Մոսկվա է մտել... Ի՞նչ է, չե՞ք ճանաչում Մատվեևին: Քանի դեռ բոյարները Կրեմլում, առանց գլխավորի, իրար բուկ էին կրծում, մի կերպ ապրել կլինեք... Հիմի իսկական թագավոր է հայտնվել, սանձերը հո չի՞ ձգելու... Հարկ ու տուրքով էնպես ձեռուռտ կապի, որ տեսնված-լսված չի... Էսօր է պետք ապստամբել, վաղն ուշ կլինի...

Այդպիսի խոսքերից մարդկանց գլուխը պտտվում էր: Վաղն ուշ կլինի... Աչքերն արնակոխ էին դառնում... Գետի մեջ հանգիստ արտացոլված՝ հինավուրց, արգիլված, ուխտադրուժ, ոսկով լիքը Կրեմլը խեղացնոր պատկերներ էր հարուցում... Պարսպի թնդանոթների մոտ ոչ մի թնդանոթաձիգ չկար: Ասես մեռած լիներ ամեն ինչ: Եվ բարձրում ցիներ էին լողում Կրեմլի վրա...

Հանկարծ կամրջի մյուս կողմում իրար անցան թանավոր բնակիչները, լսվեցին նրանց թույլ բղավոցները: Արանքներում ձյունաճերմակ ձիու վրա պտույտ տալով, մի հեծյալ երևաց: Նրա ճամփան կտրել էին, լայնշեղը տապարները թափահարելով: Կոանալով, ձին ծառս արեց նա, դուրս պրծավ, գլխարկը կորցրեց և կատաղի արագությամբ պացավ լողացող կամրջի վրայով՝ տախտակների արանքից ջուր էր շատրվանում, բարակոտն նժույգը բաշն էր թափ տալիս ժիր ու կայտառ:

Հազարամարդ ամբոխը սանձվեց: Այն ափից միայնակ մի կրակոց լսվեց հեծյալի ետևից: Մխրճվելով ամբոխի մեջ, նա ձգվեց ասպանդակների վրա: Հարթ սափրած գլխի մաշկը շարժվում էր, երկարուկ, երկարաքիթ դեմքը կարմրատակել էր արագությունից, հեռապատ էր, ասես ածխով քաշած լայն հոնքերի տակից փայլում էին խած աչքերը: Ճանաչեցին.

— Տոլստո՞յն է... Պոտր Անդրե՞ևիչը... Միլոսլավսկու ազգականն է... Նա մեր կողմից է՞... Լսեցեք, թե ի՞նչ է ասելու...

Բարձր, խզվող ձայնով Պոտր Անդրեևիչը բղավեց.

— Ժողովո՞ւրդ... Ստրելեցնե՞ր... Դժբախտությո՞ւն... Մատվեևն ու Նարիշկինները հենց նոր արքայազն Իվանին խեղդեցին... Թե չհասնեք, Պոտրին էլ են խեղդելու... Շուտ գնացեք Կրեմլ, թե չէ ուշ կլինի...

Ամբոխը գոմռաց, աղմկեց ու աղաղակեց, ոռնաձայն նետվեցին դեպի կամուրջ: Հազարավոր գլուխներ ալիքվեցին, նրանց մեջ պրտուտ եկավ Տոլստոյի ճերմակ ձին: Կամուրջը ճռնչաց, ճայտեց, վազում էին ծնկահասու ջրի միջով: Մարդկանց հրմշտելով, լուռ ու գազան կտրած, հարյուրյակ առ հարյուրյակ անցնում էին ստրելեցները: Զանգ զարկեցին ինչ-որ տեղ՝ բո՞մ, բո՞մ, բո՞մ, հանախակի դարձան զանգերը, տագնապալի... Զանգակատուներից արձագանքեցին, տարուբերվեցին զանգերը, և մոսկովյան հազար-հազար կոչնականներն ահազանգ խփեցին...

Լոին Կրեմլում, արևի տակ փայլելով, մի պատուհան գոցվեց, հետո՝ մյուսը...

17.

Անհամբերությունից գնդերը խառնելով, ստրելեցները վազեվազ հասան Նպտատաշ պալատ և Ավետման տաճար: Ճանապարհին ետ մնացածներից շատերը ջարդում էին բոյարական տների ամուր դարպասները, ելնում էին զանգակատները՝ ահազանգ խփելու: Հազարափոթ ու թավաձայն թնդում էր Իվան Մեծ-զանգը: Տներն իրարից բաժանող նեղ նրբանցքների, մենաստանների քարե պարիսպների արանքում ու ատյանների երկարուկ շենքերի դեղին պատերի մոտ ընկած էին սպանվածները՝ բոյարական տներից, տնքալով սողում էին վիրավորները: Թամբած մի քանի ձի էին պտանում խրտնած, ձիերը բռնում էին ծիծաղ ու սուլոցով: Բղավելով, պատուհաններն էին փշրում քարերով:

Ստրելեցները, ժողովուրդը, տղաների երամները (Ալեքսաշկան ու Այլոշկան նույնպես) նայում էին թագավորի գույնզգույն պալատին, որը Կրեմլի հրապարակի մեկ քառորդ տարածությունն էր զբաղեցնում: Քարաշեն ու փայտաշեն պալատները, բարձր տներ, ցածրիկ խրճիթներ, նախասենյակներ, աշտարակներ՝ մեծ ու փոքր, կանաչ, կարմիր ու կապույտ ներկված, հարթատաշ-տախտակապատ կամ գերանակապ, իրար միացված բազում միջանցքներով, սանդուղքներով: Վրանաձև, տեռաձև հարյուրավոր տանիքներ, զարմանահարույց կատարներ՝ կողավոր, փորավոր, արլորի կատարի պես ցից, շողում էին արծաթի ու ոսկու փայլով: Այդտեղ էր ապրում երկրի տերը, աստծուց հետո առաջինը...

Համենայն դեպս, սարսափելի էր: Զենքը ձեռքին հասարակ մարդը ոչ միայն մտնելու չէր կարող, բոյարներն էին ձիերը թողնում դարպասի մոտ ու քայլում ցեխերի միջով, գլխարկները հանած, ցարական պատուհանների կողմը աչքի պոչով նայելով: Կանգնել ու նայում էին: Իվան Մեծ-զանգի բոմբյունը արձագանքում էր մարդկանց կրծքերի մեջ: Շփոթմունք էին ապրում: Այդժամ ամբոխի մեջ ցցվեցին աչքաբաց մարդիկ.

— Տղերք, ի՞նչ եք բերանները բաց արել: Արքայազն Իվանին խեղդել են, հիմի արքայազն Պոտրի վերջն են տալիս: Հայդա՞, ելարանները դեմ արեք, դռները ջարդեք:

Թնդյուն անցավ հազարամարդ ամբոխի վրայով: Կտրուկ զարկեցին թմբուկները: «Հայդա՞, հայդա՞»՝ վայրենի աղաղակներ լսվեցին: Մի երկու տասնյակ ստրելեցներ պոկվեցին, ցանկապատն անցան, հանելով կեռ թրերը՝ բարձրացան Գլխադռուռ: Թակեցին պղնձյա դռան, դեմ ընկան ուսերով: «Հայդա՞, հայդա՞, հայդա՞»,— բղավոց տարածվեց ամբոխի վրայով: Մարդկանց գլխավերևում հայտնվեցին ինչ-որ տեղից գտնված ելարաններ: Դեմ արեցին Նպատատաշ պալատի պատուհաններին, շքամուտքի եզրաճաղերին: Բարձրացան: Ատամները կրճտացնելով գոռում էին. «Տվե՞ք Մատվեևին, տվե՞ք Նարիշկիններին...»:

18.

— Կապանեն ախր, կապանեն... Ի՞նչ անենք, Արտամոն Սերգեևիչ...

— Աստված ողորմած է, թագուհի։ Դուրս կգամ, կխոսեմ նրանց հետ... Էյ, մարդ ուղարկե՛ք՝ պատրիարքին կանչելու։ Մեկնումեկդ էլ վազեք։

— Արտամոն Սերգեևիչ, նրանք են, նրա՞նք՝ իմ թշնամիները... Յազիկովն ինքն է տեսել Միլոսլավսկիներից երկուսին, զգեստափոխ, ստրելեցների հետ...

— Թագուհի, քո գործը կնոջ գործ է, աղոթիր...

— Գալի՞ս է, գալիս,— ձայն տվեցին նախասրահից։ Գավազանի փայտ ծայրը խրելով կաղնեփայտի հատակի մեջ, ներս մտավ պատրիարք Յոակիմը։ Մութ ակնախոռոչներից մոլեգնած աչքերը հառեց կամարատակ ցածրիկ պատուհանների։ Դրսից գունավոր ապակիներին էին սեղմվել ելարանների վրա կանգնած ստրելեցների դեմքերը։ Պատրիարքը բարձրացրեց չորացած ձեռքն ու սպառնաց։ Գլուխները թաքնվեցին։

Նատալյա Կիրիլովնան նետվեց դեպի պատրիարքը։ Սև աղվեսի մորթու գլխարկի տակ նրա գիրուկ դեմքը ճերմակ էր, ճերմակ ճակատկապի պես։ Թագուհին բռնեց պատրիարքի սառած ձեռքը, հաճախակի հառաչելով, շշնջաց.

— Փրկի՞ր մեզ, վեհ, փրկի՞ր մեզ...

— Վատ են գործերը, վեհ,— խստաձայն ասաց Արտամոն Սերգեևիչը։ Պատրիարքը նրա վրա հառեց լայնացած բիբերը։ Մատվեևը շարժեց քառակուսի գորշ մոխրագույն մորուքը։— Դավադրություն է, ուղղակի խռովություն... Ինքներն էլ չգիտեն, թե ինչ են բղավում...

Հնամենի սրբապատկերի նման, արծվահայաց, բարակ քթով Մատվեևը հանգիստ էր. իր երկար կյանքի ընթացքում շատ բան էր տեսել, քանի անգամ մահվան շունչն էր առել։ Մի զգացում էր մնացել՝ հպարտ իշխանասիրությունը... Ծերունական կոպերի տակ զայրույթը զսպելով, ասաց.

— Միայն թե Կրեմլից հեռացնենք, իսկ հետո կսանձենք...

Հարվածներն ու բղավոցներն ավելի սաստկացան դրսից։ Պալատի միջով դռնից դուռ, ոտնաթաթերի վրա, անցավ նա, ում ստրելեցներն ու բոյարներն ատում էին սատանայից ավելի շատ՝ գեղեցկատես ու պճնամոլ, քաանչորդական և արդեն բոյարին Իվան Կիրիլովիչ Նարիշկինն էր՝ թագուհու եղբայրը։ Ասում էին իր ցարական թագն է արդեն փորձել գլխին։ Սև բեխիկները կարծես սոսնձած էին կանաչած դեմքին. կարծես տեսնում էր վաղվա տանջանքներն ու իր ապրսափելի մահը կատաղիատեղում։ Լեռնական թևքերը թափահարելով, բղավեց.

— Սոֆյան շնորհ բերեց,— ու թաքնվեց դռան ետևում։ Կարմիկ ոտքերի վրա շորորալով, ետևից գնաց երեխայի չափ գաճաճը։

Ծաղրածուի գդակը բռնած, կնճռապատ դեմքը ծամածռելով լաց էր լինում, նույնպես կարծես զգալով, որ վաղը դավաճանելու է իր պարոնին։

Փութկոտ քայլերով ներս մտավ Սոֆյան, ապա Վասիլի Վասիլևիչ Գոլիցինը և Խովանսկին։ Սոֆյայի այտերը թանձր կարմրով էին շպարված։ Ոտից գլուխ ոսկեդիպակ զգեստով էր, մարգարտաշար բարձր պսակով։ Ձեռքերը կրծքին դրած, խոր գլուխ խոնարհեց թագուհուն և պատրիարքին։ Նատալյա Կիրիլովնան ետ ընկավ, քաշվեց օձ տեսածի պես, աչքերը թարթեց ու լուռ մնաց։

— Ժողովուրդը զայրացած է, ուրեմն մի պատճառ կա,— բարձրաձայն ասաց Սոֆյան,— թագուհի, եղբայրներիդ հետ դուրս եկ ժողովրդի առաջ... Աստված գիտե, թե ինչեր են բղավում, իբր երեխաներին սպանել են... Համոզիր, ընծաներ խոստացիր, մեկ էլ տեսար՝ պալատ խուժեցին...

Խոսում էր, և ճերմակ ատամներն իրար էին զարկվում, կանաչ աչքերը շողշողում էին բերկրալի բորբոքվածությունից։ Մատվեևը մոտեցավ նրան.

— Կանանց հաշիվներ պարզելու ժամանակը չէ...

— Ուրեմն, դու դուրս եկ...

— Մահից չեմ վախենում, Սոֆյա Ալեքսեևնա...

— Մի փիճեք,— ասաց պատրիարքը, գավազանը գետին խփելով։— Երեխաներին ցույց տվեք նրանց՝ Իվանին ու Պյոտրին...

— Չէ,— բղավեց Նատալյա Կիրիլովնան, քունքերը բռնելով։— Թույլ չեմ տա, վեհ... Վախենում եմ...

— Երեխաներին տարեք Գլխադուռ,— կրկնեց պատրիարքը։

19.

Եվ անա ճոռաց Գլխադռան պղնձյա զոդնակը։ Ամբոխը մոտ եկավ, սսկվեց, ակնապիշ նայելով։ Թմբուկները լռեցին։

Ձեռքերով ու ոտքերով մուտքի հաստատոր գերանից կախվել էր Ալեքսաշկան։ Ալյոշկան ետ չէր մնում նրանից, բայց վախենում էր սաստիկ։ Դուռը բացվեց։ Տեսան թագուհի Նատալյա Կիրիլովնային՝ ոսկու սև զգեստով ու ոսկեդիպակ պատմուճանով։ Նայելով իր վրա հառած հազարավոր աչքերին, թագուհին ճոճվեց։ Ինչ-որ մեկի ձեռքերը նրան պարզեցին գույնզգույն նեղ կաֆտան հագած տղային։ Ցիգ գործադրելով, փորը դեմ տալով, թագուհին բարձրացրեց նրան, դրեց մուտքի առաջնաբազրիքին։ Մոնոմախի թագը ծռվել էր երեխայի ականջի վրա, բաց անելով սև, կտրած մազերը։ Կլոր այտեր ուներ, տափակ քիթ, վիզն առաջ էր ձգել։ Մկան աչքի պես կլոր էին աչքերը։ Փոքրիկ բերանը սեղմել էր վախից։

Թագուհին կամեցավ ինչ-որ բան ասել և ընդարմացավ, գլուխը ետ գցեց։ Նրա ետևից առաջ եկավ Մատվեևը։ Ամբոխի մեջ մռլտոց անցավ... Ձեռքից բռնած բերում էր մյուս տղային, ավագին՝ նիհար, անտարբեր դեմքով, շրթունքները կախ։

— Ո՞վ է ձեզ խաբել,— ծերունական, բայց ուժեղ ձայնով խոսեց Մատվեևը, ալեխառն հոնքերը խոժոռելով,— ո՞վ է խաբել, թե խեղդել եմ ցարին ու արքայազնին... Տեսեք, ահա Պյոտր Ալեքսեևիչ ցարը, թագուհու գրկին... Առողջ և ուրախ... Ահա արքայազն Իվանը,— բարձրացրեց անհաղորդ տղային ու ցույց տվեց ամբոխին:— Երկուսն էլ ողջ ու առողջ են աստծո ողորմածությամբ... (Ամբոխի մեջ միմյանց նայեցին, ասացին. «Նրանք են, խաբեություն չկա...») Ստրելեցնե՛ր: Հանգիստ գնացեք ձեր տները... Եթե բան է պետք՝ խնդիրք կամ բողոք ունեք, խնդրատուներ ուղարկեք...

Ծքամուտքից ժողովրդի մեջ իջան Խովանսկին և Վասիլի Վասիլևիչը: Ձեռքները դնելով ստրելեցների ու հասարակ մարդկանց ուսերին, հանգում էին ցրվել, բայց կարծես ծաղրի տպավ էին խոսում: Հնազանդված ամբոխի միջից չարացած ձայներ լսվեցին.

— Հետո՞ ինչ, որ ողջ ու առողջ են...

— Ցատ էլ տեսանք, որ ողջ են...

— Մեկ է, Կրեմլից գնացողը չե՞նք...

— Հիմար մարդիկ եք գտել... Գիտենք ձեր քաղցր խոսքերը...

— Հետո քիթ ու բերան եք ջնջխելու...

— Մատվեևներին ու Նարիշկինների մե՞զ տվեք...

— Իվան Կիրիլովիչ Նարիշկինի՞ն... Ցարի թագն է գլխին փորձել...

— Արնախումնե՞ր, բոյարնե՞ր... Մեզ տվեք Ցազիկովին... Դոլգոռուկովին...

Ավելի ու ավելի չարացած էին հնչում ձայները, թվարկելով բոյարների ատելի անունները: Նատալյա Կիրիլովնան նորից սպիտակեց, գրկեց որդուն: Պյոտրը կլոր գլուխն էր տարուբերում, ինչոր մեկը ծիծաղաձայն կանչեց. «Մի տես է՞, ոնց որ իսկական կատու»: Ոտից գլուխ կարմիր թավշյա զգեստով, սամույրի մորթիներով, զնգզնգուն զենք ու զրահով իշխան Միխայլա Դոլգոռուկին շքամուտքից ցած վազեց: Ստրելեցների պետի որդին էր, փափկասուն ու գոռոզ՝ բղավեց ստրելեցների վրա, մտրակը թափահարելով.

— Շան որդիք, ուրախացել եք, որ հայրս հիվանդ պառկած է: Թափթփուկներ: Չքվեք էստեղից, շներ, ճորտեր...

Ստրելեցները կընկրկեին շրմփացող մտրակի առաջ... Բայց ժամանակներն ուրիշ էին՝ պետք չէր այդպես խոսել... Ծունչ առան, ֆսֆսացրեցին ու առաջ շարժվեցին.

— Զանգակատնից ցած չե՞ս թռել... Դո՞ւ ով եղար մեր գլխին, շան թոլա... Տվե՛ք դրան, տղերք...

Լանջափոկից բռնեցին, պոկեցին, ծվեն-ծվեն արեցին թավշյա կաֆտանը: Միխայլա Դոլգոռուկին թուրը քաշեց ու ետ-ետ գնաց, պաշտպանվելով բարձրացավ շքամուտքի առաջ: Նիզակներն առաջ պահած, ստրելեցները նետվեցին առաջ: Բռնեցին: Թագուհին վայրենաձայն բղավեց: Դոլգոռուկիի չուված մարմինը վար նետվեց ու չքացավ ոտնակոխ ու բգիկ-բգիկ անող ամբոխի մեջ: Մատվեևն ու

թագուհին շարժվեցին դեպի դուռը: Բայց արդեն ուշ էր. Նստատաշ պալատի սրահներից դուրս պրծան Օվսեյ Ռժովն ու ընկերները:

— Խփի՛ր Մատվեևին,— բղավեցին նրանք:

— Ճի՞շտ է, ճի՞շտ է,— ոռնաց ամբոխը:

Օվսեյ Ռժովը ետևից ընկավ Մատվեևի վրա: Թագուհին ձեռքերը թափահարեց, սեղմվեց Արտամոն Սերգեևիչին: Արքայազն Իվանին ետ շպրտեցին, նա ընկավ ու լաց եղավ: Պյոտրի կլորիկ դեմքն այլայլվեց, ծռվեց, նա երկու ձեռքով կառչեց Մատվեևի գորշ մորուքից...

— Քաշի, մի վախենա, պոկի՞ դրան,— բղավում էին ստրելեցները, նիզակները ցցելով,— էստեղ գցեք:

Թագուհուն ետ քաշեցին, Պյոտրին մի կողմ շպրտեցին կատվաձագի պես: Մատվեևի հսկայական մարմինը, բերանը՝ բաց, հանկարծ վեր բարձրացավ, ոտքերը չոլեցին, ու նա գլորվեց տնկած նիզակների վրա:

Ստրելեցները, ժողովուրդը, տղեկները (Ալեքսաշկան ու Ալյոշկան նույնպես) պպզատ ներխուժեցին, ցրիվ եկան հարյուրավոր սենյակներում: Թագուհին, երկու արքայազնների հետ, դեռ շքամուտքի առաջ էր, իրեն կորցրած: Հրապարակում մնացածներին նորից մոտեցան՝ Խովանսկին և Գոլիցինը, և ամբոխի մեջ նորից բղավոցներ լսվեցին.

— Իվանի՞ն ենք ցար ուզում... Երկուսի՞ն... Սոֆյայի՞ն ենք ուզում... Ճիշտ է, ճի՞շտ... Ուզում ենք Սոֆյա՞ն թագավորի... Ուզում ենք, որ այսուհետև Կարմիր հրապարակում, խոստումի այսուհետև, որ մեր ազատությունը մշտական լինի...

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1.

Աղմկեցին ստրելեցները: Կոտորեցին բոյարներին՝ թագուհու եղբայրներ Իվան և Աֆանասի Նարիշկիններին, իշխաններ Ցուրի և Միխայլա Դոլգոռուկիներին, Գրիգորի և Անդրեյ Ռոմոդանովսկիներին, Միխայլա Չերկասսկուն, Մատվեևին, Պյոտր և Ֆյոդոր Սալտիկովներին, Ցազիկովին և այլոց՝ սակավ նշանավոր տոհմերից: Ստացան իրենց ստրելեցական ռոճիկը՝ երկու հարյուր քսան հազար ռուբլի, հավելյալ տասական ռուբլի ևս, որպես պարգև ամեն մեկին: (Ստիպված եղան բոլոր քաղաքներից ոսկյա և արծաթյա ամանեղեն հավաքել ու ստրելեցներին վճարելու համար դրամի վերածուլել:) Կարմիր հրապարակում այսուհետև կանգնեցրին, որի չորս կողմերում գրեցին սպանված բոյարների անունները, նրանց գործած մեղքերն ու չարագործությունները: Գնդերը շնորհագրեր պահանջեցին, որոնցով բոյարները երդվում էին ոչ հիմա, ոչ հետագում հպիոյական ոչ մի խոսք չասել, խռովարար ու դավաճան չկոչել ստրելեցներին, զուր տեղը մահապատժի չենթարկել ու աքսոր չուղարկել նրանց:

Կրեմլի պաշարներն ուտելուց և խմելուց հետո ստրելեցները ցրվեցին արվարձանները, պոսադականները՝ իրենց պոսադները: Ու ամեն ինչ հին հունով ընթացավ: Ոչինչ չկատարվեց: Մոսկվայի, քաղաքների, անծայրածիր երկրով սփռված հարյուրավոր գավառների վրա դարավոր աղջամուղջն էր թթվել-կանգնել՝ չքավորություն, ճորտություն, անտերություն:

Ջամակը բաց մուժիկը մի կերպ քչփորում էր անտանելի հողը: Իրենց ցուրտ տներում վնգում էին պոսադականները ծանր հարկերից ու պարհակներից: Տնքում էին մանր առևտրականները, աղքատանում էր մանրակալվածք ազնվականությունը: Հողն ուժասպառ էր եղել. մեկին երեք բերք լիներ՝ էլի փառք քեզ, տեր աստված: Նույնիսկ բոյարներն ու երևելի վաճառականներն էին ճոռում: Պապական ժամանակներում շա՞տ բան էր պետք բոյարին՝ սամույրե մի մուշտակ ու մորթեթոլոր գլխարկ՝ պատիվը կար ու կար: Իսկ տանը նույն շչին էր խաշտում աղ դրած մսով, քնում էր ու աստծուն աղոթում: Հիմա աչքաբաց էին դարձել. լեհական պաճերից, կամ լիֆլանդացիներից, կամ գերմանացիներից պակաս ապրել չէին ուզում, շատ բան էին տեսել: Անկշտությունը պաշարեց պրտները: Հարյուր շնչից ապես սկսեցին պահել բոյարները: Առաջվա փողը չէր հերիքի տոհմանշանով կաֆտան ու կոշիկ հագցնելու, անկշտում բազմությունը կերակրելու համար: Փայտյա խրճիթներում ապրելը դարձավ անվայելուչ: Բոյարինը կամ բոյարուհին առաջ միաձի սահնակով կելնեին տնից, ճորտը՝ ձիու վրա, աղեղի ետև: Անուրից, շալնոցից ու երասանքներից աղվեսի պոչեր կախ կտային, որ մարդիկ նախանձեն: Հիմա դրսերից ոսկեզօծ կառքեր պիտի բերել տային, չորս ձի լծեին, այլապես անպատիվ կլինեին: Իսկ դրա՞մ որտեղից: Նեղության մեջ էին, մեծ նեղության: Առևտուրը նվազ էր: Ներսում շատ բան չէր ծախվում, ժողովուրդը տկլոր էր: Արտասահման տանել չէր լինում՝ փոխադրական չկար: Ծովերն ուրիշի էին պատկանում: Արտասահմանի հետ առևտուրն իրենց ձեռքն էին վերցրել օտարերկրացիները: Զայրույթից գլուխները պատեպատ էին զարկում, իմանալով, թե ուրիշ երկրներում ինչպես են առևտուր անում: Այս ի՞նչ կախարդված երկիր ես, Ռուսապտան աշխարհ, ե՞րբ ես տեղիցդ շարժվելու:

Մոսկվայում երկու ցար կար՝ Իվանը և Պյոտրը, նրանցից վեր կատավարչուհին էր, արքայադուստր Սոֆյան: Մի քանի բոյարներ մյուսներով փոխարինվեցին: Ուրիշ ոչինչ: Ջանձրույթ: Ժամանակը կանգ էր առել: Սպասելիք չկար: Կարմիր հրապարակի ստրելեցների այան կողքին որոջ ժամանակ տապարակիր ժամապահ կանգնեց, հետո հեռացավ: Այան շուրջը ժողովուրդն ինչ ասես լցրեց: Ու վերջապես շուկաներում փափաքցին մարդիկ, ալիք տվեցին շշուկները: Ստրելեցները երկմտել սկսեցին. գործը մինչև վերջ չհասցրեցին, աղմուկը շատ էր, օգուտը՝ ոչ մի: Քանի դեռ ուշ չէ, չավարտե՞ն գործը:

Մերները պատմում էին, թե ինչ լավ էր հնում՝ էժանություն, կշտություն, բարեպաշտություն: Գյուղերում մուժիկ ու կին շուրջ-

պարեր էին բռնում: Պոսադի ժողովուրդը ճարպակալել էր անգործությունից: Թալանից-բանից չէին խոսում: Է՜հ, ի՞նչ օրեր էին, եկան ու անցան...

Ստրելեցների արվարձանում վեց աղանդավոր հայտնվեցին՝ կաշի-ոսկոր դարձած, անհողդողդ հերձվածողներ: «Մի փրկություն կա,— ասում էին ստրելեցներին,— մի փրկություն ունեք՝ տապալեք նիկոնական պատրիարքին ու բոյարական համայն նիկոնակա՞ացված ու լեհականացված սինկդիտոսը ու վերստանաք աստվածավախ հավատքին ու հին կյանքին»: Աղանդավորները կարդում էին սոլովեցկյան տետրակներն այն մասին, թե ինչպես խուսափեն նիկոնական գայթակղություններից և փրկեն կյանքն ու հոգին: Ստրելեցները լաց էին լինում՝ լսելով: Ամենաեր աղանդավորը՝ Նիկիտա Պուստոսվյատը, շուկայում, սայլի վրա կանգնած, սոլովեցկյան տետրակներից քաղվածքներ էր կարդում ժողովրդի համար.

«Ես տեսել եմ նեռին, եղբայրք, իրավ, տեսել եմ, երբ հոգով տրտմած, միտք էի անում, թե ինչպես է գալու նեռը, և աղոթքներ էի անում ու ննջեցի՝ նզովված լինեմ: Ու տեսա դաշտի մեջ մարդկանց բազում բազմություն: Կողքս կանգնած էր մեկը: Ասացի՝ ինչո՞ւ այսքան շատ են մարդիկ: Պատասխան տվեց ու ասաց՝ նեռն է գալու, կանգնիր, չվախենաս: Երկնքում գավազանիս հենվեցի ու կանգնեցի անխոնջ: Ու տեսա՝ բերում են մի մերկ մարդու, ամբողջ մարմինը գարշահոտ ու անչափ տգեղ, կրակ էր շնչում, ոռնիգ ու ականջից գարշահոտ բոց էր ելնում: Ետևից մեր ցարն էր գալիս, իշխանավորներն էին գալիս, և բոյարները, և օկոլնիչիները, և դումայական ազնվականները... Ու թքեցի նրա վրա, սատկիկ վատ զգացի և գարհուրեցի... Սուրբ գրքերից գիտեմ, որ շուտով գալու է նա: Արդեն շտապեցել են նրա վիժվածքները, կատաղած շները...»:

Հիմա արդեն հասկանալի էր, թե ինչ պիտի պահանջեն: Ստրելեցները խոնվեցին Կրեմլում: Ստրելեցյան ատյանի պետ Իվան Անդրեևիչ Խովանսկին հերձվածողների կողմը բռնեց: Նիկիտա Պուստոսվյատով հանդերձ, ոսկրացած վեց աղանդավոր՝ երեք օր բերանները փշուր չդրած, կաթիլ ջուր չխմած, Նստատաշ պալատ բերեցին գրագալներ, փայտյա խաչեր ու հին գրքեր, և Սոֆյայի աչքի առաջ պախարակեցին ու խայտառակեցին պատրիարքին ու հոգևորականությանը: Գլխադռան առաջ խոնված ստրելեցները գոռում էին. «Հին հավատն ենք ուզում, հին կյանքն ենք ուզում»: Ումանք է՛լ ավելի թունդ բաներ էին ասում. «Ժամանակն է, որ արքայադուստրը մենաստան գնա, հերիք եղավ տերությունը խառնեց»: Մի միջոց էր մնացել, և Սոֆյան զայրացած սպառնաց.

— Ուզում եք մեզ փոխարինել վեց վանականո՞վ, անկիրթ մուժիկներո՞վ: Որ այդպես է մեզ՝ ցարերիս, այստեղ ապրել չի կարելի, կգնանք ուրիշ քաղաքներ, ժողովրդին կհայտնենք մեր քայքայման, ձեր դավաճանության մասին...

Ստրելեցները հասկացան, թե ինչով է սպառնում Սոֆյան, վախեցան. «Տղերք, մեկ էլ տեսար ազնվական աշխարհազոր բերեց

Մոսկվայի վրա...»: Ընկրկեցին: Սկսեցին ծանրութեթև անել: Եվ արդեն Վասիլի Վասիլևիչ Գոլիցինի հրամանով ցարական գնդերից օրով և գարեշրի տակառներ էին հանել հրապարակ: Ստրելեցները երերացին, գլուխները պտույտ եկավ: Ինչ-որ մեկը բղավեց. «Մեր ինչի՞ն է պետք հին հավատքը, տերտերների գործն է դա, խփե՞ք աղանդավորներին»: Կմախք ծերուկներից մեկի գլուխը տեղնուտեղը թոցրեցին, մնացածները հազիվ ճողոպրեցին:

Անիծյալ բոյարները հարբեցրին հասարակ մարդկանց, գլուխներն ազատեցին: Մոսկվան բզզում էր փեթակի նման: Ամեն մեկն իրենն էր գոռում: Գլխավորող մեկը չգտնվեց՝ փոթորկվել էին տարաձայն: Թալանում էին ցարապատկան պանդոկները: Բռնում էին ատյանների փոքրավորներին, պատառ-պատառ անում: Մոսկվայով անցնել ու քայլել չէր լինի: Պաշարելու էին գնում բոյարական տները, բոյարները հազիվ էին պաշտպանվում, կրակ բացելով. այն օրերին մեծ արյունահեղություններ եղան: Խրճիթներ էին վառվում շարքերով: Անթաղ մեռելներ էին թափված փողոցներում ու շուկաներում: Լուր տարածվեց, թե բոյարները աշխարհազոր են հավաքել Մոսկվայի տակ՝ միանգամից են ուզում բնաջնջել խռովարարներին: Եվ մի անգամ էլ ստրելեցները, փախստական ճորտերի ամբոխի հետ, Կրեմլ գնացին, նիզակի ծայրին խնդրագիր խրած, որ իրենց տան անխտիր բոլոր բոյարներին՝ դատ ու դատաստան տեսնելու: Զայրույթից գունատված Սոֆյան շքամուտք եկավ. «Սուտ են ասում մեր մասին, աշխարհազորի միտք էլ չենք ունեցել, խաչը համբուրելով եմ երդվում,— բղավեց նա, կրծքից պոկելով աղամանդյա լանջախաչը,— սուտը արքայազն Մատվեյկայից է գալիս»: Եվ շքամուտքից ստրելեցների նիզակների վրա շպրտեցին ընդամենը մի հոգու՝ թաթարական անշան արքայազն Մատվեյկային. առեք, կշտացեք:

Պատառ-պատառ արեցին Մատվեյկային, կատաղությունները հագեցրին ու նորից ձեռնունայն դարձան ստրելեցները... Երեք օրուցիշեր փոթորկվում էր Մոսկվան, կոչնազանգերից ագռավների երամները վերևներում էին թռչում: Եվ այդժամ ամենահանդուգնները վճռեցին՝ գլո՛ւխն իսկ թոցնել, սպանել երկու ցարերին ու Սոֆյային: Բայց երբ չորրորդ օրն արթնացավ Մոսկվան, Կրեմլն արդեն դատարկ էր. ոչ ցարերը կային, ոչ արքայադուստրը՝ հեռացել էին բոյարների հետ: Սարսափ պատեց ժողովրդին:

Սոֆյան գնաց Կոլոմենսկոյե գյուղը և բանբերներ ուղարկեց գավառները՝ ազնվական աշխարհազոր ժողովելու: Ամբողջ օգոստոսը պատվում էր նա Մոսկվայի շուրջը, գյուղերում ու մենաստաններում, լաց լինում գավիթներում, գանգատվում վիրավորանքներից ու քայքայումից: Կրեմլում ստրելեցների հետ մնաց Իվան Անդրեևիչ Խովանսկին: Միտք արեցին՝ արդյոք ցար չհռչակե՞ն նրան. սիրահոժար, հնազույն տոհմից, հին ավանդույթների տեր մարդ էր: Հասարակ ժողովրդի համար հարազատ ցար կլիներ:

Առատ շնորհների ակնկալությամբ, ազնվականները հանձնվեցին թամբում ձիերը: Հակայական, երկու հարյուր հազարանոց աշխարհազորը հավաքվեց Տրոիցկ-Սերգիևի մենաստանում: Իսկ Սոֆյան թռչունի պես դեռ պտույտ էր տալիս Մոսկվայի շուրջը: Սեպտեմբերին նրա ուղարկած հեծելախումբը՝ Ստյոպկա Օդոևսկու գլխավորությամբ, լուսաբացին հարձակվեց Պուշկինո գյուղի վրա: Այնտեղ, պտրելեցների հետ մերձմոսկովյան գնդերը շրջապատելիս, բլրի վրա խփած վրանում քնած էր Իվան Անդրեևիչ Խովանսկին: Ստրելեցներն էլ էին անհոգ քնած: Բոլորին սրի քաշեցին քնաթաթախ: Իվան Անդրեևիչը շապիկ-ոտաշորով դուրս թռավ վրանից, տապարը թափահարելով: Միխայլա Տրյուտովը ձիուց իրեն շպրտեց նրա ուսերին: Իվան Անդրեևիչին, թամբին կապած, տարան Վոզդվիժենսկոյե գյուղը, ուր Սոֆյան իր անվանակոչությունն էր տոնում: Գյուղի ցանկապատի մոտ, դուրս բերած նստարանների վրա նստած էին բոյարները՝ պատերազմական ժամանակի հանդերձներով, սաղավարտներով ու աջենականներով: Միխայլա Տրյուտովը թամբից ցած գցեց Խովանսկուն, ու սա՝ վշտահար և ամոթահար, կիսամերկ չոքեց խոտերին ու լաց եղավ: Դումայական դպրավոր Շակլովիտին գիր կարդաց նրա մեղքերի մասին: Իվան Անդրեևիչը մոլեգնած բղավում էր. «Սո՛ւտ է: Եվ չլինեի, Մոսկվայում վաղուց ծնկահաս արյուն էր հոսելու...»: Բոյարների համար ծանր էր ազդքան հնամենի տոհմի ներկայացուցչի արյունը հեղելու վճիռը կայացնել: Վասիլի Վասիլևիչը նստել էր՝ ձյան պես սպիտակած: Թե ինքը, թե Խովանսկին Գեդիմինովիչներից էին, և մի Գեդիմինովիչի հիմա դատում էին ցածրատոհմ մարդիկ, երեկվա ճորտերուկներ: Նման տարակուսանք տեսնելով, Իվան Միխայլովիչ Միլոսլավսկին մոտեցավ հեծելներին ու շշնջաց Ստյոպկա Օդոևսկու ականջին: Սա պոկվեց տեղից ու գյուղի միջով ամբողջ թափով սլացավ արքայադուստր Սոֆյայի վրանն ու նույն թափով, հավ ու մանուկ ոտատակ տալով, ետ եկավ. «Կատավարչուհին հրամայեց երկմտանք չանել, իշխանի վերջը տալ»: Վասիլի Վասիլևիչը փութով հեռացավ, աչքերը թաշկինակով ծածկելով: Վայրենաձայն բղավեց Խովանսկին, երբ Միխայլա Տրյուտովը, նրա մազերից բռնած, քարշ տվեց փոշոտ ճանապարհով: Հենց այդտեղ էլ, ցանկապատի մոտ, կտրեցին Խովանսկու գլուխը:

Ստրելեցները մնացին անգլուխ: Իմանալով մահապատժի մասին, սարսափահար լցվեցին Կրեմլ, դարպասները փակեցին, թնդանոթները լցրեցին, պատրաստվելով պաշարման:

Սոֆյան շտապեց Տրոիցկ-Սերգիևո՝ անմառչելի պարիսպների պաշտպանության տակ: Աշխարհազորը դեկավարելը հանձնարարեցին Վասիլի Վասիլևիչին: Եվ այդպես, միմյանց սպառնալով, կանգնել էին երկու կողմերը, սպասելով, թե որ մեկն է առաջինը երկյուղելու: Վախեցած ստրելեցները և խնդրատուներ ուղարկեցին Տրոիցկ: Մեղայական էին բերել: Դրանով իսկ վերջացավ նրանց ազատությունը: Հրապարակի սումը հանեցին: Ազատագրերը ետ առան Ստրելեցների ատյանի պետ նշանակեցին Շակլովիտին, որն ան-

հապաղ էր հաշվեհարդար տեսնում: Շատ գնդեր ցրեցին քաղաքներում: Ժողովուրդը դարձավ ստոծու գառ: Ու նորից Մոսկվայի վրա, ամբողջ երկրի վրա անելանելի լռություն կախվեց: Զգվեցին տարիները:

2.

Մթնշաղին, փողոցով, ցանկապատերի տակով վազում էր Ալեքսաշկան: Սիրտը կտոր-կտոր էր լինում, քրտինքը մշուշել էր աչքերը: Հեռվում կրակ բռնած խրճիթը մռայլ լուսավորում էր անվահետքերի ջրափոսերը: Նրանից քսան քայլի վրա, սապոգները դմփդրմփացնելով, վազում էր հարբած Դանիլա Մենշիկովը: Այս անգամ մտրակ չէր ձեռքին, կեռ դաշույնն էր փայլում: «Կանգնի՞,— սարսափազդու բղավում էր Դանիլան,— կսպանե՞մ...» Ալյոշկան վազուց էր ետ մնացել, բարձրացել էր ճամփեզրի ծառը:

Մի տարուց ավելի Ալեքսաշկան չէր տեսել հորը, և անա հանդիպել էին թալանված ու հրդեհված պանդոկի մոտ, ու Դանիլան իսկույն ընկել էր որդու ետևից: Այդ ամբողջ ընթացքում Ալեքսաշկան ու Ալյոշկան թեև կիսաքաղց, բայց ուրախ էին ապրում: Արվարձաններում տղաներին լավ ճանաչում ու սիրով գիշերելու տեղ էին տալիս: Ամառն անցկացրեցին Մոսկվային մերձակա բացատներում ու գետակների ափերին թափառելով: Երգող թռչուններ էին որսում, ծախում առևտրականներին: Բանջարեղեն ու պտուղ էին թռցնում բանջարանոցներից: Շարունակ մտածում էին մի արջ բռնել ու սովորեցնել, բայց գազան չէր ընկնում ձեռքները: Ջուկ էին որսում:

Մի անգամ կարթը գցեցին հանդարտահոս ու ջինջ Ցաուզան, որը սկիզբ էր առնում Լոսինով կղզու թավուտ անտառներից, և դիմացի ափին մի տղա տեսան, որը նստած էր, ծնոտը ձեռքին հենած: Տարօրինակ էր հագնված՝ ճերմակ գուլպաներ, ոչ-ռուսական կանաչ կաֆտան, կարմիր դարձանալերով ու պապուշ կոճակներով: Հեռվում, բլրի վրա, լորենիների կատարների ետևից բարձրանում էին Պրեոբրաժենսկի պալատի ալիքավոր տանիքները: Ժամանակին ամբողջությամբ էր երևում պալատը, արտացոլվում գետի մեջ՝ շքեղ ու գույնզգույն, հիմա ծածկված էր սաղարթով, բարձրաթռի վիճակում էր:

Դարպասի մոտ ու մարգագետնում կանայք էին վազվզում, ինչոր մեկին ձայն տալով՝ երևի տղային էին փնտրում: Սակայն նա, կոստյումի թփերի տակ նստած, ուշադրություն իսկ չէր դարձնում: Ալեքսաշկան թքեց որդի վրա ու բղավեց գետի մյուս կողմը.

— Էյ, մեր ձկներին չվախեցնես հա՞... Թե չէ շաղվարներս կհանենք, կգանք էդտեղ, քեզ...

Տղան քիթը քաշեց միայն: Ալեքսաշկան՝ նորից.

— Դու ո՞վ ես, ումնցի՞ց ես: Ա՛յ տղա...

— Հիմա հրաման կտամ գլուխդ կթռցնեն,— խլաձայն ասաց տղան,— էն ժամանակ կիմանաս...

Ալյոշկան իսկույն շշնջաց Ալեքսաշկայի ականջին.

— Ի՞նչ ես ասում, ախր ցա՞րն է,— ու գցեց կարթը, գլխապատառ փախչելու համար: Ալեքսաշկայի կապույտ աչքերի մեջ չարաճճիություն խաղաց...

— Համբերի, կհասցնենք փախչել:— Կարթը ջուրը գցեց, ծիծաղելով տղային նայեց:— Շատ վախեցանք քեզնից, գլուխ թռցնողի՞պ տեսեք... Էդ ինչի՞ ես նստել: Հեզ են ման գալիս...

— Նստել եմ էլի, կնիկներից եմ փախել:

— Ոնց որ տեսնում եմ՝ մեր ցարը չե՞ս: Հը՞:

— Ցարն եմ: Քե՞զ ինչ:

— Ո՞նց թե ինչ... Օրինակի համար, գնալիր ու մեզ համար շաքարած պրյանիկ բերեիր: (Պյոտրն Ալեքսաշկային էր նայում անքթիթ, անժպիտ:) Ատված վկա, վազի բեր, մի բան ցույց կտամ:— Ալեքսաշկան գլխարկը հանեց, ատտառի տակից ասեղը քաշեց:— Տես, ասե՞ղ է, թե չէ... Կուզե՞ս, թելած ասեղը թշիս միջով անցկացնեմ, ու բան չլինի...

— Սուտ չե՞ս ասում,— հարցրեց Պյոտրը:

— Հրես, խաչ անեմ: Կուզե՞ս ոտքով խաչ անեմ:— Ալեքսաշկան թափով նստեց, բորիկ ոտքը բռնեց ու ոտքով խաչակնքեց: Պյոտրն ավելի զարմացավ:

— Չէ մի, ցարը պիտի վազ տա, քեզ պրյանիկ բերի,— մրթմրթաց նա:— Ասեղը փողով չե՞ս անցկացնի:

— Արծաթ փող տաս, երեք անգամ կմտցնեմ, բան էլ չի լինի:

— Սուտ չե՞ս ասում,— Պյոտրն աչքերը սկսեց թարթել հետաքրքրությունից: Վեր կացավ, կոստյումի թփերի տակից նայեց պալատի կողմը, ուր դեռ իրար անցած, ձայն էին տալիս ու կանչում ինչ-որ կանայք, և դիմացի ափով վազեց կամրջակի կողմը:

Հասնելով կամրջակի ծայրին, հայտնվեց Ալեքսաշկայից երեք քայլի վրա: Ջրի վրա կապույտ ճպռոներ էին ճոճում: Ամպերն ու կպծակնահար լացող ուռենին էին արտացոլված ջրի վրա: Ալեքսաշկան Պյոտրին ցույց տվեց հունարը՝ սև թելով ասեղը երեք անգամ անցկացրեց թշի միջով, ու ոչինչ չեղավ. ոչ մի կաթ արյուն, երեք կեղտոտ կետ մնաց թշի վրա: Պյոտրը նայում էր քվեճի աչքերով:

— Ասեղն ինձ տուր,— ասաց անհամբեր:

— Բա դու փողը չե՞ս տալիս:

— Ա՜ռ...

Ալեքսաշկան օդի մեջ բռնեց շարտած ռուբլիանոցը: Պյոտրը, ասեղն առնելով, սկսեց անցկացնել թշի միջով: Ծակեց, անցկացրեց ու ծիծաղեց, ետ գցելով գանգուրները: «Քեզնից վատ չարեցի, քեզնից վատ չարեցի»: Տղաներին մոռացած, վազեց պալատի կողմը՝ երևի բոյարներին սովորեցնելու այտի միջով ասեղն անցկացնելը:

Նոր ռուբլիանոց էր. մի երեսին երկգլուխ արծիվն էր, մյուսին՝

կառավարչուհի Սոֆյան: Ալեքսաշկան ու Ալյոշկան իրենց օրում այդքան չէին վաստակել: Այդ օրվանից հանախ էին գալիս Ցաուզայի ափը, բայց Պոտրին միայն հեռվից էին տեսնում: Կամ թզուկ ձիով էր զբոսնում, ետևից էլ հաստլիկ մարդիկ էին արշավում, կամ թմբուկով քայլում էր գերմանական կափտանքներով ու փայտյա մուշկետներով տղաների առջևից, ու նույն հաստլիկները դարձյալ չորս կողմն էին պտույտ գալիս, ձեռքները թափահարելով:

— Դատարկ բաներով է զբաղվում,— ասում էր Ալեքսաշկան, ճղակոտոր ուռենու տակ նստելով:

Ամռան վերջում նա վերջապես կարողացավ հիսուն կոպեկով մի նիհար, խոզի պես սապատ ունեցող արջուկ գնել գնչուներից: Մանածողն Ալյոշկան էր՝ օղն արջուկի վիզը գցած: Բայց եկավ աշունը, անձրևներից ցեխը ծնկահաս դարձավ մոսկովյան փողոցներում ու հրապարակներում: Պարացնելու տեղ չկար: Քնելու տեղ չէին տալիս գազանի հետ միասին: Արջն էլ այնքան շատ էր խժռում, որ ամբողջ փողը ծախսում էին, դեռ չհաշված, որ ուզում էր ձմռան քուն մտնել: Ստիպված էին վնասով ծախել: Զմռանն Ալյոշկան, հնարավորին չափ խղճալի հագնվելով, ողորմություն էր խնդրում: Ալեքսաշկան եկեղեցիների առաջ մինչև գոտին մերկ ցնցվում էր պառնամանիքներին, համբ ու կաթվածահար ձևացնելով՝ ահագին փող էր մուրում: Հոգուն մեղք անել պետք չէ՝ վատ չապրեցին ձմռանը:

Ու նորից չորացավ գետինը, կանաչեցին անտառակները, երգեցին թռչունները: Գործի մեջ թաղված էին. առավոտյան արշալույսին մշուշապատ գետակի վրա ձուկ էին բռնում, ցերեկը թրև գալիս շուկաներում, երեկոներն անտառ էին գնում՝ թռչնի թակարդ դնելու: Ճանաչողները քանի անգամ ասացին Ալեքսաշկային. «Տես հա՞, հերրդ Մոսկվայով մեկ քեզ է մահ գալիս, ապում է՝ բռնեմ, սպանելու եմ»: Ալեքսաշկան ընդամենը թքում էր ատամների արանքից երեք սաժեն հեռու: Մեկ էլ մի օր վրա պրծավ...

Ստարայա Բասմաննայա փողոցը ծայրնդայր վազեց Ալեքսաշկան՝ ոտքերն արդեն բռնվում էին: Այլևս ետ չէր նայում, լսում էր, որ ավելի մոտեցած են գոռում սապոգները, Դանիլան շնչում էր հևասպառ ու սուլոցով: Վերջն եկել էր: «Օգնեցեեեե՛ք»,— բարակ ձայնով բղավեց Ալեքսաշկան...

Այդ ժամանակ մի բարձր կառք նրբանցքից դեպի Ռազգուլյայ թեքվեց հոնկելով՝ հայտնի պանդոկ կար այնտեղ: Իրար ետևից լծած երկու ձի խոշորաքայլ վարգով էին ընթանում: Առջևի ձիու վրա գուլպաներով ու լայնեզր գլխարկով մի գերմանացի էր նստած: Ալեքսաշկան իսկույն նետվեց ետևի անիվների կողմը, կախվեց սրունքից ու մագլցեց կառքի ետնամասին: Դանիլան, տեսնելով դա, որոնաց. «Կանգնի՞...»: Բայց գերմանացին դաղեց նրան մտրակով, և Դանիլան, հայհոյելով ու շնչասպառ, ընկավ ցեխի մեջ: Կառքը հեռացավ:

Ետնամասին կպած, Ալեքսաշկան հանգստանում էր՝ հարկավոր

էր հնարավորին չափ հեռանալ այդ տեղից: Պոկրովսկիյե դարպասից այն կողմ կառքը հարթ ճանապարհ ելավ, արագացրեց ընթացքն ու շուտով մի բարձր ցանկապատի մոտեցավ: Դարպասի մոտից առաջ եկավ օտարերկրացի մեկը, ինչ-որ բան հարցրեց: Կառքի միջից տերտերի երկար խոպոպներով մի գլուխ դուրս եկավ, բայց դեմքն ածիլված էր: «Ֆրանց Լեֆորտը»,— պատասխանեց գլուխը: Դարպասը բացվեց, և Ալեքսաշկան հայտնվեց Կուկույում, Գերմանական արվարձանում: Անիվները խշշում էին ավազի վրա: Փոքր տնակների լուսամուտներից հաճելի լույս էր ընկնում ցածրիկ ցանկապատերի, խուզած ծառերի, ավազապատ արահետների արանքում սյուներին դրված ապակյա գնդերի վրա: Տնակների առջևի պարտեզներում ճերմակին էին տալիս ու անուշ բույր արձակում ծաղիկները: Տեղ-տեղ նստարանների վրա, մուտքերի մոտ գերմանացիներ էին նստած՝ գործած թասակներով, երկարուկ ծխափողեր բռնած:

«Տեր աստված, էդ ի՞նչ մաքուր են ապրում»,— մտածեց Ալեքսաշկան, գլուխը դեսուդեն պտտելով կառքի պոչից: Աչքերի մեջ լույսեր թրթռացին: Անցան քառանկյուն լճակի մոտով՝ եզրերին կլոր ու փոքրիկ ծառեր էին դրված կանաչ ուղղանկյուն տակառների մեջ, դրանց արանքներում հրագաթսեր էին վառվում, լուսավորելով մի քանի նավակներ, որոնց մեջ շրջազգեստները վեր քաշած որ չնմրթվի, բազուկները մերկ, կրծքաթաց, փետրազարդ գլխարկներով կանայք էին նստած, ծիծաղում ու երգում էին: Հենց այդտեղ, հողմաղացի տակ, առաստերիայի, կամ պանդոկի լուսավորված մուտքի առաջ տղա աղջիկ՝ իրար բռնած, պար էին գալիս:

Ամենուրեք հրացանակիրներ էին շրջում, որոնք Կրեմլում խստադեմ էին ու լուռ, իսկ այստեղ՝ կափտանքներն արձակ, անգեն ու թեվանցուկ, երգում էին, քրքջում՝ անչար, խաղաղ: Ամեն ինչ խաղաղ էր այստեղ, բարեհաճությունը, կարծես երկրի վրա չլիներ՝ աչքերը տրորելու ժամանակն էր...

Հանկարծ մտան մի ընդարձակ բակ, որի կենտրոնում կլոր լճակից ջուր էր շատրվանում: Խորքում երևում էր աղյուսաձև ներկած մի տուն, դիմհարված ճերմակ գերանքներով: Կառքը կանգ առավ: Երկարամազն իջավ ու տեսավ պոչից ցած ցատկող Ալեքսաշկային:

— Դո՞ւ ով ես, որտեղի՞ց ու ինչի՞ համար ես այստեղ,— հարցրեց նա, ծիծաղելի առոգանությամբ:— Քե՞զ եմ հարցնում, տղա՛: Գո՞ղ ես:

— Ե՞ս եմ գող: Ուրեմն, ծեծելով սպանի, թե գող եմ:— Ալեքսաշկան ծիր-ծիր նայում էր նրա ածիլած դեմքին, ցից քթին ու ժպտացող փոքր բերանին:— Տեսա՞ր, թե Ռազգուլյայում հերրս ոնց էր ընկել ետևիցս, դանակը ձեռքին:

— Ա՜: Այո, տեսա... ծիծաղեցի՝ մեծն ընկել է փոքրի ետևից...

— Հերրդ մեկ է ինձ կմորթի... Խնդրում եմ, ինձ ծառայության վերցրու... Քեռի՞...

— Ծառայությա՞ն: Իսկ ի՞նչ գիտես անել:

— Ամեն ինչ... Առաջինը՝ երգել, ինչ երգ ասես... Փող ու սրինգ եմ նվագում, գդալ գարկում: Ծիծաղեցնել գիտեմ՝ քանի անգամ են մարդիկ փորները բռնել, հենց սկսել եմ: Պարել գիտեմ՝ առավոտը սկսեմ, էն մյուս առավոտ պրծնեմ, ու չքրտնեմ: Ինչ ասես ինձ, էն էլ կկարողանամ...

Ֆրանց Լեֆորտը բռնեց Ալեքսաշկայի սուր ծնոտից: Ըստ երևույթին, տղան դուրը եկել էր:

— Օ՜, դու շատ լավ տղա ես... Օճառ կվերցնես ու կլողանաս, քանի որ կեղտոտ ես... Հետո քեզ հագուստ կտամ... Բայց եթե գողություն անես...

— Դրանով չենք զբաղվում, ինչքան չլինի խելք ունենք, թե՞ չունենք,—այնքան վստահ ասաց Ալեքսաշկան, որ Ֆրանց Լեֆորտը հավատաց: Ջիպանին ինչ-որ բան ասելով Ալեքսաշկայի մասին, տուն գնաց սուլելով, ոտնաթաթերը կողք գցելով ու ասես պարաքայլ. հավանաբար, որովհետև լճակի մոտ երաժշտություն էր հնչում ու գրգռիչ ձայնում էին գերմանուհիները:

3.

— Դե, բավական է, Նիկիտա Մոիսեևիչ, երեխայի գլուխը հանկարծ չցավի...

Նատալյա Կիրիլովնան դեռ չէր վերջացրել, Պյոտր ցարը բառի կեսից ընդհատեց Առաքյալ կարդալը, շտապ-շտապ խաչակնքեց թանաքոտ մատներով և չպպասելով, որ ուսուցիչն ու քեռին՝ Նիկիտա Մոիսեևիչ Զոտովը, ըստ կանոնի, մինչև գետին գլուխ խոնարհի, հափշտակեց մոր ձեռքը, որն անօգնական թափահարվեց՝ որդուն մի պահ բռնելու, մոտը պահելու համար, և ճոճոացող տախտակների, միջանցքների ու սանդուղքների վրայով փութով սուրացին նրա ծուռթաթ քայլերը, վախեցնելով Պրեոբրաժենսկի պալատի մութ անկյուններում ծվարած հացփորի պառավներին:

— Գլխա՞րկդ, գլխա՞րկդ, գլուխդ կվառվի արևից,— թույլ բղավեց թագուհին նրա ետևից:

Նիկիտա Զոտովը կանգնած էր նրա առաջ՝ ջերմեռանդ և ուղիղ, ինչպես եկեղեցում. սանրված, մաքուր, փափիկ ոտնամաններով, բարակ մանուշի մգագույն ֆերյազով, որի օձիքը ետևից կանգնած էր գլխից բարձր: Փափուկ շրթունքներով ու գանգուր մորուքով բարեպաշտ դեմքը ջերմեռանդությունից ետ էր գցել: Բոլորանվեր մարդ էր՝ խոսք չկար: Ասեիր, Նիկիտա, քեզ գցիր դաշույնի վրա, կգցեր: Ծնից ավելի հավատարիմ էր, բայց շատ էր պայծառ, հոգին թեթև: Այդպիսի քեռի պետք չէր կամակոր տղային:

— Նիկիտա Մոիսեևիչ, նրա հետ ավելի շատ կարդա սուրբ գրքեր: Թե չէ ցարի նման չէ մի տեսակ... Մինչև դես-դեմ՝ պսակելու ժամանակը կգա... Թաթերի վրա ճեմելով քայլելը մինչև հիմա չի սովորել, մի գլուխ վազում է հասարակ մարդու պես: Այ, նայիր...

Պատուհանից դուրս նայելով, թագուհին ձեռքերը թույլ-թույլ

իրար զարկեց: Բակում վազում էր Պյոտրը՝ շտապելուց գայթելով: Ետևից՝ լողլող տղաներն էին, պալատական սպասավորներից, ձեռքներին մուշկետներ ու փայտյա երկարապոչ կացնիկներ: Հողապատնեշի վրա, որը պալատի առաջ սարքած ռազմախաղի ամրոց էր, ցցապատի ետև կանգնած էին գյուղից այստեղ քշված մուժիկները՝ գերմանական լայնեզր գլխարկներով: Նրանց հրամայված էր նաև ծխախոտով լի ծխամորճեր պահել բերաններում: Վախեցած նայելով ցատկոտելով վազող ցարին, նրանք մոռացան, թե ինչպես են խաղալու: Պյոտրը զայրացած բղավեց աքլորի ձայնով: Նատալյա Կիրիլովնան գարհուրելով տեսավ Պետյայի կատաղած կլոր աչքերը: Նա մագլցեց ամրոցի վրա ու զայրացած, փոքր մուշկետով մի քանի անգամ խփեց խաղացող մուժիկներից մեկին, որը գլուխն ուսերի մեջ քաշեց:

— Իր ասածով թե չեղավ, կսպանի,— ասաց Նատալյա Կիրիլովնան,— և ո՞ւմ է քաշել կատաղած բնավորությամբ:

Խաղը նորից սկսեցին: Կացնիկներով լողլող պատանյակներին շարք կանգնեցնելով, Պյոտրը նորից բարկացավ, որ իրեն վատ են հասկանում: Փորձանք էր. տաքանալիս, սկսում էր անհասկանալի խոսել, շտապելուց խեղդվում ու բառերը կուլ էր տալիս, ասես ավելին էր ուզում ասել, քան ունեցած բառերը:

— Գլուխն ինչի՞ց է այդպես սկսել ցնցվել,— ասաց Նատալյա Կիրիլովնան, վախով նայելով որդուն: Եվ հանկարծ փակեց ականջները: Ամրոցի վրայի մուժիկները առաջ բերեցին կաղնեփայտե թնդանոթը, որը թագուհու խստիվ հրամանով շատ փափուկ բաներով էր լցված՝ խաշած շաղգամով ու խնձորով, և կրակեցին: Ու տեղնուտեղը, գենքերը ցած գցելով, ձեռքները վեր պարզեցին՝ ի նշան հանձնվելու:

— Հանձնվել չի՞ կարելի: Պիտի կուվե՞ք,— բղավում էր Պյոտրը, պտույտ գալով ու գլուխը թափահարելով:— Սկզբից: Ամեն ինչ սկզբից...

— Նիկիտա Մոիսեևիչ, պատուհանը փակիր, շատ են աղմկում, գլուխդ ցավեց,— ասաց թագուհին:

Փակվեց գունավոր լուսամուտը: Նատալյա Կիրիլովնան գլուխը կախեց ու խաղացրեց մատները, գցելով սրբազան խխունջներից պատրաստված ափոնյան տերողորմյան: Տրտմալի էր: Այդ տարիների ընթացքում վշտից ու արցունքից թոշնել էր Նատալյա Կիրիլովնան, միայն հոնքերն ու երբեմնի հրացայտ, մթին աչքերն էին մնացել գեղեցկությունից: Միշտ սևազգեստ էր, սև գլխաշորով: Այդպես ժամանակին Մարիա Նագայան էր ապրում Ուգլիչում, տարաբախտ Դմիտրիի հետ... Նույն դժբախտությունն այստեղ էլ չպատահեր... Կառավարչուհի Սոֆյան քնում ու երազ է տեսնում՝ պսակվի Գոլիցինի հետ ու թագավորի: Արդեն թագ է պատվիրել իր համար գերմանացի վարպետներին:

Պրեոբրաժենսկի պալատում ամայություն է, միայն սպասավորներն են վազվզում ոտնաթաթերի վրա և մութ անկյուններում քչփչ-

չում են պառավ ծծմայրերը, դպլակները: Ցարը թեև պատանի է, բայց տանել չի կարողանում պառավներին. հենց տեսավ մոմը վրան կաթկթած մի դպլակ քարշ է գալիս պատերի տակով, այնպես կգոռա, որ ուշակորույս պառավը հազիվ կհասնի իր անկյունը:

Բոյարները Պրեոբրաժենսկում չեն լինում՝ ոչ պատիվ կա ազատեղ, ոչ շահ: Բոյորը խոնվել են Կրեմլում, տաք արևի տակ: Շատ պատարակելի չլինելու համար Սոֆյան Պյոտր ցարի արքունիքում լինելու հրամանը էր տվել չորս բոյարների՝ իշխան Միխայլա Ալեքսանդրովիչ Զերկասսկուն, իշխան Լոլկովին, իշխան Տրուբեկուրովին ու իշխան Բորիս Ալեքսեևիչ Գոլիցինին: Եվ ի՞նչ օգուտ նրանցից: Զիներից ազատելով կիջնեին շքամուտքի մոտ, կհամբուրեին թագուհու ձեռքն ու կնստեին՝ լուռ, հոգոց հանելով: Խոսելու քիչ բան կգտնվի շնորհազուրկ թագուհու հետ: Վազեվազ գլխատուն կմտներ Պյոտրը, բոյարները խոնարհվելով չթագավորող թագավորին, կըհարցնեին նրա արքայական ողջությունն ու նորից հոգոցներ կհանեին, գլուխները տարուբերելով. շատ ժիր ու ճարպիկ է դառնում ցարը, տես, այտը ճանկռված է, ձեռքերը՝ ճաքճքած: Վայել չէ:

— Նիկիտա Մոիսեևիչ, ինձ ասացին՝ Մըլտիշչիում մի կնիկ կա, Վորոբյիխա է անունը, կվասի մրուրով գուշակում է, ու շատ ճիշտ. ամեն ինչ կատարվում է...— ասաց թագուհին:— Մարդ ուղարկենք, կանչեն... Մենակ թե վախենում եմ... Մի գեշ բան չգուշակի...

— Մայր թագուհի, ի՞նչ գեշ բան կարող է ձեզ գուշակել այդ եղկելի Վորոբյիխան,— երգեցիկ, դուրեկան ձայնով պատասխանեց Զոտովը:— Այդ դեպքում Վորոբյիխային պատառ-պատառ անելն էլ քիչ է:

Նատալյա Կիրիլովնան մատը բարձրացրեց, մոտ կանչեց նրան: Զոտովն անաղմուկ, փափուկ ոտնամանների թաթերի վրա մոտեցավ:

— Մոիսեևիչ... Քիչ առաջ խոհանոցում մի պորելեցի այրի էր եկել, մաղով հատապտուղ էր բերել, ասաց, թե Սոֆյան օրերս պալատում բարձր-բարձր ասել է, բոյորն էլ լսել են. «Ափսոս, ասել է, ստրելեցներն այն ժամանակ գայլանոցին ու էգ գայլին էլ չխեղդեցին...»:

Նատալյա Կիրիլովնայի շրթունքները դողացին, սև գլխակապով եզերված կրկնակի կզակը ցնցվեց, խոշոր աչքերն արցունքով լցվեցին:

Ի՞նչ պատասխանել նրան: Ինչո՞վ սփոփել: Սոֆյայի ձեռքի տակ ստրելեցների գնդերն են, ազնվական ամբողջ աշխարհազորը Սոֆյայի կողմն է բռնել, իսկ Պյոտրը ռազմախաղի մի երեք տասնյակ տրխմար-պատանյակ ունի, մեկ էլ շաղգամով լցված փայտյա թնդանոթ... Նիկիտա Զոտովը ձեռքերը տարածեց, գլուխը ետ տարավ, մինչև որ ծոծրակը դեմ առավ կոշտ օձիքին...

— Մարդ ուղարկիր, Վորոբյիխային կանչեն,— շշնջաց թագուհին,— թող գոնե ճիշտն ասի, թե չէ սարսափելի է մի տեսակ...

Երկար ու ձանձրալի է ամռան օրը: Ծերմակ ամպերը լողում ու կարծես կանգնած են Ցառզայի վրա: Տապ է: Ճանճեր: Մշուշի միջից երևում են Մոսկվայի անհամար գմբեթները, ամրոցի աշտարակի կատարները: Ավելի մոտ գերմանական կիրխեի սուր ծայրն է երևում, Կուկույի հողմաղացները: Կռռում են հավերը՝ հինջ բերելով: Խոհանոցում դանակներ են չխկչխկում:

Ալեքսեյ Միխայլովիչի օրոք երբեմն ծիծաղ ու աղմուկ էր հընչում Պրեոբրաժենսկում, մարդիկ էին հավաքվում, ձիեր էին վրնջում: Միշտ մի զվարճանք լինում էր՝ որս, կամ արջի հետապնդում, ձիարշավ: Իսկ հիմա՝ քարաշեն դարպասից այստեղ բերող ճանապարհին խոտ է բսնել արդեն: Կյանքն անցավ: Նստիր ու տերողորմյադ գցիր:

Ապակուն ինչ-որ բանով խփեցին: Զոտովը բացեց պատուհանը: Լորենու տակ, ոտից գլուխ փոշեկոլոր, հոդաթպթախ ու քրտնած, կանգնած էր Պյոտրը՝ կարծես մուժիկի զավակ չիներ: Ձայն տվեց.

— Նիկիտա, հրաման գրիր... Մուժիկներս բանի պետք չեն, բանի որ ծեր են ու անխելք... Շուտ արա:

— Ի՞նչ կհրամայես գրել, ձերդ արքայական մեծություն,— հարցրեց Նիկիտան:

— Ինձ հարկավոր է հարյուր մուժիկ՝ ուժեղ, խելացի... Շուտ արա...

— Գրեմ՝ ինչի՞ համար են սույն մուժիկները:

— Ռազմախաղերի... Թող չփչացած մուշկետներ ուղարկեն, հետն էլ վառոդ... Ու երկու թուջե թնդանոթ՝ կրակելու համար... Շուտ արա, շուտ... Կստորագրեմ, սուրհանդակ կուղարկենք...

Լորենու ճյուղը դեմ տանելով, պատուհանից ցած հակվեց թագուհին.

— Պետենկա, աչքիս լույս, հերիք է կռիվ անես... Մի քիչ հանգստացիր, կողքս նստիր...

— Ժամանակ չկա, մամանչա, հետո...

Նա վազեվազ հեռացավ: Երկար հոգոց հանեց թագուհին որդու ետևից: Զոտովը, երեսը խաչակնքելով, գրպանից հանեց սագի փետուրը և գրչահատը, խնամքով սրեց ծայրը, ստուգեց եղունգով: Մի անգամ էլ խաչակնքեց, աղոթք մրմնջալով, թևքը ծալեց ու նստեց գրելու՝ պոլուուստավով. «Ողորմածությամբն Աստուծո, մենք՝ լուսապայծառ և վեհապետագույն թագավորս մեծ, ցար և մեծն իշխան Պյոտր Ալեքսեևիչը, ինքնակալը համայն Մեծ և Փոքր և Սպիտակ Ռուսիո...»:

Զանձրույթից թագուհին վերցրեց որդու տետրը: Թվաբանություն էր: Թանաքոտված էր տետրը, թեքուծուռ, անընթեռնելի գրոտած. «Ադիցիայի օրինակ... Պարտկը շատ է, իմ մոտի փողն քիչ է եղած պարտկիծ, պետկ է հաշվել ինչքան է պետկ վճառել: Դա գրվում է այսպես. պարտկը վերեվից, տակը փողն ու վերեվինից հանում են տակի եղածը: Օրինակ, մեկը էրկուսից մնաց մեկ: Վերեվը գրի էրկու, դրա տակը մեկ, մեկի տակը հաշվելու գիծը, հաշվելու գծի տակ ինչ թիվ կստանաս կամ ստացած թիվը...»:

Թագուհին հորանջեց՝ ուտել էր ուզում, թե մեկ ուրիշ բան...

— Նիկիտա Մոխենիչ, մոռացել եմ, ճաշից հետո բան կերա՞նք, թե չէ:

— Մայր թագուհի, Նատալյա Կիրիլովնա,— զրուցը կողմ դնելով, Զոտովը վեր կացավ, գլուխ խոնարհեց:— Հենց որ ճաշեցինք, դուք բարեհաճեցիք ննջել, արթնացաք, ձեզ հատապտուղ մատուցեցին սերուցքով, տանձի եփուկ ու վանքական մեղր...

— Թե չէ... Շուտով իրիկնային ժամերգության ենք կանգնելու...

Թագուհին ծույլ-ծույլ վեր կացավ ու գնաց ննջարան: Այստեղ նրագներ էին վառվում (պատուհանները վարագուրված էին), պատերի տակ, ծածկոց գցած սնդուկների վրա նստած էին չարալեզու հացփորի պառավները և միմյանց հին-հին վիրավորանքներ էին հիշեցնում շշնջաձայն: Միանգամից ոտքի ելնելով, ասես անուսկր պուպրիկներ լինեին, խոնարհվեցին թագուհուն: Նա նստեց սրբապատկերների տակ, վենետիկյան բարձրաթիկնակ աթոռին: Մահճակալի ետևից դուրս սողաց ճպռոտած աչքերով գանգ կինը, երեխայի պես թնկթնկալով՝ կուչ եկավ թագուհու ոտքերի մոտ՝ պառավները նեղացրել էին նրան:

— Չլինի՞ երազ եք պատմում, անխելքներ,— ասաց Նատալյա Կիրիլովնան:— Ոչ մեկդ միևնույնը չի՞ տեսել:

Օրն ավարտելով, դանդաղ գարկնց պալատի եկեղեցու աշտարակազանգը: Նախասենյակում, ատիճանների վրա, ուռած աչքերը տրորելով, հայտնվեցին մանրակալվածք, ցածրատոհմիկ բոյարների զավակները՝ Պոտրի պալատին Սոֆյան նրանց էր կցել որպես սեղանապետ-պալատականներ: Այստեղ էր և Վասիլի Վոլկովը՝ հայրը դուռ չմնաց, ճակատով բացեց, սղային պատվի արժանացրեց: Հեշտ ու կուշտ ապրուստ էր, ոռճիկը՝ տարեկան վաթսուն ռուբլի: Բայց ձանձրալի էր: Հանդարտ օրուգիշեր պալատականները քնած էին:

Իրիկնային ժամերգության զանգերը զարկեցին: Ցարը ոչ մի տեղ չկար: Սեղանապետները ցրվեցին՝ փնտրելու բակում, բանջարանոցներում, գետակի ափի մարգագետիններում: Թագուհին մի երկու տասնյակ ձայնեղ ծծմայրեր ուղարկեց նրանց օգնության: Ամբողջ շրջակայքը փնտրեցին, ձայն տվեցին՝ ոչ մի տեղ չկար: Տեր աստված, հո չէ՞ր խեղդվել: Պալատականների քնեաձությունը չքացավ: Թռան անթամբ ձիերի վրա, ցրվեցին իրիկնային դաշտերում՝ բղավելով ու ձայն տալով: Պալատում իրարանցում սկսվեց: Պառավները վրա տալով փսփսացին բոլոր անկյուններում. «Հապտատ Սոնկայի արածը կլինի... Քիչ առաջ մի մարդ էր մանգալիս պալատի կողքերը... Ծտրի մեջ խրած դանակ էին տեսել... Մորթեցին, մորթեցին մեր տիրոջը, մեզ հաց ու ջուր տվողին...»: Զարագույժ այդ շշուկներով Նատալյա Կիրիլովնային խելագարության հասցրեցին, և նա դուրս վազեց առուտաք: Մշուշ էր գալիս մթնած դաշտերից, լորերն էին կրթկրթում խոնավ խանդակներում: Հեռվում, Սոկոլնիչի սնացած անտառի վրա աղոտ ու մռայլ մի աստղ երևաց: Նատալյա Կիրիլովնայի սիրտը թախիծ սողոսկեց: Ձեռքերը կոտրատելով, նա բղավեց.

— Պետենկա՜, զավա՜կս:

Վասիլի Վոլկովը, գետի ափով ձին չափ գցած, դեմ առավ ձկնորսների խարույկին՝ ձկնորսները վախեցած վեր թռան, եփվող ձուկը շրջվեց կրակի վրա: Հնասպառ Վոլկովը հարցրեց.

— Ժողովուրդ, ցարին չե՞ք տեսել:

— Մի քիչ առաջ նավակի մեջ նա չէ՞ր... Ոնց որ թե ուղիղ Կուկույ գնացին: Գերմանացիների մոտ ման եկեք...

Արվարձանի դարպասը դեռ փակ չէր: Վոլկովը փողոցով սլացավ այն կողմն, ուր գերմանացիներ կային հավաքված: Ջիու վրայից տեսավ ցարին ու նրա կողքը կանգնած երկարամազ, միջահասակ, հնդուհավի պես կարճ կաֆտանի փեշերը տնկած մի մարդու: Կողք պարզած մի ձեռքում գլխարկն էր, մյուսում՝ ձեռնափայտը, և համարձակ ծիծաղելով, շան որդին խոսում էր ցարի հետ: Պոտրը լսում էր, եղունգը կրծելով: Ու բոլոր գերմանացիները կանգնած էին անամոթաբար ազատ ու համարձակ: Վոլկովը ցած թռավ ձիուց, հրմշտելով առաջացավ ու ծնկի իջավ ցարի առաջ.

— Ողորմած տեր, մայր թագուհին գլուխը կորցրել է, աստված գիտե, թե ինչեր մտածեցին ձեր մասին: Բարեհաճեցեք տուն գնալ՝ երեկոյան ժամերգության...

Պոտրն անհամբերությամբ ցնցեց գլուխն ուսի վրա.

— Ձեմ ուզում... Կորի՛ր էստեղից...— Եվ քանի որ Վոլկովը շարունակում էր պաղատագին իրեն ճաչել ծնկաչոք, բարկացավ ցարն ու ոտքով խփեց նրան:— Չքվիր գնա, ճորտ:

Վոլկովը խոր գլուխ խոնարհեց և խոժոռված, չնայելով ծիծաղող մարդկանց, չափավոր վարգով գնաց գնելուց տալու թագուհուն: Մեղմաբարո, վարդագույն կրկնակի կզակով, ժիլետով ու գործած գդակով, ասեղնագործ ոտնամանոցներով մի գերմանացի՝ գինեվաճառ Իվան Մոնսը, երիտասարդ ցարին նայելու համար ելավ առստերիայից, բերանից հանեց ճենապակյա ծխամորճը.

— Նորին արքայական մեծության համար մեզ մոտ ավելի ուրախ է...

Զորսբոլորը կանգնած օտարերկրացիները, ծխամորճները հանելով, գլուխները թափահարեցին, բարեհիրտ ժպիտներով հաստատելով.

— Օ՜, այո, մեզ մոտ ավելի ուրախ է...

Ու մոտեցան լսելու, թե երկարահասակ, մանկական երկար վզով ցարին ինչ է ասում պճնագգեստ, փարթամահյուս կեղծամ դրած մարդը՝ Ֆրանց Լեֆորտը: Պոտրը նրան հանդիպել էր Յաուզայի վրա. ծանր գետանավով էին լողում, ծառաներն անվարժ էին թիավարում, չխկչխկացնելով թիակալները: Պոտրը նստած էր ցոուկին, ոտքերն իրեն քաշած: Վերջալույսի շողերով ողողված, դանդաղ մոտենում էին կղմինդրե տանիքները, սուր կտրաձողերը, խուզված

ծառերի կատարները, հոլմացուցներով ջրաղացները, աղավնատները: Կուկուլցից օտարոտի երաժշտության հնչյուններ էին գալիս: Ապես յոթ սար, յոթ ձոր այն կողմ ընկած մի քաղաք էր երևում հարթմնի, որի մասին Պոտրի ականջին դեռ օրորոցում էին մրմնջացել դայակները:

Ափին, աղբակույտի վրա, փեշերը ցից կաֆտանով, սուսերով ու երեք եզրերը ծալած սև գլխարկով մի մարդ հայտնվեց՝ կապիտան Ֆրանց Լեֆորտն էր: Պոտրը տեսել էր նրան Կրեմլում, երբ օտարերկրյա դեսպաններին էին ընդունում: Ջեռնափայտ բռնած ձախ ձեռքը կողք պարզելով, գլխարկը հանեց, եռքայլ արեց ու խոնարհվեց՝ կեղծամի գալարները ծածկեցին դեմքը: Նույն ճարպկությամբ ուղղվեց և բերանի անկյունները թոցրած ժպտալով, կոտրատված ռուսերենով ասաց.

— Պատրաստ եմ ծառայել ձերդ արքայական մեծությանը...

Պոտրը նրան էր նայում վիզը ձգած, որպես մի հրաշքի՝ շատ էր ճարպիկ այդ մարդը, գվարթ, ու նման չէր և ոչ մեկի: Գանգուրները թափահարելով՝ Լեֆորտը խոսում էր.

— Ես կարող եմ ջրաղաց ցույց տալ, որը թափոտ է աղում, կորեկ ծեծում, ջուլհակի դազգահ շարժում և ջուր լցնում հսկայական տակառի մեջ: Կարող եմ ցույց տալ և ջաղացի անիվ, որի ներսում շուն է վազում ու պտտում անիվը: Գինեվաճառ Մոնսի տանը երաժշտական արկղիկ կա՝ վրան տասներկու կավալեր ու դամա, ինչպես նաև երկու թռչուն, անչափ նման բնականին, բայց եղունգի մեծությամբ: Թռչունները տխակի պես երգում են, պոչերն ու թևերը թափահարում, թեև սունը ոչ այլ ինչ է, եթե ոչ մեխանիկայի օրենք: Դիտափող ցույց կտամ, որով լուսնին են նայում ու տեսնում այնտեղի ծովերն ու սարերը: Դեղագործի տանը սպիտի մեջ ապրող իգական սեռի մի մանկիկ կարելի է տեսնել՝ դեմքը լապնակի մեկուկես քառորդ է, մարմինը բրդով ծածկված, ձեռքերի ու ոտքերի վրա երկուական մատ:

Պոտրի աչքերն ավելի ու ավելի էին կլորանում հետաքրքրությունից: Բայց նա լսում էր, փոքր բերանը սեղմած: Չգիտեպ ինչու նրան թվում էր, որ եթե ինքը՝ լողլող, երկար ձեռքերով, իշնի ափ, Լեֆորտն իր վրա կծիծաղի: Ամաչելուց քիթն էր ֆսֆսացնում բարկացած ու սիրտ չէր անում իշնել, թեև նավակն արդեն քիթը խրել էր ափի մեջ: Այդժամ Լեֆորտը մոտ վազեց ջրին՝ ուրախ, գեղեցիկ, բարեսիրտ, Պոտրի ճանկոտված, կրծոտած եղունգներով ձեռքը բռնեց ու կրծքին սեղմեց.

— Օ՜, մեր բարի կուկուլցիները պտանց ուրախ կլինեն տեսնել ձերդ մեծությանը... Նրանք անչափ զվարճալի կունդշտուկներ ցույց կտան ձեզ...

Ճարպիկ էր, խորամանկ էր Լեֆորտը: Դեռ ուշքի չեկած՝ Պոտրն արդեն, ձեռքերը թափ տալով, քայլում էր նրա կողքով դեպի արվարձանի դարպասը: Այստեղ նրան շրջապատեցին կուշտուկուտ, կաբմրաթուշ, բարեհոգի կուկուլցիները, և յուրաքանչյուրը կամեցավ իր տունը ցույց տալ, իր ջրաղացը, ուր անվի ներսում շուն էր վազում, իր պարտեզը՝ ավազապատ կածաններով, խուզված թփուտներով և ոչ մի ցողուն ավելի խոտով: Հնարամիտ բոլոր սարքերը ցույց տվեցին, որոնց մասին ասել էր Լեֆորտը:

Պոտրը զարմանում էր ու շարունակ հարցնում. «Իսկ սա՞ ինչ է: Իսկ սա՞ ինչի համար է: Իսկ սա՞ ինչպես է սարքված...»: Կուկուլցիները գլուխներն էին թափահարում և հավանություն տալով ասում. «Օ՜, երիտասարդ Պոտր Ալեքսեևիչն ուզում է ամեն ինչ իմանալ, գովական բան է դա...»: Վերջապես մոտեցան քառանկյուն լճակին: Արդեն մութ էր: Աուստերիայի բաց դռնից լույս էր ընկնում ջրի վրա: Պոտրը պստիկ մի նավակ տեսավ, փոքր, քամու բացակայությունից կախված առագաստով: Նավակի մեջ դեռատի աղջիկ էր նստած, վարդի պես ճերմակ ու փարթամ զգեստով: Մազերը վեր էին սանրած ու ծաղիկներով զարդարված, մերկ ձեռքերով վին էր բռնել: Պոտրը անչափ զարմացավ, նույնիսկ սարսափեց մի տեսակ: Մթնշաղի մեջ հրաշալի դեմքը Պոտրին դարձնելով, աղջիկը զարկեց լարերին ու բարալիկ ձայնով գերմաներեն այնպիսի սրտաճմլիկ ու հաճելի բան երգեց, որ բոլորի բթները խտտացին: Կանաչ գնդերի և կոնաձև խուզված ծառերի արանքում անուշ բույր էին արձակում ծխախոտի սպիտակ ծաղիկները: Անհասկանալի տպավորությունից Պոտրի սիրտը շատ արագ բաբախեց: Լեֆորտը նրան ասաց.

— Նա երգում է ձեր պատվին: Շատ լավ աղջիկ է, ունևոր գինեվաճառ Յոհանն Մոնսի աղջիկն է:

Ինքը՝ Յոհանն Մոնսը, ծխամորճը բերանին, ուրախ-ուրախ բարձրացրեց ձեռքը և ողջունեց Պոտրին: Լեֆորտի գայթակղիչ ձայնը շարունակեց.

— Հիմա աուստերիայում կհավաքվեն աղջիկները, պարեր կլինեն ու հրավառություն, կամ կրակի խաղեր...

Մութ փողոցում կատաղորեն դոփեցին ձիերի սմբակները: Ցարական սեղանապետերի մի ամբողջ բազմություն էր եկել ցարի մոտ և խիստ հրաման բերել թագուհուց՝ տուն գնալ: Այդ անգամ ստիպված էր հնազանդվել:

4

Կրեմլում եղած օտարերկրացիները զարմանքով էին խոսում, որ ի տարբերություն Փարիզի, Վիեննայի, Լոնդոնի, Վարշավայի կամ Ստոկհոլմի, ցարական արքունիքն ավելի շատ վանականական գրասենյակի է նման: Ոչ կիրթ զվարճանք, ոչ պարահանդես, ոչ խաղեր, ոչ նրբին զբաղումն երաժշտությամբ: Ոսկեկար մուշտակներով բոյարները, գոտոզամիտ իշխանները, երևելի վոյեվոդաները կրեմլյան ցածրաստաստաղ ու շոգ սրահներում խուսում էին միայն կանեփի, պուտաշի, ճարպի, ցորենի, կաշվի առևտրական գործարքներից... Վիճում ու անպատվում էին միմյանց՝ գների խնդրով: Տրտնջ-

ջում, թե անավասիկ, հողն էլ է բերրի, ամեն ինչ էլ շատ կա, սակայն նկազ է առևտուրը, ընդարձակ են բոյարական վոտչինաները, բայց ծախելու բան չկա: Սև ծովում թաթարներն են, Բալթիականում անցնել չի լինի, Չինաստանը հեռու է, հյուսիսում անգլիացիներն են ամեն ինչ բռնել: Նվաճել է պետք ծովերը, բայց ուժ չկա:

Նաև՝ սակավ ձեռներեց էին ռուսները: Արջերի պես ապրում էին ամուր դարպասների հետևում, անանցանելի ցանկապատերով պատնեշված մոսկովյան դատակերտներում: Օրվա ընթացքում երեք ժամերգության էին կանգնում: Չորս անգամ կուշտ ուտում էին, դեռ ցերեկներն էլ քնում՝ բարեպաշտության ու առողջության համար: Ազատ ժամանակ քիչ էր մնում. բոյարինը պալատ պիտի գնար, սպասելու, թե իրենից երբ է ծառայություն պահանջվելու ցարին, վաճառականը՝ պիտի նստեր ու հաճախորդ կանչեր, ատենավորը՝ ֆրանսիացիներ պաշտոնագրերի վրա:

Դեռ երկար պիտի կողերը քորեին, գոմոային ու տրտնջային ռուսները, բայց անտպասելի բան կատարվեց՝ բախտները բացվեց: Լեհաց թագավոր Ցան Սոբեսկին մեծ դեսպաններ ուղարկեց Մոսկվա՝ թուրքերի դեմ դաշինքի շուրջ խոսելու: Մեկրածոր խոսեցին լեհերը, որ չի կարելի թույլ տալ պիղծ թուրքերին տանջել քրիստոնյաներին, և լավ չէ, որ ուղղափառ ռուսները հաշտ են թուրքական սուլթանի և Ղրիմի խանի հետ: Մոսկվայում իսկույն հասկացան, որ լեհերը նեղության մեջ են ու իսկական ժամանակն է առևտուր անել նրանց հետ: Այդպես էլ կար. ավստրիական կայսեր հետ դաշնակից Լեհաստանը հազիվ էր պաշտպանվում թուրքերից, հյուսիսից շվեդներն էին սպառնում նրան: Բոլորը դեռ հիշում էին Երեսնամյա պատերազմը, երբ սասանվեց Ավստրիական կայսրությունը, ամայացավ Գերմանիան և Լեհաստանը համարյա թե շվեդական վոտչինա դարձավ: Ծովերի տիրակալ դարձան ֆրանսիացիները, հոլանդացիները, թուրքերը, իսկ ամբողջ Բալթիականի ափերով՝ շվեդները: Պարզ էր, թե հիմա ինչի էին հետամուտ լեհերը. ռուսական զորքերով ուկրաինական տափաստանները պաշտպանել թուրքական սուլթանից:

Ցարական մեծ կնիքների և պետական դեսպանատան գործերի պահպանն ու նովգորոդյան փոխարքա, իշխան Վասիլի Վասիլևիչ Գոլիցինը լեհերից պահանջեց վերադարձնել Կիևը: «Մեզ վերադարձրեք ցարական վաղնջական վոտչինա Կիևն իր փոքր քաղաքներով, այդ դեպքում հաջորդ տարի զորք կուղարկենք Ղրիմ՝ խանի դեմ պատերազմելու»: Երեքուկես ամիս վիճում էին լեհերը. «Ավելի լավ է ամեն ինչ կորցնենք, քան Կիևը տանք»: Ռուսները չէին շտապում, իրենցն էին պնդում, լեհերի համար կարդացին բոլոր տարեգրությունները՝ Ռուսիայի մկրտությունից սկսած: Եվ դիմացան, վեճը շահեցին:

Թուրքերի կողմից Բեսարաբիայում ջախջախված Ցան Սոբեսկին, լաց լինելով, հարերժ խաղաղություն ստորագրեց Մոսկվայի

հետ ու վերադարձրեց Կիևը՝ փոքր քաղաքներով: Հաջողությունը մեծ էր, բայց ուրիշ ելք էլ չկար՝ ստիպված էին զորք հավաքել, գնալ խանի դեմ պատերազմելու:

5

Օխոտնի դյադի դիմաց գոլիցինյան տունն էր՝ մաքուր և արժանապատիվ: Տանիքից գետին շոգ փայլ էին արձակում պղնձակուռ պատերը: Մուտքի մոտ պարսկական փոքրիկ գորգերի վրա երկու թիկնեղ հրացանակիր էին կանգնած՝ շվեյցարացիներ էին, երկաթյա սաղավարտներով ու եզան կաշվից գլխարներով: Մյուս երկուսը պահպանում էին ոսկեզօծ միջանցիկ դարպասը: Հակառակ կողմից Օխոտնի դյադով թափառող հասարակ ժողովուրդը նայում էր շվեյցարացիների կուշտուկուռ դեմքերին, գունավոր սալիկներով պատված ընդարձակ բակին, ամբողջովին ապակեպատ, շքեղ, չորս դեղին ձի լծած կառքին, պահպանի ու արքայադուստր-կառավարչուհու փիրեկանի պղնձափայլ տանը:

Ինքը՝ Վասիլի Վասիլևիչը, անտանելի այդ տոթին նստած էր բաց պատուհանից փչող հովի տակ և լատիներեն գրուցում էր Վարշավայից ժամանած օտարերկրացի դը Նեվիլլի հետ: Հյուրը կեղծամով էր, ֆրանսիական զգեստով, որ նոր-նոր էին սկսել կրել Լյուդովիկոս Տասնչորսերորդի արքունիքում: Վասիլի Վասիլևիչն առանց կեղծամի էր, բայց նույնպես ֆրանսիական զգեստով. գուլպաներ ու կարմիր ոտնամանաներ, թավշյա կարճ, ժապավեններով շալվար, փոքի վրա և կողքերից, թավշյա բաճկոնի տակից ժանեկազարդ բարակ սպիտակեղենն էր դուրս եկել: Մորուքը սափրել էր, բայց քելները թողել: Ֆրանսիական սեղանիկի վրա, դիմացը դրված էին թղթագալարներ ու տետրեր, լատինական մագաղաթյա գրքեր, քարտեզներ ու ճարտարապետական գծագրեր: Ոսկեհախշ կաշվով ծածկված պատերից կախ էին արած Գոլիցին իշխանների պարսունաները, կամ նոր ձևով ասած՝ դիմանկարները, և վենետիկյան շքեղ շրջանակի մեջ՝ Սոֆյայի նկարը ճանկերի մեջ բռնած երկգլուխ արծվի պատկերը: Ֆրանսիական վանդականախշ ու իտալական դիպակե բազմոցներ, գունեղ գորգեր, մի քանի պատի ժամացույցներ, պարսկական զենքեր, պղնձյա գլոբուս, ինգլիզի ձեռքի գործ մի ջերմաչափ, գրքերի կազմեր, և ոսկով, արծաթով ու բաց կապույտով պատկերված երկնային ոլորտը կամարակապ առաստաղի վրա իր բազմապատիկ արտացոլումն էր գտնում հայելիների մեջ, միջնապատերի վրա և դռների վերևներում:

Հյուրը գոհունակ հետաքրքրությամբ նայում էր սույն կիսասիսական, կիսաեվրոպական կահավորությանը: Սագի փետուրը խաղացնելով, ոտքը ոտքին գցած ու մեծահոգաբար ժպտալով, Վասիլի Վասիլևիչը խոսում էր (սոսկ երբեմն կմկմալով ու լատինական բառերը փոքր-ինչ մոսկովյան եղանակով արտասանելով).

— Բացատրեմ ձեզ, պարոն դը Նեվիլլ: Մեր պետության հիմքն

են կազմում երկու դաս. կերակրողներն ու ծառայության մեջ գտնվողները, իմա՝ գյուղացիությունը և ազնվականությունը: Սույն երկու դասերը մեծ նվազության մեջ են կենում, ուստի պետությունը որևէ օգուտ չունի նրանցից, նույնիսկ քայքայում են բերում միայն: Մեծ բարեբախտություն կլիներ կալվածատերերին պոկել գյուղացիներից, քանզի կալվածատերը ընդկայումս, լոկ հանուն շահի, անխնա խժռում է ճորտ մուժիկին, ու դրանից թե գյուղացին է նվազ, թե պետությունն է նվազ...

— Բարձրիմաստ ու խելացի խոսքեր են, պարոն կանցլեր,— ասաց դը Նեվիլը:— Բայց ինչպե՞ս եք երազում կատարել այն դժվարին խնդիրը:

Վասիլի Վասիլևիչը, խանդավառ ժպիտով, սեղանի վրայից վերցրեց սեկտ կազմով տետրը, գրված իր իսկ ձեռքով. «Քաղաքացիական ապրուստի կամ բոլոր գործերը բարվոքելու մասին, որք հարկ են հանալն ժողովրդին...»:

— Մեծ և դժվարագույն գործ է, եթե հարստանա ժողովուրդն ամբողջությամբ,— ասաց նա ու սկսեց ընթերցել տետրից. «Բազում միլիոնավոր դեսյատինններ ամայուտներ են: Այդ հողերը հարկ է որ վարեն ու ցանեն: Անասունը շատացնեն: Ռուսական վատացեղ ոչխարը վերացնել ու փոխարենը պարտադրել ձեռք բերել ինգլիզի նրբաբուրդ ոչխար: Մարդկանց տրամադրել բոլոր տեսակի արհեստներին ու հանքային գործին, դրանից արդար օգուտ հասցնելով նրանց: Ուժից վեր բազում հողատարածները, կոները, հարկերը և պարհակները ոչնչացնել ու բոլորի վրա միասնական շնչագլուխ, չափավոր հարկ դնել: Սույնը հնարավոր է սոսկ այն պարագային, երբ ամբողջ հողը կալվածատերերից վերցվի, ու դրա վրա ազատ գյուղացիներ դրվեն: Նախկինում եղած ճորտական բոլոր պարտագրերը վերացնել, որպեսզի ժողովուրդն այլևս ոչ մեկի առաջ պարտագիր չունենա, թերևս՝ սակավ թվով տների ծառաները...»:

— Պարոն կանցլեր,— բացականչեց դը Նեվիլը,— պատմությունը չգիտե օրինակներ, որ կառավարողն այսչափ մեծ ու վճռական ծրագրումներ ունենա: (Վասիլի Վասիլևիչն իսկույն իջեցրեց աչքերը, և նրա փայլատ այտերը շառագունեցին:) Բայց մի՞թե ազնվականությունը կհամաձայնի հողը գյուղացիներին հանձնել անտրտունջ, և ազատ արձակել ճորտերին:

— Հողի փոխարեն կալվածատերերը ոռճիկ կստանան: Զորքը կճավաքվի միայն ազնվականներից: Ճորտերից հարկատու նորակոչիկներին ու կոռապարտ մարդկանց մենք ազատում ենք: Գյուղացին թող իր գործով զբաղվի: Իսկ ազնվականները ծառայության համար ոչ թե հողաբաշխում կստանան և ճորտեր, այլ բազմապատկված ոռճիկ, ինչը ցարական գանձատունը կառնի ընդհանուր հողատարածքից: Առավել քան կրկնապատիկ պիտի բարձրանա պետության եկամուտը...

— Թվում է, թե հին աշխարհի փիլիսոփայի եմ ունկնդրում,— 22-ջաց դը Նեվիլը:

— Ազնվականների զավակներին, դեռահասներին, որպեսզի ռազմական գործ ուսանեն, հարկ է ուղարկել Լեհաստան, Ֆրանսիա և Օվեդիա: Հարկ է ակադեմիաներ ու գիտությունների օջախներ բաց անել: Մենք մեզ կգեղեցկացնենք արվեստներով: Աշխատասեր գյուղացիներով կբնակեցնենք անապատները մեր: Վայրենի ժողովրդին ուսյալ կդարձնենք, կեղտոտ շալաշները քարե պալատներ կդարձնենք: Վախկոտները քաջարի կդառնան: Մենք կհարստացնենք աղքատներին: (Վասիլի Վասիլևիչը խեթ նայեց պատուհանին, որտեղից երևում էր փողոցով շարժվող, հետը բմբուլ ու ծղոտ բերող փոշե սյունը:) Փողոցները կսալարկենք... Մոսկվան քարից ու աղյուսից կկառուցենք... Իմաստությունը կճառագի թշվառ երկրի վրա:

Սագի փետուրը ձեռքից չդնելով, նա ելավ բազկաթոռից ու քայլում էր գորգերի վրա, և դեռ շատ անսովոր մտքեր հայտնեց իր հյուրին.

— Անգլիացի ժողովուրդն ինքը կործանեց անիրավ կարգերը, բայց չարացածության մեջ մեծ հանցանքների հասավ՝ օծյալի գլխին դիպավ... Սույն սարսափներից երկյուղելով, մենք բարիք ենք կամենում հավասարապես բոլոր դասերին: Եթե ազնվականությունը մեր ձեռնարկումներին դեմ կանգնի, ուժով կկոտրենք նրանց վաղեմի համառությունը...

Զրույցն ընդհատվեց: Լիվրե հագած սպասավորը, վախեցած աչքերը կլորացրած, ոտնաթաթերի վրա մոտեցավ ու ինչ-որ բան 22-ջաց իշխանի ականջին: Վասիլի Վասիլևիչի դեմքը լարվեց ու լրջացավ: Նկատելով, դը Նեվիլը վերցրեց գլխարկն ու խոնարհվելով հրաժեշտ տվեց, ետ-ետ գնալով դեպի դուռը: Նրան հետևելով, նույնպես խոնարհվելով, մատանիներով ու ժանեկազարդ ձեռքի կլոր շարժումներով, քայլում էր Վասիլի Վասիլևիչը.

— Անչափ դառնացած եմ ու սաստիկ հուզված, պարոն դը Նեվիլ, որ այսքան շուտ եք բարեհաճում թողնել ինձ:

Մենակ մնալով, իրեն գնեց հայելու մեջ և կրունկները փութով կտկտացնելով, ճնշարան մտավ: Այնտեղ, երկտեղանի մահճակալի վրա, վերևից ջայլամի փետուրներով զարդարված կարմրակերպաս առագաստի տակ, քունքը հենած պարույրաձև սյանը, նստած էր կառավարչուհի Սոֆյան: Ինչպես միշտ, եկել էր գաղտնի, փակ կառքով, ետնամուտքից:

6

— Սոնյուշկա, բարև, աչքիս լույս...

Առանց պատասխանելու, նա բարձրացրեց խոժոռ դեմքը, իր կանաչ, տղամարդու աչքերով ուշադիր նայեց Վասիլի Վասիլևիչին: Վերջինս տարակուսած կանգ առավ, մահճակալին չհապաղ:

— Որևէ դժբախտությո՞ւն է պատահել, տիրուհի...

Այս ձմռանը Սոֆյան գաղտնի վիժել էր: Նրա գիրացած, բերանի

եղբերից խիստ մկանուտ դեմքը նախկին շառագույնը չուներ՝ հոգսերը, մտածմունքը, տագնապները խորշոմին արտահայտություն էին հաղորդել դեմքին: Ճոխ էր հագնվում, դեռևս օրիորդավարի, ասկայն վարմունքը կանացի էր, մարմնական, վստահ: Նրան տանջում էր Վասիլի Վասիլևիչի նկատմամբ իր սերը թաքցնելու անհրաժեշտությունը: Չնայած այդ մասին գիտեին բոլորը մինչև վերջին աման լվացողը, և վերջին ժամանակներս «սիրեկան» մեղալի ու ամոթալեր անվան փոխարեն օտարերկրյա «գալանտ» պատշաճ բառն էր գտնվել, այդուհանդերձ, անտանելի ու գեշ էր, ապօրինարար, անպակաս ու անմատնիք՝ սիրեցյալին տալ իր արդեն ոչ ջանել մարմինը: Ահա, հենց այս գարնանը կանացի ամբողջ ուժով ու անուշ տանջանքով կծներ... Մարդիկ ստիպեցին վիժել պտուղը... Վասիլի Վասիլևիչի հանդեպ նրա սերն էլ էր անհանգիստ, տարիքին չբոնող. այդպես լավ է սիրել տասնչորսամյա աղջկան՝ մշտական տագնապով, թաքնվելով, անվերջ մտածելով, գիշերներն անկողնում վատվելով: Մեկ-մեկ էլ ատելություն էր զգում դատնում կոկորդին՝ չէ որ նրանից էր ամբողջ տանջանքը, նրանից էր վիժած պտուղը... Պետք էլ չէր՝ սրբվեց ու կողմ քաշվեց...

Նստած մահճակալին՝ լայնկոնք, գետնին չհասնող ոտքերով, ծանր զգեստի մեջ տաք քրտինքով պատած, Սոֆյան անբարյացակամորեն նայեց Վասիլի Վասիլևիչին:

— Ծիծաղելի բաներ ես հագել-— ասաց նա,— ի՞նչ է, ֆրանսիակա՞ն է հագին: Կես շաղվարն էլ չլիներ, մաքուր կնկա շոր... Կծիծաղեն մարդիկ... (Շրջվեց, տնքոցը զսպելով:) Այո, վատ է, վատ, պատվելիս... Ուրախանալու քիչ բան ունենք...

Վերջին ժամանակներս Սոֆյան ավելի հանախ էր նրա մոտ գալիս մռայլված, անանխարտ թողած մտքերով: Վասիլի Վասիլևիչը գիտեր, որ կառավարչուհուն մոտ երկու ծաղրածուհի, օրինիրուն թափառելով պալատի անկյուններում, ականջ են դնում բոյարների խոսակցությանը, և հենց Սոֆյան գնում է քներու, ամեն ինչ հաղորդում են նրան:

— Դատարկ բան է, տիրուհի,— ասաց Վասիլի Վասիլևիչը,— ինչ ասես դուրս կտան մարդիկ, մի մտածիր, հոգ մի արա...

— Հոգ չանե՞մ:— Նա եղունգներով կտկտացրեց մահճակալի սյունը, առամները չարությամբ բացվեցին մի քիչ:— Իսկ գիտե՞ս Մոսկվայում ինչ են խոսում: Իբր, թագավորությունը կառավարելու համար մենք թույլ ենք... Մեր արած մեծ գործերը չեն երևում...

Վասիլի Վասիլևիչը մատով շփեց բեխերը, ուսը թոթվեց: Սոֆյան խեթեց նրան՝ օ՜հ, գեղեցիկ էր. տանջանք էր, տանջանք... Այո՝ թույլ է. երակներում կնոջ արյուն է... Ժանյակներով է պճնվել...

— Այ, այդպես, պատվելիս... Գիրք կարդալու մեջ վարժ ես, գրելու մեջ էլ. պայծառ մտքեր ունես, ինքս գիտեմ... Իսկ երեկ, երեկոյան ժամերգությունից հետո հորեղբայր Իվան Միխայլովիչը քո մասին ասաց. «Վասիլի Վասիլևիչն իր տետրից ինձ համար կարդաց ճորտ գյուղացիների մասին՝ զորեսցա. հո բան չի՞ պատահել մեր իշխանի գլխին»: Ու բոյարները ծիծաղեցին...

Օրիորդի պես բռնկվեց Վասիլի Վասիլևիչը, եռկար ատելանունքների տակից խոցեց երկնագույն աչքերով.

— Նրանց խելքի համար չի գրված:

— Եղածը դա է՝ ավելի խելոք ծառաներ մեզ չեն տվել... Ինքս էլ եմ դիմանում. ես էլ կուզեի պար գալ լեհական թագուհու պես կամ բազեով որսի գնալ, երկարափեշ շորով ձիանը կողքանց նստած: Բայց ձայն չեմ հանում... Ոչինչ չեմ կարող, կասեն՝ հերետիկոս է: Պատրիարքն առանց դրա էլ ձեռքը բահի պես է առաջ պարզում:

— Հրեշների մեջ ենք ապրում,— շշնջաց Վասիլի Վասիլևիչը:

— Գիտե՞ս, քեզ ինչ կասեմ, պատվելիս... Հագիցդ հանիր էդ ժանյակները, գուլպաները, ռազմերթի այծենականդ հագիր, թուրը ձեռքդ առ... Մեծ գործեր ցույց տուր...

— Ի՞նչ... Մի՞թե նորից խոսակցություն է եղել խանի մասին:

— Հիմա բոլորի մտքին մի բան կա՝ գրավել Ղրիմը... Դրանից խուսափել չի լինի, հոգիս: Հաղթանակած ետ գաս, ինչ կուզես արա այն ժամանակ: Ուժեղներից ուժեղը կլինես այն ժամանակ:

— Հասկացիր, Սոֆյա Ալեքսեևնա, մեզ չի կարելի պատերազմել... Փողն ուրիշ բանի համար է պետք...

— Ուրիշ բանը Ղրիմից հետո կլինի,— հաստատ ասաց Սոֆյան:— Ես արդեն պատրաստել եմ պաշտոնագիրը՝ դու ես մեծ վոյեվոդան: Գիշեր ու ցերեկ աղոթքներիս մեջ քո անունն եմ տալիս, ծնկներս եմ մաշելու, բոլոր մենաստանները ոտքով եմ շրջելու, հմտեր ու տիրական... Հաղթանակած վերադարձար՝ ո՞վ մի խոսք կասի այն ժամանակ: Էլ չենք թաքնվի ամոթից... Հավատում եմ, հավատում, աստված մեզ կօգնի խանի դեմ:— Սոֆյան իջավ անկողնուց ու վարից վեր նայում էր իշխանի թեքած աչքերին:— Վասյա, վախենում էի քեզ ասել... Գիտե՞ս, էլ ինչ են փսփսում: «Պրեոբրաժենսկում, ասում են, ուժեղ ցար է հասակ առնում... Իսկ արքայադուստրն, ասում են, իզուր տեղը կնգուտի թիկնոց է մաշում...»: Մեղք արի իմ մտածմունքներին... Վատ բաներ եմ մտածում:— Սոֆյան տաք ափերով բռնեց իշխանի դող բռնած ձեռքը:— Տաքնինգ տարեկան է արդեն: Մի վերստի վրա բոյն երևում է: Հրաման է ուղարկել՝ բոլոր ձիապաններին ու բազեպաններին հավաքագրել ռազմախաղերի համար: Բայց նրանց թրերն ու մուշկետներն ոսկր երկաթից են... Վասյա, ինձ փրկիր մեղքից... Մի գլուխ ականջներիս փսփսում են Դիմիտրիի մասին, Ուգլիչի մասին... Բայց չէ որ դա մեղք բան է: (Վասիլի Վասիլևիչը ձեռքը քաշեց նրա ափերի միջից: Սոֆյան դանդաղ, խղճալի ժպտաց:) Ես էլ եմ ասում, որ մեղք է նման բաների մասին մտածելը... Դա հնում է եղել... Ու դու երկու հարյուր հազարանոց զորք կհավաքես, կգնաս դեպի Ղրիմ: Ամբողջ Եվրոպան կիմանա քո քաջագործությունների մասին: Այն ժամանակ նրանից վախենալու պետք չի լինի, թող խաղ անի...

— Մեզ չի կարելի պատերազմել,— դառնությամբ բացականչեց Վասիլի Վասիլևիչը:— Կարգին զորք չունենք, փող չկա... Մեծ ծրագրումնե՞ր... Է՛հ, բոլորը փուչ տեղը: Ո՞վ է գնահատողը, ո՞վ է հաակացողը: Տեր աստված, գոնե երեք, գոնե երկու տարի առանց պատերազմ...

Նա անհուսորեն թափ տվեց ժանյակե թեզանիքը... Խոսել, համոզել, հակառակվել՝ միևնույն է, անօգուտ էր:

7

Նատալյա Կիրիլովնան հանդիմանում էր Նիկիտա Զոտովին. «Դե, վազ տուր նրա ետևից, գտիր նրան՝ լույսը չբացված, վազեց գնաց, ոչ խաչ արեց երեսին, ոչ մի կտոր բան կերավ...»:

Պյոտրին գտնելն այնքան էլ հեշտ չէր, եթե անտառի մի ծայրում կրակոցներ լսվեին, թմբկազարկ, ուրեմն, ցարն այնտեղ էր՝ կոիվ-կռիվ էր խաղում: Քանի անգամ գերի վերցրին Նիկիտային, կապեցին ծառից, որ գլուխ չտանի խնդիրքներով՝ կեսօրվա ժամերգությանը գնալ, կամ ունկնդրելու Մոսկվայից եկած ոմն բոյարինի: Որ Նիկիտան ծառի մոտ չձանձրանար, Պյոտրը հրամայում էր մի շտոֆ օղի դնել առաջը: Այսպես, կամաց-կամաց Զոտովն ընտելացավ կոնծելուն, և մեկ-մեկ ինքն էր խնդրում գերեվարվել ու կապվել կեչուց: Թնդոթափ ետ դառնալով Նատալյա Կիրիլովնայի մոտ, նա ձեռքերն էր տարածում.

— Ուժ չկա, մայր թագուհի, մեր արծիվը տուն չի գալիս...

Խաղերի համար Պյոտրի իսելքն իրենը չէր՝ կարող էր անքուն, առանց ուտելու օրերով խաղ անել ինչ ասես, միայն թե ալմուկ լիներ, ուրախ ու հետաքրքիր. կրակելին թնդանոթները, զարկելին թմբուկները: Ծարական ձիապանների, բազեպանների, նույնիսկ ազնվական ընտանիքների պատանիներից կազմված ռազմախաղի գինվորները հիմա երեք հարյուր հոգի կլինեին: Նրանց հետ արշավների էր ելնում Մոսկվայի շրջակա գյուղերն ու մենաստանները: Որոշ վանականների մանու չափ վախեցնում էին. միջօրեի տապին, երբ տերև անգամ չէր շարժվում կեչու վրա, լոկ մեղուներն էին ծանր բզզում լորենիների տակ ու նինջն էր հաղթում, հանկարծ դիվական աղաղակներով անտառակից դուրս էին թափվում կանաչ կաֆտաններով, արտաքինից ոչ ռուսի նման մարդիկ, և բո՜ւմ, տրաք-տրա՜ք, փայտյա արկերով կրակում մենաստանի խաղաղ պատերին: Վանականների սարսափը բազմապատկվում էր, երբ ի դեմս լոլոդ, ցեխի ու վառոդի ծխի մեջ կորած, անդադրում պատանու, ճանաչում էին իրեն՝ ցարին:

Ռազմախաղերի զորքում ծառայելը ծանր էր՝ ոչ կարգին քուն ունեին, ոչ ուտելիք: Անձրև լիներ, թե անտառելի շոգ, ցարի գլուխը եթե մտներ, պիտի գնային, սատանան գիտե ուր և ինչու, խաղաղ մարդկանց վախեցնելու: Մեկ-մեկ նրանց արթնացնում էին գիշերով. «Հրամայված է շրջանցել հակառակորդին: Լողալով անցնել գետակը...»: Մի քանիսը խեղդվեցին ջրերի մեջ, մթի պատճառով:

Ծուլության կամ բացակայության համար ծեծում էին բրերով. մեկնումեկը եթե ճամփեքով աննպատակ քայլելուց հոգնած տուն փախչել ուզենար, կհայտնվեր բացակա վիճակում: Վերջերս զորքի գլուխ վոյեվոդա էին կարգել, կամ նոր ձևով ասած՝ գեներալ, Ավտոմոն Գոլովինին: Բավական հիմար մարդ էր, բայց լավ գիտեր գինվորական վարժությունները և խիստ կարգուկանոն սահմանեց: Նրա ձեռքի տակ, խառնիխուռն զվարճանքի փոխարեն, Պյոտրը սկսեց լրջորեն գինվորական ուսուցում անցնել Պրեոբրաժենսկի անվանված առաջին գումարտակում:

Ֆրանց Լեֆորտը Պյոտրի մոտ պաշտոն չուներ, քանի որ զբաղված էր Կրեմլում իր ծառայությամբ, բայց հաճախ ձիով գալիս էր զորքի մոտ ու խորհուրդներ տալիս, թե ինչն ինչպես անեն: Նրա միջոցով ծառայության վերցրեցին օտարերկրացի կապիտան Ֆյոդոր Զոմմերին՝ հրաձգային և նռնակային մարտի համար, և նույնպես գեներալ դարձրեցին: Թնդանոթային ատյանից տանվեց թընդանոթ բերեցին, սկսեցին գինվորներին սովորեցնել թուջե արկերով կրակել՝ խիստ էր ուսուցումը: Ֆյոդոր Զոմմերը զուր տեղը ոռնիկ ստանալ չէր ուզում: Արդեն խաղ չէր գնում: Հանդերում աճագին անասուն ջարդվեց ու մարդիկ խեղանդամվեցին:

8

Կուկույում օտարերկրացիները հաճախ էին խոսում երիտասարդ Պյոտր ցարի մասին: Երեկոները հավաքվելով խուզված ծառերով եզերված ավազածածկ հրապարակում, ձեռքի ափերով հարվածում էին սեղանների.

— Է՛յ, Մոնս, մի գավաթ գարեջուր:

Գործած թասակը գլխին, կանաչ ժիլետով Մոնսը դուրս էր լողում առաստերիայի լուսավորված դռնից, յուրաքանչյուր ձեռքում կավե հնգական գավաթ: Փրփուրի գլխարկ էր կանգնած լինում գավաթների վրա: Երեկոն՝ մեղմ ու հանելի: Աստղերը՝ ափոված ռուսական երկնքում, իհարկե, ոչ այնքան վառ ու շողշողուն, ինչպես Թյուրինգիայում, Բադենում կամ Վյուրտեմբերգում, սակայն ռուսական աստղերի տակ էլ կարելի էր ոչ վատ ապրել:

— Մոնս, պատմիր տեսնենք, թե Պյոտր ցարն ինչպես էր քեզ հյուր եկել:

Մոնսը նստում էր սեղանի մոտ, ուրիշի գավաթից մի ումպ խմում և աչքով անելով, սկսում պատմել.

— Շատ հետաքրքրասեր մարդ է Պյոտր ցարը: Իմացել էր իմ հրաշալի երաժշտական արկղիկի մասին, որը ճաշասենյակում է դրված: Կնոջս հայրը Նյուրնբերգում էր գնել դա...

— Օ՜, այո, բոլորս էլ գիտենք քո հրաշալի արկղիկը,— հաստա-

տում էին ունկնդիրները, միմյանց նայելով ու կախ գցած ծխամորճները թափահարելով:

— Մի քիչ վախեցա, երբ մի անգամ մեր հաշապենյակը մտան Լեֆորտն ու Պյոտր ցարը... նման դեպքերում ոտանները ծունկ են չոքում: Ես չուզեցա: Բայց ցարը տեղնուտեղը ինձ հարցրեց. «Ո՞ւր է քո արկղիկը»: Պատասխանեցի. «Ահա, սա է, ձերդ օծյալ մեծություն»: Այդ ժամանակ ցարն ասաց. «Յոհաննն, ինձ ձերդ օծյալ մեծություն մի ասա, տանը դրանից ձանձրացել եմ, ինձ այնպես կոչիր, որ կարծես բարեկամդ եմ»: Ու Լեֆորտն ասաց. «Օ՜, այո, Սոնա, մենք բոլորս նրան հետ Պիտեր ենք ասելու»: Ու երեքով երկար ծիծաղեցինք այդ կատակի վրա: Դրանից հետո կանչեցի աղջիկս՝ Անխենին, ու ասացի, որ արկղիկը գործի օգի: Սովորաբար տարին մեկ ենք լարում թաթախման երեկոյին, որովհետև շատ արժեքավոր արկղիկ է: Անխենս ինձ նայեց, ու ես ասացի. «Ոչինչ, լարիր»: Լարեց, ու կավալերները դամաների հետ սկսեցին պարել, թռչունները երգեցին: Պիտերը զարմացավ ու ասաց. «Ուզում եմ տեսնել, թե ինչպես է սարքված»: Մտածեցի՝ «Կորավ իմ երաժշտական արկղիկը»: Բայց Անխենս շատ խելացի աղջիկ է: Գլուխը գեղեցիկ խոնարհեց ու ասաց Պյոտրին, իսկ Լեֆորտը թարգմանեց: Անխենս ասաց. «Ձերդ մեծություն, ես նույնպես գիտեմ երգել ու պարել, բայց, ավաղ, եթե դուք կամենաք տեսնել, թե ինչ կա իմ ներսում, ինչից եմ երգում ու պարում, իմ խեղճ սիրտը դրանից հետո անպայման կկանգնի...»: Թարգմանելով, Լեֆորտը ծիծաղեց, ես էլ բարձրաձայն ծիծաղեցի, Անխենն էլ ծիծաղեց, արծաթե զանգակի պես: Բայց Պիտերը չծիծաղեց. կարմրեց ցուլի արյան պես, ու Անխենին էր նայում, կարծես փոքրիկ թռչնակ լիներ նա: Ու ես մտածեցի. «Օ՜, այս պատանու ներսում հազար դև կա նստած»: Անխենն էլ կարմրեց և արցունքը երկնագույն աչքերից կախ, դուրս վազեց...

Մոնսը ֆափաղրեց ու մի .կում էլ արեց ուրիշի գավաթից: Նա կարողանում էր զարմանալի և հուզիչ պատմել: Գիշերային դուրեկան զովը շարժում էր գրուցակիցների գործած թասակների փինջիկները: Լուսավորված դռան մեջ հայտնվեց Անխենը, անմեղ աչքերը հառեց աստղերին, երջանիկ մի հոգոց հանեց ու անհետացավ: Ծխամորճները փստացնելով, հանախորդներն ասացին, որ աստված լավ աղջիկ է տվել Յոհաննն Մոնսին: Օ՜, այդպիսի աղջիկը հարբստություն կբերի տուն: Մորուքավոր, կարմրատակած, հոյանդացի ուժգանա դարբին Գերրիտ Կիտը՝ ծնված Զաանդամ քաղաքում, ասաց.

— Ես տեսնում եմ, որ եթե խելքով գործ բռնվի, երիտասարդ ցարից շատ օգուտ կարելի է ստանալ:

Մեր ժամագործ Լյուդվիգ Պֆեֆերը նրան պատասխանեց.

— Է, չէ՜, դրա վրա հույս դնել չի լինի: Պյոտր ցարն ուժ չունի... Ստատարաչուին Սոֆյան երբեք չի թողնի նրան թագավորել: Դաժան ու վճռական կին է... Հիմա երկու հարյուր հազարանոց զորք է հավաքում Ղրիմի խանին հաղթելու համար: Զորքը Ղրիմից որ ետ դարձավ, տասը պֆենինգ էլ չեմ դնի հօգուտ ցարի...

— Իզուր եք այդպես դատում, Լյուդվիգ Պֆեֆեր,— պատասխանեց Մոնսը,— քանի անգամ է ինձ պատմել գեներալ Թեոդոր ֆոն Զոմմերը, որը վերջերս պարզապես Զոմմեր էր... (Մոնսը քան-քան ծիծաղեց՝ բերանը բաց, բոլորը ծիծաղեցին կատակի վրա:) Քանի անգամ է ասել. «Համբերեք, մեկ կամ երկու տարի ժամանակ տվեք մեզ, Պյոտր ցարը երկու այնպիսի գումարտակ կունենա, որ ֆրանսիական թագավորը, կամ ինքը՝ արքայազն Մորիս Սաքսոնացին անհարմար չեն զգա գլխավորել այդ զորքը...»: Ահա ինչ ասաց Զոմմերը...

— Օ՜, դա լավ է,— խոսեցին զրուցակիցներն ու նշանակալից հայացքներ փոխանակեցին...

Նման զրույցներ էին լինում երեկոները Յոհաննն Մոնսի առաստերիայի դռան առաջ, ավլած հրապարակի վրա:

9

Պալատական ատյանի կամարակապ սրահներում շոգ էր, հեղձուկ: Երկարուկ սեղանների մոտ գլուխները ծռած, մագերն աչքերին թափած գրագիրները ճոճոացնում էին փետուրները: Թանաքի մեջ ճանճեր կային: Ծրթունքներին ու թաց քթերին ճանճեր էին կպչում: Ատենավորը կուշտ կերել, թախտին նստած էր ննջակոխ: Գրագիր Իվան Վասկովը թղթից մաքրագրում էր գրքի մեջ.

«...հրամանավ թագավորաց մեծից կարված է զգեստ գերմանական և տարված ապարանքը համայն Մեծ և Փոքր և Սպիտակ Ռուսիո ինքնակալ մեծն թագավոր ցար և մեծն իշխան Պյոտր Ալեքսանդրի համար, և գեներալ Ֆրանց Լեֆորտից ապրանք է վերցված դրա համար. ոսկեկարի երկու կոճ, վճարված է մեկ ռուբլի, 13 ալտին, 2 գրոշ, նաև ինն դյուժին կոճակ, դյուժինը վեց ալտինով, նաև տակի կաֆտանի համար 6 դյուժին կոճակ, դյուժինը 2 ալտին, 4 գրոշ, և քաթան 10 ալտինի, նաև դնովի մագեր երեք ռուբլու...»:

Փչելով ճանճի վրա, Վասկովը բարձրացրեց շշմած աչքերը:

— Լսի, Պետրուխա, «դնովի մագերը» ո՞նց գրեմ՝ մեծատառով, թե՝ փոքրատառով:

Դիմացը նստած փոքրավորը, մտածելով, պատասխանեց.

— Փոքրատառով գրիր:

— Կրտսեր թագավորն իր մազը չունի՞, ինչ է:

— Տես հա, էդ խոսքերիդ համար...

Գլուխը ձախ թեքած, որ ավելի վարժ գրի, Վասկովը գողունի խեղդվեց ծիծաղից՝ նրան շատ զարմանալի էր թվում, որ թագավորի համար Գերմանական արվարձանում գերմանուհիների մազերն են գնում, երեք ռուբլի տալիս այդ անպետք բաներին:

— Պետրուխա, էդ մազերը որտեղի՞ց է կախ տալու:

— Իր թագավորական կամքն է՝ որտեղից ուզեցավ, էնտեղից էլ կախ կոտա։ Թե էլի հարցեր տաս, ատենավորին կբողոքեմ...

Մանները ատենավորի հոգին էլ հանեցին։ Մետաքսե թաշկինակը հանելով, թափ տվեց չորս կողմը, սրբեց երեսն ու այծի մորուքը։

— Է-է՛յ,— ծուլորեն բղավեց նա։— Բա դուք գրագիր ե՞ք, բա դուք փոքրավոր ե՞ք։ Թողեմ՝ պետության փողերը խժռեք ձրի տեղը։ Վախ չի մնացել մեջներդ, աստծուն եք մոռացել, ծաղրածու անտերներ... Ամբողջ ատյանը բրածեռ անել կտամ, կիմանաք, թե ինչ բան է խնայելով աշխատելը... Ոչ թանաք է ձեզ հերիքում, ոչ թուղթ... Երկնքի կրակը թափվի ձեր գլխին, սատանի սերունդ...

Թաշկինակը թույլ-թույլ թափահարելով, ատենավորը նորից նըստեց։ Տխուր ժամանակներ էին՝ ոչ իսդրատուներ կային, ոչ նվերներ։ Մոսկվան դատարկվել էր. ստրելեցները, բոյարների զավակները, կալվածատերերը՝ բոլորն արշավի էին ելել, դեպի Ղրիմ։ Ճանճ ու փոշի էր մնացել, մեկ էլ պետության մանր-մունր գործերը։

— Պետրուխա, կվաս լիներ, խմեինք,— ասաց Վասկովը և ետ նայելով ատենավորին, ձգվեց, ջարդջրդվեց, այնպես, որ փտած կաֆտանը ճղվեց կոնատակից։— Իրիկունը գնալու եմ մի այրու տուն, հո կվաս չեմ խմելու։— Գլուխը թափ տալով, նորից անցավ գրելուն.

«...հրամանավ հանայն Մ. և Փ. և Ս. Ռ. ինքնակալի, Կոլոմենսկոյե գյուղ է հրամայված ուղարկել հանայն Մ. և Փ. և Ս. Ռ. ի. մ. թ. ց. և մ. ի. Պյոտր Ալեքսեևիչի մոտ արքունի ձիապանները Ցակիմ Վորոնինին, Սերգեյ Բուխվոստովին, Դանիլա Կարտինին, Իվան Նագիբինին, Իվան Իեվլևին, Սերգեյ Զերտկովին ու Վասիլի Բուխվոստովին։ Վերոհիշյալ արքունի ձիապանները հրամայված է վերցնել ու դարձնել ռազմախաղերի թնդանոթաձիգներ և ոռնիկ նշանակել մարդուն հնգական ռուբլի, հացահատիկ հնգական չետվերտ վարսակ, գարի...»։

— Պետրուխա, մարդկանց բախտը բերում է հա՞...

— Էլի խոսո՞ւմ եք, է-է՛յ, կապը կտրած շներ,— կիսանիրհի մեջ սպառնաց ատենավորը։

10

Գերմանական զգեստը և կեղծամը ստորագրությամբ ընդունեց սեղանապետ Վասիլի Վոլկովը և հոգածությամբ տարավ թագավորի ննջասենյակը։ Դեռ նոր էր լուսանում, իսկ Պյոտրն արդեն վեր էր կացել թախտից, ուր քնում էր թաղիքի վրա, քուրքի տակ։ Առաջինը ձեռքը գցեց կեղծամին՝ նեղ էր գալիս, ուզում էր մկրատով իր սև խարտյաները կտրել, Վոլկովը դժվարությամբ, աղաչելով կարողացավ չթողնել, կեղծամը գլխին հագցրեց ու քթի տակ ծիծաղեց հայելու մեջ։ Այս անգամ ձեռքերը լվաց օճառով, եղունգների տակի կեղտը մաքրեց, շտապ-շտապ հագավ նոր զգեստը։ Լեֆորտի սուր-

բեցրածի պես, ճերմակ թաշկինակ կապեց վզին և մետաքսյա նույնպես ճերմակ փաթթոց կապեց գոտկատեղին, փեշերը ցից կաֆտանի վրայից։ Նրան ծառայելով, Վոլկովը զարմացել էր. Պյոտրը հագուստով զբաղվելու սովորություն չուներ։ Նեղ կոշիկները փորձելիս, նա կրնտացրեց ատամները։ Կանչեցին ծառաներից մեկին՝ ածգահա Ստյոպկա Մեդվեդին, որ կոշիկները լայնացնի. սոռնելի ոտնաթաթերը դրանց մեջ խցկած, Ստյոպկան հովատակի պես վազում էր աստիճանների վրայով։ Ժամը իններն (ժամանակի նոր հաշվումով) եկավ Նիկիտա Զոտովը՝ վաղ ժամերգության կանչելու։ Պյոտրն անհամբեր պատասխանեց.

— Մայրիկին կասես, որ պետական անհետաձգելի գործեր ունեմ... Մենակս կադոթեմ։ Հա՛, գիտես ինչ, ինքդ էլ ետ կգաս, ու վազելով, լսեցի՞ր...

Նա հանկարծ ետ գցեց գլուխն ու ծիծաղեց ինչպես միշտ, ասես ծիծաղը ներսից պոկելով։ Նիկիտան հասկացավ, որ ցարը նորից որևէ խաղ է նորինել, որպիսիք շատ-շատ էին սովորեցրել նրան Գերմանական արվարձանում։ Սակայն խոնարհաբար հնազանդվեց, վազելավազ գնաց իր փափուկ կոշիկներով ու շուտով ետ եկավ, գիտնալով, որ գլխին փորձանք է բերելու։ Այդպես էլ եղավ։ Աչքերը ոլորելով, Պյոտրը հրամայեց նրան.

— Հելենական ասված Բաքուսից որպես մեծ դեսպան գնալու ես գլուխ խոնարհելու անկանակոչիկին։

— Լսում եմ, արքա Պյոտր Ալեքսեևիչ,— փութաջան պատասխանեց Զոտովը։ Տեղնուտեղը, ինչպես կարգադրվեց, զգեստի վրայից նապաստակի շրջած մուշտակ հագավ, գլխին ճիրով հագցրեցին, վրայից բաղնիքի ավելից նյուսած մի պսակ, ձեռքը գավաթ տվեցին։ Մոր հետ ավելորդ խոսակցություն չունենալու համար Պյոտրը ետնամուտքով ելավ պալատից ու վազեց ախոռանոց։ Այնտեղ բոլոր ծառաներով չորս հսկայական խոզ էին բռնում։ Պյոտրը նետվեց օգնելու, բղավում էր, իսկում, իրար էր ուռցել։ Խոզերը բռնեցին, պտակած վիճակում լանջափոկեր հագցրեցին, լծեցին մի ռսկեզօծ, ցածրիկ, փորագրանախշ անիվներով կառքի (հաշվագրյալ Ալեքսեյ Միխայլովիչի փեսպական ընծան էր, Նատալյա Կիրիլովնան հրամայել էր աչքի լույսի պես պահպանել կառքը։) Ախոռի ատենավորը շրթունքները դողացնելով էր նայում այդ զեղխությանն ու անկարգությանը։ Ծառաների սուլոցների ու քրքիջի ուղեկցությամբ կառքի մեջ խցկեցին Նիկիտա Զոտովին։ Պյոտրը նստեց նստիքին, Վոլկովը՝ թուրը կապած, եռանկյունի գլխարկով, առջևից էր գնում, գազար ու շաղգամ գցելով խոզերին։ Ձիապանները կողքերից շրմփացնում էին մտրակներով։ Ծարժվեցին դեպի Կուկույ։

Արվարձանի մուտքի մոտ նրանց դիմավորեց օտարերկրացիների բազմությունը։ «Լա՜վ է, լա՜վ է, շատ գվարճալի է,— բղավում էին նրանք ծափ զարկելով,— ծիծաղից կոտորվեցինք»։ Կարմրած, բերանը սեղմած, չարացած դեմքով Պյոտրը նստած էր նստիքին։ Ամբողջ արվարձանն էր հավաքվել։ Կողերը բռնած քրքջում էին, մա-

տով ցույց տալով ցարին ու կառքի մեջ նստած, ճիլոպը գլխին, վախից կիսամեռ Զոտովին: Խոզերը տարբեր կողմեր էին քաշքշում, խառնեցին լծասարքը: Պյոտրը հանկարծակի խլեց մտրակը ձիապանի ձեռքից ու կատաղորեն մտրակեց խոզերին: Ճղճղալով, նրանք քաշեցին կառքը... Ինչ-որ մեկին գետին գլորեցին, ինչ-որ մեկն ընկավ անիվների տակ, կանայք փախցրեցին երեխաներին: Պյոտրը կանգնել ու մտրակում էր շարունակ՝ շառագունած, կարմիկ քթի ռունգերն ուռեցրած: Նրա կլոր աչքերը կարմրած էին, կարծես արցունքն էր գալիս:

Լեֆորտի բակի մոտ ձիապանները մի կերպ հավաքեցին խոզերին, բաց դարպասից ներս մտցրին: Բակով վազելով գալիս էր անվանակոչիկը՝ Լեֆորտը, ձեռնափայտն ու գլխարկը թափահարելով: Նրա ետևից՝ ճոխ հագնված հյուրերը: Պյոտրը անհոգի ցած թռավ նստրիքից, և օձիքից բռնած, կառքի միջից դուրս քաշեց Զոտովին: Դեռևս կատաղած նայելով Լեֆորտի աչքերին, կարծես աչք դարձնելուց և ամբոխի մեջ ինչ-որ մեկին տեսնելուց վախենալով, խեղդվող ձայնով նա ասաց.

— Մայն լիբեր գեներալ, մեծ ողջույնով մեծ դեսպան եմ բերել հելլենական Բաքոս աստծուց...— Խոշորակաթիլ քրտինք կար դեմքին, շրթունքները լպստելով ու դարձյալ աչքերի մեջ նայելով, դրժվարությամբ ասաց.— Միթ հերցլիխեմ գրուս... Այսինքն՝ գլուխ է խոնարհում... Խոզերն ու կառքը նվեր է ուղարկել...— Ծարունակելով ջղաձգորեն պահել Զոտովին, շշնջաց.— Ծունկ չոքիր, գլուխ տուր...

Սքանչելի, թավշյա վարդագույն զգեստով, ժանյակներով պճնված, դիմափոշի և օծանելիք քսած Լեֆորտը ամեն ինչ հասկացավ իսկույն: Ձեռքերը վեր բարձրացնելով, զվարթ ծիծաղեց ու դառնալով մերթ հյուրերին, մերթ Պյոտրին, ասաց.

— Ահա սքանչելի մի կատակ՝ ավելի զվարճալի կատակ չէի տեսել... Մենք մտադիր էինք նրան սովորեցնել զվարճալի կատակներ, սակայն ինքն է մեզ սովորեցնում կատակել... Էյ, երաժիշտներ, քայլերգ նվագեք բաքոսյան դեսպանի պատվին...

Եղբևանու թիերի ետևում զարկեցին մեծ և փոքր թմբուկները, նվագեցին շեփորները: Պյոտրի ուսերը թուլացան, դեմքից չքացավ շառագույնը: Ետ ընկնելով, բարձրաձայն ծիծաղեց: Լեֆորտը թևանցուկ արեց նրան: Այդ ժամանակ Պյոտրը աչքերը տարավ հյուրերի վրա ու տեսավ Անխենին՝ աղջիկը ժպտում էր նրան, փայլուն ատամները բացած: Ուսերից վեր մերկ էր, ասես ընդառաջ էր ելել վարդի պես փարթամ զգեստի միջից:

Կրկին վայրի մի շփոթմունք բանտեց կոկորդը: Նա քայլում էր հյուրերի առջևից, Լեֆորտի կողքից, ոտքերը դնելով արագիլի պես: Ամմուտաքի հրապարակի վրա երգասացներն էին կանգնած՝ ռուսական ալ կարմիր շապիկներով: Սուլոցախառն մի պարեղանակ թընդացրին: Կապտաչ ու հանդուգն մեկը դուրս պրծավ և «Այ-դուդո՜ւ-դուդո՜ւ» ձայնարկելով, պպզապարի անցավ, դոփելով պալտած կոշիկներով, ափերը գետնին շպպացնելով, գլխկոնծի տալով, ցատկոտելով, ու պտտվեց հոլի պես՝ «Ի-Է՜խխ...»:

— Այ, չիենե՛ս դու, Ալեքսաշկա:

11.

Զութակը, ալտերը, հոբոյը և գոսերը վերնասրահում գերմանական հին երգեր, ռուսական պարեղանակներ, ծանրումեծ մենուետներ, աշխույժ անգլեզներ էին նվագում: Ծիախոտի ծուխը գալարվում էր երկշարք լուսամուտներով դանլիճի կլոր պատուհաններից հորդացող ճառագայթների մեջ: Գինովցած հյուրերն այնպիսի խոսքեր էին ասում, որ օրիորդները շառագունում էին արշալույսի պես, տակառի պես փարթամ ֆիժմաններով ու ծանր ոտնամաններով կարմրալտ գեղեցկուհիները քրքջում էին ցնորվածի պես: Պյոտրն առաջին անգամ էր սեղան նստում կանանց հետ: Լեֆորտը նրան անիսոնի օղի մատուցեց: Առաջին անգամ էր Պյոտրը ոգելից փորձում: Օղին կրակի պես տարածվեց երակների մեջ: Նա նայում էր ծիծաղող Անխենին: Երաժշտությունից ամեն ինչ պար էր բռնել նրա ներսում, վիզը փքվել էր: Ծնոտները սեղմած, ինքն իր մեջ խեղդում էր դեռևս մութ ու անխնա ցանկությունները: Չէր լսում, թե աղմուկի մեջ ինչ են բղավում հյուրերն իրեն, բաժակները պարզելով... Զարահանի փայլ էին արձակում Անխենի ատամները, նա Պյոտրից չէր կտրում իր գայթակղիչ աչքերը...

Խնջույքը երկարում էր, կարծես օրը երբեք չպիտի ավարտվեր: Ժամագործ Պֆեֆերը գազարի պես երկար իր քիթը մտցրեց քթախոտի տուփի մեջ ու սկսեց փոշտալ՝ կեղծամը գլխից պոկելով, թափ էր տալիս լերկ գանգի վրա: Անչափ ծիծաղելի էր: Պյոտրը ճոճվում էր, երկար ձեռքերով շուրջն եղած ամանեղենը ցած գցելով: Ձեռքերն այնքան երկար էին թվում, որ բավական է երկուքեր սեղանի վրայով, ու կարող էր մատները խրել Անխենի մազերի մեջ, սեղմել գլուխը, շրթունքներով հպվել նրա ծիծաղող շուրթերին... Ու վերատին փքվում էր վիզը, խավարն աչքերն էր պատում:

Երբ արևը թեքվեց ջրաղացների ետևն ու բաց պատուհաններից զով եկավ, Լեֆորտը ձեռքը տվեց ութփթանոց ջրաղացպանուհի Ֆրաու Շիմելպֆենիգին ու մենուետի շրջան մտավ: Ձեռքը շրջանաձև շարժելով, նա թափահարում էր ոսկեփոշով շպարված կեղծամը, ծունկն էր ծալում ու խոնարհվում, աչքերը նվազած վեր հառելով: Գոհացած ու երջանիկ ֆրաու Շիմելպֆենիգը իր վիթխարի շրջազգեստներով լողում էր որպես քառասուն թնդանոթանի մի նավ՝ դրշելով զարդարված: Այդ զույգի ետևից բոլոր հյուրերը դահլիճից պարտեզ ելան, ուր ծաղկաթմբերի մեջ անվանակոչիկի զարդագիր անվանատուներն էին հյուսված ծաղիկներից, ծառերից ու թփուտներից ոսկեգույն և արծաթագույն թղթից պատրաստված ծաղիկներ կապին կախված՝ ժապավենների, կանանների շամանդակներով էին գծագրված...

Մենուետից հետո անցան աշխույժ կոնտրդանսի: Պոտրը, մի կողմ քաշված, եղունգն էր կրծում: Մի քանի անգամ տիկնայք, խոր գլուխ տալով, պարի հրավիրեցին: Նա գլուխն էր թափահարում, թնդալով. «Չգիտեմ, չէ. չեմ կարող...»: Այդ ժամանակ ֆրաու Շիմելպֆենիգը, Լեֆորտի ուղեկցությամբ, ծաղկեփունջ նվիրեց Պոտրին՝ նշանակում էր, որ պարերի արքա են ընտրել նրան: Հրաժարվել չէր կարելի: Պոտրը Լեֆորտի ուրախ, բայց հաստատակամ աչքերին նայեց խեթ, և ջղային շարժումով բռնեց կնոջ ձեռքը: Լեֆորտը թաթերի վրա սլացավ դեպի Անխենը, և նրա հետ կանգնեց Պոտրի դիմաց՝ կոնտրդանսի ֆիգուրների համար: Իջեցրած ձեռքի մեջ թաշկինակը բռնած, Անխենը նայում էր, կարծես ինչ-որ բան խնդրելով: Խլացուցիչ դղրդացին գոտները, թնդաց թմբուկը, երգեցին ջութակները ու շեփորները, ուրախ երաժշտությունը վեր ձգվեց մթնոլ երկինք, վախեցնելով չղջիկներին:

Ու նորից, ինչպես առավոտյան՝ կառքի վրա, ներսում ամեն ինչ տակնուվրա եղավ, շոգ ու խեղացնորություն զգաց: Լեֆորտը բղավում էր.

— Առաջին ֆիգուր: Դամաները՝ առաջքայլ ու ետքայլ, կավալերները պտտում են նրանց:

Բռնելով ֆրաու Շիմելպֆենիգի կողերից, Պոտրն այնպես պտլտեց նրան, որ զգեստը, շլոպն ու ֆիժմաները փոռացին քամուց: «Օ՜հ, մայն գոտտ»՝ միայն սա կարողացավ ասել ջրաղացպանուհին: Թողնելով նրան, Պոտրը սկսեց պարել, կարծես երաժշտությունն ինքնըստինքյան շարժում էր նրա ձեռքերն ու ոտքերը: Բերանը սեղմած, ռունգերն ուռեցրած, այնպիսի ցատկեր ու թռիչքներ էր անում, որ հյուրերը փորները բռնեցին, նրան նայելով:

— Երրո՞րդ ֆիգուր,— բղավեց Լեֆորտը,— դամաները փոխում են կավալերներին:

Անխենի սառը թաթիկը դիպավ նրա ուսին: Պոտրն անմիջապես կծկվեց, մոլեգնությունը խաղաղվեց: Մանրիկ դող էր բռնել մարմինը: Եվ ոտքերն արդեն իրենք տարան նրան, պտտվելով փետուրի պես թեթև Անխենի հետ: Ծառերի արանքում ցատկոտեցին վառոդի թելով վառված հրավառության կրակները: Բարկացած թշշալով, վեր սլացավ հրթիռը: Կրակի երկու երիզ արտացոլվեցին Անխենի աչքերի մեջ:

— Ա՜հ,— շշնջաց նա բարակիկ ձայնով:— Ա՜հ, շատ ու շատ գեղեցիկ է... Ա՜հ, Պիտեր, դուք հիանալի եք պարում...

Պարտեզի բոլոր կողմերից հրթիռներ բարձրացան: Պտտվեցին կրակե շրջանակները, լուսավորվեցին ստվերանկարները: Թնդանոթների պես պայթում էին հրափամփուշտները, ճարճատում զիգզագակրակները, կայծերի շատրվաններ էին թափվում: Վառոդի ծխով պարուրվեց մթնշաղը: Այս երազը չէ՞ր տեսնում արդյոք Պրեոբրաժենսկի պալատի տրտմալի ձանձիրի մեջ: Զինվորի պես երկարահասակ մի տիկնոջ հետ ցատկոտելով, անցավ շվայտ Լեֆորտը. «Կուպիդոնը սրտե՞ր է խոցում նետերով»՝ բղավեց նա Պոտրին: Պարերից բորբոքված Անխենը թարմություն ու սքանչելիք էր բուրում: «Ա՜հ, Պիտեր, ես հոգնեցի»,— ավելի բարակիկ ձայնով կանչեց նա, կախ ընկնելով Պոտրի ձեռքից: Նրանց գլխավերևում զիգզագակրակ ճայթեց, հրեղեն օձերը լուսավորեցին աղջկա՝ հոգնածությունից սրված գմայելի դեմքը: Զիմանալով, թե ինչպես են դա անում, Պոտրը գրկեց նրա մերկ ուսերը, աչքերը կկոցեց ու զգաց նրա շուրթերի խոնավ հպումը: Բայց շուրթերը սահեցին ընդամենը: Անխենը պոկվեց նրա գրկից: Կատաղի ճայթյունով հրթիռներ պայթեցին: Անխենը չքացավ: Ծխի ամպի միջից դուրս լողաց բաբոսյան դեսպանի նապաստակի մուշտակն ու ճլոպպե գլուխը: Սատիկ հարբած Նիկիտա Զոտովը, գավաթը դեռևս բռնած, քարշ էր գալիս, անիմաստ բառեր դուրս տալով... Կանգ առավ, մոնվեց.

— Խմիր, գավակս,— ու գավաթը պարգեց Պոտրին,— խմիր, մեկ է, կորանք ես ու դու... Կործանեցինք մեր հոգիները, խախտեցինք պասը: Խմիր մինչև մրուրը, ձերդ արքայական մեծություն, նամայն Մեծ և Փոքր...

Նա կամեցավ ապառնալ ինչ-որ մեկին ու գլորվեց թփերի մեջ: Պոտրը շպրտեց խմած գավաթը: Հրավառության անիվի պես նրա ներսում բերկրանքն էր թափ առել:

— Անխե՜ն,— ձայն տվեց նա: Վազեց...

Տան լուսավորված պատուհանները, հրթիռապատերների կրակները, ստվերանկարների շրջանակները պտտվեցին աչքերի մեջ: Նա բռնեց գլուխը, ոտքերը լայն չոռեց:

— Գնանք, ցույց տամ, որտեղ է,— ակամայի մի շողում ձայն ճնշեց ետնից: Ալ կարմիր շապկով, ծակող աչքերով երգասացն էր՝ Ալեքսաշկա Մենշիկովը:— Տուն գնաց աղջիկը...

Պոտրը լուռումունջ վազեց նրա ետևից խավարի մեջ: Անցան ցանկապատի վրայով, շները վրա սրծան, ճղապատերի միջով դուրս ելան հրապարակ, առաստաղի դիմացի ջրաղացի մոտ: Վերևում երկարուկ մի պատուհան կար լուսավորված: Ալեքսաշկան շշնջաց.

— Էնտեղ է:— Եվ ավազ շպրտեց ապակուն: Պատուհանը բացվեց, Անխենը դուրս նայեց՝ ուսերին գլխաշոր էր գցել, մազերը թրդոթյա բոժոժիկներով էին փաթաթված:

— Ո՞վ է,— հարցրեց բարակիկ ձայնով, նայեց, տեսավ Պոտրին, գլուխը թափահարեց.— Չի կարելի... Գնացեք քնելու, հեռ Պիտեր...

Ավելի սիրունիկ էր այդ բոժոժիկներով: Փակեց պատուհանը և իջեցրեց ժանյակե վարագույրը: Լույսը հանգավ:

— Քաշվում է աղջիկը,— շշնջաց Ալեքսաշկան: Ուշադիր նայեց ու պինդ գրկելով Պոտրի ուսերը, տարավ դեպի նստարանը:— Ավելի լավ կանես, նստես... Հիմա ձի կբերեմ: Զիով կգնա՞ս:

Երբ ետ եկավ, սանձերից բռնած երկու ձի բերելով, Պոտրը դեռ նստած էր կորամեջք, սեղմած բռունցքները ծնկներին դրած: Ալեքսաշկան գնեց նրա դեմքը.

— Հո խնամ չե՞ս:— Պյոտրը չպատասխանեց: Ալեքսաշկան օգնեց նրան՝ հեծնել, ինքն էլ նստեցրեց թռավ ձիու վրա, և ուսերից բռնած, դանդաղ ելան արվարձանից: Մարգագետինների վրա մը-շուշ էր սփռված: Աշնանային աստղեր էին շողշողում առատորեն: Պրեոբրաժենսկոյեում արդեն կանչում էին աքաղաղները: Պյոտրի սառցե ձեռքը, կառչած Ալեքսաշկայի ուսից, կարծես քարացել էր անկենդան: Պալատի մոտ նա հանկարծ ուղղեց մեջքը, ետ-ետ գնաց, բռնեց Ալեքսաշկայի վզից ու սեղմվեց նրան: Ձիերը կանգնեցին: Պյոտրի կրծքից սուլոց էր լսվում, ճարճատում էին ոսկորները:

— Բռնիր ինձ, պինդ բռնիր,— խոխոջացնելով ասաց նա: Որոշ ժամանակ անց ձեռքերը թուլացան: Տնքալով հոգոց հանեց.

— Գնացինք... Մենակ թե տեղ չհասնա... Միասին կպառկենք... Ջքամուտի մոտ դուրս թռավ Վոլկովը:

— Տե՛ր թագավոր: Ատկա՞ծ... Մենք էլ...

Մոտ վազեցին պալատականները, ձիապանները: Պյոտրը ձիու վրայից ուշքով խփեց այդ մարդակուլտին, ինքն իջավ և Ալեքսաշկային բաց չթողնելով, ներս մտավ: Մութ միջանցքում խաչակնքեց ու մրմնջաց մի պատառ՝ Պյոտրը բոթեց նրան: Մեկ ուրիշը, առանտի պես, ծլկեց սանդուղքի տակ:

— Անդուր փսփսաններ, ոչուրուչ լինեք,— մրթմրթաց Պյոտրը: Նեջատենյակում Ալեքսաշկան հանեց նրա կոշիկները, կափտանը, Պյոտրը պառկեց թաղիքի վրա, Ալեքսաշկային հրամայեց կողքը պառկել: Գլուխը թեքեց նրա ուսին: Քիչ անց ասաց.

— Մահճապետ կլինես... Առավոտյան ատենավորին կասես՝ հրաման գրի... Ուրախ էր, աճ, ուրախ էր... Մայն լիքեր գոտ...

Որոշ ժամանակ անց երեխայավարի հեծկլտաց ու քնեց:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1.

Ամբողջ ձմեռ ազնվականական աշխարհազորն էր հավաքվում: Կալվածատերերին դժվար էր դուրս բերել գյուղական խորքերից: Մեծն վոյեվոդա Վասիլի Վասիլևիչ Գոլիցինը սպառնական հրամանագրեր էր ուղարկում, վախեցնում շնորհազրկությամբ ու սնանկացմամբ: Կալվածատերերը չէին շտապում իջնել տաքուկ վառարանների մոտից. «Ի՞նչ է փչել խելքներին՝ գրավել Ղրիմը: Ատոնում փառք, խանի հետ մշտական հաշտություն ունենք, չափավոր տուրքը տալիս ենք, զուր տեղն ազնվականներին նեղություն պատճառելու կարիքը չկա: Գոլիցինների ուզածն ուրիշի հաշվին փառք ու պատիվ ստանալն է...»: Տկարություն կամ չունևորություն վկայակոչելով, խուսափում էին ներկայանալ: Ոմանք գժություններ էին անում՝ ձանձրույթից ու անգործությունից ձմեռ օրով մարդու գլուխն ինչ ասես կմտնի: Սեղանապետներ Բորիս Դոլգոռուկին և Յուրի

Շչերբատովն՝ անզոր խուսափել արշավանքից, ռազմիկներին ևս զգեստներ հագցրեցին, իրենք էլ սևաթույր ձիերով, ոտից գլուխ ամ հագած, ասես գերեզմաններից էին ելել, զորակալան նկան, մահու չափ վախեցնելով բոլորին: «Փորձանք է գալու,— խոսում էին գրնդերում,— կենդանի չենք դառնա արշավանքից...»: Զայրացած Վասիլի Վասիլևիչը գրեց Մոսկվա, Ֆյոդոր Լեոնտևիչ Շակլովիտիին, որին թողել էր Սոֆյայի մոտ. «Բարի եղիր, ինձ չլսողների դեմ հրաման արձակել տուր, որ այս դավանանության համար աղքատացնեն, ցմահ ճգնավորության աքսորեն, նրանց գյուղերը չքավորներին բաժանեն, այնպիսի խստություն սահմանեն, որ բոլորը դողան վախից...»:

Հրամանագիրը պատրաստեցին, բայց Վասիլի Վասիլևիչը բարեսրտությունից ներեց կարգազանցներին, որոնք արցունքն աչքերին թողություն խնդրեցին: Չէին հասցրել այդ գործը վերջացնել, զորքի մեջ լուր տարածվեց՝ իբր թե գիշերով իշխան Գոլիցինի խրճիթի հաշտը դագաղ են գցել: Մարդիկ զարգանում էին, նման սարսափելի բաների մասին փսփսալով: Ասում էին, թե այդ օրը Վասիլի Վասիլևիչը սաստիկ հարբել էր, դեսուդեն ընկել խավար հաշտում, թրատելով դատարկ տարածությունը: Գեշ նախանշաններ էին: Զորքի ետևից հասած գումակները տափաստանային բլուրների վրա ոռնացող ապիտակ գայլեր էին տեսել: Ձիերը սատկում էին անհայտ պատճառներով: Մարդկանց մի քամառատ գիշեր գնդի այծը մարդկային ձայնով կանչել էր՝ «Փորձանք է գալո՛ւ»,— շատերն էին լսել: Ուզեցան բրեթով սատկացնել այծին, սա դուրս պրծավ ու տափաստան փախավ:

Ձները հալվեցին, հարավից անուշ հով փչեց, կանաչեցին գետափնյա ու լճափնյա ուռուտները: Վասիլի Վասիլևիչը ամպի պես մռայլված էր շրջում: Մոսկվայից անուրախ լուրեր էին գալիս, իբր Կրեմլում ձայնը բարձրացնել է սկսել Միխաիլ Ալեքսեևիչ Չերկասսկին՝ Պյոտր ցարի մերձավոր բոյարինը, և իբր բոյարներն ականջ են դնում նրան, Ղրիմի արշավանքը ծաղրելով. «Ղրիմի խանը Վասիլի Վասիլևիչին սպասելուց ձանձրացել է, Ցարեգրադում, ամբողջ Եվրոպայում այդ արշավանքից ձեռ են քաշել: Գոլիցինները թանկ են նստում ցարական գանձարանի վրա...»: Նույնիսկ պատրիարք Յոակիմը՝ Վասիլի Վասիլևիչի նախկին հովանավորը, հարաշի եկեղեցուց, առանց պատճառի, դուրս է գցել Գոլիցինի նվիրած շուրջառներն ու կափտանները և արգելել դրանցով ժամերգություն անցկացնել: Վասիլի Վասիլևիչը Շակլովիտիին տագնապալի նամակներ էր գրում, որ աչալուրջ հետևի Չերկասսկուն, նաև այնպես անի, որ պատրիարքն ավելի քիչ լինի վերևներում՝ Սոֆյայի մոտ... «Ինչ մնում է բոյարներին, ապա հնուց եկող շահամոլությունն է նրանց տիրել, մեծ գործի համար իրենցից մի գրոշ պոկելը կափսոսեն...»:

Տխուր լուրեր էին գալիս արտասահմանից: Ֆրանսիական թագավորը, որից մեծն դեսպաններ Յակով Դոլգոռուկին և Յակով Մալեցկին երեք միլիոն լիվր էին պարտք խնդրել, փող չէր տվել ու չէր կամեցել նույնիսկ տեսնել դեսպաններին: Գրում էին հոլան-

դական դեպքեր Ուշակովի մասին, որ «նա ու նրա մարդիկ ամբողջովին թաղվել են գողության մեջ, շատ տեղերում խնջույքներ են արել, խմել ու շատ անվայել խոսքեր ասել, որից պատվազուրկ են եղել արքայական մեծությունները...»:

Մայիսի վերջին հարյուր հազարանոց զորքով Գոլիցինը վերջապես դեպի հարավ շարժվեց և Սամարա գետի մոտ միացավ ուկրաինական հետևակ Սամոյլովիչին: Դանդաղ առաջանում էր զորքը, անհամար գումակներ քարշ տալով պոչից: Վերջացան քաղաքներն ու պահախմբերն՝ իրենց տնակներով, մտան Վայրի դաշտի տափաստանները: Ամայի հարթավայրում տապն էր կանգնած, և մարդիկ կրծքահաս խոտերի միջով էին առաջանում: Կրակվող երկնքում գիշանգղներ էին պտտվում: Հեռավոր հորիզոնի պոնկին օդապատրանքներ էին ալիքվում: Վերջալույսները կարճատև էին՝ դեղնավուն, կանաչավուն: Սայլերի ճռռոցով, ձիերի խրխինջով լցվեց տափաստանը: Չոր թրիքի խարույկների ծուխը մշտնջենական թախիծ բուրեց: Գիշերն արագ էր վրա հասնում: Սարսռազդու աստղեր էին շողշողում: Տափաստանն ամայի էր՝ ոչ ճամփա կար, ոչ արահետ: Առաջապահ գնդերը շատ հեռու էին գնում, կենդանի ոչ մի շունչ չտեսնելով: Ըստ երևույթին, թաթարները ռուսական զորքը իաբեթությամբ քաշում էին անջուր ավազուտները: Ավելի ու ավելի հանախ էին դեմ առնում ձորակների ցամաքած հունների: Միայն փորձառու կազակները գիտեին, թե որտեղից կարելի է ջուր գտնել այստեղ:

Հուլիսի կեսն էր, իսկ Ղրիմը մշուշի մեջ դեռ աչքերին էր երևում ընդամենը: Գնդերը սփռվել էին տափաստանով մեկ՝ եզրից եզր: Սպիտակ լույսից, ճպուռների չոր ճռռոցից գլուխ էր պտտվում: Սատկած ձիերի կողերի վրա ալարկոտ թռչուններ էին խմբվում: Շատ սայլեր թողեցին տափաստանում: Շատ մուժիկներ մնացին իրենց սայլերի մոտ՝ ծարավից մեռնելով: Ոմանք դեպի հյուսիս էին շարժվում, Դնեպրի կողմերը: Գնդերը տրտնջում էին...

Վոյեվոդաները, գնդապետները, հազարապետները ճաշի էին հավաքվում Գոլիցինի քաթանե վրանի մոտ, տագնապած նայելով կախ ընկած դրոշներին: Բայց ոչ ոք սիրտ չէր անում գնալ ու ասել. «Պետք է ետ դառնալ, քանի դեռ ուշ չէ: Ինչքան առաջանանք, այնքան ավելի վատ, Պերեկոպից դենը մեռյալ ավազուտներ են»:

Վասիլի Վասիլևիչն այդ ժամերին հանգստանում էր վրանում. զգեստը, կոշիկները հանած, գորգերի վրա պառկած, Պլուտարքոս էր կարդում լատիներեն: Գրքերի էջերից ելնող մեծ ուրվականները նրա մոայլված հոգու կայտառությունն էին ամրապնդում: Ալեքսանդրը, Պոմպեոսը, Սցիպիոնը, Լուկուլլոսը, Հուլիոս Կեսարը, ծղրիտների հոգնեցուցիչ ճռռոցի տերը, հոռետական արծիվներն էին թափահարում: Ի փա՞ռք, ի փա՞ռք: Նաև ուժ էր առնում՝ Սոֆյայի նամակները կարդալով. «Իմ աչքի լույս , եղբայր Վասենկա: Բարի ողջույն քեզ, պատվելիս, երկար կյանք ունենաս: Աստված քեզ օգնական՝ հոգթես թշնամաց: Էլ հավատ չունեմ, թե ետ կա դառնալու, իմ աչքի լույս... Այնժամ կհավատամ, երբ գրկիս մեջ տեսնեմ իմ հոգու հատորին... Ինչի համար եպ գրում, որ ասոթեմ, իմ աչքի լույս, կարծես իրավ մեղավոր եմ աստծու առաջ ու անարժան: Բայց և այնպես մեղավոր եմ թեև, հանդգնում եմ հույս ունենալ նրա բարեգթությանը: Աստված է վկա, միշտ եմ աղերսում, որ ուրախության մեջ տեսնեմ իմ հույս ու հավատին: Սրանով իմ ողջույնները քեզ, հավերժ ու անհամար...»:

Երբ տապը մեղմվում էր, Վասիլի Վասիլևիչը, սաղավարտն ու այծենականը հագնելով, ելնում էր վրանից: Նրան տեսնելով, գնդապետները, հազարապետները, յասավուլները ձիերն էին հեծնում: Կանչում էին փողերը, ձիգ երգում եղջրափողերը: Զորքը հիմա առաջանում էր գիշերով, մինչև միջօրեի տապը:

Այդպես էր և այսօր: Բլրի կատարից Վասիլի Վասիլևիչը հայացքը պտտեց խարույկների անհամար ծխերի, զորքերի մութ կետերի, մշուշի մեջ կորչող գումակների եզրագծերի վրայով: Մշուշն առանձնահատուկ էր այսօր, փոշու ալիքը հորիզոնն էր պատել չորս կողմից: Ծանր էր շնչելը՝ քամի չկար: Վերջալույսը արնագույն խավարով էր պատել երկնքի կեսը: Թռչունների երամներ էին սլանում, ասես փրկվելով... Մայր մտնող արևը փքվել էր՝ մշուշված, սարսափելի... Աստղերը դեռ չցոլացած, շղարշով պատվեցին: Շառագունելով, ցոլցլում էր ծխակոլոլ հրացոլքը: Խեղդող քամի բարձրացավ: Ավելի հստակ երևացին բոցի պար եկող լեզուները, որոնք օղակել էին զորքը բոլոր կողմերից...

Բլրի մոտ ձիավորների մի խումբ կանգ առավ: Ծանր-ծանր ոտյունքներով մեկը ձին մոտ քշեց վրանին: Իջավ, ուղղելով երկարուկ գլխարկը: Վասիլի Վասիլևիչը ճանաչեց հետևակ Սամոյլովիչի ճարպոտ դեմքն ու ալեխառն բեխերը:

— Աղետ է պատահել, իշխան,— ասաց ցածրաձայն,— թաթարները հրդեհել են տափաստանը...

Հետևակի կախ ընկած բեխերի տակ քմծիծաղ չկար, ստվերված էին աչքերը...

— Չորս կողմը վառվում է,— ասաց նա՝ մտրակով ցույց տալով:

Վասիլի Վասիլևիչը երկար նայում էր հրացոլքին:

— Ինչ արած, հետևակը ձիերին կնստեցնենք, կրակի միջով կանցնենք...

— Իսկ մոխիրների վրայո՞վ ինչպես գնանք: Ոչ կեր կա, ոչ ջուր: Կկոտորվենք, իշխան:

— Ես նահանջե՞մ:

— Գիտցածդ արա... Կազակները վառված տափաստանով չեն գնա:

— Մտրակելով կքշեք կրակի միջով... (Վասիլի Վասիլևիչը զայրույթի պահին անզուսպ էր: Արագ-արագ պտույտ տվեց բլրակի վրա, չոր հողի մեջ խրելով երկաթյա կրունկները:) Վաղուց եմ տեսնում, որ կազակների սրտով չէ մեզ հետ գալը... Նայում ու ծիծաղդ է գալիս՝ ճնշում են թամբերին նստած: Ղրիմի խանին գուցե ավելի

ժրաջան էին ծառայում: Դու էլ ես հոգով ծուռ, հետման... Զգուշացիր... Մոսկվայում քեզպեսներին չէ, որ մազերից բռնած քարշ են տվել կառափնարան... Տերտերի տղա, երբվանի՞ց է մոմ ու ձուկ չես ծախում:

Գիրուկ Սամոյլովիչը ցոլի պես թնչացնում էր, վիրավորանքը խելով: Բայց խելացի էր և խորամանկ՝ լուռ մնաց: Ֆսֆսացնելով, ձին հեծավ, իջավ բլրակից ու չքացավ սալերի ետևում: Վասիլի Վասիլևիչը ձայն տվեց փողոցին: Խոպոտ հնչեցին փողերը ծխապատ տափաստանում: Հեծելազորը, հետևակ զորքը, գումակները շարժվեցին կրակի միջով:

Արշալույսին պարզ դարձավ, որ առաջ գնալ չի կարելի՝ սև ու մեռյալ տափաստանն էր առջևում: Սոսկ գալարվող սյուներ էին պտտվում այնտեղ: Հարավից փչող քամին սատկանում էր, մոխրի ամպեր բերելով: Երևաց, թե ինչպես հեռվում առաջինը ետ շրջվեցին կազակական հեծելապարեկները: Կեսօրին գումակում հավաքվեցին վոյեվոդաները, գնդապետները ու ատամանները: Խոժոռված տեղ հասավ հետմանը, նստի մեջ խրեց մականը, վառեց ծխամորճը: Վասիլի Վասիլևիչը, մատնիքավոր ձեռքերը գրահին դրած, հպարտությունը մեղմած, արցունքն աչքերին, ասաց.

— Ո՞վ դեմ կգնա նախախնամությանը: Ասված է՝ զսպիր հպարտությունդ, մարդ, քանզի մահկանացու ես: Տերը մեծ դժբախտություն է մեզ ուղարկել... Հարյուրավոր վերստերի վրա ոչ կեր կա, ոչ ջուր: Մահից չեմ վախենում, բայց խայտառակությունից՝ այո: Վոյեվոդաներ, մտածեք ու ասեք՝ ի՞նչ անենք:

Վոյեվոդաները, գնդապետները ու ատամանները մտածեցին ու պատասխանեցին.

— Ետ գնանք դեպի Դնեպր, անմիջապես:

Այսպես անփառունակ ավարտվեց ղրիմյան արշավանքը: Զորքերը հապշտապ ետ շարժվեցին, կորցնելով մարդկանց, լքելով գումակները, և կանգ առան միայն Պոլտավայի մատույցներում:

2.

Գնդապետներ Սոլոնինան, Լիզոգուբը, Զաբելան, Գամալեյը, յասսավուլ Իվան Մազեպան ու գլխավոր գրագիր Կոչուբեյը, գալտնի մտնելով Վասիլի Վասիլևիչի վրանը, ասացին.

— Տափաստանը կրակ են տվել կազակները, նրանց հետմանն է ուղարկել: Սա էլ քեզ մատնագիր հետմանի վրա, կարդա ու Մոսկվա ուղարկիր, չուշացնես, որովհետև էլ ուժ չունենք դիմանալ նրա կամայականություններին՝ ինքը հարստացել, ազնվականությանն աղքատացրել է, կազակական ավագանին նրա մոտ գլխարկով կանգնել չի կարող: Բոլորի վրա զոռում է: Ռուսներին խաբում է, լեհերի հետ կապեր ունի ու նրանց էլ է խաբում, ուզում է Ուկրաինան իր մշտական տիրույթը դարձնել ու մեր ազատությունը խլել:

Մոսկվայից թող հրաման ուղարկեն, որ ուրիշ հետման ընտրենք, իսկ Սամոյլովիչին գցենք...

— Իսկ հետմանն ինչո՞ւ չի ուզում, որ ջարդեմ թաթարներին,— հարցրեց Վասիլի Վասիլևիչը:

— Նրա համար չի ուզում,— պատասխանեց յասավուլ Իվան Մազեպան,— որ քանի դեռ թաթարներն ուժեղ են, դուք թույլ եք, թաթարներին որ ջարդեք, շուտով Ուկրաինան էլ մոսկովյան վոյեվոդաներին կդարձնեք... Մենակ թե փուչ բաներ են դրանք... Ռուսներիդ համար մենք փոքր եղբայր ենք, մի հավատի տեր, ու միշտ էլ ուրախ ենք մոսկովյան ցարի ձեռքի տակ ապրել...

— Լավ է ասված,— աչքերը ցած հառած, հաստատեցին թխակապույտ գլուխներով, քարոզավոր գնդապետները:— Մենակ թե Մոսկվան մեր ազնվականական ազատությունը հաստատի:

Վասիլի Վասիլևիչը հիշեց մոխրի սև ամպերը, տափաստանում թողած անհամար գերեզմանները, ձիերի կողերը բոլոր ճանապարհների վրա: Այտերը կրակ բռնած, հիշեց իր երազները Ալեքսանդր Մեծի արշավանքների մասին: Հիշեց կրեմլյան պալատի նեղ միջանցքները, ուր բոյարները, թշնամիները գլուխ պիտի խոնարհեն իրեն, մատներով բեխերը ծածկած, որ քողարկեն քմծիծաղը...

— Այսպես՝ հետմա՞նն է տափաստանը կրակ տվել:

— Այդպես,—հաստատեցին գնդապետները:

— Լավ: Թող ձեր ասածը լինի:

Նույն օրը, երկնի, Մոսկվա սլացավ Վասիլի Տրյոտովը՝ հետմանի վրա մատնագիրը գլխարկի մեջ կարած: Երբ մոտեցան Պոլտավային ու զորակայան խփեցին, մեծն արքաներից պատասխան հրովարտակ եկավ. «Եթե որ Սամոյլովիչը ավագանու և մայոռուսական ամբողջ զորքի ուզածով չէ, մեծն արքաների դրոշը և մականը և ամենայն զինվորական կլեյնոդներ առնել նրանից, իրեն ուղարկել մայոռուսական քաղաքները հուսդի պահախմբով: Իսկ նրա տեղը հետման կարգել նրան, ում ավագանին և մայոռուսական ամբողջ զորքը կկամենա...»:

Նույն գիշերը ստրելեցները հետմանի զորակայանի շուրջ կանգնած գումակը տեղահան արեցին և առավոտյան հետմանին բռնեցին երթային եկեղեցում, մի հասարակ սալի մեջ գցեցին ու բերեցին Գոլիցինի մոտ: Այնտեղ նրան հարցաքննեցին: Հետմանի գլուխը թաց շորով էր կապված, աչքերը բորբոքված էին: Սարսափահար կրկնում էր.

— Ախր սուտ են ասում նրանք, Վասիլի Վասիլևիչ: Աստված վկա, սուտ են ասում... Խորամանկ Մազեպայի՝ իմ թշնամու խարդախություններն են...— Տեսնելով ներս մտած Մազեպային, Գամալեյին ու Սոլոնինային, նա շառագունեց, ցնցվեց.— Ուրեմն, սրա՞նց ես լսում... Ծները սպասում են, թե երբ են Ուկրաինան լեհերին ծախելու:

Գամալեյը և Սոլոնինան, թրերը հանած, նետվեցին նրա վրա: Բայց ստրելեց հարյուրապետները հետմանին խլեցին նրանց ձեռ-

քից: Գիշերը նրան դեպի հյուսիս տարան շղթայակապ: Հարկ էր շտապ նոր հետման ընտրել, կազակական գնդերը գումակում գոբիլկայի տակառներ բացեցին, սրախողխող արեցին հետմանի ծառաներին, ցցի հանեցին բոլորին ատելի գաղտչցի գնդապետին: Զոբակայանով մեկ բղավոցներ ու երգեր, կրակոցներ էին թնդում: Իրարանցում ծայր առավ նաև մոսկովյան գնդերի մեջ:

Առանց հրավերի Վասիլի Վասիլևիչի վրանը եկավ Մազեպան: Մոխրագույն սվիտկա էր հագել, ոչխարենու հասարակ փափախ դրել, միայն ոսկյա շղթայով թանկարժեք թոր ուներ օրոտկից կախ: Իվան Ստեպանովիչը հարուստ մարդ էր, ազնվական հայտնի տոհմից, երկար ժամանակ Ավստրիայում ու Լեհաստանում էր ապրել: Այստեղ, արշավի ընթացքում, մորուք էր թողել՝ կացապի պես, մոսկովյան ձևով էր կտրել մազերը: Արժանապատիվ գլուխ տալով, որպես հավասարը հավասարին, նստեց: Երկար, բարակ մատները կզակին խաղացնելով, ուռած, խելացի աչքերը հառեց Վասիլի Վասիլևիչի վրա:

— Գուցե պան իշխանը կամենում է լատիներե՞ն խոսել... (Վասիլի Վասիլևիչը սառնությամբ գլխով արեց: Մազեպան, առանց ձայնն իջեցնելու, լատիներեն խոսեց:) Քեզ համար դժվար է մայրուղական գործերից գլուխ հանել: Մայրուղիները խորամանկ են, ծածկամիտ: Վաղը հարկ է նոր հետման հոչակել, և լուրեր կան, թե Բորկովսկուն են ուզում հոչակել: Այդ դեպքում ավելի լավ էր չգցել Սամոյլովիչին: Մոսկվայի համար Բորկովսկուց ավելի վտանգավոր թշնամի չկա... Բարեկամի պես եմ ասում:

— Ինքդ գիտես, մենք ձեր մայրուղական գործերի մեջ խառնվել չենք ուզում,— պատասխանեց Վասիլի Վասիլևիչը,— մեզ համար ցանկացած հետման լավ է, միայն թե բարեկամ լինի...

— Հաճելի է խելացի խոսք լսելը: Թաքցնելու բան չունենք՝ Մոսկվայի ձեռքի տակ մենք մեզ զգում ենք ինչպես Աբրահամի ծոցում... (Վասիլի Վասիլևիչը, թոուցիկ քմծիծաղով, աչքերը ցած հառեց:) Մեր պապական հողերը չեք խլում, մեր սովորույթների հանդեպ բարյացակամ եք... Մեղքներս ինչ թաքցնենք՝ մեր մեջ կան Լեհաստանի կողմը ձգտողներ... Բայց նրանք, հանուն շահի, Ուկրաինան քաքայողներն են... Մի՞թե չգիտենք, որ եթե Լեհաստանին ենթարկվենք, պաները մեզ կքշեն մեր հողերից, սմենուրեք կոստյոլներ կկառուցեն, բոլորիս ճորտ ու ծառա կդարձնեն: Ոչ, իշխան, մենք հավատարիմ ծառաներ ենք մեծն արքաներին... (Վասիլի Վասիլևիչը լռում էր, աչքերը չբարձրացնելով:) Ինչ ասեմ, աստված ինձ չի զրկել բարեշնորհությունից... Անցյալ տարի Պոլտավայի մոտերքում մի գաղտնի տեղ, տակառիկ եմ թաղել սև օրվա համար՝ տասը հազար ոսկով: Մենք՝ մայրուղիներս, հասարակ մարդիկ ենք, մեծ գործի համար պատրաստ ենք կյանքներս էլ տալ... Վախենալու ի՞նչ ունենք: Մակլանը ձեռքը կառնի դավանանքը կամ տիեզերքը՝ դա է սարսափելի...

— Ուրեմն, ինչ, Իվան Ստեպանիչ, աստված մեզ հետ, ու բարին կատարվի, վաղը հետման հոչակեք:— Վասիլի Վասիլևիչը վեր կացավ ու գլուխ տվեց հյուրին: Հապաղեց, ապա ուսերը բռնելով, երեք անգամ համբուրեց նրան:

Հաջորդ օրը, երթային քաթանե վրան-եկեղեցու մոտ, պատմուճանով ծածկված սեղանին դրված էին մականը, դրոշը և հետմանական կնիքները: Երկու հազար կազակ կանգնած էին շուրջանակի: Պարկական զրահով, այծենակաճով, մորեգույն փետուրներով սաղավարտը գլխին իշխան Գոլիցինը եկավ եկեղեցուց, ետևից՝ ամբողջ կազակական ավագանին: Վասիլի Վասիլևիչը կանգնեց նստարանին, մետաքսե թաշկինակը ձեռքում, մյուսը դրած թրի երախակալին, ու ասաց մոտ եկած կազակներին.

— Նորին արքայական մեծությունները հին սովորությանն համաձայն թույլ են տալիս մայրուղական մեծագույն գործքին՝ հետման ընտրել: Ասացեք, ով է ձեր սրտով, այդպես էլ կլինի... Մազեպան, թե մեկ ուրիշը՝ կամքը ձերն է...

Գնդապետ Սոլոնինան բղավեց. «Մազեպայի՞ն ենք ուզում»: Ձայնակցողներ եղան, և ամբողջ դաշտն աղմկեց. «Թող Մազեպան հետմա՞ն դառնա»...

Նույն օրը չորս կազակ իշխան Գոլիցինի վրանը բերեցին հողի մեջ սեղացած մի տակառիկ՝ ոսկով լիքը:

3.

Երկու տարի առաջ Ցառուզայի վրա, Պրեոբրաժենսկի պալատից քիչ ներքև կառուցված ամրոցն այս աշնանը վերակառուցվեց գեներալներ Ֆրանց Լեֆորտի և Սիմոն Զոմմերի գծագրերով. պատերը լայնացվեցին ու ամրացվեցին ցցագերաններով, դրսից խոր փոսեր փորվեցին, անկյուններում ամուր աշտարակներ բարձրացան՝ հրակնատներով: Ուռենու ճյուղերից հյուսված ճեղանցներն ու ավազով լի պարկերը ծածկում էին բրոնզե թնդանոթների, հրասանդների և հրանոթների շարքերը: Ամրոցի կենտրոնում հինգ հարյուր մարդու ճաշատուն կառուցեցին: Գլխավոր աշտարակի վրա, դարպասից վեր, գանգեր կախեցին՝ ծեծաններով:

Կատակը՝ կատակ, ամրոցը ռազմախաղի էր, բայց հարկ եղած դեպքում այդտեղ կարելի էր նաև պաշտպանվել: Ընդարձակ, հնձած մարգագետնում վաղ առավոտից մինչև մութն ընկնելը Պրեոբրաժենսկի և Սեմյոնովսկի երկու գումարտակների վարժություններն էին ընթանում՝ Սիմոն Զոմմերը ոչ կոկորդն էր խնայում, ոչ բռունցքները: Ասես լարովի զինվորները, մուշկետներն առաջ պարզած, շարքայլ էին պարապում: «Զգա՞ստ, հա՛լտ»՝ զինվորները, աջ ոտքը խփելով, կանգնում էին քարացած... «Աջ ոտն առա՞ջ: Ֆորվե՛րտս: Ծիշտ չէր: Լումպե՛ն: Սոիկանե՞ր: Լսեե՞լ...»: Գեներալը, ձին նըստած, շառագունում էր հնդուհավի պես: Նույնիսկ Պոտրը, որ հիմա ենթապա էր, ձգվում էր, աչքերը վախեցած վեր բարձրացնելով, երբ անցնում էր նրա մոտով:

Արվարձանից երկու օտարերկրացի էլ վերցրեցին, Ֆրանց Տիմմերմանին, որը մաթեմատիկա գիտեր ու աստրոլյաբիայի հետ վարվելու ձևը, և ծերուկ Կարտեն Բրանդտին, որը ծովագնացության մեջ էր քաջահմուտ: Տիմմերմանը սկսեց Պյոտրին մաթեմատիկա և ռազմական շինարարություն սովորեցնել: Կարտեն Բրանդտը ձեռնարկեց նավեր կառուցել, ըստ Իզմայլովո գյուղի նկուղներից մեկում գտնված միակայր զարմանալի նավակի, որը քամուն հակառակ էր շարժվում թեք առագաստով:

Մոսկվայից ավելի ու ավելի հաճախ էին գալիս բոյարները, սեփական աչքերով տեսնելու, թե այդ ինչ խաղեր են խաղում Ցառգայի վրա: Ո՞ւր է գնում այդքան դրամը և այդքան գենքը Չինաստանից... Կամուրջը չէին անցնում, մնում էին գետակի մյուս ափին. առջևում բոյարն էր կանգնում՝ ձին հեծած, թանկարժեք մուշտակով, բմբլե բարձի պես փքված, մորուքն ավելի նման, թշերն ուռած, ետևում՝ ազնվականները, հնարավորին չափ թանկարժեք, երեսպաման, չոքսական կաֆտաններ հագած: Անշարժ կանգնում էին մի ժամ ու ավելի: Գետակի հակադիր ափին ավազ ու չախ բարձած սայլեր էին շարժվում, զինվորները գերաններ էին կրում, բարձրադիր եռոտանու վրա, ճախարակներով վեր էր ելնում ծանր թակն, ու՝ դը՞մփ, խփում ցցագերանի գլխին, հողն էր շուռ գալիս բահերով, շրջում էին օտարերկրացիները՝ գծագրերը, կարկինները ձեռքներին, կացիններն էին թխկթխկում, վնգում սղոցները, տասնապետներն էին վազվզում սաժենաչափերով: Եվ աՀա,— տե՞ր աստված, բարեշնո՞րհ սրբեր,— ոչ թե մի բարձր տեղ, ոսկեզօծ աթոռակին նստած այդ խաղին է հետևում, ո՞չ, ցարը՝ գործած գդակով, գերմանական շալվարով ու կեղտոտ շապկով, տախտակների վրայով սալյակ է հրում վազելավազ...

Բոյարինը հանում էր բառասուն սամույրե գլխարկը, ազնվականներն էին հանում գլխարկները, խոր գլուխ տալիս մյուս ափից: Ու նայում էին ձեռքները տարածած... Հայրերն ու պապերը անսասան պարսպի պես կանգնում էին ցարի շուրջը, պահպանելով, որ փոշու հատիկ կամ նանն չնստի նրա օծյալ ու վսեմ գլխին: Համարյա կենդանի աստծու պես ժողովրդին ի տես էին հանում նրան հազվագյուտ օրերի, պահպանելով բյուզանդական հնամենի մեծաշուքությունը... Իսկ սա՞ ինչ բան է: Ինչե՞ր է անում նա: Մորտերի հետ ճորտ դարձած, անբան խեղկատակի պես, վազվզում է տախտակների վրայով անամոթը՝ բերանին ծխափողը, լի գարշելի թույնով, որ ծխախոտ է կոչվում... Հիմքե՞րն է խարխլում... Սա արդեն խաղ չէ, չարաճճիություն չէ... Տեսեք, թե գետից այն կողմ սեպերն ինչպես են բացել նորտերը...

Ոմն բոյար, սիրտ ուռելով, մորուքը թափ տալով, դողդոջ ձայնով կկանչեր.

— Տեր թագավոր, գլուխս կտրիր ճիշտ խոսքի համար, ծեր մարդ եմ, լռել չեմ կարող՝ ամոթ է նայելը, խայտառակ, չտեսնված...

Զողի պես երկարուկ Պյոտրը կբարձրանար ճյուղահյուս հողապատնեշի վրա, աչքերը կկոցած.

— Ա՜, դու ես... Լսի... Գոլիցինն ի՞նչ է գրում՝ Ղրիմը գրավե՞ց, թե դեռ չէ:

Ու կկսեին հոհոալ, ծիծաղել նգովյալ օտարերկրացիները՝ պատնեշից այն կողմ, նրանց հետ նաև յուրայինները, ովքեր ոչ թե ծպտուն պիտի հանեին, այլ ծնկի պիտի գային, ցարերին այդքան մոտ կանգնած մարդուն տեսնելուն պես: Մեկ-մեկ պատահում էր նաև, որ հանատում էր բոյարինը՝ մեկ է, գլուխը պիտի թոցնեին, և շարունակում էր հորդորել ու ամաչեցնել. «Քո հորը ծնկներիս վրա եմ պահել, օրեր ու գիշերներ եմ անցկացրել թագավորի դագաղի մոտ, մեր տոհմը Ռյուրիկից է գալիս, մենք էլ ենք մեծ-մեծ սեղանների նստել: Մեր պատվի մասին մտածիր, վերջ տուր խաղերիդ, ուշքի եկ, բաղնիք գնա, աստծո տաճարը մտիր...»:

— Ալեքսաշկա,— կկանչեր Պյոտրը,— պատրաստվիր ինձ տուր:— Եվ նշան բռնելով, տասներկու ֆունտանոց հրանոթից սիսեռով լի արկ կարձակեր բոյարինի վրա: Փորը բռնած, կքրքջար գեներալ Զոմմերը, Լեֆորտը կծիծաղեր, բարեհոգությամբ կժպտար լուսակաց Տիմմերմանը, եփած խնձորի նման ամբողջովին կնճռապատ, կցնցվեր կարգիկ, հաղթանդամ Կարտեն Բրանդտը: Եվ բոլոր օտարերկրացիներն ու ռուսները կիմբվեին պատնեշների վրա՝ տեսնելու, թե ինչպես ընկավ մորթե փափախը, մեռելի գույն ստացած բոյարինն ինչպես ընկավ մոտ կանգնած ազնվականների գիրկը, ինչպես ետ գնացին ու քացի-քացի արեցին ձիերը: Մի ամբողջ օր կծիծաղեին ու կպատմեին:

Ամբոցը կոչեցին գահանիստ քաղաք Պրեշբուրգ:

4.

Ալեքսաշկա Մենշիկովը, այն գիշեր Պյոտրի ննջարան ընկնելուց հետո, այդպես էլ մնացել էր: Ծարպիկն էր սատանան, ժլատ, կուտակում էր մտքերը՝ միայն գանձուրները ետ կգցեր, կշրջվեր, վազ կտար, ու գործը կաներ: Հայտնի չէ, թե երբ էր քնում. ձեռքը կտաներ քիթ-մոտի վրայով ու կարծես հենց նոր լվացված լիներ՝ զվարթ, աչքերը ջինջ, ծիծաղկոտ: Հասակով համարյա Պյոտրի չափ էր, բայց ուսերն ավելի լայն էին, զուտկատեղը բարակ: Որտեղ Պյոտրն էր, այնտեղ էլ՝ նա: Թմբուկ զարկել, մուշկետ կրակել, ճյուղեր թրատել՝ մեկ էր նրա համար: Որ սկսեր զվարճացնել՝ կմեռցներ ծիծաղից, արջն ինչպես մտավ փչակը, մեղր հանելու, բայց մեղուները վրա տվեցին, կամ տերտերն ինչպես է վախեցնում վանականի կնկանը, որ կանչի ցերեկվա ժամերգության, կամ ինչպես կռվեցին երկու կակազ... Պյոտրը լաց էր լինում ծիծաղից, համարյա սիրահարված նայելով Ալեքսաշկային: Սկզբից բոլորը կարծում էին, թե ցարի ծաղրածուն է դառնալու: Սակայն նա ավելին էր աչքադրել, շարունակ կկատակեր, կծիծաղեցներ, բայց երբ նա-

վաքվեին գեներալները, ինժեներները, մտածելու ու գծագրերին նայելով, թե ինչպես պիտի անեն այս կամ այն բանը, Պյոտրն անհամբերությունից եղունգները կկրծոտեր, Ալեքսաշկան մեկնումեկի ուսի վրայից շուտասելուկով վրա կտար, որ հանկարծ չքշեն.

— Այ էսպես պիտի անել՝ դրանից հեշտ գո՞րծ:

— Օ-օ-օ-օ՛,— կասեին գեներալները:

Պյոտրի աչքերը կշողային.

— Մի՛շտ է:

Շտապ ինչ-որ բան պետք լիներ գտնել, Ալեքսաշկան փողը կվերցներ ու ձին հեծած կսլանար Մոսկվա՝ ցանկապատերի, բանջարանոցների միջով, ու կարծես գետնի տակից, հարկ եղածը կգտներ: Հետո հաշիվ ներկայացնելով Նիկիտա Զոտովին (որը Ռազմախաղի ատյանի կառավարիչն էր), ծանրումեծ հոգոց կհաներ, քիթը քաշելով, աչքերը ճպճպացնելով. «Ինչ-ինչ, բայց էստեղ մի գոռոշ խաբելու բան չկա...»:

— Ալեքսաշկա, Ալեքսաշկա,— գլուխը կտարուբերեր Զոտովը,— տեսնվա՞ծ բան է, որ եղևնու ճողանի հատին երեք ալտին տան: Ամենաբարձր գինը մեկ ալտինն է... Ա՛հ, Ալեքսաշկա:

— Որ շտապ չեղավ, մի ալտին է, բայց սրանք թանկ են, որովհետև շտապ էր: Զոռանները շուտ բերեցի, դա է թանկը՝ Պյոտր Ալեքսեևիչին սպասեցնել չտվեցինք...

— Օհ, քեզ մի օր կախելու են գողության համար:

— Տեր աստված, ի՞նչ եք ասում, իզուր տեղն ինչի՞ եք վիրավորում, Նիկիտա Մոիսեևիչ...— քիթ մոտքը շրջելով, կասպուտ աչքերից արցունք քամելով, Ալեքսաշկան կսկսեր խղճաբեր խոսքեր ասել:

Զոտովը մեկ-մեկ նրա վրա թափ կտար գրիչը.

— Դե լավ, գնա... Այս անգամ հավատացի, տե-ես, հա՞...

Ալեքսաշկային սպասյակ կարգեցին: Լեֆորտը գովեց նրան Պյոտրի առաջ. «Տղան հեռուն կգնա, շան պես հավատարիմ է, սատանայի պես խելացի»: Ալեքսաշկան մշտապես Լեֆորտի մոտ էր գնում՝ արվարձան, և ոչ մի անգամ առանց նվերի ետ չդարձավ: Նվեր շատ-շատ էր պիրում՝ ինչ էլ տային: Լեֆորտի կապիտաններն ու գլխարկներն էր կրում: Ռուսներից առաջինը նա կեղծամ պատվիրեց արվարձանում՝ հսկայական, կրակի պես դեղին: Տոն օրերին կեղծամով էր լինում: Քթատակն ու այտերը սափրում էր, դիմափոշի ցանում երեսին: Սպասավորներից ոմանք արդեն Ալեքսանդր Դանիլիչ էին ասում նրան:

Մի անգամ նա Պյոտրի մոտ բերեց լրջադեմ մի պատանու, որը մաքուր շապիկ էր հագել, նոր տրեխներ, կտավե շալվար.

— Մին խեղ,* (հիմա Ալեքսաշկան հանախ էր այդպես կոչում Պյոտրին), հրամայիր, որ թմբուկ զարկելու շնորհքը ցույց տա... Այլոշա, թմբուկը վերցրու...

Այլոշկա Բրովկինն, առանց շտապելու, գլխարկը ցած դրեց, սեղանի վրայից առավ թմբուկը, տրտում հայացքով առաստաղին նայեց ու զարկեց կարկտի պես՝ հավաք ու վերկաց խփեց, երթային քայլերգ, «վազքով, խոցիր, թրատիր, ուռա» և պարեղանակի ռիթմ զարկեց՝ այ քեզ բա՞ն: Արձանի պես կանգնած էր, միայն ձեռնաթաթերն ու փայտիկներն էին շարժվում, նույնիսկ չէին երևում:

Պյոտրը նետվեց դեպի նա, բռնեց ականջներից, գարմացած նայեց աչքերին, մի քանի անգամ համբուրեց.

— Առաջին վա՛շտը՝ թմբկահա՛ր...

Այդպիսով, գումարտակում ևս Ալեքսաշկան իր օգնական ձեռքն ունեցավ: Երբ օրերը կարճացան, գետինը բարակ սառցաշերտերով պատվեց, ցածրիկ ամպերից մանր ձնափոշի թափվեց, արվարձանում սկսվեցին պարահանդեսներն ու գարեջուր խմելու երեկույթները՝ երաժշտությամբ: Ալեքսաշկայի միջոցով օտարերկրացիները հրավիրատոմսեր էին ուղարկում Պյոտր ցարին. գեղեցիկ թղթի վրա այունակների և խաղողի որթերի շրջանակների մեջ նկարված էր լինում ցմփոր ու տկլոր մի մարդ՝ տակառին նստած, վերևից տկլոր մանկիկը նետ էր արձակում, ներքևում՝ ծերուկը կողքն էր դնում գերանդին: Մեջտեղում՝ ուկեգույն թանաքով գրված.

«Սրտագին ողջույնով կանչում ենք ձեզ մի գավաթ գարեջրի և պարերի», իսկ միայն գերմաններեն գլխատառերը կարդալիս, ստացվում էր «հեռու Պիտեր»:

Մութն ընկնելուն պես Ալեքսաշկան շքամուտքին էր մոտեցնում միաձի կառքը (Պյոտրը չէր սիրում ձի նստել, շատ էր երկարահասակ:) Երկուսով շարժվում էին Կուկույ: Մանապարհին Ալեքսաշկան ասում էր.

— Առավոտը մտա առաստերիա, մին խեղ, որ գարեջուր պատվիրեմ ձեր հրամանով, Աննա Իվանովնային տեսա... Խոսք տվեց այսօր անպայման լինել...

Պյոտրը, քիթը քաշելով, լռում էր: Անհավոր մի ուժ էր նրան ձգում այդ երեկույթներին: Թիթեղապատ անիվները դղրդում էին սառած անիվանների մեջ, խավարի մեջ հանապարհը չէր երևում, ամբարտակի վրա մերկացած ուռիներն էին խշշում ամեղաձայն: Եվ ահա՝ կանչող կրակները: Ալեքսաշկան, ուշադիր նայելով, ասում էր. «Զգույշ, ավելի ձախ, մին խեղ, թեքիր նրբանցք, էստեղով չենք անցնի...»: Տաք լույս էր հորդում հոլանդական ցածրիկ պատուհաններից: Շշաղույն ապակիների ետևում հսկայական կեղծամներ էին երևում: Կանանց հոլանի ուսերը: Երաժշտություն: Զույգեր էին պտտվում: Եռամոմ ու հայելակող աշտանակները ծիծաղելի ստվերներ էին գցում պատերի վրա:

Պյոտրը ուղղակի ներս չէր մտնում. ամեն անգամ մի տեսակ առանձնահատուկ չոքելով աչքերը՝ երկարահասակ, գունատ, փոքր բերանը սեղմած, հանկարծ հայտնվում էր շեմին... Դողացող ռուն-

*(Այսինքն՝ mein Herz) գերմ.— իմ սիրտ (ծան. Ա. Ն. Տոլստոյի): Հարմար գտանք անփոփոխ թողնել Մենշիկովի աղավաղած արտասանությունը՝ կոլորիտը պահպանելու նպատակով (Ա. Հ.)

գերով ներշնչում էր կանացի անուշ օծանելիքի, ծիածորնի ծիածխոտի և գարեջրի դուրեկան բույրերը:

— Պիտե՞ր,— բարձրաձայն բղավում էր տանտերը: Հյուրերը վեր էին թռչում, սրտաբաց մոտենալով, ձեռքները պարզած, կանայք խոնարհվում էին տարօրինակ պատանու՝ բարբարոսների ցարի առաջ, ջանադիր կնիքսենով ցույց տալով փարթամ, չոր սեղմիրանքներով վեր պրկած ստինքները: Բոլորը գիտեին, որ առաջին կոնյոդանին Պիտերը հրավիրելու է Անխեն Մոնսին: Ամեն անգամ աղջիկը բռնկվում էր բերկրալի անապասելիությունից: Օրըստօրե գեղեցկանում էր Անխենը: Նրա իսկական հասուն ժամանակն էր: Պյոտրը բավական գիտեր գերմաններեն ու հոլանդերեն, և Անխենն ուշադիր լսում էր նրա ընդհատ, մշտապես հապշտապ պատմությունները և խելամտորեն ընդմիջում նրան:

Երբ վիթխարի իրանները զնգացնելով, որևէ կտրիճ-հրացանակիր հրավիրում էր Անխենին, Պյոտրը խոժոռվում էր ամպի պես, կռանում աթոռակի վրա, աչքի տակով հետևելով, թե ինչպես են ծածանվում անհոգաբար պարող աղջկա փեշերը, շրջվում է խարտյաշ գլուխը, հրացանակրի կողմը թեքվում պարանոցը՝ ծայրին ոսկյա սիրտ կախած թավշյա ժապավենով եզերված:

Պյոտրի սիրտը ցավ էր բռնում՝ այնքան ցանկալի, անմատչելի գայթակղիչ էր աղջիկը:

Ալեքսաշկան պարում էր հարգարժան տիկնանց հետ, ովքեր տարիքի բերումով պարապ նստած էին լինում պատերի տակ. գեղեցկատես պատանին քրտինքի մեջ կորում էր: Ժամը տասի մոտ երիտասարդները հեռանում էին, անհետանում էր նաև Անխենը: Անվանի հյուրերը նստում էին ընթրիքի՝ արյունեփ երշիկ էին ուտում, խոզի լցոնած գլուխներ ու զարմանալի համով, կշտությունն բերող գետնախնձոր, որին կարտոֆիլ էին ասում... Պյոտրը շատ էր ուտում, գարեջրի խմում՝ թոթափելով սիրտ ընդարմացումը, բողկ էր կրծում, ծխում: Լուսադեմին Ալեքսաշկան նրան նստեցնում էր կառքը: Կրկին սուլում էր սառնաշունչ քամին անծայրածիր դաշտերում:

— Մի ջրաղաց ունենայի արվարձանում կամ էլ կաշվի արհեստանոց՝ Տիմերմանի պես... Լավ կլիներ...— ասում էր Պյոտրը, բռնելով կառքի երկաթյա կողը:

— Բան գտար նախանձելու... Պինդ բռնեք, սառ է:

— Հիմար... Տեսա՞ր, ոնց են ապրում: Մեզնից լավ...

— Ու էդ ժամանակ կպսակվեիք...

— Ջենդ կտրի, ատամներդ կփշրեմ...

— Համբերի տեսնենք... Էլի մոլորվեցինք...

— Վաղը մայրիկին պատասխան տուր... Լողանալու գնա, խոստովանության գնա, հաղորդվիր՝ պղծվել ես... Վաղը Մոսկվա է պետք գնալ՝ դրանից ավելի վատ բան չկա ինձ համար... Ուանոցը հագիր, օրվա կեսը ժամերգություն, մյուս կեսը զանգին նստիր եղբորդ հետ, Սոնկայից ցածր... Վանեչկա եղբորս քիթ ու բերանից էլ գեշ հոտ է գալիս: Բոյարական էդ քնկոտ մռութները, հո չէի՞ հաց-

նի պապոգով... Սուս մնա, դիմացիր... Ցա՜ր ես: Նրանք ինձ կմորթեն, գիտեմ...

— Իզուր տեղն եք էդպես մտածում, խմածությունից է...

— Սոնկան՝ օձի պես ենգ... Միլոսլավսկիները՝ անկշտում մորեխ... Նրանց թրերն ու նիզակները չեմ մոռանա... Ուզում էին ինձ շքամուտքից ցած գցել, մեկ էլ ժողովուրդն էր բարձր գոռում... Հիշո՞ւմ ես:

— Հիշում եմ:

— Վասկա Գոլիցինը մի անգամ զորքը տափաստանում կործանեց, հրաման են տվել երկրորդ անգամ գնալ Ղրիմի վրա... Սոնկան ու Միլոսլավսկիներն անհամբեր սպասում են, թե նա երբ է զորքի հետ վերադառնալու... Հարյուր հազար մարդ ունեն... Իմ վրա քսի կտան, զանգերը կլսվեն...

— Պրնչբուրգում կպաշտպանվենք...

— Մի անգամ արդեն ինձ թույն տվել են... Դաշունավոր մեկին էին ուղարկել:— Պյոտրը վեր թռավ, չորս կողմը նայելով: Խավար էր, ոչ մի կրակ չէր երևում: Ալեքսաշկան բռնեց նրա գոտուց, նրատերբեց:— Անիծվածնե՞ր, անիծվածնե՞ր:

— Փը՜ոոռ... Ես էլ ասում եմ՝ էս ամբարտակն ուր է:— Ալեքսաշկան շրմփացրեց երասանաններով: Ծվվացին ուտենու ճյուղերը: Ջին լավն էր, ելավ գառիվերը: Պրեոբրաժենսկոյեի կրակները երևացին:— Մին խեղ, հիմի ստրելեցներին զանգ զարկելով ոտի հանել չի լինի, էն ժամանակներն անցել են, ում կուզես հարցրու, Ալյոշկա Բրովկինին հարցրու, նա լինում է արվարձաններում... Նրանք ձեր քրոջից էլ շատ մի գոհ չեն...

— Բոլորիդ գրողի ծոցը կուղարկեմ, կփախչեմ Հոլանդիա, ավելի դալ է, ժամացործ դառնամ...

Ալեքսաշկան տուլեց:

— Ու ակամջներդ կտեսնես Աննա Իվանովնայի փոխարեն...

Պյոտրը կռացավ ծնկների վրա: Հանկարծ հազաց ու ծիծաղեց:

Զվարթ քրքջաց Ալեքսաշկան, շրմփացրեց ձիու գավակին.

— Էս է, մայրիկը ձեզ կպսակի... Ով չգիտի, որ պսակված մարդն իր գլխի տերն է... Քիչ է մնացել, համբերեք... Էհ, մի բան է վատ, որ նա գերմանացի է, լյութերական... Թե չէ ավելի հեշտ ու լավ ինչ կար... Հը՞...

Պյոտրը մոտ նստեց նրան, ցրտից դողացող շրթունքներով, մթության մեջ ջանաց Ալեքսաշկայի աչքերը տեսնել...

— Իսկ ինչի՞ չի կարելի:

— Այ թե բան ուզեցիր: Աննա Իվանովնան՝ թագուհի՞: Էն ժամանակ զանգերը հատատ կզարկեն...

5.

Անխենի գայթակղիչ փեշերը միայն կիրակի օրերն էին փռիր-ռում՝ շաբաթը մի անգամ էին խմում և ուրախանում: Երկուշաբթի կուկուլցիները դնում էին գործած գդակները, հագնում մգդական ժիլետներն ու աշխատում էին մեղվի պես: Մեծ հարգանք ունեին աշխատանքի նկատմամբ՝ վանատական լիներ, թե հասարակ արհեստավոր: «Նա իր հացն ազնվորեն է վաստակում»,— ասում էին, մատները հարգանքով վեր տնկելով:

Երկուշաբթի, լույսը դեռ չբացված, Ալեքսաշկան արթնացրեց Պյոտրին ու զեկուցեց, որ արդեն եկել են Կարտեն Բրանդտը, վարպետներն ու ենթավարպետները: Պրեոբրաժենսկոյեի սրահներից մեկը նավաշինական արհեստանոց էին սարքել: Կարտեն Բրանդտը ամստերդամյան գծագրերով նավերի մոդելներ էր պատրաստում: Գերմանացի վարպետներն ու աշկերտ ենթավարպետները, որոնց հրամանով առանձնացրել էին մերձավոր պալատականներից ու ռազմափայտի առալել աչքաբաց զինվորներից, ռանդում էին, չարխում հավաքում ու ձուլում էին թիանավերի և առագաստանավերի ոչ մեծ մոդելներ, սարքերը տեղադրում, առագաստ կարում, գարդարանք տաշում: Հենց այդտեղ էլ ռուսները թվաբանություն և երկրաչափություն էին սովորում:

Թխկթխկոց, շուկայավայել հնչող բարձր ձայներ, երգ, Պյոտրի հնչեղ քրքջոցը տարածվում էին քնեած պալատում: Պառավները վախից քարացել էին: Թագուհի Նատալյա Կիրիլովնան, լռություն փնտրելով, տեղափոխվեց հեռավոր ծայրը, կողաշենք, և այնտեղ՝ խնկի ծխով պարուրված, հրագների ցոլքումի ներքո շարունակ մտածում, աղոթում էր Պյոտրի համար:

Հավատարիմ կանանցից իմանում էր այն ամենն, ինչ կատարվում էր Կրեմլում. «Հինգշաբթի օրը Սոնկան նորից ձուկ խժռեց, չի վախենում մեղքից... Աստրախանից սաձեանոց թառափներ էին բերել իրեն: Ու գոնե մի փոքրն էլ քեզ ուղարկեր, տիրուհի... Ագահացել է, ծառաներին սված է պահում...»: Պատմում էին, որ Վասիլի Վասիլևիչի կարտից, Սոֆյան մոտն է տարել մի ուսումնական վանականի՝ Սիլվեստր Մեդվեդևին, ու սա ոնց որ և՛ գալանտ է, և՛ աստղաբաշխ՝ մեռաքս փարաշայով է մաև գալիս, ալմաստե խաչով, մատներին մատանիներ կան, մորուքը կարմացնում է, ասում են՝ սեփ-սև է մորուքը, լավ էլ հոտ է գալիս վրայից: Ինչ ծամի ապես, մտնում է Սոնկայի մոտ, ու երկուսով զբաղվում են հմայություններով: Սիլվեստրը ելնում է լուսամուտի վրա, խողովակով նայում է աստղերին, նշաններ է գծում և մատը բթին դրած, կարդում է դրանցով, իսկ Սոնկան կրծքով ընկնում է վրան ու մի գլուխ հարցնում. «Հը՞, ի՞նչ կա, հը՞, ի՞նչ կա»... Երեկ տեսել են, որ տոպրակի մեջ մարդու անմիս-անկաշի ոտնաթաթ է բերել, ոսկորներ ու արմտիք, երեք մոմ է վառել, կախարդական խոսքեր ասել ու մոմի վրա վառել ինչ-որ մեկի մազերը... Սոնկան ցնցվելիս է եղել, աչքերը չուռած, մեռելի պես կապտած նստած...

Նատալյա Կիրիլովնան, մատները կոտրատելով, թեքվեց պատմողի կողմն ու շշնջաձայն հարցրեց.

— Բայց ո՞ւմ մազերն է վառել: Հո թուխ չե՞ն եղել:

— Թուխ են եղել, մայր թագուհի, թուխ, աստված վկա...

— Գանգո՞ւր:

— Հա, գանգուր... Ու բոլորս մտածում ենք, չլինի՞ մեր տեր Պյոտր Ալեքսեևիչի մազերն է վառել...

Սիլվեստր Մեդվեդևի մասին պատմում էին, որ հացապաշտ հերձվածողություն է սովորեցնում նա, ինչը գալիս է հանգուցյալ Սիմեոն Պոլոցկուց և ճիզվիտներից: Գրել է «Մանանա» գիրքը, ուր նատում և փիլիսոփայում է, իբր ոչ թե «եղիցի» և այլն բառերն ասելիս, այլ միայն «ճաշակեսցուք» խոսքի հետ է Հաղորդությունը գոյափոխվում: Մոսկվայում հիմա մենակ հացի շուրջ են խոսում ու վիճում՝ հարուստ, թե աղքատ, պալատներում, թե շուկաներում. ո՞ր խոսքի հետ է գոյափոխվում: Գլուխները կորցրել են, չգիտեն, ինչպես աղոթեն, որ ժամանակին նպաստեն գոյափոխմանը: Եվ շատերը դրանից աղանդավոր են դառնում...

Մոսկվայում թափառում է շիկահեր տերտեր Ֆիլկան ու երբ շուրջը մարդիկ են հավաքվում, խոսում է մոլեգնած. «Ինձ աստված է ուղարկել ձեզ ճշմարիտ հավատք սովորեցնելու, Պողոս ու Պետրոս առաքյալներն իմ ազգականներն են... Որպեսզի դուք երկու մատով խաչակնքեք, ոչ թե երեք, երեք մատի մեջ Կիկա-դևն է նստած, հայհոյանշան է սույնը, դրա մեջ է ամբողջ գեհենը՝ հայհոյանշանով եք խաչակնքում...»: Շատերը տեղնուտեղը հավատում են նրան և մոլորության մեջ ընկնում: Ոչ մի խորամանկությամբ նրան բռնել չի լինում:

Ղրիմի արշավանքի տուրքերից բոլորն աղքատացել էին: Ասում էին՝ երկրորդ արշավանքի համար յոթ տակ կաշի են մաշկելու: Արվարձաններն ու պոսադներն ամայանում էին: Ժողովուրդը հազարներով փախչում էր աղանդավորների մոտ՝ Ուրալյան լեռներից դենը, Պոմորյե, Պովոլժե ու Դոն: Եվ նրանք՝ աղանդավորները, ճերմին էին ապասում, ու կային մարդիկ, որ տեսել էին նեռին: Գոնե հոգիները փրկելու համար աղանդավոր քարոզիչները շրջում էին գյուղերն ու խուտորները և ժողովրդին հանդգնում կենդանի-կենդանի ինքնակիզվել խրճանոցներում ու բաղնիքներում: Բղավում էին, թե ցարն էլ, պատրիարքն էլ, ամբողջ հոգևորականությունն էլ նեռի ուղարկածներն են: Փակվում էին մենաստաններում և կռվում բանտարգել անելու եկած ցարական զորքի դեմ: Պալեոստրովսկի մենաստանում աղանդավորները երկու հարյուր ստրելց էին սպանել, իսկ երբ ուժասպառ էին եղել, եկեղեցում փակվել ու ինքնակիզվել էին: Խվալինսկու մատույցներում, սարերում, երեսուն աղանդավոր խրճանոցում պաշտպանվել էին ցաքանների, ապա նույնպես ինքնակիզվել: Նիժնիի տակ, անտառներում, նույնպես մարդիկ էին վառվում փայտաշեն խրճիթներում: Դոնում, Մեդվեդիցա գետի վրա,

փափաստական Կուզման, ինքն իրեն պապ հռչակած, արեգակն է խաչակնքում ու ասում. «Մեր տեր ապտվածը երկնքում է, երկրիս երեսին աստված չի մնացել, երկրի վրա նեռն է հիմա՝ ցարը, պատրիարքն ու բոյարները՝ նրա ծառաները...»: Կազակները խրմբվում են նրա շուրջն ու հավատում... Ամբողջ Դոնը ցնցումների մեջ է:

Նման խոսակցություններից Նատալյա Կիրիլովնան մահու չափ սարսափում էր: Պետենկան զվարճանում է, խաղեր խաղում, անտեղյակ, թե ինչ խավար է կուտակվում իր խեղճ գլխին: Ժողովուրդը մոռացել է հնազանդություն ու վախ... Ոչ-ոչ կրակն են նետվում, սարսափելի չէ՝ արդյոք այդպիսի ժողովուրդը:

Զարգանդում էր Նատալյա Կիրիլովնան, հիշելով Ստենկա Ռազինի խոսվությունը... Կարծես երեկ էր... Այն ժամանակ էլ էին նեռին սպասում, Ստենկայի ատամանները երկու մատով էին խաչակնքում: Ծվարած նայում էր Նատալյա Կիրիլովնան գունավոր լապտերների կրակներին, տնքոցով ծնկի գալիս ու երկար-երկար ճակատը խփում մաշված ու պատիկ գորգին...

Մտածում էր՝ «Պետրուշային պապակել է պետք՝ երկարել, տեղ չի գտնում, խմում է, միշտ գերմանուհիների հետ, միշտ անատակների հետ... Կպպակվի, կխաղաղվի... Նրա հետ, ջահել թագուհու հետ կգնայի մենաստանները, աստծուց երջանկություն կխնդրեի, Սոնկայի հմայություններից դարման կխնդրեի, ժողովրդի կատաղությունից՝ ուժ...»:

Պապակել, պապակել էր պետք Պետրուշային: Առաջ, որ մերձավոր բոյարները մեկ-մեկ կգային, գոնե մի ժամ նրանց հետ կնստեր հոր գահին, խունացած Խաչաձև պալատում: Իսկ հիմա ինչ ասեմ՝ «Ժամանակ չունեմ...»: Խաչաձև պալատում երկու հարյուր դուլլանոց աման են դրել՝ նավակներ են քշում, փուքսերով փչում առագաստներին, փոքր թնդանոթներից իսկական վառոդով կրակում: Գահը վառել են, պատուհանը ջարդել:

Թագուհին գանգատվում էր կրտսեր եղբորը՝ Լև Կիրիլովիչին: Սա էլ վհատված հոգոց էր հանում. «Ինչ ասեմ, քույրիկս, պապիր, ավելի վատ չի լինի... Օկոլնիչի Լոպուխինի, Լարիոնի աղջիկը՝ Եվդոկիան, մարդու տալու է, իսկը հասած ժամանակն է, տասնվեց տարեկան... Լոպուխինները ճոճղան մարդիկ են, մեծ տոհմ են, քայքայված... Շան պես կլինեն ձեռքիդ տակ...»:

Սահնակի առաջին իսկ ճամփով Նատալյա Կիրիլովնան Նովոդևիչյե մենաստան մեկնեց՝ իբր ուխտագնացության: Հավատարիմ մի կնոջ միջոցով Լոպուխիններին հասկացնել տվեցին: Սրանց բազմամարդ տոհմը, մի քառասուն մարդ, շտապեցին մենաստան, մի եկեղեցի տեղ բռնեցին. բոլորը չքավոր, չարացած, կարճկիկ, աչքերով բոլորն ուտում էին թագուհուն: Ծածկած սահնակով, մեծ հոգածությամբ բերել էին վախից կիսամեռ Եվդոկիային: Նատալյա Կիրիլովնան թույլ տվեց, որ ձեռքը համբուրի: Զննեց: Տարավ զգեցարան ու այնտեղ , աղջկա հետ մենակ մնալով, գաղտնի տնտղեց

ոտից գլուխ: Աղջիկը դուրը եկավ: Այդ անգամ ոչինչ չխոսվեց: Նատալյա Կիրիլովնան ետ գնաց, Լոպուխինների աչքերը կրակվում էին...

Վիշտ ու վհատության մեջ մի ուրախություն եղավ. Վասիլի Վասիլևիչի հորեղբոր տղան՝ իշխան Բորիս Ալեքսեևիչ Գոլիցինը, դրիմյան զորքի մոտից, Պոլտավայի մատույցներից եկավ կառավարչուհու ծննդյան տարեդարձի օրը և ցերեկվա ժամերգությանը Ռասպենսկի տաճարում ուստիկ հարբած կանգնեց Սոֆյայի աչքի առաջ, իսկ հետո սեղանի շուրջ վարկաբեկեց Վասիլի Վասիլևիչին. «Մեզ խայտառակ արեց-թողեց Եվրոպայի առաջ, նա զորք չպիտի կառավարի, այլ՝ մի տեղ նստի ու իր երջանիկ մտքերը գրի առնի», մերձավոր բոյարներին հայհոյում ու կշտամբում էր, որ «փորով եք մտածում, ճարպակալել մնացել եք, Ռուսաստանին հիմա մերկ ձեռքերով ով ասես կհաղթի»... Եվ այդ օրից հանախակի էր լինում Պրեոբրաժենսկոյեում:

Նայելով Պրեշբուրգի կառուցվածքին, պրեոբրաժենցիների և սեմյոնովցիների զորավարժություններին, Բորիս Ալեքսեևիչը միտ բոյարների պես գլուխը չճոճեց քմծիծաղ տալով, այլ հետաքրքրվեց, գովեց: Նավաշինական արհեստանոցը զննելուց հետո ասաց Պյոտրին.

— Ակցիումում հոռմեացիները ծովահենների նավերը գրավեցին, պակայն չգիտեին ինչ անել՝ պղնձյա քթերը կտրեցին, դրեցին ռոստրաների, այն է՝ այուների գլխին: Միայն երբ սովորեցին իրենք նավեր պատրաստել ու սարքավորել, նվաճեցին ծովերը, հետո ամբողջ աշխարհը:

Նա երկար խոսեց Կարտեն Բրանդտի հետ, փորձելով նրա գիտելիքները և խորհուրդ տվեց ռազմախաղի նավաշինարան կառուցել Պերեյասլավկոյե լճի վրա, Մոսկվայից հարյուր քսան վերստ հեռու: Արհեստանոց ուղարկեց մի սայլ լատիներեն գրքեր, գծագրեր, պղնձատիպ թերթեր, նկարներ, որ պատկերում էին հոլանդական քաղաքներ, նավաշինարաններ, նավեր ու ծովամարտ: Գրքերը թարգմանելու համար Պյոտրին նվիրեց ուսյալ թխամորթ գաճաճ Աբրահամին, Թոմասա ու Սեկա ընկերների հետ՝ նույնպես գաճաճներ էին, մեկը տասներկու, մյուսը տասներեք ու քառորդ վերշոկ հասակով, արտառոց, կարճիկ կաֆտաններ հագած, սիրամարգի փետուրով չալմաները գլխներին:

Բորիս Ալեքսեևիչը հարուստ էր և ուժեղ, առանձնահատուկ սուր խելք ուներ, ուսյալությամբ չէր զիջում հորեղբորորդուն, բայց բնավորությամբ անգուսպ էր՝ խմելիս, և ամենից շատ զվարճանք էր սիրում, ուրախ միջավայր: Նատալյա Կիրիլովնան սկզբում վախենում էր նրանից՝ Սոֆյայի ուղարկած մարդը չէ՞ արդյոք: Հանուն ինչի՞ այդ երեսի մեծատոհմիկը ուժեղներից թույլերի կողմը պիտի անցներ: Բայց օրը օրի վրա Պրեոբրաժենսկոյեի բակում դղրդում էր քառաձի լայնատարած կառքը, զարգանդելի երկու հաբեշ՝ ետնամասին կանգնած: Բորիս Ալեքսեևիչը առաջին հերթին թագուհու

ձեռքն էր համբուրում՝ կարմրաթուշ, խոշորաքիթ, աչքերի տակ ուռած տոպրակները դողացնելով, բեխերը վեր ոլորած, խուզած ու մազաթափ մորուքից մշկաթույր տարածելով: Նրա առամներին նայելիս մարդու ծիծաղ էր գալիս՝ այնքան ներմակ էին ու ջվարթ...

— Ինչպե՞ս եք բարեհաճել ինձել, թագուհի: Նորից Միեղջյուր չե՞ք տեսել երազում: Ես էլ շարունակ ձեզ մոտ եմ գալիս... Ձանձրացրել եմ, ներող եղիր...

— Բավական է, տպավելիս, միշտ ուրախ ենք տեսնել... Մոսկվայում ի՞նչ կա, ի՞նչ չկա:

— Տխուր է, թագուհի, ինչքան տխուր է Կրեմլում... Ամբողջ պալատը սարդոստայնով է պատել...

— Ի՞նչ ես ասում: Վերջ տուր...

— Բոլոր պալատներում բոյարները, թախտերին նստած, ննջում են... Ձանձրու-ո՞ւյթ... Գործերը վա-ա՜տ են, ոչ ոք չի-ի՜ հարգում... Կառավարչուհին երեք օր է դուրս չի եկել, փակվել է... Գնացի, որ Իվան ցարի ձեռքը համբուրեմ, նորին արքայական մեծությունը պատկած էր աղվեսի մուշտակով, վալենկաներով, մի տեսակ թախծոտած: «Ի՞նչ է, Բորիս, տխո՞ւր է մեզ մոտ,— ասաց ինձ:— Քանին սուլում է ծխնելուղների մեջ, վախենալի է: Ի՞նչ է լինելու, հը՞...»:

Նատալյա Կիրիլովնան վերջապես կուռեց, որ շարունակ կատակում է: Ծամփրեց հայացքով, ծիծաղեց...

— Մենակ ձեզ մոտ եմ մի քիչ առույգանում, թագուհի... Լավ տղա ես ծնել, բոլորից խելոքն է դուրս գալու, ժամանակ տուր... Սուր աչք ունի...

Նրա գնալուց հետո Նատալյա Կիրիլովնայի աչքերը երկար ժամանակ փայլում էին: Հուզախառով գնում-գալիս էր ննջարանում, միտք անում: Այդպես անկերջանալի անձրևի միջից հանկարծ ամպերի տակից բարձրիկ կապույտն է երևում, արևը շողում: Ուրեմն, գահը երերում է Սոնկայի տակ, եթե այդպիսի արծիվները հեռանում են...

Պյոտրը սիրեց Բորիս Ալեքսեևիչին. հանդիպելիս շրթունքներն էր համբուրում, խորհուրդներ հարցնում, դրամ խնդրում, և իշխանը ոչինչ չէր մերժում: Պյոտրին իր գեներալների, վարպետների, պպասյակների ու զանանների հետ հանախ էր տանում Կուկույ՝ խնջույքի և զվարճանքի, արտակարգ ուրախություններ հորինելով: Քանիցս գինովցած վեր էր ցատկում, մի հոնքը կախ, մյուսը վեր թոցրած, առամները փայլեցնելով, քիթը կարմրած... Ու Վիրգիլիոս էր կարդում լատիներեն.

«Փառաբանենք աստվածներին, որոնք գավերն են գինով լեցնում, սրտերն՝ ուրախությամբ, հոգին՝ անուշ սնունդով...»:

Պյոտրը հմայված նրան էր նայում: Դրսում քամին էր վայում, հազարավերայ հարթավայրերից, անտառների ու ճահիճների խորքերից արձակված՝ անծխնելուղ խրճիթի ծղոտը այդելով, հարբած մուժիկին ձնաթմբի մեջ գլորելով կամ ծուլած զանգակատան սառած զանգը զնգացնելով... Իսկ այստեղ՝ զզզված կեղծամներ, կարմրատակած դեմքեր, երկար ծիամորճներից ծուխն էր հորդում, ճարճատում էին մոմերը: Աղմուկ-աղաղակ: Ուրախություն...

— Գինովցած սինկոպիտոսը անխախտ թող լինի:— Պյոտրը հրամայեց Նիկիտա Զոտովին հրամանագիր գրել. «Այսօրվանից բոլոր հարբեցողներն ու խենթերը թող հավաքվեն կիրակի օրերը, խմբովի փառաբանելու հունական աստվածներին»: Լեֆորտն առաջարկեց իր տանը հավաքվել: Այդպես էլ ծայր առավ... Զոտովին, որ ամենաթունդ խմողն էր, արքեհովվի կոչում շնորհվեց, շղթայով տափաշիշը վզից կախեցին: Ալեքսաշկային՝ մերկ ու խայտառակ, նստեցնում էին գարնջրի տակառի վրա, ու նա այնպիսի երգեր էր երգում, որ բոլորը կոտորվում էին ծիծաղից:

Այդ հավաքույթների լուրը Մոսկվա հասավ: Բոյարները վախեցած փսփսացին. «Կուկույում անիծված գերմանացիները ցարին վերջնականապես հարբեցող են դարձրել, սրբապղծություն ու սատանայություններ են անում»: Պրեոբրաժենսկոյե եկավ իշխան Պրիիմկով-Ռոստովսկին՝ ջերմեռանդ մի ծերուկ, խոր գլուխ տվեց Պյոտրին ու մի ժամվա չափ խոսում էր՝ ճոռ ու ճոռում, հին սալոնքերեն, թե ինչպես հարկ է պահպանել բյուզանդական բարեկերպությունն ու բարեպաշտությունը, որով միայն կանգուն է Ռուսաստանը: Պյոտրը լուռ լսում էր (ճաշասրահում Ալեքսաշկայի հետ շախմատ էր խաղում մթնշաղին): Հետո դեմ հրեց խաղատախտակն ու գնաց-եկավ, եղունգը կրծելով: Իշխանը շարունակում էր խոսել, ծանր մուշտակի թևքերը վեր պարզելով՝ սրամորուս, չորչորուկ... Մարդ չէր, այլ ձանձրացուցիչ մի ուրու, ատամնացավ, վհատություն: Պյոտրը հանկվեց Ալեքսաշկայի ականջին, այս փոթկացրեց կատվի պես, ատամները բացած հեռացավ: Շուտով սահնակատը մատուցեցին, և Պյոտրը հրամայեց իշխանին սահնակ նստել՝ նրան տարավ Լեֆորտի մոտ:

Սեղանի շուրջ, բարձր աթոռին նստած էր Նիկիտա Զոտովը՝ թղթյա թագով, ձեռքին ծխափող ու սագի ձու բռնած: Առանց ծիծաղելու, Պյոտրը գլուխ խոնարհեց նրան ու խնդրեց օրհնել, և արքեհովիվը ծխափողով ու ձվով խմելու օրհնանք տվեց նրան: Այդժամ բոլորը (քսան հոգի կլինեին) ոնգային ձայներով երմոսներ երգեցին: Իշխան Պրիիմկով-Ռոստովսկին, ցարի առաջ անկրթություն ցուցաբերելուց վախեցած, գաղտնի խաչակնքեց մուշտակի տակից, գողունի թքեց երեք անգամ: Իսկ երբ տակառի վրա եկավ մերկանդամ մի մարդ՝ գավաթը ձեռքին, և համայն Մեծ ու Փոքր և այլն ցարն ու մեծն իշխանը աներեղաձայն բարբառեց, թե «Սույնը աստվածն է մեր՝ Բաքոսը, ում երկրպագենք», մեռել դարձավ իշխան Պրիիմկով-Ռոստովսկին, երերաց նստած տեղում: Ուշքը կորցրած ծերուկին տարան, սահնակ նստեցրին:

Այդ օրվանից Պյոտրը կարգադրեց Զոտովին կոչել համախմբության պապ, Բաքոս աստծու արքեքուրմ, իսկ Լեֆորտի տան հավաքույթները՝ խելառագույն և ամենագինովության ժողովներ:

Այդ լուրերը նաև Սոֆյային հասան: Զայրույթի պահին Պյոտրի հետ խոսելու ուղարկեց մերձավոր բոյար Ֆյոդոր Յուրևիչ Ռոմոդանովսկուն: Պրեոբրաժենսկոյեից վերջինս մտախոհ ետ եկավ:

Զեկույց տվեց կառավարչուհուն.

— Խելառություն ու զվարճություն շատ կա այնտեղ, բայց գործ էլ կա շատ... Պրեոբրաժենսկում քնած չեն...

Ատելություն ու տարտամ վախ պարուրեց Սոֆյայի սիրտը: Անհավասի՛կ, չհասցրեցին ետ նայել՝ գայլամուտը մեծացավ...

6.

Պոլտավայից անսպասելիորեն ժամանեց Վասիլի Վասիլևիչը: Լույսը դեռ նոր էր բացվում, իսկ պալատական նախասենյակում ու միջանցքներում ասեղ գցելու տեղ չկար: Փեթակի պես բզզում էր պալատը: Սոֆյան չէր քնել գիշերը: Ուսկեկար, մարգարտացանցով պատված զգեստը մի փթից ավելի կլիներ, սուտակով, զմրուխտ ու պլմաստով ծածկված ուսնոցը, մանյակը, ոսկե շղթան ճնշում էին ուսերը: Նստել էր պատուհանի մոտ, շրթունքները սեղմած, որ չդողան: Վերկան՝ հավատարիմ աղախիններից մեկը, փչում էր սառած ապակուն.

— Տիրուհիս, հոգիս, գալիս է:

Բռնեց արքայադստեր արմունկից, ու Սոֆյան դուրս նայեց. գիշերը նստած ձյան վրայով, Նիկոլսկիյե դարպասից, լայն վարգով գալիս էր մոխրագույն, խալավոր ձիերի վեցնյակը, գլխներին՝ փետրափնջեր, թավշյա շլնոցներին՝ զարդարուն ու գետնահասս ծոփքեր, ձիերի առջևից սպիտակ կաֆտաններով ճեպագնացներն էին վազում, բղավելով. «Ծնկի՛, ծնկի՛»: Ցածրիկ, դիպակապատ ծածկասահնակների դռների կողքով պանում էին երկաթազրահ, կարճ այծենականներով սպաներ: Կանգ առան Գլխադռան մուտքի մոտ: Ազնվականները, նեղվածքից միմյանց կողերը հրմշտելով, դուրս պրծան օգնելու իշխանին, որ իջնի...

Կառավարչուհու աչքերը ճակատը թռան: Վերկան նորից բռնեց նրան՝ «Ինչքա՞ն է կարոտել խեղճը»: Սոֆյան խոպոտածայն ասաց.

— Վերկա, Մոնոմախի գլխարկը տուր:

Վասիլի Վասիլևիչին նա տեսավ միայն Նստատաշ պալատում գահին նստելիս: Բազմաճյուղ ջահերի մեջ մոմեր էին վառվում: Բոյարները նստարաններին էին նստած: Իշխանը կանգնած էր, ճոխ հագնված, բայց ամբողջովին ասես ցեցակեր՝ բեխ մորուսը երկարել էր, աչքերը փոս էին ընկել, դեմքը դեղնավուն էր, նոսր մազերը սղալված էին գլխին...

Սոֆյան հազիվ զապեց արցունքը: Բռնակից պոկեց գիրուկ, դաստակը թանձրով ամուր օղակված տաք ձեռքը: Ծնկի գալով, իշխանը համբուրեց, փշփշուն շրթունքները հպելով ձեռքին: Սոֆյան ուրիշ բան էր սպասում և ցնցվեց, ասես փորձանք կանխազգալով...

— Ուրախ ենք քեզ տեսնել, իշխան Վասիլի Վասիլևիչ: Ուզում ենք ողջությունդ իմանալ...— Թեթևակի հազաց, որ ձայնը խոպոտ չինչի:— Ողորմա՞ծ է արդյոք աստված մեր գործերի համար, որ քեզ ենք վստահել...

Զկնատամով զարդարված հորական գահին նա նստած էր ուսկեզգեստ, գեր ու շպարված: Չորս զինակիր, ըստ օրինաց՝ խոնարհ ու անմիտ, ճերմակազգեստ, սամույրե գդակներով չորս պատանյակ, կանգնած էին ետևում, արծաթյա փոքրիկ տապարներ բռնած: Երկու կողմից բոյարները, ինչպես սրբերը դրախտում, եզերում էին գահի՝ եռաստիճան, ալ կարմիր մահուդով ծածկված պատվանդանը: Ամեն ինչ կատարվում էր վեհաշուք, բյուզանդական կայսրների հնօրյա կարգով: Վասիլի Վասիլևիչը լսում էր, մի ծունկը ծալած, գլուխը կախ, ձեռքերը տարածած...

Սոֆյան վերջացրեց: Վասիլի Վասիլևիչը վեր կացավ ու շնորհակալություն հայտնեց բարեողորմ խոսքերի համար: Դումայական երկու ծանրումեծ պրիստավ ծալովի աթոռ մատուցեցին նրան: Բանը հասավ գլխավորին՝ ինչի համար եկել էր: Վասիլի Վասիլևիչը քննող ու անվստահ հայացքը գցեց ծանոթ դեմքերի շարքերին՝ սրբապատկերների պես սքված, պղնձի պես կարմիր, չարացած, ծուլությունից ուռած դեմքեր, խոժոռ ճակատներ—ձգվել ու սպասում էին, թե ինչ է ասելու իշխան Գոլիցինը, ձեռքը մեկնելով իրենց քսակներին... Վասիլի Վասիլևիչը խոսքը հեռուներից սկսեց... «Ես՝ մեծն արքաների, ցարերիդ, մեծն իշխանների ու այլոց ստրուկն ու ծառան, գլուխ եմ խոնարհում մեծն արքաներիդ առաջ, որ դուք, մեծն տիրակալներ, ինձ՝ ձեր ծառա Վասիլիին ու մյուսներին ձեր մեծ ողորմածությունն առաջվա պես հետայսու նույնպես շնորհեք և հրաման տաք ամենասուրբ անարատ աստվածամայր, բարեգութ տիրուհի և հանապազ կույս Մարիամի սրբապատկերը Դոնի մենաստանից ձեր թագավորական անպարտելի ու հաղթական զորքի մոտ ուղարկեն, որպեսզի անարատ աստվածամայրն ինքն առաջնորդ լինի գնդերին, ու բոլոր փորձանքներից հեռու պահի և փառապսակեն հաղթություններ ու անօրինակ նվաճումներ բերի ձեր թշնամյաց վրա...»:

Երկար խոսեց: Հեղձուկից, բոյարների քրտնահոտից մշուշ էր կանգնած հալիլող մոմերի ցոլցլումների մեջ: Դոնի աստվածամոր մասին ասելիքն ավարտեց: Հանուն կարգի մտածելուց հետո բոյարները վեհեցին՝ ուղարկե՛լ: Թեթևացած շունչ քաշեցին: Այդժամ Վասիլի Վասիլևիչը հապտապտաձայն խոսեց գլխավորի մասին. զորքին երեք ամիս ոռճիկ չեն տվել: Օտարերկրյա սպաները, օրինակի համար գնդապետ Պատրիկ Գորդոնը, նեղանում են, շպրտում են պղնձյա դրամը, խնդրում արծաթյա դրամով վճարել, ծայրահեղ դեպքում թեկուզ սամույրի մորթիով... Մարդկանց շոր ու կոշիկը մաշվել է, վալենկա չկա, ամբողջ զորքը տրեխներով է, այն էլ՝ ոչ բոլորը... Այնինչ, փետրվարի սկզբից արշավի են ելնելու... Նորից խայտառակ չլինենք:

— Ինչքա՞ն դրամ ևս խնդրում մեզնից,— հարցրեց Սոֆյան:

— Հինգ հարյուր հազար՝ արծաթով ու ոսկով:

Բոյարները տնքացին: Մի քանիսի ձեռնափայտերն ու գավազանները ցած ընկան: Աղմուկ բարձրացավ: Վեր ցատկելով, թնքերը կողերին էին խփում՝ «Վա՛յ մեզ...»: Վասիլի Վասիլևիչը նայում էր Սոֆյային, ու վերջինս վառվող հայացքով էր պատասխանում: Վասիլի Վասիլևիչն ավելի համարձակ խոսեց.

— Վարշավայից երկու վանական ճիզվիտներ եկան մոտս՝ բանակատեղ: Պահպանագիր ունեին ֆրանսիական թագավորից, որ հավատամ իրենց: Մեծ գործ են առաջարկում: Ձեզ (տեղից բարձրանալով, խոնարհվեց Սոֆյային), լուսապայծառ արքաներիդ, այդ գործից քիչ օգուտ չի գա... Այսպես են ասում՝ ծովերի վրա հիմա շատ ավազակներ կան, ֆրանսիական նավերի համար աշխարհով շրջելը վտանգավոր է, շատ ապրանք է կորչում զուր տեղը: Իսկ ռուսական հողի վրայով արևելք տանող ճանապարհը ուղիղ է և դյուրին՝ թե դեպի Պարսկաստան, թե Հնդկաստան, թե Չինաստան: Միևնույն է, արտահանելու ապրանք-բան չունեք, ձեր մոսկովյան վաճառականները փողազուրկ են: Իսկ ֆրանսիական վաճառականները՝ հարուստ: Ու փոխանակ առանց օգուտ քաղելու պահպանեք սահմանները, թողեք մեր վաճառականները Սիբիր մտնեն ու ավելի հեռուները՝ ուր կամենան: Նրանք ճանապարհներ էլ կգտնեն ճահճուտներում, վերստացույց սյուներ էլ կտնկեն, իջևանատներ ու յամաներ էլ կարքեն: Սիբիրում մորթեղենը կգնեն, ոսկով կվճարեն, եթե հանքեր գտան, հանքային գործին էլ ընթացք կտան:

Ծեր իշխան Պրիիմակով-Ռոստովսկին, չկարողանալով դիմանալ, ընդհատեց Վասիլի Վասիլևիչին.

— Մեր կուկուլցի հերետիկոսներից չենք իմանում ուր փախչենք, իսկ դու մեր վզին օտարների ես փաթաթում... Վե՜րջ ուղղափառությանը:

— Հազիվհազ անգլիացիներին քշեցինք հանգուցյալ թագավորի օրոք,— բղավեց դումայական ազնվական Բորորիկինը,— հիմա էլ ֆրանսիացիների լծի տա՛կ մտնենք... Չլինելու բան է:

Մեկ ուրիշը՝ Չինովևը, մոլեգնած ասաց.

— Մենք պիտի հատատ մնանք, որ այդ օտարերկրացիների հնուց եկող փուքսը վերջնական թողնենք... Ու ոչ թե հանքարանները ու առևտուրն իրենց տանք... Որ հնազանդության բերենք դրանց... Մենք՝ Երրորդ Հռո՜մն ենք...

— Ճշմարիտ է, ճշմարի՜տ,— աղմկեցին բոյարները:

Վասիլի Վասիլևիչը շուրջը նայեց, աչքերը զայրույթից պայծառացան, ռունգերը թրթռացին...

— Ձեզնից պակաս չեմ ցավում պետության համար... (Նա ձայնը բարձրացրեց:) Կուրծքս... (Մատանիներով զարկեց զրահին:) Կուրծքս ճանկոռտեցի եղունգներով, երբ իմացա, թե ինչպես ֆրանսիական մինիստրները անպատիվ են արել մեր մեծն դեսպաններ Դոլգոռուկիին և Մոլշեցկուն... Դատարկաձեռն գնացել են դրամ փնտրելու՝ դրանով իսկ պատվազուրկ եղել... (Շատ բոյարներ ծա-

ՆՐ-ծանր թնչացրեցին:) Իսկ եթե գնային՝ ֆրանսիական թագավորի համար շահեկանորեն, երեք միլիոն լիվրը վաղուց դրված կլիներ Մեծ պալատի ատյանում: Ճիզվիտներն Ավետարանի վրա երդվում էին, որ եթե մեծն արքաները համաձայնություն տան իրենց ծրագրին, իսկ Դուման վճիռ կայացնի, իրենք գլխով են պատասխանատու երեք միլիոն լիվրի համար, որը մինչև գարուն կստանանք:

— Է ինչ, բոյարներ, մտածեք այս մասին,— ասաց Սոֆյան,— մեծ գործ է:

Հեշտ է ասելը՝ մտածել նման գործի մասին... Իսկապես, ժամանակներ էին եղել, մեծ խառնակությունից հետո, երբ օտարերկրացիները ուրուրների պես հարձակվել էին Ռուսաստանի վրա, գավթել հանքարանները ու առևտուրը, ամեն ինչի գինը գցել: Կալվածատերերը ստիպված էին համարյա ձրի տալ վուշը, կանեփը, ցորենը: Եվ հենց այդ օտարերկրացիները սովորեցրին ռուս մարդուն իսպանական թաղիշ, հոլանդական քաթան, ֆրանսիական մետաքս հագնել, կառքերով շրջել, իտալական ալոռների վրա նստել: Հանգուցյալ Ալեքսեյ Միխայլովիչի օրոք օտարերկրյա լուծը թոթափեցին՝ ապրանքն ինքներս կտանենք ծովով: Հոլանդիայից վարպետ բերեցին՝ Կարտեն Բրանդտին, մեծ չափչափանքների գնով «Գրյոլ» նավը կառուցեցին—գործը դրանով էլ ավարտվեց, ծովագնացության ընդունակ մարդիկ չգտնվեցին: Նաև՝ փողն էր քիչ: Նաև՝ հոգսը շատ: Վոլգայի վրա, Նիժնի Նովգորոդի մոտ կանգնած «Գրյոլը» փտեց: Ու կրկին վրա են տալիս օտարերկրացիները, ջանալով ձեռքերը խոր խրել ռուսական գրպանի մեջ... Ի՞նչ կա մտածելու: Խանի դեմ պատերազմելու համար հինգ հարյուր հազարը մեչտեղ դիր՝ Գոլիցինն առանց փող գնացողը չի... Տես է՞, ինչ ճարպկորեն գրավեց երեք միլիոնով: Քրտինք է տալիս վրադ, երբ մտածում ես...

Չինովևը, մորուքը բռնած, ասաց.

— Մի որևէ տուրք դնենք սրսաղների ու արվարձանների վրա... Է, թեկուզ ադի վրա...

Իշխան Վոլկոնսկին՝ սրամիտ մի ծերունի, պատասխան տվեց.

— Տրեխի հարկ դեռ չկա...

— Ճշմարի՜տ է, ճշմարի՜տ,— աղմկեցին բոյարները,— մուժիկները տարեկան տասներկուական գույգ տրեխ են մաշում, գույգի վրա մի պղինձ կոպեկ տուրք դնենք, դրանով կբարդենք խանին...

Բոյարները թեթևացան: Գործը վճռեցին: Ոմանք քրտինքն էին սրբում, ոմանք մատները շարժում, փնչացնելով: Ոմանք էլ թեթևացումից փուքս էին թողնում մուշտակների մեջ: Վասիլի Վասիլևիչի խորամանկությունը չանցավ: Նա անձնատուր չեղավ՝ կարգը խախտելով, վեր թռավ, ձեռնափայտը հատակին խփեց:

— Խելագարնե՞ր: Մուրացկանն՝ ոչ, ցեխն են գցում գանձը: Քաղցածնե՞ր, դեռ են հրում հաց պարզած ձեռքը: Այս ի՞նչ է, աստված մթագնե՞լ է ձեր ուղեղները: Բոլոր քրիստոնեական երկրներում, իսկ այնպիսիք լսա, որ մեր մի գավառի չափ էլ չեն լինի, փթթում է առևտուրը, ժողովուրդները հարստանում են, բոլորն իրենց շահն են

փնտրում... Մենակ մենք ենք խոր քուն մտել... Ժողովուրդը ցաքուցրիվ փախչում է հուսալքված, ինչպես ժանտախտի ժամանակ... Անտառներում ավազակներն են վխտում... Դրանք էլ են հեռանում ուր աչքերը կկտրի... Շուտով անապատ պիտի կոչեն ռուսաց հողը: Համեցի՛ր, շվեդացի, անգլիացի ու թուրք՝ տիրի՛ր...

Ծայրահեղ զայրույթից արցունք ցայտեց Վասիլի Վասիլեվիչի կապույտ աչքերից: Սոֆյան, եղունգները խրած բռնակների մեջ, առաջ հակվեց գահի վրա՝ նրա այտերն էլ էին ցնցվում:

— Ֆրանսիացիներին ներս թողնելու կարիք չկա,— թավաձայն առաց բոյարին իշխան Ֆյոդոր Յուրևիչ Ռոմոդանովսկին: Սոֆյան նրա վրա հառեց հայացքը: Բոյարները սկսվեցին: Փորը ցնցելով, որ կարողանա իջնել նստարանի եզրից, իշխանը ոտքի ելավ՝ կարճոտն էր, լայնաթիկունք, փոքր ու սղալած մազերով, ուսերի մեջ թաղված գլխով: Սառնություն էին սփռում նրա շեղ ու մուգ աչքերը: Մորուքը վերջերս էր սափրել, բեխերը վեր էին ոլորած, կեռ քիթը կախված էր հատ շրթունքների վրա:— Մեզ ֆրանսիացի վանառականներ պետք չեն՝ վերջին շապիկը հագներիցս կհանեն... Այսպես.. Վերջերս Պրեոբրաժենսկոյե էի գնացել, թագավորի մոտ... Ռազմախաղ են անում, շարժումներ... Ճիշտ է... Բայց ռազմախաղն էլ է խելագի լինում... Գերմանացիները, հոլանդացիները, վարպետները, նավաշինարարները, սպաները՝ գործը գիտեն... Երկու գունդ՝ Սեմյոնովսկին ու Պրեոբրաժենսկին, մեր ատրելեցիների պես չեն: Մեզ օտարերկրացի վանառականներ պետք չեն, առանց նրանց էլ լրջա գնալ չենք կարող... Մենք պիտի մեզ մոտ երկաթի մշակություն հիմնենք, քաթանի, կաշվի, ապակու... Ջրաղացները հարմարեցնենք սղոցարանների, ինչպես Կուկուլում: Նավատորմ պիտի ունենանք՝ աճա թե ինչ է պետք... Իսկ թե այսօր տրեխի վրա հա՞րկ ենք դնելու... Ինչ ուզում եք, արեք, ինձ համար միևնույն է...

Ասես բարկանալով, ցնցեց գիրուկ դեմքը, ոլորած բեխերը, ետ գնաց, տեղը նստեց... Այդ օրը բոյարական Դուման վերջնական ոչինչ չվճռեց...

7.

Ցրտաշունչ մի երեկո շատ հյուրեր էին հավաքվել աուստերիայում: Պակառամիտ ծառան շարունակ կեչու փայտ էր գցում բուխարին: «Օ՜, ինչ շոգ է այստեղ, Մոնա»՝ հյուրերը հատիկ ու թուղթ էին խաղում, ծիծաղում, երգում: Յոհանն Մոնսը գարեջրի երրորդ տակառը բացեց: Հանել էր բամբակյա ժիլետն ու մնացել մենտակ ֆուֆայկայով: Վիզը կապտակարմիր էր դարձել: «Էյ, Յոհանն, դուրս գալիր մի քիչ կանգնեիր սառնամանիքին, արյունդ շատ է»: Մոնսը ժպտում էր ցրված, ինքն էլ չիմանալով, թե ինչ է կատարվում իր հետ: Ձյունի ժիսրը կարծես հեռուներից էր գալիս, աչքերն արցունքով էին լցվում: Ուզեցավ տասը գավաթ գարեջուր բարձրացնել՝ չկարողացավ, թափեց: Մարմնով մեկ թուլություն սողոսկեց:

Նա հրեց դուռը, ելավ ու հենվեց ծածկը պահող սյանը, սառնամանիք էր: Բարձր-բարձր կանգնած էր սառած լուսինը, եզերված ծիածանագույն երեք վիթխարի օղակներով: Օդը լի էր գունափոխվող սառցե ասպողիկներով... Ձյուն էր գետնի վրա, թփուտների ու տանիքների վրա: Օտար հող, օտար երկինք, մահ է սփռված ամեն ինչի վրա: Ճնշառությունն արագացավ... Անհերևակայելի արագությամբ ինչ-որ բան էր մոտենում նրան... Ահ, մի անգամ էլ տեսներ հարազատ Թյուրինգիան, ուր լճից վեր, լեռների մեջ փոքրիկ ու հարմարավետ քաղաքն է տարածված... Արցունք հոսեց սյուներով: Դակող մի ցավ բռնեց սիրտը: Շոշափեց դուռը, դժվարությամբ բացեց, և մոմերի լույսը, հյուրերի թրթռացող դեմքերը մոխրագույն թվացին նրան: Կուրծքն ալեկոծվեց, ճիչ արձակեց, և նա ընկավ...

Այսպես մահացավ Յոհանն Մոնսը: Բոլոր գերմանացիներին տեվական ժամանակ վիշտ ու զարմանք պատճառեց նրա մահը: Մնացին այրին՝ Մաթիլդան, չորս երեխա և երեք գործատուն՝ աուստերիան, ջրաղացն ու ոսկերչական կրպակը: Ավագ դստերը՝ Մոդեստային, այդ աշնանը, փառք աստծո, հաջողվեց ամուսնացնել արժանավոր մի մարդու՝ պորուչիկ Ֆյոդոր Բալոկի հետ: Որք մնացին Աննան և երկու փոքրիկները՝ Ֆիլիմոնը և Վիլիմը: Ինչպես հաճախ է լինում, տան գլխավորի մահից հետո պարզվեց, որ գործերն այնքան էլ լավ վիճակում չեն, պարտամուրհակներ երևան եկան: Ստիպված էին պարտքերի դիմաց տալ ջրաղացն ու ոսկերչական կրպակը: Այդ ծանր օրերին Լեֆորտը շատ օգնեց՝ դրամով ու հոգածությամբ: Տունն ու աուստերիան մնացին այրուն, ուր Մաթիլդան և Անիտեն հիմա օրուգիշեր դառն արցունք էին թափում:

8.

— Մայրիկ, կանչե՞լ էիք:

— Նստիր, Պետենկա, հրեշտակս...

Պյոտրը ցցվեց աթոռակի վրա, արտնեղված զննելով մոր ննջարանը: Դեմ դիմաց նստած Նատալյա Կիրիլովնան վաղաքուշ ծերացավ: Օ՜հ, ինչ կեղտոտ է, հագուստը պատառոտված: Մատը՝ լաթով փաթաթված: Մազերը՝ խոիվ: Կոպերի տակ՝ ստվերներ, աչքերն անհանգիստ են...

— Պետրուշա, հրեշտակս, մի բարկանա, ինձ լսիր...

— Լսում եմ, մայրիկ...

— Քեզ պատկել եմ ուզում...

Պյոտրն ընդոստ վեր թռավ, ձեռքերը թափահարելով, ննջարանում ծուռումուռ գնալ-գալով՝ սրբերի լուսավորված պատկերներից մինչև դուռն ու ետ: Նստեց: Գլուխը ցնցեց... Խոշոր ոտնաթաթերի քթերն իրար էին արած:

— Ո՞ւմ հետ:

— Արդեն տնտղել ու հավանել եմ, մի սիրունիկը կա՝ ճերմակ աղավնի...

Նատալյա Գրիգորիևնան կռացավ որդու վրա, մազերը շոյելով ուզեց աչքերի մեջ նայել: Պյոտրի ականջները կարմրեցին: Դուրս պրծավ մոր ձեռքի տակից, նորից վեր թռավ.

— Եռ ժամանակ չունեմ, մայրիկ... Միշտ եմ ասում, գործ կա... Լավ, թե պետք է, պատակեք... Իմ միտքն ուրիշ բանի է...

Ոտով դիպչելով կողափայտին, նարամեջը ու նիհար, դուրս եկավ ու վազեց խելագարի պես միջանցքներով, հեռվում մի դուռ շրխկացրեց:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1.

Իվաշկա Բրովկինը (Ալյոշկայի հայրը) սահնակի ճամփով Պրեոբրաժենսկոյե էր բերել մի բեռ սառեցրած հավունիվ, ալյուր, սիսեռ ու կաղամբի մի տակառ: Մթերքի հարկն էր Վասիլի Վոլկովին՝ կառավարիչը հավաքել էր գյուղից, ու բարիքը չփչացնելու համար կարգադրել էր հասցնել տիրոջը, ծառայության վայր, ուր Վոլկովը, որպես պեղանապետ, պալատում իր փոքրիկ սենյակն ուներ՝ խորդանոցով: Բակ մտնելով, Իվաշկա Բրովկինը վախեցավ ու գլուխարկը հանեց: Բազմաթիվ հարուստ սահնակներ և ծածկասահնակներ էին կանգնած Գլխավոր մուտքի առաջ: Վաղորդյան սառնամանիքին իրար հետ խումբ-խումբ գրուցում էին լավ հագնված ապասավորները, աղվեսի ու գայլի պոչերով զարդարված ձիերը, խալ անելով, դոփդոփում էին մաքուր ձյան մեջ, գիլձայն խրխնջում էին չլծած հովատակները: Գոլորշի արձակող թրիքի վրա իրար էին անցել ճճղուկները

Անձայն սանդուղքով ելնում-իջնում էին ոսկեկափտան պալատականներ, կարմիր դարձաձայերով օտարերկրյա կաֆտաններ հագած սպաներ, կնոջ պես գանգուր մազերով: Իվաշկա Բրովկինն իր տիրոջն էլ ճանաչեց՝ պալատի ուտելիքից Վասիլի Վոլկովը լցվել էր, մորուքը գանգրացել էր՝ թայում էր ծանրումեծ, մետաքսե գոտուց բռնած:

«Էհ, ինձ ուշացնելու են, լավ ժամի չեկա»,— մտածեց Իվաշկան: Ցին արձակեց, խոտ գցեց դեմը: Պալատի շներից մեկը մոտեցավ, խիստ ու դեղին աչքերով Իվաշկային նայեց, գոմռաց... Իվաշկան կեղծավոր ժպիտով հարթեց կնճիռները. «Այ շուն, այ հոգի, ինչ ես ուզում, ինչ...»: Քաշվեց գնաց կուշտուկուռ սրիկան, փառք աստծո, չկծեց: Կողքով մի թիկնեղ ձիապան անցավ.

— Խոտ տալու տե՞ղ ես գտել, ավազակ...

Բայց ձիապանին ձայն տվեցին, փառք աստծո, թե չէ Իվաշկան ողջ արծնողը չէր... Խոտը հավաքեց, ձին նորից լծեց: Այդ պահին պալատի աշտարակին զանգը դուրեկան դողանչեց: Ծառաները

խառնվեցին. ոմանք թռան առջևի ձիերին, ոմանք ելան սահնակների ետնամասերը, գազանակերպ հաստաքամակ կառապանները ուղղեցին երասանները... Սանդուղքի ամեն մի աստիճանին մի պալատական կանգնեց, գլխարկը թեք դրած: Պալատից դուրս թափվեցին հարսնևորները՝ արբաստատկեր բռնած պատանյակներ, դատարկ մատուցարաններ բռնած ջահելներ՝ ձյան վրա, եղյամապատ լացող կեչիների տակ շողշողացին թանկարժեք գլխարկներ, կանաչ, դիպակե, ալ թավշյա կաֆտաններ ու մուշտակներ: Պատշաճությունն ընդունելով, Բրովկինը խաչակնքել սկսեց: Դուրս եկան բոյարները... Նրանց մեջ մի կին կար՝ մուշտակը մուշտակի վրայից հագած, մեկը մյուսից թանկարժեք... Ճյուղավոր կիկայի տակ հոնքերին թանձր ներկված էր քսած, կոպերը կապույտ ներկված էին մինչև բունքերը, այտերին՝ հապալասի պես կարմիր կլորակներ... Դեմքը բլիթի էր նման... Ձեռքին արոսենու ճյուղ ուներ: Սիրուն, ուրախ, երևում է գինովցած էր... Առմուտքից նրան թևանցուկ էին իջեցնում: Իվաշկայի մոտով վազող աղախինները խոսում էին իրար մեջ.

— Հարսնախոսն է, մի տես է՞, մերի-ի՞կ:

— Եկել էր խորդանոցը զարդարելու...

— Ջահելների տեղաշորը գցելու...

Ձիապանները գոռոռացին, զանգուլակների զնգոց տարածվեց, ճզճզացին սահակները, եղյամ թափվեց կեչիներից՝ թափորը հարթավայրով շարժվեց դեպի Մոսկվայի թիազորշ ձիերը: Եստորեն ձայն տվեցին նրան.

— Ուշի եկ, բացբերան...

Դիմացը Վասիլի Վոլկովն էր կանգնած: Ինչպես վայել էր տիրոջը՝ հոնքերը զայրացած կիտած, աչքերը խիստ ու թափանցող...

— Ի՞նչ ես բերել:

Իվաշկան խոր գլուխ տվեց, և ծոցից հանելով կառավարչի նամակը, պարզեց: Վասիլի Վոլկովը ոտքը ետ տարավ, խոժոռված սկսեց կարդալ. «Ողորմած պարոն, մեր լուսապայծառ տեր, ողորմածությանդ մթերքի պաշարը քեզ ենք ուղարկում: Ի սեր աստծո, ներիր, որ անցյալ տարվա համեմատ քիչ ենք հավաքել, մորթած սագը պակաս է, հնդուհավ բոլորովին չկա... Ողորմածությանդ գյուղի ժողովուրդը լրիվ աղքատացել է, հիմա շունչ փախած են, չգիտենք, թե ինչ պատասխան տանք քեզ... Ծատերն էլ կիսաքաղց հազիվ ապրում են, հացը մինչև Աստվածածին մի կերպ հերիքեց, խոտ ու բանջար են ուտում: Սույն պատճառով ենք պակաս հավաքել»:

Վասիլի Վոլկովը նետվեց դեպի սայլը. «Ցույց տուր»: Իվաշկան արձակում էր բեռի քուղերը, վախից ցնցվելով... Սագերը՝ լղարիկ, հավերը՝ կապտած, ալյուրը՝ գունդ-գունդ...

— Էս ի՞նչ ես բերել: Էս ի՞նչ ես ինձ բերել, բուռտ շուն,— կատաղած գոռաց Վոլկովը:— Գողանո՞ւմ ես: Թալանել արծե՞լ ես:— Սայլի վրայից առավ մտրակն ու սկսեց խփել Իվաշկային: Սա կանգ-

նած էր գլխաբաց, չէր խուսափում հարվածներից, միայն աչքերն էր ճպճպացնում: Խորամանկ մուժիկ էր՝ հասկացավ, որ փորձանքն անցել է, թող մտրակի, կիսամուշտակի վրայից շատ չի ցավի...

Փոռոսկի կոթը պոկվեց: Մոլեգնած Վոլկովը բռնեց Իվաշկայի մազերից: Այդ ժամանակ պալատի կողմից մոտ վազեցին երկու հոգի՝ զինվորական կաֆտաններով: Իվաշկան մտածեց. «Օգնեցու եկան, է՛հ, կորա...»: Առջևից վազողը, որ ավելի ցածրահասակ էր, հանկարծ վրա պրծավ Վոլկովին, խփեց կողին... Քիչ էր մնացել ընկներ պարոնը, թողեց Իվաշկայի մազերը: Մյուսը՝ բարձրահասակը, կապտաչ ու երկարուկ դեմքով, բարձրաձայն ծիծաղեց... Ու երեքով սկսեցին վիճել, իրար հայհոյել... Իվաշկան լրջորեն անհանգստացավ, նորից ծնկի իջավ... Վոլկովը գոռոռում էր.

— Անպատվություն չեմ հանդուրժի: Երկուսն էլ ճորտերս են: Կհրամայեմ անխնա ծեծել... Ցարն ինձ համար օրենք չէ...

Այդ ժամանակ կապտաչը, աչքերը կկոցելով, ընդհատեց նրան.

— Սպասիր, սպասիր, կրկնիր տեսնեմ... Ցարը քեզ համար օրենք չէ՞: Այլոշա, լսեցի՞ր հակառակ խոսքերը: (Իվաշկային:) Դու էլ լսեցի՞ր:

— Կաց, Ալեքսանդր Դանիլիչ...— Վասկա Վոլկովի զայրույթն իսկույն անցավ:— Ուշքս գլխիս չէր, որ ասացի, աստված վկա, ուշքըս գլխիս չէր... Ախր իմ ճորտը քիչ էր մնացել ինձ...

— Գնանք Պյոտր Ալեքսեևիչի մոտ, կպարզենք:

Ալեքսաշկան գնաց պալատի կողմը, Վոլկովը՝ նրա ետևից, ճամփի կեսից սկսեց թևքը քաշել: Երրորդը նրանց հետ չգնաց, մնաց պալի մոտ ու կամացուկ ասաց Իվաշկային.

— Այ հեր, ախր ես եմ... Չճանաչեցի՞ր, Այլոշան եմ...

Վախից քարացավ Իվաշկան, ծուկեց: Դիմացը կանգնած էր շիմշատ մի պատանի, թանկ մահուդե զգեստով, պսպղուն կոճակներով, դնովի մազերն ուսերին թափած, թրդաշուլնը կողքից կախ: Կարող է և պատահել՝ Այլոշան է... Ի՞նչ պիտի անեսք Իվաշկան երկիմաստ պատասխանեց.

— Ինչ խոսք, ոնց չճանաչենք... Հեր ենք:

— Բարև, այ հեր:

— Բարև, ազնիվ ջահել...

— Տանն ի՞նչ կա:

— Փառք աստծուն:

— Ապրուստը ո՞նց է:

— Փառք աստծուն...

— Այ հեր, չճանաչեցիր դու ինձ...

— Ամեն ինչ կպատահի...

Իվաշկան, տեսնելով, որ ծեծ ու տանջանք էլ չի լինի, գլխարկը դրեց, ջարդած մտրակը վերցրեց, բարկացած սկսեց բացած բեռը կապկպել: Ջահելը չէր հեռանում, ձեռ չէր քաշում: Գուցե իսկականի՞ց կորած Այլոշան է: Հետո՞ ինչ՝ ուրեմն, բարձր է թռել թռչունը: Շա՞տ խելք է պետք ունենալ ճանաչելու համար, չճանաչելն էլ

հարմար կլինի... Այնուամենայնիվ, Իվաշկան մի աչքը կկոցեց խորամանկորեն:

— Էստեղից Մոսկվա պիտի գնամ, պառավն ասեց, որ աղ առնեմ, կես գոռշ էլ չունեմ... Մի հինգ ալտին կամ ութ կոպեկ տայիք, կորած տեղ չի, մենք ու մերոնք ենք, ետ կտայինք...

— Այ հեր, այ հարազատ...

Այլոշկան գրպանից մի բուռ ոչ թե պղնձյա, այլ արծաթ դրամ հանեց՝ երեք ռուբլի կլիներ, կամ ավելի: Իվաշկան ապշահար էր: Եվ երբ կոշտացած, շերեփի պես ձեռքի մեջ էին փողերը, դողդողաց, և ծնկներն իրենք իրենց ծալվեցին՝ գլուխ խոնարհելու... Այլոշկան ձեռքով արեց, ետ վազեց... «Ա՛հ, որդիս, ա՛հ, որդիս»,— կամացուկ մրմնջում էր Իվաշկան: Կկոցած աչքերով արագ դեսուդեն նայեց՝ ծառաներից ոչ ոք չտեսա՞վ փողերը: Երկու արծաթադրամ թշի տակ դրեց՝ ապահովության համար, մնացածը՝ գլխարկի մեջ: Արագ-արագ բեռը դատարկեց, մթերքը տիրոջ ծառային հանձնեց, թուղթ վերցրեց ու երապանները շրմփացնելով, քշեց Մոսկվա:

Վասկա Վոլկովի խոսքերը, թե. «ցարն ինձ համար օրենք չէ», ծանր կնստեին նրա վրա, երբ կանգներ Գաղտնի գործերի ատյանի դահիճների առաջ... Բայց, Ալեքսաշկայի ետևից նախապեսյակ ընկնելով, կախվեց նրա թևքից, մի քիչ տեղ քարշ եկավ հատակին, ու լաց լինելով խնդրեց վերցնել սուտակով մատանին, որ մատից հանեց...

— Տես հա՛, ազնվականի տղա, սրիկայի մեկը,— ասաց Ալեքսաշկան, թանկարժեք մատանին միջնամատին դնելով,— վերջին անգամ եմ քեզ փրկում... Այլոշա Բրովկինին էլ փող կամ մահուդ կտաս՝ անպատվության համար... Հասկացա՞ր:

Սուտակին նայելով, քթի տակ ծիծաղեց, ցնցեց կեղծամն ու սուր կրունկները կոկտացնելով, ուսերը ճոճելով, գնաց: Վաղո՞ւց էր, որ մարդիկ շուկաներում նրա ականջներն էին քաշքշում, ճապաստակի նեխած մսով բլիթներից հոտ առնելուց հետո: Ահ, ի՞նչ ուժ է ձեռք բերում... Վոլկովը վհատված գնաց իր խուցը: Ծրկկոցով բացելով սնդուկը, մի կտոր մահուդ ընտրեց խնամքով... Խղճալի ու վիրավորական էր՝ լաց լինելու աստիճան... Ո՞՞ւմ: Մուժիկի որդուն, ճորտին, ում քիթ ու մոութին մտրակով պիտի հասցնես, ելե՞ր տալ: Վշտացավ: Զայն տվեց ծառային.

— Կտանես, պրեոբրաժենյան առաջին վաշտի թմբկահար Ալեքսեյ Բրովկինին, կասես՝ բարև եմ անում, որ սիրով լինենք...— Հանկարծ բռունցքը պեղմելով, շատ խիստ գոռաց ծառայի վրա.— Ատամներդ բաց չանես, թե չէ կհասցնեմ ոեխիդ... Այլոշկայի հետ հանգիստ կխոսես, մարդավարի, կամացուկ՝ հիմա վտանգավոր մարդ է դարձել սրիկան...

Ալեքսաշկա Մենշիկովը Պյոտրին էր փնտրում պալատով մեկ, ուր ծառաները տոնական ծածկոցներ էին գցում նստարաններին և լուսամտագոգերին, գորգեր փռում, շատ տարիներ առաջ հավաքված վարագույրները և սրբապատկերների մարգարտաշար քողերը

կախ անուս... Ձեթ էին լցնում կանթեղների մեջ։ Թխկոց-չխկոցն ու վազվզոցն էր բռնել պալատը։

Պյոտրին գտավ մենակ՝ խորդանոցում, որ հենց նոր էր հարդարել հարսնախոս կինը. այս շինվածքի առաստաղին հողե ծածկույթ չկար (որ նորապսակները հողի տակ չքնեին, ինչպես գերեզմանում)։ Պյոտրը փոքր հանդիսությունների ցարական հագուստով էր։ Ձեռքին մետաքսե թաշկինակ ուներ, որ տվել էին հարսնախոսությունն դիմավորելիս։ Ատամներով պատառոտել էր թաշկինակը։ Թուլիկ նայելով Ալեքսաշկային, Պյոտրը շառագունեց...

— Սիրուն զարդարել են,— երգեցիկ ասաց Ալեքսաշկան,— ճիշտ ոնց որ դրախտում հրեշտակների համար սարքած լինի...

Պյոտրը բացեց ատամներն ու բրքջաց։ Յույց տվեց անկողինը.

— Փուչ բան է...

— Հարսնացուն սիրունիկ ու տաքարյուն թե եղավ, էնքան էլ փուչ բան չի... Աչքս դուրս գա, մին խեռ, դրանից քաղցր բան չկա...

— Սեր ես փչում...

— Ես որ տասնչորս տարեկանից գիտեմ... Մեկ-մեկ ի՞նչ աղջիկներ են բաժին ընկել... Քոնն, ասում են, հո գեղեցկուհի՞ չի...

Պյոտրը կարճ հոգոց հանեց։ Նորից աչք ածեց փայտաշեն, երեք պատերի մեջ բացված .բարձրադիր ու գունավոր պատուհաններով խորդանոցը։ Միջնապատերին թեհրանյան գորգեր էին կախված, հատակին թոչունների ու միեղջյուրի պատկերով գորգ կար փռված։ Անկյուններում չորս նետ էր խրված, ամենքից կախ արած պամպլրի քառասուն մորթի և մեկական կալաչ։ Միացված երկու թախտերի վրա, տարեկանի քսանչորս խրձերի, բմբլե յոթ ներքնակների վրա մետաքսե անկողին էր գցած, մարգարտաշար երեսներով բազմաթիվ ուրվձերով, վրայից մորթե գլխարկ էին դրել։ Ոտների մոտ կզաքիսի մորթուց վերմակներ կային։ Անկողնու մոտ լոբենու տուկատներ էին, մեջը՝ ցորեն, աշորա, վարսակ ու գարի...

— Ի՞նչ է. ուրեմն, չտեսա՞ր նրան,— հարցրեց Պյոտրը։

— Ալյոշկայի հետ ծառաներին կաշառք էլ տվեցինք, կտուրն էլ բարձրացանք։ Ձեղավ ու չեղավ... Հարսնացուն մթան մեջ է նստած, մերը կողքից մի քայլ չի գնում, աչքով տպուց են վախենում... Հրաման են տվել նրա սենյակից աղբ չհանեն... Լոպուխին քեռիներն ու հորեղբայրները օրուցիշեր բակում մուն են գալիս, հրացաններով ու թրերով...

— Սոֆյայի մասին բան չիմացա՞ր։

— Է ինչ, փրփրել է, բայց կարո՞ղ է քեզ արգելել, որ պսակվեք Տես հա՞, մին խեռ, հարսնացուի հետ որ սեղան նստեցիք, ոչ կուտես, ոչ կխմես... Որ շատ ուզեցար խմել, ինձ կնայես, իմ տված գավաթից կխմես...

Պյոտրը նորից ատամի տակ գցեց պատառոտված թաշկինակը.

— Զգնա՞նք արվարձան։ Որ մարդ չիմանա... Մի ժամով... Հը՞...

— Չխնդրես, մին խեռ, հիմա Մոսսիխայի մասին չմտածես էլ...

Պյոտրը ձգեց վիզը, ոունգերն ուռեցրեց, գունատվելով.

— Շատ ազատ չիսոսեցի՞ր հետս։ (Բռնեց Ալեքսաշկայի օձիքից՝ կոճակները պոկվեցին-թափվեցին։) Սրտոտե՞լ ես։ (Ծափահարելով մեկ էլ թափ տվեց, բայց բաց թողեց, ավելի հանգիստ ասաց։) Մի հասարակ մուշտակ բեր... Դուրս կգամ բանջարանոց, ահնակը կբերես էնտեղ...

2.

Հարսանիքը Պրեոբրաժենսկոյեում արեցին։ Նարիշկինների ու հարսնացուի ազգականներից բացի, հրավիրվածները քիչ էին, մերձավոր բոյարներից մի քանիսը, նաև Բորիս Ալեքսեևիչ Գոլիցինը, Ֆյոդոր Յուրևիչ Ռոմոդանովսկին։ Նատալյա Կիրիլովնան որպես հայրացու էր կանչել նրան։ Իվան ցարը չէր կարողացել գալ՝ տկարության պատճառով, Սոֆյան այդ օրը ապրելու էր գնացել։

Ամեն ինչ հին ծեսով եղավ։ Հարսնացուին առավոտից բերեցին պալատ ու սկսեցին հագցնել։ Պալատի աղախինները՝ բաղնիքում լողացած, արքունի պսակներով ու կարմիր զգեստներով, երգում էին անդադրում։ Նրանց երգի տակ բոյարուհիները ու ընկերուհիները հարսին հագցնում էին՝ բարակ շապիկն ու գուլպաները, կարմիր մետաքսից երկար շապիկը՝ մարգարտակար դաստակակապերով, չինական մետաքսից ամառային շորը՝ լայն, մինչև հատակը հասնող թևքերով, որոնց վրա աքաճչելի ասեղնագործով խոտեր ու գազաններ էին պատկերված, ուսերին զգեցին մարգարտանախշ, կղբենու մորթուց մի լայն մանյակ, այնպես ձգեցին վիզը, որ Եվդոկիան քիչ էր մնում խեղդվեր։ Շորի վրայից հապալասագույն մահուդից լայնփեշ օպաշեն հագցրեցին՝ արծնապատ հարյուր քսան կոճակով, դրա վրայից արծաթանյուս, բարակ մորթիով, մարգարիտների ծանր շարքերով զարդարված թիկնոց գցեցին։ Մատներին մատանիներ դրեցին, զնոգնոցում ականջօղեր կախեցին։ Մազերն այնքան ձիգ սանրեցին, որ հարսնացուն աչքերը թարթել չէր կարողանում, հյուսքը հյուսեցին բազում ժապավենների, գլխին բարձր, քաղաք պատկերող պսակ դրեցին։

Ժամը երեքին մոտ Եվդոկիա Լարիոնովնան կիսամեռ էր՝ մոմե արձանի պես նստած էր սամույրե բարձի վրա։ Նույնիսկ նայել չէր կարողանում անուշեղենին, որ կաղնեփայտե արկղիկով նվեր էին բերել փեսացուից՝ շաքարից գազանիկներ, սրբերի դաջված պատկերներով պրյանիկներ, մեղրի մեջ եփված վարունգ, ընկույզ ու չամիչ, ոչազանյան շրիկան խնձորներ։ Ըստ սովորության, այդտեղ էր նաև ոսկրե տոպրը՝ ձեռագործով, մյուս պղնձե, ոսկեզօծ արկղը՝ մատանիներով ու ականջօղերով։ Տոպրերի վրա կնչու ճյուղեր կային դրված՝ ճիպտելու համար։

Հայրը՝ օկոլնիչի Լարիոն Լոպուխինը, որին այդ օրվանից հրամայված էր Ֆյոդոր կոչել, առեպ-ստեպ ներս էր մտնում, չորացած շրթունքները լպստելով. «Հը՞, ինչպե՞ս է, հարսնացուն ինչպե՞ս է»։ Նրա ջղուտ քթիկը ուռչացել էր... Մի քիչ մյուս տպուց հետո

բան էր հիշում, արագ հեռանում: Մայրը՝ Եվստիգնեյա Անիկիտովնան, վաղուց էր ընդարմացել, պատին հենված: Առավոտից ոչինչ չկերած աղախինների ձայները խոպոտել էին:

Ներս ընկավ հարսնախոս կինը, թափահարեց երեքարշինանոց թևքերը...

— Հարսնացուն պատրա՞ստ է: Հարսնորներին կանչեք... Հացերը վերցրեք, կանթեղները վառեք... Պար եկող աղջիկնե՞րն ուր են: Օ՜յ, քիչ են: Բոյարին Օդուևկու հարսանիքին տասներկու պար եկող կար, մենք հո ցար ենք պսակում... Ա՜խ, սիրելիներս, հարսնացուին նայեք, էս ի՞նչ աննման սիրուն է... Էլ որտե՞ղ կգտնես նրա նման՝ ոչ մի տեղ... Ա՜խ, անգին ու սիրելի մարդիկ, էս ինչ եք արել, անդանակ մորթեցիք... Հարսնացուի երեսը բաց է... Ամենակարևորն եք մոռացել... Քո՞ղն ուր է, քողը...

Պատի վրայից ճերմակ քող գցեցին, քողի տակ ձեռքերը կրծքին խաչեցին, ասացին, որ գլուխը կախ պահի: Եվստիգնեյա Անիկիտովնան կամացուկ ողբաց: Ներս վազեց Լարիոնը, օրհնանքի սրբապատկերն առաջ բռնած՝ գրոհելու պես: Պար եկող աղջիկները թաշկինակները թափ տվին, դուփդուփեցին, պտույտ եկան.

Գայլուկ, հմուլ հարսնիքներին թափվեցին,
Իրենք իրենց գովքն արեցին, երգեցին,
Մեզնից լավ բան էլ ինչ կա,
Մեզնից ուրախ բան չկա...

Դառները վեր պարզեցին մատուցարաններին դրված հացերը: Նրանց հետևեցին լապտերակիրները՝ ձողերին հագցրած փայլարե լապտերներով: Երկու մոմակիր հարսնացուի փթանոց մոմն էին տանում: Խաչեղբայրը՝ արծաթակար կափտանով, ուսին սրբիչ կապած Պետկա Լոպուխինը, հարսնացուի զարմիկը, գայլուկով, մետաքսե թաշկինակներով, սամույրի և սկյուռի մորթիներով, տասնոցներով լի ամանն էր տանում: Նրա ետևից երկու հորեղբայրները՝ ամենամարպիկ, հայտնի բանարկու և դատամոլ Լոպուխինները ճամփան էին պաշտպանում, հետևելով, որ հարսի դեմը ոչ ոք չկտրի: Նրանցից հետո հարսնախոս կինն ու օգնականը թևանցուկ բերում էին Եվդոկիային: Դասը հագուստից, ծոմից ու վախից խեղճ ծնկները ծալվում էին: Հարսնացուի ետևից երկու տարեց բոյարուհի մատուցարաններով բերում էին, մեկը՝ թավշյա կնոջ կիկա, մյուսը՝ ասեղնագործ թաշկինակներ, հյուրերին բաժանելու համար: Քայլում էր Լոպուխինը՝ ամբողջ տոհմից հավաքված մորթեղենը վրան, մի բայլ ետ ընկած՝ Եվստիգնեյա Անիկիտովնան, վերջից հարսնացուի տոհմն էր խոնվել, փոթով հրմշտվելով նեղ դռների մեջ ու միջանցքներում:

Այդպես, մտան Խաչանձև պալատ: Հարսնացուին նստեցրին սրբապատկերների տակ: Գայլուկով, մորթիներով ու դրամով լի ամանը, հացերով մատուցարանները դրեցին սեղանին, որի վրա արդեն դասավորված էին աղամանները, պղպեղամանները և քացախի

արվակները: Նստեցին ըստ ծեսի: Լուռ էին: Լոպուխինների ջղերը պրկված էին, աչքերը ցամաքել էին՝ վախենում էին մի սխալ բան թույլ տալ: Ոչ շարժվում էին, ոչ շնչում: Հարսնախոս կինը քաշեց Լոպուխինի թևքը.

— Մի՛ սպասեցնի...

Լարիոնը դանդաղ խաչակնքեց, հարսնեղբորն ուղարկեց ցարին հայտնելու, որ հարսի մոտ գալու ժամանակն է: Գնալիս, Պետկա Լոպուխինի սափրած, փոս ընկած ծոծրակը ցնցվում էր: Մոնմտում էին կանթեղները, մոմերի բոցերը չէին շարժվում: Երկար սպասեցին: Հարսնախոս կինը մատները մեկ-մեկ խաղացնում էր հարսնացուի կողերի վրա, որ էա շնչի:

Ճոճոացին միջանցքների աստիճանները: Գալի՞ս են: Անլսելի հայտնվելով, երկու զինակիր կանգնեցին դռան մոտ: Ներս մտավ հայրացուն՝ Ֆյոդոր Յուրևիչ Ռոմոդանովսկին: Աչքերը չոած պլպլացող շրջանակների վրա, խաչակնքեց, ձեռքով բարևեց Լարիոնին ու նստեց հարսնացուի դիմաց, մատները միմյանց ագուցելով: Որոշ ժամանակ դարձյալ լուռ էին: Ֆյոդոր Յուրևիչը թավաձայն ասաց.

— Գնացեք խնդրեք համայն Ռուսիո ցարին ու մեծն իշխանին, որ առանց հապաղելու բարեհաճի իր գործին գալ:

Հարսնացուի ազգականները աչքերը թարթեցին, թուքերը կուլ տվեցին: Հորեղբայրներից մեկն ընդառաջ եկավ թագավորին: Նա արդեն մոտենում էր— ջահել էր, անհամբեր... Խնկի քուլաներ լցվեցին դռնից: Ներս մտան բարձրահասակ, գիսախոիվ ավագերեցը՝ Բլագովեշչենսկից, պղնձյա մատուռնակիր խաչը ձեռքին, բուրվառը թափով շարժելով, և պալատական ջահել, քչերին հայտնի մի տերտեր (գիտեին, որ Պյոտրը նրան կանչելիս, Բիտկա էր ասում), որը սուրբ ջուր էր ցողում կարմիր մահուդե գորգի վրա: Նրանց մեջտեղից գալիս էր զառամյալ, նվազաձայն միտրոպոլիտը՝ բարեպատշաճ հանդերձով:

Հարսնացուի ազգականները վեր թռան: Լարիոնը սեղանի մոտից պոկվեց, ծնկի իջավ պալատի կենտրոնում: Հարսանքապետ Բորիս Ալեքսեևիչ Գոլիցինը թևանցուկ բերում էր Պյոտրին: Ցարն ուսնոցով էր և հոր ոսկեկար պատմուճանով, որ հագիվ էր ծնկներին հասնում: Մոնոմախի թագը Սոֆյան հրամայել էր չտալ: Պյոտրը գլխաբաց էր, մուգ գանգուրները պանրել էր վարսաբաժանով, գունատ էր, աչքերն ապակենման ու անթարթ, բերանի ծայրերի ելունդները փքվել էին: Հարսնախոս կինը պինդ բռնեց Եվդոկիային՝ ձեռքով զգաց, թե ինչպես ցնցվեցին աղջկա կողերը:

Փեսացուի ետևից գալիս էր մսրապետը՝ Նիկիտա Զոտովը, որին հանձնարարել էին հարսանիքը պաշտպանել չար աչքից ու կախարդանքից, նաև ծեսը պահպանել: Սթափ էր, մաքուր ու պայծառատես: Ավագ Լոպուխինները միմյանց նայեցին. իշխան-պապ ու քեֆչի, անպատկառ մեկին մսրապետ չէին սպասում... Լև Կիրիլովիչն ու ծերուկ Ստրեշնևը բերում էին թագուհուն: Այդ օրվա համար սնդուկներից հանել էին նրա հանդերձները՝ նուրբ դեղձագույն շքեր-

ջազգեստը, անդրծովյան հուլունքներով, բարալիկ խոտերի պատկերներով ասեղնագործած թիկնոցը... Հագնելիս լալիս էր Նատալյա Կիրիլովնան, անդարձ գնացած ջահելության համար: Ու հիմա քայլում էր գեղեցիկ, վայելչակազմ, ինչպես անցած ժամանակներում...

Բորիս Գոլիցինը, մոտենալով հարսնացուի կողքը նստած Լոպուխինից մեկին, գլխարկի մեջ տասնոցները զնգզնգացնելով, բարձրաձայն ասաց.

— Իշխանի համար տեղ ենք ուզում գնել...

— Էժան չենք տա,— պատասխանեց Լոպուխինը և, ինչպես ընդունված էր, ձեռքով ծածկեց հարսնացուին:

— Երկաթո՞վ, արծաթո՞վ, թե ոսկով:

— Ոսկով:

Բորիս Ալեքսեևիչը տասնոցները դատարկեց սկուտեղի մեջ, և Լոպուխինի ձեռքը բռնած, տեղահան արեց: Բոյարներով շրջապատված Պյոտրը քթի տակ ծիծաղեց, նրան կամացուկ առաջ հրեցին: Գոլիցինը բռնեց Պյոտրի արմունկներից ու նստեցրեց հարսնացուի կողքը: Պյոտրը զգաց նրա ազդրի տաք կլորությունը, ուրքը քաշեց:

Ծառաները բերեցին և սեղանին շարեցին առաջին ուտեստեղենները: Միտրոպոլիտը, աչքերը վեր հառած, աղոթեց ու օրհնեց ուտելիք-խմելիքը: Բայց ոչ ոք ձեռք չպարզեց մատուցարաններին: Հարսնախոս կինը խոր գլուխ տվեց Լարիոնին ու Եվստիգնեյա Անիկիտովնային.

— Օրհնեցեք՝ հարսի մազերը պանրեն ու ոլորեն:

— Աստված օրհնի,— պատասխանեց Լարիոնը: Եվստիգնեյան միայն շուրթերը շարժեց: Երկու մոմակիրները անթափանց մի քող պահեցին հարսի ու փեսայի արանքում: Դոների մեջ կանգնած պալատական աղախինները, սեղանի շուրջ նստած տարեց ու ջահել բոյարուհիները սեղանի ծիսական երգ ձգեցին՝ անուրախ ու ծորուն: Պյոտրը խեթելով տեսավ, թե շարժվող քողի ետևում ինչպես են իրար անցել հարսնախոս կինն ու օգնականը, ինչպես են շշնջում. «Ժապավենները հանեք... Հյուսքը կապիր, ոլորիր... Կիկան տվեք, կիկան...»: Մանկան նվազ ձայնով լաց եղավ Եվդոկիան... Պյոտրի սիրտը ջերմ տրոփեց՝ արգիլված, կանացի ու խակ մի բան էր լալիս կողքին, խորհրդավորությամբ պատրաստվելով այն բանին, որից քաղցր աշխարհում ոչինչ չկա... Նա դեմքը մոտեցրեց քողին, զգաց հարսի շունչը... Վերևից դուրս պրծավ հարսնախոսուհու շշարված դեմքը, ծիծղուն բերանը մինչև ականջները բաց.

— Համբերիր, արքա, քիչ մնաց...

Քողն ընկավ, հարսնացուն նորից նստած էր ծածկված դեմքով, բայց արդեն կնոջ գլխազգեստով: Հարսնախոս կինը երկու բոլ գայլուկի սերմ վերցրեց ամանից ու շաղ տվեց Պյոտրի ու Եվդոկիայի գլուխներին: Շաղ տալուց հետո թափ տվեց պամուկի մորթիով: Ամանի միջի թաշկինակներն ու տասնոցները սկսեցին շաղրտել հյուրերին: Կանայք ուրախ երգ երգեցին: Պտույտ եկան պարեկողները: Դռներից այն կողմ դափ ու թմբուկ զարկեցին: Բորիս Գոլիցինը կտրատում էր հացերն ու պանիրը և թաշկինակներով բաժանում նստածներին՝ ըստ կարգի:

Այդժամ ծառաները երկրորդ կերակրատեսակը բերեցին: Լոպուխիններից և ոչ մեկը, ցույց չտալու համար, որ քաղցած են, ոչինչ չէր ուտում՝ ետ էին հրում մատուցարանները: Տեղնուտեղը երրորդ կերակրատեսակը բերեցին, և հարսնախոս կինը բարձրաձայն ասաց.

— Օրհնեցեք ամոլներին՝ պասկի տանելու:

Նատալյա Կիրիլովնան և Ռոմոդանովսկին, Լարիոնն ու Եվստիգնեյան առան սրբապատկերները: Պյոտրն ու Եվդոկիան՝ կողք-կողքի կանգնած, գլուխ խոնարհեցին մինչև հատակ: Օրհնելով, Լարիոն Լոպուխինը գոտուց արձակեց մտրակը և երեք անգամ խփեց դրա տեր մեջքին՝ ցավոտ խփեց:

— Աղշիկս, դու իմացել ես, թե ինչ բան է հորական հիպոտը, քեզ եմ հանձնում ամուսնուդ, հիմա ոչ թե ես, սույն մտրակով ամուսինդ է քեզ ծեծելու անհնազանդության համար...

Եվ խոնարհվելով, մտրակը Պյոտրին տվեց: Մոմակիրները բարձրացրին կանթեղները, հարսանքապետը փեսացուի արմունկներից բռնեց, հարսնախոս կինն ու օգնականը՝ հարսնացուի: Լոպուխինները ճամփան էին պահպանում. աղախիններից մեկին, որը պետքի համար էր ուզում անցնել, այնպես բոթեցին, որ ծառաները կիսամեռ քարշ տվեցին տարան: Ամբողջ թափորը միջանցքներով ու սանդուղքներով դանդաղ շարժվեց պալատական եկեղեցի: Ժամը յոթն անց էր արդեն:

Պասկադրության ծեսը միտրոպոլիտն անշտապ էր անցկացնում: Եկեղեցում ցուրտ էր, գերանակապ պատերի ճեղքերից փչում էր: Սառցակալած պատուհաններից այն կողմ խավար էր: Տրտմագին ճոճում էր տանիքի հողմացույցը: Պյոտրը տեսնում էր քողի տակ կանգնած անծանոթ կնոջ միայն ձեռքը՝ անուշ, արծաթյա երկու մատանիով, ներկած եղունգներով: Կապկթացող մոմը բռնած ձեռքը դողում էր՝ կապույտ երակներ, կարճլիկ ճկույթ... Մատը դողում էր գառան պոչիկի պես... Պյոտրն աչքերը փախցրեց, կկոցեց ներքևի պատկերակալի լույսերի վրա...

...Երեկ այդպես էլ չհաջողվեց հրաժեշտ տալ Անիսեևին: Այրի Մաթիլդան, տեսնելով հասարակ սահնակով եկող Պյոտրին, վրա պրծավ, ձեռքը համբուրեց, հեկեկաց, ասաց, որ ծայր չքավորության դուռն են հասել, վառելափայտ չկա, այս չկա, այն չկա, իսկ խեղճ Անիսեևը երեք օրուգիշեր պառկած զառանցում է ջերմի մեջ... Պյոտրն իրենից հեռացրեց այրուն ու սանդուղքներով վեր վազեց՝ աղջկա մոտ... Փոքրիկ ննջասենյակում ձիթաճրագ էր վառվում, հատակին պղնձյա կոնքն էր դրված, կոշիկներ էին ընկած, հեղձուկ էր: Մարմաջի վարագույրի տակ, բարձի վրա փռված էին փունջ-փունջ գանգուր մազերը, Անիսեևի ճակատին ու աչքերին թաց սրբիչ էր դրված, ջերմից բերանը դուրս էր տվել... Պյոտրը ոտնաթաթերի

վրա դուրս եկավ ու այրու ջղաձգվող ափերի մեջ մի բուռ տապնոց լցրեց (Սոնկայի հարսանյաց նվերն էր Պյոտրին) ...Ալեքսաշկային հրամայեց գիշեր ու ցերեկ հերթապահել այրու մոտ. եթե պետք լինի՝ դեղատուն գնա, կամ հիվանդը անդրծովյա որևէ ուտելիք ուզենա՝ գետնի տակից էլ լինի, գտնի...

Ավագերեցն ու տերտեր Բիտկան խունկ չէին խնայել, ասես մշուշի միջից էին երևում մոմերը, երիքովի փողի պես երկար կյանք էր մաղթում սարկավագը: Պյոտրը կրկին աչքերը թեքեց՝ Եվդոկիայի ձեռքը դեռ դողում էր: Նրա կրծքում զայրույթի սառը փուչիկ էր փքվում կարծես... Պյոտրը փութով խլեց Եվդոկիայի մոմն ու սեղմեց նրա բարակիկ, անկենդան ձեռքը... Եկեղեցում վախեցած շշուկ տարածվեց: Միտրոպոլիտի լերկ գանգը ցնցվեց, մոտ շտապեց Բորիս Գոլիցինն ու ինչ-որ բան շշնջաց: Միտրոպոլիտը արագացրեց, երգողներն էլ ավելի հավաք երգեցին: Պյոտրը շարունակում էր ուժով սեղմել աղջկա ձեռքը, նայելով, թե քողի տակ ինչպես է ավելի ցած հակվում գլուխը...

Նրանց պտտեցրին գրակալի շուրջը: Պյոտրն արագ էր քայլում, Եվդոկիային բռնեցին հարսնախոս կինն ու օգնականուհին, այլապես ընկնելու էր... Պսակեցին... Պղնձյա սառը խաչը մոտեցրին համբուրելու: Եվդոկիան ծնկի իջավ, դեմքը հպեց ամուսնու սեկն սապոգներին: Հրեշտակաց ձայնի նմանությամբ, երգեցիկ ու նվազաձայն խոսեց միտրոպոլիտը.

— Զկնի փրկության հոգու, հարկ է ամուսնուն գավազանով խրատել զկինն յուր, զի մարմինն է հանցալոր ու տկար...

Եվդոկիային բարձրացրեցին: Հարսնախոս կինը բարձրացրեց քողի տուտերը: «Նայիր, նայիր, տեր արքա»,— և վեր ցատկելով, քողը պոկեց ջահել թագուհու գլխից: Պյոտրը ագահ հայացք նետեց: Ցած հակած, տանջահար ու կիսամահկական դեմք: Լաց լինելուց ուռած բերան: Փափկիկ քթիկ: Գունատությունը քողարկելու համար հարսին շպարել ու ներկել էին... Ամուսնու վառվող, կլորերես հայացքից երկնչելով, նա դեմքը թեքով ծածկեց: Հարսնախոս կինը թևքը ետ տարավ: «Դեմքդ բաց արա, թագուհի, լավ չէ... Աչքերդ բարձրացրու...»: Բոլորը սեղմ օղակեցին նորապսակներին: «Մի տեսակ գունատ է»,— ասաց Էն Կիրիլովիչը... Լոպուխինները հնչեղ ներշնչեցին, արտաշնչեցին, պատրաստ վիճելու, եթե Նարիշկիններ սկսեն փնովել նորահարսին... Եվդոկիան բարձրացրեց խած, արցունքակալած աչքերը: Պյոտրը շրթունքները հպեց նրա ատին, աղջկա շուրթերը թույլ-թույլ շարժվեցին ի պատասխան... Քթի տակ ծիծաղելով, Պյոտրը համբուրեց նրա շրթունքները՝ Եվդոկիան փոնկաց...

Դարձյալ ատիպված էին գնալ նույն պալատը, ուր պսակի ծեսն էին արել: Ճանապարհին նորապսակների վրա վուշ ու կանեփ էին շաղ տալիս հարսնախոսները, վուշի մի հատիկ էր կպել Եվդոկիայի ներքևի շրթունքին ու մնացել: Մաքուր, կարմիր շապիկներ հագած մուժիկները, որոնց հատկապես բերել էին տվել Տվերից, անխռով ու ջանադիր դափ էին զարկում, փող փչում: Պար եկող կանայք երգում էին: Նորից սառն ու տաք ուտելիք մատուցեցին. հիմա արդեն հյուրերն ուտում էին լիքը բերան: Բայց նորապսակների համար անպատշաճ էր ուտել: Երբ կարապաձև երրորդ կերակրատեսակը բերեցին, նրանց առաջ տապակած հավ դրեցին: Բորիսը ձեռքով վերցրեց հավը մատուցարանից, փաթաթեց սփոցով, և գլուխ տալով Նատալյա Կիրիլովնային ու Ռոմոդանովսկուն, Լոպուխինին և Լոպուխինային, զվարթաձայն ասաց.

— Օրհնեցեք՝ նորապսակներին ճաշելու տանենք...

Արդեն գինովցած ազգականներն ու հյուրերը թագավորին ու թագուհուն խմբովի տարան խորդանոց: Ճանապարհին մթության մեջ մի կին, որ չիմացան ով էր, շրջած մուշտակը հագին, քրքջալով, դույլից վուշ ու կանեփ էր ցանում նրանց վրա: Բաց դռան մոտ կանգնած էր Նիկիտա Զոտովը՝ թուրը մեկնած: Պյոտրը բռնեց Եվդոկիայի ուսերից, կինը աչքերը փակեց, դիմադրելով ետ ընկավ, հրեց խորդանոց ու կտրուկ շրջվեց հյուրերի կողմը՝ նրանց ծիծաղը կտրվեց, երբ տեսան Պյոտրի աչքերը, ետ-ետ գնացին... Դուռն իր վրա կողպելով ու նայելով բռունցքները կրծքին սեղմած, անկողնու մոտ կանգնած կնոջը, Պյոտրը սկսեց կրծել եղունգը: Սատանան գիտե, թե ինչքան էր տհաճ ու անդուր, զայրույթը ետ էր գալիս... Անիծյա՛լ հարսանիք: Հին ծեսով արեցին, ուրախացան: Հապա սա՞ կանգնել-մնացել է՝ մի փոքր աղջիկ, որ դողում է գառան պես: Վրայից պոկեց ուսնոցը, գլխի վրայով հանեց պատմուճանը, շպրտեց աթոռի վրա:

— Նստիր, նստիր... Ավդոտյա... Ինչի՞ց ես վախենում:

Եվդոկիան թեթև ու հնազանդ գլխով արեց, բայց այդչափ բարձր անկողնու վրա ելնել չէր կարող ու շշկլվեց: Նստեց ցորենի տակառի վրա: Վախեցած, շեղ նայեց ամուսնուն ու կարմրեց:

— Ուտել կուզե՞ս:

— Հա,— շշնջաձայն պատասխանեց կինը:

Մահճակալի տակ, մատուցարանով դրված էր տապակած այն հավը: Պյոտրը պոկեց ոտը, միանգամից, անհաց ու անաղ, սկսեց ծամել: Պոկեց թևը.

— Ա՛ռ:

— Շնորհակալ եմ...

3.

Փետրվարի վերջին ռուսական զորքը նորից շարժվեց դեպի Ղրիմ: Զգուշավոր Մազեպան խորհուրդ էր տալիս Դնեպրի ափով ետաքաշվել՝ պաշտպանական փոքրիկ ավանների կառուցելով, սակայն Վասիլի Վասիլևիչի մոտ ծպտուն իսկ հանել չէր կարելի հապաղման մասին՝ ցանկանում էր շուտափույթ հասնել Պերեկոպ, կռվով մաքրել անփառունակության դրոշմը:

Մոսկվայում դեռ սահնակներով էին շրջում, իսկ այստեղ ընձախոտի թավշով էին պատվել բլրակները, կանաչած հարթավայրում քամին ողող լճակների թաղանթն էր ալիքում, ձիերը գնում էին ծնկահաս ջրերի միջով: Գարնանային ամպերի արանքից մերթընդմերթ կուրացնում էր արևը: Ա՜հ, ի՜նչ հող էր այստեղ՝ սև, պտղաբեր—ոսկու հանք: Անտառաբնակ ու ճահճաբնակ մուժիկներին քըշևին-բերևին այստեղ՝ մինչև կուլորդները թաղված կլինեին ցորենի մեջ: Բայց չորաբոլորը ոչ մի շունչ չկար, միայն բարձրում, ձիգ ու գիլ կանչերով թռչում էին կռունկների երամները: Գնդեվարվածների արցունքով էին ողողված այս տափաստանները՝ դարեր շարունակ միլիոնավոր ռուսներ էին անցել այստեղով, որոնց ստրկությամբ էին տարել թաթարները՝ կոստանդնուպոլսյան թիանավերի վրա, Վենետիկ, Ծենովա ու Եգիպտոս...

Կազակները գովում էին տափաստանը. «Բերք ստանալն էստեղ հեշտից հեշտ է, մեկին քսան, թքես՝ ծառ կբուսնի: Թե անիծված թաթարները չլինեին, քանի-քանի խուտորներ կարքեինք»: Հյուսիսային գավառների զորականները ապշած էին պարարտ հողերով. «Արդար կոիվ է սա,— ասում էին,— կարելի՞ է, որ էս տեսակ հողն անօգուտ մնա»: Կալվածատեր-աշխարհագրականները տեղեր էին փնտրում դաստակերտների համար, վիճում բաժանքի վրա, վազ տալիս Վասիլի Վասիլևիչի վրանը՝ խնդրելու. «Ապտված տա գրավենք էս կողմերը, թագավորը թող մի կտոր հող շնորհի էսինչ ծ՝ բակից մինչև քարե կուռքով բլուրը...»:

Մայիսին մոսկովյան և ուկրաինական հարյուր քսան հազարանոց զորքը հասավ լայնարձակ, արոտավայրերով ու ջրերով հարուստ Կանաչ Հովիտ: Այստեղ կազակները Վասիլի Վասիլևիչի մոտ մի լեզու բերեցին՝ պնդակազմ, արևառությունից փայլող շիկամորուս թաթար էր, բամբակյա խալաթով: Վասիլի Վասիլևիչը թաշկինակը քթին տարավ, որ չառնի թաթարական ոչխարի ճարպի զարշահոտությունը, հրաման տվեց հարցաքննել: Խալաթը պոկեցին թաթարի վրայից, մանրիկ ատամները մերկացրած, սափրած ու կապտավուն գլուխը դեսուդեն տարավ գերին: Մոալանդեմ մի կազակ մտրակը շրմփացրեց նրա ուսերին: «Բեդը չի, բեդը չի, ամեն ինչ գասեմ»,— բլբլացրեց թաթարը: Կազակները թարգմանեցին առածը. «Քաչալն ասում է, թե հորդան մոտերքում է կանգնած, խանն էլ հետևերն է...»: Վասիլի Վասիլևիչը խաչանքից ու մարդ ուղարկեց Մազեպային կանչելու: Իրիկնադեմին ծանրված զորքը՝ ճեծելազորն աջ ու ձախ թևերում, գումակն ու հրետանին մեջտեղում, շարժվեց թաթարների վրա:

Ցանրիկ ու տրորված հարթավայրի վրա նոր էր բարձրացել նարնջագույն արեգակի բլիթը, ռուսները տեսան թաթարներին: Նրանց հնձյալ խմբերն ի մի էին գալիս ու ցրվում: Սայլի վրա կանգնած Վասիլի Վասիլևիչը հետադիտակով զննում էր գույնզգույն խալաթները, սրածայր սաղավարտները, խոշոր այտոսկրերով չադրախինդ դեմքերը. ձիու պուչերը նիզակների վրա, կանաչ չալմաներով ծանրումեծ մոլլաներին: Հորդայի առաջապահ զորամասն էր:

Հեծյալ ջոկատները շրջեցին, հավաքվեցին ու հոծ խումբ դարձան: Փոշի բարձրացավ: Եկա՜ն: Այնպես, թաթարները լավայի պես բացվեցին: Զիլ ոռնոց լսվեց: Թաթարները կորան փոշու մեջ, որը ռուսների վրա էր փչում: Հետադիտակը դողաց Վասիլի Վասիլևիչի ձեռքերի մեջ: Սայլին կապած նրա ձին, սանձը կտրելով, գետին տապալվեց՝ վզի մեջ խրված էր փետրազարդ նետը... Վերջապես տնքոցով որոտացին թնդանոթները, ճարճատեցին մուշկետները՝ ճերմակ ծխի քուլաները ծածկեցին ամեն ինչ: Վասիլի Վասիլևիչի զրահին նետի երկաթյա ծայրը գրնգաց՝ ուղիղ սրտի վրա: Ցնցվելով, խաչակնքեց այդ տեղը...

Ավելի քան մեկ ժամ կրակում էին... Երբ ծուխը ցրվեց, հարթավայրում մի քանի ձի էին ջղաձգվում, հարյուրի չափ դիակներ էին փռված: Կրակով ետ մղված թաթարները հեռանում էին հորիզոնից այն կողմ: Հրաման տրվեց ճաշ եփել, ձիերը ջրել: Վիրավորներին դրեցին սայլերի վրա: Արևամուտից առաջ մեծ զգուշությամբ կրկին շարժվեցին դեպի Սև Հովիտ, ուր Կոլոնչակ գետակի մոտ խանն էր կանգնած, հորդայի հետ:

Գիշերն ուժեղ քամի բարձրացավ ծովից: Աստղերը ծածկվեցին: Հեռուներում թույլ որոտներ էին լսվում, ամպրոպի գոռոց: Անթափանց ամպերի մեջ օտարոտի փայլատակումներ էին ճարճատում, լուսավորելով գորշ հարթավայրը՝ ասված, օշինդր ու աղուտներ: Զորքերը դանդաղ էին շարժվում: Ժամը հինգին մոտ երկինքը պատռվեց, գումակի մեջ հրե մի սյուն ընկավ՝ թնդանոթը հալեցրեց, սպանեց հրաձիգներին: Հողմ բարձրացավ, որը գետին էր տապալում, պոկում-տանում էր այծենակաճները, գլխարկները, սայլերի վրայի խոտը: Աչք կուրացնելով, կայծակներ էին ճայթում: Հրաման արձակվեց Դոնյան աստվածամոր սրբապատկերը բարձրացնել ու շրջել զորքի մեջ:

Անձրևը տեղաց այգաբացին: Ջրի քամահալած շղարշի միջից զորքի աջ թևում տեսան հորդան՝ թաթարները մոտենում էին կիսալուսնաձև: Ռուսներին թույլ չտալով ուշքի գալ, հեծելազորը ոտատակ տվեցին ու առաջապահ զոնը սեղմեցին գումանին: Թնդանոթների պատրույգները չէին վառվում, հրազեն զենքերում թրջվել էր վառոդը: Անձրևի շիշփոցը խլացնում էր վիրավորների աղաղակները: Եռաշար սայլերի առաջ թաթարները կանգ առան: Նրանց աղեղները թրջվել էին, և նետերն ընկնում էին անուժ:

Վասիլի Վասիլևիչը, ձին թողած, դեսուդեն էր ընկել գումակում, մտրակում էր հրաձիգներին, հրում անիվները, ձեռքներից խլում պատրույգները: Անձրևը լցվում էր մարդկանց աչքերն ու բերանը: Այնուամենայնիվ, հրաձիգները կարողացան քուրքերով ծածկված կրակ հանել կայծքարերից, մի քիչ չոր վառոդ ցանել, և դղրդացին թնդանոթները, կապարե գնդակներ արձակելով թաթարական այրու-

ձիի վրա... Զախ թևում Մազեպան իր կազակների հետ կռվում էր կատաղած: Եվ ահա կանչեցին մոլլաները՝ թաթարները նահանջեցին, ծածկվելով ամպ ու անձրևի մշուշից այն կողմ:

4.

«Իմ տեր ու տիրական, իմ ուրախություն, Պյոտր Ալեքսեևիչ ցարին... Բարև քեզ, իմ աչքի լույս, երկար տարիների կյանք քեզ...»:

Եվդոկիայի հոգին դուրս եկավ գրելով: Երեք մատներն էլ, որոնցով սագի փետուրն էր բռնել ամենածայրից, թանաքոտվել էին: Երրորդ թերթ թուղթն էր փչացնում. կամ տառերն էին ծռտռմուռ առացվում, կամ թանաք էր կաթեցնում: Այնինչ, ուզում էր այնքան ջերմ գրել, որ Պետենկան ուրախանար նամակն ստանալիս:

Բայց մի՞թե թանաքով թղթի վրա կարելի է ասել այն ամենն, ինչով իր սիրտն է լեցուն: Դրսում ապրիլ ամիսն է: Կեչիներն են կանաչել, կարծես ճտի բմբուլ լինի ծառերի վրա: Զլան պես ճերմակ ամպեր են լողում կապույտ խորքերում:

Եվդոկիան նայում էր ամպերին, նայում, և արտնանունքների վրա արցունքի կաթիլներ էին գնդվում՝ թերևս անխելքությունից լինի... Աչք գցեց դռանը՝ հանկարծ սկեսուրը չմտնի ու տեսնի... Թևքով սրբեց աչքերը: Կնճռոտեց ճակատը:

...Է՞լ ինչ գրի... Պերեյասլավի լիճ գնաց իր հոգյակը և չի գրում, թե երբ սպասեն իրեն... Միասին պաշ կպահեին, առավոտյան ժամերգության կգնային... Պասը բաց կանեին... (Եվդոկիան հիշեց հավը, թե ինչպես կերան պանկվելուց հետո, կարմրեց ու քթի տակ ծիծաղեց...) Թաթախման առաջին օրը կարելի է աղջիկներին կանչել՝ դրսում, խոտերի մեջ պահմտոցի խաղալու, ձու գլորելու... Երգ, շուրջպարեր: Ճոճթու վրա ծիծաղել, աչքակապուկ խաղալ: Արդյոք գրի՞ այդ մասին... Պետենկա, սիրելիս, հոգիս, շու-ռ՞ւտ արի, կարոտե՞լ եմ... Մի՞թե կգրվի. այդպիսի տառեր էլ չկան գրելու համար...

Նորից վերցրեց փետուրն ու, շրթունքները շարժելով, գրեց.

«Ցնորհդ ենք խնդրում, իմ տեր ու տիրական, ողորմած եղիր, անհապաղ արի... Կինդ՝ Դունկան, խնդրանք է անում...»:

Կարդաց ու ուրախացավ՝ շատ լավ է գրված: Տեր աստված, անխելքի մեկը, ակեսրոջը չի հիշատակել: Հիմա արդեն չորրորդ անգամ պիտի արտագրեր... Ա՛հ, սկեսուր մայրիկը՝ Նատալյա Կիրիլովնան, շատ է խիստ... Ինչքան էլ սիրաշահես, միշտ մի բան կըգտնի, որ տեղը չի լինի... Ասենք՝ ինչի՞ ես նիհար: Ամենևին էլ նիհար չէ. ամեն ինչը տեղը տեղին, կլորիկ, թմբլիկ... Ինչի՞ համար Պետրուշան երկրորդ ամսին քեզ թողեց ու գնաց Պերեյասլավի լիճ: Ինչ է, չինի՞ հոտած էր, կամ հիմար ու ձանձրալի, որ ամուսինդ աշխարհի ծայրն է փախել, ինչպես ժանտախտի վարակից... Ոչ հիմար եմ, ոչ էլ վարակ... Ինքներդ եք մեղավոր՝ ինչի՞ եք թողնում, որ Լեֆորտը , Ալեքսաշկան ու գերմանացիները գնան ու գան,

հենց նրանք էլ գայթակղեցրին հոգյակիս, Պերեյասլավի լիճ տարան ու դեռ ավելի վատ տեղեր էլ կտանեն:

Եվդոկիան բարկացած թաթախեց փետուրը: Բայց աչքերը բարձրացրեց՝ կեչիների կանաչի արանքից աղոտ լույս էր թափանցում պատուհանի վրա, լուսամտագոգին մի աղավնի էր տոտ-տոտ անում, կոկորդը փքելով, ինչ-որ թռչուններ էին ճովողում... Մարգագետնի բույր էր տարածվել: Եվ չորրորդ մաքուր թերթի վրա արցունք կաթեց... Այ քեզ պատի՞ժ...

5.

Ամեն օր նամակ էր գալիս մորից կամ կնոջից. առանց քեզ տրխուր է, գրում էին, ե՞րբ պիտի գաս, Տրոիցեն կգնանք միասին... Հնավանդ մի ձանձրույթ: Պյոտրը ոչ միայն պատասխանելու, այդ նամակները կարդալու ժամանակ չուներ: Ապրում էր նոր կառուցված գերանակապ խրճիթում, հենց նավաշինարանում, Պերեյասլավի ընդարձակ լճի ափին, ուր հատարյա ավարտված երկու նավ էին կանգնած նավարանների հենապերանների վրա: Տախտակամածներն էին ծածկում, քթերի փայտյա գլուխները քանդակում: Երրորդ նավը՝ «Ալթոռանիստ քաղաք Պետերբուրգ», արդեն ջուրն էին իջեցրել. երեսունութ քայլաչափ էր ջրագծով, ոսկեգոծ ջրսեպարով զարդարված շեղակի քթով, բարձր խելով, որի վրա ընդհանուր նավասենյակն էր կառուցված: Զարխաքաշ ճաղերով եզերված հարթ տանիքի վրա ադմիրալական կամրջակն էր ու ապակյա խոշոր լապտերը: Վերևի տախտակամածի տակ երկու կողերի բացված անցքերից ութական թնդանոթ էր ցցված: Վեր ելնող կողերը փայլում էին սև կպրից:

Առավոտները, երբ լճի վրա թեթև գոլորշի էր կանգնում, եռակայմ նավն ասես կախված լիներ օդի մեջ, ինչպես հոլանդական զարմանալի նկարներում, որ Բորիս Գոլիցինն էր գնիրել... Միայն քամու էին սպասում, առաջին նավարկության գնալու համար: Հակառակի պես, երկրորդ շաբաթն էր տերև անգամ չէր շարժվում ծառերի վրա: Լճի վրա դանդաղ լողում էին ճերմակ ամպերը՝ կապույտ երկնքում: Բարձրացվող առագաստները միայն ծածանվում էին ու կախ ընկնում: Պյոտրը չէր հեռանում Կարտեն Բրանդտից: Ծերուկը տկար էր դեռևս փետրվարից՝ կուրծքը կտոր-կտոր էր լինում խորխառատ հազից: Բայց և այնպես կարճ քուրքի մեջ փաթաթված, ամբողջ օրը նավաշինարանում էր. զայրանում էր, բղավում, երբեմն էլ կռվում ծուլության կամ հիմարության հանդիպելիս: Հատուկ հրամանով նավաշինարան էին բշել-բերել մի հարյուր հիսուն շունչ վանքապատկան գյուղացիների՝ հիսուներ էին, երկայնական սղոց քաշողներ, դարբիններ, հողփորներ, նաև ձեռքի շնորհք ունեցող կանայք՝ առագաստ կարելու համար: Ռազմախաղի գնդերից ազատված հիսուն զինվոր այստեղ ծովագնացություն էին սովորում՝ արձակել ու ամրացնել հոպանների ծայրերը, բարձրանալ կայմերի վրա, հրամանները լսել ու հասկանալ: Նրանց սովորեցնողն օտար-

երկրաչափ էր, պորտուգալացի Պամբուրգը՝ կորաքիթ, իսզանակի պես սև բեղերով մի զայրացկոտ սատանա, ծովահեն: Ռուսները նրա մասին ասում էին, թե արածների համար իբր քանի-քանի անգամ կախաղան են հանել, բայց սատանան փրկվել է, ողջ պրծել ու հիմա այստեղ է ընկել:

Սատիկ անհամբեր էր Պյոտրը: Լույսը չբացված բանվորներին ոտքի էր հանում թմբկագարկով, երբեմն էլ մահակներով: Գարնան գիշերները՝ կարճ, շատերը հոգնածությունից ընկնում էին: Նիկիտա Զոտովը նագիվ էր հասցնում գրել նորին բ. մ. ց. և մ. ի. համայն Մ. Փ. և Ս. Ռ. հրամանագրերը հարևան կալվածատերերին, որ ուտելիք հասցնեն. նավաշինարան բերեն հաց, թոչնեղեն, միս: Վախից բերում էին կալվածատերերը: Ավելի դժվար էր դրամ հայթայթելը: Թեև Սոֆյան ուրախ էր, որ եղբայրն ավելի է հեռացել Մոսկվայից, ուր լավ կլիներ խորտակվեր իր ռազմախաղի նավի հետ, բայց Արքունի մեծ վարչատանը դրամի հետք անգամ չկար, ամեն ինչ Գրիմի պատերազմն էր կլանել:

Երբ Ֆրանց Լեֆորտին հաջողվում էր ազատվել ծառայությունից ու Պետերբուրգի նավաշինարան հասնել, ծայր էր առնում ուրախությունը: Հետը գինի էր բերում, երշիկեղեն, սնուշեղեն, և աչքով անելով՝ ոչջան Անննա Մոնսից. առողջացել է, ավելի գեղեցկացել և ողորմածաբար խնդրում է հետո Պիտերին երկու կիտրոն ընդունել որպես ընծա:

Փայտաշեն նոր խրճիթում, նաշին ու ընթրիքին չի գավաթներ էին բարձրանում սրբեցապակյան մեծ նավատորմի կենացը: Հատուկ դրոշ հորինեցին. եռանկյուն էր. սպիտակ, կապույտ ու կարմիր: Ծտարերկրացիները պատմում էին վաղեմի նավարկությունների, փոթորիկների ու ծովամարտերի մասին: Պամբուրգը, ոտքերը չուած, բեխերը շարժելով, բղավում էր պորտուգալերեն, կարծես իրոք ծովահենների նավի վրա լիներ: Պյոտրը այդ պատմություններն ըմբոշխնում էր աչքերով ու ականջներով: Ցամաքաբնակ այդ մարդն ինչի՞ց էր այդպես սիրում ծովը: Բայց գիշերները վերնաթախտին, Ալեքսաշկայի կողքը պառկած, նա երազում ալիքներ էր տեսնում, անծայրածիր ջրերի վրա կիտված ամպեր, հեռվում լողացող նավերի ուրվականներ:

Ոչ մի գնով չէր լինի նրան հրապուրել ու Պրեոբրաժենսկոյե տանել: Երբ շատ էին հոգի հանում նամակներով, պատասխան էր գրում.

«Անչափ սիրելի ու կյանքից ավելի թանկագին, թագուհի մայրիկ Նատալյա Կիրիլովնային անարժան զավակդ՝ Պետրունյան, որ գրչի մեջ է թաղված, օրհնությունդ է խնդրում և քո առողջության մասին լուր է պատում: Ինչ վերաբերում է, որ բարեհաճել էիք հրամայել Պրեոբրաժենսկոյե գամ, ու ես պատրաստ եմ գալ, բայց շատ-շատ գործ կա. նավերը բոլորը պատրաստ են, ճոբանների համար ենք կանգնել: Ու մեկ էլ ողորմածաբար խնդրում եմ, որ ճոբանները

Թնդանոթային վարչատնից ուղարկեն առանց ուշացնելու: Դրանով մեր գործն ու կյանքը կշարունակվի: Այսու օրհնություն եմ խնդրում: Անարժան Պետրուս»:

6.

Իվաշկա Բրովկինի խրճիթի մոտով անցնելիս հիմա գլխարկները հանում էին: Ամբողջ գյուղը գիտեր. «Իվաշկայի Ալեքսեյ տղան ուժեղ մարդ է, ցարի աջ ձեռքն է, ու թե որ Իվաշկան աչքով անի, ուզածի չափ փող կբերի կտա»: Ալյոշկայի տված փողով (երեքուկես ռուբլի) Բրովկինը մի լավ հորթ գնեց մեկուկես ռուբլով, ոչխար՝ երեսունհինգ կոպեկով, չորս խոճկոր՝ հատը երեք ալտին, կարգի գցեց լծասարքը, նոր դարպաս շինեց և ութ դեսյատին հող վարձեց մուժիկներից՝ գարնանացանի համար, տալով մեկ ռուբլի, մի դույլ օղի, խոստանալով պտացած բերքի հինգ խրձից մեկը:

Ոտի կանգնեց մարդը: Էլ քուլ չէր կապում կոնքոսկրերին, այլ մոսկովյան գոտի՝ թեատակերից, որ կուշտ փորը երևա: Գլխարկը քաշում էր աչքերին, մորուքն առաջ տնկում: Այդպիսի մեկին գլուխ պիտի տաս: Ասում էր նաև. «Համբերի, աշնանը գնամ տղայիս մոտ, փող վերցնեմ, ջրաղաց եմ սարքելու»: Վոլկովի կառավարիչն արդեն Իվաշկա ու «դու» չէր ասում, խուսափողաբար Բրովկին էր կոչում: Կոոից ազատեց նրան...

Տղաներն էլ մեծացել էին, օգնական դարձել: Յակովն ամբողջ ձմեռ հարևան գյուղը՝ դպրի մոտ էր գնում, գրել-կարդալ սովորելու, Գավրիլան գեղեցկատես պատանի էր դարձել, փոքրը՝ սուսուփուս Արտամոշկան, նույնպես անխելք չէր: Աստված լավ երեխաներ էր տվել Իվաշկային: Արդեն խնամախոսներ էին գալիս աղջկան՝ Սանկային ուզելու, բայց ներկա վիճակում մտածելու բան էր. կնության տա՞լ նրան տրեխավոր մի մուժիկի, թե...

Հուլիսին լուր տարածվեց, զորքը վերադառնում է Ղրիմից: Սկսեցին զորականների՝ հայրերի ու զավակների ճամփան բռնել: Երեկոները կանայք բլրակն էին բարձրանում՝ ճանապարհին նայելու: Թափառական մի ուխտավորից իմացան, որ հարևան գյուղերում իսկապես վերադարձողներ կան: Կանայք լացը դրեցին. «Մերոնց սպանել են...»: Վերջապես գյուղում հայտնվեց զորական Գնչուն, ամբողջովին մուզ ու մորուքի մեջ կորած, մի աչքը կուրացած, շալվարն ու շապիկը փտել էին մարմնի վրա:

Բրովկինն ընտանիքի հետ ընթրում էր բակում, շչի էին խաղաստում աղ դրած մսով: Դարպասը թակեցին: «Հանում հոր և որդվո և հոգվույն սրբո...»: Իվաշկան գդալն իջեցրեց, կասկածանքով նայեց դարպասին:

— Ամեն,— պատասխանեց: Ու՝ բարձրաձայն.— Տես հա, մեր շները կատղած են, զգույշ մնա:

Ցաշկան քաշեց պողնակը, և ներս մտավ Գնչուն: Աչք ածեց բա-

կը, ընտանիքը, և ջարդված ատամներով բերանը բացելով, խուլ-տաձայն թնդաց.

— Բարաջողում:— Նստեց սեղանի մոտ դրած կոճղին:— Բաց տե՞ղ եք իրիկնահաց անում: Ներսում ճանճ շատ կա, հը՞:

Իվաշկան հոնքերը շարժեց: Բայց Սանկան ինքնագլուխ մի ամամ շշի դրեց Գնչուի առաջ, գդալը գոգնոցով սրբեց ու նրան տվեց.

— Մեզ հետ անուշ արա, հայրիկ:

Բրովկինը զարմացավ Սանկայի համարձակության վրա... «Հետո,— մտածեց,— մազերը կպոկեմ... Էդպես ամենքի առաջ ուսեցածը չեմ դնի...»: Բայց վեճ բացելուց ամաչեց: Գնչուն քաղցած էր, ուտում էր, աչքերը կկոցած...

— Կովեցի՞ք,— հարցրեց Բրովկինը:

— Կովեցինք... (Ու նորից անցավ շշին:)

— Է, ո՞նց էր, ոնց չէր,— նստած տեղը շուռումուռ գալով, նորից հարցրեց Բրովկինը:

— Սովորական: Ոնց որ կովում են, էդպես էլ կովեցինք:

— Հաղթեցի՞ք թաթարին:

— Հաղթեցինք... Պերեկոպի տակ մերոնցից մի քանի հազար թաղեցինք, մի էդքան էլ ետ գալուց...

— Ա՛խ-ա՛խ,— Բրովկինը գլուխն օրորեց:— Բայց էստեղ ասում են, թե խանը հնազանդվել է մեզ...

Գնչուն բացեց նոսր ու դեղնած ատամները:

— Ովքեր մնացին Ղրիմի հողում փտելու, նրանց կհարցնես, թե խանն ինչպես հնազանդվեց մեզ... Շոգ, ջուր չկար, ձախից նեխած ծովն էր, աջից Սև ծովը, ջուրը խմելու չի, ջրհորների մեջ թաթարները լեշուլուշ էին լցրել... Պերեկոպն անցանք ու կանգնեցինք՝ ոչ առաջ, ոչ ետ: Մարդիկ, ձիերը ճանճի պես կոտորվում էին... Կովեցինք էլի...

Գնչուն բեխերը հարթեց, սրբվեց, արնակոխ մի աչքով ու մյուսի մեռած կոպով նայեց Սանկային. «Ծնորհակալ եմ, աղջիկս...»: Թիկն տվեց:

— Իվան... Ես որ կոիվ էի գնում, մի կով ունեի մնացած...

— Կառավարչին ասինք՝ որ ետ գաս, ո՞նց ես ապրելու առանց կով... Չլսեց, տարավ:

— Լավ... Բա խոզե՞րը: Մի որձ, երկու մերուն՝ ամբողջ գյուղին խնդրեցի, որ նայեն...

— Նայել ենք, հոգիս, նայել ենք... Կառավարիչը մթերքի հարկով շատ նեղեց մեզ... Մտածեցինք, թե կարող է քեզ սպանեն կրռվում...

— Ու իմ խոզերը Վոլկո՞վը խժռեց:

— Կերավ, կերավ:

— Լավ...— Գնչուն ձեռքը տարավ չանցած, երկաթալար դարձած մազերին, խառնշտեց.— Լավ, Իվան...

— Համմե՞:

— Բան չասես, որ եկել եմ տունդ:

— Ո՞վ ունեմ՝ ասելու: Միշտ էլ սուս մնացող եմ:

Գնչուն վեր կացավ: Աչքը խեթեց Սանկայի կողմը: Անձայն քայլեց դեպի դարպասը: Եվ այնտեղից սպառնաց.

— Տես հա՞, ձեն չհանես, Իվան... Մնաս բարով:— Ու չքացավ: Այդ օրվանից նրան գյուղում չտեսան այլևս:

7.

Օվսեյ Ռժովը, ոտքերի վրա ճոճվելով, կանգնած էր Վարվառկայի պանդոկի դռան առաջ, ափի մեջ լցրած փողն էր հաշվում: Մոտեցան ստրելեցյան հիսնապետներ Նիկիտա Գլադկին ու Կուզմա Զյորմնին:

— Բարև, Օվսեյ:

— Հերիք գոռշներդ հաշվես, արի մեզ հետ:

Գլադկին շշնջաց.

— Խոսել է պետք, վատ լուրեր են գալիս...

Զյորմնին զնգացրեց գրպանի արծաթ դրամները, քրքջաց.

— Մի քեֆի հերիք կանի...

— Չլինի՞ մարդ եք թալանել,— հարցրեց Օվսեյը:— Ա՛խ, ստրելեցներ, ինչեր եք անում...

— Տիմար,— ասաց Գլադկին,— պալատում պահակության էինք: Հասկացա՞ր:— Ու նորից քրքջացին երկուսով: Օվսեյին տարան պանդոկ: Նստեցին մի անկյունում: Խստադեմ, ծերունի օղեվաճառը մի շտոֆ խմիչք բերեց ու մոմ: Զյորմնին իսկույն փչեց հանգցրեց մոմն ու կոացավ սեղանի վրա, լսելով, որ Գլադկին սկսել է շշնջալը:

— Ախտս, մեզ հետ պահակության չէիր: Կանգնած էինք... Դուրս եկավ Ֆյոդոր Լեոնտևիչ Շանլովիտին: «Արքայադուստրն, ասեց, ձեր հավատարիմ ու անբասիր ծառայության համար հնգական ռուբլի է բախշում...»: Ու մի տոպրակ արծաթ տվեց... Սուս էինք՝ տեսնենք, թե մտքինն ինչ է: Ու նա էսպես դառը տնքաց. «Էհ, ասեց, ստրելեցներ, հավատարիմ ծառաներ, քիչ մնաց ձեզ ձեր կնանոց հետ Մոսկվա գետի այն կողմի հարուստ բակերում ապրելուն...»:

— Էդ ինչպե՞ս քիչ մնաց,— վախեցած հարցրեց Օվսեյը:

— Էդպես... «Ուզում են, ասեց, ձեզ՝ ստրելեցներիդ, տեղափոխել ու ցրիվ տալ քաղաքներով, ինձ հանեն Ստրելեցյան վարչատնից, արքայադստերն էլ մենաստան ուղարկեն... Ու ամեն ինչի խառնողը ձեր թագուհի Նատալյա Կիրիլովնան է... Պյոտրին էլ դրա համար է պապակել... Նրա ասածներով ծառաները, մենակ թե չենք կարողանում իմանալ՝ ով, Իվան ցարին դանդաղ թույն են տալիս, ասեց, դռների առաջ փետ ու գերան են լցրել, ետևի մուտքով է ներսուդուրս անում... Իվան ցարը երկար ապրող չի էս աշխարհում: Էլ ո՞վ պիտի սիրի ձեզ՝ ստրելեցներիդ: Ո՞վ պիտի պաշտպան կանգնի»:

— Բա Վասիլի Վասիլևի՞չը,— հարցրեց Օվսեյը:

— Մի մարդուց էին նրանք վախենում՝ Վասիլի Վասիլևիչից: Իսկ հիմա, բոյարները ոտով գլխով կծախեն նրան՝ դրիմյան անպատվության համար... Պլոտորին կնստեցնեն մեր վզին...

— Լա՜վ, էդ մեկը կտեսնենք... Կսպասեն: Առաջին անգամ չէ, որ կոչնազանգով ոտի ենք ելել...

— Կամաց զոռա:— Գլադկին Օվսեյի օձիքից բռնեց, մոտեցրեց ու հազիվ լսելի ասաց.

— Մենակ կոչնազանգով մեզ փրկություն չի գա, թեկուզ բոլորին էլ կոտորենք, ոնց որ յոթ տարի առաջ, արմատը չենք պոկի... Հին էզ արջին է պետք բռնել... Արջի ձագի՞ն ինչի բաց թողնենք: Ի՞նչ է եղել: Նրան էլ ցցի կհանենք, հարկավոր է, որ ինքներս մեզ փրկենք, տղերք...

Մթին ու սարսափելի էին Նիկիտա Գլադկիի ասածները: Օվսեյը դողացրեց: Չլորմնին լցրեց անագե բաժակները.

— Էդ գործը սուտուիստ պիտի արվի... Մի հիսուն հավատարիմ մարդ հավաքենք, գիշերով Պրեոբրաժենսկոյեն կրակ տանք: Կրակի մեջ դաշույնների վերքերը տանք՝ մաս-մաքուր...

8.

Ստրելեցների գնդերը վաղուց արդեն տեղաբաշխված էին արվարձաններում, աշխարհազորական կալվածատերերը վերադարձել էին իրենց դատարակերտները, իսկ Կուրսկի և Ռյազանի ճամփաներով շարունակում էին դեպի Մոսկվա շարժվել վիրավորները, անդամալույծները ու փախստականները: Գավիթներում խոնված, ցույց էին տալիս զարհուրելի վերքերը, ոռնաձայն բարեսիրտ մարդկանց էին պարզում կտրված ձեռքերը, շրջում անկենդան կրակները:

— Ձեռ տվեք, ուղղափառ մարդիկ, հրես նետը կրծքիս մեջ...

— Բարեգութ մարդիկ, երկու աչքս դուրս է եկել, կոպալով գլխիս էնքան եմ տվել, օ-օ-օ-օ՜...

— Մի հոտ քաշի, վաճառական, տես՝ մինչև արմունկ ձեռս փտել է...

— Մեջքիցս երեք տակ կաշի են մաշկել...

— Էս վերքերս ձիու կաթից են... Խղճացեք ինձ, բարեգութ մարդիկ...

Բարեսիրտ ծխականները զարհուրում էին չտեսնված այդ քանակից, կես գոռշանոցներ էին բաժանում: Իսկ գիշերները խուլ վայրերում կտրած գլուխներով մարդկանց էին հայտնաբերում: Թալանում էին ճանապարհների, կամուրջների վրա, մութ նրբանցքներում: Խեղանդամված զինվորները հոծ խմբերով ճգվում էին դեպի մոսկովյան շուկաները:

Սակայն Մոսկվայում էլ լիություն չկար: Խանութների շարքում շատ կրպակներ գոցվեցին, որոշ վաճառականներ սնանկացան ուժից վեր հարկերից, ոմանք էլ թաքցնում էին ապրանքն ու դրամը՝ լավ

օրերի սպասումով: Ամեն ինչ թանկացավ: Ոչ ոք դրամ չուներ: Հաց էին բերում՝ կեղտախառը, միսը ոդոնած էր լինում: Ջուկն անգամ փոքրացել, յուղազուրկ էր դարձել կովից հետո: Բոլորին հայտնի բլիթավաճառ Զայացն այնպիսի նեխած բաներ էր հանում վաճառքի՝ հոտից որձկում էին մարդիկ: Մի գեշ ճանճ հայտնվեց՝ կծելուց մարդկանց աչքերն ու շրթունքներն ուռչում էին: Ծուկաներում ասեղ գցելու տեղ չկար, բայց որ նայեիր՝ մենակ բաղնիքի ավելներ էին ծախում: Չարացած, պարապ-սարապ ու քաղցած, աղմկում էր վիթխարի քաղաքը:

9.

Միխաիլ Տրյոտովը, հովատակը սանձելով, ուղղեց գլխարկը: Գեղեցիկ էր, հագած-կապած, ֆերյազի օձիքը՝ գլխից վեր, շրթունքները ներկած, աչքերը քսած մինչև բունքերը: Կեռ թուրը զրնգում էր պարսկական ասպանդակներին կպչելով: Առմուտքից նրա կողմը թեքվեց Ստյոպկա Օդոևսկին.

— Ականջ դիր, թե ինչ են ասում... Առանց լսելու, ձեն չհանես...

— Լավ...

— Էդպես էլ կասես՝ թագուհին ու Լև Կիրիլովիչը, կասես, ամբողջ ցորենն առել են, Մոսկվան դիտավորյալ սովի մեջ են պահում... Գեշ ճանճն էլ չմոռանաս, կասես, նրանց կախարդություններից է...

— Լավ:

Սառը հայացքը ձիու ականջների արանքով ուղղած, Տրյոտովը կռացավ ու ամբողջ թափով ձին չափ զցեց բաց դարպասից դուրս: Փողոցում փոշի էր, գարշահոտություն: Մինչև գոտկատեղը մերկ, մուգ կարմիր բծերով ծածկված մի մուրացկան, մարդկանց հրմշտելով, բղավեց, ուզեց նետվել ձիու ամբակների տակ: Տրյոտովը մտրակը շրմփացրեց նրա ուսերին: Բոլոր կողմերից հարուստ բոյարի կողմը ձգվեցին հողազույն, լոսապատ ձեռքերը պարզած մարդիկ... Խոժոռված, ձեռքը կողքին կանթած Միխաիլը դանդաղ շարժվում էր հոծ բազմության միջով:

— Հարուստ մարդ ես, մի բան տուր...

— Կես գոռշ գցի...

— Բեռանով կբռնեմ...

— Փող տուր, փող տուր...

— Տես հա, կեղտ կքսեմ վրադ, ավելի լավ է, տուր...

— Մի բուռ ոջիլ եմ ծախում: Առ, ձրի կուտամ:

— Հետատակ տուր ինձ, ոտատակ, ուտել եմ ուզում...

Անհանգստացած ձին լկտմն էր կրծում, հպարտ բիբը հառած թափանարվող ցնցոտիներին, գիսախոիվ գլուխներին, սարսափելի դեմքերին: Մուրացկանները և թափառաշրջիկները, ավելի ու ավելի հանդգնացած՝ վրա էին բռնում: Այդպես դանդաղ շարժվեց մինչև Իլինկայի վերջը: Գերանի վրա, փոքր սրբապատկերի տակ հրաման

կար փակցված: Բարետես մի մարդ, ժիորը պատռելով, կարդում էր.

«Մենք՝ մեծն արքաներս, քեզ՝ մեր մերձավոր բոյարին ու կնքապահ իշխան Վասիլի Վասիլևիչ Գոլիցինին, ի շահ մեզ քո բազում ու ջանադիր ծառայությանց համար, այրազան խաչի ու համայն քրիստոնեության հույժ կատաղի և դարավոր թշնամյաց քո ծառայությամբ ոչ պատահական ու անլուր եղանակով թագավորական մեր զորքերով իրենց ապականյալ տներում ջախջախելու և հաղթելու և քշելու համար...»:

Ամբոխի միջից խոպոտ ձայն լսվեց.

— Ովքե՞ր են ջախջախվել ու հաղթվել: Մե՞նք, թե թաթարները: Ամբոխն իսկույն թնդաց, բարկացավ.

— Էդ մենք որտե՞ղ ենք թաթարին հաղթել, ե՞րբ:

— Ղրիմում մենք դրանց երեսն էլ չտեսանք...

— Տեսանք, թե ոնց էինք նրանցից փախչում գլխապատառ...

— Էն տիմա՞ն ով է՝ կարդացողը:

— Դպիրի օգնականն է Կրեմլից...

— Գոլիցինի ճորտերից է, հավատարիմ շուն...

— Դրա փեշից քաշեք, տեսնենք...

Բարետես մարդը, կոկորդ պատռելով, կարդում էր.

«...թաթարներն իրենք իրենց ու տներն իրենց ավերողները եղան, Պերեկոպում շեներն ու գյուղերը վառեցին և հուսալքությունից ու սարսափից իրենց պիղծ հորդաներով դիմացդ չկանգնեցին... Եվ որ դու զորականներով քո վերոհիշատակյալ աշխարհահռչակ հաղթանակներով մեր սահմանները վերադարձար ողջ ու առողջ՝ Մովսեսից ոչ վատ, ով Իսրայելի ժողովուրդը հանեց Եգիպտոսից, այդ ամենի համար ողորմածաբար ու գերողորմածաբար գովաբանում ենք քեզ...»:

Միաչքանի ու թխամաշկ, երկաթալարի պես մազերով մի մարդ ճորից բղավեց.

— Այ կարդացվոր, իմ մասին էդ հրամանում բան չկա՞ գրած:

Ծիծաղեցին: Ոմանք հայհոյելով հեռացան: Մի գունդ ցեխ շրմփաց հրամանագրին... «Պահանո՞ւմբ»,— բղավեց կարդացողը, ձեռքով պաշտպանվելով... Տրյոտովը, ձին մարդկանց վրա քշելով, սկսեց մոտենալ միաչքանուն: Բայց Գնչուն ընդամենը մնացած ատամները մերկացրեց նրա վրա ու չքացավ: Ինչ-որ մեկը բռնեց երասանից. «Բերեք, սրա շորերը հագից հանենք...»: Մյուսը մախաթով ծակեց ձիու կողը՝ սա ծուլ եղավ, խռխռացնելով, թափահարվելով: Սուլոցներ արձակեցին ավազակավարի: Ռոնցի, սուլոցի և հայ-հույի տակ Տրյոտովը դուրս պրծավ ամբոխի միջից:

Նիկոլսկիյե դարպասի մոտ նա տեսավ հեծյալ Ստյոպկա Օդոևսկուն և գունատ ու արծվաքիթ, գեղեցիկ բեխիկներով մի մարդու: Հաստի անշարժ ծալքերից նկատվում էր, որ ֆերյազի տակից զրահ է հագել: Տրյոտովը հանեց գլխարկն ու մինչև ձիու բաշը խոնարհվեց Ֆյոդոր Լեոնտևիչ Շակլովիտիին: Նրա խելացի դեմքը խոժոռ էր,

շրթունքներն ամուր սեղմված: Աչքերը չարացած կկոցել էր ամբոխի վրա: Օդոևսկին հարցրեց.

— Միշկա, բան ասացի՞ր նրանց:

— Ինքդ գնա ասա... (Տրյոտովի այտերը վառվում էին:) Քաղցած սատանաների համար մեկ է՝ արքայադուստր Սոֆյան կլինի, թե Պյոտրը... Մի երկու հարյուրյակ պտրելեց էր պետք էատեղ, ցրիվ տալին սրիկաներին, ու վերջ...

— Նրանց մոտ ավելի ճարպիկ մարդ է պետք ուղարկել,— ատամների արանքից ասաց Շակլովիտին,— հրահրել, որ գնան Պրեոբրաժենսկոյե, հաց խնդրելու... Թող ռազմախաղի զինվորները նրանց դիմավորեն... Կասենք, թե Պյոտր ցարի հրամանով, գերմանացիները ռուսներին սպանում են... (Օդոևսկին ծիծաղեց): Առանց հապաղելու, գնացեք ու ստրելեցներին ասեք այդ մասին... Ես էլ հուսալի մարդիկ կուղարկեմ շուկաները... Հարկավոր է ժողովուրդը Մոսկվայից հեռացնել, մեզ ահազանգ պետք չէ, միայն ստրելեցներով գլուխ կհանենք...

10.

Անտառի թավուտից Պերեյասլավսկոյե լճի ափը հասավ ամբողջովին փոշեկոլոլ, չորս տարբեր ձիեր լծած ճանապարհային մի կառք: Ծանրումեծ կառապանը և ոտաբոբիկ, առջևի ձախ ձին նստած մուժիկը չորս կողմը նայեցին: Ամենուրեք գերաններ ու տախտակներ էին ընկած, ծպեղի կիտուկներ, կպրի ջարդոտած տակառիկներ: Ո՛չ մի կենդանի շունչ, տեղ-տեղ հնչեղ խռոռոց էր լսվում միայն: Ափից ոչ հեռու կպրած չորս նավեր էին կանգնած, բարձրադիր, դրրվագված փայտով զարդարված խելերը քառակուսի պատուհաններով, արտացոլվել էին կանաչավուն ջրի մեջ: Կայմերի արանքներով ծովորորներ էին թռչում:

Կառքից իջավ Լև Կիրիլովիչը, կնճռոտվելով, գոտկատեղը տրորեց՝ ճանապարհին ցավացրել էր. չնայած դեռ ծեր չէր, սակայն գիրացել էր խմիչքի նկատմամբ իր անզսպությունից: Սպասում էր, մինչև մեկնումեկը երևա: Ծուլանալով ձայն տալ, մրթմրթում էր: Կառապանը, աչքն արևից կկոցելով, ասաց.

— Հանգստանում են... ճաշի ժամ է...

Իրոք, հովին, գերանների ու տակառների ետևից կամ տրեխավոր ոտքեր էին երևում, կամ գոտկատեղը բացած կեղտոտ շապիկ, կամ չսանրված գլուխ: Հեծյալ մուժիկը, ալարկոտ բոյարինին օգնելու համար, ձայն տվեց բարձր.

— Է-է՛յ, արթուն մարդ կա՞, ուղղափառներ...

Այդժամ կառքի մոտ ընկած ճոպանների ետևից խմածությունից ուռած, ոչ ռուսական, քառորդ արշինանոց սև բեխերը դեպքդեն տնկած մի դեմք բարձրացավ, կոտրատված գոմռալով.

— Ի՞նչ ես կոռում, հիմառ...

Կառապանը նայեց բոյարինին՝ սրան մի չհասցնի՞ մտրակով: Բայց Լև Կիրիլովիչը չթողեց. ով իմանա, Պյոտր ցարի գեներալներն էլ են հարբած պանդոկում հոդերի մեջ: Արժանապատվությունը պահպանելով, հարցրեց, թե որտեղ է ցարը:

— Սատանան կիտի որդեին,— պատասխանեց բեխավոր գլուխն ու նորից ընկավ ճոպանների: Լև Կիրիլովիչը բայլեց ափով, ուսի տեսքով մեկնումեկին գտնելու, և այնպես չերկնչելով, տրեխավոր մեկին բռթեց ուսքով: Աչքերը ճկճկացնելով վեր թռավ մի հյուսն մուժիկ, պատասխանեց.

— Առավոտից Պյոտր Ալեքսեևիչը նավ էր քշում, թնդանոթ կրակում, կարող է հոգնած, քնած լինի:

Պյոտրին գտան նավակի մեջ՝ գլուխը կաֆտանով փաթաթած, բնած էր: Լև Կիրիլովիչը բոլորին հեռացրեց նավակի մոտից ու սպասեց, մինչև քրոջորդին բարեհաճի ուշքի գալ: Պյոտրն անուշ խոմփացնում էր: Հոլանդական լայն շալվարի փողքերի միջից երևում էին նրա բաց ու բարակ ոտքերը, կոշիկները՝ բոբիկ թաթերին: Մի երկու անգամ իրար քսեց ոտքերը, քնի մեջ քշելով ճանճերին: Ու դա հատկապես մտահոգեց Լև Կիրիլովիչին... Գահը մագից է կախված, իսկ սրան՝ տեսե՞ք հապա, ճանճերն են անհանգստացնում...

Բոյարները հիմա արդեն բարձրաձայն էին խոսում Կրեմլում. «Մի ճանապարհ է մնացել Պյոտրին՝ ուղիղ մենաստան: Դարձել է քեֆչի, զինվորների ընկերը, ցարական թագը պանդոկում գտով կտարվի»: Կրեմլում նորից շրջում էին հարբած ստրելեցները, լկտիաբար ձեռքերը կողերին կանթելով, երբ մեծավորներից մեկնումեկն անցնում էր: Այդ թրերի տեսքից արբեցած Սոֆյան սարսափելի էր դարձել, գժվել: Անփառունակ նվաճող Գոլիցինը, ագռավի պես մռայլված, փակվել էր պղնձակուռ իր ապարանքներում, տեսակցության բուլյտվությունն էր տալիս մենակ Շակլովիտիին ու Սիլվեստր Մեդվեդևին: Բոլորը հասկանում էին, որ հիմա կամ խայտառակ կերպով պիտի հեռանա գործերից, կամ արյամբ ձեռք բերի գահը: Կրեմլի վրա ամպրոպաբեր ամպեր էին կուտակվել...

Իսկ սա քնած է նավակի մեջ. պետքն էլ չէ...

— Ա՜. քեռի, բարև, Կոտ Կիրիլիչ:

Պյոտրը նստեց նավակի կողին՝ արևախանձ, կեղտոտ, երջանիկ: Աչքերը թեթևակի ուռել էին, քթի կաշին պլոկվել, նոր աճած բեխերի ծայրերը վեր էին ոլորած...

— Ինչի՞ ես եկել:

— Քեզ տանելու, տեր արքա,— խստադեմ պատասխան տվեց Լև Կիրիլովիչը,— ու ոչ թե մանր-մունր բաների համար, գործերն այնպիսին են հիմա, որ անպայման Մոսկվայում պիտի լինես, առանց քեզ ետ չեմ գնա...

Լև Կիրիլովիչի գիրուկ դեմքը դողդողաց, գլխարկի տակից քունքերին քրտինք ծորաց: Պյոտրը զարմացած նրան էր նայում. Էհե՜, երևում է, գործերն այնտեղ վատ են, եթե ալարկոտ քեռին է այսպես իրար անցել: Պյոտրը կոտացավ նավակի վրայով ու ջուր խմեց բռով, շալվարը քշտեց:

— Լավ, լավ, մի քանի օրից կգամ...

— Ոչ թե մի քանի օրից, այսօր: Ժամ կորցնել չի կարելի (Լև Կիրիլովիչը մոտեցավ, բերանը հազիվ հասցնելով զարմիկի ականջին:) Նախորդ գիշեր Պրեոբրաժենսկոյեի մոտերքում, Յաուզայի մյուս ափին, թրերի մեջ ավելի քան հարյուր ստրելեց են տեսել, դարան մտած: (Պյոտրի ականջն ու վիզը ակնթարթորեն շառագունեցին:) Զինվորները Պրեոբրաժենսկոյեում ամբողջ գիշեր ջահեր են վառել, փողեր փչել... Դիմացիններն էլ վախեցել են գետակն անցնել... Հետո Մոսկվայում լսել են՝ ստրելեց Օլսեյ Ռժովն է ասել, թե իրենք պայմանավորվել են, որ հենց Պրեոբրաժենսկոյեի պալատում գիշերն աղմուկ բարձրացավ, պատրաստ պիտի լինեն, պալատից ում հանձնեն իրենց, կոտորելու են անխտիր...

Պյոտրը հանկարծ ձեռքով փակեց աչքերը՝ մատները սեղմվեցին դեմքին: Լև Կիրիլովիչը շարունակեց այատմել, թե ինչպես Շակլովիտին գանգազան կոկորդ պատրաստեր է ուղարկում շուկաները, որ քաղցած ժողովրդին հրահրեն գնալ Պրեոբրաժենսկոյեն թալանելու.

— Ժողովուրդը կապը կտրել է, մի մտածմունք ունի՝ ձեռքը գցեցել, թալանել: Սոֆյան էլ հենց մենակ նոր խառնակությանն է սպասում... Նրան հավատարիմ ստրելեցները Սպասսկի աշտարակի անազանգի կոչնակին արդեն պարան են կապել: Վաղուց զարկած կլինեին, միայն թե ստրելեցների գնդերը, վաճառականների հարյուրյակները և պոսադները երկմտում են՝ բոլորն են հոգնել ահազանգից... Ժամանակն է այդպիսին. բոյարները, պաշարվածի պես, նստած են իրենց տներում... Քույրս՝ Նատալյա Կիրիլովնան կորցրել է իրեն... (Լև Կիրիլովիչը հակվեց նրա ականջին, հարազատավարի փղձկաց:) Պետրուշա, ի սեր աստծո, աղաչում ենք, ցույց տուր քեզ ցարական քո ամբողջ շուքով, ձայնդ բարձրացրու.... Կարոտ ենք մնացել ցարի՝ ոտքդ գետին խփիր, մենք էլ կօգնենք... Ոչ թե մենակ մեզ, մեր թշնամիներին էլ է ճանձրացրել Վասկա Գոլիցինը, Սոնկան բոլորի բկին է կանգնել....

Պյոտրը բազմիցս լսել էր այդ խոսքերը, բայց այսօր քեռու փղձկախառն շշնջոցը սարսափ հարուցեց... Կարծես նորից լսեց ալն աղաղակները, որոնցից մաշերը բիզ-բիզ են կանգնում, տեսավ ծուռ բացված բերաններ, փքված վզեր, պարզած նիզակների ծայրերը, որոնց վրա ծանր-ծանր ընկավ Մատվեևի մարմինը... Մանուկ օրերի մարմնական սարսափը... Ու ծովեց նրա բերանը, աչքերը դուրս պրծան, անտեսանելի մի սայր խրվեց վիզը, ականջի տակ:

— Պետենկա՜: Տեր թագավոր, աստված քեզ հետ:— Լև Կիրիլովիչը բռնեց քրոջորդու ցնցվող ուսերը: Պյոտրը ցնցվում էր նրա ձեռքերի մեջ, բերանից փրփուր շաղ տալով: Ջայրույթ, սարսափ ու շփոթմունք կար նրա անկապ բղավոցների մեջ: Վեր թռան մարդիկ, վախեցած շրջապատեցին դիվոտած Պյոտրին: Բեխավոր Պամբուր-

գը թաղով օդի բերեց: Պյոտրը, փոքր երեխայի պես, թափթփում էր օդին, չէր խմում՝ ատամներն ուժով սեղմված էին: Նրան քարշ սլվեցին Լև Կիրիլովիչի կառքի կողմը, բայց Պյոտրը, քացի-քացի անելով, հրամայեց իրեն պառկեցնել խոտի վրա: Սակայն... Հետո նստեց, ձեռքերով ոսկրոտ ծնկները գրկած: Նայում էր լճի պայծառ մակերեսին, ուր ծովորորներ էին թռչում կալմերից վեր: Ինչ-որ տեղից ճոճվելով հայտնվեց Նիկիտա Զոտովը: Առավոտյան զորախաղի առթիվ իշխան-պապի քղամիդով էր, գգուշ մազերով, փոչոտված, մորուքի մեջ՝ դարմանի ծեղեր: Նստելով Պյոտրի կողքին, նրան նայեց խղճալի, մորուքավոր կնոջ էր նման.

— Պյոտր Ալեքսեևիչ, լսիր ինձ՝ անխելքիս...

— Գրողի ծոցը կորիր...

— Կորեմ, կորեմ... Ծատ խաղացինք... Պետք է վերջ տալ... երեխայական խաղերը...

Պյոտրը շրջվեց: Նիկիտան չոքեչոք սողաց, որ մյուս կողմից նայի նրա դեմքին: Պյոտրը հրեց Նիկիտային ու լուռ բարձրացավ կառք: Լև Կիրիլովիչը փութով խաչակնքեց, առաջ վազելով...

II.

Ուսպենսկի տաճարում ցերեկային ժամերգությունն ավարտվում էր: Պատրիարքական երգչախումբը ձախակողմյան դասում և պալատականը՝ աջակողմյան դասում, փոխնիփոխ թնդացնում էին մուգ ոսկյա կամարները մերթ պատանեկան քաղցր ձայներով, մերթ թավ կոկորդների բոմփյունով: Սրբապատկերների ոսկյա շրջանակների առաջ մեղմ ճրթճրթոցով վառվող մոմերի խարույկը լուսավորում էր բոյարների բորբոքված դեմքերը: Ժամերգությունը պատրիարքն էր անցկացնում՝ ասես սուզդալյան ոճի նահատակ լիներ, պատկերատախտակից իջած, կենդանի էին միայն աչքերը, նաև անուժ ձեռքերն ու նեղ, պորտահաս մորուքը, որ շարժվում էր ծանր շուրջառի վրա: Տասներկու ածդահա սարկավագ, գիսախռիվ ու գանգակերպ, ծանր բուրվառներն էին շրխկշրխկացնում: Խունկի քուլաների մեջ լողում էր պատրիարքը, միտրոպոլիտներն ու ավագերեցները՝ աջ և ահյակ կողմերում: Ավագ սարկավագի ձայնը, թունդ գինու պես, տարածվում էր ամբողջ տաճարում: Երրորդ Հռոմն էր սույնը: Բերկրում էր ռուսական գոռոզ սիրտը:

Թագավորական տեղում ալ հովանու տակ կանգնած էր Սոֆյան: Աջ կողմում ցար Իվանն էր՝ կոպերը կիսախուփ, հիվանդ դեմքին այրվում էին այտոսկրերը: Ձախ կողմում երկարահասակ Պյոտրն էր կանգնած, կարծես Ծննդյան տոներին թագավորական զգեստ էին հագցրել մուժիկին, այն էլ վրան կարճ եկող զգեստ: Թաշկինակները բերաններին տանելով, քթի տակ ծիծաղում էին բոյարները, Ցրան նայելով. անճոռնի մի պատանյակ, կանգնել իսկ չգիտե, սագի պես

ծոտոն դոփդոփում է, չի կարողանում վիզը ձիգ պահել... Սոֆյան գոնե հասկանում է արքայական կարգը: Ոտքերի տակ, բարձր լինելու համար, աթոռակ էր դրված: Դեմքը խաղաղ էր, ձեռքերը կրծքին խաչած, մատները, կուրծքը, ուսերը, ականջները, թագը շողշողում էին քարերի բոցերից: Ասես Կազանյան տիրամայրն էր կանգնած հովանու ներքո... Իսկ այդ կուկուլական քեֆչու բերանի անկյուններից ելունդներ են փքվել, կարծես հենց հիմա պիտի խածնի, միայն թե ուժը չի հերիքի... Աչքերը չար են ու հպարտ... Ու ամեն ինչից երևում է, որ բարեպաշտության մասին չի էլ մտածում...

Ժամերգությունն ավարտվեց: Իրար անցան եկեղեցական սպասավորները: Երերացին խաչվառները, փայլարե լապտերները, վեր հանած խաչերն ու սրբապատկերները: Ետ քաշված բոյարների ու ազնվականների միջով շարժվեց խաչերթը: Պատրիարքը, որի թևերից սարկավագներն էին բռնել, գլուխ խոնարհեց թագավորներին, խընդրելով ըստ սովորության, Կազանյան տիրամոր սրբապատկերը վերցնել ու շարժվել դեպի Կարմիր հրապարակ, Կազանյան տաճար: Մոսկովյան միտրոպոլիտը պատկերը մոտեցրեց Իվանին: Ցարը բաշրեշեց ցանցառ մորուսը, ետ նայեց Սոֆյային: Սա անշարժ, արձանի պես նայում էր փայլարե պատուհանից ընկնող շողին...

— Տեղ չեմ հասցնի,— հեգությամբ ասաց Իվանը,— կգնեմ...

Այդ ժամանակ միտրոպոլիտը, սրբապատկերը Պյոտրի մոտով տարավ, Սոֆյային տալու: Մատանիների մեջ կորած նրա ձեռքերը բաժանվեցին կրծքից և ամուր, գիշատչի պես ճանկեցին պատկերը: Ծարունակելով շողին նայել, իջավ աթոռակից: Վասիլի Վասիլևիչը, Ֆյոդոր Ծակլովիտին, Իվան Միլոսլավսկին՝ բոլորն էլ սամույրե մուշտակներով, անմիջապես մոտեցան կառավարչուհուն: Տաճարում լռություն տիրեց:

— Տո՛ւր... (Բոլորը լսեցին՝ անորոշ ու խուլ ասաց մեկը: Տո՛ւր... Արդեն ատելությամբ, բարձրաձայն ասաց:)— Ու երբ նայեցին Պյոտրին, հասկացան, որ նա է ասողը... Դեմքը շառագունած էր, աչքերն ոլորում էր բվեճի պես, բռնեց հովանու ոսկյա պարույրաձև ու բարակ սյունից, հովանին իրար եկավ...

Սակայն Սոֆյան ընդամենը հասպաղեց փոքր-ինչ, առանց շրջվելու, առանց երկյուղելու: Տաճարով մեկ, բեկվող ձայնով, բացեիբաց ասաց Պյոտրը.

— Իվանը չի գալիս, ես կգամ... Դու քո սենյակը գնա... Տուր սրբապատկերը... Կնոջ գործ չէ դա... Ես թույլ չեմ տա...

Աչքերը բարձրացնելով, քաղցրաձայն, ասես այս աշխարհից չլիներ, Սոֆյան բարբառեց.

— Երգիչներ, տեր, ուղղյա երգեցեք...

Ապա իջնելով, դանդաղաքայլ գնաց բոյարների շարքի միջով՝ կարճիկ ու փարթամ: Պյոտրը նայեց նրա ետևից. երկար վիզը ցցած: (Բոյարները դեմքերը թաղեցին թաշկինակների մեջ՝ ծիծաղելի՞ն, թե՝ լաց լինելիս:) Քրոջ ետևից զգուշությամբ շարժվող Իվանը 22նջաց.

— Դե լավ, Պետրուշա, հաշտվիր նրա հետ... Ինչի եք վիճում, ի՞նչ ունեք կիսելու...

12.

Աթոռի վրա առաջ հակված Շակլովիտին ակնապիշ նայում էր Վասիլի Վասիլևիչին: Մորեգույն մետաքսի պարեգոտով Սիլվեստր Մեդվեդևը, զգուշորեն առանձնացնելով ու կծելով սեփ սև մորուքի մազերը, նույնպես նայում էր Գոլիցինին: Ննջարանի սեղանին միայն մի մոմ էր վառվում: Մահճակալի ամպհովանու վրայի ջայլամի փետուրները ստվերներ էին նետում ամբողջ առաստաղով մեկ, ուր թևավոր ձիերը, թռչող մանկիկներն ու մերկաբուռնք աղջիկները սլաք էին դնում Վասիլի Վասիլևիչի դեմքն ունեցող հերոսի գլխին: Ինքը՝ Վասիլի Վասիլևիչը, պառկած էր թախտին, արջի մորթիների վրա: Զրիմյան արշավանքի ժամանակ ստացած դողէրոցքն էր ցնցում նրան: Մինչև քթատակը փաթաթված էր սկյուռի քուրքով, ձեռքերը թևքերի մեջ էր մտցրել:

— Ոչ,— ասաց նա, երկար սպասելուց հետո,— չեմ կարող այդ խոսքերը լսել... Աստված է կյանք պարգևել, միայն աստված էլ կարող է վերցնել...

Զայրացած Շակլովիտին գլխարկը խփեց ծնկանը, դարձավ ու նայեց Մեդվեդևին: Սա երկար չմտածեց.

— Ասված է՝ «վրիժառու կողմարկեմ», և սույնն այսպես պետք է հասկանալ. ոչ թե աստծո կողմից է վերցվում կյանքը, այլ նրա կամքով մարդու ձեռքով...

— Տաճարում բղավում է, կարծես պանդոկ լինի,— տաքացած միացավ Շակլովիտին:— Սոֆյա Ալեքսեևնայի ուշքը մինչև հիմա գլուխը չի գալիս, այնպես է վախեցել... Գայլամագ ենք մեծացրել՝ փորձանք է գալու նրանից... Սպասեք Մոսկվա մտնի իր ոգմախադի զորքով, երեք հազար կլինեն, եթե ոչ ավելի: Պարապ, չբանեցրած ձիերի պես ուժեղ... Ճիշտ չե՞մ ասում, Սիլվեստր:

— Մարդկանց աղքատացում և ուղղափառ եկեղեցուն վիրավորանքներ սպասեք նրանից, նաև թափված արյան հեղեղներ... Երբ նրա բախտացույցն էի կազմում, մազերս բիզ-բիզ կանգնեցին, բոլոր բառերը, թվերը, գծերը արյան մեջ կորած էին... Ասուված վկա... Վաղուց է ասված. սպասեք այդ բախտացույցին...

Վասիլի Վասիլևիչը կոթնեց արմունկին՝ գունատ, հոգի գույն ստացած...

— Սուտ չե՞ս ասում, տերտեր: (Սիլվեստրը թափ տվեց լանջախաչը:) Ինչերի՞ց ես խոսում:

— Վաղուց էինք սպասում այդ բախտացույցին,— կրկնեց Մեդվեդևն այնքան տարօրինակ, որ Վասիլի Վասիլևիչի դողէրոցքը սառնությամբ շամփրեց ողնաշարը: Շակլովիտին վեր թռավ, արծաթյա շղթաները զնգացնելով, թուրն ու գլխարկը թևատակը դնելով:

— Ուշ կլինի, Վասիլի Վասիլևիչ... Տես հա, մեր գլուխները ցցի կհանեն... Դանդաղում ես, վախենում, մեր ձեռուտն էլ ես կապել...

Աչքերը փակելով, Վասիլի Վասիլևիչն ասաց.

— Ես ձեր ձեռուտը չեմ կապում...

Այլևս ոչ մի բառ չլսեցին նրանից: Շակլովիտին գնաց, դրսից լսվեց, թե ինչպես ձին կատաղած քշեց դարպասից դուրս: Նստելով սնարի մոտ, Մեդվեդևը սկսեց խոսել պատրիարք Յոակիմի մասին՝ երկերեսանի է, տիմար, թույլ: Երբ զգեստարանում նրան հագցնում են, միտրոպոլիտները բոթբոթում են, ետևից հայհոյանշաններ ցույց տալիս ու զվարճանում: Երիտասարդ, ուսյալ պատրիարք է պետք, որպեսզի եկեղեցին պարտեզի պես փթթի զվարթ...

— Քո թագն, իշխան, աստվածային այն որթերով կպարուրի: (Ականջն էր խտղտացնում սանդալայուղով ու վարդայուղով օծված մորուքով...) Ասենք՝ ես, ոչ. ոչ, չէի հրաժարվի պատրիարքական շուրջանից... Կծաղկեինք... Գուշակ Վասկա Սիլինը Իվան Մեծի զանգակատնից արևին է նայել մատների արանքից ու այս ամենը տեսել արեգակի վրա՝ նշաններով... Խոսիր Սիլինի հետ... Ինչ վերաբերում է Յոակիմին, ամեն շաբաթ նրան չորս դույլ ձուկ են գաղտնի բերում Պրեոբրաժենսկոյեից... Ու նա ընդունում է...

Մեդվեդևն էլ գնաց: Այդժամ Վասիլի Վասիլևիչը բացեց սառն աչքերը: Ականջ դրեց: Դռան ետևում խոմփացնում էր իշխանական մահճապետը: Բակի սալաքարերի վրա քայլում էին պահպանները: Մոմն առնելով, Վասիլի Վասիլևիչը բացեց ամպհովանու ետևի գաղտնի դուռը և սկսեց իջնել թեք աստիճաններով: Դողէրոցքից սրթսրթում էր, մտքերն իրար էին խառնվել: Կանգ էր առնում, մոմը գլխից վեր պարզում, սարսափով ցած էր նայում, խավարին...

«Հրաժարվե՞մ մեծ հղացումներից, անամ վոտչինա: Թող անցնի խառնակությունը, թող առանց ինձ միմյանց կոկորդ կրծեն, անցնի կատաղությունները... Լավ, իսկ խայտառակությո՞ւնը, անպատվությո՞ւնը: Կասեն՝ մեծ գնդեր էր ստաջնորդում, հիմա էլ սագ է արածացնում իշխան Վասիլին... (Մոմը ցնցվեց սառած ձեռքի մեջ:) Ձեռքը թագին էր գցել՝ հավ է փետրում... (Ստամներն իրար զարկելով, մի քանի աստիճան իջավ:) Ուրեմն, ի՞նչ է մնում՝ ինչպես Սոֆյա՞ն է ուզում, Շակլովիտի՞ն, Միրոլավսկիները՞ը... Սպանե՞լ: Եթե ոչ, ապա նա՞ կսպանի: Իսկ եթե ուժերս չպատի՞: Մութ գործ է, անհայտ, անհաստատ գործ... Տեր աստված, ճանապարհ ցույց տուր... (Խաչակնքեց, հենվելով աղյուսե պատին:) Այս ընթացքում գոնե տենդով հիվանդանայի...»:

Ցած իջնելով, Վասիլի Վասիլևիչը դժվարությամբ դեմ տարավ երկաթյա սողնակը և մտավ կամարակապ մի նկուղ, որի անկյունում թաղիքի վրա պառկած էր կախարդ Վասկա Սիլինը՝ շղթայակապ...

— Բոյարին, աստծու սիրուն, ինչի՞ համար ես ինձ... Ես արդեն...

— Վեր կաց...

Վասիլի Վասիլևիչը մոմը դրեց հատակին, պինդ փաթաթվեց քուրքի մեջ: Օրերս էր հրամայել բռնել Մեդվեդևի մոտ ապրող

Վասկա Սիլինին ու շղթայակապ անել. Վասկան սկսել էր ավելորդ բաներ դուրս տալ, որ իշխանավոր մարդիկ իրենից սիրելու թուրմ են առնում ու վերևներում խմեցնում այնպիսի մարդու, ում անունը տալն անգամ սարսափելի է, և դրա համար իրեն տունուտեղ են տալու Մոսկվայում, առանց փողի քեֆ քաշելու թույլտվություն...

— Նայե՞լ ես արևին,— հարցրեց Վասիլի Վասիլևիչը:

Վասկան, մրթմրթալով, ընկավ իշխանի ոտքերը, երկու տեղ չպպոցով պաչեց նրա ոտքերի տակի հողը: Վեր կացավ՝ կարճլիկ, պնդակազմ, արջի պնչով, ճաղատ, թավ հոնքերը քթարմատից շեղակի ելնում էին մինչև խուճուճ մազերը, ներս ընկած աչքերը անգուսպ խենթությամբ էին կրակվում:

— Առավոտ կանուխ ինձ տարան զանգակատուն, մի ուրիշ անգամ էլ ճիշտ կեսօրին: Ինչ տեսել եմ, չեմ թաքցնի...

— Կասկածելի է,— ասաց Վասիլի Վասիլևիչը,— երկնային լուսատու է, ի՞նչ նշաններ պիտի լինեն վրան: Սուտ ես ասում...

— Նշաններ, նշաններ... Մենք սովոր ենք մատների միջով նայելուն, ու կարծես մարգարեություն է իջնում վրաս, գրքի պես կարդում եմ... Ինչ ասեմ, կան, որ կվասի մրուրով են նայում, լուսնին բռնած մաղով են նայում... Ծնորհքի բան է, ինչի՞ չէ... Ախ, իմ տեր ու տիրական,— Վասկա Սիլինը հանկարծ ֆսֆսացրեց իր արջի պնչով, ճոճվեց, ակնապիշ նայելով իշխանին:— Ախ, ողորմած իմ տեր... Ամեն բան տեսա, ամեն բան գիտեմ... Կանգնած էր մի ցար՝ երկար, սևամազ, ու թագն իրար էր գալիս մեջքի վրա... Մյուս ցարը շիկամազ էր... աճ, վախենալի է ասելը, երեք մոմ ուներ գլխին... ցարերի արանքում էլ երկու հոգի իրար կպած, անիվի պես գլորվում էին, ոնց որ մարդ ու կնիկ: Երկուսի գլխին էլ թագ, արևն էլ նրանց արանքից հո չէր վառում...

— Չեմ հասկանում ինչեր ես դուրս տալիս,— Վասիլի Վասիլևիչը, մոմը վերցնելով, ետ-ետ գնաց:

— Ամեն ինչ քո ուզածով կլինի... Ոչ մի բանից մի վախենա... Պինդ կաց... Իմ տված խոտն էլ խառնիր, խառնիր՝ ավելի հաստատ կլինի... Դադար մի տուր աղջկան, տաքացրու նրան, տաքացրու... (Վասիլի Վասիլևիչն արդեն դռան մոտ էր:) Ողորմած տեր, հրաման տուր, շղթաս արձակեն... (Նա տեղից պոկվեց շղթայակապ շան պես:) Հրաման տուր, ուտելիք բերեն, երեկվանից բան չեմ կերել...

Երբ դուռը փակվեց, նա ոռնաց, շղթան զնգացնելով, ողբալով ալանդակ ձայնով...

13.

Ստրելեցների հիսնապետներ Կուզմա Զյորմնին, Նիկիտա Գլադկին և Օբրոսիմ Պետրովը ուժասպառ էին եղել ստրելեցների արվարձանները գրգռելով ու հրահրելով: Ներս էին ընկնում խրճիթները, դռները տեղահան անելով՝ «Ի՞նչ եք էստեղ քնել ձեր կնանց հետ, շուտով բոլորիս գլուխները թռցնելու են...»: Կենտրոնական բակերում սարսափազդու բղավում էին. «Կպրով նշան կանենք բոյարների տներն ու վաճառականների խանութները, կթալանենք, ավարն իրար մեջ կբաժանենք... Հիմի նորից ազատություն է»: Ծուկաների հրապարակներում նամակներ էին գցում գողունի և հենց տեղում էլ, մոլեգնած հայհոյելով, կարդում ժողովրդին...

Բայց ստրելեցները թաց ցախի պես թշշում ու չէին վառվում՝ խռովությանն հրացոլքը չէր բարձրանում: Վախենում էին նաև. «Հապա տես, թե ինչքան սրիկա ժողովուրդ է հավաքվել Մոսկվայում, անհազանգ խփեցինք, ամեն ինչ ցրիվ կտան, մեր ունեցվածքին էլ տեր չենք լինի...»:

Մի անգամ Մյասնիցկիյե դարպասի մոտ, վաղ առավոտյան չորս պահապան ստրելեց գտան ուշագնաց, գլուխները ջարդած ու հոդախախտ: Քարշ տվեցին Ստրեմյանների գունդ, կենտրոնական խրճիթ: Մարդ ուղարկեցին Ֆյոդոր Լեոնտևիչ Շակլովիտիին կանչելու, և երբ նա եկավ, պատմեցին.

«Դարպասի մոտ պահակ էինք կանգնած, աստված վկա, խմած չէինք: Լույսը բացվելու վրա էր... Հանկարծ ամայուտիր վրա ելրծան ձիավորներ ու տուր թե կտաս մեզ կոպալներով, լախտեռով ու չեկանոներով... Ամենքից կատաղածը մի չաղ մարդ էր, սպիտակ ատլասից կաֆտանով, բոյարի գլխարկով: Մնացածները նրան հանգստացնում էին. «Հերիք խփես, Լև Կիրիլովիչ, ծեծելով կսպանես...»: Բայց նա բղավում էր. «Դեռ սպասե՞ք, անիծված ստրելեցներից եղբայրներիս վրեժն առնելու եմ...»:

Շակլովիտին, քթի տակ ծիծաղելով, լսում էր: Վերքերը զննեց: Մի կտրված մատ վերցնելով, առմուտքից ցույց տվեց շրջապատող մարդկանց ու ստրելեցներին: «Այո,— ասաց,— երևում է շուտով ձեր ոտքերից էլ են բռնած քարշ տալու...»:

Զարմանալի էր: Հավատալ չէր լինում, որ Լև Կիրիլովիչը հանկարծ սկսեր այդպես մոլեգնել: Իսկ Գլադկին, Պետրովն ու Զյորմնին արվարձաններում տարածում էին, թե Լև Կիրիլովիչն ու ընկերները գիշերները դուրս են գալիս, դեսուդեն աչք ածում, ճանաչում, թե յոթ տարի առաջ ով է թալան արել Կրեմլում, ու ծեծելով սպանում են... «Բա ի՞նչ,— պատասխանում էին ստրելեցները,— գողության համար հո գլուխները չէին շոյելու...»:

Երեք օր անցավ, ու նորից Պոկրովսկիյե դարպասի մոտ նույն ձիավորները, չաղ բոյարինի գլխավորությամբ, հարձակվեցին պահաջոկատի վրա, ծեծեցին չեկանոներով, մտրակներով ու թրերով, շատերին վիրավորեցին... Գնդերում տեղ-տեղ անհազանգ խփեցին, բայց ստրելեցները վերջնականապես վախեցան, դուրս չեկան... Գիշերները սկսեցին փախչել պահակակետերից: Պահանջեցին, որ հարյուրից ոչ պակաս պահախմբեր կազմեն թնդանոթներով... Կարծես հնայված լինեին՝ անչափ հնազանդ էին դարձել ստրելեցները...

Իսկ հետո լուր տարածվեց, որ այդ կտրիճ ձիավորներից մի քանիսին ճանաչել են՝ Ստյոպկա Օդոևսկուն, Միշկա Տրյուտովին, որ նրա

մոտ էր ապրում, իբրև սիրեկան, Պյոտր Անդրեևիչ Տոլստոյին, իսկ ճերմակ կաֆտանով մարդն իբր ամենևին էլ բոյարին չէր, այլ ատենավորի օգնական Մատվեյկա Շոշինը, արքայադստեր մոտիկ մարդկանցից մեկը: Զեռքերն էին տարածում՝ ի՞նչ նպատակ են հետապնդում իրենց գծությունները:

Լավ չէր վիճակը Մոսկվայում, խռովահույզ էր: Ամեն գիշեր շուրջ հինգ հարյուր պահակ էին ուղարկում Կրեմլ: Այնտեղից վերադառնում էին հարբած: Սպասում էին, որ հրդեհներ են լինելու: Պատմում էին, թե հնարամիտ կատուցվածքի ձեռքի նռնակներ են պատրաստել, և Նիկիտա Գլադկին դրանք ծածուկ տարել է Պրեոբրաժենսկոյե, գցել ճանապարհին, որով Պյոտր ցարը պիտի անցներ, բայց դրանք չեն պայթել: Բոյորն ինչ-որ բանի էին սպասում, շունչները պահած:

Պրեոբրաժենսկոյեում, Պյոտրի գալուց հետո, անդադար որոտում էին թնդանոթները: Ճանապարհների վրա, ուղեփակոցների մոտ սափրված զինվորներ էին կանգնած՝ կնկա մազերով, լայնեզր գլխարկներով, կանաչ կաֆտաններով: Մի քանի անգամ թափառական ամբոխը, շուկաներում կոկորդ պատռելուց հետո, պատրաստվում էր Պրեոբրաժենսկոյե գնալ՝ ամբարները թալանելու, բայց Ցարուզա չհասած, դեմ էին առնում զինվորների, որոնք սպասնում էին կրակել: Բոյորը հոգնել էին. շուտ անեին, մեկը մյուսին կուլ տային՝ կամ Սոֆյան Պյոտրին, կամ Պյոտրը Սոֆյային... Միայն թե ինչ-որ բան հաստատվեր... .

14.

Մյասնիցկայայի ուղեփակոցների միջով առաջանում էր հեծյալ Վասիլի Վոլկովը: Ամեն քայլափոխին կանգնեցնում էին, ու նա պատասխանում էր. «Պյոտր ցարի սեղանապետն եմ, ցարևիչ հրամանագիր եմ տանում...»: Լուբյանսկայա հրապարակում խարույկների կրակը լուսավորում էր ցածլիկ աշտարակը, ծեփաթափ ատամնավոր պարիսպները, որոնք թաղված էին Նեգլինայայի խավարի մեջ: Օգոստոսյան աստղալից երկինքն ավելի սև էր թվում, հրապարակը եզերող ցցապատերից ու ցանկապատերից այն կողմ ընկած ծառաստանները՝ ավելի թավ ու խորը: Փայլում էին գետնատարած եկեղեցիների խաչերը: Աջ կողմում, Ստրեմյանկի գնդի երկարուկ խրճիթի մոտ, տեգակիր մարդիկ կային նստած:

Վոլկովին հրամայված էր (անհնար մի գործով Կրեմլ էր ուղարկված) տեսնել, թե ինչ է կատարվում քաղաքում: Հրամայել էր Բորիս Ալեքսեևիչ Գոլիցինը, որ հիմա գիշեր ու ցերեկ Պրեոբրաժենսկոյեում էր մնում: Թմրած կյանքն այնտեղ վերջացել էր: Պերեյասլավի լճից Պյոտրը եկավ միանգամայն փոխված: Նախկին զվարճանքների մասին խոսք անգամ չէր լինում: Սրբապատկերի պատմությունից հետո տուն գալով, այնպես էր փրփրել, որ հազիվ կարողացան խմեցնել-հանգստացնել... Լև Կիրիլովիչն ու Բորիս Գոլիցինն էին հիմա նրա մերձավորները: Մշտապես փակված՝ խոսում էին, և Պյոտրը լսում էր նրանց: Ռազմախաղի զինվորների սենդադրամն ավելացրին, նոր գոտիներ ու թաթմաններ տվեցին՝ դրամը Կուկույից պարտք վերցրեցին: Առանց մեկ տասնյակ զինված պալատականների Պյոտրը ոչ բակ էր ելնում, ոչ դաշտ գնում: Եվ շարունակ կարծես ետ էր նայում ուսի վրայով, կարծես չէր վստահում, հայացքը մեխելով յուրաքանչյուրի աչքերի մեջ: Այսօր, երբ Վոլկովը ձի էր նստում, Պյոտրը լուսամուտից բղավեց:

— Սոֆյան ինձնից հարցնելու եղավ, սուս կմնաս... Ցցի էլ թե հանեն, չխոսես...

Աչք ածելով ամայի հրապարակը, Վոլկովը մանրավարգ առաջացավ... «Կանգնի՜, կանգնի՜»,— սարսափազդու բղավեցին մթության միջից: Ճամփան կտրելով մի թիկնեղ ստրելեց էր վազում, ուսից վեր բերելով պատրուգավոր հրացանը: «Էս ո՞ւր ,ես քո...»,— բռնեց ձիու երասանները...

— Է՛, է՛, չարդ ճանաչիր, ցարի սեղանապետ եմ...

Ստրելեցը սուլեց՝ մատը բերանը խոթելով: Վազեվազ եկան հինգ հոգի էլ... «Ինչացո՞ւ ես...»— «Սեղանապետ...»— «Իսկը մեզ պետք ես...»— «Ինքն իր ոտքով եկավ...»: Շրջապատեցին, տարան խրճիթի կողմը: Այնտեղ, խարույկի լույսի տակ Վոլկովը ճանաչեց Օվսեյ Ռժովին՝ թիկնեղ ստրելեցն էր: Կծկվեց՝ գործերը վատ էին: Օվսեյը, երասանը ձեռքից չթողնելով, ասաց.

— Էյ, մեջքերիդ ճարպիկը որն է, վազ տվեք, Նիկիտա Գլադկովին գտեք...

Երկու հոգի չուզենալով գնացին: Ստրելեցները ելան խարույկի մոտից, վեր կացան խրճիթի պատի տակերից, խարիսները դեն տանելով, իջան ստվերից: Մի հիսուն հոգի հավաքվեցին: Խաղաղ էին կանգնած, կարծես այդ գործն իրենց չէր վերաբերում: Վոլկովը սրտոտեց.

— Լավ բան չեք անում, ստրելեցներ... Գլուխ չունե՞ք ուսներիդ... Ցարական հրամանագիր եմ տանում՝ բռնում եք. սա ավազակություն է, դավաճանություն...

— Ձե՛նդ,— Օվսեյը թափ տվեց հրացանը:

Մի ծեր ստրելեց զսպեց նրան.

— Հանգիստ թող, ենթակա մարդ է:

— Ճիշտ էր՝ ենթակա եմ: Ես ցարի ծառան եմ: Իսկ դո՞ւք ում ծառաներն եք: Տեսեք հա, ստրելեցներ, չխաղվեք: Խովանսկին էլ էր շատ ժիր, իսկ ի՞նչ արեցին նրան: Դուք էլ էիք ժրել, իսկ ո՞ւր է Կարմիր հրապարակի սյունը, ո՞ւր են ձեր ազատությունները:

— Հերիք փչես, շան ծնունդ,— բղավեց Օվսեյը:

— Մեղքս եք գալիս: Գոլիցինը ձեզ քիչ է քարշ տվել տափաստաններով... Օգնեք նրան, օգնեք, ձեզ երրորդ անգամ էլ կտանի արշավանքի... Դոնեդուտ ընկած մի կտոր հաց եք մուրալու... (Ստրելեցները, ավելի խոժոռվելով, լռում էին:) Պյոտր ցարը փոքր չէ...

Անցան ժամանակները, երբ վախենում էր ձեզնից... Չլինի հանկարծ հիմա նրանից վախենաք... Էհ, ստրելեցներ, վերջ տվեք էս ավազակությանը...

— Ի-էֆխ,— բղավեց ինչ-որ մեկն այնքան վայրենաձայն, որ ստրելեցները ցնցվեցին: Վոլկովը խոխոտացրեց, ձեռքերը բարձրացրեց ու ընկավ: Ետևից նրա ձիու վրա ցատկեց Նիկիտա Գլադկին, վզից բռնեց, ու երկուսով ընկան գետին: Շրջվեց նստեց վրան, խփեց Վոլկովի ատամներին, թուրը պոկեց վրայից: Վեր թռավ, հոհոաց, թուրը թափ տալով. լայնճակատ էր, չեչոտ ու մեծ բերան ուներ:

— Տեսա՞ք՝ հրես դրա թուրը... Պյոտր ցարին էլ եմ էսպես անելու... Դրան վերցրեք ու քարշ տվեք Կրեմլ, Ֆյոդոր Լեոնտևիչի մոտ...

Ստրելեցները բարձրացրեցին Վոլկովին, բլրակի վրայից տարան կիտայգորոդյան պարսպի, բորբոսապատ Նեգլինենայայի ափին ցաքուցրիվ աճած ծուռումուռ, ծերացած ագռավի բների մեջ կորած ուռենիների, կախաղանների ու ցցանիվների մոտով: Ետևից Գլադկին էր գալիս, թունդ հարբածի հոտ բուրելով: Կրեմլ մտան Կուտաֆյա աշտարակի դռնից: Դարպասից ներս խարույկներ էին վառվում: Մի քանի հարյուր ստրելեցներ նստոտած էին պալատական պարսպի տակ, մեկնված էին խոտերին, շրջում էին դեսուդեն: Խավար միջանցքով քարշ տվեցին Վոլկովին ու ներս հրեցին ցածրառաստաղ, ճրագներով լուսավորված մի սրահ: Գլադկին պալատ գնաց: Դռան մոտ կանգնեց կնճռապատ ու խաղաղադեմ մի պահակ: Տապարին կոթնած, ցածրաձայն ասաց.

— Մի բարկանա, աչքովդ տես, մենք էլ չգիտենք ինչ անենք... Հրաման են տալիս՝ խփում ենք... Չքավոր ենք, բոյարին... Տանչորս շունչ է ընտանիքս... Առաջ առուտուր էինք անում, բայց հիմի ինչ տալիս են, դրանով ենք ապրում... Բա մենք Պյոտր ցարի դեմ դավանանություն անո՞ղ ենք... Ով կուզենա, թող մեր գլխին տեր կանգնի՝ հիմի էդ է...

Ներս մտավ Սոֆյան՝ օրիորդավարի գլխաբաց, սև թավշյա զգեստով, սամույրի մորթիով: Խոժռված նստեց սեղանի մոտ: Նրանից հետո՝ գեղեցկատես Շակլովիտին, ճերմակ ատամները բաց ժպտալով: Կոստուկի գույնի ստրելեցյան կափտան էր հագել: Նստեց Սոֆյայի կողքին: Նիկիտա Գլադկին, տխմարավարի ժպտալով, քաշվեց բարավորի մոտ, որպես հավատարիմ ծառա: Շակլովիտին մատների մեջ Պյոտրի նամակն էր խաղացնում, որ Վոլկովի գրպանից էին հանել:

— Տիրուհին նամակը կարդաց, փուչ գործ է: Ինչի՞ համար են քեզ քշել այստեղ գիշերով:

— Հետախույզ է,— ատամների արանքից ասաց Սոֆյան...

— Մենք ուրախ ենք խոսել քեզ հետ, ցարական սեղանապետ... Առո՞ղջ է Պյոտր ցարը: Առո՞ղջ է թագուհին: Մեզ վրա դեռ շա՞տ են բարկացած մնալու: (Վոլկովը լուռ էր:) Դու պատասխան տուր, թե չէ կստիպենք...

— Կստիպենք,— կամացուկ կրկնեց Սոֆյան, ծանր, տղամարդավարի նայելով նրան:

— Բավարա՞ր է արդյոք ռազմախաղի զորքերի պարենը: Որևէ կարիք չունե՞ն: Տիրուհին ամեն ինչ ուզում է իմանալ,— հարցնում էր Շակլովիտին:— Իսկ ինչի՞ համար եք ճանապարհներին պահակներ դնում՝ հենց էնպե՞ս, թե՝ վախենում եք մեկնումեկից: Շուտով Մոսկվայում ձեր ձեռից պրծում չենք ունենա... Հացի գումակներն եք խլում-տանում՝ մի՞թե դա կարգ է...

Վոլկովը, ինչպես հրամայված էր, լռում էր, գլուխը հակած: Սարսափելի էր լռելը: Բայց որքան անհամբեր էր հարցուփորձ անում Շակլովիտին, այնքան ավելի դաժանաբար էր խոժռվում Սոֆյան, ավելի համառ էին սեղմվում նրա շրթունքները: Վոլկովն ինքն էլ ուրախ չէր իր այդ կտրիճությունից: Շատ ուժ էր կուտակել, Պրեոբրաժենսկոյեում անգործ պառկելուց: Սիրտն էլ էր փոթորկվել, ոչինչ չի ասելու, կուզեն տանջեն, կուզեն՝ ոչ... Հիմա եթե Շակլովիտին վրա պրծներ, դանակը ձեռքին, մեջքից կաշվի շերտեր պոկելու, զրվարթ ու հանդուգն աչքերին կնայեր: Եվ Վոլկովը բարձրացրեց գլուխը, զվարթ ու հանդուգն նայեց ներկաներին: Սոֆյան գունատվեց, ռունգերը փքվեցին: Շակլովիտին կատաղած, ոտքը հատակին խփեց, վեր թռավ.

— Ցցի վրա՞ ես ուզում պատասխանել:

— Ձեզ պատասխանելու բան չունեմ,— դանդաղ ասաց Վոլկովը (նույնիսկ ինքը զարմացավ), ոտքն առաջ դրեց, ուսը թոթվեց:— Ինքներդ գնացեք Պրեոբրաժենսկոյե, ձեզ ուղեկցող ստրելեցները վայ թե հերիք կանեն...

Շակլովիտին ամբողջ թափով խփեց կրծքին: Վոլկովը շնչահեղձ եղավ, ետ-ետ գնաց ու տեսավ, թե ինչպես վեր կացավ Սոֆյան, զայրույթից այլայլված գիրուկ դեմքը դողացնելով:

— Գլուխը կտրեք,— ասաց նա խռպոտաձայն: Նիկիտա Գլադկին ու պահակը Վոլկովին քարշ տվեցին բակ: «Դահի՞ճ»,— բղավեց Նիկիտան: Վոլկովը կախվեց նրանց ձեռքերից: Նրան բաց թողեցին, ընկավ բերանքսիվայր: Մի երկու ստրելեց մոտեցան, հարցրեցին, թե ով է ու ինչի համար պիտի գլուխը կտրեն: Խնդմնդալով, սկսեցին անուններ տալ խավար հրապարակով մեկ՝ կամավոր դահիճ փնտրելով: Գլադկին ուզեց թուրը հանել պատյանից: Ասացին. «Ամոթ բան է, Նիկիտա Իվանիչ, թուրը էս տեսակ բանի համար չեն արնոտի»: Գլադկին հայհոյեց, պպատ վազեց: Այդ ժամանակ ծեր պահակը կռացավ, ձեռքը դրեց քարացած Վոլկովի ուսին.

— Գնա քո ճամփով: Դարպասով դուրս չգաս, պարսպի տակով գնա ու մի արանքից դուրս արի...

Լուբյանկայա հրապարակում խարույկները մարեցին (մեկը դեռ պլպլում էր խրճիթի մոտ), ոչ ոք ցախ կրել չէր ուզում, որքան էլ աղմկում էր Օվսեյը: Շատ ստրելեցներ մթնով իրենց տները գնա-

ցին: Ոմանք էլ քնած էին: Մի հինգ հոգի, ցանկապատի, կախված լորենիների ստվերի տակ քաշված զրուցում էին ցածրաձայն...

— Գլադկին ասեց, թե Բորիս Գոլիցինի Ոյազանյան իջևանատանը զրնգում արծաթի վաթսուն շղթա կա... Կբաժանենք, ասեց, կմխենք...

— Գլադկինն թողնես թալան անի, բայց թե դժվար մարդ գտնի դրա համար:

— Խիղճ չի մնացել. իրենք թալանեն, պատասխանը մենք տանք:

— Սեղանապետը ճիշտ էր ասում. վայ թե շուտով մենք վախենանք Պյոտր ցարից...

— Քիչ է մնացել...

— Բա էս մեր արքայադո՞ւստրը՝ մի երկու հոգու փող է բախշում, մնացածները գիշեր-ցերեկ պահակ պիտի կանգնեն, տուն-տեղներս լրիվ քայքայվեց...

— Աստված վկա, առանց ետ նայելու կգնայի ռազմախաղի զորքերը...

— Տղերք, բայց ախր հաղթելու է...

— Շատ հաստատակ...

— Իզուր ենք էստեղ սպասում... Կախաղանից չենք պրծնի...

Լոեցին, շուտ եկան: Կրեմլից մեկը գալիս էր, չափ գցած: «Էլի Գլադկին է... Դադար չունի ատանան...»: Հարբած Գլադկին, ձին քշելով խարույկի վրա, կանգնեց, ցած թռավ ու բղավեց.

— Ինչի՞ համար հավաքված չեն ստրելեցները: Կրեմլում բոլորը պատրաստ են, ձեր խարույկներն էլ չեն վառվում: Քնե՞լ են: Սատանե՞ք: Օվսե՞յն ուր է: Մարդ ուղարկեք արվարձանները: Հենց Սպասսկու զանգը խփեցին, բոլորդ գենք առեք...

Հայհոյելով, ոտքերը փաթ գցելով, վազեց ու խրճիթ մտավ: Այդ ժամանակ լորենու տակ կանգնածները միմյանց ասացին.

— Ջանգ են զարկելու...

— Էս գիշեր...

— Մարդ չեն հավաքի...

— Հէ...

— Տղերք, իսկ եթե... հը՞: (Իրար մոտեցրին գլուխները և ցածրաձայն:) Էնտեղ էլ շնորհակալ կլինեն...

— Հապա ի՞նչ...

— Պարգև էլ կտան, շատ ուրիշ բան...

— Սրանց երգը երգված է, տղերք...

— Գիտենք... Ո՞վ կգնա, տղերք: Երկու հոգի է պետք...

— Հը՞, ո՞վ:

— Դմիտրի Մելնով, կգնա՞ս:

— Կգնամ:

— Յակով Լադիգին, կգնա՞ս:

— Ե՞ս: Լավ, կգնամ...

— Էնպես արեք, որ հենց իր մոտ ընկնեք... Ոտքերը կընկնեք, կասեք՝ Էսպես, Էսպես... Մտքներին դրել են քեզ սպանեն, մեծն

արքա... Մենք էլ, որպես քո հավատարիմ ծառաներ, քանի որ խաչն ենք պաչել...

— Բան մի սովորեցրու, ինքներս գիտենք...

— Կասենք...

— Գնացեք, տղերք...

15.

Պրեոբրաժենսկի և Սեմյոնովսկի երկու գումարտակներով կռիվ սկսելու մասին մտածել անգամ չէր կարելի: Երեսուն հազար ստրելեց, կրեմլականները, օտարերկրյա հետևակը, գեներալ Գորդոնի զինվորական գունդը ռազմախաղի զորքը կճզմեին մժեղի պես: Բորիս Գոլիցինը պնդում էր մինչև գարուն հանգիստ սպասել Պրեոբրաժենսկոյեում: Շուտով աշնան ցեխուջուրը, սառնամանիքները կլսկվեն, ստրելեցներին մահակով անգամ վառարաններից իջեցնել, կռվի քշել չի լինի: Իսկ գարնանը՝ կտեսնենք... Ավելի վատ չի լինի, հարկ է մտածել, որ Սոֆյայի ու Վասիլի Վասիլևիչի համար ավելի վատ կլինի. ձմռանը բոյարները վերջնականապես կկռվշտեն, կսկսեն Պրեոբրաժենսկոյեի կողմը բռնել: Ստրելեցների ոռնիկը չեն տա՝ գանձարանը դատարկ է: Ժողովուրդը սովի է մատնված, պուսադները, արհեստավորները քայքայված են, վաճառականները տրնջում են ծանրությունից: Բայց եթե Սոֆյան այնուամենայնիվ զորքերը ոտքի հանի կոչնազանգով, հարկավոր է ռազմախաղի զորքով քաշվել Տրոիցե-Սերգիևո՝ անմատչելի պարիսպների հոսանքու տակ. փորձված տեղ է, կարելի է մնալ թեկուզ մեկ տարի, թեկուզ ավելի երկար...

Բորիս Գոլիցինի խորհրդով Պրեոբրաժենսկոյեից գաղտնի նվերներ ուղարկեցին Տրոիցե՝ վանահայր Վիկենտիին: Բորիս Ալեքսեևիչը ինքը երկու անգամ այնտեղ գնաց ու խոսեց վանահոր հետ, պաշտպանություն խնդրելով: Ամեն օր գեներալ Զոմմերը զորատես ու զորավարժություն էր անցկացնում. թնդանոթազարկերից փշրվել էին պալատի հանդարյա բոլոր ապակիները: Բայց երբ Պյոտրը խոսք էր բացում Մոսկվայի մասին, Զոմմերը միայն խոժոռված ֆսֆսացնում էր բեխերի տակ. «Ինչ կա որ, կպաշտպանվենք...»: Գալիս էր Լեֆորտը, բայց ոչ հանախ՝ սթափ, նրբակիրթ, վախվորած ժպիտով, ու նրա տեսքը բոլորից շատ էր վախեցնում Պյոտրին... Նա չէր հավատում անգամ Լեֆորտին: Հանախ կեսգիշերին արթնացնում էր Ալեքսաշկային, կաֆտանները մի կերպ հագնում ու վազ էին տալիս պահակետերը ստուգելու: Գիշերային խոնավության մեջ երկար կանգնելով Յաուզայի ափին, Պյոտրը նայում էր Մոսկվայի կողմը. խավար էր, ոչ մի կրակ չէր երևում ու չարագույժ լռություն էր տարածվում:

Ցրտից սրթսրթալով, մռայլածայն կանչում էր Ալեքսաշկային, գնում էին քնելու:

Վերադառնալուց հետո առաջին գիշերները միայն քնեց կնոջ հետ: Հետո հրամայեց իր անկողինը գցել պալատական կողաշենքում, ցածրիկ, մի լուսամուտանի, խորդանոցի պես սենյակում. ցարի անկողինը՝ թախտի վրա, Ալեքսաշկայինը՝ հատակին, թաղիքի վրա: Եվդոկիան ծով արցունք թափեց հոգյակին սպասելուց՝ արդեն նրի էր, չորրորդ ամսու մեջ, բայց նա եկավ ու արցունքը չցամաքեց: Ամուսնուն դիմավորելիս, ուզում էր դուրս թռչել դեմը, բայց պառավները չթողեցին: Գլուխն ազատեց, նախասրահում ընդառաջ վազեց թանկագին ամուսնյակին, որը ներս մտավ՝ երկարահասակ, նիհար, խորթավուն, դեմքով, ձեռքերով, կրծքով, փորով սեղմվեց ու փարվեց նրան... Կոշտ շրթունքներով հանգրեց հոգյակը, ամբողջովին կարի ու ծիսախոտի հոտ բռնած: Ջեռքի ափն արագ տանելով կնոջ ուռած փորի վրայով, հարցրեց միայն. «Է՛, է՛. ինչի՞ չէիր գրում էս գործի մասին», ու թոուցիկ մեղմացավ նրա դեմքը: Կնոջ հետ գնաց մոր մոտ՝ իսնարհ ողջույն տալու: Խոսում էր կցկտուր, անհասկանալի, ուսն էր ցնցում ու շարունակ քորվում: Ի վերջո, Նատալյա Կիրիլովնան ասաց. «Արքադ իմ, Պետենկա, բաղնիքն առավոտից վառել ենք...»: Տարօրինակ նայեց մորը Պյոտրը. «Կեղտից չի քոր գալիս, մայրիկ»: Նատալյա Կիրիլովնան հասկացավ, և արցունքներ հոսեցին նրա այտերից:

Եվդոկիան միայն երեք գիշեր տեսավ նրան ննջասենյակում՝ ինչպե՞ս էր սպասում, ինչպե՞ս էր սիրում, ինչպե՞ս էր ուզում գուրգուրել: Բայց երկնչեց, ավելի շփոթվեց, քան պսակի գիշերը, չիմացավ ինչ խոսի հոգյակի հետ: Ու անխելքի պես պառկած մնաց մարգարտանախշ բարձերի վրա: Պյոտրը ցնցվում էր, քորվում քնի մեջ: Եվդոկիան վախենում էր շարժվել: Իսկ երբ ամուսինը քնելու գնաց խորդանոց, մարդկանց հանդեպ ամոթից չգիտեր աչքերն ուր թաքցներ: Սակայն Պյոտրն ասես մոռացել էր կնոջը: Ամբողջ օրը հեգսերի, վազվզոցի, Գոլիցինի հետ փափսոցի մեջ էր .. Այդպես սկսվեց օգոստոսը... Չարագույժ էր Մոսկվան, Պրեոբրաժենսկոյեն՝ ուրախ, զգուշության մեջ:

16.

— Մին խեռ, իսկ ի՞նչ կլինի, եթե գրես հռոմեական կեսարին, որ զորք տա:

— Հիմար...

— Էլ ե՞ս:— Ալեքսաշկան վեր թռավ ու չորեքթաթ մնաց թաղիքի վրա: Մոտ սողաց: Աչքերը թրթռում էին:— Իսկի հիմար բան չեմ ասում, մին խեռ: Ու պետք է խնդրել տասը հազար հետևակ զորք... Ավելի պետք չէ... Մի հատ խոսիր Բորիս Ալեքսեևիչի հետ:

Ալեքսաշկան պպզեց նրա գլխավերևում: Պյոտրը կողքի էր պառկած, ծնկներն իրեն քաշած, վերմակով գլուխը ծածկած: Ալեքսաշկան շրթունքի մաշկն էր կրծում:

— Ինչ խոսք, դրա համար փող չունենք, մին խեռ... Փող է պետք... Մենք էլ կխաբենք... Կարո՞ղ է չխաբենք կայսրին: Ես ինքս կթռչեի Վիեննա: Է՞հ, ու վրա կտային Մոսկվա, ստրելեցներին, աստված վկա...

— Չքվիր...

— Դե լավ...— Ալեքսաշկան նույն ճարպկությամբ մտավ քուրքի տակ:— Հո չե՞մ ասում շվեդների դուռը գնանք, կամ թե չէ՝ թաթարների... Ինքս էլ եմ հասկանում: Ձես ուզում՝ հարկավոր չի... Ձեր գործն է...

Վերմակի տակից, անհասկանալի, ասես սեղմած ատամների արանքից Պյոտրն ասաց.

— Ուշ ես մտածել...

Լռեցին: Խցիկում շոգ էր: Վառարանի տակ մուկն էր ճանկռտում: Հեռվից լսվեց. «Ուշադի՞ր»՝ Յաուզայի վրայի պահակներն էին: Ալեքսաշկայի շնչառությունը խաղաղվեց...

Բոլոր այդ գիշերները անքնությունն էր տանջում Պյոտրին: Հենց գլուխը թաղվում էր բարձի մեջ, անձայն աղաղակներ էին հնչում. «Հրդե՞հ, հրդե՞հ»: Ու սիրտը թրթռում էր, գառան պոչիկի պես... Քունը փախչում էր: Հանգստանում էր, բայց ականջը որսում էր, կարծես տան խորքերում, գերանակապ պատերից այն կողմ ինչ-որ մեկը լալիս էր... Շատ բան մտածեց այդ գիշերներին... Հիշում էր՝ թեկուզ նեղված ու քշված, բայց և անհոգ անցան տարիները Պրեոբրաժենսկոյեում. ուրախ, աղմկոտ, անմիտ ու բավական անխելք... Պարզվեց, որ օտար է բոլորին... Գայլաձագ է ինքը, զինվորների խաչեղբայր... Խաղուպարով ապրեց, և ահա չարանենգ դաշույնն է մոտեցել սրտին...

Նորից փախչում էր քունը: Պյոտրն ավելի էր կծկվում վերմակի տակ:

...Քույրի՞կը, քույրի՞կը, անամոթ ու արյան ծարավ... Հաստաքամակ, վիզը ճարպակալած... (Հիշեց, թե ինչպես էր կանգնած հովանու տակ, տաճարում:) Գեղջկուհու շպարված դեմքը՝ մսավաճառի կին: Հրամայել է նոնակներ գցել ճանապարհին... Դաշույնավոր է ուղարկում... Խոհանոցում երեկ կվասի մի տակառիկ հայտնաբերվեց, լավ էր սկզբում տվեցին շանը լակելու՝ սատկեց...

Պյոտրը վանեց մտքերը... Սակայն զայրույթը խուժում էր քնարակները... Իրեն զրկե՞լ կյանքից: Եվ ոչ մի գազան, և ոչ մի մարդ հավանորեն այնպիսի ագահությամբ չէր ուզում ապրել, ինչպես Պյոտրը...

— Ալեքսաշկա... Գրողի տարած, քնել է, կվաս տուր...

Ալեքսաշկան կիսաքուն վեր թռավ քուրքի տակից: Քորքրվելով, շերեփիկով կվաս բերեց, նախապես մի կում արեց ու տվեց: Հորանջեց: Մի քիչ խոսեցին: «Ականջներդ սո՞ւր»՝ տրտում ու անքուն լսվեց հեռվից...

— Արի քնենք, մին խեռ...

Պյոտրը ճիգար ուժել ը ցած կախեց թախտից... Հիմա արդեն չէր

թվում՝ միջանցքներով փութկոտ քայլեր էին դոփդոփում... Զայներ, բղավոցներ... Ալեքսաշկան՝ ներքնաշորերով, երկու ատրճանակը ձեռքին, կանգնած էր դռան մոտ...

— Մին խեռց, էստեղ են գալիս...

Պոտրը դռանն էր նայում: Մոտ վազեցին... Դռան մոտ կանգ առան... Մի դողդոջ ձայն լսվեց.

— Տեր արքա, արթնացիր, փորձանք է...

— Մին խեռց, Ալյոշկան է:

Ալեքսաշկան սողնակը ետ տարավ: Ծանր շնչելով ներս մտավ Նիկիտա Զոտովը՝ ոտաբոբիկ ու անկենդան աչքերով, նրա ետևից այրեոբրաժենցիներ Ալեքսեյ Բրովկինն ու բեխավոր Բուխվոստովը ներս բերեցին երկու ատրելեցի՝ ասես անոսկր տոպրակներ էին, մազերը գզգզված, շրթունքները կախ, հայացքները տարակա:

Վախից ձայնը կորցրած Զոտովը 22նջաց.

— Մելնոկն ու Լադիգինն են, Ստրեմյանների գնդից, Մոսկվայից են փախել...

Ստրելեցները հենց շեմից, մորուքները թաղիքին քսելով ընկան ու ձայնեցին հնարավորին չափ սնարկու, մոլեգին.

— Օ-օ՛յ, օ-օ՛յ, մեր տեր արքա, գլխիդ փորձանք է գալիս, օ-օ՛յ, օ-օ՛յ... Ինչե՞ր են ուզում բերել գլխիդ, մեր հարազատ հայր, անհաշիվ զորք են հավաքում, պողովատի սրե՞ր են սրում: Սպասկու գա՞նգն են թնդացնում, ժողովուրդ է հավաքվում ամեն կողմից...

Ամբողջ մարմնով ցնցվելով, ճակատին կպած գանգուրները թափահարելով, ձախ ոտքով քացի-քացի անելով, Պոտրը ստրելեցներից ավելի զարհուրելի գոռաց, հրեց Նիկիտային ու, ինչպես կար մեկնաշապկով, վազեց միջանցքներով: Բոլոր դռներից գլուխները դուրս հանելով, քարանում էին պառավները:

Նոնամուտքի մոտ խոնվել էին վախեցած ծառաներն ու աղախինները: Տեսան, թե ինչպես դուրս պրծավ մեկը՝ ապիտակ, երկար, կույրի պես ձեռքերն առաջ պարզած... «Տե՞ր աստված, ցա՞րը»՝ վախից շատերն ընկան բերանքսիվայր: Մարդկանց միջով Պոտրը դուրս վազեց, պահախմբի սպայի ձեռքից պոկեց սանձն ու մտրակը, բոբիկ ոտքով ասպանդակը դժվարությամբ գտնելով, մտրակեց ու պլացավ, չքանալով ծառերի ետևում:

Ալեքսաշկան ավելի հանգիստ էր. հասցրեց հագնել կաֆտանն ու սապոգները, ձայն տվեց Ալյոշկային. «Ցարի շորերն առ ու մեզ հասիր», և մեկ ուրիշ ձիով պլացավ Պոտրի ետևից: Հասավ նրան միայն Սոկոլնիչի անտառակում:

— Կանգնի՞, կանգնի՞, մին խեռց:

Անտառակում, ծառերի բարձր կատարների արանքից երևում էին աշնան հստակությամբ շողացող աստղերը: Խշխշոց էր լսվում: Պոտրը շորսդին էր նայում, ցնցվելով, ձիու կողերին խփում մերկ կրունկներով, նորից արշավելու համար,. Ալեքսաշկան բռնել էր նրա ձին, բարկացած 22նջոցով կրկնելով.

— Ախր, համբերի, մին խեռց, ո՞ւր ես գնում անշալվար...

Զարխոտերի մեջ ֆոթոց լսվեց՝ թեռն իրար տալով, մի ցախաքլոր թռավ, ստվերի պես անցնելով աստղերի տակով: Պոտրը միայն ձեռքը տարավ մերկ կրծքին, սրտի վրա: Ալեքսեյ Բրովկինն ու Բուխվոստովը ձիերով բերեցին հաջուստը: Երեքով, շտապ-շտապ, մի կերպ հագցրեցին ցարին: Նրանց միացան ևս մի քանի պալատական ու սպա: Զգուշորեն ելան անտառակից: Մոսկվայի կողմից թեռն հրացրեք էր երևում ու կարծես զանգերի ձայն էր գալիս: Պոտրը ատամների արանքից ասաց.

— Դեպի Տրոիցե...

Գյուղամիջյան ճանապարհներով, ամայի դաշտերով արշավեցին մենաստան տանող ճանապարհը: Պոտրը գնում էր, սանձերը թողած, եռանկյունի գլխարկն աչքերին քաշած: Մերթընդմերթ կատաղած մտրակում էր ձիու պարանոցը: Նրա առջևից ու ետևից բսաներեք հոգի էին արշավում: Չոր ճանապարհի վրա դոփդոփում էին լայնաքայլ սմբակները: Բլրակներ, խանդակներ, կաղամախու և կեչու անտառակներ: Երկինքը կանաչավուն դարձավ արևելքում: Ձիերը խոփացնում էին, բամին էր սուլում ականջների մեջ: Մի տեղ ստվերի պես բան շպրտվեց կողմ. չհասկացան՝ գազան էր, թե դիշերարած եղած մուժիկ, որը խոտերի մեջ փռվեց սարսափահար:

Հարկ էր Տրոիցե հասնել Սոֆյայից առաջ: Բացվում էր արշալույսը՝ դեղին ու անկենդան: Մի քանի ձի ընկան ուժասպառ: Մերձակա յամայում ձիերը փոխեցին, առանց դադար առնելու, շարունակեցին ճանապարհը: Երբ հեռվում երևացին ամրոցի աշտարակների սրածայր տանքիներն, ու շառագունած արշալույսը թրթռաց գմբեթների վրա, Պոտրը կանգնեցրեց ձին, շրջվեց ու ատամները մերկացրեց... Ձին քայլի բերած, մտավ մենաստանի դարպասն ի ներս: Ցարին իջեցրին թամբից, ամոթից ու հոգնածությունից կիսակենդան, մտցրեցին վանահոր խուցը:

17.

Կատարվեց այն, ինչ չէին սպասում ոչ Մոսկվայում, ոչ Պրեոբրաժենսկոյեում. Սոֆյան չկարողացավ ժողովել ստրելեցներին, Սպասսկու աշտարակի կոչնազանգն այդպես էլ չհնչեց, Մոսկվան անտարբեր քնած էր այդ գիշեր: Պրեոբրաժենսկոյեն լքված էր... Բոլորը՝ Նատալյա Կիրիլովնան հղի հարսի հետ, մերձավոր բոյարները, պալատականները, տնեցիներն ու աղխը, ռազմախաղի երկու գնդերն իրենց թնդանոթներով, հրասանդներով ու մարտական ռումբերով գնացել էին Տրոիցե:

Երբ հաջորդ օրը Սոֆյան ցերեկային ժամերգության էր տնային եկեղեցում, բոյարների արանքով խցկվելով, նրան մոտեցավ Շակլովիտին: Տարօրինակ էր դեմքը: Սոֆյան զարմացած բարձրացրեց հոնքերը: Ծուռ քմծիծաղով հակվեց Սոֆյայի ականջին.

— Պոտր ցարին Պրեոբրաժենսկոյեից տարել են, սատանան գնացել է մի տակ շապկով, հայտնի չէ թե ուր...

Սոֆյան սեղմեց շրթունքները, թթված ասաց.

— Որ դիվոտեց, ուր ուզի կգնա...

Կարծես թե կարևոր ոչինչ չէր եղել: Բայց հենց նույն օրը հայտնի դարձավ, որ Լավրենտի Սուխարևի ստրելեցյան գունդը լրիվ կազմով գնացել է Տրոիցե. անհասկանալի էր, թե երբ են նրան իրենց կողմը քաշել, և ով: Պետք է որ Բորիս Գոլիցինի՝ Լավրենտիի վաղեմի բաժակակցի արածը լիներ: Մոսկվայում համընդհանուր փսփսոց ծայր առավ: Գիշերները դարպասներ էին ճոռում, տարբեր կողմերից բոյարական ծանր կառքեր էին ելնում, փողոցների տախտակները դղրդացնելով, ամբողջ թափով քշում բարոյալավյան ճանապարհով...

Վասիլի Վասիլևիչ Գոլիցինը գիշերներն անցկացնում էր Մեդվեդևի հետ, փորձելով հնարությամբ պարզել իր ճակատագիրը: Իսկ ցերեկը կիսաքուն շրջում էր պալատում, ամեն ինչի համաձայնություն տալով: Շակլովիտին դեսուդեն էր ընկել գնդերում: Կատաղությունը թաքցրած Սոֆյան սպասում էր....

Անսպասելիորեն իր հինգհարյուրապետների, հարյուրապետների և ստրելեցների մի մասի հետ Տրոիցե գնաց գնդապետ Իվան Ցիկլերը, որը յոթ տարի առաջ եկեղեցու սեղանի տակ գտնվող թաքստոցից դուրս էր քաշել թագուհու եղբայր Իվան Կիրիլովիչին: Սոֆյայի վստահելիներից էր նա: Եվ անշուշտ, Պյոտրից ներումն աղերսելով, արքայադստեր բոլոր մտադրությունները բացահայտել էր:

Ցիկլերի մասին իմանալով, Սոֆյան իրեն կորցրեց: Էլ ո՞ւմ վրա հենվի հիմա, երբ հեռանում են այդչափ հավատարիմ շները: Իսկ Տրոիցեից սկսեցին սուրհանդակներ գալ ստրելեցյան բոլոր տասնինն գնդերը՝ հրովարտակներով (գրված Բորիս Գոլիցինի կողմից ու շեղակի, թանաքի ցայտուկներով ստորագրված— «Պետր»), որոնցով հրամայվում էր գնդապետներին և ուրյադնիկներին, առանց հապաղելու, Պյոտր ցարի մոտ գնալ, պետական մեծ գործի համար...

Սուրհանդակներին ծեծում էին ուղեկալների վրա և խլում հրովարտակները, սակայն մի քանիսը հասցրեցին թափանցել գնդերն ու կարդալ հրամանագիրը: Այդժամ Սոֆյան կարգադրեց հայտարարել. «Ով համարձակվի Տրոիցե գնալ, նրա գլուխը կկտրեն»: Ի պատասխան գնդապետներն ասացին. «Լավ, չենք գնա»: Վասիլի Վասիլևիչը մտածեց հուսալի մարդիկ ուղարկել Պյոտրի կողմը բռնած ստրելեցների կանանց մոտ ու վախեցնելով, համոզել նրանց նամակ գրել ամուսիններին, որ ետ գան: Այդպես էլ արեցին, բայց դրա օգուտը քիչ եղավ:

Տրոիցե ուղարկեցին պատրիարք Յոակիմին, որ համոզի հաշտվել: Պատրիարքը գոհությամբ մեկնեց, բայց այնտեղ էլ մնաց, նույնիսկ պատասխան չգրեց Սոֆյային: Պյոտրի կողմից նոր հրովարտակներ եկան գնդերը, առևտրական ու սև հարյուրյակները, արվարձաններն ու պոսադները... «Առանց հապաղելու ներկայանալ Տրոիցեի մայրավանք, և ով չներկայանա՝ մահապատժի կենթարկվի...»: Դուրս էր գալիս, որ այս կողմում էլ է գլուխները թռչելու, այն կողմում էլ: Գնդապետ Նեչաևը, Սպիրիդոնովը, Նորմատսկին, Դուրովը, Մերգեևը, հինգ հարյուր ուրյադնիկներ, բազում շարքային ստրելեցներ, վաճառականության ու պոսադների պատվիրակներ սարսափահար մեկնեցին Տրոիցե: Պյոտր ցարը, առմուտքին կանգնած, ուսակալ զգեստով (նրա հետ էին Բորիս Գոլիցինը, երկու թագուհիները և սպատրիարքը) եկողներին թասով օղի էր պատվում, ու սրանք արցունքախառն բղավոցներով խնդրում էին վերջ տալ խառնակությանը: Նույն օրը Սուխարևո գնդում աղմուկ բարձրացավ. «Գնանք Մոսկվա, չարագործներին բռնելու...»:

Վասիլի Վասիլևիչը հիվանդ ձևացավ: Շակլովիտին, վախենալով մարդկանց աչքին երևալուց, պալատական գաղտնի սենյակներում էր մնում: Գլադկին ու ընկերները թաքնվեցին Մեդվեդևի իջևանատանը: Կրեմլի բոլոր դարպասները փակեցին: Թնդանոթներ հանեցին պարսպի վրա: Սոֆյան, տեղ չգտնելով, թափառում էր ամայացած սենյակներում՝ ծանրաքայլ, ձեռքերը սեղմած կրծքի տակ: Բաց կը-ռիվը, ապստամբությունը, կոտորածն ավելի լավ կլիներ, քան այդ մեռնող լռությունը պալատում: Որպես հիշողության երազ, հեռանում էր իշխանությունը, հեռանում էր կյանքը:

Բայց քաղաքում կարծես թե ամեն ինչ խաղաղ էր: Ինչպես միշտ, աղմկում էին հրապարակներն ու շուկաները: Գիշերները լսվում էին պահակների թակիչների ձայները, աքաղաղներն էլ էին կանչում: Ոչ ոք չէր ուզում կռվել: Բոլորը կարծես մոռացել էին Սոֆյայի մասին, որը միայնակ նստել էր կրեմլյան պարսպի ետևում:

Այդժամ նա վճռեց և օգոստոսի քսանինին մենակ, աղախին Վերկայի հետ կառք նստեց ու ոչ մեծ պահախմբով ինքը գնաց Տրոիցե:

18.

Յարոսլավյան ճանապարհի վրա օրուգիշեր փոշի էր կանգնած: Մոսկվայից գնում էին ոտքով ու հեծյալ, ծանր կառքեր էին գլորվում: Տրոիցեի մայրավանքի պարսպի դիմաց, պոսադներում ու դաշտում խռնված էին գումակները, խարույկներ էին ծխում. ժամը մեկ, կոիվ-կոտորածը էր սկսվում տեղի համար, հացի համար, ձիու կերի համար: Մայրավանքում այդպիսի հոսք չէին սպասում, և շտեմարանները շուտով դատարկվեցին, դաշտերի խրձերը ցրիվ տվեցին: Այնինչ, ստրելեցներին ու ծառայող դասին կուշտ կերակրել էր պետք: Կերի համար ջոկատներ էին ուղարկում մոտակա գյուղերը, և շուտով այնտեղ էլ հավի ճուտ անգամ չմնաց: Այնուամենայնիվ, Տրոիցեի պատերի տակ նեղվածք էր ու սոված էին մարդիկ: Բարձրաստիճան շատ բոյարներ ապրում էին վրաններում, ոմանք բակում, ոմանք ուղղակի փողոցում: Ցարի հայտնվելուն էին սպասում, արևի տակ հենց առմուտքին նստած, տեղում ցամաք հաց ուտելով: Դժվար էր նման հրմշտոցով ու նեղվածքով փոխարինել մոսկովյան խաղաղ տունուտեղը, ուր օտար թռչուն անգամ մուտք չէր գործի: Սակայն բոլորը հասկանում էին, որ մեծ գործ է վճռվում, պետական իշխանու-

թյունն է փոխվում: Բայց բարի՞ն պիտի կատարվի արդյոք: Կաթծեռ թե ավելի վատ, քան հիմա, հնարավոր չէր. ամբողջ Մոսկվան, ամբողջ ժողովուրդը, համակ Ռուսաստանը վերքերի, սպիների մեջ էր, աղքատացած: Երեկոները, խարույկների շուրջ նստած, կամ սայլերի տակ պառկած, մարդիկ խոսում էին ազատ ու ինչքան կամենային: Մայրավանքի շուրջ տարածված դաշտերում ձայների ժխոր էր, կրակների կարմիր կետեր: Զանազան տեղերից հմայություններ իմացող մուժիկներ հայտնվեցին. տարօրինակ ձևերով աչքով անելով, գլխարկի մեջ բակլա էին խառնում, պպզում, թաշկինակ փռում հողի վրա, ցանկացողների համար բակլա գցում երեք կիտուկով, մատները տանում էին կիտուկների վրայով ու ցածրաձայն, սրտամոտ խոսում.

— Ինչ որ ուզել ես, կստանաս, ինչ մտածել ես, անհոգ մնա, պիտի վախենաս մի մարդուց, որը տրեխ չի հագնում, ոչխարի քուրք չունի, երեսն էլ սիպտակ-սիպտակ: Կհաշվես ու երրորդ բակի մոտով չես գնա, երեք աստղ տեսար, չմիգես: Ուզածդ կստանաս, կարող է շուտով, կարող է՝ չէ, ամեն: Ճնորհակալություն չասես, մի կես կոպեկ փող տուր...

Մշուշոտ խոսքեր էին ասում հմայություն անողները, մթնշաղին սողալով սայլերի արանքներում:

— Արքայադստեր ողնաշարի ջիղը խախտվել է,— շշնջում էին նրանք,— իշխան Վասիլի Վասիլևիչը մինչև առաջին ձյունն ապրողը չի... Խելացի ես, որ հեռացել ես նրանցից... Պյոտր ցարը դեռ ջահել է, բայց նրա փոխարեն թագուհին ու պատրիարքն են մտածում, գործի գլուխ նրանք են կանգնած: Ամենակարևորին պաշտպան կանգնեն: Կարևորն էլ ասեմ որն է. բոյարներին չեն թողնի կառքերով ման գան ու ամենքին մի-մի կալվածք կթողնեն, էնքան որ ապրեն: Վաճառականներից ու արվարձանների լավ մարդկանցից պատվիրակներ կգնան պալատ ու իրենց խոսքը կասեն վստահ. էս բանն արեք, կասեն, էս մի բանը՝ պետք չէ... Բոլոր օտարերկրացիներին կքշեն Ռուսաստանից, ու նրանց ունեցվածքը կթողնեն, որ թալանեն: Մուժիկներին ու ճորտերին ազատություն կտան՝ ուր կուզես, ապրի, առանց ճնշելու, առանց պարտ ու պարհակի...

Այսպես էին ասում գուշակները ու հմայողները, այդպես էին մտածում նրանց լսողները: Մայրավանքի վրա անդադար հնչում էր տոնական կոչնազանգը: Վանքերն ու տաճարները բաց էին, մոմերով լուսավորված, մենաստանային խստաշունչ երգեցողությունն էր լսվում օրուգիշեր:

Դեռ լույսը չբացված Պյոտր ցարը, աջ կողմում թագուհի մայրը, ձախ կողմում՝ պատրիարքը, իջնում էին առմուտքից, ժամերգության գնալու: Հետո, ժողովրդի առաջ հայտնվելով, թագուհին անձամբ նոր տեղ հասածներին մեկական թաս օղի էր տալիս, ժամերգությունից ու ծոմերից չորացած, բայց հոգեպես արիացած պատրիարքը ասում էր.

— Ապովածանաք գործ եք անում, որ հեռանում եք դավաճաններից,

վախենում եք ցարից,— ու աչքերն էր փայլեցնում Պյոտրի վրա: Ռուսական զգեստ հագած, մետաքսե թաշկինակը մաքուր լվացած ձեռքերում բռնած ցարը խոնարհ էր, գլուխը հանած, դեմքը դալկադեմ: Երրորդ շաբաթն էր ծխամորճ չէր առել բերանը, չէր խմել: Ինչ ասում էին՝ մայրը լիներ, թե պատրիարքը, կամ Բորիս Գոլիցինը, այն էլ անում էր, մայրավանքից դուրս չէր գալիս: Ցերեկվա ժամերգությունից հետո նստում էր վանահոր խցում, սրբապատկերների տակ ու բոյարներին թույլ տալիս ձեռքը համբուրել: Արագախոսությունը, աչքերը ոլորելը թողեց, բարեպատշաճ ու ցածրաձայն պատասխանում էր ոչ թե խելքին եկածը, այլ ավագների խորհրդով: Նատալյա Կիրիլովնան ստեպ-ստեպ կրկնում էր մերձավոր բոյարներին.

— Չգիտեմ, ինչպես երախտապարտ լինեմ աստծուց՝ խելոքացել է մեր արքան, շատ կանոնավոր ու բարեպատշաճ է դարձել...

Օտարերկրացիներից միայն Լեֆորտը ելումուտ ուներ նրա մոտ, այն էլ ոչ թե մարդկանց հայտնվելիս կամ սեղանատանը, այլ երեկոները, խուսափելով պատրիարքի աչքին ընկնելուց, գալիս էր ցարի խուցը: Պյոտրը լուռ բռնում էր նրա այտերից, համբուրում էր, թեթևացած շունչ քաշում: Նստում էին կողք-կողքի: Լեֆորտը կոտրատված շշնջոցով պատմում էր զանազան բաներից, ծիծաղեցնում ու քաջալերում էր և զվարճախոսության արանքներում գործնական մտքեր հայտնում:

Նա հասկանում էր, որ Պյոտրը սաստիկ ամաչում է մեկտակ շապկով իր փախուստի համար, և օրինակներ էր բերում «Բրոնիուսի պատմագրքից», խորամանկությամբ իրենց կյանքը փրկած թագավորների ու փառապանծ զորավարների մասին... «Ֆրանսիական մի հերցոգ ստիպված էր կնոջ շորեր հագնել ու անկողին մտնել տղամարդու հետ, իսկ հաջորդ օրը յոթ քաղաք գրավեց...Զորավար Նեկտարին, տեսնելով, որ թշնամին հաղթում է, իր կունդ գլխով թշնամուն վախեցրեց ու փախուստի մատնեց, բայց հետագայում խայտառակությունից չխուսափեց և կունդը կոտոշներով զարդարեց, թեև փառքը չպակսեցրեց՝ ասում է Բրոնիուսը...»: Ծիծաղելով, Լեֆորտը ամուր սեղմում էր Պյոտրի մոմապատ ձեռքերը:

Անփորձ ու տաքարյուն էր Պյոտրը: Լեֆորտը կրկնում էր, որ ամենից առաջ զգուշություն է հարկավոր Սոֆյայի դեմ կռվելիս. պետք չէ կռվի նետվել, բոլորը կշտացել են կռիվներից, այլ մայրավանքի բարեհունչ դողանջների ներքո Մոսկվայից այստեղ խրճնված ժողովրդին խաղաղություն ու բարեկեցություն խոստանալ: Սոֆյան ինքն իրեն կընկնի, որպես փտած մի գերան: Լեֆորտը շշնջում էր.

— Ծանրումեծ քայլիր, Պիտեր, խոնարհ խոսիր, հանգիստ նայիր, ժամերգություններին կանգնիր, քանի դեռ ոտքերդ դիմանում են՝ բոլորի համար սիրելի կդառնաս: Կասեն՝ ա՛յ, այսպիսի տեր է մեզ աստված ուղարկել, նրա օրոք շունչ կքաշենք... Իսկ բղավելն ու գոռգոռալը թող Բորիս Գոլիցինին...

Պյոտրը զարմանում էր սրտագին ընկերոջ՝ Ֆրանցի խելացիու-

թյան վրա: «Ֆրանսերեն սա կոչվում է պոլիտի՛կ՝ իր շահը գիտնալ,— բացատրում էր Լեֆորտը:— Ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս Տասնմեկերորդը, եթե իրեն մուժիկը հարկավոր լիներ, ստորին մուժիկին էլ հյուր կգնար, իսկ եթե պետք չիներ, նշանավոր հերցոգի կամ կոմսի գլուխ էլ կթոցներ, անխնա՛: Ոչ այնքան նովում էր, որքան զբաղվում պոլիտի՛կով, թե՛ աղվես էր, թե՛ առյուծ, թշնամիներին պարտության մատնեց ու պետությունը հարստացրեց...»:

Զարմանալի էր նրան լսելը. պարերի ու կոիվների սիրահար, զվարճախոս ու անկարգ, այստեղ հանկարծ խոսք էր բացում այնպիսի բաներից, որոնց շուրջ ոուսները ծպտալ անգամ չէին կարող. «Ձեզ մոտ ամենքն իր կողմն է քաշում, իսկ պետության շահերը ոչ ոքի չեն հետաքրքրում. մեկի համար եկամուտն է թանկ, մյուսի համար՝ պատիվը, երրորդը՝ միայն որկորը լցնի... Այսքան վայրի ժողովուրդ միայն Աֆրիկայում թերևս գտնվի: Ոչ արհեստներ ունեք, ոչ գործ, ոչ նավատորմ... Մի բան գիտեք՝ երեք տակ հաշի մաշկել, այն էլ նիհար ու մաշված կաշի...»:

Նման խոսքեր համարձակ էր ասում Լեֆորտը, չվախենալով, որ Պյոտրը կկկալանոշի Երրորդ Հոոմը... Ասես մոմի լույսով նա թափանցում էր Պյոտրի նախնական, անկշտում, խռովված ուղեղի ծալքերը: Սերգիյի սրբապատկերի առաջ վառվող ճրագի լույսը խամրում էր կանաչավուն դարձող ապակուց, պատուհանից այն կողմ խաղաղվում էին պարեկների ոտնաձայները, իսկ Լեֆորտը, որևէ կատակով ծիծաղեցնելուց հետո, նորից իրենն էր շարունակում.

— Դու շատ խելոք մարդ ես, Պիտեր... Օ՜, ես շատ եմ թափառել աշխարհում, զանազան մարդկանց եմ տեսել... Քեզ եմ հանձնում իմ սուսերն ու կյանքը... (Սիրով նայում էր Պյոտրի խած, ուռած աչքերին, խաղաղված ու այս օրերին ասես տարիների կյանք ապրած բարեկամին:) Քեզ պետք են խելացի ու հավատարիմ մարդիկ, Պիտեր... Մի շտապիր, համբերիր, մենք նոր մարդիկ կգտնենք, այնպիսիք, որ հանուն գործի, հանուն քո խոսքի, կրակը կնետվեն, հորն ու մորը չեն խնայի... Իսկ բոյարները թող իրար մեջ կռվշտեն տեղի համար, պատվի համար՝ նրանց ուսերին նոր գլուխ չի բուսնելու, իսկ կտրելը երբեք էլ ուշ չի... Համբերիր, պնդացիր, դեռևս թույլ ես բոյարների դեմ կռվելու համար... Մենք դեռ կգվարճանանք, խրախճանքներ կանենք գեղեցիկ աղջիկների հետ... Քանի դեռ եռում է արյունդ, քեֆ արա, գանձարանը լիքն է, դու ցար ես...

Շատ մոտ էին շշնջում նրա բարակ շրթունքները, վեր ոլորած բեխիկները խտուտ էին տալիս Պյոտրի այտերը, մերթ փաղաքուշ, մերթ անհոդդողդ բիբերից խելք ու կռվազանություն էր կաթում... Սիրելի անձնավորությունը կարդում էր իր մտքերը, բառերով արտահայտում այն, ինչ որպես տարտամ ցանկություն ալիքվում էր Պյոտրի գլխի մեջ...

Նատալյա Կիրիլովնան զարմացել-մնացել էր՝ այսքան ողջախոհություն որտեղի՞ց, որախությունը չէր կարողանում զսպել նրա բարեկերպ կեցվածքից. մորն ու պատրիարքին է հարգում, մերձավոր բոյարներին ականջ դնում, կնոջ հետ է քնում, բաղնիք գնում: Նատալյա Կիրիլովնան փթթեց մայրավանքում, ինչպես վարդը աշնանը. տասնհինգ տարի ապրել էր լքյալ, և ահա վերստին արմունկներով հրմշտվում են մեծատոհմիկ իշխանները, մայր թագուհուն խոնարհվելու համար, բոյարները, օկոլնիչիները բերանին են նայում, իր համար որևէ գործ անելու պատրաստ: Ցերեկվա ժամերգությանը անդրանիկ տեղում է կանգնում, պատրիարքը խաչն առաջինն իրեն է մոտեցնում: Եղեգիա ժողովուրդը գետնին է փովում, կրոնախևները, անդամալույծները ու մուրացկանները աղաղակելով փառաբանում են իրեն, նետվում՝ փեշերի տուտը բռնելու: Նատալյա Կիրիլովնայի ձայնը խաղաղվեց, դանդաղախոս դարձավ նա, հայացքն արքայական էր: Նրա խցում, թախտերի ու սնդուկների վրա, շուգից չշարժվելով, տոնական մուշտակներով բոյարներն էին նստած. մերձավոր թագուհին, դեռևս մանուկ Պյոտրի քեռացուն եղած Տիխոն Նիկիտիչ Ստրեշնևը, դեմքին երանավետ ժպիտ, աչքերը թավ հոնքերով վարագուրած, որ մարդիկ զուր տեղը չառնեն-տանեն՝ խորամա՞նկ է ինքը, թե խելացի, ապա խստահայաց, շինահեր, լայնադեմ իշխան Իվան Բորիսովիչ Տրուբեցկոյը, քենական Պյոտր Աբրամովիչ Լոպուխինը, ում պրկված այտոսկրերը վառվում էին ու կարմիր էին լերկ կոպերը՝ կարճիկ ու չորչորուկ այդ ծերուկը խիստ անհամբեր էր, իշխելուն սպասելիս, ապա վառարանին հենված, ձեռքերը հանգիստ ծալած, ննջում էր արծվաքիթ, գնչուի նմանվող իշխան Մրիաձլա Ալեգուկովիչ Չերկասսկին... Ամավա կեսերին ժամանեց Ֆյոդոր Յուրևիչ Ռոմոդանովսկին ու նույնպես սկսեց նստել թագուհու մոտ, սղալելով բեխերը, դեսուդեն տանելով ապակենման, չոած աչքերը, տարուբերելով հսկայական փորը...

Խուց մտնելով, թագուհին յուրաքանչյուրի անուն հայրանունն էր տալիս, նստում հասարակ մի աթոռակի, մատներով բռնած նշխարքը: Կողքը եղբայրն էր նստում՝ Լև Կիրիլովիչը, կարմրաթուշ, գեր, ծանրումեծ, և բոյարներն անշտապ զրուցում էին պետական գործերից. ինչպես վարվել Սոֆյայի հետ, ինչ անել Միլոսլավսկիներին, ում աքսոր ուղարկել, ում՝ մենաստան և թե բոյարներից ով ինչ ատյան պիտի գլխավորի...

Բորիս Ալեքսեևիչ Գոլիցինը հազվադեպ էր լինում թագուհու մոտ, ծայր անհրաժեշտության դեպքում, ամաչում էր հորեղբորորդու համար, բացի դրանից, ժամանակ չուներ. օրուգիշեր հրամանագրեր էր գրում, բանակցություններ վարում Մոսկվայի հետ, իր կողմը քաշում գնդեր, հարցաքննություններ էր անցկացնում, զորքի պարեցի հոգսերը հոգում: Ոչ մեկի խորհուրդը չէր լսում՝ Վասիլիից ավելի գոռոզ էր ու հպարտ: Ոսկեզօծ թեթև գրահով, կարմիր փետրավոր իտալական սաղավարտով, ճոխ ու փարթամ, քիչ գինովցած, բեխերը վեր ոլորած, ոսկյա փոկերով բաշն ու պոչը հյուսած, կրակի կտոր զամբիկը հեծած, գնդերն էր շրջում: Թավշյա թամբի վրայից կռանալով, համբուրում էր նոր եկած գնդապետներին: Ձեռքերը կո-

դին կանթած, ձին քշում էր ստրելեցների մոտ, որոնք հնձած խոտի պես ծնկի էին իջնում:

— Ապրե՛ք, քաջեր,— խոպոտած կոկորդով բղավում էր նա, և շտապագնում էր ցանցառամագ կզակը,— աստված ձեզ կների, ցարը կողորմա: Գումակն արձակեք, ձեր ճաշը եփեք, արքան մի տակառ գինի է քախշում ձեզ...

— Մի տես, ի՞նչ ուրախ է Բորիսը,— կանանց ասում էին ստրելեցները գումակում,— ասել է, թե էստեղի գործերը լավ են գնում, մենք էլ լավ արեցինք, որ էս կողմը եկանք...

Բորիս Գոլիցինը մենակ բոլորի գործն անում էր: Բոյարները ուրախ էին, որ անհանգստացնող չկա, ավելի հանգիստ էր թագուհու խցում նստելն ու միտք անելը: Միայն Յակով ու Գրիգորի Դոլգոռուկիները, որ ապրում էին գորգապատ վրանում, միտրոպոլիտի բակում, չարացած էին Բորիսի վրա. «Յոթ տարի Վասիլիին էինք դիմանում, հիմա էլ ինը՛, Բորիսն է վզներիս նստում... Կուն տվեցինք, բազեն առանք...»: Պատրիարքը նույնպես չէր սիրում նրան, Պյոտրի հետ Կուկույում հարբեցողության համար, լատիներենի համար, օտարամոլության համար: Բայց առժամանակ լռում էր նաև պատրիարքը:

Օգոստոսի քսանինին մայրավանքի երկաթակուռ դարպասին հասավ անգլիարկ, կաֆտանը պատառոտված, հեծյալ մի ստրելեց, փոշու մեջ կորած դեմքի վրա միայն աչքերի դուրս պրծած սպիտակուցներն էին երևում: Մորուքի զգզված շեղբը ցցեց աշտարակի դարպասից վեր ու ապրսպիտաձայն բղավեց.

— Պետական գործո՞վ:

Բացեցին ճոնչացող դարպասը, ստրելեցին իջեցրին ուժասպառ ձիուց: Հաղթանդամ տղամարդ էր, բայց կարծես թե քայլ գցել չէր կարողանում՝ այնքան էր շտապել պետական այդ գործը կատարել, և թևերից բռնած, զգուշությամբ տարան Բորիս Գոլիցինի մոտ: Ստրելեցը քայլելիս գլուխն էր տարուբերում: Առմուտքի վրա Բորիսին տեսնելով, իրեն գցեց իշխանի ոտքերը.

— Սոֆյան տասը վերստի վրա է, Վոզդվիժենսկում...

19.

Վոզդվիժենսկոյե գյուղում առաջապահ ուղեկալը կանգնեցրեց կառավարչուհու կառքը: Սոֆյան բացեց ապակեպատ դուռը, դեմքով ճանաչելով մի քանի ստրելեցների, սկսեց անպատվել նրանց, դավանան ու քրիստոսադավ անվանելով, սպառնաց բռունցքով: Ստրելեցները վախեցան, հանեցին գլխարկները, բայց երբ կառքը նորից առաջացավ, տապարների կոթերով փակեցին ճամփան, բռնեցին ձիերի սանձերը: Այդ ժամանակ վախեցավ Սոֆյան ու հրամայեց իրեն տանել որևէ մի տուն:

Մուժիկներ ու կանայք գլուխները հանում էին ցանկապատերի դռնակներից, երեխաները կտուրներն էին բարձրանում, շները ատամներն էին շխկացնում կառքի վրա: Սոֆյան ետ ընկած, նստած էր գումատ, ամոթից ու զայրույթից գլխահակ: Վերկան ոտքերն էր ընկել, բազեռսի բոժոժիկներով զարդարված գդակով ու սրշինարոյ, ալյանդակ թզուկ Կաղան, որին հետներն էին վերցրել նենց ոլորպես, լալիս էր, կնճռապատ դեմքը ծամածռելով: Բերեցին մի հարուստ հարկահավաքի տուն: Սոֆյան հրամայեց, որ տանտերերը բոլորը աչքին չերևան, ու մտավ մեծ սենյակը, ուր Վերկան անհնչապես ցարական ծածկոցներ գցեց մահճակալի, սնդուկների, թախտերի վրա, վառեց լապտերիկները, և Սոֆյան պառկեց: Աղետի կանխազգացումը երկաթյա օղի պես սեղմում էր գլուխը:

Երկու ժամ էլ չէր անցել, ձիու դոփյուն ու ասպանդակին զարնվող թրի զրնգոց լսվեց: Առանց հարցնելու, ասես պանդոկ մտներ, սենյակ ընկավ սեղանապետ Իվան Իվանովիչ Բուտուրլինը, ձեռքերը գրպաններում, գլխարկը ծուռ դրած.

— Արքայադուստրն ո՞ւր է:

Վերկան վրա պրծավ նրան, մատները չռած, հրիրելով.

— Դուրս եկ, դուրս եկ, անամոթ... Քնած է նա...

— Ա՜, լավ, որ քնած է, ուրեմն արքայադստերը կասես, որ մայրավանք չգա...

Սոֆյան վեր թռավ: Նայում էր Բուտուրլինին, մինչև որ վերջինը հանեց գլխարկը...

— Կգնամ մայրավանք... Եղբորս ասա՝ կգամ...

— Քո գործն է... Միայն թե արքան հրաման տվեց, որ էստեղ ապասես դեսպանի, իշխան Իվան Բորիսովիչ Տրոյեկուրովին, ու մինչև նա չգա, քեզ էստեղից բաց չթողնեն...

Բուտուրլինը գնաց: Սոֆյան նորից պառկեց: Վերկան մուշտակով ծածկեց նրան, որ չդողացնի: Խամրում էր փայլարե պատուհանը սենյակում: Լսվում էր տավարածի մտրակի շխկոցը, մնչում էին կովերը, ճոճում դարպասները: Ու կրկին՝ լռություն: Իգնաշկայի գդակի բոժոժիկները աղիողորմ զնգացին. պստիկ ծաղրածուն վիճաստված նստած էր սնդուկին, ոտքերը կախած: «Սա էլ է արդեն ինձ թաղել պատրաստվում...»: Չարությունից ցնցվեց Սոֆյան... Ձեռքը կարողանար հասցնել՝ ցած կգլորեր սնդուկի վրայից... Բայց ձեռքերը կապարի ծանրությամբ ընկել-մնացել էին...

— Վերկա,— կանչեց կամացուկ, թավաձայն,— Վանկա Բուտուրլինի մասին ինձ կհիշեցնես, երբ մայրավանքում լինեմ...

Ձեռքի վրայով սահեցին Վերկայի սառը շրթունքները: Մոխրագույն աղջամուղջի մեջ թվաց, թե տեսնում է Վանկայի մերկ մեջքը, նետ ոլորած կապտած ձեռքերը, փայլեց սայրը, փքվեցին ու ընկան նրա թիակները, գլխի տեղում արնաշաղախ փուչիկ մնաց... Բռիություն չանե՞ս... Սոֆյան զսպված շունչը տեղը բերեց:

Տրոիցեից դեսպան է գալիս Տրոյեկուրովը: Երկու շաբաթ առաջ ճենց նրան էր Մոսկվայից ուղարկել Պյոտրի մոտ՝ ետ եկավ, ոչ մի համաձայնության չեկած: Այն ժամանակ Սոֆյան բարկացած էր, ու չթողեց, որ ձեռքը համբուրի: Վիրավորվե՞ց, թե վախեցավ: Շատ

միջակ խելքի տեր բոյարին է, միայն տեսքն է սարսափելի: Սոֆյան ամենողնուց իջեցրեց հաստ ոտքերը, փեշը քաշեց թավշյա ռոնամանների վրա:

— Վերկա, տուփը տուր...

Վերկան ներքնակի վրա դրեց երկաթակապ տուփը, անկյունից ամրացրեց մոմը, երկար չխկացնում էր հրամանը, այնպես որ Սոֆյայի ուսերը կրկին ցնցվեցին բարկությունից... Գեշ հոտ արձակեց աբեթը, ադամանդը վառեց թղթի կտորը, մոմը վառեց, ու լույսի տակ հակվեց Սոֆյան, այտերից դեն տանելով թափված մազերը: Հիվանդ եղբոր՝ Իվան ցարի նամակն էր վերընթեռնում. Պյոտրին նա գրում էր, որ հաշտվեն, որ այլևս կարիք չկա արյուն հեղելու, աղաչում էր պատրիարքին բարեգութ օգնություն ցուցաբերել, սիրու հանգեցնել Պյոտրի և Սոֆյայի չարացած սրտերը:

Կարդալիս, ժպտաց չարությամբ: Բայց միևնույն է, ստիպված էր այդ ստորացման միջով էլ անցնել: Միայն թե դուրս բերեր գայլաձագին Տրոիցեից... Այնքան էր խորասուզված մտքերի մեջ, որ չլսեց ինչպես դարպասից հեծյալներ մտան: Երբ նախասենյակում Տրոյեկուրովի թավ ձայնը հարցրեց իր մասին, Սոֆյան մանանակալի վրայից վերցրեց սև գլխաշորը, գլխին գցեց ու իշխանին կանգնած դիմավորեց: Իշխանը, կողքանց մտնելով նեղ դռնից ներս, գլուխ խոնարհեց, մատները գետնին կպցնելով, ուղղվեց. դեմքը պղնձագույն էր, հասակը մինչև առաստաղ, աչքերը ստվերված, միայն խոշոր քիթն էր փայլում մոմի լույսից... Սոֆյան հարցրեց ցարի ու ցարիցայի առողջությունը: Տրոյեկուրովը թնդաց, թե փառք աստծո, բոլորն էլ ողջ-առողջ են: Ձեռքը տարավ մորուքի վրայով, քորեց կզակն ու չհարցրեց Սոֆյայի ողջությունը: Հասկացավ ու սառեց Սոֆյան: Հարկ էր, որ ինքը նստեր, չստորանար ավելի, և չնստեց: Ասաց.

— Ուզում եմ մայրավանքում քնել, այստեղ ուտելիք չկա, հարմար էլ չէ:— Ու շարունակ ջանում էր ստվերների միջով նրա աչքերի մեջ նայել: Հպարտությունը պատառ-պատառ էր անում նրան, որ ահա, ինքը՝ կառավարչուհին, վախենում է եռամուշտակ այս տխմարից, և կանացի, մոռացված սարսափից գլուխը թաղվում է ուսերի մեջ: Տրոյեկուրովն ասաց.

— Առանց թիկնապահների, առանց զորքի իզուր ես մտքիդ դրել ճամփա ընկնել, արքայադուստր... Ճանապարհները վտանգավոր են...

— Ես վախենալու բան չունեմ. իմ զորքն ավելի շատ է ձերինից...

— Բայց ինչ օգուտ նրանցից...

— Դրա համար էլ առանց պահապանների եմ եկել՝ արյուն չեմ ուզում, հաշտություն եմ ուզում...

— Արքայադուստր, ի՞նչ արյան մասին ես խոսում, արյուն չի լինի... Իսկ թե գող ու խոովարար Ֆեդկա Շակլովիտին ու ընկերները դեռ արյան ծարավի են, դրա համար մենք նրանց կփնտրենք ու կգտնենք...

— Ինչի՞ համար ես եկել,— խլաձայն բղավեց Սոֆյան... (Տրոյեկուրովը գրպանից հանեց ու կարմիր քուղը կնքած մի թղթագալ-

ալար մեկնեց:)— Հրամանագի՞ր ես բերել: Վերկա, բոյարինից վերցրու հրամանագիրը... Իսկ իմ հրամանը հետևյալը կլինի. հրաման տուր ձիերը լծեն, մայրավանքում եմ ուզում գիշերել...

Վերկայի ձեռքը դեն հրելով, Տրոյեկուրովը բացեց թղթագալարը և անշտապ, հանդիսավոր սկսեց կարդալ.

— Համայն Մեծ ու Փոքր և Սպիտակ Ռուսիո ինքնակալ ցարի և մեծն իշխանի հրամանով կարգադրված է քեզ անհապաղ Մոսկվա վերադառնալ ու այնտեղ սպասել նրա արքայական կամքին, ինչ որ կասի քո մասին...

— Ծո՛ւն:— Սոֆյան խլեց նրանից թղթագալարը, ճմռթեց ու դեն նետեց... Սև գլխաշորն ընկավ վրայից:— Բոլոր զնդերն առած, ետ կգամ, առաջինը քո գլուխը կթռցնեն...

Տրոյեկուրովը փնչացնելով կռացավ, բարձրացրեց հրամանագիրը ու կարծես Սոֆյան չէր էլ փրփրել իր առաջ, վերջացրեց խստաձայն.

— Իսկ եթե համառես ու մայրավանք փորձես մտնել, հրամայված է անպատիվ վարվել քեզ հետ... Ահա այսպե՛ս...

Սոֆյան բարձրացրեց ձեռքերը, եղունգները խրեց ծոծրակի մեջ ու թափով ընկավ անկողնուն: Տրոյեկուրովը զգուշությամբ հրամանագիրը դրեց թախտի պոնկին, նորից քորեց մորուքը, մտածելով, որպես դեսպան, սույն դեպքում ինչպե՞ս վարվի՝ գլուխ խոնարհի՞, թե՝ ոչ: Շեղակի նայեց Սոֆյային՝ վերջինս պառկած էր ոլորանքի-վայր, շորի տակից մեռելի պես ցցվել էին թավշյա ռոնամանների հագած ոտքերը: Դանդաղ դրեց գլխարկը և առանց գլուխ խոնարհելու, նեղ դռնով դուրս գնաց:

20.

«... Իսկ որ դանդաղում ես այս մեծ գործի մեջ, դրանից վատ բան չկա...»:

Նամակը ցնցվում էր Վասիլի Վասիլևիչի ձեռքի մեջ: Մոմը մոտեցնելով, զննում էր հապշտապ խզմզված բառերը: Նորից ու նորից էր կարդում, ջանալով հասկանալ, ի մի բերել իր մտքերը: Հորեղբորորդի Բորիսը գրում էր. «Գնդապետ Գորդոնը Տրոիցե բերեց Բուտիրյան գունդը և արքայի ձեռքը համբուրելու թույլտվություն ստացավ: Պյոտր Ալեքսեևիչը գրկեց ու մի քանի անգամ համբուրեց նրան, արցունքն աչքերին, և Գորդոնը երդվեց ծառայել նրան մինչև մահ... Նրա հետ եկել էին օտարերկրացի սպաները և դրագունները և ռեյտարները... Իսկ ո՞վ է մնացել ձեզ մոտ: Ստրելեցների մի փոքր մասը, ովքեր իրենց խանութներն ու զբաղմունքը, կամ վարձու բաղնիքները չեն ուզում թողնել... Իշխան Վասիլի, դեռ ուշ չէ, քեզ փրկել կարող եմ, վաղն ուշ կլինի... Ֆեդկա Շակլովիտիին վաղը ջարդելու ենք պրկոցի վրա...»:

Բորիսը ճշմարտությունն էր գրում: Այն օրից, երբ Սոֆյային մայրավանք չթողեցին, ոչնչով հնարավոր չէր կանգնեցնել զորական ու

պաշտոնական մարդկանց փախուստը Մոսկվայից։ Բոյարները մեկնում էին օրը ցերեկով, բացեիբաց։ Անկաշառ ու խստաբարո զորական Գորդոնը եկավ Վասիլի Վասիլևիչի մոտ և ցույց տվեց Տրոիցե ներկայանալու հրամանը...

— Գլուխս ճերմակած է, ու մարմինս սպիներով է ծածկված,— ասաց Գորդոնը և նայում էր խոժոռված, սափրված այտերի կնճիռները հալաքած,— Աստվածաշնչի վրա երդում եմ կերել ու հավատարիմ եմ ծառայել Ալեքսեյ Միխայլովիչին և Ֆյոդոր Ալեքսեևիչին, և Սոֆյա Ալեքսեևնային։ Հիմա Պյոտր Ալեքսեևիչի մոտ եմ գնում։— Կաշվե ձեռնոցներով ձեռքերը դրած երկար սուսերի երախակալին, սուրը խփեց հատակին։— Չեմ ուզում, որ գլուխս թոչի կատափնարանի վրա...

Վասիլի Վասիլևիչը չէր հակառակում՝ անօգուտ էր. Գորդոնը հասկացավ, որ Պյոտրի ու Սոֆյայի վեճի մեջ Սոֆյան տանուլ է տվել։ Եվ նույն օրը բացած դրոշներով ու թմբկազարկով հեռացավ։ Դա վերջին ու ամենաուժեղ հարվածն էր։ Վասիլի Վասիլևիչն արդեն օրեր շարունակ ապրում էր ծանր քնով բանտվածի պես. տեսնում էր Սոֆյայի ապարդյուն ճիգերը և չէր կարող ոչ օգնել, ոչ կանգնեցնել նրան։ Սարսափում էր անփառունակ վախճանից ու զգում էր, որ մոտալուտ ու անխուսափելի է դա՝ գերեզմանի պես։ Գահի պահպանի և մեծն վոյեվոդայի իր իշխանությամբ քսանից ոչ պակաս գունդ կարող էր ժողովել ու Տրոիցե հասնել՝ Պյոտրի հետ խոսելու... Սակայն կասկածն էր տանջում. իսկ եթե հանկարծ հնազանդվելու փոխարեն գնդերում բղավեն. «Դավաճան, խռովարա՛ր...»։ Կասկածելով, անգործության էր մատնվել, խուսափում էր Սոֆյայի հետ դեմ առ դեմ մնալուց, դրա համար էլ հիվանդ էր ձևանում։ Հավատարիմ մարդու ձեռքով Տրոիցե՝ եղբայր Բորիսին նամակներ էր ուղարկում լատիներեն, որոնցով խնդրում էր ռազմական գործողություններ չսկսել Մոսկվայի դեմ, Սոֆյային Պյոտրի հետ հաշտեցնելու զանազան եղանակներ էր շարադրում ու դրվատում իր ծառայություններն ու տառապանքները՝ ցարերին ծառայելիս։ Ամեն ինչ ապարդյուն էր։ Միշտ երազի պես, կարծես տեսանելի ու աներևույթ մեկը ընկել էր վրան, հոգին տանջվում ու զարհուրում էր, բայց ուժ չուներ շարժել մարմնի և ոչ մի անդամը։

Կիսայրված մոմի բոցի վրա մի ճանճ ընկավ, ընկավ ու պտտվեց։ Վասիլի Վասիլևիչը արմունկները դրեց սեղանին, գլուխը բռնեց...

Երեկ գիշեր կարգադրեց որդուն՝ Ալեքսեյին և կնոջը՝ Ավդոտյային (որը վաղուց լքյալ էր ու մոռացված) անհապաղ մեկնել մերձմոսկովյան Մեդվեդկովո կալվածքը։ Տունն ամայացել էր։ Փակցափեղկերն ու առմուտքերը մեխել էին։ Սակայն ինքը հապաղում էր։ Մի օր էլ թվաց, թե բախտի անիվը շրջվում է։ Տրոիցեի մոտերքից վերադառնալով, Սոֆյան, առանց լվացվելու, առանց մի կտոր բան ուտելու, հրամայեց բանբերներ ու մունետիկներ ուղարկել՝ Կրեմլ կանչելու ստրելեցներին, վաճառական ու առևտրական հարյուրյակները, պոսադականներին ու բոլոր բարեկամ մարդկանց։ Գլխադուռ

հանեց Իվան ցարին, որը ոտքի վրա կանգնել չէր կարող, նստեց ալան մոտ, խղճալի ժպտալով (արդեն հայտնի էր, որ երկար ապրող չէ)։ Ինքն էլ, ալ գլխաշորն ուսերին, մազերն արձակ՝ ինչպես տեղ կը հասել ճանապարհից, դիմեց ժողովրդին.

— Մեզ համար հաշտությունն ու սերը ամեն ինչից թանկ է... Մեր հրամանագրերը Տրոիցեում չեն կարդում, դեսպան մարդկանց դուրս են վռնդում... Եվ սա՛ հա, աղոթք անելով, կամք նստեցի ու ինքս գնացի, Պյոտր եղբորս հետ սիրով խոսելու... Վոզդվիժենսկոյեից այն կողմ ինձ չթողեցին... Այնտեղ էլ ինձ խայտառակեցին ու անպատվեցին, հասարակ աղջկա տեղ դրեցին, կարծես արքայադուստր չեմ ես, չգիտեմ, թե ինչպես ետ եկա ողջ ու առողջ... Մի ամբողջ օր միայն նշխարք եմ կերել... Շրջակա գյուղերը լրիվ թալանված են և Նարիշկինի ու Բորիս Գոլիցինի հրամաններով... Պյոտր եղբորս նրանք խմացնում են... Ամբողջ օրը հարբած քնած է խորդանոցում... Ուզում են կռվով Մոսկվայի վրա գալ, իշխան Վասիլիի գլուխը կտրել։ Մեր կյանքը կարճացել է... Ասացեք, թե այնտը չենք ձեզ, Իվան եղբորս հետ մի հետ տեղ կգնանք, մեզ համար մի խուց գտնելու...

Նրա աչքերից արցունք ցայտեց... Չկարողացավ խոսել, մասունքակիր խաչն առավ, բարձրացրեց գլխից վեր։ Ժողովուրդը նայում էր խաչին, նայում էր բարձրաձայն լաց լինող արքայադուստրը, աչքերը կկոցած, գլխաբաց Իվան ցարին... Գլխարկները հանեցին, շատերը հոգոց էին հանում, աչքերը սրբում... Երբ արքայադուստրը հարցրեց. «Դուք էլ չե՞ք գնա Տրոիցե, կարելի՞ է ձեզ վրա հույս դնել», բղավեցին. «Կարելի է՛, կարելի է՛... Ձե՛զ դավաճանի...»։

Ցրվեցին։ Հիշելով, թե ինչ էր ասում արքայադուստրը, գլուխներն էին շարժում։ Անշուշտ, պաշտպան կանգնել պետք էր, բայց ինչպե՞ս։ Հացը Մոսկվայում պակասություն էր անում, գումակները ճամփաները թեքում էին դեպի Տրոիցե, քաղաքում թալան էր, կարգուկանոն չկար։ Շուկաներում առևտուրը կանգնել էր։ Ամեն տեսակ գործ էր կանգնել՝ խառնակություն էր։ Հոգնել էին։ Վերջ տալու ժամանակն էր։ Վասիլի, թե Բորիս Գոլիցինը կլիներ՝ մեկ էր, նույն օգուտն էր լինելու...

Այսօր մի տասը հազար մարդ Կրեմլ խուժեց, Պյոտրի հրամանագրի ցուցակներն էին թափահարում, ուր ասված էր, թե պետք է բռնել խառնակիչ ու գող Ֆեդկա Շակլովիտիին ու ընկերներին և շղթայակապ տանել մայրաքաղաք։ «Մե՛զ տվեք Ֆեդկային»,— բղավում ու մռայլում էին լուսամուտներն ու Գլխադուռն ի վեր, ճիշտ ինչպես տարիներ առաջ։ «Մեզ տվեք Միկիտա Գլադկիին, Կուզմա Զյորնինին, Օբրոսկա Պետրովին, տերտեր Սելիվերստկա Մեդվեդևին»... Պահակները նետեցին զենքերն ու փախան։ Աղխը, պալատաքանակ կանայք ու աղջիկները, ծաղրածուներն ու գանգները թաքնվեցին սանդուղքների տակ և նկուղներում։

— Դուրս արի, էդ գազաններին ասա, որ Ֆյոդոր Լեոնտևիչին չեմ տալու,— հանդգնաբար ասաց Սոֆյան, Վասիլի Վասիլևիչի թևից քաշելով դուռն կողմը... Իշխանը չէր հիշում, թե ինչպես եկավ Գոլ-

խաղում. քրտինքով, ատելությամբ, սխտորահոտով էր շնչում կիպ մոտեցած բազմությունը, աչք էին ծակում առաջ պարզած նիզակների, թրերի, դաշույնների սայրերը... Չէր հիշում, թե ինչ բղավեց ու ետ-ետ սողոսկեց նախասենյակ... Տեղնուտեղը դուռը ճռնչաց դեմ տված ուսերի տակ... Վասիլին տեսավ սպիտակած, անկենդան ու անքիթ աչքերով Սոֆյային... «Նրան փրկել չի լինի, իրե՞նց տուր»՝ ասաց: Եվ դուռը ճռնչոցով բացվեց, ներս թափվեցին մարդիկ... Սոֆյան մեջքով հենվեց իշխանին, ավելի ու ավելի ծանր էր ճնշում նրա մարմինը: Ուզեց գրկել Սոֆյային: Թավաձայն ճիչ արձակեց, հրեց ու ետ վազեց...Երբ երկուսն էլ Նատատաշ պալատում էին, լսեցին Ֆեդկա Շակլովիտիի սարսափելի բղավոցը... Նրան բռնել էին արքայադստեր բաղնիքում:

Այդուհանդերձ, Վասիլի Վասիլևիչը հապաղում էր փախչել: Ճանապարհային կառքը երեկոյից սպասում էր ետնամուտքի առաջ, տան կառավարիչն ու մի քանի հին ծառաներ ննջում էին նախասենյակում: Վասիլի Վասիլևիչը նստած էր մոմի առաջ, գլուխը սեղմած: Այրված թերթով ճանճը մեջքի վրա ընկած էր սեղանին: Հրսկայական տունը լուռ էր, անկենդան: Աղոտ փայլում էին կենդանակերպի նշանները առաստաղին, և հունական աստվածները մթնշաղի մեջ իշխանին էին նայում: Կենդանի էին Վասիլի Վասիլևիչին տանջող զոհումները միայն: Չէր կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ ամեն ինչ այսպես եղավ: Ո՞վ է մեղավոր կատարվածի համար: Ա՜հ, Սոֆյա, Սոֆյա... Հիմա արդեն ինքն իրենից չէր թաքնվում. հոգու գաղտնարաններից ելնում էր շպարազուրկ կնոջ, անհագուրդ սիրուհու, չսիրած, ծանրահայաց դեմքը՝ իշխանասեր, կոպիտ, սարսափելի... Իր փառքի՛ դեմքը:

Ի՞նչ է ասելու Պյոտրին, ի՞նչ է պատասխանելու թշնամիներին: Կնոջ հետ պառկելով իշխանություն է ձեռք բերել, խայտառակ եղել Ղրիմի տակ ու տեսրակ է գրել. «Քաղաքացիական ապրուստի կամ բոլոր գործերը բարվոքելու մասին, որք հարկ են հանայն ժողովրդին...»: Բռունցքներն իջեցնելով ծոծրակից, խփեց սեղանին... Ամո՛թ ու ամո՛թ: Երեկվա փառքից սոսկ ամոթն է մնացել:

Փակոցափեղկի արանքից աղոտ շառագույն տեսավ... Մի՞թե լուսանում է: Թե՞ արևաներկ լուսինն է ելել Մոսկվայի վրա: Վասիլի Վասիլևիչը վեր կացավ, աչք ածեց կամարակապ սրահի ցոլցլացող աղջամուղջը, կենդանակերպի նշանները գլխավերևում... Խաբեցին աստղագուշակները, կախարդներն ու հմայողները... Ներումն չի լինի... Դանդաղ, հոնքերի վրա քաշեց գլխարկը, երկու ատրճանակ դրեց գրպաններն ու դեռ նայում էր, թե մոմակալի մեջ ինչպես էր վերջանում մոմը՝ պատրույգը թաղվեց հալված մոմի մեջ, ճտճտալով հանգավ...

Մթին բակում իրար անցան լապտերներ բռնած մարդիկ: Հեռավոր այգաբացի աղոտ լույսն էր երևում: Ճանապարհային կառքը ճանաչելով, Վասիլի Վասիլևիչը կառավարչին տվեց բանալին:

— Բեր նրան....

Կառքի մեջ ճամպրուկները դրեցին, տուփերը կապեցին ետնամասին: Եվ եկավ կառավարիչը, առջևից հրհրելով շղթաները գրնգացնող Վասկա Սիլինին: Կախարդը բարձրաձայն տնքում էր, խուչակնքում չորս կողմն ու աստղերը: Ծառաները հրեցին նրան Վասիլի Վասիլևիչի ոտքերի տակ:

— Գնացի՛նք, տերը մեզ հետ,— ցածրաձայն-հանդիսավոր ասաց կառապանը: Գորշաձերմակ, հուժկու վեցնյակը խոշոր վայրգով ելավ տոպրակապատ փողոց: Տկերսկայայով թեքվեցին դեպի Ֆիվեր: Փողոցները դեռ սակավամարդ էին: Տափարածը եղջերափողն էր փչում, փոշու մեջ քայլելով դարպասների մոտով, որոնցից մնչալով ելնում էին կովերը: Գավիթներում արթնանում էին մուրացկանները, բորբրվում ու հովշտում: Տիրացուները հորանջելով տեղ-տեղ բացում էին եկեղեցիների ցածրիկ դռները: Նրբանցքում, ածուխ բարձած սայլի վրայից մի մուժիկ էր գոռում. «Թափի՛, թափի՛...»: Կանայք կեղտաջուրը շրջում էին փողոցները, մոխիր թափ տալիս, բերանները բացած նայում էին պայծող ձյունաճերմակ ձիերին, բարձր թամբերի վրա վերուվարվող, սիրամարգի փետուրներ կրող ձիավարներին, առաջ պարզած խոշորաթաթ ձեռքերով ճերմակ մետաքսե տաբներկու սանձ բռնած գազանակերպ կառապանին, թրերը մերկացրած, կառքի ետնամասում կանգնած երկու ածդահաներին: Դռլերն ընկան մի կնոջ ձեռքերից, անցորդները հանում էին գլխարկները, ոմանք ծունկ չոքեցին ապահովության համար...

Վերջին անգամ էր թերևս Մոսկվայով պտտում Վասիլի Վասիլևիչը: Ի՞նչ է լինելու վաղը: Արտաքսո՞ւմ, մենաստա՞ն, լլկո՞ւմ: Նա դեմքը թաղեց ճամփորդական կիսամուշտակի օձիքի մեջ: Թվում էր, թե ննջում էր: Սակայն երբ Վասկա Սիլինը փորձեց իրար գալ, իշխանն ամբողջ ուժով խփեց նրան ոտքով... «Այ քեզ բա՜ն»՝ զարմացավ Վասկան: Գոց աչքի տակ ցնցվում էր իշխանի այտը: Երբ հասան ուղեկալ, Վասիլի Վասիլևիչը ցածրաձայն ասաց.

— Սուտ էր, ավազակություն ու խաբեություն էր քո հմայությունը... Ծո՛ւն, մշակի զավա՛կ, խաբեբա՛... Մտրակով կաշիդ քերթելն էլ քիչ է...

— Չէ. չէ, չկասկածես, հայր հարազատ, ամեն, ամեն ինչ կլինի, ցարական թագն էլ...

— Ձե՛նդ, ձե՛նդ, գող, բ... վաստակ:

Վասիլի Վասիլևիչը ընկավ ու կատաղած ոտի տակ առավ կախարդին, մինչև վերջինս չտնքաց շնչահեղձ...

Մեդվեդկովոյից մի վերստ հեռու կառքը տեսնելով, նշանատու մուժիկը գլխարկը թափահարեց, կեչու անտառակի պոնկին պատասխան տվեց երկրորդը, ձորակի ետևի բլրակին՝ երրորդը: «Գալի՞ս է, գալի՞ս է...»: Մի հինգ հարյուր ծառա ու սպասավոր, ծնկաչոք, գլուխները գետին հակած, դիմավորեցին իշխանին: Թևերը բռնած իջեցրին կառքից, կիսամուշտակի փեշերն էին համբուրում...

Վախեցած դեմքեր, հետաքրքրությունից վառ լող աչքեր: Վասիլի Վասիլևիչն անբարյացակամ գնեց ծառաներին՝ շատ են իմանալիվում, շտապկոտ են, իրար անցած... Նայեց քառաթեք հոլանդական տանիքով, գերանակապ, բաց մուտքով ու կիսակոր երկու սանդուղքներով տան վեց պատուհանների կտոր-կտոր ապակիներին... Ընդարձակ բակի ծայրերին ախոռներն էին, նկուղները, քաթանի գործարանը, հավաքները, աղավնատները...

«Վաղը վրա կտան ատենավորները,— մտածեց նա,— կցուցակագրեն, կկնքեն, կանանկացնեն... Ամեն ինչ մոխիր կդառնա...»: Հանդիսավոր անշտապությամբ Վասիլի Վասիլևիչը տուն մտավ: Նախասենյակում ընդառաջ վազեց Ալեքսեյ որդին՝ շարժուձևով ու առաջին աղվամազով պատած դեմքով հորը նման: Դողացող շրթունքները հպեց հոր ձեռքին, բիթը սառն էր: Ճաշասրահում Վասիլի Վասիլևիչը, ասես բարկացած, չուզենալով, խաչակնքեց, նստեց սեղանի մոտ, վենետիկյան հայելու դիմաց, որի մեջ արտացոլվում էին հարթատուշ պատերը, միջնապատերին զոլավոր գորգեր, թանկարժեք ամանեղենով դարակներ... Ամեն ինչ մոխիր կդառնա... Մի գավաթ օղի լցրեց, սև հաց պոկեց, թաթախեց աղամանի մեջ ու չխմեց, չկերավ. մոռացավ: Կոթնեց արմունկին, գլուխը կախեց: Ալեքսեյը կանգնած էր կողքին, շունչը պահած, պատրաստ առաջ նետվելու, մի բան պատմելու...

— Հը՞,— հարցրեց Վասիլի Վասիլևիչը խստորեն:

— Հայրիկ, այստեղ էին եկել...

— Տրոիցեի՞ց:

— Քանինգ դրագուն էին պորուչիկի հետ ու սեղանապետ Վոլկովը:

— Դուք ի՞նչ ասացիք:

— Ասացինք, թե հայրիկը Մոսկվայում է, իբր այստեղ գալու միտք չունի... Սեղանապետն ասաց. թող իշխանը շտապի Տրոիցե գալ, թե անպատիվ դառնալ չի ուզում...

Վասիլի Վասիլևիչը ծուռ քմծիծաղ տվեց: Խմեց գավաթը, հացը ծամեց ու համ չէր զգում: Տեսնում էր, որ որդին հազիվ է զսպում իրեն՝ ուսը կախվել էր, ոտնաթաթերը ճորտավարի ներս էին թեքվել, հատակի տախտակը մանրիկ դողում էր ոտքերի տակ: Քիչ էր մնացել բղավեր որդու վրա, սակայն նայեց վախեցած դեմքին ու խղճաց.

— Մի դողա, նստիր...

— Հայրիկ, ինձ էլ հրաման տվեցին քեզ հետ Տրոիցե գնալ...

Այժմ Վասիլի Վասիլևիչը շառագունեց, բարձրացավ տեղից, բայց այս անգամ էլ հպարտությունը զսպեց նրան: Արտևանունքները կախեց: Մի գավաթ էլ լցրեց, սխտորած դոնդող կտրեց: Որդին փութով մոտեցրեց քացախի սրվակը...

— Պատրաստվիր, Ալյոշա,— դանդաղ ասաց Վասիլի Վասիլևիչը:— Դադար առնեմ, գիշերով դուրս կգանք... Ատոված ողորմած է... (Ծամում էր, դառը մտքերի մեջ ընկած: Հանկարծ քրտնեց ճակատը, բիբերը թրթռացին:) Ասեմ ինչ արա, Ալյոշա. հետս մի մուժիկ եմ բերել... Գնա տես, որ դրան տանեն գետափի բաղնիքը, փակի տակ դնեն ու աչքի լույսի պես պահպանեն...

Երբ Ալյոշան գնաց, Վասիլի Վասիլևիչը իջեցրեց ծայրին դողացող դոնդողի կտորով դանակը, կորացավ՝ դեմքը կնճռապատվեց, ճզմեցին աչքերի տակի տոպրակները, կախ ընկավ շրթունքը...

Վասկա Սիլինը նստած էր բաղնիքում՝ գետի վրա կախված զառիթափին: Ամբողջ օրը բղավում ու ոռնում էր, որ ուտելու բան տան: Սակայն մարդ չկար մոտերքում, խշշում էին թփերը, մանրիկ ծանծաղներն էին ճլմփացնում գետի ջուրը՝ փրկվելով գայլաձկներից, մնկ էլ չվելու պատրաստվող սարյակների երամն էր օդ բարձրանում, ու փայլատակում էին նրանց թևերը երկնի կապույտում, որ կախարդն էր տեսնում ծիանցք-պատուհանից: Թռչունները հոգնեցին, իջան կաղնուտ, ծլվլացին, ճոլողեցին, չվախենալով մարդու տնքոցներից...

«Իմ հարազատ Պոլտավշչինա,— շշնջում էր կախարդը,— սատանան ինձ բերեց նզովյալ Մոսկովշչինա: Թող ժանտախտը ձեզ տանի, բոլորդ մեկմեկու երես չտեսնեք, թող ձեր բոլոր քաղաքները ավերվեն...»:

Մայրամուտի արևը լուսավորեց նեղլիկ պատուհանը և իջավ անտառի կատարներից ցած: Վասկա Սիլինը հասկացավ, որ ուտելու բան չեն տալու, պառկեց սառը թախտին, ավելը դնելով գլխատակը: Նստեց ու հանկարծ վեր թռավ, վախից մորուքը տնկելով. շեմին կանգնած էր Վասիլի Վասիլևիչը: Գլխին՝ սև եռանկյունի գլխարկ, ճամփորդական քուրքի տակից՝ օտարերկրյա սև զգեստ, տուսերը տնկված էր պոչի պես...

— Հիմա՞ ինչ կասես, գուշակ,— հարցրեց իշխանը տարօրինակ ձայնով:

Սիալվեց Վասկա Սիլինը՝ դողացրեց, ցնցվեց... Այնինչ, պիտի հասկանար, որ իշխանի մեջ դեռ հավատ մնացել է իր հայտնատեսության վրա... Պիտի ուժեղ բռներ իշխանի ձեռքն ու բղավեր. «Ցարի մոտ մահագին տանջանքի ես գնում: Գնա, մի վախեցիր... Չորս գազան ճանկերը բացել են... Չորս ագռավ թռել-գնացել են... Մահը ետ է քաշվել... Տեսնում եմ, ամեն ինչ տեսնում եմ...»: Դրա փոխարեն Վասկան, վախից ու քաղցից բարբաջել սկսեց ցարական նույն թագերի մասին, լաց եղավ, խնդրեց.

— Բաց թող ինձ, ի սեր Քրիստոսի, գնամ Պոլտավշչինա... Ինձնից ոչ վնաս կգա քեզ, ոչ վտանգ...

Վասիլի Վասիլևիչը մոլեգնած աչքերով նրան էր նայում շեմից: Հանկարծ դուրս պրծավ, նախաբաղնիքի դուռը գերանով դիմահարեց, կողպեքը կախեց... Վազեց բաղնիքի պատերի տակով: Վասկան հասկացավ՝ ցախ ու ճյուղ է լցնում... Բղավեց. «Պետք չի՞»... Իշխանը պատասխանեց. «Շատ բան գիտես, վառվի պրծի»... Ու հազալով փրչեց, հաբեթը բորբոքելով: Խանձահոտ եկավ: Վասկան առավ դույլը, ջարդեց դռան վրա, բայց դուռը չբացվեց: Գլուխը կողքանց հանեց ծխանցք-պատուհանից, սկսեց բղավել, կոկորդը ծուխ լցվեց...

Ջախը, բորբոքվելով, ճռճռաց ու բռնվաց: Լուսավորվեցին գերանների արանքները: Կրակը ելնում էր գլխացող սլատն ի վեր: Վասկան մոտավ թախտի տակերը՝ շոգից փրկվելու: Կառքը ծուվեց: Պատերը բոցավառվել էին...

Գիշերային անշարժ օդի մեջ, ատաղեղի լույսը խամրեցնելով, ելել էր բոցը գետակի վրա: Ու դեպի յարոսլավյան ճանապարհը ուղղող ճերմակագորշ ձիերի վեցնյակի, կաշեպատ սև կառքի կարմրավուն ստվերները դեռ երկար թրթռում էին խոզանների վրայով, մերթ երկարում խոնավաշունչ ձորակի խորքերում, մերթ ելնում զառիկոդով, մերթ սահելով բեկվում էին կեչուտի բների վրա...

— Որտե՞ղ է վառվում: Հայրիկ... Հո մեր մոտ չի՞,— քանիցս հարցրեց Ալեքսեյը:

Վասիլի Վասիլևիչը, կառքի անկյունում ննջած, չէր պատասխանում...

21.

Գոմերի ստորերկրյա այրերում, ուր Խառնակ տարիներին վառոդի պահեստներն էին, հիմա՝ մենաստանի պարենի գետեղարանները, ցածրիկ կամարների տակ հյուսները տեղ բացեցին, աղյուսե պուների արանքում հեծան ամրացրեցին՝ ճախարակով ու օղակով, ներքևում՝ հորիզոնական մի ձող, լծակապով՝ գելարանն էր: Նըստարան ու սեղան դրեցին ցուցմունքները գբաղող ատենավորների համար, կարմիր կտորով պատված մեկ ուրիշ նստարան՝ բարձրաստիճանների համար, նաև նորոգեցին նկուղներից վեր, քարե պահեստ տանող սանդուղքը, ուր երկրորդ օրն էր, շրթայակապ Ֆեդկա Շակլովիտին էր նստած:

Հարցաքննում է Բորիս Ալեքսեևիչը: Մոսկվայից, Քրեական վարչատնից մի վարպետ դահիճ բերեցին՝ Եմելյան Սվեժևին, որը հայտնի էր մտրակի առաջին իսկ հարվածից խոսեցնել ստիպելով: Հրապարակային պատիժների ժամանակ, սյանը կապվածին կարող էր նաև խղճով խփել, բայց եթե անխիղճ էր խփում, տասնհինգերորդ հարվածից մարդուն կիսում էր մինչև ողնաշարը:

Բազում ու զանազան մարդիկ հարցաքննվեցին, ոմանք իրենք էին մատնություններ բերում և պաշտոնական ցուցմունքներ տալիս: Հաջողվեց բռնել Կուզմա Չյորմնիին: Խորամանկությամբ ձերբակալեցին Սոֆյային մոտ մարդկանցից մեկին՝ պրիստավ Օբրոսիմ Պետրովին, որը երկու անգամ խույս էր տվել տապարներից ու նիզակներից: Սակայն Նիկիտա Գլադկին տերտեր Մեդվեդևի հետ փախան, ու նրանց բռնելու համար հրամանագրեր էին ուղարկված բոլոր վոյեվոդությունները:

Հերթը հասավ Ֆյոդոր Շակլովիտիին: Երեկվա հարցաքննությանը, ի պատասխան ընթերցված բոլոր մատնություններին, ցուցմունքներին և գրավոր հարցումներին, Ֆեդկան զայրացած պատասխանում էր. «Ձրդպարտություն է, թշնամիներս ուզում են ինձ կործանել, ինձ մեղավոր չեն համարում...»: Այսօր նրա համար պատրաստել էին Եմելյան Սվեժևին, սակայն նա չգիտեր և առաջվա պես պիտի ժխտեր, թե խռովություն չի սարքել ու սրբազան կյանքի դեմ մտադրություններ չի ունեցել...

Քննության սկզբում Պյոտրը ներկա չէր լինում հարցաքննություններին, երևելյան Բորիս Ալեքսեևիչը նրա մոտ էր գալիս ատենավորի հետ, ու վերջինս կարդում էր հարցումների պունակները: Բայց երբ ձերբակալվեցին Չյորմնին ու Պետրովը բնկերների՝ Օբրոյգկովի, Շեստակովի, Եվդոկիմովի և Չեչյոտկայի հետ, երբ մահացու թշնամիները սկսեցին խոսել, Պյոտրն ամենամբ ցանկացավ լսել նրանց ասածները: Նրա համար մի աթոռակ դրեցին նկուղում, և նա նստում էր, մի կողմ քաշված, բորբոսապատ կամարների տակ: Արմունկները ծնկներին հենած, ծնոտը բռունցքին դրած, հարցեր չէր տալիս, միայն լսում էր: Երբ առաջին անգամ ճռռաց գելարանը և մինչև գոտկատեղը մերկ, լայնակուրծք ու մկանուտ Օբրոսիմ Պետրովը կախվեց՝ ճաղկատար դեմքը հոդաբաշխ դարձավ, ականջները սրկվեցին, ատամները կրճտացին ցավից, Պյոտրն աթոռակով ետ ընկավ աղյուսե սյան ստվերի մեջ, ու անշարժ նստած էր ամբողջ ընթացքում: Այդ օրը նա գունատ էր և մտազբաղ: Սակայն ատենաճանաչաբար ընտելացավ ու չէր թաքնվում այլևս:

Նատալյա Կիրիլովնան այսօր պահել էր նրան վատորդյան ծամերգությանը. պատրիարքը խոսելու էր, շնորհավորելով խառնակության բարեհաջող ավարտի առթիվ: Հիրավի. Սոֆյան դեռևս Կրեմլում էր, բայց անուժ էր այլևս: Մոսկվայում մնացած գնդերը պատվիրակներ ուղարկեցին՝ ներման ու հողոմածության խնդիրը սանելու Պյոտր ցարին, համաձայն էին թեկուզ Աստրախան, թեկուզ սահմանները գնալ, միայն թե կենդանի թողնեին, իրենց ընտանիքների հետ ու իրենց զբաղմունքին:

Տաճարից Պյոտրը ոտքով գնաց: Գոմերում մեծ թվով ստրելեցներ էին հավաքվել. «Տեր արքա, մեզ տուր Ֆեդկային, նրա հետ ինքներս կխոսենք...»: Գլուխը կախած, ձեռքերը լայն-լայն թափահարելով, աստիճանների վրա գայթելով, նրանց մոտով վազելով իջավ նկուղի խոնավ խավարի մեջ: Կաշվի ու մկան հոտ եկավ: Տոպրակների, պարկերի ու տակառների արանքով անցնելով, հրեց ցածր դուռը: Գրագրի սեղանի մոմը դեղնավուն լույսով լուսավորում էր կամարների ասդդոստայնները, հողե հատակին կիտված կեղտը, տանջանքի գործիքի նոր գերանները: Գրագիրը և մյուս նստարանին նստածները՝ Բորիս Ալեքսեևիչը, Լև Կիրիլովիչը, Ստրեշնևը և Ռոմոդանովսկին հանդիսավոր գլուխ խոնարհեցին: Երբ նստեցին, Պյոտրը տեսավ Շակլովիտիին. իրենից մի բայլի վրա էր՝ ծնկաչոք, գանգրահեր գլուխը կլոր ընկած, թանկարժեք կաֆտանի թևատակը պատռված (հենց դրանով էին բռնել պալատում), շապիկին արյան բծեր: Ֆեդկան դանդաղ բարձրացրեց ամբած դեմքն ու հանդիպեց ցարի

հայացքին: Աստիճանաբար նրա բիբերը լայնացան, գեղեցիկ շրթունքները ձգվեցին, դողացին ասես անձայն լացից: Ամբողջովին առաջ նակվեց, աչքը չկտրելով Պյոտրից: Բորիս Գոլիցինը նույնպես շեղուկի նայեց ցարին, զգուշությամբ քմծիծաղ տալով.

— Կհրամայես շարունակե՞լ, տեր արքա:

Թավ բեխերի տակից Ստրեշնևն ասաց.

— Ավազակությունն անելուց հետո պատասխան տալ կարողացիր, թե չէ ի՞նչ ենք գլուխ դնում քեզ հետ: Արքան ուզում է ճշմարտությունն իմանալ...

Բորիս Ալեքսեևիչը ձայնը բարձրացրեց.

— Մի պատասխան ունի նա՝ այդպիսի խոսքեր չի ասել ու այդպիսի գործեր չի արել... Բայց քննության համաձայն, շատ են մեղքերը... Ստիպված ենք տանջել...

Շակլովիտիին ասես հրեցին, ծնկների վրա մի կողմ վազեց մկան պես՝ կուզեր թաքնվել կաշինների կույտի տակ, աղ դրած ձկան գարշահոտ տակառների ետևում... Ու ընկավ, անշարժացած: Պյոտրը գնաց դեպի նա, ոտքերի տակ տեսավ Ֆեդկայի հաստ ու ածիլված վիզը: Ձեռքերը մտցրեց ֆերյազի գրպանները: Նստեց՝ հանդիսավոր ու արհամարհական, և պատանեկան խզված ձայնով ասաց.

— Թող ճշմարտությունն ասի...

Բորիս Ալեքսեևիչը կանչեց.

— Եմելյա...

Գելարանի ետևի կամարի տակից ելավ երկարահասակ ու նեղ ուսերով մի մարդ, ծնկներին հասնող կարմիր շապկով: Ըստ երևույթին, Շակլովիտին այդքան շուտ չէր սպասում նրան՝ նստեց կրունկների վրա, գլուխը թաղվեց ուսերի մեջ, նա նայում էր Եմելյան Սվեծնի անտարբեր ձիակերպ դեմքին. ճակատ համարյա չկար, միայն հոնքավերևն էր, կզակը կախ: Մոտեցավ, երեսաքի պես բարձրացրեց Ֆեդկային, ցնցելով ոտքի կանգնեցրեց: Հոգածությամբ ու ճարպկորեն, թևքերից քաշելով, հանեց կաֆտանը, արձակեց մարգարտակար օձիքը, մետաքսյա սպիտակ շապիկը մատով պատռեց մինչև պորտը, պոկեց վրայից ու մերկացրեց մինչև գոտկատեղը.... Ֆեդկան ուզեցավ անկեղծորեն բղավել, խոպոտ ու անհասկանալի ստացվեց.

— Տեր աստված, ամեն բան կասեմ...

Նստարանին նստած բոյարները մեկտեղ թափահարեցին գլուխները, մորուքները, ալտերը: Եմելյանը ետ տարավ Ֆեդկայի ձեռքերը, ենթադաստակներից կապեց, կաշեփոկի հանգույցը գցեց ու պարանի մյուս ծայրից ձգեց: Ապշահար կանգնած էր Շակլովիտին: Ճախարակը ճռռաց, ու նրա ձեռքերը սկսեցին բարձրանալ ետևում: Մկանները պրկվեցին, ուսերը փքվեցին, նա կորանում էր: Այդ ժամանակ Եմելյանը ուժեղ հրեց նրա գոտկատեղից, պպզելով քաշեց: Ձեռքերն ուսերից դուրս ընկան, ուղղվեցին գլխավերևում: Ֆեդկան խուլ տնքաց, և բերանը բացված, աչքերը չոված, փորը ներս ընկած նրա մարմինը կախվեց, ոտնաթաթերը ներս, գետնից մի արշին

բարձր: Եմելյանը ամրացրեց պարանը և մեխից իջեցրեց կարճ կոթով մտրակը...

Բորիս Ալեքսեևիչի նշանով, ատենավորը դրեց երկաթյա ակնոցը և սուր քիթը մոտեցնելով մոմին, սկսեց կարդալ.

— «Այնուհետև նույն կապիտան Ֆիլիպ Սապոգովը հարցաքննությանը ասաց. «Անցյալ տարի, հուլիսին, թե ամսի քանիսին՝ չի հիշում, մեծն թագուհի Սոֆյա Ալեքսեևնան Պրեոբրաժենսկոյե գյուղն եկավ, իսկ այդ ժամանակ մեծն արքա Պյոտր Ալեքսեևիչը Պրեոբրաժենսկոյեում չէր, ու արքայադուստրը մինչև կեսօր մնաց: Նրա հետ էր Ֆյոդոր Շակլովիտին ու տարբեր գնդերից զանազան մարդիկ, և Ֆյոդորը նրանց հետն էր վերցրել, որ Լև Կիրիլովիչին ծեծեն ու մեծն թագուհի Նատալյա Կիրիլովնային էլ սպանեն... Այդ ժամանակ նա Ֆյոդորը, պալատից ելավ նախասենյակ ու ասաց իրեն՝ Ֆիլիպ Սապոգովին. «Լսեք, հենց ներսի սենյակներում բղավոցներ լսվեն...»: Իսկ այդ ժամին թագուհին խոսքերով նեղն էր գցել արքայադուստրը, պալատի սենյակից բարձր բղավոցներ էին գալիս... «Բղավոցներ հենց լսվեն, բոլորդ պատրաստ եղեք, ում ձեզ տանք ներսից, ծեծելով սպանեք...»:

— Այդպիսի խոսքեր չեմ ասել, Ֆիլիպն իզուր է սուտ ասում,— կոկորդով հազիվ արտաբերեց Շակլովիտին...

Բորիս Ալեքսեևիչի նշանով Եմելյանը ետ գնաց, նայեց՝ հարմա՞ր է արդյոք, մտրակով թափ առավ ու առաջ հակվելով, խփեց շվվոցով: Ֆեդկայի դեղին ու նուրբ մարմինը ջղաձգվեց: Բղավեց: Եմելյանը երկրորդ անգամ խփեց: (Բորիս Ալեքսեևիչն արագ ասաց. «Երեք»:) Երրորդ անգամ խփեց: Շակլովիտին ողբաձայն բղավեց, փրփուր թքելով.

— Հարբած էի, հարբած էլ ասել եմ, ուշքս գլխիս չի եղել...

— «Եվ այնուհետև,— բղավոցը դադարելուց հետո շարունակեց կարդալ ատենավորը,— նույն Ֆիլիպին արքա Պյոտր Ալեքսեևիչի մասին վայրահաչ խոսքեր ասաց նա. «Իբր խմում է և Կուկույ գնում, ու ոչ մի հնար չկա նրան խելքի բերել, որովհետև անասելի հարբում է... Եվ լավ կլիներ ձեռքի հոնակներ դնել թագավորի սենյակներում՝ գաղտնի, որպեսզի այդ հոնակներով սպանվի թագավորը...»:

Շակլովիտին լուռ էր: «Հի՛նգ»,— խստաձայն հրամայեց Բորիս Ալեքսեևիչը:

Եմելյանը թափ առավ ու սարսափահար իջեցրեց երեքարշինանոց մտրակը: Պյոտրը մոտ վազեց Շակլովիտիին, աչքն աչքին (այնքան բարձրահասակ էր) նայում էր Ֆեդկայի ցնորված բիբերին... Պյոտրի մեջքը, ձեռքերն ու ծոծրակը սաստիկ ցնցվում էին...

— Միշտ ասա, շո՛ւն, շո՛ւն... (Բռնեց նրա կողքերից:) Ախտոտ՞ էիք, որ փոքր ժամանակ չմորթեցիք: Էդպե՞ս է, Ֆեդկա, էդպե՞ս... Ո՞վ էր ուզում մորթել: Դո՞ւ: Չէ՞: Ո՞վ... Նոնակավո՞ր էիք ուղարկում: Ո՞ւմ: Անունը տուր... Իսկ ինչի՞ չսպանեցիք, չմորթեցիք...

Ցարի կնոջ, լծավոր-կարմիր դեմքին, փոչի ու ծռված բերանին

նայելով, Ֆեդկան ապշարաց-ումներ էր մրթմրթում, լարվածությունից երակներն ուռել էին...

— ...հաստատ հիշում եմ միայն այն խոսքերը. «Ինչի՞ համար թագուհուն ու եղբայրներին առաջ չեք ոչնչացրել...»: Իսկ որ դաշույնով, նռնակով՝ չի եղել, չեմ հիշում... Իսկ թագուհու մասին Վասիլին էր ասում գալանի...

Վասիլի Վասիլևիչի անունը չհիշատակած, նստարանից վեր թռուսլ Բորիս Ալեքսեևիչը, կատաղած գոռաց դահճին.

— Խփի՛ր:

Եմելյանը, ցարին դիպչելուց զգուշանալով, մտրակի բլտատոկ ծայրով ետ քաշելով հարվածեց Ֆեդկայի թիակների մեջտեղին՝ պատռեց մաշկը, միսը բացվեց... Շակլովիտին ոռնաց, ադամախնձորը դուրս ցցած... Տաճեբորդ հարվածի վրա նրա գլուխը թուլացած ցնցվեց ու ընկավ կրծքին:

— Իշեցրու,— ասաց Բորիս Ալեքսեևիչը և շրթունքները սրբեց մետաքսե թաշկինակով,— զգույշ տար վերև, օդիով չփիր, փոքր երեխայի պես խնամիր... Այնպես, որ վաղը խոսի...

...Երբ բոյարները ճկուղից գոմերը դուրս եկան, Տիխոն Նիկիտիչ Սոբեշնիկ Լև Կիրիլովիչի ականջին ասաց.

— Լև Կիրիլովիչ, տեսա՞ր, թե իշխանը, Բորիսն ինչպես...

— Չէ-է՞... Իսկ ի՞նչ:

— Պոկվեց նստարանից... Ֆեդկայի բերանը փակելու...

— Ինչի՞ համար:

— Ֆեդկան ախր ավելորդ բաներ ասաց, նրանց արյունն ախր մեկ է, Բորիսինն ու Վասիլիինը... Ուրեմն, արյունը թագավորական գործից թանկ է...

Լև Կիրիլովիչը կանգ առավ ուղղակի թրիքի թմբի վրա, չափազանց զարմացավ, ձեռքերը թափահարեց, խփեց ազդրերին.

— Ա՛հ, ա՛հ... Մենք էլ հավատում ենք Բորիսին...

— Հավատա, բայց զգույշ եղիր...

— Ա՛հ, ա՛հ...

22.

Անծխնելույզ խրճիթում վառարանը վառվում էր, այնպիսի ծուխ էր, որ մարդը մինչև գոտկատեղն էր երևում, իսկ վերնաթախտերին ամենևին չէին երևում: Աղոտ պլպլում էր մարխի կրակը, ածխիկները թշշալով ընկնում էին ջրով լի թասի մեջ: Փալնքոտ, պորտաբաց, քամակները կեղտոտ երեխաներ էին վազվզում, շարունակ ընկնում էին, լաց լինում: Փորը ցից կինը, մեջքը կեղևակապով գոտկած, ձեռնոցից բռնած քարշ էր տալիս նրանց դուրս: «Սատկեք պրծնեիք, ինձ կերաք, անտերներ»:

Վասիլի Վասիլևիչը և Ալեքսեյը երեկվանից խրճիթում էին նստած՝ մենաստանի դարպասից ներս չթողեցին նրանց. «Մեծն արքան հրամայեց ձեզ պոսադում լինել, մինչև կանչելը...»: Իրենց ժամին էին սպասում: Հացն ու ջուրը կույլ չէին գնում: Ցարն արդարացումներ լսել չկամեցավ: Ամեն ինչի սպասում էր Վասիլի Վասիլևիչը, ճամփին պատրաստվեց և վատթարագույնին, սակայն ոչ անծխնելույզ խրճիթի:

Ցերեկով եկել էր գնդապետ Գորդոնը՝ զվարթ, ազնիվ, կարեկցեց, լեզուն ճտտացրեց ու, որպես հավասարի, թփթփացրեց Վասիլի Վասիլևիչի ծունկը... «Ոչինչ,— ասաց,— շատ մի մտածիր, իշխան Վասիլի Վասիլևիչ, ջուրն իր ջամփով կգնա»: Ու գնաց՝ ազատ և բախտավոր, զնգացնելով խոշոր խթանները:

Մայրավանք ուղարկելու և տեղեկանալու մեկը չուներ: Պոսադականները գլխարկ էլ չէին հանում արքայադուստր նախկին սիրեկանի առաջ: Անոթ էր փողոց ելնելը: Գարշահոտությունից, երեխաների ծորտոցից գլուխը պտտվում էր, ծուխն աչք էր կուրացնում: Ու քանիցս, չգիտես ինչու, միտքն էր գալիս նզովյալ կախարդը, ականջներում գամվել էր նրա բղավոցը (պատուհանից, կրակի միջից). «Դուռ՞ուը բաա՞ց արա, կկործանվեե՞ս, կկործանվեե՞ս»:

Ուշ երեկոյան, մի ուրվականի ներս ընկավ խրճիթ, պահախումբը հետը, հազաց ծխից ու հոի կնոջը հարցրեց.

— Ձեր տա՞նն է իշել Վասկա Գոլիցինը:

Կինը ցույց տվեց պատռված արմունկով.

— Հրեն, նստած է...

— Քեզ հրամայված է պալատ ներկայանալ, պատրաստվիր, իշխան:

Ոտքով, բատրակի պես, պահախմբով շրջապատված, Վասիլի Վասիլևիչը և Ալեքսեյը ներս մտան մենաստանի դարպասից: Ստրելեցները ճանաչեցին, վեր թռան, ծիծաղեցին. որը գլխարկը քաշեց քթին, որը մորուքը բռնեց, որը ոտքերը չոռեց անվայել.

— Զվարթ կեցեք... Վոյեվոդան երկու ամբակով է գնում... Իսկ ձի՞ն ուր է: Ոտքերի արանքը... Ահ, հանկարծ ցեխը չընկնի վոյեվոդան...

Այդ խայտառակությունից էլ անցան: Միտրոպոլիտի սանդուղքները վազելով բարձրացավ Վասիլի Վասիլևիչը: Սակայն դռնից հանդիսավորությամբ ընդառաջ ելավ անծանոթ մի ատենավոր, վատ հագնված, ցուցամատով կանգնեցրեց Վասիլի Վասիլևիչին և, հրամանագիրը բացելով, կարդաց բարձրաձայն, դանդաղ, ամեն բառը քունքին էր մեխում.

—... վերոհիշյալ բոլոր մեղքերի համար մեծն արքաներ Պյոտր Ալեքսեևիչը և Իվան Ալեքսեևիչը հրամայեցին զրկել քեզ՝ իշխան Վասիլի Վասիլևիչիդ, պատվից ու բոյարությունից և կնոջդ ու զավակներիդ հետ ցմահ աքսոր ուղարկել Կարգոպոլ: Իսկ քո կալվածքները, վոտչինաները և մոսկովյան տներն ու գույքը վերցնել հարքունիս, մեծն արքաներին: Իսկ քո մարդկանց, անազատ ու ճորտ, գյուղացիներից ու գյուղացիների երեխաներից զատ, ազատ արձակել...

Ավարտելով երկար ընթերցումը, ատենավորը ոլորեց հրամանագիրը և պրիստավին մատնացույց արեց Վասիլի Վասիլևիչին՝ վեր-

ջինն հագիվ էր ոտքի վրա կանգնում, գլխաբաց էր, Ալեքսեյը բռնել էր թևից...

— Հակողության տակ առնել ու կատարել ըստ հրամանի...

Հակողության տակ առան: Տարան: Եկեղեցու բակից դուրս հորն ու որդուն նստեցրին սայլ, խսիրի վրա, ետևից բարձրացան պրիստավն ու դրագունը: Պատռված արմկակով, տրեխներով սելվորը ձգեց սանձերը, և լղարիկ ձին սայլը քաշլով քաշեց մայրավանքից դեպի դաշտ: Գիշեր էր, աստղերը խանավ մշուշով էին պատվում:

23.

Տրոիցյան արշավը վերջացավ: Ճիշտ այնպես, ինչպես յոթ տարի առաջ, մայրավանքում փակվելով, հաղթեցին Մոսկվային: Բոյարները պատրիարքի և Նատալյա Կիրիլովնայի հետ, մտածելով, Պյոտրի անունից գրեցին Իվան ցարին.

«... Իսկ այժմ, թագավոր եղբայրդ իմ, եկել է ժամանակը ատծուց մեզ շնորհված թագավորությունը մեր երկու անձով կառավարելու, քանզի եկել ենք մեր հասակին, իսկ երրորդ՝ պ ա խ ա ր ա կ ե լ ի անձնավորությանը՝ մեր քրոջը, մեր երկու այր մարդոց հետ տիտղոսներ կրել ու գործեր կառավարել չենք հոժարում...»:

Առանց ավելորդ աղմուկի, Սոֆյային Կրեմլից փոխադրեցին Նովոդևիչյե մենաստան: Ծակլովիտիին, Զյորմնիին և Օբրոսիմ Պետրովին գլխատեցին, մյուս ավազակներին գանակոծեցին հրապարակում, պոսադում, լեզուները կտրեցին և ցմահ Սիբիր աքսորեցին: Տերտեր Մեդվեդևին ու Նիկիտա Գլադկիխին ավելի ուշ բռնեց դորոգոբուժյան վոյեվոդան: Սարսափելի տանջեցին ու գլխատեցին:

Պարգևատրումներ եղան՝ հողով ու դրամով. բոյարներին 300-ական ռուբլի, օկոլնիչիներին՝ 270-ական, դումայական ազնվականներին՝ 250-ական ռուբլի: Պալատականներին, որոնք Պյոտրի հետ մայրավանք էին եկել, 37-ական ռուբլի տվեցին, ովքեր հետո էին եկել՝ 32-ական, մինչև օգոստոսի 10-ը եկածներին՝ 30-ական, մինչև օգոստոսի 20-ը եկածներին՝ 27-ական ռուբլի: Քաղաքաբնակ ազնվականներին, նույն կարգով՝ 18, 17 և 16 ռուբլի պարգևեցին: Ծարքային բոլոր ստրելեցներին՝ հավատարմության համար մեկական ռուբլի տվեցին, առանց հողի:

Մոսկվա վերադառնալուց առաջ բոյարներն իրար մեջ բաժանեցին վարչատները. առաջինն ու կարևորագույնը՝ Դեսպանականը, Լև Կիրիլովիչին տվեցին, բայց արդեն առանց պահպանի տիտղոսի: Ռազմական ու այլ անհրաժեշտությունների բացակայության պատճառով ամենևին կարելի էր հրաժարվել Բորիս Ալեքսեևիչ Գոլիցինից՝ պատրիարքը և Նատալյա Կիրիլովնան շատ բան չէին կարողանում ներել նրան, առանձնապես այն, որ Վասիլի Վասիլևիչին փրկեց գանակոծությունից ու կառափնարանից, սակայն բոյարները անվայել գտան նման բարձր տոհմը պատվազուրկ անելը. «Եթե դրան գնանք, շուտով մեզնից էլ վարչատները կխլեն վաճառականները, անտոհմիկ ատենավորները, օտարերկրացիներն ու զանազան ստոր մարդիկ, տեսեք, Պյոտր ցարի աչքն են մտնում՝ տեղ ու վաստակ ձեռք գցելու համար...»: Բորիս Ալեքսեևիչին տվեցին Կազանյան պալատի վարչատունը՝ ի վաստակ ու պատիվ: Սույնը իմանալով, նա թքեց, հարբեց այդ օրը, բղավում էր. «Գոռոզի ծոցը թող կորչեն, ինձ ինձ հերիք է», և խմած-խմած սլացավ մերձմոսկովյան վոտչինան, քունն առնելու...

Նոր մինիստրները՝ այդպես սկսեցին կոչել նրանց օտարերկրացիները, վարչատներից վռնդեցին որոշ ատենավորների ու նրանց օգնականների, մյուսներին նստեցրին ու սկսեցին մտածել և կառավարել նախկինի պես: Առանձին փոփոխություններ չեղան: Միայն կրեմլյան պալատում, սև սամույրներով փաթաթված, տիրաբար դռներն էր շրխկացնում, կրունկները կոկոտացնում Լև Կիրիլովիչը, Իվան Միլոսլավսկու փոխարեն...

Հին ու հայտնի մարդիկ էին նրանք. քայքայումից, կաշառակերությունից ու անօրենությունից զատ, նրանցից այլ սպասելիք չկար: Մոսկվայում և Կուկույում, բոլոր դասերի վաճառականները, կնապալառները, պոսադների առևտրականներն ու արհեստավորները, օտարերկրացի հյուրերը, նավերի հոլանդացի, հանովերցի, անգլիացի նավապետները մեծ անհամբերությամբ նոր կարգերի ու նոր մարդկանց էին սպասում: Պյոտրի մասին զանազան լուրեր էին պտտվում, և շատերը ամբողջ հույսը նրա վրա էին դրել: Ռուսաստանը՝ այդ ոսկու հանքը դարավոր տիղմով էր ծածկված... Եթե նոր ցարը չբարվոքի կյանքը, հապա էլ ո՞վ:

Պյոտրը չէր շտապում Մոսկվա մտնել: Մայրավանքից զորքի հետ երթի ելավ Ալեքսանդրովսկի արվարձանը, ուր դեռևս կանգուն էին Իվան Չորրորդ ցարի զարհուրելի պալատի փտած պատերը: Գեներալ Զոմմերն այստեղ օրինակելի ճակատամարտ սարքեց: Մի ամբողջ շաբաթ տևեց դա, մինչև վառոդի վերջանալը: Եվ հենց այստեղ էլ ավարտվեց Զոմմերի ծառայությունը՝ խեղճն ընկավ ձիուց ու խեղանդամվեց:

Հոկտեմբերին Պյոտրը միայն ռազմախաղի գնդերով դեպի Մոսկվա շարժվեց: Տասը վերստի վրա, Ալեքսեևսկոյե գյուղում, ժողովրդի հոծ բազմություններ դիմավորեցին նրան: Սրբապատկերներ, խաչվառներ էին բռնել, հաց էին բերում մատուցարաններով: Ծամփեզրերին ընկած էին գերաններ ու կոնդեր՝ կացինները մեջը խրած, և խոնավ հողի վրա, վզները գերաններին դրած, պառկած էին ստրելեց պատվիրակները այն գնդերի, որոնք Տրոիցեում չէին եղել... Սակայն երիտասարդ ցարը գլուխներ չթոցրեց, չզայրացավ, թեև բարեհամբույր էլ չէր:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1.

Լեֆորտը կարևոր մարդ էր դառնում: Կուկույում ապրող և Արխանգելսկից ու Վոլոգդայից առևտրական գործերով եկող օտարերկրացիները մեծ հարգանքով էին խոսում նրա մասին: Ամստերդամյան և լոնդոնյան առևտրական տների գործակատարները նրա մասին գրում էին տնօրեններին ու խորհուրդ տալիս հարմար առիթով փորձ նվերներ ուղարկել նրան՝ ամենահարմարն ընտիր գինին էր: Երբ տարբյան արշավի համար նրան գեներալի կոչում շնորհվեց, կուկույցիները, դրամ վեր գալով, սուսեր ընծայեցին նրան: Տան մոտով անցնելիս, բազմանշանակ աչքով էին անում միմյանց, ասելով. «Օ՜, այո...»: Նրա տանը նեղվածք էր հիմա. շատ մարդ էր ուզում ձեռքը սեղմել, խոսք փոխանակել, պարզապես հիշեցնել իր մասին: Չնայած ուշ աշնանը, տունն ընդարձակելու, վրան սենյակ ու սրահ ավելացնելու փութագին աշխատանքներ սկսվեցին. քարաշեն շքամուտք սարքեցին կողադռներով, սյուներով ու ծեփածո արձաններով զարդարեցին ճակատամասը: Բակում, ուր առաջ շատրվանն էր, լճակի տեղ փորեցին՝ ջրային զվարճանքների և հրավառության համար: Աջ ու ձախ կողմերում պանակատներ կառուցեցին հրացանակիրների համար:

Իր կամքով Լեֆորտը նման ծախսումների թերևս չգնար, սակայն երիտասարդ ցարն էր դա ուզում: Տրոիցեում պատսպարվելու ընթացքում Լեֆորտը անհրաժեշտ դարձավ Պյոտրի համար, ինչպես խելացի մայրը զավակին: Լեֆորտը կես խոսքից հասկանում էր նրա ցանկությունները, զգուշացնում էր վտանգներից, սովորեցնում տեսնել շահն ու վնասը, ու կարծես ինքն էլ ջերմորեն սիրեց նրան, մշտապես ցարի կողքին էր ոչ թե բոյարների պես, ճակատները տխրադեմ հատակին խփելով, գլուղ ու ճորտ խնդրելու, այլ երկուսին հարկավոր ընդհանուր գործի և համատեղ զվարճանքների համար: Շքեղ հագնված, խոսքաշեն ու բարեհամբույր՝ պատուհանից թափանցող վաղորդյան արեգակի պես հայտնվում էր Պյոտրի ննջասենյակում, իր խոնարհումներով և ժպիտներով, և այդ զվարթությամբ, ուրախաթիռ հոգսերով, երջանիկ սպասումներով էր սկսվում օրը: Լեֆորտի մեջ Պյոտրը սիրում էր սեփական քաղցր անուրջները անդրծովյան երկրների, գեղեցիկ քաղաքների, ծխախոտի և ռոմի բույրերով տոգորված նավապետների առաջնորդած նավերի ու նավահանգիստների մասին՝ այն ամենն, ինչ մանկուց աչքին էր երևում, արտասահմանից բերված նկարներից ու տպագիր պատկերներից: Լեֆորտի հագուստների հոտն անգամ ռուսական չէր, այլ ուրիշ, խիստ հաճելի:

Պյոտրն ուզում էր, որ իր սիրեցյալի տունը օտարերկրյա այդ հրապուրանքների կողմակը դառնա՝ ցարի զվարճանքների համար էր հարդարվում Լեֆորտի պալատը: Մորից ու Լև Կիրիլովիչից կորզած դրամը չէր խնայվում: Այժմ, երբ Մոսկվայում, վերևներում յուրայինները էին հատած, Պյոտրն առանց այլևայլության անձնատուր եղավ վայելքների: Ցոդկացին նրա կրքերը, և այդժամ առանձնապես հարկավոր դարձավ Լեֆորտը. առանց նրա ցանկությունը կամ, անելիքը չգիտեր... Իսկ ի՞նչ կարող էին առաջարկել բարեկամները՝ ռուսները. ասենք, բազեով որս կամ ողբանուաչ եղջյուր կոչ տալիս... Թյո՛ւհ: Լեֆորտը կես խոսքից քմբոնում էր նրա ցանկությունները: Ասես հնոլի տերև լիներ նա Պյոտրի կրքերի թունդ գարեջրի մեջ:

Միաձամանակ վերակենդանացան Ալեքսանդրա Դարեջրուզի նորությունները. ամբոցը նախապատրաստում էին գարնանային ուսումնախաղերի համար: Գնդերի համար նոր զգեստներ կարեցին. պրեոբրաժենցիները կանաչ կաֆտաններով էին, սեմյոնովցիները՝ երկնագույն, Գորդոնի հուսարյան գունդը՝ կարմիր: Օտարերկրացի վանասկանները ու արդյունաբերողները զվարճանքների արանքում, Լեֆորտի պալատում իրենց գիծն էին առաջ տանում...

2.

Նորակառույց պարասրահը դեռևս խոնավ էր, երկու վիթխարի բուխարիների տաքությունից բրտնել էին քարձրադիր կիսակլոր լուսամուտները, որոնց դիմաց խուլ պատի վրա, դարձյալ պատուհանաձև հայելիներն էին: Կաղնեփայտի ուղղանկյուններով հատակը նոր էին մոմել: Պատի եռամտում, անդրադարձիչներով աշտանակները վառվում էին, թեև մութը նոր էր ընկնում: Փափուկ ձյուն էր տեղում: Կավի ու տաշեղների ձյունածածկ կիտուկների արանքով բակ էին մտնում սահնակները. հոլանդականները կարապաձև էին, սևանախշ ու ոսկեզօծ, ռուսականները՝ երկարուկ և արկղաձև, բարձերով, արջի մորթիներով ծանրաբեռնված, կաշեպատ ծանր ծածկատահնակներ էին գալիս, շարալուծք վեցձյակներով և կառապանային հասարակ սահնակներ, որոնց մեջ, ծնկները ցցած, ծիծաղելով, որևէ օտարերկրացի էր լինում, երկու կոպեկով Լուբյանկայից Կուկույ վարձած այդ փոխադրականով:

Քարաշեն մուտքի մոտ, ձնակոլոլ գորգերի վրա, հյուրերին երկու ծաղրածու էին դիմավորում՝ Թոմսոն և Սեկան, մեկը իսպանական սև, գոտկահաս այծենակաճով, վրան ագռավի թևեր փակցրած ծղոտե գլխարկով, մյուսը երկարշինանոց, թուրքի ճիրպե չալմայով, խոզի ականջը ճակատից կախ: Հոլանդացի վանառականները հատկապես հաճույքով էին ծիծաղում իսպանական հագուստով ծաղրածուի վրա, քթին կտտացնելով, իսպանական թագավորի ողջությունն էին հարցնում: Լուսավոր նախասենյակում, որի կաղնեփայտե պատերը հախճապակյա կապույտ սկուտեղներով էին զարդարված, հյուրերը մուշտակներն ու գլխարկները տալիս էին լիվրե հագած գայդուկներին: Պարասրահի դռան մեջ նրանց դիմավորում էր Լեֆորտը՝ ատլասե ճերմակ, արծաթակար կաֆտանով, արծաթափոշի ցանած կեղծամով: Հյուրերը մոտենում էին բուխարուն, հունգարական գինի ճաշակում, ծխամորճները վառում:

Ռուսները ճնշվում էին անխոսությունից (շատ քշերը դեռևս գիտեին հոլանդերեն, անգլերեն ու գերմաներն խոսել) ու ավելի ուշ էին գալիս, սեղան նստելու պահին: Հյուրերը կրակի մոտ անկաշկանդ տաքացնում էին հետույքները, գուլպաներով պրկված սրունքները, գործարար խոսակցություն վարում: Միայն տանտերն էր թիթեռնիկի պես շրջում, կաֆտանի ցից փեշերը ճոճելով, մի հյուրից մյուսին անցնելով. ծանոթացնում էր, ողջություն հարցնում, տեղեկանում ճամփորդության մասին՝ հարմա՞ր տեղ է իջևանել արդյոք, գողությունից ու թալանից պաշտպանվա՞ծ է արդյոք...

— Օ՜, այո, ինձ շատ են պատմել ռուս խաժամուժի մասին,— պատասխանում էր հյուրը,— նրանք շատ են հակված թալանելու, նույնիսկ սպանելու հարուստ ճամփորդներին:

Անտառանյութի վաճառական, անգլիացի Սիդնեյը ատամների արանքից ասում էր.

— Այն երկիրը, ուր բնակչությունը կեր է հայթայթում խարդախությամբ, վատ երկիր է... Ռուս վաճառականներն աստծուն աղոթում են, որ օգնի իրենց ավելի ճարպկորեն խաբել, դա ճարպկություն են կոչում: Օ՜, ես լավ գիտեմ այս անիծյալ երկիրը... Այստեղ հարկավոր է զալ, ծոցում զենք պահած...

Բնիկ կուկուլցի, ոչ հարուստ առևտրական Համիլտոնը՝ պէր Համիլտոնի թոռը, որը ժամանակին Կրոմվելի սարսափից Մոսկովիա էր փախել, հարգալիր մոտեցավ զրուցողներին:

— Նույնիսկ դժբախտությունն ունենալով այստեղ ծնվելու, դժվար է ընտելանալ ռուսների վայրագությանն ու անազնվությանը: Բոլորի մեջ կարծես դև նստած լինի...

Անգլերեն վատ խոսող, կոպիտ ու հնատարազ հագնված այդ գաղթականին զննելով, Սիդնեյն արհամարհանքով ծամեց բերանը, սակայն տան հանդեպ տածած հարգանքից այնուամենայնիվ պատասխանեց Համիլտոնին.

— Մենք չենք պատրաստվում այստեղ ապրել: Իսկ մեծածախ խոշոր առևտրի համար, որ վարում ենք, ռուսների անազնվությունը քիչ նշանակություն ունի...

— Անտառանյութի առևտո՞ւր եք անում դուք, սըր...

— Այո, անտառանյութի առևտուր եմ անում, սըր... Արխանգելսկի տակ անտառային խոշոր կոնցեսիա ձեռք բերեցինք:

Անտառային կոնցեսիա բառերը լսելով, հոլանդացի Վան Լեյդենը զրուցողներին մոտեցրեց իր հոնքազուրկ, իսպանական սուր մորուսով թունդ կարմիր դեմքը, եռածալ ծնոտը շփելով օսլայած հսկայական օձիքին:

— Օ՜, այո,— ասաց,— ռուսական անտառանյութը լավն է, բայց Սառուցյալ օվկիանոսի սատանայի քամիներն ու նորվեգացի նավահենները՝ վատ:— Բացեց բերանը, ավելի շառագունեց, կկոցած աչքերից երկու կաթիլ արցունք կախվեց՝ քրքջում էր...

— Ոչինչ,— պատասխանեց բարձրահասակ, ոսկրոտ ու դեղնագեմ Սիդնեյը,— կայմագերանը մեզ վրա քսանհինգ կոպեկ է նստում, Նյուքեսլում ինը շիլինգով*) ենք ծախում... Մենք կարող ենք որսկի գնալ...

Հոլանդացին լեզուն ճտտացրեց. «Ի՞նչը շիլինգ՝ գերմանիա»: Նա Մոսկովիա էր եկել փուշի մանվածք, կտավ, կուպր ու պոտաշ գնելու: Նրա երկու նավերը ձմեռելու էին կանգնած Արխանգելսկում: Գործերը լավ չէին, թագավորական առևտրականները՝ մոսկովյան խոշոր վաճառականները, որոնք ապրանք էին գնում գահնձարանի համար, իմացել էին երկու նավերի մասին ու չլսված գներ դրել, մասնավոր մանր-մունր միջնորդների ապրանքը բանի պետք չէր: Իսկ անգլիացին, անա, լավ գործ է բռնել ըստ երևույթին, եթե չի ստում: Շատ ցավալի է: Նայելով, թե շուրջը ռուսներ չկան, Վան Լեյդենն ասաց.

— Ռուսական ցարը ամբողջ աշխարհի կուպրի երեք քառորդի, լավագույն կայմափայտի և ամբողջ կանեփի տերն է... Բայց դա նույնքան դժվար էր վերցնել, ինչպես լուսնի վրայից... Օ՜, ոչ, սըր, դուք շատ չեք վստահի ձեր կոնցեսիայից... Հյուսիսն ամայի է, միգուցե արջերի՞ն սովորեցնեք անտառ հատել... Բացի դրանից, ձեր երեք նավերից, սըր, երկուսը կխորտակեն նորվեգացիները կամ շվեդները, երրորդն էլ լողացող սառույցների զոհը կդառնա:— Նա կրկին ծիծաղեց, զգալով արդեն, որ տհաճություն է պատճառել զրուցակցին:— Այո, այո, այս երկիրը հարուստ է Նոր Աշխարհի պես, ավելի հարուստ, քան Հնդկաստանը, բայց քանի դեռ բոյարներն են կառավարում երկիրը, մենք շարունակ վնասներ ենք կրելու... Մոսկվայում իրենց շահը չեն հասկանում, մոսկովցիները վայրենիների պես են առևտուր անում... Օ՜, եթե նրանք նավահանգիստներ ունենային Բալթիական ծովում, նաև հարմար նանապարհներ, նաև առևտրով զբաղվեին, որպես ազնիվ բյուրգերներ, այն ժամանակ այստեղ խոշոր գործառնություններ կարելի էր անել...

— Այո, սըր,— հանդիսավոր պատասխանեց Սիդնեյը,— ես հանույքով լսեցի ու համաձայնեցի ձեզ... Զգիտեմ, ինչպես է ձեզ մոտ, բայց կարծում եմ, ձեզ մոտ նույնպես, ինչպես մեր Անգլիայում, այլևս ծովային փոքր նավեր չեն կառուցում... Անգլիայի բոլոր էլինգներում չորս կամ հինգ հարյուր տոննանոց նավեր են կառուցվում... Հիմա մեզ հինգ անգամ ավելի անտառանյութ ու փուշի մանվածք է պետք: Յուրաքանչյուր նավի համար տասը հազար յարդից ոչ պակաս առագաստի կտավ է պահանջվում...

— Օ-օո՜,— զարմացած բացականչեցին խոսակցությունը լսողները:

— Հապա կաշին, սըր, դուք ռուսական կաշվի պահանջը մոռացաք, սըր,— ընդհատեց նրան Համիլտոնը...

Սիդնեյը զայրացին նայեց անկիրթ այդ մարդուն: Ոսկրոտ կզակի կնճիռները հավաքելով, որոշ ժամանակ աչքերն էր կկոցել կրակի վրա:

*) Չորս ռուբլի հիսուն կոպեկ (ծան. Ա. Ն. Տոլստոյի):

— Ոչ,— պատասխանեց նա,— ես չեմ մոռանում առաջիկա կաշվի մասին, բայց ես կաշվի առևտրով չեմ զբաղվում... Կաշին շվեդացի վաճառականներն են արտահանում... Ատոնու ողորմածությամբ, Անգլիան հարստանում է, և մենք շինարարական նյութ շատ պիտի ունենանք... Անգլիացիները երբ կամեցել են, ունեցել են... Ու մենք կունենանք...

Նա ավարտեց խոսակցությունը, նստեց քազկաթոռին, և կոշիկի հատ ներբանը դնելով բոխարու դիմաստղին, այլևս ուշադրություն չդարձրեց և ոչ ոքի վրա... Արագ մոռնալով Լեֆորտը, թանգարուկ բերելով Ալեքսաշկա Մենշիկովին: Հագել էր կարմիր դարձաձևերով ու պղնձյա կոճակներով կապույտ մանուդ կաֆտան, արծաթյա հպարակաճ խթաններով Լիոն զրնգում բուֆորտներին: Հանդարտակաճ, փարթամ կեղծամով եզերված դեմքին դիմափոշի էր ցանել, ժանեկաճյուռ փողկապին արմատ քորոց փակցրել: Զվարթ, զուլալ ջրի գույն ունեցող աչքերով անվարան զննում էր ֆյուրերին: Ճարպկորեն գլուխ տվեց, հուժկու ոտը խաղացրեց, թիկունքն արած բոխարուն, ծխատորն վերցրեց:

— Թագավորն այս րոպեին, կբարեճաճի գալ...

Ֆյուրերը փախաչին, առավել երևելիները առաջացան, դնելով դեպի դուռը... Սիդնեյը, Ալեքսաշկայի ատածը չճանաչելով, նույնիսկ բերանը բացեց թեթևակի, զարմացած զննելով այդ պատանուն, որը հարգարժան մարդկանց անփութորեն ետ մղեց բուխարու մոտից: Սակայն Համիլտոնը շշնջաց նրա ականջին. «Ցարի սիրելին է, վերջերս սպայակից սպայի կոչում է ստացել, շատ հարկավոր մարդ է», և Սիդնեյը, աչքատակերի բարեհոգի կնճիռները հավաքելով, դիմեց Ալեքսաշկային.

— Ես վաղուց էի երազում մեծն արքային տեսնելու բախտին արժանանալ... Ընդամենը մի խեղճ վաճառական եմ ու երախտապարտ եմ տեր աստծուց այս անակնկալի համար, որի մասին կպատմեմ իմ զավակներին ու թոռներին...

Լեֆորտը թարգմանեց, Ալեքսաշկան պատասխանեց.

— Ցույց կտանք, ցույց կտանք,— ու ծիծաղելով բացեց սպիտակ, հաչասար ատամները:— Թե խմել ու կատակել էլ գիտես, ուրեմն հետը քեֆ էլ կանես: Թոռներիդ պատմելու բան կունենաս... (Լեֆորտին:) Հարցրու դրան՝ ինչի՞ վաճառական է: Ա՛, անտառի... Չլինի՞ եկել է մուժիկ ու անտառ կտրող խնդրելու... (Լեֆորտը հարցրեց, Սիդնեյը ժպտալով գլխով արեց:) Ինչի՞ չէ, թագավորը եթե թույլ տա Լև Կիրիլովիչին... Թող խնդիրը անի...

Դրան մեջ անսպասելի հայտնվեց Պյոտրը՝ Ալեքսաշկայի պես, պրեոբրաժենցու կաֆտանով, ուսերն ու կուրծքը՝ նեղ, ամբողջովին ձնակույտ: Ծառագունած այտերի վրա փոսիկներ էին առաջացել, բերանը սեղմված էր, սակայն խած աչքերը ծիծղում էին: Հանեց եռանկյունի գլխարկը, դուրս եկավ բքներն ուղիղ կտրած, ծնկներից վեր սապոգներով, ձյունը թափ տալով:

— Գուտեն տագ, մայնե հերշաֆթեն,— ասաց պատանեկան թավ ձայնով: (Լեֆորտն այդտեղ թռչում էր դեպի նա, կրքաբուռ, մի ձեռքը առաջ պարզած, մյուսն աղեղած կոնքին:) Սառաչիկ ուզել եմ ուզում... Գնանք, մնալու նստենք...

Աչքով անելով շուկաները պահած օտարերկրացիներին, շրջվեց, և կորամեջք, հանդարտ դրան բարձրության, նախասենյակով գնաց շպալզեզալ՝ սեղանատուն...

3.

Արդեն կարմրատակել էին ֆյուրերի դեմքերը և թեքվել էին կեղծամները: Ալեքսաշկան, վզնոցն արձակած, վերջացրել էր իր տրապակը ու նորից խմում էր, ընդամենը գունատվելով խմիչքից: Մյուսներից ավելի հարբած ձևացնող ծաղրածուները աթոռմա էին թռչում, չոր սիսեռով լի եզան փուչիկներով հասցնելով ֆյուրերի գլուխին: Բոլորը վիճում էին խոսում: Մոսերը կիսով չափ այրվել էին: Ծուռով կուկուլցի տիկնայք պիտի գային՝ պարելու:

Ուղղամարմին ու զուսպ, սակայն կարմրած ու շլված աչքերով Սիդնեյն ասում էր Պյոտրին (Համիլտոնը թարգմանում էր, կանգնած նրանց աթոռների եռանում).

— Սրբ, նորին մեծությանն ասացեք հետևյալը. մենք՝ անգլիացիներս, գանում ենք, որ մեր երկրի բախտը ծովային առևտրի հաջողություններից է կախված... Պատերազմը թանկ արժեցող ու տխրալի անհրաժեշտություն է, սակայն առևտուրը բարձրյալի օրենությունն է...

— Այդպես, այդպես,— համաձայնեց Պյոտրը: Նրան ուրախացնում էին աղմուկն ու վեճերը, հատկապես օտարերկրացիների այդ տարօրինակ դատողությունները պետության մասին, առևտրի, շահի ու վնասի մասին... Օ՜, երջանկություն: Զարմանալի էր:— Է, հետո, շարունակիր, լսում եմ...

— Նորին մեծություն Անգլիո թագավորը և հարգարժան լորդերը երբեք և ոչ մի բիլ չեն հաստատի, որը առևտրին վնասել կարող է սուկ: Այդ իսկ պատճառով նորին մեծության գանձարանը լիքն է... Անգլիացի վաճառականը հարգված անձնավորություն է երկրում: Եվ մենք բոլորս պատրաստ ենք այդուն թափել հանուն Անգլիայի և մեր թագավորի... Թող նորին մեծություն երիտասարդ թագավորը չբարկանա, եթե ասեմ, որ Ռուսաստանում վատ և անօգտակար օրենքները շատ են: Օ՜, լավ օրենքը մե՜ծ բան է: Մենք էլ ունենք խիստ օրենքներ, սակայն դրանք մեզ օգտակար են և մենք հարգում ենք դրանք...

— Սատանան գիտե, ինչեր է ասում,— ծիծաղելով, Պյոտրը շուռ տվեց թռչնի ոտք հիշեցնող տակով բարձր գավաթը:— Այսպես խոսեր Կրեմլում... Էսիր, ծիրանց, ուշագնաց կլինեին... Դե լավ, ասա, թե մեզ մոտ ինչն է վատ: Համիլտոն, թարգմանիր...

— Օ՜, դա լրջագույն է, ես խմած եմ,— պատասխանեց Սիդնեյը:— Եթե նորին մեծությունը թույլ տա, ես վաղը կարող եմ, իել-

քրս կատարելապես գլուխս գալուց հետո, պատմել ռուսական վատ սովորությունների մասին, ինչպես նաև, թե ինչից է հարբուհանում պետությունը և ինչ է հարկավոր դրա համար...

Պոտրը աչքերը չռեց նրա շլված, օտարամիտ աչքերի վրա: Նրան թվաց, թե չի՞ ծիծաղում արդյոք վաճառականը հիմար ռուսների վրա: Սակայն Լեֆորտը, արագ թեքվելով ուսին, շշնջաց.

— Հետաքրքիր կլինի լսել սույն փիլիսոփայությունը, թե ինչպես հարատացնել երկիրը:

— Լավ,— ասաց Պոտրը,— բայց թող ասի, թե մեզ մոտ ինչն է գարշելի:

— Լավ,— Սիդնեյի հարբածությունը թողեց:— Մեր սիրալիր տանտիրոջ մոտ գալիս, անցա մի հրապարակով, ուր կախաղան կա, այնտեղ մի փոքր տեղ մաքրված է ձյունից ու գինվոր է կանգնած...

— Պոկրովսկիյե դարպասի ետևը,— աթոռը հետը բերելով ու նստելով հուշեց Ալեքսաշկան:

— Այդպես է... Եվ հանկարծ տեսա, գետնի միջից կնոջ գլուխ է ցցված ու թարթում է աչքերը: Ես շատ վախեցա, հարցրեցի ուղեկցիս. «Ինչո՞ւ է գլուխը թարթում աչքերը»: Նա ասաց. «Նա դեռ կենդանի է: Սա ռուսական մահապատիժ է՝ ամուսնուն սպանելու համար կնոջը թաղում են հողի մեջ և մի քանի օր անց, երբ մեռնում է, կախում են գլխիվար...»:

Ալեքսաշկան բթի տակ խնդաց. «հը՛-հը՛»: Պոտրը նայեց նրան, մեղմիկ ժպտացող Լեֆորտին.

— Հապա ի՞նչ: Չէ որ նա պպանել է... Հնուց են այդպես պատժում... Դրա համար հո չե՞ն ներելու:

— Ձերդ մեծություն,— ասաց Սիդնեյը,— հարցրեք այդ դրժբախտին, թե ինչն է նրան հասցրել զարհուրելի ոճրագործության, ու նա հավանաբար կմեղմացնի ձեր բարեգութ սիրտը... (Պոտրը քմծիծաղեց:) Ինչ-որ բաներ լսել ու տեսել եմ Ռուսաստանում... Օ՜, սուր է օտարերկրացու աչքը... Ռուս կնոջ կյանքը խրոխիթներում նման է անասունի կյանքի... (Թաշկինակը տարավ քրտնած ճակատի վրայով, զգալով, որ չափն անցել է, բայց հպարտությունն ու գինովությունը արձակել էին լեզուն): Ապագա քաղաքացու համար ի՞նչ օրինակ կհանդիսանա, եթե նրա մայրը թաղվել է հողի մեջ, ապա լկտիաբար կախվել ոտքերից: Մեր գրողներից մեկը՝ Վիլյամ Շեքսպիրը, շատ հուզիչ նկարագրել է իր սքանչելի կատակերգության մեջ, թե ինչպես իտալացի հարուստ վաճառականի որդին կնոջ հանդեպ տածած սիրուց թունավորել է իրեն... Իսկ ռուսները ծեծում են կնոջը մտրակներով ու մահակով, կիսամեռ անելով, դա նույնիսկ խրախուսվում է օրենքով... Երբ ես վերադառնում եմ Լոնդոն, իմ տուն, իմ հարգարժան կինը բարի ժպիտով է ինձ դիմավորում, և զավակներս վիզս են ընկնում առանց վախի ու երկյուղի, և իմ տան մեջ ես խաղաղություն եմ գտնում ու ազնիվ բարքեր... Կնոջս մտքով չի անցնի սպանել ինձ, քանի որ բարի վերաբերմունք ունեմ:

Հուզված անգլիացին լռեց ու կախեց գլուխը: Պոտրը բռնեց նրա ուսից.

— Համիլտոն, թարգմանիր... (Եվ բարձրաձայն սկսեց բղավել Սիդնեյի ականջին ռուսերեն:) Ինքներս ամեն ինչ տեսնում ենք... Չենք պարծենում, թե մեզ մոտ լավ է... Մորս ասել եմ, ուզում եմ մի հիսուն պալատական, ավելի խելացիներից, արտասահման ուղարկել, որ սովորեն ձեզ մոտ... Մեզ պետք է սովորել ազը, բուկին, վեդին... Դու աչքերդ ես խոթում, թե վայրենի եք, աղքատ եք, հիմար ու գազան եք... Գիտեմ, գրողը տանի: Բայց համբերիր, համբերի՞ր...

Նա վեր կացավ, ելնելիս դեռ շպրտեց աթոռը.

— Ալեքսաշկա, ձի՛ր:

— Ո՞ւր, մին խեռց:

— Պոկրովսկիյե դարպաս:

4.

Գլուխը դանդաղ բարձրացրեց կոպերը... Չէ, մահ չկար... Հողի ցուրտը կծկել էր մարմինը... Հողը տաքացնել չէր լինի... Գերեզմանում շարժվել չէր լինի... Թաղել էին մինչև ականջները... (Փափուկ ձյունը ետ ընկած դեմքին էր թափվում:) Գոնե սրտխառնուքը նորից շղարշեր աչքերը՝ այդքան չէր խղճա ինքն իրեն... Գազա՞ն են մարդիկ, ա՛խ, գազա՞ն են...

Դաշտային ծաղկի պես մի աղջիկ էր ապրում... Դաշա, Դաշենկա՝ հարազատ մայրն էր կանչում... Ինչի՞ ծնեցիր ինձ... Որ մարդիկ կենդանի-կենդանի հողը դնեն... Մեղավոր չեմ ես... Տեսնո՞ւմ ես ինձ, տեսնո՞ւմ ես...

Գլուխը շրթունքները պոկեց իրարից, չորացած լեզվով ձայն տվեց. «Մամա, մամանյա, մեռնում եմ...»: Հոսացին արցունքները: Արտևանունքների վրա փաթիլներ էին նստում...

...Գլխի ետևում, խավար հրապարակում օդն էր ճոճացնում կախաղանի պարանը... Մեռնելուց հետո էլ չես հանգստանալու՝ մարմինդ կախ կտան... Ցավում է, ցավում, հողն է կիտվել... Գոդձեր են մտել գոտկատեղը... Օ՜խ, ցավը, սա է ցավը, սա՜... (Գլուխը բացեց բերանը, ետ ընկավ:) Տեր ապտված, պաշտպան եղիր... Մամանյա, ապա նրան, մամանյա... Մեղավոր չեմ... Ուշքս գլխիս չէր՝ սպանեցի... Ծունը որ շուն է, կծում է... Ձին որ ձի է, նա էլ է... Բղավելու ուժ չկար: Ցավը զարմանքի է հասել: Աչքերը չոռեցին, մարեցին: Գլուխը կողք ընկավ...

... Նորից Ձյունը... Դեռ մահը չէր... Ծուտով երրորդ օրը կլինի... Քամին, քամին է ճոճացնում պարանը... Կովը վալ թե երեք օր կթած չի... Էլ ի՞նչ էր՝ կարմիր լո՞ւյս... Օհ, սարսափելի է... Կրակներ են... Սահնակներ... Մարդիկ... Էստեղ են գալիս... Նո՞ր տանջանքներ: (Ուզեց ոտքերը շարժել՝ հողի սարերը ճզմեցին. մատն իրար տալ չէր կարող...):

— Ո՞ւր է նա, չեմ տեսնում,— բարձրաձայն ասաց Պյոտրը:— Չլինի՞ շներն են կերել:

— Էյ, պահա՛կ: Քնա՞ծ ես: Պահա՛կ,— բղավեցին սահնակների մոտ կանգնած մարդիկ:

— Էստեղե՞ղ եմ,— մի ձիգ ձայն հնչեց. թափվող ձյան միջով վազում էր պահակը, ոտքերը փաթ գցելով ոչխարենու քուրքի մեջ... Վազելով, արջավարի, ընկավ Պյոտրի ոտքերը, գլուխը խոնարհեց, մնաց ծնկատոք...

— Էստե՞ղ է թաղված կինը:

— Էստեղ է, տեր թագավոր...

— Կենդանի՞ է:

— Կենդանի է, տեր թագավոր:

— Ինչի՞ համար են մահապատիժ տվել:

— Դանակով մորթել է մարդուն:

— Ցույց տուր...

Պահակը վազեց, պպզեց ու քուրքի տուտով կնոջ դեմքի վրայից, սստած մազերից թափ տվեց ձյունը հանկատարությամբ.

— Կենդանի է, տեր թագավոր, կենդանի, աչքերը բացուխուսի է անում...

Պյոտրը, Սիդնեյը, Ալեքսաշկան, Լեֆորտի հյուրերից մի հինգ մարդ մոտեցան գլխին: Երկաթյա սաղավարտները փայլեցնելով, երկու հրացանակիր բարձր բռնել էին ջահերը: Ջյան միջից, ներս ընկած խոշոր աչքերով մարդկանց էր նայում ձյան պես ճերմակ ու հարթ մի դեմք:

— Ինչի՞ համար ես սպանել մարդուդ,— հարցրեց Պյոտրը...

Կինը լուռ էր:

Պահակը վալենկայով դիպավ դեմքին.

— Տեր թագավորն է հարցնում, անխելք:

— Ի՞նչ է, ծեծո՞ւմ էր քեզ, տանջո՞ւմ: (Պյոտրը կռացավ դեմքի վրա:) Սրա անունն ի՞նչ է: Դարյա... Հը, Դարյա, ասա, ինչ է եղել...

Լուռ էր: Իրար անցած պահակը պպզեց ու ականջին ասաց.

— Մեղա եկ, կարող է ներեն... Ախր, ինձ ես խայտառակ անում, ա՛յ կնիկ...

Այդ ժամանակ գլուխը բացեց սև բերանը և խռպոտ, խուլ, ատելությամբ ասաց.

— Սպանել եմ... Ու մի անգամ էլ կսպանեի էդ գազանին...

Աչքերը փակեց: Բոլորը լուռ էին: Ջահերի ձյութը թշշոցով ցած էր ընկնում: Սիդնեյն արագ-արագ ինչ-որ բաներ ասաց, թարգմանող չկար: Պահակը նորից ցնցեց գլուխը վալենկայով՝ մեռածի պես գնաց-եկավ: Պյոտրը չոր հազաց, գնաց դեպի սահնակը... Ցածրաձայն ասաց Ալեքսաշկային.

— Ասա գնդակահարեն...

5.

Լուռ ու սառած, վերադարձավ Լեֆորտի վառ լուսավորված տունը: Պարադահլիճի վերնասրահում երաժիշտներ էին նվագում: Գույնզգույն հագուստները, դեմքերը, մոմերը՝ կրկնապատկվում էին հայելիների մեջ: Տաք մշուշի միջից Պյոտրն իսկույն տեսավ խարտիշահեր Աննա Մոնսին: Աղջիկը պատի մոտ էր նստած՝ դեմքը մտախոհ էր, մերկ ուսերը իջեցրած:

Այդ պահին երաժշտությունը վերնասրահից պարզեց իր պղնձյա փողերը ու երգեց նրա համար Անխենի մասին, նրա վարդագույն զգեստի, ծնկներին դրած անմեղ ձեռքերի մասին՝ դանդաղ պար էին նվագում... Ինչո՞ւ, ամենի տրտմությամբ ինչո՞ւ էր պատուսպատար լինում սիրտը: Կարծես ինքն էր մինչև վիզը թաղված հողի մեջ ու բքի միջից աներևակայելի հեռուներից իր սերն էր կանչում...

Աննայի աչքերը ցնցվեցին, դռան մեջ տեսավ նրան բոլորից շուտ: Վեր կացավ ու սուրաց մոմած հատակի վրայով... Եվ երաժշտությունն արդեն զվարթաձայն երգում էր բարեշունչ Գերմանիայի մասին, ուր մաշուր-մաքուր պատուհանների առաջ ծաղկում է վարդագույն նշենին, բարի հայրիկն ու բարի մայրիկը բարի ժպիտներով նայում են Հանսին ու Գրետելին՝ կանգնած սույն նշենատակ, ինչ հավերժ սեր է նշանակում, իսկ երբ իրենց արևը կթեչվի գիշերվա կապույտի գիրկը, խաղաղ հոգոցով կիջնեն գերեզման... Ա՜հ, աներևակայելի՞ հեռատեսություններ...

Պյոտրը գրկեց վարդագույն մետաքսի տակ ջերմ Անխենին ու պարեց լուռ և այնքան երկար, որ երաժիշտները խառնեցին եղանակը...

Պյոտրն ասաց.

— Աննա՞:

Աղջիկը հավատով, ջինջ ու անմեղ նայեց աչքերին.

— Դուք այսօր դառնացա՞ծ եք, Պիտեր:

— Աննուշկա, դու ինձ սիրո՞ւմ ես:

Ի պատասխան Աննան միայն գլուխը կախեց փութով, վզին թավշյա ժապավեն կար... Բոլոր պարողները և նստած տիկնայք հասկացան թե՛ այն, ինչ հարցրեց ցարը, թե՛ այն, ինչ Աննա Մոնսը պատասխանեց: Սրահով մի շրջան կատարելով, Պյոտրն ասաց.

— Քեզ հետ է իմ երջանկությունը....

6.

Պատրիարքին թևանցուկ ներս բերեցին: Ավագ թագուհուն ու նրա եղբորը, բոյարներին օրհնելով, ճգնավորի իր ձեռքի ոսկորներն էր դեմ անում նրանց շրթունքներին, ու խստաճայաց էր: Պյոտրը ցարը դեռևս չկար: Յոակիմը նստեց բարձր թիկնակով չոր աթոռին ու կռացավ՝ վեղարը ծածկեց դեմքը: Խորունկ պատուհանաթոռին ու կռացավ՝ վեղարը ծածկեց դեմքը: Խորունկ պատուհանա-

ներից ներս էին հորդում արևի ճառագայթները Նատաշա պալատի ճոխ կամարների տակ: Բոլորը լուռ էին, ձեռքերը ծալած, աչքերը ցած հառած: Դրսից, լուսամուտի ձնապատ շրջանակին նըստած աղավնու թավոր ստվերն էր սոսկ խախտում անդորրը: Տաքություն էր փչում ջնարակած կապույտ վառարանից, խունկի և մոմի հոտ էր գալիս: Առաջնակարգ ու կարևորագույն գործը սա էր՝ նստել այսպես, արժանավայել լռության մեջ, պահպանելով կարգն ու սովորությունը: Թող այս անասանությանը բախվեն ու փշրվեն մարդկային հորձանքներ՝ ունայնություն ունայնությանց: Բավական են գայթակղություններ ու նորույթներ: Ռուսաստանի պատվարն այստեղ է՝ թող լինենք սակավ հարուստ, սակայն ճշմարիտ... Մնացյալը՝ աստված է օգնական...

Լուռ էին, թագավորի ժամանմանն էին սպասում: Բարեպաշտ նիրհում էր Նատալյա Կիրիլովնան՝ վերջին ամիսներս գիրացել էր, վատառողջ դարձել: Ստրեշնևը զգուշությամբ, տնքտնքալով բարձրացրեց թագուհու ծնկներից գորգին ընկած տերողորմյան: Սոֆյայի օրոք պալատում աշտարակաձև ժամացույց էր դրված: Հրամայել էին դուրս տանել՝ տկտկոցն էր բարկացնում, նաև ասված էր. «Ոչ ոք հետևի ժամին...»: Ժամանակը հաշվելն ինքնախաբեություն է: Թող որ դանդաղ թոչի Ռուսաստանի վրայով, անաղմուկ...

Նախասրահում դռները բացվեցին, ցրտահար ձ յներ խախտեցին խոնջացած լռությունը, հորանջը զսպելով, թագուհին խաչակնքեց բերանը: Զինակիրը՝ անխոս մի պատանյակ, խոնարհ զեկույց տվեց ժամանման մասին: Բոյարներն անշտապ հանեցին կրծքամորթու գլխարկները: Նատալյա Կիրիլովնան դեմքը կնճռոտեց, դուռանը նայելով, սակայն, փառք աստծո, Պյոտրը ռուսական զգեստով էր, դռան ետևում ծիծաղը զսպեց ու ներս մտավ բավականին արժանավայել... «Արքայի ոտքեր ունի խեղճը, դժվար է արժանավայել քայլելը»,— մտածեց թագուհին, ոլորունելիս դեմքը շողացնելով: Պյոտրը մոտեցավ պատրիարքի օրհնությունը ստանալու, հարցրեց հիվանդ եղբոր առողջության մասին...

Շտապ փող էր պետք նրան, դրա համար էր մոր նամակով այստեղ եկել՝ հնազանդ, Յոակիմին լսելու: Նստեց գահին և, կարծես փետրե ներքնակի մեջ, թաղվեց պալատի ընչաբեր լռության գըրկում, արմունկով կոթնելով, ձեռքի ափով բերանը փակեց՝ վրանում հորանջը քողարկելու համար:

Սև պատմուճանի տակից Յոակիմը մի տետր հանեց, ձեռքը դողում էր ծերունավարի, դանդաղ շրջեց էջը, աչքերը վեր հառեց, մատները երկար պահելով վեղարի ութնաթև խաչին, ապա խաչակնքելով, սկսեց կարդալ ցածրաձայն, ճապաղ, ատամների արանքից ու դանդաղ.

— ...Մի գոռոզացեք, որ խռովությունը ոչնչացնելով, հաշտություն բերեցիք մարդկանց ու շներին... Վշտահար է հոգին իմ, միաբանության ու բարգավաճում չտեսնելով ժողովրդի մեջ: Գահանիստ քաղաքում՝ ծխագուրկ վանականներ ու միանձնուհիներ, տերտերներ ու դպիրներ, անպատիվ ու անճարտար, նաև թափառական զանազան այրեր, որք լեգեոն կկոչվեն, ձեռք ու ոտք կապած, ոմանք էլ աչքերը կապած ու փակած, թրև են գալիս փողոցներում, կեղծավոր ու խարդախ, մուրում են ամենուր... Եվ սա՞ է արդյոք պարտեզը փթթուն: Ապա տեսնում եմ ես՝ հարբեցողություն է տեղում, երազատեսություն ու հմայություն և ցոփություն զարհուրելի: Ամուսինը կնոջ մազերն է պոկում և մերկանդամ փողոց շպրտում, և կինն է սպանում յուր ամուսնուն, իսկ երեխայք, որպես խելագար, մոլախոտի պես են բազմանում... Եվ սա՞ է արդյոք պարտեզը փթթուն... Ապա տեսնում եմ ես՝ որդին բոյարի, և արհեստավորը, և շինականը, լախտերն առած, սեփական տունուտեղ կրակի տված, անտառներն են քաշվում՝ իրենց վայրագություններն անելու: Ո՞ւր է քո արորը, շինական: Ո՞ւր է քո կշեռքը, վաճառական: Ո՞ւր է քո պատիվը, բոյարի զավակ:

Այսպես կարդում էր նա ամենուր տարածված չարիքի մասին: Պյոտրի նիրհն անցավ: Նատալյա Կիրիլովնան, տանջվելով, մերթ որդուն էր նայում, մերթ բոյարներին, իսկ նրանք, հարկը պատշաճին, մորուքներն առաջ պարզած, լռում էին: Բոլորը գիտեին՝ պետության գործերը խիստ վատթար վիճակում են: Սակայն ինչպե՞ս օգնել: Դիմանալ՝ միայն դիմանալ... Յոակիմը կարդում էր.

— Մեր նվազ խելքով վճռեցինք ճշմարտությունն ասել ձեզ՝ մեծն արքաներիդ... Երկրում այնքան ժամանակ կարգուկանոն և լիություն չի լինի, քանի դեռ անաստվածությունն ու լատինական պիղծ հերձվածներն են ծաղկում, լյութերական, կալվինյան ու ջհուդական... Մեր մեղքերից ենք տառապում... Երրորդ Հռոմն էինք, երկրորդ Սոդոմ Գոմորը դարձանք: Մեծն թագավորներ, հարկ է թույլ չտալ այլադավանքներին իրենց աղոթատները կառուցել, կառուցվածներն էլ հարկ է ավերել... Արգելել, որ գնդերը նզովյալ հերետիկոսները գլխավորեն... Ի՞նչ օգուտ կարող է նրանցից լինել ուղղափառ զորականներին: Աստծո զայրույթը միայն կհարուցեն... Գայլերն են իշխում գառանց վրա: Արգելել ուղղափառներին բարեկամություն անել հերետիկոսների հետ... Օտարերկրյա սովորույթքն ու հագուստի մեջ ամենայն փոփոխություն չթույլատրել... Ապա ոտքի կանգնելով աստիճանաբար և ուղղափառության ոգին բարձրացնելով, Ռուսաստանից դուրս շպրտել օտարերկրացիներին ու արվարձանը գերմանական, այդ գեհենն ու հրապուրանքը՝ այրել...

Պատրիարքի աչքերը կրակվում էին, ցնցվում էր դեմքը, թափահարվում էին մորուքը, մանուշակագույն ձեռքերը: Բոյարները ցած նայեցին՝ չափազանց կտրուկ էր Յոակիմը, չի կարելի նման գործերում այդպես թարս ու շիտակ խփել...

Ռոմոդանովսկու աչքերը, խեցգետնի աչքի պես, չովել էին: Նատալյա Կիրիլովնան, ոչինչ չհասկանալով, ընթերցումը վերջացնելուց հետո էլ էր գլխով անում ժպտալով: Պյոտրը փովել էր գահին, փոքր երեխայի պես շրթունքներն ուռեցրած: Պատրիարքը պահեց տետրը, և մատները տարավ աչքերի վրայով.

— Մեծ գործը փոքրից սկսենք... Սոֆյա Ալեքսեևնայի օրոք իմ աղերսագին խնդրանքը Կուկուշում բռնել էին Նոդկայի հերետիկոս Կվիրին Կուլմանին... Հարցաքննության ժամանակ նա ասել է, իբր Ամստերդամում ճերմակ շորջառով մեկն է հայտնվել իրեն ու հրամայել Մոսկվա գնալ, այնտեղ իբր կործանվում են անհավատության խավարի մեջ... (Յակիմը հուզմունքից դադար տվեց մի բիչ:) «Եվ դուք,— ասել է նա հարցաքննությանը,— կույր եք. չեք տեսնում, որ լուսապակ կա գլխիս և ստրք հոգին է բարբառում իմ բերանով...»: Եվ մեջբերումներ է արել Յակով Բեմի ու Քրիստոփոր Բաբատոի գայթակղիչ գրվածքներից... Իսկ ինքը, ի միջի այլոց, Մոսկվայում գայթակղել է Մարիա Սելիֆոնտովա անունով աղջկան, վախից տղամարդու շորեր հագցրել, և աղջինն ապրում է նրա խորդանոցում... Օրնիբուն հարբած են երկուսով, ջութակ ու ծնծղա են նվաղում, գլուխը հանում է նա լուսամուտից ու բղավում վայրենաձայն, թե սուրբ հոգի է իջել վրան... Դուշակելու համար մտոր գնացածներին էլ հրամայում է իր փորտակը համբուրել... Տեր աստված, ինչպես կարելի է գեթ մի րոպե հանգիստ մնալ, երբ այստեղ այդպես ցնծում է սատանան... Մեծն արքաներից խնդրում եմ հրաման արձակել Կվիրին Կուլմանի վրա՝ կենդանի-կենդանի այրել նրան իր գրքերի հետ...

Բոյարը գլուխները դարձրեցին Պյոտրի կողմը, և նա հասկացավ, որ Կվիրին Կուլմանի գործը վատուց է վճռված: Նա կարդաց դա մոր խաղաղ աչքերի մեջ: Մենակ Ռոմոդանովսկին էր բեխերը շարժում, հավանություն չտալով: Պյոտրն ուղղվեց, ձեռքը վեր բարձրացավ՝ եղունգը կրծելու: Այդպես առաջին անգամ կյանքում նրանից պետական որոշում պահանջվեց: Սարսափելի էր, սակայն զայրույթի սառնությունն արդեն պարուրել էր սիրտը: Հիշեց Լեֆորտի տանը վերջերս ունեցած խոսակցությունները, արժանապատվությամբ լի, խելացի դեմքերը օտարերկրացիների... Քաղաքավարի արհամարհանքը... «Ռուսաստանը չափազանց երկար ժամանակ է ասիական երկիր եղել,— ասում էր Սիդնեյը (հաջորդ օրը),— ձեզանում վախենում են եվրոպացիներից, սակայն ավելի վտանգավոր թշնամի, քան ինքներդ, չկա ձեզ համար...»: Հիշեց, թե ինչպես էր ամաչում լսելիս... (Այն օրը հրամայեց Սիդնեյին սամույրի մուշտակ նվիրել, և որ այլևս չգա Լեֆորտի տուն, այլ Արխանգելսկ գնա:) Իսկ ի՞նչ կասեր անգլիացին, լսելով այս ճառերը: Քանդե՞լ արվարձանի կիրխեներն ու կոստոլները: Հիշեց՝ ամռանը բաց պատուհանից լսվում էր գերմանական կիրխեի զանգի ղողանջը... Այդ վաղ ղողանջի մեջ ազնվություն ու կարգուկանոն կար, Կուկույի կոկիկ տների հոտը, Աննա Մոնսի պատուհանի ժանեկահյուսվարագույրը... Դու նրան ևս կայրեիր, կենդանի դիակ, սև ագռավ: Մոխրակույտեր կթողնեիր Կուկույի տեղում: (Հիմա արդեն Պյոտրը աչքերով խանձում էր պատրիարքին:) Սակայն զայրույթից ավելի ուժգին (Լեֆորտի դասերը չէի՞ն արդյոք) համառությունը և խորամանկությունը դրսևորվեցին: Լա՛վ, կառավարող բոյարներ, մորուքավոր այրեր: Նրանց վրա բղավելը դժվար չէր՝ կփռվեին գորգերի վրա, մոտենալը հատակին քսելով, մայրը լաց կլիներ, պատրիարքը բիթը կկախեր մինչև ծնկները, բայց և այնպես իրենցը կանեին, նաև փող չէին տա...

— Սրբազան հայր,— ասաց Պյոտրը պատշաճ զայրույթով (Նատալյա Կիրիլովնայի հոնքերը զարմացած բարձրացան),— ցավալի է, որ մեր միջև միաբանություն չկա... Մենք բո քրիստոնեական գործերին չենք խառնվում. իսկ դու մեր զինվորական գործի մեջ մտնում ես... Գուցե մեր մտադրություններն մեծ են, իսկ դու գիտե՞ս դրանք: Մենք ուզում ենք ծովեր գրավել... Մեր երկրի բալաջը ծովային առևտրի հաջողության հետ ենք կապում: Աստծո օրհնությունն է սույնը... Առանց օտարերկրացիների ռազմական գործում ևս ոչինչ չեմ կարող անել... Բայց փորձիր դիպչել նրանց կիրխեներին ու կոստոլներին՝ բոլորը ցրիվ կգան: Սա ի՞նչ է... (Նա բոյարներին նայեց հիրթով:) Իմ թեռ՞ին եք կտրում:

Զարմացան բոյարները, որ Պյոտրն այդքան անվեհեր է խոսում: «Օհո՛,— միմյանց նայեցին,— տես է՞... Խիստ է ու կտրուկ...»: Ռոմոդանովսկին գլխով էր անում. «Այդպե՛ս, այդպե՛ս, ճշմարիտ է»: Պատրիարքը սուր բիթը դարձրեց գահի կողմն ու բղավեց բուռն զայրույթով.

— Թագավոր մեծ, ձեռքիցս չառնես սատանայական հերետիկոս Կվիրին Կուլմանին...

Պյոտրը խոժոռվեց: Զգում էր. այդ մեկը պիտի գիջի մորուքավորներին... Նատալյա Կիրիլովնան մրմնջաց. «Տե՛ր թագավոր» և աղերսագին ծալեց ձեռքերը... Պյոտրը շեղ նայեց Ռոմոդանովսկուն՝ սա թեթևակի տարածեց ձեռքերը...

— Կուլմանի հետ մենք գործ չունենք,— ասաց Պյոտրը,— գլխովին քեզ եմ հանձնում: (Պատրիարքը նստեց, ուժասպառ փակելով աչքերը:) Իսկ հիմա ահա թե ինչ, բոյարներ՝ ինձ ութ հազար ռուբլի է պետք ռազմական, մեկ էլ նավաշինական պետքերի համար...

...Պալատից ելնելով, Պյոտրն իր սահնակը նստեցրեց Ֆյոդոր Յուրևիչ Ռոմոդանովսկուն ու գնաց նրանց տուն՝ Լուբյանկա, ճաշելու:

7.

Մլյտիշչի գյուղից երիտասարդ թագուհու համար բերեցին Վորոբյիխա տատին: Եվդոկիան այնքան ուրախացավ, որ հրամայեց տատին հենց սահնակից ննջարան ուղեկցեն: Թագուհու ննջասենյակը վերևի գերանակապ կողաշենքում էր, երկու խուլ ու փոքր, արևից վարագուրված պատուհաններով: Տաքուկ թախտի վրա վալենկաներով ու կարճ մուշտակով մշտապես ննջում էր տատները: Եվդոկիայի երկունքը ուր որ է պիտի սկսվեր, և արդեն մի քանի օր նա չէր ելնում կարապի փետուրներով լի ներքնակների վրայից: Իհարկե, կուզենար շունչ առնել այդ հեղձուցիչ խցից՝ սահնակով շրջեր ձնապատ Մոսկվայում, ուր գորշակապույտ ծուխն է ելնում,

արևն է ցած կախված և լացող ուռենիների արծաթյա ճյուղերը նրբանցքներում կպչում են աղեղին... Սակայն ավագ թագուհին ու շրջապատող կանայք՝ աստվա՜ծ մի արասցե, ի՜նչ զբոսանք: Պատնիշ, չշարժվես, փորդ պահպանիր. ցարևանա պտուղ ես կրում Հերոդ... Թույլատրված էր միայն աստվածաճաճ ավարտով հիրիաթներ լսել... Լաց լինել անգամ չէր կարելի. մանկիկը կկշտանա...

Վորոբյիխան ներս մտավ մոլեռանդ վախով, բայց աշխույժ: Մաքուր էր տատը, նոր տրեխներով, կտավե շրջազգեստի տակ եղեսպակի փոքր փունջ էր ամրացրել՝ հոտի համար: Շրթունքները փափուկ էին, հայացքը մկնային, դեմքը թեև ծերացած, բայց կարմրաթուշ, ու շատախոս էր, բլբլացնում էր անդադար... Շեմից ժիր-ժիր նայեց, ահեռ ինչ նկատեց, ընկավ մանճակալի առաջ ու շնորհի արծաթացավ. երիտասարդ թագուհին նրան պարզեց խոնավ ձեռքը.

— Նստիր, Վորոբյիխա, պատմիր տեսնենք... Ուրախացրու ինձ...

Վորոբյիխան նստեց բերանը ու սկսեց պատմությունները տատիկ-պապիկի, տերտերի աղջիկների, ոսկեպոզիկ այծիկի մասին...

— Կաց, Վորոբյիխա,— Եվդոկիան բարձրացավ տեղից, նայելով, թե ինչո՞ւմ է տատմերը,— գուշակիր ինձ համար...

— Օհ, իմ սիրուն արև, չեմ իմանում...

— Սուտ ես ասում, Վորոբյիխա... Ոչ ոքի չեմ ասի, գուշակիր, թեկուզ բակլայով...

— Օ՜խ, բակլայի համար հիմի կաշի են մաշկում մտրակով... Վայ թե ալրափոշիով բացեմ բախտդ, սուրբ ջրով ջրիկ բաց անեմ, հը՞:

— Ցավերդ ե՞րբ են բռնելու: Շո՞ւտ կլինի: Վախենում եմ... Գիշերները սիրտս նվաղում, թուլանում, կանգնում է... Վեր եմ թռչում, ձեռ տալիս՝ կենդանի՞ է: Օ՜, տեր աստված:

— Քացի-բացի անո՞ւմ է: Ո՞ր մասում:

— Այ էստեղ է խփում տոտիկով... Շուռումուռ է գալիս, ոնց որ ծնկներով ու արմունկներով փափուկ քսվի...

— Արևի ճամփո՞վ է շարժվում, թե հակառակը:

— Էնպես էլ, էնպես էլ... Ծատ է ժիր...

— Տղա է:

— Օհ, հատա՜տ...

Վորոբյիխան, մկան աչքերը գորովագին կկոցած, շշնջաց.

— Է՛լ ինչ գուշակեմ: Տեսնում եմ, աննման գեղեցկուհիս, մի թաքուն բան ունես լեզվիդ ծերին... Ականջիս ասա, թագուհի...

Եվդոկիան դարձավ դեպի պատը, շառագունեց ճակատին ու քունքերին գորշ բծերով, ուռած շրթունքներով դեմքը...

— Գեշացել եմ, թե ինչ՝ չգիտեմ...

— Քեզնից սիրուն, քեզնից աննման ո՞վ կա...

— Դե լավ... (Եվդոկիան շրջվեց, խած աչքերն արցունքով լցվեցին:) Խղճում ու սիրո՞ւմ է նա: Բաց արա... Գնա ալրափոշի բեր...

Վորոբյիխայի մոտ ամեն ինչ կար, տոպրակի մեջ էր. կավե

ամանը, ջրի սրվակն ու գորշագույն փոշին... (Ծշնչաց. «Զարխոտի սերմ է, Իվան Կուպալայից առաջ եմ հավաքել»:) Խառնեց, ամանը դրեց մանճակալի մոտի նստարանին, անհասկանալի մրմնջոցով Եվդոկիայից առավ հարսանեկան մատանին, գցեց ամանի մեջ, ասաց, որ նայի.

— Գաղտնիքդ ասա, լուզես բարձր, կուզես մտքիդ մեջ... Ինչի՞ց ես տանջվում:

— Մայրավանքից գալուց հետո փոխվել է,— շրթունքները հագիվ էր շարժում Եվդոկիան:— Ասածդ չի լսում, կարծես ամենասիրելիքը ես եմ... «Պատմությունից մի բան կարդալիր... Հոլանդերեն, գերմաներեն սովորեիր...»: Փորձեցի՝ բան չեմ հասկանում: Կնոջն առանց գրքի էլ կսիրեն, չէ՞...

— Վաղո՞ւց իրար հետ չեք քնում:

— Երրորդ ամիսն է... Նատալյա Կիրիլովնան չթողեց՝ վախենում է որ հղի եմ...

— Ուղիղ մատանուդ նայիր, երկնքի հրեշտակ՝ պղտոր բան տեսնո՞ւմ ես:

— Կարծես դեմք լինի...

— Էլի նայիր... Կնկա՞ է:

— Ոնց որ թե... Կնկա է...

— Նա է:— Վորոբյիխան խմացողի պես սեղմեց շրթունքները, ասես բնի միջից նայեց հուլունք-աչքերով... Ծանր շնչելով, Եվդոկիան թիկն տվեց, կլոր փորի վրայից ձեռքը բարձրացավ կրծքի տակ, ուր բանտված թռչնի պես դուրս էր պրծնում սիրտը...

— Ի՞նչ գիտես: Ի՞նչ ես պահում ինձնից: Ո՞վ է նա:

— Ով է, ով է, էն օձի կծածը, գերմանուհին... Ամբողջ Մոսկվան է փսփսում էդ մասին, վախենում են ասեն... Գերմանական արվարձանում սիրեկանի թուրմ են խմացնում նրան... Քեզ մի կոտրիր, աղուհիկս, դարդ անելու համար դեռ շուտ է... Կօգնենք... Էս ասեղը վերցրու... (Վորոբյիխան գլխակապից մի ասեղ հանեց, շշնջալով տվեց թագուհուն:) Մատներով բռնիր, ոչնչից չվախենաս... Ինձ հետ ասա. «Գնա, գնա, չար ու չարկամ, օձ ու կարիճ Աննա, ծուկես ու ճողկես, ցամքես ու ջարդվես, գնաս ու ետ չգաս Ֆաֆեր աբարից, ուր ոչ արև կա, ոչ լուսին, ոչ ջուր կա, ոչ շաղ, գնաս ու մնես երեք սաժեն հողի տակ, երեք բար վրադ, օձ ու կարիճ Աննա, տեղդ չերևա մինչև հուր հավիտենական, ամեն...»: Ասեղով ծակիր, ծակիր մատանու մեջտեղը, դեմքը ծակիր...

Եվդոկիան ծակում էր, ծակում, մինչև ասեղը կոտրվեց ամանի մեջ: Ետ ընկավ, բազուկով ծածկեց աչքերը, և ուռած շրթունքները դողացին լացից...

Երեկոյան պատավ ու դալակ, տատմեր ու խև կանայք, իրար անցան, դուռ ու հատակ ճոճոացրեցին. «Ցարն եկավ...»: Վորոբյիխան խունկի մի կտոր գցեց մոմի վրա՝ օդը մաքրելու համար ու չքվեց... Պյոտրը վեր վազեց, երեք-երեք աստիճան թռչելով: Սառնամանիքի

ու խանչալի հոտ էր գալիս նրանից, երբ կռացավ կնոջ անկողնու վրա:

— Բարև, Դունյա... Էս դեռ չե՞ս ազատվել: Ես էլ կարծում էի...

Ծիծաղեց քթի տակ՝ հեռավոր, գլխաթև, կլոր աչքերը օտարացած... Եվդոկիայի սիրտը սառեց: Գարգ ու որոշ ասաց.

— Ուրախ կլինեի ձեզ զոհացնել... Ցեղում եմ՝ բոլորը ձանձրացել են սպասելուց... Մեղավոր եմ...

Պյոտրը խոժոռվեց, ջանալով հասկանալ, թե ինչ է եղել: Նստեց, նստարանը բռնելով, խթանը դեմ առավ գորգին:

— Ռոմոդանովսկու տանն էի ճաշում... Ասացին, թե ուր որ է... Կարծեցի ցավերդ բռնել են...

— Ոչ մեռնեմ՝ կիմանաք... Մարդիկ կասեն...

— Դրանից չեն մեռնում... Վերջ տուր...

Այդ ժամանակ նա ամբողջ ուժով շպրտեց վերմակը, սավանները, դուրս ցցեց փորը.

— Էս է, տեսնում ես... Ե՛ս եմ տանջվողն ու զոհացողը, ոչ թե դու... Դրանից չեն մեռնում: Ամենքից հետո կիմանան էլ մատին... Ծիծաղիր, ուրախացիր, գինի խմիր... Գնա, գնա էլ արվարձանը... (Պյոտրը բացեց բերանը, աչքերը կնոջ վրա հառեց:) Ամոթ է մարդկանց առաջ, բոլորը գիտեն արդեն...

— Ի՞նչ գիտեն բոլորը:

Պյոտրն իրեն քաշեց ոտքերը, չարացած էր, կատվի էր նման: Ա՜հ, հիմա մինչևուշն էր Եվդոկիայի համար... Բղավեց.

— Քո անհավատի, գերմանուհու մասին: Գինետան փչացածի: Ի՞նչ է խանգարել քեզ:

Այստեղ Պյոտրը շառագունեց ու քրտնեց: Դեռ շպրտեց նստարանը: Այնքան սարսափելի դարձավ, որ Եվդոկիան ձեռքն ակամա տարավ դեմքին: Կանգնել էր, անաստված աչքերը կնոջ վրա հառած...

— Տխմա՜ր,— այնքանն ասաց: Եվդոկիան ալեկոծվեց, գլուխը բռնեց: Անձայն հեկեկոցներից ցնցվում էր: Մանկիկը փափուկ, անհամբեր շուռ եկավ ներսում: Պայթեցնող, ձգող, սարսափելի ու անհասկանալի ուժի մի ցավ օդակեց կոնքերը...

Թավածայն ու գազանային բղավոց լսելով, պառավ ու դալակ, տատմեր ու հացթուրի վազ տվեցին երիտասարդ թագուհու մոտ: Խելացնոր աչքերը չռած, բերանը տգեղ ծռած բղավում էր նա... Կանչալը իրար անցան... Իջեցրին սրբապատկերները, վառեցին նրագները: Պյոտրը գնաց: Առաջին ցավերը մեղմվելուց հետո Վոռոբյիխան ու տատմերը Եվդոկիային տարան շոգ վառած բաղնիք՝ ծննդաբերելու:

8.

Ծերմակաչք սերմնագործը, վախեցած ինչ-որ բանից, հարդածածկ չարդախի տակից թռավ ու ծառին նստեց՝ եղյամ թափվեց:

Միաչքանի Գնչուն բարձրացրեց գլուխը՝ ձնագատ նյուղերի արանից ձմռան արշալույսն էր սկսում մորեգույն: Դանդաղ վեր էին ելնում ծխի շիթերը՝ կանայք վառարանները վառեցին: Չորս կողմից վալենկաների ճզճզոց, հացի ձայներ լսվեցին, ճոճում էին ցանկապատների դռնակները, մի տեղ կացին էր թխկացնում: Ավելի հստակ գծագրվեցին թեք կտուրները արծաթագույն կեչիների ապանքից, վարդագույն պտղանմերով պատրվեց ամբողջ Զարեչյեն, ստրկեցների հիմնական տները, վանառանների բարձրագագաթ պատերները, պուադականների՝ գանգաղան կաշեզարդների, գոլգպաղորդների, կվաս եփողների տնակները...

Ժիր սերմնագործը նյուղից նյուղ էր ոստոստում, ձնաբոքի թափելով Գնչուի աչքերի մեջ: Բարկացած թռչունարից կաչվի թարմանը: Ջրհորից հանեց սառցակալած դույլը, նամանոտ ջուրը լցրեց գոտի մեջ: Կիրակնօրյա այդ առավոտ դաղը չարությամբ էր տրնջում նրա սիրտը. «Անիծվես դու, բախտ, հերա էլ դարձանք... Անասուն, թե մարդ՝ մեկ է... Ձեզնից վա՞ղ տեր կլինեի տունուտեղի...»: Դույլը գնգում էր, ճոռում էր կռունկը. ծայրից կապած կոտրված անիվը գնում-գալիս էր:

Դուրս եկավ տանտերը՝ ստրկեց Օվսեյ Ռժովը, մերկ մարմնին հագած կիսամուշտակը բրդյա կարմիր գոտիով կապած: Գլխարկն աչքերին քաշելով, փրթացրեց ցրտից, թաթմանները հագավ, բանալիները գնգացրեց:

— Լցրե՞լ ես:

Գնչուն միայն մի հատիկ աչքը խեթեց՝ տրեխները սառում էին գոտի եզրի պատցակալած թմբի վրա: Օվսեյը գնաց գոմը բացելու. իսկական տանտերն ինքը պիտի ջրի անասունը: Ճամփին կարմիր գոլերով ճերմակ վալենկայի քթով խփեց տեղը չդրած ձողանին.

— Էս ձողանով մի երկու հատ մեջքիդ չեմ հասցրել ախր, մշակի զավակ: Էլի ցրիվ ես տվել բակով մեկ...

Դուրը բացեց, դիմնար արեց, բաշերից բռնած դուրս բերեց երկու կուշտուկուտ ձի, թփթփացրեց, սուլեց, իսկ ձիերը սառցասառը ջուրն էին խմում, գլուխները բարձրացնելով ու այգաբացին նայելով, ջուրը թափվում էր նրանց տաք պռունկներից: Ցնցվելով, խրխնջաց մեկը... «Հանգի՞ստ, հանգի՞ստ», կամացուկ ասաց Օվսեյը: Գոմից դուրս արեց կովերն ու երկնագույն ցլիկը, նրանց ետևից, կճղակները ճոճռացնելով, դուրս վազեցին ոչխարները: Գնչուն շարունակ ջուր էր հանում, ուժ տալով, շալվարը թրջել էր: Օվսեյն ասաց.

— Մեջդ բարությունը քիչ է, չարությունը շատ... Զտեսա, որ անասունի հետ մի քիչ սիրով լինես, աչքդ խեթելուց բացի, ուրիշ բան չգիտես... Զիմացա, թե ինչ մարդ եմ դու...

— Ինչքան կարող եմ, էդ եմ անում...

Օվսեյը չարությամբ ծիծաղեց քթի տակ՝ լա՛վ, լա՛վ... Կարգադրեց իր մոտ ձիերին ու տավարին կեր տալ, ցամքարան թարմացնել: Գնչուն մի տասն անգամ գնաց բակի խորքը, ձնածածկ

դեզերի մոտ, ուր տակնուվրա խզուզի մեջ կոցահարում էին ճընճղուկները: Փայտ շարդեց ու կրեց ներս: Աղջամուղջի մեջ կեչիների ճնճղատ կատարները լուսավորվեցին արևի շողքերից: Եկեղեցիների զանգերը խփում էին: Օվսեյը հանդիսավորությամբ խաչակընքեց: Առմուտք ելավ սերմնացուի պես երկնագույն աչիկներով, կլորերես մի աղջնակ.

— Հայրիկ, շուտ արա, արի ուտելու...

Օվսեյը տպտպացրեց վալենկաներն ու ցածրիկ դռնից ներս մտավ, տանտիրոջ պես վրա բերելով: Գնչուին չկանչեցին: Սպասեց, իմնչեց, քիթը երկար սրբում էր պատռված զիպունի փեշով ու առանց կանչելու գնաց տաքուկ, մթնավուն կիսանկուղը, ուր տաղտերերն էին ուտում: Դռնից կողքանց մտավ ու նստեց թախտին: Մսով շչիի հոտ էր գալիս: Օվսեյն ու եղբայրը՝ Կոնստանտինը, նույնպես պտրելեց, անշտապ գդալում էին փայտյա քրեղանի միջից: Սեղանին ուտելիք էր դնում բարձրահասակ, խիստ ու անկենդան դեմքով մի պառավ...

Եղբայրները խանութ ունեին քրծենու ապրանքների շարքում, ընդհանուր բաղնիքներ Բալչուգում ու հողմաղաց, նաև իշխան Օդոևսկուց տասներկու դեսյատին վարելահող ու խոտհարք էին վարձակալել: Առաջ ինքներն էին աշխատում (չգնացին Ղրիմի արշավանքին), իսկ հիմա Պյոտր ցարը հանգիստ չէր տալիս. ամեն օր կամ կարգահմբի մեջ էին լինում, կամ շարային վարժությունների: Ստրելեցներին արգելված էր լինել խանութներում, բաղնիքներում: Բատրակների վրա հույս դնել չէր լինի: Ստիպված աշխատում էին կանայք ու քույրերը: Տղամարդկանց ուժը գնում էր ցարի զբաղմունքներին:

— Ամառն ինչ ենք անելու հնձին, խելքս բան չի կտրում,— ասում էր Օվսեյը: Հացի կողը սեղմեց կրծքին, քերծելով կտավե շապիկը, երկու շերտ կտրեց իր ու եղբոր համար: Հոգոց հանեցին, կծեցին հացը և մսի կտորները գդալների վրա ցնցելով, խպշտեցին շչին:

— Բատրակների քանը դժվարացել է,— ասաց Կոնստանտինը,— նոր հրաման կա... Անպայման հանձնել թափառողներին, ով առանց երաշխավորության ապրում է արվարձաններում կամ պանդոկներում, բաղնիքներում, աղյուսի մարագներում...

— Էդ ո՞նց, թե որ աշխատում է:

— Ուրեմն, նրա տեղը պատասխան պիտի տաս, որպես ավազակի... Գնչուից երաշխավորագիր վերցրե՞լ ես: Ո՞վ է, ի՞նչ մարդ է:

— Սատանան գիտի... Չի ասում...

— Բաց չթողնե՞նք գնա, շառը քաշի...

Երբ ներս մտավ Գնչուն, և մորուքից սառած ձյունը սրբելով, աչքերով շաղափում էր եղբայրներին, Օվսեյը բարձրաձայն ասաց.

— Ինձ էլ է զզվացրել...

Լռեցին: Խպշտում էին: Գնչուն դողում էր հացի ու շչիի բույրերից: Սառած ձյունը շպրտելով շեմին, խոպոտաձայն ասաց.

— Ուրեմն, իմ մասի՞ն էր խոսքը:

— Հենց քո մասին:— Օվսեյը գդալը դրեց ցած:— Յոթ ամիս է հացս ես ուտում, բայց թե ով ես, սատանան գիտի... Ձեզ նմանները շատացել են, առանց անուն, առանց բան, տնետուն են ընկել...

— Էդ ո՞նց թե առանց անուն... Քեզնից բան գողացե՞լ եմ,— հարցրեց Գնչուն:

— Ես ինչ իմանամ:

— Էդ է, որ չես իմանում...

— Կարող է, լավ կլիներ, գողանալիր: Ինչի՞ համար երկու ոչխարս սատկեց: Ինչի՞ց են կովերը դմբրած, կաթը հոտել է, բերան առնել չի լինում... Ինչի՞: (Օվսեյը հակվեց սեղանի եզրին, բռունցքով զարկեց սեղանին:) Մեր կնամիք ամբողջ աշուն ինչի՞ց փորհարիք եղան... Ինչի՞: Աչքով տվեցին: Սև աչքի տված էր...

— Հերիք դիվուտես, Օվսեյ,— հոգնած ասաց Գնչուն,— խելոք էլ մարդ ես:

— Լսեցի՞ր, Կոնստանտին, ինձ անպատվեց: Դիվուտե՞մ...— Օվսեյը ելավ սեղանից, մատները խաղացրեց, բռունցք անելով: Գնչուն կովելու պետք չուներ, եղբայրներն ուժեղ էին, կուշտուկուռ: Զգուշությամբ ելավ տեղից.

— Աչք մտնելով չեն սիրի, սիրելուց աչք կմտնեն... Մեջքս ծռեցի տունուտեղիդ վրա, Օվսեյ, շնորհակալ եմ... (Գլուխ տվեց:) Կուզես, վատ հիշի, ինձ համար մեկ է... Մենակ թե աշխատած փողս տուր...

— Էդ ի՞նչ փող,— Օվսեյը դարձավ եղբորը, անկենդան հայացքով վեհին հետևող տատին:— Չլինի՞ մեզ գանձ է պահ տվել: Թե՞ ես եմ պարտք արել իրենից:

— Օվսեյ, ասածուց վախեցիր, ամպական հիսուն կոպեկ, աշխատած երկուսուկես ռուբլիս տուր...

Այդ ժամանակ կատաղած Օվսեյը մոտեցավ, բղավեց.

— Քեզ փո՞ղ տամ: Էստեղից ողջ պրծնել չե՞ս ուզի: Ա... վատակ, ա՜ռ քեզ:

Բռնելով արմավի օձիքից, խփեց ականջին, վայրենաձայն բղավեց, ու եթե չկտանար Գնչուն, երկրորդ հարվածից սպանելու էր: Կոնստանտինը, եղբորը զսպելով, բռնեց նրա ցնցվող ուսերը, և Գնչուն օրորվելով դուրս եկավ: Կոնստանտինը հասավ նրան ու մեջքից հրելով, փողոց գցեց: Երկար նայում էր Գնչուն. իր միակ աչքով նրանց դարսպատին՝ ոռ կրակ չէր տա... «Լավ, սպասի, սպասի», ասաց չարագույժ: Ձեռքը տարավ այտի վրայով. արյուն էր գալիս: Կողքով մարդիկ էին անցնում, շրջվում էին ու ծիծաղում: Նա ցցեց գլուխն ու տրեխները թիթեռացնելով քայլեց ուր կողմի վրա...

9.

— Հուպ տուր, հուպ տուր, բոթիր...

— Էս ո՞ւր է վազում ժողովուրդը:

— Մարդ են վառելու, գնում են, նայեն...

— Մահապատիժ է, հա՞:

— Բա հո ինքը չի՞ ուզել՝ բան ասեցիր...

— Կան, որ իրենք են իրենց վառում:

— Դրանք հավատի համար են անում, աղանդավոր են...

— Իսկ սրա՞ն՝ ինչի համար:

— Գերմանացի է...

— Փառքդ շատ լինի, ասուված, ուրեմն, դրանց էլ հասան...

— Վաղուց էր պետք էդ անիծված ծխելու խոտ ծխողներին... Տոգեցին մեր քրտինքը ծծելով:

— Տես, ծուխը բարձրացավ արդեն...

Գնչուն էլ գնաց գետափ, ուր մոխրակույտերի վրա խոնվել էին արվարձանաբնակները: Վաղուց աչքովն էին ընկել երկու հոգի՝ իր պես անտուն անտիրական: Աչքը չէր կտրում նրանցից. միգուցե ուտելու մի հնար լիներ: Ըստ երևույթին, տանջված-չարչարված մարդիկ էին: Մեկը, որ չեչոտ էր, լաթի կտորով կապել էր այտը, շիկացրած երկաթով դրոշմված խարանը քողարկելու համար: Հուդա էր անունը: Մյուսը համարյա երկուստակված էր, հենվում էր երկու կարճ ցուպերի վրա, բայց վարժ քայլում էր, մորուքն առաջ տնկած: Զվարթ աչքեր ուներ: Կարկատած արմյակի վրայից խսիր էր գցել: Օվդոկիմ էին ասում: Սա շատ դուր եկավ Գնչուին: Եվ Օվդոկիմը շուտով նկատեց, որ իրենց շուրջը պտույտ է տալիս թխամաշկ ու միաչքանի մեկը, ջնջված քիթումոութով: Կոթնեց ցուպերին ու սիրալիր ասաց.

— Բան չունենք, որ օգտվես, ալ հոգի, ինքներս ենք գողանում...

Բերանը ծռմռելով, ատամների արանքից Հուդան շպրտեց.

— Մեկն էլ էր էապես մոտ-մոտ անում գաղտնի վարչությունից, սառցածակը գլորեցինք...

«Էհե՜,— մտածեց Գնչուն,— պրանք սրտոտ մարդիկ են...»: Ու ավելի շատ ուզեց նրանց հետ լինել...

— Անիծած մահը չի գալիս, ինձ տանի,— ասաց նա, ճպճպացնելով եղյամակալած արտևանունքները,— ուրեմն, մի կերպ պիտի ապրեմ... Տղերք, ինձ էլ վերցրեք ձեր հետ... Միասին ավելի հեշտ կլինի...

Հուդան նորից ատամների արանքից նետեց Օվդոկիմին.

— «Թաքուն աչք» հո չի՞: Հը՞:

— Չէ, չէ, երևում է,— երգեցիկ ասաց Օվդոկիմը և գլուխը շրջելով՝ վարից վեր նայեց Գնչուին...

Այլևս ոչինչ չխոսեցին: Ներքևում, սառույցի վրա սապոգները դոփդոփում, թաթմաններն էին իրար զարկում ատրելեցները:

Նրանք շրջապատել էին լիքը փայտ լցրած, մի կերպ սարքված հարթակը: Կողքին տնկված էր հրապարակային մահապատժի սյունը, և ճերմակ ծուխ էր արձակում խարույկը, որի մեջ երկաթն էր շիկանում: Ժողովուրդը սառել էր, պպզելով...

— Բերո՞ւմ են, բերո՞ւմ են... Հուպ տուր, սղմիր:

Քաղաքի կողմից երևացին հեծյալ դրագունները: Իջան սառույցի վրա: Նրանց ետևից սովորական սահնակով, մեջքները ձիուն արած, նստած էին գերմանացին ու մի աղջիկ՝ տղամարդու գլխարկով: Ապա գալիս էին հեծյալ բոյարինը, պպզատակացները, ատենավորը: Վերջում՝ մի հսկայական սև կաշեպատ ծածկասահնակ:

Ստրելեցները ետ քաշվեցին, ճամփա տալով եկողներին: Ատենավորն իջավ ձիուց: Ծածկասահնակը, տեղ հասնելով, կողքով կանգնեց, սակայն ոչ ոք չիջավ միջից... Բոլորն այդ ծածկասահնակին էին նայում՝ զարմացած մի շշուկ տարածվեց ժողովրդի մեջ...

Հարթակի ետևից հայտնվեց Եմելյան Սվեժնը, կարմիր գդակով, մտրակը ուսից կախ: Նրա օգնականները սահնակից ցած բերին աղջկան, ծնկներով խփելով քարշ տվեցին սյան մոտ, հագից հանեցին կիսամուշտակը և գրկել տալով սյունը, կապեցին ձեռքերը: Ատենավորը բարձրաձայն կարդում էր բաց արած թղթագալարը, ճոճելով կնիքները: Սակայն նրա ձայնը կսկծան սառնամանիքին հագիվ էր լսվում, ընդամենը հասկացան, որ աղջիկը Մաշկա Սելիֆոնտովան է, գերմանացին՝ Կուլկինը, կամ էլ մի ուրիշ տեսակ... Սահնակի միջից երևում էր նրա լերկ ծոծրակն ու վեր քաշած ուսերը:

Եմելյանի ձիակերպ դեմքն անշարժ ծպտում էր: Անշտապ մոտեցավ սյանը: Մտրակն իջեցրեց: Ու միայն հատու սուլոց լսեցին, կարմիր ու շեղակի սպի տեսան աղջկա մեջքին... Նա խոնկորի պես էր ծղրտում: Հինգ հարված հասցրեցին նրան, այն էլ կես ուժով: Ձեռնակապերն արձակեցին, ճոճաքալլ մոտեցրեցին խարույկին, ու Եմելյանը, կրակի միջից երկաթե խարանը հանելով, սեղմեց նրա այտին: Բղավեց, նատեց ու թավալ եկավ: Վեր հանեցին, հագցրեցին, սահնակը դրեցին ու դանդաղ տարան Մոսկվա գետի վրայով, դեպի մենաստան:

Ատենավորը դեռ կարդում էր հրամանագիրը: Անցան գերմանացուն: Նա իջավ սահնակից, կարճլիկ ու պնդակազմ, ինքը մոտեցավ հարթակին: Հանկարծ դողացող ափերը միացրեց, բարձրացրեց ուռած ու մազակալած դեմքը և սկսեց բլբացնել, բլբլացնել շան որդու գերմանացին, բարձրաձայն լաց եղավ: Թևերից բռնեցին, քարշ տվեցին հարթակի կողմը: Այնտեղ Եմելյանը վրայից պոկեց հագուստը, մերկացրեց, պառկեցրեց, վարդագույն ճարպոտ մեջքին դրեց հերետիկոսական գրքերը և տետրերը, ներքևից իրեն պարզած խանձողով վառեց... Հրամանագրում այդպես էր ասված. գրքերն ու տետրերը վառել նրա մեջքին...

Ափից (ուր կանգնած էր Գնչուն) բղավեցին.

— Կուլկին, տաքացի...

Բայց այդ մեծապոռոշ ջահելի վրա թնդացին.

— Ձենդ կտրի, անամոթ... Քեզ տաքացնեին էդպես...

Մեծապոռոշը անմիջապես չքվեց: Չորս ծայրից կրակ տված հարթակից մոխրագույն ծուխ ելավ: Ստրելեցները կանգնած էին, նիզակներին հենված: Լուռ էր: Ծուխը դանդաղ երկինք էր բարձրանում...

— Ինքն ավելի շուտ կվառվի, ցախը թաց է...

— Գերմանացին՝ գերմանացի, բայց դե կենդանի վառվել... օհ, տե՞ր աստված...

— Ուսում է առել, տեսորակներ գրել, ու՝ էլքան մի բան...

Կաշեպատ ծածկասահնակի (հիմա բոլորը տեսնում էին) պատուհանիկից ծխին ու կրակի լիզող լեզուներին էր նայում մեղմալ մի դեմք, որ կարծես վաղեմի սրբապատկերից իջած լիներ...

— Տես է, աչքերը կրակվում են, մարդ վախենում է...

— Պատրիարքին սազական չէ մահապատժի գնալը...

— Մարդկանց վառում են հավատի համար... Է՛հ, հոգևոր հովիվնե՞ր...

Այս մեկը Օվդոկիմն ասաց՝ զրնգուն, աներկյուղ... Նրա մոտ կանգնած բոլոր մարդիկ ցրվեցին, չհեռացան միայն Հուդան ու Գնչուն... Ցուպերը թխկացնելով, Օվդոկիմը շարունակեց.

— Հետո՞ ինչ, որ հերետիկոս է... Ինչպես կարողանում, էդպես էլ հավատում է... Ասենք, մեր պես իրեն հարմար չէ... Ու դրա համար պիտի վառվե՞ս... Զարշարանքով ենք ապրում, տանջանքների մեջ...

Հսկայական խարույկը թշշում ու ճարճատում էր, կայծերն ու ծուխը ձագարաձև պտտվեցին: Ոմանք իրար տեսան բոցերի միջից, որ գերմանացին դեռ շարժվում է: Ծածկասահնակը վարգասլաց հեռացավ: Ժողովուրդը դանդաղ ցրվում էր: Հուդան կրկնում էր.

— Օվդոկիմ, գնանք...

— Չէ, չէ, տղերք... (Նրա աչքերը ծիծաղում էին, բայց մաքուր, ասես բաղնիքից ելած կարմրած դեմքը լացող էր, ցնցվում էր այծի մորուսը...) Ճշմարտություն մի փնտրեք... Հոգևոր հովիվներն ու կառավարիչները, ոսկի զնգացնող մաքսավորները՝ բոլորն իրենց կատաղությանն շուրջառներն են հագել... Փախե՛ք, տղերք, տանջված ու չարչարված, գելարանի վրա անդամալույծ դարձած մարդիկ, անդարձ փախեք թավուտ անտառները...

Հետո միայն հաջողվեց տանել Օվդոկիմին՝ երեքով մտան Ընրբանցքի պանդոկը:

10.

Վերջապես Գնչուն վերցրեց գդալը. ձեռքը դողում էր, երբ բերանին մոտեցրեց հացի կտորի վրա կաթկթացող անյուղ շչին: Շատ էր վախենում, որ իրեն չեն տանի պանդոկ, և ճանապարհին

կլանքից էր տրտնջում, աչքերը սրբում թաթմանով: Օվդոկիմը, առանց խոսելու, վազում էր ցուպերի վրա, ուտիճի պես: Դուռն մոտ հանկարծ հարցրեց.

— Գողություն անել գիտե՞ս:

— Թե խմբովի եղավ, թեկուզ անտառ կմտնեմ, լախտը ձեռիս...

— Մի տես է՞, ինչ քաջն է...

— Ի՞նչ ես կարծում, մենք ո՞վ ենք,— հարցրեց Հուդան:

Գնչուն կարկամեց. «Ուզում են ինձնից ազատվեն...»: Տրտմած նայեց ծուված դարպասին, կեղտաջրերից սառցակալած թմբին, խրսիրով ծածկված դռանը, որտեղից այնպիսի կուշտ հոտեր էին գալիս, որ գլուխը պտտվեց: Ցածրաձայն ասաց.

— Ծատ արդար մարդիկ եք... Հետո ինչ, որ գողանում եք, ձեր մեղքով չի, կարիքից է... Ժողովրդի կեսը հիմի անտառ է փախչում... Ինձ մի քշեք, պատվելի մարդիկ, մի բան տվեք ուտեմ...

— Մենք, պարոնիս ասեմ, նայած ժամանակ՝ խղճով ենք, նայած ժամանակ էլ՝ խիղճ չունենք,— ասաց Օվդոկիմը:— Տես հա՞,— և երկու ցուպն առնելով ձախ ձեռքը, սպառնաց.— Թե մեզ ես միացել, ետ չդառնաս... Հուդա, այ հոգիս, գործ արե՞լ ես:

Հուդան գրպանից հանեց քսակը, պղնձյա դրամներ լցրեց բոի մեջ: Երեքով հաշվեցին գողացածը: Օվդոկիմն ուրախ-ուրախ ասաց.

— Հավքը ոչ ցանում է, ոչ հնձում, նրան աստված է կերակրում: Մեզ շատ բան պետք չի՝ մենակ ուտելու... Արի մեզ հետ, միաչքանի...

Նստեցին պանդոկի ամենախորքի սեղանին, ուր հագիվ էր հասնում վանառասեղանի ճարպամոմի լույսը: Քիչ մարդ կար, մի քանիսը հարբած աղմկում էին, փափկած կիսամուշտակների օձիքներն արձակած, ոմանք էլ քնած էին նստարանների վրա: Օվդոկիմը մի կճուճ շչի ուզեց ու կես շտոֆ օղի: Երբ բերեցին, գդալը սեղանին զարկեց.

— Միաչքանի, կեր, աստծու տվածն է...

Խմեց շտոֆից, ծամեց արագ-արագ, նապաստակի պես: Աչքերը ծիծաղում էին.

— Ձեզ մի պատմություն անեմ, տղերք... Լսո՞ւմ եք, թե չէ: Երկու մարդ էին ապրում, մեկն ուրախ, մեկելը տխուր... Էս մեր ուրախը չքավոր էր, ունեցած-չունեցածը բոյարները, ատենավոր ու դատավոր խլել էին, արարմունքների համար չարչարել, ցցի էին հանել ու մեջքը կոտրել, կուցած էր մանգալիս... Լավ... Իսկ տխուրը բոյարի զավակ էր, ունևոր ու ժլատ... Ծառաները սովածությունից փախել էին մոտից, մոլախոտը բակը բռնել էր... Մեն-մենակ օրուգիշեր նստած էր իր սնդուկի վրա, մեջը լիքը ոսկի ու արծաթ... Էդպես էլ ապրում էին: Չքավորը ոչինչ չուներ. ցողով կլվացվեր, քոթուկի առաջ կանգնած խաչ կաներ երեսին, ուտել որ ուզենար, կգողանար, կամ էլ ձեռք կմեկներ. չունևոր մարդիկ միշտ էլ տալիս են բերանից կտրածը՝ նրանք հո գիտե՞ն... Ու մանգ կգար, հանաքմասխարություն կաներ, օրը կանցներ: Տխուրն էլ մի գլուխ կմտա-

ծեր, թե ոնց անի, որ փողերից չզրկվի... Ու տղերքիս ասեմ, մեռնելուց շատ էր վախենում... Հարուստների համար մեռնելը շատ վախենալի է... Ու ինչքան շատ է գանձը, էնքան չեն ուզում... էլ փթանց մոմեր դրեց, էլ նկարի շրջանակ նվիրեց եկեղեցուն, կարծում էր, թե աստված մահը իր գլխից կհեռացնի...

Օվդոկիմը ծիծաղեց, մորուսը սեղանին քսմսելով: Գդալը բռնած երկար ձեռքը պարզեց, շշի վերցրեց, նապաստակի պես ծամեց ու նորից.

— Ունևորն էլ հենց էն մարդն էր, որ տանջել էր չքավորին, դարձրել մուրացկան... Մի անգամ էլ էս ուրախը դրա տունը մտավ՝ գողության, հետը մահակ ուներ... Դես ընկավ, դեն ընկավ պենյակներում, մեկ էլ տեսնի, հարուստը քնած է թախտին, անդուկն էլ թախտի տակ է: Անդուկը չնկատեց, բռնեց հարուստի մազերից. ժամանակին ինձ մաքուր տկլորացրել ես, ասեց, հիմի էլ փող տուր, գլուխս պահեմ... Հարուստը համ մահից էր վախենում, համ էլ փողն ափսոսում՝ չկա ու չկա, ասում էր... Չքավորս մահակն առավ ու տուր թե կտաս դրա կողերին ու քիթ-բերանին... (Հուդան ատամները մերկացրեց ու հոհոաց հաճույքից:) Հա, ուրեմն, ծեծեց, մինչև որ իր ծիծաղն էլ եկավ... Լավ, ասեց, վաղը գիշեր կգամ, մի լիքը գլխարկ փող պատրաստիր...

Հարուստը հո անխելք չէր, գրեց ցարին, ցարը դրան պահակ ուղարկեց... Բայց մեր չքավորը ճարպիկ մարդ էր... Մի հունարով պահակին խաբեց, մտավ հարուստի տուն, մազերից բռնեց. հը՞, փողերը պատրաստե՞լ ես: Հարուստը դողդողաց, երդում պատառ եղավ՝ չկա ու չկա... Ուրախն էլ սկսեց քոթակել մահակով, հարուստի շունչը բերանը բերեց... Լավ, ասեց, մեկել գիշեր կգամ, հիմի արդեն մի անդուկ փող պատրաստիր...

— Արդար գործ է,— ծիծաղեց Գնչուն:

— Արդեն քոթակը լավ տվեց,— ծիծաղում էր Հուդան:

— Հա, ուրեմն... Էս անգամ ցարը մի գունդ զինվոր ուղարկեց՝ հարուստին պահապան... Ի՞նչ աներ: Բայց շատ խորամանկ մարդ էր ուրախը: Ստրելեցի շոր հագավ, եկավ հարուստի բակն ու ասեց. «Պահապաններ, էս ո՞ւմ հարստությունն եք պահպանում...»: Պատասխան տվեցին, թե «Ցարի հրամանով, հարուստի...»:— «Ու դրա համար ձեզ շա՞տ փող են տվել...»: Զինվորները ձեն չհանեցին... «Համա թե անխելք եք հա՞,— ասեց ուրախը,— ուրիշի հարստությունը անփող պահպանում եք, հարուստն էլ ղեզին նստած շան պես կատկի իր գանձերի վրա, ձեզ էլ բան չի մնա...»: Ու էնքան կատաղեցրեց դրանց, որ զինվորները գնացին, բոլոր կողպեքները ջարդեցին, նկուղներից, պահած տեղերից ուտելիք-խմելիք հանեցին, կերան խմեցին, ու, ասելո՞ւ բան է, շատ սրտնեղվեցին, գիշերով դուռը ջարդեցին, ու ի՞նչ տեսնեն. հարուստը գնդրտում է անդուկի վրա՝ ծեծված, տակը կեղտոտած: Էստեղ մեր խորամանկ ստրելեցը բռնեց դրա մազերից ու ասեց. «Իմ ունեցածը որ խնդրեցի, չտվեցիր, հիմի ունեցած-չունեցածդ կտաս...»: Ու տվեց դրան

զինվորների ձեռը, ու նրանք կտոր-կտոր արեցին հարուստին... Էկ մեր ուրախն էլ ինչքան իրեն պետք էր՝ գլուխը պահելու համար, առավ ու բեռը թեթև գնաց...

Օվդոկիմենց սեղանի մոտ մարդիկ էին գալիս-նստում, լսում ու հավանություն էին տալիս: Մեկը, որ հարբած էր, թե խելքը տեղը չէր, շարունակ քիթն էր քաշում, ձեռքերը տարածում, բռնում խոշոր ու լերկ ճակատը... Երբ թողեցին, որ խոսի, այնքան շտապեց, որ թուքը շաղ եկավ, բան հասկանալ չեղավ... Մարդիկ ծիծաղեցին.

— Կուզման բոյարների մոտ էր գնացել... Խելքը գլուխը բերեցին քամակի կողմից...

Վանառասեղանի վրայի մոմի այրուկը հանեցին, որ լավ տեսնեն ու ծիծաղեն... Կուզման կնատ էր, փունջ-փունջ մորուքով դեմքը լրիվ ուռած էր, ըստ երևույթին, խմելուց ուշքի չէր գալիս խեղճը: Հագին մենակ շալվարն էր ու արձակ շապիկը:

— Կրծքի խաչն էլ է խմելու տվել:

— Մի շաբաթ է, էստեղ գցած է:

— Բա ո՞ւր գնա, բոբիկ, էս սառնամանիքին...

— Իմ համաժողովրդական ցավը ա՛յ էս է,— շալվարը բռնած, բղավեց Կուզման:— Բոյարին Տրոյեկուրովի ձեռքի գործն է:— Արագ մերկացավ ու ցույց տվեց կապույտ սպիներով ու կապտուկներով ծածկված, ուռած հետույքը... Բոլորն ապշահար եղան: Անգամ օղեվաճառը մատներով նորից մաքրեց մոմի այրուկն ու կոացավ վանառասեղանի վրա: Ծալվարը քշտելով, Կուզման շարունակեց.

— Դարբին Կուզմա Ժեմովին, սուրբ նահատակ Վարվառայի եկեղեցու մոտի դարբնոցը գիտե՞ք... Տասնհինգ տարի էնտեղ եմ եղել... Դարբին Ժեմովը: Իմ սարքած կողպեքները բացող գող դեռ չէր ծնվել... Իմ սարքած մանգաղները հոյազան էին հասնում: Ո՞ւմ սարքած մանգաղն է: Ժեմովի... Իմ սարքած զրահը գնդակ չի ծակել... Ո՞վ էր ձի պայտում: Մարդկանց ատամներն ո՞վ էր քաշում: Ժեմովը... Էդ գիտեի՞ք:

— Գիտենք, գիտենք,— ծիծաղելով բղավեցին ի պատասխան,— պատմությունդ արա...

— Ուրիշ բան չգիտեիք, որ Ժեմովը գիշերները քուն չուներ... (Նա բռնեց լերկ գանգը:) Ժեմովի խելքն ուրի՞շ խելք է: Ուրիշ տերությանմեջ ինձ երկինք կհանեին... Բայց էստեղ, էս իմ խելքով խոզ պիտի արածացնեմ... Է՞հ, շատ կհիշեք... (Սեղմելով մեծ բռունցքը, սպառնաց քրտնած, քառապակի պատուհանին, ձմեռվա գիշերին:) Ձեր գերեզմաններին տատասկ կբուսնի... բայց Ժեմովին կհիշեն...

— Համբերի, Կուզմա, քեզ ինչի՞ համար են ծեծել:

— Պատմի, չենք ծիծաղի...

Զարմացած, ասես հենց նոր նկատելով, զննեց իրեն շրջապատած փայլող քթերը, գզուզ մորուքները, բաց բերանները՝ պատրաստ քրքջալու, թամաշայի ծարավի տասնյակ աչքերը... Ըստ երևույթին, չորսբոլորը լողում ու խառնվում էր նրա աչքերում...

— Տղերք... Մի պայմանով, որ չեք ծիծաղի... Ախր հոգիս է ցավում...

Երկար փնտրելով, քսակից հանեց մի ծալված թուղթ: Փռեց սեղանին: (Վաճառասեղանի մոմը բերեցին:) Եղունգով սեղմեց թերթը, որի վրա երկու թև էր նկարած, չղջիկի թևերի պես, հանգույցներով ու լծակներով: Ուռած թշերը փքվել էին:

— Հրաշք ու զարմանք մեխանիկա է,— սկսեց գոռոզաբար,— փայլարից թևեր, ամեքի երկարությունը երեք արշին, լայնքով տասներկու արշին... Չղջիկի թևերի պես թափահարվում են լծակներով՝ ոտքերի ու ձեռքերի աշխատանքով... Հաստատ գիտեմ, որ մարդը կարող է թռչել: Փախչելու եմ Անգլիա... Էնտեղ եմ թևերը սարքելու... Անվնաս ցած կթռչեմ զանգակատնից... Մարդը արագիլի պես պիտի թռչի: (Դարձյալ սպառնաց թաց պատուհանին:) Տրոյեկուրո՛վ, սխալվեցի՞ր, բոյարին... Ասված մարդուն սողացող ճիճու է սարքել, ես կասլորեցնեմ թռչել...*)

Ձեռքը պարզելով, Օվդոկիմը սիրով թփթփացրեց նրա ուսը:

—Հերթով պատմիր, այ հոգի, քեզ ո՞նց են նեղացրել:

Կուզման խոժոռվեց, ֆռֆռացրեց:

— Ծանր սարքեցի, մի քիչ սխալվեցի... Չքավոր մարդ եմ... Փոքր թևեր էի սարքել ձեռս ընկածով՝ կեղևից, կաշվից... Տանս կտրից թռա քամուն հակառակ, մի հիսուն քայլ քշեց... Բայց գլուխս արդեն իմը չէր... Սովորեցրին, ես էլ գնացի Ստրելեցական ատյան ու գոռացի՝ օգնեցե՞ք... Բռնեցին, ու պիտի ծեծեին հաստատ... Չէ, ասեցի, մի ծեծեք, ինձ տարեք բոյարինի մոտ, պետական գործ ունեմ... Տարան... Նստել էր սատանան, Տրոյեկուրովը, քիթ-մռութը երեք օրում լավոտել չէր լինի... Ասեցի, որ կռունկի պես թռչել կարող եմ, մի քսանհինգ ռուբլի փող տվեք, փայտար տվեք, ու վեց շաբաթ հետո կթռչեմ... Չէր հավատում... Ասեցի, մի պաշտոնավոր ուղարկեք տունը, փոքր թևերը ցույց տամ, մենակ թե դրանցով թագավորի առաջ թռչելը հարմար չի: Դես ընկավ, դեն ընկավ, ճար չուներ, պահակներն ամեն ինչ լսել էին... Անպատվեց, մազերս քաշեց, հրամայեց Ավետարանը պաչել, որ չեմ խաբի: Տասնութ ռուբլի տվեց: Ու ես թևերը ասածիցս էլ շուտ սարքեցի... ծանր դուրս եկան: Հետո արդեն էստեղ, գինետանը հասկացա... Հարբած էի, ու հասկացա... Փայտարով չի լինի, մագաղաթ է պետք, փայտի շրջանակով... Տարա Կրեմլ, փորձելու... Ու էդպես էլ չթռա, քիթ ու բերանս ջնջխեցի... Տրոյեկուրովին ասեցի, թե փորձը չստացվեց, հինգ ռուբլի էլ տվեք, ու հետո գլուխս կտրեք, թռչելու եմ... Բոյարինը ոչնչի չհավատաց, գոռում էր՝ գո՞ղ, խաբեբա՞: Հերետիկո՞ս: Ատոծուց խելացի ես ուզում լինել... Հրաման տվեց երկու հարյուր հարված, հաստ ճիպոտով... Երկու հարյուրին էլ դիմացա, ախպեր տղերք, ատամներս կրճտացնելով... Ու հրաման էլ տվեց ծախսված տասնութ ռուբլին վերադրել ինձ-

*)Այստեղ նկարագրվածը տեղի է ունեցել Մոսկվայում, 1694 թ. (ծան. Ա. Ն. Տոլստոյի):

նից, ծախել դարբնոցը, գործիքներս ու տունս... Հիմա մերկ ու տկլոր ի՞նչ անեմ, լախտն առնեմ, անտա՞ռ մտնեմ:

— Էդ է մնացել, տանջված մարդ,— ասաց Օվդոկիմը ցածրաձայն, հստակ:

Կուզմա Ժեմովը միացավ Օվդոկիմի խմբին: Խառնաշուկայում վալենկաներ ու մի հին արմյակ առան նրա համար: Հիմա չորսով էին շրջում Մոսկվայում՝ շուկաներում, հանրային բաղնիքներում, կիտայ-գորոդի նեղլիկ փողոցներում: Հուդան գրպանահատություն էր անում: Գնչուին սովորեցրին բիբը վեր քաշել, որ խնձորակը կոպի տակից սարսռազդու երևա, մեկ էլ աղիողորմ ողբալ... Կուզմայի վզից պարան գցեցին, ու Օվդոկիմը նրան ման էր ածում, որպես խելագարի ու ընկնավորի. «Հացի փող տվեք խելագարին, ճամփից քաշվեք, ճամփից քաշվեք, այ հոգիներ, թե չէ վրա կարծնի...» Օրվա հացի, մեկ-մեկ էլ օղու փողը հանում էին: Շատ էին չարչարվում, ավելի շատ էր վախը, որովհետև թագավորի հրամանով իրենց նմաններին հիմա բռնում էին ու տանում Քրեական ատյան:

Մեծ պասը վերջանում էր: Մոսկվայի վրա ավելի ու ավելի էր բարձրանում գարնանային արևը: Կաթել ու հալել էր սկսվել արևոտ տեղերում, գարշահոտությունը բարձրացել էր: Թրիքախառն ձյունն այլևս չէր ճզճզում սահակողների տակ: Մի երեկո պանդոկում Օվդոկիմն ասաց.

— Տղերք, ժամանակ չէ՞ ճամփա ընկնենք... Էստեղ թողնելու մեկը չունենք... Կթողնեք մենակ թմբերին նայեմ... Գնանք ազատ ման գանք...

Հուդան ուզեց վիճել.

— Քիչ ենք ու առանց զենք, անտառներում սովից կսատկենք...

— Մենք էլ,— ասաց Օվդոկիմը,— գնալուց առաջ մի կատաղած գործ կբռնենք... (Սարսափով նրան նայեցին:) Ինչ մեզ պետք է՝ ձեռք կգցենք: Մեր քաշած տանջանքի դիմաց մի մեղք էլ ավել կանենք, շատ չի լինի... Շատ էլ թե եղավ, ինչ արած. ուրեմն, Սուրբ գրքում էլ արդարություն չկա... Չվախենաք, ճտերս, ամեն ինչ իմ վրա կվերցնեմ:

11.

Գարնանից սկսվեց՝ կատվի խաղն ու մկան մահը: Հայտարարվեց երկու թագավորների միջև պատերազմ. լեհական ու գահանիստ քաղաք Պրեշբուրգի թագավորի: Պրեշբուրգյան արքային անցան ռազմախաղի զորքերը, Բուտիրյան և Լեֆորտի գնդերը, լեհական արքային՝ ստրելեցյան լավագույն զորամասերը. Ստրեմյաննին, Սուխարևի, Ցիկլերի, Լրովկովի, Նեչաևի, Դուրովի, Նորմացկու, Ռյազանովի գնդերը: Պրեշբուրգի արքա էր կարգվել Ֆյոդոր Յուրևիչ Ռոմոդանովսկին, որ նաև Ֆրիդրիխուս էր կոչվում, իսկ լեհականը Իվան Իվանովիչ Բուտուրլինն էր՝ հարբեցող, չարամիտ ու կաշառակեր, բայց զվարճանքների ու աղմուկ-աղաղակի մեջ բանիմաց մեկը: Նրա գա-

հանիստը դարձրեցին Սոկոլնիչի ագարակը Սեմյոնովսկոյե դաշտում:

Սկզբում կարծում էին, որ Պյոտրի նախկին կատակներն են: Բայց օրը օրի վրա նոր հրամանագրեր էին գալիս, մեկը մյուսից տագնապալի: Բոյարները, օկոլնիչիները և պալատականները երկու թագավորների մոտ պալատական պաշտոնների էին անցնում: Պյոտրը սկսել էր խաղ անել անվալելուց: Շատ բոյարներ դառնացան. տոհմական գրառումների մեջ դեռ նման բան չէր եղել, որ պաշտոններով հանձնաբներ անեին... Գնում էին թագուհի Նատալյա Կիրիլովնայի մոտ և զգուշորեն տրտնջում որդուց: Նա տարածում էր փամփլիկ ձեռքերը, ոչինչ չհասկանալով: Լև Կիրիլովիչը բարկացած ասում էր. «Իսկ մե՞նք ինչ կարող ենք անել, հրամանագիր է եկել մեծն արքայից կնիքներով... Ինքներդ գնացեք նրա մոտ, խնդրեք ետ վերցնի...»: Պյոտրի մոտ գնալուց զգուշանում էին: Մտածում էին, թե մի կերպ կանցնի-կգնա... Բայց չէր անցնում: Բոյարներից ոմանց տներն անբնակելիորեն զինվորներ խուժեցին, ուժով կարգադրեցին պալատական զգեստները հագնել, տարան Պրեոբրաժենսկոյե, խեղկատակային ծառայության... Ծեր իշխան Պրիիմկով-Ռոստովսկու ոտքերը թուլացան: Ոմանք փորձեցին հիվանդ ձևանալ՝ ապարդյուն: Թաքնվելու տեղ չկար: Ստիպված էին ներկայանալ խաղք ու խայտառակության...

Հեռվից երևում էին Պրեշբուրգի գերանաշեն ութանկյուն աշտարակները, թնդանոթներ շարած ճիմապատ տափարակները, չորս դին սփռված սպիտակ վրանները, և ռուս մարդն այստեղ խելագարվել կարող էր: Մի տեսակ անհեթեթ երազ լիներ կարծես. խաղ էր, թե՝ ոչ, ամեն ինչ կարծես իսկականից լիներ: Նախշած վրանում, ոսկեզօծ գահի վրա, մորեգույն ամպհովանու տակ փռված էր Ֆրիդրիխուս արքան. գլխին պղնձյա թագ, ներմակ ատլասե կափտանը զարդարված էր ասողերով, վրայից նապաստակի մորթուց թիկնոց, բուֆորտներին զնգզնգուն խթաններ, ատամների արանքում՝ ծխամորճ... Առանց կատակի ճշմարիտ աչքերն էր շողացնում կատաղած: Նայում ու տեսնում էին, որ Ֆյոդոր Յուրևիչն է: Թքել չէր լինի: Դումայական ազնվական Զինովևը նողկանքից թքեց մի անգամ, նույն օրը գլուղական սայլով աքսոր ճամփեցին նրան, պատվազուրկ անելով... Նատալյա Կիրիլովնան ստիպված էր անձամբ գնալ Պրեոբրաժենսկոյե, խնդրելու, որ ներեն ու ետ բերեն...

Իսկ Պյոտր ցարը ամենևին պաշտոն չուներ՝ զինվորի կափտանով էր. այստեղ մնում էր միայն ձեռքերը տարածել: Մոտենալով Ֆրիդրիխուսի գահին, չոքում էր մի ծնկի վրա, իսկ այդ դժոխքի թագավորը մեկ-մեկ բղավում էր նրա վրա, ասես հասարակ մի մարդ լիներ: Բոյարներն ու օկոլնիչիները նստած մտածում էին խեղկատակի այդ պալատում, դեսպաններ ընդունում, պրեշբուրգյան հրամաններ արձակում, ամոթից կարմրելով... Իսկ երեկոները՝ խնջույք ու գինարբուք Լեֆորտի պալատում, ուր իշխում էր երկրորդ գիշերային տերությունը, ում նայելն իսկ խայտառակություն էր. անաստված Միկիտկա Զոտովը, ամենախեղկատագույն իշխան-պապը կուկույական:

Հետո, ըստ երևույթին, լիակատար ավերածության համար, նզովյալ օտարերկրացիների հորդորներով, Մոսկվայից այստեղ բշեցին շուրջ հազար ատենավոր ու օգնական, առավել երիտասարդներին բերեցին առյուծներից, զինեցին, ձիերը նստեցրին, ռազմական գործ սովորեցրեցին անխնա: Ֆրիդրիխուսը Դումայում ասաց.

— Շուտով բոլորին կհասնենք... Հերիք եղավ ուտիճների պես ճեղքերը մտնեն ու նստեն: Բոլորը մեզ մոտ զինվորական խաշիլը պիտի ուտեն:

Դռան մոտ կանգնած Պյոտրը (արքայի ներկայությամբ չէր համարձակվում նստել) բարձրաձայն ծիծաղեց այդ խոսքերի վրա: Ֆրիդրիխուսը մոլեգնած զնգացրեց խթանը նրա վրա, ցարը փակեց բերանը... Լաց լինել էր հարկավոր, բոլոր մեղքերը հիշատակելով, աղոթք անելով, միասնաբար հարկ էր ցարի ոտքն ընկնել. «Թոգրու մեր գլուխները, տանջիր, գազանություն արա, եթե առանց զվարճանքի չես կարող... Բայց դու, բյուզանդական կայսրերի ժառանգդ, այս ի՞նչ անդունդ ես քարշ տալիս ռուսաց հողը... Նեռի ստվե՞րը չէ արդյոք քո թիկունքում կանգնած...»: Բայց դե, սիրտ չարեցին, չկարողացան ասել:

Նույնպիսի պալատ ուներ և լեհական արքան՝ Վանկա Բուտուռլինը Սեմյոնովսկում: Բայց գոնե այնտեղ կոտրատվելու հարկ չկար, հանգիստ էր ծառայությունը. բոյարներն ու օկոլնիչիները, հորինովի Դումայում պատերի տակ դրած թախտերին նստած, հորանջում էին թևքերի մեջ, մինչև մթնշաղը կապտին կտար պատուհանների մեջ, ապա գնում Մոսկվա, գիշերելու: Արքան՝ Կայեն Վանկան, չարությունից ու մասխարությունից փորձեց բոլորին լեհերեն խոսել ստիպել, բայց բոյարական համառությունը կոտրել չկարողացավ, հետո էլ ձանձրացավ նրանց հետ խաղեր խաղալուց, թողեց, որ ննջեն, ինչպես ուզում են:

Չէին հասցրել ընտելանալ, նոր փորձանք բացվեց. անտառները նոր էին կանաչել, Բուտուռլինը Ֆրիդրիխուս արքային դեսպան ուղարկեց, պատերազմ հայտարարելու, և գնդերով, գումակներով ու բոյարներին առած, շարժվեց դեպի Պրեշբուրգ: Ստրելեցները արշավի ելան չարագած՝ ցանքսի ժամանակ էր, թանկ էր յուրաքանչյուր օրը, իսկ այստեղ սատանան դրդել էր ցարին զվարճանալ:

Հրամայվել էր պաշարումը իրագործել բոլոր կանոններով՝ դաշտային ամրություններ ու զիգզագաձև խրամատներ, ստոլբեռնյա գաղտնանցքեր փորել, գրոհի ելնել: Պյուրին զվարճանք չէր: Վառոդ չէին խնայում: Հրասանդներից կավի կճուճներ էին արձակում, որոնք ռումբի պես պայթում էին: Ամրոցից գրոհողների վրա ցեխաջուր ու կոյաջուր էին լցնում, ծայրերին վառվող խծուծներով ձողաններ էին իջեցնում գլխներին, բուռ թրերով կռվում: Քիթուբերան վառվեց, աչքեր դուրս եկան, ոսկորներ ջարդվեցին: Իսկական պատերազմից պակաս էլ քիչ փող չարժեցավ դա: Ու այդպես՝ շաբաթներով, ամբողջ գարունը: Դաղարներին երկու արքաներն էլ խնջույքներ էին անում Պյոտրի ու նրա սիրեցյալների հետ:

Անցնում էր ամառը: Բուտուլինը, չգրավելով Պրեշբուրգը, երեսուն վերստ հեռացավ անտառի խորքն ու ռազմանամբար խփեց այնտեղ: Իր հերթին, Ֆրիդրիխսուը անցավ նրան պաշարելուն: Նման կյանքից կատաղած ստրելեցիները լրջորեն էին կռվում: Սպանվածներն արդեն տասնյակներով էին հաշվվում: Գեներալ Գորդոնի գլուխը ջարդվեց հրասանդից արձակված կավե կնճռով, հազիվ ոտքի կանգնեց: Պյոտրի դեմքն ու հոնքերը խանձվել էին, ու նա քայլում էր սպեղանիներ փակցրած դեմքին: Զորքի կեսը արնալուծ ընկավ: Եվ միայն երբ ամբողջ վառոդը ծախսվեց, զենքերը ջարդվեցին, գինվորների ու ստրելեցիների հագուստը ծվեն-ծվեն եղավ, երբ ճամբար եկավ Լև Կիրիլովիչը, նամակ բերելով մայր թագուհուց և արցունքն աչքերին աղաչեց այլևս փող չքամել, քանզի գանձարանն առանց այդ էլ դատարկ էր, այդ ժամանակ միայն Պյոտրը հանդարտվեց, և արքաները զորքերին հրաման տվեցին ցրվել արվարձանները:

Ժողովրդի մեջ շատ էին խոսում ռազմախաղերի մասին. «Խոսք չկա, էդքան փողը հասարակ խաղի վրա չէին ծախսի: Էստեղ ինչ-որ մեկի մատը խառն է: Պյոտրը դեռ ջահել է, անխելք, ինչ սովորեցնում են, էն էլ անում է... Մեկնումեկը, երևում է, էս գործի վրա հարբստանալ է ուզում...»:

12.

Ապրուստը վատ էր, տխրալի: Սոֆյայի օրոք դեռ սանձի պես մի բան կար, հիմա հզորներն ու ուժեղները հասարակ մարդու հոգին էին հանում: Դատավորներն անարդար էին դատում, կաշառակերությունն էր շատացել ու գանձագողությունը: Անհագին ժողովուրդ փախավ անտառները՝ թալանչիության: Ոմանք անիծյալ կյանքից հեռավոր խորքերն էին գնում, հյուսիսային գետերը, որ սապատների վրա չկրեն անթիվ-անհաշիվ վոյեվոդաների, կալվածատերերի, առևտրավորների ու փոխատենավորների, օղեվաճառների ու դատական կատարածուների՝ անօրեն ու անխիղճ արնախումների լուծը: Այնտեղ, հյուսիսում, ապրում էին ինքնագլուխ, գետի ու անտառի տվածն ուտելով: Բացատներն էին փորփրում, գարի ցանում: Դարավոր սոճիներից խրճիթներ էին սարքում, գերանակապ ու ընդարձակ, իրարից հեռու ընկած գյուղական հիմնավոր տներ կառուցում: Ընդմիշտ թողած վայրերից այս մենության մեջ էին բերում միայն հեքիաթներ, ասքեր ու թախծաժոր երգեր: Տնային ոգիների ու չարքերի էին հավատում: Աղոթք անելու էին գնում խստաբարո ճգնավոր-աղանդավորների մոտ, որոնք հաղորդություն էին տալիս հապալասին խառնած ալյուրով: «Նեռն է աշխարհ եկել,— ասում էին ճգնավորները,— մենակ նրանք են փրկվելու, ովքեր փախել են ցարից ու պատրիարքից...»:

Սակայն պատահում էր, որ այդ խորունկ խորքերը, աշխարհի ծայրն էին հասնում նեռի սպասավորները՝ ուղարկված փնտրելու անհնազանդներին ու հայհոյողներին: Այդ ժամանակ տղամարդիկ,

կանանց ու երեխաների հետ, թողնելով տուն ու անասուն, հավաքվում էին ճգնավորի ագարակում կամ եկեղեցում և կրակում գինվորների վրա, իսկ եթե կրակելու բան չէին ունենում, ընդամենը հայհոյում ու չէին ենթարկվում, նրանց ձեռքը չընկնելու համար ինքնակիզվում էին խրճիթում կամ եկեղեցում, բղավելով ու ողբաձայն երգելով...

Կարիքից ու ճնշումից անտառները՝ զողությամբ զբաղվելու փախած ընչազուրկները քիչ-քիչ քաշվում էին դեպի ավելի տաք ու առատ տեղեր՝ դեպի Վոլգա ու Դոն: Սակայն այդտեղ էլ դեռ ռուսական շունչը կար, տեղ էին հասնում ցարական հրամանագրերը և մոլեգնում էին ուղղափառ տերտերները, ու շատերը, գինված հրասակախմբերով, ավելի էին հեռանում՝ Դաղստան, Կաբարդա, Թերեքից այն կողմ, կամ թուրքական սուլթանի և Ղրիմի խանի հովանավորությունը խնդրում: Ազատ-արձակ հարավում ոչ թե անհայտ տնային ոգիների էին հավատում, այլ ավելի շատ կեռ թրի ու ընտիր նժույգի զորությանը:

Սիբելի չէր, ապրելու հարմար չէր ռուսական հողը՝ ամենադառը ճորտությունից ավելի վատթար, հազարավոր տարիների ընթացքում տրեխներից ոտնակոխ, գայրույթով փորփրված արորով, ավերված գյուղերի մոխրով ու չօրհնված գերեզմաններով ծածկված հողը: Թշվառություն էր, վայրենություն:

13.

— Հայրիկ, էս ի՞նչ էր: Ուրիշ զանգ էր...

— Ո՞նց թե ուրիշ զանգ...

— Օյ, հայրիկ, ուրիշ էր... Հիմի քիչ են զանգ խփում, էս մեկը... Հանկարծ մի բան չպատահի, չգնա՞նք...

— Համբերի, անխելք...

Իվան Արտեմիչ Բրովկինը (մարդիկ մոռացել էին, թե երբ էին Իվաշկա ասում նրան) կանգնած էր Մյասնիցկայայի հինավուրց եկեղեցու գավթում: Կապույտ մահուդով երեսած ոչխարենու նոր կիսամուշտակը փքվել էր վրան, վալենկաները կաղապարից երեկ էին հանված, բրդյա նոր վզնոցն այնպես էր փաթաթել վզին, որ օդուխը ցցվել էր: Կտրող քամի էր փչում, երեսը դաղելով: Սնագորշ փողոցով խոշոշացնելով քշում էր ձնափոշին, կիտում սառած անվակոսների մեջ: Անհագին ժողովուրդ կար խանութների մոտ, կանգնած լսում էին, թե ինչպես բոլոր եկեղեցիներում սկսեցին զարկել փոքր զանգերը՝ անհերդաշնակ ու խառնիխուռն, հենց այնպես, ասես բարկացած էին զնգացնում...

Լավ հագնված, գեղեցիկ ու կուշտ արտաքինով, իսկական հարուցացու դարձած Սանկա Բրովկինան (տասնութի մեջ էր արդեն), նորից քաշեց հոր թևը, որ գնան. Մոսկվայում հազվադեպ էր լինում, երբ էլ որ գալիս էր, սիրտը զարկում էր, վախենում էր ոտատակ գընալուց: Հոր հետ այսօր եկել էին անկողնու փետուր գնելու՝ օժիտի

համար: Հարսնախոսները շարունակ պտույտ էին տալիս Բրովկինի տան կողքերը, բայց Իվան Արտեմիչը քանի գնում, այնքան ավելի բարձրից էր բռնացնում: Այլոշկա որդին արդեն ավագ բոմբարդիր էր, ցարի աչքը մտած: Վոլկովների կառավարիչը հյուր էր գալիս Բրովկինների նոր ու հարուստ տունը: Իվան Արտեմիչը մարգագետիններ ու վարելահող էր վերցնում Վոլկովից կապալով: Փայտի առևտուր էլ էր անում: Վերջերս ջրաղաց էր կառուցել: Նրա անասունն առանձին նախիր էր դարձել: Թոչնեղեն էր տանում Պրեոբրաժենսկոյե, ցարի սեղանին: Ամբողջ գյուղը զոտկահաս գլուխ էր տալիս նրան, բոլորը պարտք էին, իսկ նա ոմանց գիջում էր, ոմանց՝ ոչ. տասնյակ մուժիկներ էին աշխատում նրա մոտ՝ ճորտագրերով:

— Հը՞, ինչի՞ ենք սպասում ախր,— ասաց Սանկան:

Այդ ժամանակ գավաթին մոտեցավ շիկամորուս տերտեր Ֆիլկան (տասը տարվա ընթացքում տերտերը գիրացել էր, այնպես որ մորթեպատ փարաջան քիչ էր մնում պատռվեր հագին): Մի նիհար ու կախքիթ տիրացու էր բերում, մեջքից հրհրելով.

— Գնա, ոչուփուչ քելեխակեր, գնա, Բեհեղզեբուղ...

Տիրացուն գայթեց, բռնեց կողպեքից, բաց անելով եկեղեցու դուռը: Ֆիլկան հրմշտում էր նրան.

— Ձեռքերդ դողում են, հարբեցող անտեր... Երեկ իրիկվանի՛ց, իրիկվանի՛ց, իրիկվանի՛ց եմ քեզ ասել, որ զանգերը տաս (խփում էր տիրացուի կորացած մեջքին)... Քո երեսից էլի պատասխան պիտի տամ...

Տիրացուն երկաթյա կիսաբաց դռնից ներս սողոսկեց ու բարձրացավ փոքրիկ զանգակատունը: Ֆիլկան մնաց գավթում: Իվան Արտեմիչը երկու ձեռքով, նոր թաթմաններով հանեց գլխարկը, ծանրումեծ գլուխ տվեց.

— Ոնց որ թե տոն լինի, հը՞: Աղջիկս ու ես կասկածում ենք... Ասա, տեր հայր, շնորհ արա...

Ֆիլկան աչքերը կկոցեց փողոցի երկայնքով, ձնափոշիով մորուքը խառնող քամու կողմը, բարձրաձայն, որ շատերը լսեն, ասաց.

— Նեռի գալուստն է:

Իվան Արտեմիչը տեղնուտեղը նստեց նոր վալենկաների վրա: Սանկան կուրծքը բռնեց, անմիջապես խաչակնքեց, գունատվեց, հասկացավ միայն, որ սարսափելի է: Մյասնիցկիյե դարպասի մոտից ամբոխն էր հորդում, ինչ-որ բաներ բղավելով: Սուլոց էր լսվում, վայրենի քրքիջ: Կանգնած ժողովուրդը լուռ նայում էր: Խանութները փակվում էին: Հայտնի չէ թե որտեղից սողեսող եկան ցնցոտիապատ մուրացկաններ, ընկնավորներ, մինչև գոտկատեղը մերկ, անքիթ մարդիկ... Ալեխանն մազերով մի կրոնախև, կրծքի շղթաներն ու կողպեքները թափահարելով, աղաղակում էր. «Նաբուգոդոնոսո՞ր, Նաբուգոդոնոսո՞ր»:

Իվան Արտեմիչի սիրտը փորն ընկավ: Սանկան կամացուկ, 22ընջաձայն ախուվախով հենվեց եկեղեցու վանդակապատ լուսամուտին, մշտավառ կանթեղի տակ: Անչափ զգայուն աղջիկ էր:

Եվ ահա տեսան... Ամբողջ փողոցը բռնած, դանդաղ գալիս էին խոզ լծած սայլերը յուրաքանչյուրին վեցական, կուպր քսած ու բրմբլակոլոլ կովեր, լծած սահնակները, այծ ու շուն լծած ցածրիկ երկանիվները: Սահնակների, սայլերի ու սայլակների մեջ քրծենու գդակներով, ճիլոպե ջվալներից մուշտակներով, խսիրե սապոգներով, մրկնամաշկի ձեռնոցներով մարդիկ էին նստած: Գույնզգույն յաթերից կարկատակար կափտանների էին հագել, կատվի պոչերով ու թաթերով:

Մտրակները շրխկում էին, խոզերը ղժժում, շները հաչում, դիմակավորված մարդիկ մլավում ու մկկում՝ բոլորը հարբած էին, կարմրամորթ: Երթի մեջտեղում վզներին բաղնիքի ավել կապած խալավոր յաթուները ցարական ոսկեզօծ կառքն էին քաշում: Ապակիների միջից երևում էր. առջևում նստած էր ջահել տերտեր Բիտկան, Պյոտրի բաժակակիցը... Գլուխը կախ գցած, քնած էր նա: Եռևում փռված նստած էին երկուսը. մեծաքիթ մի տղամարդ էր թանկարժեք մուշտակով և սիրամարգի փետուր կպցրած գիշերաթասակով, կողքին՝ գնդլիկ ու չաղլիկ մի կին, քսմված, շպարված ականջօղերով, սամոյրներով, ձեռքին շտոֆ բռնած: Ցակով Տուրգենևն էր՝ ցարի նոր ծաղրածուն, որը Սոֆյայի նախկին սեղանապետներից լինելով, շնորհազրկությունը խեղկատակի գդակով էր փոխարինել, և տիրացուի այրի Շուշերան: Երեք օր առաջ Տուրգենևին ու Շուշերային պսակել էին ու առանց դադար առնելու հյուր էին տանում դեսուդեն:

Կառքից հետո գալիս էին երկու արքաները՝ Ռոմոդանովսկին և Բուտուլինը, մեջտեղում «սրբազնագույն կիր Իանիկիտա պրեշբուրգցի» իշխան-պապը, թիթեղյա խույրով, կարմիր բղամիդով, երկու ծխամորճ խաչաձև բռնած: Ապա խմբովի հետևում էին բոյարներ ու օկոլնիչիներ երկու արքունիքներից: Ճանաչեցին Շերեմետևներին, Տրուբեցկոյներին, Դոլգոռուկիներին, Զինովևին, Բորորիկինին... Իր ստեղծումից վեր Մոսկվան նման խայտառակություն չէր տեսել: Ժողովուրդը մատով ցույց էր տալիս նրանց, զարմանում էին, ափուվախ անում, զարհուրում... Ոմանք էլ մոտենում ու հանդգնաբար գլուխ էին խոնարհում բոյարներին:

Բոյարների ետևից մի նավ էին բերում՝ անիվների վրա, բբախառն քամին կայմերն էր ճոճում: Ձիերի առջևից Պյոտրն էր քայլում, բոմբարդիրի կափտանը հագած: Կզակն առաջ ցցած, կլոր աչքերը մարդկանց վրա ոլորելով, թմբուկ էր զարկում: Վախենում էին խոնարհվել նրա առաջ՝ մեկ էլ տեսար, հրաման չկա: Կրոնախևը, տեսնելով նրան թմբուկ զարկելիս, նորից բղավեց. «Նաբուգոդոնոսո՞ր», սակայն ամբոխի մեջ առան խենթին, թաքցրեցին: Նավի մեջ հոլանդացի նավաստիների զգեստներով կանգնած էին Լեֆորտը, Գորդոնը, բեխավոր Պամբուրգը, Տիմերմանը և նորընծա գնդապետներ Վեյդեն, Մենզդենը, Գոլգեն, Բրյուսը, Լևինգստոնը, Սալմը, Ցլիպենբախը... Նրանք ծիծաղում էին, վերևից նայելով, ծխամորճներն էին փստացնում, ոտքերը դոփդոփելով ցրտից:

Երբ Պյոտրը հավասարվեց եկեղեցուն, Իվան Արտեմիչը բռնեց

կիսակենդան Սանկային ու ընկավ ծնկների վրա... «Գլուխ տուր, տխմար,— շշնջաց փութով,— իմ ու քո խելքի բանը չէ սա» ...Տերտեր Ֆիլկան մեծ բերանը բացեց ու թավաձայն քրքջաց (ցարը նույնիսկ նրա կողմը շրջվեց), քրքջալով բարձրացրեց ձեռքերը, շրջվեց ու թիկունքն արած, ձեռքերը վեր պարզած, եկեղեցի մտավ...

Երթն անցավ: Իվան Արտեմիչը ոտքի ելավ, գլխարկը հոնքերին քաշեց:

— Հա՜,— ասաց մտազբաղ,— խոսք չկա... Հա՜... Բայց դե... Ա՛յ, ա՛յ... Լավ, լավ:— Ու բարկացած դիմեց Սանկային.— Հերիք եղավ, ուշքի արի... Գնանք մեր բմբուլն առնենք...

14.

Մարդիկ զարմանում էին, թե որտեղից այդքան ուժ ալդ ատանային: Տարիքով և ուժով նրան գերազանցող մեկ ուրիշը վաղուց շունչը փչած կլիներ: Ծաբաթական արդեն երկու անգամ անպայման հարբած էին բերում Գերմանական արվարձանից: Մի չորս ժամ քնում էր, ուշքը գլուխը բերում, և մտքինը դարձյալ նույնն էր՝ էլ ինչ նոր զվարճանք հորինի:

Ծննդյան տոներին մտքովն անցավ իշխան-պապին, զույգ արքաներին, գեներալներին ու մերձավոր բոյարներին առած (նրանց նորից վերցրեց խստիվ հրամանագրով) երևելի տները գնալ: Բոլորը՝ ծպտյալ, դիմակներով: Տոնական առաջնորդ էր կարգվել մոսկովյան ազնվական, զանազան խայտառակություններով հայտնի, կովազան ու անլուր զազրախոս Վասիլի Սոկովնինը: Նրան «մարգարեի» կոչում տվեցին՝ կապուցին էր հագնում, քղանցքը ետևից: Այդ տոներին նշանավոր, հատկապես իշխանական ու հնամենի բոյարական տները վերջնական խայտառակության ու անարգանքի ենթարկվեցին: Ծվվոցով ու վայրենաձայն բղավոցներով մի հարյուր մարդ կներխուժեին, դոմրաներ, փողեր ու թմբուկներ առած: Աստվածավախ տանտիրոջ մազերը բիզ-բիզ էին կանգնում, ցատկոտող, թովուացող, քրքջացող երախներով բազմությանն ի տես: Ցարին ճանաչում էին երկար հասակից, հոլանդացի նավատիրոջ զգեստից՝ մահոդե ծնկահաս, փրքված անդրավարտիք, բրդյա գուլպաներ, փայտյա ոտնամաններ, թուրքականի նմանվող կլոր գլխարկ: Դեմքին կամ գույնզգույն թաշկինակ կկապեր, կամ երկար քիթ կկպցներ:

Նվագ, դոփյուն, քրքիջ: Ամբողջ խումբը, ով որտեղ հասներ, վրա կպրծներ սեղաններին, կպահանջեին թթու կաղամբ, եփած ձու, երշիկ, պղպեղօղի, պարող աղջիկներ... Տունը տակնուվրա կանեին, ծխախոտի ծխի, ապականված օդի մեջ կխմեին խելահեղության աստիճան, իսկ տանտերը կրկնակի չափով կխմեր, եթե չկարողանար, ուժով կոկորդը կլցնեին...

Որքան բարձրատոհմիկ լիներ տանտերն, այնքան ավելի արտառոց կատակներ կհորինեին գլխին: Իշխան Բելոսելսկուն անհնազանդության համար լրիվ մերկացրեցին ու մերկ հետույքով հավի ձվեր

կոտրել տվեցին լվացքի տաշտի մեջ: Բոբորիկինի գիրությունը ծաղրի տալով, խցկեցին ու քշեցին աթոռների արանքով, որտեղով նիհար մարդն անգամ չէր անցնի: Իշխան Վոլկոնսկու հետանցքը մում խրեցին, վառեցին, ու շուրջը երմոսներ էին երգում, մինչև որ բոլորը ցած թափվեցին ծիծաղից: Մուր ու խեժ էին քսում դեմքերին ու մարմիններին, գլխիվար կանգնեցնում: Ազնվական Իվան Ակակիևիչ Մյասնոյին փուքսի պես փչեցին հետանցքից, որից շուտով մեռավ նա...

Ծննդյան տոների զվարճանքն այնքան ծանր ու դժվարին էր, որ շատերն այդ օրերին պատրաստվում էին, ինչպես մահից առաջ...

Միայն գարնանը մի քիչ թեթևացան: Պյոտրը Արխանգելսկ գընաց: Այդ տարի նորից եկել էին հոլանդացի վաճառականներ Վան Լեյդենը և Հենրիխ Պելտենբուրգը: Նախորդ տարվա համեմատությամբ երկու անգամ շատ ապրանք գնեցին. գանձարանից՝ մամլած ձկնկիթ, սառեցրած սաղմոն, զանազան մորթեղեն, ձկնաստինճ, մետաքսահումք ու նախկինի պես կուպր, կանեփ, քսթան, պոտաշ... Արհեստավորներից առնում էին ռուսական կաշվից ու հղկած ոսկրից պատրաստված իրեր: Օտարերկրացի Մարսելիսից Տուլայի զինագործարանը գնած Լև Կիրիլովիչը հոլանդացիների գլխին էր ուզում կապել դրվագազարդ տարբեր զենքեր, սակայն այնպես էր գները թոցրել, որ հրաժարվեցին:

Գարնանամուտին վեց նավ բեռնված էին: Սպասում էին միայն Հյուսիսային ծովը սառույցներից ազատվելուն: Լեֆորտը (հոլանդացիների խնդրանքը) անսպասելիորեն ակնարկեց Պյոտրին, որ լավ կլիներ զբոսանքի ելնել Արխանգելսկ, իսկական ծովային նավեր տեսնելու... Եվ հաջորդ օրն իսկ վոլոգդայան փոստատանվով փոխձիերով հեծյալներ և ուղյուդնիկներ սլացան՝ հրամանագրեր տանելով վոյեվոդաներին: Պյոտրը ճամփա ընկավ նույն խմբով. իշխանապապ Իանիկիտան, զույգ արքաները, Լեֆորտը, արքաների բոյարները, նրանցից բացի, գործարար մարդկանց էլ վերցրեցին՝ դումայական ատենավոր Վինիուսին, Բորիս Գոլիցինին, Տրոյեկուրովին, հանգուցյալ ցար Ֆյոդորի աներոջդ Ապրակսինին, և հիսուն զինվոր, կտրիճ Ալեքսաշկա Մենշիկովի հրամանատարությամբ:

Ձիերով գնացին մինչև Վոլոգդա, ուր քաղաքից դուրս նրանց ընդառաջ ելավ հոգևորականությունն ու վաճառական դասը: Սակայն Պյոտրը շտապեցնում էր, և նույն օրը նստեցին յոթ կարբասների մեջ ու լողացին Սուխոնա գետով մինչև Մեծ Գետաբերան, այնտեղից էլ՝ Հյուսիսային Դվինայով դեպի Արխանգելսկ:

Պյոտրն առաջին անգամ էր տեսնում ջրառատ գետերի նման տարածքներ, անծայրածիր անտառների նման վիթխարի հզորություն: Երկիրը սփռված էր հայացքի առաջ՝ ծայրը չէր երևում: Մթնած ու շարվեշար լողում էին ամպերը: Կարբասների դեմով թռչունների քարավաններ էին վեր ճախրում: Խստաշունչ ալիքներ էին զարնվում նավակողերին, առագաստները ուռչում էին առատ քամուց, ճոճում

էին կայմերը: Մերձափնյա մենաստաններում տյառընդառաջի զանգեր էին ղողանջում: Իսկ անտառներից, թավուտների մեջ թաքնված, սղանդավորների արթուն աչքերն էին հսկում նեռական նավակներին:

15.

Գորգով ծածկված սեղանի վրա երկու մոմ էին հալչում, վառվելով: Նոր ռանդած գերանակապ պատերից խեժի կաթիլներ էին ծորում: Հատակի մաքուր տախտակների վրա թաց ոտնահետքեր կային՝ անկյունից անկյուն, դեպի պատուհանը, դեպի մահճակալը: Ցեխապատ ոտնամանների մեկն ընկած էր սենյակի մեջտեղում, մյուսը մահճակալի տակ: Դրսում, սպիտակ գիշերվա աստղազուրկ մթնշաղի մեջ օտարոտի խոնավ քամի էր փչում, ալիքներն էին ճողփում՝ մոտակա ափին դիպչելով:

Պյոտրը նստած էր մահճակալին: Վարտիքը մինչև ծնկները թաց էր, մերկ ոտնաթաթերը ծուռ-ծուռ էր դրել: Արմունկներով ծնկներին կոթնած, փոքրիկ ծնոտը բռունցքներին հենած, չտեսնող հայացքով պատուհանին էր նայում: Միջնորմի ետևում, միմյանց գերազանցելով խոմփացնում էին զույգ արքաները: Մասենյան կողում ցարի գալըստյան կապակցությամբ հապճեպ կառուցված տան մեջ բոլորը խառնիխուռն էին քնում: Պյոտրը բոլորին անչափ հոգնեցրել էր այդ օրը...

...Այդ օրը լուսադեմին Արխանգելսկ հասան: Համարյա բոլորը առաջին անգամ էին լինում Հյուսիսում: Տախտակամածներին կանգնած, նայում էին, թե անմնան արշալույսը ինչպես է տարածվում շերտատված մռայլ ամպերի տակից... Անասելի մեծության արևն ելավ անտառների մթին կատարներից, շողերը ցրվեցին երկնքում, ընկան ափի, քարերի, սոճենիների վրա: Դվինայի գալարից այն կողմ, ուր թիերին զոռ տալով, բարկասներն էին լողում, ամրոցի պես ձըգվել էր օտարերկրացիների թաղը՝ վեց աշտարակ ուներ, բաց տեղեր ու պարտեզներ: Քառանկյունու ներսում պինդ ու հուսալի պահեստարաններն էին, կղմինդրե տանիքներով մաքուր տնակները, հոդապատնեշների վրա հրանոթներ ու հրատանդեր: Ափի երկայնքով կառանապատերն էին ձգվում, ցցագերանների վրա, տախտակապատ ափերը, ծածկերը հակերի, պարկերի ու տակառների սարերի վրա: Ճոպանների կապուկներ: Սղոցած փայտի դեզեր: Կառանապատերի մոտ օվկիանոսային երկու նավ էր կանգնած, երեք անգամ ավելի մեծերը գետի մեջ էին խարիսխ ձգել: Վիթխարի կայմերն անտառի պես վեր էին ելնում, պարուրված պարանապարքերի ոստայնով, օրորվում էին բարձրադիր, փայտանախշ նավախելերը: Համարյա ջրերին էին քավում կախված դրոշների պատառները՝ հոլանդական, անգլիական, համբուրգյան: Սպիտակ լայն շերտով կպրած կողերի վրա, բարձրացրած ակնատներից թնդանոթներ էին ցցված...

Աջ, արևելյան ափին տյառնընդառաջի զանգերը զարկեցին: Այնտեղ միևնույն Ռուսիան էր. զանգակատներ, մեկ էլ ասես ալարկոտ

ձանձրույթից այս ու այն կողմ շպրտված հյուղակներ, ցանկապատեր, թրիքի կույտեր: Ափի մոտ հարյուրավոր նավակներ ու գետանավեր էին կանգնած, հումքով բեռնված, խսիրներով ծածկված: Պյոտրը խեթեց Լեֆորտին (կողք կողքի էին կանգնած նավախելին:) Ինչպես միշտ պճնված Լեֆորտը ձեռնափայտն էր կտկտացնում, բեխիկների տակից անուշ ժպտալով, ուռած կոպերով ծիծաղելով, դիմափոշի ցանած այտին՝ փոսիկ... Գոհ էր, զվարթ, երջանիկ... Պյոտրը ֆսֆսացրեց՝ հանկարծ սաստիկ ցանկություն առաջացավ հասցնել արտակից բարեկամ Ֆրանցի դնչին... Նույնիսկ անպատկառ Ալեքսաշկան, որ թիավարների նստարանին, Պյոտրի ոտքերի մոտ էր նստած, գլուխն օրորեց, «ա՛յ, ա՛յ, ա՛յ...» ասելով: Հարուստ ու ծանրումեծ ոսկով ու թնդանոթներով անազդու եվրոպական ափը արհամարհական տարակուսանքով ավելի քան մեկ հարյուրամյակ նայում էր արևելյան ափին, ինչպես տերը ճորտին...

Մերձակա նավի եզրից ծխի քուլա պոկվեց, սփռվող դղրդյունը խլացրեց զանգերի ղողանջը: Պյոտրը պոկվեց նավախելից, թիավարների ոտքերը տրորելով մոտ վազեց եռաֆունտ փոքր թնդանոթին, թնդանոթաձիգի ձեռքից խլեց պատրույգը: Ճայթեց կրակոցը, բայց մի՞թե համեմատել կարելի էր ծովային թնդանոթի որոտին: Ի պատասխան ցարական ողջույնի, օտարերկրյա բոլոր նավերը ծխով պարուրվեցին: Թվաց, թե ափերը ցնցվեցին... Պյոտրի աչքերը կրակվում էին, կրկնում էր. «Լա՜վ է, լա՜վ է...»: Ասես կենդանացել էին նրա մանկական նկարները... Երբ ծուխը ցրվեց, ձախ ափին կառանապատի վրա երևացին օտարերկրացիները, լայնեզր գլխարկները թափահարելով... Վան Լեյդենը և Պելտենբուրգը... Պյոտրը գլխից պոկեց եռանկյունի գլխարկը, ուրախացած թափահարեց ի պատասխան, ողջույնի խոսքեր բղավեց... Բայցև իսկույն, տեսնելով Ապրակսինի, Ռոմոդանովսկու, ուսյալ ատենավոր Վինիուսի լարված դեմքերը, բարկացած շրջվեց...

....Մահճակալին նստած՝ նա նայում էր պատուհանից դուրս, մոխրագույն կիսախավարին: Կուկուշ-ավանում յուրային, ձեռնասուն գերմանացիներն էին... Իսկ այստեղ հասկանալի էլ չէ, թե ովքեր են տերերը: Եվ որքան ողորմելի երևացին կացնաշեն կարբասները, երբ լողում էին բարձր նավակողերի մոտով... Ամոթ է. բոլորը զգացին. թե՛ մռայլված բոյարները, թե՛ սիրալիր օտարերկրացիները ափին, թե՛ նավապետները, թե՛ միջնատախտակամածներում շարք կանգնած ընկած-ելած, օվկիանոսային հողմերից խանձադեմ նավաստիները... Ծիծաղելի՛ է... Ամո՛թ... Բոյարները (գուցե նաև Լեֆորտը, որը հասկանում էր, թե ի՞նչ պիտի զգա Պյոտրը) միայն մի բան էին ուզում. պահպանել արժանապատվությունը: Բոյարները փքվել էին գոռոզավարի, գոնե դրանով ցանկանալով երևցնել, թե Մեծ, Փոքր և Սպիտակ Ռուսիո ցարի համար այնքան էլ մի հետաքրքիր բան չէ առևտրականների նավերին-բաներին նայելը... Հարկ որ եղավ իրենը ձեռք կբերի, մի դժվար գործ չէ... Իսկ թե ուզեց, որ այս նավերն այլևս Սպիտակ ծով չմտնեն, ոչինչ չեք կարող անել, ծովը մերն է:

Եթե այդ քոստոտ նավակներով եկած չլիներ Պյոտրը, թերևս ինքն էլ վարակվեր գոռոզամտությամբ: Սակայն նա լավ հիշում էր ու վերստին տեսավ Արևմուտքի այդ բոլոր մարդկանց սիրալիր ժպիտներով քողարկված հպարտ արհամարհանքը. ճերմակամորուս, փշրված ատամներով նավաստուց մինչև իսպանական թավշից հանդերձներ կրող վաճառականը... Ահա՛, բարձրում, նավախելի վրա, լապտերի մոտ կանգնած է պնդակազմ, դարչնագույն, խստատեսք մի մարդ, ոսկեկար տրեզներով, ջայլամի փետրով զարդարված գլխարկով, մետաքսյա գուլպաներով: Ձախ ձեռքով հեռադիտակն է սեղմել կոնքին, աջը ձեռնափայտի վրա է հենված... Բոլոր ծովերի ավազակների ու ծովահենների հետ կռիվ տված նավապետ է: Հանգիստ նայում է վերևից ներքև երկայնաձգասակ, անհեթեթ պատանուն, անճոռնի նավակի մեջ կանգնած քարքարոսների ցարին... Միշտ այդպես վերևից ներքև նայել է նա Մադագասկարում կամ Ֆիլիպինյան կղզիներում, հրամայելով թնդանոթները մանրագնդակ լցնել...

Եվ ասիական խորամանկությամբ Պյոտրը հասկացավ, թե ինքն ինչպե՞ս պիտի երևա այդ մարդկանց, միակ ի՛նչ եղանակով գերադաս պիտի լինի նրանցից... Հարկ էր զարմացնել նրանց, որ նման բան տեսած իսկ չլինեին, որ տանը պատմեին չտեսնված ցարի մասին, ով թքել է այն իրողության վրա, որ ինքը ցար է... Բոյարները թող փքվեն, նույնիսկ լավ է, իսկ ինքը՝ Պյոտրն Ալեքսեյի որդին է, պերեյասլավյան նավատորմի փոխնավապետը, հենց այդպես էլ կըպահի իրեն. մենք աշխատող մարդիկ ենք, ահա՛, չքավոր ենք, բայց խելացի, մեր խեղճությունից ձեզ խոնարհվելու ենք եկել, խնդրում ենք, սովորեցրեք կացին բռնելու ձևը...

Հրամայեց թիավարել ուղիղ դեպի ափ: Առաջինը թռավ ջրի մեջ, թաղվելով մինչև ծնկները, ելավ պատի վրա, գրկեց Վան Լեյդենին ու Պելտենբուրգին, մնացյալների ձեռքը սեղմեց ամուր, թփթփացրեց ուսերին: Գերմաներեն ու հոլանդերեն բառերը խառնելով, պատմեց իրենց նավարկության մասին, ծիծաղելով ցույց տվեց կարբասները, որոնց մեջ դեռ կանգնած էին արձանացած բոյարները... «Ձեր մոտ վայ թե էս տեսակ նավակներ երազում էլ տեսած չլինեն»: Ջափից ավելի հիացավ բազմաթնդանոթ նավերով, դոփդոփում էր, խփում իր նիհար ազդրերին. «Ա՛հ, գոնե մի երկու հատ ունենայինք սրանցից...»: Իսկույն խոսք գցեց, որ անհապաղ նավաշինարան է հիմնում Արխանգելսկում. «Ինքս եմ ատաղձագործություն անելու, բոյարներիս էլ ստիպելու եմ մեխերը խփել...»:

Եվ աչքի պոչով տեսավ, թե ինչպես են հարթվում շինծու ժպիտները, հարգարժան վաճառականները սկսում են զարմանալ. հիրավի, նման բան դեռ չէին տեսել... Ինքը խնդրեց, որ ճաշի հրավիրեն, աչքով արեց. «Թե լավ հյուրասիրեցիք, գործերից էլ կխոսենք, ոչ առանց շահի...»: Կառանապատից թռավ բարկասի մեջ ու գնաց Մասեկյան կղզի, ուր նրան դիմավորեց վոյեվոդա Մատվեևը, աստծու վախն աչքերում... Բայց նրա հետ Պյոտրն արդեն այլ կերպ խոսեց. կես ժամ անց կատաղած դուրս շպրտեց աքացի հասցնելով (դեռ ճանապարհին Մատվեևին ամբաստանել էին, որ կաշառք է վերցնում օտարերկրացիներից)... Ապա Լեֆորտի և Ալեքսաշկայի հետ առագաստանավակով գնաց նավերը դիտելու... Երեկոյան խրախճանք արեցին օտարերկրացիների մոտ: Պյոտրն այնպես պարեց անգլուհիների և հանովերցի կանանց հետ, որ կրունկները պոկվեցին... Այո՞, նման բան օտարերկրացիներն առաջին անգամ էին տեսնում....

Եվ ահա՝ անքուն գիշերը... Զարմացնելը զարմացրեց, հետո՞ ինչ: Ռուսաստանը՝ ենթակոխ, աղքատ, ծույլ ու դանդաղաշարժ, ինչպիսին եղել էր, այդպիսին էլ մնաց: Ի՞նչ ամոթ, ի՞նչ բան: Ամոթը հարուստ և ուժեղ մարդիկ են զգում... Իսկ այստեղ հասկանալի չէ, թե ինչ ուժերով շարժել մարդկանց, բաց անել նրանց աչքերը... Մա՞դ եք դուք, թե հազար տարվա ընթացքում, արյուն ու արցունք թափելով ճշմարտության ու երջանկության հույսը կորցնելով, փտել եք մամուռներին հակված ծառի պես:

Սատանայի արածն էր ցար ծնվել այսպիսի երկրում:

Հիշեց, թե աշնան գիշերով ինչպես էր բղավում Ալեքսաշկայի ականջին, սառնաշունչ քամուց խեղդվելով. «Ավելի լավ է ենթավարպետ լինեմ Հոլանդիայում, քան այստեղ՝ ցար...»: Իսկ ի՞նչ է արել այս տարիների ընթացքում՝ և ոչ մի բան, խենթություններ: Վասկա Գոլիցինը քարաշեն տներ էր կառուցում, թեկուզ անփառունակ, բայցև պատերազմելու գնաց, հաշտություն կնքեց Լեհաստանի հետ... Ասես եղունգներ խրեցին սիրտը՝ ահավոր տանջում էր զղջումը, զայրույթն էր տանջում յուրայինների՝ ռուսների վրա ու նախանձը ինքնագոհ վաճառականների նկատմամբ. կրացեն անկնշկանդ առագաստներն ու կլողան դեպի իրենց տները, դեպի զարմանալի երկրներ... Իսկ դու պիտի դառնաս մոսկովյան խեղճուկրակության գիրկը... Սարսափելի որքէ հրամանագիր չարձակի՞ արդյոք: Կախաղան բարձրացնի, գանակոծի... Բայց ո՞ւմ, ո՞ւմ: Թշնամին անտեսանելի է, անընդգրկելի, թշնամին ամենուր է, թշնամին իր իսկ մեջ է...

Պյոտրը թափով բացեց հարևան խցիկի պստիկ դուռը.

— Ֆրա՛նց (Լեֆորտը ցած թռավ թախտից, չռելով ուռած աչքերը:) Քնա՞ծ ես: Մոտս արի...

Մեկտակ շապկով Լեֆորտը նստեց Պյոտրի մահճակալին.

— Վա՞տ ես զգում, Պիտեր: Գուցե սիրտ թափես...

— Չէ, դա չէ... Ֆրանց, երկու նավ եմ ուզում գնել Հոլանդիայից...

— Ինչ կա որ, լավ բան է...

— Էստեղ էլ կսարքենք հետո... Ապրանքն ինքներս կտանենք...

— Անչափ լավ է...

— Է՛լ ինչ խորհուրդ կտաս ինձ:

Լեֆորտը զարմացած նայեց նրա աչքերին և, ինչպես միշտ, Պյոտրից ավելի հեշտությամբ ըմբռնեց նրա խառնիխուռն ու փութկոտ մտքերը: Ժպտաց.

— Սպասիր, շալվարս հագնեմ, ծխամորճ բերեմ...— Խցիկից տար-

օրինակ ձայնով, հագնվելիս ասաց.— Ես վաղուց էի սրան սպասում, Պիտեր... Մեծ գործեր անելու տարիքին ես հասել...

— Ինչպիսի՞ գործերի,— բղավեց Պյոտրը:

— Հռոմեական հերոսները, որոնցից մինչև հիմա օրինակ ենք վերցնում... (Նա ետ եկավ, շտկելով կեղծամի գանգուրները: Պյոտրը նրան էր հետևում հրաշունչ բիբերով:) Հերոսներն իրենց փառքը պատերազմի մեջ էին հիմնում...

— Ո՞ւմ հետ: Նորի՞ց Ղրիմ քշենք:

— Առանց Սև և Ազովի ծովերի չես կարող դու, Պիտեր... Քիչ առաջ Պետերբուրգը ականջիս ասաց. մի՞թե ռուսները դեռ հարկ են վճարում Ղրիմի խանին... (Պյոտրի բիբերը ցնցվեցին, ասեղների պես կանգ առան, մեխվեցին սիրելի ընկերոջ վրա:) Առանց Բալթիական ծովի էլ չես լինի դու, Պիտեր... Չուզենաս էլ, հոլանդացիք կտիպեն... Նրանք ասում են, թե տասն անգամ ավելի ապրանք կարտահանեն, եթե Բալթիական ծովում նավահանգիստներ հիմնես...

— Ծվեդների հե՞տ պատերազմել: Խելագարվել ես... Հո չե՞ս ծիծաղում վրաս: Աշխարհում ոչ ոք չի կարող նրանց հաղթել, իսկ դու...

— Հո չեմ ասում վաղը, Պիտեր... Հարց տվեցիր, պատասխանում եմ. մեծ-մեծ գործեր բռնիր, մանր-մունր բաների վրա բռունցքդ կտիրես...

16.

«Վաճառականներին ու վաճառական դասին, և բոլոր պոսադականներին, և առևտուր անող ու արհեստավոր մարդկանց վոյեվոդաների, վարչատների ու գանգազան աստիճանավորների կողմից վարչատնական բաշքշուկի մեջ են քաշում, նրանց առևտրին ու ամեն տեսակ արհեստներին վնասներ հասցնում ու քայքայում են բերում: Հանց առյուծ, իրենց ծանիքներով խժռում են մեզ, հանց գայլ: Ողորմած եղիր, մեծն արքա...»:

— Էլի բողո՞ք է վոյեվոդաների վրա,— հարցրեց Պյոտրը:

Նա ուտում էր, սեղանի ծայրին նստած: Հենց նոր էր եկել նավաշինարանից, խեժապատ շապկի քշտած թևքերն անգամ չէր իջեցրել: Հացի կտորները թաթախելով տապակած մսով լի կավե ամանի մեջ, շտապ-շտապ ծամելով, մեկ նայում էր կապարագույն Դվինայի փրփրակալած կոհակներին, մեկ շիկամորուս, ճերմակադեմ, մարմնեղ ատենավոր Անդրեյ Անդրեևիչ Վինիուսին, որը սեղանի մյուս ծայրին էր նստել:

Անդրեյ Անդրեևիչը մոսկովյան փոստն էր ընթերցում: Կլոր ակոց էր դրել կոշտուկոպիտ քթին, երկնագույն, քթից հեռու աչքեր ուներ, խելացի և սառը: Վերջին ժամանակներս սկսել էր ազդեցություն ձեռք բերել, հատկապես երբ Պյոտրը հրամայեց մոսկովյան փոստն իր համար կարդալ, Լեֆորտի հետ ունեցած գիշերային խոսակցությունից հետո: Այդ ամբողջ թղթային գործն առաջ Տրոյեկուրովի ձեռքով էր անցնում: Պյոտրը չէր միջամտում, բայց հիմա ցանկացավ ամեն ինչ անձամբ լսել: Նրա համար փոստն ընթերցում էին ճաշելիս՝ ուրիշ ժամանակ չուներ. ամբողջ օրն անցնում էր նավաշինարանում, օտարերկրյա վարպետների հետ, որոնց վերցրել էին նավերի վրայից... Ատաղձագործություն ու դարբնություն էր սովորում, զարմացնելով օտարերկրացիներին, վայրենու անհագությամբ նրանցից դուրս կորզելով հարկավոր ամեն ինչ, կռվում ու վիճում էր բոլորի հետ.... Ավելի քան հարյուր բանվոր կար արդեն նավաշինարանում: Փնտրում էին բոլոր արվարձաններում և պոսադներում, ազնվորեն էին վերցնում՝ վարձելով, իսկ եթե համառում էին, նաև ուժով էին բերում, շղթայակապ...

Ճաշի ժամին գազանի պես սոված Պյոտրը առագաստանավով գալիս էր Մասեևյան կղզի: Վինիուսը հանդիսավոր ձայնով կարդում էր հրամանագրերը, որ ուղարկվում էին ստորագրության, խնդրագրերը, բողոքները, նամակները... Հինավուրց ձանձրույթ էր բուրում այդ ճոռում պահպանագրերից, ճորտական տնքոցներ էին հնչեցնում բողոքները: Ստում, գողանում, բռնադատում, կանոնագրական զարդագրերով էր խուսանավում վաղնջական պաշտոնավարական Ռուսաստանը, հեծում էր ոջիլ և ուտիճի ճարակ դարձած դանդաղամիտ ամբոխը:

— Բողոք է վոյեվոդայի վրա,— պատասխանեց Անդրեյ Անդրեևիչը,— նորից Ստյոպկա Սուխոտինի վրա:

Ակնոցն ուղղելով, նա շարունակեց ընթերցել արցունքախառն աղաղակը Կունգուրի վոյեվոդայի ապօրինությունների մասին... Առևտուրը է քայքայում իր շորթումներով, հարկերն է գրպանում և առևտրականներին ու պոսադականներին բանտարկում է իր խորդանոցում, ծեծում ձեռնափայտով, որի հետևանքով մեկը մեռել է անմեղ տեղը: Արհեստավորների գումակներից մաքս է առնում, գրպանը դնելով, ձմռանը ութական ալտին սայլից, ամռանը՝ մեկական ալտին նավակից: Հարուստ արդյունահանող Զմիևին տանջել է սնդուկի մեջ, կափարիչի վրա ծակեր բացել տալով, որ չխեղդվի ներսում... Եվ իրեն է վերցնում զեմստվոյական ու պետական փողերը, սպառնալով ամբողջ Կունգուրն ավերել, եթե բողոքեն իր վրա:

— Կունգուրի շուկայում կա՞ս տալ այդ շանը,— բղավեց Պյոտրը:— Գրի՛ր:

Վինիուսը խստորեն, ակնոցի վրայից, նրան նայեց:

— Կախելը հեշտ է, դրանով այնքան էլ խելքի չեն գա... Պյոտր Ալեքսեևիչ, ես վաղուց եմ ասում, որ երկու տարուց ավելի վոյեվոդաներին չի կարելի մի տեղում նստել: Ընտելանում են, ծակուծուկերը սովորում... Իսկ նոր վոյեվոդան, իհարկե, ավելի քիչ է ավազակություն անում... Պյոտր Ալեքսեևիչ, առևտրական մարդկանց առաջին հերթին պահպանիր: Մեկ տակ չէ, երկու տակ կաշի կտան քեզ, մենակ թե չափից դուրս բեռը թեթևացրու... Չէ որ ոմանք վախենում են երկու զույգ տրեխ հանել շուկա՝ բռնում են, ծեծում, փող պոկում... Էլ ումից պիտի հարստանաս, եթե ոչ վաճառականներից... Ազնվա-

կանչերից վերցնելու բան չունես, եղածն իրենք են ուտում: Մուժիկն էլ վաղուց է տկլոր: Ահա՛, լսիր...

Թղթերի կիտուկի միջից Վինիուսը մի թերթ հանեց, կարդաց.

—«...Եվ կամոքն աստծո մեզ մոտ մշտապես հացահատիկի պակասություն է լինում, մեր դաշտերը մշտապես ցուրտը տանում է, և հիմա ոչ հաց ունենք, ոչ ցախ, ոչ անասուն, կոտորվում ենք սոված փորով ու սառում ենք ցրտից... Մեզ դարձրու հայացքդ, տեր արքա, մեր չքավորությանն ու թշվառությանը, հրաման տուր մեր եղածի չափով բահրա վճարել... Խեղճ ու անօգնական, էլ բան չունենք կալվածատիրոջը խոզի ու կովի միս, թոչնեղեն ու ամեն տեսակ ուտելեղեն տալու... Խոտ ենք ուտում, ուռել ենք... Ողորմած եղիր...»:

Լսելիս Պյոտրը հրահանը զայրացած խփեց կայծքարի կտորին, մատն արյունոտեց: Ծխամորճը կպցրեց, խոր ումպ արեց... Անեպանելի՜ ապրուստ... Սահող ամպերի արանքից արևն էր թրթռում կապտագույն դարձած գետի վրա: Դիմացի ափին կառուցվող նավի կոդերն էին բարձրանում նավարանում: Կացիններ էին թիկթիկում, սղոցներն էին վժժում: Այնտեղ ծխախոտի, կպրի, տաշեղի, ծովային ճոպանների բույր կար... Ծովից փչող քամին սիրտն էր թափանցում... Այն գիշեր Լեֆորտն ասաց. «Ռուսաց երկիրը սարսափելի է, Պիտեր... Մուշտակի պես հարկավոր է շուռ տալ երկիրը, նորից կառուցել...»:

— Արտասահմանում չեն գողանում, ավազակություն չեն անում,— ասաց Պյոտրը, աչքերը կկոցած ալիքների ծփանքի վրա,— ուրի՞շ ցեղի մարդիկ են, ինչ է...

— Մարդիկ նույնն են, Պյոտր Ալեքսեևիչ, միայն թե նրանց ձեռնոտու չէ գողանալը, ավելի օգտակար է ազնիվ գործելը... Այնտեղ պահպանում են վաճառականին, վաճառականն էլ է իրեն պահպանում... Ալեքսեյ Միխայլովիչի օրոք հայրս եկավ, գործարան հիմնեց Տուլայում, ուզեց ազնվորեն աշխատել: Չթողեցին՝ քաշքշուկով միայն սնանկացրեցին... Մեզ մոտ թե գող չէ, ուրեմն հիմար է, պատիվն էլ հարգի չէ, պատիվը միայն ուրիշների վրա իշխելն է: Բայց մերոնց մեջ էլ բանիմաց մարդիկ կան... (Անդրեյ Անդրեևիչի սպիտակ, փափիկ մատներն ասես ուտայն էին հյուսում, արևն անդրադարձվում էր ակնոցի մեջ, խոսում էր մեղմ, ծեքծեքուն:) Մեծարիր առևտրական մարդկանց, հանիր նրանց ցեխի միջից, ուժ տուր նրանց, և վաճառականի պատիվը մի հատիկ ազնիվ խոսքի մեջ կլինի՝ համարձակ հենվիր նրանց վրա, Պյոտր Ալեքսեևիչ...

Նույնն էին ասում թե՛ Սիդնեյը, թե՛ Վան Լեյդենը, թե՛ Լեֆորտը: Այդ խոսքերի մեջ չճաշակած բան էր զգում Պյոտրը, ասես ոտքերի տակ ողնաշարի ջիղն էր շոշափվում... Սույնն այլևս ռազմախաղի ինչ-որ երեք գունդ չէր, այլ զանգված, ուժ... Արմունկը լուսամտագոգին դրած, նայում էր արեգակից լուղափայլ կոհակներին, նավաշինարանին, ուր անձայն խփում էր ծանր մուրճը ցցագերանին ու երկար ժամանակ անց դմփոցն էր լսվում... Թարթում, թարթում էր աչքերը, սիրտը բաբախում էր ինքնավստահ, տագնապախառնով ու բերկրալի:

— Վոլոգդացի վաճառական Իվան Ժիգուլինն անձամբ է բերել խնդրագիրը, աղաչում է տեսության արժանացնել,— առանձնապես հատակ արտաբերեց Անդրեյ Անդրեևիչը:

Պյոտրը գլխով արեց: Թեթևությամբ շարժելով պարարտ մարմինը, Վինիուսը մոտեցավ դռանը, ձայն տվեց մեկին, շտապեց տեղը նստել: Նրա ետևից մտավ թիկնեղ վաճառականը, նովգորոդյան սանրվածքով՝ մազերը ճակատին գցած: Արտահայտիչ դեմք ուներ, հոնքերի տակից սուր հայացք: Թափով խաչակնքելով, գետնահակ գլուխ տվեց: Պյոտրը ծխամորճով ցույց տվեց աթոռը.

— Հրամայում եմ՝ նստիր... (Ժիգուլինը միայն հոնքերը շարժեց, ծայր զգուշությամբ նստեց:) Խնդրածդ ի՞նչ է: (Ժիգուլինը աչքի տակով նայեց Վինիուսին:) Էնպես ասա...

Ըստ երևույթին, Ժիգուլինը կռահեց, որ այստեղ ճակատը հատակին խփելու կարիք չկա, այլ փողի քսակն է հարկավոր ցույց տալ, արժանապատվությամբ սղալեց բեխերը, նայեց այծակաշվի կոշիկներին, թավաձայն հազաց.

— Խնդիրը ունենք մեծն արքային... Հենց իմացանք, որ Դվինայի վրա նավեր ես կառուցում՝ տեր աստված, ի՞նչ ուրախություն էր: Ուզում ենք, որ հրաման չտաս ապրանքը ծախենք օտարերկրացիներին... Աստված վկա, ձրի ենք տալիս, տեր արքա... Ծարպը, ծովաշան կաշին, աղ դրած սալմոնը, ձկնոսկրը, մարգարիտը... Հրաման տուր տանենք քո նավերով... Մեզ լրիվ աղքատացրել են անգլիացիները... Խղճա մեզ: Մենք էլ ջանք չենք խնայի, փոխանակ օտար թագավորներին ծառայենք, մեր թագավորին կծառայենք...

Պյոտրը աչքերը փայլեցրեց նրա վրա, ձգվելով, թփթփացրեց ուսին, ատամները մերկացրեց ուրախացած.

— Մինչև աշուն երկու նավ կկառուցեմ, երրորդն էլ Հոլանդիայից ենք առել... Տարեք ապրանքը, բայց առանց խաբելու՝ տես հա...

— Մենք, տեր աստված, մենք...

— Ինքդ էլ կգնա՞ս ապրանքի հետ... Առաջին կոմերցիենտատը... Կգնա՞ս Ամստերդամ, ծախելու...

— Լեզու չգիտեմ... Բայց որ հրամայես, ինչ կա որ... Ամստերդամում էլ ատևտուր կանենք, չենք թողնի խաբեն:

— Ապրես... Անդրեյ Անդրեևիչ, հրամանագիր պատրաստիր... Առաջին խոշոր վաճառական-նավագնաց... Անունդ ի՞նչ էր... Իվան Ժիգուլին, իսկ հայրանո՞ւնդ...

Ժիգուլինը բացեց բերանը, վեր կացավ, աչքերը չովեցին, մորուքը տնկվեց...

— Ուրեմն, հայրանունո՞վ ես գրելու մեզ... Դրա համար՝ ի՞նչ ուզենաս...

Եվ ինչպես Փրկչի առաջ, որին աղոթում էր գործերի հաջողության համար, փռվեց ցարի ոտքերի առաջ...

Ժիգուլինը գնաց: Վինիուսը փետուրն էր ճոճոացնում: Պյոտրը դեսուդեն էր ընկել սենյակում, քթի տակ ծիծաղելով: Կանգ առավ.

— Հը՞, է՞լ ինչ ունես... Կարճ կարդա...

— Նորից ավազակության գործեր: Տրոիցեի ճանապարհի վրա պետական գանձով գումակ են թալանել, երկու հոգու ծեծելով սպանել են... Հետախուզել ու իր դատակերտում բռնել են Ստոյպկա Օդոևսկում, իշխան Սեմյոն Օդոևսկու կրտսեր տղային, սովորական սալլով բերել են Քրեական վարչատուն, այնտեղ խոստովանել է, և պատիժ են սահմանել. վարչատան ընկուղում գանահարել, նաև անվերադարձ բռնագրավել են Մոսկվայի տունը և չորս հարյուր ծուխ, գյուղացիներով: Հոր՝ իշխան Սեմյոնի երաշխավորությամբ, թողել են... Ստոյպկայի մարդկանցից տասնհինգ հոգու կախել են...

— Անդրեյ Անդրեևիչ, ահա և իշխանները, բոյարները՝ լախտ են առել ձեռները, ավազակության ճամփան բռնել....

— Իսկապես, ավազակություն են անում, Պյոտր Ալեքսեևիչ:

— Զրիակերնե՞ր, մորուքավորնե՞ր... Գիտեմ, հիշում եմ... Ամենքը մի-մի դանակ ունեն իմ վրա սրած... (Վիզը ջարդջրդեց:) Բայց ամբի համար ե՞ս կացին ունեմ սրած... (Թքեց, ոտքով սրբեց: Զռած մատներով ճանկեց ու քաշեց սփռոցը: Վինիուսը փութով բռնեց թանաքամանն ու թղթերը:) Հիմա ես ո՞ւժ ունեմ... Ճակատ-ճակատի, կտանք... Առանց խնայելու... (Գնաց դռան կողմը:)

— Կներես, Պյոտր Ալեքսեևիչ, երկու նամակ էլ կա... Թագուհիներից...

— Կարդա, լավ...

Շրջվեց լուսամուտի կողմն ու քշփորեց ծխամորճը: Վինիուսը կարդաց, թեթևակի խոնարհված.

—«...Ողջույն, իմ ուրախություն, հայր թագավոր Պյոտր Ալեքսեևիչ, կյանքդ անսպառ... (Պյոտրը զարմացած բարձրացրեց հոնքը նրա վրա:) Զավակդ՝ Ալյոշկան, քեզնից՝ իր լույս ուրախությունից, օրհնություն է խնդրում: Ծնորհ արա, մեր ուրախություն, տեր արքա, անհապաղ արի... Այն պատճառով եմ ողորմածությունդ խնդրում, որ իմ տիրուհի տատիկին մեծ տխրության մեջ եմ տեսնում... Մի տխրիր, իմ ուրախություն, տեր թագավոր, որ վարժ չեմ նամակ գրելում, դեռ չեմ սովորել...

— Ո՞ւմ ձեռքով է գրված:

— Մեծն թագուհի Նատալյա Կիրիլովնայի դողացող ձեռքով, դժվարընթեռնելի:

— Լավ, մի բան պատասխանիր... Որ համբուրգյան նավերին եմ սպասում... Ողջ և առողջ եմ, ծով չեմ գնում, թող հոգս չանեն... Ու չսպասեն, թե շուտով կգնամ, լսեցի՞ր...

Վինիուսը, մեղմ հոգոց հանելով, ասաց.

— Ալեքսեյ Պետրովիչ արքայազնի սեփական մատիկի թանաքոտ տեղը կա նամակի վրա...

— Դե, լավ, լավ՝ մատի՞կ... (Քիթը քաշեց, երկրորդ նամակը վերցրեց Վինիուսից:) Մատի՞կ...

Կնոջ նամակը նավակի մեջ կարդաց: Ծովից փչող թարմաշունչ քամին ուռեցրեց առագաստը, խարխուլ նավակը, ասես կենդանի լիներ, սուզվում ու վեր էր բարձրանում, ալիքները զարնվում էին կողերին, ջրի փրփուր էր ցրիվ գալիս նավակի քթից: Ղեկի մոտ նստած Պյոտրը կարդում էր ծնկին սեղմած, ցայտքերով պատած նամակը...

«Ողջույն, իմ տեր, կյանք ունենաս երկար տարիներ... Ողորմածաբար խնդրում եմ, իմ աչքի լույս, ուրախացրու ինձ, իմ տեր, գրիր ողջությանդ մասին, որ փարատես խեղճիս տրտմությունը... Ինչպես ես, աչքիս լույս, բարեհաճեցիր գնալ ու ոչ մի տող չես գրել այն օրվանից... Մենակ ես եմ խեղճը, այս աշխարհում անբախտը, որ չես մեղքանում, ողջությունիցդ չես գրում... Գրիր ինձ, իմ ուրախություն, թե ինչ ես բարեհաճում իմ մասին մտածել... Իսկ ես ու Ալյոշկան ողջ ենք...»:

Նավակի կողից ջուր լցվեց: Պյոտրը շտապ ձախ թեքեց ղեկը, մի մեծ ալիք, փրփուր խշշացնելով, շպպաց կողին, ոտից գլուխ թրջելով նրան: Պյոտրը ծիծաղեց: Անհարկի նամակը քամին թոցրեց ծնկից, տարավ ու կորցրեց հեռու ալիքների մեջ...

17.

Նատալյա Կիրիլովնան վերջապես տեսավ որդուն հենց այն օրը, երբ կարծես մեխ էր ցցվել սրտում: Կարապի փետուրների բարձերի մեջ կիսապառկած, լայնացած բիբերով նայում էր պատին, դրոշմանկար կաշվի ոսկյա նախշին: Սարսափում էր հայացքը կտրելուց, շարժվելուց, ծարավից ավելի սաստիկ տանջում էր կրծքի դատարկությունը՝ օդը չէր բավականացնում, բայց հենց թեթև ճիգ էր անում, որ ներշնչի, աչքերը չովում էին սարսափից:

Լև Կիրիլովիչը ստեպ-ստեպ ննջասենյակ էր մտնում ոտնաթաթերի վրա, հարցնում պալատական բոյարուհիներին.

— Ինչպե՞ս է... Աստվա՞ծ իմ, աստվա՞ծ իմ, մի արասցե...

Թուքը կուլ տալով, նստում էր անկողնում: Խոսում էր, քուրը չէր պատասխանում: Ամբողջ աշխարհը մշուշապատ էր թվում նրան... Մի բան էր զգում՝ իր սիրտը, մեջը մեխ ցցված...

Երբ նշանատուները փրփրակոլոլ ձիերով Կրեմլ հասան, «Գալի՞ս է, գալի՞ս է» բղավելով, և ժամկոչները, խաչակնքելով, զանգակատները բարձրացան, բացվեցին Արխանգելսկի և Ուսպենսկի տաճարների դռները, ավագերեցներն ու սարկավագները շտապ-շտապ շուրջառների վրա փռեցին մազ ու մորուք, պալատական աստիճանավորները խնկեցին առմուտքին, մունետիկները ոտաբոբիկ չափ ընկան Մոսկվայում՝ բարձրաստիճան մարդկանց ազդարարելու գալուստը, Լև Կիրիլովիչը, շունչը տեղը բերելով, կուսցավ բրոջ սենյակին.

— Ժամանեց մեր լույսն ու արևը...

Նատալյա Կիրիլովնան միանգամից ներշնչեց, փափկիկ ձեռքերն սկսեցին քաշքշել շապիկը, շուրթերը կապտեցին, գլուխը ետ գցեց: Լև Կիրիլովիչը, նույնպես իրեն կորցրած, բերանը էր բացում... Բո-

յարուհիները նետվեցին խոստովանահորը կանչելու։ Մոտակա պուճախներում ու խորդանոցներում տնքտնքացին հացփորի մարդիկ... Ամբողջ պալատն իրար անցավ։

Սակայն ահա պղնձաձայն թնդաց Իվան Մեծը, ղողանջեցին տաճարների ու մենաստանների զանգերը, դեսուդեն վազվզեցին սպասավորները, ժխորի ու բղավոցների միջից հնչում էին գնդմանացի սպաների կոշտ ձայները՝ «Ա՛խտունգ... Մուշկետը՝ ուսի... Հա՛լտ... Այդպես կանգնել...»։ Կառքերը, բեռնակառքերը ամբողջ թափով անցան զորքի ու ժողովրդի մոտով, դեպի Գլխադուռ։ Ցարին էին որոնում, սակայն շքեղ ֆերյազների, գեներալական այծենականների ու փետրազարդ գլխարկների մեջ նրան չտեսան։

Պյոտրը վազեց ուղիղ մոր մոտ. միջանցքներում մարդիկ հազիվ էին հասցնում մի կողմ քաշվել։ Արևառ, նիհար, կարճ կտրած մազերով, սև թավշյա կարճիկ բանկոնով, լայնփոքր անդրավարտիքով նա վազում էր սանդուղքներով, դեմն ելածներից մի քանիսը կարծեցին, թե բժիշկ է եկել Կուկույից (քիչ անց, ճանաչելուց հետո, խաչակնքեցին սարսափած։) Չէին սպասում, երբ նա, դուռը թափով բացելով, նիրս ընկավ ցածրատաստաղ, հեղձուկ, կորդովական կաշվով պատված ննջասենյակը... Նատալյա Կիրիլովնան գլուխը պոկեց բարձերից, փայլող բիբերը հառեց այդ նիհար հոլանդական նավաստու դեմքին...

— Մայրի՛կ,— բացականչեց Պյոտրը, ասես հեռու հեռավոր մանկությունից,— սիրելի՛ս...

Նատալյա Կիրիլովնան պարզեց ձեռքերը.

— Պետենկա, իմ տեր ու տիրական, զավակս...

Մայրական կարեկցանքով հաղթահարում էր սիրտը խրված մեխի ցավը, չէր շնչում, մինչ որդին, սնարին ընկած, համբուրում էր իր ուսն ու դեմքը, և երբ միայն մահացու ցավով պրկվեց կուրծքը, թուլացրեց ձեռքերը, վիգն իջեցրեց...

Վեր ցատկելով, Պյոտրն ասես հետաքրքրությամբ էր նայում մոր մարող աչքերին։ Բոյարուհիները, ողբալուց վախենալով, բերանները խցկել էին թաշկինակներով։ Մանրիկ դող էր պատել Լև Կիրիլովիչին։ Սակայն ահա թրթռացին Նատալյա Կիրիլովնայի արտևանունքները։ Պյոտրը խոպոտաձայն ինչ-որ բան ասաց՝ չհասկացան, նետվեց դեպի լուսամուտը, ցնցեց կապարե շրջանակը, ցած թափվեցին կլորակ ապակիները...

— Բլյումենտրոստի՛ն բերեք, արվարձանի՞ց։— Եվ երբ նորից չհասկացան, ճանկեց բոյարուհիներից մեկի ուսերը։— Անխե՛լք, բժիշկ բերեք։— Հրեց դռնից դուրս...

Կիսամեռ բոյարուհին, բլթլացնելով, դոփդոփեց սանդուղքի վրա։

— Ցարը հրամայեց։ Ցարը հրամայեց...— Իսկ թե ինչ հրամայեց, այդպես էլ չկարողացավ ասել...

Նատալյա Կիրիլովնայի շունչը տեղն եկավ ու երեք օր անց նույնիսկ ցերեկային ծամերգությանը ներկա եղավ, լավ կերավ։ Պյոտրը

գնաց Պրեոբրաժենսկոյե, ուր Եվդոկիան էր ապրում, արքայազն Ալեքսեյի հետ (գարնանից էր տեղափոխվել, սկեսուրից հեռու ժնալու համար։) Ամուսնուն օրերս էր սպասում, և պատրաստ չէր, հագած-կապած չէր, երբ Պյոտրը հանկարծակի հայտնվեց բանջարանոցի ավազապատ ծառուղում, ուր լորենու ստվերի տակ անտոնովյան խնձորի մուրաբա էին եփում։ Սիրունատես, ընտրովի, երկայն հյուսերով ու պսակազարդ, վարդագույն ժապավեններ կապած պալատական աղջիկները խնձոր էին մաքրում Վորոբյիխայի հսկողությամբ, մի քանիսը ճյուղ ու ցախ էին կրում վառարանի մոտ, որի վրա եռում էր քաղցրաբույր, պղնձյա թասը, մի քանիսն էլ փռած զորգի վրա արքայորդուն էին զբաղեցնում. նիհարիկ, մեծաճակատ, մուգ ու անծպիտ աչքերով, լայնան բերանով երեխա էր։

Ոչ ոք նրա ուզածը չէր հասկանում։ Լայնակոնք աղջիկները կատվի պես միավում էին, շան պես հաչում, չորեքթաթ սողում էին, իրենց էին կոտորվում ծիծաղից, իսկ մանկիկը նրանց էր նայում չարությամբ՝ ուր որ է լաց կլիներ։ Եվդոկիան բարկանում էր.

— Ձեր մտքինն ուրիշ բան է, անխելքներ... Ստեշկա, ինչի՞ ես քամակդ բացել։ Ծիպտել էր պետք էդ բաց տեղերդ... Վասյոնկա, մի այծիկ ցույց տուր նրան... Մի բզեզ գտեք, մի չոփ խրեք ետևը, խելք չունե՞ք... Մի երեխա չեք կարողանում զբաղեցնել, ձրի հաց եք ուտում...

Եվդոկիան շոգում էր, աչքնան ճանճերը հոգեհան էին անում։ Հանել էր կիկան, կարգադրել մազերը սանրեն։ Բյուրեղ ու ջինջ օր էր, լորենիներից վեր անշարժ ու կապույտ երկինքն էր... Ամենափրկչի տոնն անցած չլիներ, իսկը լողանալու ժամանակ էր, բայց արդեն եղջերուն ջրի մեջ թրջել էր եղջյուրները՝ չէր կարելի, մեղք կլիներ...

Ու հանկարծ, ծառուղու վրա՝ երկայնահասակ, սև հագած, թխամաշկ մի մարդ... Եվդոկիան երեսը բռնեց։ Սիրտն այնպես բաբախեց, որ մտքերը շաղվեցին... Աղջիկները միայն «աահ» արեցին, և հյուսքերը ծածանելով ցրիվ եկան դեսուդեն շեփորուկի, մասրենու թփուտների ետև։ Պյոտրը մոտեցավ, բռնեց Եվդոկիայի թևատակերից, ատամներով ճզմելով, համբուրեց բերանը... Աչքերը փակեց Եվդոկիան, չպատասխանեց։ Ամառային բաց զգեստի տակից Պյոտրը համբուրում էր նրա խոնավ կուրծքը։ Եվդոկիան տնքաց, ամոթից կարկամած, դողացնում էր... Գորգի վրա մենակ նստած Օլեշենկան բարակ ձայնով, նապաստակի պես լաց եղավ... Պյոտրը բարձրացրեց, թոցրեց նրան, ու մանկիկը ոռնոցը դրեց...

Վատ հանդիպում էր։ Պյոտրը հարցնում էր ինչ-որ բաներ, Եվդոկիան պատասխանում էր անկապ, անտեղի... Մազերն արձակ, չհագնված... Մանկիկի ձեռուտը՝ մուրաբոտ... Իհարկե, ամուսինը մի քիչ մլուլ տվեց ու գնաց։ Պալատի մոտ նրան շրջապատեցին վարպետները, վաճառականները, գեներալները, բաժակակից ընկերները։ Հեռվից լսվում էր նրա ընդհատ քրքիջը։ Հետո գետակ իջավ, Ցարուգայի նավերը տեսնելու։ Այնտեղից էլ՝ Կուկույ... Էհ, Դունյա, Դունյա, ձեռքից բաց թողեցիր երջանկությունդ...

Վորոբյիխան ասաց, որ շտկվելիք գործ է: Գործի անցավ աշխուժով: Աղջիկներին ուղարկեց բաղնիքը վառելու: Դաչակներին ապպպրեց, որ տանեն, երեխային լվացնեն, հագցնեն: Ու շշնջաց թագուհու ականջին.

— Գիշերը չշփոթվես, աղունիկս: Բաղնիքում քեզ մի լավ կշոգեհարենք մեր իմացածով, գյուղական ձևով, կվաս կշփենք քարերին, մարմնիդ կնդրուկով կշփենք՝ էն տեսակ բուրմունք ունենաս որ... Տղամարդու համար էլ ամենակարևորը հոտն է... Դու էլ նրա ամեն խոսքի վրա ծիծաղիր շայուսնակ, գեղեցկուհիս, որ ամբողջ մարմնիդ իրար գա, կամացուկ, մանրիկ կծիծաղես, կոծքով... Մեռելն էլ կցնդի դրանից...

— Վորոբյիխա, նա գերմանուհու մոտ գնաց...

— Օ՛յ, թագուհի, նրա մասին ծպտուն էլ չհանես... Մե՞ծ բան ես գտել՝ գերմանուհի. թոի-վոի, ուշք ու միտքը՝ մի բան պոկի, հոգին՝ սև, մաշկը՝ լպրծուն... Իսկ դու ոնց որ մի փարթամ կարապ, անկողնում պառկած կդիմավորես, սիրող, ուրախ,— էլ ո՞ւր կմնա գերմանուհին...

Եվդոկիան հասկացավ, իրար անցավ: Բաղնիքը լավ տաքացրել էին: Աղջիկներն ու Վորոբյիխա տատը թագուհուն պառկեցրին թախտին, անանուխով ու կնդրուկով թրջված ալեկներով շփշփեցին մարմինը: Ընդարմացած ու ճեղքացած Եվդոկիային տարան ննջասենյակ, սանրեցին, շպարեցին, աչքերը ծարրեցին, անկողին մտցրեցին, վարագույրները քաշեցին, ու Եվդոկիան սկսեց սպասել...

Մկները կրթկրթացնում էին: Գիշերն իջավ, պալատը խաղաղվեց, դրսում անքուն պահակն էր թխկթխկացնում, սիրտն էր թկթկում բարձի վրա... Պետենկան չկար ու չկար... Վորոբյիխայի ասածները հիշելով, պառկած էր մթության մեջ ժպտալով, չնայած գերմանուհու հանդեպ ատելությունից ցնցվում էր փորն, ու ոտքերը սառն էին սառույցի պես. .

Արդեն պահակն էլ դադարեց թխկթխկացնելը, մկները սկսվեցին: Պալատական աղջիկների աչքին երևալն անգամ ամոթ կլինի վաղը... Այդուհանդերձ, Եվդոկիան սրտապնդվում էր, բայց հիշեց, թե ինչպես կերան հավը Պետրուշայի հետ առաջին գիշերը, և լաց եղավ ողբաձայն, դեմքը բարձի մեջ թաղած, թրջեց բարձը արցունքներով...

Մի տաք շնչառություն արթնացրեց նրան: Վեր թռավ. «Ո՞վ է, ո՞վ է...»: Քունը գլխին չհասկացավ, թե ով վրա ընկավ... Հասկանալուց հետո տնքաց դեռևս թարմ վիրավորանքից, բռունցքներն աչքերին սեղմեց... Պետրուշան մարդու նման չէր, հարբած, ծխաբույր, գերմանուհի լրբի մոտից ուղիղ իր՝ սպասելուց հոգնած կնոջ մոտ էր եկել... Զգուրգուրեց, բռնաբարեց լուռ ու սարսափելի.. Արժե՞ր հապա կնդրուկով լոգանք ընդունել...

Եվդոկիան քաշվեց անկողնու մի եզրը: Պետրուշան ինչ-որ բաներ մրթմրթաց, քնեց, ինչպես հարբած մուժիկը առվի մեջ: Վարագույրների արանքը կապտին տվեց: Եվդոկիան, ամաչելով Պետրուշայի երկար ու մերկ ոտքերից, ծածկեց նրան, կամացուկ լաց լինելով՝ Վորոբյիխայի ասածները զուր անցան...

Մոսկվայից սուրհանդակ եկավ. Նատալյա Կիրիլովնան նորից վատացել է: Դեսուդեն վազեցին, ցարին փնտրելու: Պրեոբրաժենսկոյեի նոր արվարձանում նստած էր գինվոր Բուխվոստովի խրճիթում կընունքի: Բլիթ էին ուտում: Յուրայիններից բացի, ոչ ոք չկար. պորուչիկ Ալեքսանդր Մենշիկովը, Ալյոշկա Բրովկինը, ում վերջերս Պյոտրը սպասյակ էր վերցրել իրեն, նաև իշխան-պապը: Սրամտում էին, ուրախանում: Մենշիկովը պատմում էր, թե ինչպես ինքն ու Ալյոշկան տասներկու տարի առաջ փախան տնից, ինչպես էին ապրում Զայացի տանը, թափառում, գողություն անում, թե ինչպես Ցառուզայի վրա հանդիպեցին Պյոտրին ու սովորեցրին ասեղը թշի միջով անցկացնել:

— Ուրեմն, էդ դո՞ւ էիր... Դո՞ւ...— զարմացած բղավում էր Պյոտրը:— Հետո մի կես տարի քեզ ման էի գալիս... Էն ասեղի համար եմ քեզ սիրում, Ալեքսաշկա:— Ու համբուրեց նրա բերանն ու լընդերը...

— Իսկ հիշո՞ւմ ես, Պյոտր Ալեքսեևիչ,— մատով սպառնալով, հարցրեց իշխան-պապը,— միտդ բեր ճիպոտս, ինչպես էի քեզ խրփում արարմունքներիդ համար... Ի՞նչ չարաճճին էիր... Մեկ-մեկ...

Եվ Նիկիտա Զոտովը պատմեց, թե ինչպես Պյոտրը, որ մատնաչափ երեխա էր, չէր էլ երևում գետնի վրա, բայց արդեն պետական խելք ուներ.. Մեկ-մեկ հարց կտար բոյարներին, նրանք կմտածեին, կմտածեին, պատասխանը չէին գտնի, իսկ նա թաթիկը թափ կտար, ու առ հա քեզ՝ պատասխանը... Հրա՛շք էր..

Սեղանի շուրջ բոլորը, բերանները բաց, լսում էին այդ զարմանալի պատմությունները, և Պյոտրը, թեև նման բաներ չէր հիշում, բայց քանի որ մյուսները հավատում էին, ինքն էլ էր գլխով անում...

Բուխվոստովը լցնում էր թասերը: Մի քիչ խորամանկ մարդ էր նա, հասարակ տեսքով ու անշահախնդիր: Պյոտրին հասկանում էր թե խմած, թե սթափ վիճակում, բայց Ալեքսաշկային, անշուշտ, հասնել չէր կարող. ոչ տարիքով էր ջահել, ոչ միտքն էր սուր... Ժպտում էր, սրտաբաց հյուրասիրում, զրույցին չէր խառնվում...

— Մի բան ասեմ,— սկսեց Մենշիկովը, մորեգույն, ոսկեկար թեզանիքով սփոռոցը խզխզացնելով (նստած էր ուղիղ, քիչ էր ուտում, խմիչքը չէր ազդում, մենակ աչքերն էին կապտում),— իմացել ենք, որ ցարական սպասյակ Ալեքսեյ Բրովկինը մարդու տալու մի գեղեցկուհի քույր ունի... Սույն գործի մեջ պետք է խառնվել...

Լրջաբարո Ալյոշկան ճպճպացրեց աչքերն ու հանկարծ զունատվեց... Ձեռ չքաշեցին, բոլորից շատ Պյոտրը, և նա հաստատեց, որ ճիշտ է, Ալեքսանդրա քույրը մարդու տալու է, բայց հարմար փեսացու չկա: Հայրը՝ Իվան Արտեմիչը, այնքան էր հպարտ դարձել, որ հիմա միջին կարողությամբ տեր վաճառականներին էլ չի ուզում նայել: Մեղեցինյան որձ շներ է բերել՝ մարդիկ վախենում են տան

մոտով անցնել: Խնամախոսներին քշում է, վզակոթին հասցնելով: Սանկան այն օրն է ընկել, որ ռռնում է օրուգիշեր. ամենալավ տարիներն են, վախենում է պսակի փոխարեն կույսի վեղար քաշի գլուխը, ու ամեն ինչ վերջանա հոր գոռոզության պատճառով...

— Ինչպե՞ս թե փեսացու չկա,— տաքացավ Պյոտրը:— Պորուչիկ Մենշիկով, հանեցեք ամուսնանալ...

— Չեմ կարող, ջահել եմ, կին պահել չեմ կարող, մին խեղ...

— Իսկ դո՞ւ, սրբազանագույն կիր Անիկիտա: Կուզե՞ս ամուսնանալ:

— Ջահել աղջկա համար մի քիչ ծեր եմ, որդիս... Ավելի շատ բ.... հետ եմ լինում...

— Լավ, հարբած սատանեք... Ալյոշկա, հորդ գրիր, ես եմ լինելու խնամախոս...

Ալյոշկան հանեց սև ու հսկայական կեղծամը, հանդիսավորությամբ խոնարհվեց մինչև հատակ: Պյոտրը կամեցավ տեղնուտեղը գնալ գյուղ՝ Բոլկինների տուն, բայց ներս մտավ Կրեմլից եկած սուրհանդակը, և Կիրիլովիչից նամակ հանձնեց: Թագուհին վախճանվել էր: Բոլորը վեր կացան տեղներից ու հանեցին կեղծամները, մինչ Պյոտրը նամակն էր կարդում: Ցարի շրթունքները կախվեցին, դողացին... Լուսամտագոգի վրայից առավ գլխարկը, քաշեց աչքերին: Արցունք էր հոսում այտերից: Լուռ դուրս եկավ, փոշի բարձրացնելով գնաց արվարձանի միջով: Ճանապարհի կեսին ընդառաջ եկավ կառքը, նստեց ու պացավ Մոսկվա:

Մինչ մյուսները առնում ու տալիս էին, թե ինչ է լինելու, Ալեքսանդր Մենշիկովն արդեն Լեֆորտի մոտ էր, մեծ լուր էր բերել. Պյոտրը դառնում էր միահեծան տեր: Ուրախացած Լեֆորտը գրկեց Ալեքսաշկային, ու նրանք ծածուկ փսփսում էին, որ Պյոտրը հիմա պիտի թողնի պետական գործերից խուսափելը. նրա ձեռքին է ամբողջ գանձատունը և ամբողջ զորքը, և ոչ ոք չպետք է ընդդիմանա նրա կամքին, բացի մերձավորներից, յուրայիններից: Մեծ արքունիքը հարկավոր է Պրեոբրաժենսկոյե տեղափոխել: Եվ Աննա Մոնսին հարկ է ասել, որ այլևս չկոտրատվի, ցարին հանձնվի ինքնամոռաց... Այդպես է պետք...

Մինչ ցարի գալը, Նատալյա Կիրիլովնային ձեռք չտվեցին: Թագուհին պառկած էր զարմացած, խեղդվածի պես կապտած դեմքով, կոպերն ամուր կկոցած էին, ուռած ձեռքերի մեջ՝ փոքրիկ սրբապատկեր կար:

Պյոտրը նայում էր այդ դեմքին... Թվում էր, թե այնքան է հեռացել մայրը, որ ամեն ինչ մոռացել է... Փնտրում էր՝ գոնե բերանի անկյունում մնացե՞լ է արը... Ոչ, ոչ... Երբեք այդքան օտար սեղմված չէին եղել այդ շրթունքները... Բայց չէ որ դեռ առավոտյան շնչահեղձ կանչել է. «Պետրուշայի՞ն... օրհնելո՞ւ...»: Զգաց, որ ահա և մենակ է ինքը, օտարների հետ... Անասելի խղճաց իրեն՝ լքյալին...

Ուսերը բարձրացրեց, խոժոռվեց... Լաց չնեղուց թթված բոլորուհիներից բացի, ճնշասեղմակում էին նոր պատրիարք Ադրիանը՝ փոքրամարմին, խարտիշահեր, բթավուն հետաքրքրությամբ ցարին նայող մի մարդ, և Պյոտրի քույրը՝ արքայադուստր Նատալյա Ալեքսեևնան: Քնքշաբարո և ուրախ աղջիկ էր, Պյոտրից երեք տարով մեծ: Կանգնած էր, վշտացած գեղջկավարի՝ այտը հենել էր ափին, մոխրագույն աչքերի մեջ մայրական խղճահարություն կար...

Պյոտրը մոտեցավ:

— Նատաշա... Մեղք էր մայրիկը...

Նատալյա Ալեքսեևնան գրկեց եղբոր գլուխը, պեղմեց կրծքին: Բոյարուհիները կամացուկ ողբացին: Ավելի լավ տեսնելու համար, թե ցարն ինչպես է լալիս, պատրիարք Ադրիանը մեջքը դարձրեց հանգուցյալին, բացեց բերանը... Օրորվելով ներս մտավ Լև Կիրիլովիչը, ամբողջովին թաց մորուքով, հում մսի պես, ուռած թշերով, ընկավ ճնշեցյալի առաջ, անշարժացավ, միայն հետույքը ցնցելով:

Նատալյա Ալեքսեևնան եղբորը տարավ վերև, իր սենյակը, մինչ կլողացնեին ու կհագցնեին ճնշեցյալին: Պյոտրը նստեց գույնզգույն ապակիներով, փոքր պատուհանի մոտ: Այստեղ համարյա ոչինչ չէր փոխվել մանուկ օրերից: Նույն պստիկ սնդուկներն ու գորգերը, արծաթյա, ապակյա ու քարե գազանիկներ՝ պատվանդանների վրա, վենետիկյան շրջանակով սրտաձև հայելին, պատկերազարդ թերթերը Սուրբ գրքից, անդրծովյան խիտունջները...

— Նատաշա,— հարցրեց կամացուկ,— հիշո՞ւմ ես, մի թուրք ուներիր, սարսափելի աչքերով, ո՞ւր է... Գլուխն էլ կոտրել էինք:

Նատալյա Ալեքսեևնան մտածեց, բացեց սնդուկը, տակերից հանեց թուրքն ու նրա գլուխը: Ցույց տվեց, հոնքերը կիտվեցին: Մոտեցավ եղբորը, նստեց, պինդ գրկեց նրան, երկուսն էլ լաց եղան:

Երեկոյան դեմ, ոսկեկար պատմուճան հագցրած Նատալյա Կիրիլովնային դուրս հանեցին Նատատաշ պալատում: Դագաղի մոտ, մոմերի արանքում դրված գրակալի վրա հակված Պյոտրը խուլ ու թավ ձայնով աղոթքներն էր կարդում: Երկու դռների մոտ երկուական ճերմակազգեստ գինակիր էին կանգնած՝ կացնիկներն ուսած, անձայն իրար գալով: Հանգուցյալի ոտքերի մոտ ծնկաչոք Լև Կիրիլովիչն էր... Պալատում բոլորը հոգնած քնած էին...

Կեսգիշերին դուռը հոռաց, և ներս մտավ Սոֆյան, սև ու կոշտ քղամիդով ու սև փեղուլով: Եղբորը չնայեց, շրթունքները հպեց Նատալյա Կիրիլովնայի կապտավուն ճակատին ու նույնպես ծունկ չոքեց: Պյոտրը շրջում էր մոմի կաթիլներից իրար կպած էջերը, կիսաձայն կարդում: Երկար ընդմիջումներից հետո գնգում էին կոչնակները: Սոֆյան աչքի տակով եղբորն էր նայում: Երբ լուսամուտն սկսեց կապտել, Սոֆյան անաղմուկ վեր կացավ, մոտեցավ գրակալին ու շշնջաց.

— Կշարունակեմ... Հանգստացիր...

Ակամա սեղմվեցին Պյոտրի սկանջներն այդ ձայնից, կմկմաց, ուսը ցնցեց ու հեռացավ: Սոֆյան շարունակեց կիսաձայն թողած տեղից, կարդալու ընթացքում մատներով պոկեց մոմի այրված պատ-

թույլը: Պյոտրը հենվեց պատին, բայց գլուխը քսվում էր կամարին: Նստեց սենդուկի վրա, կոթեց ծնկներին, դեմքը ծածկեց: Մտածեց. «Միևնույն է, չեմ ներելու...»: Այսպես անցավ հնավանդ վերջին գիշերը կրեմլյան պալատում...

Երրորդ օրը, հենց թաղումից հետո Պյոտրը մեկնեց Պրեոբրաժենսկոյե և պառկեց քնելու: Եվդոկիան ավելի ուշ եկավ: Նրան ճամփու դրեցին բոյարուհիները խմբովի՝ անունները անգամ չգիտեր: Այժմ մայր-թագուհի էին կոչում նրան, քծնում էին, մեծարում, խնդրում շնորհ անել ու թույլ տալ ձեռքը համբուրել... Հազիվ ազատվեց նրանցից: Մտավ որդու մոտ, հետո՝ ննջասենյակ: Պյոտրը, ինչպես եկել էր, շորերով պառկած էր ատլասե սպիտակ անկողնու վրա, միայն փոշեկոլոլ ոտնամանները էր հանել: Եվդոկիան կընճռոտեց դեմքը. «Օ՜հ, էս կուկուլական սովորությունները, խմեն ու հենց էդպես էլ վեր ընկնեն...»: Նստեց հայելու դիմաց, սկսեց հանվել՝ ճաշից առաջ հանգստանալու... Մտքից չէին գնում պալատական բոյարուհիները, նրանց շողոմ խոսքերը: Ու հանկարծ հասկացավ. ինքը հիմա լիիշխան թագուհի է... Աչքերը կկոցեց, շուրթերը սեղմեց թագուհուն վայել... «Աննա Մոնսիհ՝ ցմա՛հ Սիբիր. պա առաջինը... Ամուսնուս բուռս կհավաքեմ... Իհարկե, հանգուցյալ մկեսուրս, որ ատում էր ինձ, չարախոսելուց բացի ուրիշ գործ չուներ... Հիմա ուրիշ կլինի: Երեկ Դունյա էր, այսօր թագուհի համայն Մեծ և Փոքր և Սպիտակ... (Պատկերացրեց, թե ինչպես է ելնում Ուսպենսկի տաճարից, բոյարների առջևից, զանգերի ղողանջների տակ հայտնվում է ժողովրդին՝ շունչը կտրվեց:) Թագավորական նոր ու կարգին զգեստ է պետք կարել տալ, Նատալյա Կիրիլովնայի հնոտիքը հագնողը չեմ... Պետրուշան մշտապես գնում է իր գործերով, ինքս պիտի կառավարեմ... Սոֆյան որ կառավարում էր, ինչ էր, մի քիչ էր մեծ ինձնից: Պետք եղավ մի բան մտածել ու վճռել, բոյարներն ինչի՞ համար են, թող մտածեն... (Հանկարծ քթի տակ ծիծաղեց, պատկերացրեց Լև Կիրիլովիչին:) Մեկ-մեկ հազիվ կնկատեր իրեն, չէր էլ նայի, իսկ այսօր թաղման ժամանակ մի գլուխ թևն էր բռնում, հայացքով բարեհաճությունը որոնում... Ուու՜, հաստաբամակ անխելք...»:

— Դունյա... (Նա ցնցվեց, շուտ եկավ:)— Պյոտրը պառկած էր կողքի վրա, բազկին հենված:— Դունյա... Մայրիկը մեռավ... (Եվդոկիան արտանաունքները նկնչացրեց:) Դատարկվեց... Քունս տարել էր... Էհ, Դունեչկա...

Պյոտրը կարծես ինչ-որ բան էր սպասում նրանից: Աչքերը խղճալի էին: Բայց կնոջ մտքերը թափ էին առել, շատ էր արտոտել.

— Ուրեմն, էդպես էր պետք ապտծուն... Հո չենք տրտնջալու... Լաց եղանք, պրծավ: Թագավոր ենք, ինչքան չլինի... Ուրիշ հոգսեր էլ ունենք... (Պյոտրը դանդաղ իջեցրեց բազուկը, նստեց, ոտքերը կախեց: Գուլպան ծակ էր բթամատի վրա:) Մի բան էլ ասեմ՝ հարմար ու լավ չէ շորերով ատլաս վերմակի վրա պառկել... Ամբողջ

ժամանակ զինվորների ու մուժիկների հետ ես, արդեն ժամանակն է...

— Ի՜նչ, ի՜նչ,— ընդհատեց Պյոտրը, ու նրա աչքերը կենդանացան:— Հո թունավոր սունկ չե՞ս կերել, Դունյա...

Դունյան վախեցավ նրա հայացքից, սակայն շարունակեց, թեև արդեն ուրիշ ձայնով՝ նույն հիմարությունը, որ հասկանալի չէր ամուսնուն: Երբ բերանից թոցրեց, թե «Մայրիկը միշտ ինձ ատում էր, հենց հարսանիքի օրվանից, շատ արցունք եմ թափել», Պյոտրը միանգամից մերկացրեց ատամները, սկսեց ոտնամանները հագնել:

— Պետրուշա, ծակ է, չե՞ս տեսնում, գուլպաներդ փոխիր, տեր աստված...

— Տիմար մարդ շատ էի տեսել, բայց քո պես... Հը՛, հը՛... (Պյոտրի ձեռքերը ցնցվում էին:) Էս մի բանը ես քեզ կհիշեցնեմ, Դունյա, մայրիկի մահը: Կյանքումս մի անգամ քեզ խնդրեցի... Չե՞մ մոռանա...

Ու ելնելիս, այնպես շրխկացրեց դուռը, որ Եվդոկիան կծկվեց: Ու դեռ երկար ժամանակ զարմացած էր, հայելու առաջ նստած... Լավ, ի՞նչ ասաց որ... Կատաղած է, ուղղակի կատաղած...

Լեֆորտը վաղուց էր Պյոտրին սպասում ննջասենյակի նախասրահում: (Թաղմանը հեռվից էին տեսել իրար:) Թափով բռնեց նրա ձեռքերը.

— Օ՜, Պիտեր, Պիտեր, ինչպիսի կորուստ... (Պյոտրի զայրույթը դեռ չէր անցել:) Թույլ տուր վշտակցել քեզ... Իխ կոնդոլիրե, իխ կոնդոլիրե... Մայն հերց իստ ֆոլլ շմերցեն... Օ... Իմ սիրտը լի է շմերցենով... (Ինչպես միշտ, հուզվելիս, նա խառնում էր լեզուն, ու դա առանձնապես էր ազդում Պյոտրի վրա:) Ես գիտեմ՝ անտեղի է սփոփելը... Բայց վերցրու, վերցրու իմ կյանքն ու մի տառապիր, Պիտեր...

Պյոտրն ամբողջ ուժով գրկեց նրան, այտը հպեց նրա բուրումնավետ կեղծամին: Հավատարիմ ընկեր էր Լեֆորտը... Եվ շշնջաձայն ասաց.

— Գնանք ինձ մոտ, Պիտեր... Ցրիր քո տխրությունը... Մենք մի քիչ կծիծաղեցնենք քեզ, եթե ուզում ես... Կամ՝ ցուզամրն վեյնեն... Համատեղ կլացենք...

— Այո, այո, գնանք, Ֆրանց...

Ամեն ինչ նախապատրաստված էր Լեֆորտի տանը: Հինգ հոգու համար սեղան էր գցված դռներն այգու վրա բացվող փոքրիկ հյուրասենյակում, այգու թփերի ետևը երաժիշտներին էին թաքցրել: Սպասավորում էին երկու թզուկ՝ հոոմեական բանկոնակներով, թվկենու տերևներից հյուսված պսակներով՝ Թոմոն ու Սեկան: Ամբողջ սենյակը լարերով ագուցված վարդերով էր պատված: Սեղան նստեցին՝ Պյոտրը, Լեֆորտը, Մենշիկովը և իշխան-պապը: Ոչ օղի կար, ոչ օղու սովորական աղանդեր: Ոսկեզօծ մատուցարանները

գլխներից վեր պահած, թզուկները տասպական ճնճղուկի և լորի մասով կերակուր բերեցին:

— Հինգերորդ ափսե՞ն ում համար է,— հարցրեց Պյոտրը:

Լեֆորտը ժպտաց, բերանի ծայրերը բարձրացնելով...

— Այսօր հռոմեական ընթրիք ենք անում ի փառս Ցեռերա աստվածուհու, որ անչափ նշանավոր է յուր Պրոզերպինա դստերն առնչվող սիրային պատմությամբ...

— Իսկ ի՞նչ պատմություն է,— հարցրեց Ալեքսաշկան: Նա նըստած էր մետաքսյա կաֆտանով, գոտկահաս գանգուրներ ունեցող կեղծամով, ծայրաստիճան խոնարհ տեսքով: Նույնպես էր հագնըված և Անիկիտան...

— Պրոզերպինային փախցրել էր դժոխքի աստված Պլուտոնը,— խոսեց Ֆրանցը,— մայրը վշտահար էր... Թվում է, թե վերջ պատմությանը: Սակայն ո՛չ՝ մահ չկա, այլ հավերժական վերածնում... Տարաբախտ Պրոզերպինան հողի միջով անցավ ու նոան անմեռ պտուղ դարձավ ու այդպես հայտնվեց մորն՝ ի ափոփում...

Պյոտրը լուռ էր ու տրտում: Այգում մութ էր ու խոնավ: Բաց դռնան միջից աստղերն էին երևում: Սենյակից ընկնող լույսի շերտի միջով երբեմն չոր տերև էր ընկնում:

— Իսկ ո՞ւմ համար է ապասքը,— նորից հարցրեց Պյոտրը:

Լեֆորտը մատը բարձրացրեց: Այգում ավազը խշրտաց: Ներս մտավ Անխենը՝ փարթամ զգեստով, ձախ ձեռքում հասկեր, աջով կողին էր սեղմել գազարով, սալաթով, բողկով ու խնձորով լի մատուցարանը: Մազերը վեր էին սանրած ու գնդած, վարդեր էր խրել մազերի մեջ: Մոմերի լույսի տակ աքանչելի էր նրա դեմքը:

Պյոտրը ոտքի չելավ, միայն ձգվեց, աթոռի բռնակներից կառչած: Աննան մատուցարանը նրա առաջ դրեց, ծունկը ծալեց խոնարհվելով, ըստ երևույթին նրան սովորեցրել էին ինչ-որ բաներ ասել, բայց ոչինչ չասաց, շփոթվեց, ու այդպես նույնիսկ ավելի լավ եղավ...

— Ցեռերան քեզ պտուղներ է բերում, և սույնը նշանակում է՝ չկա՞ մահ... Ընդունիր ու ապրիր,— բացականչեց Լեֆորտը և մոտ քաշեց Աննայի աթոռը: Նա նստեց Պյոտրի կողքին: Ֆրանսիական փրփրուն գինի լցրեցին: Պյոտրը հայացքը չէր կտրում Աննայից: Բայց դեռևս ճնշվածություն կար սեղանի շուրջ: Աննան մատները դրեց Պյոտրի ձեռքի վրա.

— Իմ կոնդոլիրե, հեռ Պիտեր: (Նրա խոշոր աչքերում արցունքներ երևացին:) Ամեն ինչ կտայի, ձեզ սփոփելու համար...

Գինուց, Անխենի մոտիկությունից ջերմություն էր տարածվում մարմնի մեջ: Իշխան-պապն արդեն աչքով էր անում: Ալեքսաշկան զվարճանալու բուռն ցանկություն ուներ: Լեֆորտը թզուկին այգի ուղարկեց, և այնտեղ հնչեցրին լարերն ու դափերը: Աննուշկայի զգեստը խշխշում էր, աչքերը չորացան, ինչպես երկինքն անձրևից հետո: Պյոտրը թոթափեց տխրությունը.

— Գինի՞ լցրու, Ֆրանց, գինի՞...

— Էդպես է, որդի,— կնճիռների տակից հայացքը շողացնելով, ասաց Անիկիտան,— հունական ու հռոմեական աստվածների հետ ավելի հարմար է...

18.

Օկայից այն կողմ տարածվող թավուտ անտառներում (որ ապրեցին ամբողջ ամառ) թշվառ Օվդոկիմը իրեն զգում էր, ինչպես ձուկը ջրում՝ հաջողակ էր ու համարձակ: Փորձված ու թրծված մուժիկներից ոչ մեծ մի հրոսակախումբ հավաքեց՝ մահ ու արյունից չէին վախենում, գուր տեղը չէին կողոպտում: Որջը ճահճում էր, կղզու վրա, ուր ոչ մարդ, ոչ գազան չէին կարող հասնել, միայն մի խրուտ արահետ էր բերում այստեղ: Ամբողջ ավարն այստեղ բերեցին հացը, մսեղենը, գինին, հագուստը, եկեղեցիներից թալանած արծաթեղենը: Ապրում էին ճյուղածածկ փոսերի մեջ: Դարավոր սոճենու վրա դիտակետն էր, ուր բարձրանում էր Հուդան՝ շրջակայքը զննելու:

Կղզու վրա ընդամենը ինն ավազակ կար, երկու հոգի էլ՝ ամենահամարձակները, որպես հետախույզ թափառում էին պանդոկներում ու ճանապարհների վրա: Մոսկվայից վաճառականի գումակ գալի՞ս է արդյոք Տուլա, կամ բոյարինը պատրաստվո՞ւմ է գյուղ գնալ, կամ հարկահավաք ու կատարածու խմած ժամանակ պարծեցել են մի տեղ թաղած կճուճով, անմիջապես գյուղացի մի տղա, մտրակը կամ զամբյուղն առած, մութ անտառ կմտներ, այնտեղից էլ շնչապատառ կկազեր կղզի: Կսուլեր: Պահակետից ի պատասխան Հուդան կսուլեր: Գետնափոր հյուղակից դուրս կսողար երկտակված Օվդոկիմը: Տղային ճահճի միջով կղզի կտանեին ու այնտեղ հարցուփորձ կանեին: Մեծ ճանապարհի եզրերի բոլոր բնակատեղիներում Օվդոկիմն այդպիսի լրաբերներ ուներ: Թեկուզ կտոր-կտոր անեիր՝ լուռ կմնային... Օվդոկիմը փայփայում էր նրանց՝ կկերակրեր, մի-մի կոպեկ կտար, հորից ու մորից կհարցներ, բայց թե՛ երեխաները, թե՛ մեծերը վախենում էին նրանից. հանգիստ էր ու զվարթ, բայց հենց բարեհամբուրությունն էր սարսափ պիտում:

Կյանքը մռայլ էր ճահճում: Երեկոն չիջած, կաթնամսան մշուշ էր տարածվում: Ցնքում էին ոսկորները, ցավում վերքերը: Գիշերները կրակ անել չէր թույլատրում Օվդոկիմը... Մի անգամ ավազակներից մեկը ձենը գլուխը գցեց՝ շատ խավար գիշեր էր. «Մեր գլխին քիչ վոյեվոդա ու կալվածատեր կար, էս մեկին էլ սատանեն նստեցրեց գլխներիս»,— ասաց ու խարույկ վառեց: Օվդոկիմը ծղպտալով մոտեցավ նրան, ցուպերը ձախ ձեռքն առավ ու աջով բռնեց կոկորդից: Կրակ անողի լեզուն ու աչքերը դուրս պրծան՝ մարմինը գցեցին ճահիճը:

Արեգակը բարձրանում էր դեղին-դեղին, չէր տաքացնում, ծառերը կիսով թաղված էին մշուշի մեջ: Ավազակները հագում էին,

քորքում խոշտանգված հետույքները, կոշիկներն էին փոխում, տաբացնում կաթպայիկները:

Իսկական գործ չկար: Լավ էր, եթե անտառից սուլեր լրաբերը: Այլապես ամբողջ օրը քնում էին՝ շշմելու չափ: Ձանձրույթից հեքիաթ էին պատմում, աքսորական, սրտմաշուկ երգեր երգում: Հազվադեպ ու քիչ էին հիշում իրենց կյանքից: Հուդայից ու Ժեմովից բացի, բոլորը փախած էին կալվածատերերից՝ նրանց բռնում էին, շղթայում, ու նորից փախչում էին նրանք բանտերից:

Օվդոկիմը հանախ, մամռապատ մի քարի նստելով, պատմություններ էր անում: Մոայլված լսում էին նրան անտառի անշաբեր լռության մեջ՝ անհասկանալի գիծ էր առաջ տանում Օվդոկիմը... Ավելի լավ կաներ, բացահայտորեն ստեր ուրիշների պես, օրինակ. տղերք, էս է, շուտով կգտնեն ցարական ոսկեգիր հրամանը, ու բոլորին ազատություն կտան՝ ոնց կուզես, ապրիր, սուսուփուս, կուշտ, աչքից հեռու... Ինչ խոսք, հեքիաթ կլինեը, բայց սոհիների խոնավ խշշոցի տակ անուշ մտքեր կբերեր... Չէ, նա երբեք մխիթարական խոսքեր չէր ասում...

— Տղերքիս ասեմ, մի ժամանակ կար, անցավ-գնաց, էլ ետ չի գա... Ման էի գալիս մահուդե կափտանով, սուրս սրած, կողքիցս կախ, գլխարկիս մեջ անմման նամակները կարած... Բայց կգա ժամանակը, տղերք, դրա համար եմ ձեզ անտառում պահում... Տկլոր ու չքավոր մարդիկ հավաքվեցին, ագռավների պես երամերում թռան եկան, թիվ ու համար չկար... Ոսկեգիր հրաման ունեին հետները, կազակ Ստեպան Տիմոֆեևիչի կափտանի մեջ էր կարած... Հրամանն արյունով էր գրված, արյունը մեր վերքերից էին վերցնում, սուր դանակով էին գրում... Հրամանում ասված էր. բոլոր հարուստներին, բոլոր ազնվականներին իրենց կալվածքներով, քաղաքներով ու պոսադներով, թագավորանիստ Մոսկվա քաղաքն էլ հետը, խնայել չլինի, ավերակ դարձնել... Ու էդ ավերակների վրա կազակական ազատ համայնք հիմնել... Ախ, գործը գլուխ չեկավ, ես ձեզ մատաղ... Բայց պիտի որ լինի, կլինի... Աղավնագրքում է գրված...

Մորուքը ցոպին դրած, ջրագույն աչքերով նայում էր խրուտ ճանճին, անձայն ճմլում այտին նստած մոծակն ու ժպտում հեգությամբ:

— Մինչև Սատվածին կապրենք, էստեղ սունկը շատ է... Առաջին ձյունը հենց եկավ, ձեզ տանելու եմ, տղերք, բայց հիմա ոչ թե Մոսկվա... Էնտեղ դժվարացել է: Քրեական ատյանում իշխան Ռոմոդանովսկուն են նստեցրել, ու նրա մասին ասում են. էն օրերը, որ արյուն է խմում, ուրախ է, էն օրերը, որ չի խմում, հաց էլ չի կարողանում ուտել... Տանելու եմ ձեզ Վրյոգ գետի կողմերը, խորքերը, աղանդավորների ապաստանները: Մի մեծ խուց կա էնտեղ, թախտերով, պատուհաններ ունի՝ ցարի ուղարկած մարդկանցից պաշտպանվելու համար: Հրացան ու վառոդ շատ կա: Մի վանական է ապրում էդ խցում, կարճիկ, ճերմակած ու ծեր: Վրյոգով

մեկ ցրված երկու հարյուր շունչ աղանդավոր ունի ձեռի տակ... Իրենց տներն ունեն ցցաբերանների վրա, վարն առանց ձի են անում, ինչ ասում է վանականը, էն են անում, ու անընդհատ նրանց թիվը շատանում է: Ու ոչ ոք ոչ մի բան թաքուն պահել չի կարող, ամեն շաբաթ խոստովանություն են անում նրան, իսկ վանականը մի հատիկ հապալաս ու հանարի կամ գարու ալյուր առնելով ու խառնելով, դրանով է հաղորդություն տալիս: Թաքուն ճամփեքով ձեզ կհասցնեմ իրիկնամուտի էն պարտեզը ու էնտեղ, տղերքիս ասեմ, կհանգստանանք չարիքից...

Լսելով Վրյգի մասին, ավազակները հոգոց էին հանում, սակայն հազիվ թե մեկը հավատար, որ տեղ կհասնեն ողջ ու առողջ: Նույն հեքիաթն էր:

Օվդոկիմը սակավ էր ելնում գործի, կղզում մենակ մնալով, շփոթ էր եփում, շալվար ու շապիկ լվանում: Սակայն երբ գոտկի ետևը խրած նախշած լախտը՝ ելնում էր, հասկանում էին, որ ծանր գործ է սպասվում: Իր թշվառությամբ հանդերձ, սարդի պես ճարպիկ էր, երբ գիշերով այնպես սուլելով, որից մազերը բիզ-բիզ էին կանգնում, նետվում էր ձիերի դեմն ու լախտով հարվածում նրանց ճակատներին: Եթե երևելի կամ հարուստ էր լինում ճամփորդը, խնայել չգիտեր, ինքն էր սպանում մարդկանց: Հետի մարդկանց, վախեցնելով, ազատ էր արձակում, բայց վատ էր նրանց բանը, ովքեր ճանաչում էին իրեն դեմքով:

Մոսկվայում գիտեին Տուլայի ճանապարհի վրա այդ անկարգությունների մասին ու մի քանի անգամ գինվորներ էին ուղարկել, պորուչիկների գլխավորությամբ՝ ավազակախումբը ոչնչացնելու: Բայց նրանցից և ոչ մեկը անտառից չվերադարձավ, գինվորների տարաբախտության մասին միայն խրուտ ճահիճները գիտեին, ուր քաշում-տանում էր նրանց Օվդոկիմը...

Այդպես էին ապրում՝ կուշտ էին, ոչինչ: Ամռան վերջին Օվդոկիմը մանր-մունր բաներ հավաքեց և Գնչուին, Հուդային ու Ժեմովին ուղարկեց Տուլայի մեծ շուկան՝ ծախելու.

— Ձեզ մատաղ, փողերը կբերեք, մեղք չանեք ձեր հոգուն... Թե չէ, մեկ է, ողջ չեք պրծնի, չէ... Կգտնեմ...

Մի շաբաթ ետ միայն Հուդան վերադարձավ՝ գլուխը կոտրված, ձեռնունայն, սնիոր: Կղզում ոչ ոք չկար՝ խարույկի սառը մոխիրն ու լաթերեն էր մնացել սոսկ: Սպասեց, ձայն տվեց: Ոչ ոք չկար: Սկսեց փնտրել թաքստոցն, ուր Օվդոկիմը փողն ու արծաթի ձույլերն էր պահում, բայց չգտավ:

Կանգնած էր անտառը՝ կարմիր ու դեղին, սարդոստայնի թելեր էին թռչում, տերևաթափ էր: Տրտմեց Հուդայի հոգին, չորացած հացի կտորտանք հավաքեց ու գնաց մի կողմի վրա՝ թերևս դեպի Մոսկվա: Եվ ճանիճն անցնելուն պես դեմ ընկավ հին ընկերներից մեկին, Նարիշկինենի նորտագրված գյուղացի Ֆյոդոր Ֆյոդորովին:

Սուսուփուս, բազմանդամ ընտանիքի տեր, ձիու պես անտրտունջ մարդ էր Ֆյոդորը, ծանր կոռի տակ կքած, կարելի էր ասել, իր

մարմնով էր կերակրում բազմաթիվ երեխաներին: Մի բան կար միայն՝ խմելուց ցավը գլուխն էր խփում, բիրն առած շրջում էր գյուղում, սպառնում Նարիշկինների կառավարչին երկու կես անել: Ինքն էր սպանել կառավարչին, թե մեկ ուրիշը, բայց Ֆյոդորը երդվեց երեխաներին, որ խիղճը մաքուր է աստծու առաջ և փախստական դարձավ: Հիմա նա կախված էր արճենու ճյուղից, թևերը ոլորած, գլուխը ծռված, իսկ դեմքին Հուդան չնայեց էլ... «Էհ, իմ ընկեր»,— լաց եղավ ու խուլ կածանների հեռացավ այդ կողմերից...

19.

Եթե բարձրաստիճան բոյարները, որոնք կրեմլյան պալատում արքայական Դումայի հոգսերի շուրջ պիտի մտածեին, դեռևս հույս ունեին աստծո տվածով ապրել՝ «Ջահել ցար է, թափը կնստի, գործերը կարգի կգան, անհանգստանալու կարիք չկա, ինչ էլ պատահի, մուժիկները միշտ էլ կկերակրեն», եթե Պրեոբրաժենսկոյեում, ամեն կարգի նորանոր ընչաքաղց մարդկանցով, վաճառականներով ու պապենական պատիվը դնովի ծամերով փոխարինած ազնվականներով շրջապատված Պյոտրը հիմա, ամենայն անզսպությամբ վատնում էր գանձարանը ռազմական ու այլ զվարճանքների, նավեր, գինովորական ախմաններ ու սիրելիների համար պալատներ կառուցելու վրա, ուրախանում էր անհոգ ու ապերասան, եթե պետությունը առաջվա պես ճոռում էր ցեխի մեջ թաղված սայլի պես, ապա Արևմուտքում (Վենետիկում, Հռոմեական կայսրության մեջ, Լեհաստանում) գործերն այնպիսի ընթացք էին ստացել, որ մոսկովյան նիրհին ու երկդիմությանն այլևս չէին կարող դիմանալ: Հյուսիսային ծովում տերությունների էին անում շվեդները, Միջերկրականում՝ թուրքերը, որոնց ծածուկ օգնում էր ֆրանսիական թագավորը: Թուրքական նավատորմը գրավում էր վենետիկյան առևտրական նավերը: Թուրք ենիչերիները ասպատակում էին Հունգարիան: Սուլթանին հպատակ դրիմյան թաթարները ազատ շրջում էին լեհական հարավային տափաստաններում: Իսկ Մոսկովյան պետությունը, որ պայմանագրի համաձայն պիտի կռվեր թաթարների ու թուրքերի դեմ, միայն խուսափողություններ էր ուղարկում, դանդաղում ու պոչ էր խաղացնում. «Երկու անգամ զորքեր ուղարկեցինք Ղրիմ, իսկ դաշնակիցները մեզ պաշտպան չեղան, այս տարի էլ բերքը սակավ է, հարկ է սպասել եկող տարվան, կովելուց չենք հրաժարվում, սակայն տպասում ենք, որ դուք սկսեք, մենք էլ, աստված է վկա, ասատար կլինենք»...

Մոսկվայում նստած էին Ղրիմի խանի դեսպանները, առատ ընծաներ էին մատուցում բոյարներին, համոզում Ղրիմի հետ հաշտության մշտական դաշնագիր կնքել, երդվում էին, որ այլևս չեն ասպատակի ռուսական հողերն ու նախկին ամոթաբեր տուրքը չեն պահանջի: Լև Կիրիլովիչը նամակներ էր գրում Վիեննա, Կրակով ու Վենետիկ, ռուս մեծն դեսպաններին, որ կայսերական, թագավորական ու դոժական խոստումներին չհավատան, ու իրենք էլ խուսափողական հավատիացումներ տան: Այդ քաշքշուկն արդեն երեք տարի էր տևում: Թուրքերը սպառնում էին սրի քաշել ամբողջ Լեհաստանը, Վիեննայում ու Վենետիկում կիպպուսնի դրոշ բարձրացնել: Եվ ահա Վիեննայից Մոսկվա ժամանեց կայսերական դեսպան Յոհանն Կուրցիուսը: Բոյարները վախեցան՝ հարկ էր վճռել: Մեծ շուքով ընդունեցին դեսպանին, հարուստ պալատներում տեղավորեցին, այլ դեսպանների համեմատությամբ կրկնակի սննդադրամ նշանակեցին, ու սկսեցին խճճել, խաբել ու ձգձգել, պատճառաբանելով, թե ցարը ռազմախաղերի մեջ է, իսկ առանց նրա ոչինչ վրճռել չեն կարող:

Այնուամենայնիվ, ստիպված էին պատասխան տալ: Յոհանն Կուրցիուսը բոյարներին պատին դեմ արեց հին պայմանագրերով, հարկադրեց, որ ասեն՝ պատերազմ կլինի, ու խաչը համբուրեցին ի նշան համաձայնության: Ուրախացած Կուրցիուսը մեկնեց: Հռոմեական կայսրից ու լեհաց թագավորից Մոսկվա հասան շնորհակալական նամակներ, որոնցում ցարին «մեծություն» էին կոչել լիաբերան տիտղոսներով, ընդհուպ մինչև «թագավորն Իվերյան, Վրացական ու Կաբարդական և Պապենական ու Հորենական մարգերի»: Դրանից հետո հաջողվեց որոշ ժամանակ էլ ձգել: Սակայն արդեն պարզ էր, որ պատերազմն անխուսափելի է...

20.

Բարեկենդանի շաբաթից հետո, երբ մեծպասյան ղողանջները սփռվեցին մեղմ արշալույսում խաղաղված Մոսկվայի վրա, պատերազմի մասին խոսել սկսեցին միանգամից բոլոր շուկաներում, արվարձաններում ու պուսադներում: Ասես մի գիշերվա մեջ մարդկանց ականջներին շշնջացել էին. «Պատերազմ եղավ, ինչ-որ բան էլ կլինի: Իսկ եթե Ղրիմը մերը եղավ, առևտուր կանենք ամբողջ աշխարհի հետ... Ծովը մեծ է, ոստիկանը մի կոպեկի համար բերանդ չի ճղի»...

Վորոնեժի, Կուրսկի, Բելգորոդի մերձակայքից ցորենի գումակների հետ եկած խուտորաբնակ մուժիկները և մուժիկացած միածուխ կալվածատերերը պատմում էին, որ տափաստաններում անհամբեր են սպասում թաթարների դեմ մղվելիք պատերազմին... «Մեր տափաստանները կես օրվա ճամփա մինչև արևմուտք են ձգվում, դեպի արևելք՝ հազարավոր վերստերով: Հասած աղջկա պես տափաստան է, մենակ շալվարդ թափ տաս վրան, մինչև բուկդ ցորենի մեջ կթաղվես... Թաթար-մաթարը չեն թողնում... Մերոնցից քանի-քանի՞սն են գերի քշվել Ղրիմ՝ է՞խխխ... Հապա տափաստանի ազատությունը, ինչ ազատություն է, էստեղի պես հո չի, մոսկալներ...»:

Ամենից շատ Կուկույում էին վիճում պատերազմի մասին: Շատերը հավանություն չէին տալիս. «Սև ծովը մեզ հարկավոր չէ, թուրքերին ու Վենետիկ ոչ անտառանյութ կտանես, ոչ կուպր, ոչ էլ ճարպ... Հյուսիսային ծովերն է պետք նվաճել...» Սակայն զինվորները, հատկապես ջահելները, ջերմորեն կողմնակից էին պա-

տերազմին: Այդ աշնանը երկու բանակով Կոժուխովո գյուղի մերձակայքն էին գնացել և այնտեղ, ոչ անցյալ տարիների պես, պատերազմել էին խիստ կանոնավոր: Լեֆորտի և Բուտիրսկու, ռազմախաղի պրեոբրաժենյան և սեմյոնովյան գնդերի մասին, որոնք հիմա լեյբ-գվարդիա էին կոչվում, օտարերկրացիներն ասում էին, որ չեն գիջի շվեդներին ու ֆրանսիացիներին: Սակայն կոժուխովյան արշավի փառքով հպարտանալ կարելի էր թերևս խնջույքներին, կենաց բաժակաճառերի, թմբկազարկի ու թնդանոթաձգության որոտի տակ: Սնապույր կեղծամներով, մետաքսյա գնոնանման վզնոցներով ու հսկայական խթաններով ռայտերը քանիցս լսել էին ետևից շպրտված խոսքեր. «Կոժուխովականնե՞ր, թոթե ռումբերով կընվեցուց եք քաջ, թաթարական գնդակնե՞ր չեք փորձել...»:

Տատանվում էին միայն ամենամերձավորները՝ Ռոմոդանովսկին, Անտոնն Գոլովինը, Ապրակսինը, Գորդոնը, Վինիուսը, Ալեքսանդր Մենշիկովը. ձեռնարկումը սարսափելի էր թվում... «Բայց հանկա՞ծ ու պարտվենք: Այդ ժամանակ ոչ մեկս չի փրկվի, ամբոխի զայրույթը բոլորին կուլ կտա... Իսկ պատերազմը չսկսելն ավելի վատ է, առանց այդ Ղ տրոնջում են, թե ցարին խնճել են գերմանացիք՝ հոգին առել են, անագին փող է ծախսվում փուչ բաների վրա, մարդիկ հոգեհան են լինում, իսկ մեծ գործերը չեն երևում...»:

Պյոտրը լռում էր: Պատերազմի շուրջ խոսակցություններին երկիմաստ էր պատասխանում. «Լավ, լավ, Կոժուխովի տակ հանաք արեցինք, թաթարների վրա խաղալու կգնանք...»: Միայն Լեֆորտն ու Մենշիկովը գիտեին, որ Պյոտրը թաքցնում է վախը, արժանահիշատակ այն գիշեր Տրոիցե փախչելու նույն վախը: Բայցև գիտեին, որ այնուամենայնիվ, վճռելու է պատերազմել:

Թիապեմ երկու վանական Երուսաղեմից նամակ բերեցին Երուսաղեմյան պատրիարք Դոսիթեյից: Պատրիարքը գրել էր ադերսագին, որ թագավորական պահպանագրով Ադրիանապոլիս է ժամանել ֆրանսիական դեսպանը՝ սրբազան վայրերի ստիպով, յոթանասուն հազար զուտ ոսկի է նվիրել մեծն վեզիրին, իսկ միևնույն ժամանակ Ադրիանապոլսում հայտնված Ղրիմի խանին էլ տասը հազար է նվիրել ու խնդրել, որ սրբազան վայրերը ֆրանսիացիներին հանձնեն թուրքերը... «Եվ թուրքերը խլեցին մեզնից՝ ուղղափառներիցս, սրբազան դագաղն ու նվիրեցին ֆրանսիացիներին, իսկ մեզ թողեցին միայն քանչորս ճրագները: Եվ վերցրեցին մեզնից ֆրանսիացիները Գողգոթայի կեսը, բեթղեհեմյան եկեղեցին՝ լրիվ, սրբազան քարայրը, կողոպտեցին բոլոր դեհտուսները, քանդեցին սեղանը, ուր սրբազան լույսն էինք բաժանում, և առավել վատթար վարվեցին Երուսաղեմի հետ, քան պարսիկներն ու արաբները: Եթե դուք, մոսկովյան աստվածային ինքնակալներդ, լքեք սրբազան եկեղեցին, ի՞նչ հանբալի արժանի կլինեք... Առանց դրա թուրքերի հետ հաշտություն մի կնքեք՝ բոլոր սրբազան վայրերը թող ուղղափառներին վերադարձնեն: Իսկ եթե հրաժարվեն թուրքերը, պատերազմ սկսեք: Հիմա հարմար է ժամանակը. սուլթանի երեք մեծ զորաբանակներ կայսեր դեմ են կռվում Հունգարիայում: Նախ Ռիկրաինան վերցրեք, հետո Մոլդավիան ու Վալախիան, ինչպես նաև Երուսաղեմը վերցրեք ու նոր հաշտություն կնքեք: Չէ որ աստծուն էիք աղոթում, որ թուրքերն ու թաթարները պատերազմեն գերմանների դեմ, հիմա այդչափ բարեպատեհ ժամանակ է, այնինչ ձեր եռանդը չի երևում: Հապա տեսեք, թե մուսուլմանները ինչպես են ծիծաղում ձեր վրա, թաթարները նույնիսկ, որ մի բուռ են, նրանք էլ են պարծենում, որ հարկ են առնում ձեզնից, իսկ թաթարները հարկատու են թուրքերին, որտեղ դուրս է գալիս, որ դուք էլ եք թուրքերին հարկատու...»:

Մոսկվայում վիրավորական էր այս նամակը կարդալը: Բոյարաչան մեծ Դուման հավաքվեց: Պյոտրը նստած էր գահին լուռ ու մռայլ, ցարական շուրջառով և ուսնոցով: Բոյարները ճոռոմ ճառերով սրտերն էին թեթևացնում, վկայակոչում էին հին տարեգրություններ, արցունք թափում ոսկեհարված սրբությունների վրա: Արդեն մթնշաղը կապտին տվեց պատուհանների վրա, անկյունի ճրագների լույսը ցոլվեց դեմքերին, իսկ բոյարները, ոտքի ելնելով ըստ աստիճանի ու տեղի, թափահարում էին ծանր թևքերն ու խոսում, խոսում էին, սպիտակ մատները շարժելով: Հպարտ, քրտնած ճակատները, խիստ հայացքները, խնամված մորուքները և փուչ ճառերը, որոնք պատրաստ էին տապիս քամուն բռնած խաղալիք-անվի պես, ատամնատության պես տանջալի գամվում էին Պյոտրի ուղեղում: Ոչ ոք որոշակիորեն չէր խոսում պատերազմի մասին, այլ աչքի պոչով նայելով դումայական ատենավոր Վինիուսին, որը երկու փոխատեղավորների հետ բոյարական ճառերն էր գրառում, ջուր էին ծեծում... Սարսափում էին «պատերազմ» բառն ասել՝ հանգիստ ապրուստը տակնուվրա կլիներ: Հանկարծ ու նորից խռովություն և թալան սկսվի՞: Սպասում էին ցարի խոսքին և հավանորեն, ինչ էլ նա ասեր, այդպես էլ կվճռեին:

Սակայն Պյոտրն էլ էր զարհուրում միայն իր ուսերին վերցնել այդ կարևոր վճիռը. ջանում էր դեռ ու փոքրուց վախեցած: Սպասում էր, աչքերը կկոցում: Ի վերջո, խոսեցին մերձավորները և ասդեն այլ կերպ՝ ուղղակի և գործնական: Տիխոն Ստրեշնևն ասաց.

— Ամենուշտ, կամքը թագավորինն է... Իսկ մենք՝ բոյարներս, կյանքներս պիտի զոհենք հանուն տիրոջ անարգված դագաղի ու թագավորի պատվի... Երուսաղեմում էլ են ծիծաղում՝ ավելի մեծ խայտառակություն էլ կա՞... Չէ, բոյարներ, վճիռ տվեք զինակոչ հայտարարել...

Լև Կիրիլովիչը, դանդաղամտության բերումով, հեռուներից՝ Վլադիմիրի օրոք Ռուսիո միլոտությունից պիտի սկսեր, բայց նայելով Պյոտրի թթված ու խոժոռ դեմքին, թևերը տարածեց.

— Է, ինչ, վախենալու բան չունենք, բոյարներ... Վասիլի Գոլիցինը վատվեց Ղրիմում: Բայց ինչո՞վ էր կռվում նրա զորքը: Դագանակներով... Հիմա, աստծուն փառք, բավականաչափ զենք ունենք... Թեկուզ հենց իմ գործարանը Տուլայում՝ թուրքականներից ոչ պա-

կաս թնդանոթներ ենք ձուլում... Իսկ հրացաններն ու ատրճանակներն ավելի լավ են... Թագավորը հրաման թե տա, մինչև մայիս թեկուզ հարյուր հազար զորքի նիզակի ծայր ու թուր կպատրաստեմ... Չէ, մեզ չի կարելի փախչել պատերազմից...

Ռոմոդանովսկին, կոկորդը խզզացնելով, ասաց.

— Եթե մենակ լինեինք, դեռ կմտածեինք... Բայց մեզ Եվրոպան է նայում... Տեղում դոփոփել չենք կարող՝ սույնը մեզ անխուսափելի կործանմանը կտանի... Գոստոմիսլի ժամանակները չեն, դաժան ժամանակներ են գալիս... Ռուսին գործը թաթարներին ջարդելն է...

Լռություն տիրեց կարմիր ու ցածրիկ կամարների տակ: Պյոտրը եղունգներն էր կրծում: Ներս մտավ Բորիս Ալեքսեևիչ Գոլիցինը՝ դեմքը լրիվ սափրած, բայց ռուսական զգեստով, ուրախ ու զվարթ, բացած մի թերթ հանձնեց Պյոտրին: Մոսկովյան վաճառականների խնդրագիրն էր, խնդրում էին Գողգոթան ու տիրոջ դագաղը պաշտպանել, թաթարներից մաքրել դեպի հարավ տանող ճանապարհը, և եթե հնարավոր է, քաղաքներ էլ հիմնել Սև ծովի ափին: Վինիուսը, ակնոցը ճակատին դրած, հատակ կարդում էր թուղթը: Պյոտրը վեր կացավ՝ Մոնոմախի գլխարկը քսվեց կամարին.

— Ուրեմն, ի՞նչ, բոյարներ, ի՞նչ եք մտածում:

Ու չարաբաստիք էր նայում, բերանը սեղմած հալի հետույքի պես. Բոյարները ոտքի ելան, գլուխ խոնարհեցին.

— Կամքը թանձր է, մեծն արքա, զորակոչ հայտարարիր...

21.

— Գնչու... Ինձ լսիր:

— Հը՞:

— Դրան կասես, որ իմ դարբնոցում օգնականություն ես արել... Խաչով էլ կերդվեմ:

— Արժի՞ որ:

— Ինչ խոսք... Դեռ կլանք կանենք... Գիտես, ի՞նչ բախտ է...

— Հոգնել եմ, Կուզմա: Գոնե շուտ մեռցնեիր, պրծնեինք...

— Սպանե՞լ: Էդ մեկը չես տեսնի... Պնչերդ կպոռթեն մտրակով ոսկորներդ կբացեն ու կքշեն Սիբիր...

— Էդ մեկը... հա՛... Հույս չկա...

— Լև Կիրիլովիչի կառավարիչը Մոսկվա է գնացել ու պահպանագիր ստացել, որ բանտերից հարկավոր մարդկանց ջոկի, տանի գործարան: Իսկն իմ գործն է, ու ես խոսքի բռնվեցի... Նրանք ինձ հիշում են... Է՜, ա՛յ հոգի, Կուզմա Ժեմովին շուտ մոռանալ չի լինի... Ուտելու բան տվին, մսով շչի էր... Ու չեն ծեծում... Բայց խիստ է... Որ կանչեն, էդպես էլ կասես՝ մուրճ զարկող ես եղել ինձ մոտ...

— Մսով շչի՞,— մտածելով, կրկնեց Գնչուն:

Գնչուն ու Ժեմովը խոսում էին Տուլայի բանտի նկուղում: Շուտով մի ամիս կլիներ, որ նստած էին: Միայն մի անգամ էին ծեծել,

երբ շուկայում բռնել էին գողացված իրերով: (Այն ժամանակ Հուդային հաջողվեց փախչել:) Սպասում էին հետաքննության ու տանջանքների: Բայց Տուլայի վոյեվոդան, ատենավորների ու փոխատենավորների հետ միասին, ինքն ընկավ հետաքննության տակ: Ծղթայակապ գողերին մոռացան: Ամեն առավոտ բանտի պահակը նրանց շուկա էր տանում, և շղթայակապ գողերը մուրացկանություն էին անում: Դրանով անվում ու դեռ պահակին էլ էին կերակրում: Եվ ահա անսպասելիորեն՝ Սիբիրի փոխարեն, Լև Կիրիլովիչի գինագործարանը: Այնուամենայնիվ, ուրախ չէին պատի:

Իր մասին Գնչուն ասաց Ժեմովի սովորեցրածի պես: Բանտից նրանց շղթայակապ քշեցին Ուպա գետը, որի ափին աղյուսաշեն ցածր շինություններ կային, ցանկապատով շրջափակված, և գետից փորած ջրանցքում ջրաղացների անիվներն էին ճռռում: Ցուրտ էր, հյուսիսից ամպեր էին կուտակվում: Կավապատ ափին բանտարկյալների բազմությունը փայտ, թուջ ու հանքաքար էր դատարկում նավակներից: Զորսբոլորը կոճղեր էին ու մերկացած թփեր, անկենդան դաշտեր: Փչում էր աշնան քամին: Տխրություն էր մտում Գնչուի միակ աչքը, երբ մոտեցան երկաթակուռ դարպասին, ուր տապարակիր պահակներն էին կանգնած... Բավական չէր, որ թե՛ ծեծում էին, թե՛ վայրի գազանի պես դեսուդեն քշում, հոգի հանում, բավական չէր... Բանիր նրանց համար, բանիր... Չեն էլ թողնում մարդ սատկի...

Դարպասից մտան սև, երկաթի կույտերով լի բակը... Դղրդոց, աղոցի վնգոց, մուրճերի թխկթխկոց: Ծխից սևացած դռան արանքից երևում էր՝ հնոցից կայծեր էին թռչում այնտեղ, մինչև գոտկատեղը մերկ մարդիկ, շրջանաձև թափ առնելով, երկաթաշերտ էին կռում, ջրաղացի անվով աշխատող բազմափթանոց մուրճն այնտեղ ընկնում էր ձուլակտորի վրա, և այդուքն էր ցփնվում կաշվե գոգնոցներին, այնտեղ փականագործներն էին աշխատում դազգահների վրա... Դարպասի մոտից տախտակների վրայով լայնանիստ վառարանի գլուխն էին բարձրանում ածուխ բարձած ձեռնասայլակները, կրակ ու ծուխ էր ժայթքում դոմնայից: Ժեմովը արմունկով հրհրում էր Գնչուին.

— Կուզմա Ժեմովին դեռ կճանաչե՞ն...

Դարբնոցներից հեռու, աղյուսաշեն հավաք ու կոկիկ տնակի պատուհանից նայում էր բաղնիքից նոր եկածի պես վարդագույն ու ածիլված մի գլուխ, գդակով: Գործարանի կառավարիչն էր՝ դերմանացի Կլեյստը: Ծիամորճով թխկթխկացրեց պատուհանի ապակին: Պահակը շտապ-շտապ Ժեմովին ու Գնչուին մոտ տարավ, բացատրեց, թե ովքեր են ու որտեղից: Կլեյստը բարձրացրեց պատուհանի ներքևի մասը, գլուխը հանեց, շրթունքները սեղմած էին: Գդակի ծոպքը ճոճվում էր գիրուկ դեմքի առաջ: Գնչուն թշնամանքով, վախով էր նայում ծոպքին... «Օ՛հ, մարդ կպպանի սա»՝ մտածեց:

Կլեյստի ետևում մաքուր սեղանի վրա տավարի տապակած միս էր դրված, կարմրած հացեր ու ոսկեգույն գավաթով սուրճ: Ծիամորճի անուշաբույր ծուխը պատուհանից դուրս էր լողում: Նրա անթոգի

աչքերը սառույցի նման թափանցում էին ռուս մարդու հոգու խորքերը: Բավականաչափ նայելով երկու բանտարկյալներին, դանդաղ ասաց.

— Ով սուտ ասեց, իր համար վատ կլինի: Անբիտան մուշիկներ են ուղարկում, խոզի զավակներ... Ոշինշ չեն իմանում՝ օ՜, սոիկանե՜ռ: Դու լաֆ դարձին ես՝ լաֆ... Բայց եթե սուտ ասես՝ ես կառող եմ կախել... (ծխամորճով թխկթխկացրեց լուսամտագոգը:) Այո, կախել կառող եմ, ինձ օտենք է տված... Պահակ, էդ տխմառներին տար փակիր...

Ճանապարհին պահակը նրանց ասաց խրատելով.

— Էդպես է, տղերք, նրանից զգույշ կացեք... Մի թեթև բան արեցիր՝ քնով ընկար, կամ թե գլուխ պահեցիր, խնայել չունի:

— Ջուր ծեծելու չենք եկել,— ասաց Ժեմովը:— Մենք դեռ ձեր գերմանացուն էլ կսովորեցնենք...

— Էդ դուք ո՞վ եք որ: Լսել եմ, գող ու ավազա՞կ եք: Ձեզ ինչի՞ են բռնել, որ ճիշտն ասեք:

— Ես ու էս միաչքանին աղանդավորների մոտ էինք գնում, ճգնավորի կյանք անելու, սատանա էր մտել գլուխներս...

— Ա՜, էդ ուրիշ բան,— պատասխանեց պահակը, բացելով գետնին կպած դռան կողպեքը:— Իմացած լինեք, որ մեր կարգուկանոնը էս է... Մտեք, մոմը հանգցնեմ... (Իջան գետնափոր խուցը: Երկաթյա լապտերի անցքերի արանքից թափանցող լույսի աղոտ ցոլքերը, սահելով, լուսավորեցին տախտամածները, փայտյա սեղանները, մը-ռոտ վառարանը, պարանից կախ ցնցոտիները:) Կարգն էս է... Առավոտը չորսին թմբուկս զարկում եմ՝ աղոթքի ու գործի: Յոթին՝ էլի թմբուկ-ուտելու, կես ժամ... Ժամացույցը մոտս է, տեսե՞լ ես: (Հանեց պղնձյա, տոուզ շաղգամի չափ ժամացույցը, ցույց տվեց:) Հետո, ուրեմն, նորից աշխատանքի: Կեսօրին՝ ճաշ ու մի ժամ քնել: Յոթին՝ իրիկնահացը, կես ժամ, ու տասին՝ բանթող...

— Հոգիները դուրս չի՞ գալիս,— հարցրեց Գնչուն:

— Էդպիսիներն էլ կան, ճիշտ է: Բայց ախր, բանտ է չէ՞, այ հոգիս. թե գողություն արած չէիր լինի, տանդ, վառարանի վրա պառկած կլինեիր... Մի տասնհինգ հոգի ունենք, դրսից, վարձու են, ընդանք յոթին պրծնում են ու առանձին են քնում, տոն օրերին տուն են գնում...

— Ու ինչ,— ավելի խոպոտած հարցրեց Գնչուն,— մինչև կյանքներիս վերջն է՞ս է:

Աչքերը լապտերի լուսավոր անցքերին հառած Ժեմովը մանրիկ հազաց: Պահակն ինչ-որ բան թնդաց բեխերի տակ: Գնալուց, լապտերը տարավ...

22.

Պատկառելի, շեկախառն ճերմակ մորուքը սանրած, մազերին կովի յուղը քսած, բառասուն սրբոց անուններով մետաքսյա գոտին վարդագույն շապիկը գրկած կրծքատակից... Եվ նույնիսկ ոչ այդ

ամենին, այլ Իվան Արտեմիչ Բրովկինի կլորիկ, կուշտ ու պարարտ փորին էին նայում մուշիկները՝ նախկին խնամի սանահարներ ու դրացիներ... Բանն էլ հենց այն է, որ նախկին... Իվան Արտեմիչը նստել էր թախտին, ձեռքերը տակը դրած: Աչքերը խիստ էին, անթարթ, շալվարը բարակ մահուդից էր, սապոգները նախշազարդ, կազանյան վարպետի կար, քթերը կեռած: Իսկ մուշիկները կանգնել էին դռան մոտ, նոր գցած խսիրի վրա, որ տրեխներով չկեղտոտեն մաքուր հյուրասենյակը:

— Ինչ ասեմ,— նրանց դիմեց Իվան Արտեմիչը,— ես հո ձեր թշնամին չեմ, ժողովուրդ... Ինչ կարող եմ՝ կարող եմ, ինչ էլ չեմ կարող՝ մի նեղացրեք...

— Հավերին քուջուջ անելու տեղ չի մնացել, Իվան Արտեմիչ:

— Անասունը հո լեզու չի հասկանում, ըշում ու գալիս է բո խոտհարքը...

— Բայց հոտաղին գեղով մնկ ծեծ կտանք, դու ողջ մնաս...

— Էդպե՜ս, էդպե՜ս,— կրկնում էր Իվան Արտեմիչը...

— Բաց թող մեր տավար-ադրանքը...

— Էնքան նեղն ենք, էնքան նե՜ղը...

— Ձեզնից էնքան էլ շահ չունեմ, ժողովուրդ,— պատասխանեց Իվան Արտեմիչը և, ձեռքերը տակից հանելով, մատներն ագուցեց, փորին դրեց:— Ինձ համար կարգն է կարևոր, ժողովուրդ... Ինչքան փող եմ ձեզ բաժանել, է՜...

— Տվել ես, Իվան Արտեմիչ, հիշում ենք, հիշում...

— Բարի սրտով... Քանի որ էս կողմերի ծնունդ եմ, հերը էստեղ է թաղված: Էնպես որ, ատված ինձ բարերար, ես էլ՝ ձեզ: Ի՞նչ շահով եմ ձեզ փող տալիս՝ մարդու ծիծաղը կգա... Ռուբլուց տարեկան տասը կոպեկ՝ ա՛յ-ա՛յ-ա՛յ... Հարստանալու համար չի, կարգուկանոնի համար...

— Ծնորհակալ ենք քեզ, Իվան Արտեմիչ...

— Շուտով լրիվ գնալու եմ ձեր կողմերից... Մեծ գործեր եմ սկսում, մեծ գործեր... Մոսկվայում պիտի ապրեմ... Դե, լավ... (Հոգոց հանեց ու փակեց աչքերը:) Թե մենակ ձեզնով ապրելուց լինեի, վատ կլինեիր իմ օրը, վատ... Հին օրերը հիշելով, հոգուս փրկության համար եմ բարություն անում... Բայց դո՞ւք: Ո՞նց եք լավությանս պատասխանում: Խոտհարքն եք ուտատակ տալիս: Բամբասում: Ախ, ախ... Դե, լավ, ատված ձեզ հետ... Մի ալտին կովից, կես կոպեկ ոչխարից՝ բերեք, անասունը տարեք...

— Ծնորհակալ ենք, ատված քեզ առողջություն տա, Իվան Արտեմիչ:

Գյուղացիք խոր գլուխ տվեցին, գնացին: Նա էլի էր ուզում խոսել: Այսօր բարիացել էր: Այլոշկա որդու միջոցով հաջողվել էր հասնել պորուչիկ Ալեքսանդր Մենշիկովին ու, երկու հարյուր ռուբլի տալով, ողջությունը հարցնել: Մենշիկովը նրան ծանոթացրել էր Լեֆոյտի հետ: Այդքան վերևից դեռ չէր ընկել Բրովկինը՝ վախեցավ, երբ տեսավ կարճահասակ, գոտեհաս մազերով, ոտից գլուխ մետաքս ու

թավիշ հագած, կրակ խաղացնող մատանիներով այդ մարդուն... Խիստ էր, քիթը ցցած, աչքերը՝ ասեղի պես ծակող... Բայց երբ Լեֆորտն իմացավ, որ դիմացը Ալյոշկայի հայրն է, այն էլ Մենշիկովի նամակով, ժպիտ խաղացրեց դեմքին, ուսը թափթփացրեց... Այդպես, Իվան Արտեմիչը պահպանագիր ստացավ՝ վարսակ ու խոտ մատակարարել զորքին...

— Սանչա,— կանչեց նա, գյուղացիների գնալուց հետո,— էդ փալասը տար... Խնամիք կեղտոտեցին...

Իվան Արտեմիչի աչքերի շուրջ ժպտուն կնճիռներ էին գոյացել: Հարուստ մարդը ծիծաղել կարող է՝ պստիկ հաստակից մինչև մորուքը ճերմակելը չէր ծիծաղել: Ներս մտավ Սանկան՝ խոտի պես կանաչ, մետաքսյա ամառային կոճակաշար զգեստով էր, ձեռքի հաստությանն մուգ խարտյաշ հյուսքը ծնկատակերին էր հասնում, փորը մի քիչ առաջ էր բերել, կրծքերը շատ էին լցվել, ամոթ էր: Աչքերը՝ կապույտ, անխելք...

— Փո՜ւհ, տրեխատակ եղավ,— գեղեցիկ դեմքը շրջեց փալասից, մատներով բռնեց ծայրից ու շպրտեց նախասենյակ: Իվան Արտեմիչը խորամանկորեն աղջկան էր նայում: Էս տեսակ աղջիկը թագավորին տալն էլ ամոթ չի լինի:

— Քարից տուն եմ ուզում սարքեմ Մոսկվայում... Առաջին վաճառականների շարքն ենք մտնում... Սանչա, լսիր է՜... Ու լավ եղավ, որ չվռազեցինք քեզ մարդու տալ.. Մեծ մարդկանց հետ ենք բարեկամ դառնալու... Ի՞նչ ես երեսդ դարձնում... Անխե՜լք...

— Է-էհ,— Սանկան հյուսքը պտտեց սենյակում, աչքերը շողացրեց հոր վրա:— Ինձ հանգիստ թողեք...

— Այսինքն, ո՞նց թե հանգիստ թողնենք: Կամքն իմն է... Ջղայնացա՝ կոտամ մի հոտաղի:

— Ավելի լավ է մեկի հետ խոզ արածացնեմ, քան թե թառամեմ մնամ ձեր խնքից...

Իվան Արտեմիչը Սանկայի վրա շպրտեց փայտյա աղամանը: Ծեծելու էր՝ վեր կենալ չէր ուզում... Սանկան անարցունք վնգաց: Այդ ժամանակ դարպասն այնպես ծեծեցին, որ Իվան Արտեմիչը բերանը բացեց: Ոռնացին մեղեցինյան որձ շները:

— Սանչա, գնա տես...

— Վախում եմ: Ինքներդ գնացեք...

— Լավ, հիմի էդ ծեծողներին...— Իվան Արտեմիչը նախասենյակից առավ ցախավելը, բակ իջավ:— Հիմի ես ձեզ ցույց կտամ, անամոթներ... Ո՞վ է: Շներին էս է բաց կթողնեմ...

— Բաց արա՜,— կատաղած զոռում էին դրսից, տախտակները ճռնչում էին:

Բրովկինը վախեցավ: Հասավ դռնակին՝ ձեռքերը դողում էին: Նիգը հագիվ էր ետ տարել, դարպասը կրնկի վրա բացվեց, ու ներս մտան շքեղ հագնված, թրերը մերկացրած ձիավորներ: Նրանց ետևից՝ քառաձի, ոսկեզօծ կառքը, սևամորթ գանգանները ետնամասին: Կառքից հետո, երկանիվով Պյոտր ցարն ու Լեֆորտը մտան, եռանկյունի

գլխարկներով, ճանապարհի կեղտից պաշտպանվելու թիկնոցներով... Դոփյուն, քրքիջ, բղավոցներ...

Բրովկինի ոտքերը ծալվեցին: Մինչ նա ծնկի էր իջել, ձիավորները ցած թռան, կառքից ելավ իշխան-պապը՝ ուռած, բնաթաթախ, գերմանական հագուստով, ապա մի երիտասարդ բոյարին, արծաթակար կափտանով: Լեֆորտի հետ առմուտք բարձրանալով, Պյոտրը թավամազն բղավեց.

— Ո՞ւր է տանտերը: Կենդանի, թե մեռած էստեղ բերեք:

Իվան Արտեմիչը տակը թրջեց: Այստեղ նրան նկատեցին, մոտ վազեցին Մենշիկովը և տղան՝ Ալյոշան, թևերից բռնած բարձրացրին ու քարշ տվեցին առմուտքի մոտ: Ու բռնել էին, որ ծնկի չգա: Ծեծելու կամ ավելի վատ բաների փոխարեն, Պյոտրը հանեց գլխարկն ու խոր գլուխ տվեց նրան.

— Բարի ողջույն, խնամի հայրիկ... Լսել ենք, թանկագին ապրանք ունես... Առնող ենք բերել... Գնի մասին խոսք չի լինի...

Իվան Արտեմիչը բերանն էր բացում-փակում անձայն... Գլխով խոտաներում ու գառանցագին մտքեր անցան. «Զլինի՞ մի խարդախություն է բացվել: Սուս մնալ է պետք, սուս...»: Ցարն ու Լեֆորտը քրքջացին, մնացածները ծիծաղից հազում էին: Ալյոշկան հասցրեց շշնջալ հոր ականջին. «Սանկայինն նշանելու ենք եկել»... Զնայած Իվան Արտեմիչը ծիծաղից արդեն կուահել էր, որ փորձանք չեն բերել հետևները, բայց շարունակում էր հիմար ձևանալ... Մե՜ծ խելքի տեր մուժիկ էր... Այդպես էլ, կարծես վախից իրեն կորցրած, հյուրերի հետ մտավ հյուրասենյակ: Նրան նստեցրին արքայատկերների տակ, աջ կողմում ցարը նստեց, ձախ կողմում՝ իշխան-պապը: Աչքի պոչով Բրովկինը նայում էր, թե ո՞վ է փեսացուն: Եվ հանկարծ իսկապես քարացավ. ընկերների՝ Ալյոշկայի ու Մենշիկովի արանքում, արծաթակար կափտանով իր նախկին տերն էր նստած՝ Վասիլի Վոլկովը: Իվան Արտեմիչը վաղուց արդեն բոլոր պարտագրերը վճարել էր նրան ու հիմա կարող էր ամբողջ վոտչինան ու ճորտերին էլ գընել... Բայց ոչ թե ուղեղով, գանձարված հետույքով վախեցավ նա:

— Զլինի՞ փեսացուն դուր չի գալիս,— հանկարծ հարցրեց Պյոտրը:

Նորից քրքիջ բարձրացավ... Ոլորած բեխերի տակ ծռմռվեցին Վոլկովի շրթունքները: Մենշիկովն աչքով արեց Պյոտրին.

— Կարող է հին ու անցած վիրավորանքնե՞ր է հիշել: (Աչքով արեց Բրովկինին:) Կարող է փեսացուն ժամանակին մազե՞ղդ է պոկել: Կամ մտրակի կո՞թն է ջարդել վրադ: Ի սեր աստծո, ներիր նրան... Հաշտվեք...

Ի՞նչ պատասխաներ: Զեռք ու ոտք դողում էին... Նա նայում էր Վոլկովին՝ վերջինս գունատ էր, հեզ ու խոնարհ... Ու հանկարծ հիշեց, թե ինչպես Պրեոբրաժենսկոյեի բակում Ալյոշան պաշտպան կանգնեց իրեն ու ինչպես էր Վոլկովը ձների վրայով վազում Մենշիկովի ետևից ու աղաչում էր, կախ էր ընկել, քիչ էր մնում լաց լիներ...

«Էհե՜,— մտածեց Իվան Արտեմիչը,— երևում է, ամենամեծ ախմախն էստեղ ես չեմ...»: Նայեց Վոլկովին ու այնքան ուրախացավ, որ քիչ էր մնացել ամբողջ գործը փչացնեիր... Բայց արդեն գիտեր, թե իրենից ինչ են սպասում. վտանգավոր մի խաղ՝ անդունդի վրա գցված բարակ գերանի վրայով պիտի անցներ... Դե՛, լա՜վ:

Բոլորը նրան էին նայում, Իվան Արտեմիչը սեղանի տակ ծածուկ խաչակնքեց դրրոատեղը, գլուխ խոնարհեց Պյոտրին ու իշխան-պապին.

— Շնորհակալ եմ պատվի համար, խնամիք... Քրիստոսի սիրուն, մեզ կնքեք. թե մի բանով ձեզ նեղացրել ենք, չհասկանալով, անխելք գյուղացի ենք... Ինչ ասես, ստոստոր անող մարդիկ ենք, անտաշ ու անգրագետ մուժիկ: Հասարակ ենք խոսում: Տանը մնացած աղջիկ է մեր ունեցածը՝ ցավն էդ է... Վերջին հարբեցողին էլ կտայինք ուրախությամբ... (Սարսափահար, աչքի պոչով Պյոտրին նայեց, բայց՝ ոչինչ, ցարը փոթկացրեց կատվի պես:) Չհասկացանք, թե փեսացուները մեր տնից ինչի՞ են փախս: Սիրուն աղջիկ է, մենակ թե մի աչքը քիչ չի տեսնում, բայց էն մյուսը տեղն է: Մեկ էլ՝ երեսի վրա չարքերը սիսեռ են ծեծել, բայց դե թաշկինակով ծածկել կլինի, չէ՞... (Վոլկովի մթնած հայացքը հառեց Իվան Արտեմիչի վրա:) Մեկ էլ՝ ոտքն է քարշ տալիս. գլուխը ցնցվող է ու կողը ծռավուն... Էդ ուրիշ բան չունի... Տարեք, իմ սիրասուն զավակին տարեք, թանկագին խնամիներ.... (Բրովկինն այնքան էր ոգևորվել, որ ֆսֆսացրեց, աչքերը սրբեց:) Աղջիկս, Ալեքսանդրա,— աղիողորմ ձայնով կանչեց նա,— մեզ մոտ ապի... Այլոշա, գնա քրոջդ բեր... Պետերբուրգում նստած կլինի՝ փորից էլ է թուլ, էդ մեկը մոռացել էի, կներեք... Գնա, հարսին բեր...

Վոլկովը վեր էր թռչում սեղանից, Մենշիկովն ուժով պահեց նրան: Ոչ ոք չէր ծիծաղում՝ միայն Պյոտրի կզակն էր դողում:

— Շնորհակալ եմ, թանկագին խնամիներ,— շարունակեց Բրովկինը,— փեսացուն շատ դուրներս եկավ: Հարազատ հոր պես կլինենք նրա համար. բարի գործերի համար կսիրենք, սխալների համար խրատ կտանք: Մտրակով կդաղեմ, թե մազերդ կպոկեմ, չբարկանաս, մեր փեսա՝ մուժիկի տուն ես մտնում...

Սեղանի շուրջ բոլորը բարձրաձայն քրքջացին, կողերն էին բռնել ծիծաղելուց: Վոլկովը սեղմել էր ատամները, ամոթն այրում էր այտերը՝ աչքերն արցունքով էին լցվել: Այլոշկան նախասենյակից բերեց դիմադրող Սանկային: Դեմքը թևքով ծածկել էր: Պյոտրը վեր թռավ ու ետ տարավ աղջկա ձեռքերը: Ու ծիծաղը կտրվեց՝ այնքան որ գեղեցիկ էր Սանկան. հոնքերն աղեղանման, աչքերը մթին, արտեվանունքները խավոտ, քթիկը վեր, դեռատի շուրթերը թրթռում էին, հավասար ատամներն իրար էին զարկվում, խնձորի շառագույն կար դեմքին... Պյոտրը համբուրեց նրա շուրթերը, վառվող այտերը: Բրովկինը բղավեց.

— Սանկա, ցա՜րն է, ցա՜րը, դիմացիր...

Աղջիկը բարձրացրեց գլուխը, Պյոտրի դեմքին նայելով: Լսում

էր, թե ինչպես է բաբախում նրա սիրտը: Պյոտրը գրկեց աղջկա ուսերը, մոտեցրեց սեղանին ու մատով ցույց տվեց Վասիլի Վոլկովին:

— Ի՞նչ է, վա՜տ փեսացու ենք բերել քեզ համար:

Սանկան խենթացել էր. հարկ էր ամաչել, իսկ նա, ցնորվածի պես, հրաշունչ բիբերը հառել էր փեսացուի վրա: Հանկարծ հոգոց հանեց ու շշնջաց. «Օ՜յ, մերին, մերի՜կ...»: Պյոտրը նորից գրկեց նրան՝ համբուրելու...

— Էյ, խնամի, չեղա՜վ,— ասաց իշխան-պապը:— Թող աղջկան...

Սանկան գլուխը թաղեց փեշերի մեջ: Այլոշան, ծիծաղելով, դուրս տարավ նրան: Վոլկովը բեխերն էր փետում, երևում էր, որ սիրտը խաղաղվել է: Իշխան-պապը մրթմրթաց.

— Վասն տյառն մերոյ Բաքոսի սիրեցեք զմիմյանս, եղբայրք... Խմելիք, ուտելիք ենք ուզում...

Իվան Արտեմիչն ուշքի եկավ, իրար անցավ: Ծառաները բակում հավ էին բռնում: Այլոշան, մեղավոր ժպտալով, սեղան էր գցում: Լսեց Սանկայի բեկբեկ ձայնը. «Մատրյոնա, բանալիները վերցրու՝ մեծ սենյակը, քառասուն նահատակաց սրբապատկերի տակն է...»: Պյոտրը ձայն տվեց Վոլկովին. «Աղջկա համար շնորհակալություն հայտնիր, Վասկա»: Եվ Վոլկովը, խոնարհվելով, համբուրեց ցարի ձեռքը... Իվան Արտեմիչն իր ձեռքով բերեց ձվածեղի տապակը: Պյոտրն ասաց նրան, առանց ծիծաղելու:

— Զվարճության համար շնորհակալություն, ուրախացրիր... Բայց տեղդ իմացիր, Վանկա, չափդ չանցնես...

— Տեր թագավոր, բա ես սի՞ռտ կանեի, թե քո կամքը չէր եղել... Մինչև հիմա վախից սիրտս տեղը չի եկել...

— Լավ, լավ գիտենք ձեզ, սատանեք... Հարսանիքն էլ կարագացնես՝ փեսացուն շուտով կռիվ է գնալու: Աղջկան համար արվարձանից մեկին կվարձես՝ պոլիտես ու պարել թող սովորեցնի... Արշավից ետ գանք, Սանկային տանելու եմ արքունիք...

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

1695 թվականի փետրվարին, Կրեմլում, մահճապետների մուտքից դումայական ատենավոր Վինիուսը հայտարարեց բոլոր սեղանապետներին, պալատականներին, պաշտոնյաներին, մոսկովյան ու այլաբաղաքային ազնվականներին, որ իրենց զորականների ու դրուժինաների հետ հավաքվեն Բելգորոդում և Սևսկում, բոյարին Բորիս Պետրովիչ Շերեմետևի մոտ, Ղրիմի վրա արշավելու համար:

Շերեմետևը փորձառու և շրջահայաց վոյեվոդա էր: Մինչև ապրիլ, հավաքելով հարյուր քսան հազար ծառայության մեջ եղող զորք և միանալով մայորուսական կազակներին, դանդաղ առաջացավ դեպի Դնեպրի ստորին ավազանը: Այնտեղ էր Օչակով ամրոցը և թուրքական պաշտպանվող քաղաքները՝ Կիզիկերմանը, Արսլան-Օրդեկը,

Ծախկերմանը, և Բազեի ամրոցը, Դնեպրի գետաբերանին, կղզու վրա, որից երկաթյա շղթաներ էին ձգվում դեպի ափերը, ծովի ճանապարհը փակ պահելու համար:

Մոսկովյան վիթխարի զորքը, մոտենալով քաղաքներին, ամբողջ ամառ ռազմական գործողություններ ծավալեց: Փողը քիչ էր, զենքը՝ քիչ, թնդանոթները չէին բավականացնում, ամեն մանրուքի համար տեսական գրագրություն էր գնում Մոսկվա ու ետ գալիս: Այնուամենայնիվ, օգոստոսին հաջողվեց գրոհով գրավել Կիզիկերմանը և մյուս երկու քաղաքները: Այդ առթիվ Շերեմետևի զորակայանում մեծ խրնջույք արեցին: Կենաց յուրաքանչյուր գավաթի հետ կրակում էին խրամատների թնդանոթները, սարսափ սփռելով թուրքերի ու թաթարների վրա: Երբ հաղթանակի մասին գրեցին Մոսկվա, այնտեղ թեթևացած սկսեցին խոսել. «Վերջապես, գոնե մի կտոր պոկեցին Ղրիմից, դա էլ է պատիվ...»

Նույն գարնանը, գաղտնի, առանց հայտարարելու, քսան հազար լավագույն զորքը՝ Պրեոբրաժենսկի, Սեմյոնովսկի և Լեֆորտի գնդերը, ստրելեցները, քաղաքաբնակ զինվորները ու ատենավորների վաշտերը Մոսկվա գետի վրա, Ամենայն սրբոց կամուրջի մոտ նավակներ նստեցին, լաստանավեր ու առագաստանավեր, և մի քանի վերստ ձգվող քարավանը երաժշտության ու թնդանոթազարկերի ուղեկցությամբ դեպի Օկա շարժվեց, այնտեղից էլ Վոլգայով՝ Ցարիցին:

Գեներալ Գորդոնը տասներկու հազարանոց զորքով տափաստանով շարժվեց դեպի Չերկասսկ:

Երկու բանակներն էլ շարժվում էին դեպի թուրքական Ազով ամրոցը Ազովի ծովի վրա: Թուրքերն այստեղ առևտրական ճանապարհներն էին պահպանում դեպի արևելք և դեպի Կուբանի ու Թերեքի հացառատ տափաստանները: Ազովը նվաճելու որոշումը կայացվել էր ռազմական խորհրդում կամ կոնսիլիումում՝ Լեֆորտի, Գորդոնի, Ավտոմոն Գոլովինի և Պյոտրի կողմից: Հայտնի չդառնալու, նաև թուրքերին մեծ պատիվ չաճելու համար հրամայված էր Պյոտրին բոմբարդիր Պյոտր Ալեքսեև կոչել... (Նաև խայտառակությունը քիչ կլիներ անհաջողության դեպքում:) Կոնսիլիումին երկար մտածեցին՝ ո՞ւմ տնօրինությանը թողնեն Մոսկվան: Ժողովուրդն անհանգիստ էր: Մայրաքաղաքի հենց մերձակայքում ավազակախմբեր էին շրջում, խոտ էր բուսնել ճանապարհներին՝ այնքան փտանգավոր էր դարձել երթևեկը: Սարսափելի թշնամին՝ Սոֆյան, նստած էր Նովոդևիչյեում, ճիշտ է՝ սուսուփռուս... Բայց արդյո՞ք տեսականորեն:

Մի մարդու վրա կարելի էր աներկբա հույս ունենալ, մի մարդ կար հավատարիմ՝ առանց ճենգամտության, միայն մեկը կարող էր վախեցնել ժողովրդին՝ Ֆյոդոր Յուրևիչ Ռոմոդանովսկին, ռազմախաղային արշավների և հանմեղկատակային հավաքույթների իշխան-կայսրը: Նրա հույսին էլ թողեցին Մոսկվան: Եվ որպեսզի չընփոթկացնեն թնքերի մեջ նախկին արարքների համար, հրամայվեց առանց կատակի իշխան-կայսր ու նորին մեծություն կոչել նրան: Բոյարները հիշում էին, որ նույնպիսի դեպք հարյուր տարի առաջ էր եղել, երբ Իվան Ահեղը, Ալեքսանդրովսկի ավանը մեկնելով, իր փոխարեն Մոսկվայում թողեց կիսամաղրամծու-կիսախրտվիլակ, թաթարական իշխան Սիմեոն Բեկբուլատովիչին, որպես «թագավոր համայն Ռուսիո»: Հիշեցին ու հպատակվեցին: Իսկ ժողովրդի համար մեկ էր՝ իշխան- կայսրը կլիներ, թե չարք ու սատանա, գիտեին միայն, որ Ռոմոդանովսկին անողոք է և չի վախենում արյունից:

Բոմբարդիր Պյոտր Ալեքսեևը լողում էր քարավանի առջևից, Լեֆորտի բազմաթի լաստանավով: Ճանապարհին փորձանքներից պրծում չունեցան: Վաճառականների և արքունական առևտրականների սարքած նավակները, գետանավերն ու լաստերը ջուր էին քաշում ու սուզվում: Գարնանային մշուշոտ գիշերները մոլորվում էին գետադարձերի, ծանծաղուտների վրա: Նիժնի Նովգորոդում ստիպված էին տեղափոխվել վոլգյան գետանավերի վրա: Պյոտրը գրում էր Ռոմոդանովսկուն.

«Մին հեռ կյոնիգ... Ձերդ թագավորական ողորմածության համար մինչև արյան վերջին կաթիլը պիտի հեղենք, ինչի համար և ուղարկված ենք... Այստեղի գործերի մասին հայտնում եմ, որ ձեր ծառա գեներալներ Ավտոմոն Միխայլովիչը և Ֆրանց Յակովլևիչը, ամբողջ զորքի հետ ողջ և առողջ են... Եվ մտադիր ենք վաղվանից ճամփա ընկնել... Ետ մնացինք, որովհետև մի քանի նավեր երեք օրվա մեջ հազիվ հասան... Նավերը, որ վաճառականներն էին սարքել, շատ վատն էին, մի քանիսը հազիվ տեղ հասան... Մինչև օրս զինվորներից շատ քիչ մարդ է մեռել... Այստեղ մնամ ձեր ողորմածության հովանու ներքո... Ձերդ պայծառափայլ մեծության մշտական ծառա Բոմ Բոր Դիր Պետեր»:

Առանց կանգ առնելու, անցան Կազանի մոտով, ուր բարձրացած ջուրը ողողել էր սպիտակ պատերը: Ետևում թողեցին բարձրադիր ափին կանգնած Սիմբիրսկը և Սամարա փոքր քաղաքը՝ քոչվորներից պաշտպանված հողաթմբերին խփված փայտյա ցցապատերով: Սարատովից այն կողմ խոտածածկ ափերը թաղված էին արևի շողերի մեջ, երկնագույն գետը հոսում էր ծուլորեն, տափաստանային տապը վառարանից հորդացող տաքության պես էր:

Պյոտրը, Լեֆորտը, Ալեքսաշկան և իշխան-պապը, որին արշավի էին վերցրել քեֆ-ուրախության համար, օրնիբուն ծխամորճներն էին փստացնում, լաստանավի բարձր խելին նստած: Երբ նայում էին նավերի բազմաներանգ թիերի ճողփյուններից փայլփլող քարավանին, թվում էր, թե շարունակվում է ռազմական նույն զվարճանքը: Այդ ի՞նչ ամրոց է Ազովը: Եվ ինչպե՞ս պիտի գրավել: Լավ չգիտեին՝ տեղում կերևար... Գինովցած ու քնքշացած իշխան-պապը, եղունգով պոկելով կապտած քթի կեղերը, ասում էր.

— Այս օրին էլ արժանացանք, որդի... Ե՞րբ էր, որ քեզ թվերն էի սովորեցնում... Պատերազմելո՞ւ ենք գնում... Է՛հ, է՛հ, սիրուն տղաս...

Լեֆորտը զարմացած էր գետի շքեղությունից ու վեհությունից՝ անվերջ էր ու անսահման...

— Ի՜նչ ֆրանսիական թագավոր, ի՜նչ ավստրիական կայսր,— ասում էր նա,— օ՜, եթե փող շատ ունենայիր, Պիտեր... Շատ ինժեներներ կկարձեինք Եվրոպայում, հնարավորին չտի շատ սպաներ, ավելի շատ խելոք մարդկանց... Ի՜նչ հանգանակում երկիր է, վայրի ու ամայի երկիր...

Ցարիցինում քարավանը կանգ առավ: Այստեղ էլ ծայր առան փորձանքները: Ընդամենը հինգ հարյուր ձի կար: Թիերի վրա ձեռքերը կոտրած զինվորները պետք է շալակած քարշ տային թնդանոթները ու գումակը: Չէր բավականացնում հացը, ձավարը, յուղը: Հոգնած ու քաղցած զորքը տապաստանով երեք օր գնում էր Պանշին փոքր քաղաքը, դեպի Դոն, ուր մթերքի գլխավոր պահեստարանները էին: Շատերն ուժասպառ եղան, ընկան: Մտածում էին Պանշինում հանգստանալ: Բայց այնտեղից նամակ եկավ բոյարին Տիխոն Ստրեշնևից, որը տնօրինում էր ամբողջ պարենը.

«Պարոն բոյարդիր.. Ցավալի տխրություն ունենք գող-կազակների պատճառով: Վանատականներ Վորոնինը, Ուշակովը և Գորեգինը հանձն էին առել մատակարարել 15 000 դույլ մեղրախմիչք, 45 000 դույլ քացախ, նույնքան էլ օղի, 20 000 աղ դրած թառափ, նույնքան էլ բրամ, շեղաձուկ ու գալաձուկ, 10 000 փութ ապխտած միս, 5 000 փութ յուղ ու կարագ, 8 000 փութ աղ...Կազակներին տրված է երեսուներեք հազար ռուբլի: Այդ փողերի կեսը նրանք գողացել են: Ոչ մի փունտ աղ չկա: Ջուկը հոտած է՝ պահեստ մտնել չի լինի... Ամբողջ հացը նեխած է: Մենակ վարսակն է լավը ու խոտն է լավը նույնպես, մատակարարողը առևտրական Իվան Բրովկինն է... Այս ավազակությունից բեզ՝ մեր ոգորման տիրոջ տխրություն է գալու, իսկ զինվորական մարդկանց՝ ուժասպառություն... Հիմա միայն աստված կարող է օգնել, որ քո ռազմական գործում ձեզ սպասեցնել չտանք...»:

Պյոտրը և Լեֆորտը, թողնելով զորքը, գնացան Պանշինո: Դոնի մեջտեղի կղզու վրա ընկած ոչ մեծ առանիցան, վառված անտառի պես, շրջապատված էր գումակների լծափայտերով: Ամենուրեք պառկած էին մեծեղջյուր եզներ, բիտված ձիեր էին սրածում: Սակայն մի կենդանի շունչ չկար. ետճաշյա ժամին քնած էին ժամապահները, պահակները, սայլորդները, զինվորները: Հեծյալների սրբակները միայնակ դուիդուիում էին Դոնի վրա: Պյոտրի կատաղած բղավոցի վրա ինչ-որ մեկի գիսախոիվ գլուխը երևաց ցանկապատի ետևից, կանեփի արտի միջից: Քորքջվելով, մուժիկն առաջնորդեց խրճիթն, ուր բոյարինն էր ապրում... Պյոտրը թափով բացեց դուռը: Միացված երկու թախտերի վրա, գլուխը ծածկած, քնած էր Ստրեշնևը: Պյոտրը վերմակը պոկեց վրայից: Բռնեց վախեցած բոյարինի նոսր մազերից, կատաղությունից խոսել չէր կարողանում, թքեց երեսին, գցեց հողե հատակին, բուֆորտով խփում էր ծերունական փափիկ կողերին...

Հնասպառ նստեց սեղանի մոտ, հրամայեց բացել փակոցափեղ-

կերը: Աչքերը դուրս պրծած էին: Արևայրուքի տակից նիհարած դեմքի վրա թեր էին երևում:

— Զեկույցդ տուր... Վե՛ր կաց,— բղավեց Ստրեշնևի վրա:— Նըստի՛ր: Կապալառուներին կախե՞լ ես: Չէ՞: Ինչի՞:

— Տեր արքա... (Պյոտրը ոտքը խփեց հատակին:) Պարոն բոմբարդիր... (Տիխոն Ստրեշնևը վախենում էր տնքտնքալ, վախենում էր գլուխ խոնարհել:) Կապալառուները թող սկզբից մատակարարեն, ինչ պարտք են թղթերով, թե չէ մեռածներից ի՞նչ պիտի պահանջենք...

— Էդպես չէ... Հիմա՞ր... Իսկ ինչի՞ Իվան Բրովկինը չի գողանում: Իմ մարդիկ չեն գողանում, ձեր մարդիկ բոլորը գողանում են... Բոլոր կապալները հանձնել Բրովկինին... Ուշակովին ու Վորոնինին շղթայել ու Մոսկվա ուղարկել, Ռոմոդանովսկու մոտ...

— Այդպես, գուտ,— ասաց Լեֆորտը:

— Է՞լ ինչ կա: Նավերը պատրա՞ստ չեն:

— Պարոն բոմբարդիր, նավերը բոլորը պատրաստ են... Այսօր վերջինները բերեցին Վորոնեժից:

— Գնանք գետը...

Տնային սեկ մաշիկներով, անգոտի շապիկը կախ, ծերունական քստքստոցով Ստրեշնևը շորորաց կարծես փայտե ոտքերի վրա քայլող Պյոտրի ետևից: Դոնի հայկանման ոլորանին մի քանի շարքով անհամար նավակներ էին կանգնած, բեռնանավեր, եղեգնյա նեղ լողանոցներով կազակական մակույկներ, երկարաքիթ, ուղիղ առագաստով, խելի վրա խցիկ ու միայն առջևում թիեր ունեցող փոքրը նավեր... Բոլորը հենց նոր էին բերված նավաշինարանից: Հոսանքը ճոճում էր նավերը: Շատերը կիսասույզ էին: Թոշնած կախ էին ընկել դրոշները: Բարկ արևի տակ ճաքճքել էր չներկված փայտը: Փայլում էին կպրած կողերը:

Դեղին բոտֆորտով ոտքն առաջ դրած, Լեֆորտը հեռադիտակով նայում էր քարավանին:

— Ձեր գուտ... Նավերը կբավականացնեն...

— Գուտ,— հատու կրկնեց Պյոտրը: Նրա կեղտոտ ձեռքերը դողում էին: Ու ինչպես միշտ, Լեֆորտը նրա իսկ միտքը հայտնեց.

— Այստեղից է սկսվում պատերազմը:

— Տիխոն Նիկիտևիչ, մի բարկանա,— Պյոտրը հպվեց հեծկլտացող Ստրեշնևի մորուքին:— Ջորքն ուղղակի բարձրացրեք նավերը: Առանց հապաղելու... Ագովը կգրավենք մի թափով...

Վեցերորդ օրվա լուսադեմին Ստրեշնևի հյուղակում, ծխախոտի ծխի մեջ թաղված, նամակ էին գրում իշխան-կայսրին.

«Մին հեռ կյոնիգ... Հայրդ՝ մեծն տյար սրբազնագույն Անիկիտան, արքեպիսկոպոսը պրեշբուրգյան և համայն Ցաուզայի ու ամբողջ Կուկուի պատրիարքը, նմանապես և ճորտերդ՝ գեներալներ Ավտոմոն Միխայլովիչը և Ֆրանց Յակովլևիչը, ընկերներով հանդերձ, ողջ ու առողջ են և այսօր Պանշինից ճամփա ենք ելնում քա-

ջանողջությամբ... Անդադրում բանում ենք՝ ռազմի լուծը կրելով: Եվ քո կենացն ենք խմում օղիով, ավելի շատ՝ գարեջրով...»: Դժվարընթեռնելի ստորագրություններ կային. «Ֆրանչիշկա Լեֆորտ... Ալեխանդրա Մենշիկով... Ֆեդոկա Տրոյեկուրով... Պետրուշկա Ալեքսեև, Ավտոնոշկա Գոլովին... Վարենոյ Մադամկին...»:

Մի շաբաթ լողում էին Դոնի կոզիների վրա ընկած կազակական փոքր քաղաքների մոտով, անցան Գոլուբոյը, Ջիմովեյսկին, Ցիմլյանսկին, Ռազդորին, Մանիչը... Բարձրադիր աջ ափին տեսան Չերկասսկի հողապատնեշները, ցանկապատերն ու կաղնեփայտե պատերը: Այստեղ խարիսխ ձգեցին ու երեք օր սպասում էին ետ մնացած բեռնանավերին:

Քարավանը խմբելով, շարժվեցին դեպի Ազով: Մեղմ, անթափանց գիշեր էր, անձրևի ու խոտերի բույր կար օդում: Մոճոում էին ծղրիդները: Տարօրինակ ձայներ էին արձակում գիշերահավքերը: Լեֆորտի առաջապահ առագաստանավում ոչ ոք քնած չէր, ծխամորճ չէին ծխում, չէին կատակում: Դանդաղ ճոպտում էին թիերը:

Պյոտրն առաջին անգամ ամբողջ մաշկով զգաց վտանգի սարսուռը: Ճատ մոտ, ափով մեկ շարժվում էր խավարը, տարտամ ուրվագծերը: Գլուխն առաջ պարզեց ու սաղարթի խշշոց լսեց: Այնտեղից, խավարի միջից ուր որ է կգրնգա թաթարական նետի աղեղը: Կծկվում էին ոտքերի մատները: Հեռու-հարավում ամպրոպի լույսը բոցկլտաց ամպերի մեջ: Որոտի ձայնը տեղ չհասավ: Լեֆորտն ասաց.

— Առավոտյան կլսենք գեներալ Գորդոնի թնդանոթների ձայնը:

Լուսադեմին երկինքը մաքրվեց: Կազակ նավավարը առագաստանավը տարավ Կոյսոգա գետով, ետևից՝ ամբողջ քարավանը: Բարձրացավ ալրող արեգակը, գետն ասես ավելի հորդանոց դարձավ, ափերը հեռացան, ջրողող մարգագետինների վրայի մշուշը ցրվեց: Առջևում, ավազուտներից այն կողմ վերստին երևաց Դոնի պպպղուն շերտը: Զառիթափ ափերին գծագրվեցին կտավե վրաններ, սայլեր, ձիեր: Ծածանվում էին դրոշները: Միտիշևի նավակալանն էր, որը Գորդոնն էր հիմնել՝ ռազմական գլխավոր բանակատեղին, Ազովից տասնհինգ վերստի վրա:

Նավաբեթի թնդանոթից Պյոտրն ինքը կրակեց՝ արկը գնդակի պես ցատկոտեց ջրի վրայով: Քարավանով մեկ կրակեցին հրացաններից ու թնդանոթներից: Խզված ու թավ ձայնով Պյոտրը բղավում էր. «Թիավարի՛ր, թիավարի՛ր...»: Թիերը ճկվել էին աղեղաձև, զինվորները թիավարում էին գլուխները կախած:

Միտիշևի նավակալանում զորքերը ափ իջան: Հոգնած զինվորները թափվում էին ուղղակի ավազի վրա, ենթասպաները նրանց ոտքի էին հանում՝ փայտով խփելով: Ծուտով ճերմակին տվեցին վրանները, խարույկների ծուխը քաշվեց գետի վրա: Պյոտրը, Լեֆորտը և Գոլովինը, կազակական երեք հարյուրյակ առած, արշավեցին բլուրների ետևը, Գորդոնի ամրացված ռազմակայանը, որ Ազովի կես ճանապարհին էր: Գեներալի գույնզգույն վրանը հեռվից երևում էր բլրի վրա:

Ճանապարհին ընկած էին նետահար ձիեր, ջարդված սայլեր: Փոքրամարմին, մինչև գոտին մերկ մի թաթար էր փռված օշինդրի թիրեի մեջ, արյունը ծծրակին լեղդացած: Պյոտրի ձին խոխռաց, դիակին խեթելով: Կազակները պատմում էին.

— Հենց մեր գումակները ելնում են Միտիշևից, թաթարները նետերով վրա են տալիս, ամպի պես: Էս տեղերն ամենադժվարն են... Հրե՛ն,— ցույց էին տալիս մորակներով,— բլուրների ետևը թափառում են... Նրանք են... Տես, հիմի կարձակեն նետերը...

Հեծյալները քշեցին ձիերը բլուրն ի վեր: Վրանի մոտ կանգնած էր Գորդոնը, պողպատյա գրահով, փետրազարդ սաղավարտով, հեռադիտակը կողին սեղմած: Կնճռոտպատ դեմքը խիստ էր ու հոգնարտ: Նվագեցին եղջրափողերը, կրակեցին թնդանոթները: Բլրի կատարից, ասես ափի մեջ, երևում էր մայրամուտի արևով ողողված ծովածոցը, բարակ ու սուր մինարեները և Ազովի մոխրա-դեղնագույն պատերը: Ռուսների մոտենալու նախօրեին թուրքերի կողմից կրակ տված արվարձանի հրդեհի մնացորդներն էին երևում, ամրոցի առջևով գորշագույն բլրակների վրայով ձգվում էին խրամատների ոլոր-խոտոր գծերն ու ռեդուտների հնգանկյունները: Անհող ծովածոցի խորքում կախ ընկած դրոշներով կանգնած էին բազմաթնդանոթ բարձրիրան նավերը: Գորդոնը ցույց տվեց դրանք.

— Անցյալ շաբաթ թուրքերը ծովով մեկուկես հազար ենիչերի բերեցին Կաֆայից: Այսօր այդ նավերն էլի զորք բերեցին... Երեկ մի լեզու ենք բռնել, ասում է ասում, թե չէ՛ ամրոցում վեց հազար զորք կա ու թաթարական այրուձին է տափաստանում: Ոչ մի բանի պակասություն չունեն՝ ծովն իրենցն է... Սովամահ անելով՝ ամրոցը գրավել չի լինի:

— Գրոհով կվերցնենք,— ասաց Լեֆորտը, ձեռնոցը թափ տալով:

Գոլովին վստահորեն հաստատեց.

— Ռուայով կվերցնենք... Մեծ բան է...

Պյոտրը հմայված նայում էր Ազովի ծովի շղարշին, պատերին, մինարեների կիսալուսինների կայծերին, նավերին, մայրամուտի շքեղ լույսին: Թվաց, թե կենդանացել են մանկուց սիրված նկարները, ահա և անծանոթ երկրի հարթմնի:

— Իսկ դո՞ւ ինչ կասես, Պյոտր Իվանովիչ: Ինչի՞ ես լուռ: Ազովը կերցնե՞նք:

— Պետք է վերցնել,— պատասխանեց Գորդոնը, կնճիռները բոլորելով բերանի շուրջ:

Վրանից բերեցին քարտեզը, փռեցին թմբուկի վրա: Գեներալները խոնարհեցին գլուխները, Պյոտրը եղունգով գծեց, թե որտեղ պիտի կանգնեն զորքերը. Գորդոնը մեջտեղում, ամրոցից հինգ հարյուր քայլի վրա, Լեֆորտը ձախ կողմում, Գոլովին՝ աջ:

— Էստեղ կլինեն խորտակող մարտկոցները, էստեղ հրասանդները... Էստեղ ապրոշներ կփորենք... Չէ՞, Պյոտր Իվանովիչ...

— Կարելի է, ինչի չէ,— պատասխանեց Գորդոնը:— Բայց մեր ետևում կմնա թաթարական այրուձին:

— Պետք է ջարդել... Կազակներին կնետենք նրանց վրա...

— Այո, կարելի է և ջարդել... Ես ասում եմ, դժվար կլինի Միտիշևի նավակայանից պարեն հասցնելը, ամեն գումակի հետ մեծ գորք ուղարկելը դժվար կլինի...

— Լսեք հասա, գեներալներ, իսկ ինչի՞ պարենը նավակներով չբերենք:

Գեներալները կեղծամները կախեցին քարտեզի վրա: Գորդոնն ասաց.

— Նավակներով ավելի դժվար կլինի՝ Դոնը շղթաներով փակված է: Գետաբերանին երկու դիտակետ կա, շատ մեծ հրետանիով...

— Դիտակետերը գրավենք: Դարձյալ գեներալնե՞ր:

— Մեծ բա՞ն է՝ երկու դիտակետը,— ծիծաղեց Գոլովինն ու կկոցեց գեղեցիկ, հիմարավուն աչքերը արևմուտքում, բլրակներից այն կողմ երևացող առանձավոր կոր աշտարակի կատարին: Գորդոնը պատասխանեց, քիչ մտածելուց հետո.

— Ինչու չէ, կարելի է վերցնել դիտակետերը...

— Դե, ասու�ված քեզ օգնական, Պյոտր Իվանովիչ:— Պյոտրը բռնեց Գորդոնի թշերը, համբուրեց:— Վաղը շարժվիր ու մուտեցիր ամրոցին: Իսկ մենք, առանց հապաղելու, ամբողջ գորքով կառաջանանք... Մեկ-երկու օր կոմբակոծենք, ու կանցնենք գրոհի...

Թուրքական նավերից եղջերափողի թույլ ձայն լսվեց՝ օրավարտ էին հնչեցնում: Իրիկնային ստվերները ծածկում էին ծովածոցը: Օդի մեջ միայն ծղրիդների չոր ճռռոցն էր լսվում: Ավելի կարմրեցին մինարեների կատարները, սակայն դրանք էլ մարեցին: Պյոտրը մտավ վրան, ուր երկու մոմ էր վառվում ճոխ սեղանի վրա: Նստեցին թըմբուկների վրա: Գոլովշի էր կանգնած ոչխարի մսով կերակուրի վրա: Պյոտրը ագահաբար վրա ընկավ երկու ձեռքով: Չվարճանալիս թեթև լինելու համար գրահը հանած Լեֆորտը հունգարական գինի էր լցնում անգագ գավաթների մեջ: Երբ շառագունած Գոլովինը թնդաց՝ «Առաջին բոմբարդիրի կենացը», վրանից ներքև կանգնած գինվորների նոսր շարքով անցավ «Կենա՞ցը: Կենա՞ցը»: Թընդանոթաձգությունից թրթռացին մոմերը: «Լա՞վ է»՝ բացականչեց Պյոտրը: Լեֆորտը ծիծաղում էր, գավաթները լցնելով.

— Սա լավ կյանք է, Պիտեր...

— Բանակատեղում մարկիտանտ-աղջիկներ չունե՞ս, պարոն գեներալ,— հարցրեց Գոլովինը, նույնպես արձակելով գրահը: Լեֆորտն ու Պյոտրը քրքջացին.

— Էդ գործում Վարենոյ Մադամկինն է վարպետ...

— Ջիավոր ուղարկեք Վարենոյին բերելու...

Առավոտյան ստրելեցների երկու գնդերի օժանդակ ուժերով Գորդոնը շարժվեց դեպի Ազով: Կազակական առաջապահ հարյուրյակները վարգասլաց ելան ամրոցի դիմացի գորշագույն բարձունքն

ու իսկույն սկսեցին ետ քաշվել: Մի քանի կազակ ետ պացան քառաշար առաջացող հետևակին ընդառաջ, բղավեցին. «Թաթարնե՞ր... Զգուշացե՞ք: Թնդանոթներն առա՞ջ բերեք»: Բարձունքի ձախ թևում կիսալուսնաձև բացվեց թաթարական այրուձին: Ծուրջ տասը հազար կլինեին: Ավելի ու ավելի արագ էին մոտենում նրանք, ավելի էր թանձրանում փոշին: Թռչում էին նետերը: Կազակական հարյուրյակներն իրար խառնվեցին: Որոշ ձիավորներ, կռացած ձիերի վրա, ետ փախան: Գնդապետներն իզուր էին հրամայում թափահարել մականները՝ կազակական ամբողջ լավան, առանց թերը հանելու, ցած սուրաց: Սակայն թաթարներն արդեն շրջանցում էին աջից, նրանց փոչոտ երիվարները սլանում էին, կեռ թերը ճոճվում էին գլխավերևներում: Բղավոցնե՞ր: Փոշի՞: Կազակների մի մասը շրջվեց՝ թրահարելու: Խառնվեցին, դեմ առան միմյանց: Վազեվազ հասնում էր հետևակը, քառանկյունի շարքեր կազմելով: Ստրելեցները պարաններով քաշում էին թնդանոթները: Թաթարների կիսալուսինը գոցվում էր: Խառնիխուռն համազարկեր լսվեցին: Փոշու շերտեր էին պարուրել բարձունքը: Կատաղած մի ձի էր սլանում: Գետնին թավալվում էր թաթարը: Սուլեց արկը: Համազարկեր էին թնդում: Մարդիկ, ցնորված, կրակում էին, բղավում: Դեսուդեն էին ընկել սպաները: Ամբողջ ժիսորը դղրդյունով էին ծածկում խոչոտակիչ թնդանոթները: Ոչ ոք ոչինչ պարզել չէր կարող, թե ով ում է կոտորում: Ու մի բան կատարվեց, հանկարծ թեթևացավ ամեն ինչ: Ծուխը ցրվեց, ոչ թաթարներն էին երևում, ոչ թուրքերը: Միայն ընկած ձիերն էին ջղաձգվում, և մարդկային բազում մարմիններ՝ անշարժ ու ցնցվող, դեսուդեն էին ընկած գորշ հողի վրա: Սոչևում, բլրի կատարին, սևաթույր ձիու վրա գեներալ Գորդոնն էր կանգնած: Փաղփլում էր նրա երկաթյա թիկունքը: Հեռադիտակը կոդին էր սեղմված: Փոքրիկ ու ալեհեր գլուխը գնդիկի պես ցցված էր գրահների միջից՝ սաղավարտը գցել էին: Թուրը դանդաղ թափահարեց ու քայլքով իջավ դեպի Ազով: Ջորքի շարքերով բղավեցին. «Հառա՞ջ, հառա՞ջ, անվա՞խ...»:

Գորդոնի ջոկատը խրամատասորվում էր, ուղեփակոցներ դնելով պարապի մերձակայքում: Թուրքերը ռմբակոծում էին համբարը պարապի վրայից, մեծապես սարսափեցնելով մարդկանց: Երբ արկը ընկնում էր և թշշալով պտտվում, գնդապետները, սպաները, պալատական զանազան մարդիկ պատնեշ էին բերանքսիվայր, թևքերով ծածկվելով... Այդ ռումբերը, որ ռազմախաղերի սիսեռով լի արկեր չէին, պայթում էին այնպիսի թնդյունով, հողի այնպիսի պոռներ էին օդ հանում, որ գունատված զինվորները միայն խուչակընքում էին, անգոր որևէ բան անելու... Մենակ Գորդոնն էր, որ խրամատանայաց ու հանգիստ շրջում էր ճամբարում, չշրջվելով արկերի չարագույժ սուլոցի կողմը, բղավում էր զինվորների վրա, որ գլուխ չծռեն թուրքական գնդակների առաջ.

— Գլուխ ծռելու համար պատժելու եմ... Լավ բան չէ վախկոտ լինել... Ծա՛նդե, շա՛նդե, ամոթ է... Եվ դեռ ռուս զոլդատ եք...

Նրա կանխագուշակածի պես, վատթարացավ պարենամթերքը, հատկապես խմելու ջուր հայցելու գործը. թաթարները վայրագ հարձակումներով ոչնչացնում էին Միտիշևի նավակայանից ձգվող գումակները: Արագասլաց թաթարներին հայթելու հնարավորություն չկար՝ առանց մարտ ընդունելու, նետահարում էին ռուսներին, ետ արշավում տափաստան: Վերջապես ճամբարը պատրաստվեց խոր խրամատների մեջ, մարդիկ պատսպարվեցին արկերից: Լեֆորտի և Գոլովինի զորքերը միայն չորրորդ օրը մոտեցան դիրքերին՝ երաժշտությամբ, թմբկազարկով, բացած դրոշներով:

Պյոտրը հպարտ-հպարտ քայլում էր թնդանոթաձիգ վաշտի առջևից: Այստեղ շարքային զինվորներ էին Մենշիկովը, Ալյոշա Բրովկինը, Վոլկովը, վերջերս ծառայության վերցված հմուտ թնդանոթաձիգ, հոլանդացի Յակով Յանսենը: Պյոտրի առջևից չափ ընկած, ծնծղա էր զարկում արջի պնչով ու հաստ շրթունքներով մի ածուհա՝ ցարի նոր բաժակակիցն էր, գոսահար, դեռ նմանը չունեցող ցուցակյաց ու հարբեցող, Վարենոյ Մադամ-ին կոչեցյալ մեկը:

Թնդանոթաձիգների զորամասի հետ Պյոտրը անցավ Գորդոնի ճամբարը: (Լեֆորտի զորքը աջ թևում, Գոլովինինը ձախում հապճեպ խրամատավորվում էին:) Ջախերով ու հողով լի պարկերով պատնեշված ռեդուտները ամրոցի քարաշեն պատերից հինգ հարյուր քայլի վրա էին: Պարսպի ատամների արանքից երևում էին թուրք հրաձիգների ֆեսերը և նեղլիկ աչքերը: Այնքասաշկայի ուսին հենվելով, Պյոտրը թռավ ջախերի վրա: Գորդոնը թափով բռնեց նրան.

— Ա՛խտունգ: Զգուշացի՞ր:

Պարսպի ատամների արանքից պարզված երկար փողից ծուխ արձակվեց, հեռադիտակն ընկավ Պյոտրի ձեռքից: Ցած թռավ խրամատի մեջ, կուացավ: Նետվեցին նրա կողմը: Անկենդան ժպիտով մերկացրեց ատամները:

— Գրո՛ղը տանի: Ծներ,— ասաց դժվարությամբ:— Պատրո՛ւյզը տուր...

Թնդանոթաձիգները պղնձյա կարճ հրասանդը մոտեցրին, որի փողը երկինք էր նայում: Պյոտրը հմտորեն (բիբերը ոլորելով մարդկանց վրա) մի լցքատոպրակ վառող լցրեց, ձեռքերի մեջ խաղացրեց քսանֆունտանոց արկը, ուղղեց հրանցքը, մտցրեց մեջը: Պչզեց ու նշան բռնեց.

— Աստծով, առաջինն է... Ե՛տ քաշվիր:

Հրասանդը կրակի ամպիկ ժայթքեց: Կլորակ արկը կոր աղեղով ղացավ ու ընկավ բերդապարսպի մոտ: Ատամների արանքից գլուխները հանած թուրքերը վիրավորական բաներ էին բղավում: Պյոտրը կարմրատակեց: Երկրորդ հրասանդը մոտեցրին նրան...

Ազովի բարձր պարսպի տակ ամոթ էր անգամ հիշել մի քանի օր առաջվա իրենց կորստիությունը՝ բերդը գրավել մի գրոհով: Շրջապատված զորքը, մարտակոցներ խմբելով ու ռեդուտներ կառուցելով, երկու շաբաթ ոմբակոծում էր: Քաղաքում հրդեհներ սկսվեցին: Խորտակվեց պահակետային աշտարակներից մեկը: (Այս առթիվ Պյոտրի գետնափորում մեծ կերուխում արեցին:) Բայց ծովից թուրքերը նորից քսան առագաստանավով օժանդակ ուժեր ստացան: Հրդեհները հանգցնում էին: Ծնիչերիները, գիշերով օձի պես սողալով, մոտենում էին ռուսական խրամատներին ու կեռ դաշույններով մորթում ժամապահներին: Իսկ պարիսպները շարունակում էին կանգուն մնալ՝ անհուսալիորեն անառիկ: Ամենավատը պարենամթերքի մատակարարումն էր: Կոնսիլիումում գեներալները վճռեցին կամավորներին կոչ անել և տասական ռուբլի խոստացան դիտակետերը գրավողներին: Շուրջ երկու հարյուր դոնցի կազակներ համաձայնեցին, զինվորական մի գունդ էլ ավելացրեցին, և գիշերով մոտենալով ձախափնյա դիտանոցին, կազակները փորձեցին պայթեցնել դարպասը: Հաջողվեց, նիգերով քանդեցին պատը, ներխուժեցին: Թուրքերը երեսուն հոգի լինեին-չլինեին: Չորսին սպանեցին, մնացյալներին կապկպեցին: Տասնհինգ թնդանոթ ավար վերցրեցին: Եվ Դոնի վրայով այնպես ոմբակոծեցին մյուս դիտանոցը, որ թուրքերը հեռացան այնտեղից: Մեծ գործ էր արված՝ Դոնն ազատ էր: Ճամբարներում մաղթանքներ մատուցեցին, խնջույքին ներկայացավ իշխան-պապը Միտիշևից:

Բայց անսպասելիորեն մեծ փորձանք եղավ: Տոթ օրեր էին: Կեսօրին մարդիկ, ստվեր փնտրելով, թափառում էին հարբածի պես: Կռվելու ցանկություն չկար, չարացածության հետք անգամ չկար: Կաթսայիկներով չորացրած ձկնով շշի էին բաժանում, մեկական բաժակ օրի: Պողպողան արևը անտանելի շոգ էր ոռիում, ճոճում էին ծորիդները, ճանճերը կպչում պոկ չէին գալիս, կղկղանքի գարշահոտություն էր տարածված, տապից երերում էին թվում ազովյան տափաստաններն ու աշտարակները: Հինավուրց սովորությամբ, ճաշից հետո ճամբարում բոլորը պառկում էին հանգստանալու, քընում ու խոռացնում էր ռուսական համայն բանակը, գեներալից մինչև խոհարար: Դանթում էին ժամապահները:

Նման մի քնած ժամի անհետացավ հոլանդացի թնդանոթաձիգ Յակով Յանսենը: Առաջինը նրան փնտրել սկսեց Պյոտրը, երբ ժամը երկուսին հորանջելով ու աչքերը կուրացուցիչ լույսից կկոցելով, եկավ գետնափորից: Առավոտյան պատրաստվում էին երեք ռուսական խորտակել միմյանց: Յանսենը գրազ եկավ, որ կխորտակի... Պյոտրը թնդաց.

— Հո սատանան չտարա՞վ դրան:

Փնտրեցին ամբողջ ճամբարում: Մի զինվոր ասաց, որ իբր տեսել է, թե ինչպես կարմիր կափտանով մեկը, տոպրակն ուսած, իրերը առած, վազում էր ամրոցի կողմը: Պյոտրը տաքացած հայացքեց զինվորի ատամներին: Բայց, իսկապես, գետնափորում Յանսենի իրերը չկային: Անցել է թուրքերի կո՞ղմը: Հրամայվեց առավոտյան բոլոր գնդերում նզովք կարդալ անիծյալ հոլանդացուն: Դավաճանությունից իսպառ անհանգստացած Գորդոնը պահանջեց կոնսի-

լիում հրավիրել ու հայտարարեց, որ Գոլովինի և Լեֆորտի ճամբարներում պաշտպանական աշխատանքները բարձիթողի վիճակում են, անհոգ են մարդիկ, ճամբարների միջև հաղորդակցության խրամատներ չկան, և եթե թուրքերը արտագրոհ անեն, ադետալի կլինի վախճանը.

— Պատերազմը կատակ բան չէ, պարոնայք գեներալներ... Մենք պատասխանատու ենք մարդկանց կյանքի համար: Իսկ մեզանում բոլորը կարծես խաղ են անում ու կատակում...

Լեֆորտի շրթունքները զայրույթից գունատվեցին: Ծուլի պես խոռված Գոլովինը Գորդոնին էր նայում: Բայց վերջինս պնդում էր պաշտպանական գծերը անհապաղ կարգի բերել.

— Պատերազմում ամենից առաջ պետք է վախենալ թշնամուց, պարոնայք գեներալներ...

— Մե՞նք վախենանք նրանցից:

— Ճանճի պես կոտակացնե՞նք...

— Օ՜ ոչ, պարոնայք գեներալներ, Ազովը ճանճ չէ...

Գեներալները սկսեցին հայհոյել Գորդոնին, վախկոտ անվանեցին ու շուն: Չլիներ Պյոտրը, կնոջամը պոկելու էին գլխից: Նույն օրը, երբ ամբողջ զորքը խոր քուն էր մտել ճաշից հետո, թուրքերը բացեցին ամրոցի դարպասը և անաղմուկ հարձակվեցին հենց ճամբարների միջև ընկած անավարտ խրամատների վրա:

Ստրելեցների կեսը սրախողխող արվեց քնած տեղում: Մյուսները, նետելով տապարներն ու հրացանները, վազում էին տասնվեց թնդանոթանի մարտկոցի կողմը, որը նույնպես մի կերպ էր ամրացված: Թնդանոթներից կրակել անգամ չհասցրեցին. թուրքերը հասան փախչող ստրելեցներին, կեռ յաթաղաններով բարձրացան ռեդուտի վրա, ծղրտոցով, գլուխները կախած, թռան խոնված թնդանոթաձիգների գլխին, և այստեղ Գորդոնի որդին՝ գնդապետ Յակովը, փողերը մաքրելու փարտոցն էր թափահարում...

Ճամբարներում իրարանցում բարձրացավ, կրակոցներ էին լսվում: Պյոտրը կանգնած էր գետնափորի կտրին, բռունցքներով սեղմած, ջղայնությունից հեծկլտում էր... Բղավել, հրաման արձակել՝ ապարդյուն էր: Քնապաթախ մարդիկ ցնորվածի պես դեսուդեն էին ընկել: Պյոտրը տեսավ. Գորդոնը մագլցեց ճամբարի պատնեշով, ատրճանակները վեր պարզած, ծերունական քստքստոցով վազեց դեպի ռեդուտը՝ տղային փրկելու: Նրա ետևից հորդաց կանաչ, կարմիր, կապույտ կաֆտանների անկազմակերպ ամբոխը: Լեֆորտի ճամբարի պատնեշի վրա մոլեգնաբար թափահարում էին դրոշը, այնտեղից նույնպես հոծ խմբերով վազեցին օգնության: Ամբողջ դաշտը գիհվորներով էր ծածկված: Գրավված ռեդուտը ծխով պարուրվեց՝ թուրքերը կրակում էին, նահանջը պաշտպանելով. նրանք տանում էին թնդանոթները, վազքով ելնելով ամրոցի զառիթափն ի վեր: Գլորվում էին ռեդուտի թմբերից, թրերը ճոճելով, կրակելով՝ երևում էին կարմիր լայնափողք շալվարները: Դաշտով մեկ ցրիվ եկած ռուսները հիմա խմբվում ու անհավասար գիծ էին կազմում,

որը արագորեն հետապնդեց ամրոց շտապող թուրքերին: Գետնափորից, որտեղից Պյոտրն էր հետևում, այդ ամենը խաղի էր նմանվում... Մերոնք հաղթո՞ւմ են... Թուրքերը, նրանց ետևից ռուսները, թափվեցին բերդի խրամը:

— Ձի՜,— բղավեց Պյոտրը:— Գրոնի՛: Փողհարնե՞ր:

Նա հողն էր դոփում կրունկներով: Սակայն ոչ ոք չէր լսում Պյոտրին: Կողքով սլացավ Ալեքսաշկա Մենշիկովը՝ ապակի դարձած աչքերով: Թրով հարվածեց ձիուն, թռավ խրամի վրայով... «Ուռ-ռա՜»՝ բղավում էր բերանը բացած... Կտկտում էին թմբուկները: Ու հանկարծ ինչ-որ բան կատարվեց: Թուրքերը վազելավազ հասան պարիսպներին: Դարպասը բացվեց: Դուրս թափվեց ենիչերիների բազմությունը, և մեկը՝ սպիտակ ձիով, ուսից գլուխ կարմիր հագած, խոշոր չալմայով, վեր բարձրացրեց տարածած ձեռքերը... Կրակոցների արանքից այնպիսի գարհուրելի ոռնոց բարձրացավ, որ Պյոտրը ցնցվեց... Ռուսներն արդեն ետ էին փախչում, նրանց ետևից՝ հեծյալ ու հետևակ թուրքերը... Ընկնում էին, ընկնում: Պյոտրը բռնեց քունքերը... Նորից տեսավ Ալեքսաշկային. նա սուրում էր դեպի կարմրազգեստ չալմայավորը՝ բախվեցին... Վառոդի ծխի քուլաներ... Ռումբերի պայթյուններ... Փրփրած ձիեր: Մոտ վազելիս, մարդիկ բարձրահասակ էին դառնում մի տեսակ՝ սարսափից այլայլված էին դեմքերը... Հողաթմբերի վրայով թափվում էին խրամատների մեջ: Ջախջախված են, ջախջախված...

Արդեն շուրջ հինգ հարյուր մարդ կորցրեցին, մի գնդապետ, տասը սպա և ամբողջ մարտկոցը: Մի քանի օր Պյոտրը չէր նայում ամրոցի կողմը, որտեղից թուրքերն առանձներն էին մերկացնում: Ալեքսաշկան էլ մարդ չմնաց, պարծեցավ մոտն իր արյունոտ թրով՝ նա որ հերոս էր... Ճամբարներում վիճակել էին... Սա էլ քեզ՝ քնելը: Լեֆորտը և Գոլովինը մարդկանց աչքին չէին երևում՝ նրանց ճամբարներում հիմա միայն երևում էր, թե ինչպես են բանիերով հողը ետ տալիս... Պյոտրին զարմացրել էր անհաջողությունը: Շրջում էր մռայլված, անխոս, կարծես մեծացել էր այդ օրերի ընթացքում: Սեպի պես ուղեղում մեխվել էր՝ Ազովը պիտի գրավվի: Փառքով, թե անփառունակ, թեկուզ ամբողջ Ռուսաստանը չոքացնելով, Ազովը կգրավվի: Երեկոները, գետնափորի մոտ, աստղերի տակ նստած ծխելով, նա հարցուփորձ էր անում Գորդոնին՝ պատերազմի, երջանկության, փառապանծ զորավարների մասին: Գորդոնն ասում էր.

— Երջանիկ է այն զորավարը, որը պատերազմում է շիլայով ու բանով, ով համառ է ու զգույշ... Եթե զոլդատը վատաճում է գնդապետին և կուշտ է զոլդատը՝ նա քաջաբար է կռվում...

Այլևս բերդի վրա թնդանոթաձգության խաղեր չէր անում Պյոտրը: Օրերն անց էր կացնում խրամատներում կատարվող հողային աշխատանքներում, որոնցով բայլ առ բայլ մոտենում էին ամրոցին:

Կապիտանն ու կեղծամը հանած, հող էր փորում, ճղապատնեշ հյուսում, այդտեղ էլ ուտում գինվորների հետ:

Գետի կողմից Ազովը տեղադրված էր կիսաբլուրի վրա: Գորդոնը խորհուրդ տվեց բերդի դիմաց կղզու վրա ժամանակավոր ամրություն կառուցել՝ մարտկոցներով: Այդ վտանգավոր գործը հանձն առավ Ցակով Դոլգոռուկին, մի չար ու համառ մարդ: Թեկուզ գլխից գլխվելու գնով նա փառք էր որոնում պատերազմում: Գիշերը երկու գնդերով գրավեց կղզին ու խրամատավորվեց: Առավոտյան թուրքերը հասկացան վտանգը և ուժեղ ջոկատով, թաթարական այրուձիի հետ սկսեցին Դոնով անցնել աջ ափը, այնտեղից ռուսներին կղզուց քշելու համար: Գորդոնը երկու գեներալներին խնդրանք ուղարկեց՝ օգնության հասնել Դոլգոռուկիին, և ինքը, առանց պպասելու, թնդանոթներով ու հեծելազորով դիրք գրավեց կղզուց ցած, արգելափակոցների ետևը:

Թուրքերը վախեցան, կանգ առան: Եվ այդպես կանգնած էին՝ Գորդոնը ձախ ափին, Դոլգոռուկին՝ սարսափի մեջ, կղզում, թուրքերը՝ նույնպես շփոթահար, աջ ափին... Լեֆորտը և Գոլովինը դանդաղում էին, իսկ հետո վճռեցին չելնել ճամբարներից՝ երկուսի համար էլ Գորդոնն անտանելի էր դարձել... «Թող մենակ գլուխ հանի...»:

Պյոտրը ոռդուտի բարձունքից հետևում էր զորքերի տեղաշարժերին և բոլորի պես, չէր հասկանում, թե ինչ է կատարվում: Վախենում էր միջամտել... Եվ հանկարծ, թաթարական այրուձին ջուրը նետվեց ու առաջացավ, ենիչերիները բռնել էին ձիերի պոչերից: Թաթարները տափաստան անցան, թուրքերը ետ քաշվեցին ամրոց: Գորդոնը վերադարձավ երաժշտությամբ ու բացած դրոշներով: Մարտը շահեցին առանց կրակոցի:

Կղզուց ռումբեր թափվեցին Ազովի վրա, որը երևում էր, ինչպես ափի մեջ, տներ էին ավերում, հրդեհներ առաջացնում: Երևում էր, թե ինչպես բնակիչները, փրկություն որոնելով, պարիսպների տակ էին վազում: Ռուսական ճամբարում ուրախություն ծայր առավ: Կրկին խոսեցին գրոհի մասին: Սակայն այս անգամ էլ Գորդոնը ետ էր պահում անխոհեմ ձեռնարկից. համոզեց փորձել՝ գուցե ամրոցի պարետ Մուրթոզա փաշան, կհանձնվի նպաստավոր պայմաններով: Թեժ ռմբակոծությունից հետո, երբ ամբողջ Ազովը բոցավառվում էր, փաշային հրովարտակ ուղարկեցին երկու կազակների ձեռքով: Նայում էին, թե ինչ է լինելու. կազակները մոտեցան պարսպին, թափահարեցին գլխարկներն ու հրովարտակը, նրանց դարպասից ներս թողեցին, սակայն կարճ ժամանակ անց անպատիվ եղանակով դուրս շպրտեցին... Այն էլ ցարական սուրհանդակներին: Հրովարտակը ետ էին բերել: Ցակով Ցանտանի ձեռքով դրա վրա ռուսերեն անվայել խոսքեր էին գրված:

Գոլովինի վրանում Գորդոնն ապարդյուն էր հավատացնում, որ ռազմական գիտության համաձայն, նախ պարիսպներին պետք է մոտենալ խրամատներով ու խոռ բաց անել, նոր միայն գրոհի անցնել: Նրան լսել չէին ուզում: Գեներալները նստած գինի էին խմում: Պյոտրը, գլուխը ձեռքերի մեջ առած, ծոծրակն էր քորում, մտերին նայելով. եղջրափողերի հաղթական հնչյուններն էին ակամայն հասնում Ազովի պարիսպների վրա: Գորդոնը թխկացնում էր թրով.

— Փառապանծ մարշալ Կոնդեն միշտ սովորություն ուներ...

— Կոնդե՞, Կոնդե՞,— ընդհատելով, բղավում էր Գոլովինը,— քեզ էլ, քո Կոնդեին էլ... Քեզ հետ մենակ ժամանակ կորցրեցինք ու արքայական պատիվն արատավորեցինք:

Լեֆորտը հանդգնաբար ժպտում էր՝ Գորդոնին նայելով: Պյոտրը համառորեն ցանկանում էր անհապաղ հարձակում: Գրոհը նշանակեցին օգոստոսի հինգին:

Կոչ արեցին կամավորներին: Սպաներին քաջալերական, զինվորներին տասական ռուբլի խոստացան, եթե գրավեն հրանոթը: Գնդի տերտերները ցերեկային ժամերգությանը մարդկանց հորդորում էին անձնազոհ լինել: Զինվորական ու ատրելեցների գնդերում կամավորներ չեղան: Վհատ տեսքով թիկունք էին դարձնում. «Անխելք մարդ են գտել, էդ չարչարանքին գնալու...»: Բայց դոնցի կազակները յասավուլներ ուղարկեցին Պյոտրի մոտ ասելու, որ երկուսուկես հազար կազակ պատրաստ են մագլցել պարիսպն ի վեր, եթե հարկ լինի՝ ավելի շատ մարդ կհավաքվի, միայն թե հետո Ազովն իրենց տան թեկուզ մեկ օրով՝ թալանելու:

Պյոտրը, նաև գեներալները գրկեցին յասավուլներին, խոստացան ամրոցը նրանց տալ երեք օրով: Օժանդակ ուժեր կարգեցին՝ հինգ հազար ատրելեց ու զինվոր: Գրոհին նախորդող գիշերը Գորդոնը մտավ գեներալորն, ուր Պյոտրը հալչող մոմի լույսի տակ, ծխամորճն էր ծծում, ռազմական քարտեզի վրա հակված:

— Զինվորների հետ խոսեցի՞ր: Հը՞, Պյոտր Իվանովիչ, ատված մեզ օգնակա՞ն...

Գորդոնը նստեց, սաղավարտը ծնկին դնելով: Ծերուկն հոգնած էր: Ներս ընկած այտերին սպիտակ մազեր էին ցցված: Դժվարությամբ էր շնչում, խոշոր ու դեղին ատամները բացած, որոնցից առջևի երկուսն ընկած էին: Փաղաքուշ տրտմությամբ նայում էր ինքնավստահ պատանյակին: Իսկ միգուցե հենց այդպես էլ պետք էր, որ ջահելությունն առաջ գնա, խոչընդոտ չհարցնելով...

— Ջմռանը մեծ նավատորմ ենք կառուցելու Վորոնեժում,— ասաց Պյոտրը, կարմրած աչքերը բարձրացնելով:— Վաղը պետք է գրավել Ազովը, Պյոտր Իվանովիչ: (Զիբուխով մի փոքր ծուխորոշ ցույց տվեց Դոնի գետաբերանից արևմուտք:) Նայիր... Էստեղ երկրորդ բերդը կկառուցենք: Ջմռանը թուրքերը Ազովի ծով չեն խցկվի, իսկ գարնանը մեծ նավատորմով կլողանք Էստեղ... Նայիր՝ Կերչի տակի նեղուցում ամրոց ենք կանգնեցնում՝ ու ամբողջ ծովը մերն է... Ծովային նավեր ենք կառուցում, և՝ դեպի Սև ծով: (Զիբուխը թոչկոտում էր քարտեզի վրայով:) Էստեղ արդեն բաց ասպարեզ

ունենք: Ղրիմը կգրավենք ծովով: Ղրիմը մերը կլինի: Կմնան Բոսֆորն ու Դարդանելը: Կովով լինի, թե հաշտությամբ, Միջերկրական ծով կելնենք: Մետաքսով, ցորենով կխեղդենք... Մի տես ի՞նչ երկրներ են. Վենետիկը, Հռոմը... Էս կողմն էլ նայիր՝ Մոսկվան, գետերով ապրանքները կհասցնենք Ցարիցին, էստեղ էլ, որտեղից մինչև Պանշին հապանք գետագալարով, Դոն բերող ջրանցք կփորենք... Ուղիղ ճանապարհով՝ Մոսկվա-Հռոմ: Հը՞: Էն ժամանակ վաճառական կդառնանք... Պյոտր Իվանովիչ, Ազովը կգրավե՞նք:

Գորդոնը մտածեց ու ասաց.

— Լավ չգիտեմ... Ես տեսա զոլդատներին... Ծատ անխելքները կան՝ կարծում են, թե գրոհի կարելի է գնալ առանց սանդուղքների: Ծատերի դեմքին զոլում տեսա, նույնիսկ վհատություն: Բայց ասացի՝ շրջան մտար, պար արի, ով հանձն է առել, բոլորը կգնան, վախկոտներին ինքս եմ գնդակահարելու: Իմիջիայլոց, ամեն ինչ պատրաստ է. պանդուղքներ, ճոպատանեշները, ձեռքի ռումբերը: Աղոթենք աստծուն, հաջողություն պարգևի...

Պյոտրը հանգիստ չէր: Գիշերվա մեկին արթնացրեց Մենշիկովին, և երկուսով սլացան կազակական բանակատեղին: Խաղաղ էր այնտեղ: Կազակները անհոգ քնած էին սայլերի վրա: Դիմավորեց ատամանը՝ գլուխը սափրած խոշորադեմ, խլվլան աչքերով մի մարդ: Պյոտրին նստեցրեց խարույկի մոտ, թամբի վրա, ինքը նստեց թուրքավարի՝ ծալապատիկ: Կազակներ հավաքվեցին: Չորացրած ձուկ բերեցին, օղի: Ծայր առավ զրույցը՝ անվախ ու կատակախառն: Ըստ երևույթին, կազակները սատանայից էլ չէին վախենում: Խցկվելով խարույկին մոտ, որի լույսը նրանց սև մորուքներն ու հանդուգն դեմքերն էր լուսավորում, խոսում էին, ծաղրն ատամի տակ.

— Մարդկանց ամենամեծ ուժը, ամենակարգին հյութը կազակների մեջ է... Իսկ ի՞նչ գիտեն Մոսկվայում մեր մասին: Որ իբր ավազակներ ենք. Տեպ է՞... Վոյեվոդա կոչարկեն, սա էլ՝ ավելի մեծ ավազակություններ կանի: Էս լավ եղավ, տեր արքա, որ մեզ մոտ եկար: Մեզ լավ աչքով նայիր: Բա մենք նմա՞ն ենք անպետք մարդկանց: Կազակները արծիվ են, արծի՞վ: Հո-հո... Մեզ շահել-պահել է պետք...

Երբ կանաչին տվեց արևելքը, բանակատեղիով մեկ ցածրաձայն կանչեր լսվեցին: Հարյուրավոր կազակներ սկսեցին անցնել հողապատնեշը, և կատուների պես չքանալ խավար դաշտում, պարսպի առափնյա պատերի կողմը: Մյուսները մակույկներ էին նստում: Քաշեքաշ տանում էին ծայրերին կեռեր ամրացրած պարանները, թեթև սանդուղքները: Բանակատեղին անձայն դատարկվեց:

Լայնանում երկնքում աղոտանում էին աստղերը: Կանչեցին գումակների աքաղաղները: Վաղորդյան քամին սառեցնում էր ուսերը: Հյուսիսում կարմատն լույս բռնկվեց, պայթեց թնդանոթը: Գեներալ Գորդոնի Բուտիրյան ու Տամբովյան գնդերն անցան գրոհի:

Պարսպի վրա հաջողվեց բարձրանալ միայն բուտիրցիներին ու տամբովցիներին: Նրանք հետևող ստրելեցները, լսելով կատաղի գոռ-

տեմարտի ձայները, մետաղի շաչյունը, վախեցան ու պառկեցին վառած արվարձանի բալի այգիներում: Կազակները մոլեգնաբար հարձակվում էին գետի կողմից, սակայն սանդուղքները կարճ էին, թուրքերը վերևից քարեր էին գլորում, հալած կապար լցնում: Կազակները ձեռնունայն վերադարձան բանակատեղի: Գրոհը ետ էր մղված:

Երբ արևը բարձրացավ, բազմաթիվ դիակներ տեսան պարսպի տակ: Թուրքերը, ճոճելով, ռուսներին գցում էին պարսպի վրայից, դիակները թափվում էին խանդակը: Ավելի քան մեկուկես հազար զինվոր զոհվեց: Խրամատներում հառաչում էին զինվորները.

— Երեկ Վանյուշկայի հետ նստած ծիծաղում էինք, հրեն թրոչունները են կտցահարում...

— Ինչ ունենք թուրքերի բերանը խցկվելու... Ինչ ենք կորցրել էնտեղ...

— Բա մենք կովող ենք... Բոլորիս կկոտորեն...

— Մենակ գեներալներն են Մոսկվա վերադառնալու...

Ցարի մոտ, Գոլովինի վրանում հավաքվեցին գեներալները: Գորդոնը տխուր էր ու լուռ: Լեֆորտը ձանձրույթով զապում էր հորանջը, ոչ ոքի աչքերին չէր նայում: Այլայլված Գոլովինի գլուխը շարունակ ցած էր հակվում: Միայն ցարի հետ եկած Մենշիկովն էր հեբոսաբար ձեռքերը կողերին կանթել՝ գլուխը փաթաթված էր լաթով, թուրը նորից արյունոտ էր. պարսպի վրա եղել էր... Այդ սատանայից մահը փախչում էր...

Պյոտրը նստած էր, զայրացած ու ձգված: Գեներալները կանգնած էին:

— Հը՞,— հարցրեց նա:— Ի՞նչ կասեք, պարոնայք գեներալներ: (Լեֆորտը աննկատելի սեղմեց Գորդոնի արմունկը: Գոլովինն անհույս թափ տվեց ձեռքերը:) Խայտառակվեցի՞նք վերջնականապես: Ի՞նչ անենք, պաշարումը հանե՞նք:

Նրանք լուռ էին: Պյոտրը եղունգներով կտկտացնում էր սեղանը, այտը ցնցվում էր: Մենշիկովը մոտեցավ սեղանին, աչքերը հանդուգն էին... Մեկնեց ձեռքը.

— Պյոտր Ալեքսեևիչ, թույլ տուր... Ինձ հարմար չէ ըստ աստիճանի էստեղ խոսելը... Բայց քանի որ պարապի վրա եղել եմ... Մի աղա էր, ինչ էր, սոսկալի արեցի, անխոսք... Ասեմ դրանց տվությունն մասին... Թուրքի մի զինվորի վրա մերոնցից հինգին պիտի հաշվել: Թե ինչքան կատաղած են՝ ասելու բան չի... Էդ աղան, ասեմ, թուրն արդեն փորն էի կոխել, բայց հո չէր ղժժում անիծածը, կատաղությունից, կտրած խոզի պես ատամներով երկաթն էր կրծում: Մեկ էլ, նրանց գենքն է մերինից ավելի լավը. յաթաղանները ոնց որ ածելի, մինչև մեր թրերով կամ տապարներով նրանց խփես, գլուխդ երեք անգամ արդեն թոցրած կլինեն... Մինչև պարիսպը չբարձրանենք, թուրքերին հաղթողը չենք: Պարիսպն է հարկավոր փլել: Զինվորներին էլ երկար գենքի փոխարեն ձեռքի ռումբեր է պետք տալ ու կազակական թրեր...

Ալեքսաշկան հոնքերը խաղացրեց, ճարպկորեն ետ քաշվեց: Գորդոնն ասաց.

— Երիտասարդը շատ լավ բացատրեց մեզ... Բայց պարիսպը քանդել կարող ենք միայն ականներով, ուրեմն, հարկավոր է գետնի տակով անցքեր փորել... Իսկ դա շատ վտանգավոր ու շատ երկար գործ է...

— Մեր հացն էլ վերջանալու վրա է,— ասաց Գոլովինը:— Բոլոր պաշարներն են վերջանալու վրա:

— Չհետաձգե՞նք մյուս տարվան,— մտազբաղ ասաց Լեֆորտը:

Պյոտրը, ետ ընկած, ապակի դարձած աչքերով նայում էր երեկվա բաժակակից - ընկերներին:

— Ես ձեր մերը... գեներալներ,— թնդաց նա, շառագունելով:— Ինքս եմ ղեկավարելու պաշարումը: Ի՛նքս: Հենց էլ գիշեր սկսել անցքեր փորելը: Հացը հասցնել... Կախելու եմ... Վաղվանից սկըսվում է պատերազմը... Ալեքսաշկա, ինժեներներին բեր էստեղ:

Վրան մտան ծերացած ու լիկած Ֆրանց Տիմերմանը և ոսկրոտ ու բարձրահասակ, խելացի, անկեղծ դեմքով մի երիտասարդ՝ օտարերկրացի՝ Ադամ Վեյդեն էր:

— Պարոնայք ինժեներներ,— Պյոտրը ձեռքի ափերով հարթեց քարտեզը, մոտեցրեց մոմը:— Սեպտեմբերի սկզբներին պարիսպները պիտի պայթեցվեն... Նայեք, մտածեք... Փորանցքի համար մեկ ամիս ժամանակ եմ տալիս...

Նա ոտքի ելավ, մոմից վառեց ծխամորճը և դուրս եկավ վրանից՝ ապտղերին նայելով: Ալեքսաշկան ինչ-որ բաներ էր շշնջում նրա թիկունքում: Գեներալները կանգնած մնացին վրանում, տարակուսած Բոմ Բար Դիրի արտասովոր վարմունքից...

Պաշարումը շարունակվում էր: Գրոհի անհաջողությունից քաջալերված թուրքերը հիմա գիշեր ու ցերեկ հանգիստ չէին տալիս, քանդում էին ամրությունները, ներխուժում խրամատները: Թաթարական այրուձին, փոշու ամպեր բարձրացնելով, ասպատակում էր ճամբարների մերձակայքը: Թալանում էին գումակները: Բազմաթիվ կազակներ զոհվեցին, կովի բռնվելով նրանց հետ: Ռուսական բանակը հալչում էր: Մեկ մի բան չէր բավականացնում, մեկ՝ մի այլ բան: Սև ծովից ամպրոպաթեր ամպեր եկան՝ այդպիսի ամպրոպներ մոսկովյան մարդիկ դեռ չէին տեսել. հրեղեն այուներով գահավիժում էին կայծակները, ամպրոպից գետինն էր ցնցվում, անձրևի հեղեղները լցվում էին խրամատները և պայթեցման խրամուղիները: Ամպրոպներից հետո անսպասելիորեն վրա հասավ աշունը՝ ցուրտ ու թխպոտ օրերով: Տաք հագուստ բանակի համար չէին պատրաստել: Հիվանդություններ սկսվեցին: Ստրելեցների գնդերում փսփսոցներ ծայր առան... Եվ օրը օրին, ծովի սառչող թաղանթի վրա առագաստներ էին հայտնվում. թուրքերին օժանդակ ուժեր էին գալիս շարունակ:

Լեֆորտը քանիցս փորձեց Պյոտրին համոզել, որ պաշարումը

հանի: Սակայն Պյոտրի կամքն ասես քարացել էր: Խստացել է, կոպտացել: Այնքան էր նիհարել, որ կանաչ կաֆտանը կախ էր ընկել վրայից, ասես ձողի հագցրած լիներ: Կատակները թողեց: Ճամբարում հարբած հայտնված իշխան-պապին ծեծեց բահի պոչով:

Ոչ ոք չէր կարծում, թե կարելի է աշխատել այն լարումով, որը Պյոտրն էր պահանջում: Սակայն պարզվեց, որ կարելի է: Սեպտեմբերի կեսերին ինժեներ Ադամ Վեյդեն հայտնեց, որ արդեն հասել է ճիշտ բաստիոնի տակ և գետնի տակ աշխատող բանվորները ինչ-որ աղմուկ են լսում. թուրքերն արդյո՞ք հակառակաց չեն փորում: Այդ դեպքում ամբողջ արածը զուր գործ էր: Պյոտրը մոմն առած ստորգետնյա անցքը մտավ ու նույնպես լսեց աղմուկը: Տեղնուտեղը վճռվեց չհապաղել ու պայթեցնել թեկուզ այդ մի ականը: Ութսուներեք փութ վառոդ դրեցին այնտեղ: Զորքերին հրաման տրվեց պատրաստվել գրոհի: Թնդանոթի երեք կրակոցով տեղյակ պահեցին բանվորներին ու զինվորներին: Պյոտրը վառեց քուղն ու վազեց ճամբարի խորքը, նրա ետևից՝ Ալեքսաշկան ու Վարենոյ Մադամկինը: Թուրքերը պարսպի վրայից փախան ներքին ամրությունները: Անսովոր լռություն տիրեց: Միայն Դոնից այն կողմ թռչող ագռավներ էին կռկռում: Հանկարծ ամրոցի պարսպի տակ հողը բլրաձև ելավ, ծանր թնդյուն լսվեց, ցրիվ եկող բլրի միջից, շաղ գալով վեր նետվեց կրակի, ծխի, հող ու քարի, գերանների մի ծվեն-ծվեն սյուն, և մի բոպե անց այդ ամենը թափվեց ռուսական խրամատների վրա: Ծիկացած հողմ էր փչում: Այրվող գերանները թշշոցով ընկնում էին ճամբարի մեջտեղում: Պյոտրից երեք քայլ հեռու տապալվեց Վարենոյ Մադամկինը՝ փշրված գանգով: Ծուրջ հարյուր հիսուն զինվոր և ստրելեց, երկու գնդապետ ու մի փոխգնդապետ սպանված էին և վիրավոր: Անհկարագրելի սարսափ պատեց զորքին: Երբ փոշին ցրվեց, տեսան անվնաս պարիսպն ու իրենց վրա կատաղորեն հոհոացող թուրքերին:

Պյոտրին մոտենալ վախենում էին: Անձամբ գրեց (թեքուծուռ, տառերը բաց թողնելով, թանաքը շաղ տալով) հրամանը, որ սույն ամսվա վերջից ոչ ոք ընդհանուր գրոհի ելնեն ցամաքից ու ջրից: Ավարտում էին ս ինչպես մնացած երկու ականանցքերը: Զորքին հրամայված էր խոստովանվել ու հաղորդություն առնել: Եվ բոլորը պատրաստվում էին մեռնելու:

Հիմա մշտապես տեսնում էին Պյոտրին, որը փոչոտ մի ձիուկ հեծած շրջում էր ճամբարում: Խոտը մտրակում էր նրա նիհարիկ ոտքերը: Անձրևներից դեղնած թաղիքե եռանկյունի գլխարկն աչքերին էր քաշում: Ետևից մշտապես գնում էին հեծյալ Մենշիկովը, ատրճանակները գոտիկը խրած և Ալեքսեյ Բրովկինը, շեփորով և մուշկետով: Մարդիկ թաքնվում էին խրամատներում. ոչ թե մի հակառակ խոսք ասելիս, թթված դեմք տեսնելիս կպչում էին այդ երեք սատանաները, մոտ կանչում ենթասպային, ու հարցաքննում: Թեթև բանի համար մտրակահարում էին: Մի քանի ստրելեցների, որոնք իրար մեջ խոսել էին, թե գերել են էստեղ ռուսական մոտ թուրքական ագ-

ռավներին կերակրելու», Պյոտրը ինքն էր ծեծել, դեմքներին խփելով ու հրամայել էր կախել գումակում, վեր հանած լծափայտերից:

Ճգոստոսի քսանհինգի գիշերը Պյոտրը գնաց կոզի, Ցակով Դոլգոռուկիի մոտ, այնտեղից հետևելու մարտին: Բոլոր ճամբարներում զորքերը քնած չէին: Գնդերի տերտերները նստած էին խարույկների մոտ՝ այդպես էր հրամայված, ամենուրեք երևում էին ենթասպաների բելները: Աղոտ լուսաբացին գնդերը դաշտ ելան: Երկու պայթյուն լսվեց: Մուգ բոցը մի րոպե լուսավորեց միհարեները, բերդաշտարակները, բլուրները ու գետը... մարդկային դեմքերը, սարսափից չոված աչքերը... Թուսները հարձակման անցան...

Բուտիրյան գունդը խուժեց քանդված պատից ներս ու մարտ էր մղում ներքին պարտեզներում, ձեռքի ռումբերով:

Պրեոբրաժենցիներն ու սեմյոնովցիները նավակներով մոտ լողացին, սանդուղքները դրեցին, մագլցեցին պատերն ի վեր: Թուրքերը խոցում էին նրանց նետերով, նիզակներով: Հարյուրավոր մարդիկ թափվում էին սանդուղքներից: Գազան կտրած, մագլցում էին, թունդ հայհոյանքից հևասպառ: Բարձրացան: Մուրթոզա փաշան ինքը նետվեց թրամարտի անմարդկային ձայներով ոռնացող ենիչերիների հետ...

Մյուս գնդերը մոտեցան պատերին, բղավում ու իրար էին անցել, բայց մոլեգնությունը բավարար չէր մեռնելու գնալու համար: Չբարձրացան: Ստրելեցները նորից հողաթմբից այն կողմ չգնացին: Այդ ժամանակ Գորդոնը հրաման տվեց մարտավարտի թմբուկ զարկել: Բուտիրցիների կեսը միայն ողջ պրծավ քանդված պարապից: Ռազմախաղի գնդերը արդեն մեկ ժամից ավելի կռվում էին, նեղելով Մուրթոզա փաշային, խուժում էին նեղլիկ փողոցները, ուր կիսայրված ավերակներից նետեր, ռումբեր ու քարեր էին թռչում: Սակայն ոչ ոք չէր աջակցում: Պյոտրը կատաղել էր կզգում, ձիավոր սուրհանդակներ էր ուղարկում, որ ետ դառնան, զորքերը նորից նետեն պարիսպների վրա: Ոսկյա զրահով, փեսրազարդ Լեֆորտը սլանում էր իրար խառնված գնդերի միջով, խլած թուրքական դրոշը ձեռքին: Գոլովինը կույրի պես մարդկանց էր խփում ջարդված նիզակով... Գորդոնը, մենակ կանգնած թմբի վրա, նետերի ու գնդակների տարափի տակ, կանչում էր խոպոտաձայն... Զորքերը հասնում էին մինչև խանդակն ու ետ-ետ գնում: Շատերը, հրացանը կամ նիզակը նետելով, նստում էին գետնին, ծածկում դեմքերը. կուզեք էստեղ սպանեք, չենք գնա, չենք կարող... Նորից մարտավարտի թմբուկ զարկեցին:

Ամեն ինչ խաղաղվեց թե ամրոցում, թե ճամբարներում: Թռչուններ հավաքվեցին դիակների կույտերի վրա: Երրորդ օրը գիշերով պաշարումը հանեցին: Առանց կրակ վառելու, առանց աղմուկի լծեցին թնդանոթները և շարժվեցին Դոնի ձախ ափով. գումակներն առջևից, ապա զորքի մնացորդները, թիկունքում՝ Գորդոնի երկու գնդերը... Ամրացված դիտանոցներում երեք հազար զինվոր ու կազակ թողեցին:

Լուսադեմին փոթորիկ բարձրացավ ծովից: Դոնը սևացավ և փրփրվեց... Փորձեցին անցնել Ղրիմի կողմը, անհագին սալ ու մարդիկ կո-

րան ջրերում: Շարունակեցին առաջանալ նոգայական ափով, թաթարների աչքի առաջ: Գորդոնը ստիպված էր շարունակ ետ գնել նրանց հարձակումները. դարձնում էին թնդանոթները, քառանկյունները կազմում և համազարկերով պաշտպանվում: Այդուհանդերձ, Սվերտի զինվորական գունդը, որ մոլորվել էր գիշերով, մինչև վերջին մարդը կոտորվեց թաթարական թրերի տակ՝ գնդապետով հանդերձ, ողջ մնացածներին ու դրոշը գերեվարեցին:

Ձերկասսկից այն կողմ թաթարները ձեռ քաշեցին: Հիմա շարժվում էին ամայի, լերկ տափաստանով: Վերջին չորացրած հացի կտորներն էին ուտում: Կրակ վառելու ոչինչ չկար, գիշերային ցրտից պատսպարվելու տեղ չկար: Շարք-շարք կիտվում էին աշնան ամպերը: Հյուսիսային քամի փչեց, եղյամապատեց չորսբոլորը: Գետինը սառեց: Ձյուն եկավ, բուք բարձրացավ: Ոտաբոբիկ, ամառային կապտաններով զինվորները թափառում էին մեռած ու սպիտակած հարթավայրով: Ընկնողը չէր բարձրանում: Առավոտյան շատերին էին թողնում պառկած ու հեռանում: Զորքի ետևից գայլերն էին գալիս, ոռնալով բքի միջից:

Երեք շաբաթ անց հասան Վալուեկ՝ բանակի մեկ երրորդն էր մնացել ընդամենը: Այստեղից Պյոտրը մերձավորների հետ առաջ շարժվեց դեպի Տուլա՝ Լև Կիրիլովիչի զինագործարանը: Ցարի ետևից տանում էին երկու գերի թուրքերի ու խլված մի դրոշ:

Մանապարհից Պյոտրը նամակ գրեց իշխան-կայսրին.

«Մինչ հեռ կլոնիխ... Զգրված Ազովից վերադառնալուց հետո պարոնայք գեներալների կոնսիլիումում ինձ հանձնարարված է ապագա պատերազմի համար նավեր, բեռնանավեր, թիանավեր ու այլ տեսակի նավեր կառուցել: Հեռայստ այդ գործերի մեջ պիտի լինենք անդադար: Իսկ այստեղի մասին հայտնում եմ, որ ձերդ արքայության հայրը՝ սրբազնագույն Իսահիկիտը, արքեպիսկոպոսը պրեշբուրգյան և համայն Ցաուգայի ու ամբողջ Կուկուլի պատրիարքը իր հորտերով հանդերձ, ողջ ու առողջ են, աստծո ողորմությամբ: Պյոտր»:

Այդպես անփառունակ ավարտվեց ազովյան առաջին արշավանքը:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

1.

Անցավ երկու տարի: Կոկորդ պատռողները լեզուներն իրենց քաշեցին, ծիծաղողները սկսվեցին: Մեծ ու սարսափելի գործեր կատարվեցին այդ ընթացքում: Արևմտյան վարակն աննահանջ թափանցում էր քնած կենցաղի մեջ: Ավելի խոր ընդգծվեցին ապրելաձևի ճեղքվածքները, անհաշտ ուժերը ավելի հեռացան միմյանցից:

Բոյարներն ու կալվածատեր ազնվականությունը, հոգևորականությունը և ստրելեցները զարհուրում էին փոփոխություններից (նոր գոր-

ծեր, նոր մարդիկ), ատում ամենայն նորամուծության հախտոնությունը և դաժանությունը... «Աշխարհը դարձավ պանդոկ, ամեն ինչ խորտակում են, բոլորին անհանգստացնում... Անտոհմ առևտրականը ձեռքն իշխանությանն է գցում... Ձեն ապրում, այլ շտապում են: Պետությունը ցարը կառավարելու է տվել վավաշոտ կաշառակերներին, որոնք վախ չունեն աստծուց... Անդունդն ենք գլորվում...»:

Սակայն անտոհմ ու աչքաբացները, ովքեր փոփոխություններ էին ուզում, ովքեր հմայված ձգտում էին դեպի Եվրոպա, որպեսզի արևմուտի երկրները պարարող ոսկյա փոշուց թեկուզ հյուլեներ փոխառնեին, ասում էին, որ հուսախաբ չեն երիտասարդ ցարից. հենց այն մարդն է նա, որին սպասում էին: Ազովի տակ կրած խայտառակությունից ու աղետից կուկուլական խրախճանասերը միանգամից առնականացավ, անհաջողությունը մոլեգնորեն սանձահարեց նրան: Մտերիմները նույնիսկ չէին կարողանում ճանաչել՝ որիշ մարդ էր, չարացած, համառ, գործունյա:

Ազովը չգրավելուց հետո նա ընդամենը երևաց Մոսկվայում, ուր քրքջում էին՝ «Ձեզ համար սա կոժուխովյան խաղերը չէր», և անմիջապես մեկնեց Վորոնեժ: Ամբողջ Ռուսաստանից բանվորներ ու արհեստավորներ սկսեցին քշել այնտեղ: Աշնանային ճամփաներով ձգվեցին գումակները: Վորոնեժի ու Դոնի մերձակա անտառներում դարավոր կաղնիներ ճոճվեցին կացինների զարկերից: Նավաշինարաններ էին կառուցվում, պահեստարաններ, բարաքներ: Երկու նավ, քսաներեք թիանավ ու չորս բրանդեր սկսեցին կառուցվել: Ցուրտ ձմեռ էր: Ամեն ինչի պակասություն կար: Մարդիկ կոտորվում էին հարյուրներով: Այդպիսի ստրկություն երազում անգամ չէին տեսել, փախչողներին բռնում, շղթայակապ էին անում: Բքախառն քամին սառած դիակներ էր ճոճում կախաղանների վրա: Հանդուգն մարդիկ հրդեհում էին Վորոնեժի շրջակա անտառները: Գումակներն ուղեկցող մուժիկները սպանում էին պահակ զինվորներին, ձեռքն ընկածը թալանելով, փախչում դեսուդեն... Գյուղերում խեղանդամում էին իրենց, մատները կտրտում՝ Վորոնեժ չգնալու համար: Համատում էր ամբողջ Ռուսաստանը՝ հիրավի, եկել էին նեռի ժամանակները. քիչ էր նախկին բեռը, պարտագիրն ու կոռը, հիմա էլ քարշ էին տալիս նոր, անհասկանալի աշխատանքի: Կալվածատերերը հայհոյում էին՝ նավաշինության համար փող վճարելով, հառաչում՝ չցանված արտերին ու դատարկ շտեմարաններին նայելով: Խիստ բացասաբար էր տրտնջում թե կուսակրոն, թե աշխարհիկ հոգևորականությունը. ուժը բացահայտորեն հեռանում էր իրենցից՝ օտարերկրացիների և սեփական ամեն կարգի նորահայտ ու անտոհմ սրիկաների ձեռքն անցնելով:

Նոր դարը դժվար էր սկսվում: Այդուհանդերձ, գարնանը նավատորմը կառուցվեց: Հոլանդիայից ինժեներներ և գնդերի հրամանատարներ բերել տվեցին: Պանշինում և Չերկասսկում մեծ քանակությամբ պարենամթերք կուտակվեց: Զորքերը համալրվեցին: Մայիսին «Պրինկիպիում» նոր թիանավով, նավատորմի գլուխն անցած Պյոտրը հայտնվեց Ազովի տակ: Ծովից ու ցամաքից շրջապատված թուրքերը հուսակտուր պաշտպանվում էին, ետ մղելով բոլոր գրոհները: Երբ լրիվ վերջացավ հացը և վառոդը, հանձնվեցին հաղթողների ողորմածությանը: Երեք հազար ենիչերի Հասան բեյ Արասլանովի հետ թողեցին կիսավեր Ազովը:

Առաջին հերթին դա հաղթանակ էր յուրայինների ընկատմամբ՝ Կուկույը հաղթում էր; Մոսկվային: Անմիջապես նոռում հրավարտակներ ուղարկեցին Լեոպոլդ կայսրը, Վենետիկի դոժին, պրուսական թագավորին: Մոսկվա գետի վրա, Քարե կամուրջից քաղաք բերող մուտքի վրա, Անդրեյ Անդրեևիչ Վինիուսի ջանքերով, կամար կանգնեցրին, կամ հաղթական դարպաս: Կատարին, դրոշների և զենքերի արանքում երկգլխանի արծիվ կար, տակը՝ մակագրությունն.

«Աստված մեզ հետ է, և ոչ ոք չի հաղթի: Երբեք չի լինի»:

Դարպասը պահում էին ոսկեգոծ Հերկուլեսը և Մարսը՝ երեք սաժենանոց արձաններ: Դրանց տակ, փայտից շինված ու ներկած, Ազովի փաշան էր և թաթարական մուրզան, երկուսն էլ շղթայակապ, այս մակագրությունը կար.

«Առաջ տափաստաններում էինք պատերազմում, հիմա Մոսկվայից հազիվ փրկվեցինք փախչելով»:

Դարպասի կողքերին մեծ կտավների վրա նկարներ էին. ծովերի աստված Նեպտունն էր, հետևյալ մակագրությամբ. «Ահա և ես եմ շնորհավորում Ազովի գրավումը և ձեզ եմ ենթարկվում...»: Մյուս նկարի վրա ռուսները կոտորում էին թաթարներին. «Ախ, Ազովը կորցրեցինք, մեր գլխին փորձանք բերեցինք...»:

Սեպտեմբերի վերջին մարդկանց հոծ խմբերով ծածկվեցին ափերն ու տների կտուրները, Զամոսկվորեչյեից կամրջով ու կամարատակով գալիս էր ազովյան բանակը: Առջևից վեց ձի լծած կառքով գալիս էր իշխան-պապը, սրով ու վահանով: Նրա ետևից՝ երգողներ, նվագողներ, գանգաններ, ատենավորներ, բոյարներ և զորքը: Ապա բերում էին Լեֆորտի տասնչորս շքեղ զարդարված ձիերին: Ինքը գրահակիր, Ազովի հատակագիծը բռնած, կանգնած էր ցարի ոսկեգոծ սահնակի մեջ: Դարձյալ՝ բոյարներ, ատենավորներ, զորքը, նավատեներ, նորընծա փոխծովակալներ Լիման և դը Լոզյերը: Մեծագույն ճոխությամբ, դղրդացնող գոսահարներով շրջապատված, հունական մարտակառքով գալիս էր կարնլիկ ու պնդակազմ, լայնքին տրված բոյարին Շեինը, որին ազովյան երկրորդ արշավանքից առաջ, գեներալիսիմուսի պատվին էին արժանացրել՝ բոյարների բերանը փակելու համար: Նրա ետևից պաստառները գետնի վրայով քարշ տալով, թուրքական տասնմեկ դրոշ էին բերում: Գերեվարված թաթարական դյուցազուն Ալատիկին էին բերում, սա շեղ աչքերով խեթուն էր ամբոխին, կատաղած բացելով ատամները՝ ծաղրում ու ծանակում էին նրան: Պրեոբրաժենյան գնդից հետո քառաձի մի սայլով կախաղան էին բերում, որի տակ, օղը վիզը գցած, դավաճան Յակով Ցանսենն էր կանգնած, երկու դահիճ աջից ու ձախից տանջաբքանները էին շրխկացնում, մտրակները թափահարելով: Գալիս էին ինժեներներ,

նավաշինարար վարպետներ, ատաղձագործներ, դարբիններ: Ստրելեցներից հետո հեծյալ Գորդոնն էր, ապա գերի թաթարները՝ սավանների փաթաթված: Խայտաչարիվ ութ ձի քաշում էին նավի պես սարքած ռսկեզօծ մարտակառքը: Առջևից քայլում էր Պյոտրը՝ նավաստու կափտանով, թաղիքե եռանկյունի գլխարկին ջայլամի փետուրը խրած: Զարմանում էին նրա կլոր երեսը և երկար հասակը տեսնելիս, որ բարձր էր մարդու հասակից, և շատերը խաչակնքելով վերհիշում էին զարհուրելի և խորհրդավոր փսփսոցները այդ ցարի մասին:

Զորքերը Մոսկվայի միջով շարժվեցին դեպի Պրեոբրաժենսկոյե: Ճուտով բոյարներին հրամայվեց հավաքվել այնտեղ՝ խորհրդի: Մեծ Դումայում, որին, բոլոր սովորություններին հակառակ, ներկա էին նաև օտարերկրացիներ, գեներալներ, ծովակալներ և ինժեներներ, Պյոտրը կորովի ձայնով ասաց բոյարներին.

— Հետևյալ բախտը մեզ ընդառաջ է վազում, որը երբեք այսքան մոտ չի եղել հարավից՝ երանի նրան, ով կբռնի նրա մազերից: Ուստի վճիռ տվեք, բոյարներ, ավերված ու վառված Ազովը նորից կառուցել ու բազում զորքով բնակեցնել, նաև այնտեղից ոչ հեռու, ուր Տագանրոգ քերդն եմ հիմնել, սույն քերդը բարեշինել ու բնակեցնել... Նաև հարկավոր է՝ քանզի մեզ ձեռնտու է ծովով, քան ցամաքով պատերազմել, ծովային քարավան կառուցել քառասուն և ավելի նավերով... Նավերը կառուցել լրիվ պատրաստ, թնդանոթներով և փոքր հրազենով, ինչպես պետք է պատերազմելիս: Նավերը պետք է կառուցել այսպես. պատրիարքը և ութ հազար ծուխ ունեցող վանքերը՝ մի նավ: Բոյարներն ու բոլոր կարգի ծառայողները, որ տասը հազար ծուխ ունեն՝ մի նավ: Վաճառականներն ու մանր առևտրականները, ստորին դասն ու արվարձանները պիտի կառուցեն տասներկու մեծ նավ: Ուստի բոյարները և հոգևորականները, և ծառայող պաշտոնյաներն ու վաճառականները պիտի կազմեն կումպանիաներ, այսինքն՝ ընկերություններ, և բոլոր կումպանիաները պիտի լինեն թվով երեսուն և հինգ...

Բոյարներն այդպես էլ վճռեցին, թեև շատերի աչքերը ճակատը թռավ ու մուշտակները թրջվեցին քրտինքից: Կումպանիաները հրամայվեց կազմել մինչև դեկտեմբեր՝ վոստչինաները, կալվածքներն ու ծխերը հարքունիս բռնագրավելու սպառնալիքով: Ցուրաքանչյուր կումպանիա, բացի ռուս ատաղձագործներից և սղոց քաշողներից, իր հաշվին պետք է օտարերկրացի վարպետներ, թարգմանիչներ, հմուտ դարբիններ, մեկական փորագրող, մեկական հմուտ ատաղձագործ, մեկական ընկարիչ պահեր և մեկական բժիշկ, իր դեղատնով:

Ապա՝ Պյոտրը հրամայեց հատուկ հարկի վճիռ կայացնել, Վոլգայից Դոն ջրանցքը կառուցելու համար, ու այդ ջրանցքը փորել սկսել անհապաղ: Զեռքերը տարածած, առանց վեճի վճռեցին: Բոյարների համար ծանր էր նման շտապողականությունը, բայց տեսնում էին՝ գիտեն, թե չգիտեն, Պյոտրն ամեն ինչ վճռել է նախապես: Գահի վրայից ոչ թե խոսում էր, այլ վրա էր տալիս կոպտությամբ, ընդ

ածիլված գեներալները միայն կեղծամներն էին թափահարում... Օ՜, շատ պինդ էր բռնել: Պրեոբրաժենսկոյեի շորսբոլորը զինվորական ճամբար էր՝ շեփորներ, թմբուկներ, զինվորական երգեր: Եվ ստացվում էր, որ բոյարական Դուման այստեղ քրտնքախաշ է լինում ընդամենը հանուն հին սովորության՝ ցարը շուտով առանց նրանց էլ կկատարվի:

Իրոք, շուտով մի մեծ գործ կատարվեց ոչ թե բոյարական վճռով, այլ ուղղակի, թագավորի անձնական գրասենյակի ատենավորը և իշխան-պապը գրեցին ու զինվորների միջոցով մոսկովյան հիսուն լավագույն ազնվականներին ուղարկեցին ցարի հրամանագիրը, որ պատրաստվեն արտասահման մեկնել՝ մաթեմատիկա, ֆորտիֆիկացիա, նավաշինություն և այլ գիտելիքներ սովորելու (առանց որի, փառք աստծո, ապրում էին Սուրբ Վոլոդիմերից սկսած:) Մոսկովյան շատ տներում լացուկոծ բարձրացավ, բայց վախեցան որոշումը փոխելու մասին խնդրել կամ տկարություն պատճառ բռնել: Ճանապարհելու պատրաստություն տեսան, օրհնեցին երիտասարդներին, հրաժեշտ տվեցին՝ մեռնելու ուղարկելու պես: Ցուրաքանչյուրին կից մի զինվոր կարգեցին, ծառայելու և տեղեկություններ հայտնելու համար, և գարնան ցեխ-անձրևին ճամփա ընկան նրանք դեպի օտար ու հեռավոր, գովական երկրներ:

Այդ ազնվականներից մեկը Պյոտր Անդրեևիչ Տոլստոյն էր, Տրոյեկուրովի փեսան: Նա ուրախ էր ցանկացած գնով սքողել ստրելեցների խռովությանն իր մասնակցությունը:

2.

Ազովի գրավումը չափազանց անշրջահայաց և վտանգավոր գործ էր. ռուսները մեծ պատերազմ էին հրահրել ամբողջ Թուրքական կայսրության դեմ: Իսկ ուժերն ընդամենը բավականացրել էին մեկ մի հատիկ ամրոցի համար, և թե՛ Պյոտրը, թե՛ գեներալները շատ լավ հասկացան դա Ազովի տակ մղվող մարտերում: Կոժուխովյան նախկին կորովի հետքն իսկ չէր մնացել: Եվ հիմա չէին մտածում նվաճումների, այլ սոսկ առաջին պահ դիմանալու մասին, եթե թուրքերը կամենան Ռուսաստանի դեմ պատերազմել ցամաքից և ծովից:

Հարկ էր դաշնակիցներ փնտրել, ամենայն հապճեպությամբ բարեփոխել ու վերազինել բանակը և նավատորմը, հիմնովին վերակառուցել ժանգոտած պետական մեքենան նոր, եվրոպական եղանակով ու դրամ հայթայթել, դրամ, դրամ...

Այդ ամենը կարող էր տալ միայն Եվրոպան: Պահանջվում էր մարդիկ ուղարկել այնտեղ, և այնպես ուղարկել, որ այնտեղ տային: Խորիմաստ, անհետաձգելի, շտապ խնդիր էր: Պյոտրը (և մերձավորները) վճռեց դա ասիական խորամանկությամբ. ամենայն ճոխությամբ մեծ դեսպանախումբ սարքել և անձամբ գնալ նրանց հետ՝ ծպտյալ, ինչպես դիմակահանդեսին, որպես Պրեոբրաժենյան գնդի

ուրյադնիկ Պյոտր Միխայլով: Այսպես պիտի ստացվեր. «Դուք մեզ հետամնաց բարբարոսներ էիք համարում, ու թեպետ թագավոր ենք և այլն և այլն ու հաղթել ենք թուրքերին Ազովի տակ, բայց մենք հպարտ մարդիկ չենք, այլ պարզ ու հասարակ, ու մեր քարացածությունն էլ ձերինից պակաս կարող է լինել, հատակի վրա էլ կքնենք, մուժիկի հետ մի ամանից էլ կուտենք, մեր հոգուն էլ մենակ մի բան է՝ վերջ տալ մեր անգիտությանն ու անխելքությանը, սովորել ձեզնից, մեր բարերարներ...»:

Հիրավի, ստույգ հաշվարկ էր. ձկան պոչով աղջիկ տանեին Եվրոպա, այնտեղ այդքան չէին զարմանա... Հիշում էին, որ դեռևս Պյոտրի եղբայրը ատամ պես մի բան էր համարվում... Իսկ սա՝ սաժենաբոյ, ջղաձգությունից այլայլված դեմքով այս պատկերը- տրդամարդը թքել է ցարական վեհապանծության վրա, հանուն առևտրի ու գիտությունների հանդեպ ունեցած ծարավի... Սույնը անհավանական էր և զարմանալի:

Լիազոր ու մեծն դեսպաններ ընտրեցին Լեֆորտին, սուր խելքի տեր, լեզուներ իմացող Ֆյոդոր Ալեքսեևիչ Գոլովինին, որը սիբիրյան փոխարքան էր, և դումայական ատենավոր Պրոկոֆի Վոզնիցինին: Նրանց հետ պիտի լինեին մոսկովյան քսան ազնվական և երեսունհինգ կամավորական, այդ թվում Ալեքսաշկա Մենշիկովը և Պյոտրը:

Մեկնումը հետաձգվեց անսպասելի անախորժ դիպվածով. դոնցի կազակների մեջ դավադրություն բացահայտվեց, որի գլուխ էր կանգնել գնդապետ Ցիկլերը, հենց նա, որը Պյոտրի՝ Տրոիցեում եղած ժամանակ ստրելեցների իր գունդը առաջինը տարավ այնտեղ: Պյոտրը երբեք մոռանալ չէր կարող, որ Ցիկլերը Սոֆյայի հավատարմագույն ծառաներից մեկն է և համառորեն չէր հավատում նրա շողոմությանը: Ազովը գրավելուց հետո Ցիկլերին ուղարկեց Տագանրոգ բերդը կառուցելու՝ փառասեր մարդու համար աքսորին համազոր բան էր դա: Տագանրոգում գնդապետը գտավ հարկադիր աշխատանքից բորբոքված կազակներին՝ նրանց տափաստանային ազատությունը խորտակվում էր ցարի անողոք ձեռքի տակ, և այնտեղ, իսկույն դավանանելով, Ցիկլերն ասաց կազակներին.

«Տերության մեջ հիմա շատ է շատացել անկարգությունը, որ թագավորը ծովեր է կտրում ու մեր թշնամուն, անիծյալ օտարերկրացի Լեֆորտին մեծն դեսպան է ուղարկում, ու հետն էլ անագին բան տանում գանձարանից... Ցարը համառ է, ոչ ոքի լսել չի ուզում, անվալել ցոփության մեջ է ապրում և բոլորի գլխին ցավ ու արցունք բերում և զուր տեղը գանձարանն է մսխվում... Գիշերով մենակ գնում է գերմանուհու մոտ, հեշտությամբ կարելի է դարան մտնել ու կտորկտոր անել: Իսկ եթե սպանեք նրան, ձեզ՝ կազակներիդ, խանգարող ոչ մեկը չի լինի, արեք այնպես, ինչպես Ստենկա Ռազինն արեց... Անելուց հետո էլ թեկուզ ինձ ցար կարգեցեք, ես հին հավատի կողմնակից եմ ու սիրում եմ հասարակ, անտոհմ մարդկանց»:

Ի պատասխան, կազակներն աղմկեցին. «Ժամանակ տուր, թագավորը հենց գնաց գերմանացիների մոտ, Ստենկա Ռազինի պես

կանենք...»: Ստրելեցների հիսնապետ Ելիզարովը, ձիերը չխնայելով, Մոսկվա սլացավ ու զեկուցեց այդ դավանանության մասին: Հետաքննելիս պարզվեց, որ Ցիկլերի հետ կապ են ունեցել մոսկովյան ազնվականներ Սոլովկինը և Պուշկինը ու եյումուտ են արել Նովոդևիչեյի մենաստան: Պյոտրն անձամբ էր տանջում Ցիկլերին, և սա ցավի սառապանքից ու մոխիսի երկյուղից շատ բաներ պատմեց Սոֆյայի և Իվան Միխայլովիչ Միլոսլավսկու (որը երեք տարի առաջ էր մահացել) նախկին մահացու ծրագրումների մասին: Մանկուց սարսափելի Միլոսլավսկու տունը կրկին վեր եկավ, կենդանացավ չջախջախված ու ատելի աչքերը...

Դոնի մենաստանում բանդեցին Միլոսլավսկիների տոհմական դամբարանը, հանեցին Իվան Միխայլովիչի դագաղը՝ ոսկորներով, որերին հասարակ մի սայլի վրա, և ասոսներկու սպասատարը, երկարամազ խոզեր,- մարդկների տակ ղժժալով, բրիքահատ ադաչորների միջով դագաղը քարշ տվեցին ամբողջ Մոսկվայի միջով մինչև Պրեոբրաժենսկոյե: Խոսքերում ամբոխ էր շրջվում դագաղի ետևից, չիմանալով ծիծաղել, թե բարձել սարսափից:

Պրեոբրաժենսկոյեի գինետունում տեսան գորքերի քառանկյունին, մուշկետներն առաջ պարզած: Դղրդում էին թմբուկները: Մեջտեղում կառափնարանի հարթակն էր, կողքը հեծյալ գեներալներն էին և Պյոտրը՝ եռանկյունի գլխարկով, սև այծենակաճով: Նրա ձեռքը ցնցում էր երասանը՝ սովոր ձին կանգնած էր անշարժ, ասպանդակից դուրս պրծնող ոտքով խփում էր ձիու կողին, սպիտակած դեմքը ծռել էր մի կողմի, ետ գցել, ասես ծիծաղելով: Բայց չէր ծիծաղում: Դագաղը բացեցին: Կիսափտած կերպասի մեջ կապտին էր տալիս գանգը և դեսուդեն ընկած ձեռքերի դաստակները: Պյոտրը, մոտենալով, թքեց Իվան Միխայլովիչի աճյունի վրա: Դագաղը քարշ տվեցին ու խցկեցին տախտակյա հարթակի տակ: Բերեցին խոշտանգված Ցիկլերին, Սոլովկինին, Պուշկինին և ստրելեցյան երեք ուրյադնիկների: Անասելի հարբած իշխան-պապը կարդաց դատավճիռը...

Թեք սանդուղքով առաջինը Ցիկլերին քարձրացրեցին հարթակի վրա: Հաղուստը պոկեցին վրայից, մերկանդամ շպրտեցին կառափնարանի վրա: Դահիճը կտրուկ հնոցով կտրեց նրա աջ ձեռքը կացնով, հետո՝ ձախը, լսվեց, թե դրանք ինչպես ընկան տախտակների վրա: Ցիկլերը թափահարեց ոտքերը, վրա ընկան, ձգեցին ոտքերը, երկուսն էլ կտրեցին ազդրկներից: Նա բղավեց: Հարթակի վրա դահիճները վեր հանեցին զգզզված մորուքով խեղանդամ մարմինը, շպրտեցին կառափնարանի վրա, գլուխն էլ կտրեցին: Հարթակի ճեղքերից արյունը չոռում էր Միլոսլավսկու դագաղի վրա...

3.

Պետությունը թողեցին բոյարներին՝ Լև Կիրիլովիչի, Ստրեշնևի, Ապրակսինի, Տրոյեկուրովի, Բորիս Գոլիցինի և ատենավոր Վինիու-

սի գլխավորությամբ: Մոսկվան՝ ապստամբական ու խռովարարական բոլոր գործերով հանդերձ, Ռոմոդանովների տնօրինությանը հանձնեցին: Մարտի կեսերին մեծ դեսպանախումբը Պյոտր Միխայլովիչի հետ մեկնեց Կուլյանդիա:

Ապրիլի մեկին Պյոտրը անգույն թանաքով նամակ գրեց.

«Մին հեռ Վինիուս... Երեկ հասանք Ռիգա, փառք աստծո, ողջ և առողջ, և պարոնայք դեսպաններին մեծ շուքով ընդունեցին: Մեզ ընդունելուց 24 թնդանոթից կրակեցին, երբ մտանք ամրոց և ելանք: Դվինան դեռ սառույցով պատած տեսանք ու այդ պատճառով ստիպված ենք մի քիչ ժամանակ մնալ... Խնդրում եմ, բարևիր բոլոր ծանոթներին... Սրանից հետո էլ եմ գրելու գաղտնի թանաքով, կրակի վրա պահիր՝ կկարդաս... Զևի համար ևս թանաքով կգրեմ, որ պատշաճ լինի այսպիսի խոսքեր. (Ողորմած եղիր, խոնարհ ողջույն տուր իմ տեր գեներալին և գլուխ տուր, որ շնորհ անի, աչքաթող չանի տունուտեղս»... Մնացած ամեն ինչ՝ գաղտնի թանաքով, թե չէ էստեղի մարդիկ շատ հետաքրքրասեր են...»:

Ի պատասխան, Վինիուսը գրեց.

«... Քանզի առաջին գիրը եկավ տյար մեծն դեսպանից ու ընկերներից, հավաքվածների մոտ ընկա քեզ հայտնի ժամին, ու դեսպանների և քաջարի ասպետների, առավելապես թագավորի կենացն այնպես խմեցինք, որ Բաքոսն ու իր թոռ Իվաշկա Խմելնիցկին ծիծաղից կոտորվեցին: Գեներալներն ու գնդապետներն ու բոլոր մարդիկ, ձերդ ողորմածության ուրյանիկներն ու բոլոր զինվորները խոնարհ ողջույն են հղում: Առաջին վաշտում թմբկահար Լուկան մեռավ: Սևամորթ Գանիբալկան, փառք աստծո, հիմա հանգիստ է մնում, շրջթաներն արձակել ենք, ռուսերեն է սովորում... Ձեր տներում էլ բոլորն առողջ են...»:

Մեկ շաբաթ անց երկրորդ նամակը հասավ Մոսկվա.

«Հեռ Վինիուս... Այսօր այստեղից մեկնեցինք դեպի Միտաու... Ապրում էինք գետից այն կողմ, որը բացվեց հենց Զատկի օրը... Այստեղ մենք ապրում էինք ճորտական սովորույթքով և մենակ տեսածով էինք կուշտ: Վանառավանները այստեղ ման են գալիս թիկնոցներով, ու կարծես թե խիստ ազնիվ են ու արդար, բայց հենց ուզեցանք մեր սահմանները ծախել, սկսեցին կռիվ տալ մեր կառապանների հետ մի կոպեկի համար, հայհոյել ու երդում ուտել... Ձիուն ու սահմանակին տալը կոպեկ են տալիս: Բայց մի բան ուզես առնել՝ երեք գին են ասում...

Խնդրում եմ, խոնարհ ողջույն տուր իմ տեր գեներալին և գլուխ տուր, որ շնորհ անի, աչքաթող չանի տունուտեղս... (Շարունակությունը անգույն թանաքով:) Ռիգայից որ դուրս էինք գալիս քաղաքի միջով ու ամրոցով, պարիսպների վրա զինվորներ էին կանգնած, երկու հազարից ոչ պակաս... Քաղաքը լավ ամրացված է, բայց գործը չեն վերջացրել... Այստեղ շատ են վախենում և քաղաքի մեջ ու այլ տեղեր, պահակախմբով չեն թողնում, շատ էլ դուրեկան մարդիկ չեն... Երկրում կարգին սով է, բերք չեն ունեցել»:

Եվս երեք շաբաթ անց.

«Այսօր այստեղից Քյոնիգսբերգ ենք գնալու ծովով... Այստեղ, Լիբավայում մի գարմանք բան տեսա, որ մեզ մոտ կասեն, թե սուտ է... Մի մարդու դեղատանը սալամանդր կար, ապակյա ամանի, սպիրտի մեջ, հանեցի ու ձեռքիս մեջ պահեցի: Իսկը և իսկը գրածի պես էր՝ սալամանդրը կրակի մեջ չվառվող կենդանի է... Էստեղից բոլոր կառապաններին բաց թողեցինք: Փախած կառապաններին էլ հրաման տուր բռնեն ու մի լավ մտրակահարեն, խանութների առաջով անցկացնեն ու փողերը վերցնեն ձեռքներից, որ ուրիշները սրանից հետո չանեն...»:

4.

Առաջակայմի ու միջնակայմի չորս մեծ ու երկարավուն քթի երկու շեղ առագաստներն ուռչել էին դուրեկան քամուց... Թեթևակի թեքված ձախ կողին, «Սուրբ Գեորգի» նավը սահում էր գարնան արևով ողողված մոխրագույն ծովի վրայով: Տեղ-տեղ փխրուն սառցակույտեր էին երևում՝ փրփուրով եզերված: Աշտարակի պես զանգվածեղ խելին ծածանվում էր բրանդենբուրգյան դրոշը: Նավի տախտակամածը մաքուր էր, լվացված, փայլում էր շփած պղինձը: Խաղացկուն ալիքը զարնվում էր կաղնեփայտե Նեպտունին, քթակայմի տակ ծիածանվելով ու փոշիանալով:

Պյոտրը, Ալեքսաշկա Մենշիկովը, Ալյոշկա Բրովկինը, Վոլկովը և լոարիկ, կարճացրած մորուքով, մեծագլուխ տերտեր Բիտկան՝ բոլորը գերմանական մոխրագույն մահուդից զգեստներով, գործած գուլպաներով և երկարեն ճարմանդով յուֆտի ոտնամաններով, ձիթած ճոպանների կապուկների վրա նստած, ընտիր ծխախոտ էին ծխում:

Արմունկները դրած վեր ցցած ծնկներին, զվարթ ու բարիացած Պյոտրը ասում էր.

— Ֆրիդրիխը՝ բրանդենբուրգյան կուրֆյուրստը, ում մոտ գնում ենք Քյոնիգսբերգ, ախպեր տղա է, կտեսնեք, թե ոնց է դիմավորելու... Մենք իրեն շատ ենք պետք... Սարսափի մեջ է ապրում. մի կողմից շվեդներն են նեղում, մյուս կողմից՝ լեհերը... Ամեն ինչ արդեն իմացել ենք: Մեզնից ռազմական դաշինք է խնդրելու՝ կտեսնեք, տղերք...

— Մենք դեռ կմտածենք,— ասաց Ալեքսաշկան:

Պյոտրը թքեց ծովի մեջ, ծխամորճի ծայրը սրբեց թևքով.

— Բանն էլ հենց էն է, որ մեզ դաշինքը պետք չէ: Պրուսիան Թուրքիայի դեմ կռվողը չէ: Բայց տղերք, Քյոնիգսբերգում չարություն չանեք, գլուխներդ կպոկեմ... Հանկարծ անուններս խայտառակ չանենք:

Խումհարի տանջանքով տերտեր Բիտկան ասաց.

— Մեր վարմունքը միշտ էլ վայելուչ է, սպառնալու կարիք չկա... Իսկ էդ տեսակ տիտղոս՝ կուրֆյուրստ, լսած չկայինք:

Ալեքսաշկան պատասխանեց.

— Թագավորից ցած, դուքսից բարձր, կդառնա կուրֆյուրստ: Բայց դե, ի-ի՜նչ խոսք, սրա երկիրը քայքայված է, մի կերպ յոլա են գնում:

Ալյոշա Բրովկինը լսում էր, պայծառ աչքերը չռած, անբեխ բերանը բաց արած... Պյոտրը ծուխ փչեց նրա բերանը: Ալյոշան հազաց: Մի-ծաղեցին, սկսեցին հրմշտել կողերը... Ալյոշան ասաց.

— Հը՞, ի՜նչ կա, ի՜նչ կա... Հաստատ որ վախենալու բան է, հանկարծ մե՜նք՝ ու նրանց մոտ:

Ծոպանների վրա այդ զվարճացողներին ապշահար նայում էր ծեր նավապետը՝ ֆինն էր: Հավատալը չէր գալիս, որ այդ զվարթ պատանիներից մեկը մոսկովյան ցարն է... Բայց ի՞նչ զարմանալի բան կա աշխարհում...

Ձախից, հեռուներում ավագոտ ափեր էին լողում: Հազվադեպ որևէ առագաստ էր երևում: Դեպի արևմուտք, հորիզոնից այն կողմ էր լողում լիառագաստ մի նավ: Դա վիկինգների, հանգլացեցի վաճառականների ծովն էր, ներկայումս՝ շվեդների տիրույթը: Արևը թեքվում էր: «Սուրբ Գեորգին» թուլացրեց շկոտները և քամուն հանձնեց, ալիքները մեղմիկ ճողփելով, լողաց դեպի առափնյա երկարուկ ծանծաղուտը, որը ծովից բաժանում էր Ֆրիշգաֆ գոց ծովախորշը: Երևաց փարոսը և Պիլաու բերդի ցածրիկ աշտարակները, որը պաշտպանում էր ծովախորշի մուտքը: Մոտ լողալով, թնդանոթ արձակեցին, խարիսխը ջուրը իջեցրեցին: Նավապետը մոսկովցիներին ընթրիքի կանչեց:

5.

Առավոտյան ափ ելան: Առանձնահատուկ ոչինչ չկար այդտեղ՝ ավազ, սոճիներ: Մի երկու տասնյակ ձկնորսական նավեր, ցցերի վրա չորացող ուռկաններ: Ցածրիկ ու քամահար, աղքատիկ հյուղակներ, բայց պատուհանների ապակիներին ներսից ճերմակ վարագույրներ էին կախված... (Պյոտրը քաղցրությամբ հիշեց Անխենին:) Ավլած շեմերի առաջ կտավե գլխաշոցներով կանայք տան գործին էին, տղամարդիկ կաշվե՝ գյուղվեստ կոչվող գլխարկներով էին, երեսները ապրած, մորուքը միայն կգակատակին էր: Թերևս ավելի ծանրաշարժ էին ռուսներից, բայց երևում էր, որ ամենքն իր գործին է զբաղված ու բարեհամբույր են, քաշվել չգիտեն:

Պյոտրը հարցրեց պանդոկի տեղը: Նստեցին կաղնեփայտե մաքուր սեղանի շուրջ, զարմանալով մաքրությամբ ու ախորժալի հոտերով, սկսեցին գարեջուր խմել: Պյոտրն այստեղ ռուսերեն նամակ գրեց կուրֆյուրստ Ֆրիդրիխին, որ հանդիպեն: Վոլկովը ամրոցի զինվորներից մեկի հետ նամակը Բյոնիգսբերգ տարավ:

Ձկնորսներն ու նրանց կանայք կանգնել էին դռան մեջ, ներս էին նայում պատուհաններից: Պյոտրն ուրախ-ուրախ աչքով էր անում այդ բարեսիրտ մարդկանց, հարցնում, թե ում անունն ինչ է, շատ ձուկ են բռնել արդյոք, հետո բոլորին հրավիրեց սեղանի մոտ և գարեջուր հյուրասիրեց:

Կեսօրին պանդոկին մոտեցավ ոսկեզօծ մի կառք՝ կատարը ջայլամի փետուրներով զարդարված, միջից դուրս ցատկեց դիմափոշիով օծված, ոտից գլուխ երկնագույն մետաքս հագած կամեր-յունկեր ֆոն Պրինցը, և դեսուդեն հրելով ձկնորսներին ու կանանց, վախեցած դեմքով մոտեցավ մոսկովցիներին, որոնք անագի գավաթներն էին շրջիկացնում: Սեղանից երեք քայլի վրա հանեց լայնեզր գլխարկը և հատակն ավլեց փետուրներով, ուռքը ետ տանելով, ձեռքը աղեղած, ծունկը ծալած:

— Նորին պայծառափայլություն իմ տիրակալը, բրանդենբուրգյան մեծն կուրֆյուրստ Ֆրիդրիխը պատիվ ունի խնդրելու ձերդ... (Այստեղ կարկամեց: Պյոտրը մատով սպառնաց նրան:) Խնդրում է բարձրաստիճան ու վաղուց ցանկալի հյուրին թողնել սույն խղճուկ հյուղակը և բարեհաճել իր աստիճանին վայել պատշաճ բնակարան...

Ալեքսաշկա Մենշիկովը աչքերը հառել էր երկնագույն ասպետի վրա, սեղանի տակ բոթեց Ալյոշկային.

— Ա՜յ սա պալիտես է... Թաթերի վրա է մաս գալիս՝ պատկեր է, պատկեր... Տես, կեղծամը կարճ է, մերը պորտերիս է հասնում... Ա՛հ, շան տղա...

Պյոտրը կառք նստեց ֆոն Պրինցի հետ: Տղաները հետևեցին սովորական սայլակառքով: Քաղաքի լավագույն մասում՝ Կենիգսհոֆում, հյուրերին մի վաճառականի տուն էր հատկացված: Քյոնիգսբերգ մտան մթնշաղին, անիվները դղրդացին մայթոր սալարկի վրա: Ոչ պատ կար, ոչ ցանկապատ՝ այլ քեզ զարմանք: Տներն ուղղակի փողոցին էին նայում, գետնին կպած, երկարուկ լուսամուտներով ու փոքրիկ ապակիներով: Ամենուրեք հանելի լույս կար: Դռները բաց էին: Մարդիկ շրջում էին աներկյուղ.. Ուզում էին հարցնել՝ էս ո՞նց չեք վախենում կողոպուտից: Չլինի՞ գող ու ավազակ չկա ձեզ մոտ:

Վաճառականի տանն, ուր իջևանեցին, դարձյալ ոչինչ պահված չէր, թանկ իրերը բաց դրված էին: Անխելք մարդը միայն չէր թռցնի: Մուգ կաղնեփայտե, նկարներով, ամանեղևնով, քարայծի եղջյուրներով հարուստ կահավորված ճաշասենյակը զննելով, Պյոտրը կամացուկ ասաց Ալեքսաշկային.

— Բոլորին խիստ հրաման տուր, եթե մեկնումեկը մի պստիկ բանի վրա աչք դրեց, դարսպասից կկախեմ...

— Ու ճիշտ կանես, մին խեղճ, ինքս էլ եմ վախեցած... Մինչև սովորեն, կհրամայեմ բոլորի գրպանները թելով կարեն... Բայց աստված չանի, խմած գլխով...

Ֆոն Պրինցը կրկին ետ եկավ կառքով: Պյոտրը պալատ գնաց նրա հետ...

Պալատ մտան գաղտնի դռնակով, պարտեզից, ուր շատրվանն էր ճողփում և մթին էին տալիս գնդաձև, աբլորաձև կամ բրգաձև խուզված թփուտները: Ֆրիդրիխը հյուրին դիմավորեց այգում, ապակեպատ դռան մեջ, պարզեց ժանեկազարդ թեզանիքներով ծածկված մատների ծայրերը: Սրաքիթ ու բարձրաճակատ, բավական խորաթափանց դեմքը մետաքսանման կեղծամն էր եզերել: Կրծքի վրայով

գցած երկնագույն ժապավենի վրա շողշողում էին ադամանդյա ատողները:

— Օ՜, իմ եղբայր, դեռատի եղբայր իմ,— ասաց նա ֆրանսերեն և նույնը կրկնեց գերմաներեն: Պյոտրը նրան էր նայում վերևից, արագիլի նման, ու չգիտեր ինչպես կոչի՝ եղբա՞յր: Ատիճանակարգով չէր լինի... Քեռի՞: Անհարմար էր: Պայծառափայլությո՞ւն, թե մի ուրիշ բան: Ի՞նչ իմանաս, մեկ էլ տեսար, նեղացավ...

Հյուրի ձեռքերը բաց չթողնելով ու ետ-ետ գնալով, գորգի վրայով կուրֆյուրստը նրան տարավ ոչ մեծ մի սենյակ: Պյոտրի գլուխը պտտվեց՝ ասես կենդանացավ մանուկ օրերին Պետերբուրգենկոյեի իր սենյակում կախած սիրելի նկարներից մեկը: Մոնտոցով վառվող մարմարյա բուխարու վրա ճոճանակն էր տատրբերում աքանչելի պատրաստված ժամացույցը, երկնակամարի, աստղերի և լուսնի զարդանախշով: Եռամոմ, հայելակող աշտանակներից ընկնող մեղմ լույսը լուսավորում էր պատերի բնանկարները, բարակ ոտներով աթոռակներն ու օթոցները և բազում այլ գեղեցիկ ու հետաքրքիր իրեր, որոնց գործադրությունը դժվար էր որոշել: Խնձորի և բալի ծաղիկներով նյութեր էին դրված օճառի պղպջակի պես բարակ, բարձր սափորների մեջ:

Կուրֆյուրստը խաղացնում էր ծխատուփը, նրա սուր աչքերը կիսախուփ էին բարեհոգաբար: Հյուրին նստեցրեց կրակի մոտ ոսկեզօծ այնպիսի մի թեթև աթոռակի վրա, որ Պյոտրն ավելի շատ ոտքերի մկանների վրա հենվեց, վախենալով ջարդել կարասին... Գերմաներենին ֆրանսերեն բառեր էր խառնում կուրֆյուրստը: Վերջապես հիշատակեց ուզմական դաշինքը: Պյոտրն այստեղ հասկացավ: Կամաց-կամաց դադարեց թաշվելուց: Հոլանդա-գերմաներեն, նավաստու լեզվով բացատրեց, որ ինքը ծպտյալ է այստեղ ու գործերի մասին չի խոսելու, իսկ մի շաբաթ անց կգան մեծն դեսպանները՝ նրանց հետ էլ պետք է խոսել դաշնագրի մասին:

Կուրֆյուրստը ծափ զարկեց: Անձայն բացվեց հայելապատ դուռը, որ Պյոտրը լուսամուտի տեղ էր դրել, և կարմիր լիվրե հագած սպասավորները ուտեստեղեղնով ու ըմպելիքներով մի սեղանիկ բերեցին: Պյոտրի աղիքները գալարվում էին քաղցից՝ իսկույն զվարթացավ: Սակայն ուտելիքն անխոնորեն քիչ էր. մի քանի շերտ երշիկ, տապակած աղավնու ձագ, պաշտետով բլիթ, սալաթ: Կուրֆյուրստը գեղանի շարժումով առաջարկեց սեղան նստել, օսլայած անձեռոցիկը կամզոլի օձիքը մտցրեց ու նուրբ ժպիտով ասաց.

— Ամբողջ Եվրոպան զմայլված հետևում էր ձերդ արքայական մեծության գենքի փայլուն հաջողություններին, ընդդեմ քրիստոնեից թշնամյաց: Ավաղ, ես հարկադրված եմ միայն ծափահարել ձեզ, ինչպես հռոմեացին ամփիթատրոնի նստարանից: Իմ տարաբախտ երկիրը շրջապատված է ոսոխներով՝ լեհերն ու շվեդները: Քանի դեռ Սաքսոնիայում, Լեհաստանում Բալթիական ծովում, Լիվոնիայում տնօրինում են այդ ավազակ շվեդները, ժողովուրդների բարգավաճումն անհնար է... Իմ պատանի բարեկամ, դուք շուտով կհասկանաք, մեր

ընդհանուր թշնամին, ում աստված է մեզ ուղարկել մեր ընդհանուր մեղքերի համար, թուրքերը չեն, այլ շվեդները... Նրանք մաքա են վերցնում յուրաքանչյուր նավից Բալթիական ծովում: Բոլորս աշխատում ենք, իսկ նրանք, բոռերի պես, թալանով են ապրում: Տառապում ենք ոչ միայն մենք, այլև Հոլանդիո նահանգները և Անգլիան... Իսկ թուրքերը, թուրքե՞րը: Նրանք զորեղ են միայն Ֆրանսիայի՝ այդ անկշտում բռնակալի աջակցությամբ, որը հափշտակիչի իր ձեռքն է պարզել Հաբսբուրգների իսպանական թագին... Թանկագին բարեկամ, շուտով դուք ականատեսը կլինեք Ֆրանսիայի դեմ մի մեծ կոալիցիայի: Լյուդովիկոս Տասնչորսերորդ թագավորը ծեր է, նրա նշանավոր մարշալները գերեզմաններում են, Ֆրանսիան քայքայված է ուժից վեր հարկերից... Նա ուժ չի գտնի օգնել թուրքական սուլթանին... Միջազգային խաղի մեջ Թուրքիան տարվելու է... Սակայն Ծվեդիան, օ՜, դա վտանգավորագույն թշնամի է Մոսկովիայի թիկունքում:

Արմունկների ծայրերը թեթևակի հպած սեղանին, կուրֆյուրստը շոյում էր խնձորենու ծաղիկը: Նրա ջրագույն աչքերը փայլում էին: Մոմերի լույսով ողողված ածիլված դեմքը դիվականորեն խելացի էր:

Պյոտրը զգաց, որ գերմանացին ուստայնի մեջ է քաշում իրեն:

Մի մեծ գավաթ գինի խմեց.

— Կուզենայի ձեր ինժեներներից հրետանագություն սովորել...

— Ամբողջ հրետանագարանը ձերդ մեծության տրամադրության տակ...

— Դանկե...

— Մի կում այս մոզելյան գինուց փորձեք...

— Դանկե: Մեզ համար դեռ շուտ է եվրոպական շիլաշփոթի մեջ մտնել, թուրքերը մեզ շատ նեղություն են տալիս...

— Միայն թե Լեհաստանի օգնությունը չակնկալեք, իմ պատանի բարեկամ, այնտեղ շվեդական եղանակի տակ են պար գալիս...

— Մոզելյան գինին լավն է...

— Սև ծովը ձեզ և ոչինչ չի տա առևտրի զարգացման համար... Այն դեպքում, երբ բալթիական ափին մի քանի նավահանգիստ Ռուսաստանի առաջ անհամար հարստությունների դուռ կբանան:

Կուրֆյուրստը խնձորենու ծաղկի թերթիկներն էր խածնում, նրա պողպատյա հայացքը անհնկատելի քմծիծաղով սահեց մոսկովցու շփոթված դեմքի վրայով...

6.

Հաջորդ ամբողջ շաբաթը, մինչև դեսպանախմբի ժամանումը, Պյոտրն անցկացրեց քաղաքից դուրս, թնդանոթներից կրակելով թիրախների վրա: Հրետանային գլխավոր ինժեներ Շտեյներ ֆոն Շտեռնֆելդից նա վկայագիր ստացավ.

«... Պարոն Պյոտր Միխայլովին ճանաչել և հայտարել կատարյալ վարպետ ռմբաձգության և գիտության տեսության մեջ ու գործնականի մեջ շրջահայաց և հմուտ հրաձիգ, և ի նշան նրա գերազանց

իմացության ամեն տեսակի աջակցություն և բարեհաճ վերաբերմունք ցուցաբերել...»:

Մեծն դեսպանները Ջոնիգսբերգ մտան այնպիսի ճոխությամբ, որպիսին երբեք և ոչ մի տեղ չէր եղել: Թափորի առջևից նժույգներ էին բերում, թանկարժեք տապանակներով ու ծածկոցներով, ետևից պրուսական գվարդիականներն էին գալիս, պաժերը և ասպետները: Խլացուցիչ շեփորում էին ռուսական փողհարները: Նրանց հետևում էին երեսուն կամավորականները՝ արծաթակար կանաչ կաֆտանները: Ապա դեսպանական պահապանները էին գալիս հեծյալ, մորեգույն կաֆտանների կրծքին ու մեջքին ոսկեկար գերբերով: Լայն, չորս կողմից ապակեպատ կառքով անցնում էին երեք դեսպանները՝ Լեֆորտը, Գոլովինը և Վոզնիցինը, ճերմակ ատլասե, սամույրի մորթիներով զարդարված մուշտակներով, ադամանդյա երկգլխանի արծիվները կրծքերնու գլանաձև գլխարկների վրա: Թիկնակին ետ ընկած, նստած էին նրանք անշարժ, արձանի պես, շողացնելով մատների մատանիներն ու ձեռնափայտերի ակնազարդ գլխիկները: Կառքի ետևից մոսկովյան ազնվականներն էին գալիս՝ ունեցած թանկարժեք ամեն ինչը հագած...

Մինչ ընդունելություններ ու բանակցություններ էին ընթանում կուրֆյուրստի հետ, Պյոտրը զբոսանավով շրջելու գնաց Ֆրիշհաֆով: Անելու գործ չկար. որքան էլ կուրֆյուրստը խորամանկեր, Լեհաստանի հետ դաշինքն ավելի էր հարկավոր, քան նրա հետ: Մեծն դեսպանները, ի տարբերություն նախկինի, բառից ու տառից չէին կպչում, սովորույթների հանդեպ զիջողական էին, միայն չկամեցան ծնկաչոք համբուրել կուրֆյուրստի ձեռքը, քանի որ դեռևս թագավոր չէր: Առաջարկեցին ոչ թե ռազմական, այլ բարեկամական դաշինք, ու դրա վրա դեմ առան: Կուրֆյուրստը սկսեց համոզել: Դեսպաններն ասացին՝ լավ, ռազմական դաշինք կլինի, բայց պատերազմել այն տերությունների դեմ, որոնք կխուսափեն Թուրքիայի հետ պատերազմելուց: Դա նույնպես ընդունելի չէր կուրֆյուրստի համար, նա գնաց Պյոտրի զբոսանավը և ամբողջ գիշեր խոսեց նրա հետ: Սակայն պատանին միայն կեղտոտ եղունգներն էր կրծոտում: Վերջում ասաց.

— Լավ, լավ... Մենակ թե գիր չենք գրի... Թե կարիք ունեցար, կուրֆյուրստ, կօգնենք, էս խաչը վկա... Հավատացի՞ր:

Գաղտնի ու բանավոր դաշնագիր կնքելով (ինչ այնուամենայնիվ հարկադրված էին ստորագրել), մեծ դեսպանախումբը պատրաստվեց մեկնելու, սակայն ստիպված էին երեք շաբաթ էլ մնալ Պիլաուում, կարևորագույն լուր ստանալուց հետո. Լեհաստանում նոր թագավորի ընտրությունն էր սկսվել: Մեծ ու փոքր սեյմերում լեհ ազնվականությունը, թեկնածուներին պաշտպանելիս, թրամարտի էր անցնում ու ատրճանակ կրակում: Տասից ավելի թեկնածուներ էին գտնվել, սակայն գլխավոր ու հավանական էին համարվում սաքսոնյան կուրֆյուրստ Ավգուստը և արքայազն Կոնտին՝ ֆրանսիական թագավորի եղբայրը:

Ֆրանսիացին լեհական գահի վրա՝ կնշանակեր Լեհաստանի հրաժարումը թուրքերի դեմ դաշինք կնքելուց և պատերազմ Մոսկովիայի հետ: Միայն այստեղ, եվրոպական ափերին Պյոտրը հասկացավ, թե ինչ ասել է քաղաքական խաղ: Պիլաուից սուրհանդակ ուղարկեց Վինիուսին, հրամայելով այնպիսի նամակ գրել լեհերին, որը հնարավորին չափ վախեցնի ֆրանսիական արքայազնի կուսակիցներին: Մոսկվայում հրովարտակ գրեցին գնեզդինյան կարդինալ գահերեցի անունով: Հրովարտակում ասվում էր. «...Եթե որ լեհական տերության մեջ ֆրանսիացին թագավորի, ապա ոչ միայն դաշինքը սուրբ խաչի թշնամու դեմ, այլ նաև հավերժական հաշտությունը Լեհաստանի հետ խիստ շատ կվտանգվի... Հանուն դրա, մենք՝ մեծն արքան, որը ձեր լեհական տեր թագավորի հետ մշտական բարեկամ ենք, ինչպես նաև պաների հանդեպ ու ռադայի հանդեպ ու Ռեչ Պոսպոլիտայի, այդպիսի թագավոր ֆրանսիացիների ու թուրքերի կողմից չենք կամենում..»: Հրովարտակի հետ ոսկեղրամ ու սամույրի մորթիներ ուղարկեցին: Փարիզից նույնպես ոսկի ուղարկեցին: Իրար անցած լեհերը թագավոր ընտրեցին թե՛ Ավգուստին, թե՛ Կոնտիին: Խառնակություն ծայր առավ: Պաները զինեցին ծառաներին ու գյուղացիներին, մեկը մյուսի ազարակները սկսեցին ավերել, գյուղակներն այրել: Անհանգստացած Պյոտրը նամակ ուղարկեց Մոսկվա, որ զորք մտնեն լիտվական սահմանին՝ Ավգուստին աջակցելու: Սակայն Ավգուստը ինքը հայտնվեց Լեհաստանում, տասներկու հազարանոց զորքով, գահին նստելու: Ֆրանսիական կուսակիցները պարտվեցին: Պաները ցրվեցին դղյակները, մանր ազնվականները՝ պանդոկները: Արքայազն Կոնտին (ինչպես հայտնի դարձավ Եվրոպայում), Բոլոն հասնելուն պես, ուսերը թոթվեց ու վերադարձավ իր շվայտություններին: Ավգուստ թագավորը ռուսական լիազոր դեսպանին երդվեց Վարշավայում, որ միաբան կլինի Պյոտրին:

Մեծ գործը բարեհաջող ավարտվեց: Դեսպանները, Պյոտրը և կամավորականները թողեցին Պիլաուն:

7.

Ձիափոխ կառքերով Պյոտրը գնում էր, դեսպաններից առաջ անցած. առանց կանգ առնելու, ետևում թողեցին Բեռլինը, Բրանդենբուրգը, Գալբերշտադտը: Միայն Իլգենբուրգի մոտ թեքվեցին նշանավոր երկաթագործարանները: Այդտեղ Պյոտրին ցույց տվեցին թուջի հալոցքն ու հոսքը դոմնային վառարանից, երկաթ հալելը կճուճների մեջ, բարակ թիթեղներից զենքի փողեր կոելը, ջրանիվով պտտվող հաստոցների վրա ճախարակումն ու շաղափումը: Համքարական վարպետներն ու ենթավարպետներն աշխատում էին իրենց դարբնոցներում ու արհեստանոցներում: Պատրաստված իրերը՝ հրացաններ, ատրճանակներ, սրեր, կողպեքներ, պայտեր, տանում էին Իլգենբուրգի ամրոցը: Երկու լավ վարպետների Պյոտրը համոզել էր Մոսկվա գնալ, բայց համքարությունը չարձակեց նրանց:

Տանձենիներով ու խնձորենիներով եզերված ճանապարհներով էին

գնում, բնակիչներից ոչ ոք պտույտ չէր գողանում: Չորս կողմը կաղնու անտառակներ էին, ցորենի ուղղանկյուն արտեր, բարաշեն պարիսպներից այն կողմ այգիներն էին, իսկ կանաչների մեջ թաղված երևում էին կղմինդրե տանիքներ, աղավնատներ: Բացատներում գեղջիկ ու կուշտ կովեր, փայլում էին առվակներն իրենց նեղլիկ ափերի մեջ, դարավոր կաղնիներ, ջրաղացներ: Երկու-երեք վերստ չանցած, մի փոքր քաղաք էր լինում՝ աղյուսաշեն սրակատար կիրխեն, սալարկած հրապարակը քարաշար ջրհորով, քաղաքապետարանի բարձր տանիքը, խաղաղ ու մաքուր տնակներ, գարեջրատան գվարճալի ցուցանակը, սափրիչի պղնձյա թասը դռան վերևում: Սիրալիր ժպտացող մարդիկ՝ գործած գոգակներով, կարճլիկ բաճկոններով, ճերմակ գուլպաներով... Հին ու օրինավոր Գերմանիան...

Հուլիսյան մի տաք երեկո Պյոտրը և Ալեքսաշկան առաջընթաց մեծ կառքով մտան Հանովերին մերձակա Կոպպենբուրգ գյուղաքաղաքը: Հաչում էին շները, պատուհաններից լույս էր ընկնում ճանապարհի վրա, տներում մարդիկ ընթրիքի էին նստում: Գոգնոց կապած մի մարդ երևաց պանդոկի լուսավորված դռան մեջ և ինչ-որ բան բղավեց կառապանին: Պանդոկի գլխին ցուցանակ կար. «Ոսկե խոզ»: Կառապանը կանգնեցրեց հոգնած ձիերը, դարձավ Պյոտրին.

— Ձերդ պայծառափայլություն, պանդոկապանը խոզ է մորթել, լցոնած երշիկ ունի այսօր... Գիշերելու ավելի լավ տեղ չենք գտնի...

Պյոտրը և Մենշիկովը իջան կառքից, շարժելով թմրած ոտքերը:

— Հը՞, Ալեքսաշկա, երբևիցե մեզ մոտ էլ էս տեսակ կյանք կհատատե՞նք:

— Չեմ իմանում, մին խեռց, վայ թե շուտ չլինի...

— Սիրուն կյանք է... Լսի, էստեղ շներն էլ են ավելի քիչ կատաղած հաչում... Դրախտ է... Մոսկվան եմ հիշում՝ հո կրակ չէի՞ տա...

— Ճիշտ որ ախոռ է...

— Հնի վրա նստած, ո.... են հաստացրել... Հազար տարում հող վարել չեն սովորել... Ինչի՞ց կլինի: Կուրֆյուրստ Ֆրիդրիխը խելոք մարդ է. մեզ պետք է Բալթիկ ծով մտնել՝ է՛դ է... Ու մի նոր քաղաք կառուցել էնտեղ՝ իսկական դրա՞խտ... Տես, աստղերն էստեղ ավելի պայծառ են մերոնցից...

— Մեզ մոտ, մին խեռց, էս չորս կողմը հիմի լրիվ կեղտոտած կը-լինեին...

— Ալեքսաշկա, համբերի, ետ գնամ, Մոսկվայի հոգին եմ հանելու...

— Մենակ էդ ձևով է պետք...

Մտան պանդոկ: Մեծ օջախի և առաստաղի կաղնե գերանների վրա կախված էին ապխտած ազդրեր ու երշիկներ, վառվող ցախից պսպղում էր պղնձյա ամանեղենը: Պանդոկապանը խոր գլուխ տվեց, կաթսայի պես կարմիր դեմքին ժպիտ խաղացնելով: Գարեջուր ուզեցին ու հենց նոր էին նստել մի բան ուտելու, փողոցից մի ասպետ մտավ ներս:

Բարձրահասակ էր, կոնաձև, լայնեզր գլխարկով, մահուդե թիկնոցով, որից կախում էին խթանները: Գլխով արեց պանդոկապանին, որ հեռանա, մոտ ցատկեց, առջևից բռնեց գլխարկը, հանեց ու սկսեց խոնարհվել, սուսերով վեր բարձրացնելով թիկնոցը, պար գալով: Պյոտրն ու Ալեքսաշկան, բերանները բաց արած, նրան էին նայում: Փափուկ առոգանությամբ նա ասաց.

— Նորին պայծառափայլություն հանովերյան կուրֆյուրստին Սոֆիան, յուր դստեր՝ բրանդենբուրգյան կուրֆյուրստին Սոֆիա-Շառլոտտայի և անգլիական գահի օգոստոսափառ ժառանգ, Ցելլի հերցոգ, գահաժառանգ Գեորգ-Լյուդովիկոս որդու, ինչպես նաև նորին պայծառափայլություն պալատական տիկնանց ու ասպետաց հետ, թողնելով Հանովերը, շտապեցին ընդառաջ գալ ձերդ արքայական մեծությանը, հոգնեցուցիչ ճանապարհից ու գիշերելու անհարմարություններից իրենց վարձահատույց լինելու միակ մտադրությամբ՝ մոսկովյան արտասովոր ու փառապանծ ցարի հետ ծանոթանալու բարեպատեհ առիթը չկորցնելու...

Կոպպենշտայն էր ասպետի անունը, և նա խնդրեց Պյոտրին՝ բարեհաճել ընթրիքի. կուրֆյուրստինը և դուստրը սեղան չեն նստի, հյուրին սպասելով... Ասվածի կեսը միայն հասկացավ Պյոտրը և այնքան վախեցավ, քիչ էր մնացել դուրս փախչեր...

— Չեմ կարող,— կմկմալով ասաց նա,— խիստ եմ շտապում... Մեկ էլ, ուշ է... Երբ ետ գամ Հոլանդիայից, կարող է...

Կոպպենշտայնի գլխարկն ու թիկնոցը նորից ծածանվեցին ճաշասրահում: Նա պնդում էր, առանց երկնչելու: Ալեքսաշկան ոտներեն շշնջաց.

— Ձեռ քաշողը չի... Ավելի լավ կանես, մի ժամով գնաս, մին խեռց, գերմանացիք նեղացկոտ են...

Պյոտրը ջղայնությունից պոկեց բաճկոնի կոճակը: Համաձայնեց մի պայմանով, որ իրեն ու Ալեքսաշկային ետնամուտքով ներս տանեն, մարդ-մուրդ չլինի և որ սեղանի շուրջ միայն կուրֆյուրստինը լինի, ծայրահեղ դեպքում՝ աղջկա հետ: Աչքերին քաշեց կոշեկոլոր եռանկյունին, տրտմությամբ նայեց օջախի վրա կախ արած երշիկներին:

Դրսում կառք էր սպասում:

8.

Կուրֆյուրստին Սոֆիան և դուստրը՝ Սոֆիա-Շառլոտտան նստած էին ընթրիքի համար գցած սեղանի մոտ, բուխարու առաջ, որը չինական գործվածքի պաստառով էին վարագուրել անճոռնիության պատճառով: Մայր ու աղջիկ արիաբար դիմանում էին բոլոր անհարմարություններին միջնադարյան այդ դղյակում, որը տեղական կալվածատերն էր տրամադրել նրանց: Ժամանակակից մի քանի բնանկար ու մեկ-երկու գորգ հազիվ էին ծածկում աղյուսե ծեփաթափ պատերը, և բարձր կամարների տակ բվեճներ էլ կլինեին անկասկած: Դղյակատիրոջ կողմից հապճեպորեն հայթայթած մետաքսապատ բազկաթոռները ուղղակի դրված էին սալաշար հատակին, որը մաշ-

ված էր շիկամորուս ասպետների կոշիկներից ու ասպետական երիտասարդների պայտերից: Ամեն կողմից մկան ու փոշու հոտ էր փչում: Կանայք սոսկում էին բարքերի բրտության մասին մտածելիս, որոնք, փառք աստծո, չքացել էին առհավետ: Վահան ու զրահի համար նախատեսված, ժանգոտած կեռից կախ արած մի մեծ նկար էր միայն շղում նրանց հայացքը, որը փարթամ ճոխություն էր պատկերում՝ ծովային ձկների ու խեցգետինների մի կույտ սեղանի վրա, որսած թռչունների կապուկներ, բանջարեղեն ու միրգ, տեգահար վարազներ.. Գույները արևային լույս էին ճառագում...

Գեղանկարչություն, երաժշտություն, պոեզիա, կենդանի մտքի խաղ՝ ուղղված նրբին ու գեղեցիկ ամենայն ինչի. ահա անցողիկ կյանքի միակ արժանի զբաղումը,— այդպես էին մտածում մայր ու աղջիկ: Ամենակրթված կանայք էին նրանք Գերմանիայում: Երկուսն էլ նամակագրություն ունեին Լայբնիցի հետ, որն ասում էր. «Այդ կանանց խելքն այնքան քննախույզ է, որ երբեմն ստիպված ես անհնատուր լինել նրանց խորամիտ հարցերին»: Հովանավորում էին արվեստներ ու դպրություն: Սոֆիա-Շառլոտտան Բեռլինում գիտությունների ակադեմիա էր հիմնարկել: Կուրֆյուրստ Ֆրիդրիխը օրերս նամակով, բարեհոգի սրամտությամբ հայտնել էր նրանց ատաղձագործի անվան տակ ճանապարհորդող բարբարոսների ցարից ստացած իր տպավորությունները: «Մոսկովիան, ըստ երևույթին, արթնանում է ասիական քնից: Կարևոր է, որ նրա առաջին քայլերն ուղղված լինեն բարերար հունով»: Մայր ու աղջիկ չէին սիրում քաղաքականությունը, ազնվամիտ հետաքրքրությունն էր նրանց բերել Կոպենհագեն:

Կուրֆյուրստին Սոֆիան բարալիկ մատներով սեղմում էր բազկաթոռի բռնակները: Անանց դրեց՝ թվաց, թե գիշերային այգու վրա բացված լուսամուտներից, սաղարթի խշշոցի միջից անիվների աղմուկ է լսում: Մարգարտի շարերը ցնցվում էին ճերմակ, կետոսկրի կմախքի վրա ձգված նրա կնոջամին. այնքան բարձր էր հարդարված, որ եթե ձեռքերն էլ բարձրացներ, կատարին չէր հասցնի: Կուրֆյուրստինը նիհար էր, ամբողջովին կնճռապատ, ստորին ատամնաշարի բաց տեղերը մոմով էր պատել, մանուշակագույն զգեստի բացվածքի ժանյակները ծածկում էին այն, ինչ այլևս գայթակղեցնել չէր կարող: Սև ու խոշոր աչքերն էին լոկ շողում աշխույժով և խորամանկությամբ:

Մոր պես մթին, սակայն ավելի հանդարտադեմ Սոֆիա-Շառլոտտան գեղեցիկ էր, վեհապանծ ու ճերմակամաշկ: Խնկացի ճակատ՝ շպարազարդ կեղծամի տակ, շողշողուն ուսեր ու համարյա մինչև պըտուկները բաց կուրծք, բարակ շուրթեր, տպավորիչ ծնոտ... Փոքրինչ վեր ցցված քիթը ստիպում էր ուշադրությամբ զննել նրա դեմքը, թաքնված թեթևամտություն փնտրելով:

— Վերջապես,— ասաց Սոֆիա-Շառլոտտան, տեղից ելնելով,— եկան:

Մայրն առաջ ընկավ նրանից: Երկուսն էլ, մետաքս խշխշացնելով, մոտեցան խոր ընկած լուսամուտի՝ պատի հաստությամբ որմին: Այգու ծառուղիով, ձեռքերը թափահարելով, երկարուկ մի ստվեր էր

քայլում փութով, ետևից հասնում էր երկրորդը՝ թիկնոցով ու կոնաձև գլխարկով, ապա երրորդը:

— Նա է,— ասաց կուրֆյուրստինը,— տեր աստված, հսկա է...

Դուռը բացեց Կոպենհագենտայնը.

— Նորին արքայական մեծությունը:

Ծռաթաթ մի ոտք երևաց, փոշեպատ կոշիկով, բրդյա գուլպայով՝ կողքանց ներս մտավ Պյոտրը: Մոմերի լույսով լուսավորված երկու կանանց տեսնելով, մրթմրթաց. «Գուտեն աբենտ...»: Ձեռքը տարավ ճակատին, իբր շփելու համար, բոլորովին շփոթվեց ու ափով ծածկեց դեմքը:

Կուրֆյուրստին Սոֆիան երեք քայլ առաջացավ, մատների ծայրերով բարձրացրեց զգեստը և տարիքին անհամապատասխան թեթևությամբ ուներանս արեց.

— Բարի երեկո, ձերդ արքայական մեծություն...

Սոֆիա-Շառլոտտան նույնպես մոտենալով մոր կանգնած տեղին, կարապի շարժումով սքանչելի ձեռքերը ետ տարավ, բարձրացրեց փարթամ փեշերի ծայրերը, ծնկծալ խոնարհվեց.

— Ձերդ արքայական մեծությունը ներողամիտ կլինի մեր օրինական անհամբերության համար, որով ձգտում էինք տեսնել պատանի հերոսին, անհամար ժողովուրդների տիրակալին և ռուսներից առաջին մարդուն, որն իր նախնիների կործանարար նախապաշարումները խորտակեց:

Ձեռքը երեսից պոկելով, Պյոտրը խոնարհվում էր, ծռվում փայտի պես ու տեսնում էր, որ բավական ծիծաղելի է՝ ուր որ է կանայք կը-ծիծաղեն վիրավորաբար: Ծայրաստիճան էր նրա շփոթմունքը, գերմաներն բառերը թոել էին գլխից...

— Իխ կան նախտ շպրեխեն... Ես չեմ կարող խոսել,— մրթմրթում էր նվաղած ձայնով... Սակայն խոսելու հարկ էլ չկար: Կուրֆյուրստին Սոֆիան հարյուր հարց տվեց, պատասխանի չսպասելով. եղանակի մասին, ճանապարհի մասին, Ռուսաստանի մասին, ճամփորդական տպավորությունների մասին, ձեռքը մտցրեց նրա արմունկի տակ և մոտեցրեց սեղանին: Երեքն էլ նստեցին, դեմքով դեպի մթին կամարներով մռայլ սրահը: Մայրը մի պստիկ տապակած թռչուն դրեց առաջը, դուստրը գինի լցրեց: Կանանցից անուշ օծանելիքի բույրեր էին գալիս: Պառավը խոսելիս, մոր քնքշությամբ, չորչորուկ մատներով հպվում էր նրա ձեռքին, որը դեռ ջղաձգորեն սեղմել, բռունցք էր արել, քանի որ ամաչում էր եղունգներից՝ այդ ձյունաթույր ափոցի վրա, ծաղիկների և բյուրեղապակու կողքին: Սոֆիա-Շառլոտտան հյուրասիրում էր նրան դուրեկան սիրալիրությամբ, ափսեին կամ մատուցարանին հասնելու համար տեղից ելնելով, Պյոտրի կողմը դառնալով դյութիչ ժպիտով:

— Այս մեկը ճաշակեցեք, ձերդ մեծություն... Իրոք, սա արժանի է, որ ճաշակեք...

Եթե այդքան հոլանի ու գեղեցիկ չլիներ, եթե չխշխշացներ հոտավետ զգեստը, իսկը հարազատ բույրը կլիներ: Նրանց ձայներն էլ

էին հարցազրույցների ենթարկեցին նրան: Պյոտրը դադարեց քաշվել, սկսեց պատասխանել հարցերին: Կուրֆյուրստինները նրան պատմում էին ֆլամանդացի և հոլանդացի նշանավոր նկարիչների, ֆրանսիական արքունիքում մեծ թատերագիրների, փիլիսոփայության և գեղեցիկի մասին: Շատ բաներից գաղափար չուներ Պյոտրը, հարցուփորձ էր անում, զարմանում...

— Մոսկվայում գիտությո՞ւն, արվե՞ստ,— ասաց նա, ոտքը ցընցելով սեղանի տակ:— Ինքս եմ մենակ այստեղ տեսել... Մեզ մոտ չեն հիմնել, վախեցել են... Մեր բոյարները, ազնվականները կոշտ ու անտաշ մուժիկներ են՝ քնեն, խժռեն, մեկ էլ աղոթեն... Մոայլ երկիր է մեր երկիրը: Վախից մի օր էլ չէիք ապրի այնտեղ: Ձեզ հետ նստած եմ այստեղ՝ սարսափում եմ ետ նայելուց... Մենակ Մոսկվայի տակ երեսուն հազար ավազակ կա... Իմ մասին ասում են, թե շատ արյուն եմ թափում, գաղտնի գրերում էլ ասում են, իբր ես ինքս էլ եմ խոշտանգում մարդկանց...

Նրա բերանը ծռվեց, այտը վեր թռավ, մի պահ անշարժացան սառած աչքերը, կարծես ուտեստեղենով ծանրաբեռնված սեղանը չէր տեսնում իր առաջ, այլ Պրեոբրաժենսկոյեի արվարձանի անլուսամուտ, արյան հոտ բռնած խրճիթը: Կտրուկ ցնցեց վիզը և ուսը, փաթելով տեսիլքը... Երկու կանայք վախեցած հետաքրքրությամբ հետևում էին նրա դեմքի փոփոխություններին...

— Բայց դրանց մի հավատացեք... Ամենից շատ նավ սարքել եմ սիրում... «Պրինկիպիում» թիանավը կայմից մինչև ողնափայտը այ էս ձեռքերով է կառուցված (վերջապես բացեց ձեռքերը, ցույց տվեց կոշտուկները) ...Սիրում եմ ծովը և շատ եմ սիրում հրավառություն: Տասնչորս արհեստ գիտեմ, բայց դեռ վատ, դրա համար եմ եկել... Իսկ որ չար եմ ու արյուն եմ սիրում՝ սուտ են ասում... Ես չար չեմ... Մերոնց հետ ով էլ Մոսկվայում ապրի, կապովի կդառնա... Ռուսաստանում ամեն ինչ հարկավոր է փշրել՝ ամեն ինչ նորից է պետք սկսել... Մարդիկ էլ հո համա՞ռ չեն մեզ մոտ՝ կան, որ միսն ու ոսկորը պիտի մաշկվի մտրակով...— Դեմ ընկավ, նայեց կանանց աչքերին ու ժպտաց մեղավոր.— Ձեզ մոտ թագավորելը հեշտ ու հանգիստ գործ է... Բայց, մամաշա, ախր ես,— բռնեց կուրֆյուրստին Սոֆիայի ձեռքը,— սկզբից ինքս պիտի հյուսնություն սովորեմ:

Կուրֆյուրստիները հիացած էին: Ներեցին թե՛ կեղտոտ եղունգները, թե՛ ձեռքերը սփոցով սրբելը, բարձրաձայն ճչպչացնելը, երբ պատմում էր մոսկովյան բարքերից ու նավաստիական բառեր խցկում խոսքի մեջ, աչքով անում, ավելի պերճախոս լինելու համար քանիցս փորձեց արմունկով բոթել Սոֆիա-Շառլոտտային:

Ամեն ինչ՝ նույնիսկ խրտնեցնող դաժանությունը և մարդասիրական որոշ դրսևորումների նախնական անընմբռնողությունը, թեև փոքր-ինչ սարսռազդու, բայց զմայլելի էին թվում: Պյոտրից, ինչպես հուժկու մի գազանից, նախամարդու թարմություն էր հորդում: Հետագայում կուրֆյուրստին Սոֆիան օրագրում գրեց. «Նա շատ լավ, միաժամանակ շատ խաթարված մարդ է: Բարոյական առումով իր երկրի կատարյալ ներկայացուցիչն է»:

Փրփրուն գինուց, խելացի ու լավ կանանց այդ մոտիկությունից Պյոտրը զվարթացավ: Սոֆիա-Շառլոտտան ցանկացավ նրան ներկայացնել քեռուն, եղբորը ու պալատականներին: Պյոտրը ձեռքը գրպանը տարավ՝ ծխամորճը հանելու, փոքր բերանով տարօրինակ ժպտալով, գլխով արեց. «Լավ, կանչեք թող գան...»: Ներս մտան Ցելլի հերցոգը՝ ալեհեր, իսպանական մորուքով, որպիսին հիմա չեն պահում, կնճռոտի և մենամարտողի վեր ոլորած բեխերով, սմքած մի ծերուկ, գահաժառանգը՝ թմրած, նեղադեմ, սև թավշյա զգեստով մի պատանյակ, գունեղ հագուստներով, ու փարթամ տիկնայք և պարոնայք, ապա լայնաթիկունք ու գեղեցկադեմ Ալեքսաշկան, շրջապատված ֆրեյլինաներով (սա ամենուրեք իրեն զգում էր, ինչպես իր տանը) և դեսպանները՝ Լեֆորտը, սիբիրյան փոխարքա գիրուկ Գոլովինը: (Սանկտ-Պետերբուրգում նրանք հասել էին ցարի կառքին և իմանալով որտեղ է Պյոտրը, սաստիկ վախեցած, առանց ուտելու, առանց զգեստ փոխելու շտապել էին դղյակ:)

Պյոտրը գրկեց հերցոգին, թեատակերից վեր բարձրացնելով, համբուրեց անգլիական ապագա թագավորի այտը, ձեռքն աղեղեց ու ճարպկորեն խոնարհվեց պալատականներին: Տիկնայք միանգամից խոնարհվեցին ծնկծալ, տղամարդիկ ցատկոտեցին, գլխարկները բռնած:

— Ալեքսաշկա, դուռը պինդ կողպիր,— ասաց Պյոտրը ոուսերեն: Լիքը գավաթ գինի լցրեց, որ կվարտից մի քիչ պակաս կլիներ, գլխի շարժումով մոտ կանչեց ամենամոտ կանգնած պալատականին և նույն տարօրինակ ժպիտով ասաց.

— Ռուսական սովորությամբ ցարական գավաթից չի կարելի հրաժարվել, բոլորը՝ տղամարդիկ էլ, կանայք էլ լիքը պիտի խմեն...

Մի խոսքով, ծայր առավ ուրախություն, ինչպես Կուկուլում: Իտալացի երգիչներ հայտնվեցին՝ մանդոլիններով: Պյոտրը պարել կամեցավ: Սակայն իտալացիները չափազանց մեղմ ու ծորուն էին նվագում: Նա Ալեքսաշկային ուղարկեց պանդոկ, ուր գումակն էր կանգ առել, իր երաժիշտներով: Եկան պրեոբրաժենյան պոզ ու եղջրափող նվագողները՝ բոլորը մորեգույն շապիկներով, կճճաձև կտրած մազերով, արձանի պես կանգնեցին պատի տակ և գդալ ու ծնծղա զարկեցին, եղջրափողեր, փայտյա սուլափողեր ու պղնձյա սրինգ փչեցին... Միջնադարյան կամարների տակ երբեք այդպիսի դիվական երաժշտություն չէր հնչել: Պյոտրը դոփդոփում էր, աչքերը ոլորում.

— Ալեքսաշկա՞, հո՛պ տուր:

Մենշիկովը ուսերը խաղացրեց, հոնքերը շարժեց, դեմքին տրտմություն տվեց ու գնաց պարաքայլ՝ թաթ ու կրունկ, թաթ ու կրունկ: Սոֆիան ցանկացավ տեսնել, թե ինչպես է պարում Պյոտրը: Մատները պտղունց արած Պյոտրը բռնեց պատավի մատներից, տարավ կարասպաքայլ: Տեղը նստեցնելուց հետո ընտրեց ավելի ջահել գիրուկ մի կնոջ ու սկսեց ցատկաքայլ ֆիգուրները: Լեֆորտը հանձն առավ

պարերը կառավարելը: Սոֆիա-Շառլոտտան ընտրեց գիրուկ Գոլովինին: Այդուց ներս լցվեցին կամավորականները, պարընկերուհիներ գտնելով, անցան պզզապարի՝ դարձումներով, թաթարական կատաղի բղավոցներով: Փոփոում էին շրջազգեստները, զզզվում էին կեղտումները: Մի լավ քրտնեցրին գերմանուհիներին: Ու շատերը զարմանում էին, թե կանանց կողերն ինչու են այդքան կոշտ: Պյոտրը նույնպես հարցրեց Սոֆիա-Շառլոտտային: Կորֆյուրստինը սկզբում չհասկացավ, հետո այնքան ծիծաղեց, որ արցունքոտվեց.

— Սրանք կողեր չեն, այլ մեր սեղմիրանների զսպանակները ու ոսկորները...

9.

Կոպպենբուրգում բաժանվեցին: Մեծն դեսպանները շրջանց ճանապարհով ուղևորվեցին Ամստերդամ: Պյոտրը փոքրաթիվ կամավորականներով քշեց ուղիղ դեպի Հռենոս, Քանոնեն քաղաքը չհասած, նավ նստեց ու ցած լողաց: Շենկենշանցից այն կողմ բաղձալի Հոլանդիան էր սկսվում: Հռենոսի աջ բազուկով թեքվեցին և Ֆորտ գյուղի մոտերքում ջրարգելակներով մտան ջրանցքները:

Հարթանստակ գետանավը քաշում էին հաստագավակ, բարձր անուրների տակ լծած մուշ շաղանակագույն երկու ձի: Գլուխները ծանրումն ճոճելով, նրանք քայլում էին խոտածածկ ափի ավազապատ արահետով: Ուղիղ շերտով ձգվում էր ջրանցքը՝ բանջարանոցներով, արուտավայրերով, ծաղկի մարջերով, առուների և ջրանցքների ցանցով պատված. քարտեզի պես գծագրված հարթավայրի միջով: Օրը շոգ էր, թեթևակի մշուշապատ: Արդեն ծաղկաթափ էին շամպրակները, հիացինտները, նարգիզները, սևացած մարգերում տեղտեղ դրանց մնացորդները կտրատում ու դասավորում էին զամբյուղների մեջ: Սակայն սև-մանուշակագույն, բոցի պես կարմիր, խայտաբղետ ու ոսկեգույն վարդակակաչները թավշի նման ծածկել էին հողը: Ամենուրեք թույլ քամուց պտտվում էին հողմաղացների թևերը, երևում էին դաստակերտներ, ագարակներ, կղմինդրածածկ, արագիլի բներով թեքակտուր տնակներ, ջրանցքների երկարությամբ ձգված ցածրիկ ուռենիների շարքեր: Երկնագույն մշուշի մեջ քաղաքների, տաճարների, աշտարակների ուրվագծեր կային և հողմաղացներ, հողմաղացներ...

Խոտ բարձած նավակ էր շարժվում ջրանցքում, բանջարանոցների մոտով: Դաստակերտի կտրից այն կողմ առագաստ երևաց ու կամացուկ սահեց վարդակակաչների միջով... Բորբոսից կանաչած ջրարգելակի մոտ հոլանդացիներ էին կանգնած՝ տակառի պես լայն շալվարներով, ճեղքիկ բանկոնակներով, փայտյա ոտնամաններով (բանջարեղեն բարձած նրանց նավակները հեռուներում մշուշի մեջ շողացող արեգակի կողմը ձգվող լայն առվի մեջ էին), ճանգիստ փրստացնում էին ծխամորճները, սպասելով ջրարգելակը բացելուն:

Տեղ-տեղ գետանավը դաշտերից ու շինություններից ավելի բարձր էր լողում: Ներքևում երևում էին պտուղները՝ աղյուսաշար պատերի երկայնքով սաղարթը փռած ծառերի վրա, պարանին փռած սպիտակեղենը, մարդուր բակերում ավազի վրայով ճեմող սիրամարգերը: Տեսնելով կենդանի այդ թռչունները, ռուսները միայն հառաչում էին: Հարթմնի երազ էր թվում այդ երկիրը, որ անօրինակ աշխատանքով էր նվաճվել ծովից: Այստեղ հարգում ու խնամում էին հողի յուրաքանչյուր պատառը... Ոչ թե մեր վայրի տափաստանի պես... Կապե ծխամորճից ծուխ արձակելով, Պյոտրն ասում էր կամավորականներին.

— Մոսկվայում ավելի մեծ բակեր էլ ունենք... Բայց ցախավելն առնել ու բակը մարքել, ու խիստ օգտակար և գրպենկան բանջարանոց տնկել՝ ոչ մեկիդ մտքով չի անցնում... Տունը որ քանդվի, էլի չեք իջնի վառարանից, որ մի հենարան տաք, սատանաներ, ես ձեզ գիտեմ... Ոտաց ճանապարհի համար էլ մի կարգին տեղ չեք սարքի, հենց շեմին կկեղտոտեք... Ինչի՞ց է դա: Հսկայական տարածությունների վրա նստած, ու աղքատ ենք... Շատ մեծ ցավ է մեզ համար... Նայեք, հողն էստեղ ծովի տակից են հանել, ամեն մի ծառը հարկավոր է բերել տնկել: Ու իսկական դրախտ են պարքել...

Զարգելակների միջով մեծ ջրանցքից գետանավը մտավ փոքրերը: Առաջանում էին ձողաթիով, մշտապես հանդիպելով բերներեբան բեռնված նավակների: Արևելքում սփռված էր Զեյդերզեեի՝ հոլանդական ծովի կապույտ-մոխրագույն թաղանթը: Ավելի ու ավելի շատ առագաստներ էին երևում: Ավելի ու ավելի մշուշոտ էր դառնում չորաբոլորը: Վարդագունացող ծովի մակերեսին նավեր ու նավեր էին շառանում: Մայրամուտի լույսի մեջ լողացող կայմեր, առագաստներ, տաճարների ու շինությունների սրակատար տանիքներ... Ծովից այն կողմ, սարի պես բարձրացած բոսորագույն ամպեր, սակայն լույսը շուտ մարեց ու դրանք մոխրածածկ եղան: Հարթավայրում լույսեր վառվեցին, թրթռացին ջրանցքների վրա:

Ընթրելու կանգ առան ափին, հաճելի լուսավորված պանդոկում: Ջին խմեցին և անգլիական էլ: Պյոտրն այստեղից Ամստերդամ ուղարկեց բոլոր կամավորականներին, իսկ ինքը Մենշիկովի, Այոշա Բրովկինի և տերտեր Բիտկայի հետ միակայն նավակ նստեց ու շարունակեց ճանապարհը (մայրաքաղաք չմտնելով) դեպի Սաարդամ գյուղակը:

Աշխարհում ամեն ինչից շատ նա անհամբեր էր տեսնել մանկուց սիրած այդ վայրը, որի մասին պատմել էր վաղեմի բարեկամը՝ դարբին Հարրիտ Կիստը (երբ ռազմախաղի նավակներն էին սարքում Պերեյասլավի լճում:) Փող վաստակելուց հետո Կիստն այն ժամանակ հայրենիք վերադարձավ, բայց Սաարդամից եկան ուրիշ դարբիններ, նավաշինարար հյուսներ (Արխանգելսկ, հետո՝ Վորոնեժ) և ասում էին. «Նավ սարքելու միակ տեղը, Պյոտր Ալեքսեևիչ, Սաարդամն է, թեթև, արագընթաց, դիմացկուն՝ ամենալավ նավերն են»:

Ամստերդամից շրջ տասը կիլոմետր դեպի հյուսիս, Սաարդամ, Կոգ, Օստ-Զանեն, Վեստ-Զանեն, Զանդիկ գյուղերում հիսունից ոչ պակաս նավաշինարաններ կային: Օրուգիշեր աշխատում էին այն-

պիսի արագությամբ, որ նավը հինգ-վեց շաբաթում պատրաստ էր լինում: Ծրջակայքում բազմաթիվ ֆաբրիկաներ ու գործարաններ կային, որոնք աշխատում էին հողմաղացների ուժով և պատրաստում նավաշինարաններին հարկավոր ամեն ինչ՝ ճախարակված մասեր, եռաթագամեր, ճոպաններ, առագաստներ, կաճկարասի: Այդ մասնավոր նավաշինարաններում միջին մեծության առևտրական և կետորս նավեր էին կառուցում, ռազմական և գաղութները գնացող առևտրական խոշոր նավերը կառուցվում էին Ամստերդամում, ծովային վարչության երկու էլինգներում:

Խորունկ ու նեղ ծովածոցում լողացող նավակից ամբողջ գիշեր կրակներ էին տեսնում ափերին, կացինների թխկոցը, ձողագերանների ճռռոցն ու երկաթի զնգոցը լսում: Խարույկների լույսի տակ զանազանվում էին բաց նավակողերը, նավախելը նավարանի վրա, տախտակի կապուկները, ծանր գերանները ճախարակներով վեր հանող փայտյա մեքենայի շրջանակը: Լապտերակիր նավակներ էին լողում ետուառաջ: Խոպոտ ձայներ էին հնչում: Կեչու տաշեղի, կպրի, գետի խոնավության բույրերն էին տարածվել... Չորս թիկնեղ հոլանդացի թիերն էին ճռռացնում, կախ ընկած ծխամորճները փստացնելով:

Կեսգիշերին պանդոկ մտան՝ հանգստանալու: Թիավարները փոխվեցին: Խոնավ ու գորշ առավոտ բացվեց: Տները, հողմաղացները, գետանավերը, երկարուկ բարաքները՝ ամեն ինչ, որ գիշերը շատ վիթխարի էր թվում, ցածրացավ կապտավուն ցողով պատած ափերի վրա: Լացող ուռիներ էին կախված մշուշոտ ջրերի վրա: Ո՞ւր է փառապանծ Սաարդամը:

— Ահա Սաարդամը,— ասաց թիավարներից մեկը, գլխով անելով թեք կտուրներով, ճակատամասը հարթ, փայտից ու մգած աղյուսից կառուցված տնակների կողմը: Նավակը լողում էր այդ տնակների մոտով ու կնդտոտ ջրանցքով, որը կարծես փողոց լիներ: Գյուղն արթնանում էր, տեղ-տեղ արդեն կրակ էր վառվում օջախներում: Կանայք լվանում էին մանր, հնությունից ծիածանագույն դարձած ապակիներով բռնակուսի պատուհանները: Մաքրում էին ծոված դռների պղնձյա բռնակներն ու կանթեղը: Ծիմապատ մարագի կտրին կանչեց աքաղաղը: Լուսանում էր, ջրանցքի ջրից գոլորշի էր բարձրանում: Ջրանցքի վրայով ձգված պարաններից լվացք էր փռած՝ լայն-լայն շալվարներ, կտավե շապիկներ, բրդյա գուլպաներ: Անցնելիս ստիպված էին կռանալ:

Թեքվեցին խոտորնակի ջրանցքով, փռած ցցագերանների, հավաքների, մարագների, դրանց կպած անհրաժեշտ խորդանոցների, փչակավոր ուռենիների մոտով: Ջրանցքը վերջանում էր ոչ մեծ խորշով, որի մեջտեղում, գործած գդակով գլուխն ուսերի մեջ թաղած մի մարդ էր նստած նավակի մեջ՝ օձաձուկ էր բռնում կարթով: Ուշադիր նայելով, Պյոտրը վեր թռավ.

— Հարրիտ Կիստ, դարբին, էդ դո՞ւ ես:

Մարդը հանեց կարթը և նոր միայն բարձրացրեց գլուխը, ու երևում էր, որ թեև սառնասիրտ է, բայց խիստ զարմացած. մոտեցող նավակի մեջ հոլանդացի աշխատավորի հագուստով՝ լաքապատ գլխարկով, կարմիր բանկոնով, կտավե շալվարով մի պատանի էր կանգնած... Բայց նման մեկ ուրիշ դեմք չգիտեր նա՝ տիրական, անկեղծ, խելագար աչքերով... Հարրիտ Կիստը վահեցավ՝ մոսկովյան ցարը մշուշոտ առավոտյան, սովորական նավակով լողում էր ջրանցքով: Ծեկ արտևանունքները թարթեց Հարրիտ Կիստը՝ իրոք, ցարն էր, և ձայն տվեց.

— Էյ, դո՞ւ ես, Պիտեր...

— Բարև...

— Բարև, Պիտեր...

Հարրիտ Կիստը կոշտացած մատներով զգուշությամբ սեղմեց նրա ձեռքը: Տեսավ Ալեքսաշկային.

— Է-Է՛, դո՞ւ ես, տղա... Ես էլ նայում եմ, ոնց որ դուք լինեք... Ինչ լավ է, որ եկել եք Հոլանդիա...

— Եկել ենք ամբողջ ձմեռ նավաշինարանում հյուսնություն անելու, Կիստ, էսօր գնանք գործիք-բան առնելու...

— Ցակով Օմի այրուց լավ գործիքներ կարելի է առնել ու էժան՝ ես կխոսեմ նրա հետ...

— Դեռ Մոսկվայում էի մտածում, որ քո տանն եմ մնալու...

— Իմ տանը նեղվածք կլինի, Պիտեր, չքավոր մարդ եմ, տնակս բանի պետք չէ...

— Բայց նավաշինարանում երևի մի քիչ էլ ոռճիկ կտան ինձ...

— Էհ, էլի նույն կատակասերն ես, Պիտեր...

— Չէ, հիմա կատակի ժամանակ չէ: Երկու տարում նավատորմ պիտի սարքենք, հիմար էինք, խելոքանալու ենք: Մեր պետության մեջ ճերմակ ձեռք չպետք է լինի:

— Բարի գործ ես ձեռնարկել, Պիտեր:

Մոտեցան խոտածածկ ափին, ուր կղմինդրե նստած տանիքի տակ փայտաշեն, երկյուրամուտ մի տնակ էր կանգնած, կից շինությամբ: Բարձր ու տափակ խողովակից ծուխ էր ելնում ծեր թխկենու ճյուղերի տակ: Ծոված, բարավորից վեր վանդակապատ լուսամուտով դռան առաջ մաքուր լաթ էր փռված, որի վրա փայտյա ոտնամանները էին դնում, քանի որ Հոլանդիայում գուլպաներով էին տուն մտնում: Ծեմից մտածներին էր նայում նիհարիկ, ձեռքերը մաքուր գոգնոցի տակ դրած մի պառավ: Երբ Հարրիտ Կիստը, թիերը խոտի վրա գցելով, ձայն տվեց նրան. «Էյ, դրանք մեզ մոտ են եկել Մոսկվայից», պառավը ծանրումեծ խոնարհեց օսլայած, ականջավոր գլխանոցը:

Պյոտրը շատ հավանեց կացարանը, և զբաղեցրեց երկյուրամուտ սենյանատունը, ոչ մեծ, մութ խորդանոցը անկողնով (իր և Ալեքսաշկայի համար) և ձեղնահարկը (Ալյոշկայի ու Բիտկայի համար), դեպի ուր դնովի ասնդուղք էր ելնում սեղանատնից: Նույն օրը Ցակով Օմի այրուց լավ գործիքներ գնեց և երբ ձեռնասայլակով տուն էր բերում, հանդիպեց հյուսն Ռենսենին, որը մի ձմեռ աշխատ-

տել էր Վորոնեժում: Հաստլիկ ու բարեհոգի Ռենսենը կանգ առավ, բացեց բերանն ու հանկարծ գունատվեց. ձեռնասայլակը հրող, լաքապատ գլխարկը ծոծրակին իջեցրած այդ պատանին սարսափելի մի բան հիշեցրեց Ռենսենին՝ սիրտը կսկծաց... Հիշողության մեջ արթնացավ. թափվող ձյունը, հրացոլքը և բքից նոնվող ռուս զորավորների դիակները...

— Ողջույն, Ռենսեն,— Պյոտրը թողեց ձեռնասայլակը, թևքով սրբեց քրտնած դեմքն ու պարզեց ձեռքը:— Հա՛, հա՛, ես եմ... Ինչպե՞ս ես: Իզուր փախար Վորոնեժից... Ես էլ երկուշաբթի օրվանից Լինգատ Ռոգգեի նավաշինարանում եմ աշխատում... Բերանիցդ խոսք չթոցնես, տես հա՞... Էստեղ ես Պյոտր Միխայլով եմ:— Ու վերստին վորոնեժյան հրացոլքով բռնկվեցին նրա դուրս պրծած ու գնող աչքերը:

10.

«Մին հեռ կլոնիգ... Ձեր հրամանով պոլորելու ուղարկված բոլոր ծովագնացները բաժանված են ըստ տեղերի... Իվան Գոլովինը, Պլեշչեևը, Կոապոտկինը, Վասիլի Վոլկովը, Վերեշչագինը, Ալեքսանդրը Մենշիկովը, Ալեքսեյ Բրովկինը, օրնիբուն հարբած տերտեր Բիտկան, որոնց հետ ես եմ մնում, նավաշինությունն սովորելու են տված, մի քանիսը Սաարդամում, մյուսները Արևելա-Հնդկական նավագործարանում... Ալեքսանդր Կիկինը, Ստեպան Վասիլևը՝ կայմ շինելու, ներկարար Յակիմը ու դեսյանական սարկավագ Կոիվոսիխինը՝ ամեն տեսակ շրաղաց սարքելու, Բորիսովը, Ուվարովը՝ գետանավեր սարքելու, Լուկինը և Կոբիլինը՝ ճախարակ սարքելու, Կոնշինին, Սկվորցովին, Պետելինին, Մուխանովին և Սինյավինին ուղարկեցինք տարբեր տեղեր՝ նավաստիության, Արչիլովը Հաագա գնաց, թնդանոթաձգություն սովորելու... Մեզնից առաջ էստեղ ուղարկված պալատականները, մենակ կողմնացույցը սովորելով, ուզում էին Մոսկվա գալ, կարծելով, թե ամեն ինչ պրծել են... Բայց մենք նրանց մտքին դրածը փոխեցինք, հրամայեցինք սնագործ քանվորություն անել նավաշինարանում, որ փոր-փտորները բերաններից գա...

Պարոն Յակով Բրյուսը եկավ այստեղ ու ձերդ պայծառափայլության նամակը հանձնեց: Ցույց տվեց վերքերը, որ մինչև հիմա չեն լավացել ու բողոք արեց, որ ձերդ պայծառափայլությունից է ստացել կերոխուսի ժամանակ... Գազան: Դեռ շա՞տ պիտի մարդկանց դաղես: Էստեղ էլ հասան ձեզնից վերքեր ստացած մարդիկ: Իվաշկա Խմելնիցկու հետ մոտիկությունդ վերջացրու... Նրանից մի վնասի կգաս... Պիտեր...»:

«...Քո նամակում, պարոնս, գրված էր, որ իբր ընկերություն եմ անում Իվաշկա Խմելնիցկու հետ, ու դա ճիշտ չէ, պարոնս... Յակովը ձեզ մոտ էր եկել Մոսկվայից սկսած հարբած, ու դուրս է տը-

վել խելքին եկածը... Իվաշկայի հետ ընկնելու ժամանակը չունեմ, մշտապես կռիվ-կոտորոցի մեջ ենք, արյուն թափելու... Էդ ձեր գործն է ազատ ժամանակ Իվաշկային ծանոթություն տալը, մենք ժամանակ չունենք... Ինչպես որ գրել էի քեզ, պարոնս, էն ավազակների խմբից էլի ութ հոգու բռնել ենք, և դրանք պոսադական և առևտրական են, մսավաճառներից, կառապաններից ու բոյարներից՝ Պետրուշկա Սելեզենը, մեկ էլ Միտկա Պիչուգան, մեկ էլ՝ Պոպուգայը, մեկ էլ Կուսկա Զայկան, ու ազնվականի տղա Միշկա Տրյոտովը... Դրանց որջն ու զողացած ապրանքի տեղը Տվերսկիյե դարպասի կողմերն էր... Ինչ գալիս է Բրյուսին, կամ թե ուրիշները կգան իմ վրա բողոք անելու, ուրեմն խմած կլինեն... Քո խոնարհ ծառա **Ֆեդկա Թոմոդանովսկի...**»:

«...Մին հեռ կլոնիգ... Քո թագավորական նամակն ինձ հանձնեցին, որտեղ գրված էր օտարերկրացի Թոմաս Ֆադենբրախտի մասին՝ սրանից հետո թե ինչպես ծխախոտի առևտուր անի: Դրա մասին դեռ ձմեռն է հրաման եղել, որ առաջին տարին առևտուր անի իր համար, երկրորդ տարին էլ իր համար, բայց մաքսով, երրորդ տարին աճուրդի դնի, ով շատ տվեց, նրան էլ թողնի... Խիստ եմ զարմանում, որ ձեր թագավորական բոյարները չէին կարող իրենք որոշում հանեն, եղածն էլ մանր գործեր են... Ձեր թագավորական ծառայության համար էստեղ 15 000 հրացան ենք առել, 10 000-ն էլ ապպարել, նմանապես հրամայված է ձեր ծառայության համար պատրաստել 8 հաուբից, մեկ էլ 14 հրանոթ: Երկաթի վարպետների մասին էստեղ շատ եմ խոսել, բայց գտնել դեռ չենք կարող, լավերը պինդ կպած են տեղերին, վատերը մեզ պետք չեն... Խնդրում եմ, ողջույն տուր իմ պարոն գեներալին ու գլուխ խոնարհի, որ շնորհ անի, աչքաթող չանի տունուտեղս... (Շարունակությունը՝ անգույն թանաքով): Էստեղի լուրերը սրանք են. ֆրանսիական թագավորը շատ նավեր է հավաքում Բրեստում, բայց թե ուր՝ ոչ ոք չի իմանում... Երեկ Վիեննայից լուր եկավ, որ հիշպանական թագավորը մեռել է... Իսկ թե նրա մահից հետո ինչ կլինի, էդ մասին, ձերդ ողորմածություն, ինքդ գիտես...*)

Նույն նամակով գրել էիր առատ անձրևների մասին, որ հիմա գալիս են մեզ մոտ: Ու էլի զարմանում ենք, որ Մոսկվայի նման բլուրների վրա տեղ ձեզ մոտ ցեխ է... Մենք էստեղ ջրից ցածր ենք ապրում, բայց չոր է... **Պիտեր...**»:

Վասիլի Վոլկովը, Պյոտրի հրամանով օրագիր պահելով, գրում էր.

«Ամստերդամում տեսա իգական սեռի երեխա, մեկուկես տարեկան, լրիվ բրդակալած ու շատ հաստ, դեմքի լայնքը՝ մեկուկես քառորդ, բերել էին տոնավաճառի: Տեսա նույն տեղը մի փիղ, որը մի-

*) Իսպանական գահաժառանգության համար մղվող պայքարը (ծան. Ա. Ն. Տոլստոյի):

նուվետ էր պարում, թուրքական շեփոր փչում, կրակում էր փոքր մուշկետից ու ընկերություն անում շան հետ, միապին են ապրում՝ խիստ շատ զարմանալի էր...

Փայտից սարքած մարդու գլուխ տեսա՝ խոսում էր: Ժամացույցի պես լարում են, ու ինչ դու ես ասում, գլուխը նույնն է ասում: Փայտից սարքած երկու ձի տեսա, անիվով, նստում են դրանց վրա ու թափով գնում ուզած տեղը փողոցներով... Տեսա ապակի, որի միջոցով կարելի է արծաթ ու արծիվ հալել, դրանով էլ ջրի տակ եղած փայտը վառել, ջուրը չորս մատ կլիներ, ջուրը եռաց ու փայտը վառեցին:

Բժշկի մոտ անատոմիա տեսա, ամբողջ փորոտիքը բաժան-բաժան արած. մարդու սիրտը, թոքը, երիկամները, ու թե ինչպես է երիկամի մեջ քար գոյանում: Երակը, որով թոքը ապրում է, նման է ջրջի կտորի: Ուղեղի մեջ ապրող երակները նման են թելերի... Խիստ շատ զարմանալի էր...

Ամստերդամ քաղաքը ծովի ափին է գտնվում, ցածր մի տեղ, բոլոր փողոցներով ջրանցքներ են գցված, ու այնքան մեծ, որ նավ կարող է մտնել, ջրանցքի կողքերով փողոցները լայն են, տեղ-տեղ երկու կառք կանցնի: Ջրանցքի երկու կողմերում մեծ-մեծ ծառեր կան ու դրանց արանքներում՝ լապտերներ: Բոլոր փողոցներում լապտերներ կան ու ամեն գիշեր մարդիկ պարտավոր են իրենց տան առջևի լապտերը վառել: Հիշատակված փողոցներում պլեգիր է լինում, կամ զբոսանք:

Այստեղ շատ հարուստ վաճառականություն է ապրում, որը ամենահարուստն է համարվում Եվրոպայում, ու առևտուր անող ժողովուրդ է ապրում և շատ հարուստ են: Այնպես են հագնվում, ինչպես ուրիշ ոչ մի տեղ... Բորսան, որը լրիվ պարքված է սպիտակ քարից ու ներսից լրիվ ալաբաստր է քաշված, խիստ զարմանալի է... Հատակը սարքած է շախմատի տախտակի պես, ու ամեն վաճառական կանգնում է իր քառակուսու վրա... Ու ամեն օր այստեղ շատ ժողովուրդ է հավաքվում, ամբողջ տարածության վրա շատ նեղվածք է լինում... Ու շատ աղմուկ է լինում... Որոշ մարդիկ, որ ջրհուդներից են ու չքավոր, գնում-գալիս են վաճառականների արանքում ու թթախոտ են տալիս՝ քաշելու, ովքեր ջղայնացած են լինում, ու դրանով ապրուստ են հոգում...»:

Յակով Նոմենը՝ հետաքրքրասեր մի հոլանդացի, օրագրում գրել է.

«...Ծարը հագիվ կարողացավ մի շաբաթ ծպտյալ ապրել. նրանք, ովքեր եղել էին Մոսկովիայում, դեմքով ճանաչեցին: Լուրը շուտով տարածվեց մեր հայրենիքում: Ամստերդամի բորսայում մարդիկ մեծ զումարներով գրազ էին գալիս, թե իսկապե՞ս մեծն արքան է, կամ իր դեսպաններից մեկը... Պարոն Հաուտմանը, որն առևտուր ունի Մոսկովիայի հետ և բազմիցս հյուրասիրել է Մոսկվայում ցարին, եկավ Ամստերդամ, իր խորին հարգանքը հավաստելու նրան: Նա ասաց ցարին.

— Ձերդ օծյալ մեծություն, դո՞ւք եք արդյոք:

Ի պատասխան ցարը բավական խոժոռ ասաց.

— Ինչպես տեսնում եք...

Որից հետո նրանք երկար զրուցեցին Մոսկովիա տանող հյուսիսային ճանապարհի դժվարությանն ու բալթիական նավահանգիստների առավելությունների մասին, ըստ որում Հաուտմանը չէր համարձակվում ուղիղ ցարի դեմքին նայել, իմանալով, որ նրան կարող է գայրացնել՝ ցարը տանել չի կարողանում, երբ ուղիղ աչքերին են նայում: Այդպիսի մի դեպք եղել էր. ոմն Ալեքսանդր Բլոկ փողոցում մի անգամ խիստ հանդուգն նայել էր ցարի աչքերին, մի խոսքով, կարծես բավական զվարճալի ու զարմանալի մի բանի: Այդ պատճառով ցարը ձեռքով ուժեղ խփել էր նրա դեմքին, այնպես որ Ալեքսանդր Բլոկը ցավ էր զգացել ու փախել էր ամոթահար, իսկ զբոսանողները նրա վրա ծիծաղել էին.

— Բռավո, Ալեքսանդր, ասպետ օծվեցիր...

Մեկ ուրիշ առևտրական կամեցել էր ցարին տեսնել աշխատելիս և նավաշինարանի վարպետին խնդրել էր բավարարել իր հետաքրքրասիրությունը: Վարպետը զգուշացրել էր, որ ում ինքն ասի. «Պիտեր, զաանդամյան հյուսն, այս կամ այն բանն արա», հենց նա էլ մոսկովցիների ցարը կլինի... Հետաքրքրասեր առևտրականը մտել էր նավաշինարան ու տեսել, թե ինչպես մի քանի բանվոր ծանր գերաններ են կրում: Այդ ժամանակ բասը, կամ՝ վարպետը, բղավել էր.

— Պիտեր, զաանդամյան հյուսն, ինչի՞ համար չես օգնում:

Այդժամ հյուսներից մեկը, հասակը համարյա չորս ֆուտ, կպրաթաթախ հագուստով, գանգուրները նակատին կպած, կացինը խրել էր փայտի մեջ ու հենազանդ վազել, ուսը դեմ արել գերանին և մյուսների հետ տեղ հասցրել, ի մեծ զարմանս հիշատակյալ առևտրականի:

Գործից հետո նա մտնում է նավահանգստի աղքատիկ ճաշարանը, ուր գարեջրի գավաթն առաջը դրած, ծխամորճ է ծխում և զվարթ զրույցի բռնվում ամենաանտաշ մարդկանց հետ ու ծիծաղում նրանց կատակների վրա, նման դեպքերում բոլորովին չմտածելով իր հանդեպ տածվելիք հարգանքի մասին: Հաճախ է այցելում ներկայումս Մոսկովիայում ծառայող գործավորների կանանց, նրանց հետ գինապտղի օղի է խմում, խփում ուսերին ու կատակում... Նրա որոշ տարօրինակությունների մասին է խոսում հետևյալ դեպքը... Մի անգամ սալոր է գնում, լցնում գլխարկի մեջ, դնում թաստակին և փողոցում ուտելով, անցնում Ջեյդդեյկ տանող ամբարտակով: Ետևից մի խումբ երեխաներ են ընկնում: Մի քանիսին հավանում է ու ասում.

— Էյ, մարդուկներ, սալոր կուզե՞ք:

Եվ մի քանի հատ տալիս է երեխաներին: Այդ ժամանակ մոտենում են ուրիշները և ասում. «Մեզ էլ սալոր տուր կամ մի ուրիշ բան»: Բայց նա դեմքը ծամածռում է ու թքում կորիզը, զվարճանա-

լով, որ բարկացնում է նրեխաներին: Մի քանի տղեկ այնքան են բարկանում, որ սկսում են նրա վրա փտած խնձորներ, տանձեր, խոտ ու ամեն տեսակ աղբ շպրտել: Ծիծաղելով, հեռանում է նրանցից: Տղեկներից մեկի նետած քարը դիպչում է մեջքին, ցավեցնում, և դա նրան հանում է համբերությունից... Վերջապես, ջրարգելակի մոտ, գուղձի մի կտոր է դիպչում գլխին և նա կատաղած բղավում է.

— Սա ի՞նչ բան է, բուրգոմիստրից-բանից չունե՞ք, որ կարգուկանոնին հետևի...

Բայց սա էլ ամենևին չի վախեցնում տղեկներին:

Տոն օրերին նա զբոսնում է ծովածոցում, առագաստավոր նավակով, որը ներկարար Հարմենենեից է գնել քառասուն գուլդենով և մի գավաթ գարեջրով: Մի անգամ, երբ նա լողում էր Կերկրակուով, նրա նավակին է մոտենում մարդատար նավը, որի տախտակամածին անագին ժողովուրդ է հավաքված լինում՝ ցարին մոտիկից տեսնելու հետաքրքրությունից բորբոքված: Նավը համարյա կիպ մոտենում է, և ցարը, ցանկանալով օձիքն ազատել այդ պնդերեսությունից, երկու դատարկ շիշ է առնում ու իրար ետևից շպրտում խոնջված ուղևորների գլխին, բայց բարեբախտաբար ոչ մեկին վնաս չի պատճառում...

Նա չափազանց հետաքրքրասեր է, ամեն առիթով հարցնում է. «Սա ի՞նչ է»: Իսկ երբ պատասխանում են, ասում է. «Ես ուզում եմ տեսնել»: Եվ գնում ու հարցուփորձ է անում, մինչև որ հասկանում է: Ուտրեխտում, ուր իր ուղեկիցներից մի քանիսի հետ գնացել էր հոլանդական կուսակալ, անգլիական թագավոր Վիլհելմ Օրանցուն հանդիպելու, առիթ եղավ նրան ցույց տալ որբանոցները, հոսպիտալները, զանազան ֆաբրիկաներ և արհեստանոցներ: Հատկապես դուր էր եկել պրոֆեսոր Ռյուշի մարդաբանական աշխատասենյակը, այնքան էր զմայլվել սքանչելի պատրաստված մանկան դիակով, որը ծպտում էր կենդանի արարածի պես, որ համբուրել էր դիակը: Երբ Ռյուշը սավանը բարձրացրել էր անդամահատման համար նախապատրաստված մեկ ուրիշ դիակի վրայից, ցարը զզվանք էր նկատել իր ռուս ուղեկիցների դեմքերին, և գայրացած բղավելով նրանց վրա, հրամայել էր ատամներով բռնել ու պոկել դիակի մկանները...

Այս ամենը ես գրառել եմ տարբեր մարդկանց պատմածներից, բայց երեկ ինձ հաջողվեց տեսնել նրան: Ցարը դուրս էր գալիս Յակով Օմեսի այրու կրպակից:

Նա քայլում էր արագ, ձեռքերը թափահարելով, ամեն ձեռքում մի-մի նոր կացին բռնած: Բարձրահասակ մարդ է, բարեկազմ ու թիկնեղ, շարժուն և ճարպիկ: Դեմքը կլոր է, խիստ արտահայտությամբ, հոնքերը մուգ են, մազերը կարճ, գանգուր և սևավուն: Բամբակյա կտորից կաֆտան էր հագել, կարմիր շապիկ, թաղիքե գլխարկ էր դրել:

Այսպիսին տեսան նրան փողոցում հավաքված հազարավոր մարդիկ, ինչպես նաև իմ կինն ու աղջիկը...»:

«Մին հեռ կլոնիգ... Երեկ Վիեննայից կայսերական դեսպանները մեր դեսպանների մոտ էին ուղարկել մի ազնվականի հետևյալ լուրով, որ Լեոպոլդ կայսեր զորքերին տեր աստված այնպիսի հաղթանակ է պարգևել թուրքերի դեմ, որ թուրքերը երեք խրամատներում պաշտպանվել չեն կարողացել, բոլորից դուրս են շպրտվել ու ջախջախվել ու փախել կամրջով, բայց կայսերականները սկսել են կրակել մարտկոցներից: Թուրքերը սկսել են ջուրը նետվել, իսկ կայսերականները ետևից կոտորել են ու վերջիվերջո ջախջախել թուրքերին ու գումակը գրավել: Այդ կռվում 12 000 թուրք է կոտորվել, որոնց մեջ և մեծ վեզիրը, ասում են նաև, որ իր սուլթանն էլ է սպանված:

Կայսերական զորքերի գեներալիսիմուսն է եղել սավոյական փոխարքայի եղբայր Եվգենին, ասում են 27 տարեկան երիտասարդ է, ու սա իր առաջին մարտն է եղել...

Հայտնելով սույնը, հիշատակյալ հաղթանակով շնորհավորում եմ արքային, խնդրելով, որ ամենայն ուրախություն կատարվի թնդանոթաձգությամբ և հրացանազարկերով... Ամստերդամից, սեպտեմբեր ամսու 13-րդ օրը... Պիտեր...»:

11.

Հունվարին Պյոտրը տեղափոխվեց Անգլիա ու կանգ առավ Լոնդոնից երեք վերստի վրա, Դեպտֆորդ գյուղաքաղաքի նավաշինարանում, ուր և տեսավ այն, ինչ ապարդյուն որոնում էր Հոլանդիայում. գիտության բոլոր օրենքներով նավաշինական արվեստ կամ նավերի երկրաչափական համաչափությունը: Երկուսուկես ամիս նա մաթեմատիկա էր սովորում և նավային նախագծերի գծագրություն: Մոսկվայում նավագնացության դպրոց հիմնադրելու համար ծառայության վերցրեց գիտնական, մաթեմատիկայի պրոֆեսոր Անդրեյ Ֆրեգարտնին և ջրարգելակների վարպետ կապիտան Ջոն Պերրիին՝ Վոլգայի և Դոնի միջև ջրանցք բանալու: Անգլիացի նավատիներին համոզել չկարողացան, շատ թանկ վարձ էին պահանջում. իսկ դեսպանական գանձարկղի միջոցները սուղ էին: Մոսկվայից շարունակ սամույրի մորթիներ էին ուղարկում, դիպակ, նույնիսկ որոշ բաներ ցարական հանդերձարանից՝ գավաթներ, մանյակներ, չինական սկահակներ, բայց այդ ամենը չէր բավականացնում խոշոր պատվերների և մարդկանց վարձելու վճարումներին:

Դրությունը փրկեց անգլիացի փրայիվ լորդ Պերեգրին մարքիզ Քարմարտենը. առաջարկեց կապալով իրեն հանձնել ծխախոտի ամբողջ առևտուրը Մոսկովիայում և իրավունք տալ այդ նիկոցիան խոտի երեք հազար տակառ ներմուծել, յուրաքանչյուրի քաշը հինգ հարյուր անգլիական ֆունտ, նախապես վճարելով քսան հազար ֆունտ պտեղինգ... Այդ ժամանակ էլ հնարավոր եղավ ծառայության վերցնել հեռավոր նավարկության նշանավոր նավապետ, հպարտ ու ըմ-

բոստ, սակայն հմուտ ծովագնաց հոլանդացի Կոռնելիուս Կրեյսին: Նշանակեցին 9 000 գուլդեն ոսկի, ռուսականով 3 600 եֆիմոկ, տուն Մոսկվայում և ամբողջ պարենամթերքը, փոխծովակալի կոչում և հակառակորդի ավարի երեք տոկոսն առնելու իրավունք, իսկ եթե գերի ընկներ, փրկագինը՝ գանձարանի հաշվին:

Արխանգելսկով և Նովգորոդով Մոսկվա եկան օտարերկրացի հրամանատարներ, դեկապետներ, բոցմաններ, բժիշկներ, նավաստիներ, խոհարարներ, նավային ու հրաձգային վարպետներ: Ցարական հրամանագրերով նրանց տեղավորում էին ազնվականների ու վաճառականների դպատակերտներում՝ Մոսկվայում անհագին նեղվածք առաջացավ: Բոյարները չգիտեին, թե ինչ են անելու օտարերկրացիների այդ բազմության հետ:

Գումակներ էին գալիս՝ բեռնված զինամթերքով, առագաստի կտավով, փայտ ու երկաթ մշակելու գանազան գործիքներով, կոտոսկրերով, գլխարկի շքոցի ստվարաթղթով, խցանով, խարիսխներով, բակառատով ու հացենիով, մարմարի կտորներով, սպիտի մեջ դրված մանկիկների ու վիժվածքների արկղներով, չորացրած կոկորդիլոսներ, թռչնի խրտվիլակներ էին բերում... Ժողովուրդը ցամաք հացով էր յոլա գնում, Մոսկվան լիքն էր մուրացկաններով, ավազակներն անգամ պվամահ էին լինում, բայց ահա՝ բերում ու բերում էին... Վրա էին տալիս կլորերես, լպիրշ օտարերկրացիները... Արդյոք չի՞ ցնորվել ցարը:

Որոշ ժամանակ արդեն մոսկովյան ջուկաներում լուր էր տարածվել, թե Պյոտր ցարը ծովից այն կողմ խեղդվել է (ոմանք ասում էին, թե տակառի մեջ են խեղդել), և իբր Լեֆորտը նման մի գերմանացի է գտել և Պյոտրի տեղ է հրամցնում, հիմա նրա անունից է կառավարելու, չարչարելու և հին հավատն արմատախիլ է անելու: Ոստիկանները բռնում էին լուրը տարածողներին, քարշ տալիս Պրեոբրաժենսկոյեի ատյան: Ռոմոդանովսկին անձամբ էր քննում նրանց՝ մտրակահարությամբ և կրակով խարանելով, սակայն պարզել չէր լինում, թե որտեղից են ելնում խռովարար լուրերը, որն է բույնը: Նովոդևիչյեում ուժեղացրեցին պահակախումբը, որպեսզի ոչ մի ուղերձ չելնի արքայադուստր Սոֆյայից: Ռոմոդանովսկին իր մոտ խնջույքի էր հրավիրում բոյարներին ու երևելի ազնվականներին, խմիչք չէր խնայում: Դռների մոտ մուշկետակիրներ էին կանգնեցնում, որ հյուրերը ներսուդուրս չանեն, և այդպես ուտում-խմում էին օրերով, գանգներն ու խեղկատակները առղում էին սեղանների տակ՝ ականջ դնելով խոսակցություններին, հարբածների մեջ վարժեցրած մի արջ էր շրջում, թաթերով լի գավը պարզած, որ հյուրը խմի, իսկ ով խմել չէր ուզում, արջը, գավը դեն նետելով, վրա էր ընկնում, պատառոտում հագուստը և աշխատում դեմքը կրծոտել: Գեր ու հոգնատանջ իշխան-կայսրը կիսահարբած ննջում էր գահի վրա՝ ականջները սուր, աչքն ամենատես, բայց հյուրերը հարբած ժամանակ էլ ավելորդ ոչինչ չէին ասում, թեև շատերի մտաին նա գիտեր, որ անհամբեր սպասում են, թե երբ է հողը ճոճվելու Պյոտրի ու նրա կողմնակիցների ոտքերի տակ...

Թշնամին շուտով ինքը բացահայտվեց: Մոսկվայում հայտնվեցին շուրջ հարյուր հիսուն ստրելց, որոնք փախել էին գնդերից, լիտվական սահմանից: Գնդապետներ Գունդերսմարկի, Զուբարևի, Կոլզակովի և Զյորմնիի ստրելեցան չորս գնդերը, որպես օժանդակ ուժ, այնտեղ էին ուղարկել, վոյեվոդա իշխան Միխայլո Ռոմոդանովսկու տնօրինության տակ: Այն գնդերն էին, որոնց Ազովը գրավելուց հետո թողել էին Ազովում և Տագանրոգում ամրություններ կառուցելու և որոնք նախանցյալ աշնանը խռովություն էին բարձրացրել կազակների հետ մեկտեղ, սպառնալով վարվել Ստենկա Ռազինի պես: Նրանք անասելի հոգնել էին ծանր ծառայությունից, ուզում էին Մոսկվա վերադառնալ՝ կանանց մոտ, իրենց հանգիստ առնտրին ու արհեստներին՝ ազատ ժամանակ, այնինչ հասարակ զորականներն պես նրանց քշել էին լիտվական սահմանը, խոնավ տեղեր, կիսաքաղց ապրուստի:

Ըստ երևույթին, Մոսկվայում սպասողներ կային ստրելեցներին: Նրանց խնդրագիրը (պալատական տատմոր միջոցով) անմիջապես Կրեմլ հասավ, կույսերի հարկաբաժինը, ուր փակի տակ ապրում էր Սոֆյայի քույրը՝ արքայադուստր Մարֆան: Նույն կնոջ միջոցով Մարֆայից շտապ պատասխան ստացվեց.

«Վերևներում շփոթմունքի մեջ են որոշ բոյարներ, որոնք հանախ Կուկույ են գնում և խնամություն են անում օտարերկրացիների հետ, ցանկանում են խեղդել արքայազն Ալեքսեյին: Բայց մենք նրան փոխել ենք, և բոյարները, ջղայնանալով, խփել են երիտասարդ թագուհու երեսներին... Թե ինչ է լինելու, չենք իմանում... Թագավորն էլ հայտնի չէ՝ կենդանի է, հայտնի չէ՝ մեռած է... Ստրելեցներ, եթե չշտապեք Մոսկվա գալ, էլ երբեք չեք տեսնի Մոսկվան, ձեր մասին հրաման կա գրված արդեն...»:

Այդ նամակն առած, ստրելեցները վազվզում էին հրապարակներում և հարմար տեղերում բղավում. «Կար ժամանակ, որ արքայադուստր Սոֆյան տարեկան ութ անգամ երեք հարյուրական մարդ էր կերակրում, ու նրա արքայադուստր քույրերն էլ էին կերակրում՝ ուտիս օրերին հասարակ ժողովրդին տավարի լեզու էին տալիս, դոնդող էին տալիս, աղ դրած կես սագ էին տալիս, ձավարով հավ, միսուվով բլիթ, հետո էլ աղ դրած խոզի միս էին տալիս, տեսակ-տեսակ ձուկ էին տալիս, բոլ-բոլ խմիչք էին տալիս, ու երկու անգամ գտած մեղրախմիչք... Ի՞նչ տեսակ ցարեր ունեինք... Իսկ հիմա մենակ օտարերկրացիներն են լավ խժռում, իսկ դուք բոլորդ սովից սատկելու եք, ձեր բերանից կտրում, ծուլից դենը կոկորդիլոսներ են սռնում»: Աղմուկ-աղաղակ բարձրացնելու էին գալիս Ստրելեցների ատյանի մոտ, չէին վախենում բոյարին Իվան Բորիսովիչ Տրուբեցկոյից, իսկ երբ աղմկարարներից մի քանիսին բռնեցին ու բանտ էին տանում, ուժով խլեցին նրանց:

Իշխան-կայսրը կանչեց գեներալներ Գորդոնին, Ավտոմոն Գոլո-

վինին ու երեքով վնռեցին՝ փախստական ստրելեցներին անհապաղ դուրս շպրտել Մոսկվայից: Ֆյոդոր Յուրևիչը՝ խիստ անհանգստացած, գնաց ստուգելու գվարդիական ու գինվորական գնդերը, բայց ամենուրեք խաղաղ էր և հանգիստ: Հարյուր հոգի սեմյոնովական ընտրեցին ու պոսադական առևտրականներից կամավորներ կանչեցին: Գիշերով, առանց աղմուկի, մտան արվարձան՝ ստրելեցների տները, սկսեցին դարպասները ջարդել, մեկ-մեկ դուրս բերելով ստրելեցներին: Սակայն նրանցից ոչ ոք չընդդիմացավ. «Ա,դո՞ւք եք, սեմյոնովցիներ... Էլ ինչի՞ եք աղմուկ անում, առանց դրա էլ կգնանք...»: Անում էին բլիթով լի տոպրակները, քրջերի մեջ փաթաթած զենքը, ծիծաղելով հեռանում, կարծես իրենց գործը Մոսկվայում արել-վերջացրել էին...

Ստրելեցները լիտվական սահման տարան արքայադուստր Սոֆյայի նամակը: Մարֆան այդ օրը գանձան կնոջ միջոցով Նովոդևիչյե, արքայադուստր Սոֆյային պատուց թխվածքի մեջ ստրելեցների խնդրագիրն էր ուղարկել: Նույն կնոջ միջոցով Սոֆյան պատասխանել էր.

«Ստրելեցներ... ինձ հայտնի դարձավ, որ ձեր գնդերից քիչ մարդ է եկել Մոսկվա... Ու դուք պիտի Մոսկվայում լինեք բոլոր չորս գնդերով ու խմբով կանգնեք Նովոդևիչյեի մենաստանի պարսպի տակ ու աղերսանք անեք ինձ, որ Մոսկվա գնամ՝ նախկինի փոխարեն թագավորելու... Իսկ եթե գինվորները, որ կանգնած են մենաստանի մոտ, չթողնեն Մոսկվա գնալ, նրանց վերջը տաք ու մենք կլինենք Մոսկվայում... Եվ ով էլ որ չթողնի, մարդկանցով կամ գինվորներով, նրանց դեմ կռիվ պիտի տաք...»:

Սա հրաման էր կռվով գրավել Մոսկվան: Երբ փախստականները արքայադստեր նամակով վերադարձան լիտվական սահման, իրենց գնդերը, այնտեղ խռովություն բարձրացավ:

12.

Թե՛ Պյոտրը, թե՛ մեծն դեսպանները շատ չէին հապաղում եվրոպական քաղաքականությունից: Մոսկովցիների համար պատերազմելը նշանակում էր՝ տափաստանները պաշտպանել քոչվորներից, զսպել ղրիմյան թաթարների հրոսակային ասպատակությունները, անվտանգ դարձնել սայլերի ու ջրային ճանապարհները դեպի արևելք, ելք գտնել դեպի ծով:

Եվրոպական քաղաքականությունը մշուշոտ գործ էր թվում նրանց: Ռուսները հաստատ հավատում էին գրավոր պայմանագրերին ու թագավորների տված երդումներին: Գիտեին, որ ֆրանսիական թագավորը միաբան է սուլթանի հետ և որ Վիլհելմ Օրանցին՝ որպես անգլիական թագավոր և հոլանդական կուսակալ, Պյոտրին խոստացել է օգնել թուրքերի դեմ մղված պատերազմում: Եվ հանկարծ կարծես ձյուն մաղվեց գլխներին, անհասկանալի լուր եկավ (Լեհաստանից մի ազնվական բերեց Ավգուստ թագավորից), ավստրիական կայսր Լեոպոլդը խաղաղ բանակցությունների մեջ է

մտել թուրքերի հետ, ու այդ հաշտությամբ սառանձնապես անհանգստացած է Վիլհելմ Օրանցին, չհարցնելով ոչ մոսկովցիներին, ոչ լեհերին:

Հապա տիրոջ դազաղի թշնամյաց դեմ քրիստոնեական զենքի հաջողության նախանձախնդրության նրա նախկին բոլոր հավատիացումնե՞րը: Ի՞նչ է արդյոք դա: Ջբռսանա՞վ նվիրեց Պյոտրին... Եղբա՞յր էր կոչում... Խնջույք արեցին միասին... Հիմա՞ ինչպես հասկանալ:

Ընդունելի էր դեռ, որ Լեոպոլդ կայսրը թուրքերի հետ հաշտության մասին է խոսում. նրա և ֆրանսիական թագավորի միջև պատերազմ էր սկսվել իսպանական գահի համար. այսինքն (ինչպես հասկանում էին դեսպանները), թե նրանցից որ մեկն է որդուն թագավոր նստեցնելու Մադրիդում... Մեծ գործ է, հարկավ, բայց Անգլիան ու Հոլանդիա՞ն ինչ գործ ունեն այստեղ:

Պյոտրի և դեսպանների համար դժվար էր ընկալել, որ անգլիացի և հոլանդացի առևտրականներն ու արդյունաբերողները վաղուց արդեն ծայրաստիճան մտահոգված են Ատլանտյան օվկիանոսում և Միջերկրական ծովում Ֆրանսիայի առևտրական ու ռազմական գերիշխանությունը խորտակելու համար մղվելիք պատերազմով, որ իսպանական գահը գամ չէ այս կամ այն արքայորդու համար, Կարլոս Մեծի թանկարժեք թագը չէ, այլ ազատ նավարկություններ մանուդով ու երկաթեղենով, մետաքսով ու հմամունքով լի նավերի համար, հարուստ շուկաներ ու ազատ նավահանգիստներ, և որ անգլիացիների ու հոլանդացիների համար ավելի հարմար է ոչ թե պատերազմելը, այլ ուրիշներին հրահրելը...

Էլ ավելի խրթին էր թվում, որ անգլիացիներն ու հոլանդացիները, ձգտելով ազատ արձակել ավստրիական կայսեր ձեռքերը՝ Ֆրանսիայի դեմ պատերազմելու համար, համառորեն ցանկանում են, որ ռուսները շարունակեն պատերազմը սուլթանի դեմ... Սույնն էլ հենց եվրոպական երկիմաստ ու մեծ պոլիտի՛կն էր...

Պյոտրը վերադարձավ Ամստերդամ: Բուրգոմիստրները, ում հարցնում էր Վիեննայից եկած տհաճ լուրերի մասին, խուսափողական պատասխաններ էին տալիս և խոսքը դարձնում առևտրական գործերի՛: Մոսկովցիների համար կարևոր մեկ ուրիշ գործից էլ էին խուսափում... Այդ տարի Ուրալում, երկաթագործ Դեմիդովը մագնիսական երկաթահանք էր գտել... Վինիուսը գրել էր Պյոտրին.

«...Այդ հանքից լավ դժվար լինի ու ամբողջ աշխարհում չի եղել, այնքան հարուստ է, որ հարյուր ֆունտ հանքաքարից քառասուն ֆունտ թուջ է ստացվում: Խնդրում եմ, դեսպաններին շտապեցրու, որ կարգին երկաթագործ վարպետներ գտնեն, որոնք կարող են պողպատ ձուլել...»:

Անգլիացիներն ու հոլանդացիները շատ ուշադիր լսում էին Ուրալի երկաթահանքի մասին, բայց երբ խոսքը գալիս էր լավ վարպետներ գտնելուն, կմկմում էին, պոչ խաղացնում, ասում, որ իրենք նույնպես

չեն կարող նման գործարաններ աշխատեցնել, կգանք, տեղում կտեսնենք, գուցե և ինքներս ձեռնարկենք... Այդպես էլ չհաջողվեց երկաթագործ վարպետներ վարձել ոչ Անգլիայում, ոչ Հոլանդիայում:

Բոլոր տագնապներին ավելացավ Մոսկվայում ստրելեցների դավաճանության լուրը: Վիեննայից գաղտնի մի սուրհանդակ գրեց մենք դեսպաններին, որ այստեղ նույնպես գիտեն այդ մասին՝ քաղաքում ինչ-որ քսենձ չեզվին է տալիս, թե Մոսկվայում խռովություն է, իշխան Վասիլի Գոլիցինը վերադարձված է աքսորից, արքայադուստր Սոֆյան գահ է բարձրացել ու ժողովուրդը նրան հավատարմության երդում է տվել...

«Մին հեռ կյոնիգ... Ձեր թագավորական ճամակով հայտնել եք ստրելեցների խռովության մասին և որ ձեր կառավարությամբ ու զինվորների ուժով ճնշված է: Խիստ ուրախացել ենք: Մենակ թե խիստ բարկացած եմ քո վրա՝ ինչի համար այդ գործով հետաքննություն չես սկսել ու քաց ես թողել դավաճաններին, որ սահման գնան... Առված քեզ դատավոր... Այդպես չէինք խոսել քաղաքից դուրս, էն տան նախասրահում...

Իսկ եթե կարծում եք, թե մենք կորել ենք, քանի որ փոստն Էստեղից ուշացել էր, փառք աստծո, մեզնից ոչ մեկը չի մեռել, բոլորս ողջ ու առողջ ենք.. Ձեմ իմանում, թե ինչ կնկա վախ է իջել ձեր վրա... Խնդրում եմ չբարկանաս՝ հաստատ սրտի ցավով եմ գրում... Այստեղից Վիեննա ենք գնալու այս շաբաթ... Այնտեղ էլ շարունակ խոսում են, թե մենք կորել ենք, չկանք... Պիտեր...»:

13.

Հոգեգալստյան պարզ ու խաղաղ այդ օրը փողոցներն ավլած էին: Դարպասների ու դռնակների մոտ թոշնել էին կեչու ճյուղերը: Եթե որևէ մարդ երևում էր, ապա պահակ էր լինում՝ մահակով կամ նիզակով, փթանոց կողպեքներով գոց խանութների առաջ: Ամբողջ Մոսկվան ցերեկային ժամերգության էր կանգնած: Խնկի տաք ծուխ էր հոդում կեչու ճյուղերով զարդարված ցածրիկ դռներից: Այդ ջինջ օրով մուրացկանների բազմությունը նույնպես ընդարմացել էր գավիթներում, զանգերի դողանջների տակ. տոնական արեգակը խանձում էր գիսախոիվ գլուխները, մարմինները՝ պատառոտված շապիկների տակ.. Խմիչքի հոտ էր գալիս...

Այդ խաղաղ երանության մեջ անիվների դղրդոց խուժեց Նիկոլսկիով, գերանների վրա կատաղորեն ցնցվելով, երկաթյա անվահեցով մի լայն սայլ էր սլանում, կուշտ ու գեր ձին գալիս էր քառատրոփ, սայլի մեջ թափահարվում էր անգլխարկ, փոշեպատ կապույտ կաֆտանով մի վաճառական՝ աչքերը չոած, մտրակում էր ձիուն... Բոլորը ճանաչեցին Իվան Արտեմիչ Բրովկինին: Կարմիր հրապարակում Ալասպատ ձին թողեց մոտ վազող մուրացկաններին և քրտնամած,

պղնձագույն՝ իրեն գցեց Կազանյան տաճար, ուր ժամերգության էին կանգնած բարձրատիճան բոյարները...

Դեսուդեն հրելով այնպիսի մարդկանց, որոնց մտովի դիպչելն խակ սարսափելի էր, տեսավ իշխան-կայսեր դիպակե թիկնեղ մեջքը. Ռոմոդանովսկին բոլորից առաջ էր կանգնած փոքր գորգի վրա, ցարական ճնամենի դռնակների առաջ, նրա դեղնավուն ու գիրուկ ոեմքը թաղված էր մարգարտաշար օձիքի մեջ: Մոտ խցկվելով, Բրովկինը խոր գլուխ տվեց իշխան-կայսրին ու համարձակ նայելով նրա պղտորված աչքերին, գայրույթից փքված սարսափելի կոպերին...

— Տեր իմ, ամբողջ գիշեր քշել հասել եմ Սրլչովկայից, մի գյուղ ունեմ նոր Երուսաղեմի տակ... Սարսափելի լուրեր եմ բերել...

— Սրլչովկայի՞ց:— Չհասկանալով, Ռոմոդանովսկին ծանր հայացքը հառեց Իվան Արտեմիչի վրա:— Հո խմած չե՞ս, կարգը չգիտե՞ս:— Զայրույթից վիզն էլ փքվեց, շարժվեցին կախ ընկած բեխերը: Բրովկինը, չվախենալով, մոտեցավ նրա ականջին.

— Ստրելեցները չորս գնդով Մոսկվայի վրա են գալիս: Նոր Երուսաղեմից երկու օրվա ճամփի վրա են... Դանդաղ են գալիս, գումակներով... Կներես, տեր իմ, որ էս լուրով քեզ անհանգստացրի...

Գավազանն իրեն քաշելով, Ռոմոդանովսկին բռնեց Իվան Արտեմիչի ձեռքը, սեղմեց ուժով, կարմրատակելով, նայեց ճոխ հագնված բոյարներին, հետաքրքրություն արտահայտող նրանց դեմքերին... Բոլորի աչքերը խոնարհվեցին իշխան-կայսրի հայացքի առաջ: Գլխի դանդաղ շարժումով մոտ կանչեց Բորիս Ալեքսեևիչ Գոլիցինին.

— Ժամերգությունից հետո՝ ինձ մոտ... Վանահորը շտապեցրու, որ շուտ վերջացնի... Ավետումնին, մեկ էլ Վինիուսին ասա շտապ մոտս գան....

Ու նորից, թիկունքում բոյարների փսփսոցը լսելով, շրջվեց կիսով, աչքերի մշուշը ցրվել էր... Մարդիկ վախից խաչակնքելն էլ մոռացան... Լսվում էր, թե ինչպես է չրխկում բուրվառը, մեկ էլ աղավնին թևերը փռռացրեց կամարի տակ, փոշեպատ լուսանցքի գոգին:

14.

Գունդերտմարկի, Զուբարովի, Կոլզակովի և Զյորմնիի չորս գնդերը կանգնած էին խոնավ հարթավայրում, Վոսկրեսենսկի մենաստանի պարիսպների տակ, որը Նոր Երուսաղեմ էր կոչվում: Բաբելոնյան ասոիճանաշար զանգակատան ետևում, կանաչավուն մայրամուտի մեջ մի աստղ էր առկայծում: Մենաստանը մութ էր, դարպասը՝ փակ: Մութ էր նաև հարթավայրում, խարույկները հանգցրել էին, ճոճում էին սայլերը, խատաձայն կանչեր էին լսվում՝ ստրելեցները գիշերով ուզում էին գումակների հետ անցնել Իստրա ոչ լայն գետակը և Մոսկվա տանող ճանապարհը ելնել:

Մենաստանի տակ և Սրլչովկա գյուղում կանգ էին առել խուտի համար: Մոսկվայի մերձակայքից վերադարձած հետախույզներն ասում էին, որ այնտեղ հսկայական իրարանցում է ընկել, բոյարները և խո-

շոր վանտառականները փախչում են գյուղերն ու վոտչինաները: Արվարձաններում ստրելեցներին են սպասում, միայն թե մոտենան՝ պահակներին կկոտորեն դարպասների մոտ և ներս կթողնեն գնդերը քաղաք: Գեներալիսիմուս Շեինը մի երեք հազար զորք է հավաքել ռազմախաղի, Բուտիրյան և Լեֆորտյան գնդերից և ճակատամարտ է տալու, բայց մտածել է պետք՝ ամբողջ ժողովուրդը կօգնի ստրելեցներին, իսկ նրանց կանայք հիմա արդեն նիզակ ու կացին են սրում, խեյազարի պես դեսուդեն են ընկել արվարձանում, սպասում են իրենց ամուսիններին, զավակներին, եղբայրներին:

Ամբողջ օրը գնդերում վիճում էին. ոմանք ուզում էին ուղղակի ներխուժել Մոսկվա, մյուսներն ասում էին, որ հարկավոր է շրջանցել Մոսկվան և ամրանալ Սերպուխովում կամ Տուլայում ու այնտեղից բանբերներ ուղարկել Դոն և ուկրաինական քաղաքները՝ կազակներին և ստրելեցներին օգնության կանչել:

— Ինչի՞ համար Սերպուխով... Գնանք տուն, մեր արվարձանները...

— Չենք ուզում պաշարված նստել... Շեինն ի՞նչ է մեզ համար... Ամբողջ Մոսկվան ոտքի՞ կհանենք...

— Մի անգամ չհանեցինք... Վտանգավոր գործ է....

— Նրանց զորքի հետ են Գորդոնն ու գնդապետ Կոսագեն... Հանաք անել չեն սիրում...

— Մենք էլ հոգնած ենք... Վառոդն էլ է քիչ... Ավելի լավ է պաշարման նստենք...

Սայլի վրա բարձրացավ Օվսեյ Ռժովը: Հինգհարյուրապետ էր ընտրվել: Դեռևս Տորոպեցում, որտեղից ծայր առավ խռովությունը, դուրս էին շպրտել բոլոր սպաներին ու գնդապետներին: Տիխոն Գունդերտմարկը հազիվ էր գլուխն ազատել, քանի որ ձիով էր եղել: Կոլզակովը, գլուխը շարդած, մի կերպ գետն էր անցել: Այդ ժամանակ էլ հավաքվել ու ստրելեցյան գլխավորներ էին ընտրել... Օվսեյը, կոկորդ պատռելով, գոռում էր.

— Ո՞ւմ հագին շապիկ կա: Իմը փտել է, անցյալ տարվանից մորուքս սանրած չկամ, բաղնիք մտած չկամ... Ով շապիկ ունի հագին, թող պաշարման նստի... Մեր մտքին մի բան կա՝ տուն հասնել...

— Տո՞ւն, տո՞ւն,— բղավեցին ստրելեցները, սայլի վրա բարձրանալով:— Մոռացե՞լ եք, թե մեզ ինչ է գրել Սոֆյան: Ինչքան կարելի է, շուտ տեղ հասնենք, փրկելու: Թե չշտապենք, մեր գործը կտապալվի... Մինչև մեռնելիներս Ֆրանչիշկո Լեֆորտին վզներիս կնստեցնենք... Ավելի լավ է, հիմա կոխել տանք ու հասցնենք Սոֆյային գահին ընտրեցնել... Մեր ոոճիկն էլ կտա, կեր էլ կտա, ազատություն էլ... Կարմիր հրապարակում նորից այուն կտնկենք: Բոյարներին ցած կշպրտենք զանգակատներից, տները մեր մեջ կբաժանենք, կթալանենք, թագուհին ամեն ինչ մեզ կտա... Գերմանական արվարձանն էլ, մարդիկ կմոռանան, թե որտեղ էր դա...

Սայլի վրա, Օվսեյի մոտ բարձրացան մյուս հրահրիչները՝ Տումանն, Պրոսկուրյակովը, Զորինը, Երշը... Թրերը շրխկշրխկացրեցին պատյանների մեջ...

— Տղերք, սկսեք գետն անցնել...

— Ով չգա Մոսկվայի վրա, ցցի կհանենք...

Շտտերը վազեցին դեպի սայլերը, վայրենաձայն բղավելով ձիերի վրա: Գումակը և ստրելեցների բազմությունը շարժվեց դեպի մշուշապատ գետը... Սակայն մյուս ափից, աղոտ նշմարվող թփուռների միջից ինչ-որ բան թափահարեցին՝ կարծես զինանշան լիներ, ու մի խզված ձայն կանչեց.

— Կանգնի՞ր, կանգնի՞ր...

Ուշադիր նայեցին, ջրից վեր կանգնած զրահավոր մի մարդ տեսան, փետրազարդ սաղավարտով: Ճանաչեցին Գորդոնին: Լռություն տիրեց...

— Ստրելեցնե՞ր,— լսեցին նրա ձայնը:— Իրենց թագավորին հավատարիմ չորս հազար զորք կա ինձ հետ... Մարտ վարելու համար հիանալի դիրք ենք ընտրել... Բայց ես բոլորովին չեմ ուզում եղբայրական արյուն թափել: Ինձ ասեք, ի՞նչ եք մտածում և ո՞ր եք գնում:

— Մոսկվա՞... Տո՞ւն... Քաղցից կոտորվո՞ւմ ենք... Հագներիս շոր չկա...

— Ինչի՞ համար եք մեզ ղրկել խոնավ անտառները...

— Քի՞չ կոտորվեցինք Ազովի տակ... Քի՞չ լեշ կերանք, որ ետ էինք գալիս Ազովից...

— Մեջքներս կոտրվե՞ց բերդ շինելով...

— Թողեք մտնենք Մոսկվա՞... Երեք օր մեր տներում կապրենք, հետո կհնազանդվենք...

Երբ բղավեցին պրծան, Գորդոնը ձեռքի ափերը մոտեցրեց բերանին.

— Շատ լավ... Բայց մենակ հիմար մարդիկ գիշերով գետը կըմտնեն: Հիմարները... Իստրան խոր գետ է, գումակները կխորտակեք... Ավելի լավ է սպասեք այդ ափին, մենք էլ այս ափին, վաղը կխոսենք...

Նա հեծավ իր բարձրահասակ ձին ու սլացավ գիշերվա մթի մեջ: Ստրելեցները քիչ տատամսեցին, աղմկեցին ու սկսեցին խարույկները վառել, կերակուր եփել...

Երբ անամպ արշալույսից բարձրացավ արևը, Իստրայից այն կողմ բլրի վրա տեսան Պրեոբրաժենյան գնդի հավասար շարքերը ու նրանցից վեր՝ տասներկու պրնձյա թնդանոթ, կանաչ հրետանայիների վրա: Ծխում էին պատրույգները: Ձախ թևում հինգ հարյուրյակ դրագուն էր կանգնած՝ զինանշաններով: Աջ թևում, Մոսկվա տանող ճանապարհը, փակած, ուղեփակերի և կապանների ետև մնացած զորքն էր դիրքավորված....

Ստրելեցներն աղաղակ բարձրացրեցին, շտապ-շտապ լծեցին ձիերը, սայլերը կանգնեցրին քառանկյունաձև՝ կազակավարի... Բլրի կատարից դանդաղ իջավ Գորդոնը, վեց դրագունների հետ մոտեցավ գետին, նրա սևաթույր ձին հոտոտեց ջուրը և ծանծաղուտով թռիչքներ

գործելով, դիմացի ափը հասցրեց նրան: Ստրելեցները շրջապատեցին գեներալին...

— Լսեցե՞ք... (Նա բարձրացրեց երկաթահյուս ձեռնոց հագած ձեռքը)... Դուք կարգին ու խելացի մարդիկ եք... Ինչի՞ համար կռվենք: Մեզ հանձնենք խառնակիչներին, բոլոր դավաճաններին, ովքեր ուզում էին Մոսկվա փախչել:

Օվսյը նետվեց դեպի գեներալի ձին՝ մորուքը զզզված, աչքերը խարմրած.

— Մեր մեջ դավաճան չկա... Դուք եք, որ ռուսներին դավաճան անունն եք կպցրել, արիկաներ: Բոլորիս վզին էլ խաչ կա... Չլինի՞ Ֆրանչիշկո Լեֆորտի արտովը չի էս խաչը:

Խոնվեցին, սդմկեցին: Գորդոնը կիսախուփ էր արել աչքերը, ձիու վրա անշարժ նստած էր.

— Ձեզ Մոսկվա չենք թողնի... Լսեք ծեր գինվորիս, վերջ տվեք խռովությանը, վատ կլինի...

Ստրելեցները բորբոքվել էին, արդեն հայհոյանքներ էին բղավում: Բարձրահասակ, սևամազ, բազեի աչքերով Տուման, թնդանոթի վրա բարձրացած, մի թուղթ էր թափահարում...

— Մեր բոլոր վիրավորանքներն էստեղ գրված են... Թողեք գետը անցնենք, թեկուզ երեք հոգու, մեր խնդրագիրը կարդանք բոլոր գնդերի առաջ....

— Թող հիմա կարդա... Գորդոն, լսի....

Կմկմալով, սեղմած բռունցքով օդը ճեղքելով, Տուման կարդում էր.

«...Ազովի տակ եղած ժամանակ հերետիկոս Ֆրանչիշկո Լեֆորտը, ռուսական բարեպաշտությանը մեծ վնաս հասցնելու նպատակով մոսկովյան ամենալավ ստրելեցներին այդ Ֆրանչիշկոն պարապի տակ քշեց անժամանակ, ու ամենաարյունահեղ տեղերը տանելով, մեծ բանակությամբ կոտորել տվեց... Նմանապես նրա մտադրությամբ փորվեց անցքը, և այդ անցքով երեք հարյուր ու ավելի ստրելեց կոտորել տվեց...»:

Գորդոնը խթանեց ձին, ուզեց խլել թուղթը· Տուման ետ թռավ: Ստրելեցները կատաղած բղավեցին: Տուման կարդում էր.

«...Նույն այդ Ֆրանչիշկոյի դիտավորությամբ ամբողջ ժողովրդի մեջ անվայել բաներ են տարածվում, և մորուքներ ածիլվում, և ծխախոտ ծխում՝ հնազույն բարեպաշտությունը վերջնականապես խորտակելու համար...»:

Ստրելեցներին որևէ բան հասկացնելու հույսը կտրելով, Գորդոնը ծառս արեց ձին ու ետ քաշված ամբոխի միջով արշավեց դեպի գետը: Տեսան, թե ինչպես ձիուց ցած թռավ գեներալիսիմուսի վրանի մոտ: Շուտով այնտեղ, արեգակի շեղ ճառագայթների տակ փայլատակեցին տերտերների շուրջառները: Այդ ժամանակ ստրելեցներն էլ հրաման տվեցին աղոթք անել մարտից առաջ: Տապճակով ծածկեցին հրետասայլը, ձի ջրելու լիքը դույլը դրեցին՝ իբր օրհնած ջուր ցողելու: Հանեցին գլխարկները: Բոլոր, ցնցոտիապատ տերտերները ջերմեռանդորեն սկսեցին աղոթել... «Տեր, շնորհիա մեզ հաղթել հագարացվոց և փարիսեցվոց, հեթանոսաց սյլադավան...»:

Մյուս կողմում, Շեինի վրանի մոտ, արդեն խաչն էին համբուրում, իսկ ստրելեցները, դեռ ծնկի չոքած, ձայնակցում էին տերտերներին: Խաչակնքելով առնում էին զենքերը, կրծում փամփուշտների ծայրը, լիցքավորում: Գզգզված փորուրարները ծալելով, տերտերները քաշվեցին սայլերի ետև: Այդ ժամանակ բլրի վրայից միանգամից կրակեցին բոլոր տասներկու թնդանոթները... Արկերը սուլելով թռան գումակի վրայով ու պայթեցին մենաստանի պարապի տակ, հողի կույտեր վեր հանելով....

Օվսել Ռժովը, Տուման, Զորինը, Երշը թրերն էին ճոճում.

— Եղբայրնե՞ր, կրծքերս դեմ արած, գրոհի՞ գնանք...

— Կրծքով գրավենք Մոսկվա՞ն...

— Վաշտ-վաշտ շարվի՞ր....

— Թնդանոթները, թնդանոթներն իջեցրե՞ք...

Խառնիխուռն վաշտեր կազմեցին ստրելեցները, վեր նետեցին գլխարկները, մոլեգնած բղավեցին նշանաբառը.

— Սերգի՞և: Սերգի՞և:

Գնդապետ Գոլոգնն հրամայեց իջեցնել նշանը, և մարտկոցը ոռմբակոծեց գումակը՝ տաշեղներ վեր թռան, թպրտացին ձիերը: Ստրելեցները պատասխանեցին հրացանային համազարկով ու չորս թնդանոթներից արձակված արկերով: Բլրի վրայից երրորդ անգամ կրակեցին գնդերի ամենախոնված տեղի վրա: Ստրելեցների մի մասը նետվեց դեպի ուղեփակոցներն ու կապանները, բայց այնտեղ նրանց դիմավորեցին Բուտիրյան և Լեֆորտյան գնդերը: Չորրորդ համազարկը թնդաց, և թանձր ծուխ պարուրեց բլրակը: Ստրելեցների վաշտերը խառնվեցին, իրար անցան, փախան: Զգելով դրոշները, զենքերը, կափտանները, գլխարկները, փախչում էին՝ ով ուր պատահի: Գետն անցած դրագունները արշավեցին հետապնդելու, և փախչողներին հավաքելով, ինչպես շները հոտն են խմբում, ետ քշեցին գումակ:

Նույն օրը գեներալիսիմուս Շեինը բանակատեղին տեղափոխեց մենաստանի պարապի տակ ու սկսեց հետաքննությունը: Ստրելեցներից և ոչ մեկը չմատնեց Սոֆյային, չհիշատակեց նրա նամակը: Լաց էին լինում, ցույց տալիս վերքերը, թափահարում ցնցոտիները, ասում էին, որ Մոսկվա էին գալիս կարիքի սարսափելի ցասումով, իսկ հիմա ուշքի են եկել ու ինքներն էլ տեսնում են, որ մեղավոր են:

Գելարանից կախված Տուման, մեջքը մտրակահարությունից ծվեն-ծվեն դարձած, ոչ մի բառ չասաց, միայն հարցաքննողների աչքերին էր նայում ատելությամբ լի հայացքով: Տումային, Պրոսկուրյակովին և ամենակատաղի հիսունվեց այլ ստրելեցների կախաղան բարձրացրին Մոսկվայի ճանապարհի վրա: Մնացածներին բանտարկեցին և մենաստաններն ուղարկեցին՝ փակի տակ...

15.

Այդքան խորասակ ու խաբեբա մարդիկ, ինչպիսիք Վիեննայում, կայսերական պալատում կային, ռուսներն իրենց օրում չէին տեսել... Պյոտրին շուրջով ընդունեցին, բայց որպես մասնավոր անձի: Լեոպոլդը սիրալիրությամբ եղբայր էր կոչում նրան, սակայն մենակ լինելիս, տեսակցության էր գալիս գաղտնի, կիսադիմակավորված: Թուրքիայի հետ հաշտության շուրջ եղած խոսակցությունների ժամանակ կանցլերը համաձայնում էր ամեն ինչի, ոչինչ չէր ժխտում, խոստանում էր ամեն բան, բայց երբ գործը հասնում էր վճռելուն, դուրս էր պրծնում, լպրծուն օձաձի պես... Պյոտրը նրան ասում էր. «Անգլիացիներն ու հոլանդացիները իրար են անցել առևտրական շահույթի պատճառով, ոչ բոլոր գործերում է հարկավոր լսել նրանց... Իսկ մեզ Երուսաղեմի պատրիարքն է գրել, որ պաշտպան կանգնենք տիրոջ դագաղին... Ուրեմն, մի՞թե կայսեր համար թանկ չէ տիրոջ դագաղը...»: Կանցլերը պատասխանում էր. «Կայսրը լիովին համամիտ է սույն վսեմ ու հարգարժան մտումներին, սակայն տասնհինգամյա պատերազմի վրա աննաշիվ այնքան գումարներ են ծախսվել, որ միակ արժանի գործը խաղաղությունն է ներկայումս...»:

«Խաղաղությո՞ւն, խաղաղությո՞ւն,— ասում էր Պյոտրը,— բայց ֆրանսիացիների դեմ պատրաստվում եք պատերազմել, սո՞ւլնն ինչպես հասկանանք»:

Բայց կանցլերն ի պատասխան ընդամենը նայում էր իր զվարթ, ջրագույն- չմասկացող աչքերով: Պյոտրն ասում էր, որ իրեն հարկավոր է թուրքական Կերչ ամրոցը և թող կայսրը, թուրքերի հետ դաշն կնքելիս, Կերչը պահանջի Մոսկվայի համար: Կանցլերը պատասխանում էր, որ անկասկած, տվյալ պահանջները հիացմունքով է ընդունում վիեննական ամբողջ արքունիքը, բայց ինքը Կերչի հարցում մեծ դժվարություններ է կանխատեսում, քանզի թուրքերը սովոր չեն ամրոցներ հանձնել առանց կռվի:

Մի խոսքով, Վիեննա այցելելուց խելքը գլխին ոչինչ չստացվեց: Անգամ դեսպաններին հանդիսավոր ունկնդրություն չտվեցին՝ հրավարտակներն ու նվերները հանձնելու համար: Դեսպաններն արդեն համաձայնել էին ասպետական սենյակներով գլխաբաց անցնել ու սահմանափակվել քառասունութ հասարակ քաղաքացիներով՝ նվերները տանելու համար, սակայն համառորեն պնդում էին, որ դահլիճ մտնելիս ավագ-սենեկապետը բարձրաձայն ազդարարի ցարական տիտղոսը, թեկուզև կրճատ, և որ ցարական նվերները կայսեր ոտքերի մոտ, գորգին չդրվեն. «Մենք ոչ չուվաշ ենք, ոչ էլ կայսերը հարկատու, այլ հավասարամեծ ժողովուրդ ենք...»: Պալատական մինիստրը ժպտում էր, ձեռքերը տարածում. «Սույն չլսված պահանջները բավարարել ամենևին հնարավոր չէ...»:

Այստեղ առավել դառնագին, քան Հոլանդիայում, իմացան, թե ինչ ասել է եվրոպական պոլիտի՛կը: Սրտնեղված, գնում էին օպերա, զարմանում: Այցելեցին քաղաքամերձ դղյակները: Ներկա եղան պալատական մեծ դիմակահանդեսին...

Պյոտրն արդեն միանգամայն պատրաստ էր Վենետիկ մեկնելու: Մոսկվայից, Ռոմոդանովսկուց և Վինիուսից նամակներ եկան Նոր Երուսաղեմի տակ ստորելեցների խռովության մասին:

«Մին հեռ կյոնիգ... Քո նամակը, գրված հունիս ամսու 17-ին, ինձ հանձնվեց, ուր գրում ես, ձերդ ողորմածություն, որ Իվան Միլոսլավսկու սերմը հասակ է առնում, որի համար խնդրում եմ ձեզ պինդ մընալ, և բացի սրանից սույն կրակը ոչնչով հանգցնել չի լինի...

Չնայած մեզ համար խիստ ափսոս է ներկա օգտակար գործը, սակայն ճշյալ պատճառով ձեզ մոտ կլինենք այնպես, որ մտքներովդ չի անցնի... Պիտեր...»:

16.

Ուսպենսկի տաճարում ժամերգությունից հետո խաչը համբուրելով, իշխան-կայսրը բեմ բարձրացավ, դարձավ բոյարներին, գավազանը զնգացրեց սալին.

— Մենք թագավոր Պյոտր Ալեքսեևիչը հանում է Մոսկվայի ճանապարհին գտնվել:

Եվ գնաց բազմության միջով շորորվելով: Նստեց ոսկեզօծ կառքը՝ սաժենանոց հասակով գազանատիպ երկու գայդուկ ետնամասին, դղրդացնելով անցավ Մոսկվայի միջով:

Այդ լուրը ամպրոպի պես պայթեց բոյարների գլխին: Մեկուկես տարի խաղաղ նստել, ընտելացել էին հանգիստ ու բարեկեցիկ կյանքին... Թևին տված գալի՞ս է կտրիճ բազեն: Ուրեմն, մնաք բարով քուն ու դադար, նորից դիմակ հագիր: Հապա պատասխան տա՛լը ստորելեցյան խռովությունների համար, թաթարների դեմ մղած անհաջող պատերազմի համար, դատարկ գանձարանի համար, բոլոր գործերի համար, որ նոր-նոր պատրաստվում էին սկսել, բայց դեռ չէին սկսել: Փորձա՞նք է, տեր աստված, փորձա՞նք:

Ոչ հանգստի ժամանակ էր, ոչ դադարի: Օրական երկու անգամ հավաքվում էր պետական մեծ Դուման: Բոլոր վաճառականների գործակատարներին հրամայեցին խանութները փակել, գնալ Մեծ գանձարանի վարչատուն, պղնձյա դրամը հաշվելու՝ երեք օրում ավարտելու համար... Կանչեցին ատյանների աստիճանավորներին, ի սեր Քրիստոսի խնդրեցին ատյաններում եղած խառը գործերը մի կերպ կարգի գցել, ցածրատիճան փոխատեղավորներին ու գրագիրներին այդ օրերը գիշերելու գնալ չէին թողնում, աննազանդների ոտքերը կապում էին սեղաններից...

Բոյարները պատրաստվում էին ցարական ընդունելություններին: Ոմանք սնդուկներից հանում էին գերմանական ատելի հագուստները և ցեցի դեմ անանուխ ցանած կեղծամները: Հրամայում էին ճաշասենյակներից հավաքել ավելորդ արբապատկերները, պատերից կախ տալ եղած-չեղած հայելիներն ու նկարները: Արքայորդու և Պյոտրի սիրելի քրոջ՝ Նատալյայի հետ Եվդոկիան հապճեպ վերադարձավ Տրոիցեից:

Սեպտեմբերի չորսի իրիկնամուտին Իշխան- կայսրի տան երկաթյա դարպասի մոտ երկու փոշեկոլոլ կառք կանգնեցին: Դուրս եկան Պյոտրը, Լեֆորտը, Գոլովինը և Մենշիկովը: Թակեցին դարպասը: Սարսռազդու որձ շները ոռնացին բակում: Դարպասը բացող զինվորը չճանաչեց ցարին: Պյոտրը բռթեց նրա կուրծքն ու մինիատրների հետ կեղտոտ բակի միջով գնաց դեպի ցածրիկ, գնդերի վրա հյուսածո պուներով, կապարաթերթով պատված առմուտքը, որի շեմին նստած էր վարժեցրած արջը՝ շղթայակապ: Վերևից, պատուհանի շրջանակը բարձրացնելով, գլուխը հանեց Ռոմոդանովսկին՝ նրա ուռած դեմքը ցնցվեց ուրախությունից:

17.

Ռոմոդանովսկու մոտից Պյոտրը Կրեմլ գնաց: Եվդոկիան արդեն գիտեր ժամանման մասին և ամուսնուն էր սպասում զուգված, շպարված: Անթեք ու կարճ բոբանակը հագած Վորոբյիխան, աչքերը կըկոցելով ու ժպտալով, թագուհու կոդաշենքի մուտքի առաջ ճանփան էր բռնել: Բոպեն մեկ Եվդոկիան պատուհանից Վորոբյիխային էր նայում, որի վրա դուռն ճեղքից լույս կար ընկած, ու սպասում էր, թե պառավը երբ է թափ տալու թաշկինակը: Հանկարծ Վորոբյիխան ներս ընկավ ննջասենյակ.

— Եկավ... Ուղիղ արքայադստեր մուտքի մոտ իջավ... Վազ տամ, իմանամ...

Եվդոկիայի գլուխն անմիջապես զնգաց՝ վատ բան կանխազգաց: Ուժասպառ նստեց: Դրսում աշնան աստղային գիշերն էր: Մեկուկես տարվա բացակայության ընթացքում մի տող նամակ չէր գրել: Եկել ու իսկույն իրեն գցել էր Նատալյայի մոտ... Մատները կոտրատեց... «Լավ-վատ ապրում էինք աստծո տված կյանքով, մշտապես ուրախ: Եկավ տուն ջերմ»:

Վեր թռավ... Իսկ ո՞ւր է Ալյոշենկան: Նրա հետ վազ տա հորն ընդառաջ... Դուռն մեջ բախվեց Վորոբյիխային... Պառավը բարձրաձայն մրթմրթաց.

— Իմ աչքով տեսա... Մտավ Նատալյայի մոտ... Գրկեց, քույրը հո լաց չէր լինում... Բայց նրա դեմքը խիստ էր... Երեսները դողում էին... Բեխերը ոլորած էր վեր: Կափտանը դրսի էր, մոխրագույն, գրպանից թաշկինակն ու ծխելու բանն էր ցցված, պապոգները մեծ-մեծ, մեր կարը չէր...

— Անխե՞լք, ասա ինչ եղավ, անխե՞լք...

— Ու ասեց Նատալյային. թանկագին քույրիկս, ուզում եմ տեսնել իմ միակ զավակին... Ու թե ոնց արեց Նատալյան, տեղնուտեղը բերեց Ալյոշենկային...

— Օձ է Նատաշկան, օձ,— շրթունքները դողացնելով, շշնջաց Եվդոկիան:

— Ու գրկեց Ալյոշենկային, սեղմեց կրծքին ու սկսեց պաչպչել,

սիրել... Ու հենց ցած դրեց, դրսից բերած գլխարկը քաշեց աչքերին ու ասեց. «Պրեոբրաժենսկոյե կգնամ քնելու...»:

— Ու գնա՞ց: (Եվդոկիան բռնեց գլուխը):

— Գնաց, սիրուն թագուհիս, անմեղ հրեշտակս, գնաց, գնաց, կամ քնելու գնաց, կամ էլ՝ Գերմանական արվարձան...

18.

Դեռ վաղ առշալույսից դեպի Պրեոբրաժենսկոյե ձգվեցին զանազան կառքեր, հեծյալ խմբեր... Բոյարները, գեներալները, գնդապետները, երևելի բոյոր ազնվականները, դումայական ատենավորները շտապում էին գլուխ խոնարհելու վերստին տեր կանգնած արքային: Լեփ-լեցուն նախասրահներում հրմշտվելով, տագնապած հարցնում էին. «Հը՞, ի՞նչ կա: Ինչպե՞ս է թագավորը...»: Տարօրինակ քմծիծաղով նրանց պատասխանում էին. «Թագավորն ուրախ է...»:

Նա ընդունում էր ընդարձակ, նորոգված պալատում, նստած երկարուկ սեղանի մոտ, որը ծանրաբեռնված էր տափաշշերով, բաժակներով ու գավաթներով, սառը ուտեստեղենի մատուցարաններով: Արևի շողերի տակ գալարվում էր ծխախոտի ծուխը: Ցարի արտաքինը ռուսական չէր՝ նորաբ մահուդից օտարերկրյա կաֆտան, վզին՝ կանացի ժանյակ, նիհարած էր, վեր ցցած բարակ բեխերով, մետաքսաթել կեղծամով, ռուսավարի չէր նստած. բրդյա գուձաթելից գործած գուլպաներ էր հագել, սի ոտքը ծալել աթոռի տակ:

Երկար մուշտակներով, մորուքներն առաջ ցցած, աչքերը չոռած, մարդիկ մոտենում էին ցարին, խոնարհվում ըստ աստիճանի՝ մինչև գետին կամ գոտկաչափ, և նոր միայն Պյոտրի ոտքերի մոտ նկատում էին երկու պիղծ գանգուններին՝ Թոմոսին և Սեկային, ոչխար խուզելու մկրատները բռնած:

Ողջույնն ընդունելով, Պյոտրը ոմանց բարձրացնում ու համբուրում էր, մյուսների ուսին թփթփացնում և յուրաքանչյուրին ասում էր զվարթաձայն.

— Տես է՞, ինչ մորուք է աճեցրել: Տեր իմ, Եվրոպայում մորուքի վրա ծիծաղում են... Էս ուրախության առիթով մորուքդ ինձ չե՞ս պարգևի...

Բոյարին լիներ, թե վոյեվոդա, ծեր թե ջահել, ապուշ կտրած կանգնում էին, թևքերը տարածելով... Թոմոսն ու Սեկան, ձգվելով ոտնաթաթերի վրա, խուզի մկրատներով կտրում էին սանրած, խնամած մորուքները: Հինավուրց գեղեցկությունն էր թափվում ցարի ոտքերի տակ: Այլանդակված բոյարինը դեմքը ծածկում էր ձեռքով, սակայն ցարն անձամբ նրան էր մատուցում երեք անգամ քաշած պղպեղոլու փոքր բաժակը.

— Խմիր մեր կենացը, երկար կյանք ունենանք... Սամսոնի մազերն էլ կտրեցին... (Ծողացող հայացքը սահեցնում էր պալատականների վրայով, մատը բարձրացրած:) Մորուք ածիլելը որտեղի՞ց է առաջացել: Կանացի սեռին է դուրեկան՝ սույնը Փարիզից եկած նի-

նի... Հա՛, հա՛ (երկու անգամ՝ անկենդան քահ-քահ։) Բայց ափսոս էր մորուքդ, կասես դնեն դագաղիդ մեջ, էն աշխարհում տեղը կգա...

Խառնիալաց լիներ կամ զայրացած, բղավեր, քաշքշեր մորուքները, ինչով ասես սպասնար՝ այդքան սարսափելի չէր լինի նա... Անընդունելի էր, ամբողջապես օտար, փոխված՝ այնպես էր ժպտում, որ մարդկանց սիրտն էր քարանում...

Սեղանի մյուս ծայրին իրար էր անցել լեհ վարսավիրը, խուզած մորուքները օճառելով, սափրում էր... Անիծյալը հայելի էր հրամցնում, որ այլանդակված բոյարինը նայի իր մերկացած, մանկական ծուռտիկ բերանով, խայտառակ դեմքին... Հենց այդտեղ էլ, սեղանի շուրջ նստած, լալիս էին արդեն սափրված ու հարբած մարդիկ... Միայն հագուստներով էին նանուչում՝ գեներալիսիմուս Շեինին, բոյարին Տրոյեկուրովին, իշխաններ Դոլգոռուկիներին, Բելոսելսկիներին, Մատիսլավսկիներին... Ցարը երկու մատով բռնում էր սափրվածների թշերից.

— Հիմա թեկուզ կայսեր պալատը գնաս՝ ամոթ չի լինի...

19.

Պյոտրը նաշելու գնաց Լեֆորտի մոտ։ Սրտակից ընկերը՝ Ֆրանցը, կեսօրվա դեմ հագիվ էր արթնացել և հորանջում էր, նստած ընդարձակ ու արևաճայաց, ոսկեզօծ կաշվով պատված ննջասենյակում, հայելու դիմաց։ Ծառաներն իրար էին անցել նրա չորսբոլորը՝ հագցնելով, գանգրացնելով, դիմափոշի ցանելով։ Գորգի վրա կատակներ էին անում Համբուրգից բերված գանանն ու գանան կինը։ Կառավարիչը, ախոռապետը, ծառայապետը, պահակախմբի պետը պատկառանքով կանգնած էին պատշաճ հեռավորության վրա։ Ներս մտավ Պյոտրը։ Ֆրանցի ուսերը ցած սեղմեց, որ վեր չկենա, նայեց հայելու մեջ նրա արտացոլմանը.

— Հետաքննություն չեն արել, հանցավոր թողտվություն ու խաղ են արել... Շեինը նոր պատմեց, հիմարն ինքն էլ չի հասկանում, որ թելը ձեռքին է եղել... Ստրելեց Ֆալալեևին երբ տարել են կախելու, բղավել է զինվորներին. «Գայլաձկանը կերաք, բայց ատամները մնացին...»։

Պյոտրի խենթ աչքերը սնացան հայելու մեջ։ Լեֆորտը, շրջվելով, մարդկանց հրամայեց դուրս գալ...

— Ֆրանց... Խայթը պոկված չէ... Այսօր բոյարներին էի սափրում, ամբողջ ներսս եռ էր գալիս... Միտքս այս արնախում մորեխներից չի կտրվում... Գիտեն, ամեն ինչ գիտեն՝ սուս են մնում, թաքնվել են... Սովորական խռովություն չի եղել, իրենց կանանց մոտ չեն եկել... Սոսկալի գործեր են պատրաստվել Էստեղ... Ամբողջ պետությունը փտախտով է վարակված... Փտող ու նեխող մասերը երկաթով է պետք խարանել... Բոյարներին, մորուքավորներին, բոլորին արյան կապերով պիտի կապել... Միլոսլավսկու սե՛րմը։ Ֆրանց, հենց այսօր հրամանագրեր ուղարկիր. բանտերից ու մենաստաններից ստրելեցներին բերեն Պրեոբրաժենսկոյե...

20.

Ճաշի ժամանակ կարծես թե նորից գվարթացավ։ Ոմանք նկատեցին նրա մի նոր հատկանիշը՝ խավար, ակնապիշ հայացքը. զբոսիցի ու կատակների արանքում հանկարծ լռելով, աչքերը հառում էր մեկնումեկի վրա՝ անթափանց, քննող, անմարդկային հայացքով... Ցնցում էր ոռնգն ու նորից ծիծաղում քթի տակ, խմում, քրքջում փայտանայն...

Օտարերկրացիները՝ գինվորականներ, ծովայիններ, ինժեներներ, նստած էին ուրախ, ազատ շունչ էին քաշում։ Ռուսների համար ծանր էր ճաշկերույթին նստելը։ Երաժշտություն կար, տիկնանց էին սպասում պարերի համար։ Ալեքսաշկա Մենշիկովը նայում էր Պյոտրի՝ սեղանին դրված ձեռքերին. սեղմվում ու թուլանում էին։ Լեֆորտը զանազան արտասովոր դեպքեր էր պատմում ֆրանսիական թագավորի սիրուհիների մասին։ Աղմուկը շատանում էր։ Հանկարծ բարձր ու աքլորաձայն բղավելով, Պյոտրը վեր թռավ, սեղանի վրայից կատաղած կռացավ Շեինի վրա.

— Դավաճա՞ն, դավաճա՞ն։

Աթոռը դեն շպրտելով, դուրս վազեց։ Հյուրերն իրար անցան, ոտքի ելան։ Լեֆորտը դեսուդեն էր ընկել, մարդկանց հանգստացնելով։ Երաժշտությունը թնդում էր վերնասրահից։ Նախասենյակում հայտնվեցին առաջին կանայք, ուղղելով կեղծամներն ու զգեստները... Բոլորի հայացքն ուղղվեց կապտաչ, փարթամ, մոխրագույն ու բարձր սանրվածքով մի գեղեցկուհու վրա, մետաքսյա, ոսկեկար ժանյակներով զգեստը ճոխ էր, հոլանի ուսերն ու ձեռքերը ճերմակ և ծայրաստիճան գայթակղիչ։ Ոչ մեկին չնայելով, սրահ մտավ, անշտապ ու վարժ ծալեց ծունկն ու այդպես էլ կանգնած էր, վեր նայելով, վարդը ձեռքին։

Օտարերկրացիները հարցնում էին փութով. «Ո՞վ է»։ Պարզվեց, որ մեծահարուստ վանառական Բրովկինի դուստրն է՝ Ալեքսանդրա Իվանովնա Վոլկովան։ Լեֆորտը, նրա մատների ծայրերը համբուրելով, պարի հրավիրեց։ Պտտվեցին զույգերը, ոտքերը քստքստացնելով և գլուխ խոնարհելով միմյանց։ Ու կրկին՝ իրարանցում. ոռնգերը ուռեցրած, ետ եկավ Պյոտրը, նրա բիբերը գտան Շեինին, հանեց սուսերն ու թափով զարկեց սեղանին, ետ ընկած գեներալիսիմուսի դեմքի առաջ։ Ապակու կտորտանք ցրիվ եկավ։ Մոտ վազեց Լեֆորտը։ Պյոտրը արմունկով խփեց նրա երեսին, ու երկրորդ անգամ վրիպեց նրա սուսերը։

— Քո ամբողջ գունդը, քեզ, քո բոլոր գնդապետներին կտոր-կտոր կանեմ, գող, բ... վատակ, տխմար...

Ալեքսաշկան թողեց պարընկերուհուն, համարձակ մոտեցավ Պյոտ-

րին, սուսերից չպաշտպանվելով, գրկեց նրան, ակամայից ինչ-որ բաներ շշնջաց: Սուսերն ընկավ, Պյոտրը թռչացրեց Ալեքսաշկայի կեղծամին կպած.

— Սրիկաներ, ա՜խ, սրիկաներ... Գնդապետի կոչումնե՞ր է ծախել նա...

— Բան չկա, մին խեռց, հանգստացիր, հունգարական խմիր:

Հանգստացավ: Հունգարական գինի խմեց, որից հետո մատով սպառնաց Ծեփնին: Մոտ կանչեց Լեֆորտին, համբուրեց նրա ոտած բիթը.

— Իսկ ո՞ր է Աննան: Հարցրե՛լ ես: Ողջ և առո՞ղջ է:— Ծոմոելով սեղմած բերանը, նայեց բարձրադիր լուսամուտներից երևացող նարնջագույն մայրամուտին...— Սպասիր, ինքս կգնամ մոտը...

Այրի Մոնսի տնակում վազվզում էին՝ մոմերն առած, դռներն էին շրխկացնում, թե՛ այրին, թե՛ աղախինները ուժասպառ էին եղել կատարված փորձանքից. Անխենը բարկացել էր, որ ներքնազգեստը վատ էին օսլայել, ստիպված էին օսլայել ու նորից արդուկել: Աննան նստած էր վերևում, շպարազարդ կեղծամով, բայց չհագնված, պուդրոմանտելով, և գուլպան էր կարում: Այդպես տեսավ նրան Պյոտրը, վեր վազելով վախեցած այրու և աղախինների մոտով:

Անխենը ելավ, գլուխը հետ գցեց, թույլ հառաչեց: Պյոտրն անհագորեն գրկեց նրան՝ կիսամերկ էր, սիրելի: Ցածրառաստաղ սենյակում ուժգին բաբախում էր Անխենի սիրտը:

21.

Շղթայակապ ստրելեցներին բոլոր տեղերից բերում էին Պրեոբրաժենսկոյե, բանտարկում խրճիթներում ու նկուղներում:

Սեպտեմբերի վերջին սկսվեց հետաքննությունը: Հարցաքննում էին Պյոտրը, Ռոմոդանովսկին, Տիխոն Ստրեշնևը և Լև Կիրիլովիչը: Ամբողջ գիշեր խարույկներ էին վառվում արվարձանում, խրճիթների առաջ, ուր խոշտանգումներն էին կատարվում: Տասնչորս տանջարաններում ստրելեցներին գելարան էին հանում, ծեծում մտրակներով, իջեցնում ու քարշ էին տալիս բակերը, պահելով վառվող ծղոտի վրա: Օդի էին տալիս խմելու, որ մարդիկ կենդանանան, ու նորից գելարան էին հանում՝ ձեռքերը ոլորած, դուրս կորզելով գլխավոր հրահրողների անունները:

Երկու շաբաթ անց հաջողվեց հետքը բռնել... Օվսեյ Ռժովը, ցավին չդիմանալով ու ինքն իրեն խղճալով, երբ սկսեցին շիկացած աքցանով կողերը ջարդել, ասաց Սոֆյայի նամակի մասին, որ նրա հրամանով էին գալիս Նովոդևիչյե, արքայադուստրը զահին նստեցնելու: Օվսեյի եղբայր Կոնստանտինը երրորդ խոշտանգմանն ասաց, որ իրենք՝ ստրելեցները, նամակը թաքցրել են Նոր Երուսաղեմի միջնաշտարակի տակ, թրիքի մեջ: Բացահայտվեց արքայադուստր Մարֆայի, գաճաճ կանանց՝ Ավդոտյայի ու Վերկայի մասնակցությունը, վերջինս Սոֆյայի մերձավոր աղախինն էր:

Սակայն խոշտանգումներին խոսողների թիվը քիչ էր: Ստրելեցներն ընդունում էին միայն զինված խռովության, բայց ոչ այլ մտադրությունների մեղքը... Այդ ամենի համառության մեջ Պյոտրը զգաց իր հանդեպ եղած չարության հանակ ուժը....

Գիշերները նա տանջարաններում էր անցկացնում: Ցերեկները զբաղված էր օտարերկրացի ինժեներների և վարպետների հետ իր գործերով, զորատեսերով: Երեկոյան դեմ գնում էր Լեֆորտի, որևէ դեսպանի կամ գեներալի մոտ՝ ճաշելու: Ժամը տասին մոտ, ծիծաղի, երաժշտության, իշխան-պապի խեղկատակությունների արանքում ելնում էր սեղանից՝ ուղղված, գլուխն ուսերի մեջ քաշած, խնջույքի սրահից ուղիղ գնում էր մութ բակը և երկանիվ կառքով, սառնաշունչ քամուց դեմքը բրդյա վզնոցով փաթաթած, ասում ճանապարհներով Պրեոբրաժենսկոյե գնում, որը հեռվից երևում էր խարույկների աղոտ կրակներից...

Կայսերական դեսպանության քարտուղարներից մեկը օրագրում գրել է այդ օրերին իր տեսածը, նաև, թե ինչ են պատմել իրեն...

«...Դանիական դեսպանորդի աստիճանավորները,— գրել է նա,— հետաքրքրասիրությունից դրդված, գնացել են Պրեոբրաժենսկոյե: Ծրջել են բանտային տարբեր շինություններում, գնացել այն կողմն, ուր զարհուրելի բղավոցները մատնացույց են արել առավել տիրապետի ողբերգության վայրը... Սարսափից սոսկումնսոսար, նրանք արդեն հասցրել են տեսնել երեք խրճիթներ, ուր հատակի վրա, անգամ նախասենյակներում արյան լճակներ են եղել, երբ նախկինից սարսռազդու բղավոցները և անսովոր ցավագին տնքոցները նրանց ցանկությունն են բորբոքել տեսնել չորրորդ խրճիթում կատարվող սարսափները...

Սակայն ներս մտնելուն պես, սարսափահար դուրս են շտապել, որովհետև դեմ են առել ցարին և բոյարներին: Մերկանդամ, առաստաղից կախված մարդու դիմաց կանգնած ցարը դարձել է ներս մտնողներին, ըստ երևույթին խիստ չարացած, որ օտարերկրացիներն իրեն տեսել են նման զբաղմունքի վայրում: Նրանց ետևից դուրս է թռել Նարիշկինը, հարցրել. «Ովքե՞ր եք: Ինչի՞ համար եք եկել...»: Եվ քանի որ աստիճանավորները լռել են, կարգադրել է անմիջապես գնալ իշխան Ռոմոդանովսկու տուն... Սակայն իրենց անձեռնմխելի զգացող օտարերկրացիները ուշադրություն չեն դարձրել այդ բավական հանդուգն հրամանին: Բայց նրանց ետևից արշավել է մի սպա, մտադիր շրջանցել ու կանգնեցնել: Այնինչ ուժը աստիճանավորների կողմն է եղել՝ շատվոր և ոգով առույգ... Այդուհանդերձ, նկատելով, որ սպան մտադիր է վճռական միջոցների դիմել, փախել են անվտանգ մի տեղ.... Հետագայում իմացվեց այդ սպայի անունը, որ Ալեքսաշկա է, ցարի սիրելին է ու խիստ վտանգավոր...»:

«Դրամական նոր հարկ է սահմանված՝ վարչատների յուրաքանչյուր ծառայողից հարկ է գանձվելու, համաձայն վարած պաշտոնի...

Երեկոյան Լեֆորտի պալատում, զանազան զվարճալիքներ տեղի ունեցան արքայական ճոխությամբ: Հավաքվածները դիտեցին հրավառության տեսարանը: Ցարը, որպես կրակի մի ոգի, վազում էր տերևաթափված այգում և վառում կայծարձակ շատրվաններն ու հրթիռաշարերը: Արքայազն Ալեքսեյը և արքայադուստր Նատալյան նույնպես ակնհատես էին սույն հրավառությանը, միայն թե հատուկ սենյակից... Կայացած պարահանդեսին գեղեցկագույն կին միաձայն ճանաչվեց Աննա Մոնսը, որն, ասում են, թե փոխարինել է ցարի օրինական կնոջը, ում նա պատրաստվում է հեռավոր մենաստան ուղարկել...»:

«...Հոկտեմբերի տասին, ձեռնարկելով մահապատժի ի կատար ածումը, ցարը հրավիրեց օտարերկրյա բոլոր դեսպաններին: Պրեոբրաժենսկոյե արվարձանի զորանոցային խրճիթներին կից մի բարձրադիր հրապարակ կա: Մահապատժի վայրն է դա՝ սովորաբար անարգանքի սյուններն են կանգնած այդտեղ, մահապատժի ենթարկվածների գլուխները կատարներին ցցված: Այդ բլրակն օգակել էր գվարդիական գունդը, կատարելապես զինված: Շատ էին տանիքներին բարձրացած և դարպասների գլուխներին նստած մոսկովցիները: Այն օտարերկրացիներին, ովքեր սովորական դիտողների մեջ էին, մահապատժի վայրին մոտ չէին թողնում:

Այնտեղ արդեն կառափնարանները պատրաստ էին: Սառնաշունչ քամի էր փչում, բոլորի ոտքերը մրսում էին, ստիպված էին երկար սպասել... Վերջապես եկավ Նորին արքայական մեծությունը կառքով, հիշատակյալ Ալեքսաշկայի հետ, ու կառքից դուրս գալով կանգնեց կառափնարանների մոտ: Մինչ այդ դատապարտվածների բազմությամբ լցվեց չարագույժ հրապարակը: Գրագիրը, բարձրանալով հրապարակի տարբեր տեղերում նստարանի վրա, որը մի զինվոր էր տանում նրա ետևից, ժողովրդի համար կարդում էր խողովարարների վրա կայացված դատավճիռը: Ժողովուրդը լուռ էր, և դահիճն սկսեց իր գործը:

Տարաբախտները պիտի պահպանեին կարգը, նրանք մահապատժի էին գնում ճերթով... Նրանց դեմքերի վրա նկատելի չէր ոչ տրխրություն, ոչ մուտալուտ մահվան սարսափ: Ես արիություն չեմ համարում նման անհաղորդությունը, դա նրանց հոգու ամրությունից չէր, այլ միայն նրանից, որ վերհիշելով դաժան խոշտանգումները, այլևս թանկ չէին գնահատում կյանքը, ապրելը նողկալի էր նրանց համար...

Մեկին կառափնարան էր ուղեկցում կինը երեխաների հետ՝ նրանք սուր ճիչեր էին արձակում: Իսկ դատապարտվածը հանգիստ էր, կընոջը և երեխաներին հիշատակ թողեց ձեռնոցները և գույնզգույն թաշկինակներ, ու գլուխը դրեց կառափնարանին:

Մեկ ուրիշը, ցարի կողքով մոտենալով դահիճին, բարձրաձայն ասաց.

«Մի կողմ քաշվի, արքա, ես էստեղ կպառկեմ...»:

Ինձ պատմեցին, որ ցարն այդ օրը գեներալ Գորդոնին զանգատվել է ստրելեցների համառությունից, որոնք նույնիսկ կացնի տակ չեն կամեցել ընդունել իրենց մեղքը: Իսկապես, ռուսները չափազանց համառ են...»:

«Նովոդևիչյեի մենաստանի մոտ երեսուն քառանկյունի կախաղաններ են կանգնեցված, որոնցից 230 ստրելեց են կախված: Երեք պարագլուխների, որոնք խնդրագիր էին հանձնել արքայադուստր Սոֆյային, կախել են մենաստանի պարսպի վրա, Սոֆյայի խցի հենց լուսամուտների տակ: Մեջտեղում կախվածի անկենդան ձեռքերի մեջ դրել են խնդրագիրը»:

«Նորին արքայական մեծությունը ներկա է գտնվել խողովությանը մասնակից տերտերների մահապատժին: Նրանցից երկուսի ձեռքերն ու ոտքերը դահիճը փշրել է երկաթյա լինգով, ապա կենդանի-կենդանի անվահար են արվել, երրորդին գլխատել են: Դեռևս կենդանի տերտերները չարացած 22ճչոցով բողոքել են, որ երրորդը գլուխն ազատել է այդքան արագ կատարվող մահով...»:

«Ըստ երևույթին ցանկանալով ցույց տալ, որ քաղաքի պարիսպները, որոնցից ներս թափանցել էին կամենում ստրելեցները, սրբազան են և անձեռնմխելի, ցարը հրամայել է գերաններ խցկել մոսկովյան պարսպի հրակնատների արանքում: Յուրաքանչյուր գերանից երկուական խողովարար են կախված: Նման եղանակով այդ օրը մահապատժի է ենթարկված ավելի քան երկու հարյուր մարդ... Հազիվ թե այդչափ անսովոր ցանկապատ երբևիցե եզերած լինի որևիցե այլ քաղաք, որպիսին ներկայացնում էին ամբողջ Մոսկվայի եզերքով կախված ստրելեցները»:

«...Հոկտեմբերի 27-ը... Այս մահապատիժը խիստ զանազանվում էր նախորդից: Ի կատար ածվեց զանազան ու համարյա աներևակայելի եղանակներով... Երեք հարյուր երեսուն հոգի միանգամից արյունով հեղեցին Կարմիր հրապարակը: Այդ ահռելի մահապատիժը կարող էր ի կատար ածվել միայն այն պատճառով, որ բոլոր բոյարները, ցարական Դումայի բոլոր սենատորները, ատենավորները պիտի դահիճի գործ ստանձնեին՝ թագավորի հրամանով: Նրա կասկածամտությունը խիստ սրված է. թվում է, թե բոլորին կասկածում է մահապատժի ենթարկվող խողովարարներին կարեկցելու մեջ: Բոլոր բոյարներին արյան կապերով կապելուն է հետամուտ եղել նա... Այդ բոլոր բարձրատոհմիկ պարոնայք հրապարակ էին ներկայանում, վաղորոք դողալով առաջիկա փորձությունից: Յուրաքանչյուրի դիմաց մեկական հանցագործ կանգնեցրին: Յուրաքանչյուրը պիտի դիմացը կանգնածի մահավճիռն ասեր ու ի կատար ածեր, սեփական ձեռքով գլխատելով դատապարտյալին:

Ցարը նստած էր պալատից բերված բազկաթոռին և չոր-չոր նա-

յում էր այդ զարհուրելի կոտորածին: Նա վատառողջ էր՝ ատամնացավից երկու այտերն ուռած էին: Զայրանում էր, երբ տեսնում էր, որ դահիճի պարտականություններին անսովոր բոյարների մեծ մասի ձեռքերը դողում են....

Գեներալ Լեֆորտը նույնպես հրավիրված էր դահիճի պաշտոն ստանձնելու, սակայն հրաժարվել էր, պատճառ բռնելով, որ իր հայրենիքում դա ընդունված չէ: Երեք հարյուր երեսուն մարդ, համարյա միաժամանակ նետված կառափնարանների վրա, գլխատվեցին, բայց մի քանիսը ոչ միանգամից. Բորիս Գոլիցինն իր զոհի ոչ թե վզին, այլ մեջքին հարվածեց: Այդպիսով համարյա երկու մասի կիսված ստրելեցը անասելի տանջանքներ պիտի կրեր, եթե չլիներ Ալեքսանդրը, որը ճարպկորեն բանացնելով կացինը, շտապեց գլխատել թշվառականին: Նա պարծեցել է, որ այդ օրը երեսուն գլուխ է կտրել: Դշխան-կալսրը սեփական ձեռքով չորս հոգու է մեռցրել: Մի քանի բոյարների ստիպված եղան ձեռքերից բռնած հեռացնել, այնքան որ գունատ էին և ուժասպառ»:

Ամբողջ ձմեռ շարունակվեցին խոշտանգումներն ու մահապատիժները: Ի պատասխան, խռովություններ բռնկվեցին Արխանգելսկում, Աստրախանում, Դոնի ափերին և Ազովում: Բանտերը լցվում էին, և հարյուրավոր նոր դիակներ էր ճոճում բուքը մոսկովյան պարիսպների վրա: Սարսափը պատել էր ամբողջ երկիրը: Հինը պատսպարվեց մութ անկյուններում: Վերջանում էր բյուզանդական Ռուսիան: Մարտյան քամիների միջից բալթիական ափերին առևտրական նավերի ուրվագծեր էին պատկերվում:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1.

Աղոտ արշալույսի մեջ աքաղաղներն էին կանչում: Դանդաղ բացվում էր փետրվարյան առավոտը: Ոչխարենու քուրքերի փեշերի մեջ խճճվելով, գիշերապահակները հավաքում էին փողոցների ուղեփակոցները: Վառարանների ծուխը սփռվում էր գետնի վրա, ծուխումտ նրբանցքներում նոր թխած հացի բույր տարածվեց: Հեծյալ պահախումբն անցավ, հարցնելով պահակներից՝ գիշերը գողություն եղե՞լ է: «Ո՞նց կարող է չլինել,— պատասխանեցին պահակները,— չորս կողմը թափառում են...»:

Դժկամությամբ էր արթնանում Մոսկվան: Սրթսրթալով ու տրնքալով, ժամհարները զանգակատներն էին բարձրանում, սպասելով, թե երբ է զարկելու Իվան Մեծ զանգը: Ծանր ու դանդաղ, մշուշոտ փողոցների վրա լողում էր մեծ պապի ղողանջը: Ճոճոացին ու բացվեցին եկեղեցիների դռները: Մատները թքոտելով, սարկավագը չմարող կանթեղների այրուքն էր պոկում: Մուրացկանները, անդամալույծներն ու պակասավորները, քարշ գալով, նստոտում էին եկեղեցիների առաջ: Անոթի փորով կովշտում էին կիսաձայն: Խաչակնքելով, իրանները էին ճոճում գավթի խավարից երևացող տաք մոմերի ուղղությամբ:

Ոտաբոբիկ ու ոստոստում, մի գիժ էր վազում՝ գարշահոտ, մեջքը բաց, շաղգամի փրերը դեռ ամառվանից մազերի մեջ մնացած: Գավթում նստածները գարմանքից քարացան՝ կրոնախնի ձեռքին հում մսի կտոր կար... Ուրեմն, նորից մի այնպիսի բան է ասելու, որ Մոսկվայով մեկ սկսեն փսփսալ: Նստեց ուղիղ գավթի առաջ, ձգնկայնի պնչերն իջեցրեց ծնկների վրա, սպասում էր մինչև շատ ժողովուրդ հավաքվի:

Կամաց-կամաց լուսացավ փողոցը: Ծրխկում էին դռնակները: Գնում էին առևտրականները, գոտիները պինդ ձգած: Խանութնեին էին բացում՝ նախկին կորովը չկար: Քամաբեր ամպերի տակ ագռավների երամներ էին թռչում: Ամբողջ ձմեռ ցարը հում մսով կերակրեց թռչուններին՝ անթիվ անհամար ագռավներ եկան-հավաք-

վեցին, աղտոտեցին բոլոր գմբեթները: Մուրացկանները գավիթներում խոսում էին զգուշացած. «Պատերազմ է լինելու, համաձարակ: Ասված է, որ երեքուկես տարի է տևելու սուտ թագավորությունը...»:

Անցած տարիներին Կիտայ-գորոդում այս ժամերին աղմուկ ու ժխոր էր լինում, հրմշտոց: Զամոսկվորեչյեից ցորենի գումակներ կգային, Յարոսլավլի ճանապարհով թռչնեղեն ու ցախ կբերեին, Մոժայսկի ճանապարհով վաճառականները կգային եռաձի սահնակներով: Հիմա որ տեսնես՝ մի երկու սպրդի կապերը քանդած, նեխած ապրանք են ծախում: Խանութների կեսը մնված է: Իսկ արվարձաններում և Մոսկվա գետից այն կողմ՝ ամայություն: Ստրելեցների բակերում տանիքներն էլ են պոկած:

Եկեղեցիները նույնպես դատարկվում էին: Անագին ժողովուրդ սկսեց երես դարձնել. ուղղափառ տերտերներն իրենց ապրուստով ընկան, միացան նրանց, ովքեր ամբողջ ձմեռ Մոսկվայում գլուխ էին թոցնում ու կախաղան բարձրացնում: Այս կամ այն եկեղեցում տերտերը չէր սկսում ժամերգությունը, մորուքը տնկած, գոռում էր ժամհարի վրա. «Մեծը խփիր, տխմարի գլուխ, ուժեղ խփիր...»: Բայց զանգեր հնչելն, թե չհնչեին, ժողովուրդը կողքով էր անցնում, չէր ուզում եռամատ խաչակնքել: Աղանդավորները սովորեցնում էին. «Պտղունցը հայհոյանշան է, ցուցամատ ու միջնամատ բաց արա, բութդ մտցրու արանքը: Հայտնի է, թե ով է պվորեցնում հայհոյանշանով խաչ անել»:

Այնուամենայնիվ, փողոցներում շատացան մարդիկ՝ բոլարական ծառաները, հացփորի, գիշերագբաղ, դեսուդեն թրև եկող մարդիկ: Շատերը խոնվել էին օդետան դռանը, սպասելով բացվելուն: Հոտոտում էին՝ սխտորի, պասուց բլիթի հոտ էր գալիս: Վառոդով, թուջե արկերով, կանեփաթելով, երկաթով բեռնված գումակներ էին գալիս Նեգլիննայայից: Դարուփոսերի վրա դխկդխկալով, Մոսկվա գետի վրայով անցնում, ելնում էին Վորոնեժ տանող ճանապարհը: Նոր, կաշերես կիսամուշտակներով, օտարերկրյա գլխարկներով, բեխավոր ու ոչ ռուսի նման, հայհոյելուց խոպոտած հեծյալ դրագունները մտրակներն էին թափահարում սայլապանների վրա: Մարդիկ խոսում էին. «Գերմանացիները նորից պատերազմի մեջ են քաշում մերինին: Գերմանուհիների ու գերմանացիների հետ Վորոնեժում նստած, վերջնակա՞ն խալտտառակվել է մեր թագավորը»:

Օդետանը բացեցին: Դուրս եկավ բոլորին հայտնի պանդոկապան-օդեվաճառը: Քարացան, ոչ ոք չծիծաղեց, հասկանում էին, որ վիշտ ունի. օդեվաճառի մորուքը չկար, երեկ էին սափրել զեմստվոյի խրճիթում, համաձայն հրամանագրի: Շրթունքները սեղմեց լաց լինելու պես, խաչակնքեց հինգ ցածրիկ գմբեթների ուղղությամբ, խոժոռված ասաց. «Ներս եկեք...»:

Գավթում շեղակի, շան պես ցատկոտեց կրոնախևը, մսի կտորը ատամներով թափահարելով: Կին ու տղամարդ վազեցին նայելու, զարմանալու... Եկեղեցու համար բարեբախտություն է, եթե կրոնախև է լինում գավթում: Բայցև վտանգավոր է ներկա ժամանակներում: Ծեր Պիմենի եկեղեցում վերջերս հաց ու ջուր տվեցին մի գծի, սա էլ մի անգամ մտավ ներս, ելավ բեմն ու սկսեց մատներով կոտոշներ ցույց տալ, ոռնաձայն դարձավ ժողովրդին. «Խոնարհվեցեք, չլինի՞ թե չճանաչեցիք ինձ...»: Կրոնախևին, տերտերի ու տիրացուի հետ գինվորները բռնեցին, կապկպեցին ու տարան Պրեոբրաժենսկոյե ատյան, իշխան-կայսրի՝ Ֆյոդոր Յուրևիչ Ռոմոդանովսկու մոտ:

Հանկարծ բղավեցին. «Ծնկի՞, ծնկի՞...»՝ ամբոխից վեր կարմրափետուր գլխարկներ, դնովի մազեր, սափրված գազանակերպ մուրթներ վերուվարվեցին. հորիկի զույգ ձիերին նստած ձիավարներն էին: Ժողովուրդը նետվեց ցանկապատերի տակ, ձնաթմբերի մեջ: Ոսկեզօծ, ապակյա պատուհաններով մի սահնակ սուրաց: Մեջը ցից նստած, անկենդան ապուշի պես, շպարված մի կին էր նստած՝ վեր սանրած մազերին թաղիքե, մարգարտաշար գլխարկով, ժապավեններով, ձեռքերը մինչև արմունկները սամույրի տոպրակի մեջ մտցրած: Բոլորը ճանաչեցին լրբին՝ կուկուլական թագուհի Աննա Մոնսովային: Գնաց Առևտրական շարքը: Այնտեղ արդեն իրար անցան խանութպանները, ընդառաջ վազեցին, մետաքս ու թավիշ բերելով սահնակի մոտ...

Իսկ օրինական թագուհուն՝ Եվդոկիա Ֆյոդորովնային, այս աշնանը առաջին ձյան հետ, սովորական սահնակով տարան Սուզդալ՝ մենաստան, ընդմիշտ արցունք թափելու...

2.

— Եղբայրներ, բարի մարդիկ, մի բաժակ տվեք... Աստված վկա, տանջվում եմ, երեկ խաչս եմ ծախել, խմել...

— Իսկ ո՞վ կլինես...

— Սրբապատկեր նկարող եմ, Պալեխից, մենք հնուց ենք գալիս... Հիմի գործերն էնպես են, որ դարձել ենք աղքատ...

— Անունդ ի՞նչ է:

— Օնդրյուշկա...

Մարդու հագին ոչ շապիկ կար, ոչ գլխարկ՝ ջուլուփալաս էր: Աչքերը վառվում էին, դեմքը նեղավուն էր, բայց պարկեշտ, մարդավարի մոտեցավ սեղանին, որի շուրջ նստած խմում էին: Նման մեկին մերժելը դժվար էր...

— Դե լավ, նստի...

Լցրեցին: Շարունակեցին խոսակցությունը: Բավական խորամանկ, կիսակույր ու նիհարավիզ մի մուժիկ պատմում էր.

— Ստրելեցների գլուխները թոցրեցին: Լա՞վ: Էդ մեկը ցարի գործն է: (Տնկեց ծուռ մատը:) Մեզ չի վերաբերվում... Բայց...

Մեղմահայաց մի պոսադական ստրելեցի կափտանը հագին (հիմա շատերն էին ստրելեցների կափտաններն ու գլխարկները մաշում, ստրելեցների կանայք ողբալով ու համարյա ձրի տալիս էին հնոտիքը), եղունգներով կտկտացրեց անագե գավը.

— Բանն էլ հենց էդ է, որ բայց... Էդ է, էդ...

Խորամանկ մուժիկը մատը թափ տվեց նրա վրա.

— Մենք մեզ համար հանգիստ նստած ենք... Էդ ձեզ մոտ Մոսկվայում է, որ մի բան չեղած, զանգ եք զարկում... Ուրեմն, մի պատճառ կա, որ ատրելեցներին կախ տվեցին պարիսպներից, ժողովրդին ահ տալու համար... Ես ուրիշ բան եմ ասում, պոսադական... Դուք զարմանում եք, թե ինչի՞ ապրանք չեն բերում Մոսկվա, թանկագիններս: Ու չսպասեք էլ... Ավելի վատ է լինելու... Էսօր, ինչ ասեմ, չեմ իմանում՝ լաց լինեմ, թե ծիծաղեմ... Մի տակառ աղ դրած ձուկ էի բերել... Ինձ համար էի աղել, բայց հոտ էր կպել: Տարա շուկա, կարծում էի, թե պիտի ծեծեն հոտի համար, մի երկու ժամում խլվլեցին... Չէ, Մոսկվան հիմի կորած տեղ է...

— Օ՞խ, ճիշտ ասացիր:— Նկարիչը հեծկլտաց:

Մուժիկը նրան նայեց ու գործնական տեսքով ասաց.

— Հրաման կա մինչև բարեկենդան ատրելեցներին ցած բերել պարիսպներից, տանել քաղաքից դուրս: Մի ութ հազար կախված կլինեն: Լավ: Բայց սե՛լ որտեղից: Ուրեմն նորի՞ց մուժիկի հոգին դուրպ գա: Իսկ պոսադնի՞ն ինչի համար են: Ձիեր հասցնելու պարտավորությունն էլ պոսադների վրա դիր:

Պոսադականի փափլիկ թշերը դողդողացին: Կշտամբանքով գլուխն էր օրորում մուժիկի ասածների վրա.

— Ինչ ասեմ, հողագործ... Մի անգամ գայիր, ձմռանը պարիսպների տակով մաճ գայիր... Բուքը որ փչում էր, սկսում էին ճոճվել... Մեզ էդ վախն էլ հերիք է...

— Խոսք չունեմ, ավելի հեշտ կլիներ միանգամից թաղեին,— ասաց մուժիկը:— Բուն բարեկենդանին տասնութ սահնակով էինք եկել, կապերը չքանդած, վրա տվեցին զինվորները. «Բեռը դատարկեք»:— «Ո՞նց: Ինչի՞ համար»:— «Ծատ մի խոսեք»: Թուր քաշեցին վրաներս, սահնակները շուռ տվեցին: Մի տակառ մանր սունկ էի բերել, թափեցին սատանեքը: «Գնացեք, ասին, Վառվառսկիյե դարպասի մոտ...»: Էնտեղ էլ մի երեք հարյուր ատրելեցի դիակ էր կիտված.... «Բարձեք, ձեր ըսենց-ընենցը»: Սոված, ծարավ, ձիերին կեր չտված, մինչև գիշեր մեռել էինք կրում... Դարձանք գյուղ, ամաչում էինք մերոնց աչքերին նայել:

Անծանոթ մի մարդ մոտեցավ սեղանին: Թրխկացնելով մի շտոֆ դրեց:

— Բեռն անխելքի ուսին կդնեն,— ասաց: Համարձակ նստեց: Շտոֆից լցրեց բոլորի բաժակները: Աչքով արեց քեֆ անողի պես.— Ողջ լինեք:— Առանց բեխերը սրբելու, կրծեց սխտորի գլուխը: Դեմքի կաշին դաբաղածի պես էր, վառվող, գորշահերմակ մորուքը՝ գանգուր:

Կիսակույր մուժիկը զգուշորեն վերցրեց նրա լցրած բաժակը.

— Մուժիկն՝ անխելք, անխելք, բայց հասկանում էլ է մուժիկը... (Մանրուքեթև արեց բաժակը, խմեց, մի լավ թռչացրեց:) Չէ, անգին մարդիկ... (Զեռքը մեկնեց, սխտորի գլուխը վերցնելու:) Առավոտը տեսա՞ք, գումակ գնաց Վորոնեժ: Մուժիկից երեք տակ կաշի են քերթում: Հողատուրքը տուր, պարտագրով եղածը՝ տուր, բոյարինի պարենատուրքը՝ տուր, շենչաճարկը գանձարանին՝ տուր, կամրջավարձը՝ տուր, շուկա մտար՝ փեղը տուր...

Գորշահերմակ մորուքավորը բացեց խոշորատամ բերանը, քրքջաց: Մուժիկը դադար տվեց, քիթը քաշեց.

— Լավ... Հիմի էլ ձիերդ տուր ցարական գումակին: Մեկ էլ՝ պարսիմատ են պոկում մեզանից... Չէ, անգին մարդիկ... Գյուղերում հաշվեք, թե քանի՞ ծխացող ծուխ է մնացել: Մնացածնե՞րը բա ուր են: Ման եկեք, որ գտնեք... Հիմի համարյա բոլորը պատրաստ են փախչել: Մուժիկն անխելք է, քանի կուշտ է: Բայց եթե էդպես, վերջին ունեցածը տակից քաշեք-տանեք... (բռնեց մորուքը, գլուխ տվեց) մուժիկը տրեխները կկապի ու կգնա-ա՞ իր ուզած ճանփով:

— Հիսուսի կողմը: Լեռները... Ճգնարանները...— Սրբանկարիչը մոտեցավ նրան, սևավուն աչքերը հառած:

Մուժիկը դեռ հրեց. «Սո՛ւս մնա...»: Պոսադականը, շուրջը նայելով, կրծքով ընկավ սեղանին.

— Տղերք,— շշնջաց նա,— ճիշտ որ, շատերը վախեցած թողնում գնում են Բելո-լիճ, Վոլ-լիճ, Մատկա-լիճ, Վրյգ-լիճ ու էն կողմ... Էնտեղ խաղաղ է... (Ցնցեց ուռած կոպերը:) Ու ով գնաց, նա էլ ողջ կմնա...

Նկարչի սև բիբերը լայնացան, աչքի չափ դարձան՝ մեկ մի զրուցակցին էր դառնում, մեկ՝ մյուսին...

— Ճիշտ բան է ասում... Պալեխում, մեծ պատից առաջ վեց հարյուր սրբապատկեր նկարեցինք: Նախկին տարիներով որ վերցնենք՝ քիչ է: Հիմի մի հատը Մոսկվայում չծախվեց: Պալեխում գլխներին են տալիս: Ինչի՞: Մեր նկարածը լուսավոր է, Հիսուսի անունը երկու «իժե»-ով: Օրհնող ձեռքը պտղունցով: Խաչն էլ ենք նկարում դրսի՛ պես չորսաթև: Ամեն ինչ ուղղափառ կանոնով: Հասկացա՞ք: Մեզնից սրբանկար առնողները՝ վանառականներ Կորգինկինը, Դյաչկովը, Վիկուլինը, մեզ ասին. «Էդպես նկարելը թողեք: Էդ նկարները վառել է պետք, գայթակղիչ են, դրանց վրա ճանկ կա, ասին...»: «Ո՞նց թե ճանկ»: (Սրբանկարիչը թեթևակի հեծկլտաց: Պոսադականը, ավելի հակվելով սեղանի վրա, ատամներն իրար զարկեց:) «Էդպես, ասին, նրա ճանկի հետքն է... Թռչնի թողած հետքը գետնի վրա տեսա՞լ եք՝ չորս գիծ... Ձեր սրբապատկերների վրա էլ է նույնը...»:— «Որտե՞ղ է»:— «Էս է՝ խաչը... Հասկացա՞ք: Էդ ապրանքը էլ Մոսկվա չբերեք, ասին: Հիմի ամբողջ Մոսկվան հասկացել է, թե ժանտը որտեղից է գալիս...»:

Մուժիկն աչքերն էր թարթում, հասկանալի չէր՝ հավատում է, թե ոչ: Գորշահերմակ մորուքավորը, քթի տակ խնդալով, սխտոր էր կրծում: Պոսադականը գլխով էր անում, համաձայնում... ու հանկարծ, շուրջը նայելով բերանն առաջ պարզեց, շշնջաց.

— Բա ծխախո՞տը: Էդ ո՞ր գրքերում է գրված, որ ծուխ կուլ տաս: Ո՞ւմ երախից է ծուխ ելնում: Հը՞: Քառասուն ու ութ հազար ռուբլով բոլոր քաղաքներն ու Սիբիրը կապալով տվել են անգլիացի Կարմար-

տենովին, որ դրանից ծախի: Ու՝ հրամանագիր, որ էդ դժոխքի խոսը՝ նիկոցիանը ծխեն... Է՞դ ում ձեռի գործն է: Հապա թե՞լը, կոֆելը: Հապա կարտովը՝ թյո՛ւճ: Էդ ամբողջ թույնը էն կողմերից են բերել, ու սեզ՞ոն ծախում են լութերականներն ու կաթոլիկները... Ով թելը խմեց՝ հավատքը կորցրեց... Ով կոֆել խմեց, իր հոգին ծախեց... Թյուհ, ավելի լավ կլինի սատկեմ, քան էդ ապրանքը խանութս բերեմ...

— Ինչի՞ առուտուր են անում,— հարցրեց գորշաներմակ մորուքավորը:

— Հիմի ի՞նչ առուտուր... Առուտուրը գերմանացիներն են անում, մեր արածը ողբն է: Օվսել Ռժովին, նրա եղբայր Կոնստանտինին ճանաչո՞ւմ էիր: Գունդերտմարկովի գնդից... Էս իմ խանութն է, էս նրանց բաղնիքները: Էդ տեսակ մարդիկ հիմի չկան: Երկուսին էլ սպանեցին անվի վրա... Օվսելն ինչքա՞ն էր ասում. «Էս ամեն ինչը քաշում ենք, որովհետև ութանասուներկու թվին, Կրեմլում չլսեցինք հայր սուրբերին: Էն ժամանակ ստրելեցներով հին հավատի կողմը հաստատ պիտի բռնեինք... Մի հատիկ օտարական Մոսկվայում չէր մնա, հավատքն էլ հաստատ կլիներ, ժողովուրդն էլ կուշտ ու գոհ... Հիմի չենք իմանում, թե հոգիներս ոնց փրկենք...»: Այ էդ տեսակ արդար մարդիկ ամբողջ ձմեռ ճոճվում էին պարիսպների վրա... Ստրելեցները չկան՝ մեզ ո՞վ է մարդահաշիվ անողը... Բոլորի երեսները կթրաշեն, բոլորին կստիպեն կոֆել խմել, կտեսնեք...

— Ունեցածներս կուտենք, գարնան գլուխ բոլորս ցրիվ կգանք-կգանք,— ասաց մուժիկը հաստատակամ:

— Եղբայրնե՞ր:— Նկարիչը տրտմագին հայացքը հառեց թաց պատուհանին:— Եղբայրներ, հյուսիսում չտեսնված ճգնարաններ կան, հանգիստ ապաստան, խաղաղ ապրուստ...

Գնալով աղմկաշատ ու շոգ էր դառնում օդեռնում, խսիրապատ դուռը փքվել էր: Վիճում էին հարբած մարդիկ, վաճառասեղանի մոտ, գոտկից վեր մերկ, անխաչ մեկը ճոճվելով, մի բաժակ օղի էր աղաչում պարտքով... Մեկ ուրիշին, մազերից բռնած, քարշ տվեցին նախասենյակ ու այնտեղ, գոռում-գոչյունով ծեծում էին, ըստ երևույթին, մեղավոր էր...

Սեղանին մոտեցավ համարյա երկտակված մի մարդ: Հենվելով երկու ցուպերի վրա, ժպտաց, հարթեցնելով կնճիռները: Գորշաներմակ մորուքավորը նրան նայեց, հոնքերը կիտեց: Երկտակվածն ասաց.

— Էդ որտեղի՞ց ես թռել-եկել, արծիվ տղա:

— Էստեղից չի երևա: Գնա, գնա, ի՞նչ կանգնեցիր:

— Ցուղա՞վ սե լեկե ցինոդ*),— կիսաձայն ու արագ հարցրեց երկտակվածը:

— Գնա գործիդ, դրա կարիքը չկա...

Երկտակվածը, այլևս ոչինչ չհարցնելով, տնկեց ցանցառ մորուքը ու ցուպերը թխկացնելով գնաց օդեռնան խորքը: Պոսադականը, վախեցած, հարցրեց.

— Ո՞վ էր էդ մարդը:

— Իր խեղճ ճամփեն բռնած ճամփորդ,— խստորեն ասաց գորշաներմակ մորուքավորը:

— Ի՞նչ լեզվով խոսեց քեզ հետ:

— Ծտի լեզվով:

— Բայց կարծես քեզ ճանաչեց, հը՞, ջահել...

— Ինչքան քիչ հարցնես, էնքան քո օգուտը կլինի... (Մաքրեց մորուքի փշուրները, խոշոր ձեռքերը դրեց սեղանին:) Հիմի ինձ լսիր... Մենք Դոնի կողմերից ենք եկել, առուտուրի գործով:

Պոսադականը աշխույժով մոտեցավ, աչքերը ճկճկացրեց.

— Ի՞նչ ես առնելու:

— Վառող է պետք՝ մի տասը տակառ: Հիսուն փթի չափ արճիճ: Լավ մահուդ եմ ուզում ժուպանի համար: Պայտի երկաթ, մեխ: Փող կա:

— Լավ մահուդ ու երկաթ ճարել կլինի... Արճիճ ու վառող՝ դրծ վար է, գանձատնից դուրս, ուրիշ տեղ չկա:

— Որ լավ գործ բռնես, գանձատնից դուրս էլ կլինի:

— Մի ծանոթ գրագիր ունեմ: Նվեր է պետք:

— Բա ոնց...

Պոսադականը, ճարմանդները քսմսելով կիսամուշտակին, ասաց, որ կաշխատի հիմա բերել գրագրին: Վազ տվեց: Մուժիկը ցանկացավ առևտրի մեջ մտնել: Ճակատը կնճռոտելով, հազաց.

— Մատղաշի բուրդ, կաշի չե՞ս ուզենա, հոգիս: Թե չէ՝ հիսուն փութ արճիճ... Հո կովի չե՞ք պատրաստվում, կազակներ:

— Լոր ենք խփելու...

Գորշաներմակ մորուքավորը շրջվեց: Նորից նրան էր մոտենում երկտակված ցուպավորը: Մուրած մանրադրամով գլխարկը ձեռքին, նստեց կողքն ու առանց վրան նայելու, ասաց.

— Բարև, Իվան...

— Բարև, Օվդոկիմ,— նույնպես չնայելով, պատասխանեց գորշաներմակ մորուքավորը:

— Վաղուց չէինք տեսնվել, ատաման...

— Մուրացկանությո՞ւն ես անում:

— Անճարությունից է... Ամառը մի թեթև մանն եկա անտառներում՝ էլ էն տարիները չեն... Հոգնել եմ՝ մեռնել է պետք...

— Մի քիչ համբերի...

— Ինչի՞, չլինի՞ լավ բանի ձեռ կա:

Քթի տակ խնդալով, Իվանը ծխի միջով նայում էր հարբածներին: Աչքերը պառեցին: Ցածրաձայն, բերանի անկյունով ասաց.

— Դոնը ոտքի ենք հանում:

Օվդոկիմը կուացավ գլխարկի վրա, հավաքեց մանրադրամը:

— Չեմ իմանում,— ասաց,— լսել եմ, դոնցի կազակները խելոքացել են, խոստորներում հիմնավորվում, տունուտեղ են դառնում...

*) Գաղտնալեզու, որից օգտվում էին վլադիմիրյան փերեզակները, աղանդավորները, նաև ավազակները: Բառերը շրջված էին արտասանվում (ծան.— Ա. Ն. Տոլստոյի):

— Եկվոր ու պապաց-սարապանները շատ են: Նրանք սկսեցին, կազակներդ կօգնեն... Չօգնեն էլ, մեկ է՝ կամ Թուրքիա կանցնենք, կամ էլ Մոսկվաչի ոտքի տակ հավերժական ճորտ կմնանք... Էն ժամանակ ցարին օգնեցինք Ազովի տակ, հիմի թաթը դրել է ամբողջ Դոնի վրա: Հրամայել են եկվորներին հանձնել: Մոսկվայից տերտերներ են քշելբերել, հին հավատն են վերացնում... Խաղաղ Դոնի վերջն եկել է...

— Էդ գործի համար մեծ մարդ է պետք,— ասաց Օվդոկիմը,— հանկարծ չլինի՞, ինչպես Ստեպանի*) ժամանակ եղավ...

— Մի մարդ ունենք, Ստեպանի նման չէ, որն անխելքությունից գլուխը կորցրեց, իսկակա՞ն գլուխ կլինի... Աղանդավորները լրիվ կընգնան նրա ետևից...

— Տանջուվրա արեցիր ինձ, Իվան, հոգիս խառնեցիր, Իվան, ես էլ մտքիս դրել էի հանգստանամ...

— Գոբնանը կգա: Մեզ հին ատամաններ են պետք: Ստեպանից ավելի թանդ գործ կբռնենք...

— Հազիվ թե, հազիվ թե... Էն արյունից շա՞տերն են մնացել որ: Ես ու դու ոնց որ թե...

Հանապատ ու այտը ցնցելով, ետ եկավ պոսադականը: Ետևից ծանրումեծ և ճաղատ, գրագիրն էր գալիս գորշագույն, սղնձյա կոճակներով գերմանական կաֆտանով, մաշված վալենկաներով: Կոծքի մեջ դագի փետուր էր խրված: Առանց բարևելու, խորշանքով նստեց սեղանի մոտ: Դեմքն՝ անկշտում, աչքերը պղտոր ու անաստված, ռունգերից քթի ներսը երևում էր: Պոսադականը չնստեց, թիկունքից ասաց ականջին.

— Կուզմա Եգորիչ, հրեն էն մարդը, որ...

— Բլիթ բերեք,— խզված ձայնով ասաց գրագիրը, ուշադրություն չդարձնելով,— ձկան մսով բլիթ...

3.

Իշխան Ռոմանը՝ իշխանատոհմ Բորիսովներից, զավակը Բոյնոսովի, տնավարի ապած՝ Ռոման Բորիսովիչը, շապիկ-ոտաշորով ամկողնու եզրին նստած, ոնգանքալով բոլորում էր կուրծքն ու թևատակերը: Հին սովորությամբ, ձեռքը մորուքին տարավ, բայց ետ քաշեց՝ սափրած էր, ծակծկող ու նողկալի... Ուխ-խա-խա-խաաա՞ հորանջեց, նայելով փոքրիկ պատուհանին: Լուսանում էր՝ մութ էր և տրտմալի:

Նախկինում այս ժամին Ռոման Բորիսովիչն արդեն հագնելիք կլիներ կզաքիսի մուշտակը, արժանապատվությամբ աչքերին կքաշեր կոչեռնու գլխարկը, երկար գավազանը ճոճելով, ճոճռան միջանցքներով առմուտք կելներ: Մի հարյուր հիսուն շունչ ճորտ՝ որը սահնակի մոտ ձիերի սանձը կբռներ, որը վազ կտար դարպասը բացելու: Ուրախ-զվարթ կհանեին գլխարկները, գոտկաչափ ողջույններ կտային, ավելի մոտ կանգնածները բոյարինի ոտքերը կհամբուրեին... Թեվերից բռնած, կողերից բռնած սահնակ կնստեցնեին... Ամեն առավոտ, ինչ եղանակ էլ լիներ, Ռոման Բորիսովիչը պալատ կգնար, սպասելու, թե թագավորի պայծառ աչքերը (հետո էլ՝ արքայադուստեր շողշողուն աչքերը) երբ են իրեն նայելու: Ու քանի-քանի անգամ այդպես էր եղել...

Ամեն ինչ անցա՞վ: Առավոտյան վեր ես կենում՝ տե՞ր ասված: Մի՞թե անցավ: Հիշելն իսկ տարօրինակ է՝ ի՞նչ հանգստություն ու պատիվ կար ժամանակին... Անա, հարթատաշ տախտակե պատին, որից ոչինչ չպետք է կախվեր, հոյանդական, հանում դժոխական հրապույրի նկարած մի լիրբ կին է կախ արած, փեշը քշտած: Ցարն է հրամայել ննջասենյակում կախ տալ, չես հասկանում՝ որպես ծաղր, թե պատիժ... Դիմացիր...

Իշխան Ռոման Բորիսովիչը մոայլված նայեց երեկ իրիկվա՝ից թախտի վրա շպրտած հագուստին. բրդյա, լայնակի շերտերով, կնկա գուլպաներ, կարճ շալվար, որ ներ է գալիս առջևից էլ, ետևից էլ, կանաչ, թիթեղի պես կոշտ ու տրեգավոր կաֆտան: Մեխից քաշ է արած սեփ-սև կեղծամը՝ միջի փոշին փետուով էլ թափ տաս, չի պրծնի: Ինչի՞ համար է այս ամենը:

— Միշկա՞,— բարկացած բղավեց բոյարինը: (Ցածրիկ, կարմիր մահուդով պատված դռնից ներս ընկավ մի ժիր պատանյակ, ուղղափառների երկայն շապկով: Խոր գլուխ տվեց, ետ գցելով մազերը:)— Միշկա, լվացվելու բաները բեր: (Պատանյակը առավ պղնձյա տաշտը, ջուր լցրեց մեջը:) Կարգին բռնի տաշտը... Ձեռներիս լցրու...

Ռոման Բորիսովիչն ավելի շատ ֆոթացնում էր ափերի մեջ, քան լվացվում՝ նողկալի էր ածիլված, ծակծկող երեսը լվալը... Փնթփնթալով նստեց անկողնուն, շալվարը հագնելու: Միշկան ամանով կավիճ մոտեցրեց ու մաքուր լաթի կտոր:

— Էլ է՞դ ինչ էր,— գոռաց Ռոման Բորիսովիչը:

— Ատամ մաքրելու համար:

— Ձեմ մաքրելու:

— Կամքը ձերը լինի... Ոնց որ տեր թագավորն է հրաման տվել, հարկավոր է ատամները մաքրել, տիրուհին ասել է, որ ամեն առավոտ տամ...

— Ամանը կտամ մոթովդ հա՞... Լեզուդ շատ է բացվել....

— Կամքը ձերը լինի...

Հագնվելուց հետո Ռոման Բորիսովիչն իրար տվեց մարմինը՝ սեղմում էր, ճեղ էր, կոշտ... Ինչի՞ համար: Բայց խիստ հրաման կար՝ բոլոր ազնվականները ծառայության ներկայանան գերմանական հագուստով, դնովի մազերով... Դիմացիր... Մեխից վեր բերեց կեղծամը (հայտնի չէ, թե ինչ կնկա մազեր էին), զզվանքով դրեց գլխին: Խփեց Միշկայի ձեռքին, որն ուզում էր ողողել մանր ոլորած գանգուրները: Ելավ նախասենյակ, ուր ճարճատում էր վառարանը: Ներքևից, խոհանոցից (դեպի ուր թեք սանդուղքն էր տանում) վառվածի բարկ հոտ էր գալիս:

— Միշկա, էս հո՞տը որտեղից: Էլի՞ նոֆելյ-ե՞ն եփում:

*) Այսինքն՝ Ստեպան Ռազինի օրոք (ծան. Ա. Ն. Տոլստոյի):

— Տեր թագավորը հրաման է տվել տիրուհուն ու օրիորդներին առավոտները կոֆեյ խմել, մենք էլ եկում ենք...

— Գիտեմ... Սեպերդ բաց մի արա...

— Կամքը ձերը լինի..

Միշկան բաց արեց խաչաձև սրահը տանող մահուդապատ դուռը: Ռոման Բորիսովիչը, արծանապատվությամբ խաչակնքելով, մոտեցավ գրակալին: Թավշի վրա բաց դրված էր մոմի կաթիլներով պատված ժամագիրքը: Պոկեց մոմի այրուքը: Դրեց երկաթյա կլոր ակնոցը: Մատը թքոտեց, էջը շրջեց, մտքերի մեջ ընկավ, նայելով անկյանը, ուր նվազ փայլ էին արձակում սրբապատկերների շրջանակները. միայն մի կանաչ կրակ էր վառվում Նիկոլայ-հրաշագործի առաջ...

Մտածելու շատ բան կար... Չէ որ եթե այսպես շարունակվեր, անվանի բոլոր տոհմերը՝ իշխանական ու ազնվական, կքայքայվեն, անպատվությունն ու վիրավորանքը դեռ մի կողմ... «Դրա՜ն տես, սկսել է ազնվականությո՜ւնը վերացնել: Վերացրու... Իվան Ահեղի ժամանակ էլ են փորձել իշխանական գերդաստանները քայքայել մի անգամ... Բան դուրս չեկավ, խռովություն ծագեց... Հիմա էլ բան դուրս չի գա... Պետության ողնաշարը մենք ենք... Մեզ քայքայեն, պետություն չի լինի ալևս, կյանքը կդառնա անօգուտ... Չլինի՞ ճորտերին ես կառավարելու, ցա՛ր... Փո՜ւչ գործ է... Դեռ ջահել ես, խելքդ չի հերիքում, եղածն էլ, երևում է, Կուկուլում ես թողել խմելուց...»:

Ռոման Բորիսովիչն ակնոցն ուղղեց, սկսեց կարդալ ոնգածայն, հավուր պատշաճի: Սակայն տողերի արանքում մտքերն էին թափառում.

«Հիսուն շունչ ծառա գինվոր տարան... Հինգ հարյուր ռուբլի առան Վորոնեժի նավատորմի համար... Վորոնեժի վոտչինայում ցորենը ջրի գին տարան պետությանը, պահեստները մաքուր մաքրեցին: Երեք տարվա բերք էր, սպասում էի, թե երբ են գին տալու... (Հանկարծակի գայրույթից բերանը դառնացավ:) Հիմա էլ խոսում են, որ վանքապատկան վոտչինաներն են վերցնելու, բոլոր եկամուտները գանձարան մտցնեն... Հրամայված է տասը տակառ աղ դրած միս մթերել... Ա՜հ, տեր աստված, աղ դրած մի՞սն ինչներին է պետք...»:

Կարդում էր: Անագե շրջանակով, փայլարապատ լուսամուտից այն կողմ կանաչին էր տալիս այգաբացը: Դռան մոտ կանգնած Միշկան վրա-վրա գլուխ էր խոնարհում...

«Բարեկենդանին անպատիվ արեցին նշանավոր գերդաստանները... Երեք հարյուր հոգի կլինեին դիմակավորները, կեսգիշերին, թե ավելի ուշ ներս ընկան: Ի՜նչ փորձանք էր: Մոութներին մուր ու ներկ քսած: Հարբա՜ծ: Ջոկել չէր լինի, թե ցարը որ մեկն է: Լափեցին, լակեցին, փսխեցին, ծառայող կանանց փեշերը վեր քաշեցին... Ի՜նչ, աբլորի ու թոչունի ձեներ հանեցին...»:

Ռոման Բորիսովիչը ճոճվեց ոտքերի վրա՝ հիշեց, թե ինչպես վերջին օրը, անասելի խմեցնելով իրեն, շալվարն իջեցրին ու նստեցրին ձվով լի կողովի մեջ... Իսկի էլ ծիծաղելի չէր... Կինը տեսավ, Միշկան տեսավ... «Օ՜հ, տեր աստված: Ինչի՞ համար: Ո՞ւր ենք հասնելու սրանով»:

Ռոման Բորիսովիչը լարված մտածում էր. ո՞րն է աղետի պատճառը: Չլինի՞ գործած մեղքերի համար է: Մոսկվայում փսփսում են՝ իբր սատանան է լույս աշխարհ ընկել: Կաթոլիկներն ու լութերականները նրա ծառաներն են, օտարերկրյա ապրանքների վրա նեռի կնիքը կա: Իբր աշխարհի վերջն եկել է:

Կարմրավուն դեմքը ծամածռելով մոմի լույսի կողմը, Ռոման Բորիսովիչը երկմտում էր. «Անհավանական է... Տեր աստված թույլ չի տա, որ ռուս ազնվականությունը ոչնչանա: Սպասել է պետք ու դիմանալ: Է-խե-խե...»:

Մոլեռանդությամբ աղոթելուց հետո, նստեց կամարի տակի գորգածածկ սեղանի մոտ: Բացեց բավական հաստ տետրը, ուր գրված էր ամեն ինչ՝ ում է պարտք տվել, ումից է ստացել, որ գյուղից փողով է վերցրել, որից ցորենով կամ մթերքով: Դանդաղ թերթում էր, շարժելով բեխազուրկ շրթունքները:

Սրահ մտավ ավագ կառավարիչ Սենկան՝ անազատ ճորտերից շնորհի էր արժանացրել խորամանկ խելքի և մարդկանց հանդեպ ունեցած մեծ չարության պատճառով: Իսկը կապույտ շուն էր. բոյարական ունեցվածքը մինչև վերջին գոռոզը պլոկում էր: Անշուշտ, գողանում էր, թեև չափով, խղճով, սակայն նույնիսկ մորթեիր, չէր խոստովանի, որ գողանում է: Ռոման Բորիսովիչը քանիցս բռնելով նրա խիտ մորուքից կամ ուրաքող օձիքից, քարշ էր տվել ու ծոծրակը խփել պատեպատ. «Գողացել ես, ախր, գողացել ես, ասա...»: Սենկան, առանց աչքերը թարթելու, դեղին աչքերով բոյարինին կընայեր, ինչպես աստծուն: Միայն երբ ծեծը դադարեր, դեն կտաներ կոշտ մահուդե կափտանի փեշը, կսրբեր լիկած քիթն ու լաց կլիներ.

— Ռոման Բորիսովիչ, իզուր տեղն ես ծառաներիդ էդպես ծեծում: Աստված թող քեզ ձերի, քո առաջ ոչնչով մեղավոր չեմ...

Սենկան կողքանց մտավ կիսաբաց դռնից, խաչակնքեց Նիկոլայ-հրաշագործի սրբապատկերին նայելով, խոնարհվեց բոյարինին ու ծունկ չոքեց:

— Հը՞, Սենկա, ի՞նչ լավ բան կասես:

— Ամեն ինչ փառք աստծու, Ռոման Բորիսովիչ:

Ծնկաչոք Սենկան, աչքերն առաստաղին հառած, անցավ անգիր զեկույցին՝ ումից ինչքան է ստացվել երեկվա հաշվով, որտեղից և ինչ է բերված, ով է պարտք մնացել: Երկու թունդ պարտապան մուժիկների՝ Ֆեդկային ու Կուսկային, բերել է Իվանկովո գյուղակից ու երեկվանից կապել է բակում՝ պուավյոժի*)...

Ռոման Բորիսովիչը զարմացավ, բերանը բացեց՝ մի՞թե չեն ու-

*) Տանջանք, որին ենթարկվում էին պարտապանները, բանի դեռ չէին վճարել (ծան. Ա. Ն. Տոլստոյի):

գում վճարել: Նայեց տետրի մեջ. Ֆեդկան անցյալ տարի վաթսուն ռուբլի է վերցրել, նոր խրճիթ սարքելու և լծասարք, նոր խոփ ու սերմնացու առնելու համար... Երեսունչորս ու կես ռուբլի էլ Կոսկան է վերցրել, ու երևում է նույնպես ստել է, թե տունուտեղի համար է վերցնում...

— Ախ, սրիկաներ, ախ, խաբեբաներ: Հրաման տվե՞լ ես, որ բրածեծ անեն:

— Իրիկվանից ծեծում են,— ասաց Սենկան,— ամեն մեկի վրա երկու հոգի դրել եմ, որ անխնա ծեծեն... Ինչ ունեք մտածելու, Ռոման Բորիսովիչ, պարտքի դիմաց ճորտագիր ունենք ձեռներիս, երկուսին էլ տասը տարով կճորտացնենք: Մեզ ճորտեր պետք են...

— Ինձ փող է պետք, ոչ թե ճորտ,— Ռոման Բորիսովիչը սեղանին շպրտեց սագի փետուրը:— Ճորտերին կերցնեմ, խմացնեմ, որ ցարը նորից գինվոր տանի...

— Փող է պետք, Իվան Արտեմիչի, Բրովկինի պես արեք. Զամոսկվորեչյեում կտավի գործարան է սարքել, պետությանը առագաստի կտավ է տալիս: Փողից պայթում են տոպրակները...

— Հա, լսել եմ... Վայ թե լրիվ սուտ ես ասում:

Բրովկինի կտավի գործարանը վաղուց հանգիստ չէր տալիս Ռոման Բորիսովիչին, Սենկան համարյա ամեն օր հիշեցնում էր. հատուստ այդ գործում քիչ բան չէր ցանկանում տակովն անել: Բայց ահա, Նարիշկինը, Լև Կիրիլովիչը (թագավորի քեռին) ավելի կայուն գործ էր բռնել. դրամը Գերմանական արվարձանում տալիս է մի հոլանդացու՝ Վան-դեր-Ֆիկին ու վերջինս դրամն ուղարկում է Ամստերդամ՝ բրդա, շահույթի, և ամեն տարի Նարիշկինը դրած տասը հազարից վեց հարյուր ռուբլի միայն շահ է վերցնում: «Վեց հարյուր ռուբլի՝ ոչ քրտինք է ուզում, ոչ աշխատանք...»:

— Ապրում էին մեր պապերը, հոգս ու ցավ չունեին,— խոսեց Ռոման Բորիսովիչը:— Պետությունն էլ ամուր կանգնած էր: (Ձեռքերը մացրեց Սենկայի բռնած ոչխարի մորթով մուշտակի մեջ:) Թագավորի հետ նստած, գործերի մասին էինք մտածում՝ սա էր մեր հոգսը... Հիմա մարդ զարթնելուց չի ուրախանում...

Ռոման Բորիսովիչը ելավ ու իջավ սանդուղքներով՝ քայլում էր միջանցքներով: Մի ուռած դուռ բացեց, որտեղից կծու և տաք գոլորշի ու հոտ ելավ, խորքում վառվող մարխի լույսի տակ հագիվ երևում էին չորս մուժիկներ, որոնք ոտաբոբիկ, մեկտակ շապկով ոչխարի մորթի էին լմում. «Աշխատեք, աշխատեք, աստված ձեզ օգնական»,— ասաց Ռոման Բորիսովիչը: Մուժիկները ոչինչ չպատասխանեցին: Հետո բացեց ձեռագործի սենյակի դուռը: Մի քսան աղջիկ ու աղջնակ, ոտքի կանգնեցին սեղանների ու քարգահների մոտ, գոտկատեղի գլուխ խոնարհեցին: Բոյարինը քիթուքերանը ծռմռեց. «Աղջկերք, էս ինչ հոտ է ձեզ մոտ... Աշխատեք, աշխատեք, աստված ձեզ օգնական...»:

Ռոման Բորիսովիչը նայեց նաև դերձականոցն ու կաշվեղենի սենյակը, ուր գոտերի մեջ թրջվում ու դաբաղվում էր կաշին: Մուայլադեմ կաշեգործները ձեռքերով ճմլում էին կաշին... Կլոր ու ծակծակ լապտերի ճարպամոմի բոցը բորբոքելով, Սենկան բացեց խորդանոցների ու խոլ սենյակների կողպեքները, ուր պաշարներն էին պահվում: Ամեն ինչ տեղը տեղին էր: Ռոման Բորիսովիչը իջավ ընդարձակ բակը: Արդեն լուսացել էր, ամպոտ օր էր: Ջրհորի մոտ ոչխարներն էին ջրում: Դարպասից մինչև խոտանոց չոր խոտ բարձած սայլեր էին կանգնած: Մուժիկները հանեցին գլխարկները: «Մուժիկներ, էս սելերը քիչ են»— բղավեց Ռոման Բորիսովիչը...

Խարխուլ, անճխնելույզ խրճիթներից ու հյուղակներից ծխի շիթեր էին բարձրանում, որոնք քամուց ցրվում ու տարածվում էին բակում: Ամենուրեք մոխրի և թրիքի կույտեր էին: Պարանոցներից կախ լաթուլութ էր փոփոխում ստոնամանիքին: Ախոռի մոտ, դեմքներով դեպի պատը, անգլիական երկու մուժիկ էին կանգնած, մի ոտքից մյուսին ճոճվելով: Տիրոջը տեսնելով ամոտուքին, ախոռից շտապ նրկու թիկնեղ ծառա դուրս թռան, գետնից առան մանակներն ու սկսեցին խփել մուժիկների հետույքներին ու ազդրերին... «Օ՞յ, օ՞յ, տեր աստված, ինչի՞ համար...»,— տնքում էին Ֆեդկան և Կոսկան...

— Էդպես, էդպես, արժի դրանց, էլի հասցրեք,— ասմուտշից քաջալերեց Ռոման Բորիսովիչը:

Երկարահասակ, ծաղկատար ու կարմիր դեմքով Ֆեդկան շրջվեց.

— Ողորմած լինես, Ռոման Բորիսովիչ, ախր չունենք... Աստված վկա, ցորենը մինչև Սուրբ ծնունդ ենք կերել... Անասունը գոնե վերցնես, թե չէ էս տանջանքին դիմանալ չի լինի:

Սենկան ասաց Ռոման Բորիսովիչին.

— Նիհար ու անպետք անասուն ունի, սուտ է ասում... Աղջկան կարելի է վերցնել՝ կես պարտքի դիմաց: Մնացածի համար էլ կբանի:

Ռոման Բորիսովիչը խոժոռվեց ու շրջվեց.

— Կմտածեմ: Իրիկունը կխոսենք:

Ծխերից ու մերկացած ծառերից այն կողմ դժգույն դողանջ լսվեց: Ժանգոտած գմբեթների վրայից թռան ագռավները: «Օխ, ծանր են մեր մեղքերը»,— մրմնջաց Ռոման Բորիսովիչը, մի հայացք էլ նետեց տունուտեղի վրա և գնաց սեղանատուն՝ կոֆել խմելու:

Իշխանուհի Ավդոտյան և երեք իշխանադուստրերը նստած էին սեղանի ծայրին, հոլանդական ծալովի աթոռների վրա: Դիպակե սփոցը ծալել էին, որ չկեղտոտեն: Իշխանուհին մուգ թավշյա, ռուսական լայն զգեստով էր, բերովի գլխանոցով: Իշխանադուստրերը գերմանական ոճաներ էին հագել, քղանցատուտերով. Նատալյան ծիրանագույն, Օլգան կանաչ շերտավոր, ավագը՝ Անտոնիդան «անմոռաց վերջալույս» կոչվող գույնի: Բոլորի մազերը վեր էին սանրած, վրան ալյուր ցանած: Այտերը կլոր-կլոր կարմրացրել էին, հոնքերը ծարիրել, ձեռքերի ափերն էլ էին կարմիր:

Առաջ, իհարկե, թե Ավդոտյան, թե աղջիկները մուտք չունեին սեղանատուն, իրենց սենյակներում, պատուհանների առաջ նստած

կլինեին ձեռագործի, ամառներն էլ պարտեզում ճոճանակի վրա կը-ճոճվեին: Մի անգամ եկավ ցարը, իր հարբած խմբով: Կանգնեց շեմին, սարսափելի աչքերով գննեց սեղանատունը. «Աղջիկներդ ո՞ւր են, սեղան նստեցրու...»: «Վազ տվեցին, կանչելու: Սարսափ, իրարանցում, արցունքներ: Բերեցին երեք անխելքներին՝ վախից կիսամեռ:) Ցարը մեկ-մեկ բռնեց նրանց կզակներից. «Գարեգ գիտե՞ս... (Ի՜նչ պարկ. ամոթից աղջիկները լալիս էին:) Սովորեցնե՛լ... Բարեկենդանին միանվագը, լեռականն ու կոնտերդանսը սովորած լինեք...»: Բռնեց իշխան Ռոմանի կափտանից, լրջորեն թափ տվեց. «Տանդ մեջ կարգին պոլիտես կմոցնես, լավ հիշիր...»: Աղջիկներին սեղան նստեցրին, ստիպեցին գինի խմել... Ու զարմանալի բան՝ խմեցին անամոթները... Քիչ անց սկսեցին ծիծաղել, ասես տարօրինակ չէր իրենց համար...

Սոփված էր պոլիտես մտցնել իր տունը: Իշխանուհի Ավդոտյան անխելքությունից միայն զարմանում էր ամեն ինչի վրա, իսկ աղջիկներն իսկույն համարձակ, հանդուգն ու բծախնդիր դարձան: Այս բանը բերեք, մյուսը բերեք: Ձեռագործ անել չեն ուզում: Առավոտից հագած-կապած նստում, պլեգիր են անում՝ թեյ են խմում ու կոֆեյ...

Ռոման Բորիսովիչը սեղանատուն մտավ: Խեթեց աղջիկներին: Սրանք միայն գլուխները կռացրեցին: Ավդոտյան վեր կացավ ու խոնարհվեց.

— Բարև, պատվելիս...

Անտոնիդան թշշացրեց մոր վրա.

— Նստեք, մուտեր...

Ռոման Բորիսովիչն ուզում էր ցրտից հետո մի բաժակ մատնունու օղի խմել, վրայից սխտոր կրծել... Օղին դեռ մի կերպ կտային, բայց սխտոր՝ չէ...

— Էսօր կոֆեյ չեմ ուզում մի տեսակ: Դրսում վայ թե մրսեցի... Մի թունդ բան տուր խմելու, այ կնիկ:

— Ֆատեր, ամեն աստծու առավոտ մենակ մի խոսք գիտեք՝ օղի, հա օղի,— ասաց Ավդոտյան,— երբ եք սովորելու...

— Ձե՛նդ, բուռակ,— բղավեց Ռոման Բորիսովիչը,— մտրակը որ առա ձեռս...

Իշխանադուստրերը երեսները ծածկեցին: Ավդոտյան հինավուրց կարգով, գլուխ տալով, մատուցեց գավաթը, շշնջաց.

— Խմիր, պատվելիս, ինչքան ուզենաս...

Խմեց, փնչացրեց: Վարունգ էր կրծում, թթվաջուրը կաթեցնելով կամզոլի վրա: Ոչ հապալասով կաղամբ կար սեղանին, ոչ աղ դրած ու մանրած, սոխով սունկ: Մի պստիկ կարկանդակ ծամելով, որի մեջ սատանան գիտեր, թե ինչ կար, հարցրեց տղայի մասին.

— Միշկա՞ն ուր է:

— Թվաբանություն է սովորում, պատվելիս: Չեմ իմանում, գլխին մի բան չպատահի...

Թեթևակի ծաղկատար դեմքով Օլգան՝ ամենագիտակը պոլիտեսի հարցերում, շրթունքները սեղմած ասաց.

— Միշկան անընդհատ մուժիկների հետ է: Երեկ ախոռում նորից բալալայկայով կուրտաժե էր անում ու քթին խփելով թուղթ խաղում...

— Փոքր երեխա է դեռ,— տնքաց Ավդոտյան:

Հրոշ ժամանակ լուռ էին: Կրտսերը՝ ծիծղուն, թոի-վոի Նատալյան պատուհանից ցած նայեց (վերջերս փայլարի փոխարեն ապակի էին գցել շրջանակներին).

— Ախ, ախ, աղջիկնե՛ր: Հյուր եկավ...

Աղջիկներն իրար անցան, թափահարելով վեր պարզած ձեռքերը, որպեսզի դաստակները սպիտակեն: Վազեվազ եկան աղախինները՝ կեղտոտ ամանները տանելու, ափոց գցելու: Մաժորդոմը (նախկին սենեկապանը)՝ ծեր ու բարեպաշտ մի ծառա, սափրած ու Ծննդյան տոների պես գիգի-պիգի հագնված, հատակին խփեց գավազանն ու բղավեց, որ եկել է բոյարուհի Վոլկովան: Ռոման Բորիսովիչը դժկամությամբ ելավ սեղանի մոտից՝ հյուրին գալանտ անելու. դիմացը գլխարկ թափ տալու և քացի-քացի անելու... Այն էլ ո՞ւմ առաջ պիտի կոտրատվեր իշխան Բույնոսովը: Այդ բոյարուհի Վոլկովան յոթ տարի առաջ մի Սանկա էր, որը պատռած փեշով էր փայինքը սրբում: Ամենաչքավոր մուժիկի տնից: Հայրը՝ Իվաշկո Բրովկինը, անազատ ու հետևյալ մի գյուղացի էր: Մինչև գերեզման անծխնելույզ վառարանի շուրջ պիտի պտույտ տար այդ աղջիկը: Հիմա տեսե՞ք՝ մաժորդոմն է հայտնում նրա գալուստը: Ոսկեզօծ կառքո՞վ է եկել: Ամուսինը ցարի շնորհն է վայելում... (Իշխան Ռոմանի մոտ ազգականներից էր ամուսինը:) Հորը սատանան օգնեց. դարձավ վաճառական, հիմա էլ, ասում են, ամբողջ գորքի մատակարարումը նրան է հանձնված:

Մաժորդոմը բացեց դուռը, որ հնի պես ցածր էր ու նեղ, խշխշաց դեղին-վարդագույն զգեստը: Հոլանի ուսերը խաղացնելով, անտարբեր ու գեղեցիկ դեմքը ետ գցած, արտևանունքներն իջեցրած, ներս մտավ բոյարուհի Վոլկովան: Կանգնեց սեղանատան մեջտեղում: Մատանիները շողացնելով, բռնեց ժանեկավոր, վրակար վարդերով զարդարված, դարս-դարս փեշերը, առաջ պարզեց ոտքը, ատլասե, երկու վերշոկանոց կրունկով կոշիկը երևաց, մաքուր ֆրանսիական եղանակով ծալեց մի ծունկը, առաջ պարզածը ուղիղ թողնելով: Աջուձախ ճոճեց շպարազօծ, ջալյամի փետուրներով զարդարված գլուխը: Վերջացրեց, բարձրացրեց կապույտ աչքերը, ժպտաց, ատամները բացելով.

— Բոնժուր, պոնիցեսաներ:

Բույնոսովի աղջիկները, իրենց հերթին ետ-ետ ընկնելով, աչքերով խժռում էին հյուրին: Ռոման Բորիսովիչը վերցրեց գլխարկը, ձեռքերն ու ոտքերը չոռելով, թափահարեց: Բոյարուհուն հրավիրեցին սեղանի մոտ, կոֆեյ խմելու: Մերձավորների ու տնեցիների ողջույնը հարցրեցին: Աղջիկները զննում էին նրա զգեստն ու սանրվածքը:

— Ախ, ախ, կուաֆան կետոսկրով է, իհարկե:

— Իսկ մերը շիվերով ու լաթով են անում:

Սանկան պատասխանեց նրանց.

— Տուսֆերների բանը փորձանք է, փորձանք՝ ամբողջ Մոսկվայում մի հոգի: Բարեկենդանին կանայք շաբաթով ապասեցին, առաջուց սանրվածներն էլ ասոռների վրա քնեցին-մնացին... Հայրիկին խնդրել եմ մի կուսֆեր բերի Ամստերդամից:

— Պատվարժան Իվան Արտեմիչին ողջույնս հաղորդեք,— ասաց իշխանը:— Ինչպե՞ս է նրա կտավի գործարանը: Միշտ ուզում եմ գնալ, տեսնել: Նոր գործ է, հետաքրքիր...

— Հայրիկը Վորոնեժում է: Վասյան էլ է հիմի Վորոնեժում, թագավորի մոտ:

— Լսել ենք, լսել ենք, Ալեքսանդրա Իվանովնա:

— Երեկ նամակ էր ուղարկել Վասյան:— Սանկան երկու մատը մտցրեց խոր բացվածքով սեղմիրանի տակ (Ռոման Բորիսովիչն աչքերը ճպնպացրեց՝ ուր որ է մերկանալու էր կինը), երկնագույն թղթի մի կտոր հանեց:— Հանկարծ Վասյային Փարիզ ուղարկեն....

— Ի՞նչ է գրում,— հազալով հարցրեց իշխանը:— Ի՞նչ է հայտնում թագավորի մասին...

Սանկան երկար շտապում էր տալիս նամակը՝ ճակատը կնճռոտվեց: Այտերն ու վիզը շառագունեցին: Ծշնչաց.

— Նոր եմ կարդալ սովորել: Կներեք...

Մատը տանելով թանձր թանաքով գրված, գլխատառերով ու հավելագարդերով լի տողերի վրայով, սկսեց կարդալ, դանդաղ արտասանելով յուրաքանչյուր բառը.

«Բարև, Սաշենկա, իմ աչքի լույս, երկար տարիների կյանք քեզ... Մեզ մոտ, Վորոնեժում, գործերն այսպես են: Շուտով նավատորմը Դոն ենք իջեցնելու, ու դրանով մեր այստեղի կյանքը կվերջանա... Չվախենաս, բայց կողքից լսել եմ, որ թագավորն ուզում է Անդրեյ Արտամոնովիչ Մատվեևի հետ ինձ ուղարկի Հաագա, այնտեղից էլ Փարիզ: Չեմ իմանում ինչ մտածեմ՝ հեռու է, մեկ էլ վախենալի... Փառք աստծու, բոլորս ողջ և առողջ ենք: Հեռ Պիտերը քեզ բարև է անում՝ մի քանի օր առաջ, ընթրիքին հիշեց: Ամբողջ օրը գործերի մեջ է: Նավաշինարանում, հասարակ գործավորի պես աշխատում է: Անձամբ մեխ ու կապգամ է կոում, անձամբ կպրում: Երեսը սափրելու ժամանակ էլ չունի. խիստ շտապեցնում է բոլորին, մարդկանց ուժասպառ է արել: Բայց նավատորմը կառուցեցինք...»:

Ռոման Բորիսովիչը եղունգներով սեղանն էր թմկտացնում.

— Հա՛, իհարկե... նավատորմը, հա՛... Ինքը կոում, ինքը կպրում է... Ուրեմն, ուժը ծախսելու տեղ չունի...

Սանկան կարդալը վերջացրեց: Նամակը ծալեց ու դրեց սեղմիրանի տակ.

— Զատկին թագավորը որ ետ եկավ, ընկնելու եմ ոտքերը... Փարիզ եմ ուզում գնամ...

Ավդոտյան, Ոլգան, Նատալյան ձեռքերն իրար գարկեցին, ախուվախ արեցին: Իշխանուհի Ավդոտյան խաչակնքեց.

— Վախեցրիր, ալ հոգիս, էդ ինչ զարգանալի բան էր՝ Փարիզ... Կարող է շատ վատ է ելնել:

Սանկայի կապույտ աչքերը մթնեցին, մատանիները կրծքին սեղմեց.

— Ոնց եմ տխրում Մոսկվայում... Թե առած հո չէի թոչի արտասահման... Թագուհի Պրասկովյա Ֆյոդորովնայի մոտ մի ֆրանսիացի է ապրում՝ պոլիտես է սովորեցնում, ինն էլ է դասեր տալիս: Հո չի՞ պատմում (Կարմ հոգոց հանեց:) Ամեն գիշեր երազիս տեսնում եմ, իբր մորս գույն շորով մինուվետ եմ պարում, ամենալավը ես եմ պարում, գլուխս պտույտ է գալիս, կավալերները ետ-ետ են քաշվում ու ինձ է մոտենում Լյուդովիկոս թագավորն ու վարդ տալիս ինձ... Էնքան տխուր է Մոսկվայում: Փառք աստծո, գոնե ստրելեցներին հավաքեցին, թե չէ մեռելից էլ եմ շատ վախենում...

Բոյարուհի Վոլկովան գնաց: Ռոման Բորիսովիչը սեղանի մոտ նստեց-նստեց, հրաման տվեց սահնակը լծել, որ գնա ծառայության, Մեծ պալատի ատյան: Հիմա բոլորին է հրամայված ծառայել: Կարծես Մոսկվայում քիչ են ատենավոր մարդիկ: Ազնվականներին ընտեցրել են փետուր ճոճոացնելու: Իսկ ինքը, ոտից գլուխ կպրաթաթախ, ծխախոտի ծխի մեջ կորած, կացինն է թխկացնում, մուժիկների հետ հացի օդի խմում...

— Է՞խ, վատ է, վատ, է՞խ, տխուր է, տխուր,— տնքտնքում էր իշխան Ռոման Բորիսովիչը, սահնակ նստելիս...

4.

Սպասկիյե դարպասի մոտ, խորը փոսի մեջ, ուր կիսով փտած ցցագերանաներ էին տնկված սառույցի միջից, Ռոման Բորիսովիչը խախթով ծածկված մի երկու տասնյակ սահնակ տեսավ: Գլխանակ կանգնած էին նիհարիկ ձիերը: Զառիթափի վրա մի մուժիկ ծոպոտնի, լինգով ստրելեցի սառած դիակն էր պոկում հոդից: Թխպոտ օր էր, մոխրագույն: Զույնն էլ էր մոխրագույն: Կարմիր հրապարակում, թրիքի դարուփոսերի վրայով հասարակ մարդիկ էին քայլում, գլուխները կախած: Աշտարակի ժամացույցը ճոճոաց, խոխոաց (ժամանակին գրնգում էր զարկում): Ռոման Բորիսովիչը տրտմեց:

Խարխուլ կամրջով սահնակը ներս մտավ դարպասից: Կրեմլում մարդիկ գլխարկներով են շրջում՝ շուկայի պես: Ձիերը կապելու կրծկրծած գերանի մոտ հասարակ սահնակներ էին կանգնած... Ռոման Բորիսովիչի սիրտը ճմլվեց: Ամայացավ տեղը սույն, այլևս չկան աչերը ճաճանչափայլ, որ ցարական այն պատուհանից էին շոդում, հանց կանթեղներ ի փառս Երրորդ Հռոմի: Տխո՞ւր է:

Ռոման Բորիսովիչը կանգ առավ ատյանի առջևի առաջ: Ոչ ոք չկար, որ օգներ իշխանին իջնելիս: Փնչացնելով բարձրացավ դրրսի ծածկած սանդուղքով: Աստիճանները ձնապատ էին, թքոտած: Վերևից, իշխանին հանդարտ բոթելով, ցած վազեցին կաշերեա մուշ-

տակներով ինչ-որ մարդիկ: Վերջինը՝ գորշաներմակ մորուքավոր մեկը, լկտիաբար խեթեց քեֆչու իր աչքերով... Ռոման Բորիսովիչը, կանգնելով աստիճանի վրա, գավազանը զայրացած խփեց փայտին:

— Գլխա՞րկդ: Գխարկը հանե՞լ է պետք:

Բայց ասածը քամին տարավ: Ահա այսպիսի կարգեր են սահմանվել Կրեմլում:

Ատյանի ցածրառաստաղ սենյակներում վառարանների շմոլքն էր, գարշահոտություն, հատակներն ավլած չէին: Երկարուկ սեղանների մոտ, արմունկ-արմունկի նստած, գրագիրները հոնոցնում էին փետուրները: Մեջքն ուղղելով, մեկը չսանրած գլուխն էր քորում, մյուսը՝ կոնատակերը: Փոքր սեղանների մոտ խրթնաբան ու պատրվակաբար փոխատենավորները տետրեր էին թերթում, մատները սահեցնելով խնդրագրերի վրայով, և յուրաքանչյուրից պատուց բլիթի հոտ էր փչում մի վերստի վրա: Աղոտ պատուհաններից աղոտ լույս էր թափանցում: Բաժանմունքներում, սեղանների մոտով դատական ատենավորն էր քայլում՝ ակնոցը ծաղկատար քթին:

Ռոման Բորիսովիչը ծանրոտմեծ քայլում էր սրահներում, բաժանմունքից բաժանմունք: Մեծ պալատի ատյանում գործերը շատ էին, ու խճճված գործեր էին. տնօրինում էին ցարական գանձարանը, պահեստարանները, ոսկյա ու արծաթյա ամանեղենը, հավաքում էին մաքսատների ու կազակական փողերը և ստրեղեցների տուրքը, յամայական փողերն ու հողատուրքը պալատական գյուղերից ու քաղաքներից: Այդ գործից գլուխ էին հանում միայն ատենադպիրն ու ծեր գործակատարները: Նոր նշանակված բոյարներն ամբողջ օրը նստում էին անչափ շոգ սրահում, տատանվելով գերմանական ճեղ հագուստի մեջ, պղտոր լուսամուտներից նայում ցարական ամայացած պալատին, ուր ժամանակին մահճապետների առմուտքի մոտ, բոյարական հրապարակում ճեմում էին իրենք՝ սամույրի մուշտակներով, մետաքսյա թաշկինակները թափահարելով, առնում- տալիս էին մեծ-մեծ գործերից:

Սոսկումնալի շատ գործեր ալիք տվեցին-անցան այս հրապարակով: Ահա այն հինավուրց, ներկայումս մեխված մուտքից, ըստ ավանդության, օպրիչնիկների հետ Կրեմլից Ալեքսանդրովսկայա արվարձան գնաց Իվան Ահեղ ցարը, ցասումն ու կատաղությունը բոյարական մեծ տոհմերի վրա պարպելու համար: Գլուխները թոցրեց, տապակների վրա այրեց ու ցցի հանեց: Խլեց վոտչինաները: Սակայն աստված չթողեց բոյարների իսպառ ոչնչացումը: Մեծանուն տոհմերը գլուխ բարձրացրեցին:

Սոխաձև տանիքին պղնձյա աբլորներով փայտաշեն այն վերնատնից ահա իրեն ցած գցեց նզովյալ Գրիշկա Օտրեպկը՝ ռուս փառասիրած բոյարության մեկ ուրիշ բնաջնջողը: Մոսկովյան հողից անապատ մնաց, հրդեհված տներ, մարդկանց ոսկորներ էին սփռված ճամփեքին, բայց աստված թույլ չտվեց՝ մեծանուն տոհմերը գլուխ բարձրացրեցին:

Այժմ նորից են ամպեր կուտակվել՝ մեր մեղքերի համար... «Է՜-խե՜-խե՜»,— տրտնջած տնքտնքում էին բոյարները շոգ սրահում, պատուհանների մոտ: Ըստ երևույթին, ոչ թե խաթրով են ուզում հպատակեցնել, այլ զորով... Բոլորի մորուքները սափրեցին, բոլորին հրամայեցին ծառայության մտնել, զավակներին ցրիվ տվեցին գնդերը, օտար երկրներ.... «Է՜-խե՜-խե՜, այս անգամ էլ աստված թույլ չի տա...»:

Սրահ մտնելով, Ռոման Բորիսովիչը տեսավ, որ այսօր նորից ինչ-որ բան կա վերևից: Ծեր իշխան Մարտին Լյոկովը ցնցում էր կենդանման այտերը: Դումայական ազնվական Իվան Ենդոգուրովը և պալատական Լավրենտի Սվինյինը, կնկռալով, մի հրամանագիր էին կարդում: Գլուխները բարձրացնելով, միայն մի բան էին կարողանում ասել. «Ա՛խ, ա՛խ»:

— Իշխան Ռոման, նստիր, ակամք արա,— համարյա լաց լինելով, ասաց իշխան Մարտինը:— Ի՞նչ է լինելու: Հիմա ամեն մեկն էլ կարող է հայհոյել ու անպատիվ անել: Մի դատաստան ունենինք, էն էլ են խլում:

Ենդոգուրովը և Սվինյինը նորից սկսեցին կարդալ ցարի հրամանագիրը: Ասվում էր, որ իրեն՝ ցարին և մեծն իշխանին և այլն, և այլն, շատ են զբաղեցնում իշխաններն ու բոյարները, դումայական և մոսկովյան ազնվականները անպատվության մասին խնդրագրերով: Այնինչ օրը իրեն՝ ցարին և այլն, խնդրագիր է մատուցված իշխանատոհմ Գրիգորևներից Լյլկովի զավակ իշխան Մարտինից առ այն, որ մահճապետների առմուտքի մոտ իրեն վիրավորել ու պատվազուրկ են արել, և վիրավորել ու պատվազուրկ է արել իր Պրեոբրաժենսկի գնդի պորուչիկ Օլյոշկա Բրովկինը... Առմուտքի մոտով անցնելիս, բղավել է նա իշխան Մարտինի վրա. «Ինչ ես վրաս նայում գազանանման, հիմի էլ քո նորտը չեմ, առաջ էիր իշխան, հիմի մի չեղած բան ես...»:

— Լակոտ է նա, մուժիկի զավակ, մշակ,— իշխան Մարտինը այտերն էր ցնցում,— էն ժամանակ տաքացած էի, մոռացա, ինձնից գեշ էր գոռում...

— Իսկ ի՞նչ էր գոռում, իշխան Մարտին,— հարցրեց Ռոման Բորիսովիչը:

— Ինչ, ինչ... Գոռում էր, շատերը լսեցին. «Մարտին ես, ինչ ես, քաչալ կապիկի մեկն ես...»:

— Այ, այ, այ, վիրավորական է,— գլուխն օրորեց Ռոման Բորիսովիչը:— Իսկ այդ Օլյոշկան Իվան Արտեմիչի տղան չէ՞:

— Սատանան գիտե, թե ում տղան է...

— «Ցարը և մեծն իշխանը և այլն,— շարունակեցին կարդալ Ենդոգուրովը և Սվինյինը,— որպեսզի իրեն չզբաղեցնեն պետության համար այս դժվար ժամանակներում, զբաղեցնելու և զայրացնելու համար հրամայում է խնդրատուից՝ իշխան Մարտինից գանձել տասը ռուբլի և բաժանել աղքատներին ու հետայսու արգելել անպատվության մասին խնդրագրերը...»:

Վերջացնելուց հետո նրանք քիթումոութները ծումեցին: Իշխան Մարտինը դարձյալ ալեկոծվեց.

— Չեղած բան: Մի ձեռ տուր ինձ՝ ե՞ս եմ չեղած բանը: Մեր տոհմը իշխան Լոյչկոյից է գալիս: Տասներեքերորդ դարում Ուզորսկոյե երկրից է ելել իշխան Լոյչկոն երեք հազար նիզակակիրներով: Եվ Լոյչկոյից Լոյկովներն են առաջացել ու իշխաններ Բոյուխատիները, և Տարատուխինները, և Սուպոնները, ու կրտսեր որդուց՝ Բույնոսովները...

— Սուտ ես ասում: Իսկականից չեղած բաներ ես դուրս տալիս, իշխան Մարտին:— Ռոման Բորիսովիչն ամբողջ մարմնով շրջվեց թախտի վրա, հոնքերը խոժոռեց, աչքերը փայլեցրեց (էխ, եթե այտերը սափրած չլինեին, ծռավուն ու մազազուրկ բերանը չլիներ, կատարելապես ապաստիազդու կլիներ իշխան Ռոմանը)...— Բույնոսովները դարեր ի վեր բարձր են նստած եղել Լոյկովներից: Մենք մեր տոհմը չեռնիգովյան պալատական իշխաններից ենք հաշվում անուն առ անուն: Իսկ դուք՝ Լոյկովներդ, Իվան Ահեղի օրոք, ինքներդ եք ձեր տոհմածառը կազմել... Սատանան կարող է տեսած լինել իշխան Լոյչկոյին, թե ինչպես է նա ելել Ուզորսկոյե երկրից...

Իշխան Մարտինի աչքերը պտտվեցին, աչքերի տակի տոպրակները թրթռացին, լաց լինելու պես ցնցվեց խոշորաշրթունք դեմքը.

— Բույնոսովնե՞րդ: Տուշինոյի ճամբարում, ձեր վոտչինան տուշինյան գողը չտվե՞ց:

Երկու իշխաններն էլ ելան թախտերի վրայից, սկսեցին միմյանց չափչփել ոտից գլուխ: Ու մեծ կոիվ պիտի բարձրանար, եթե չըմիջամտեին Ենդոգուրովն ու Սվինյինը: Հորդորեցին, հանգստացրին: Թաշկինակներով ճակատ ու վիզ սրբելով, իշխանները նստեցին տաքբեր թախտերի:

Դումայական ազնվական Ենդոգուրովը ձանձրույթից պատմում էր, թե ինչ են խոսում բոյարները արքայական Դումայում՝ խեղճերը ձեռքերն են տարածում. ցարն իր խորհրդատուների հետ Վորոնեժում նստած, միայն մի բան գիտե՝ փո՞ղ, հա՛ փող: Խորհրդատուներ է հավաքել՝ ռուս և օտարերկրացի վաճառականներ, անտոհմ-անհայտ մարդիկ, ատաղձագործներ ու դարբիններ, ու նավաստիներ, ու ջահելներ, որոնց պնչերը դահիճը վաղուց պիտի պոռթած լիներ: Ցարը նրանց ավազակային խորհուրդներն է լսում: Իսկական թագավորական Դուման հենց Վորոնեժում է որ կա: Բոլոր քաղաքներից, պոսադական ու առևտրական մարդկանցից գանգատներն այնտեղ են գնում՝ տերուտիրակա՞ն են գտել իրենց... Եվ այդ խաժամուժի հետ ուզում են թուրքական սուլթանին հաղթել: Կազովիցից, Պրոկոպի Վոզնիցինի դեսպանությունից մի մարդ գրել է Մոսկվա, որ թուրքերն իբր ծիծաղում են Վորոնեժի նավատորմի վրա, Դոնի գետաբերանից այն կողմ չի գնալու, լրիվ նստելու է ծանծաղուտի վրա:

— Տեր աստված, մեզ համար հանգիստ նստեինք, ինչ ունենք թուրքերին ջղայնացնելու,— ասաց հեզաբարո Լավրենտի Սվինյինը:

(Նրա երեք զավակներին գնդերն էին վերցրել, չորրորդը նավաստիություն էր անում: Ծերուկը կարոտում էր:)

— Այսինքն, ինչպե՞ս թե հանգիստ,— խոսեց Ռոման Բորիսովիչը, սպառնալի աչքերը չտելով նրա վրա:— Լավրենտի, կարիք չկա, որ դու, ավելի ցածր տոհմից լինելով, մյուսներից առաջ խոսքի մեջ մտնես՝ էս մեկ... (խփեց իր ազդրին:) Ինչպե՞ս թե, թուրքերի ու թաթարների առաջ՝ հանգի՞ստ: Իսկ ինչի՞ համար իշխան Վասիլի Գոլիցինին երկու անգամ Ղրիմ ուղարկեցինք:

Իշխան Մարտինը, վառարանին նայելով, ասաց.

— Բոլորը չէ, որ Վորոնեժից ու Ոյազանից էն կողմ վոտչինաներ ունեն:

Ռոման Բորիսովիչը նրա վրա փքեցրեց ռունգերը, բայց բանի տեղ չդրեց.

— Ամստերդամում լեհական ցորենի մի փթին մի գուլդեն են տալիս: Ֆրանսիայում՝ ավելի թանկ: Լեհաստանում պաները ոսկու մեջ են լողում: Մի հատ խոսիր Իվան Արտեմիչ Բրովկինի հետ, նա քեզ կպատմի, թե փողը որտեղի՞ց են քամում... Ես էլ անցյալ տարվա ցորենս հենց էնպես տվեցի օդի քաշողներին՝ փութը երեքուկես կոպեկով... Ցավալի է, չէ՞, իմ քթի տակ է. էս Վորոնա գետը, էս՝ Դոնը, ու ծովով ցորենս գնա՞ց... Մեծ գործ է. աստված օգներ, հաղթեինք սուլթանին... Դու էլ ասում ես, թե հանգիստ... Մի պստիկ քաղաք ունենալինք ծովի վրա, Կերչ է, ինչ է... Ու բացի դրանից, որպես Երրորդ Հռոմ, պիտի հոգա՞նք տիրոջ դագաղի մասին: Թե՞ լրիվ կորցրել ենք խիղճներս:

— Սուլթանին չենք հաղթի, չէ: Իզուր ենք աղյուրացել,— թեթևացած ասաց իշխան Մարտինը:— Իսկ որ բոլ ցորեն ունենք, փառք տանք աստծուն: Սովից չենք կոտորվի: Մենակ թե վազ չտանք մեր աղջիկների ետևից պոչեր կախ տալու ու տներիս մեջ գալանտ մտցընելու...

Լռելով, չոած ծնկների արանքով հատակի ոստին նայելով, Ռոման Բորիսովիչը հարցրեց.

— Լավ: Էդ ո՞վ է աղջիկների ետևից պոչ կախ տալիս:

— Խոսք չունեմ, էն հիմարները, որ Գերմանական արվարձանից ֆունտը երկու կամ երեք քառորդով կոֆեյ են առնում, ուրեմն էդ հիմարներին ոչ մի մուժիկ էլ չի կերակրի:— Իշխան Մարտինը, աչքը վառարանին գցած, ցնցում էր թոշնած կզակը, հաստատապես նոր կոիվ փնտրելով...

Դուռն ուժեղ հրեցին: Սառնամանիքից հեղձուկի մեջ ընկավ կլորերես, քիթը ցից, կարմրատակած մի սպա, կեղծամը զգզված, եռանկյունի փոքր գլխարկը ականջներին քաշած: Ծանր սապոգները՝ բոտֆորտները և կարմիր ու լայն դարձաձայներով կանաչ կափտանը ձնակոլոլ էին: Ըստ երևույթին, թափով սուրացել էր Մոսկվայի միջով:

Իշխան Մարտինը, սպային տեսնելով, բերանը բացեց ու այդպես էլ մնաց. նրան վիրավորողն էր, պրեոբրաժենյան պրուչիկ Ալեքսեյ Բրովկինը՝ ցարի սիրելիներից մեկը:

— Բոյարներ, գործերը թողեք... (Ալյոշկան շտապելուց բռնել էր բաց դռան փեղկը:) Ֆրանց Յակովլևիչն է մեռնում...

Կեղծամը ցնցեց, հանդգնորեն (ինչպես Պյոտրի անտոնիմ բոլոր սաները) շողացրեց աչքերը և կրունկ ու խթան դղրդացնելով գնաց ատյանի փտած տախտակների վրայով: Նրա ետևից խեթում էին ճաղատ գործակատարները. «Մի քիչ կամաց, քաջ գինվոր, այստեղ ախոռ չէ»:

5.

Մի շաբաթ առաջ Ֆրանց Յակովլևիչ Լեֆորտը իր պալատում խնջույքի էր նստած դանիական և բրանդենբուրգյան դեսպանորդների հետ: Հալոցքն սկսվել էր, կսթում էր տանիքներից: Ֆրանց Յակովլևիչը մեջքով դեպի բոցավառվող բուխարին նստած, ոգևորված պատմում էր մեծ ծրագրումների մասին: Ավելի ու ավելի բորբոքվելով, բարձրացնում էր կոկոսի արմավենու գավաթը և խմում դանիական թագավորի և բրանդենբուրգյան կուրֆյուրստի հետ Պյոտր ցարի եղբայրական դաշինքի կենացը: Պատուհանների առաջ տասներկու թընդանոթ կանաչ հրետասայլերի վրա միանգամից (երբ մաժորդոմը լուսամուտի մոտ թափահարում էր թաշկինակը) դղրդալից համազարկ էին տալիս: Վառոդի ճերմակ ծուխը ծածկում էր անամպ երկինքը:

Լեֆորտը ետ էր ընկնում ոսկեզօծ աթոռակի վրա, աչքերը լայն բացում, կեղծամի խոպոպները կպել էին գունատված այտերին.

— Կայսրափայտի անտառներ են աղմկում մեր մեծ գետերի ափերին... Մենակ ձկով կարող ենք կերակրել քրիստոնեական բոլոր երկրները: Վուշ ու կանեփ կարող ենք ցանել թեկուզ հազարավոր վերստեր: Հապա անմշակ դաշտերը՝ հարավի տափաստանները, ուր խոտը ծածկում է հեծյալին: Թաթարներին քշենք այնտեղից՝ աստղերին թիվ կլինի, մեր անասունին՝ չէ: Երկա՞թ է մեզ պետք՝ հանքաքարը ոտքի տակ ընկած է: Ուրալում երկաթի սարեր կան: Մեզ ինչո՞վ են զարմացնելու եվրոպական երկրները: Մանուֆակտուրանե՞ր ունեք: Կկանչենք անգլիացիների, հոլանդացիների: Մերը կկառուցենք: Աչքերդ կթարթեք, մեր մանուֆակտուրաները կունենանք: Պոսադականներին գիտություն ու արվեստ կսովորեցնենք: Վաճառականին, արդյունաբերողին կբարձրացնենք, ինչպես մտքերով էլ չի անցել:

Այսպես էր ասում գինովցած Լեֆորտը գինովցած դեսպանորդներին, որոնք ապշահար էին խմիչքից ու նրա խոսքերից: Սրահում հեղձուկ էր: Լեֆորտը մաժորդոմին հրամայեց բացել երկու լուսամուտները, և ռունգերով հաճույքով ներծծում էր հալոցքահոտ, սառը օդը: Մինչև մութն ընկնելը գավաթները պարպեց մեծ նախագծումների համար: Երեկոյան գնաց լեհական դեսպանի մոտ ու այնտեղ պարեց և խմեց մինչև առավոտ:

Հաջորդ օրը, հակառակ սովորության, Ֆրանց Յակովլևիչն իրեն հոգնած զգաց: Նապաստակի բուրքը հագնելով և գլուխը փափուկ

կտորով փաթաթելով, հրամայեց ոչ ոքի չթողնել իր մոտ: Նամակ էր ուզում գրել Պյոտրին, բայց նույնիսկ դա չկարողացավ՝ սառել էր, բուխարու առաջ բուրքի մեջ կծկված: Իտալացի բժիշկ Պոլիկոլոնին բերեցին: Սա հոտ քաշեց մեզից ու խորխից, լեզուն ճտտացրեց, քիթը քորեց: Ծովակալին լուծողական տվեցին և արյուն թողեցին: Ոչինչ չօգնեց: Գիշերը սաստիկ ջերմից Ֆրանց Յակովլևիչը կորցրեց գիտակցությունը:

Զանգակ հնչեցնող մոնթի ետևից, սուրբ հաղորդությունը գլխից վեր բռնած, պաստոր Շտորմպֆը դժվարությամբ անցնում էր մեծ սրահով: Լեֆորտի պալատը թնդում էր ձայներից՝ ամբողջ Մոսկվան էր հավաքվել: Ծրիկում էին դռները, միջանցիկ քամիներ էին փչում: Գլուխը կորցրած ծառաները իրար էին անցել, մի քանիսն արդեն հարբած էին: Լեֆորտի կինը՝ Ելիզավետա Ֆրանցևնան, պաստորին դիմավորեց ամուսնու ննջասենյակի դռան առաջ. թորշոմած դեմքին կարմիր բծեր կային, կսկիծ ընկած քիթն ուռած էր լաց լինելուց: Մորեգույն զգեստը մի կերպ քուղկապել էր, ցանցառ մազերի փնջեր էին երևում կեղծամի տակից: Ծովակալի կինը անչափ վախեցած էր, տեսնելով տանը մոտեցող այդքան երևելի անձանց: Նա համարյա ռուսերեն չէր խոսում, ամբողջ կյանքն անց էր կացրել խորքի սենյակներում: Ագուցված ափերը պաստորի կրծքին դնելով, շշնջաց գերմաներեն.

— Ի՞նչ եմ անելու: Այսքան հյուրեր.... Պարոն պաստոր Շտորմպֆ, խորհուրդ տվեք, գուցե թեթև աղանդե՞ր մատուցենք: Բոլոր ծառաները ցնորվածի պես են, ինձ ոչ ոք չի լսում: Շտեմարանների բանալիները խեղճ Ֆրանցի բարձի տակ են: (Ծովակալի կնոջ բաց դեղնագույն աչքերից արցունք հոսեց, ձեռքը մտցրեց կրծկալի տակ, հանեց թաց թաշկինակը, երեսը թաղեց մեջը:) Պարոն պաստոր Շտորմպֆ, վախենում եմ սրահ ելնել, ինչպես միշտ ինձ կորցնում եմ... Ի՞նչ է լինելու, ի՞նչ է լինելու, պաստոր Շտորմպֆ...

Պաստորը հավուր պատշաճի և թավաձայն ափոփիչ խոսքեր էր ասում ծովակալի կնոջը: Ձեռքի ափը տարավ մաքուր ածիլված դեմքի վրայով, աշխարհիկ ունայնությունը սրբեց վրայից ու մտավ ննջասենյակ:

Լեֆորտը պառկած էր լայն ու ճմրթված անկողնու մեջ: Իրանը հանգչում էր բարձր դրված բարձերի վրա: Փոս ընկած այտերի ու բարձր ճակատի վրա մազերը ցցված էին, չէր սափրվել: Ծնչում էր հաճախակի, սուլոցով, դեղնած անրակները բարձրացնելով, կարծես ևս մեկ անգամ փորձում էր կյանքի անուրի տակ մտնել: Բացված բերանը ցամաքել էր ջերմից: Միայն աչքերն էին կենդանի՝ սև, անշարժ:

Բժիշկ Պոլիկոլոն մի կողմ տարավ պաստոր Շտորմպֆին, բազմանշանակ կկոցեց աչքերը, այտերը կնճռոտեց.

— Ջիլերը,— ասաց նա,— որոնցով, ինչպես հայտնի է մեր գիտությանը, հոգին միանում է մարմնի հետ, սույն դեպքում այնքան

շատ են լցված խորխով, որ պարոն ծովակալի հոգին ամեն րոպե մարմնի մեջ է տարածվում ավելի ու ավելի նեղ անցքերով, և հարկ է սպասել, որ լիովին կխցանվեն դրանք խորխով:

Պատոր Ծորումպֆը լուռ նստեց մեռնողի սնարի մոտ: Լեֆորտը քիչ առաջ էր թողել զառանցանքը և ուշագնաց չէր արդեն, նկատելիորեն անհանգստացած էր ինչ-որ բանով: Իր անունը լսելով, ճիգ գործադրեց աչքերը պատորի վրա գցելու համար ու նորից նայում էր այնտեղ, ուր բուխարու մեջ ծխում էր մոխրագույն փայտի կտորը: Այնտեղ, բուխարու պարուրազարդերից վեր, դրված էր ծովերի ատված Նեպտունի արձանիկը, եռաժանիով, նրա բազկի տակի ոսկյա սկահակից ոսկե ջուր էր թափվում, տարածվելով ոսկյա շիթերով: Մեջտեղում, սև անցքի մեջ փայտն էր ծխում:

Զանգալով ծովակալի հայացքը դարձնել խաչելությանը, Ծորումպֆը խոսում էր հավերժական փրկության հույսի մասին, ինչ հասանելի է բոլոր ապրողներին.... Լեֆորտը անհասկանալի բառեր էր մրթմրթում: Ծորումպֆը հակվեց նրա մանուշակագույն շրթունքների վրա: Վրա-վրա հևոցի միջից Լեֆորտն ասաց.

— Շատ բան մի ասա....

Այդունանդերձ, պատորն իր պարտականությունը կատարեց. անձայն խոստովանություն առավ ու հաղորդություն տվեց մեռնողին: Երբ դուրս գնաց, Լեֆորտը բարձրացավ արմունկների վրա: Հասկացան, որ մատրդումին է կանչում: Վազ տվեցին, գտան խոհանոցում արտասվող ծերունուն: Արցունքից ուռած աչքերով, ջայլամի փետուրներով զարդարված գլխարկով, գավազանը ձեռքին մատրդումը կանգնեց անկողնու մոտ: Ֆրանց Յակովլևիչը նրան ասաց.

— Կանչիր երաժիշտներին... Ընկերներիս... Գավաթներ բերեք...

Ոտնաթաթերի վրա մտան երաժիշտները՝ ով ինչ հասցրել հագել էր: Գինով լի գավաթներ բերեցին: Երաժիշտները, շրջապատելով անկողինը, փողերը մոտեցրին շրթունքներին, և արծաթյա, պղնձյա, փայտյա վաթսուն փողերով մենուետ հնչեցրին՝ մի շքեղ պարեղանակ:

Մահագույժ զուսնատ Լեֆորտը ուսերը թաղեց բարձերի մեջ: Քունքերը ներս ընկան, ձիու պես: Անհագորեն վառվում էին նրա աչքերը: Մոտեցրին գավաթը, բայց արդեն նա չէր կարողանում ձեռքը բարձրացնել՝ գինին թափվեց կրծքին: Երաժշտության հնչյունների տակ նորից ուշագնաց եղավ: Աչքերը դադարեցին տեսնել:

Մահացավ Լեֆորտը: Մոսկվայում ուրախությունից չգիտեին ինչ անել: Այլևս վերջ օտարերկրյա իշխանությանը՝ Կուկույ արվարձանին: Սատկեց նզովյալ խորհրդատուն: Բոլորը գիտեին, բոլորը տեսնում էին. հմայական թուրմ է խմեցնում նա Պյոտրին, բայց ոչինչ ասել չէր լինի: Ստրելեցների արցունքները առաջն եկան: Ընդմիշտ կտրակվի նեռական բույնը՝ Լեֆորտի պալատը...

Պատմում էին, որ մեռնելիս Լեֆորտը հրամայել է երաժիշտներին նվագել, ծաղրածուներին ցատկոտել, պարող աղջիկներ է պարաց-

ռել, ու ինքն էլ՝ կանգնած, կիսամեռած, դուրս է թռել անկողնուց, ու ցատկոտել... Իսկ պալատի ձեղնահարկում ոռնացել ու սուլել են չարքերը...

Յոթ օր բոյարները և ամեն կարգի պաշտոնավոր մարդիկ ծովակալի դագաղի մոտ էին գնում: Ուրախություն և վախ սքողելով, մրմնում էին երկշարք լուսամուտներով դահլիճը: Մեջտեղում, հարթակի վրա դագաղն էր դրված, կիսով ծածկված սև մետաքսյա թիկնոցով: Թրերը մերկացրած չորս սպա դագաղի մոտ էին կանգնած, մյուս չորսը ներքևում, հարթակի անկյուններում: Սգազգեստ այրին հարթակի առաջ էր նստած, ծալովի աթոռի վրա:

Բոյարները բարձրանում էին հարթակի վրա, քիթ ու բերան մի կողմ թեքած, որ չպղծվեն, այտերը հպում էին գրողի տարած ծովակալի կապույտ ձեռքին: Հետո մոտենալով այրուն, գոտկաչափ խոնարհվում էին, մատները հատակին կպցնելով, ու չքվում էին պալատից:

Ութերորդ օրը Վորոնեժից, փոխվող ձիերն ուժասպառ անելով, եկավ Պյոտրը: Նրա վեցաձի, կաշեպատ սահնակը սուրաց ամբողջ Մոսկվայի միջով ուղիղ դեպի Լեֆորտի պալատի բակը: Տարբերաթույր ձիերը դժվարությամբ էին շարժում թրջված կողերը: Ծածկոցի տակից մի ձեռք դուրս եկավ՝ արձակելու փոկն էր փնտրում:

Հենց այդ ժամանակ պալատից ելնում էր Ալեքսանդրա Իվանովնա Վոլկովան, առմուտքին նրանից բացի ոչ ոք չկար: Սանկան մը-տածեց, թե նվազատոհմ մեկն է եկել՝ ձիերից դատելով: Բարկացավ, որ իր կարգի ճամփան են փակել:

— Էդ յաբուներդ դեն քաշիր, ի՞նչ ես ցցվել ճամփի մեջտեղը,— ասաց նա ցարի կառապանին:

Դուրս պարզած ձեռքը, ճարմանդը չգտնելով, չարացած պոկեց փոկը, և սահնակից ելավ թավշյա ականջավոր գլխարկով, ոչխարենու գորշագույն մահուդե քուրքով, վալենկաներով մի մարդ: Կանգնեց՝ բարձրահասակ էր. նրան նայելով, Սանկան վեր ցցեց գլուխը... Կլոր դեմքը նիհարած էր, աչքերն ուռած, սևավուն բեխերը ցից: Տե՞ր աստված, ցարն էր:

Պյոտրը թափահարեց թմրած ոտքերը, հոնքերը խոժոռեց: Մանաչեց սանուհուն, թեթևակի ժպտաց փոքր բերանի անկյունով: Խլաձայն ասաց.

— Վիշտ է, մեծ վիշտ...

Ու գնաց պալատ, թափահարելով քուրքի թևքերը: Սանկան հետևեց նրան:

Աթոռակին նստած այրին, տեսնելով ցարին, նվաղեց: Վեր թռավ, ուզեց ոտքերն ընկնել: Պյոտրը գրկեց նրան, կրծքին սեղմեց, գլխի վրայից դագաղին էր նայում: Մոտ վազեցին ծառաները: Քուրքը հանեցին հագից: Ծոպաթաթ, վալենկաներով, Պյոտրը մոտեցավ հրաժեշտ տալու: Երկար կանգնած էր, ձեռքը դագաղի եզրին դրած: Կռացավ ու հատուցեց սիրելի ընկերոջ շրթունքները, ճակատն ու ձեռքերը:

Ուսերը շարժվել սկսեցին կանաչ կափտանի տակից, ծոծրակը ձըգվեց:

Ցարի մեջքին նայող Սանկայի աչքերն արցունքոտվեցին, գեղջկուհու պես ձեռքը ալտին հենած, կամացուկ, բարալիկ ձայնով ողբաց: Այնպես էր խղճում, այնպես էր ափսոսում... Պյոտրն իջավ հարթակից, փոքր երեխայի պես ֆրֆռացնելով: Կանգ առավ Սանկայի առաջ: Սանկան դառնագին գլխով էր անում:

— Ուրիշ այդպիսի ընկեր չի լինի,— ասաց Պյոտրը: (Ծածկեց աչքերը, ցնցվեցին ճանապարհին տապալված գանգուրները:) Ուրախության մեջ էլ էինք միասին, գործ ու հոգսի մեջ էլ: Մի տեսակ էինք մտածում... (Հանկարծ ձեռքը ետ տարավ, արցունքը ցամաքեց, դարձավ կատվի նման: Փութով խաչակնքելով դահլիճ էին մըտնում բոյարները՝ մի տասը մարդ:)

Ըստ դիրքի՝ ավագները սկզբից, նրանք եռանդագին մոտենում էին Պյոտր Ալեքսեևիչին, ծնկի գալիս և ափերով հատակին հենված, ճակատները հպում էին կաղնեփայտե աղյուսիկներին: Պյոտրը նրանցից ոչ մեկին չբարձրացրեց, չգրկեց, նույնիսկ գլխով չարեց՝ կանգնած էր օտար, գոռոզ: Փքվել էին կարճ քթի եզրերը:

— Տեսնում եմ, որ ուրախ եք,— ասաց անհասկանալի և պալատից իջավ սահնակ նստելու:

6.

Այդ աշնանը Գերմանական արվարձանում, լութերական կիրխեի կողքին հոլանդական տիպի աղյուսե մի տուն կառուցեցին, փողոցին նայող ութ պատուհան ուներ: Կառուցում էր Մեծ պալատի ատյանը, այն էլ՝ շուտափույթ, երկու ամսում ավարտեցին: Այստեղ տեղափոխվեց Աննա Իվանովնա Մոնսը, մոր և կրտսեր եղբոր՝ Վիլլիմի հետ:

Բացեիբաց այստեղ էր գալիս ցարը և հաճախ մնում էր գիշերելու: Կուկույում (նաև Մոսկվայում) տունն այսպես կոչեցին՝ ցարիցայի պալատ: Աննա Իվանովնան հանդիսավոր կարգ սահմանեց՝ մաժորդոմ և լիվրե հագած սպասավորներ, ախոռում երկու վեցնչակ լեհական թանկարժեք ձիեր, կառքեր բոլոր դեպքերի համար:

Առաջվա պես այլևս մտնել չէր լինի Մոնսերի տուն՝ առատերիայր վառվող լույսերի հրավերով, մի-մի գավաթ գարեջուր խմելու: «Հեհե,— հիշում էին գերմանացիները,— վաղո՞ւց էր, որ կապտաչյա Անխենը, մաքուր գոգնոցը կապած, գավաթներ էր բաժանում սեղանների, մատուրի պես կարմրում, երբ այցելուներից մեկնումեկը, հասցնելով նրա օրիորդական հետույքին, ասում էր. «Դե, քեզ տեսնեմ, ձկնիկս, փրփուրը խմիր, ծաղիկները քեզ, գարեջուրն ինձ...»:

Մոնսերի տանը հիմա լինում էին միայն արվարձանաբնակ պատվարժան առևտրական ու մանուֆակտուրային գործեր ունեցող մարդիկ, այն էլ հրավերով՝ տոն օրերին, ճաշկերույթի: Ինչ խոսք, կատակում էլ էին, բայց հարկը պատշաճին: Անխենի աջ կողմում միշտ նստած էր լինում պաստոր Շտրումպֆը: Նա սիրում էր զվարճալի կամ ուսանելի որևէ բան պատմել հռոմեական պատմությունից: Կարմրած դեմքերով հյուրերը մտագբաղ շարժում էին գարեջրի գավաթները, վայելելով հոգոցներ հանում ունայնության մասին խոսելիս: Աննա Իվանովնան առանձնապես ձգտում էր բարեպատշաճություն սահմանել տան մեջ:

Այդ տարիների ընթացքում նա կարգին գեղեցկացել էր. քայլքը ծանրումեծ էր, հայացքը՝ անդորրաբեր, բարեբարո, սրտում: Ինչ էլ խոսեին, ինչքան էլ խոր գլուխ տային նրա ապակեպատ կառքի ետևից, ցարը նրա մոտ քնելու էր գալիս՝ և ուրիշ ոչինչ: Լավ, իսկ հետո՞: Կալվածային վարչատնից Աննա Իվանովնային գյուղացիներ շնորհեցին: Պարահանդեսներին կարող էր թանկագին քարերով պճնվել մյուսներից ոչ վատ ու կրծքին կախում էր Պյոտր Ալեքսեևիչի դիմանկարը՝ փոքր ափսեի չափ, ալմաստներով զարդարված: Որևէ բանի կարիք կամ մերժում չուներ: Դրանից այն կողմ գործն առաջ չէր գնում:

Ժամանակն անցնում էր: Պյոտրն ավելի շատ Վորոնեժում էր ապրում կամ ձիափոխ կառքերով հարավային ծովից հյուսիսային ծով պանում: Աննա Իվանովնան նամակներ էր ուղարկում նրան և ամեն անգամ կես երկտասնյակ կիտրոն կամ նարինջ (որ Ռիգայից էր բերել տալիս), հիլով երշիկ, խոտերով թրմած օղի: Բայց մի՞թե նամակով ու ծանրոցով կարելի է երկար պահել սիրեկանին: Լավ, իսկ եթե որևէ կին կապվի նրա հետ, բուն դնի սրտում: Անքուն գիշերներ էր անցկացնում նա, շուռումուռ գալով անկողնում: Ամեն ինչ անկայուն է, տարտամ, երկիմաստ: Թշնամիներ են չորսբոլորը, թշնամիներ, սպասում են միայն, թե երբ է սայթաքելու Մոնսիխան:

Նույնիսկ ամենամտերիմ բարեկամը՝ Լեֆորտը, հենց Աննա Իվանովնան կողմնակի ճանապարհներով խոսք էր բացում, թե երկա՞ր պիտի թափթփված, ամուրու կյանքով ապրի Պիտերը, փաղաքշանքով կսմթում էր Անխենի այտը. «Խոստացած բանը մի օր կլինի»: Ախ, ոչ ոք չէր հասկանում. նույնիսկ ցարական գահը, իշխանությունն չէր ուզենա Աննա Իվանովնան՝ անհանգիստ, անհաստատ իշխանություն է... Ոչ, ընդամենը կայունություն, մաքրություն ու բարեպատշաճություն...

Մի միջոց էր մնում՝ հմայություն ու կախարդանք: Մոր խորհրդով Աննա Իվանովնան մի անգամ, խոր քուն մտած Պյոտրի անկողնուց ելնելով, նրա կամզոլի տուտի մեջ իր արյամբ թաթախված լաթի կտոր կարեց... Պյոտրը գնաց Վորոնեժ, կամզոլը թողեց Պրեոբրաժենսկոյեում, այն օրվանից էլ ոչ մի անգամ չհագավ: Պառավ մայրը հմայող կանանց էր բերում ներսի սենյակները: Բայց ասել, թե ում վրա թույլ ու գիր պիտի անեն, մայր ու աղջիկ վախենում էին: Վհուկության համար իշխան-կայսր Ռոմոդանովսկին ցցի էր հանում:

Թվում էր, եթե հիմա Աննա Իվանովնային հասարակ (եկամուտ ունեցող) մի մարդ սիրեր՝ ա՛հ, ամեն ինչ կփոխարիներ անխռով կյանքով: Մաքուր ու կոկիկ մի տնակ, թող որ մաժորդոմ էլ չլիներ, արևը շողում է մոմած հատակի վրա, լուսամտագոգերին դուրեկան

բուրում է հասմիկը, խոհանոցից խարկած սուրճի հոտ է գալիս, անդորրաբեր հնչում է կիրխեի զանգը, և պատվարժան մարդիկ, տան մոտով անցնելիս, հարգանքով խոնարհվում են լուսամուտի մոտ ձեռագործը ձեռքին նստած Աննա Իվանովնային:

Լեֆորտի մահից հետո կարծես սև ստվեր ընկավ Աննա Իվանովնայի վրա: Այդ յոթ օրվա ընթացքում (մինչև Պյոտրի գալուստը) այնքան լաց եղավ, որ պառավ Մոնսիխան մարդ ուղարկեց բժիշկ Պոլիկոլոյին կանչելու: Վերջինս հոգնա ու լուծողական նշանակեց, վշտահարության հետևանքով արյան մեջ հայտնված ավելորդ խորխը հեռացնելու համար: Աննա Իվանովնան սարսափով էր սպասում Պիտերի գալստյանը, ինքն էլ չհասկանալով, թե ինչու: Հիշում էր նրա հողագույն դեմքը, ատամնացավից ուռած այտով, երբ ստրելեցների ամենագարհուրելի մահապատժից հետո նա նստած էր Լեֆորտի մոտ: Չոված աչքերի մեջ զայրույթն էր քարացել: Սառնամանիքից կարմրած ձեռքերը դրել էր դատարկ ափսեի մեջ: Չէր ուտում, կատակներին ականջ չէր դնում: (Կատակում էին, վախից ատամ ատամի զարկելով:) Ոչ ոքի չնայելով, սկսեց անհասկանալի բաներ ասել.

— Չորս գունդ չէին, լեգեոն էին... Գլուխները կառափնարանին էին դնում, էլի երկու մատով խաչակնքում... Հնի համար, չքավորության համար... Որ մերկանան ու կրոնախնութիւն անեն... Պոսադականնե՞ր: Ազովից չպետք էր սկսել, այլ Մոսկվայի՛ց...

Մինչև հիմա Աննա Իվանովնան զարհուրում էր, հիշելով այն օրվա Պիտերին: Զգում էր, որ անդորրաբեր պատուհանից դժնի տառապանքների գիրկն է քաշում իրեն տանջահար անող այդ մարդը... Ինչի՞ համար: Չլինի՞ իրոք նեռն է նա, ինչպես փսփսում են ռուսները: Երեկոները, անկողնում մոմի աղոտ լույսի տակ պառկած, ձեռքերը կոտրատելով, աղեկտուր լաց էր լինում Աննա Իվանովնան:

— Մամա, մամա, ի՞նչ եմ անելու ես: Չեմ սիրում նրան: Գալու է՝ անհամբե՞ր... Ես՝ մեռա՞ծ... Գուցե ավելի լավ կլիներ խեղճ Ֆրանցի պես դագաղո՞ւմ պառկած լինեի:

Հհագնված ու չսանրված, կոպերն ուռած, առավոտյան պատուհանից անսպասելի տեսավ, թե ինչպես ցանկապատից այն կողմ, դարուփոս փողոցում կանգ առավ ցարական սահնակը: Այս անգամ ձեռուոտ չընկավ. ինչպես կար՝ գլխանոցով, բրդյա շալը կապած, այդպես էլ թող տեսնի: Պարտեզի միջով քայլելով, Պյոտրը նույնպես տեսավ նրան՝ պատուհանի մոտ կանգնած, գլխով արեց անծպիտ: Նախասենյակում կոշիկները սրբեց փոքրիկ գորգի վրա: Սթափ էր, լուրջ:

— Բարև, Աննուշկա,— ասաց մեղմությամբ: Ճակատը համբուրեց:— Որբացանք մենք:— Նստեց պատի տակ, պատի ժամացույցի մոտ, որի ճոճանակին պղնձյա ծիծողուն մի դեմք էր տարուբերվում: Կիսաձայն էր խոսում, ասես զարմանալով, որ մահն այդչափ անիծոհեմ սխալվեց:— Ֆրա՞նց, Ֆրա՞նց... Վատ ծովակալ էր, բայց մի ամբողջ նավատորմ արժեր: Սա վիշտ է, սա վիշտ է, Աննուշկա... Հիշում ես, ինչպես առաջին անգամ ինձ քեզ մոտ բերեց, դեռ փոքր աղջիկ էիր, վախեցար, որ հանկարծ չջարդեմ երաժշտական արկղիկը... Մահը նրան չպիտի տաներ... Չկա՞ Ֆրանցը՝ անհասկանալի է...

Աննա Իվանովնան լսում էր, բրդյա շալն աչքերին քաշած: Նախապատրաստված չէր, չգիտեր ինչ պատասխանի: Արցունքները հոսում էին շալի տակից: Դռնից այն կողմ զգուշությամբ ամանեղենն էին դասավորում, կամացուկ շրխկացնելով: Քիթը արտասվախառն քաշելով, Աննան շշնջաց, որ Ֆրանցը, հավանորեն, հիմա իրեն լավ է զգում աստծո մոտ: Պյոտրը փոքր-ինչ օտարոտի նայեց նրան....

— Պիտեր, ճամփից հետո ոչինչ չեք կերել, խնդրում եմ, մնացեք, մի բան կերեք: Այսօր հենց ձեր սիրած տապակած երշիկն ունենք...

Տխրությամբ նկատեց, որ երշիկն էլ չհրապուրեց նրան: Նստեց կողքին, բռնեց ոչխարենու հոտ բռնած ձեռքը, սկսեց համբուրել: Մյուս ձեռքով Պյոտրը շոյում էր նրա մազերը գլխանոցի տակ.

— Երեկոյան մի ժամով կգամ... Լավ, հերիք է, հերիք, ձեռքս լրիվ թրջեցիր... Գնա, մի կտոր երշիկ բեր, մի բաժակ օղի... Գնա, գնա... Էսօր շատ գործ ունեմ...

7.

Լեֆորտին թաղեցին մեծ շուքով: Երեք գունդ էր գնում՝ գեներալական դրոշներով, թնդանոթներով: Շարալուծ տասնվեց սևաթույր ձիեր էին քաշում դիակառքը, որից հետո տանում էին ծովակալի գլխարկը, սուրը և խթանները՝ բարձիկների վրա: Սև զրահով ու փետուրներով մի հեծյալ էր գնում, իջեցրած ջանը բռնած: Դեսպաններ և դեսպանորդներ էին գնում՝ սգազգեստ: Նրանց ետևից բոյարներ, օկոլնիչիներ, դումայական և մոսկովյան ազնվականներ՝ շուրջ հազար մարդ: Ծեփորում էին զինվորական փողհարները, դանդաղ զարկում էին թմբուկները: Պյոտրը քայլում էր պրեոբրաժենյան առաջին վաշտի առջևից:

Մոտերքում ցարին չտեսնելով, բոյարներից մի քանիսը կամաց-կամաց արագաքայլ անցնում էին օտարերկրյա դեսպաններից, թափորի մեջ առաջինը լինելու համար: Դեսպաններն ուսերն էին թրթվում, իրար մեջ շշնջալով: Գերեզմանատան մոտ նրանց բոլորովին ետ թողեցին: Ռոման Բորիսովիչ Բուլնոսովը և անչափ հիմար իշխան Ստեպան Բելոսելսկին քայլում էին համարյա անիվներին կպած, դիակառքից բռնած: Ռուսներից շատերը գինովցած էին, լուսամութով հավաքվել էին հուղարկավորության, սովածացել և հոգեհացին չսպասելով, սառը ուտեստեղենի մատուցարաններով բեռնված սեղանի մոտ խոնվելով, կերել ու խմել էին:

Երբ դագաղը դրեցին սառած կավի թմբի վրա, փութկոտ քայլերով մոտեցավ Պյոտրը: Նայեց բոյարների սափրված, մեկնն վախվորած դեմքերին, այնքան սպառնագին մերկացրեց ատամները, որ

շատերը թաքնվելով ետ-ետ քաշվեցին: Գլխի շարժումով մոտ կանչեց հաստափոր Լև Կիրիլովիչին.

— Ինչի՞ համար են դեսպաններից առաջ խցկվել: Ո՞վ է հրամայել:

— Էլ խայտառակեցի, էլ հայհոյեցի, չեն լսում,— ցածրաձայն պատասխանեց Լև Կիրիլովիչը:

— Ծնե՞ր: (Ապա՝ բարձրաձայն:) Ծնե՞ր են, մարդիկ չեն:— Վիզը ցնցեց, գլուխն օրորեց, դոփեց բոտֆորտով: Բոյարների ետ քաշված ամբոխի արանքներով գերեզմանի մոտ սողոսկեցին դեսպաններն ու դեսպանորդները, ուր բաց դագաղի մոտ, սառած, մահուդե բարակ կաշեռանով կանգնած էր ցարը՝ մենակ, բոլորին օտար: Սարսափած հետևում էին բոլորը, թե արտառոց էլ ինչ է անելու նա: Սուսերը խրելով հողի մեջ, նա ծածուկ չոքեց և դեմքով փարվեց այն ամենին, ինչ մնացել էր խելացի բարեկամից, արկածներ որոնողից, կովարար, խրախճանապեր ու հավատարիմ ընկերոջից: Վեր կացավ, չարացած ոլորեց աչքերը:

— Ծածկիր... Իջեցրու...

Ճարճատեցին թմբուկները, իջան դրոշները, կրակեցին թնդանոթները՝ ճերմակ քուլաներ արձակելով: Թնդանոթաձիգներից մեկը անուշադրությունից չհասցրեց ետ ցատկել, կրակը պոկեց գլուխը: Մոսկվայում այդ օրը խոսում էին.

«Սատանային թաղեցինք, բայց մյուսը մնաց՝ երևում է, դեռ քիչ մարդու գլուխ է կերել»:

8.

Առևտրական ու արհեստագործ երևելի մարդիկ, սահնակները դարպասից դուրս թողնելով և գլխարկները հանած, երկարուկ, բակի համարյա կենտրոնից սկսվող ծածկած սանդուղքով բարձրանում էին Պրեոբրաժենսկոյե պալատ: Հարուստ վաճառական-գործակալները և առևտրական համքարության ներկայացուցիչները եկել էին եռաձի գբ.գապատ սահնակներով, ներս էին մտնում առանց երկնչելու, աղվեսի, համբուրգյան մահուդից, փորատակի մորթու մուշտակներով: Խարխլված պալատը վատ էր տաքացված: Ժիր ու կայտառ նայելով կորացած ու ճեղքառատ առաստաղին, թախտերի ու դռների ցեցը խփած կարմիր մահուդին, ասում էին.

— Խախտում շինվածք է... Երևում է, որ բոյարական գործ է: Ափսոս, ափսոս...

Վաճառականներին այստեղ էին հավաքել շուտափույթ, անվանական ցուցակներով: Մի քանիսը չէին եկել, վախենալով, որ հանկարծ կտտիպեն ուտել նիկոնական ամանեղենից և ծխախոտ ծխել: Կռահում էին, թե ցարն ինչի համար է իրենց պալատ կանչել: Վերջերս Կարմիր հրապարակում, դումայական ատենապետիրը ազդարարքի վրայից, թմբկազարկից հետո մեծ հրամանագիր էր կարդացել. «Թագավորին հայտնի է դարձել, որ վաճառականներին ու առևտրական համքարությանը, ու բոլոր պոսադականներին, առևտրական ու արդյունահանող մարդկանց ատենական բազում քաշքշուկներից, վոյեվոդաներից, ատենավոր ու պաշտոնավոր զանազան մարդկանցից **մեծ վնասներ ու քայքայում** է գալիս, իրենց առևտրական ու արհեստավորական գործերում... Ողորմածությամբ տեր թագավորը նրանց մասին հրաման է արձակում. նրանց ամեն տեսակ վնասողական, դատական ու խնդրագրական ու առևտրական գործերում, ու պետական հարկերի գանձման գործերում թող **կառավարեն իրենց բուրմիստրները և բուրմիստր թող ընտրեն** իրար մեջ տարին մեկ՝ կարգին ու արդարամիտ մարդկանց, ում որ կուզեն իրար մեջ: Իսկ նրանցից մեկական մարդ թող լինի առաջինը, ամիսը մեկ թող նստի որպես արբիդիենտ....»: Քաղաքներում, պոսադներում և արվարձաններում հրամայված էր դատ ու դատաստանի համար և տուրքակոպարի գանձման համար զեմստվոյական բուրմիստրներ ընտրել երևելի ու արդարամիտ մարդկանցից, իսկ մաքսատուրքի և օդեռների բուրմիստրներ՝ ում որ կուզենան: Բուրմիստրները պիտի **ինքնիրեն նստեն** և առևտրական ու տուրքակոպարի գործերը **կառավարեն** Բուրմիստրական հատուկ պալատում, որը իր վեճերն ու խնդրագրերը պիտի ներկայացնի միայն թագավորին, շրջանցելով ատյանները:

Կրեմլում, Յոհանն Նախակարապետի տաճարի մոտ, Բուրմիստրական պալատին հին ցարական մի շինություն հատկացրեցին, իր ընկուզներով, ուր գանձատունը պիտի լիներ:

Նման արդար գործի համար մոսկովյան վաճառականները դրամ չխնայեցին (վաղո՞ւց էր, որ Կրեմլում անգլիարկ էին շրջում, այն էլ վախենալով, իսկ հիմա իրենք են նստում այնտեղ), խարխուլ պալատը նոր, արծաթանման տանիքով ծածկեցին, դրսից ու ներսից ներկեցին, ոչ թե փայլարե, այլ ապակյա լուսամուտներ դրեցին: Նկուղների մոտ իրենց սահնակները կարգեցին:

Վոյեվոդական կեղեքումից ու ատյանական անարդարություններից ազատվելու համար վաճառականությունը նախկինից երկու անգամ ավելի տուրքակոպար պիտի վճարեր: Գանձաբանին ակնհայտ եկամուտ էր դա: Լավ, իսկ վաճառականությա՞ն համար՝ դժվար էր ասել:

Հիրավի, վոյեվոդաներից, մանր ու մեծ ատենավորներից կյանքն անտանելի էր դարձել՝ գայլի պես անկշտում, աչքդ թեքեցիր, կոկորդդ կկրծեն, Մոսկվայում քարշ կտան դատարաններում, կտկլորացնեն, իսկ քաղաքներում ու պոսադներում պտավոծով կչարչարեն վոյեվոդաների քակերում: Այդպես էր, այդպես...

Սակայն շատերը, անշուշտ, ավելի խորամանկները, զգուշացան և ամենևին էլ վատ չէին ապրում. վոյեվոդայի դուռն էին գնում փողով, փոխատեղավորին շաքար, մահուդի կտոր կամ ձուկ էին ուղարկում, դատական գործակատարին կանչում ատոծո տվածը ճաշակելու: Որոշ հարուստների տանը ոչ թե վոյեվոդան կամ ատենավորը, սատանան անգամ գլխի չէր ընկնի, թե ինչքան ապրանք կամ փող կա: Անշուշտ, այնպիսի արծիվներ, ինչպիսիք էին Միտրոֆան

Շորինը՝ հանգստարանային առաջին վաճառականը, կամ Ալեքսեյ Սվեշնիկովը, թաքցնելու պետք չունեին, միտրոպոլիտն էր նրանց հյուր գնում: Ուրախ էին թեկուզ եռակի կոպարատորք վճարել Բուրմիստրական պալատին՝ այնտեղ թե պատիվ ունեին, թե ուժն էր իրենցը, թե կարգը: Բայց ասենք, Վասկա Ռեյակին ավա՞գը: Երկաթեղենի վաճառաշարքի նրա պատիկ խանութում երեք ալտինի ապրանք լինի- չլինի, նստած, աչքերը կարբեր լաթի կտորով: Այնինչ, գիտցող մարդիկ ասում էին, որ եթե լավ հաշվես, մի երեք հազար շունչ մենակ ճորտագրված գյուղացի ունի: Ոչ միայն մուժիկ ու պոսադական, քիչ վաճառականներ կային, որ պարտք չլինեին նրան՝ ծանր մուրհակով: Ու այնպիսի քաղաք կամ պոսադ չկար, ուր Ռեյակինը երկաթեղենի պահեստ կամ խանութ չունենար, ու այդ բոլորը գրված էր նրա ազգականների ու գործակատարների վրա: Ոչ մի հնարով նրան բռնեցնել չէր լինի. շնչեփաձական պես մերկ էր ու լարծուն: Բուրմիստրական պալատը նրա համար սնանկացում էր՝ յուրայիններից քողարկվել չէր լինի:

Սպասելով ցարի հայտնվելուն, ավագ վաճառականները նստել էին թախտերին, կրտսերները ոտքի էին: Հասկանում էին. ուրեմն, փող է պետք տեր թագավորին, ուզում է սրտաբաց խոսել իրենց հետ: Վաղուց էր պետք սրտաբաց լինել... Առաջին անգամ այստեղ լինողները ոչ առանց երկյուղի էին նայում գահատեղի (գահը չկար, միայն ամպհովանին էր մնացել) աջ ու ձախ կողմերի առյուծներ ու թռչուններ նկարած դռներին:

Պյոտրը անսպասելիորեն ելավ կողքի դռնակից՝ հոլանդական զգեստով էր, կարմրատակած, ըստ երևույթին, խմած էր: «Բարև, քարև»,— կրկնում էր բարեհոգությամբ, ողջունում էր ձեռք սեղմելով կամ ուսերը թփթփացնելով, գլուխները շոյելով: Մի քանի հոգի կային հետը՝ Միտրոֆան Շորինը և Ալեքսեյ Սվեշնիկովը (հունգարական կափտաններով), Օսիպ և Ֆյոդոր Բաժենին եղբայրները՝ լրջադեմ ու բարետես, վեր ոլորած բեխերով, օտարերկրյա մահուդե նեղուս զգեստներով, կարճլիկ ու ծանրումեծ նորահարուստ Իվան Արտեմիչ Բրովկինը՝ մաքուր ածիլված, մուգ շագանակագույն պորտաճնա կեղծամով, դումայական խստադեմ ատենադպիր Լյուբիմ Դոմնինը, մեկն էլ կար՝ հագուստից դատելով, սովորական պոսադական կլիներ, բոլորին անծանոթ, գնչուի մորուքով, բարձր ու նաղատ ճակատով մարդ էր: Ըստ երևույթին, շատ էր վախվորած, ամենավերջից էր գալիս:

Պյոտրը նստեց թախտին, ձեռքերը դրեց չռած ծնկներին: «Նըստեք, նստեք»,— ասաց առաջ եկած վաճառականներին: Վերջիններս տատամսում էին: Պյոտրը հրամայեց նստել, գլուխը ցնցեց: Ավագները տեղնուտեղը նստեցին: Կանգնած մնացած դումայական ատենադպիր Լյուբիմ Դոմնինը երևի գրպանից հանեց խողովակաձև ոլորած հրամանագիրը, չոր շրթունքները լմլմացրեց: Օսիպ և Ֆյոդոր Բաժենին եղբայրներն իսկույն վեր թռան, անգլիական գլխարկները

փորներին սեղմած, հպարտորեն կախեցին գլուխները: Պյոտրը գլխով արեց նրանց կողմը.

— Այ էսպիսի մարդիկ են մեզ պետք... Ուզում եմ բոլորիդ առաջ Օսիպին և Ֆյոդորին շնորհ անել... Անգլիայում, Հոլանդիայում շնորհ են անում առևտրական լավ գործերի համար, լավ մանուֆակտուրաների համար, մենք էլ պիտի նույն սովորությունը մտցնենք: Մի՞շտ եմ ասում: (Թեքվեց աջ, թեքվեց ձախ: Բարձրացրեց հոնքը): Ի՞նչ եք տատանվում: Վախենում եք, թե փո՞ղ եմ ուզելու ձեզանից: Նոր ձևով է հարկավոր ապրել, վաճառականներ, աճա թե ինչ եմ ուզում...

Հարուստ մահուդավաճառ Մոմոնովը, գլուխ խոնարհելով, հարցրեց.

— Էդ ինչպե՞ս նոր ձևով ապրենք, տեր թագավոր:

— Ետ սովորել մենակ ապրելուց... Իմ բոյարներն իրենց տներում խլուրդի պես նստած են: Ձեզ չի կարելի, դուք առևտրական մարդիկ եք... Հարկավոր է սովորել առևտուր անել ոչ թե մենակ-մենակ, այլ կումպանիաներով: Ի՞նչ սիրուն գործ է Արևելա-Հնդկական կումպանիան Հոլանդիայում, միասին նավեր են կառուցում, միասին առևտուր անում: Մեծ եկամուտներ են ձեռք բերում... Մենք պիտի սովորենք նրանցից... Եվրոպայում ակադեմիաներ կան դրա համար: Գուզենաք՝ Ամստերդամի բորսայից ոչ պակաս բորսա կսարքենք: Կումպանիաներ կազմեք, մանուֆակտուրաներ հիմնեք... թե չէ մի բան գիտեք՝ չիաբես, չեմ ծախի...

Ջահել մի վաճառական, սիրահարված նայելով Պյոտրին, հանկարծ գլխարկով խփեց ձեռքին.

— Էդ ճիշտ է, մերը դա է...

Սկսեցին նրա փեշը քաշել: Գլուխը տարուբերելով, ուսերը թոթվելով, նա ասաց.

— Ի՞նչ է: Ճիշտ չե՞մ ասում: Խաբելով ենք ապրում, մենակ խաբելով՝ պակաս կշռենք, պակաս չափենք...

Պյոտրը ծիծաղեց (անուրախ, թավաձայն, բերանը կլոր բացած): Մոտ կանգնածները նույնպես քաղաքավարի ծիծաղեցին: Ընդհատելով ծիծաղը, Պյոտրը խստաձայն ասաց.

— Երկու հարյուր տարի առևտուր եք անում, չսովորեցիք... Հարստության չորս կողմը պտույտ եք տալիս... Էլի նույն չքավորությունն ու տկլորությունը: Մի կոպեկ վաստակեք, ու վազ տաք խմելու: Էդպես չէ՞:

— Բոլորն էդպես չեն, տեր թագավոր,— ասաց Մոմոնովը:

— Չէ, էդպես է: (Ոռնգերն ուռեցրեց): Արտասահման գնացեք, նրանց վաճառականներին նայեք՝ թագավո՞ր են, թագավո՞ր: Մենք սպասելու ժամանակ չունենք, մինչև ինքներդ սովորեք... Խոզ կա, որի մուրթը զոռով պիտի խոթես լափի մեջ... Ինչի՞ համար օտարերկրացիք ինձ օրուարև չեն տալիս: Մեկ է՛ն նրանց տուր կապալով, մեկ է՛ն տուր... Անտառ, հանքեր, արհեստագործություն... Ինչի՞ մերոնք չեն կարողանում: Սատանան գիտի որտեղից մի մարդ էր եկել Վորոնեժ, էն տեսակ բաներ, էն տեսակ ծրագրումներ ասեց:

Ոսկի երկիր ունեք, ասաց, մենակ թե աղքատ մարդիկ եք... Ինչի՞ց է սա։ Ես սուս մնացի... Հարց եմ տալիս՝ թե՞ ուրիշ տեսակ մարդիկ են ապրում մեր երկրում։ (Վաճառականներին զննեց դուրս պրծած աչքերով։) Ասված ուրիշ մարդիկ չի տվել։ Նրանցով պիտի գործ անենք, էդպե՞ս է, թե չէ։ Մեկ-մեկ ռուսները բկիս են կանգնում... Ու ո՞նց են կանգնում։ (Ականջը պրկվեց, վզի երակը պայթելու վրա էր։)

Այդ ժամանակ նրա կողքը նստած Իվան Արտեմիչը բարեսրտորեն ու երգեցիկ ասաց.

— Ռուսներին շատ են ծեծել, ու ծեծել են անտեղի, դրանից էլ դարձել են այլանդակ։

— Հիմա՛ր,— բղավեց Պյոտրը,— հիմա՛ր։— Եվ արմունկով բոթեց նրա կողը։

Իվան Արտեմիչն ավելի հիմարավուն մի բան ասաց.

— Ըհը, բա իմ ասա՞ծն ինչ էր...

Պյոտրը մի բոպե կատաղած նայում էր Բորովկինի փայլող, տրխմարավարի կկոցած, հիմարի ժպիտով դեմքին։ Ձեռքի ափով ճնշեց նրա ճակատին.

— Վանկա, ծաղրածու լինելու հրաման դեռ քեզ չեմ տվել։

Բայց ըստ երևույթին, ինքն էլ հասկացավ, որ վաճառականների առաջ բորբոքվելն ու բարկանալը խելամիտ չի լինի։ Վաճառականը բոյար չէ. վերջիններս թաքնվելու տեղ չունեն՝ վոտչինան գըրպանը դնել չի լինի։ Վաճառականը խխունջի պես է, թեթև բանից պոզիկները կքաշի ու ետ-ետ կգնա իր կապիտալով... Դահլիճում իսկապես լռություն տիրեց, մարդիկ զգուշացան։ Իվան Արտեմիչը խորամանկորեն կկոցած աչքի պոչով Պյոտրին էր նայում։

— Լյուբիմ, կարդա,— ասաց Պյոտրը ատենադպիրին։

Բաժենին եղբայրները նորից հարգալից կախեցին գլուխները։ Լյուբիմ Դոմնինը հնչեղ ու չոր ձայնով, դանդաղ կարդում էր.

«...սույն բարեշնորհ արտոնագիրը տրվում է ջանադիր եռանդի և նավաշինության մեջ կատարած գործի համար... Անցյալ տարի Օսիպ և Ֆյոդոր Բաժենինները Վոչուգ գյուղում գերմանական նմուշով ջրի ուժով գործող սղոցարան են կառուցել առանց դրսի վարպետների, իրենք իրենց, որպեսզի ծառերից տախտակ կտրեն ու Արխանգելսկում վաճառեն օտարերկրացի և ռուս վաճառականներին։ Եվ նրանք տախտակը կտրել ու Արխանգելսկ են հասցրել ու ծովով արտահանել են։ Եվ նրանք մտադրվել են իրենց գործարանի կողքին նավեր ու նավակներ կառուցել, տախտակ և ռուսական այլևայլ ապրանք ծովով արտահանելու համար։ Եվ մենք՝ մեծն թագավորս, շնորհ ենք բերում նրանց, հրամայելով իրենց գյուղում նավեր ու նավակներ կառուցել և այն ապրանքներից, որ նավաշինության ժամանակ արտահանելու են ծովով, հրամայում ենք մաքս չվերցնել, և օտարերկրացի ու ռուս վարպետներին թող ազատ վարձեն իրենց ունեցած փողով։ Եվ հենց նավերը պատրաստ եղան, թող ավազակներից

պաշտպանվելու համար թնդանոթներ ու վառոդ պահեն, նաև օտարերկրյա առևտրական ուրիշ նավերից պաշտպանվելու համար...»։

Երկար կարդաց ատենադպիրը։ Գլանաձև փաթաթեց արտոնագիրը՝ կախ կենիքով, ափի մեջ դրած, պարզեց Օսիպին և Ֆյոդորին։ Ընդունելով, եղբայրները մոտեցան Պյոտրին և լուռ խոնարհվեցին մինչև գետին՝ ամեն ինչ հարկը պատշաճին, արժանապատիվ։ Պյոտրը ուսերից բռնած, բարձրացրեց նրանց ու հանբուրեց, բայց արդեն ոչ թե ցարական սովորությամբ այտը այտին, այլ բերանները հանբուրեց պինդ-պինդ։

— Թանկ է, որովհետև նոր գործ է,— ասաց նա վաճառականներին։ Բիբերը դեսուդեն տանելով գտավ բոլորին անծանոթ, հաղատ ճակատով ու գնչուի մորուքով պրուսադպանին։— Դեմիդիչ։ (Սա հատու շարժումներով առաջ խցկվեց։) Դեմիդիչ, գլուխ տուր վաճառականներին... Նիկիտա Դեմիդի զավակ Անտոֆի՝ տուլացի դարբին է։ Ատրճանակ ու հրացան է սարքում անգլիականներից ոչ պակաս։ Թուջ է ձուլում, հանք որոնում։ Մենակ թներն են կարճ։ Խոսեք նրա հետ. վաճառականներ, մտածեք։ Իսկ ես նրա բարին եմ կամենում։ Պետք եղավ՝ հող ու գյուղեր կշնորհենք։ Դեմիդիչ, գլուխ տուր, ես քեզ երաշխավոր կլինեմ։

9.

— Դու ո՞վ ես։ Ի՞նչ գործ ունես։ Ո՞ւմ ես ուզում էստեղ։

Խստահայաց, լայնալանջ մի պառավ խոժոռ հայացքով զննում էր Անդրեյ Գոլիկովին (պալեխցի սրբանկարչին)։ Դարչնագույն, կոշտ մաճառե ծակ ու ծվեն կաֆտանի տակ դողում էր նրա փըշփշած մաշկը։ Մարտյան խոնավ քամի էր փչում։ Մերկացած թփերն էին ավվում Բելի-գորոդի քարուքանդ պատերի վրա։ Փչոտած ու քաղցած ագռավները թոչելով աղբակույտերի վրայից, կռռում էին տագնապալի։ Վաճառական Վասիլի Ռեյալինի անանցանելի պատը ձըգվում էր անկյուն կազմած մոսկովյան պարսպի կողքով։ Մռայլ էր վայրը, փողոցները նեղ ու ամայի։

— Հայր սուրբ Ավրաամիի կողմից եմ եկել,— շշնջաց Անդրեյը և երկու մատը ամուր դրոշմեց ճակատին։ Կնոջ ետևից, անվակոսներով ծածկված բակում, թեքկտուր պահեստարանների մոտ ծառս էին լինում շղթայակապ ու նիհար որձ շները... Անդրյուշկան ամբողջովին սառած էր, տաք էին միայն աչքերը... Պառավը, փոքր-ինչ հապաղելով, բակ թողեց նրան, ցույց տվեց, որ ցեխի միջով գցած փայտերի վրայով գնա բարձր ու երկարուկ շինության կողմը, որը սանդուղք ու առմուտք չուներ։ Հենց տանիքի տակ շրխկում էին փայտարե պատուհանների փակոցափեղկերը։

Իշան մութ նախասրահը, ուր տակառիկների հոտ էր գալիս։ Պառավը բոթեց Անդրյուշկային. «Ոտներդ խստի վրա սրբի, գոմ չես մտնում,— և դադար տալով, դարձյալ անբարյացակամ, ավելացրեց.— Հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո»։ Բացեց ներքնա-

հարկ տանող ցածրիկ դռնակը: Այստեղ շոգ էր, վառարանի ածուխներից լուսավորված էին ամկյունում դրված սրբապատկերների մթին տախտակները: Անդրեյը երկար խաչակնքում էր՝ հնազույն սրբոց սարսռագրու աչքերին նայելով: Երկնչելով, մնաց դռան մոտ: Պառալը նստեց: Պատից այն կողմ խլաձայն երգում էին՝ շատ էին ձայները:

— Հայր սուրբը քեզ ինչի՞ է ուղարկել:

— Մեծ գործի:

— Ի՞նչ գործի:

— Երեք տարով՝ հայր սուրբ Նեկտարիի մոտ:

— Նեկտարիի մոտ,— ձգեց պառավը:

— Ուղարկել է, որ ճամփան ցույց տաք: Դրսում ապրել չեմ կարող՝ մարմինս բաղցած է, հոգիս՝ սարսռած: Վախենում եմ: Ճգնարան եմ փնտրում, դրախտի ապրուստ (Անդրյուշկան քիթը վեր քաշեց)... Խղճա, մայրիկ, դուրս չքշես:

— Հայր սուրբ Նեկտարին քեզ հաճար ճգնարան կարքի,— խոսեց պառավը հանելուկով: Ածուխների լույսի տակ նրա աչքերը նեղացան:

Անդրեյը պատմում էր. ահա արդեն ավելի քան կես տարի դռնեդուռ ընկած, մեռնում է ցրտից ու սովից: Կապվել է ամեն տեսակ մարդկանց հետ, իրեն դրդել են գողության. «Չեմ կարող, հոգիս սարսռում է»: Պատմեց, թե ինչպես այս ձմռանը, ձնաքքերի ժամանակ գիշերել է քաղաքի պարիսպների ծակ տանիքների տակ. «Մի քիչ խուռ էի գտնում, խսիրով ծածկվում: Բուքը փչում էր, ձյունը պուտլտ տալիս, մեռած ստրելեցները պարաններից կախ պար էին գալիս, խփվում պատերին: Այդ գիշերներին խաղաղ հանգրվան բաղձացի, անխոով ապրուստ...»:

Երկար-բարակ հարձուփորձ անելով հայր սուրբ Ավրաամիի մասին, պառավը տնքալով ոտքի ելավ. «Արի ետևիցս»: Անդրյուշկային նորից տարավ մութ նախասենյակի միջով, սանդուղքով իջան: Ասելով, որ կանգնի դռան տակ, մտավ ներքնահարկ, ուր երգում էին: Մոմի և խունկի տաք բույր փչեց: Երեսունից ավելի ծնկաչոք մարդ կար ներսում: Թավշածածկոց գրակալի մոտ կանգնած, ուսը ծուռ, ալև կապույտով ու խաչգդակով մի մարդ կարդում էր: Զեռագիր ծիսարանի մաշված էջը շրջելով, զգզգված մորուքը տնկում էր մոմերի լույսի կողմը: Ամբողջ պատի վրա, նույնիսկ հատակից սկսած, մոմեր էին վառվում նովգորոդյան հին ոճի մեծ ու փոքր սրբապատկերների առաջ:

Ժամասացությունն անտերտեր եղանակով էր ընթանում: Մոայլ էին երգում ու ոնգաձայն: Հայր սուրբի աջ կողմում, աղոթողներից առաջ, ծունկ էր չոքել փոքրամարմին, այծամորուս Վասիլի Ռեյակինը: Քաշում էր կաշվե տերոդորմյան, աչքերը մեկ գցելով սրբապատկերների վրա, մեկ թեթևակի շրջվելով՝ խեթում էր, ու նրա հայացքի տակ աղոթքները մոլեռանդությամբ գլուխ էին խոնարհում, հատակին խփելով, անգամ արնոտելով ճակատները:

Ոտը ծուռ հայր սուրբը փակեց գիրքը, բարձրացրեց գլխից վեր, շրջվեց. մորուքը զգզգված էր, ոչ ծեր դեմքի վրա աչքի էր ընկնում ջարդված քիթը: Զոված աչքերը հառելով ասես սարսափելի մի տեսիլքի, բացելով փշրված ատամներով բերանը, աղաղակեց.

— Բարեպաշտ Իպպոլիտի՝ հռոմեական պապի խոսքերը հիշենք. «Նեռի գալստյան ժամանակներում աստծո տաճարը կտիլվի և չի լինի անարյուն զոհաբերություն: Գայթակղություն կտարածվի քաղաքներում ու շեներում, մենաստաններում ու ճգնարաններում: Ու ոչ ոք չի փրկվի, թվով սակավ մարդիկ միայն...»:

Սարսափելի էր ձայնը: Աղոթողներն ընկան երեսնիվայր, ցնցվեցին նրանց ուսերը: Վանականը կանգնած էր գիրքը վեր պարզած, մինչև որ ողբը համընդհանուր դարձավ:

— Եղբայրք, ահա թե ինչ եմ ձեզ պատմելու (ժամերգությունը վերջացնելով, ասաց նա, կրծքի փայտյա խաչը բռնելով): Աստծո շնորհ իջավ իմ վրա: Տերն ինձ տարավ Վոլ-լիճ, հայր սուրբ Նեկտարիի մոտ: Գլուխ խոնարհեցի հայր սուրբին և նա ինձ հարցրեց. «Ի՞նչ ես ուզում, հոգի՞դ փրկել, թե մարմինդ»: Ես ասացի. «Հոգիս, հոգիս»: Եվ հայր սուրբն ասաց. «Բարին ընդ քեզ, զավակս»: Եվ հոգիս փրկեց, իսկ մարմինս մեռցրեց... ճգնարանում հացի փոխարեն ձարխոտ էինք ուտում ու թրվաշ, ու կաղին, ծառերից կեչու կեղև էինք պոկում ու չորացնում ու ձկան հետ խառնելով ու ծեծելով ուտելիք դարձնում մեզ համար: Ու չմեռցրեց մեզ տեր աստված: Ու ինչեր քաշեցի իմ տիրոջից առաջին հենց օրից. երկու անգամ օրվա մեջ ծեծվում էի: Ու աստծո կիրակի օրն էի երկու անգամ ծեծվում: Ու ընդամենը երկու տարվա մեջ օրական երկու անգամով՝ հազար ու չորս հարյուր ու երեք տասան ծեծ եղավ ինձ: Հապա քանի՞- քանի՞ վերք ու հարված եղավ ամեն օր նրա արդար ձեռքից՝ էլ չեմ հաշվում: Հովիվն իմ մարմինն էր ջարդում. ձեռքի տակ ինչ ընկնում էր, դրանով էլ պատվում էր ինձ՝ իր որբուկին ու փոքր որդուն: Ցուպով ու հավանգի կոթով էր խրատում, ու խաչերկաթով, ու շերեփով, որով ճաշ են եփում, ու գրտնակով, որով խմոր են բացում... Իմ տերը մարմինս վերքապատ էր անում, որպեսզի խավար հոգիս լուսավորվի... Անկտիով, որով ջուր են կրում, ոտքիս ձկնամկանը փշրեց, որ ոտքերս ինձ հնազանդությանը պատրաստ լինեն: Ու ոչ միայն ամեն տեսակի փայտով, այլև երկաթով ու քարով, մազերս պոկելով, երբեմն էլ աղյուսով էր մարմինս հնազանդեցնում: Այդ ընթացքում ձեռքերիս մատները հոդախախտ եղան, ու կողերս ու ոսկորներս փշրվեցին: Եվ տեր աստված չմեռցրեց ինձ: Արդ, տկար եմ մարմնով, սակայն հոգիս է լուսավոր... Եղբայրներ, մի ծուլանաք ձեր հոգու փրկության համար...

— Մի ծուլանաք ձեր հոգու փրկության համար,— երեք անգամ աղաղակեց վանականը, անողոք աչքերը հառած վախվորած համայնքի վրա: Այդտեղ էին Վասիլի Ռեյակինի բոլոր ազգականները, քենակալները, մորտերը, նրա գործակատարները, պահեստներում

ու խանութներում նստողները: Ունկնդրելով, մորմոքալից հոգոցներ էին հանում: Ոմանք չէին դիմանում հայր սուրբի մոլեգին հայացքին: Անդրեյ Գոլիկովը երկտակվել էր հեծկլտոցից, այտերը բռնած, լալիս էր, մոմերի դեղին լույսի շողերը արցունքների միջից ալիքվում էին աղոթատան մեջ, որպես հրեշտակապետերի թևեր:

Հայր սուրբը գոտկաչափ գլուխ խոնարհեց համայնքին ու ետ քաշվեց: Նրա տեղը կանգնեց ինքը՝ կարճիկ, ներմակող մազերով Վասիլի Ռեյակինը՝ աչքերի փոխարեն երկու ճեղք, որոնց մեջ գընում-գալիս էին անտեսանելի բիբերը: Կաշվե տերողորմյան քաշելով, կամացուկ ու մարդկային ձայնով խոսեց.

— Իմ թանկագին ու անմոռանալի մարդիկ... Սարսափելի է: Իմ հիրելիներ, սարսափելի՞ է: Մեր օրը պարզ էր, ամպեր կուտակվեցին, մեր ամբողջ կյանքը ապականությամբ ծածկվեց... (Ետ նայեց՝ աջ ուսից ետ, ձախ ուսից ետ, կարծես ստուգելով, թե մարդ չկա՞ այնտեղ: Երկարամազ վայենկաներով փափուկ քայլ արեց առաջ:) Նեռն այստեղ է արդեն: Լսո՞ւմ եք: Բազմել է նիկոնական եկեղեցու գմբեթներին: Պտղունցը նրա դրոշմն է, փրկություն չկա պտղունցավորներին, արդեն գոհ են գնացած... Ու նրանց էլ փրկություն չկա, ովքեր ուտում և խմում են պտղունցավորների հետ: Ով հաղորդություն առնի տերտերից, նրան ևս փրկություն չկա, դրոշմ կա նրանց ճշխարքին և նրանց սրբագործությունն է կեղծ... Ինչպե՞ս փրկվենք: Լսեցինք, թե ինչպես են փրկվում: Ոչ մեկիդ չեմ արգելում, հեռացեք, գնացեք, իմ սիրելիներ, տանջանք ընդունեք, հոգիներդ յուսավորեք: Կավելանան հոգևանավորողները մեր՝ մեղավորներիս ու թույլերիս: Գուցե ես էլ հեռանամ... Պահեստներս, խանութներս կփակեմ, ապրանքը, ունեցվածքը կբաժանեմ աղքատներին: Մեր փրկությունը մեր պապական հավատքն է, հնազանդությունն ու վախը... (Դառնացած տարուբերեց մորուքը, աչքերը սրբեց մահուդե թևքով: Համայնքը սկսվեց: Չէին շնչում, չէին շարժվում:) Երանի նրան, ով տեղ կունենա... Ով էլ չի ունենա, թող չընհուսահատվի: Հայր սուրբերը կաղոթեն: Մահից շատ վախեցեք մի՛ բանից՝ հանկարծ սատանան չբռնի ձեր ձեռքն ու տանի... Առաջվա ժամանակները չեն, նրա անտեսանելի ծառաները շրջապատել են բոլորին, մենակ դրան են սպասում... Մեղք գործիր, մեղք արա հոգուդ, կոպեկ թոցրու քո տիրոջից... Կարծում եք, փո՞քր բան է: Մի կոպեկ: Չէ՞... Վրա կպրծնեն քեզ, ու կորած ես՝ հավերժական տանջանքի... Վախեցեք, որ հայր սուրբերը չդադարեն աղոթել ձեզ համար... (Մի քայլ էլ առաջացավ, տերողորմյան խփեց ազդրին): Տեսե՞ք հապա, ի՞նչ զայթակղություն՝ բուրմիստրանան պալա՞տ... Ահա թե որն է դժոխքը, իսկական ն դժոխքը... Հնուց ի վեր վաճառականները տուրք էին մուծում գանձարան, ու մնացածն իմ գաղտնի գործն էր՝ ինչ եմ ծախում, ինչպես եմ ծախում... Տեր աստված խելք է պարգևել, դարձել եմ վաճառական: Իսկ անխելքն ամբողջ կյանքում բատրակ կմնա: Բուրմիստրնե՞ր ընտրեք: Որ իմ պահեստն էլ մտնի, իմ անդուկի մեջ էլ... Ամեն ինչ պիտի ասես, ամեն ինչ ցույց

տաս... Ինչի՞ համար: Ո՞ւմ է պետք: Նեռի ուտկանն են գցում վաճառականների վրա... Հնաշված՝ փոստը: Ինչի՞ համար: Մի հավատարիմ մարդ կուղարկեմ Վելիկի Ուստյուգ, փոստից կհասնի ու ինչ պետք է կասի՝ գաղտնի... Իսկ փոստով՝ ի՞նչ իմանամ, թե ինչ մարդ է իմ նամակը տանելու: Չէ, մեզ ոչ փոստ է պետք, ոչ բուրմիստր, կրկնակի չենք վճարի, օտարերկրացիների ու նիկոնականների հետ ծխախոտ չենք ծխի: (Չէր ուզում, բայց զայրացավ: Մանուշակագույն դողդոջ ձեռքը գրպանը տարավ, թաշկինակը հանեց, սրբեց դեմքը: Գլուխն օրորեց, հանգչող մոմերին նայելով ծանր հոգոց հանեց ու վերջացրեց): Գնանք, ընթրիք անենք...

Բոլորը, ովքեր աղոթատանն էին, նախասրահի ու խոհանոցի միջով անցան կողքի նկուղը: Նստեցին փայտյա սեղանի շուրջ, որի գլխին, ուր ընթրում էին Վասիլի Ռեյակինը և երեք ծեր գործակատարները՝ նրա զարմիկները, ներկած քաթանի սփոռոց էր գցած: Հայր սուրբին էլ հրավիրեցին վերև, սրբապատկերների տակ: Բայց նա հանկարծ բարձրաձայն թքեց ու գնաց դռան կողմը, հատակին նստած մուրացկանների մոտ: Նրանց մեջ էր և Անդրեյը:

Սեղանի կենտրոնում ճարպամոմ էր վառվում: Մթության միջից հայտնվում էր խոժոռադեմ պառավը՝ լիքը ամանները բերելով: Երբեմն ուտիճ էր ընկնում առաստաղից: Ուտում էին լուռ, դանդաղ ծամելով, անձայն գդալելով: Անդրեյը մոտեցավ հայր սուրբին: Ամանը ծնկների վրա բռնած, կուզացած, զգզվված մորուքի վրա կաթեցնելով, հայր սուրբը տենդագին խաշտում էր, բերանը վառելով: Հացը բերանն էր դնում փոքր կտորներով: Վերջացնելուց հետո ձեռքերը ծալեց փորի վրա: Պղտորված աչքերից երևում էր, որ քարիացել է:

Անդրեյը ցածրաձայն ասաց նրան.

— Տեր հայր, ուզում եմ հայր սուրբ Նեկտարիի մոտ գնալ: Թող գնամ:

Հայր սուրբը շնչառությունն արագացրեց: Բայց աչքերը դարձյալ անշարժացան.

— Հետո, որ պառկեն քնելու, կգաս աղոթատուն: Ես քեզ կսիրեմ:

Անդրեյը ցնցվեց՝ տրտմած ու դատապարտված, ծոծրակը քթեց գերանակապ, փշփշոտ պատին:

10.

Հարավից, Վայրի դաշտից, տաք քամի էր փչում: Մի շաբաթում ձյունը սրբեց, տարավ: Գարնանային երկինքը կապտին էր տալիս հարթավայրը հեղեղած հալոցքաջրի մեջ: Վարարել էին գետակները, Դոնն ազատվել էր սառույցից: Մի գիշերվա մեջ ափերից ելավ Վորոնեժ-գետը, հեղեղեց նավաշինարանները: Քաղաքից մինչև Դոն խարիսխների վրա ճոճվում էին նավեր, թեթև առագաստանավեր, թիանավեր, լաստանավեր ու նավակներ: Չչորացած կուպրը կաթում

էր կողերից, պապղում էին նեպտունական ոսկեզօծ ու արծաթազօծ գլուխները: Փոփոում էին չորանալու համար բարձրացրած առագաստները: Պղտոր ջրերում սուզվելով, վերջին սառցաբեկորներն էին խշրտում: Ամրոցի պարապից վեր, գետի աջ ափին, Վորոնեժի դիմաց, վառոդի ծխի քուլաներ էին ելնում, քամին պատառ-պատառ էր անում դրանք: Թնդանոթազարկեր էին գլորվում ջրերի վրայով, ասես հողն էր ուռչում ու պայթում պղպջակաձև:

Նավաշինարանում օրուգիշեր չէր դադարում աշխատանքը: Ավարտում էին քառասուն թնդանոթանի «Կրեպոստ» նավի հարդարումը: Դրվագանախշ բարձր իլեզը և երեք կայմերը օրորվում էին պարքսպի նոր ցցագերանների մոտ: Գետի վրայով շարունակ նավին էին մոտենում վառոդով, աղ դրած մսով ու պաքսիմատով բեռնված նավակներ, կառանվում սև կողի մոտ: Ջրի հոսանքը ձգում էր ճոպանները, ճոճում էր փայտը: Խելին, կամրջակի վրա, տախտակամածով գլորվող տակառների գոգոցը, ճախարակների ճռինչը խլացնելով, ռուսերեն և պորտուգալերեն հայհոյում էր դարչնագույն մուրթով կապիտան Պամբուրգը: Նրա բեխերը վեր էին տնկված, աչքերն ասես կատաղած ոչխարի աչք լինեին, բոտֆորտները ցեխոտ, կափտանի վրայից կաշերես կիսամուշտակ էր հագել, գլուխը փաթաթել մետաքսյա կարմիր թաշկինակով: «Զրիակերներ: Շունշանորդիներ՝ Կառուա՛խաս»: Նավաստիներն ուժասպառ էին լինում, վեր բարձրացնելով պաքսիմատի տոպրակները, տակառներ ու արկղներ, վազելով գլորում էին դեպի նավամբարները, ուր արդեն կապտվի շների պես խռխռացնում էին մահուդե բարձր գլխարկներ դրած ու դարչնագույն փքված շալվարներ հագած բոցմանները:

Գետից վեր, բլրի վրա թեքվել էին ցցակատար աշտարակները, խարխուլ պատերից այն կողմ եկեղեցիների ժանգոտած գմբեթներն էին: Հին քաղաքի առաջ, բլրալանջին սփռված էին կավածեփ հյուղակներ ու գործավորների տախտակաշեն կացարանները: Գետին ավելի մոտ կանգնած էին նորընծա ծովակալ Գոլովինի, Ալեքսանդր Մենշիկովի, ծովակալության պետ Ապրակսինի, փոխծովակալ Կոռնելիուս Նրելսի գերանակապ խրճիթները: Մյուս ցածրադիր ափին, որը ծածկված էր տաշելով, անիվների հետքերով, դարբնոցների մրածածկ, հողե տանիքներով շինվածքներ էին, կիսավարտ նավերի բաց կողերը, տախտակի ջրաթաղ կապուկներ, ափ հանած լաստեր, տակառներ, ճոպաններ, ժանգոտած խարիսխներ: Սև ծուխ էին արձակում կպրի կաթսաները: Ճոճում էին ճոպանահյուս մեքենաների բարակ անիվները: Բարձր իշտոնուկների վրա կանգնած սղոց քաշողների ուսերը ելնում-իջնում էին: Ոտաբոբիկ լաստավարները ցեխի մեջ վազելով, կեռաձողերով բռնում էին վարարած ջրի բերանն ընկած գերանները:

Հիմնական աշխատանքն ավարտված էր: Նավատորմը ջուրն էր իջեցված: Մնում էր «Կրեպոստ» նավը, որը հարդարվում էր առանձնահատուկ խնամքով: Երեք օր անց հրամայված էր ծովակալական դրոշը բարձրացնել նավի վրա:

Դուռը թափով բացում էին անընդհատ, նորանոր մարդիկ էին մտնում, առանց ոտքերը սրբելու, նստում թախտերին, ավելի շատ՝ մոտենում ուղիղ սեղանին: Ցարի խրճիթում օրուգիշեր ուտում էին և խմում: Բազմաթիվ մոմեր էին վառվում, խրված դատարկ շտոֆների մեջ: Գերանակապ պատերից կեղծամներ էին կախված՝ շոգ էր խրճիթում: Տարածվում էր ծխամորճների ծուխը:

Փոխծովակալ Կոռնելիուս Կրեյսը քնել էր սեղանի մոտ, դեմքը թաղած ոսկեկար թևածալի մեջ: Ռուսական նավատորմի շառուոբենախտ, հոլանդացի Յուլիուս Ռեզը՝ ծովային խիզախ մի թափառաշրջիկ, ում գլուխը անգլիական երկու հազար ֆունտ էր գնահատված հեռավոր օվկիանոսներում կատարած զանազան գործերի համար, միաչքանի կատաղած հայացքը մոմին հառած, անիտանի օղի էր խրմում: Նավաշինարար վարպետներ Օսիպ Նայը և Ջոն Դեյը՝ այս թեժ օրերի ընթացքում մազակալած, ծխամորճներն էին փստացնում, ծաղրաբար աչքով անելով ռուս վարպետ Ֆեդոսեյ Սկլյանին: Ֆեդոսեյը նոր էր մտել, վզնոցը հանած, քուրքն արձակած, խոզի մսով լափշա էր գդալում...

— Ֆեդոսեյ,— նրան դիմեց Օսիպ Նայը, թարթելով շեկ արտևանունքներով:— Ֆեդոսեյ, պատմիր, թե ինչպես էիր քեֆ անում Մոսկվայում:

Ֆեդոսեյը ոչինչ չպատասխանեց, գդալում էր: Իրոք, ձանձրացել էր: Փետրվարին վերադարձել էր արտասահմանից, ու հարկ էր, որ անհապաղ, Պյոտր Ալեքսեևիչի նամակի համաձայն, Վորոնեժ գնար: Սատանան դրդեց: Մոսկվայում ընկերներին հանդիպեց, ու սկսվեց: Երեք օր մուժի մեջ էր, կերուխումից ուշքի չէր գալիս: Բանը վերջացավ այնպես, ինչպեսև պետք է մտածել. հայտնվեց Պրեոբրաժենսկոյեի առյանում:

Ցարը, տեղեկանալով, որ իր սիրելի ու ապասելի Ֆեդոսեյը իշխան-կայսրի մոտ է նստած, սուրհանդակ ուղարկեց Մոսկվա, Ռոմոդանովսկուն գրած նամակով.

«Մին հեռ կյոնիգ... Ինչի՞ համար ես պահում մեր ընկերներին, Ֆեդոսեյ Սկլյանին ու մյուսներին: Խիստ շատ ցավում եմ: Ամենքից շատ Սկլյանին էի սպասում, քանի որ ամենալավ վարպետն է նավաշինության մեջ, իսկ դու հանել ես բռնել: Աստված քեզ դատավոր: Ճիշտ եմ ասում, ոչ մի օգնական չունեմ այստեղ: Կարծում եմ, որ գործը պետական չի: Աստծու սիրուն, ազատի՞ ու այստեղ ուղարկիր: Պիտեր»:

Իշխան-կայսրի պատասխանը մի տասն օր հետո հենց ինքը՝ Սկլյանը բերեց.

«Նրա մեղքը ասեմ ինչն է. ընկերների հետ հարբած գնացել ու արգելափակոցի մոտ կռվի է բռնվել Պրեոբրաժենյան գնդի զինվորների հետ: Քննելուց պարզվեց. երկու կողմերն էլ մեղավոր են: Եվ ես, քննելուց հետո, ճիպտել տվեցի Սկլյանին իր անխելքության պատճառով, նաև խնդրագիր տված զինվորներին ճիպտել տվեցի, ում հետ կռիվ էին արել: Դրա համար մի բարկանա վրաս, սովոր

չեմ անխելքությունը զանց առնել, թեկուզ ինչ պաշտոնի էլ եղավ»։

Լավ։ Դրանով էլ վերջանար։ Պյոտր Ալեքսեևիչը, տեսնելով Սկլյանին, գրկեց ու համբուրեց, ու իր ազդրերին էր խփում, ու հանեց ոչ միայն ծիծաղել, այլ քրքջում էր, մինչև որ արցունք եկավ աչքերից... «Ֆեդոսեյ, քեզ համար սա Ամստերդամը չի»։ Եվ իշխան-կայսրի նամակն էլ բարձրաձայն կարդաց ընթրիքին։

Լափշան խաշտելուց հետո Ֆեդոսեյը դեմ հրեց ամանը, ձեռքը մեկնեց, Օսիպ Նայից ծխախոտ վերցնելու։

— Հերիք եղավ ձեզ, ինչքան ծիծաղեցիք, սատանեք,— ասաց կոպտաձայն։— Խելի տակի նավամբարները մտե՞լ եք էսօր։

— Մտել ենք,— պատասխանեց Օսիպ Նայը։

— Չէ, չեք մտել...

Կավե ծխամորճը բերանից դանդաղ հանելով, ուղղագիծ բերանի անկյունները իջեցնելով, Ջոն Դելը սեղմած ատամների արանքից ռուսերեն ասաց.

— Ինչի՞ համար ես էնպես հարցնում, որ իբր մենք նավամբար չենք իջել, Ֆեդոսեյ Սկլյան։

— Ասեմ ինչի համար... Փոխանակ աչքներդ ճպճպացնեք վրաս, մի լապտեր առեք, գնացեք։

— Ճեղքվա՞ծք։

— Հենց էդ է որ կա։ Հենց աղ դրած մսի տակառներն սկսեցին բարձել, շպանգոուտները բացվեցին, ու տակից ջուր է խփում...

— Չի կարող պատահել։

— Պատահել է։ Ես ձեզ ինչ էի ասում, որ խելը լավ չենք պնդացրել։

Օսիպ Նայն ու Ջոն Դելը միմյանց նայեցին։ Անշտապ վեր կացան, ականջակալներով գլխարկները դրեցին։ Վեր կացավ նաև Ֆեդոսեյը, բարկացած փաթաթեց վզնոցը, առավ լապտերը։

— Ձեր ինչն եմ ասել, գեներալնե՞ր։

Սեղանի շուրջ նստում էին սպաներ, նավաստիներ, վարպետներ՝ հոգնած, կպրաթաթախ, ցեխակոլոլ։ Կավե փարչից մի բաժակ հրահեղուկ օղի գլուխները քաշելով, ձեռքերն ինչ ընկներ վերցնում էին մատուցարաններից. տապակած միս, խոնկորի կտոր, քացախ դրած հորթի պոչ։ Շտապ-շտապ ուտելով, շատերը նորից գնում էին, առանց խաչակնքելու, առանց շնորհակալություն հայտնելու...

Տախտակե միջնորմի մոտ, լայն թիկունքը բարավորին հենած, քնած աչքերով մի նավաստի էր կանգնած, մահուդե բարձր գլխարկը ականջին իջեցրած։ Ջրուտ պարանոցից ծայրը հանգույցներով ձրթաթոկ էր կախված։ (Դրանով հացնում էր ում պետք էր։) Դրոնակին մոտեցող յուրաքանչյուր մարդու ցածրաձայն ու ալարելով ասում էր։

— Ո՞ւր ես քշում, ո՞ւր, ես քու...

Միջնորմից այն կողմ, ննջասենյակում, հիմա պետական պաշտոնյաներ էին նստած. ծովակալ Ֆյոդոր Ալեքսեևիչ Գոլովինը, Լև Կիրիլովիչ Նարիշկինը, ծովակալության պետ Ֆյոդոր Մատվեևիչ Ապրակսինը և Ալեքսանդր Դանիլովիչ Մենշիկովը։ Լեֆորտի մահից հետո անմիջապես գեներալ-մայորի կոչում շնորհեցին նրան, նաև պսկովյան նահանգապետն էր։Իբր Պյոտրը հենց այսպես էլ ասել էր թաղումից հետո Վորոնեժ վերադառնալով. «Երկու ձեռք ունի, մնաց մեկը, չնայած ձեռնքաշ է, բայց հավատարիմ»։

Պրեոբրաժենյան, գեղեցիկ կապած վզնոցով, բարակ մահուդե կաֆտանով, կեղծամով, նեղ ծնոտը ժանյակների մեջ թաղած Ալեքսաշկան կանգնած էր սղյուսե տաք վառարանի մոտ։ Ապրակսինը և գիրուկ Գոլովինը չհավաքած անկողնու վրա էին նստել։ Ճակատն ափին հենած Նարիշկինը՝ սեղանի մոտ։ Լսում էին դումայական ատենադպիր ու մեծն դեսպան Պրոկոֆի Վոզնիցինին։ Նա հենց նոր էր վերադարձել Կաղովիցեից, Դանուբի ափերից, ուր կայսրական, լեհական, վենետիկյան ու մոսկովյան դեսպանները թուրքերի հետ բանակցում էին խաղաղության մասին։

Ցարին դեռ չէր տեսել։ Պյոտրը հրամայել էր ասել, որ մինիստրները հավաքվեն ու խորհրդակցեն, իսկ ինքը կգա։ Թվերով ու գրառումներով տետրը ծնկներին, ակնոցը չորուկ քթի ծայրին դրած, Վոզնիցինը պատմում էր։

— Իմ կողմից թուրքական դեսպաններ ռեիս-էֆենդի՝ Ռասիի և գաղտնի խորհրդական Մավրոկորդատոյի հետ արտիսցիցիա է կնքված, այն է՝ ժամանակավոր զինադադար։ Ավելին ձեռք բերել չէր լինի։ Ինքներդ դատեք, պարոնայք մինիստրներ։ Եվրոպայում հիմա այնպիսի շիլաշփոթ է, որ համարյա ամբողջ աշխարհը կքոնի։ Իսպանական թագավորը զառամյալ է, այսօր-վաղը կմեռնի անզավակ։ Ֆրանսիական թագավորը ձգտում է Իսպանիայում գահին նստեցնել իր թոռանը՝ Ֆիլիպին ու արդեն պսակել է նրանց, մոտը՝ Փարիզում պահելով, սպասում է շուտափույթ թագադրմանը։ Ավստրիական կայսրը, մյուս կողմից, իր որդի Կարլոսին է ուզում Իսպանիայում գահին նստեցնել...

— Է, գիտենք, գիտենք էդ ամենը,— անհամբերությամբ ընդհատեց Ալեքսաշկան։

— Մի քիչ համբերիր, Ալեքսանդր Դանիլովիչ, կարողացածիս պես եմ խոսում (Վոզնիցինը ակնոցի վրայից խոհուն ու ծանր մի հայացք գցեց գեղեցկատես Ալեքսաշկայի վրա), մեծ վեճ է լուծվում Ֆրանսիայի ու Անգլիայի միջև։ Իսպանիան անցավ ֆրանսիական թագավորին, ֆրանսիական նավատորմները բոլոր ծովերն իրենց ուժի տակ կառնեն։ Իսպանիան անցավ ավստրիական կայսրին, այդ ժամանակ անգլիացիները մենակ ֆրանսիական նավատորմին կհաղթեն։ Եվրոպական պոլիտիկը անգլիացիներն են խառնում։ Կաղովիցեում ավստրիացիներին ու թուրքերին նրանք հանդիպեցրին։ Ֆրանսիական թագավորի հետ պատերազմելու համար ավստրիական կայսրին պետք է իր ձեռքերն ազատ արձակել։ Թուրքերը ևս ջանադիր են և ուրախ հաշտությամբ, հանգստանալու, ուժ հավաքելու համար։ Արքայազն Եվգենի Սավոյացին նրանցից շատ հողեր ու քաղաքներ է առել՝ հօգուտ կայսեր, Հունգարիայում, Սեմիգրադյան

երկրում ու Մորեայում, և կեսարականներն արդեն բուն Ցարեգրադին են նայում... Թուրքերի հոգին այժմ իրենց ունեցածը վերադարձնելն է... Պատերազմել հեռուներում լեհերի կամ մեզ հետ, հիմա մտադրություն անգամ չունեն... Նույն Ազովը՝ չարժե, որ դրա տակ ուժեր կորցնեն:

— Թուրքական սուլթանն էնքան թուլացե՞լ է, ինչքան դու ես հանգստացնում: Կասկածելի է,— խոսեց Ալեքսաշկան: (Գոլովինն ու Ապրակսինը քթի տակ ծիծաղեցին: Լև Կիրիլովիչը, տեսնելով նրանց քմծիծաղը, նույնպես գլուխն օրորեց քմծիծաղով:) Ալեքսաշկան, ազդրը ցնցելով, խթանը զնգացնելով, շարունակեց.— Իսկ թե որ թույլ է, ինչի՞ մշտական խաղաղություն չկնքեցիր: Կամ էլ մոռացել ես ռեիս-էֆենդուն ասես, որ Ռկրաինայում քառասուն հազար ձմեռող ստրելեց ունենք, Ախտիրկայում հավաքված է Շեհնի հեծյալ մեծ գունդը, Բրյանսկում էլ պատրաստ են նավերը՝ անցման համար: Քեզ դատարկ ձեռքով հո չենք ուղարկել... Արմիսցի՞ցիա:

Պրոկոֆի Վոզնիցինը դանդաղ հանեց ակնոցը: Դժվար էր ընտելանալ նոր կարգերին, որ անհայտ ծագման տեր մի պատանյակ այդպես իմսեր մեծն դեսպանի հետ: Չոր ափը տանելով գայրույթից դողացող դեմքի վրայով, Պրոկոֆին ժողովեց մտքերը: Անշուշտ, բղավելով ոչնչի չես հասնի այստեղ:

— Ահա թե ինչու ոչ թե խաղաղություն, այլ արմիսցիցիա է կնքված, Ալեքսանդր Դանիլովիչ... Կայսեր դեսպանները, չհանդիպելով ոչ մեզ, ոչ լեհերի, ոչ էլ վենետիկցիների հետ, գաղտնաբար, մենակ, բանակցել են թուրքերի հետ: Եվ մեզ մենակ են թողել: Թուրքերը, բավարարությամբ գործ բռնելով կեսարականների հետ, սկզբում մեզ հետ խոսել անգամ չէին ուզում, այնպես էին փքվել... Իմ հին ծանոթ Ալեքսանդր Մավրոկորդատոն եթե այնտեղ չլիներ, մենք արմիսցիցիա էլ չէինք ունենա... Պարոնայք մինիստրներ, այստեղ նստած, դուք կարծում եք, թե ամբողջ Եվրոպան ձեզ է նայում... Ոչ, նրանց համար մենք փոքր պոլիտիկ ենք, կարելի է ասել՝ և ոչ մի պոլիտիկ...

— Էդ մեկը կտեսնենք...

— Համբերիր, մի տաքանա, Ալեքսանդր Դանիլովիչ,— մեղմությամբ ընդհատեց նրան Գոլովինը:

— Դեսպանական կացարաններում ամենավատ տեղը մեզ տվեցին: Պահակներ դրեցին... Հրամայեցին ոչ մի տեղ չգնալ, թուրքերի հետ չհանդիպել, գրագրություն չվարել նրանց հետ: Դեռևս Վիենայում եղած ժամանակ մի բժիշկ էի վերցրել հետս, գլխովը շատ բան անցած լեհ էր: Նրան էլ ուղարկեցի թուրքական կացարանները, Մավրոկորդատոյի մոտ: Մի անգամ ուղարկեցի: Մավրոկորդատոն կարգադրել էր ողջույններ հաղորդել: Երկրորդ անգամ ուղարկեցի: Մավրոկորդատոն կարգադրել էր ողջույններ հաղորդել ու ասել, որ ցուրտ է: Ուրախացա: Սևագորշ աղվեսի մորթիով կափտան ունեի, մորեգույն մահուդից կարված, բժշկի հետ ուղարկեցի, ասացի, որ շրջանցի դեսպանական կացարանները, տափաստանով տեղ հասնի: Մավրոկորդատոն կափտանը վերցրել էր, հաջորդ օրն ինձ ծիսախոտ ուղարկեց, երկու ընտիր ծիսանոթ, մի ֆունտի չափ սուրճ, գրելու թղթի: Այ, ես քո ինչն եմ ասել, մտածեցի, նվերով է խույս տալիս... Նորից բարձեցի՝ մամա՛, ձկնկիթ, թառափի մեջքամասեր, հինգ խոշոր սաղմոն, զանազան իմիշքներ... Եվ ինքս գիշերով գնացի թուրքական կացարանները, հասարակ զգեստով: Իսկ թուրքերը հենց այդ օրը կայսեր հետ խաղաղություն էին կնքել...

— Էխ,— դողդողալով, խթանը զնգացրեց Ա. Ալեքսաշկան:

— Մավրոկորդատոն ասաց. «Հազիվ թե մեր միջև գոհացում լինի, եթե դենեպրյան քաղաքները մեզ չվերադարձնեք, որպեսզի Դնեպրը փակենք ու ընդմիշտ պատնեշենք ձեր ելքը Սև ծով, Ազովն էլ ստիպված կլինենք տալ ու Ղրիմի խանին էլ առաջվա պես տուր, վճարեք...»: Անա՛, Ալեքսանդր Դանիլովիչ, թե թուրքերն ինչպես առաջին խոսակցությունից սկսեցին քթենքը վեր բռնել... Չէ որ ես մենակ էի: Դաշնակիցներն իրենց գործերն արել, մեկնել էին... Վորոնեժյան նավատորմով սպառնաչի: Թուրքերը ծիծաղեցին. «Առաջին անգամ ենք լսում, որ ծովից հազարավոր վերստ հեռու նավեր կառուցեն, ձեզ համար լողացեք դրանցով Դոնի վրա, իսկ գետաբերանով անցնել չեք կարող»: Ռկրաինական զորքով էլ սպառնացի, իսկ նրանք ինձ՝ թաթարներով. «Տեսնք, թաթարների ձեռքերը հիմա ազատ են արձակված, հանկարծ այնպես չանեն, ինչպես Դեվլեթ-Գիրեյի օրոք*»: Թուրքերը եթե հոգսեր չունենային, պատերազմ պիտի փաթաթեին մեր վզին... Չգիտեմ, Ալեքսանդր Դանիլովիչ, գուցեև նվաստ խելքովս չկարողացա ավելին ձեռք բերել, բայց արմիսցիցիան պատերազմ չէ այնուամենայնիվ...

Բազմաթիվ մանր-մունր գործեր դեռ ավարտված չէին: Մեխը չէր բավականացնում: Երեկ միայն Տուլայից տեղ հասավ երկաթով բեռնված սահնակների գումարը, հայոցքի միջով էին եկել: Դարբնոցներում աշխատում էին ամբողջ գիշեր: Թանկ էր յուրաքանչյուր օրը՝ ծանր նավերը բարձրացած ջրերի վրայով Դոնի գետաբերան հասցնելու համար:

Բոլոր հնոցները վառվում էին: Այրված գոգնոցներով, քրտինքից աղակալած շապիկներով դարբինները, թիկնեղ, գոտկից վեր մերկ ու խանձված մաշկով կռանահարները, փուքս փչող տղեկները՝ բոլորը հագիվ էին ոտքի վրա կանգնում, ձեռքերն էին թափահարում, մրի մեջ կորած: Հանգստացողները (գիշերվա ընթացքում մի քանի անգամ փոփոխվում էին) նստում-մնում էին՝ որը բաց դռան առաջ չորացրած ձուկ կծամեր, որը կքներ կեչու ածխի կիտուկների վրա:

Ավագ վարպետ Կուզմա Ժեմովը, ում Լև Կիրիլովիչն էր ուղար-

*Իվան Ահեղի օրոք ղրիմյան թաթարները հրդեհեցին Մոսկվան և շուրջ կես միլիոն մարդ սպանեցին ու գերեվարեցին: (ծան. Ա. Ն. Տոլստոյի):

կել Տուլայի իր գործարանից (դարբնին այնտեղ էին բերել Տուլայի բանից մշտական աշխատանքի), վնասել էր ձեռքը: Մեկ ուրիշ վարպետ շմոլք էր առել ու հիմա տնքտնքում էր, գիշերվա զովը շնչելով, դարբնոցի կողքի խոնավ տախտակներին պառկած:

«Կրեպոստի» մեծ խարսխի թաթերն էին ձուլում: Առաստաղակալ գերանից ճախարակով կախված խարիսխը թաղված էր քուրայի մեջ: Քրտինքը ցրիվ տալով ու հևասպառ՝ օդ փչողները վեց փուքսերի լծակներն էին շարժում: Երկու կռանահար, երկարապոչ մուրճերը ոտքերի մոտ դրած, կազմուպատրաստ կանգնած էին: Առողջ ձեռքով (մյուսը լաթով էր փաթաթված) ածուխն էր խառնշտորում Ժեմովը, ասելով.

— Թափով փչեք, թափով...

Կեղտոտված ճերմակ շապկով, պարուսիկն գոգնոցով, նիհարած դեմքին մրի շերտեր, շրթունքները սեղմած ու հավի տուտուզ սարքած՝ Պյոտրը երկար աքցանով զգուշությամբ շուռումուռ էր տալիս խարիսխի թաթերից մեկը նույն քուրայի մեջ: Այդչափ խոշոր կտորի միակցումը պատասխանատու և դժվար գործ էր:

Դառնալով ճախարակի պարանի մոտ կանգնած գործավորներին, Ժեմովն ասաց.

— Բռնեք... Ինձ լսիր... (Եվ Պյոտրին դիմելով:) Իսկը ժամանակն է, թե չէ շատ կթրծենք... (Հևած աչքերն ածուխներից չկտրելով, Պյոտրը գլխով արեց, շարժեց աքցանը:) Ծուտ արեք, միասին... Գնացի՞նք...

Ձեռքերն արագ-արագ փոխելով, գործավորները քաշեցին պարանը: Ճախարակը ճռճռաց: Քառասուն փթանոց խարիսխը բարձրացավ քուրայի միջից: Կայծերի հեղեղ թափվեց դարբնոցում: Ճերմակության աստիճան շիկացած խարիսխի ոտը, կռանթափուկը ճռճռացնելով, կախվեց զնդանի վրա: Հիմա պետք էր թեքել, հարմար տեղավորել: Ժեմովն արդեն շշուկի անցավ.

— Թեքի, թեքի, դիր... Հարմար դիր... (Խարիսխը պառկեց:) Թափուկը սրբի (վառվող ցախավելը տարավ-բերեց շիկացած ոտի վրայով): Թա՜թը: (Դառնալով Պյոտրին, բղավեց վայրենաձայն:) Ի՜նչ եղավ քեզ: Բե՛ր:

— Լսում եմ:

Փթանոց աքցանը քուրայից հանելով, Պյոտրը զնդանից փախցրեց թաթը, քիչ էր մնացել աքցանից դուրս պրծներ շիկացած երկաթը: Լարումից պպզելով, ատամները մերկացրած դրեց տեղը...

— Հարմար դիր,— բղավեց Ժեմովն ու ընդամենը նայեց կռանահարներին: Վերջիններս, աղմուկով արտաշնչելով, սկսեցին զարկել շրջանաձև, դաղարներով: Պյոտրը թաթն էր բռնել, Ժեմովը թխկացնում էր մրճով՝ թրխկ-թրխկ-թրխկ, թրխկ-թրխկ-թրխկ: Այրող կռանթափուկը ցրիվ էր գալիս գոգնոցների վրա:

Զուլեցին: Թնչացնելով ետ քաշվեցին կռանահարները: Պյոտրը աքցանը շպրտեց գուռի մեջ: Սրբվեց թևքով: Աչքերը զվարթագին նեղացան: Ժեմովին աչքով արեց: Դարբնի ամբողջ դեմքը կնճռոտվեց.

— Ինչ ասեմ, կպատահի, Պյոտր Ալեքսեևիչ... Մենակ թե մյուս անգամ աքցանն էդ թափով չհանես, թե չէ մեկնումեկին կսպանես ու հաստատ կփախցնես զնդանից: Դրա համար ինձ էնքան են ծեծել...

Պյոտրը լռեց, ձեռքերը լվաց գուռի մեջ, գոգնոցով սրբեց, կափտանը հագավ: Ելավ դարբնոցից: Գարնան խոնավության թունդ բույր կար օդի մեջ: Մոխրագույնի խփող գետի վրա, խոշոր աստղերի տակ խշրտում էին սառցակտորները: Ծոնվում էր «Կրեպոստի» կայմալապտերը: Ձեռքերը գրպանները մտցրած, սուլելով, Պյոտրը քայլում էր ափով, ջրին շատ մոտ:

Միջնորմի մոտ կանգնած նավաստին, ցարին տեսնելով, գլուխը դռնակից ներս մտցրեց, հայտնեց մինիստրներին: Բայց Պյոտրն անմիջապես ներս չմտավ՝ հաճույքով ներշնչելով տաքության և ծխախոտի հոտը, կռացավ սեղանի վրա, նայեց մատուցարաններին.

— Դեսը լսիր,— ասաց կլորամորուս մի մարդու (հոնքերը զարմացած վեր թոցրած, փոքր դեմքի վրա վառ երկնագույն աչքերով Ալադուշկինն էր՝ հայտնի հյուսն նավաշինարար),— Միշկա, ա՛յ, դրանից տուր,— մատը սեղանի վրայով տնկեց թրջաց խնձորով եզերված, տավարի տապակած մսի վրա: Նստեց նստարանին, քնած փոխծովակալի դիմաց, դանդաղ, ինչպես հոգնած մարդուն է վայել, մի բաժակ օղի խմեց՝ երակները տաքացան: Մի կոշտ խնձոր ընտրեց: Ծամելով, կորիզները թքեց Կոռնելիուս Կրեյսի ճակատին.

— Հո խմած չի՞:

Փոխծովակալն այդ ժամանակ բարձրացրեց ճմրթված դեմքն ու ասաց մրսած-թավաձայն.

— Քամին՝ զյուդ, զյուդ-վերստ, մեկ բալլ: Կոմանդորական հերթապահ է կանգնած Պամբուրգը: Ես հանգստանում եմ:— Ու նորից երեսը թաղեց ոսկեկար թևքածալերի մեջ:

Ուտելուց հետո Պյոտրն ասաց.

— Էս ինչի՞ ուրախ չեք:— Բռունցքները դրեց սեղանին: Մի բոպե մնաց, մեջքն ուղղեց: Գնաց միջնորմի ետևը: Նստեց մահճակալին: (Մինիստրները ակնածալի կանգնած էին:) Բթամատով հոլանդական խառը ծխախոտ ճմլեց ծխամորճի մեջ, վառեց Ալեքսաշկայի մատուցած մոմից:— Հը, բարև, մեծն դեսպան:

Վոզնիցինի ծերունական, բարակ մաճուդե գուլպաներով ոտքերը ծալվեցին, ֆրանսիական կամզոլի կլոր փեշերը տնկվեցին՝ խոր գլուխ տվեց, կեղծամի փնջերն արքայի ցեխակոլոլ կոշիկներին հասցընելով: Այդպես սպասում էր, թե ցարը երբ պիտի բարձրացնի: Բազկով ընկնելով բարձի վրա, Պյոտրն ասաց.

— Ալեքսաշկա, բարձրացրու մեծն դեսպանին... Պրոկոֆի, մի բարկանա, հոգնած եմ ոնց որ... (Նեղացած Վոզնիցինը դեռ տարավ Մենշիկովի ձեռքը, ինքը շտկվեց:) Նամակներդ կարդացել եմ: Գլուխս ես, որ չջղայնանամ: Չեմ ջղայնանում: Գործդ ազնիվորեն ես արել՝ ինձի պես: Հավատում եմ... (Ատամները մերկացրեց չարացած:)

Կեսարականն՝ը: Անգլիացին՝ը: Լավ, վերջին անգամ էդպես գնացին՝ք, գլուխ ծռելու... Նա՛ոյր: Գատմի՛ր:

Վոգնիցին նորից սկսեց պատմել դեսպանական հավաքին եղած վիրավորանքների ու մեծ դժվարությունների մասին: Պյոտրն արդեն այդ ամենը գիտեր նամակից՝ ցրված փստացնում էր ծխամորը:

— Քո՝ նորտը, սեր արքա, իր նվաստ խելքով այդպես մտածեց. եթե թուրքերին չգրգռենք, արմիսցիցիան կարելի է երկար ձգել: Մի որևէ մարդ ուղարկենք թուրքերի մոտ՝ խելացի լինի, խորամանկ... Թող բանակցություններ վարի, ժամանակ ձգի, խոստանա ինչ-որ բան գրշել, չէ որ մահմեդականներին խաբելը մեղք չէ, տեր թագավոր, աստված կների:

Պյոտրը ծիծաղեց քթի տակ: Դեմքի կեսը ստվերի մեջ էր, սակայն մոմի լույսով լուսավորված կլոր աչքը խստությամբ էր նայում:

— Է՞լ ինչ կասեք, բոյարներ: (Ծխամորը բերանից հանեց ու ատամների արանքից թքեց մի սաժեն հեռու:)

Ապրակսինի և Գոլովինի կոտոշավոր կեղծամների ստվերները տարուբերվեցին պատի վրա: Հարկավ, դժվար էր այդպես միանգամից պատասխանել: Նախկինի պես, ինչպես խոսում էին Դումայում ճոռում, ջուր ծեծելով, Պյոտրը չէր սիրում: Ուսերը տաք վառարանին քսմսելով, Ալեքսաշկան շրթունքներն էր ծռմռում:

— Հը՞,— նրան հարցրեց Պյոտրը:

— Է, ինչ, Պրոկոֆին պապական ձևով է մտածել՝ քաշքշել ու ձգձգել: Հիմա մեզ հարմար չէ էդպես...

Լև Կիրիլովիչը, բորբոքվելով ու թնչացնելով, ասաց.

— Տեր աստված թույլ չի տա, որ թուրքերի հետ հաշտություն կնքենք: Երուսաղեմի պատրիարքը մեզ լացելով է գրում՝ պաշտպանեք տիրոջ դագաղը: Մոլդավական ու վալախական գոսպոդարները համարյա ծնկաչոք աղաչում են իրենց փրկել թուրքական լծից: Իսկ մենք՝ տե՛ր աստված: (Պյոտրը ծաղրաբար ասաց. «Բայց դու լաց չլինես...»: Լև Կիրիլովիչը կարկամեց, չռելով աչքերն ու բացելով բերանը: Ու շարունակեց:) Տեր թագավոր, առանց Սև ծովի մենք չենք կարող: Փառք աստծո, հիմա ուժ ունենք, թուրքերն էլ թույլ են... Ոչ թե Ղասկա Գոլիցինի պես, ոչ թե Ղրիմ պիտի գնանք, այլ՝ Դանուբի վրայով՝ Ցարեգրադ, խաչ բարձրացնենք սուրբ Սոֆիայի տաճարի վրա:

Կոտոշավոր կեղծամներն անհանգիստ շարժվեցին: Պյոտրի աչքը դարձյալ փայլում էր անհասկանալի, ծխամորն էր խլթխլթացնում: Սթափ Ապրակսինը մեղմաձայն ասաց.

— Խաղաղությունն ավելի լավ է պատերազմից, Լև Կիրիլովիչ, պատերազմը թանկ արժե: Հաշտություն անենք թուրքերի հետ, թեկուզ քսանհինգ տարով, թեկուզ տասը տարով, չտալով ոչ Ազովը, ոչ Դնեպրի քաղաքները՝ դրանից լավ բան... (Աչքի պոչով Պյոտրին նայեց, հոգոց հանեց:)

Պյոտրը ոտքի ելավ, բայց քայլելու տեղը նեղ էր, նստեց սեղանին.

— Աչքս միշտ ձեր վրա պիտի լինի, ազնվականների, կաղվածատերերի վրա: Ազնվականական աշխարհազո՞ր: Սիրուն-սիրուն սատանաները կհեծնեն ձիերը, չեն իմանա թուրը որ ձեռքով բռնեն: Զրիակերնե՛ր, իսկական ձրիակերներ: Մի հատ խոսեիր առևտուր անողների հետ... Արխանգելսկը՝ մի ծակոտ տեղ աշխարհի ծերին, անգլիացիները, հոլանդացիները ինչ ուզում, էն էլ տալիս, ջրի գին առնում են... Միտրոֆան Ծորինը պատմում էր՝ ութ հազար փութ կանեփը փտեցրել է ամբարներում, երեք նավարկություն սպասել է, որ գին տան: Էդ հրեշներն էլ գնացել-եկել ու մենակ ծիծաղել են... Հապա անտա՞ռը: Արտասահմանին փայտ է պետք, ամբողջ անտառը մեր ձեռքին, ու վիզ ենք ծռում՝ չե՞ք առնի... Կտա՞վը: Իվան Բրովկինն ասում է՝ ավելի լավ կլինի, ամբարներիս հետ կրակ տամ Արխանգելսկում, քան էդ գնով տամ գնա... Չէ՛: Մեր հոգսը Սև ծովը չէ... Բալթիկ ծովում են պետք մեր նավերը:

Ասածն ասաց... Երկայնահասակ, մրոտ-կպրոտ, սեղանի մոտից պարոնայք մինիստրներին էր նայում աչքերը չռած: Խոժոռվեցին: Թաթարների, լավ, թուրքերի դեմ կռվելը չնայած դժվար, բայց սովորական գործ էր: Բայց Բալթիկ ծո՛վը գրավել: Լիվոնցիների՞ն, լեհերի՞ն... Ծվեդների՞ն հաղթել: Եվրոպական շիլաշփոթի՞ն խառնվել: Լև Կիրիլովիչը չաղլիկ ձեռքը տարավ կափտանի ցից փեշին, ընկուզեգույն մետաքսե թաշկինակը հանեց, սրբեց դեմքը: Վոգնիցինը տարուբերում էր չորչորուկ դեմքը: Պյոտրը, ծխախոտի քսակը հանելով գրպանից, ասաց.

— Թուրքերից հիմա ոչ թե Պրոկոֆիի պես, նոր ձևով ենք հաշտություն ուզելու.... Մենակ սև-դարչնագույն աղվեսի մորթիով կափտան չենք տանի Էնտեղ...

— Իհարկե,— հանկարծ ասաց Ալեքսաշկան, աչքերը փայլեցնելով:

11.

Պլտորված, հորդաջուր Դոնն ի վար, տաք քամուց ուռած շերտավոր առագաստներով երկտախտակամած տասնութ նավեր էին լողում, որոնց առաջից ու ետևից շարժվում էին քսան գալիոտ և քսան բրիգանտինա, սկամպավելներ, թեթև առագաստանավեր, թիանավեր՝ ութսունվեց ռազմանավ և կազակներ տեղափոխող հինգ հարյուր գետանավեր: Երկարապոչ ձգվել էին գետի ոլորանների վրա:

Բարձր տախտակամածներից երևում էին կանաչած տափաստանները, հեղեղաջրից առաջացած լճակների ծփանքը: Թռչունների երամներ էին թռչում հյուսիս: Հեռվում տեղ-տեղ սպիտակին էին տալիս կավճե բլրաշարերը: Հարավ-արևելյան, սկզբում հանդիպակաց քամի էր փչում, ու ստիպված եղան շատ չարչարվել, մինչև Դոնով թեքվեցին արևմուտք. թրջվում էին առագաստները, նավերը շեղվում ու քշվում էին հոսանքով, կատաղած բղավում էին նավապետները պղնձյա փողերի մեջ: Այսպիսի հրաման էր արձակվել նավատորմին.

«Ոչ ոք չհամարձակվի ետ մնալ կոմանդորական նավից, սակայն նրան հետևել է պետք փրփուրի տակ: Եթե որևէ մեկը ետ մնա երեք ժամով՝ քառորդ տարվա ռոճիկը կգանձվի, եթե վեց ժամով՝ երկու երրորդը, եթե տասներկու ժամով՝ ամբողջ տարվա ռոճիկը կգանձվի»:

Հարավ-արևմուտք շրջվելուց հետո լողացին հեշտ ու հանգիստ: Տախտառանի վրա կարճատև հուրհրատում էին պերճ ու խոնավ վերջալույսերը: Կրակոց էր թնդում ծովակալական նավից: Զարկում էին կեսժամյա զանգերը: Ճրագներ էին ելնում կայմերն ի վեր: Հավաքում էին առագաստները, ճողփյունով ընկղմվում էր խարիսխը: Մթնած ափերին խարույկներ էին վառվում, երկարուձիգ բղավում էին կազակները:

«Պյոտր Առաքյալ» նավի մթին ու վիթխարի զանգվածից (ուր որպես կոմանդոր ցարն էր նշանակված) կախարդի պոչահետքով, թշշացնելով ու լորերին վախեցնելով, աստղալից երկինք թռավ հրթիռը: Ընթրելու էին հավաքվում ընդհանուր նավասենյակում: Մոտակա նավերից առանց այդ էլ գինովցած գիշերներին մասնակցելու էին գալիս ծովակալներ, նավապետներ, մերձալոր բոյարներ:

Դիվնոգորսկի մենաստանի մոտ նավատորմին միացան վեց նավեր, որոնք կառուցել էր իշխան Բորիս Ալեքսեևիչ Գոլիցինի կոմպանիան: Սույն առիթով խարիսխ գցեցին կավճապարի զառիթափ ափին, երկու օր խրախճանք էին անում բացօթյա, մենաստանի բակում: Վանականներին գայթակղեցնում էին եղջյուրների նվագով, երկիմաստ կատակներով, վախեցնում նավերի ուր հարյուր թնդանոթների համազարկով:

Ամբողջ գետը նորից ծածկվեց առագաստներով: Լողում էին բարձրադիր ափերի, ճղացանկապատերով ու հողաշեն հյուղակներով եզերված գյուղաքաղաքների մոտով, բոյարական ու մենաստանային նոր վոտչինաների, ձկնորսարանների մոտով: Պանչին գյուղաքաղաքի տակ ձախ ափին տեսան հեծյալ կալմիկների բազմությունը՝ երկար նիզակներով, իսկ աջ ափին՝ գումակի քառանկյունու մեջ երկու թնդանոթներով կանգնած կազակներին: Կալմիկներն ու կազակները եկել էին կովելու՝ ձիերի երամակներն ու ձկնորսատեղերը հաշտությամբ չբաժանելու պատճառով:

Վոյեվոդա Շեինը նավակով գնաց կալմիկների մոտ, Բորիս Ալեքսեևիչ Գոլիցինը՝ կազակների: Հաշտեցրին: Այս առիթով կանաչած բլուրների վրա խնջույք արեցին դանդաղ լողացող ամպերի, կռունկների թռչող երամների տակ: Կոռնելիուս Կրեյսը՝ խումհարի մեջ, հրամայեց կրիաներ որսալ և անձամբ արգանակ պատրաստեց կրիայի մսով: Պյոտրը նույնպես հրամայեց կրիաներ որսալ և բոյարներին հյուրասիրեց արտասովոր կերակուրով, իսկ երբ կերան վերջացրին, ցույց տվեց կրիաների գլուխները: Վոյեվոդա Շեինը սրտխառնոց ունեցավ: Շատ ծիծաղեցին:

Մայիսի քսանչորսին, շոգ կեսօրին, ծովի մշուշի միջից հարավում երևացին Ազովի բաստիոնները: Դոնն այստեղ լայնարձակ էր, բայց

և այնպես խորությունը բավարար չէր քսան թնդանոթանի նավերը գետաբերանով ծով հանելու համար:

Մինչ փոխծովակալը չափում էր Դոնի բազուկը՝ Կուտյուրմայի խորությունը, իսկ Պյոտրը զբոսանավով Ազովի և Տագանրոգի ամրոցներն ու բերդերը ստուգելու էր գնում, Բախչիսարայից խանական դեսպանություն եկավ՝ գեղեցիկ նժույգներով, բեռնաձիերի գումակով: Գորգե վրաններ խփեցին, բլրի կատարին տնկեցին մականը՝ ձիու պոչ էր, բարձր նիզակի ծայրին ամրացրած կիսալուսնով, և թարգմանիչ ուղարկեցին իմանալու՝ ցարը խանից ողջույն և ընծաներ կընդունի՞ արդյոք: Նրանց պատասխանեցին, թե ցարը Մոսկվայում է իբր, իսկ այստեղ փոխարքա Գոլովինն է, բոյարների հետ: Երեք օր ծածանվում էր մականի պոչը բլրի կատարին: Փրփրած նժույգները հեծած, թաթարները ետուառաջ էին արշավում թնդանոթների փողաբերանների առաջ: Չորրորդ օրը դեսպանները եկան ծովակալական նավը: Անատոլիական հերմակ մի գորգ փռեցին, շարեցին ընծաները. կոփածո թամբաղեղ էր, փոքրիկ թուր, ատրճանակներ, դաշույն, լծասարք՝ բոլորն էլ համեստ, սրծաթյա իրեր էին, էժանագին քարերով: Գոլովինը ծանրումեծ նստել էր ծալովի աթոռին, թաթարները՝ գորգի վրա ծալապատիկ: Խոսում էին Վոզնիցինի ստորագրած զինադադարների մասին, այս ու այն գործերից, քաշքշելով ցանցառ, երկնյուղ մորուսները, ծովաշան նման շարժուն աչքերով ամեն բան գնելով ու լեզուները ծտտացնելով.

— Կառոշ մոսկով, կառոշ ֆլոտ... Մենակ թե իզուր եք հույս դրել, մեծ նավերով Կուտյուրման չեք անցնի, վերջերս սուլթանի նավերը փորձեցին անել, բան դուրս չեկավ, ետ գնացին Կերչ...

Ամեն ինչից երևում էր, որ եկել են միայն հետախուզելու: Առավոտյան բլրի կատարին ոչ մական կար, ոչ վրան, ոչ հեծյալ:

Չափումները ցույց տվեցին, որ Կուտյուրման ծանծաղ է: Դոնի ջուրը օրըստօրե իջնում էր: Հույս կարելի էր դնել միայն հարավ-արևմտյան ուժեղ քամու վրա՝ եթե ծովի ջուրը քշեր-բերեր գետաբերան:

Տագանրոգից վերադարձավ Պյոտրը: Մռայլվեց, իմանալով ջրի ծանծաղության մասին: Հարավից ծուլորեն փչում էր քամին: Ծոգը սկսվեց: Նավակողերից կուպրն էր կաթկթում: Ջմռանը վատ չորացած փայտը ճաքճքում էր: Նավամբարներից ջուր էին քաշում: Առագաստները հավաքած նավերն անշարժացել էին տապի մշուշի մեջ:

Հրամայվեց բալաստը ջուրը նետել: Նավամբարներից հանում էին վառոդի և սեղ դրած մսի տակառները, բարձում գետանավերի վրա, տանում Տագանրոգ: Նավերը թեթևանում էին, Կուտյուրմայի ջուրը շարունակում էր ծանծաղել:

Հունիսի քսաներկուսին, ճաշի ժամին շառուտբենախտ Յուլիուս Ռեզը՝ շառագունած ու ծանրամարմին, բաղնիքի պես շոգ ընդհանուր

նավասանգլակից ելնելով, որ կողից ծովի մեջ միգի, թրթռում աչքով հարավ-արևելուստջում արագորեն մեծացող մոխրագույն մի ամպ տեսավ: Պետրը հոգալուց հետո մի անգամ էլ նայեց ամպին, ետ եկավ ընդհանուր նավասանգլակ, սուսերն ու գլխարկը վերցրեց ու բարձրաձայն ասաց.

— Փոթորիկ է գալիս:

Պյոտրը, ծովակալները, նավապետները վեր թռան սեղանի մոտից: Պատառ-պատառ ամպեր էին սուրում բարձրում, ջրի ճերմակավուն թաղանթի եզրից խավար էր բարձրանում: Արևը խանձում էր երկաթյա լույսով: Անկենդան կախված էին դրոշները, վիմպելները, կայմապարանոցներից կախ արած նավաստիների սպիտակեղենը: Բոլոր նավերի վրա բոցմանները ավրալ սուլեցին՝ բոլորը վեր բարձրացան: Ամրացնում էին առագաստները, հաստատում փոթորկախարիսխները:

Ամպը ծածկեց կես-երկինքը: Ջրերը մթնեցին: Ակնթարթորեն լայն լույսի մի շերտ շողաց ամպի եզրից: Պարանասարքերի մեջ սուլոց լսվեց՝ հետզհետե ավելի կայուն ու տագնապալի: Ճիչփաթին վիմպելները: Մթի գալարում, ցրիվ ու ծվեն պատառների միջով վրա պրծավ քամին: Ճոճոացին կայմերը, պարաններից պոկվեցին-թռան վարտիքները: Քամին նմլում էր ջուրը, պոկում պարանները: Առագաստակալների վրա նավաստիները ջղաձգվելով բռնում էին պարաններից: Նավապետները դոփում էին ոտքերով, մոլեգնող փոթորկից բարձր գոռալով: Փրփրադեզ ալիքները շրմփում էին նավակողերին: Որոտ որոտի վրա ճայթում էր երկինքը, հոգի սարսռեցնող հարվածներով. դղրդյունն անընդմեջ դարձավ: Կրակի սյուներ էին պարպվում:

Պյոտրը՝ անգլխարկ, կաֆտանի փեշերը վեր թռած, բազրիքից կառչած, կանգնել էր բարձրացող-ընկնող խելին: Ձկան պես բացել էր բերանը՝ խլացած, կուրացած: Թվում էր, թե կայծակները թափվում են նավի չորսբոլորը, ալիքների կատարներին: Յուլիուս Ռեզը բղավեց նրա ականջին.

— Սա դեռ ոչինչ: Հիմա կսկսվի իսկական փոթորիկը:

Փոթորիկն անցավ, անագին վնաս պատճառելով: Կայծակնահար եղան ափին գտնվող երկու նավաստի: Կտրվեցին խարիսխների պարանները, մի քանի կայմ կոտրվեց, մեծ թվով մանր նավեր ափ շպրտեցին, ջրասույզ եղան: Այդ ամենի փոխարեն հարավ-արևմտյան կայուն քամի հաստատվեց՝այն, ինչ պետք էր:

Կուտյուրմայի ջուրն արագ բարձրանում էր: Լուսաբացին սկսեցին նավերը դուրս բերել գետից: Կես հարյուրյակ թիանավեր, երկար պարաններով առաջինը տարան «Կրեպոստը»: Նշանողից նշանող ոչ մի անգամ չքսելով ողնափայտը, նավը Կուտյուրմայից ելավ Ազովի ծով, թնդանոթ արձակեց ու բարձրացրեց նավապետ Պամբուրգի անձնական դրոշը:

Նույն օրը ծով ելան ծանր նավերը՝ «Պետրոս Առաքյալը», «Վոռոնեժը», «Ազովը», «Գուդ Դրագերսը», «Վեյն Դրագերսը»: Հունիսի քսանչորսին ամբողջ նավատորմը խարիսխ ձգեց Տագանրոգի բաստիոնների առաջ:

Այստեղ, ծովապատնեշով պաշտպանված, սկսեցին նորից կպրել, խծծել ու ներկել ճաք տված նավերը, շտկել ճոպանասարքը, բեռնել բալաստը: Պյոտրը, օրնիբուն կախված «Կրեպոստի» նավախելից իջեցված ճոճի մեջ և սուլելով, մուրճն էր թիկթիկացնում խծուծի ու կպրաշերտի վրա: Կամ՝ կտավե կեղտոտ շալվարով նիհարած հետույքը պրկած, թոկաստիճաններով բարձրանում էր կայմի վրա, նոր առագաստակալ ամրացնելու: Կամ էլ՝ իջնում էր նավամբար, որ Ջոն Դեյի և Օսիպ Նայի հետ բղավոց ու հայհոյանքով կոված Ֆեդոսեյ Սկլյանն էր աշխատում. վերջացնում էր կոշտափայտերի հնարամիտ ամրացման գործը:

— Պյոտր Լիքսեիչ, աստծու սիրուն, ինձ մի խանգարեք,— անբարյացակամորեն ասում էր Ֆեդոսեյը,— վատ եղավ պնդացնելը, գլուխս կտրեք, կամքը ձերը լինի, մենակ թե ձեռիս տակ մի գնացեք-եկեք...

— Լավ, լավ, եկել եմ օգնելու մենակ...

— Գնացեք, հրեն, Ալադուշկինին օգնեք, ես ու դուք մենակ կկրռվենք իրար հետ...

Ամբողջ հուլիսն աշխատեցին: Շատրբենախտ Յուլիուս Ռեզը անվերջանալի պարապմունքներ էր անցկացնում նավերի անձնակազմերի հետ, որոնց վերցրել էին Պրեոբրաժենսկի և Սեմյոնովսկի գնդերից: Նրանց մեջ շատ կային ազնվականների զավակներ, որոնք ծովի երես չէին տեսել: Իր մոլեգնությամբ ու խիզախությամբ իսկական նավաստի Յուլիուս Ռեզը ոլորած պարանի կտորով նավաստիների մեջ նավագնացության հանդեպ մոլեգնություն էր սերմանում: Ստիպում էր կանգնել երրորդ, չորրորդ կայմագերանների՝ ջրից տասներկու սաժեն բարձրության վրա, նավակողից գլխիվայր ջուրը նետվել, լրիվ հագուստով. «Ով խեղդվեց, նավաստի չէ»: Նավապետի կամրջակի վրա ոտքերը չռած, ձեռնափայտը բռնած ձեռքերը մեջքին, մեդեցինյան որձ շան կատաղությունը կգալիս, ավազակն ամեն ինչ տեսնում էր մի հատիկ աչքով. ով հապաղեց հանգույցն արձակելիս, ով վատ ամրացրեց ծայրը: «Էյ, էն ո՞վ է կայմածոխի վրա, փնթի կոֆ, ինչպե՞ս ես ջոպանը թուլացնում»: Կրունկով դոփում էր. «Բոլորը միջին դախդակամա՞ձ... Նորի՞ց»:

Մոսկվայից ժամանեց նոր նշանակված դեսպան Եմելյան Ռիկրաինցևը՝ Դեսպանական ատյանի ամենափորձառու գործիչը, նրա հետ՝ ատենադպիր Զերեդեևը և թարգմանիչներ Լավրեցկին ու Բոտվինկինը: Սուլթանին և փաշաներին բաժանելու համար սամույրի մորթիներ էին բերել, ձկնատամ և մեկուկես փութ թեյ:

Օգոստոսի տասնչորսին «Կրեպոստը» բարձրացրեց առագաստները և ամբողջ նավատորմի ուղեկցությամբ, հյուսիս-արևելյան ուժեղ քամու տակ ելավ բաց ծով, ուղղություն վերցնելով դեպի արևմուտք-հարավ- արևմուտք: Տասնչորսին ձախ կողմից, նոգայական ափին երևում

վացին Խասանի բարակ միճարեները, նավատորմը հատեց նեղուցն ու թնդանոթազարկերով, վառոդի ծխով պարուրված, անցավ Կերչի առջևով, խարիսխ ձգեց: Քաղաքի պարիսպները շատ հին էին, բառակուսի բարձր աշտարակները՝ տեղ-տեղ փլված: Ոչ ամրակետեր կային, ոչ բաստիոններ: Ամի մոտ չորս նավ կար կանգնած: Թուրքերը, ըստ երևույթին, իրար էին անցել՝ չէին սպասում, չէին հավատում, որ ամբողջ ծովախորշը առագաստներով ու թնդանոթների արձակած ծխով պարուրված կտեսնեն:

Կերչի փաշա Մուրթազան՝ վախկասուն ու ծույլ մի թուրք, վախեցած նայում էր աշտարակներից մեկի մեջ բացված լուսամուտից: Վերահսկիչներ ուղարկեց մոսկովյան ծովակալական նավը՝ հարցնելու, թե ինչի՞ համար է այսքան մեծ քարավան եկել: Մի ամիս առաջ խանական թաթարները հայտնել էին, որ ցարական նավատորմը խիստ նվազ է և ամենևին թնդանոթ չունի ու երբեք չի կարող աճցնել ազովյան ծանծաղուտներով:

— Ա՛յ-ա՛յ-ա՛յ... Ա՛յ-ա՛յ-ա՛յ,— կամացուկ տնքտնքում էր Մուրթազան, լուսամուտի տակ անած թփերը ետ տանելով, որ ավելի լավ տեսնի: Հաշվում ու հաշվում էր նավերը: Դադարեց:— Ո՞վ հավատաց խանի լրտեսներին,— բղավեց աստիճանավորների վրա, որոնք կանգնած էին ետևում, աշտարակի՝ թռչունների ծերտով ծածկված հարթակի վրա:— Ո՞վ հավատաց թաթար շներին:

Մուրթազան ոտքերը գետնին զարկեց: Խաղաղ ու հանգիստ այդ խուլ տեղում ծուլացած և հղփացած աստիճանավորները ձեռքները կրծքներին էին տանում, վշտաբեկ տարուբերում ֆեսերն ու չալմաները: Հասկանում էին, որ Մուրթազան ստիպված է լինելու տհաճ նամակ գրել սուլթանին, ու պարզ չէր, թե ինչ վախճան կունենա դաթեև մարգարեի լուսափայլ տեղապահն է սուլթանը, սակայն դյուրաբորբոք է ու այս տեսակ փաշաներ չէ, որ ցցի էին հանվել տնքոցով՝ դեպքեր եղել էին:

Վերահսկիչներին տարած շեղառագաստ նավակը հեռացավ ծովակալական նավից: Մուրթազան աստիճանավոր ուղարկեց ծովափ՝ շտապեցնելու եկածներին, իսկ ինքը նորից սկսեց հաշվել նավերը: Վերահսկիչները երկու հույն էին, եկան, աչքերը վեր հառած, գլուխներն ուսերի մեջ թաղած, լեզուները ծտտացնելով: Կատաղած Մուրթազան նրանց կողմը դարձրեց ճարպոտ դեմքը: Պատմեցին.

— Մոսկովյան ծովակալը հրամայեց ողջույն տալ քեզ ու ասել, որ իրենք ուղեկցում են սուլթանի մոտ գնացող դեսպանին: Մենք ծովակալին ասացինք, որ դու չես կարող դեսպանին թողնել ծովով տեղ հասնել՝ թող բոլորի պես գնան Ղրիմով: Ծովակալն ասաց. «Իսկ եթե չեք ուզենա թողնել ծովով, ամբողջ նավատորմով մինչև Կոստանդնուպոլիս կուղեկցենք դեսպանին»:

Հաջորդ օրը Մուրթազա փաշան երեսելի բեյեր ուղարկեց ծովակալի մոտ: Ու բեյերն ասացին.

— Մենք մեղք ենք գալիս ձեզ՝ մոսկովցիներիդ, դուք մեր Սև ծովը չգիտեք. դժվարության դեպքում մարդկանց սրտերը ծովի վրա սևանում են, դրա համար է սև կոչվում: Լսեք մեզ, ցամաքով գնացեք:

Ծովակալ Գոլովինն ընդամենը փքվեց. «Ճա՜տ վախեցրիք»: Ու նրա կողքը կանգնած բարձրահասակ, հոլանդական հագուստով մի մարդ ծիծաղեց, ու բոլոր ռուսները ծիծաղեցին:

Ի՞նչ կարող ես անել: Ինչպե՞ս չթողնել, երբ առավոտյան զովի հետ մոսկովյան նավերը բարձրացնում են առագաստներն ու ծովային բոլոր կանոնների համաձայն նավաշարք կազմում, գնում-գալիս են ծովախորշով, կրակում լողանների վրա ձգված քաթանե թիրախների վրա: Կլինի՞ մերժել այդ հանդուգներին: Ապավինելով միայն ալլահին, Մուրթազա փաշան ձգձգում էր բանակցությունները:

Մակույկը մոտեցավ թուրքական ծովակալական նավին: Վեր բարձրացան Կոռնելիուս Կրեյսը և հոլանդական նավաստու զգեստով երկու թիավար՝ Պյոտրը և Ալեքսաշկան: Միջնատախտակամածի վրա թուրքական անձնակազմը ողջույն տվեց մոսկովյան փոխծովակալին: Ծովակալ Հասան փաշան ծանրումեծ ելավ խելի նավասենյակից՝ ճերմակ մետաքսյա խալաթով էր, չալմայի վրա ադամանդե կիսալուսին: Արժանապատվությամբ մատները հպեց ճակատին ու կրծքին: Կոռնելիուս Կրեյսը հանեց գլխարկը, ետքայլ արեց, փետուրները շարժեց Հասան փաշայի առաջ:

Երկու աթոռ մատուցեցին: Ծովակալները նստեցին պարուսին ծածկի տակ: Կարճիկ ու գիրուկ մի մարդ՝ ամորձատված խոհարարը, մատուցարանով բերեց քաղցրավենիք, սրճաման ու մատնոցաչափ բաժակներ: Ծովակալները հարկը պատշաճին խոսակցություն սկսեցին: Հասան փաշան հարցրեց ցարի ողջությունը: Կոռնելիուս Կրեյսը պատասխանեց, որ ցարը ողջ և առողջ է, ինքն էլ նորին սուլթանական մեծության ողջությունը հարցրեց: Հասան փաշան երկնակվեց սեղանի վրա. «Ալլահը պահապան սուլթանական մեծությունն կլանքին...»: Տխրամած աչքերով նայելով Կոռնելիուս Կրեյսի կողքով, ասաց.

— Կերչում մենք մեծ նավատորմ չենք պահում: Այստեղ որևէ մեկից վախենալու բան չունենք: Բայց Մարմարա ծովում հզոր նավեր ունենք: Թնդանոթներն այնքան մեծ են, որ կարող են երեք փթանոց քարեր արձակել:

Սուրճը ֆոթացնելով, Կոռնելիուս Կրեյսն ասաց.

— Մեր նավերը քարե արկեր չեն բանեցնում: Մենք թուջե արկերով ենք կրակում, տասնութ և երեսուն ֆունտ քաշով: Դրանք հակառակորդի նավը ճեղքում են երկու կողերից:

Հասան փաշան թեթևակի բարձրացրեց գեղեցիկ հոնքերը.

— Մենք քիչ չզարմացանք, տեսնելով, որ ցարական նավատորմում ծառայում են անգլիացիներ ու հոլանդացիներ, որոնք Թուրքիայի լավագույն բարեկամներն են...

Կոռնելիուս Կրեյսը լուսավոր ժպիտով պատասխանեց.

— Օ՜, Հասան փաշա, մարդիկ ծառայում են նրան, ով ավելի շատ

է վճարում: (Հասան փաշան հանդիսավորությամբ խոնարհեց գլուխը:) Հոլանդիան և Անգլիան շահավետ առևտուր են անում Մոսկովիայի հետ: Ավելի ձեռնատու է հաշտ ապրել ցարի հետ, քան պատերազմել: Մոսկովիան այնքան հարուստ է, ինչքան և ոչ մի երկիր աշխարհում:

Հասան փաշան մտազբաղ ասաց.

— Պարոն փոխծովակալ, ցարին որտեղի՞ց այսքան նավ:

— Մոսկովցիներն իրենք են կառուցել երկու տարում...

— Այ-ալ-ալ,— չալման տարուբերեց Հասան փաշան:

Մինչ ծովակալները զրուցում էին, Պյոտրը և Ալեքսաշկան թուրք նավաստիներին ծիսախոտ էին հյուրասիրում, աշխատում ծիծաղեցնել նրանց: Հասան փաշան ստեպ-ստեպ նայում էր այդ բարձրահասակ երիտասարդներին՝ չափից դուրս հետաքրքրասեր էին: Ահա մեկը մագլցեց կայմի վրա, տակառի մեջ: Մյուսն աչքերն էր պլշել անգլիական արագագարկ թնդանոթի վրա: Սակայն քաղաքավարությունից դրդված, Հասան փաշան չխոսեց, նույնիսկ երբ թուրք նավաստիները մոսկովցիներին տարան ստորին տախտակամած:

Կոռնելիուս Կրեյսը ափ իջնելու թույլտվություն խնդրեց՝ միրգ, բաղդրավենիք և սուրճ գնելու: Հասան փաշան մտածելուց հետո ասաց, որ թերևս ինքը կարող է սուրճ վաճառել պարոն փոխծովակալին.

— Ծա՞տ սուրճ է քեզ պետք:

— Մի յոթանասուն չերվոնեցի:

— Աբդուլա-Ալլա,— ձայն տվեց Հասան փաշան, կրունկը հատակին զարկելով: Ծորոր վազքով մոտեցավ ամորձատված խոհարարը: Լսեց կարգադրությունը, գնաց ու կշեռք բերեց: Նրա ետևից նավապտիները սուրճի տոպրակներ էին քարշ տալիս: Հասան փաշան ավելի հարմար մոտ քաշեց աթոռը, ստուգեց կշեռքը, ծոցից հանեց սաթե թազբեհը՝ կշիռները համրելու: Հրամայեց արձակել տոպրակները: Խնամված մատների արանքով լցնելով սուրճի հատիկները, կիսախուփ արեց աչքերը:

— Ցավայի լավագույն բերքից է այս սուրճը: Ինձ շնորհակալություն ես ասելու, պարոն փոխծովակալ: Տեսնում եմ՝ լավ մարդ ես: (Հակվեց ականջին:) Մի վատը չեմ ուզում՝ մոսկովցիներին հանձնիր, ծովով չգնան ափերին ստորջրյա շատ խութեր կան ու վտանգավոր ծանծաղուտներ: Ինքներս ենք վախենում այդ տեղերից:

— Ինչո՞ւ պետք է ափերի մոտով լողանք,— պատասխանեց Կոռնելիուս Կրեյսը,— մեր նավերը ուղղություն կվերցնեն ուղիղ բաց ծովով, միայն համընթաց քամի լինի:

Համրեց յոթանասուն չերվոնեց: Հրաժեշտ տվեցին: Մոտենալով նավասանդուղքին, Կոռնելիուս Կրեյսը խստաձայն բղավեց.

— Էյ, Պյոտր Ալեքսեև...

— Այստեղ եմ,— փութկոտ պատասխան լսվեց:

Պյոտրը, Ալեքսաշկան՝ ետևից, դուրս թռան հատականցքից, երկուսի գլխին էլ՝ կարմիր ֆեսեր: Փոխծովակալը գլխարկը թափահարեց ծովակալին ի հրաժեշտ, նստեց ղեկի մոտ, մակույկը ափի կողմը պացավ: Պյոտրը և Ալեքսաշկան, կորացող թիերին ուժ տալով, գվարթորեն մերկացրել էին ատամները:

Ալիքի կատարից մակույկը խրվեց առափնյա խճավազի մեջ: Բերդի դարպասից, փտած նավակների և կանաչած ցցագերանների մոտով արագաքայլ մոտեցան վերատուգիչները ու նույն բեյերը՝ խնդրելու, որ քաղաք չմտնեն ոչ մի դեպքում, իսկ եթե կարիք լինի, առևտրականներն ամեն տեսակ ապրանք կբերեն այստեղ, մակույկի մոտ... Պյոտրի բիբերը թրթռացին, այտերը զայրույթից կարմրատակեցին: Վեր տնկած թին բռնած, Ալեքսաշկան ասաց.

— Մին խեռց, մի բերան ասա... Նավերով մոտ գնանք թնդանոթազարկի չափ... Ծիշտ եմ ասում...

— Իրենց իրավունքն է չթողնելը. սա ամրոց է,— ասաց Կոռնելիուս Կրեյսը:— Ափով կիջնենք պարսպի երկարությամբ, ինչ մեզ պետք է, կտեսնենք:

12.

Մուրթազա փաշան այլևս ոչինչ չկարողացավ հորինել՝ «ալլահը ձեզ հետ, գնացեք: Պյոտրը Տագանռոգ վերադարձավ նավատորմի հետ: Օգոստոսի քսանութին, վերցնելով դեսպանին, ատենադպիրին ու թարգմանիչներին, թուրքական չորս ռազմանավերի ուղեկցությամբ «Կրեպոստը» շրջանցեց Կերչի հրվանդանը և թույլ քամու տակ լողաց Ղրիմի հարավային ափերի երկայնքով:

Թուրքական նավերը հետևում էին փրփուրի մեջ, խելին կպած: Առջևի նավի մեջ վերահսկիչն էր: Հասան փաշան մնացել էր Կերչում՝ ամենավերջում խնդրեց իրեն գրավոր վկայագիր տալ, որ ցարական դեսպանը ինքնագլուխ է գնում, իսկ ինքը՝ Հասանը, խորհուրդ չի տվել: Բայց սույնը մերժվեց նրան:

Բալակլավան երևալուն պես, վերահսկիչը նավակ նստեց, հավասարվեց «Կրեպոստին» ու խնդրեց Բալակլավա մտնել՝ թարմ ջուր վերցնելու: Փութաջանորեն շարժում էր խալաթի թևքերը, ցույց տալով շիկավուն բլրակները:

— Լավ քաղաք է, մտնենք: Խնդրում եմ:

Նավապետ Պամբուրգը, բազրիքին կոթնած, թնդաց վերևից.

— Կարծես թե չենք հասկանում, վերահսկիչն ուզում է Բալակլավա մտնել, որ մի լավ բախշիշ առնի բնակիչներից՝ դեսպանական պարենամթերքի համար: Հա՛, հա՛: Մեր տակառները լիքը ջուր են:

Վերահսկիչն մերժեցին: Քամին զովացավ: Պամբուրգը նայեց երկնքին ու հրամայեց առագաստները շտացնել: Թուրքական ծանր նավերը նկատելիորեն ետ մնացին: Առջևի նավի վրա ազդանշանային դրոշակներ բարձրացան. «Առագաստները պակասեցրեք»: Պամբուրգը հեռադիտակն աչքին դրեց: Հայհոյեց պորտուգալերեն: Արագ իջավ ցած՝ ընկուզենու փայտով ճոխ կահավորված ընդհանուր նավասենյակ: Այնտեղ սեղանի մոտ, փայլեցրած օթոցին նստած, նավամոնումից տատապում էր դեսպան Եմելյան Ուկրաինցևը՝ աչքերը

փակ էին, կեղծամը հանել ու սեղմել էր ձեռքի մեջ: Պամբուրգը կատաղած էր.

— Այդ պատանիներն ինձ հրամայում են առագաստները պակասեցնել: Ես չեմ լսում: Բաց ծով եմ դուրս գալիս:

Ուկրաինցևը միայն կեղծամը թափ տվեց թույլ-թույլ.

— Ուր ուզում ես, գնա:

Պամբուրգը բարձրացավ վեր, կանգնեց խելին, նավապետի կամրջակին: Բեխերը ոլորեց, որ չխանգարեն բղավելուն.

— Բոլորը՝ վե՞ր: Լսի՞ր հրամանս: Բարձրացնել ֆոր-բոմ-բրամսելները... Գրուտը... Կրյուս-բոմ-բրամսելնե՛րը... Ֆոր-ստենգա-ստակսե՛լը, ֆոկաստակսե՛լը... Թեքվիր ձա՞խ: Այդպես...

«Կրեպուստը» ճռնչալով ու թեքված, շրջադարձ արեց, առագաստներով մեկ քամի առավ և հեռանալով ասես կանգնած մնացած թուրքերից, Եվքսինյան Պոնտոսով ուղիղ դեպի Ցարեգրադ ալացավ...

Սաստիկ թեքված նավը թոչում էր մթին ու կապույտ, հյուսիս-արևելյան քամուց փրփրած ծովի վրայով: Թվում էր, թե ալիքները բարձրացնում են փրփրադեզ կատարները՝ նայելու համար, թե դեռ երկա՞ր պիտի հենց այնպես սուրան՝ արևափանձ ափին հասնելուց առաջ: Անձնակազմից տասնվեց հոգի՝ հոլանդացիներ, շվեդներ ու դանիացիներ, բոլորն էլ ծովային հին գայլեր, ալիքներին նայելով, ծխամորճ էին փստացնում՝ հեշտ ու հանգիստ ընթացք էր: Այնինչ, անձնակազմի զինվորների կեսը փոված էր նավամբարանոցում, ջրով ու աղ դրած մսով տակառների արանքում: Պամբուրգը հրամայեց բոլոր հիվանդներին օրական երեք անգամ օդի տալ: «Ծովին պետք է ընտելանաղ»:

Մի օր ու գիշեր լողացին, երկրորդ օրն անցան պտորջյա խութերից. նավը թաղվում էր, ջուր առնում, փրփուրի թաղանթը ծածկում էր ամբողջ տախտակամածը: Պամբուրգը, փնչացնելով, միայն կաթիլներն էր սրբում բեխերի վրայից:

Ծովամոնումից շատ տառապեց դեսպանախումբը: Ուկրաինցևը և ատենադպիր Զերեդեևը, նավախելի փոքրիկ, նոր ներկած նավասենյակ-խցիկում պառկած, գլուխները կոտրում էին բարձերի վրայից, դուրս նայում քառակուսի լուս մուտից... Ահա և լուսամուտը դանդաղ ընկնում էր ցած՝ ալիքների մեջ. կանաչ ջրերը թշշալով բարձրանում էին չորս ապակիների վրա, ծանր ճողփյունով փակելով նավախցի լույսը: Ճոճում էին միջնորմները, ցածրիկ առաստաղը փրլչում էր ասես: Դեսպանը և ատենադպիրը տնքոցով փակում էին աչքերը:

Սեպտեմբերի երկուսի ջինջ առավոտյան, յունգան, որ մի կայմիկի ճուտ էր, կայմանարթակի տակառի միջից բղավեց. «Ցամա՞ք»: Մոտենում էր Բոսֆորի երկնագույն, գոգավոր ուրվագիծը: Հեռվում շեղ առագաստներ էին երևում: Թևին տալով մոտեցան ծովորորները, ճղավելով պտույտ տվեցին բարձր ու դրվագանախշ խելի վրա: Պամբուրգը հրամայեց բոլորին վեր բարձրանալ. «Էվացվե՛լ: Կապտանները մաքրե՛լ: Կեղծամները դնե՛լ»:

Կեսօրին, բոլոր առագաստները պարզած «Կրեպուստը», հինավուրց պահաշտարակների մոտով մխրճվեց Բոսֆոր: Պատնեշաթմբի կայմի վրա ազդարարոշակներ վեր թռան. «Ո՞ւմ նավն է»: Պամբուրգը հրամայեց պատասխանել. «Հարկ է ճանաչել մոսկովյան դրոշը»: Ափից՝ «Լոցման վերցրեք»: Պամբուրգը պատասխանեց՝ «Առանց լոցմանի ենք գնում»:

Ուկրաինցևը հագավ ոսկեկար տրեզներով մորեգույն կափտանը, դրեց փետրազարդ գլխարկը, ատենադպիր Զերեդեևը (ոսկրոտ ու սրաքիթ, սուզդալյան ոճի նահատակի նման) հագավ արծաթակար կանաչ կափտանը և նույնպես փետրազարդ գլխարկ դրեց: Թնդանոթաձիգները կանգնած էին թնդանոթների մոտ, մուշկետակիր զինվորները միջնատախտակամածի վրա էին:

Նավը սահում էր հայելանման նեղուցով: Ձախից, չորացած բլրակների արանքում եգիպտացորենի չճավաքած արտեր էին, ջրհաններ, ոչխարի հոտեր՝ զառիթափի վրա, ձկնորսական քարաշեն հյուղակներ՝ ծածկված եգիպտացորենի ծղոտով: Աջ ափին փարթամ այգիներ էին, սպիտակ պարիսպներ, կղմինդրե տանիքներ, ջրի մոտ իջնող սանդուղքներ: Սև-կանաչ ծառերը՝ նոճիները, բարակ էին խիկի պես: Մացառով պատված ամրոցի ավերակներ: Ծառերի կատարներից այն կողմ՝ կլոր գմբեթ ու մինարե... Ավելի մոտենալով ափին, զարմանալի պտուղներ տեսան ճյուղերից կախ: Ձիթենու և վարդի բույրեր եկան: Ռուսները զարմացած էին թուրքական հողի պերճությամբ.

«Բոլորն ասում են՝ իբր տկլոր են բասուրմանները, մի տես ոնց են ապրում...»:

Սփռվեց խորունկ, ասես հեռաստաններում թաղվող ոսկի վերջալույսը: Արագորեն շառագունելով, մարեց, արևաներկ անելով Բոսֆորի ջրերը: Խարիսխ ձգեցին Կոստանդնուպոլսից երեք մղոնի վրա: Գիշերվա կապույտի մեջ խոշոր աստղեր վառվեցին, ինչպիսիք Մոսկվայում չէին տեսել: Մշուշի պես անդրադարձվել էր Ծիրկաթինը:

Նավի վրա ոչ ոք քնել չէր ուզում: Նայում էին խաղաղված ափերին, ականջ դնում ջրհանի ճռռոցին, ծղրիդների ծկրթոցին: Ծերն Եվ էին այստեղ առաձնահատուկ հաչում: Ջրերի խորքերում սուրում էին տարօրինակ, լուսարձակ ձկներ: Զինվորները, խաղաղված նստած թնդանոթների վրա, խոսում էին. «Հարուստ երկիր է, ու պետք է որ հեշտ ապրեն էստեղ...»:

Մտազբաղ նայելով մոմի լույսին, որից խամրել էին նավախելի խցի պատուհանից երևացող խոշոր աստղերը, Եմելյան Ուկրաինցևը զգուշությամբ թաթախում էր սագի փետուրը, ստուգում, որ մազ չմնա ծայրին (նման դեպքերում կեղծամին էր քսում) և գաղտնագրով, անշտապ նամակ էր գրում Պյոտր Ալեքսեևիչին...

«...Այստեղ մի օրվա չափ կանգնեցինք... Ամսի երեքին հասան ետ մնացած թուրքական նավերը: Վերահսկիչը լաց լինելով կշտամ-

բում էր մեզ, թե ինչի առաջ անցանք, սուլթանը կհրամայի իր գլուխը բերել դրա համար, ու խնդրեց իրեն սպասել այստեղ· սուլթանին ինքը կհայտնի մեր գալստյան մասին: Մենք հանձնարարեցինք, որ սուլթանի մոտ ընդունելությունը լինի ըստ ամենայնի արժանապատիվ: Երեկոյան վերահսկիչը եւ եկավ Ցարեգրադից ու հայտարարեց, որ սուլթանը մեզ կընդունի արժանապատիվ և սանդալներ կուղարկի, մեզ տանելու՝ իրենց նավակներին սանդալ են ասում: Պատասխանեցինք, որ չէ, մեր նավով կհասնենք: Ու այդպես վիճեցինք, ու հանձնայնության եկանք, որ սանդալներով կգնանք, բայց առջևից «Կրեպոստը» պիտի լինի:

Հաջորդ օրը սուլթանական երեք սանդալ ուղարկեցին, գորգերով ծածկված: Նստեցինք նավակները, և մեր առջևից լողաց «Կրեպոստը»: Ճոտով տեսանք Ցարեգրադը, որ զարմանահրաշ մի քաղաք է: Պարիսպն ու աշտարակները չնայած հին են, բայց շատ ամուր են պարբված: Ամբողջ քաղաքը կղմինդրածածկ է, խիստ զարմանահրաշ ու հոյակապ մեչիդներ կան, սպիտակ քարից սարքված, իսկ Սոֆիան ավազաքարից է: Թե Ստամբուլը և թե Պերա թաղամասը ջրից երևում են, ինչպես ափի մեջ: Մեր Տյառնընդառաջի առթիվ ափից համազարկ տվեցին, և նավապետ Պամբուրգը պատասխանեց բոլոր թնդանոթների համազարկով: Կանգ առանք սուլթանական հարեմի դիմաց, որտեղից պարզպի վրայից մեզ էր նայում սուլթանը, նրա գլխավերևում մեծ հովհար էին բռնել ու հով էին անում նրան:

Ափին մեզ դիմավորեցին հարյուր հեծյալ չավուշ և երկու հարյուր ենիչերի՝ բամբուկե բրերով: Իմ և ատենադպիրի համար շքեղ լծասարքով ձիեր բերեցին: Եվ հենց նավակից իջանք, չավուշների պետը ողջույնս հարցրեց: Նստեցինք ձիերը և գնացինք նստավայրը՝ նեղ ու ծուռտիկ բազմաթիվ փողոցների միջով: Մեր կողքից անագին ժողովուրդ էր վազում:

Քո նավի վրա այստեղ շատ են զարմացած. ով է սարքել ու թե ինչպես է ծանծաղ ջրերով Դոնից ելել: Հարցնում էին, թե շա՞տ նավեր ունեմ ու ինչքան են մեծ: Պատասխանեցի, որ շատ են ու հարթահատակ չեն, ինչպես ստում են այստեղ, լավ էլ լողում են ծովերով: Հազարավոր թուրքեր, հույներ, հայեր ու հրեաներ են գալիս «Կրեպոստը» տեսնելու, սուլթանն էլ եկավ, նավակով երեք անգամ պտույտ տվեց նավի շուրջը: Ամենից շատ գովում են առագաստները ու ճոպանները՝ ամրության համար, և կայմափայտը: Ոմանք էլ ասում են, թե ամուր չի սարքված: Կներես, ինձ թվում է այսպես. ծովով որ լողում էինք, քամին էլ շատ ուժեղ չէր, իսկ «Կրեպոստը» շատ էր ճոճվում, կողքի թեքվում ու ջուր էր առնում: Կատուցել են Օսիպ Նայը և Ջոն Դեյը, կարծում եմ, ոչ առանց շահի: Փոքր բան չէ նավը, մի կարգին քաղաք արժե: Այստեղ գալիս, նայում են, բայց առնելուց չեն խոսում, առնող չկա... Կներես, իմացածիս պես եմ գրում...

Իսկ թուրքերն իրենց նավերը կառուցում են խիստ հիմնավոր և ամուր և շատ պինդ են միակցում, մերիններից ցածր են, բայց ջուր չեն առնում:

Մի հույն ինձ ասաց. թուրքերը վախենում են, եթե ձերդ ցարական մեծությունը Սև ծովը փակի, Ցարեգրադում սով կսկսվի, որովհետև հացը, յուղը, անտառանյութը, ցախը այստեղ են բերում դանուբյան քաղաքներից: Այստեղ լուրեր են պտտվում, որ քո նավատորմով արդեն եղել ես Տրապիզոնի և Սինոպի մատույցներում: Ինձ հարցրեցին այդ մասին, պատասխանեցի, որ չգիտեմ, իրար հետ եղած ժամանակ այն կողմերը չես գնացել...»:

Պամբուրգը սպաների հետ գնաց Պերա՝ եվրոպական որոշ դեսպանների ողջույնը հարցնելու: Հոլանդական և ֆրանսիական դեսպանները ռուսներին սիրալիր ընդունեցին, շնորհակալություն հայտնեցին և խաղողի գինի մատուցեցին, ցարի կենացը խմելու համար: Ապա գնացին անգլիական դեսպանի նստավայրը: Գլխադասն մոտ իջան ձիերից, դուռը թակեցին: Հրաշեկ մորուքով, սաժենանոց հասակով մի սպասավոր ելավ: Դուռը կիսափակ, հարցրեց, թե ինչ են ուզում: Պամբուրգը, աչքերից կրակ թափելով, ասաց, թե ովքեր են և ինչու են եկել: Սպասավորը դուռը փակեց ու բավական ուշ ետ եկավ, չնայած մոկովոցիները փողոցում էին սպասում, ու ծաղրաբար ասաց.

— Դեսպանը սեղան է նստել ճաշելու, և հրամայեց ասել, որ նավապետ Պամբուրգի հետ տեսնվելու կարիքը չունի:

— Ուրեմն դեսպանիդ ասա, որ թող ոսկորը բկին մնա,— բղավեց Պամբուրգը: Կատաղած թռավ ձիու վրա և քշեց աղյուսե ցածր աստիճաններով, փողոցի մանրալանջառների, տկլոր երեխաների, շների մոտով, դեպի ներքև՝ Ղալաթա, ուր դեռևս առավոտյան իր վաղեմի մտերիմներին էր տեսել խարովածանոցներում և սրճարանքներում, հասարակաց տների դռների առաջ:

Պամբուրգն ու սպաներն այստեղ հունական դուզիկ կոչվող գինով հարբեցին սաստիկ, աղմկեցին ու անգլիացի նավաստիներին կռվի մեջ էին քաշում: Հավաքվեցին նրա մտերիմները՝ հեռավոր նավարկության ղեկապետեր, Ղալաթայի խորշերում թաքնվող նշանավոր ծովահեններ, ամեն կարգի մութ մարդիկ: Պամբուրգը բոլորին հրավիրեց «Կրեպոստ»՝ խնջույքի:

Հաջորդ օրը մակույկներով սկսեցին նավին մոտենալ տարբեր ազգության նավաստիներ՝ շվեդներ, հոլանդացիներ, ֆրանսիացիներ, պորտուգալացիներ, մալթեր: Ոմանք կեղծամով ու մետաքսե գուլպաներով էին, սուսեր ունեին, ոմանց գլխներին կարմիր թաշկինակ էր կապած, կոշիկը բոբիկ ոտքին հագած, ատրճանակները լայն գոտիների տակ խրած մարդիկ կային, ոմանք էլ կաշվե բանկոնակներով էին ու աղած ձկան հոտ բռնած գյուդվեստականերով:

Խնջույքի նստեցին բաց տախտակամածի վրա, սեպտեմբերյան չայրող արևի տակ: Բոլորին ի տես. պարսպից այն կողմ սուլթանի մեկալ, խիտ վանդակաճաղերով պատված պատուհաններով պալատն էր, նեղուցի մյուս ափին Սկյուտարի փարթամ այգիներն ու պարտեզները: Պրեոբրաժենցիները և սեմյոնովցիները եղջրափողեր էին

փչում, գդալ գարկում, պարեղանակներ էին երգում, «գարուն» սուլում թռչնաձայն:

Արծաթափոշով շպարված կեղծամով, ժապավեն ու ծանրակով մորեգույն բանկոն հագած Պամբուրգը, գավաթը մի ձեռքում, թաշկինակը՝ մյուսում, տաքացած ասում էր հյուրերին.

— Թե հազար նավ պետք եկավ մեզ, հազարը կսարքենք... Ուրեմն, հարյուր թնդանոթանի նավերի հիմքը դրել ենք արդեն: Հաջորդ տարի մեզ սպասեք Միջերկրական ծովում, սպասեք մեզ Բալթիկ ծովում: Բոլոր հայտնի նավաստիներին ծառայության ենք վերցնելու: Օվկիանոս էլ ենք դուրս գալու...

— Սայլո՞ւտ,— գոռում էին կարմրատակած նավաստիները:— Սայլո՞ւտ նավապետ Պամբուրգին:

Ծովային երգեր ձգեցին: Դոփում էին ոտքերով: Քամի չկար, և ծխամորճի ծուխը ստիպում էր տախտակամածի վրա: Զննատեցին, թե ինչպես մայր մտավ արևը, թե ինչպես աստղիկական աստղերը լուսավորեցին այդ արտասովոր խրախճանքը: Կեսգիշերին, երբ ծովային գայլերի կեսը խոմփացնում էր՝ ոմանք սեղանի տակ պառկած, ոմանք էլ փոթորիկների մեջ ճերմակած գլուխները մատուցարանների արանքում դրած, Պամբուրգն իրեն զգեց կամրջակ.

— Լսի՞ր հրամանս: Թնդանոթաձիգնե՞ր, տեղերո՛ւմ: Տեղադրե՛լ լիցքը: Պնդացնել լիցքը: Պատրույգները վառի՛ր: Հրաձիգնե՞ր... Երկու կողերից համազարկ... Կրա-ա-ա՜ակ...

Քառասունվեց թնդանոթ միանգամից բոց արձակեցին: Դղրդյունով ասես երկինքը փուլ եկավ քնած Կոստանդնուպոլսի վրա... Ծխով պարուրված «Կրեպոստը» երկրորդ համազարկը տվեց...

Եմելյան Ռիկրաինցևը գաղտնագրով գրում էր.

«...սուլթանը և ամբողջ ժողովուրդը մեծ սարսափ ապրեցին. նավապետ Պամբուրգն ամբողջ օրը նավաստիների հետ խմել էր նավի վրա ու պատիկ հարբել և նավի բոլոր թնդանոթներից կեսգիշերին կրակել էր քանիցս: Այդ կրակոցներից ամբողջ Ցարեգրադում լուրեր տարածվեցին ու անագին փսփսոց եղավ, իբր նավապետը քո՝ տեր արքա, ծովային քարավանին, որը Սև ծովում է շրջում, գիշերային այդ կրակոցներով իմաց է տվել մտնել նեղուց...

Նորին սուլթանական մեծությունն այդ գիշեր վախեցել ու ընջաստենչակից փախել է շապիկ ոտնաշորով, և շատ մինիստրներ ու փաշաներ նույնպես վախեցել են և նավապետական այդ արտառոց թնդանոթաձգությունից երկու սուլթանների վերին հարեմից, որ ցմփորած էին, վիժել են ժամանակից շուտ: Այդ ամենի պատճառով նորին սուլթանական մեծությունը խիստ զայրացել է Պամբուրգի վրա ու հրամայել է մեզ ասել, որ նավից քշենք այդ նավապետին ու գլուխը կտրենք: Ես պատասխանեցի սուլթանին, որ ինձ հայտնի չէ, թե նավապետն ինչի համար է կրակել ու ես կհարցնեմ իրեն, և եթե նորին սուլթանական մեծությանը կրակոցները նեղություն են պատճառել,

նավապետին կհրամայեմ չկրակել ու խիստ հրաման կտամ, բայց նավից քշելու պատճառ չունեմ: Դրանով գործն ավարտվեց:

Սուլթանը մեզ կընդունի երեքշաբթի օրը: Թուրքերն սպասում են, որ այստեղ գա Մեծամորթա փաշան, որը նախկինում ալժիրյան ծովահեն է եղել, ու նրա հետ խորհուրդ պիտի անեն՝ մեզ հետ հաշտություն կնքե՞ն, թե՝ պատերազմեն»:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1.

Անտառապատ ափի վրա սեպտեմբերյան արևը շատ չէր բարձրանում: Օրըստօրե, որքան խորանում էին դեպի հյուսիս, տեղանքն ավելի խուլ ու ծմակ էր դառնում: Թռչունների երամներ էին պոկվում հանդարտահոս գետից: Հողմակործան անտառներ, ճահիճներ, ամայություն: Զկնորսական քոռտիկ էր երևում հազվադեպ, մեկ էլ՝ ափ հանած ինչ-որ նավակ: Մինչև Սպիտակ լիճ մի շաբաթվա ճամփա էր մնացել:

Տասնչորս հոգի պարաններով քաշում էին հացահատիկ բարձած ծանր գետանավը: Գլուխները ցած գցած, ձեռքերը կախած, կրծքով փոկերի վրա ընկած: Ուղղակի Ցարոպավլից էին գալիս: Արևն իջնում էր եղևնիների սև կատարներից այն կողմ, երկար ու տրտմագին ձգվում էր մռայլ վերջալույսը: Գետանավի վրայից բղավոց էր լսվում. «Է՛յ, կանգնե՛ք»: Բուլակները ցից էին խրում կամ պարանները փաթաթում մի որևէ ծառի: Խարույկ էին վառում: Ճահճուտ ափի կաթնագույն մշուշի մեջ դանդաղ թաղվում էր եղևնուտը: Երկարավիզ ստվերներով վերջալույսի շողերի մեջ թռչում էին բադերը: Ջախ ու ճյուղ ջարդոտելով, գետին էին մոտենում ձիու պես խոշոր որմզդեղններ: Որսից փախս ու մարդուց չվախեցող գազաններով լի էր անտառը:

Գետի վրա ճողփում էին թիերը, գետանավից ափ էր գալիս տերը՝ ճգնավոր Անդրեյ Դենիսովը, բուլակներին քերելով պաքսիմատ, ձավար, երբեմն ձուկ, ուտիս օրերին՝ աղ դրած միս: Զննում էր, թե ամուր են կապել նավը: Ձեռքերը կաշվե գոտու տակ խրած, կանգնում էր խարույկի մոտ. ջահել տղամարդ էր, կապայով, մահուդե խալաթակով, մորուքը գանգուր, աչքերը ջինջ:

— Եղբայրք, բոլորդ ողջ ու առո՞ղջ եք,— հարցնում էր:— Աշխատեք, աստված աշխատանք է սիրում: Ուրախացեք, ամեն բան ձեզ կներվի: Ի՞նչ երջանկություն է, որ հեռացանք նիկոնական գարշանքից: Ու երբ Օնեգ-լճով գնանք, ա՜յ թե երկիր կտեսնենք: Իսկական դրախտ...

Ձեռքերը գոտու տակից հանելով, նա պպզեց կրակի առաջ: Հոգնած մարդիկ լուռ լսում էին նրան.

— Այն կողմերում, Վոլգա գետի վրա մի ճգնավոր էր ապրում... Մեր պես փախել էր նեռական հրապույրներից: Առաջ վաճառական էր եղել, տուն-տեղ, խանութներ ու պահեստներ էլ էր ունեցել: Տեսիլք էր երևացել նրան. կրակ, կրակի մեջ մի մարդ, ու ձայն. «Գայթակղված, կործանվում եմ հավերժական...»: Ամեն ինչ թողել էր կընոջն ու երեխաներին: Հեռացել էր: Մի խուց էր սարքել: Սկսել էր ապրել, հաղորդություն առնել միայն հրեղեն ցանկությամբ: Հողը փորել էր խաչերկաթով, երկու գլխարկ գարի ցանել: Այծի անմշակ մորթի էր հագել, որը վրան չորացել էր, ու ամառ ձմեռ դա էր հագինը: Ունեցած-չունեցածը փայտե աման էր ու գդալ, մեկ էլ հին գրքով աղոթագիրք: Ու շուռով էնքան ուժ ունեցավ դևերի վրա, որ ճանճի տեղ էլ չէր դնում... Մարդիկ սկսեցին մոտը գալ՝ խոստովանություն էր առնում ու հաղորդություն տալիս տերևով կամ հատապտղով: Սովորեցնում էր՝ ավելի լավ է կենդանի վառվել կրակի մեջ, բայց հավերժական տանջանք չընդունել: Տարին տարու վրա, մարդիկ սկսեցին նրա մոտ բնակվել : Անտառը կրակ էին տալիս, մոխրաճողը վարում: Գազան ու ձուկ էին որսում, սունկ ու պտուղ հավաքում: Ամեն ինչ միասին, ամբարներն ու ճկուղներն էլ էին բոլորինը: Եվ նա բաժանում էր. կանանց՝ առանձին, տղամարդկանց՝ առանձին:

— Էդ լավ է,— մի խիստ ձայն հնչեց,— կնկա հետ ապրելուց օգուտ չկա:

Դենիսովը գվարթ հայացքով մթության մեջ նայեց ասողին:

— Ճգնավորի աղոթքներով գազանն էլ էր որսվում, մեկ-մեկ էնքան մեծ ձկներ էին բռնում՝ հրա՞շք: Սունկ ու պտուղն էլ էր առատ: Նա ցույց էր տալիս, ու գտնում էին պղնձի, երկաթի հանք, հետո դարբնոցներ պարքեցին... Իսկական սուրբ տեղ դարձավ, խաղաղ ապրուստով...

Ընկած ծառի ետևից բարձրացավ Անդրյուշկա Գոլիկովը, նստեց Դենիսովի մոտ, նայեց աչքերին: Գոլիկովը բուդակների հետ էր գալիս, համաձայն ուխտի: (Այն օրը Ռեպակինի տանը հայր սուրբը խոստովանություն առավ Անդրյուշկայից, կաշվե տերողողմայով ծեծեց ու հրամայեց գնալ Ցարոսլավլ, սպասեց Դենիսովի՝ հացահատիկ տեղափոխող գետանավին:) Այստեղ տասնչորսից ինը նրա պես մարդիկ էին, որոնք գնում էին համաձայն ուխտի, կամ՝ սպասխարելու:

Դենիսովը պատմում էր.

— Մեռնելուց առաջ ճգնավորն օրհնեց մեզ, երկու եղբայրներիս՝ Սեմյոնին ու ինձ՝ Անդրեյ անունավորիս, որ Վոլգի մենաստանի գլուխ կանգնենք: Հաղորդություն տվեց ու մենք դուրս եկանք: Նրա խուցը մի քիչ հեռվում էր, ձորակում: Մի քիչ էինք գնացել, մեկ էլ տեսնենք՝ լույս: Խուցը կրակի մեջ էր, ինչպես վառվող մորենին: Ուզում էի վազել, Սեմյոնը ձեռքս բռնեց՝ սպասիր: Կրակի միջից լսենք, որ քաղցրաձայն երգ է գալիս... Ու վերևում, ծխի մեջ, կնավատա՞ք, սատանաները մրի պես պտույտ են տալիս, ճվճվում: Ես

ու եղբայրս ծնկի իջանք, մենք էլ երգեցինք... Առավոտյան եկանք էդ տեղը, մոխիրների տակից մի զուլալ աղբյուր էր բխում... Աղբյուրի վրա փայտե ծածկ կապեցինք ու սրբապատկերի խորշ... Մենակ թե սրբապատկեր նկարող չենք գտնում, որ մեր ուզածի պես նկարի:

Գոլիկովը հեծկլտաց: Դենիսովը թեթևակի շոյեց նրա չսանրված ու կոշտացած մազերը.

— Մի բան է վատ, եղբայրք, ցորենը երկու տարի բերք է տալիս, երրորդը՝ չէ: Անցյալ ամառ անձրևները լրիվ թրջեցին, ծղոտ էլ չհավաքեցինք: Ստիպված ենք հեռուներից բերել... Բայց չէ որ սուրբ գործ է, զավակներս... Իզուր չէ ձեր քաշածը:

Դենիսովը մի քիչ էլ խոսեց: Ընդհանուր աղոթք արեց: Նստեց նավակը, վերջալույսի նեղ շերտի վրայով գնաց գետանավ: Գիշերները պաղ էին, թեթև հագուստով քնելուց մրսում էին:

Լույսը չբացված, Դենիսովը նորից ափ էր գալիս, արթնացնում մարդկանց: Հազում էին, քորքրվում: Աղոթելուց հետո շտապ էին եփում: Երբ պառած արևը, որպես աղոտ մի փուչիկ, կախվում էր մշուշի մեջ, բուդակները մտնում էին փոկերի տակ, առափնյա թաղության մեջ տրեխները ճլմփացնելով: Վերստ վերստի ետևից, օր օրի ետևից: Հյուսիսից կույտ-կույտ ամպեր էին գալիս, կտրող քամի փչեց: Գետը վարարեց:

Ամպերը հիմա ցածրից էին սլանում Սպիտակ լճի փոթորկված ջրերի վրայով: Թեքվեցին արևմուտք, դեպի Բելոզերսկ: Ալիքները ամայի ափ էին հասնում, ցած գցելով բուդակներին: Գետանավը քաշելը դժվարացավ: Ճաշին չորանում էին ձկնորսական հյուղակում: Երկու վարձու գործավոր այստեղ կռվեցին Դենիսովի հետ, ուտելիքի պատճառով, վարձն առան՝ ամենքին երեքական քառորդանոց, ու հեռացան անհայտ ուղղությամբ...

Գետանավը խարսխել էին քաղաքի դիմաց, գոգավոր ավազակույտերի վրա: Գնալով սառնաշունչ էր դառնում քամին, թափանցում մինչև ոսկորները: Հուսահատվել էին. խելքի մոտ բա՞ն է պարանները քաշելով հյուսիս գնալ: Վարձու բոլոր գործավորները կռվեցին Դենիսովի հետ, ցրիվ եկան ձկնորսական ավաններում: Մնացածն էլ, որը ծանոթ մեկին հանդիպեց, որն էլ մոլ տվեց ու չբացավ...

Ափին, շրջած նավակի մեջ, թաց քարերի արանքում նստած էին Անդրյուշկա Գոլիկովը, Իլյուշկա Դեխտյարյովը (կաշիրցի փախստական գյուղացի էր) և Կեղտանմուտ մակսնունով Ֆեդկան: Սա կորամեջք մարդ էր, թափառաշրջիկ, մենաստանապատկան գյուղացիներից, բազմիցս գելարան հանված ու խոշտանգված: Չորսդին էին նայում:

Ամեն ինչ մոայլ էր այստեղ. լճի պղտոր, ալիքներից ձնանման դարձած թաղանթը, շարվեշար հյուսիս լողացող ամպերը: Առափնյա թմբից դենը հարթավայր էր, ուր փայտաշեն հնամենի քաղաքն էր փռված՝ համարյա ծածկված ամպերով, աշտարակների ծակ կտուրներով, եկեղեցիների ծանգռոտ ու սոխաձև գմբեթներով, բարձր խոր-

ճիթերի կիսափուլ տանիքներով: Քամին տարուբերում էր ափին ցցված ուկան չորացնելու ձողանները: Մարդ չկար համարյա: Վը2տալի ինչում էր զանգը...

— Դենիսովն էլ՝ ոչինչ, խոսքով կշտացնելու մեջ մի հատ է: Մինչև հասնեպ նրա ասած դրախտը, վայ թե մենակ շունչ մնա բերանումդ,— ասաց Կեղտանմուռը, եղունգով քչփորելով ափի կոշտուկը:

— Իսկ դու հավատա՞,— զայրացած նրան ասաց Գոլիկովը:— Իսկ դու հավատա՞:— Եվ տրտմած նայեց ճերմակ ալիքներին: Ցուրտ ու անհրապույր էր սակայն...— Կարծես թե այստեղից էլ է հեռու մինչև ասուված...

Մեծ բերանով, անշափ դիմացկուն ու զվարթ աչքերով Իլյուխա Դենիսյարյովը ցածրաձայն, դանդաղ պատմում էր.

— Ուրեմն, էդ մարդուն հարցրեցի. ձեր պոսադն ինչի՞ց է էսպես դատարկ, տների կեսը մեխած է... Պոպադը նրա համար է դատարկ, ասեց, որովհետև տերտերները համը հանում են... Քանի խնդրագիր ենք ուղարկել Մոսկվա, բայց էնտեղ մեզնով զբաղվելու գլուխ չունեն... Ջրօրհնեքին ինչե՞ր արեցին՝ պատմելու չի... Տասը սահնակով դուրս եկան տերտերները, սրբապատկերներն առած՝ որը պոպադ, որը արվարձանները, որն էլ գյուղերը... Մտնում էին տները, խաչը դեմ անում քիթուբերաններին, պտղունցով խաչակնքիր, ասում էին, խաչը պպչիր... Ու հաց էին վերցնում, կաթ ու յուղ, ձու, ձկնեղեն... Ավելի պես սրբում, դուրս էին գալիս: Փող էլ էին ուզում... Աղանդավոր ես ու անհավատ՝ ասում էին: Հին գրով գրքերդ ո՞ւր են: Ու մարդկանց տանում էին իրենց մոտ, ձեռուոտին շղթա դնում, չարչարում:

Կեղտանմուռը հանկարծ գլուխը ետ գցեց, խոպոտ քրքջաց.

— Հո չե՞ն ուտում, հո չե՞ն խմում: Ձեր ինչն եմ ասել, տերտերներ, պատկելիք հո չեն:

Դենիսյարյովը ծնկով հրեց նրան: Քամուն ընդառաջ, ծածանվող փարաջան բռնած, նավակին էր մոտենում գնչուի մորուքով մի տերտեր, խաչգդակը աչքերին քաշած: Սարսափազդու աչքերով նայեց ալիքների վրա ճոճոացող գետանավին, հետո երեք գործավորներին.

— Գետանավը որտեղի՞ց է գալիս:

— Ցարսկոյեվի մոտերքից, տեր հայր,— սիրալիր ու ծուլորեն պատասխանեց Դենիսյարյովը:

— Բեռն ի՞նչ է:

— Մեզ չեն ասել:

— Ցորե՞ն է:

— Է, հա...

— Ո՞ւր եք տանում:

— Ի՞նչ իմանանք, ուր ասեն...

— Սուտ չասես, սուտ չասես, սուտ չասե՞ս:— Վանականը շտապշտապ սկսեց քշտել աջ թևքը:— Դենիսովի գետանավն է... Գնում եք Պոկենեց, աղանդավոր ճգնավորներին եք հաց տանում, չլուսներ...

Ու միանգամից վրա պրծնելով, ճանկեց Իլյուշկա Դենիսյարյովի օձիքը, ցնցեց 22կլված մարդուն և շրջվելով պոսադի կողմը, ինչքան ուժ ուներ, գոռաց.

— Հասե՞ք:

Անդրյուշկա Գոլիկովը պոկվեց տեղից, ջրի մոտով վազեց դեպի ձկնորսական հյուղակները:

— Հասե՞ք,— երկրորդ անգամ գոռաց վանականն ու ձայնը կըտրեց. Կեղտանմուռը բռնեց նրա մազերից, պոկեց Իլյուխայից, գետին տապալեց և դեսուդեն ընկավ, քար որոնելով: Տերտերը թափով վեր թռավ, կողքից վրա պրծավ, բայց Ֆեդկան չարությունից լրիվ քարացել էր, չընկրկեց, նորից բռնեց, կռացրեց ու խփեց վզակոթին: Տերտերը տնքաց: Մահակներն առած, դեպի ափ էին վազում չորս հոգի:

Անդրյուշկա Գոլիկովը վախեցած նայում էր հյուղակի պատի տակից: Կեղտանմուռը հինգ հոգու դեմ էր կռվում, մեկից խլել էր մահակը, վրա էր քշում, վայրենաձայն բղավելով՝ Անդրյուշան իր օրում այդպես չարացած մարդ չէր տեսել... «Դև է, իսկապե՞ս դև...»: Հետո կռվի մեջ մտավ նաև Դենիսյարյովը, հարմարեցնելով հասցրեց տերտերի ականջին՝ սա երրորդ անգամ փռվեց գետնին: Նրա օգնականները ետ-ետ գնացին: Պոսադի դռներից հատուկենտ մարդիկ ելան, մթմրթալով քթի տակ. էդպե՞ս, էդպե՞ս, էդպե՞ս...

Իլյուշկան ու Ֆեդկան քշեցին նրանց ու ընկնելու էին ետևներից, բայց ափ վերադարձան և արյուն թքելով մոտեցան հյուղակին, որի պատի տակ դողդողում էր Գոլիկովը:

— Ճիշտը որ ասենք, քեզ էլ էր պետք խրատել,— ասաց Կեղտանմուռը:—Գլխիդ խելք չկա, ու դեռ դրախտ ես ուզում ընկնել...

Հյուղակի դռնակից գիսախոիվ մի գլուխ դուրս նայեց, ծխագույն մորուքը աչքերի տակից էր բռնում: Աչքերը ճաճպացնելով, ոտաբոբիկ ու ամրակազմ, մրից սևացած մի մարդ դուրս եկավ: Նայեց պոսադի կողմը՝ այնտեղ արդեն ոչ ոք չկար:

— Տուն եկեք,— ասաց ու նորից մտավ նեղլիկ հյուղակը: Լույսն այստեղ դռան վերևի ճեղքից էր ընկնում: Նեխած ձկան հոտ էր գալիս, տան կեսը ցանցերն էին բռնել: Իլյան, Անդրեյը և Ֆյոդորը, ներս մտնելով, խաչակնքեցին երկու մատով: Ձկնորսն ասաց.

— Նստեք: Գիտե՞ք, թե ում էիք ծեծում հիմա:

— Ամբողջ կյանքս ինձ ծեծել են, ոչ մի անգամ չեն հարցրել,— ասաց Կեղտանմուռը:

— Կրեստովոզդվիժենսկի մենաստանի փակակալ Ֆեոդոսիին էիք ծեծում: Ի՞նչ ավազակն է պատանան, ի՞նչ ավազակը: Կատղա՞ծ:

Տեսնելով, որ յուրային մարդիկ են, ձկնորսը նստեց նրանց մեջտեղը, թախտի վրա, ձեռքերը մտցրեց կոնատակերը, ճոճվելով պատմեց.

— Էս կողմերն ամենաձկնաշատ տեղերն են, իսկն ապրելու համար, բայց գնալու եմ... Ապրել չի լինում, էդ սատանան ամբողջ լիճն իրենն է դարձրել... Ջմռանը վանականներին տալիս էինք բռնածի

տանն էլ է մկնագույն, կարմիր աստառով, համբուրգյան կամ թերևս անգլիական մահուդից: Ինքը՝ վոյեվոդան, նստած էր սկյութի մորթու մաշված կիսամուշտակով, մարմնեղ չէր, ճաղատ ու պզուկոտ: Հանգուցյալ թագավոր Ֆյոդոր Ալեքսեևիչի օրոք պալատական էր, Պյոտր Ալեքսեևիչի օրոք հազիվ գլուխը պահելու տեղ գտավ Բելոզերսկում:

Ջուր էին ծեծում. ոչ Դենիսովն էր շտապում, ոչ վոյեվոդան: «Ինչ կափտան ունի,— մտածում էր վոյեվոդան,— հանկարծ ու տա՞»: Ծածուկ մի ճորտ էր ուղարկել Կրեստովոզդվիժենսկի մենաստան՝ հայր Ֆեոդոսիին կանչելու, բայց Դենիսովն էլ որոշ բան ուներ պահած՝ հարմար պահի համար:

— Եղանակը, եղանակը, աստված իր հետ,— ասում էր Դենիսովը:— Քամին փոխվեց, առագաստները կբացենք, լճով կգնանք... Չփոխվեց՝ ափով կհասնենք մի կերպ... Ամենադժվարը Կովժ հասնելն է, էնտեղից մարդ կնարենք, մինչև Պովենեց...

— Ինչ ասեմ, գործդ ինձ համար հասկանալի է,— խուսափողաբար պատասխանեց վոյեվոդան, կափտանը զննելով...

— Մաքսիմ Մաքսիմիչ, բարի գործ արա, գետնավերս ու մարդկանցս սպասեցնել մի տուր...

— Հրաման թե չլիներ, ինչ խոսք:— Վոյեվոդան գրպանից հանեց խողովակաձև փաթաթված ցարական հրամանագիրը, կույրի պես տարավ-բերեց աչքերը, մորուքը թոթին քսելով,— «Մեծն իշխան և համայն... հրամանով... Բոլոր ձիակերներին ու պորտաբույծներին, որոնք գլուխ են պահում մենաստաններում, և վանքապատկան բոլոր փոքրավորներին զինվորագրել...»:

— Վանքերի հետ մենք ինչ գործ ունենք, մեր գործն առևտուրն է...

— Համբերիր... «...ու զինվորագրել բոլոր ձիապանների և բոյարական ծառաների, դոնեդուր ընկած բոլոր մուրացկանների ու փախստականների...»: Թե ինչ անեմ քո գործը, չեմ իմանում, Անդրեյ... Լավ, գոնե մի փոխատեսավոր բերած չլիներ հրամանը... Բերել է Պրեոբրաժենսկու գնդի պորուչիկ Ալեքսեյ Բրուկինը, զինվորների հետ: Գիտե՞ս, թե հիմա ոնց են խոսում պորուչիկների հետ:

Կափտանի փեշը ետ տանելով, Դենիսովը զնգացրեց գրպանի արծաթ դրամները: Վոյեվոդան վախեցավ, թե հանկարծ չէծանացնի, դուռը նայեց՝ արդյոք ներս չի՞ մտնի Ֆեոդոսին: Ներս մտավ հաստաշուրթ ոստիկանը, հրմշտելով բերելով Անդրյուշկա Գոլիկովին: Գլխարկը հանեց, գոտկաչափ ողջույն տվեց.

— Մաքսիմ Մաքսիմովիչ, մի հոգու էլ եմ բռնել...

— Ծնկի՞,— զայրացած գոռաց վոյեվոդան: (Ոստիկանը սեղմեց նրա ուսերը, Գոլիկովի ոսկրոտ ծնկները թրխկացին հատակին:)— Ո՞ւմ տղան ես: Ո՞ւմ ծառան ես: Որտեղի՞ց ես փախել: (Ոստիկանին:) Վանկա, թանաք ու գրիչ բեր...

Դենիսովը ցածրաձայն ասաց.

— Մաքսիմ Մաքսիմիչ, բաց թող դրան, իմ գործակատարն է...

Վոյեվոդայի աչքերը փայլեցին, բացեց պղնձյա թանաքամանի կափարիչը, միջից գրչածայրով մի ճանճ հանեց տնքտնքալով: «Էհ, չեկավ փակակալը»,— մտածեց նա, ու հենց այդ ժամանակ ճոճոաց նախասենյակի հատակը: Վանկան բացեց դուռը, գայրացած ներս մտավ քիչ առաջվա գնչուի մորուքով վանականը, մի աչքը կապտած: Դենիսովին տեսնելով, գավազանը խփեց հատակին.

— Նրա մարդիկ ինձ ծեծեցին, քիչ մնաց սպանեին,— թնդաց նա:— Իսկ դու կողքդ ես նստեցրել, Մաքսիմ: Ո՞ւմ ես նստեցրել, ո՞ւմ, հարցնում եմ: Նգովյալ աղանդավորի՞ն: Ինձ տուր նրան, վոյեվոդա, ինձ տուր, երիցս եմ ասում:

Ձեռքերը դրած երկար գավազանի գլխին, վայելնի հայացքը մեկ Դենիսովի վրա էր գցում, մեկ Մաքսիմ Մաքսիմովիչի: Սարսափահար Գոլիկովը սողեսող քաշվեց սենյակի անկյունը: Վանկան անհամբեր սպասում էր նշանի, որ վրա պրծնի, ձեռքերը ոլորի: «Կափտանս»,— մտածեց վոյեվոդան:

— Դո՞ւ ով ես, վանական, որ եկել ես կոիվ անելու, ոչ ճանաչում եմ, ոչ էլ ուզում եմ ճանաչել,— ասաց Դենիսովը: Վեր կացավ: (Ֆեոդոսիի՝ գավազանը բռնած ձեռքերը կապտեցին:) Արձակեց շապիկը և պղնձյա ութածայր խաչի վրայից հանեց տոպրակը:— Մաքսիմ Մաքսիմովիչ, ուզում էի ազնվորեն քեզ մատուցել իմ հոմետ եկամտուներից... Ուրեմն, մեր խոսակցությունը չի ստացվում...

Տոպրակի միջից հանեց ծալված արտոնագիրը, խնամքով բացեց.

— Սույն արտոնագիրը շնորհված է Բուրմիստրական պալատից մեզ՝ Անդրեյ և Սեմյոն Դենիսովներին, առ այն, որ առևտուր անենք ուր որ ուզենք, և որպեսզի ոչ ոք չհամարձակվի մեզ՝ Անդրեյ և Սեմյոն եղբայրներիս, վնաս ու սնանկացում պատճառել... Արտոնագիրը ստորագրված է անձամբ պրեզիդենտ Միտրոֆոն Շորինի կողմից...

— Միտրոֆանն ի՞նձ ինչ,— ձեռքը գավազանից պոկելով, բղավեց Ֆեոդոսին,— քո Միտրոֆանի դեմ ա՛ռ քեզ,— և հայհոյանշան ցույց տվեց:

— Օ՛ֆ,— թույլ տնքաց վոյեվոդան:

Դենիսովի այտերը կարմրեցին.

— Պրեզիդենտի, մոսկովյան լավագույն վաճառականի դեմ դա՞ ցույց տաս: Սա դավաճանություն է:

— Առ քեզ, խեղդվիր, առ քեզ, խեղդվիր, նգովյալ,— մորուքն առաջ տնկած, կատաղած կրկնում էր Ֆեոդոսին, ու բռնեց Դենիսովի պղնձյա, հերձվածողական խաչը:— Իսկ սրա համար, կուապաշտ, քեզ վառելու եմ... Քո անուշ արտոնագրի դեմ ես ուժեղն ունեմ...

— Դե լավ, հաշտվեք,— տնքում էր վոյեվոդան:— Օնդրեյ, մի քսան ռուբլի տուր տերտերին, ձեռ կքաշի...

Բայց վանականն ու Դենիսովը, ականջ չդնելով, ռունգերն էին ուռեցնում: Ոստիկանը սկսեց կողքանց մոտենալ: Այդ ժամանակ Դենիսովը, փակակալից խլելով խաչը, նետվեց դեպի լուսամուտը, բարձրացրեց շրջանակն ու բղավեց դուրս.

— Պարոն պորուչիկ, թագավորական խոսք ունեմ ասելու...

տանն էլ է մկնագույն, կարմիր աստառով, համբուրգյան կամ թերևս անգլիական մահուդից: Ինքը՝ վոյեվոդան, նստած էր սկյուռի մորթու մաշված կիսամուշտակով, մարմնեղ չէր, ճաղատ ու պզուկոտ: Հանգուցյալ թագավոր Ֆյոդոր Ալեքսեևիչի օրոք պալատական էր, Պյոտր Ալեքսեևիչի օրոք հագիվ գլուխը պահելու տեղ գտավ Բելոզերսկում:

Ջուր էին ծեծում. ոչ Դենիսովն էր շտապում, ոչ վոյեվոդան: «Ինչ կապտան ունի,— մտածում էր վոյեվոդան,— հանկարծ ու տա՞»: Մածուկ մի ճորտ էր ուղարկել Կրեստովոզդվիժենսկի մենաստան՝ հայր Ֆեոդոսիին կանչելու, բայց Դենիսովն էլ որոշ բան ուներ պահած՝ հարմար պահի համար:

— Եղանակը, եղանակը, աստված իր հետ,— ասում էր Դենիսովը:— Քամին փոխվեց, առագաստները կբացենք, լճով կգնանք... Չփոխվեց՝ ափով կհասնենք մի կերպ... Ամենաղժվարը Կովժ հասնելն է, էնտեղից մարդ կճարենք, մինչև Պովենեց...

— Ինչ ասես, գործդ ինձ համար հասկանալի է,— խուսափողաբար պատասխանեց վոյեվոդան, կապտանը գնահատելով...

— Մաքսիմ Մաքսիմիչ, բարի գործ արա, գետանավերս ու մարդկանցս սպասեցնել մի տուր...

— Հրաման թե չլիներ, ինչ խոսք:— Վոյեվոդան գրպանից հանեց խողովակաձև փաթաթված ցարական հրամանագիրը, կույրի պես տարավ-բերեց աչքերը, մորուքը թոթիկ քսելով,— «Մեծն իշխան և հայրն... հրամանով... Բոլոր ձրիակերներին ու պորտաբույծներին, որոնք գլուխ են պահում մենաստաններում, և վանքապատկան բոլոր փոքրավորներին գինվորագրել...»:

— Վանքերի հետ մենք ինչ գործ ունենք, մեր գործն առևտուրն է...

— Համբերիր... «...ու գինվորագրել բոլոր ձիապաններին և բոյարական ծառաներին, դոնեդուռ ընկած բոլոր մուրացկաններին ու փախստականներին...»: Թե ինչ անեմ քո գործը, չեմ իմանում, Անդրեյ... Լավ, գոնե մի փոխատեղավոր բերած լիներ հրամանը... Բերել է Պրեոբրաժենյան գնդի պորուչիկ Ալեքսեյ Բրովկինը, գինվորների հետ: Գիտե՞ս, թե հիմա ոնց են խոսում պորուչիկների հետ:

Կապտանի փեշը ետ տանելով, Դենիսովը գնգացրեց գրպանի արծաթ դրամները: Վոյեվոդան վախեցավ, թե հանկարծ չէժանացնի, դռանը նայեց՝ արդյոք ներս չի՞ մտնի Ֆեոդոսին: Ներս մտավ հաստաշուրթ ռստիկանը, հրմշտելով բերելով Անդրյուշկա Գոլիկովին: Գլխարկը հանեց, գոտկաչափ ողջույն տվեց.

— Մաքսիմ Մաքսիմովիչ, մի հոգու էլ եմ բռնել...

— Ծնկի՛,— գայրացած գոռաց վոյեվոդան: (Ռստիկանը սեղմեց նրա ուսերը, Գոլիկովի ոսկրոտ ծնկները թրխկացին հատակին:)— Ո՞ւմ տղան ես: Ո՞ւմ ծառան ես: Որտեղի՞ց ես փախել: (Ռստիկանին:) Վանկա, թանաք ու գրիչ բեր...

Դենիսովը ցածրաձայն ասաց.

— Մաքսիմ Մաքսիմիչ, բաց թող դրան, իմ գործակատարն է...

Վոյեվոդայի աչքերը փայլեցին, բացեց պղնձյա թանաքամանի կափարիչը, միջից գրչածայրով մի ճանճ հանեց տնքտնքալով: «Էհ, չեկավ փակակալը»,— մտածեց նա, ու հենց այդ ժամանակ ճոճոաց նախասենյակի հատակը: Վանկան բացեց դուռը, գայրացած ներս մտավ քիչ առաջվա գնչուի մորուքով վանականը, մի աչքը կապտած: Դենիսովին տեսնելով, գավազանը խփեց հատակին.

— Նրա մարդիկ ինձ ծեծեցին, քիչ մնաց սպանեին,— թնդաց նա:— Իսկ դու կողքդ ես նստեցրել, Մաքսիմ: Ո՞ւմ ես նստեցրել, ո՞ւմ, հարցնում եմ: Նզովյալ աղանդավորի՞ն: Ինձ տուր նրան, վոյեվոդա, ինձ տուր, երիցս եմ ասում:

Ձեռքերը դրած երկար գավազանի գլխին, վայրենի հայացքը մեկ Դենիսովի վրա էր գցում, մեկ Մաքսիմ Մաքսիմովիչի: Սարսափահար Գոլիկովը սողեսող քաշվեց սենյակի անկյունը: Վանկան անհամբեր սպասում էր նշանի, որ վրա պրծնի, ձեռքերը ոլորի: «Կապտանս»,— մտածեց վոյեվոդան:

— Դո՞ւ ով ես, վանական, որ եկել ես կռիվ անելու, ոչ ճանաչում եմ, ոչ էլ ուզում եմ ճանաչել,— ասաց Դենիսովը: Վեր կացավ: (Ֆեոդոսիի՝ գավազանը բռնած ձեռքերը կապտեցին:) Արձակեց շապիկը և պղնձյա ութածայր խաչի վրայից հանեց տոպրակը:— Մաքսիմ Մաքսիմովիչ, ուզում էի ազնվորեն քեզ մատուցել իմ հաճեստ եկամուտներից... Ուրեմն, մեր խոսակցությունը չի ստացվում...

Տոպրակի միջից հանեց ծալված արտոնագիրը, խնամքով բացեց.

— Սույն արտոնագիրը շնորհված է Բուրմիստրական պալատից մեզ՝ Անդրեյ և Սեմյոն Դենիսովներին, առ այն, որ առևտուր անենք ուր որ ուզենք, և որպեսզի ոչ ոք չհամարձակվի մեզ՝ Անդրեյ և Սեմյոն եղբայրներիս, վնաս ու սնանկացում պատճառել... Արտոնագիրը ստորագրված է անձամբ պրեզիդենտ Միտրոֆոն Շորինի կողմից...

— Միտրոֆանն ի՞նձ ինչ,— ձեռքը գավազանից պոկելով, բղավեց Ֆեոդոսին,— քո Միտրոֆանի դեմ ա՛ռ քեզ,— և հայհոյանշան ցույց տվեց:

— Օ՛ֆ,— թույլ տնքաց վոյեվոդան:

Դենիսովի այտերը կարմրեցին.

— Պրեզիդենտի, մոսկովյան լավագույն վաճառականի դեմ դա՞ ցույց տաս: Սա դավաճանություն է:

— Առ քեզ, խեղդվիր, առ քեզ, խեղդվիր, նզովյալ,— մորուքն առաջ տնկած, կատաղած կրկնում էր Ֆեոդոսին, ու բռնեց Դենիսովի պղնձյա, հերձվածողական խաչը:— Իսկ սրա համար, կռապաշտ, քեզ վառելու եմ... Քո անուշ արտոնագրի դեմ ես ուժեղն ունեմ...

— Դե լավ, հաշտվեք,— տնքում էր վոյեվոդան:— Օնդրեյ, մի քսան ռուբլի տուր տերտերին, ձեռ կքաշի...

Բայց վանականն ու Դենիսովը, ականջ չդնելով, ոռնգերն էին ոռեցնում: Ռստիկանը սկսեց կողքանց մոտենալ: Այդ ժամանակ Դենիսովը, փակակալից խլելով խաչը, նետվեց դեպի լուսամուտը, բարձրացրեց շրջանակն ու բղավեց դուրս.

— Պարոն պորուչիկ, թագավորական խոսք ունեմ ասելու...

Սենյակում իսկույն լռեցին, ֆսֆսոցը դադարեց: Նախասենյակում զնգզնգացին խթանները: Ներս մտավ Ալյոշա Բրովկինը՝ բոտֆորտներով, ճերմակ լանջագոտիով, սուսերը կողքից կախ: Պատանեկան այտերը շառագունած էին, եռանկյունի գլխարկն աչքերին էր քաշել:

— Ի՞նչ կոիվ է:

— Պարոն պորուչիկ, պրեզիդենտական պատոնագրի դեմ փսակալ Ֆեոդոսին և վոյեվոդան անվայել խոսքեր են ասում ու հայհոյանքներ ցույց տալիս, օձիքս պատռեցին ու սպառնացին վառել...

Ալյոշկայի աչքերը կլորացան, դուրս պրծավ՝ ճիշտ Պյոտր Ալեքսեևիչի նման: Զննեց վանականին, վոյեվոդային (որը ձեռքերով թախտին հենված, բարձրանալ էր ուզում): Ջեռնափայտը հատակին զարկեց ու ներս ընկած զինվորին հրամայեց.

— Երկուսին էլ կալանավորել...

2.

Կուկույցի արվարձանաբնակները Աննա Մոնսի մասին ասում էին. «Զարմանալի է: Ջահել աղջկան որտեղի՞ց այդքան շրջահայացություն: Մեկ ուրիշը վաղուց գլուխը կորցրած կլիներ: Անխենն ամբողջովին հանգուցյալ Մոնսին է քաշել»:

Սև ծովից վերադառնալուց հետո Պյոտրը շատ էր առատաձեռն: «Իմ սիրտ,— քանիցս ասում էր նրան Անխենը, մեղմ կշտամբանքով,— դուք ինձ ընտելացնում եք դրամ վատնել անմիտ զգեստների վրա... Ավելի խելամիտ կլիներ, եթե թույլ տայիք գրքի Ռեմել, իմացել եմ, որ այնտեղ կարելի է լավ գնով կովեր առնել, որոնք օրական երկու դույլ կաթ են տալիս: Մեկ-մեկ նախանաշելու կգաք իմ մաքուր, սիրունիկ ագարակը և հարած սերուցք կուտեք...»:

Ագարակը հիմնվեց կեչու անտառակում, ընձայված հողակտորի վրա, որը սեպաձև տարածվում էր ետնաբակի դարպասից, Կուկույց գետակի ափով մինչև Ցառգա: Այստեղ ոչ մեծ մի տուն էր կանգնած՝ ներկված այնպես, որ հեռվից աղյուսաշեն էր թվում, կղմինդրածածկ գոմերն էին, խրճանոցը, շտեմարանները: Գետափի զառիթափին արածում էին գեր ու չալպտուրիկ կովեր, և յուրաքանչյուրն իր անունն ուներ, ի պատիվ հունական աստվածուհիների, հրաբուրդ ոչխարներ, անգլիական խոզեր և բազմաթիվ ու բազմատեսակ հավուճիվ: Օտարերկրյա բանջարեղեն ու կարտոֆիլ էր աճում բանջարանոցում:

Լույսը նոր բացված, փետրանման գլխանոցով, հասարակ մուշտակով Անխենն ագարակ էր գնում ավազածածկ արահետով: Հետևում էր կթին, հավուճիվը կերակրելուն, ձվերն էր հաշվում, ինքն էր սալաթ կտրում նախաճաշի համար: Մարդկանց նկատմամբ խիստ էր ու հատկապես պատժում էր փնթիության համար: Կաղամբ փրթելու ժամանակը եկավ: Այդպիսի գլուխներ նույնիսկ պատոր Ծտրումպֆի բանջարանոցում չէին տեսել: Գերմանացիները գալիս

էին տեսնելու և զարմանալու. այդպիսի կաղամբ կամ շաղգամ կարելի էր Համբուրգ՝ կունստկամերա ուղարկել: Կատակում էին. «Ըստ երևույթին, Անխենը մի աղոթք գիտե, որ երբեմնի այս ամայուտում հողի այսքան փարթամ բարիքներ են աճում»:

Ռուս աղջիկները, երգելով, կաղամբ էին փրթում լորենու փայտից նոր տաշտակի մեջ: Անխենն ամենատողջ ու գլարթաբարո աղախիններն էր ընտրում Մենշիկովի կամ Գոլովինի աղխից (նրանց դաստակերտներն ու պալատները այնքան էլ հեռու չէին Գերմանական արվարձանից): Թկթկում էին կացնիկները, շառագունած աղջիկներից կաղամբի թարմ կոթունների հոտ էր գալիս, խոտի վրա, այնտեղ, ուր մարագի երկար ստվերն էր ընկած, դեռ եղյամ կար, ձյունաճերմակ սագերը թոչնանոցից ծանրումեծ գնում էին արհեստական լիճ: Ագարակի պրակող տանիքից ծուխ էր ելնում աշնան կապույտ երկինք: Ավլած բակի միջով մաքուր ու կոկիկ երկու հացթուխ տանում էին նոր թխած կալաչներով լի զամբյուղը:

Անխենը երջանիկ էր՝ սառած ոտքերը կտկտացնելով, չէր կարող չուրախանալ այդ բարեկեցությամբ: Ա՜հ, հենց մտնում էր տուն, բարեկեցության այդ զգացողությունը վերջանում էր. ոչ մի օր դադար չուներ, շարունակ պիտի սպասեր Պյոտր Ալեքսեևիչի երևակայության նորանոր խաղերին: Կամ գինովցած ռուսներ կլցվեին տուն, կկեղտոտեին, կծխեին, բաժակ ու գավաթ կջարդեին, մոխիրը կթափեին ծաղկամանների մեջ, կամ էլ՝ ուզած-չուզած պիտի զուգվերզարդարվեր, շտապեր ասամբլեա, պարելու:

Խնջույքներն ու պարերը լավ են, երբ հազվադեպ են, խոր աշնան երեկոներին, ձմռան տոներին: Իսկ ռուս ազնվատոհմերի համար ցանկացած օր կերուխումի, պարի հարմար կդար: Աննա Իվանովնային առավելապես դառնացնում էր իր՝ Պյոտրի խենթությունները. երբեք չէր զգուշացնի, թե այսինչ ժամին ճաշելու կամ ընթրելու է, թե քանի հյուր պիտի սպասել իր հետ: Երբեմն գիշերով խրժոողների մի ամբողջ բազմություն կբերեր հետը: Նման դեպքերում ստիպված այնքան մթերք էին եփում ու տապակում, որ մարդու սիրտ էր ցավում, ու այդ ամենը հաճախ դեն էր ածվում, որպես խոզերի կեր:

Անխենը մի անգամ զգուշորեն խնդրեց Պյոտրին. «Հրեշտակս, ավելորդ ծախսն ավելի քիչ կլինի, եթե ամեն անգամ բարեհաճեք ինձ զգուշացնել գալստյան մասին»: Պյոտրը զարմացած նրան նայեց, խոժոռվեց, լռեց, և ամեն ինչ շարունակվեց նախկինի պես:

Արևը բարձրացավ դեղնած կեչիներից վեր: Աղախինները խոհանոց գնացին: Աննա Իվանովնան ներս նայեց փոքր մարագը, ուր պարուսինե տոպրակների միջից գլուխները երկարած, կախված էին էգ սագերը՝ մորթելուց երկու շաբաթ առաջ նրանց ընկույզով էին կերակրում: Մարպակալած յուրաքանչյուր սագի կոկորդը Անխենն անձամբ մեկական չկճպած ընկույզ խրեց ճկույթով, նայեց, թե ինչպես են լվանում թավոտն հավերի տոտերը՝ ամեն առավոտ պիտի լվային, ոչխարների գոմում ձեռքն առավ գառնուկներին, պաչեց

գանգուր մակատները: Ապա դժկամությամբ տուն վերադարձավ: Մը-տածածի պես էր՝ փողոցում կառք էր կանգնած: Ետնամուտքի մոտ Աննա Իվանովնային ընդառաջ ելած մաժորդոմը շշուկով զեկուցեց.

— Սաքսոնյան դեսպանորդ պարոն Կենիգսեկն է եկել:

Այդ մեկը՝ դեռ ոչինչ... Անխենը քթի տակ ծիծաղեց, փեշերը բարձրացրեց ու նեղլիկ սանդուղքով վեր վազեց, հագուստը փոխելու...

Կենիգսեկը նստած էր, մի ոտքը աթոռի տակ քաշած, ձախ ձեռքում ծխատուփը, աջն ազատ թողած՝ զեղանի շարժումների համար, և գերմաներենին ֆրանսերեն բառեր խառնելով, խոսում էր դեսպանորդենից. զվարճալի արկածների, կանանց, քաղաքականության, իր տիրակալի՝ սաքսոնյան կուրֆյուրստի և լեհական թագավոր Ավգուստի մասին: Նրա մշկաբույր կեղծամը համարյա լայն էր ուսերից: Գլխարկն ու ձեռնոցները դրել էր գորգին: Վեր ցցված քիթը ծիծաղելիորեն կնճռոտվում էր կատակելիս, անհոգ ու հանդուգն, ջրագույն աչքերով գուրգուրում էր նա Անխենին: Տանտիրուհին նստել էր դիմացը (վառվող բուխարու մոտ), ուղղամարմին, կոշտ սեղմիրանով, ձեռքերը՝ ափերով վեր ծնկներին դրած: Գլուխը կախած, լսում էր, բերանի անկյունները ժպտալիս բարձրանում էին խաղացկուն, ինչպես պահանջում էր պոլիտեսը:

Պարոն դեսպանորդը պատմում էր.

— ...Չի կարելի նրան չծնրադրել: Նա գեղեցիկ է, սիրալիր, խիզախ... Ավգուստ արքան մարդու կերպարանք ստացած աստված է... Անխոնջ է իր կրքերի ու զվարճանքների մեջ: Վարշավան ձանձրացնում է՝ նա պլանում է Կրակով, ճանապարհին վարազ է որսում, ճոխ խնջույք անում մագնատների դղյակներում կամ գիշերը խոտի դեզի վրա Ֆեբուսի համբույրներ ընծայում շշկլված ու հասարակ մի կնոջ... Հրամայում է ասպետ Վինտերի անունով ճամփորդական վկայական տալ իրեն ու որպես արկածներ որոնող անձնավորություն հատում է Եվրոպան, հայտնվում Փարիզում: Քանիցս այս սուսերով ետ եմ մղել նրա կրծքին ուղղված հարվածները փարիզյան փողոցների խաչմերուկներում, գիշերային կռիվների ժամանակ: Մենք պլանում էինք Վերսալ՝ գիշերային տոնահանդեսի, Ավգուստ արքան ճանապարհորդող սպայի հագուստով էր: Օ՜, Վերսա՜լ: Օ՜, դուք պիտի տեսնեք այդ երկրային դրախտը, ֆրեյլեն Մոնա... Վիթխարի պատուհանները լուսավորված էին միլիոնավոր մոմերով, շենքի մակատին պսպղում էին գույնզգույն ճրագաթասերի լույսերը: Սանդղեվանդի վրա, արհեստական պուրակների մոտով զբոսնում էին դամաներ ու կավալերներ: Ծառերից, որպես դրախտային պտուղներ, չինական լապտերներ էին կախված: Հրթիռներ էին թռչում լճի վրա, կայծերը ջուրն էին թափվում, որտեղից մակույկների միջից տավղի ու վիոլաների նվագն էր հնչում: Քչքչում էին շատրվանները, գիշերաթիթեռներ էին թռչում: Մարմարյա արձանները սաղարթի միջից կենդանացած աստվածներ էին թվում: Ամենաքրիստոնեագույն թագավոր Լյուդովիկոսը բազմած էր բազկաթոռին: Կեղծամի ստվերը ծածկում էր նրա գեր դեմքը, բայց և այնպես ինձ հաջողվեց տեսնել նրա հրպարտ կիսադեմը՝ պտորին շրթունքը դուրս և ամբողջ աշխարհին հայտնի բեխիկների գիծը: Նրա բազկաթոռին սև դոմինոյով ու աչքերին իջեցրած կնգուղով մի տիկին էր կոթնած: Մադամ դը Մենտենոնն էր: Աջ կողմում, աթոռին նստած էր Ֆիլիպ Անժուցին՝ Իսպանիայի ապագա թագավորը, մեկամաղախտով տառապող նրա թոռը... Չորսդին բոլորը, կիսադիմակներով հազարավոր դեմքեր, պալատը, ամբողջ այգին թվում էր, թե շողում են փառքի ոսկով...

Անխենի բարալիկ մատները դողում էին, կլոր կուրծքը բարձրացավ սեղմիրանի նեղվածության միջից.

— Ա՜հ, հավատալ չի լինում, որ երազ չէ դա... Բայց ով է այդ տիկին Մենտոնան, որը կանգնած էր թագավորի ետևում:

— Ֆավորիտուհին... Մի կին, ում առաջ սարսռում են մինիստրները և դեսպանորդները... Իմ տիրակալը՝ Ավգուստ արքան, մի քանի անգամ անցավ մադամ Մենտոնայի մոտով ու նկատվեց նրա կողմից...

— Պարոն դեսպանորդ, Լյուդովիկոս թագավորն ինչո՞ւ չի ամուսնանում մադամ Մենտոնայի հետ:

Կենիգսեկը թեթևակի շփոթվեց, մի պահ նրա շարժուն ձեռքն անուժ կախվեց բացած ծնկների արանքում: Անխենը գլուխը կախեց, շուրթերի անկյունում կնճիռ գոյացավ:

— Օ՜, ֆրեյլեն Մոնա... Մի՞թե թագուհու կարևորությունը կարող է համեմատվել ֆավորիտուհու զորության հետ: Թագուհին ընդամենը զոհն է դինաստիական կապերի: Թագուհու առաջ ծունկ են չոքում և շտապում ֆավորիտուհու մոտ, որովհետև կյանքը քաղաքականություն է, իսկ քաղաքականությունը՝ ոսկի և փառք: Թագավորը գիշերը անկողնու առագաստը ծածկում է ոչ թե թագուհու, այլ ֆավորիտուհու սենյակում: Տաք բարձի վրա գրկախառնվելիս... (Թեթևակի շառագույն տարածվեց Անխենի այտերին: Դեսպանորդն ավելի մոտեցրեց բուրավետ կեղծամը:) Տաք բարձի վրա ամենագաղտնի մտքերն են վստահվում: Թագավորին գրկող կինը նրա սրտի զարկերն է լսում: Այդ կինը պատկանում է պատմությանը:

— Պարոն դեսպանորդ,— Անխենը բարձրացրեց խոնավ ու կապույտ աչքերը,— ամենաթանկ բանը գիտնալն է, որ երջանկությունը տևական է: Ինչիս են պետք այս հանդերձները, այս թանկարժեք հայելիները, եթե վստահություն չկա... Թող ավելի քիչ լինի փառքը, բայց թող իմ փոքր երջանկության վրա միայն տեր ատված իշխի... Ես լողում եմ շքեղ, բայց խախուտ նավակով...

Սեղմիրանի տակից դանդաղ հանեց ժանեկազարդ թաշկինակը, թափ տվեց, հպեց դեմքին: Ժանյակի տակ նրա շուրթերը դողացին փոքր երեխայի պես:

— Ձեզ հավատարիմ բարեկամ է պետք, իմ սքանչելի դուստր,— Կենիգսեկը բռնեց նրա բազուկը, սեղմեց քնքշաբար:— Գաղտնիք վստահելու մեկը չունեք... Ինձ վստահեցեք... Հիացմունքով եմ ինձ հանձնում ձեզ... Իմ ամբողջ փորձը... Ձեզ է նայում Եվրոպան: Իմ

ողորմած միապետը յուրաքանչյուր նավակում տեղեկանում է «կուկուլական գետակի հավերժահարսի» մասին...

— Ինչ իմաստով եք ձեզ առաջարկում, չեմ հասկանում:

Անխենն իջեցրեց թաշկինակը, ետ քաշվեց պարոն դեսպանորդի չափն անց մոտիկությունից: Հանկարծ վախեցավ, որ դեսպանորդը ոտքերն է ընկնելու... Թափով ոտքի ելավ ու քիչ մնաց գայթեր, ոտքը հագուստի փեշին դնելով:

— Չգիտեմ, արդյո՞ք պետք է լսեմ ձեզ...

Անխենը բոլորովին շփոթվեց, մոտեցավ լուսամուտին: Քիչ առաջվա երկնագույնը ամպերով էր պատվել, քամի էր սկսել, բարձրացնելով փողոցի փոշին: Լուսամտագոգին, խորդենիների արանքում, ոսկեգօծ վանդակի մեջ, օրվա մոայլվածությունից փետուրներն էր ցցել վարժեցրած լորը՝ Պյոտրի նվերն էր: Անխենը ջանում էր ի մի բերել մտքերը, սակայն սիրտը զարկում էր տագնապով՝ ո՞չ այն պատճառով, որ Կենիգսեկը, անշարժ կանգնած, իր մեջքին էր նայում... «Փու՛հ, հիմարություն: Ի՞նչ եղավ հանկարծ»: Սարսափելի էր շրջվելը: Եվ լավ էր, որ չշրջվեց. Կենիգսեկի աչքերը փայլում էին, ասես հենց նոր էր մի կարգին տեսել այդ աղջկան... Փարթամ շքեղազգեստից վեր բարակիրան մարմինն էր, կաթնափրփուր ու քնքուշ ուսերը, մոխրագույն, վեր սանրած մազերը, համբույրների արժան ծոծրակը...

Այնուամենայնիվ, դեսպանորդը չկորցրեց իրեն. «Մի քիչ ավելի մտքի սրություն ու պատվախնդրություն ունենար այս հավերժահարսը, նրա հետ պատմություն կարելի էր կերտել»:

Անխենը հանկարծ ետ քաշվեց պատուհանից, նրա խուսափող բիբերը շվարած անշարժացան Կենիգսեկի վրա.

— Ցա՜րը...

Դեսպանորդը հատակից վերցրեց գլխարկն ու ձեռնոցները, շտկեց կրծքի ժանյակները: Նախապարտեզի ցանկապատից այն կողմ երկանիվ մի կառք կանգնեց, աչքերը փոշուց կկոցած, իջավ Պյոտրը: Ծածկված ու կաշեպատ մի ծանր կառք կանգնեց, ապա Պյոտրը ինչ-որ բան բղավեց նրանց ու քայլեց տան կողմը: Կառքից իջան երկու հոգի, փոշուց թիկնոցներով պաշտպանվելով, վազեվազ անցան նախապարտեզի միջով: Երկանիվն ու կառքն իսկույն հեռացան:

Այդ երկուսին Աննա Իվանովնան առաջին անգամ էր տեսնում: Արժանապատվությամբ գլուխ խոնարհեցին: Պյոտրն ինքը վերցրեց նրանց գլխարկները: Բարձրահասակ, չար ու գոռոզ դեմք ուներ մեկը, Պյոտրը բռնեց նրա ուսերից, ցնցեց թիթափացրեց.

— Այստեղ իմ տունն է, հեռ Յոհան Պատկուլ... Ճաշելու ենք...

Պյոտրը լուրջ էր և շատ զվարթ: Կարմիր թևքածալի տակից հանեց կեղծամը.

— Սանրը վերցրու, սանրիր, Աննուշկա: Սեղան որ նստեցինք, կդնեմ, ինչպես ասել ես... Հատկապես գինվոր եմ ուղարկել, որ թերի:— Ու դիմեց մյուս հյուրին՝ գեներալ Կաղովիչին (մուգ մանուշակագույն, լիքը-լիքը այտեր ուներ:)— Ինչ կեղծամ էլ դնես, Ավգուստ թագավորին հասնել չի լինի՝ խիստ փարթամ է ու հոյակապ... Մենք ինչ, ամբողջ օրը դարբնոցում, մեկ էլ ախոռներում...

Նրա բոտֆորտները փոշոտ էին, կաֆտայից ձիու քրտինքի հոտ էր գալիս: Երբ լվացվելու էր գնում, աչքով արեց Կենիգսեկին.

— Տես հա, մի քիչ շատ չե՞ս գալիս իմ թիթեռնիկի մոտ, պարոն դեսպանորդ...

— Ձերդ մեծություն,— Կենիգսեկը թափահարեց գլխարկը, ետքաշվելով ու ծնկծալով,— Վենուսի գոհասեղանին ծաղիկներ ու աղավնիներ մատուցող մահկանացուներին չեն դատում...

Մինչ Պյոտրը կլվացվեր ու կարգի կբերեր իրեն, Աննա Իվանովնան պոլիտեսի անցավ. մատուցարանից մեկական բաժակ չամանաղի մատուցեց հյուրերին, յուրաքանչյուրի ողջությունը հարցրեց, և թե «վաղո՛ւց եք հանում Մոսկվայում լինել ու որևէ բանի կարիք չունե՞ք»: Հիշելով Կենիգսեկի ասածներն իրեն, կոշիկի բութ ծայրը դուրս հանեց, փեշերը փռելով աթոռի երկու կողմերում:

— Եվրոպայից եկածների համար սկզբում տխուր է լինում մեզ մոտ: Բայց շուտով, տա աստված, թուրքերի հետ հաշտություն կընքենք, կհրամայենք բոլորին հունգարական և գերմանական զգեստներ հագնել, փողոցները կսալարկենք, Մոսկվայից կբշենք ավազակներին:

Յոհան Պատկուլը նրան պատասխանում էր սառցաձայն, առանց բարակ շրթունքները բացելու: Մի շաբաթ կլիներ, որ Մոսկվա էր եկել Ռիգայից: Իջևանել էր ոչ թե դեսպանական կացարաններում, այլ փոխծովակալ Կոռնելիուս Կրեյսի տանը, քիչ ավելի առաջ Ավգուստ թագավորի կողմից ժամանած գեներալ-մայոր Կաղովիչի հետ: Առայժմ ոչ մի բանի կարիք չեն զգում: Մոսկվան, իրոք, սալարկված չէ ու փոշոտ է, ժողովուրդն էլ վատ հագնված:

— Ես արդեն նկատել եմ,— Պատկուլը քմծիծաղով նայեց արյունատությունից և զինվորական կաֆտանի նեղությունից ֆֆսացնող, գիրուկ փորին լայն ժապավեն կապած Կաղովիչին,— մի սառանձնահատուկ եղանակ եմ նկատել, որով մոսկովյան խաժամուջը մի բանի կոպեկ է աշխատում օրու համար: Երբ ինչ-որ բան ես գնում նրանից և մնացորդը պահանջում, նա դիտավորյալ խաբում է իր օգտին ու խնդրում նորից հաշվել: Նորից հաշվելուց հետո ասում ես, որ ճիշտ չէ: Երդվում է աստծով, որ ինքդ ես սխալվել, նորից է հաշվում մնացորդը և խաչակնքում՝ եկեղեցիների գմբեթներին նայելով. հաշիվը ճիշտ է: Երկրորդ, երրորդ անգամ ես հաշվում, նա վիճում է ու նորից ինքը հաշվում: Եվ մի տասն անգամ այդպես է անում, մինչև ձանձրանաս ու հեռանաս, կորցրածի վրա խաչ քաշելով:

— Հարկավոր է ծառային հրամայել բռնել այդ մարդուն ու քարշ տալ զեմստվոյական տուն, այնտեղ մի լավ կծեծեն բրերով,— հաստատակամ ասաց Աննա Իվանովնան:

Պատկուլն արհամարհանքով թոթվեց ուսերը:

Ներս մտավ Պյոտրը՝ թարմացած, կեղծամը սանրած: Անխենը

փութով չամանօղի մատուցեց նրան... Խմեց, շրթունքներն առաջ պարզեց ու համբուրեց Անխենի այտերը... Մաժորդոմը բացեց դուռը, գավազանը հատակին զարկեց: Անցան ճաշասենյակ, որի կամարակապ առաստաղին ամպերի մեջ կուպիդոններ էին թռչկոտում, ավաղած պատերին ֆլամանդական պատատառ էր քաշված, ջնարակած բուխարու վրա նշանավոր Սնայդերսի նկարն էր՝ որսած թռչունների և հողի բարիքների ճոխ առատություն:

Պյոտրը նստեց, մեջքն արած վառվող փայտերին, Պատկուլը՝ աջ, Կաղովիչը և Կենիգսեկը՝ ձախ կողմերում, մտահոգված Անխենը՝ դիմացը: Կտավե գոյնզգույն սփոցի վրա, բյուրեղապակյա գավաթների մեջ հունգարական գինի էր լցված արդեն, սեղանի մեջտեղում կույտերով դրված էին արյունեփ, խոզի մսի, լերդությունքով երշիկներ: Սառը խորտիկներից համեմունքի բույրեր էին գալիս: Դրսում գալարվում էր ծակծկող փոշին, տարուբերվում էին մերկացած ճյուղերը: Այստեղ տաք էր: Գցած սեղանը, հյուրերի գոհ դեմքերը, բուխարու կրակները հարմարավետության փայլ էին արձակում պատի հայելակող աշտանակների մեջ:

Պյոտրը բաժակ բարձրացրեց սրտամոտ ու սիրալիր բարեկամ, լեհաց թագավոր Ավգուստի կենացը: Հյուրերը կեղծամների գանգուրները ետ տարան ու անցան ուտելուն:

— Տեր արքա, մենք գաղտնիություն ենք խնդրում, քանզի գործը հույժ գաղտնի է,— ասաց Յոհան Պատկուլը չորրորդ կերակրատեսակից հետո՝ տապակած ջահել սագեր մատուցեցին, ընկույզով:

— Լավ,— Պյոտրը գլխով արեց: Արմունկներով դեն հրեց անագե մատուցարանները, ժպտալուց կնճռոտվեց, նայում էր քիչ գինովցած Անխենի այտերին: Ճաշկերույթի ընթացքում նա շարունակ կատակում էր, ձեռ առնում Աննա Իվանովնայի տնարարական կծծիությունը, աչքով անում, Կենիգսեկին ակնարկելով. «Սոուսը հո նրա աղավնիներից չե՞ս սարքել, որ Վեներկայի գոհասեղանին է մատուցում...»: Դժվար էր հասկանալ. իրո՞ք ցանկանում է լսել հույժ կարևոր լուրերը, հանուն որոնց Յոհան Պատկուլը և Կաղովիչը շտապ ժամանել էին Մոսկվա:

Մինչև այս օրը ընդամենը մի քանի անգամ էին նրանք տեսել ցարին՝ փոխծովակալի տանը: Պյոտրը սիրալիր էր, բայց խուլս տվեց խոսակցությունից: Այսօր ինքն էր նրանց կանչել այստեղ՝ սիրուհու տուն, գաղտնի ճաշկերույթի: Հարգալիր ո սառը հայացքով Պատկուլը հետևում էր այդ ասիացուն: Նրա հետ խոսակցությունն անհետաձգելի էր: Ծվեդական երիտասարդ թագավոր Կարլոս Տասներկուերորդի դեսպանությունը վաղուց էր Մոսկվայում, բանակցում էին Լև Կիրիլովիչի և բոյարների հետ, Ծվեդիայի և Մոսկովիայի մշտական հաշտության շուրջ, և շվեդները նույնպես դեռ չէին հանդիպել ցարին, սակայն օրերս ընդունելություն և հավատարմագրերի հանձնում էր սպասվում Կրեմլում:

— Պարոն Կաղովիչը և պարոն դեսպանորդը կհաստատեն, որ իմ խոսքերը կատարելապես համապատասխան են նորին մեծություն Ավգուստ արքայի ցանկությանը: Անկեղծորեն խոսում եմ սրտի ցավով: Լիֆլյանդական բովանդակ ասպետությունը և Ռիգայի երևելի վանառականները, տեր արքա, աղերսում են ունկնդիր դառնալ մեզ:

Պատկուլի լայն ճակատին կնճիռներ հավաքվեցին: Խոսում էր դանդաղ, երբեմն հագիվ զսպելով զայրույթը.

— Տարաբախտ Լիֆլյանդիան անդորր է փնտրում և խաղաղություն: Ժամանակին մենք Ռժեչ Պոսպոլիտայի մասն էինք կազմում, պահպանում մեր ազատությունները, և Ռիգա քաղաքը հռչակված էր հանայն Բալթիական ծովում: Մարդկային սրտերը սև են նախանձից: Ռժեչ Պոսպոլիտան ձեռք պարզեց մեր հարստություններին, ճիզվիտները հալածանք սկսեցին մեր հավատքի, մեր լեզվի և սովորույթների դեմ... Աստված մթագնեց մարդկանց ուղեղները այն չարագույժ տարուն: Լիֆլյանդական ասպետությունը կամավոր աջացավ շվեդական թագավորի հովանու տակ: Լեհական արծվի ճանկերից նետվեցին առյուծի երախը:

— Անզգույշ բան էր,— ասաց Պյոտրը,— շվեդը ամբողջ աշխարհին հայտնի գիշատիչ է:— Գրպանից հանեց կարմ ծխամորճը: Կենիգսեկը, փութով վեր կենալով, հրահանը զարկեց՝ կայծ հանելու: Մխացող աբեթը պնակով մատուցեց Պյոտրին: Յոհան Պատկուլը քաղաքավարությամբ սպասում էր, որ ցարը վառի ծխամորճը:

— Տեր արքա, դուք բարեհաճել եք լսել շվեդական սենատում քննված և շվեդական հանգույցյալ թագավոր Կարլոս Տասնմեկերորդի հաստատած օրենքի՝ ռեդուկցիայի մասին: Քսան տարի է անցել դրանից: Շվեդական սենատորները՝ բյուրգերներ ու չարամիտ առևտրականներ, չգիտեմ ինչով թմրեցրին թագավորին, մի անլուր չարագործություն ներշնչելով նրան. նախկին թագավորների շնորհած բոլոր հողերը ետ վերցնել ազնվականներից: Էրլերը և բարոնները ստիպված էին լքել դղյակները, և խաժամուժը սկսեց վարել բարձրատոհմիկ մարդկանց հողերը: Մեզ՝ լիֆլյանդական ասպետությանը, ռեդուկցիան չտարածելու՝ երդումով հաստատված խոստում էր տրվել: Բայց ութ տարի անց թագավորն, այնուհանդերձ, ռեդուկցիայի հանձնախմբին հրաման տվեց հարքունիս գրավել մեր հողերը, որ նախկին թագավորներն էին շնորհել: Ասպետների, միաբանությունների գրոսմայստերների և եպիսկոպոսների իրավունքն իրենց վաղնջական հողերի վրա հարկ էր ապացուցել հինավուրց արտոնագրերով, իսկ եթե արտոնագիրը չէր գտնվում, հարքունիս էին գրավվում այդ հողերը նույնպես... Իվան Ահեղի և Ստեֆան Բատորիի ժամանակներից Լիֆլյանդիան ասպատակվում է պատերազմներով, մեր արտոնագրերը կորսված են, մենք չենք կարող մեր վաղնջական իրավունքներն ապացուցել... Լիֆլյանդական հանայն ասպետության անունից ես խնդրագիր գրեցի ռեդուկցիայի հանձնախմբի չարագործությունների մասին և հանձնեցի շվեդաց թագավորին... Բայց հասս սոսկ այն բանին, որ սենատը դատապարտեց ինձ՝ սույն խնդրագիրը գրած աջ ձեռքս կտրելուն և գլուխս թոցնելուն (Պատկուլը բարձ

բացրեց ձայնը, նրա ականջները չարվեցին, բարակ շրթունքները ճերմակեցին) ... թոցնելու գլուխս, որը չցանկացավ ստորացած խոնարհվել չարագործության առաջ... Տեր արքա, լիֆլյանդական ասպետությունը անանկացած է: Սակայն մեր վաճառականների վիճակն էլ դյուրին չէ... (Այդ պահից հետո Պյոտրը սկսեց լսել ծայր ուշադրությամբ:) Ծվեդները բարձր մաքս են նշանակել այն ամենի վրա, ինչ մտնում ու ելնում է Ռիգայի նավահանգստից: Ազատությունից և կաշառակերությունից ոչ միայն մեր, այլև հենց իրենց սնանկացումն են հարուցում: Օտարերկրյա նավերը հիմա Ռիգան շրջանցում են և հասնում Քյոնիգսբերգ, Լեհաստանից ամբողջ հացահատիկը Բրանդենբուրգյան կուրֆյուրստի մոտ է գնում: Մեր դաշտերը մոլախոտով են պատվում: Նավահանգիստն ամայացել է, քաղաքը նման է գերեզմանոցի: Իսկ Ռեվելում ավելի վատ բաներ են արել շվեդները: Մնացել է՝ կամ վերջնական քայքայում, կամ պատերազմ: Այժմ, կամ երբեք, տեր արքա: Ամբողջ ասպետությունը ձի կհեծնի: Ավգուստ թագավորը մեզ առնում է Լեհաստանի տերության հովանու ներքո...

Պատկուլը հաստատակամ նայեց գեներալ Կաղովիչին, դեղնավուն աչքերը տարավ Կենիգսեկի վրայով: Երկուսն էլ ծանրումեծ իջեցրին կեղծամները: Միամորքը կրծոտելով, Պյոտրն ասաց.

— Մրից չելնենք, մրջուրն ընկնենք նորից... Ավգուստ թագավորը թեթև ձեռք ունի, լեհ պաների ճանկերն են ամուր: Մեծ պատառ եք տալիս նրանց բերանը՝ Ռիգան և Ռեվելը...

— Լեհաստանը հիմա Ստեֆան Բատորիի ժամանակներինը չէ: Լեհաստանը մեր կործանումը չի ուզում,— ասաց Պատկուլը:— Մենք մի թշնամի ունենք ցամաքում ու ծովում: Ազատությունների, հավատքի վրա Ռժեչ Պոսպոլիտան ձեռք չի բարձրացնի...

— Տա աստված, տա աստված... Հիմա սելմը մի բան կասի, վաղը մի ուրիշ բան, նայած պաների խելքին ինչ կփչի... Եթե Ավգուստ թագավորը միահեծան լիներ՝ էն ժամանակ հուսալի կլիներ: Թե չէ՝ պանե՞ր... (Բարեհոգությամբ էր մտորում Պյոտրը, ծուխը փստացնելով: Պատկուլի դեմքի մաշկը պրկվել, ոսկորները ցցվել էին՝ բիբերը անթթիթ հառել էր ցարի վրա:) Ու դեռ պաները կուզենա՞ն պատերազմել:

— Տեր արքա, Ավգուստ թագավորի սաքսոնյան զորքին, որը միայն իրեն է ենթարկվում, հրամայված է ձմեռային բնակատեղերն անցնել Շավելյան և Բիրզենյան գավառներում, լիվոնյան սահմանին մոտ...

— Ինչքա՞ն է զորքի թիվը:

— Տասներկու հազար ընտրովի գերմանացիներ:

— Կարծես մի քիչ քիչ է նման գործի համար:

— Եվ նույնքան էլ լիվոնյան ասպետներ կհավաքվեն Ռիգայի տակ: Ծվեդական կայազորը մեծ չէ: Ռիգան մի թափով կգրավենք: Հետո պատերազմ կսկսվի, պաներն իրենք թոր կտանեն ձեռքները: Սույն դաշնակցության մյուս մասնակիցը դանիական թագավոր Քրիստիանն է: Տեր արքա, ձեզ հայտնի է, թե ինչ ատելությամբ է նա

լցված հերցոգի* և շվեդների դեմ: Դանիական նավատորմը մեզ համար պաշտպանություն կլինի ծովից...

Պատկուլը հասավ դժվար տեղը: Ձեռքը կախած, եղունգներով սեղանն էր կտկտացնում ցարը, նրա կլոր դեմքը ոչ ցանկություն էր արտահայտում, ոչ դժկամություն: Մթնշաղ իջավ, դրսում սաստկացավ քամին՝ փակոցափեղկերը ճռճռացնելով: Անխենը կամեցավ մոմերը վառել: Ատամների արանքից Պյոտրն ասաց. «Հարկավոր չի»:

— Տեր արքա, ձեզ համար այսքան հարմար ժամանակ չի եղել Բալթիական ծովում հաստատվելու համար, վաղնջական վոտչինաները՝ Ինգրիան և Կարելիան շվեդներից ետ վերցնելու համար: Ծվեդներին հաղթելով ու ծովի ափին հաստատվելով, համաշխարհային փառք ձեռք բերել, առևտուր սկսել Հոլանդիայի, Անգլիայի, Իսպանիայի և Պորտուգալիայի հետ, հյուսիսային, արևմտյան և հարավային բոլոր երկրների հետ և իրականացնել այն, ինչ Եվրոպայի և ոչ մի միապետ ի վիճակի չի եղել անելու՝ Մոսկովիայի միջով առևտրական ուղի բացել Արևելքի և Արևմուտքի միջև: Կապ հաստատել քրիստոնեական բոլոր միապետների հետ, խոսք ունենալ Եվրոպայի գործերում... Հզոր նավատորմ ստեղծելով Բալթիկայում, դառնալ ծովային երրորդ տերությունը... Ու այդ ամենով ավելի շուտ, քան թուրքերին ու թաթարներին հնազանդեցնելով, փառաբանվել աշխարհում: Այժմ կամ երբեք...

Պատկուլը բարձրացրեց ձեռքը, ասես աստծուն վկայակոչելով: Կենիգսեկը շշուկով կրկնեց. «Այժմ կամ երբեք»: Գեներալ Կաղովիչը բազմանշանակ ֆսֆսացրեց:

— Ինչի էդպես՝ ա՞յժմ: Տանիքներս հո կրակ չի՞ ընկել: Ծվեդների դեմ կռվելը մեծ գործ է,— ծխամորքը կրծելով, խոսեց Պյոտրը: (Զրուցակիցների զգուշացած աչքերի մեջ պսպղում էին բոխարու կրակները:) Տասներկու հազար սաքսոնացիները կարգին ուժ են: Դանիական նավատորմը... Հը՛մ... Ասպետներն ու պանե՞րը: Էդ մեկը գրեք սառույցին, արևը դրեք... Ծվեդները, շվեդները... Եվրոպայի առաջին զորքն է... Դժվար է ձեզ մի բան խորհուրդ տալ...

Նորից կտկտացրեց եղունգներով: Ջսպված զայրույթով Պատկուլն ասաց.

— Այսօր շվեդներին մերկ ձեռքերով կարելի է գրավել: Կաղոս Տասներկուերորդը փոքր է ու անխելք... Թագավո՞ր է: Կնկա պես պճնված, մենակ մի բան գիտե՝ խնջույքներ անի ու անտառներով նապաստակների ետևից ընկնի: Գանձարանի փողերը լրիվ տվել է դիմակահանդեսների: Առյուծ է, առանց ժանիքների... Ծվեդական դեսպանությունը զուր չէ գարնանից նստած Մոսկվայում, մշտական հաշտություն խնդրում... Ծիծաղելի է ասելը՝ դեսպաններ են: Ամբողջ Եվրոպային է հայտնի, ոչ մեկի հագին մետաքսե գուլպա չկա: Աղքա-

*) Հերցոգ Հոլշտեյն-Գոտորպցին, Ֆրիդրիխ IV-ը, ամուսնացած Կաղոս XII-ի քրոջ հետ: Հոլշտեյնյան հերցոգությունը սահմանակից է Դանիային (ծան. Ա. Ն. Տոլստոյի):

տացել են, մենակ սիսեռ են ուտում: Ահա, տեր արքա, գեներալ Կառլովիչն անցյալ տարի եղել է Ստոկհոլմում, թագավորի արածները տեսել է... Պարոն գեներալ, հաճեցեք պատմել...

Կառլովիչը վիզը մի թեթև բարձրացրեց օձիքի միջից.

— Եղել եմ, ճիշտ է... Քաղաքը մեծ չէ, բայց անմատչելի է ջրից ու ցամաքից՝ իսկական առյուծի որջ: Նավից իջա, հորինովի անվան տակ էի, բաղաքացիական հագուստով: Գնացի շուկա և զարմացա. կարծես թշնամի էր մտել քաղաքը. խանութների ու տների փեղկերը փակում էին, կանայք բռնում, տանում էին երեխաներին: Մի անցորդի հարցրեցի, թե ինչ է պատահել: Ձեռքը թափ տվեց, փախավ. «Թագավո՞ր»:

Արշավների ժամանակ ու բազմաթիվ քաղաքներում, ուր ապրել եմ, շատ-շատ բաներ եմ տեսել, բայց որ ժողովուրդն իր թագավորից, ինչպես ժանտախտից, գլուխը կորցրած փախչի, դուռը վրան փակի, չի վիճակվել... Տեսնեմ մեկ էլ՝ անտառապատ սարից գալիս են ձստատրով, եթե չեմ սխալվում մի հարյուր որսորդ, եղջերափոդերը մեջքներին, շների ոռնակի հետ... Քարե կամրջով քաղաք մտան: Հրապարակն արդեն դատարկ էր: Առջևից սև ճծուլգը հեծած մի պատանի էր գալիս՝ զինվորական բոտֆորտներով, մեկտակ շապկով: Սանձերը թողած էր գալիս Կառլոս Տասներկուերորդ թագավորը... Առյուծի ձագ... Ետևից՝ որսորդները, սուլոցով, քրքջոցով: Դների պես անցան շուկայի միջով: Լավ էր, վնաս չտվեցին, մեկ-մեկ ոտատակ են տալիս:

Ես հետաքրքրասեր մարդ եմ, ու ծանոթներիցս մեկին խնդրեցի ինձ պալատ տանել, իբր արաբական համեմունքներ վաճառողի: Վաղ ժամ էր, բայց պալատում խնջույքի էին նստած: Թագավորը զվարճանում էր: Ճաշասրահի պատերը մի մարդաբոյ ներկված էին արյունով, հատակին արյունը առու-առու գնում էր: Գարշահոտություն, հարբած մարդիկ էին ընկած: Թագավորը և նրանք, ովքեր դեռ ոտքի վրա էին, ոչխարների և հորթերի վիզ էին կտրում՝ թրի մի հարվածով, շվեդական տասը կոռնի վրա գրազով: Ես չէի կարող հավանություն չտալ թագավորի հմտությանը. ախոռապանները հրմշտելով մի հորթ էին բերում նրա առաջ, թագավորը վազելազ մոտենում էր և թուրը պտտեցնելով, զարկում ու ճարպկորեն խույս էր տալիս, որ արյունը բոտֆորտների վրա չցայտի:

Հարգալիր գլուխ տվեցի, թագավորը թուրը շպրտեց սեղանին ու արյունոտ ձեռքն ինձ մոտեցրեց, որ համբուրեմ: Իմանալով, որ առևտրական եմ. «Ահա, ի դեպ,— ասաց նա,— չե՞ս կարող հոլանդական հինգ հարյուր գուլդեն փոխ տալ»: Ինձ սեղան նստեցրին ու ստիպեցին չափից դուրս խմել: Պալատականներից մեկը շշնջաց. «Թագավորին մի հակառակեք, երեք օրուցիշեր հարբած է: Երեկ մի պատշվելի վաճառականի այստեղ մերկացրին, մեղր քսեցին ու գլորեցին փետուրների մեջ»: Անպատվությունից խուսափելու համար, թագավորին խոստացա հինգ հարյուր գուլդեն, որ չունեի, և մինչև կեսգիշեր սեղանի մոտ էի, հարբած ձևացնելով: Պալատականներն արթ-

նանում էին, ուտում, խմում, երգեր էին բղավում, մատուցարանները շրջում էին ապասավորների գլխներին ու նորից փոխում քնելու:

Գիշերը թագավորը իր հացկատակների հետ ելավ պալատից ապակի փշրելու, քնած քաղաքացիներին վախեցնելու: Մթությունից օգտվելով, թաքնվեցի: Ամբողջ քաղաքը հեծում է թագավորի խելահեղություններից: Իմ ներկայությամբ երեք եկեղեցիների բեմերից քարոզիչներն ասացին ժողովրդին. «Վայ այն երկրին, ուր թագավորը պատանի է»: Քաղաքացիները երևելի մարդկանց պալատ են ուղարկում, որ խնդրեն թագավորին՝ վերջ տա անառակությանը, գործով զբաղվի: Խնդրատուներին դուրս են շպրտում: Հանգուցյալ թագավորի կողմից սնանկացած էլչերը և բարոնները կառավարող դինաստիան ատում են: Սենատում դեռ կանչած են թագավորից, բայց դրամով խեղճացնում են: Իսկ նրա համար ինչ ուզում է թող լինի՝ խելագա՞ր է:

Վերջերս, սենատ մտնելով, երկու հազար կոռն է պահանջել անվերադարձ: Սենատը միաձայն մերժել է: Կատաղած թագավորը շարդել է ձեռնափայտը.« Այսպես կլինի բոլոր նրանց հետ, ովքեր դեմ են ինձ...»: Իսկ հաջորդ օրը որսորդների հետ միասին խուժել է սենատի դահլիճ, պարկի միջից կես երկտասնյակ նապաստակ են բաց թողել ու քսի տվել շներին... (Պյոտրը հանկարծ, գլուխը ետ գցած, գվարթ քրքջաց:) Սենատորները ելել են լուսամտագոգերին, մի քանիսի կափտանները շներ պատառոտել են: Ահա և նա՝ չարաճճի-թագավորը... Շա՜տ է սարսափելի այդ կոդյունը:

Գեներալ Կառլովիչը թեծալի տակից հանեց փափուկ մետաքսյա թաշկինակը, սրբեց վիզն ու գլուխը՝ կեղծամի տակ: Արմունկներով սեղանին կոթնած Պյոտրը դեռ ծիծաղում էր: Աննա Իվանովնան, բոլորի համար անսպասելիորեն, արհամարհանքով ասաց.

— Խոսք չկա ասելու՝ թագավո՞ր է: Այդ Կառլոսին միայն մեր Պրեոբրաժենսկան գնդով կարելի է հաղթել..

Բոլորը նրա կողմը դարձրեցին գլուխները: Կենիգսեկը թաշկինակը տարավ բերանին: Պյոտրը մեղմաձայն ասաց.

— Աննուշկա, էդ մեկն արդեն քո խելքի բանը չէ... Ավելի լավ... կանես, ասես մոմերը վառեն:

Պատի աշտանակները վառեցին, հայելիների առաջ: Գինի լցրեցին բյուրեղապակյա գավաթները: Տաք լույսից նույնիսկ Յոհան Պատկուլի դեմքը մեղմվեց: Անխենը ոչ մեծ երաժշտական արկղիկ բերեց, լարեց, կափարիչը բացեց ու դրեց բուխարու վրա: Բարալիկ ձայներով, արկղիկը գերմաներեն մի երգ էր նվագում այն մասին, որ ամեն ինչ բարեհաջող է այս աշխարհում, ուր խորտիկներ կան սեղանին, մոմերն են վառվում ու ժպտում են երկնագույն աչքերը՝ թող աղմկի քամին դրսում... Պյոտրը, քթի տակ ծիծաղելով, գլուխն էր ճոճում տակտով, կոշիկով թփթփացնում: Այդ երեկո նա այլևս ոչ մի խոսք չասաց քաղաքականության մասին:

Ամեն կիրակի Իվան Արտեմիչ Բրովկինի՝ Իլինկայում կառուցած աղյուսե նոր տանը ճաշի էին գալիս Ալեքսանդրան և ամուսինը: Ամուրիի կյանքով էր ապրում Իվան Արտեմիչը: Ավագ որդին՝ Ալյոշան, ներկայումս մեկնել էր զինվորներ հավաքագրելու: Վերջերս հրապարակած հրամանագրով այդ հավաքագրվածներով երեսուն գունդ պիտի կազմավորվեր՝ երեք դիվիզիա: Մատակարարման համար նոր ատյան հիմնվեց՝ Պարենային վարչատուն, գեներալ-մատակարարի ղեկավարության ներքո: Ինքնըստինքյան, գեներալ-մատակարարը գերատեսչական իր թղթերից ոչ վարսակ կարող էր ստանալ, ոչ խոտ, ոչ պաքսիմատ ու այլ պարենամթերք: Գլխավոր մատակարարը վերստին Բրովկինը մնաց, թեև առանց պաշտոնի և կոչումի: Նրա գործերը շատ հաջող էին ընթանում, ու երևելի բազմաթիվ վաճառականներ նրա գործակիցներն էին ու գործակատարները:

Մյուս տղաները՝ Յակովը Վորոնեժում, նավատորմում էր ծառայում, Գավրիլան սովորում էր Հոլանդիայի նավաշինարաններում: Եվ միայն կրտսերը՝ Արտամոնն էր մնացել հոր մոտ, նամակներ գրելու, հաշիվները պահելու, զանազան գրքեր կարդալու համար: Քսանմեկ տարեկան էր արդեն: Վարժ գերմաներեն գիտեր և հոր համար առևտրին վերաբերող աշխատություններ էր թարգմանում, զբաղմունքի համար էլ՝ Պուֆֆենդորֆի պատմությունը: Իվան Արտեմիչը, լսելով, հոգոցներ էր հանում. «Տեր աստված, մենք էլ կասենք, թե ապրում ենք աշխարհի ծերին, խոզի պես»:

Տարեմեծիկ բոլոր երեխաներն էլ խելացի էին, այս մեկը՝ իսկական ոսկի: Ըստ երևույթին, լուսահոգի մայրը ամբողջ արյունը կաթիլ առ կաթիլ նրանց էր տվել, սիրտ ու հոգի չէր խնայել՝ իր զավակների բախտավորությունն ուզենալով: Զմռան քքերին մեկ-մեկ ծխապատ խրճիթում իլիկը կպտտեցներ, կնայեր վառվող մարխին՝ անդրնդի պես զարգանդելի իր աչքերով: Պատիկները կֆսֆսային վառարանի վրա, ուտիճների խշխշոցը կլսվեր ճեղքերից, մեկ էլ ծղոտե տանիքից վեր բուքը կոռնար անմարդկային այդ կյանքի մասին... «Էհ պատիկնե՞րն ինչի պիտի տանջվեն անմեղ տեղը»: Այդպես էլ չտեսավ իր բախտավորությունը: Իվան Արտեմիչն այն ժամանակ չէր խղճում կնոջը, գլուխ չուներ, իսկ հիմա, ծերանալով, մըշտապես հիշում էր նրան: Մեռնելիս ասաց. «Երեխեքի գլխին խորթ մեր չբերես»: Այդպես էլ չամուսնացավ երկրորդ անգամ:

Բրովկինի տունն արտասահմանյան ձևով էր սարքված. սովորական երեք՝ ննջարան, խաչկամար ու ճաշասենյակից բացի, չորրորդն էլ կար: Հյուրասենյակը, ուր ընդունում էին հյուրերին, մինչև ճաշելը, այն էլ ոչ թե պատերի տակ շարած թախտերի վրա, որ ձանձրույթից հորանջեն թևքերի մեջ, այլ սենյակի մեջտեղում, հոլանդական աթոռների վրա, խավոտ թավշյա սփոցով սեղանի շուրջ: Զբաղվելու համար այստեղ պատկերազարդ թերթիկներ կային, կանխագուշակումներով տարեցույց, երաժշտական արկղիկ, շախմատ, ծխամորճ ու

ծխախոտ: Պատերի երկայնքով ամեն տեսակ հնոտիով լի սնդուկներ չէին շարած, ինչպես դեռ հնաոճ ապրուստին մնա, ազնվականների տներում, այլ փոքր ու մեծ պահարաններ. հյուր ընդունելիս դռները բաց էին թողնում, որ թանկարժեք ամանեղենը երևար:

Այդ ամենն Ալեքսանդրան էր արել: Հորն էլ էր հետևում, որ վայելուչ հագնվի, հանգիստ սափրվի ու փոխի կեղծամը: Իվան Արտեմիչը հասկանում էր, որ այդ գործերում պիտի լսի աղջկան: Բայց ճիշտն ասած, տխուր էր կյանքը: Պարծենալու և փքվելու խնդիր համարյա չուներ և ոչ մեկի առաջ՝ ցարին ձեռքով էր բարևում: Մեկ-մեկ կուզենար նստել Վարվառկայում, վաճառականների հետ պանդոկում, լսել նրանց կծու-կծու խոսքերը, ինքն էլ իրենը կասեր: Բայց չէր գնա՝ վայել չէր: Պիտի նստեր ու ձանձրանար:

Իվան Արտեմիչը կանգնած էր պատուհանի մոտ: Ահա՝ փողոցով վազում է Սվեշնիկովի ավագ գործակատարը, վազում է շան որդին, շտապում: Շատ խելացի գլուխ ունի: Ուշացել ես, սիրելիս, քո իմացած տեղում վուշը մենք դեռ առավոտի՞ց ենք մեզնով արել: Հրեն՝ Ռևյակինը, նոր վալենկաներով, քիթումոիթը դարձրեց լուսամուտից՝ անպայման Դատական ատյանից է գալիս... Այ էդպե՛ս, հոգիս, Բրովկինի հետ դատի մեջ չմտնես...

Երեկոյան, երբ Սանկան տանը չէր լինում, Իվան Արտեմիչը հանում էր կեղծամն ու հիշպանական թավշից կաֆտանը, իջնում էր ներքնահարկ՝ խոհանոց, գործակատարների, մուժիկների հետ ընթրելու: Ծչի էր գդալում, սրամտում: Հատկապես սիրում էր, երբ գալիս էին հին համագյուղացիները, որոնք հիշում էին իրենց գյուղի համարյա թե վերջին մարդուն՝ Իվաշկա Բրովկինին: Մուժիկը խոհանոց կմտներ ու Իվան Արտեմիչին տեսնելով, կարծես անասելի կշշկվեր, չէր իմանա գետնաչափ խոնարհվի, թե ոնց, և չեմուչում կաներ՝ սեղան նստել չէր համարձակվի: Անշուշտ, կամաց-կամաց, խոսքի հետ, հեռուներից կմոտենար բուն գործին, թե ինչի համար էր եկել...

— Ախ, Իվան Արտեմիչ, մենակ ձենիցդ ճանաչեն քեզ, թե չճանաչեն: Գյուղում ուրիշ խոսք ու գրից չկա, հենց հավաքվեն մուժիկները, կսկսեն. էն ժամանակները, հիշում ենք, մի ձի ունեիր, ոտից գլուխ պարտքերի մեջ, բայց էլի արծվի պես էիր...

— Երեք ոուբլով, երեք հատիկ ոուբլով եմ ապրուստ սկսել: Էդպես, Կոնստանտին:

Մուժիկը, աչքերը չռած, գլուխը կտարուբերեր.

— Ուրեմն, աստված է տեսնում մարդուս, իր նշանն ունի... Հա... (Ապա՝ մեղմ ու սիրալիր:) Իվան Արտեմիչ, բայց դու Կոստյանտին Ծուտովին հիշեցիր, ոչ թե ինձ, ես Կոստյանտինը չեմ... Նա քո դիմացն էր ապրում, ես՝ քեզնից ձախ, տանդ կողքերը: Տունս կիսաքանդ է...

— Մոռացել եմ, մոռացել...

— Բանի պետք չի,— արդեն լացակումած, կոկորդային ձայնով կխոսեր մուժիկը,— մեկ էլ տեսար, փուլ եկավ: Մի քանի օր առաջ

մարագս նստեց, փտած էր լրիվ, հորթը մնաց տակը... Ինչ անեմ, չեմ իմանում:

Իվան Արտեմիչը գիտեր, թե ինչ է անելու, բայց միանգամից չէր ասում. «Վաղը կգնաս գործակատարի մոտ, մինչև Աստվածածին կսպասեմ» ու մինչև հորանջը կկեղդեր, հարցուփորձ կաներ, թե ով ոնց է, ով է մնալ, ում է թող ծնվել.. Կկատակեր. «Սպասեք, Զատկի երկրորդ շաբաթ գալու եմ հարս տանեմ ինձ»:

Մուժիկը կմնար խոնանջությամբ գիշերելու: Իվան Արտեմիչը կբարձրանար վեր, շոգ ննջասենյակը: Լիվրե հագած երկու ծառա, շեմի մոտ, թաղիքի վրա վաղուց քնած, վեր կթռնեին, իրենց կարճիկ ու գիրուկ տիրոջ շորերը կհանեին: Հարկը պատշգամին գլուխ խոնարհելով կանթեղի առաջ, փորն ու կողերը քորելուց հետո, բոբիկ ոտքերը կմտցներ կարած վալենկաների մեջ ու կգնար ցուրտ արտաքնոցը: Օրը կվերջանար: Անկողին մտնելով, Իվան Արտեմիչն ամեն անգամ խոր հոգոց կհաներ. «Էս օրն էլ պրծավ»: Էնքան էլ շատ չի մնացել: Ու ափսոս՝ հիմի իսկը ապրելու, վայելելու ժամանակն էր... Կսկսեր մտածել երեխաների, գործերի մասին՝ քունը ցրիվ կտար մտքերը:

Այսօր, ժամերգությունից հետո, կարևոր հյուրեր էին սպասվում: Առաջինը Սանկան եկավ, ամուսնու հետ: Վասիլի Վոլկովը, առանց երկար-բարակ խոնարհումների, համբուրեց աներոջը, անուրախ ընտեց սեղանի մոտ: Շուրթերը քսելով հոր այտին, Սանկան իրեն գցեց հայելու առաջ, սկսեց ուսերը տանել-բերել, ֆրեզեկրագե գույնի շրջազգեստի փեշերը ֆռռացնել՝ նոր զգեստը զննելով:

— Հայրիկ, խոսակցություն ունեմ ձեզ հետ... Էնքան լուրջ խոսակցություն է որ...— Բարձրացրեց մերկ ձեռքերը, շպարազարդ մազերի մետաքսյա ծաղիկները շտկելով: Հայելուց կտրվել չէր կարողանում՝ կապտաչ էր, գրավիչ, փոքրաշուրթ:— Ի՞նչ խոսակցություն է... (Ու հորթից՝ ծունկը ծալեց հայելու առաջ, ծալովի փետուրներով հով արեց:)

Վոլկովը մոալվված ասաց.

— Խելառել է մի տեսակ: Գլուխն է մտցրել՝ Փարի՞զ, հա Փարի՞զ... Մենակ հենց իրեն են սպասում Էնտեղ... Հիմա ջոկ ենք քնում:

Հոլանդական վառարանի մոտ նստած Իվան Արտեմիչը քթի տակ ծիծաղեց.

— Այ-այ-այ, խրատել է պետք:

— Բա չես խրատի՝ ձենը կգցի տնով մեկ: Մի բան չեղած՝ ասում է. «Պյոտր Ալեքսեևիչին կգանգատվեմ»: Չեմ ուզում հետս Եվրոպա տանել՝ խելքը կթոցնի:

Սանկան ետ քաշվեց հայելուց, աչքերը կկոցեց, մատը վեր տընկեց.

— Կտանես: Պյոտր Ալեքսեևիչն ինքն է հրամայել ինձ գնալ: Իսկ դու անկիրթ ես:

— Ասեր հայրիկ, տեսա՞ր: Էս ի՞նչ բան է:

— Այ-այ-այ...

— Հայրիկ,— զգեստն ուղղելով՝ ասաց Սանկան, նստեց հոր կողքին:— Երեկ խոսեցի Բույնոսովների փոքրի, Նատալյայի հետ: Կրակի կտոր աղջիկ է: Նրանք դեռ մեծին չեն դասավորել, սրա հե՞րթը երբ պիտի հասնի: Նատաշայի իսկական ժամանակն է, մի գեղեցկուհի: Պոլիտես ու պալատական գալանտ ինձնից վատ չի իմանում...

— Էդ ի՞նչ է, իշխան Ռոմանի գործերը չլինի՞ վատ են,— հարցրեց Իվան Արտեմիչը, փափլիկ քիթը քորելով:— Ես եմ ասում, մի գ:ուխ կտավի գործարանից է խոսք բացում...

— Վատ են, վատ: Իշխանուհի Ավդոտյան լաց էր լինում: Ինքն էլ է ամպի պես մթնած...

— Խելոք գլուխն առավ, մտավ գինվորական կապալների մեջ, մերոնք կողերը ջարդեցին...

— Տոհմն է ճշանավոր, հայրիկ, Բույնոսովնե՞րը... Քիչ պատիվ չէ նրա նման իշխանուհուն տուն բերելը: Թե օժիտի ետևից շատ չընկնենք՝ կտան: Մեր փոքրի՝ Արտամոշկայի համար եմ ասում: (Իվան Արտեմիչը ծոծրակն էր ուզում քորել, կեղծամը խանգարեց:) Կարևորը մինչև Փարիզ գնալս Արտամոնին Նատալյայի հետ պսակեմ է: Աղջիկը շատ է նեղվում: Պյոտր Ալեքսեևիչին էլ եմ ասել:

— Ասե՞լ ես:— Իվան Արտեմիչն իսկույն դադարեց քիթը քորելը:— Է, նա՞ ինչ ասեց:

— Շատ լավ գործ է, ասեց: Երեկ իրար հետ պարում էինք Մենշիկովի տանը: Բեխերով թշերս խուտուտ էր տալիս ու ասեց. «Հարսանիքն արեք, ու շուտ արեք»:

— Ինչի՞ շուտ,— Իվան Արտեմիչը վեր կացավ ու լարված նայեց աղջկան: (Սանկան հորից բարձրահասակ էր:)

— Ոնը որ թե պատերազմ պիտի լինի... Չհարցրեցի, դրա ժամանակը չէր... Երեկ բոլորը խոսում էին, որ պատերազմ է լինելու:

— Ո՞ւմ հետ:

Սանկան ընդամենը շուրթերն ուռեցրեց: Իվան Արտեմիչը կարճ ձեռքերը մեջքին դրեց ու ճոճվելով գնաց- եկավ՝ ապիտակ գուլպաներով էր, խոշոր վարդակապերով ու կարմիր կրունկներով, տափակքիթ կոշիկ էր հագել:

Առմուտքի մոտ դդրդացին կառքի անիվները, հյուրերը գալիս էին:

Նայած ինչ հյուր էր, և Իվան Արտեմիչը կամ վերևում էր դիմավորում, դռան մոտ, փորը մետաքսյա կամզոլից դուրս ցցած, կամ իջնում էր առմուտքի մոտ: Իշխան Բորիսովիչին, որը եկավ ետնամասին սպասավորներ կանգնեցրած կառքով, սանդուղքի մեջտեղում դիմավորեց, բարեսիրտ շարժումով ձեռքը ձեռքին խփելով: Իշխան Ռոմանի ետևից, փեշերը բռնած, թուջե աստիճաններով թռչկոտում էին Անտոնիդան, Օլգան և Նատալյան: Վերջինիս առաջ թողնելով, Իվան Արտեմիչը ուշադիր տնտղեց՝ հասած աղջիկ էր իսկապես:

Բույնոսով օրիորդները աղմուկով նստեցին հյուրասենյակի մեջտեղում, սեղանի շուրջ: Սանկայի մերկ ձեռքերը բռնելով, բլբլացրեցին փուչ ու դատարկ բաներից: Հարգարժան հյուրերը՝ պրեզիդենտ

Միտրոֆան Ծորինը, Սվեշնիկովը, Մոմոնովը, օրիորդների քղանցատուտերը չտրորելու համար, քաշվեցին վառարանի մոտ և այնտեղից աչքի տակով խեթում էին. «Այս ամենը, ինչ խոսք, լավ. ցարի կամքն է Եվրոպայի ետևից գնալը, բայց աղջիկները տնետում քարշ տալուց լավ բան չի սպասվում»:

Սանկան ցույց էր տալիս Համբուրգից նոր բերված հոլանդական նշանավոր վարպետների տպագիր փորագրանկարները: Օրիորդները քթով շնչում էին թաշկինակների մեջ, նայելով մերկանդամ աստվածներին և աստվածուհիներին... «Իսկ սա՞ ով է: Ի՞նչ է դրել առաջին: Իսկ կինն ի՞նչ է անում: Ա՞խ»:

Սանկան բարկացած բացատրում էր.

— Կովի ոտներով մարդը սատիրն է... Օլգա, իզուր եք քիթուբերան ծռմռում, դա էլ թզենու տերև է՝ միշտ էդպես են նկարում: Կուպիդոնն ուզում է կնոջ սիրտը խոցել նետով... Խեղճը լաց է լինում՝ աշխարհը սևացել է գլխին: Արտագին ընկերը ամուր է խաղացել հետը ու հեռացել, տեսնում եք՝ առագաստը... Կոչվում է «Լքված Արիադնան»... Պիտի որ էս ամենը սովորեք: Կավալերները միշտ հարցնում են հիմա հունական աստվածներից-բաներից: Անցած տարիները չեն... Ու մեկ էլ, չեք գալիս օտարերկրացիների հետ պարելու...

— Կսովորեինք, բայց գիրք չկա... Հայրիկից կես գոռշ պոկել չի լինում գործի համար,— ասաց Անտոնիդան: Ծաղկատար դեմքով Օլգան զայրույթից կծեց թևքի ժանյակը: Սանկան հանկարծ գրկեց Նատալյայի ուսերը, ինչ-որ բան շշնջաց ականջին: Կլորերես, խարտիշահեր Նատալյան թունդ կարմրեց...

Խոնարհ ու հարգալիր, հյուրասենյակ մտավ Արտամոշան՝ գերմանական դարչնագույն զգեստով, նիհար, Սանկային նման էր, բայց հոնքերն ավելի մուգ էին, վերին շրթունքին բեխամազ կար, աչքերն ամպագույն էին: Սանկան կամթեց Նատալյային, որ եղբորը նայի: Աղջիկը շփոթմունքից գլուխը կախեց, արմունկները տարածեց՝ շրջել չէր լինում...

Արտամոշկան գոտկաչափ ողջույն տվեց հարգարժան հյուրերին ու մոտեցավ քրոջը: Ծուրթերը սեղմած Սանկան, կարճ ծնկածալով, շուտասելուկով ասաց.

— Պրեզանտե իմ փոքր եղբայր Արտամոշկային:

Օրիորդները ծուլորեն շարժեցին վեր սանրած, շպարազարդ կեղծամները: Արտամոնը բոլոր կանոնների համաձայն եռքայլ արեց, ոտքը խփեց, ձեռքը թափահարեց, կարծես լվացք էր պարզաջրում: Սանկան ներկայացնում էր. «Իշխանուհի Անտոնիդան, իշխանուհի Օլգան, իշխանուհի Նատալյան»: Օրիորդներից յուրաքանչյուրը, տեղից ելնելով, ծալում էր ծունկը, յուրաքանչյուրի առաջ Արտամոնը լվացք էր պարզաջրում: Զգույշ նստեց սեղանի մոտ: Ձեռքերը սեղմեց ծնկների արանքում: Այտոսկրերի վրա բծեր երևացին: Տրտմած հայացքը գցեց քրոջ վրա: Սանկան սպառնագին խոժոռեց հոնքերը:

— Հաճա՞խ եք պլեզիր անում,— կմկմալով հարց տվեց Նատալյային: Վերջինս անհասկանալի պատասխան մրթմրթաց: Օլգան ժիր-ժիր պատասխանեց.

— Երեք օր առաջ պարեցինք Նարիշկինների մոտ, երեք անգամ հաղուստ փոխեցինք: Այնպիսի պուքսե էր, այնպիսի շոգ: Իսկ ինչո՞ւ ձեզ երբեք չենք տեսնում:

— Ջահել եմ դեռ:

Սանկան ասաց.

— Հայրիկը վախենում է, թե կշփանա: Այ, պսակենք, էն ժամանակ ինչքան ուզի... Բայց շատ վարժ է պարում... Զնայեք, որ ամառում է... Հետը ֆրանսերեն խոսես, ճամփեդ կմոլորես...

Հարգարժան հյուրերը հետաքրքրությամբ նայում էին ջահելներին... «Է՛, է՛, ինչ դառան երեխեքը»: Միտրոֆան Ծորինը հարցրեց Բրովկինին.

— Տղայիդ որտե՞ղ ես ուսումի տվել:

— Դասատուներ են գալիս, Միտրոֆան Իլլիչ, չի լինի. բոլորի աչքի առաջ ենք... Տոհմ ու ծագում չունենք, ուրիշ բաներով պիտի մերն առաջ տանենք....

— Ճիշտ է, ճիշտ է.. Ստիպված ենք ամենախորքերից վեր ելնել...

— Թագավորն էլ է նեղանում վրաս, էդ ինչ է, ասում է, կոտով փող ես հավաքում, ուրեմն կաշվից պիտի դուրս գաս...

— Խոսք չկա: Ծախսն իրեն կարդարացնի:

— Մենակ Սանկան ինչքան է վրաս նստում: Բայց դե, աչքի ընկնող կնիկ է:

— Շատ ժիրն է: Մենակ թե, Իվան Արտեմիչ, աչքդ վրան պահի, հանկարծ...

— Խոսք չունեմ, կարելի էր մի լավ ճիպտել ու քշել վերի սենյակը, քարգահը դնել առաջը,— քիչ լռեց ու մտազբաղ պատասխանեց Իվան Արտեմիչը:— Բայց դե, օգո՞ւտն ինչ: Մարդու սիրտը կհանգըստանա՞ր: Չէ-է՛: Հասկանում եմ, մեղք գործելու չորս կողմն է պտույտ տալիս: Տեր աստված, ճիշտ որ... Մեղքն աչքերից թափում է: Միտրոֆան Իլլիչ, ժամանակները փոխվել են... Անգլիայում, լսե՞լ ես, Մալբրուկի կնիկը ամբողջ Եվրոպան առել է ձեռը... Դու էլ, ճիպոտդ առած, տիմարի պես մնա նրա փեշի տակ...

Խատահայաց, թավահոն վանատական Ալեքսեյ Սվեշնիկովը՝ հունգարական քուղավոր, լայն կաֆտանով, սևագանգուր ու ալեխառն սեփական մազերով, մեջքին դրած մատներն էր խաղացնում, սպասելով, մինչև պրեզիդենտն ու Բրովկինը վերջացնեն դատարկ բաներից խոսելը:

— Միտրոֆան Իլլիչ,— թնդաց նա,— նորից եմ ասում էն բանի մասին. մեր գործը հարկավոր է վռազացնել: Լուրեր կան, որ մեր ճամփեն կարող են կտրել:

Պրեզիդենտի սրաբիթ, մաքուր ու խորամանկ դեմքին քաղցրածոր ժպիտ տարածվեց.

— Ինչպես որ մեր բարերար Իվան Արտեմիչը կվճռի, Ալեքսեյ Իվանովիչ, ճրան հաքցրու...

Բրովկինը նույնպես ապագ-արագ խաղացրեց մեջքին դրած մատները. կարճլիկ ոտքերը չոած, ներքևից վերև էր նայում արծիվներին՝ Շորինին ու Սվեշնիկովին... Անմիջապես գլխի ընկավ. շտապում են վիշապները, ուրեմն, մի առանձնահատուկ բան են իմացել... (Երեկ Բրովկինն ամբողջ օրը հացահատիկի պահեստներում էր, բարձրաստիճան մարդկանցից ոչ մեկին չէր տեսել:) Չպատասխանեց, գոռոզությամբ փքված, առնում-տալիս էր՝ ի՞նչ կարող է լինել: Ձեռքերն իջեցրեց, որ քիթը քորի:

— Է ինչ,— ասաց,— լուրեր կան, որ հիմի մահուդը գին է ունենալու... Կարելի է խոսել:

Սվեշնիկովն իսկույն չոեց իր գնչուի աչքերը.

— Իվան Արտեմիչ, ուրեմն դո՞ւ էլ գիտես երեկվա մասին:

— Որոշ բան գիտենք... Մեր գործն իմանալն ու սուս մնալն է... (Իվան Արտեմիչը ձեռքով բռնեց ծնոտը. «Այ քեզ սատանա: Ի՞նչ են իմացել սրանք»:)

Մյուս հյուրերին խեթելով, ետ-ետ գնաց հախճասալիկներով պատված վառարանի ետևը, Սվեշնիկովը և Շորինը՝ ետևից: Այնտեղ, մոտ-մոտ կանգնած խոսեցին զգուշավոր, կես-բերան...

— Իվան Արտեմիչ, ախր ամբողջ Մոսկվան է խոսում:

— Հա, խոսք ու գրից կա:

— Բայց ո՞ւմ դեմ: Չլինի՞ շվեդների:

— Էդ մեկը թագավորի գործն է...

— Լավ, բայց դե... Ու շուտո՞վ (Սվեշնիկովը եղունգները խրեց մետաղալարի պես կոշտ մորուքի մեջ:) Իսկը ժամանակն է, մի գործարան բացեինք: Թագավորին ձեռնտու կլիներ ոչ թե որ հաղորդյանից էժան կարժենար, այլ որ մեր մահուդը կունենայինք: Կարող է սահմանները փակեն, բայց մենք մեր մահուդի տերն ենք... Ոսկի գործ է: Մեջն էնքան մարդ է խառնվել, հենց ասենք, Մարտիսենը...

«Ես եմ ասում ինչի հոտն են առել»,— հասկացավ Իվան Արտեմիչը, քմծիծաղը բռի մեջ թաքցնելով:

Օրերս այդ օտարերկրացի Մարտիսենը, թարգմանիչ Շաֆիրովի հետ եկել էր Բրովկինի մոտ, մահուդի գործարան բացելու առաջարկով. փողի մի մասը՝ թագավորինը, մի մասը՝ Բրովկինինը, իսկ ինքը բոլոր եկամուտների մեկ երրորդը ստանալու պայմանով գործի մեջ է մտնում, որի համար պարտավորվում է Անգլիայից բերել տալ գործվածքային դազգահներ, լավագույն վարպետներ ու ամբողջ գործը վարել: Սվեշնիկովն ու Շորինն իրենց հերթին վաղուց էին Բրովկինին առաջարկում փայատեր դառնալ՝ մահուդի գործարան բացելու կոմպանիայում: Բայց առայժմ միայն խոսք էր գնում: Երեկ, ըստ երևույթին, ինչ-որ բան պատահել էր, ավելի ստույգ՝ Մարտիսենը անձամբ է հասել թագավորին:

— Կարո՞ղ ենք էդ մեծ գործը տալ օտարներին,— աչքերը կըրակված, ասաց Սվեշնիկովը:

Պրեզիդենտ Շորինը, աչքերը կկոցելով, հոգոց հանեց.

— Մենք էլ հո պատրաստ ենք կյանքներս չխնայել, վերջին ուժեցածը կտանք....

— Վաղը կխոսենք, վաղը,— Իվան Արտեմիչը վառարանի մոտից շտապեց դեպի դուռը: Հյուրասենյակ մտավ ցածրահասակ, մաքուր ածիլված, լիքը-լիքը մի տղամարդ (սև մահուդե զգեստով էր, կոշիկները փոշոտ), լայն թթարմատով, արծվաքիթ՝ նրան ոչ ոք չդիմավորեց: Խած աչքերով անհանգիստ զննում էր հյուրերի դեմքերը: Բրովկինին տեսնելով, ոչ ռուսավարի տարածեց կարճլիկ ձեռքերը, բերանը ծուռ բացեց:

— Հարգարժան Իոան Արտեմիչ,— երգեցիկ ասաց տատ ատ տատ ու գրկեց տանտիրոջը, եռակի համբուրեց խեղաղը, ասես զատիկ լիներ: Ապա հրաշեկ կեղծամը դեսուդեն ծածանելով, շշնջաց.— Մարտիսենի հետ առայժմ ոչ մի գործ: Հիմա Այեքսանդր Դանիլովիչը կժամանի:

— Ուրախ եմ քեզ տեսնել, Պյոտր Պավլովիչ, ուրախ եմ, համեցիր...

Դեսպանական ատյանի թարգմանիչներից Շաֆիրովն էր, ազգությամբ հրեա: Ցարի հետ արտասահման էր գնացել, բայց մինչ այս աշունը ստվերի մեջ էր: Իսկ հիմա, շվեդական դեսպանությանը կից լինելով, ամեն օր տեսնվում էր Պյոտրի հետ, ու նրան նայում էին որպես ուժ ունեցող մարդու:

— Իոան Արտեմիչ, վաղը համեցիր Կրեմլ, պալատ... Թագավորը հրամայել է Բուրմիստրական պալատից տասը հոգու ներկա գտնվել: Շվեդներից հավատարմագրեր ենք ընդունելու...

— Համաձայնության եկե՞լ են:

— Ոչ, Իոան Արտեմիչ, տեր արքան Ամետարան չի համբուրի շվեդական թագավորի համար...

Նրան լսելով, Բրովկինը շունչը տեղը բերեց, փութով խաչակնքեց:

— Պյոտր Պավլովիչ, ուրեմն, էդ լուրերը ճի՞շտ են:

— Կապրենք, կտեսնենք, Իոան Արտեմիչ, մեծ գործեր են, մեծ գործեր...— ու շրջվեց, գնաց Բոյնոսով օրիորդների մատները համբուրելու՝ օտարերկրյա եղանակով:

Իշխան Ռոման Բորիսովիչը մոայլված նստել էր պատի տակ, աթոռին: Վայել չէր իրեն նման տներում լինել: Մթնած նայում էր աղջիկներին՝ «Տիմար կաչաղակներ: Ո՞վ է սրանց առնելու: Տեր աստված, ի՞նչ դաժան ժամանակներ են: Փո՞ղ, փո՞ղ: Կարծես քամին գրպանիցդ թռցնում ու տանում է... Առավոտից մարդու գլուխը մտածմունքից տրաքում է՝ ինչպես ծայրը ծայրին հասցնի, ինչպես ապրի: Գյուղերից ամեն ինչ քամված է, դա էլ չի բավականացնում: Ինչո՞ւ: Առաջ բավականացնում էր, չէ՞... Էհ, առաջ. լուսամուտի առաջ նստիր, կուզես խնձոր կրծիր, կուզես՝ չէ, զանգերի դողանցը լսիր... Հոր հավիտենական հանգստություն... Փոթորիկ բարձրացավ, եղջուր լցրած մրջնանոցից փախչող մրջյունների պես ցրիվ եկան մարդիկ: Անհասկանալի է.. Ու փո՞ղ, փո՞ղ: Ինչ-որ գործարանե՞ր, կոմպանիանե՞ր»:

Իշխան Ռոմանի կողքը նստած տարեց վաճառական Եվստրատ Մոմոնովը՝ վաճառականական հանքարության առաջին դեմքերից մեկը, մեղմաձայն ճառում էր.

— Չի լինի, տեր իշխան Ռոման Բորիսովիչ, վաճառականավարի էապես ենք մտածում. նեղվում ենք, էլ չի լինում, օտարերկրացիներն ուզածի պես պլոկում են մեզ... Ապրանքը քեզնից չի առնի, սկզբից փոստով գիր կուղարկի, տասնութ օր հետո նրա նամակը կհասնի Համբուրգ, մի տասնութ օր էլ պատասխանը կգա, թե իրենց բորսայում ապրանքի գինն ինչքան է... Իսկ մեր անխելքները մի տարի էլ, երկու տարի էլ մի գնի վրա կանգնած կմնան, բայց էդ տեսակ գին աշխարհում էլ չկա վաղուց: Օտարները մեր հողից վաղուց են պատուհան բացել: Իսկ մենք մնացել ենք փոստում նստած: Չէ, տեր իմ, պատերազմից փախչել չի լինի... Թեկուզ մի փոքր քաղաք, ասենք, Նարվան՝ ցարական հին վոտչինան:

— Փողից տրաքում եք, բայց էլի քիչ է ձեզ՝ վաճառականներիդ,— խորշանքով ասաց Ռոման Բորիսովիչը:— Պատերա՞զմ: Պատերազմը պետական գործ է, ձեր պես ցածրատոհմիկները չէ որ պիտի շինաշփոթի մեջ մտնեն...

— Ճիշտ է, ճիշտ, տեր իմ,— իսկույն համաձայնեց Մոմոնովը,— մեր խեղճ խելքից ենք էդպես խոսում...

Բարալիկ, պայթած երակներով սպիտակուցները Ռոման Բորիսովիչը հառեց նրա վրա. սրան մի տես, հագուստը՝ հասարակ, դեմքը՝ սովորական, բայց փողը կճուճներով է պահում նկուղներում....

— Քանի՞ տղա ունես:

— Վեց, տեր իմ, Բոլորը պսակված են:

Դրսում, գերանաշար փողոցում կառքի անիվներ դղրդացին: Իվան Արտեմիչը նետվեց սանդուղքների մոտ, հյուրերից ոմանք՝ լուսամուտների առաջ: Խոսակցություններն ընդհատվեցին: Խթանների զրնգոց լսվեց թուջե աստիճանների վրա: Տանտիրոջ առաջից ներս մտավ գեներալ- մայոր, պսկովյան նահանգապետ Ալեքսանդր Մենշիկովը՝ կաֆտանի թևածալերը կարմիր էին, ասես թևքերը մինչև արմունկ արյան մեջ էին թաթախված: Ծեմից հյուրերի վրայով սահեցրեց կապտաչ ու սառը, պետական խստությամբ լեցուն հայացքը: Գոլխարկը հանելով, թափով խոնարհվեց իշխանուհիներին: Զախ, գեղեցիկ հոնքը բարձրացրեց, ալարկոտ քմծիծաղով մոտեցավ Սանկային, ճակատը համբուրեց, մատների ծայրին հպվեց, շրջվեց, գլխի կարճ շարժումով ողջունեց հյուրերին:

Ճաշասենյակի դռները բացվեցին: Ալեքսանդր Դանիլովիչը, Բրովկինի ուսը թփթփացնելով, թեքվեց ականջին.

— Սվեշնիկովին ու Շորինին թող, դա գործ չի... Մարտիսենին ոչինչ էլ չենք տա, ինքներս պիտի անենք... Էսօր կխոսես Շաֆիրովի հետ:

4.

Ծվեդական դեսպանությունը քառալուծ տասնչորս կառքով ելավ Դեսպանական նստավայրից: Ամբողջ Իլլինկայի երկայնքով, հրապարակի միջով մինչև կրեմլյան պարիսպը հրացանները պատվի բռնած գինվորական գնդեր էին կանգնած՝ եռանկյունի գլխարկներով, կարճ կափտաններով, սպիտակ գուլպաներով: Հոկտեմբերյան քամին ծածանում էր դրոշները, նիզակների ծայրերի գինանշանները: Կառքերի պատուհաններից շվեդները լրջորեն էին նայում այդ նոր զորքերին:

Սպասսկի դարպասն անցնելուն պես տեսան մի կողմից ձնապատ արկերի կույտեր, պղնձյա հրանոթների՝ երկինք պարզած փողերը, յուրաքանչյուրի մոտ սաժենանոց հասակով ու բեխավոր չորս թնդանոթաձիգներ էին կանգնած, իրենց փարտոցներով, ծխացող պատրույգներով: Գլխադռան մոտ դոնյան հրաշեկ հովատակի վրա անշարժացել էր ծեր գեներալ Գորդոնը: Քամուց փքվել էր նրա կարմիր թիկնոցը, սառցե ձնափոշին կտկտում էր սաղավարտի ու զրահի վրա: Երբ դեսպանական թափորը կանգ առավ, գեներալը բարձրացրեց ձեռքը՝ կրակեցին թնդանոթները, ծխով պարուրվեցին ատյանների մութ լուսամուտները, եկեղեցիների գմբեթները:

Առմուտքի վրա, սեղանապետների պահանջով, դեսպանները հանձնեցին սուսերները: Սեմյոնովական հարյուր գինվոր թագավորական ընծաներն ու նվերները՝ արծաթյա սկահակներ, սափորներ ու գավաթներ բռնած, շարվեցին առմուտքի վրա և նախասրահում բարձրացրեցին շվեդական պատանի թագավոր Կարլոս Տասներկուերորդի՝ փայտյա շքեղ շրջանակով, հասակով մեկ նկարը: Հանդիսավոր քայլքով դեսպանները մտան սեղանատուն պալատ, դռան մոտ հանեցին գլխարկները:

Չորս պատերի տակ օթոցների վրա նստած էին բոյարները, մոսկովյան ազնվականները, երևելի վաճառականներ ու առևտրական մարդիկ: Բոլորը մահուդե սովորական հագուստով էին, շատերը՝ օտարերկրյա զգեստով: Կամարակապ, տուփաձև, պատերին ու առաստաղին ասպետների, թռչունների ու գազանների նկարներով սրահի խորքում, ձկնատամից ու արծաթից պատրաստված գահաթոռի վրա, կուռքի պես աչքերը չռած Պյոտրն էր նստած, անգլխարկ ու անկեղծամ, մոխրագույն մահուդե, լուսանի մորթով բոլորված կաֆտանով: Զախ կողմում Լավրենտի Սվինյինն էր կանգնած՝ ոսկյա թասը ձեռքին, աջ կողմում՝ Վասիլի Վոլկովը պարզած ձեռքերի մեջ սրբիչ էր պահել:

Դեսպանները մոտեցան և գահաստիճանների առաջ փռված գորգի վրա ծալեցին ծնկները: Սվինյինը մոտեցրեց թասը, Պյոտրը, դիմացը նայելով, մատները թաթախեց ջրի մեջ, Վոլկովը սրբեց և դեսպանները մոտեցան ցարի փշփշոտ ձեռքը համբուրելու: Դրանից հետո Պյոտրը վեր կացավ, գլուխը հասավ ամպհովանուն, և ռուսերեն, կոկորդը փքելով, հինավուրց կարգով հարցրեց.

— Ավելորդի Կառոլուս թագավորը ողջ և առո՞ղջ է արդյոք:

Ձեռքը կրծքին սեղմելով և կեղծասի կոտոշավոր խուրձը կողք թեքելով, դեսպանը պատասխանեց, որ տիրոջ ողորմածությամբ թագավորը ողջ և առողջ է ու հարցնում է համայն Մեծ, Փոքր և Սպիտակ և այլն ցարի ողջությունը: Թարգմանիչ Շաֆիրովը, որ շվեդների պես կարճ թիկնոց, ժապավեններով և ազդրերի վրա բացվածքներով մեռաքալա շալվար էր հագել, բարձրաձայն թարգմանեց դեսպանի ասածը: Ուշադրությամբ բերանները բացած, բոյարները զգուշացած վեր թոցրեցին հոնքերը, ականջ դնելով, թե անպատվություն չկա՞ արդյոք թեկուզ մի հատիկ տառի մեջ: Պյոտրը գլխով արեց. «Ողջ և առողջ եմ, շնորհակալ եմ»: Քարտուղարի բռնած թավշյա բարձիկի վրայից վերցնելով ոլորած հավատարմագրերը, դեսպանը ծնկաչոք մատուցեց Պյոտրին: Ցարն ընդունեց և առանց նայելու պարզեց առաջին մինիստր Լև Կիրիլովիչ Նարիշկինին: Վերջինս, ի տարբերություն բոլորի, չափազանց շքեղ էր հագնված՝ ճերմակ ատլաս, թանկարժեք քարեր: Առանց հավատարմագրերը բացելու, Լև Կիրիլովիչը բարձրաձայն ասաց, որ ընդունելությունն ավարտված է:

Դեսպանները, գլուխ տալով, ետ-ետ գնացին դեպի դուռը:

Ըստ երևույթին, դեսպանները սպասում էին, որ հենց այդտեղ, մեծ ընդունելության ժամանակ, գլխավոր հարցը կբարձրացնեն, հանուն որի կես տարի տանջվում էին Մոսկվայում. ի հաստատումն Ծվեդիայի հետ հաշտության պայմանագրի, ցարի կողմից Ավետարանը երդմամբ համբուրելու խնդիրը: Սակայն մի շաբաթ անցավ, մինչև մոսկովյան մինիստրները դեսպաններին կանչեցին արտաքին գործոց Վարչատուն՝ կոնֆերանսի: Պրոկոֆի Վոզնիցինն այնտեղ հայտարարեց շվեդներին ի պատասխան, որ Ծվեդիայի հետ հաշտության նախկին պայմանագրերը Պյոտր ցարը հաստատում է ամբողջ հոգով և երկրորդ անգամ Ավետարանը չի համբուրի, քանզի մեկ անգամ արդեն երդվել է ներկայիս թագավորի հորը: Այնինչ, երիտասարդ Կառլոս թագավորը հարկ է, որ համբուրի Ավետարանը, քանզի նա չի երդվել Պյոտր ցարին: Այդպիսին է թագավորի կամքը, որը հայտարարված է դեսպաններին ու փոփոխվել չի կարող:

Դեսպանները բորբոքվեցին և վիճում էին, բայց նրանց խոսքերը դեմ էին առնում մոսկովցիների փքված զոհոզությանն, ինչպես պատին: Դեսպաններն ասացին, որ առանց թագավորի թույլտվության ոչ մի կերպ չեն կարող ընդունել մշտական հաշտության նման թերի հավատարմագիրը և կգրեն Ստոկհոլմ: Պրոկոֆի Վոզնիցինը, ծերունական աչքերով ժպտալով, պատասխանեց.

— Ստեկոլնա*) տանող ճանապարհը ձեզ հայտնի է, չորս ամիս հետո էլ պատասխան չեք ստանա, ստիպված կլինեք այդքան ժամանակ Մոսկվայում զուր տեղը մնալ, ձեր ծախսով:

Երկրորդ և երրորդ կոնֆերանսներին ամեն ինչ նույնը մնաց: Դեսպանական վարչատունը դադարեց նույնիսկ խոտ բաց թողնել ձիերին: Կերակրվելու համար դեսպանները մանր-մունր բաներ վաճառեցին՝ կեղծամներ, գուլպաներ, կոճակներ: Եվ վերջապես անձնատուր եղան: Կրեմլում, Պյոտր ցարը, լուսնի մորթիով նույն կափտանը հագին, գահի վրա նույն ձևով նստած, ամբաց դեսպաններին հանձնեց իր կողմից չհամբուրած թերի հավատարմագիրը:

Նոյեմբերյան մշուշոտ մի առավոտ կաշեպատ, ցեխակոլոլ մի կառք մոտեցավ Պրեոբրաժենսկի պալատի ետնամուտքին: Թաց մառախուղը էր պատել պալատի արտաքին տանիքները: Առմուտքին անհամբերությամբ բոտֆորտներն էր դոփդոփում Ալեքսանդր Դանիլովիչը: Տեսնելով արմյակը գլխին զգեստ, իր գործին շտապող աղախնին, բղավեց. «Դե՛նը կորի, լրբի մեկը»: Իրեն կորցրած աղջիկը, բոբիկ ոտքերով թաց տերևների վրա սայթաքելով, փախավ:

Կառքից իջան լեհ գեներալ Կառլովիչը և լիֆլյանդական ասպետ Պատկուլը:

— Փառք աստծո,— ասաց Մենշիկովը, ցնցելով նրանց ձեռքերը: Ամայի միջանցքներով ու մկնահոտ բռնած սանդուղքներով վեր բարձրացան: Ալեքսանդր Դանիլովիչը զգուշությամբ մի ցածրիկ դուռ թակեց:

Դուռը բացեց Պյոտրը: Անժպիտ ու լուռ, գլխով արեց: Հյուրերին ներս տարավ ծխապատ, փոքր ննջասենյակը, որը փայլարտպատ մի հատիկ պատուհան ուներ ու հազիվ էր արտացոլում մշուշոտ լույսը:

— Է ինչ, ուրախ եմ, ուրախ եմ,— մրթմրթաց Պյոտրը, ետ գնալով պատուհանի մոտ: Այստեղ անփոռոց փոքր սեղանի, լուսամտագոգի և հատակի վրա թղթի թերթեր էին շաղ եկած, գրքեր, սագի փետուրներ:

— Դանիլիչ...

Պյոտրը թանաքոտ մատը բերանը տարավ.

— Դանիլիչ, էդ փոխատենավորի քիթումոթը փշրելու եմ, էդպես էլ կասես դրան: Գործի անունը մենակ փետուր արելն է, ամբողջ օրը շնթռած է սատանան... Օ՜հ, էս ինչ մարդիկ են, ի՞նչ մարդիկ: (Պատկուլը և Կառլովիչը կանգնել էին սպասողաբար: Պյոտրը սթափվեց:) Դանիլիչ, աթոռ տուր հյուրերին, գլխարկները վերցրու... Ահա... (Եղունգներով խփեց ծուռումուռ գրած թերթիկներին:) Ինչից ենք ստիպված սկսել՝ ազ, բուկի, վեդիից... Մոսկովյան լավ-լավ տներում դմբոներ են մեծանում, բոյները մի-մի սաժեն: Մահակով ենք ստիպված քշել, որ բան սովորեն...Օհ, ի՞նչ մարդիկ են... Պարոն Պատկուլ, անգլիացի Ֆերգարսոնը և Գրենսը նշանավո՞ր գիտնականներ են:

— Լոնդոնում եղած ժամանակ նրանց մասին լսել եմ,— պատասխանեց Պատկուլը,— այնքան էլ նշանավոր չեն, ոչ թե փիլիսոփա, այլ ավելի գործնական գիտություններով են...

— Հենց դա է պետք: Աստվածաբանությունից մեզ ոջիլները կերան... Նավագնացություն, մաթեմատիկական գիտություններ: Հան-

*Ստոկհոլմի հնաոճ անվանումը:

բային գործ, բժշկություն: Սա՛ է մեզ պետք... (Վերցրեց թերթիկներն ու նորից շպրտեց սեղանին:) Մի բան է վատ, ամեն ինչ շտապ-շտապ ենք անում...

Նստեց, ոտքը ոտքին գցեց: Սեղանին կոթնած ծխում էր: Առողջությունից պայթող Կառլովիչը, թնչացնելով, աչքերն էր ճպճպացնում ցարի վրա: Պատկուլը խոժոռված ցած էր նայում: Ալեքսանդր Դանիլովիչը զուսպ հազաց: Ծխամորճը բռնած Պյոտրի ձեռքը դողաց:

— Հը՞, գրել բերե՞լ եք:

— Գաղտնի տրակտատ ենք գրել ու բերել ենք,— հաստատաձայն ասաց Պատկուլը, գունատ դեմքը բարձրացնելով:— Հրամայեք պարոն Կառլովիչին կարդալ:

— Կարդացեք:

Մենշիկովը մոտեցավ ոտնաթաթերի վրա: Երկնագույն ու ոչ մեծ մի թուղթ հանեց Կառլովիչը, աչքերից հեռու բռնեց, լարումից կարմրած սկսեց կարդալ.

«Անարդար կարգով գրված հողերը Ծվեդիայից նվաճելու և ռուսական իշխանությունը Բալթիական ծովում կայունացնելու գործում Իսուսաստանյան թագավորին աջակցելու համար լեհական թագավորը շվեդական թագավորի դեմ պատերազմ կսկսի սաքսոնյան զորքերը Լիֆլյանդիա և Էստլյանդիա մտցնելով, խոստանալով խզման հանգեցնել նաև Լեհական Ռժեչ Պոսպոլիտան: Ցարն իր հերթին ռազմական գործողություններ կծավալի Ինգրիայում և Կարելիայում, Թուրքիայի հետ հաշտություն կնքելուց անմիջապես հետո, ոչ ուշ, քան 1700 թվականի ապրիլը, իսկ մինչ այդ անհրաժեշտության դեպքում, լեհական թագավորին օժանդակ զորք կուղարկի, վարձկան զորքի անվան տակ: Դաշնակիցները պայմանավորվում են թշնամու հետ առանձին բանակցությունների մեջ չմտնել և միմյանց չդավաճանել: Սույն պայմանագիրը անթափանց գաղտնիք է համարվում»:

Չորացած շրթունքները լպստելով, Պյոտրը հարցրեց.

— Վե՞րջ:

— Վերջ, ձերդ մեծություն:

Պատկուլն ասաց.

— Ձերդ մեծության համաձայնությունը ստանալով, վաղն ևեթ մեկնում եմ Վարշավա և հույս ունեմ դեկտեմբերի կեսերին բերել Ավգուստ թագավորի հավաստի ստորագրությունը:

Տարօրինակ եղանակով՝ այն աստիճան ակնապիշ, որ արցունք հայտնվեց աչքերի մեջ, Պյոտրը նայում էր նրա դեղնավուն, սևեռ աչքերին: Շրթունքները ծուվեցին քմծիծաղից.

— Մեծ գործ է... Է ինչ.. Մեկնիր, Յոհան Պատկուլ...

5.

Տաճարի աշտարակին ժամացույցը խուլ զարկեց տասներկու անգամ: Իրենց հարգող քաղաքացիները պատրաստվում էին կեսօրվա ճաշին: Սենատորները ելան նիստերի դահլիճի իրենց բազկաթոռներից: Առատրականները կողպեցին իրանութների դռները: Արհեստագործի վարպետը, գործիքները մի կողմ դնելով, ասաց ենթավարպետներին. «Ձեռքներդ լվացեք, զավակներս, և անցեք աղոթելու»: Ծեր արիստոկրատը ակնոցը հանեց և տխուր աչքերը տրորելով, հանդիսավոր բայլքով մտավ երբեմնի փառքի ծխից սևացած ճաշասրահը: Ջինվորներն ու նավաստիները զվարթ խմբերով շարժվեցին դեպի պանդոկները, ուր դռներից վեր կախ արած, ախորժաբեր բուրեր էին ափում երշիկների կապուկները կամ ապխտած ազդրամսերը:

Քաղաքում թերևս մի մարդ կար, որ չէր ենթարկվում բանակցության ձայնին՝ Կառլոս Տասներկուերորդ թագավորը: Ծոկոլադի բաժակը սառչում էր անկողնու մոտ դրված սեղանիկին, հոնոսյան ոսկեգույն գինով լի շշերի արանքում: Բարձրադիր լուսամուտների բեհեզե վարագույրները բաց էին: Պարտեզում ձյուն էր իջնում դեռևս կանաչ, գնդաձև, բրգաձև, ուղղանկյունաձև խուզված թփուտների վրա: Բուխարու հայելին արտացոլում էր ձյան լույսը, վառված մոմերի մշնացորդներով երկու աշտանակ էլ էին արտացոլված: Ճոնտում էին կեչու փայտերը: Թագավորի շալվարը կախված էր անկողնու ներքևի ոսկյա կուպիդոնի գլխից: Մետաքսյա շրջազգեստներ ու կանացի սպիտակեղեն էր ցրիվ եկած աթոռակների վրա:

Բազուկը բարձին հենած թագավորը Ռասին էր կարդում բարձրաձայն: Տուների արանքում ձեռքը մեկնում էր հոնոսյան բուրումնավետ գինով լի գավաթին: Կողքին, մգդակած վերմակը քթին քաշած, սևահեր մի կին էր նիրհում՝ գանգուրները ափված էին, շպարը սրբվել էր, դեմքը դեղնավուն էր թվում, համարյա գավաթի գինու պես:

Իր արկածներով հոչակված, թեթևաբարո Ատալիան էր, կոմտուհի Դեսմոնտը: Նրա կյանքի ուղին ոլոր-մոլոր էր, չոչիկի թռիչքի պես: Միևնույն նրբագեղությամբ պալատական զգեստ էր կրում նա, դերասանուհու հագուստ և գվարդիական սպայի կոլետ: Կայսերական կամ թագավորական ուտիկանության բարկացնող հետաքրքրասիրությունից խույս տալու համար կարող էր պարանասանդուղքով իջնել լուսամուտից: Նա երգում էր վիեննական օպերայում, սակայն հանելուկային հանգամանքներում կորցրեց ձայնը: Պարել էր Մոլիերի բեմադրած ֆեերիայում, Լյուդովիկոս Տասնչորսերորդի առաջ: Հրացանակրի զգեստով ուղեկցել էր մարշալ Լյուքսամբուրին՝ Ֆլանդրիական քաղաքների պաշարման ժամանակ, պատմում էին, որ Նամյուրը գրավելուց հետո նրա ճամփորդական պայուսակը թանկարժեք քարերով էր լցվել: Ըստ երևույթին, ֆրանսիական արքունիքի պրնդմամբ, հայտնվել էր Լոնդոնում, անգլիացիներին ապշեցնելով իր ձիերով ու հանդերձներով: Անգլիայի մի քանի պերեր էին գերվել նրա հմայքին, վերջապես հերցոգ Մալբորոն՝ խիզախ ու գեղեցկատես մի տղամարդ: Սակայն կոմսուհուն հասկացրել էին, որ հերցոգուհի Մալբորոն խորհուրդ է տալիս նրան թողնել Լոնդոնն առաջին իսկ նավով: Ի վերջո, արկածների հողմը նրան հասցրել էր շվեդական թագավորի անկողինը:

— Սեր, սեր,— ասաց Կառլոսը, ձեռքը մեկնելով շշին,— ու կոր-

կին սեր... Վերջիվերջո, դա ճանձրացնում է: Ռասինը հոգնեցնող է: Միրմիդոնյան արքա Պյուրոսը, հավանորեն, վատ կովող չի եղել, բայց հինգ գործողություն շարունակ տարաբախտ դատարկություններ է ճամարտակում... Ես գերադասում եմ Պլուտարքոսի կենսագրությունը կամ Կեսարի հիշողությունները: Գինի կուզե՞ս:

Առանց աչքերը բացելու, կոմսուհին պատասխանեց.

— Ինձ հանգիստ թողեք, ձերդ մեծություն, գլուխս պայթում է, ըստ երևույթին, սա իմ վերջին օրն է:

Կաղլոսը քթի տակ ծիծաղեց, մի կում խմեց գավաթից: Դուռը կամացուկ բախեցին: Հայացքը գրքին հառելով, նա ծուլորեն ասաց.

— Մտեք:

Մետաքսյա հագուստը խշխշացնելով, ներս եկավ ժպտադեմ բարոն Բերկենգելմը, նորին մեծության կամեր-յունկերը: Փոքր բուշտով, վեր ցցած քիթը թվում էր թե ամենաթարմ նորությունները հայտնելու պատրաստակամություն էր արտահայտում:

Նա գլուխ խոնարհեց արքայական շալվարին և դյուրահաճ արտահայտություններով պատմել սկսեց պալատական աննշան անցուդարձից: Նրա քննախույզ մտքից ոչինչ վրիպել չէր կարող, անգամ այնպիսի մանրուք, ինչպիսին այս գիշեր առաքինի պալատական տիկին Աննա Բոշտրեմի ննջասենյակի կասկածելի շշուկներն էին: Աջ կողին շրջվելով, Ատալին տնքտնքաց.

— Տեր աստված, տեր աստված, ի՞նչ հիմարություն...

Բարոնը չշփոթվեց, ըստ երևույթին, էական բան ուներ նախապատրաստած:

— Այսօր առավոտյան ինձնին խանութպանները նոր հանրագիր են հանձնել սենատ՝ գահաթերթի վերանայման մասին... (Կաղլոսը թնչացրեց քթով:) Այդ բյուրգ-ների անկշռությունը սահման չունի: Հենց նոր տեսա ֆրանսիական դեսպանին՝ անգլիական հոյակապ քերթեներով գնում էր նապաստակ որսալու նոր եկած ձյան վրա... Ի՞նչ հովատակ ունի: Այն, որ թղթախաղում է տարել Ռենշելդից... Պատմեցի, դեսպանն ուսերը թոթվեց. «Հուգենոտների ակնհայտ նենգություններն են,— այսպես ասաց,— այդ խանութպաններն ու արհեստավորները ցրիվ են եկել Եվրոպայով մեկ: Ֆրանսիայից վաթսուն միլիոն լիվր են դուրս տարել... Ամենուրեք, որտեղ հնարավոր է, այդ հերետիկոսները իրենցն են պնդում, թագավորական իշխանության բուն սկզբունքն են խարխլում: Բոլորը գաղտնի կապերի մեջ են՝ Ծվեյցարիայում, Անգլիայում, Նիդեռլանդներում և մեզ մոտ... Յուրաքանչյուր առիթ օգտագործում են բյուրգերների մեջ ատելություն սերմանելու ազնվականության և թագավորների հանդեպ...»:

— Է՞լ ինչ ես իմացել,— մռայլ հարցրեց Կաղլոսը:

— Անշուշտ, եղա սենատում... Այսօրվա հանրագիրը պատրվակներից մեկն է միայն: Մի քանիսի հետ խոսեցի միջանցքներում: Նրանք օրենք են նախապատրաստում՝ պատերազմ հայտարարելու թագավորական իրավունքի սահմանափակման մասին:

Կաղլոսը մոլեգնած փակեց Ռասինի «Անդրոմաքեն»: Գիրքը շրխկոցով նստեց, վերմակը վրան քաշելով:

— Ես հարցնում եմ, թե ի՞նչ ես իմացել այսօր: (Բերկենգելմը աչքերով ցույց տվեց կոմսուհու գանգրամազ ծոծրակը:) Հիմարությո՞ւն... Այստեղ ավելորդ ականջ չկա, խոսիր...

— Երեկ առևտրական նավով Ռիգայից մի ազնվական է ժամանել... Ինձ դեռ չի հաջողվել նրան տեսնել.... Պատմում է, եթե միայն կարելի է հավատալ, պատմում է նա, իբր Պատկուլը Մոսկվայում է հայտնվել անսպասելիորեն...

Կոմսուհու ծոծրակը կտրվեց բարձից: Կաղլոսը կնեց շրթունքը.

— Գնա, ինձ մոտ հրավիրիր կոմս Պիպերին:

Բերկենգելմը թևիկների պես թափահարեց ժանեկազարդ դաստակները և գորգի վրայով դուրս թռավ: Կաղլոսը նայում էր դրսում իջնող ձյանը: Բարձր ճակատով, կանացի շրթունքներով ու երկար քթով նեղ դեմքն անգույն էր, ինչպես ձմռան օրը: Նա չէր նկատում կոմսուհու՝ մազափնջի տակից փայլող հեգնական աչքերը: Հետևելով ձյան փաթիլներին, ինքն իր մեջ նոր զգացողություններ էր գտնում. մոտալուտ փոթորկում զայրույթ և հաշվենկատ զգուշավորություն: Երբ ծանր ոտնաձայն լսվեց դռան ետևում, նա առավ բարձը և շպրտեց կոմսուհու գլխին:

— Ծածկվեք, ես մենակ պիտի լինեմ:

Շապիկը շտկեց, առավ վաղուց սառած շոկոլադի բաժակը (ֆրանսիական արքունիքի սովորույթներին հետևելով, թագավորներին շոկոլադ էին մատուցում անկողնու մեջ:)

— Մտեք:

Ներս եկավ գաղտնի խորհրդական Կաղլոս Պիպերը, ում վերջերս էր կոմսի տիտղոս շնորհել՝ թիկնեղ, հաստոտն, հագնված էր խնամքով, փորձառու աստիճանավորի անտարբեր, ճմրթված, զգուշավոր դեմք ուներ: Սառը հայացք նետելով վրան, թագավորն ասաց.

— Ես հարկադրված եմ նորություններ իմանալ պալատական բանասարկուներից:

— Տեր արքա, նրանք ինձնից են իմանում:— Պիպերը երբեք չէր ժպտում, երբեք չէր կորցնում հոգեկան հավասարակշռությունը, բյուրգերական ոտքերը ցանկացած նավահոսումին կարող էին դիմանալ:— Բայց նրանք իմանում են սոսկ այն, ինչ ես եմ հարկ համարում մատուցել պալատական դատարկախոսության համար:

— Պատկուլը Մոսկվայո՞ւմ է: (Պիպերը լուռ էր: Կաղլոսը ձայնը բարձրացրեց:) Եթե թագավորը ձնացնում է, որ ինքը մենակ է, ուրեմն նա մենակ է՝ երկրի և երկնքի համար, գրողը տանի...

— Այո, տեր արքա, Պատկուլը Մոսկվայում է, նշանավոր արկածախնդիր գեներալ Կաղլովիչի հետ:

— Ի՞նչ են անում այնտեղ:

— Կարելի է կռահել: Ստույգ տեղեկություններ առայժմ չունեմ:

— Բայց Մոսկվայում մեր դեսպանությո՞ւնն է նստած...

— Դեսպանություն, որն ուղարկված է սենատի պնդումով: Պա-

թոնայք սենատորները Արևելքում ամեն գնով հաշտություն են ուզում, թող ուրեմն ձեռք բերեն իրենց իսկ միջոցներով: Մենք համենայն դեպս դրա համար և ոչ մի ֆարտինգ չենք տվել ձեր գանձարանից:

— Կուզենայի այդ ֆարտինգը պլոկել իմ գանձարանից,— ասաց Կաղլոսը:— Լսե՞լ եք նոր հանրագրի մասին: Լսե՞լ եք, թե ինձ համար ինչ են նախապատրաստում պարոնայք սենատորները: (Պիպերը թոթվեց ուսերը: Կաղլոսը շտապով գավաթը դրեց սեղանիկին:) Ձեզ հայտնի՞ է, որ այլևս չեմ կամենում հնազանդ ավանակի դեր խաղալ: Ի շահ այդ ձանձրալի ժլատների, հայրս սնանկացրեց ազնվականությունը: Այժմ էլ այդ «հուգենոտները» ցանկանում են ինձնից անխոս խրտվիլակ սարքել... Սխալվո՞ւմ են նրանք... (Նեղ դեմքը վերուվարեց՝ Պիպերին նայելով:) Այո՛, այո՛, սխալվում են նրանք: Ինչ ասելու եք, գիտեմ, կոմս Պիպեր՝ խենթ ու խելառ եմ, գրպանս դատարկ է ու գեշ համբավ ունեմ... Կեսարը Հռոմին տիրեց Անդրալպիական Գաղիայում տարած հաղթանակների միջոցով: Կեսարն ինձնից պակաս չէր սիրում կանանց, գինի և ամեն տեսակ այլանդակություն... Հանգստացեք, ես չեմ պատրաստվում ձի նստած մտնել ու գրավել մեր հույժ պատվելի սենատը: Եվրոպայում բավականաչափ տեղեր կան փառք նվաճելու համար... (Ծրթունքները կրծեց:) Եթե Կաղլովիչը Մոսկվայում է, ուրեմն, մենք գործ ունենք Ավգուստ թագավորի հետ:

— Կարծում եմ, ոչ միայն նրա հետ:

— Այսի՞նքն:

— Մեր դեմ կոալիցիա կա, եթե չեմ սխալվում...

— Ավելի լավ... Իսկ ովքե՞ր:

— Ես տեղեկություններ եմ հավաքում:

— Շատ լավ: Թող սենատն իր համար մտածի, մենք մեզ համար կմտածենք... Այլևս ոչինչ չունե՞ք հայտնելու: Ծնորհակալ եմ, ինձ այլևս պետք չեք...

Պիպերն անվարժ խոնարհվեց ու դուրս գնաց, փոքր-ինչ շփոթված. թագավորն ում ասես կարող էր շփոթեցնել մտքի անսպասելի շրջադարձերով: Պիպերը զգուշությամբ էր նախապատրաստում պայքարը սենատի դեմ, որն աշխարհում ամենից շատ վախենում էր ռազմական ծախսերից: Կարճ դադարից հետո վերստին պատերազմի բարկ հոտ էր գալիս Հռենոսից մինչև Մերձալպիկա: Պատերազմը իշխանություն նվաճելու միակ ճանապարհն է՝ դա հասկանում էր Կաղլոսը, սակայն խիստ տաքարյուն ու անժամանակ էր կռվի մեջ մտնում. միայն հահիոմնությունը դեռևս քիչ էր:

Նենջասենյակի դռան առաջ, միջանցքում կոմս Պիպերը բռնեց Բերկենգելմի բազուկը և մտահոգ ասաց.

— Աշխատեք զբաղեցնել թագավորին: Մեծ որս ձեռնարկեք, մի քանի օրով մեկնեք Ստոկհոլմից... Ես դրամ կգտնեմ...

Կաղլոսը դեռ նստած էր անկողնու վրա, բիբերը լայնացած էին՝ երևակայական իրադարձություններին նայող մարդու պես: Ատալին բարկացած շպրտեց գլխի վրայի բարձը և ատամներով գիշերաշապիկը բռնած ուղղեց մազերը: Նա գեղեցիկ ձեռքեր ուներ և թխամաշկ ուսեր: Վերջապես մշկաբույրը գրավեց թագավորի ուշադրությունը:

— Դուք ճանաչո՞ւմ եք Ավգուստ թագավորին,— հարցրեց նա: (Ատալին իր կլոր ու սևավուն աչքերի դատարկ հայացքը հառեց նրա վրա:) Հավատացնում են, թե նա Եվրոպայի ամենափայլուն կավալերն է, ճակատագրի ընտրյալը: Ամեն անգամ չորս հարյուր հազար գլոտի է ծախսում դիմակահանդեսների և հրավառությունների վրա: Պիպերն ինձ երդվել է, իբր մի անգամ Ավգուստն իմ մասին ասել է, թե ես թաղվել եմ հորս բոտֆորտների մեջ, ու լավ կլիներ շլինքիցս բռնած ինձ դուրս քաշել ու ճիպոտահար անել...

Ատալին ատամների արանքից բաց թողեց գիշերաշապկի ժանյակը և զվարթ, քիչ խոպոտ ձայնով անհոգ ծիծաղեց: Կաղլոսի կոպը թրթռաց:

— Իսկ ես ասում եմ, որ սրամիտ է Ավգուստը և փայլուն... Սաքսոնացի տասը հազար հետևակ ունի՝ սեփական զորք և լայն ծրագրումներ: Հապա ինչ, Ծկեդիան, նոր բոտֆորտների մեջ թաղված նրանման մի թագավորով հանդերձ, անպաշտպան է ոչխարի պես.. Այնուամենայնիվ, ես կուզենայի հանդիպել ինձ, հիշեցնելով սույն անեկդոտը Ավգուստին, երբ իմ դրագունները, նրա ձեռքերը մեջքին կապած, վրանս քարշ կտան...

— Բռավո, տղա,— ասաց Ատալին:— Բոլոր ձեռնարկումներիդ հաջողության կենացը:— Մի լավ ումպ հոնեոսյան խմեց նա, շուրթերը սրբելով սավանի ժանյակով:

Կաղլոսը վերմակի տակից դուրս թռավ, ոտաբոբիկ, երկար, կրունկներին հասնող շապկով արագ մոտեցավ գրասեղանին, գաղտնի արկղից մի տուփ հանեց՝ մեջը ադամանդյա գլխազարդ: Պպզելով անկողնու մոտ, զարդը դրեց Ատալիի սև գանգուրներին.

— Դու հավատարիմ կլինե՞ս ինձ:

— Ամենայն հավանականությամբ, ձերդ մեծություն. դուք համարյա երկու անգամ փոքր եք ինձնից, մեկ-մեկ մոր զգացում եմ տածում ձեր հանդեպ:— Նա համբուրեց թագավորի քիթը (քանի որ շուրթերին ամենամոտը դա էր) և քնքուշ ծպիտով խաղացրեց գլխազարդը:

— Ատալի, ես ուզում եմ, որ դու Վարշավա գնաս... Մի քանի օր հետո «Օլափը» ճամփա է ընկնում, սքանչելի նավ է: Ափ կիջնես Ռիգայում: Ձիեր, կառք, մարդիկ, փող՝ ամեն ինչ նախապատրաստված կլինի: Ցուրաքանչյուր փոստի հետ ինձ նամակ կուղարկես...

Ատալին ուշադիր հետաքրքրությամբ նայում էր պատանեկան աչքերին, որոնք ջինջ էին, սևեռ, և՝ սատանաի գիտե այդ հյուսիսային, մոխրաշրագույն աչքերը, խորքերում խելացնոր վճռականություն կար: Տղան հույսեր էր ներշնչում: Հին սովորությամբ, որ դեռ մարշալ Լյուքսամբուրի հետ արշավների ժամանակ էր ձեռք բերել, Ատալին կամացուկ սուլեց.

— Ձերդ մեծություն, դուք ուզում եք, որ ես Ավգուստ թագավորի անկողի՞նը մտնեմ:

Կառլոսն իսկույն ետ գնաց բուխարու մոտ, ձեռքերը կողերին կանթեց, կոպերը կիսախուփ էին, ասես հոգնածությունից.

— Ցանկացած դավաճանություն ես ձեզ կներեմ... Բայց եթե դա՛ եղավ, սուրբ Ավետարանով եմ երդվում, որտեղ էլ թաքնվեք, կգտնեմ ու կպատեմ:

6.

Կիտայ-գորոդում Բրովկինների բացի ուրիշ բանից չէին խոսում: Պյոտր Ալեքսեևիչը, ինչպես միշտ, հանկարծակի ոգևորվել էր. կըրտսեր իշխանուհի Բուլգնոսովային, որը Ռյուրիկի տոհմից էր սերում, ամուսնացնել Արտամոշկա Բրովկինի հետ: Բոլոր գործերը թողեց: Մինիատուրները և բոյարները զուր էին պալատ գալիս, մի պատասխան էին ստանում. «Թագավորը հայտնի չէ, թե ուր է»:

Մի երեկո, երբ արդեն արգելապատերն էին դնում փողոցներում, կառքով եկավ Բրովկինի տուն: Իվան Արտեմիչը նստած էր ներքևում, խոհանոցում, ճարպամոմի լույսի տակ մուժիկների հետ թուղթ էր խաղում. սիրում էր զբաղվել հին սովորությամբ: Հանկարծ ցածրիկ դռնակից, կռանալով, մի գլուխ նայեց ներս, եռանկյունին դրած: Սկզբում կարծեցին պահեստները հսկող զինվոր է, եկել է տաքանալու: Քարացան: Պյոտր Ալեքսեևիչը քթի տակ ծիծաղեց, ոտից գլուխ տանտիրոջը զննելով. տեսքը մի բան չէր՝ նապաստակի կիսամաշ կացավելկայով, ալեխառն գլուխը վախից ուսերի մեջ քաշած:

Պյոտր Ալեքսեևիչը կկաս ուզեց: Նստեց թախտին: Մուժիկների և գործակատարների ներկայությամբ այսպես ասաց.

— Իվան, մի անգամ խնամախոս եկել եմ քո տուն: Մի անգամ էլ եմ ուզում: Գլուխ տուր:

Իվան Արտեմիչը, ամբողջովին հալված, առանց երկար խոսելու, ընկավ հողե հատակին, թագավորի ոտքերը:

— Իվան,— ասաց Պյոտր Ալեքսեևիչը,— տղայիդ կանչիր:

Արտամոշկան այդտեղ էր արդեն, վառարանի ետևը: Պյոտր Ալեքսեևիչը կանգնեցրեց նրան ծնկների արանքում, ուշադիր զննում էր:

— Իվան, էս ի՞նչ ես արել, էս տեսակ ջահելին թաքցրել ես ինձանից: Ես ինձ կոտորում եմ, իսկ սրանք՝ ահա՛...— Ու դիմեց Արտամոնին:— Գրել կարդալ գիտե՞ս:

Արտամոշկան միայն թեթևակի գունատվեց և ֆրանսերեն, առանց կմկմալու, բլբլացրեց.

— Գիտեմ ֆրանսերեն ու գերմաներեն, գրում ու կարդում եմ վարժ... (Պյոտր Ալեքսեևիչը բերանը բացեց. «Տե՛ր աստված: Մի հա՛տ էլ»:)— Արտամոշկան նույնը գերմաներեն ասաց: Աչքը կկոցեց մոմի վրա, և հոլանդերեն՝ բայց արդեն կմկմալով:

Պյոտր Ալեքսեևիչը սկսեց համբուրել նրան, թփթփացնել մեջքին, բոթթում էր ու գիրկը քաշում, ցնցելով:

— Մի տեսեք է՞: Այ շա՜տ ապրես դու: Ա՛խ, ա՛խ: Դե, Իվան, շնորհակալ եմ, լավ նվեր արեցիր: Տղայիդ արդեն մնաս բարով ասա, ախպերս: Բայց չեք փոշմանի. համբերեք, շուտով խելքի համար կոմսի տիտղոս եմ շնորհելու...

Հրամայեց ընթրիք տան: Իվան Արտեմիչն աղաչում էր վերև բարձրանալ՝ հյուրասենյակ. էստեղ վայել չէ: Շտապ-շտապ, վառարանի ետևում կեղծամն էր դրել, կանգուր հագել: Ծածուկ մի ծառա ուղարկեց՝ Սանկային կանչելու: Դռան մոտ կանգնեց մաժորդոմը, արծաթյա գոնդը գավազանի գլխին: Պյոտր Ալեքսեևիչը մենակ բրբջում էր.

— Վերև եկողը չեմ: Էստեղ ավելի տաք է:— Դարձավ խոհարարուհուն:— Այ կնիկ, տես ինչ ունես, վառարանից հանի, բեր...

Կողքը նստեցրեց Արտամոշկային, հետը գերմաներեն էր խոսում: Կատակում էր: Օդի էր հյուրասիրում գործակատարներին ու մուժիկներին: Հրամայեց երգ ասեն: Տարեց մուժիկները, դռան մոտ կանգնած (ուրիշ տեղ չկար), ձգեցին արջի ձայներով: Հանկարծ խոհանոց խուժեց Սանկան՝ շպարված, ուսերը մերկ, մետաքսի մեջ կորած: Պյոտրը բռնեց նրա ձեռքերը, մյուս կողքը նստեցրեց: Առանց քաշվելու, Սանկան ձայնակցեց մուժիկներին ձիգ ու քնքուշ ձայնով, մոմը մոտեցրեց դեմքին և Պյոտրին էր նայում՝ խաղացկուն, թափանցիկ... Կեսգիշերն անց դեռ քեֆ էին անում:

Առավոտյան Պյոտր Ալեքսեևիչը ընկերների հետ գնաց իշխան Բուլգնոսովի մոտ՝ Նատալյային հարսնախոս: Եվ այդպես մի շաբաթ գնում-գալիս, պայմանավորվում էին. մեկ Բրովկինների տուն, մեկ Բուլգնոսովների տուն, հիսունից ավելի մարդ ման ածելով հետները: Պայմանավորվում էին, խնջույքներ անում՝ տաշտադրեքով ու փեսաքեֆով, Աստվածածնին աղմկոտ հարսանիք արեցին: Բավական թանկ նստեց այդ հարսանիքը Իվան Արտեմիչի վրա:

Երկու շաբաթ անց Սանկան ամուսնու հետ ուղևորվեց Փարիզ:

Մինչև Վյազմա գումակների հետ էին գնում, դանդաղ: Ձիերը երկար կերակրում էին յամաներում: Անագին ձյուն էր եկել, օրերը պարզկա էին, ճանապարհը՝ հեշտ:

Վյազմայի իշևանատանը Ալեքսանդրա Իվանովնան կովեց ամուսնու հետ: Վասիլին մտադիր էր հանգստանալ այստեղ, բանիք գընալ, հաջորդ օրը ցերեկային ժամերգությունից հետո ճաշել վոյեվոդայի՝ հեռավոր ազգականի տանը: Նաև՝ ձիերը պայտել, նաև՝ հագարումի գործ:

— Ուզում եմ շուտ գնանք: Հոգիս մաշվեց ճանապարհի վրա,— ամուսնուն ասաց Ալեքսանդրա Իվանովնան:— Ռիգայում կհանգստանանք:

— Սաշա: Քեզ բան եմ ասում՝ Վյազմայից դենը վտանգավոր է: Գումակները խմբվում, հինգ հարյուրի չափ սահնակներով են գնում, որ անցնեն անվնաս...

— Ոչինչ լսել չեմ ուզում...

Ընթրիքի էին նստած կանթեղներով լուսավորված մաքուր վերնասենյակում: Վասիլին ճամփորդական, կոճակներն արձակ կիսամուշտակով էր, Ալեքսանդրա Իվանովնան շագանակագույն թավշյա երկարաթևք զգեստով, փետրաբրդի շալն ուսերին, խարտյաշ մազերը հյուսք էր արել, գլխի շուրջը փաթաթել: Չէր ուտում, հացի կտորներ էր պոկոտում միայն: Դեմքը սմքած էր, աչքերի տակ՝ ստվերներ. անհամբերությունից էր: Տեր աստված, էս տեսակ մա՞րդ կլինի:

Դժկամությամբ ծամելով աղ դրած միսը, Վոլկովն ասաց.

— Ինձ ասա, թե ի՞նչ մարդ ես դու: Սա ի՞նչ պատիժ էր: Ոչ հանգիստ կա, ոչ դադար, ոչ ուտում ես, ոչ խմում, մարդավարի չես խոսում... Աշխարհի ծայրն ես թռչում՝ ինչի՞ համար: Թագավորների հետ միևնույնտներ պարելո՞ւ: Բայց մի տես, նրանք կուզենա՞ն...

— Էնքան որ իջևանատանն ենք, մենակ դրա համար եմ քեզ լսում:

Վասիլին իջեցրեց մսի կտորով պատառաքաղը, երկար նայում էր կնոջ ճակատին, բարձր, կարոտից ու երազանքից կորացած հոնքերին, մուգ կապույտ աչքերին, որոնք թափառում էին սատանան գիտե, թե որտեղ...

— Օխ, Ալեքսանդրա, ես սուսուփուս ու համբերատար մարդ եմ...

— Կուզես գոռա, ինձ ինչ...

Վասիլին գլուխն օրորեց կշտամբանքով: Ամոթ էր ու կարծես պատճառ էլ չկար, բայց սիրում էր կնոջը: Վիճելիս, հենց Սանկան սկսում էր վիրավորական խոսքեր տեղալ, իրեն կորցնում էր: Հիմա էլ էր այդպես. հասկանում էր, որ զիջելու է, թեև միայն անգլուխ խելագարը սիրտ կաներ առանց հուսալի ուղեկիցների, անտառներով Սմոլենսկ գնալ Վյազմայից: Սարսափելի բաներ էին պատմում այդ տեղերի մասին. գնացող ելողին թալանում ու սպանում էր ատաման Եմելն Սոկոլը: Ասենք, ցերեկով ես գնում: Մեկ էլ կտեսնես ճամփամիջին գդակով ու տրեխավոր մի ածդահա է կանգնած, դաշույնը գոտիկը խրած: Բերանը մինչև ականջները բացած, ատամները՝ խոշոր-խոշոր: Որ սուլեց, ձիերը կճկոեն: Ասել է թե աղոթքդ արա մեռնելուց առաջ:

— Ավազակներից թե վախենայի, կնստեի-կմնայի Մոսկվայում,— ասաց Ալեքսանդրա Իվանովնան:— Մեր ձիերը լավն են, կանցնենք: Մեկ էլ՝ ավելի լավ, պատմելու բան կունենանք: Մարդկանց հետ հո չե՞մ խոսելու, թե ոնց էիր խոմփացնում իջևանատներում:

Հրեց պնակն ու կանչեց կալմիկուհի աղախնին, կարգադրեց տետրը բերել ու անկողինը բացել: Տետրը, որ եղբայրը՝ Արտամոշան էր գրել, թարգմանություն էր Սամուիլ Պուֆֆենդորֆի պատմությունից, գաղղիացիների մասին գլուխը: Դրեց ծնկներին ու կռացած կարդում էր: Ջեռքն այտին հենած, Վասիլին նայում էր Սանկայի գեղեցիկ գլխին, խուճուճ մազերով պարանոցին: Յոթ սար, յոթ ձոր հեռուներից եկած թագուհո՞ւն տեսեք: Վաղո՞ւց էր, որ հունձ էր անում ու թրիք կրում: Արի ու տես, որ Փարիզ էլ կմտնի անվախ, աներկյուղ ու դեռ թագավորին էլ զանազան անմիտ բաներ կասի... Ա՛հ, Սանչա, Սանչա, խաղաղվեիր ու ցմփորանայիր, ինչ կլանք կլիներ միասին՝ տան մեջ, հանգի՞ստ...

Շրթունքները շարժելով, Սանկան կարդում էր.

«...Բացի դրանից, ֆրանսիացիք զվարթամիտ մարդիկ են, ամենայն գործի պատրաստական, ձեռնհաս և դյուրահաղորդ, ամենից առավել արդուզարդի և մարմնական շարժմունքի մեջ, ու բնական գեղեցկությունն է նրանց մեջ երևում: Շատերը նրանցից Վեներայի հեշտանքն ու կանացի սեռի գեղեցիկ անձանց գիրկը իրենց փառքն են համարում և այդ ամենը մեծագույն գովասանքի արժանի իրականացնում: Իսկ երբ այլ ազգեր կամենում են նրանց նմանվել ու ընդօրինակել, իրենք իրենց են պատվազուրկ անում և ծաղրի առարկա դառնում...»:

— Փոխանակ էդպես նստել ես (Սանկան բարձրացրեց գլուխը, Վասիլին պատրաստվել էր հորանջել՝ ցնցվեց)... Ճամփին գոնե սուրդ բանեցնեիր, վարժվեիր...

— Ինչի՞ համար:

— Հասնես Փարիզ, կիմանաս՝ ինչի...

— Դե, հարմը լրիվ հանեցիր,— Վասիլին զայրացավ, ելավ սեղանից, գլխարկը դրեց, բակ իջավ՝ ձիերին գլուխ քաշելու: Մշուշված լուսինը բարձրացել էր մարագների ձնապատ կտուրների վրա: Երկրնքում մի հատիկ աստղ չկար, միայն սառած ասղիկներ էին իջնում, պսպղալով: Մեղմ քամին թեթևակի սառեցնում էր քթի մազերը: Ծածկի տակ, սև ստվերի մեջ ձիերն էին դրճացնում: Հարևան ծամատան կողքին գիշերապահակը թակն էր զարկում ծուլաբար:

Մի շուն մոտեցավ Վասիլիին, հոտոտեց նրա բարձր, բծանախշ վալենկան, և մոութը վեր ցցած, նայում էր, կարծես ինչ-որ բանի սպասելով, զարմացած: Հանկարծ Վասիլին այնպես չուզեց Փարիզ գնալ այս հարազատ անդորրից... Վալենկաները ճոճոացնելով, տրորտված շրջվեց՝ վերևից, գերանակապ վերնասենյակի փայլարապատ լուսամուտից մեղմ լույս էր ափվում. Սանկան Պուֆֆենդորֆ էր կարդում... Մարն ինչ՝ դատապարտված էր:

Բոսորագույն մայրամուտը՝ օտարոտի լույսով ողողված, ցոլցլում էր անտառի կատարներից այն կողմ: Ծառերի բներ, արմատախիլ կոճղեր էին թռչում կողքով, ծանր, մանուշակագույն ճյուղերը, քսվելով սահակառքի գլխին, ձնափոշի էին թափում: Մինչև գոտկատեղը կաշվե ծածկոցի տակից դուրս մեկնված Վասիլին երասաններն էր բռնել, բղավելով անմարդկային ձայնով: Նստիքից գլորված կառապանն ընկած էր հետևում, ճամփադարձից այն կողմ... Շարալուծ ընտիր ձիերը՝ սևաթույր ու եղյամապատ քեղաձին, շիկավուն երկրորդը և գորշաճերմակ արշավողը, կատաղած զամբիկը, սլանում էին խրոխտացնելով: Սահակառքը դեսուդեն էր շպրտվում դարուփոսերի վրա... Ետևից ցրիվ եկած, ավազակներն էին վազում: Անտառով մեկ գոչգոչում էին, կոկորդ պատռելով...

Հինգ բոպե առաջ, ճամփադարձից այն կողմ, ուր հիմնական

ճանապարհը գյուղամիջյանն էր հատում, հին դեզի ետևից մի տասը հաղթանդամ մուժիկ դուրս պրծան, կացիններով ու բրերով: Կառապանը վախից սանձերը քաշեց հիմարավարի... Չորս հոգի նետվեցին դեպի ձիերը, սարսափահարելով. «Կանգնի՜, կանգնի՜»: Մյուսները ձյան մեջ թալվելով սահակառքի կողմն էին վազում: Կառապանը թողեց երասանները, բարձրանաներն էր թափ տալիս ավազակների վրա: Մահակով խփեցին նրա գլխին:

Մի շնչում կատարվեց ամեն ինչ՝ ուշքը գլուխը բերել չէր լինի... Հորիկի զամբիկը փրկեց. ծառս եղավ, լկամներից կախ երկու մուժիկ բարձրացնելով, քացի-քացի արեց, կծոտեց: Սանկան դեն շպրտեց ծածկոցը. «Սանձե՛ր բռնի»: Ամուսնու քուրքի ծոցից հանեց ատրճանակը, կրակեց ինչ-որ մեկի մորուքապատ դեմքին: Կրակոցի հարվածից մուժիկները ետ շպրտվեցին, կարևորը՝ զարմացան կնոջ վրա... Ձիերը պոկվեցին: Վոլկովը բռնեց երասաններն, ու սլացան: Ատրճանակի կոթով Սանկան անդադար խփում էր ամուսնու մեջքին. «Քշի՛, քշի՛...»:

Հետապնդումը վերջացավ: Ձիերից գոլորշի էր բարձրանում: Ասֆալտում մի մեծ գումակի պոչը երևաց: Վոլկովը ձիերը թողեց քայլքի: Ետ էր նայում, կառքի մեջ գլխարկը փնտրելով: Տեսավ Սանկայի կլոր աչքերը, փքված ռունգերը.

— Հը՞, գոհացա՞ր: Եսմեն Սոկոլին չէի՞ր հավատում: Ախ, ինչ ասեմ դդում գլխիդ: Հավի խելք ունես... Ի՞նչ ենք անելու անկառապան: Շատ ափսոս, լավ էլ մուժիկ էր... Ու ամեն ինչ կնկա տխմար խելքից, գրողի տարած...

Սանկան չնկատեց անգամ, որ անպատվում է իրեն: Ա՜հ, դա էր կյանքը՝ ոչ քուն, ոչ դադար...

7.

Բոլոր ուղեկալներից ամեն օր մեծ գումակներ էին գալիս Մոսկվա. մարդիկ էին բերում կանոնավոր զորքի համար՝ ոմանց կապկոպած էին բերում, որպես գողերի, բայց շատերն էլ կամավոր էին գալիս, չքավորությունից դրդված: Մոսկվայի հրապարակներում թիթեղի վրա գրված հրամանագրեր էին փակցված՝ Իսկական կանոնավոր բանակում կամեցողներ հավաքագրելու մասին: Զինվորին խոստանում էին տարեկան տասնմեկ ռուբլի փող, հացի ու խոտի պաշար, խմիչքի բաժին: Ծորտերը, բոյարական բազմամարդ տներում կիսաքաղց ապրող ճորտագիր ծառաները, կառավարչի հետ կռվելով, կամ էլ հենց բոյարի ոտքերի տակ շպրտելով գլխարկը, Պրեոբրաժենսկոյե էին գալիս: Ամեն օր հարյուր հազար մարդ խմբվում էր այստեղ:

Մարդիկ երբեմն մինչև մթնշաղ, սառնամանիքին կանգնած, սպասում էին, մինչև որ առմուտքից անվանական ցուցակով բոլորին կկանչեր սպան: Բեխավոր սլրեոբրաժենցիները խստաձայն հրամայում էին լրիվ մերկանալ: Եկածները քաշվում էին՝ փաթաթաններն արձակելով, տկլորանալով, ամոթատեղերն էին ծածկում ափերով, մտնում սրահ: Վառվող մոմերի արտանքում նստած, մատդաշամորթ ցլաբարկներով երկարամազ սպաները բազեների պես էին նայում ներս մտնողներին. «Անո՛ւնդ: Մականո՛ւնդ: Ո՞ր թվի ծնված ես»: Իսկ թե ով ես՝ թեկուզ գող ու փախստական, չէին հարցնում: Հասակն էին չափում, պոռշները բացում, հրամայում ցույց տալ ամոթատեղը: «Պիտանի է: Այսինչ գունդը»:

Պալատի բակից այն կողմ, ձնապատ դաշտերի մեջ ափված էին զինվորական նորակառույց արվարձանները: Պիտանիներին խումբ-խումբ բաժանում էին խրճիթներում, ուր տեղուդադար չկար մարդկանցից: Ամեն խրճիթ իր պետն ուներ՝ ձեռնափայտով ենթասպա: Նորակոչիկներին ասում էր՝ «Ինձ կլսեք, որպես աստծու, երկու անգամ մի բանը չեմ ասելու, մաշկներդ կքերթեմ: Ձեզ համար ես աստված էլ եմ, ցար էլ, հայր էլ»: Կուշտ էին կերակրում, բայց ազատություն չկար՝ առաջվա ստրելեցների գնդերի պես չէր: Զինվորություն էր... Արթնացնում էին թմբկազարկերով: Սոված փորով քշում էին ոտնակոխ արված դաշտը: Շարք էին կանգնեցնում գծի վրա: Նախ տվորեցնում էին ձեռքերը տարբերել՝ որն է ձախը, որը՝ աջը: Ձեռնափայտով էին վարժեցնում: Հայտնվում էր սպան՝ մեծ մասամբ ոչ ռուս, ու հանախ՝ կիսահարբած: Շարքի առաջ կանգնելով, պղտորված աչքերն էր չռում արմյակների, կիսամուշտակների, տրեխների, թաղիքե, ոչխարենու գլխարկների վրա: Թշերն ուռեցնելով, պկսում էր բղավել օտար լեզվով: Պահանջում էր, որ հասկանան, ձեռնափայտն էր թափահարում: Անճարությունից կամաց-կամաց սկսեցին հասկանալ: «Մարշիրեն»՝ քայլիր: «Հալտ»՝ կանգնիր: «Շվեյնա» կամ «ռուսիշ շվեյնա»՝ ուրեմն, հայհոյում է... Նախամաշից հետո նորից դաշտ էին տանում: Ճաշում էին, երրորդ անգամ քայլում փայտերով կամ մուշկետներով: Հոծ շարաքայլ էին սովորեցնում, ինչպես արքայազն Սավոյացու զորքում, համաչափ քայլք, համատեղ կրակոցներ, սվինադաշույնները հագցրած գրոհ: Տեղնուտեղը, շարքի առաջ, սխալվողների շալվարներն իջեցնում էին ձյան վրա, սնխնա ճիպոտում:

Դժվար էին զինվորական ատտիկուլները՝ «Մուշկետը լցրու»: Հարկ էր հիշել հերթականությամբ. «Բաց արա խանձոցը: Վառոդ լցրու խանձոցի մեջ: Փակիր խանձոցը: Հանիր փամփուշտը: Կրծիր ծայրը: Մտցրու փողի մեջ: Հանիր շամփուրը: Լցրու մուշկետը: Քաշիր ձգանները: Նշան բռնիր...»: Կրակում էին մանր ստորաբաժանումներով՝ մի շարքը ծնկած լցնում էր, մյուսը՝ կանգնած, կրակում: Կրակում էին հոծաշար, երբ բոլոր շարքերը, մեկից բացի, հերթով ընկնում էին բերանքսիվայր:

Զինվորական ուսուցումը ղեկավարում էր մի կեսարական՝ բրիգադիր Ադամ Իվանովիչ Վեյդեն: Նրան, գեներալ Արտամոն Միխայլովիչ Գոլովինին և իշխան Անիկիտա Իվանովիչ Ռեպնինին հրամայված էր երեք դիվիզիա կազմել, յուրաքանչյուրն ինքնակամ գնդով:

Պորուչիկ Ալեքսեյ Բրովկինը Հյուսիսում գնդերի համար պիտանի շուրջ հարյուր մարդ հավաքեց ու հանձնում էր՝ մի տեղ վոյեվո-

դաներին, մի տեղ լանդրատներին (հին ձևով ասած՝ նահանգային կառավարիչներին), Մոսկվա ուղարկելու համար: Հիմա նա շարունակում էր ճանապարհը Պովենեցից այն կողմ, անտառի խորքերը: Պատմում էին, որ ճգնարաններում մեծ քանակությամբ փախստականներ ու անքանաներ են թաքնվում: Գիտցող մարդիկ համոզում էին նրան շատ չխորանալ.

«Ճգնարաններում լուրերը տարածվել են, աղանդավորները զգուշացել են: Նրանք՝ շատ, դուք՝ տասը հոգի, երեք պահնակով: Անհետ կկորչեք»:

Այդ կողմերի ժողովուրդը՝ որսորդներ, անտառահատներ, խստաբարո մարդիկ էին: Ապրում էին հինավուրց, հսկայական խրճիթներում, ուր մի տանիքի տակ էր թե գոմը, թե խրձանոցը: Գյուղերին ավանատեղ էին ասում: Բնակավայրից բնակավայր օրերի ճամփա էր ճանապարհազուրկ անտառներով: Ալեքսեյը հասկանում էր, որ դժվար խնդիր է: Բայց առանց վախի ապրել չէր լինի: Իսկ երբ Պյոտր Ալեքսեևիչին զեկուցես, որ ահա հասել ես Հյուսիս ու վախեցել ես առաջ գնալ, արագիլի պես, իր խժռող հայացքով քեզ կնայի վերևից ներքև, ուսը կցնցի ու կշրջվի. վախը դա էր, ու՝ վերջ քո բախտին, թեկուզ գլուխդ պատով տուր: Ալեքսեյը ջահել էր, տաքարյուն, համառ: Երազում իսկ չէր մոռանում, թե ժամանակին ինչպես էր Մոսկվա եկել, կես կոպեկանոցը թշի տակ. սպայական ճերմակ լանջագոտին ատամներով էր պոկել ճակատագրից:

Պովենեցի շուկայում Ալեքսեյը հանդիպեց որսորդ Յակիմ Կոիվոպալովին և ուղեցույց վերցրեց նրան: Արդեն քանի տարի Յակիմը վարձու որսորդ էր վաճառական Ռևյակինների մոտ՝ սնագորշ աղվես էր խփում, կզաքիս, սկյուռ, առաջ նաև ամույր էր որսում, բայց սամույրն արդեն վերջացել էր այդ կողմերում: Մորթեղենը հանձնում էր Պովենեցի գործակատարին ու քեֆ անում, մինչև հասներ վզի խաչը ծախելուն: Ռևյակինի գործակատարը նորից հագուստ էր տալիս, հրացան ու վառոդի պաշար: Այդ աշնանը որսը հաջող չէր եղել, թղթերով պարզվել էր, որ Յակիմը ոչ թե պտանալիք, այլ երկու ձմեռվա տալիք ունի պարտքի դիմաց: Որսորդը կռիվ էր արել, իրեն տվել խմելու: Ալեքսեյ Բրովկինը նրան գտել էր պանդոկի դռանը, տկլոր ու ծեծված, ձեռի մեջ ընկած: Ոսկի մարդ դուրս եկավ Յակիմը,միայն թե սահնակում, նստիքի տակ, իրեն հայտնի տեղում օղու շտոփը դրած լիներ:

Կարճ դահուկներով նա վազում էր պահնակների առջևից, ճամփան ցույց տալով: Զարմանալի ու զարգանդելի անտառներ էին: Բների արանքներից վիթխարի ժայռաբեկորներ էին երևում, ծառերով շրջանակված: Ելնում էին ամայի լճի ափը՝ աչքերը ցավում էին ձյան հարթությունից: Երբեմն թափվող ջրի խուլ աղմուկ էր լսվում: Յակիմը նստում էր սահնակի թևին.

— Էն գլխից էստեղ մարդ չեն հաշվել: Սատանի տեղեր կան, մենակ ես գիտեմ ճամփեքը: Մենակ թե էստեղի ժողովուրդը չոր ու կոշտ մարդիկ են, հավաքելը դժվար կլինի:

Գիշերելու էին կանգնում ձմեռանոցներում կամ աննշան գյուղերում, որևէ գեղակի ափին, ուր գարնանը կրակ տալու համար կլտրած ծառեր էին լինում ձյան տակ: Ծոված տնակի մոտ արձակում էին ձիերը: Զինվորները եղևնու ճյուղեր էին կտրատում, տանում ներսը: Հողե հատակին կրակ էին վառում: Ծուխը դանդաղ ելնում էր տանիքի տակի ճեղքերից, անտառի վրայով ձգվում դեպի մոխրագույն երկինք: Ցակիմն իրար էր անցնում, մինչև իր բաժին օղին կստանար: Խալաղվելով, նստում էր ճյուղերի վրա, կրակին մոտ՝ լայնամորուս, մեծապորշ, խոշորաթիթ, անտառաբնակի կլորակ աչքերով: Ինքն իսկական մի անտառի ոգի, սկսում էր պատմությունները.

— Հասկանում ես, ուր ասես եղել եմ, ամբողջ Վոլգը ոտատակ եմ տվել, Էնտեղի մենաստանում շաբաթներով ապրել եմ, էն տեսակ ճգնարաններ գիտեմ, ուր մի հատիկ կաշան է տանում, էն էլ է վախենալի: Չկարելցա մենակ իմանալ, թե հայր սուրբ Նեկտարին որտեղ է պահվում: Թաքցնում են, չեն ասում: Որ աղանդավորի մոտ խոսք բացես նրա մասին, ձենը կկտրի, կուզես ապանի: Ու ձեր գործի համար նրան տեսնելն օգտակար կլինի. մեկ էլ տեսար մի երկու հարյուր հոգի թողեց, որ ձեր հետ գան... Ի՞նչ ուժ ունի...

— Նրանց համար ո՞վ է գալիս,— հարցրեց Ալեքսեյը,— պատրիարքի նման մի բա՞ն:

— Հայր սուրբ: Ավագերեց Ավվակումը նրան օրհնել է Պուստոզերսկում, մահապատժից առաջ... Տասներկու տարի առաջ Պալեստրովսկի մենաստանում երկուսուկես հազար աղանդավոր է վառել: Գիշերով մտցրել են սառույցի վրայով, դարպասը ջարդել, վանականներին ու վանահորը փակել են նկուղում, պահեստները բացել՝ բոլորին կերցրել, խմեցրել է: Գանձարանը դատարկել են: Եկեղեցու բոլոր սրբապատկերները սրբբ ջրով լվացել են: Մոմերը վառել ու ժամերգությունն սկսել են իրենց ձևով: Մուժիկ շատ չի եղել հետը, բայց կնիկ ու երեխա՝ շատ... Պովենեցից սառույցի վրայով եկել է վոյեվոդան, ստրելեցներով: «Հանձնվեք»: Երեք օր մուժիկները կռիվ տալով վախեցրել են, բայց ստրելեցները թնդանոթ են ունեցել: Դրանք էր չոր խոտ, կուպր ու բորակ են լցրել եկեղեցին ու հենց Ծննդյան գիշերով կրակ տվել: Բայց Նեկտարին գնացել է էդտեղից, մուժիկների մի մասի հետ: Մի երեք տարի առաջ Պուդոժսկու ավանատեղում մեկուկես հազար հոգի վառեց: Վերջերս էլ Վոլ-ի կողմերը անտառներում էլի կրակ են տվել: Ասում են, թե նա է: Հիմի որ պատերազմի, զինվոր գրելու մասին լուրեր կան, էլի մի մեծ կրակ պիտի լինի...Հավատացեք: Ժողովուրդը խմբերով գնում է նրա մոտ:

Ալեքսեյն ու զինվորները զարմանում էին, լսելով. «Կամավոր վառվե՞լ: Էդ տեսակ մարդիկ որտեղի՞ց են գտնվում»:

— Շատ հասարակ,— ասում էր Յակիմը:— Բահրատու, հողապարտ, կապալապարտ մարդիկ նրա մոտ են վազում տունուտեղ թողած. Նովգորոդի ու Տվերի մոտերից, մոսկվացիներն էլ, վոլոգդացիներն էլ: Էստեղի անտառներում ինչքան ասեկ մարդու ոսկոր կա՝ ասված հեռու տանի... Մի հազար մարդ որ հավաքվեց ճգնարա-

նում՝ ո՞նց ես կերակրելու։ Էստեղի հացը բերովի է։ Սկսում են փնթփնթալ, առնել-տալ։ Ու փոխանակ զուր տեղը մեղք անեն հոգիներին, Նեկտարին ուղիղ ճամփով նրանց դրախտ է ուղարկում։

— Էդ մեկը փչեցիր։

— Ալեքսեյ Իվանիչ, օրումս սուտ բան չեմ ասել։ Մարդիկ կենդանի-կենդանի դագաղ են մտնում՝ էդպիսիք էլ կան... Էնտեղ, Բելի-լճի կողմերը մի ծերուկ կա, չամչով է հաղորդություն տալիս, ում բերանը չամիչ դրեց, ուրեմն օրհնել է, որ կենդանի-կենդանի դագաղ մտնի...

— Գիշերվա կեսին դու էլ բաներ կպատմես հա՞...— Կրակի մոտ, ճյուղերի վրա նստած Ալեքսեյը փաթաթվեց քուրքի մեջ։ Քիչ հետո ասաց.— Ցակիմ, էդ հայր սուրբ Նեկտարիին պիտի գտնենք...

Անտառից երկու դահուկավոր ելան լուսնի լույսով ողողված բացատը։ Զմեռանոցից ծուխ էր ելնում։ Սահնակների մոտ գլխահակ կանգնած էին խսիրով ծածկված ձիերը, առաջքին հենված, քնած էր պահակ զինվորը՝ քուրքի թևքերով մուշկետը գրկած։

Դահուկավորներն անլսելի պտույտ տվեցին ձմեռանոցի շուրջը։ Որսատեգերին հենված, կանգնել, ականջ էին դնում։ Աղոտ մի շողջանակ էր եզերել լուսինը, եղյամակալած անտառում լռություն էր։ Խրճիթի ներսում մեկը խլաձայն փնթփնթաց։ Սահնակների մոտ փորով մեկ թնչացրեց ձին։ Պահակ զինվորը պառկած էր, սառածի պես՝ բեխավոր դեմքը լուսնի լույսի տակ։

Դահուկավորներից մեկն ասաց.

— Չկապկպե՞նք։ Պինդ քնած է։ Հետո էլ կգցենք կրակը, աղոթքն անելով։

Մյուսը, մորուքը տնկած, նայում էր.

— Կապկպելուց ձենը գլուխը կգցի, կգոռա։ Տասը հոգի են։

— Բա ի՞նչ անենք։

— Մի հատ տեգով թրխկացնենք։ Դուռն էլ ձեռաց կկողպենք։

— Ախ, Պետրուշա, Պետրուշա,— առաջինը տարուբերեց ականջավոր գլխարկը։— Լեզու հո չունես։ Արյուն է, չէ, մարդ է, չէ, հո գազան չի... Ասված է, որ կրակի մեջ մարդը կընդունի մկրտությունը... Կրակի մեջ... Քեզ որ թողնեն՝ տեգո՞վ։ Հոգուդ մեղք կանես...

— Հետո ինչ, որ արեցի...

— Մտքովդ չանցնի։ Ի սեր Հիսուսի, միտքս մի ծռի...

— Թե չէ, կարգին գործ կլիներ՝ ձեռաց, սուսուփուս...

— Էդ մտքերիդ համար հայր սուրբ Նեկտարին քեզ մի երկու բան կասի...

— Ուզածս էն է, որ լավ լիներ...

Լռեցին։ Մտածում էին, թե ինչ անեն։ Երկնագույն ձյան վրայով բուի ստվեր անցավ. թռչունը ավարի հոտ էր առել, պտույտ էր տալիս անիծվածը։ Խրճիթի դուռը հանկարծ ճռռաց, Ցակիմն փոչոտ գլուխը դուրս նայեց՝ ըստ երևույթին, պետքի համար էր դուրս գալիս.... Տեսավ երկուսին, թնդաց, ետ գնաց, վեր կացրեց մարդկանց։ Դահուկավորները ճյուղերի ետևով սահեցին վազելավազ, լսելով, թե ինչպես տրաքեց կրակոցը, խախտելով անտառի լռությունը։

Երկար վազում էին, դիտավորյալ պտույտներ անելով, հետքերը խճճելով։ Եղևնու թավուտի միջով գետակի հունին հասան։ Լուսադեմը մոտ էր, լուսինը բարձրանում էր։ Մոտերքում դանդաղ, թախծալի գարկում էին թուջե ձողանին։

Անդրյուշկա Գոլիկովը վաղորդյան ժամերգության էր կանչում։ Աղվեսի կաշերևա, ճնամաշ կիսամուշտակով էր, բայց բոբիկ։ Կապտած ոտնաթաթերը դաղող ձյան վրա դնել-վերցնելով, երգանման կրկնում էր Ավվակումի ասույթը. «Նահատակից արարողությունք, առաքյալից բազմությունք, սպասավորից սրբություն», ու մի անգամ թակիչը խրփում էր թուջե ձողանին, որը զանգի փոխարեն կախված էր ճգնարանի դարպասի դիմացի ալյունից, ծածկի տակ։ Հայր սուրբն այդ ապաշխարանքն էր նրան պարտադրել, որովհետև երեկ, օրը պասուց, ծարավել ու կվաս էր խմել։

Զանգի վրա հավաքվում էին համայնքավորները։ Ելնում էին խցերից, տղամարդիկ՝ առանձին, կանայք՝ առանձին։ Ցցապատով եզերված ճգնարանը մեծ չէր։ Ծատերն ապրում էին մոտերքում, գետակի ափին, ճահճապատ կղզու եզերքին։ Այնտեղից գալիս էին անտառի կածաններով։ Հեռվում ապրողները շտապում էին, ուշանալուց վախենալով՝ հայր սուրբը խիստ էր։

Ճգնարանի մեջտեղում, ծղոտի մոտ-մոտ բարդոցների արանքում աղոթատունն էր՝ գերանակապ ցածրիկ մի խրճիթ, լայն, քառանիստ տանիքով, մեջտեղում վրանաձև, ութնապատ գագաթով։

Դարպասից մտնելով, համայնքավորները քայլում էին վախվորած, գլուխները կախ, ձեռքները կրծքներին դրած՝ ոչ ծեր, միջին տարիքի մուժիկներ էին, կիսամուշտակների վրայից կտավե պատանքներ գցած, գլխաշորերը երեսներին քաշած կանայք։ Խոլ ու բենքենկում՝ որպես մարմնական կյանքի ունայնություն, լուսնային աղոտ մշուշի մեջ զանգում էր թուջե ձողանը, մեկ էլ ձյունն էր ճռճռում տրեխների տակ։

Դռան առաջ մարդիկ խաչակնքում էին երկու մատով, մտնում գերանակապ, եղյամակալած պատերով աղոթատուն։ Հանուն սրբապատկերների առաջ կոպեկանոց մոմեր էին առվում։ Դա հրաշք էր թվում՝ մոմեր խոլ անտառում։ Ծունկ չոքեցին՝ տղամարդիկ աջ, կանայք՝ ձախ կողմերում։ Նրանց արանքում կտոր-կտորի կարված վարագույր կար, կեմե թոկից կախ...

Ծանր շնչելով, երկու դահուկավորները իրենց գցեցին դարպասից ներս ու գոռացին Անդրեյի վրա.

— Մի խփի, փորձանք է։

— Ծուտ ասա հայր սուրբին, թող գա...

Զորացած աղեղի պես պրկված էր Անդրեյի հոգին՝ պասից, անքուն հսկումից, մշտական պարսափից։ Վախից թակը գցեց, դողաց-

րեց, արագ-արագ շնչելով: Սակայն Նեկտարին զուր չէր սովորեցրել նրան՝ հաղթահարել դևերին (որոնք շատ-շատ էին. որքան միտք, այնքան դև), մտքի մեջ փութաջան կրկնեց. «Թշնամի սատանա, իմ մոտից չքանա...»: Թակը բարձրացրեց, խփեց ձողանի գլխամասին, գլուխը թափահարեց՝ մի խանգարեք, հեռու գնացեք...

— Անդրեյ, քեզ բան ենք ասում՝ էն սպան իր զինվորներով մի հինգ վերստի վրա է էստեղից...

— Գոնե կամաց խփիր, կլսեն... Յակիմն է նրանց հետ: Զանգի ձենի վրա ուղիղ կբերի էստեղ...

Առամ-առամի զարկելով, Անդրեյն ասաց.

— Հայր սուրբը խցում է, գնացեք մոտը:

Դահուկները հանեցին, գնացին: Երկուսն էլ՝ Ստյոպկա Բարմինը և Պետրուշկա Կոժեվնիկովը Պովենեցի պոսադից էին, ձուկ ու գազան որսացող... Երկար խաչակնքելու պատճառով պովենեցյան վոյեվոդան քանիցս թալանել ու ծեծել էր նրանց, անասունն էր տնից տարել, ու դրանից զզվել էին նրանք: Արդեն երկու տարի երկուսի կանայք ու երեխաները գաղտնի ապրում էին Վոլգի մենաստանում, իրենք էլ՝ որտեղ պատահի, որսի հարմար, խուլ վայրերում: Երբ լուր տարածվեց, թե ճգնարանները մի սպա է գալիս, զինվորներով (ածիլված են ու մակեր, մի վերստի վրա ծխախոտի՝ «տաքուն-խոտի» հոտ էր փչում), Նեկտարին հրամայեց Ստյոպկային և Պետրուշկային հետևել նրանց, մոլորեցնել, ու եթե հնարավոր եղավ, առանց հոգուն մեղք անելու, նեռի ծառաների վերջը տալ:

Հայր սուրբ Նեկտարիի մոտ հենց այնպես ներս չէին թողնում: Ցուրտ նախասենյակ էլավ մոնթը՝ հայր սուրբը երկուսն ուներ, Անդրեյը և սա՝ կաղլիկ Պորֆիրին, հյուծված ու աչքերը վեր հոթռած մի պատանյակ: Ծշուկով պատմեցին նրան: Պորֆիրին գլուխը թեքեց, արտաշնչելով ասաց. «Ներս գնացեք»: Անտառաբնակ մուժիկները գլխարկները հանեցին, աշխատեցին մի կերպ փոքրանալ, նախասենյակից խուց մտնելով՝ շատ էին առողջ ու կոպիտ: Հայր սուրբը մարմնեղ մարդկանց չէր սիրում:

Գրակալի մոտ կանգնած՝ փոքրամարմին, կորաքամակ, հնատարազ ու տան գործած, սև փարաջայով Նեկտարին խեթեց Ստյոպկային և Պետրուշկային: Նել, սեպաձև մորուքը հանարյա ծնկներին էր հասնում, սև հոնքերի տակ ածուխներ էին, ոչ թե աչքեր: Գրքի որդնակեր կազմին կպցրած մոմը կամացուկ ճտճտում էր՝ խիստ սատանամանիքի նշան էր... Լապտի գլաքարերից շարված վառարանից բարկ տաքություն էր փչում: Գերանակապ պատերը մաքուր սրբված էին: Առաստաղից կեղաբելով չոր խոտերի փնջեր էին կախված:

Ստյոպկայի և Պետրուշկայի սառած ընչացքներից կաթում էր ջուրը, բայց վախենում էին սրբել, իրար գալ, քանի դեռ հայր սուրբը չէր վերջացրել: Նա աճեղաձայն էր կարդում: Մութ անկյունից, կողքին պառկած ու մարմնի լայնքով մեկ շղթայով պատը խրած ցցից կապված, նրան էր նայում ընկնավոր մի մուժիկ: Վառարանի մոտ, տաշտի մեջ, հնամաշ փարաջայով ծածկված խմորը բարձրացել էր:

— Հը՞, ինչի՞ եք եկել,— Նեկտարին դարձավ մուժիկներին, ալեհեր մորուքը տնկած առաջանալով: Նրանք արշից չէին վախենում, մեն-մենակ էին գետնում որմզդեղնը, սակայն ծերուկի առաջ, անշուշտ, երկնչեցին: Ստյոպկան սկսեց խառնիխուռն պատմել քիչ առաջվա մասին, Պետրուշկան մեղավորաբար հաստատում էր:

— Ուրեմն,— մեղմաձայն ասաց Նեկտարին,— ուրեմն, դու, Պետրուշա, ուզում էիր զինվորին տեգով սպանել, իսկ դու, Ստյոպա, մեղքից վախեցա՞ր:

Ի պատասխան, Ստյոպկան տաքացած ասաց.

— Հայր սուրբ, երկու շաբաթ դրանց ետևից մաս ենք գալիս: Անիծած Յակիմն էս տեղերը լավ գիտի, ուղիղ բերում է էստեղ: Ոնց ասես մտածել ենք... Նրանք զգուշանում են, թե չէ՝ եղածն ինչ, ձմեռանոցի դուռը կփակեինք, կրակը կտայինք: Կաղոթեինք ու խաչ կանեինք վրաները... Նրանց համար էլ լավ կլիներ, մեզ համար էլ... Բայց տեսնում ես էլի, չեղավ... Իսկ թե սպանեինք՝ աստված ազատի... Էսօր մենակ սատանա մտավ մեջս...

— Ես ձեզ օրհնե՞լ եմ էդ վառոցի համար,— հարցրեց հայր սուրբը: (Մուժիկները զարմացած նրան նայեցին, չպատասխանեցին:) Աղոթքդ ջերմ է եղել, ուրեմն, Ստյոպա, հա՞, տասը հոգու կրակի մեջ մնրաել: Օ՜խ, օ՜խ: Քեզ ո՞վ է էդ իշխանությունը տվել: Տեպ է, Պետրուշայի մեջ սատանա էր մտել, դու էլ սատանային հաղթեցիր: Ա՜խ ի՞նչ սրբություն: Ա՜խ, ի՞նչ զորություն:

Ստեպանը խոժոռվեց: Պետրուշան աչքերն էր ճկճպացնում հայր սուրբի վրա, լավ չհասկանալով:

— Պորֆիշա, ձկնիկս, բուրվառն ածուխ դիր ու փչիր աղոթելով,— ասաց հայր սուրբը: Կաղլիկ Պորֆիրին փայտե գամից իջեցրեց բուրվառը, շորորալով մոտեցավ վառարանին, մայրու խեժի մեջ դրեց ածխիկը, փչեց, աջը հանբուրելով պարզեց հայր սուրբին: Երկար ձեռքով բուրվառը հանարյա հատակին քսելով, Նեկտարին սկսեց զգոնացնելով ծուխ արձակել մուժիկների դեմքերին, կողքերից, ետևներից էր թափահարում, շշնջալով, խոնարհվելով: Բուրվառը տվեց Պորֆիրին, կաշվե գոտու տակից հանեց հյուսված տերողորմյան, շրջապատեց Ստյոպկայի դեմքին, ցավեցնելով, հետո Պետրուշկայի դեմքին: Մուժիկները ծունկ չոքեցին: Կապտած շրթունքներով շշնջալով. «Գոռոզությո՞ւն, գոռոզությո՞ւն նզովյալ», փրփրում էր, շրմփացնելով նրանց երեսներին: Ընկնավորը հանկարծ քրքջաց խրճիթով մեկ, սկսեց շղթան պոկոտել, շան պես վրա պրծնելով.

— Խփի դրանց, ծերուկ, խփի, դևերը մեջներից հանի:

Հայր սուրբը հոգնեց, ծանր շնչելով ետ քաշվեց:

— Հետո ինքներդ կհասկանաք, թե ինչի համար,— ասաց հազալով:— Գնացեք, Հիսուսը ձեզ հետ...

Մուժիկները զգուշությամբ ելան խցից: Լուսնի լույսը խամրել էր՝ աղոթատան ետևից, սև անտառից այն կողմ արշալույսն էր բարձրանում: Սաստիկ սատանամանիք էր: Մուժիկները շվարել էին. ի՞նչ մեղք էին գործել: Ինչի՞ համար: Հիմա՞ ինչ անեին:

— Շատ մաղ եկանք, քիչ կերանք,— ցածրաձայն ասաց Պետրուշկան:

— Հիմա ո՞նց բան ուզենք նրանից:

— Կարող է հա՞ց տա...

— Ավելի լավ է, աչքովը չընկնենք: Էսպես գնանք, էլի դրանց մոտ: Սկզբից բանից կխփենք, կուտենք...

Անդրեյ Գոլիկովը, հոդ առ հոդ դողացնելով, բարձրացավ վառարանի վրա: (Հայր սուրբը, աղոթատուն մտնելուց առաջ հրամայել էր էլ չգանգահարել, ժամերգությանը չէր թողել. «Գնա, նշխարքը ստրքիր»:) Սառած ոտքերը տնքում էին տաք քարերի վրա, քաղցից գլուխը պտտվում էր: Պառկել էր բերանքսիվայր, ատամներով փողը բռնած: Զրդավելու համար մտքում կրկնում էր Ավվակումի ասույթներից. «Մարդս նեխվածք է և կեղտ է... Ինձ համար լավ է շների հետ ապրելն ու խոզերի, նրանք նույնպես գարշահոտ են, ինչպես իմ հոգին, խիստ են գարշահոտ: Մեղքերից հոտ եմ արձակում նողկալի, հանց մի շուն սատկած...»:

Ընկնավորը, անկյունում շարժելով շղթաները, ասաց.

— Հալիվորն էս գիշեր էլի մեղր էր լափում...

Այս անգամ Անդրեյը չբղավեց նրա վրա. «Ստեր մի փչի», ավելի ամուր կնեց փողը: Կասկածանքի դեմ իր մեջ խեղդելու ուժ չուներ այլևս: Այդ դեր մի անհնչան առիթով բուն դրեց Անդրյուշկայի հոգում: Սրեքով էին ծոմ պահել՝ Նեկտարին և մոնթերը. քառասուն օր ոչինչ չպետք է ուտեին, միայն ջուր, այն էլ փոքր կումերով: Որպեսզի Անդրեյը և Պորֆիրին կանոնները կարդալիս չհոգնեին, նա հրամայեց բերանները կվասով թրջել ու շփել կրծքի վրա: Իր մասին ասում էր. «Ինձ պետք չի դա, հրեշտակը դրախտային ցողով է բերանս թարմացնում»: Ու զարմանք բան. Անդրեյը և Պորֆիրին թուլությունից հազիվ էին լեզուները շարժում, միայն աչքերն էին մնացել, իսկ Նեկտարին թարմ-թարմ էր:

Միայն թե մի գիշեր Անդրեյը տեսավ, թե հայր սուրբն ինչպես կամացուկ իջավ վառարանից, կնունից մեղր գդալեց ու կերավ չօրհնած նշխարքով: Անդրեյի ձեռոտոը սառեց. թվում էր, ավելի լավ կլիներ մարդ մորթեին աչքի առաջ, քան դա տեսներ: Ու չգիտեր՝ տեսածը թաքցնի՞, թե ասի: Առավոտյան, համենայն դեպս, լաց լինելով ասաց: Նեկտարիի շունչը կտրվեց նույնիսկ.

— Շուն, տխմար: Դևն էր դա, ոչ թե ես: Դու էլ ուրախացե՞լ ես: Ահա՛, ահա՛ մարմնականը նզովյալ: Մի գդալ մեղրի համար երկնային թագավորությունը կծախես:

Սկսեց ծեծել Անդրեյին կճումը վառարանը դնելու երկճեղ ճանկով, մեկտակ շապկով դուրս շարտեց խցից ձյան վրա: Դրանից մտքերն առժամանակ խաղաղվեցին: Իսկ երբ խցում մենակ էին, ընկնավորը (աշնանից շղթայակապ նստած էր այդտեղ, ասոծուն փառք, տաք տեղ էր) Անդրյուշկային ասաց.

— Տես, գդալը մեղրոտ է, բայց իրիկունը լվացված էր: Լպստիր:

Անդրեյն անպատվեց նրան: Հաջորդ գիշեր հայր սուրբը նորից մեղր կերավ ծածուկ, շրթունքները նապաստակի պես արագ-արագ ճպճպացնելով: Վաղ արշալույսին, երբ դեռ բոլորը քնած էին, Անդրեյը զննեց գդալը՝ մեղրոտ էր: Վրան սպիտակած մազ էլ կար կպած...

Մեծ կասկած պողոսկեց հոգին: Ո՞վ է ստում: Աչքե՞րն են խաբում՝ գդալը մեղրոտ է, մազը բեխի մազ է, գորշաներմակ: (Հո դևի մազը չէ՞:) Թե՞ հայր սուրբն է ստում: Ո՞ւմ հավատալ: Մի պահ քիչ էր մնում խելագարվեր. շփոթ մտքեր, հուսալքություն: Նեկտարին մշտապես կրկնում էր. «Նեռը եկել, աշխարհի դռանն է կանգնել, ու նրա վիժվածքները լիքն են երկնքի տակ: Ու մեր հողի մեջ էլ մի մեծ սատանա կա, ու նրա տեղը դժոխքն է խորունկ»: Իսկ եթե այդպես է, եկ ու հավատա, որ հենց ինքը՝ Նեկտարին չէ չարքը: Մանկով մեջքին հասցնել սատանան էլ կարող է: Ամեն ինչ երկիմաստ է, ամեն ինչ խախուտ է մամռապատ ճահճի պես: Մի բան էր մնում. ոչնչի մասին չմտածել, ծեծած շան նման գլուխը կախել ու հավատալ, որովայնով հավատալ: Իսկ եթե չի լինում հավատա՞լ: Եթե մտածո՞ւմ է մարդը: Մտքերը ճզմել, մարել չի լինում. կպծակի պես շողում են: Ուրեմն, դա՞ էլ է նեռից գալիս: Մտքերը նեռի կայծակնե՞րն են: Մեկ էլ հանկարծ Անդրեյի ներսում ամեն ինչ մռնում էր՝ ո՞ւր եմ թռչում, ո՞ւր եմ գլորվում: Տիեզեր, աղքատ, ողորմելի... Ընկներ հայր սուրբի ոտքերը՝ սովորեցրո՞ւ, փրկի՞ր: Ու չէր կարողանում՝ աչքին մեղրի մեջ թաթախված բեխերն էին երևում... Ճգնարան էր եկել անխոով կյանք որոնելու, երկմտանք գտավ...

Հետո մարմնական թուլությունից Անդրյուշկան նվաղեց, մտքերը բթացան, խաղաղվեցին: Ամենօրյա ծեծը խոտոտի պես էր ընկալում: Հայր սուրբն օրըստօրե ավելի էր փրփրում նրա վրա: Մյուսին՝ «Պորֆիշա ու ձկնիկ», իսկ Անդրեյին՝ ձիուն էլ այդպես չեն ծեծի: Թողներ ու հեռանար... Բայց ո՞ւր: Ճիշտ է, Դենիսովն ասում էր Անդրյուշկային (երբ դեկտեմբերի վերջին սառնակներով հացահատիկ էին բերում Վոլգի մենաստան). «Մի քիչ մնա մեզ մոտ, տանտիրում նկարներ կանես: Սառույցը որ քաշվեց, ապրանքի հետ կուղարկեմ Մոսկվա: Ես քեզ հավատում եմ»: Անդրյուշկան հրաժարվեց. դա չէր ցանկացածը, այլ լռություն, գութ ու գորով... Թվում էր, թե տեսնում է մի խուց անտառում, գետափի քարին խաչգդակով նստած գառամյաղ հայր սուրբին, որը սիրասուն մոնթին և անտառից եկած գազաններին ու ճուղերին նստած թռչուններին ու մենավոր գետակի ոլորդ ջրերին մեղմ շող գցած հյուսիսի արևին է պատմում վերերկրային լույսի մասին... Գտա՞վ անդորրը: Ուղեղում այդպիսի փոթորիկ այն ժամանակ էլ չկար, երբ բքառատ գիշերներին սրթսրթում էր կիտայգորոդյան պարսի ճեղքերում, լսելով, թե ինչպես են իրար զարնվում սառած պտրեյեցներն ու ճոճոում կախաղանները:

Նայելով վառարանին, որի վրա Անդրյուշկան էր պառկած, ընկնավորը խոսում էր.

— Էստեղ դու երկար ապրողը չես՝ թույլ ես: Հալիվորը քեզ հոգն

է դնելու՝ բկին ես կանգնել: Ի՞նչ իշխանասեր ծերուկ է, ի՞նչ հպարտ: Սրբազանները նրան քուն ու դադար չեն տալիս: Չեռյա-Մինեյան կկարդա, ու կկսի գլխին գոռ տալը... Թե սառնամանիքը չէր եղել, տասը տարի ծառի վրա կնստեր ու կմնար: Ժողովրդին էլ է հենց դրա համար վառում, իշխանություն շա՞տ է սիրում: Անտառի թագավորն է... Նրան տակից գլուխս տեսնում եմ, ախպերս, նրանից խելոք եմ, ասուված վկա... Բոլորիցդ էլ խելոք եմ: Ճիշտն ասեմ, երեք դև կա ներսումս... Առաջինը՝ ընկնավոր եմ, ուժեղ դև է դա... Երկրորդ դևը, որ ծույլ եմ... Թե որ ծույլ չէի եղել, բա կնստեի՞ շղթան ոտիս... Երրորդ դևը, որ շատ խելոք եմ, շա՞տ: Ընկնավորությունս բռնելուց առաջ ամեն ինչ հասկանում եմ: Զարանում եմ, ոչ մի բան աչքիս չի գալիս... Ամեն մարդու մասին գիտեմ, թե որտեղից է եկել, ինչքան է ապրելիքը... Ու դիտմամբ սուտ ու փուչ բաներ եմ դուրս տալիս, ծիծաղեցնելու համար... Շղթան եմ կրծում, թակալ տալիս՝ ծիծաղում են, հավատում... Հալիվորն էլ է նայում, աչքերը չոած... Նա ինձնից վախենում է, ախպերս: Գարնանը էլի գնալու եմ մոտից... Բայց քեզ, Օնդրյուշկա, ճանկով ծեծելով կապանի, հոգիդ կհանի: Ավելի ճիշտ, առաջին հենց վառոցին սկզբից քեզ կրակ տալու...

— Օ՜հ, սուս մնա, ասուված սիրես...

Անդրեյն իջավ վառարանից, ձեռքերը լվաց, թևքերը քշտեց, տաշտի կափարիչը վերցրեց: Մյուս խցերում խմորը հունցում էին մեկ երրորդը այլուրով, մնացածը չորացրած մշրաց կեղևով, այստեղ խմորը մաքուր ալյուրից էր, լավ ուռել էր: Ընկնավոր մուժիկը ձգվեց, որ նայի: Քաշեց շղթան, ցցի հետ մեկտեղ պոկեց պատից: Անդրեյը վախեցավ: Ընկնավորը, թևքերը քշտելով, ասաց.

— Բան չկա... Էնքան եմ էսպես անում: Հալիվորը որ եկավ, ցիցը կխրեմ տեղն ու կնստեմ...

Նա նույնպես ձեռքերը լվաց: Անդրեյի հետ սկսեցին ճշմարք գնդել, դնել վառարանը:

— Բայց ինչ տխուր տեղ է, Օնդրյուշկա... Մի կնիկ լիներ հիմի...

— Սուս մնա... Թյո՛ւհ: (Անդրեյն ուզեց խաչով պաշտպանվել նման խոսքերից, մատները խմորոտ էին:) Ասուված վկա, հայր սուրբին կբողոքեմ...

— Հեզ բողոքել ցույց կտամ... Անխելք, կարծում ես ճգնարաններում կնանիք քամո՞ւց են ցմկորանում: Վրդի մենաստանում մի երեսուն կնիկ ծանրած կուլի պես մաս են գալիս... Ու շատ էլ խիստ է էնտեղ...

— Սուտ ես ասում ամեն ինչ...

— Տեսնում եմ, էդ անուշ բանը դեռ չես փորձել, հը՞, Օնդրյուշկա...

— Մինչև մեռնելս էլ չեմ ապականվի...

— Մի գնդիկ կնիկ կանչեինք, ասեինք հատակը լվա... Նա լվար, դու էլ թախտին նստած ես գալիր... Օրուց թունդ բան է...

Անդրեյը փութով խմորը պոկեց մատներից: Խցից ելավ սառնամանիք՝ կանգնելու... Վաղորդյան արշալույսը ստվել էր անտառից այն կողմ, արևն ուր որ է կերևար: Զլան վրայի հետքերը տաք ստվերներով էին լեցուն, շաքարաձև ձնաթմբերը թեքվել էին հյուղակների մոտ, հսկայական եղևնիների կատարները կանաչին էին տալիս: Աղոթատան կիսաբաց դռնից միալար երգ էր լսվում: Ստյոպկան և Պետրուշկան նորից վազեվազ անցան Անդրեյի մոտով, բղավեցին.

— Էստե՛ղ են գալիս: Դարպասը փակի՛ր...

Ալեքսեյ Բրովկինը Ցակիմին ուղարկեց աղանդավորնեշի հետ խոսելու. ինչ մարդիկ են, քանի հոգի են և ինչո՞ւ չեն բացում դարպասը ցարական սպայի առաջ: Զիները թողել էին անտառում, ճանապարհի վրա, ինքը, զինվորների հետ, հրամայելով լցնել մուշկետները, մոտեցավ ճգնարանին: Բարձր ցցապարսպի ետևից պարզում էին կտուրների ձնե գդակները, կապտին էր տալիս ալոթատան ութանկյունի խաչը՝ այնտեղից երգի ձայն էր լսվում, թևև ժամերգության ժամը վաղուց անցել էր:

Ցակիմը երկար ծեծեց դռնակը: Բարձրացավ ցցապարսպի վրա, նայեց՝ հո շուն չկա, և ցած թռավ բակ: Վախեցնելու համար Ալեքսեյը դրեց եռանկյունի գլխարկը, ոչխարենու կիսամուշտակի վրայից գցեց լանջազոտիով սուսերակալը. ըստ երևույթին, այստեղ շատ մարդ կարելի էր հավաքագրել, վախեցնելու դեպքում: Հազիվ թե այս խոսքերը հասած լինեին փոխատենավորներն ու Բուրմիստրական պալատի կոմիսարները, որոնք կրկնակի կոպար էին դնում երկմտոտ խաչակնքողների վրա: Ժամանակն անցնում էր: Զինվորները նայում էին ցած կախված արեգակին՝ արևածագից ոչինչ չէին կերել: Ալեքսեյը զայրացած հազում էր թաթմանի մեջ:

Վերջապես մյուս կողմից ցցապատի վրա բարձրացավ ու ցած թռավ Ցակիմը:

— Ալեքսեյ Իվանովիչ, գործերս հաջողեց: Նեկտարին էստեղ է...

— Որ էդպես է, դարպասն ինչի՞ չի բացում գրողի տարածը: Զինվորներս սառեցին:

— Ալեքսեյ Իվանովիչ, ժողովուրդը փակվել է աղոթատանը: Ասեմ՝ ինչ եղավ. մի ծանոթի հանդիպեցի, նովգորոդցի մուժիկ է, շղթան վիզը նստած է... Պատմեց, որ երկու հարյուր հոգի կլինի համայնքը, զինվորացու էլ կան, բայց դժվար կլինի տանելը, հայր սուրբն ուզում է վառել նրանց...

Անվստահությամբ, խստահայաց նայեց Ցակիմին.

— Այսինքն ինչպե՞ս, թե վառել: Ո՞վ է նրան թույլ տվել: Զենք թողնի: Մարդիկ նրանը չեն, ցարինն են...

— Բանն էլ էն է, որ անտառներում ցարը նա է...

— Հերիք փչես: (Ալեքսեյը, խոժոռվելով, կանչեց զինվորներին, որոնք դժկամությամբ մոտեցան, հասկանալով, որ գործն անսովոր է:) Երկար-բարակ չենք խոսի: Տղերք, դարպասը ջարդեք...

— Ալեքսեյ Իվանիչ, հարկավոր է զգույշ լինել: Աղոթատունը չորս կողմից խրձերով է շրջապատված, ներսում էլ է ծղոտ լցրած, կուպր ու մի տակառ վառոդ կա... Ավելի լավ է, մի կերպ հայր սուր-

բին կանչեմ։ Նա էլ է հասկանում, որ հանաք բան չի երկու հարյուր հոգու համոզելը, որ էդ տեսակ բան անեն։ Ալեքսեյ Իվանովիչ, հարգանք ցույց տվեք դրան, իշխանասեր մարդ է, խաթրով լեզու կգտնեք...

Ալեքսեյը հրեց շատախոս մուժիկին։ Մոտեցավ դարպասին, փորձեց՝ ամո՞ւր է։ Ամուր։

— Տղերք, գնալանը բերեք...

Ցակիմը մի կողմ քաշվեց։ Աչքերը ճպճպացնելով, հետաքրքրությամբ նայում էր, թե ինչ է լինելու հիմա։ Զինվորները գերանը տարան-բերեցին, խփեցին դարպասի սառցակալած չորսուներին։ Երրորդ հարվածից հետո աղանդավորների հեռավոր երգը լռեց։

— Գնա աղոթատուն...

— Քեզ ասացի, չեմ գնա, ձեռ քաշիր,— խոժոռված կրկնեց ընկնավոր մուժիկը...

Նեկտարին բակից խուց էր մտել հևասպառ, մորուքի վրա մուտ ծորուն կաթիլներ։ Սպիտակած աչքերի բիբերը նեղացել, հատիկ էին դարձել, կամ վախեցնում էր, ավելի ճիշտ՝ իրեն կորցրել էր։ Խզված ձայնով բղավեց.

— Եվդոկիմ, Եվդոկիմ, Ահեղ դատաստա՞նն է եկել... Հոգի՞դ փրկիր։ Մի ժամ է մնացել հավերժական տանջանքին... Օ՜, սարսափելի է... Դևերը մեջդ պար են բռնել։ Փրկվի՞ր։

— Գնա գործիդ,— բղավեց Եվդոկիմը, չարացած ճոճելով գլուխը։— Ի՞նչ դև, ի՞նչ բան։ Օրումս չեմ ունեցել։ Գնա, անխելքներիդ առաջ խաղերդ խաղա...

Նեկտարին բարձրացրեց տերողորմյան։ Ընկնավոր մուժիկը կռացած այնպես նայեց հոնքերի տակից, որ հայր սուրբը մի պահ նվաղեց, նստեց թախտին։ Լուռ էին...

— Օնդրյուշկա՞ն ուր է...

— Սատանան գիտե, թե ուր է քո Օնդրյուշկան...

— Փրկություն չկա քեզ, նզովյալ, չկա...

— Լավ, լավ, սուգ ու լացդ վերջացրու...

Հայր սուրբը վեր թռավ, նայելու, թե վառարանի ետնը չի՞ թաքնվել մնթը՝ կյանքը փրկելու պարսափից... Այդ ժամանակ բակում մի բան թնդաց, ճռռաց։

— Դարպասը ջարդում են,— ատամները բացած, ասաց մուժիկը։ Վառարանին չհասած, Նեկտարին սայթաքեց, սկսեց սարսափելի դողացնել։ Առագաստի պես փքվել էր թիկնոցը, երբ բակ էր շտապում։ Դուռը կրնկի վրա բաց թողեց։

— Օնդրյուշկա,— կանչեց մուժիկը,— դուռը փակիր, ցուրտ է։

Ոչ ոք չպատասխանեց։ Նա դուրս քաշեց ցիցը պատից, հայհոյելով գնաց, դուռը փակեց.

— Էստեղ լավ բան էլ չսպասես։ Գնալ է պետք։

Վառարանի ետնը նայեց։ Այնտեղ, պատի և վառարանի արանքում կանգնած էր Անդրյուշկա Գոլիկովը, ըստ երևույթին, ուշքը գլխին չէր, սպիտակած էր լրիվ։ Հազիվ լսելի գկոտում էր։ Եվդոկիմը քաշեց նրա ձեռքից.

— Հը՞, մեռնել չե՞ս ուզում։ Ձես ուզում, հարկավոր չի, առանց կրակ էլ լոկա կգնաս... Բանալին գտիր, լսեցի՞ր։ Հալիվորն ո՞ւր է դրել բանալին։ Ուզում եմ շղթան հանել։ Օնդրյո՞ւշկա։ Ուշքի արի...

Բոլորը ծնկաչոք էին։ Կանայք լուռ լաց էին լինում, երեխաներին կրծքերին սեղմած։ Տղամարդկանցից մի քանիսը մազերը թափած, դեմքերն էին ծածկել կոշտուկապատ ափերով, մյուսներն անմիտ հայացքով մոմերի բոցերին էին նայում։ Հայր սուրբը կարճ ժամանակով դուրս էր եկել աղոթատնից։ Հանգստանում էին՝ ժամերի ընթացքում հոգնել էին։ Նրան հերիք չէր, որ բոլորը խոնարհ են փոքր երեխաների պես... Սարսափելի ձայնով գոռում էր բեմի վրայից. «Տաք եմ բարբառում բերանով։ Կրակ եմ ուզում։ Ոչխարներ չեմ քշում դրախտ, այլ անկեզ մորենիներ...»։

Դժվար էր նրա ասածով անել՝ վառվել հոգով... Բոլորն էլ այստեղ փշրված մարդիկ էին, գյուղական տանջանքից փախած, եկած այն կողմերից, ուր չէին թողնում բրդակալել, բայցև ոչխարի պես խուզում-տկլորացնում էին մուժիկին։ Այստեղ հանգիստ էին որոնում։ Ոչինչ, որ ուրուշում էին ճահճային խոնավությունից, մշրած կեղևով խառնված հաց ուտում, անտառում ու դաշտում համենայն դեպս իրենց գլխի տերն էին... Սակայն երևում է, որ ոչ ոք ձրի հանգիստ չէր տալիս։ Նեկտարին դաժանորեն էր կրթում հոգիները։ Զթողնելով ուշքի գան, ատելություն էր բորբոքում աշխարհի տիրակալի՝ նեռի հանդեպ։ Ատելության մեջ ծուլացողներին պատժում էր, մեկ-մեկ էլ վերջնական վանդում։ Վաղուց ի վեր ընտելացած էր մուժիկը՝ հրամայում են, ուրեմն պետք է անել։ Հրամայում են հոգով վառվել՝ ճարդ ինչ, վառվիր...

Հայր սուրբն այսօր առանձնահատուկ էր տանջում, երևում է ինքն էլ էր հալումաշ եղել... Պորֆիրին աջակողմյան դասից կարդում էր տարակա, բարձր ձայնով։ Տախտակապատ գմբեթի տակ մարդկանց շնչառությունից գոլորշի էր հավաքվել։ Կաթում էր առաստաղից...

Հայր սուրբը անապատելի շուտ վերադարձավ։

— Լսո՞ւմ եք,— բղավեց դռան մեջ։— Լսո՞ւմ եք նեռի ապաստավորներին։

Բոլորը լսեցին դարպասին հասցվող ծանր հարվածները։ Նա թափով անցավ աղոթատան միջով, փարաջայի փեշերը գլուխներին քսելով։ Մորուքը տնկած, երեք անգամ վրա-վրա խոնարհվեց սեպտեմ սրբերին։ Դեմքը դարձրեց հանդիսատեսներին այն աստիճանի մոլեգնած, որ երեխաները բարձրաձայն լաց եղան։ Ձեռքին երկաթյա մուրճ ուներ և մեխեր։

— Իմ հոգի՞, իմ հոգի՞, ընդվզիր, ինչո՞ւ ես քնած,— աղաղակեց նա։— Կատարվեց՝ մոտ է վախճանը... Երկրի վրա տեղ չմնաց մեզ համար՝ լոկ այս պատերը։ Վեր ճախրեք, զավակներս... Կրակ ու բոցերի մեջ։ Ապրված է վկա, տաճարից վեր, երկնքում նոր մի աչքերի

ծակ տեսա: Հրեշտակներն են դեպի մեզ գալիս, աղավնյակներս, ուրախանում են, իմ սիրելիներ...

Կանայք, աչքերը վեր հառած, արտասվեցին: Տղամարդկանցից մի քանիսն էլ էին ծանր-ծանր փսփսացնում...

— Էլ ե՞րբ ապաստան այսպիսի ժամի: Երկնային թագավորությունն ինքն է իջնում ձեր գլխին... Եղբայրնե՞ր, քույրե՞ր: Լսո՞ւմ եք՝ դարպասն են ջարդում... Դիվական զորքն է պաշարել փրկության սույն կղզին... Դրսում խավար է, գարշահոտ մրրիկ...

Մուրճ ու մեխեր բռնած ձեռքերը վեր բարձրացրեց, մոտեցավ դռանը, ուր երեք տախտակ կար պանված: Մուժիկներին կարգադրեց օգնել ու սկսեց տախտակները մեխել դռան լայնքով: Խոխոռացնելով էր շնչում: Աղոթողները սարսափահար նրան էին նայում: Սպիտակ սավանով ջանել մի կին աղոթատնով մեկ տնքաց.

— Ի՞նչ եք անում: Հաթազատներս, սիրելիներս, հարկավոր չէ...

— Հարկավոր է,— բղավեց հայր սուրբը և նորից գնաց դեպի բեմ:— Ո՞վ է լսել, որ քրիստոնյան կրակը չգցի իրեն: Կվառվենք, բայց հավերժ կենդանի կլինենք: (Կանգ առավ, ջանել կնոջ այտին խփեց:) Հիմար: Լա՞վ, մարդ ունես, տուն ունես, լիքը անդուկ ունես... Իսկ հետո՞ ինչ: Դագաղ չի՞ արդյոք: Խղճացինք մենք ձեզ, անխելքներիդ: Հիմա չի կարելի... Թշնամին է դռան տակ... Նեղը, արյան ծարավի, կարմիր գազանը հեծած, դռան տակն է կանգնած: Կատաղած է, թաս ունի ձեռքին, լի գարշանքով ու կղկղանքով: Հաղորդություն առեք միջից: Օ՜, սարսափելի է:

Կինը դեմքը թաղեց ծնկների մեջ, ցնցվեց, ավելի բարձր գոռաց վայրենի ձայնով: Մյուսներն ականջներն էին խցկել, կոկորդները բռնել, որ չողբան...

— Գնա, գնա դուրս... (Նորից՝ հարվածներ ու ճռռոց:) Լսո՞ւմ եք: Պլոտ ցարը նեռն է, մարմին առած... Նրա սպասավորները մեր հոգիներն են ուզում խլել... Դժո՞խք: Գիտե՞ս ինչ ասել է դժոխք... Դատարկ տիեզերքում, հողից վեր է հիմնված... Անտակ անդունդ, խավար ու տարտարոս: Մոլորակները կողքով են անցնում, թունդ ատանամանիք է այնտեղ, անդիմանալի... Կրակ կա այնտեղ անմարելի... Որդեր ու զեռուններ... Հալած կուպր... Թագավորությունն է նեռի: Այնտե՞ղ ես ուզում...

Նա սկսեց մոմերը վառել, բուռ-բուռ վերցնում էր եկեղեցու արկղից, ճարպկորեն վազ տալով, կպցնում էր սրբապատկերներին՝ ուր պատահի: Դեղին լույս ափվեց աղոթատան մեջ...

— Եղբայրնե՞ր: Հեռանո՞ւմ եք... Դեպ երկնային թագավորությո՞ւն... Երեխաներին մոտ բերեք, երեխաներին, այստեղ լավ կլինի, ծխից կքնեն... Եղբայրներ, քույրեր, բերկրացե՞ք... Հանգո՛ ընդ սուրբս քո,— երգեց, արմունկներով թևքերը բարձրացնելով...

Նրան նայելով, մորուքները ցցած մուժիկները ծնկաչոք մոտեցան գրակալին: Սողեսող մոտեցան կանայք, երեխաների գլուխները թաքցնելով գլխաշորերի տակ...

Աղոթատան պատերը ցնցվեցին. դիմաց արած գերանով տախտակապատ դռանը բակից հարվածեցին ծանր բանով: Հայր սուրբը բարձրացավ նստարանին, դեմքը մոտեցրեց դռան վերևի ծխանցքին.

— Մի մոտեցեք... Կենդանի չենք հանձնվի...

— Հայր սուրբ Նեկտարին դո՞ւ ես,— հարցրեց Ալեքսեյ Բրովկինը: (Դարպասը նրանք բացել էին, հիմա աղոթատան դուռն էին ջարդում:) Երկարուկ ծխանցքից կողքանց նրան էր նայում ծերունական մի դեմք: Ալեքսեյը չարացած դիմեց նրան.— Էս ի՞նչ եք խելքներդ թոցրել էստեղ:

Դժվարությամբ դուրս պարզվեց ծերունական ձեռքը, երկմատ խաչակնքեց ցարական սպային: Ներսից հարյուրավոր ձայներ թնդացին. «Տեր Աստված մեր, կեցո և ողորմյա»: Ալեքսեյն ավելի զայրացավ.

— Մատներդ քեզ քաշիր, ես քեզ համար սատանա չեմ, ոչ էլ դու ես ինձ տերտեր: Բոլորդ դուրս եկեք, թե չէ դուռը կջարդեմ:

— Իսկ դուք ի՞նչ մարդիկ եք,— տարօրինակ, ծաղրաբար հարցրեց հայր սուրբը:— Ինչի՞ համար եք եկել անտառ ու ծմակ տեղերը:

— Էն մարդիկն ենք, որ ցարական հրամանագիր ունեցող մարդիկ ենք: Թե մեզ չլսեք, բոլորիդ կկապկպենք, կտանենք Պովենեց:

Ծերունու գլուխը չքացավ, պատասխան չտալով: Ի՞նչ անեին: Ցակիմը հուսալքված շշնջում էր. «Ալեքսեյ Իվանովիչ, աստված վկա, վառվելու են...»: Ներսում նորից ձգեցին «հանգո՛ ընդ սուրբս քո»: Ալեքսեյը գնաց-եկավ դռան մոտ, զայրույթից քիթը քաշելով: Ինչպե՞ս հեռանար: Ճգնարանններով մեկ կտարածեին, թե տեսեք, քշեցինք սպային: Հանեց թաթմանները, վեր ցատկեց, բռնեց ծխանցքի եզրերից, ձգվեց ու նայեց. բազմաթիվ մոմերի տաք լույսի տակ իր կողքը շրջվեցին մորուքապատ, սարսափահար դեմքեր, երկմատ խաչակնքելով թշշացրեցին. «Սո՛ւրբ աստված, սո՛ւրբ աստված, սո՛ւրբ աստված»: Ալեքսեյը ցած թռավ.

— Մի հատ էլ հանցրեք դռանը...

Զինվորները զարկեցին: Սպասեցին: Այդ ժամանակ գմբեթի ձեղնանցքից դուրս սողացին երեք հոգի (Ցակիմը Ստյոպկա Բարմինին և Պետրուշկա Կոժևնիկովին ճանաչեց), ձեռքներին որսորդական աղեղներ, մեկական նետ էլ գոտիների տակը խրած, երրորդի ձեռքին երկարափող հրացան կար: Կանգնեցին տանիքին, զինվորներին էին նայում: Հրացանավոր մուժիկը խստանայն սպաց.

— Հեռու քաշվեք, կրակելու ենք: Մենք շատվոր ենք:

Նման հանդգնությունից Ալեքսեյ Բրովկինը շփոթվեց: Մանր-մունր պոսադականներ թե լինեին, կարճ կկապեր: Սրանք արմատական մուժիկներ էին, նրանց համառությունը լավ գիտեր: Հրացանավորը իսկն իր հանգուցյալ քավորն էր՝ հաստատուն, գոտին փորից ցած կապած, մորուքը հյուսած բրդի պես, աչքերն արջի աչք... Հո չէր կրակելու այդպիսի մի յուրայինի վրա: Ալեքսեյը միայն սպառնաց նրան: Ցակիմը խոսք բացեց.

— Անունդ ի՞նչ է:

— Օսիպ են ասում,— դժկամությամբ պատասխանեց հրացանավոր մուժիկը:

— Բա չես տեսնում, Օսիպ, պարոն սպան էլ հո իր գլխու գործ չի անում: Խաթրով խոսեիք հետը, լեզու գտնեիք:

— Ուզածն ի՞նչ է,— հարցրեց Օսիպը:

— Մի տասը-տասնհինգ հոգի տվեք իրեն զորքի համար, մեր գինվորներին էլ թողեք տաքանան: Գիշերը կգնանք:

Պետրուշկան և Ստեպանը, ականջները սրած, պպզեցին տանիքի պռնկին: Օսիպը երկար մտածեց.

— Չէ, չենք տա:

— Ինչի՞:

— Կուղարկեք մեր հին գյուղերը ճորտության: Կենդանի հանձնվողը չենք: Ուզում ենք հին աղոթքների, երկմատ խաչ անելու համար մեռնել: Էլ չխոսենք...

Բարձրացրեց հրացանը, փչեց խանձոցի մեջ, պոգի միջից վառոդ լցրեց ու կանգնել էր ոտքերը չոռած, դռան գլխին: Ի՞նչ կարելի էր անել: Ցակիմը խորհուրդ տվեց թքել այդ քաշքշուկի վրա: Նեկտարիին հնազանդեցնել չի լինի:

— Թե նա համառ է, ես էլ եմ համառ,— պատասխանեց Ալեքսեյը:— Առանց մարդ տանելու, չեմ դնա: Պաշարելով կկոտրենք:

Երկու գինվոր ուղարկեցին ձիերը լծարձակելու, կերակրելու: Չորս հոգու խուցն ուղարկեցին՝ տաքանալու: Մյուսները պիտի հսկեին, որ ջուր ու ուտելիք չմտներ աղթատուն: Օրը վերջանում էր: Սառնամանիքը՝ սաստկանում: Աղանդավորները երգում էին սգաձայն: Պետրուշկան և Ստեպանը շշնջալով նստեցին-նստեցին տանիքի վրա, հասկացան, որ գործը երկարում է:

— Ոտաց ճանապարհի ,պետք ունենք,— խնդրեցին:— Էստեղ մեղք կլինի, թողեք ցած իջնենք:

Ալեքսեյն ասաց.

— Թոնք, ձեռք չենք տա:

Օսիպը հանկարծ մորուքը սարսափազդու տմբացրեց նրանց վրա: Պետրուշկան և Ստեպանը մլուլ տվեցին, բայց և այնպես անցան գրմբեթի եռևն ու թռան ծղոտի վրա:

Նեկտարին, ըստ երևույթին, նույնպես հասկացավ, որ չորս կողմից պաշարված է: Դեմքը երկու անգամ մոտեցրեց ծխանցքին, կույրի պես մթնշաղին էր նայում: Ալեքսեյը փորձեց խոսեցնել, Նեկտարին միայն թքոտեց: Եվ աղոթատնից նորից լսվեց երգեցողությունը, աղերսանքն ու մանկանց լացը խլացնող նրա խոպոտած ձայնը: Ներսում մի վատ բան էր կատարվում:

Երբ վերջալույսը լիովին հանգավ, ձեղնանցքից տանիք բարձրացան անգլխարկ մի տասը մուժիկներ: Ձեռքերը թափահարելով, բղավեցին մոլեգնած.

— Դե՞նը քաշվեք, դե՞նը քաշվեք...

Բոլորը շտապ-շտապ պկսեցին մերկանալ, հանում էին կիսամուշտակները, վաղենկաները, շապիկները, շալվարները...

— Առեք,— գինվորներին էին շպրտում հագուստը:— Առեք, հոգեառներ: Վիճակ գցեք, թե որիդ կհասնի: Տկլոր ծնվել ենք, տկլոր էլ կգնանք...

Մերկանդամ ու կապտած, բերանքսիվայր փռվում էին տանիքին, երեսները ձնով շփում, հեծկլտում էին, գոռգոռում, վեր թռնելով, ձեռքերն էին բարձրացնում և նորից բոլորը՝ ձնակոլոլ մորուքներով, ներս մտան ձեղնանցքից: Մնաց մենակ Օսիպը: Դռանը մոտ չթողնելով, հրացանով նշան էր բռնել գինվորներին... Ալեքսեյը շատ վախեցավ տկլոր մուժիկներից: Ցակիմը լացակումած բղավում էր ծխանցքի կողմը.

— Գոնե երեխեքին խղճացեք: Եղբայրնե՞ր: Կնանքա՞նց խղճացեք...

Աղոթատանը ողբ ու կական բարձրացավ՝ ոչ բարձրաձայն, բայց այնպիսի, որ ականջներդ փակես ու փախչես: Գինվորներն ավելի մոտեցան, դեմքերը լրջացել էին:

— Պարոն պորուչիկ, վատ բան է ստացվում, Օսիպը կրակում է, կրակի, թող դուռը ջարդենք...

— Ջարդեք,— ատամները սեղմելով, բղավեց Ալեքսեյը:

Գինվորներն իսկույն ցած դրեցին հրացանները, գերանը վերցրեցին: Մայրամուտի մեջ հազիվ նշմարվող խաչով գմբեթը հանկարծ նոնվեց: Ծանր ցնցվեց գետինը, պայթյուն թնդաց, ու բոլորի կրծքին հարվածեց օդի ալիքը: Տանիքի տակի ճեղքերից ծուխ ելավ, ավելի թանձրացավ. կրակը բռնեց... Բոցի լեզուները սողում էին գերանների արանքով...

Երբ հարվածների տակ դուռն ընկավ, ամբողջովին կրակ բռնած, ածխացած գլխով մի մարդ դուրս թռավ ներսից, որդի պես սկսեց գալարվել ձյան վրա: Ծխապոչ բոցն էր պտույտ տալիս աղոթատան մեջ, թռչկոտում, դեսուդեն էին շպրտվում վառվող մարդիկ: Կրակը հատակի տակից էր խփում: Կողքի բարդոցներն արդեն ծուխ էին արձակում:

Անտանելի շոգից գինվորները ետ քաշվեցին: Ոչ մեկին փրկել չէր լինի: Եռանկյունի գլխարկները հանած խաչակնքում էին, մի քանիսն արտասվում էին: Որպեսզի ոչինչ չտեսնի, չլսի գազանային ոռնոցները, Ալեքսեյը ջարդված դարպասից ելավ: Ծնկները դողում էին, սիրտը խառնում էր: Հենվեց ծառին, նստեց: Հանեց գլխարկը, սառեցրեց գլուխը, ձյուն կերավ: Հրացոլքն ավելի ու ավելի էր լուսավորում ձնապատ անտառը: Խանձվող մսի հոտից թաքնվելու տեղ չկար:

Նա տեսավ. քիչ հեռվում, բոսորագույն ձյան մեջ թաղվելով, երեք հոգի էին գալիս: Մեկը ետ էր մնացել ու կարծես ձեռքերը կոտրատելով նայում էր, թե ինչպես անտառից շատ բարձր, հորդացող ծխի միջից բոցի լեզու է ելնում ճգնարանի վրա, կայծերի մրրիկ է շպրտվում վեր ու վեր... Մյուսը՝ ընկնավորը, ձեռքից բռնած քարշ էր տալիս

լիս փարաջայի վրայից կաշերես կիսամուշտակ հագած, երկարամորուս մի ծերունու:

— Դո՞ւրս էր եկել շան որդին, փախե՞լ էր,— բղավում էր ընկնավորը, ծերունուն քարշ տալով ցարական սպայի մոտ:— Կտորկտոր աճել է պետք... Կրակից փախել էր գետնի տակի անցքով... Ինձ ու Օնդրյուշկային վառել էր ուզում անիծած սատանան...

9.

Ցարական հրամանագիրը պարտադրում էր. «Բոլոր քրիստոնյա ժողովուրդների օրինակով, տարիները հաշվել ոչ թե աշխարհի ստեղծումից, այլ Քրիստոսի ծնունդից ութ օր անց, և նոր տարին հաշվել ոչ թե սեպտեմբերի մեկից, այլ դույն 1700 թվականի հունվարի մեկից: Եվ ի նշան այդ բարեսկիզբ ու հարյուրամյա նոր դարի, ուրախությամբ շնորհավորել միմյանց նոր տարին: Երեխի ու անցուդարձով փողոցներում, դարպասների և տների առաջ զարդարանքներ պատրաստել կեչու, եղևնու և գիհի ծառ ու ճյուղից, սրբապատկերների դիմաց, որպիսիք վաճառաշարքերի ներքևի դեղատան մոտ են դրված: Զունևոր մարդիկ գոնե մի-մի ծառ կամ ճյուղ կախեն դարպասի վրա: Պալատական, զինվորական ու առևտրական տների բակերում փոքր թնդանոթներից կամ հրացաններից կրակոցներ արձակել, հրթիռներ թողնել՝ ով ինչքան ունեցավ, և կրակներ վառել: Իսկ որտեղ մանր տնտեսություններ են, հինգ կամ վեց բակեր թող հավաքվեն, կուպրի հին տակառներ վառեն, մեջը ծղոտ կամ չախ լցնելով: Բուրմիստրական ուստուշայի առաջ կրակներ և հրավառություն թող լինի իրենց հայեցողությամբ...»:

Այդպիսի զանգահարություն վաղուց չէին լսել Մոսկվայում: Ասում էին, թե պատրիարք Ադրիանը, չհամարձակվելով առարկել ցարի և ոչ մի խոսքին, զանգահարության համար ժամկոչներին հազար ռուբլի է տվել ու հիսուն տակառ պատրիարքական թունդ գարեջուր: Թրթռալով դողանջում էին զանգերը մեծ ու փոքր զանգակատներում: Մոսկվան պարուրված էր ծխի ճերմակ քուլաներով, ձիերից ու մարդկանցից ելնող գոլորշիով: Ճզճզում էր սառած ձյունը: Ծառերը ճկվել էին եղյամի ծանրությունից: Գիշեր-ցերեկ բաց պանդոկներում ծուխ ու մուժ էր: Այդ մեգի միջից արեգակը ելնում էր Շառագունած ու անկրկնելի, շողերը թողնելով խարույկների մոտ կանգնած պահակների լայնշեղք տեգերի վրա:

Զանգերի դողանջների արանքից Մոսկվայով մեկ կրակոցների ճայթյուններ էին լսվում, թնդանոթների թավաձայն բոմբիյուն: Տասնյակ սահնակներ էին պանում քառատրոփ, գինովցած ու դիմակավոր, երեսներին մուր քսած ու շրջած մուշտակներ հագած մարդկանցով լեփ-լեցուն: Ծտոֆները թափահարելով, ոտքերն էին վեր ցցում, բղավում, խենթություններ անում, սահուտների վրա խումբ-խումբ թափվում զանգահարությունից ու ծխից շշմած հասարակ ժողովրդի առաջ:

Մինչև Մկրտություն ամբողջ շաբաթը թնդում ու աղմկում էր Մոսկվան: Հրդեհներ էին բռնկվում: Լավ էր քամի չկար: Ծրջակա անտառներից բազմաթիվ ավազակներ լցվեցին քաղաք: Հենց ճնապատ տանիքների ետևից ծուխ էր ժայթքում, սահնակներով պանում էին չարակամ մարդիկ՝ ոչխարի չորացրած գանգերը երեսներին քսած, ծաղրածուի գլխարկներ դրած, դարպասը ջարդում, լցվում էին վառվող տունը՝ թալանում, մաքուր արբում ու տանում էին: Մի քանիսին բռնեցին, ոմանց էլ ժողովուրդը ոտի տակ առավ: Լուրեր կային, որ Մոսկվայում շրջում է ինքը՝ Եմեն Սոկոլը:

Ցարն իր մերձավորների, իշխան-պապի, ծեր անտուակ Նիկիտա Զոտովի, հանդես խեղկատակաց արքեպիսկոպոսների հետ, կատվի պոչեր կախ տված սարկավագական շուրջառներով, երևելի անելն էր շրջում: Հարբած և կուշտուկուռ, միևնույն է վրա էին պրծնում մորեխի պես, ոչ այնքան ուտում, որքան թափում ու ցրիվ էին տալիս, հոգևոր երգեր ոռնում, միզում պեղանների տակ: Տանտերերին հարբեցնում էին ուշագնացության աստիճան, և հայդա՜, շարունակում ճամփան: Հաջորդ օրը տարբեր տեղերից գլուխ-գլխի չհավաքվելու համար խառնիհառնց գիշերում էին որևէ մեկի տանը: Քեֆ ուրախությամբ Մոսկվան շրջեցին ծայրեծայր, շնորհավորելով Նոր տարվա և հարյուրամյա դարի գալուստը:

Պուսադական սուսուփուս և ատվածավախ մարդիկ այդ օրերին աճուդողի մեջ էին, վախենում էին տներից դուրս գալ: Հասկանալի չէր, թե հանուն ինչի է այդ խելահեղությունը: Սատանան հո չէ՞ր դրդել ցարին՝ խռովել ժողովրդին, հին սովորույթը՝ ողնաշարը փշրել, որով ապրում էին... Զնայած նեղ էին ապրում, բայց ազնվորեն, կրպակը խնայելով, գիտենալով՝ այս այսպես է, սա այսպես չէ: Ամեն ինչ դուրս եկավ վատ, ոչ նրա ուզածով:

Օտար խաչ ու պտղունց չընդունողները հավաքվում էին ներքնահարկերում՝ գիշերային հսկումների: Վերստին փսփսոց տարածվեց, թե մինչև բարեկենդան է կյանք մնացել. շաբաթ լույս կիրակի գիշերը Ահեղ դատաստանի փողն է փչելու: Բրոնենյա արվարձանում մի մարդ հայտնվեց, ժողովրդին հավաքում էր բանտիքում, պտույտներ տալիս, ափերով դեմքին զարկում ու բղավում երգեցիկ, իբր ինքը Սավուղ աստվածն է՝ ձեռով ոտով, ապա ընկնում էր փրփուրը բերանին... Մեկ ուրիշը՝ փոչոտ, մերկ ու սարսափազդու, հայտնվում էր ժողովրդին, երեք խաչերկաթ բռնած, անհասկանալի մարգարեություններ անելով, աղետներով սպառնալով:

Կիտայ և Բելի գորոդների դարպասներին ցարական մեկ ուրիշ հրամանագիր փակցրեցին. «Բոյարները, պալատականները, վարչատների ու առևտրական աստիճանավոր մարդիկ հետայսու անպայման հունգարական զգեստներով պիտի ման գան, իսկ գարնանը, երբ ցրտերը թեթևանան, բոլորը սաքսոնական կաֆտաններ պիտի հագնեն»:

Կեռերից կախ արած ցուցադրում էին այդ կաֆտաններն ու լայնեզր գլխարկները: Հսկող զինվորներն ասում էին, թե շուտով բոլոր

առևտրականների, պտրելեցների, պոսադականների կանայք, տերտերակին ու դպրակին պիտի գլխաբաց ման գան, գերմանական կարճ շրջազգեստով ու շորերի տակից կոլերին կետի ոսկոր պիտի դնեն... Ճշկլված, անորոշ սարսափով համակված բազմություններ էին խռնվում դարպասների մոտ: Փափսալով միմյանց հայտնում էին, իբր երեք խաչերկաթ բռնած անհայտ մեկը կղկղանք է շպրտել այդ կափտանների վրա ու բղավել. «Ծուտով կհրամայեն, որ ռուսերեն էլ չիսեք, համբերեք: Հռոմեական ու լութերական տերտերներ են գալու լցվելու, որ ամբողջ ժողովրդին ետ մկրտեն: Պոսադականներին մըշտական ճորտության են տալու գերմանացիներին: Մոսկվային նոր անուն են տալու՝ Ձերտոգրադ: Հին գրքերից պարզվել է, որ Պյոտր ցարը ջհուդ է, սերված Դանից»:

Ինչպես չհավատալ այդ խոսքերին, երբ Մկրտությունից առաջ վաճառական Ռևյակինի գործակատարները, վաճառաշարքերով անցնելով, հանկարծ սկսեցին պատմել աշխարհը նեռից փրկելու համար կատարված մեծ ու սարսափելի զոհաբերման մասին. Վըլգ-լճի մոտերքում մի քանի հարյուր երկմատ խաչակնքողներ կենդանի-կենդանի վառվել են: Կրակից վեր երկինքը բացվել է, երևացել են ապակյա գետինն ու չորս կենդանու վրա կանգնած գահը, գահին նստած աստված, աջ ու անյակ կողմերում երկու անգամ տասանելու հայր սուրբ ու քերովբե կանգնած՝ «երկու թևերը բաց, երկու աչքերը փակ, ու երկու ոտանի»: Գահից աղունիկ է ցած թռել, և կրակը մարել է, և վառոցի տեղը անուշահոտություն է տարածվել:

Ցամաների վարչատանը սովորական տեսք ու հասակի մի մարդ գնալուց առաջ մի նամակ գցեց հատակին: Ձայն տվեցին. «Էյ, էս ի՞նչ գցեցիր»: Վախեցավ, փախավ ու չքացավ: Փակ նամակի վրա գրված էր. «Հանձնել մեծն սրքային, առանց բացելու»: Ատենավոր Պավել Վասիլևիչ Սուլովը դողդողացող ձեռքերը հագիվ մտցրեց մուշտակի թևքերի մեջ: Սպառնալով կառապանի կաշին մաշկել, պլացավ Պրեոբրաժենսկոյե:

Պալատի նախասրահում պահախմբի սպան արհամարհանքով զննեց ատենավորին՝ ճաղատից մինչև սեկե, ներսը բուրդ սապոգները. «Ցարի մոտ չի կարելի»: Հուզմունքից թուլացած Պավել Վասիլևիչը նստեց նստարանին: Անագին ժողովուրդ կար. ամբարտավան գինվորականներ, ռուսները բոլորը բարձրահասակ, թիկնեղ, ցուլի պես առողջ, օտարերկրացիներն՝ ավելի մանր, բայց դուրեկան դեմքերով (վերջին ժամանակներս խեղճերին շատ էին սկսել վոնդել ծառայությունից հիմարության և հարբեցողության պատճառով), վլադիմիրցի, յարոսլավլցի, օրյոլցի ճարպիկ բանագնացներ, արհեստավորներ, մանր վաճառականներ, կողք-կողքի նստած էին բարձրատոհմիկ երկու բոյար՝ մեկի գլուխն էր փաթաթած, մյուսի աչքի տակը սևացած. կովելուց հետո եկել էին խնդրագիր տալու մեկը մյուսի վրա: Ձեռքերը մեջքին դրած, ոչ մեկին չնայելով, դարչնագույն կարճիկ կափտան հագած ու թելահյուս կեղծամ դրած մի օտարերկրացի էր գնումգալիս, ակնոցավոր, բարի և տխված տեսք ուներ. մաթեմատիկոս էր

և քիմիկոս, պերպետուում մոբիլեի՝ հավերժական ջրանիվի, նաև շաշկի խաղացող, ցանկության համաձայն միջից գինի կամ գարեջուր ցայտեցնող պլնձյա մարդ-ավտոմատի հոչակավոր գյուտարարը: Մաթեմատիկոսը ավելի քան հարյուր պատենտ էր առաջարկում ցարին, որոնք կարող էին հարստացնել Ռուսական տերությունը:

Բակից նախասրահ ընկավ հարբած Նիկիտա Զոտովը, չտեսնված գեր մի մարդու հետ. «Մի վախենա, այլանդակություն պիրում է նա, քեզ փող կտա»՝ իշխան-պապը գիրուկին քարշ էր տալիս ցարի սենյակը: Պավել Վասիլևիչը, ծառայողական ջանադրությունից բորբոքված, մոտեցավ ապային և խլաձայն ասաց մոտիկից. «Խոսք և գործ»: Նախասրահում անմիջապես սկսվեցին: Սպան ձգվեց, կարճ հևոցով թուրը քաշեց. «Գնանք»:

Նամակը, որ Պավել Վասիլևիչն անձամբ ցարին տվեց (Պյոտրի գլուխը ցավում էր, ատենավորին ընդունեց խոժոռված, անհամբեր), տեղնուտեղը բացված այդ նամակը ստորագրել էր Ալյոշկա Կուրբատովը՝ իշխան Պյոտր Պետրովիչ Ծերեմետևի ծառաներից մեկը: Թոուցիկ կարդալով, Պյոտրը եղունգներով բռնեց կզակը. «Հը՞մմ», մի անգամ էլ կարդաց, գլուխը ետ գցեց. «Հա՛» և Սուլովին մոռացած, արագ-արագ գնաց ճաշասենյակ, ուր մերձավորները անհամբեր սպասում էին ճաշելու:

— Պարոնայք մինիստրներ,— Պյոտրի աչքերն իսկ պայծառացել էին:— Կերցնում, խմացնում եմ ձեզ լիուրջ, բայց ձեր տված օգո՞ւտն ինչ է... Ահա՛: (Թափահարեց նամակը:) Անհնչան մի մարդ, ճորտ, բայց հնարե՞լ է: Գանձարանի հարստացումը... Ֆյոդոր Յուրևիչ... (Դարձավ ֆոֆպացնող իշխան Ռոմոդանովսկուն:) Հրամայիր գտնեն, մոտս բերեն Կուրբատովին իսկույն ևեթ: Սուտնց նրա ճաշելու չենք նստի... Էսպիսի բաներ, պարոնայք մինիստրներ՝ հարկավոր է արծվանշան թուղթ վաճառել բոլոր տեսակի կայքագրերի, խնդրագրերի համար. գերբագիր թուղթ, կոպեկից մինչև տասը ռուբլի: Հասկացա՞ք: Պատերազմի համար փող չկա՞: Ահա՛, ահա՛ փողը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1.

Դեռ չէր լուսացել, բայց արդեն տնով մեկ շրխկշրխկում էին դռները, սանդուղքներն էին ճոճում՝ աղախինները բակ էին քարշ տալիս տուփեր, կապոցներ, ճամփորդական սնդուկներ: Իշխան Ռոման Բորիսովիչը հապճեպ գցած պեղանի մոտ, ճարպամոմի լույսի տակ նախաճաշում էր: Ծչին գդալելով, դժկամությամբ շրջվեց:

— Բա Ավդոտյան... Անտոնիդա... Օլգա՛... Օ՜, տեր աստված...

Փորը բարձրացրեց, ձեռքը պարզեց շշին: Մաժորդոմն էլ էր կորել նրանց հետ: Ահա՝ ինչ-որ մեկը աստիճաններով գլորվեց ցած:

— Կամա՞ց, սատանաներ... Օ՜, տեր աստված...

Ներս վազեց խելառ Անտոնիդան՝ մազերը գզգզված, մոր հին մուշտակը վրան գցած...

— Անտոնիդա, նստիր, մի բան կեր...

— Հա, ախ, հայրիկ...

Վերջինս փետրաբերդի գլխաշորը, նետվեց նախասենյակ: Ռոման Բորիսովիչը դեռևս դեղեր՝ էՀ ինչ ուտի: Գլխավերևում (վերնասենյակում) ինչ-որ բան էին քարշ տալիս, գցեցին՝ աղբ թափվեց տախտակած առաստաղից: Սա ի՞նչ բան է: Տո՞ւնն են քանդում... Գլուխն օրորելով, մի կտոր թառաի վերցրեց:

Դռնից ներս խցկվեց իշխանուհի Ավդոտյան՝ մուշտակով, տաք գլխաշորերով, ընկավ պատի տակ դրված վենետիկյան աթոռի վրա: Վախից նիհարել էր, ամբողջ կյանքի ընթացքում միայն երկու անգամ էր Մոսկվայից դուրս եկել՝ Տրոիցե և Նոր Երուսաղեմ: Ու հանկարծ, այսպիսի ճանապարհ, այն էլ շտապ-շտապ...

— Գլխաշորե՞րդ ինչի ես կապել ժամանակից շուտ: Հանիր, մի բան կեր: Ճամփին կերածը կերած չէ:

— Ռոման Բորիսովիչ, գնալիք տեղը հեռո՞ւ է:

— Վորոնեժ է, այ կնիկ:

— Տե-ե՞ր աստվա-ա՞ծ...

Անարցունք հեծկլտաց: Վերևից լսվեց Ոլգայի ծղրտոցը. «Մայրիկ, կեղծամներս ո՞ւր եք խցկել»: Ավդոտյան տերևի պես պոկվեց աթոռից, թեթև թռավ դուրս:

Մի բան էր սփոփում Ռոման Բորիսովիչին. գիտեր, որ այս իրարանցումը հիմա ամբողջ Մոսկվան է բռնել: Իշխան-կայսրը՝ մայրաքաղաքի սիրակալն ու պարսատիը, երեկ չէ առաջին օրը ցարական հրամանագիրն էր ազդարարել. պալատականները, կանանց և երեխաների հետ, հայտնի վանառականները և Գերմանական արվարձանի երևելի մարդիկ պիտի գնան Վորոնեժ, «Դրեդեստինացիա» նավը ջուրն իջեցնելուն մասնակցելու. այդպիսի խոշոր նավ արտասահմանում անգամ քիչ էին տեսել: Առաջիկա հալոցքից խուսափելու համար հարկ էր մեկնել անհապաղ, սահնակի ճամփան դեռ կար:

Ռոման Բորիսովիչը, թեև դժկամությամբ, բայց համենայն դեպս, սկսել էր հասկանալ քաղաքականությունից: Հունվարյան աղմկալից սոնախմբություններից հետո, Կոստանդնուպոլսից մեծն դեսպան Եմելյան Ռիկրաինցևից նամակներ եկան. թուրքերն սրդեն ըստ ամենայնի հակված էին հաշտության, միայն ոչ մեծ զիջումներ էին խնդրում՝ բորբոքված սրտերը հանգստացնելու համար, և Եմելյան Ռիկրաինցևը նույնիսկ այն մտքին էր բերել նրանց, թե ռուսներն անհոդողդ կանգնած են Կաղովիցեի համաժողովին նշված հիմքի վրա. «ով ինչին տիրում է, տիրում է», բայց հանկարծ Ցարեգրադում ինչ-որ բան է կատարվել, ինչ-որ թշնամի էր մտել բանակցությունների մեջ, և թուրքերն առաջվանից ավելի կատաղած քթերը տնկել էին, ետ պահանջելով Ազովը և Կազիկերման քաղաքը, մերձդնեպրյան գյուղաքաղաքների հետ, նախկինի պես պահանջելով, որ մոսկովյան

ցարերը տուրք վճարեն Ղրիմի խանին: Տիրոջ դագաղի մասին հիշել անգամ չէին ուզում:

Այդ լուրերը ստանալով, Պոտրը շտապեց Վորոնեժ: Ալեքսանդր Դանիլովիչը, կեչու ավելով տոնական խումբարը միջից հանելով, շքեղ կառքով շրջեց հայտնի վանառականների տները: Սրտացին խոսեց հետևները. «Փրկել է պետք: Եթե գարնան գլուխ թուրքերին չվանցնենք հսկա նավատորմով, հաշտություն չի լինի: Բոլոր գործերը, որ սկսել ենք, հօդս կցնդեն»:

Լև Կիրիլովիչն, իր հերթին, Կրեմլում արտասվախառն ասում էր բարձրաստիճան պալատականներին. «Կարո՞ղ ենք դիմանալ անպատվությանը: Նախկինի պես տո՞ւրք վճարենք Ղրիմի խանին, ամեն գարուն թաթարական հորդանե՞ր ապասեն մեր լավագույն հողերի վրա: Կարո՞ղ ենք հանդուրժել տիրոջ դագաղի անարգումը թուրքերի և կաթոլիկների կողմից: Ինչպես Սինինի և Պոժարսկու ժամանակ, վերջին շապիկը կտանք վորոնեժյան մեծ նավատորմը կառուցելու համար»:

Նավաշինական կոմպանիաները ստիպված էին նորից արձակել քսակները: Մոսկվայում չարագույժ լուրեր պտտվեցին մոտալուտ սպառազմի մասին. համարյա ամբողջ աշխարհն, ասում էին, գենք առած, մեկը մյուսի դեմ է ելել: Ճտարերկրացիները, որոնք մկների պես ելումուտ ունեին Մոսկվա, Եվրոպայով մեկ տարածեցին, թե Մոսկվան էլի նախկինն է՝ իսկական բրիատոնեության խաղաղ հանգրվան, լի է թնդանոթներով ու զինվորներով, երիտասարդ ցարը գոռոզ է և ամբարտավան, խորհրդականները՝ հանդուգն... Մոսկվան, իբր, անցյալ գլուխը դնում է ցավի տակ...

Վերջերս Կրեմլում Ռոման Բորիսովիչը տաքացած խոստացել էր տարեկան լրիվ պարենամթերք ապահովել նորակառույց «Դրեդեստինացիա» նավի համար: Կարմրատակած մոլեգնությամբ փքված, Լև Կիրիլովիչին երես առ երես բղավել էր. «Ինքս ձի կհեծնեմ, թույլ չեմ տա, որ թագավորն անպատիվ լինի»: Եվ նույնիսկ երբ գիշերով, մոմն առած, գաղտնի նկուղն էր իջել, անկյունի խոնավ հողի միջից կճուճը հանել, կոպեկ կոպեկ հարյուր հիսուն ռուբլին էր հաշվել կոմպանիային իր հասանելիքը տալու համար, նույնիսկ այդ նկուղում մեն-մենակ, աղոտ լույսի տակ յուրաքանչյուր մետաղադրամը հաշվելիս, իրեն թույլ չէր տվել հակառակը մտածել: Իշխան Բոյնոսովն այլևս առաջվանը չէր՝ սովորեցրել էին:

Հակառակ մտքերը խեղդել էր իր մեջ, խորունկ քաղել: Նույնանման մտքերի տեր իշխան Լլյկովը հիմա նստած էր իր գյուղում, շնորհազարդ վիճակում: Անիսելք իշխան Ստեպան Բելոսելսկին իշխան-կայսրի տանը խնջույքի ժամանակ հարբած-հարբած գոռացել էր. «Ի՞նչ դառավ, քնած տե՞ղս էլ չես թողնում իմ ձևով մտածեմ: Երեսներս թաշեցիք, ֆրանսիական շալվար եմ հագնում, բայց հոգի՞՝ ա՛ռ հա...»,— ու հայհոյանշան էր ցույց տվել: Իշխան-կայսրն ընդամենը քթի տակ գեշ ծիծաղել էր: Հաջորդ օրը իշխան Ստեպանին հրաման տվեցին Պուստոզերսկ գնալ, որպես վոյեվոդա...

Ռոման Բորիսովիչի խելքը տեղն էր: Բայց արդեն հայտնի չէր, թե ինչ խելք է հարկավոր ունենալ Պյոտր ցարի խենթություններին հասնելու համար: Կարծես գիշերն էլ քուն չուներ՝ մարդկանց հանգիստ չտալու համար: Ամբողջ Մոսկվայով Վորոնեժ սլանալ... Ինչի՞ համար: Կիսակուշտ, նեղվածքի մեջ, քսան տնակների թախտերին վեր ընկնելո՞ւ, նավաստիների հետ օդի խմելո՞ւ: Հապա կանանց ինչու քարշ տալ այնտեղ: Օ՜, տեր աստված...

Ռոման Բորիսովիչը մի ավել բաժակ էլ խմեց, խռով մտքերը մեղմելու համար: Պատուհանը լուսավորվում էր: Ագռավները նստեցին պատուհանի տակի մերկացած ծառին: Ինչքան էլ ցարը խաթարի մեր հանգիստը, մեկ է, վաղորդյան կանաչ լույսը նույնն է, ինչ պապերի օրոք, նույն ամպերն են վարդագունում գնդեթներից դենը... Որովայնի խորքերից, առանց բերանը բացելու, թնչացրեց Ռոման Բորիսովիչը: Բակից լսվում էր բոժոժիկների ձայնը, ձիապանները լծելիս բղավում էին ձիերի վրա...

Ճանապարհ ընկան երկու սահնակաքով (երեք սահնակ էլ հագուստ-կապուտաք էր ու հավուճիվ): Բոժոժիկները ճանապարհային տրամություն էին դողանջում: Կոլեմենսկոյեի ճանապարհը տափանված էր, բայց դարուփոս: Ցուրաքանչյուր վերտի վրա կարմիր սյուն էր տնկված, արանքներն ընկած տարածության վրա նորատունկ կեչիներ: Անտոնիդան և Օլգան սյուներն ու ծառերն էին հաշվում (ուրիշ զբաղմունք չունեին ճանապարհին, մարտյան արևի տակ ձյան սառած շերտն էր, հնովում դարչնագույն անտառակներ): Ճամփամերձ ծառերին թառած ագռավներով օրիորդներն իրենց սիրային հանդիպումներն էին գուշակում: Մյուս սահնակաքի մեջ Ռոման Բորիսովիչը, իշխանուհի Ավդոտյային ուսով սեղմած, ֆսֆսում էր, փռսերի մեջ շարժում շրթունքները: Հանգիստ էին գնում:

Մոսկվայից հիսուն վերստ հեռու, Ուլյանինո գյուղում ճաշ պիտի տային: Գոգանովոյից դեռ չէին երևացել ծղոտե տանիքները, բոյնոսովյան գումակի կողքով կաշեպատ ու բարձրակող մի սահնակաք սուրաց՝ վեցալոծ աշխետ ձիերով, երկու ձիավարով: Հետաքրքրությունից իրար անցած օրիորդների վրա ապակե լուսամուտից անտարբեր հայացք նետեց սև սամույրի մորթիների մեջ փաթաթված մի քնքշադեմ գեղեցկուհի:

— Մոնսիխան, Մոնսիխան,— իրար անցավ Անտոնիդան, մոր մուշտակը վրայից գցելով:— Օլգա, մի տես է, կավալեր ունի հետը... (Արագընթաց սահնակաքի խորքում իրոք սափրած մի դեմք երևաց ու գլխարկի ժապավենը:)

— Կենիգսենկն է, աչքդ դուրս գա:

Անտոնիդան թաթմանները իրար զարկեց.

— Ի՞նչ ես ասում... Օ՜, անամոթի մեկը...

— Նոր գլխի ընկար... Քաղ է էդ գերմանուհին... Ամբողջ Մոսկվան է փսփսում Կենիգսենկի մասին, մենակ թագավորն է կույր...

— Հրապարակի մեջտեղում մորակով ծեծել է պետք դրան...

— Վերջը դա էլ լինելու է...

Գյուղում համարյա յուրաքանչյուր բակում գումակներ էին կանգնած, բաց դարպասներից երևում էին բոյարական սահնակաքերը: Գյուղացի կանայք, թրիքի կոլտերի մեջ դեսուդեն ընկած, հավ էին բռնում: Ռոման Բորիսովիչը բարկացավ Ավդոտյայի վրա.

— Էս էլ ձեր երկար-բարակ ու տխմար հավաքվելը՝ մինչև լուսաբաց պիտի ճամփա ընկնեինք... Հիմա եկ ու ազատ տեղ գտիր...

Հրամայեց քշել ցարական խրճիթի մոտ: Զորպուսամուտանի, հնգաստիճան շքադռնով այդպիսի ճանապարհի տներ այս տարի կառուցել էին իշևանամեջ յուրաքանչյուր գյուղում, մինչև Վորոնեժ: Պարետներին հրամայվել էր պարեցի և խմիչքի պաշար ունենալ և մեծագույն սարսափն աչքի առաջ՝ վերացնել ուտիճներին (որովհետև թագավորը խրճիթաբնակ սույն արարածներից վախենում էր):

Պարետը դուրս պրծավ սամոտոք՝ կլեղամով ու սուսերով էր, ձեռքերը թափ տվեց եկողների վրա. «Լիքն է, լիքը, չի կարելի»: Ռոման Բորիսովիչը հպարտությամբ հրեց նրան, մտավ նախասենյակ, իշխանուհին և օրիորդները ետևից: Պարետը հուսահատ թըշշացնում էր թիկունքում: Իրոք, երկու սենյակներում, աջ և ձախ նախասրահներում ասեղ գցելու տեղ չկար: Մուշտակներ, վալենկաներ, գլխարկներ և սուսերներ էին կիտված հատակին, իրար էին անցել աղախինները, շչիի հոտ էր գալիս:

— Հայրիկ, էստեղ մեծամեծներն են,— շշնջաց Օլգան:

Իշխանն ինքն էլ էր տեսնում, որ հարկավոր է սուսուփուս հեռանալ: Հանկարծ աջակողմյան սենյակից, ուր կեղծամավոր կավալերներ էին ծիծաղում, գերմանացու մի ձայն խոսեց ռուսերեն.

— Իշխանուհի Օլգա, իշխանուհի Անտոնիդա, հրամայեցեք մեր սեղանին:

Կեղծամները ետ քաշվեցին: Գցած սեղանի մոտ Աննա Մոնսն էր նստած՝ կարմիր զգեստով, ճամփորդական գլխանոցով, գինով լի գավաթը բռնած, նա շրջվեց ու ժպտալով կանչում էր.... Կավալերները՝ սաքսոնյան դեսպանորդ Կենիգսենկը, Մոսկվայում շվեդական ներկայացուցիչ Կենիգերկրոնի ազգականը՝ Կառլոս Կենիգերկրոնը, օրիորդներին անծանոթ ևս մի ֆրանսիացի, վեր թռան իշխանադուստրերի մուշտակները վերցնելու: «Ա՜հ, ինքներս կնստենք»՝ օրիորդները շտապ-շտապ վրաներից գցեցին մորական հնոտին, խցկեցին մուշտակների կույտի մեջ («Սպասիր, սիրելի մայրիկ, էս խաղտառակությունը կհիշեցնենք դեռ»): Կավալերներին թևանցուկ արած, ներս մտան և նվաղած ծաղեցին ծնկները...

Մեջքով դեպի քրտնած լուսամուտը, օթոցի վրա նստած էր հոշոր աչքերով, կիսաբաց բերանով, թխամեր մի տղա: Նվազ գլուխը ուսին հենած հոգնած նայում էր թիկնեղ, կուշտ ու շառագունած մարդկանց, որոնց խոսակցությունն ու քրքիջը հաստատապես ձանձրացրել էր նրան: Պրեոբրաժենյան վառ կանաչ փոքր կաֆտան էր հագել, լանջագոտուց կախ փոքր սուսեր ուներ, սպիտակ ու խավոտ ոտնամանները հատակին չէին հասնում:

Ռոման Բորիսովիչը, դեռ շեմից փղձկալով, ջերմեռանդությամբ

մոտեցավ տասնամյա մանչուկին, ընկավ տխմտակած հատակին, նակատը գետնին խփեց և ֆսֆսալով մեծն արքա-գահաժառանգ, արքայազն Ալեքսեյ Պետրովիչից խնդրեց թույլ տա ձեռքը համբուրել:

— Տուր, Ալյոշենկա, ձեռքդ տուր նրան,— երգեցիկ ու զվարթ ասաց կարմրաթուշ արքայադուստր Նատալյա Ալեքսեևնան: (Թագունի Եվդոկիային Սուզդալ տանելուց հետո հարազատ հորաքույր Նատալյան փոխարինել էր նրա մորը:)

Ալյոշենկան դանդաղ նայեց հորաքրոջը, հնազանդությամբ իշխան Ռոմանին պարզեց ժանեկավոր թևքածալով եզերված մատները: Իշխանը հաստ շրթունքներով կպավ ձեռքին: Արքայազնն ուզեց ետ քաշել ձեռքը, Օլգան և Անտոնիդան պոլիտեսի բոլոր կանոններով նրա առաջ բացեցին շրջազգեստները, թիկնեղ կավալերները կեղծամները ցնցեցին, ոտքերը դոփդոփեցին, միանալով Բոյնոսով ընտանիքի խոնարհումին՝ տղայի խած աչքերն արցունքով էին լցված...

— Արի, մոտս արի, Ալյոշենկա... Տես ոնց եմ շրջապատել քեզ,— Նատալյան՝ փարթամակուրծք, խարտիշաներ, եղբոր նման կլորադեմ ու ծիծղուն փոսիկը կզակին, գիրկն առավ տղային, ծածկեց փետրաբբդա շալի ճայրով:— Ոչինչ, ապասենք, կմնանա իմը կվախեցնի մարդկանց.... Չէ՞, Ալյոշենկա,— արքայադուստրը համբուրեց տղայի քունքը, ափսեից մեղրահունց, նախշավոր պրլանիկ վերցրեց, կծեց գեղեցիկ ատամներով, մեկնեց տղային:— Իշխանադուստրեր, ինչ եք կանգնել, նստեք, ճաշեք... Իշխան Ռոման, դու սպասիր կավալերների հետ, մեզնից հետո ձեզ համար սեղան կբացեն...

Նատալյայից և Աննա Իվանովնայից բացի, սեղանի մոտ նստած էր խելացի ու դեղնավուն դեմքով երկպահասակ մի կին, հոնքերն ու արտևանունքները մաշկի գույն: Վշագույն մազերը պինդ հանգույց էր արել ծոծրակին: Արդեն կերել-վերջացրել էր՝ պնակը և կիսատ ըմպանակը ետ հրեց, ժպտալով արագ-արագ գործում էր հեկլունով, գունավոր բրդի թելով: Պյոտր ցարի մտերմությունն էր, Ամալիա Կնիպերկոռնը՝ շվեդական ներկայացուցչի դուստրը:

— Ալեկսեյ Պետրովիչ, թույլ տվեք ցեր լուսապայծառ դեմքը,— քնքշաձայն, ռուսերեն ասաց նա և գործվածքը դրեց տղայի վզին:— Օ՜... դուք գցելու եք այս վզնոցը...

Տղան, անժպիտ, այտը քսեց նրա խոշոր, համարյա տղամարդկային ձեռքին: Աննա Մոնը՝ ուղիղ ու վայելուչ նստած, շրթունքների անկյունները սիրունիկ բարձրացրած, նույնպես ռուսերեն ասաց.

— Արքայազնը սահնակի մեջ մի քիչ շշմել է: Բայց մենք բոլորս վստահ ենք՝ արքայազնը քաջ զոլդատ է... Քաջի պես է կրում իր սուսերը, տեսեք...

Հորաքրոջ արմունկի, փետրաբբդե շալի տակից տղան չարությամբ նայեց ճերմակադեմ գերմանուհուն: Աթոռների թիկնակների ետևը կանգնած կավալերները սկսեցին հավատիացնել, որ արքայազնը, իսկապես, խիզախ մարդու բոլոր կանխանշաններն ունի:

— Մեր հայր, մեր հույս թագավոր...— հանկարծ ձայնեց Ռոման Բորիսովիչը, հետույքը ցցեց, ծնկները ծալեց, մոտիկից նայելով տղայի դեմքին:— Նստիր քո ամեհի ձին, սրածայր թուրդ առ ու փշրիր թշնամյաց գորքերն անհամար... Պաշտպանիր ուղղափառ Ռուսիան, որ միակն է աշխարհում, մեր հայր ու ապավեն...

Ուզեց գլուխը հանդուրեղ, սիրտ չարեց, արքայազնի ուսը համբուրեց և շատ գոհ, ուղղվեց, գոտկատեղը շփելով... Նատալյա Ալեքսեևնան, չգիտես ինչու, վախով էր նայում նրան: Ուսը ցնցելով, ներողամիտ ժպտալով, Աննա Մոնը ասաց.

— Ո՞ւմ վրա եք այդպես գայրացել, իշխան Ռոման: Կարծեմ թե ուրիշ թշնամի չունենք, թուրքերից բացի, նրանց հետ էլ հաշտություն ենք ուզում... Պատերազմ չկա առաջներս... (Դիվանագիտորեն խեթեց Ամալիա Կնիպերկոռնին:)

— Ինչ եք ասում, ինչ եք ասում, պատվելի Աննա Իվանովնա... Թող ճանապարհները չորանան, մեծ արշավի պիտի ելնենք... Ջուր չենք զորք հավաքում, լեժական հրացաններ ենք առնում... Խաղի համար հո չի՞...

Ամալիա Կնիպերկոռնը ձեռագործն իջեցրեց, աչքերը չռվեցին զարմացած, բերանը փոքրացավ, դեմքը ձգվեց: Հայացքներ փոխանակելով, տղամարդիկ լսում էին, թե ինչպես Բոյնոսովը, պարծենկոտությամբ ոգևորված, ռազմական նախապատրաստություններ էր նկարագրում: Սաքսոնյան դեսպանորդ Կենիգսեկը կամզոլի գրպանից ծխատուփը հանեց, վախեցած դեմ արեց Ռոման Բորիսովիչին: Բայց նա՝ «Դու էլ, քո ծխախոտն էլ, սպասիր»:

— Չէ, չէ, պատվելի Աննա Իվանովնա, ամբողջ Մոսկվան է դրա մասին խոսում: Պատրաստվում ենք... Կրծքով կկանգնենք հանուն մեր հինավուրց լիվոնյան վոտչինաների...

Բայց այստեղ Կենիգսենը սեղմեց իշխան Ռոմանի ոտքը: Արքայադուստր Նատալյան, զայրույթից կարմրատակած դեմքով, բղավեց.

— Հերիք եղավ դատարկ բաներ դուրս տաս... Երազիդ հո չի՞ս տեսել պատերազմը: Երևում է, երեկվանից դեռ հարբած ես...

Ալյոշկայի ուսերից բռնած, գնաց կտալե գույնզգույն վարագույրի ետևը, ուր փայտն էր ճարճատում վառարանի մեջ: Արքայադուստր ետևից սահաբալ անցավ Աննա Իվանովնան, Օլգայի և Անտոնիդայի հետ, քիչ հապաղելով Ամալիա Կնիպերկոռնն էլ հեռացավ (դեմքի զարմացած արտահայտությունն այդպես էլ չէր անցել): Տղամարդիկ սեղան նստեցին: Ռոման Բորիսովիչին չէին նայում, կարծես չկար նա: Հասկացավ, որ տհաճ բան է արել... Բայց ի՞նչ: Ուրեմն, չի՞ կարելի պաշտպան կանգնել ուղղափառ Ռուսաստանին: Օտարերկրացիների առաջ ռուս մարդը պիտի լո՞ռ մնա: Խոժոռված նայում էր սեղանին: Կերակուրներ մատուցեցին: Սեղանի ծայրին մի տեղ կար՝ վերջում: Ամոթ էր պրդեն, որ հիմարի պես սպասում էր, թե երբ են հրավիրելու: Է՛հ, ձեր էլ... Իշխան Ռոման Բորիսովիչը նախասենյակ գնաց: Այնտեղ, աթոռակի վրա, մուշտակների մոտ անխոս նստած էր իշխանուհի Ավդոտյան...

— Հո՞ւ ինչի ես էստեղ աղբատի պես սպասում:

— Ներս չկանչեցին, տեր իմ:

— Չկանչեցի՞ն... Ագռավի մեկը... Տոնմդ ես մոռացել... Գնանք մյուս սենյակը...

Կուշտ ուտելուց և խմելուց հետո Ռոման Բորիսովիչը հանգստացավ: Գուցե իրոք ավելորդ բան էր բերանից թոցրել արքայազնի ու արքայադստեր առաջ... Մեծամեծները բծախնդիր են, իսկ օտարերկրացիների առաջ առավել ևս: Բայց ոչինչ, ծեր մարդ է, կներեն...

Կեսօրից հետո, ծանրացած ու քնաթաթախ, սահակառքի մեջ ընկողմանած Ռոման Բորիսովիչը հորանջում էր, հետույքով մի փափուկ տեղ արեց ու անխոով քնեց, մարտյան ձնհալի քամին քթին... Խիղճը եթե հանգիստ չլիներ, չէ՝ հանգիստ էր, կարո՞ղ էր արդյոք կռահել, թե ինչ ծանր ու անսովոր բաներ են գալու գլխին, ի հետևանք թվում է թե փուչ այդ դեպքի, կատարված ցարի ճանապարհային տան մեջ...

Մինչև Վորոնեժ, համենայն դեպս, շատ տանջվեցին: Բքախառը սառնաշունչ քամի եթե չփչեր, պիտի խեղդվեին մի տեղ, գետակն անցնելիս: Ծտապելով, թողեցին իրենց ձիերը, հիմա ձիափոխ էին գնում: Որքան մոտենում էին Դոնին, ճանապարհամերձ գյուղերում մուժիկներն ավելի դժվարանում էին դառնում, գազանի պես, մռայլված էին նայում, գլխարկները միայն բղավելուց հետո հանում: Ռոման Բորիսովիչը խոպոտել էր յուրաքանչյուր բակում ձի ուզելիս բղավելուց: Ինքն էր մոնում խրճիթները, թափահարում մուժիկների օձիքները. «Դու գիտե՞ս ո՞ւմ առաջ ես կանգնած, շան որդի... Կշնչեմ»:

Ատամները չարությամբ սեղմած մուժիկը գլուխն էր թափահարում, վառարանի վրայից գայլանտերի պես աչքերն էին փայլեցնում փոքրերը, ոսկրոտ տանտիրուհին չարությամբ սեղմում էր ձեռքի ուսելին կամ խաչերկաթը. «Ընչելու բան չունենք, բոյարին, ընչել պրծել են, ձի էլ չունենք, գնա, աստված քեզ հետ»:

Գետակի զառիթափ ափին ընկած, ձնաշածկ ու տասը ծխանի մի գյուղում Բոյնոսովները ստիպված եղան մի օրուգիշեր ապրել. գյուղում միայն կնանիք էին, ոչ մուժիկ էր երևում, ոչ ձի: Գիշերեցին անծխնելույզ խրճիթում (ուր կանգնելիս մարդու գլուխը թաղվում էր ծխի մեջ:) Իշխամադուտորները, կպցրած թախտերի վրա քուրքերի տակ պառկած, տենքտենքում էին: Ծուխն աչքերն էր ծակծկում: Քամին էր ոռնում անտեր-անտիրական:

Ռոման Բորիսովիչը, արթնանալով, ձայներ լսեց փողոցում՝ հավանորեն մարդ էր եկել: Դժկամությամբ ելավ մուշտակի տակից: Բակը ապիտակ էր, երկնքում պլացող ամպերի մեջ աստղապատ երկնքի մի կտոր էր բացվել: Պետքը հոգալով, իշխան Ռոմանը մոտեցավ դարպասին: Այն կողմից ցածր ձայներ էին լսվում.

— ... Ժուկովսկու մուժիկները գարնանը ցրիվ կգան, Իվան Վասիլևիչ:

— Փառք աստծո, մինչև էդ ցեխ չեղածն ապրում էինք... Եկավ էդ Ագմուս է, ինչ է՝ նեռը, ու սկսվեց... Շերեփի պես թիակներ սարքեցին, դե, դրանցով սկսեք ցեխ հանել ճանճից, աղյուս կտրել ու չորացնել խրճանոցներում... Մերոնք առավոտից իրիկուն էդ ցեխն են կրում, խրճանոցները տեղ չկա դրանցից... Ձիերը շարքից հանեցին... Ոչ վար ունենք, ոչ ցանք...

— Եկավ ցարը... Ասեց՝ քիչ է... Հրաման տվեց ջրաղաց սարքեն՝ շերեփներով ու ցեխը խորքերից հանեն... Իրա աչքի առաջ թրծում, տանում էին խրճանոցներից: Չէ, էս մի պարհակին չենք դիմանա: Գլուխն առնել, փախչել է պետք...

— Ջորերում ենք պահվում, Իվան Վասիլևիչ: Գիշերներն ենք մենակ գալիս՝ հաց տանելու: Բա սա կյա՞նք է...

— Ատաման, խոովությունը շուտո՞վ կսկսվի:

Ռոման Բորիսովիչը, չնկատելով, թե քամին ինչպես է թափանցում գլխին գցած մուշտակի տակից, դարպասի ճեղքին մոտեցրեց աչքը: Աստղերի թույլ լույսի տակ գանգազանեց. մի ջանի մուժիկ կանգնած էին գորգապատ նստիքով սահակառքի մոտ, որի մեջ երասանները բռնած, գեղջկական վերնազգեստով, կազակական գլխարկով, գորշաներմակ, ասես կիր ցանած մորուքով, լայնամարմին մի մարդ էր նստած: «Օհո, էս գողին մի տեղ տեսել եմ»,— սարսռալով մտածեց Ռոման Բորիսովիչը:

Մուժիկներից մեկը, հակվելով սահակառքի վրա, հարցրեց.

— Դոնից ի՞նչ կա, ատաման:

Գորշաներմակ մորուքավորը, երասանները դասավորելով, հանդիսավոր պատասխանեց.

— Սպասեք մինչև ամառ...

Մուժիկները մոտեցան.

— Չլինի՞ սպասում են պատերազմին:

— Աստված թե տար...

— Գոնե շուտ վերջանար էս ամեն ինչը...

— Կվերջանա, կվերջանա,— սպառնագին թնդաց գորշաներմակ մորուքավորը:— Մեր ատամանները պինդ են:— Կտրուկ շրջվեց սահակառքի մեջ:— Ո՞ւմ տանը կանգնեցնեմ ձիս, տղերք:

— Իվան Վասիլևիչ, մեր տուն կտանեի... Բայց դե ատամանն երեկ մի բոյարին է բերել, կնանքանցով... Հո չեն գոռգոռում... ծղոտ ու խոտ ցրիվ տվեցին, վարսակ ունեի պահած, գտան, չես հավատա՝ դույլերով են լցնում ձիերի առաջ... Ու ինչ ունեմ նրանից՝ մի կոպեկ էլ չի տալու...

Մորուքավորը բացեց բերանը.

— Հա՛...— ծիծաղեց:— Հա՛, հա՛...— Նստիքի տակ տոպրակ կա, մեջի դաշույնը վերցրու... Քո փողն ա... Էդպես է պետք, ճորտ գյուղացիք... (Ձգեց երասանները:) Լավ, ո՞ւմ մոտ քշեմ:

Մեկը պոկվեց սահակառքից.

— Իմ տուն, Իվան Վասիլևիչ, տեղը շատ է...

Սոսկ այդժամ հանկարծ ցուրտ զգաց Ռոման Բորիսովիչը: Ատամ ատամի զարկելով, շտապեց խավար խրճիթ:

— Ավդոտյա,— ցնցեց քնած տեղը ծխից շշմած իշխանուհուն:— Ատրճանակներս ո՞ւր ես խցկել: Վեր կացեք, Օլգա, Անտոնիդա... Կրակ վառեք... Հրահա՞նն ուր եք դրել, աբեթը... Միշկա, Վանկա, վեր կացեք, լծեք...

Ցարական նորաշեն գերանակապ պալատը գետի մյուս կողմում էր կառուցված, թերակղզու վրա, հին ու նոր հուների մեջտեղը: Պյոտրն այնտեղ համարյա չէր ապրում՝ ուր հասներ, կցիշներեր: Պալատում կանգ առան Նատալյա Ալեքսեևնան, արքայազնի հետ և այրի թագուհի Պրասկովյան*), աղջիկների՝ Աննա Իվանովնայի, Եկատերինա Իվանովնայի և Պրասկովյա Իվանովնայի հետ: Հենց այդտեղ էլ խառնիխուռն տեղավորեցին տոնակատարությանը եկած բոյարներին, իրենց ընտանիքներով: Պալատից դուրս գալու տեղ չկար, չորս կողմը ճահիճներ էին, ջրեր: Պատուհաններից երևում էին միայն նավապահեստների տախտակած տանիքները, նավարանների վրա կանգնած նավերի վառ դեղին կմախքները (հին Վորոնեժի ափին), կոխկրտված ձնով պատած ձորակներն ու կտրած ծառերի ցից-ցից կոճղերով բլրակները:

Բույնուով օրիորդները, պարահանդեսների և հրավառությունների սպասումով, հալումաշ էին լինում պատուհանի մոտ՝ ավելի վատ տեղեր գտնել չէր լինի: Ոչ անտառան կար զբոսնելու, ոչ գետափին տեղ կար նստելու, չորբոլորը՝ տիղմ, ցեխ ու տաշեղ... Ափից, դեղին նավերի մոտից թխկթխկոց էր լսվում, մուժիկների բղավոցները: Այն կողմը հաճախ էին գալիս հեծյալ կավալերներ: Բայց օրիորդները միայն հեռվից էին «ախ» քաշելով տեսնում սլացիկ ձիավորներին: Ոչ ոք չգիտեր, թե երբ են սկսվելու զվարճանքները: Հիմա երեկոները նավերի մոտ խարույկներ էին վառում՝ ամբողջ գիշեր աշխատում էին: Աղջիկները շրջազգեստներն էին կախում երկու պատուհաններից, որ չարթնանան կրակի սարսռազդու արտացոլումներից...

Երբ գերանակապ պարսպով եզերված բակում ցեխը չորացավ, դուրս էին գալիս առմուտք, արևի տակ անգործ նստելու: Անշուշտ, կարելի էր զբաղվել մյուս առմուտքերի առաջ նստած օրիորդների հետ. իշխանադուստր Լյուկովայի հետ՝ տխմար աղջիկ էր, լայնքին տըվված, աչքերը չէին երևում նույնիսկ, կամ իշխանադուստր Գոլոգոռուկովայի հետ՝ թխամորթ էր, գոռոզամիտ (թաքցներ, թե ոչ, ամբողջ Մոսկվան գիտեր, որ ոտքերը մազապատ են), կամ Շախովսկայա ութ իշխանադուստրերի հետ՝ չարաբեզու թխսանտերի նման, շարունակ փսփսում էին իրար մեջ, բամբասում: Օլգան և Անտոնիդան կանանց հասարակություն չէին սիրում:

Մի օր մուժիկներ լցվեցին բակ, մինչև կեսօր ճոճանակ և կարուսել սարքեցին՝ ձիուկներով ու նավակներով: Բայց մոտենալ չէր լինի՝ մեկ արքայազնը կուզենար պտտվել, դայակներին հրամայելով, որ գոտուց չբռնեն, մեկ՝ Իոանովնա փոքր արքայադուստրը: Նրանց

*Իվան ցարի այրին (ծան. Ա. Ն. Տոլստոյի)

հետ էր լինում դաստիարակը՝ կաֆտանի մի գրպանում քիթ սրբելու թաշկինակը, մյուսում բարալիկ ճիպոտներ, պատժելու համար: Գերմանացի Յոհան Օստերմանն էր, բավականաչափ հիմար ու խոշոր, մեծամտությունից խոժոռ դեմքով, կլոր ակնոցով: Արքայադուստրերին նստեցնում էր նավակների մեջ, ինքը նստում նախշած ձիուկին, ասում կարուսելը պտտող մուժիկներին. «Բդդիր, աբեր լանգգամ, լանգգամ», և ակնոցի տակ աչքերը փակած, հսկա ներբանները քըսքսելով, պտտվում էր մինչև շշմելը:

Երբեմն մեծ առմուտքից խայտաբղետ խմբերով իջնում էին շրջած կաֆտաններ հագած պակասամիտ կանայք, մրի պես սև հաբեշներ, կնկա շոր հագած երկու ծեր ծաղրածուներ, հաստաքամակ աղախիններ, և սև թավշյա լայնափեշ զգեստով թագուհի Պրասկովյայի բազուկներից բռնած աստիճանների վրայով սահաքայլ իջեցնում էին բակ: Աթոռ էին բերում, բարձեր՝ նա նստում էր, արևից դարձնելով երկնագույն աչքերով, սեխի պես լիքը-լիքը, շպարած դեմքը: Կեղծամ չէր դնում, սեփական թուխ մազերը լավն էին: Գաճաճները, խեղկատակները, պակասավորները, թշերն ուռեցրած, նստոտում էին ոտքերի մոտ: Աղախինները՝ սրտագորով հայացքներով կանգնում էին ետևում:

— Նստեք, նստեք,— ծոլորեն ասում էր թագուհին բոյարուհիներին, որ էլ չխոնարհվեն, նստեն-մնան առմուտքերին: Նայում էր ճոճանակին, կարուսելին, սկսում թույլ տնքտնքալ, գլուխը կողք թեքած: Կանայք վախեցած առաջանում էին.

— Ի՞նչ եղավ, տիրուհի, մեր աչքի լույս, ի՞նչդ է ցավում:

— Ոչինչ... Հանգիստ թողեք... (Թագուհին միշտ մի ցավ ունենում էր՝ գեր էր, վատառողջ:) Է՛յ, Յոհան... Հերիք եղավ քեզ, արքայադուստրերի գլուխը կպտտվի... Մեղա քեզ ասված, ինչ տխմար գերմանացի եղավ... Բոյն ասեմ, ակնոցն ասեմ, թողնես մենակ պտտվի...

Յոհան Օստերմանը աղջիկներին մոտեցնում էր մորը: Ավագը՝ ութնամյա Եկատերինան, ծաղկատար էր, շիլ. դրա համար թագուհին խղճում էր նրան: Կրտսերին՝ թմբլիկ, զվարթ Պրասկովյային սիրում էր. բաց ծնկների արանքով փորին սեղմելով, շոյում էր գանգուր մազերը, համբուրում ճակատը: Միջնեկը՝ Աննա Իվանովնան*), թխամաշկ, մռայլ, դալուկ շրթունքներով մի աղջնակ, երկչոտ էր մոտենում, միշտ քույրերի ետևից...

— Ի՞նչ ես աչքերդ ցած գցել, կերա՞վ քեզ մայրիկդ,— ասում էր թագուհին: Խեղկատակ ծերուկի մատուցած ափսեի միջից քաղցրավենիք էր վերցնում, տալիս սիրելի Պաշենկային, տալիս Կատենկային, և՝ «առ էս պրյանիկը», խոթում էր Աննայի ձեռքը: Հոգոց հանելով, գնում էր դաստիարակին՝ մահուդե դարչնագույն գուլպաներից մինչև հարթ կեղծամը:— Օհ, շուտ տվեցի երեխեքին դրան, մի քիչ էլ պիտի խաղ անեին դայակների հետ...

Հաստաքամակ կանայք աթոռի ետևում փեշերն էին թափահարում.

*Հետագայում՝ կայսրուհի Աննան (ծան. Ա. Ն. Տոլստոյի)

— Շուտ էր, աչքի լույս տիրուհի, շուտ էր սովորեցնելը...

— Դե, վերջ տվեք, մի փշացրեք ականջիս տակ...— Թագուհին կնճռոտում էր դեմքը: Մոտ էր կանչում Օտերմանին.— Էսօր ի՞նչ ես կարդացել նրանց համար, գերմանացի: Պոլյնցեևներին գերմաներեն ու թվաբանություն սովորեցրե՞լ ես:

Յոհան Օտերմանը, ոտքն առաջ մեկնելով, ուղղում էր ակնոցն ու երկար-բարակ զեկուցում: Թագուհին դանդաղ գլխով էր անում, և ոչ մի բառ չհասկանալով: Մի բան էր հասկանում. առաջվա պես, հին ձևով ապրել չի լինի հիմա: Թեև դժվար է, բայց պետք է համաբայլ գնալ նոր կարգերին: Լավ էր հիշում ինքնամոռաց թվականը, երբ այդ հնի պատճառով ցրիվ տվեցին կրեմլյան բովանդակ ավագանին, արքայադուստր Սոֆյան, քույրերի հետ, հազիվ գլուխն ազատեց մտրակահարումից, թագուհի Եվդոկիան՝ ամուսինը կենդանի, որպես սովորական միանձնուհի, արցունք է թափում Սուզդալում...

Պրասկովյան զուր չէր սերում Սալտիկովների գերդաստանից՝ հաստլիկ էր, բայց խելացի, խելացի էր նաև խորհրդականը, կառավարիչ ու ծառայապետ, հարազատ եղբայր Վասիլին: Նրանք հասկանում էին՝ Պյոտր Ալեքսեևիչը Մոսկվայում առանց ցարական արժանավայել արքունիքի չի կարող յոլա գնալ. օտարերկրյա դեսպանները, երևելի օտարները բծախնդիր են, ամեն մեկին Կուկույ՝ Մոնսիխայի մոտ քարշ տալ չի լինի... Թագուհի Պրասկովյան պոլիտես մտցրեց պալատ և ընդունում էր օտարերկրյա դեսպաններին, ճանապարհորդներին, մեծանուն վաճառականներին: Սիրելի հնությունը խորքի սենյակներում էր մնացել, հարկ եղած դեպքում հավաքում էին: Այդ ամենի համար Պյոտր Ալեքսեևիչը Պրասկովյային սիրում ու գնահատում էր:

Արևի տակ ընդարմանալուց հետո Պրասկովյա Ֆյոդորովնան դստերի ու աղախի հետ հեռանում էր: Բույնոսով օրիորդները կարուսել էին նստում, մուժիկներին հրամայում հնարավորին չափ արագ պտտել: Ծղրտում էին կամացուկ: Հեռվից թնդանոթի կրակոցներ էին լսվում և որևիցե նավի կայմը բարձրացող մուժիկների բղավոցները: Հասնում էր ճաշի ժամը: Նիրհ էին բերում խեժաբույր ու տաքուկ վերնասենյակները: Մեկ-երկու անգամ քաղաքից, Թոմաս Բորիսովիչի մոտից մարդ եկավ, սպիտակեղեն տանելու: Պատմեց, որ իշխանը խիստ նեղվածքի մեջ է ապրում՝ չորս հոգով Ապրակսինների մոտ, ու թե երբ է վերջանալու վորոնեժյան այդ սպասումը, ոչ ոք չգիտե...

Մի անգամ կեսօրին բակ մտավ հեծյալ Պյոտրը, արևաո այտերը նոր սափրած: Զվարթ մի հայացք նետեց կարուսելի վրա, նայեց պատուհաններին, ուր իրար անցան ննջակոխ կանայք: Ցած թռավ ձիուց, ուղղեց նեղ կաֆտանը գոտնորած լանջակապը, վեր վազեց Պրասկովյա թագուհու մոտ:

Մի րոպե չանցած, ամբողջ պալատին հայտնի դարձավ՝ վաղն առավոտյան նավը ջուրն են իջեցնում և սկսվում են տոնակատարությունները:

Երկտախտակամած, հիսուն թնդանոթանի «Պրեդեստինացիա» նավը կանգնած էր զառիկող ափին, նավարանների և հենագերանների վրա: Ծեղ նավախելը, քառակուսի պատուհանների եռաշար հարկերով, պատված էր կաղնեփայտի գեղեցիկ նախշերով: Սև կողերին երկու սպիտակ շերտ էր գծված, պղնձյա ծխնիներով հրակնատները վեր էին բարձրացված: Կոշտ պարուսինե առագաստները փաթաթված էին առագաստակալներին: Խելից բավականաչափ ցած, բութ քթի վրա մերկ ջրահարսը գերանի պես հուժկու ձեռքերով երկար ու թեք առաջնակայմն էր պահում, որն ի տարբերություն նախորդ նավերի, միայն շեղ առագաստներ էր կրում: Նավը կառուցված էր Պյոտրի գծագրերով, իր իսկ, Ֆեդոսեյ Սկլյանի և Ալեքսուշկինի հսկողությամբ:

Արևն ելավ դաղար կանաչած բլրակների, Վորոնեժի հինավուրց պարսպի ետևից: Անամպ, գով ու երկնագույն օր էր: Դուրեկան քամին թեթևակի ալեկոծում էր ջուրը, հրապուրում բաց անել առագաստները, լողալ դեպի հորդահոս գետը, գարնանային հեռաստաններ:

Տախտակապատ հարթակի վրա, նավի մոտ, ուտեստեղենով ու խմիչքով սեղաններ էին դրված: Քամին ծածանում էր մահոդե կարմիր սփոցների տուտերը, գլխարկների փետուրները, կեղծամների գանգուրները, սպայական լանջակապերի ծոփքերը: Սեղանների մոտ նստած էին Պրասկովյա թագուհին և արքայադուստր Նատալյան երեխաների հետ, դեսպաններ և դեսպանորդներ, հոլանդացի և անգլիացի վաճառականներ, լեհեր, գերմանացիներ, Փարիզից եկած մի ճիզվիտ, Ամալիա Կնիպերկոռնը, սաքսոնացի ռազմական ինժեներ Գալլարտը և Ավգուստ թագավորից հենց նոր նամակ բերած կայսերական հերցոգ Կառլոս Եվգենիուս ֆոն Կրուին: Թեև բավականաչափ տոհմիկ, սակայն ներկայումս ոչ այնքան կարևոր հյուրերը կանգնած էին հարթակի վրա, սեղաններից հեռու: Նավաստիները օդի էին բաժանում փայտյա դույլերով:

Հերցոգ ֆոն Կրուին անփույթ կեցվածքով նստած էր թագուհու և արքայադստեր մեջտեղում, արմունկները սեղանին, ոլորում էր շիկավուն բեխերը, չտեսնող հայացքով վեր նայում: Երկար, կոր քիթ ուներ, դեմքը թոշնած էր, աչքերի տակ տոպրակները կախ, հարթ կեղծամը ճիշտ հոնքերից էր սկսվում: Մանուշակագույն կաֆտանի տակից շքաժապավենն էր, ոսկյա շղթա ուներ վզից կախ, ադամանդանուր աստղեր կրծքին: Թագուհին և արքայադուստրն անգամ երկնչում էին նրանից. հապա ի՞նչ՝ Հռոմեական Սրբազան կայսրության հերցոգ էր, անպարտելի զինվոր, նշանավոր տասնհինգ ճակատամարտերի մասնակից: Բայց ըստ երևույթին (մոսկվացիներն այդպես էին հասկանում, չնայած ցույց չէին տալիս), հերցոգի գրպանը դատարկ էր, այլապես ո՞ր սատանան պիտի Վորոնեժ բերած լիներ նրան... Աթոռի ետևը որպես թարգմանիչ Պյոտր Պավլովիչ Շաֆիրովն էր կանգնած:

Կարմրած կոպերը կիսախուփ, հերցոգն ասում էր.

— Ռուսաստանը սքանչելի երկիր է, ռուսներն աշխատասեր ու աստվածավախ ժողովուրդ են, ռուս կանայք գմայլելի են: Եվրոպա-

յում փոքր-ինչ զարմացած են մեր սովորույթը, մեր հագուստը փոխառնելու ձեր համառ ձգտումով: Ասածս կամքն է հենց, որ Ռուսաստանը հայացքն ուղղի դեպի Ասիա: Ցարական գահի պատվանդանին բերի ասիական ժողովուրդների անհամար բազմությունը, ազատ ճանապարհներ բաց անի դեպի Պարսկաստան և Հնդկաստան՝ ահա գերգերազանց մի խնդիր ի շահ բրիստոնեական հանյոն աշխարհի...

Հերցոգը չվերջացրեց մտորումները. հյուրերն աղմկեցին, քրստքրստացրեցին ոտքերը: Նավի մոտից արագաքայլ գալիս էր ցարը՝ հոլանդական ծնկահաս, թավշյա շալվարով, թևքերը քշտած պարուսինե շապիկով, մոմլաթե կլոր գլխարկը ծոծրակին: Նա կանգնեց հարթակի առաջ և գլխարկը հարգանքով հանեց կեղծամի խուրձը գլխին, հունգարական գինով լի գավաթը բռնած, գիրուկ ծովակալ Գոլովինի առաջ.

— Պարոն ծովակալ, ողջույնամբ...

— Բարև, վարպետ Պյոտր Ալեքսեևիչ,— ծանրումեծ պատասխանեց Գոլովինը:

— Պարոն ծովակալ, նավը պատրաստ է ջուրն իջեցնելու: Հրաման տուր հենագերանները գցենք...

— Աստված Ձեզ օգնական, սկսեք:

Հերցոգը, բեխերը հանգիստ թողնելով, զարմացած նայում էր, թե ինչպես ցարը, որպես հասարակ հյուսն, որպես ցածրատոհմ մեկը, խոնարհվեց ծովակալին, գլխարկը դրեց ու արագ քայլերով գնաց տաշեղների վրայով: «Պատրաստվի՞ր...»,— բղավեց գործավորներին, ու վերջիններս իրար անցան նավի թեք հատակի տակ: Գնալիս ձեռքն առավ թուջե հսկա մուրճը. «Հենագերանների մոտ կանգնի՞ր... Միասի՛ն... Հարվածի՞ր...»: Վիթխարի նավը դիմացից պահող գերաններին տեղացող մուրճերի հարվածներ լսվեցին: Ջիլայն նվագեցին եղջրափողերը: Հյուրերը ոտքի ելան, գավաթները բարձր բռնած: Երևում էր, թե շապկի տակ ինչպես են խաղում մուրճը բանացնող Պյոտրի թիակները: Կայմերը ճռճվեցին, նավը թեթևակի նստեց սահակոսների վրա: Անշարժացավ, շարժվեց թեք, ճարպ քսած ակոսներով: «Գնա՞ց, գնա՞ց...»,— բղավեցին հարթակի վրա:

Ավելի ու ավելի արագ էր իջնում նավը դեպի գետը: Ակոսների մեջ ծուխ արձակեց վառվող ճարպը: Նավաքիթը հպվեց ջրին: Ոսկեգօծ ջրահարսը թաղվեց մինչև գոտին: Սրընթաց, դեմից, երկու ալիք բացելով նավը ջուրը մխրճվեց, շրջվեց ու ճոճվեց: Կայմերի վրա վեր սլացան վիմպելները, քամին ծածանեց մետաքսյա նեղ լեզվակները: Սողերից բոց ժայթքեց, կրակեցին թնդանոթները...

Երկու օրուգիշեր խնջույք էր Մենշիկովի քաղաքամերձ, կամրջի մոտ գտնվող իջևանատանը: Հյուրերի մի մասը ամենևին չէր քնում, ոմանք ընկած էին սեղանների տակ, ծղոտի վրա (սեղանատանն արդեն մի քանի անգամ ամբողջ ծղոտը սրբել, նորն էին փռել): Տիկնայք, մի քիչ հանգստանալով, շպարվելով ու դիմափոշի քսելով, զգեստ փոխելով, նորից էին գալիս քառատրոփ, դղրդացող կառքերով: Երեկ հրավառություն էր, այսօր՝ մեծ պարահանդես:

Օտարերկրացիք խիստ գոհ էին տոնակատարությունից: Պյոտր Պավլովիչ Շաֆիրովն իրեն չէր խնայում, հունգարական լավագույն գինի և սեկտ խմեցնելով նրանց (յուրայիններին ավելի հատարակն էր տալիս): Անչափ խորամանկ հրեան կարողացավ այնպես անել, որ մի քանի դեսպանորդներ գրեցին Կոստանդնուպոլիս՝ իրենց մտերիմներին, այստեղ տեսած ամեն ինչի մասին. «Պրեդեստինացիայից» հետո մի շաբաթվա ընթացքում հինգ մեծ նավ ու տասնչորս թիանավ նույնպես ջուրն իջեցրին, մյուս նավերն ավարտում էին փութաջանորեն՝ մինչ Չիժովկա արվարձանը երևում էին նավերի շերտավոր կմախքները: Այդ ամենը եթե գումարվեր ազովյան նավատորմին, ապա Սև ծովը որպես անարատ ու սուրբ կույս պահպանող սուլթանը ստիպված կլիներ հիմա շատ չգոռոզանալ հաշտության բանակցություններ վարելիս...

Նուրբ երկնագույն զգեստով Անտոնիդան, թանձր կիտրոնագույն հագած Օլգան ճաշում էին տախտակապատ, հապճեպ կառուցված, երկու կողմերից պատուհաններ ունեցող սրահում: Հարյուր հիսուն հյուր էին նստած դրսի կողմից Ո-աձև շարած սեղանների շուրջ, մեջտեղում խեղկատակներն էին վազվզում՝ աթուրմա թոնելով, սիսեռ լցրած փուչիկներով կռվելով, հաչում ու մլավում էին, այնպիսի իրարանցում էին սարքել, որ ծղոտը լցվում էր մատուցարանների մեջ ու կեղծամների վրա: Նրանց վրա ոչ ոք չէր նայում արդեն: Ամպհովանու տակ թիթեղյա խույրը գլխին նստած իշխան-պապը հոգնել էր պատուհանի կողմը թաշկինակը թափ տալուց, որ կենաց յուրաքանչյուր գավաթից հետո թնդանոթ արձակեն, կրակոցներից ցնցվում էին պատերը: Մեծապատիվ ծաղրածու Յակով Տուրգենևը քիչ առաջ ծիծաղեցրել էր բոլորին՝ չալմա դրած, թաթարական խալաթ ու մուճակներ հագած, սապատավոր ու կեղտոտ խոզը հեծած, մտել էր սրահ, ցնցելով ուռած դեմքն ու դնովի մորուքը:

— Մո՞տ եկեք,— բղավել էր,— մոտ եկեք, պաչեք սուլթանական մեծության կրունկը...

Հիմա, մեռելի պես հարբած, ընկած էր սեղանի տակ:

Երգ ասող նավատիները խոպոտել էին, եղջրափող նվագող երաժիշտները չգիտեին ինչ են փչում: Բոլորը սպասում էին պարերն սկսելուն: Օլգայի կողքին կավալերն էր նստել՝ Պրեոբրաժենյան գնդի պրապորշչիկ Լեոպոլդուս Միրբախը, Անտոնիդայի կողքին՝ ծովային սպա Բարթուղիմեոս Բրամը: Օլգայի կավալերը դեռ մի կերպ բլբլացնում էր ռուսերեն, ափերով դեմքն էր շփում, որ սթափվի, սակայն տավարի մսի պես կարմիր երեսով դանիացի Բրամը միայն խմում էր, աչքով անելով նվաղած օրիորդին: Ահ, ի՞նչ խոսակցություն, ի՞նչ բան, և ինչի՞ մասին... դատարկ բան էր ամեն ինչ... Ընդամենը մատների ծայրերը տալ կավալերին, զգեստի փեշն առջևից բարձրացնել ու ջութակի նվագին համապատասխան, խոնարհումներով սահել

մուած հատակի վրայով: Օրիորդները հուզված էին, ինչպես անտառային լճակը մրրիկի ժամին:

Ռոման Բորիսովիչը սեղանի մյուս ծայրին էր նստած, Ավդոտյայի հետ: Իշխանը հանգիստ չուներ, որ հեռու էր թագավորից: Պյոտրին օտարերկրացիներն էին շրջապատել. հերցոգ ֆոն Կրուին, այնքան հարբած, որ միայն գլուխն էր թափահարում ճանճ քշող ձիու պես, մյուս կողմում՝ Ամալիա Կնիպերկոռնը: Մինչև վերջին րոպեն Պյոտրն ուրախ էր, կատակում էր ու զվարճանում... Բայց ինչ-որ բան կատարվեց (նկատեցին միայն, որ նրան մոտեցավ Մենշիկովը, ինչ-որ բան շշնջաց ականջին) և ծիծաղը չքացավ աչքերից: Երևում էր, որ զսպում է իրեն: Երբ նոր կերակրատեսակ մատուցեցին, դանակն ու պատառաքաղը սկսեց ցնցել՝ մեկ պնակի կողքն էր խրում, մեկ դեմքին կպցնում, և Ամալիա Կնիպերկոռնը քնքուշ կարեկցանքով ձեռքը դրեց նրա թևքածալի վրա.

— Հեռ Պիտեր, պետք է հանգստանալ...

Պյոտրը շպրտեց պատառաքաղը, դանակը, կնճռոտված ծիծաղեց.

— Ձեռքերս թշնամիներս են...— Ձեռքը մտցրեց սեղանի տակ:— Հը՞, ի՞նչ ես աչքերդ չոել վրաս, խելոքս: Էսօր դեռ էնպես ենք պարելու, որ կրունկներս մաշվի...

Ամալիայի ճակատին կնճիռներ գոյացան, մեղմաձայն, կշտամբանքով ասաց.

— Հեռ Պիտեր, մի՞թե այլևս արժանի չեմ ձեր վստահությանը:

Պյոտրի բիբերը թրթռացին, կարճ քթի ռունգերը փքվեցին.

— Հիմարություն է, հիմարություն:

— Հեռ Պիտեր, մի ծանր կանխազգացում ունեմ:

— Պառա՞վն է սիսեռով բախտդ բացել:

Ծրջվեց: Ամալիայի շուրթերը դողացին.

— Հայրս էլ է խիստ տագնապի մեջ... Այսօր նամակ եմ ստացել:

— Նամա՞կ:— Գիշատիչ թռչնի պես, կլոր աչքերը հառեց աղջկա դեմքին:— Ի՞նչ է գրում Կնիպերկոռնը:

— Հեռ Պիտեր, մենք կկամենայինք չտեսնել այն, ինչ այլևս չնկատել չի լինում... Կկամենայինք չլսել: Բայց այդ մասին խոսում են, այլևս չթաքցնելով... (Ամալիան վախենում էր ինչ-որ բան արտասանել, քիթը սկսեց կարմրել:) Սույնը դեմ է բանականությանը... Սույնը նենգություն կլիներ... (Լարումից արցունք ցայտեց աչքերից:) Միայն ձեր մի խոսքը, հեռ Պիտեր...

Կարծես խոր շունչ քաշելու համար նա բացեց բերանը: Պյոտրի աթոռի ետևում կանգնեց խստահայաց Վասիլի Վոլկովը: Քամահար դեմքն ածիլված չէր, մահուդե կափտանը ճմրթված՝ ըստ երևույթին նոր էր հանել ճամփորդական պայուսակից, թևքածալի տակից ցցված էր նամակի եռանկյունին: Ամալիան սառտիկ գունատվեց, բիբերը թռչկոտում էին ցարից Վոլկովի վրա և՝ ետ: Նա գիտեր, որ Վասիլին

կնոջ հետ արտասահմանում է... Այստեղ է սլացել հաստատ ոչ բարի լուրերով:

Պյոտրը Վոլկովին ցույց տվեց կողքի աթոռը: «Նստիր»: Ծուռ ժպտալով, շքեղ կեղծամը գլխին, մոտեցավ Մենշիկովը: Պյոտրը պարզեց ձեռքը, Վոլկովը փութով նրան տվեց նամակը:

— Ավգուստ թագավորից է,— ասաց Պյոտրը, չնայելով Ամալիային:— Վատ լուրեր են... Լիվոնիայում վիճակը խառն է... (Խաղացրեց նամակը, վճռական շարժումով խոթեց կափտանի ծոցը:) Է, ինչ... Լիվոնիան հեռու է... մեր ուրախությանը չեն խանգարի...— Դարձավ Վոլկովին.— Մի քանի խոսքով ասա...

Վոլկովն ուզում էր ոտքի կանգնել, Մենշիկովն ուսերից սեղմեց ու նստեցրեց, ինքը կանգնած էր, աթոռի թիկնակին կոթնած:

— Ավգուստ թագավորի սաքսոնյան զորքը Լիֆլյանդիա է ներխուժել, առանց պատերազմ հայտարարելու,— կմկմալով ասաց Վոլկովը:— Մոտեցել են Ռիգային, բայց կարողացել են գրա՞վել միայն Կոբերշանց ոչ մեծ ամրոցը: Քաղաքը գրոհել վախեցել են շվեդների խիստ կրակի տակ... Գեներալ Կաուլովիչը սույն անհաջող ձեռնարկումից հետո դեպի ծով է շարժվել ու գրոհով գրավել Դինամյունդե ամրոցը, որի տակ գրոհի վերջում տեղնուտեղը սպանվել է մուշկետի կրակոցից:

— Ափսոս, ափսոս Կաուլովիչը,— ասաց Պյոտրը:— Ի՞նչ, բոլո՞ր լուրերն ասացիր...— Սառը ձեռքը դրեց Ամալիայի ձեռքին: Աղջիկը հևիհև էր շնչում: Պյոտրը ցավեցնելով սեղմեց նրա ձեռքը: Վոլկովը շփոթվեց: Ալեքսանդր Դանիլովիչը, մատանիներով զարդարված մատների արանքից թողնելով կեղծամի գանգուրները, անփութորեն ասաց.

— Ես հարցրել եմ, ուրիշ ոչինչ չգիտի, Վարշավայում է եղել, երբ լուրերը հասել են Ռիգայի մոտից: Նույն օրը Ավգուստ թագավորը նրան այստեղ է ուղարկել: Սաքսոնացիք Ռիգան չեն գրավել ու չեն գրավի՝ շվեդների ատամներն ամուր են... Փուչ գործ են բռնել:

Ամալիան, ձեռքը չքաշելով, արագ խոնարհեց ցնցվող դեմքը:

— Սա պատերազմ է, սա պատերազմ է, հեռ Պիտեր,— շշնջաց նա:— Մի թաքցրեք ինձնից... Ես դեռ ճանապարհին հասկացա... Օ՜, ի՞նչ դժբախտություն...

Պյոտրը մի պահ լուռ էր: Եվ խստաձայն հարցրեց.

— Ի՞նչ հասկացար: Որևէ բա՞ն են ասել: Ո՞վ է ասել:

Այդ ժամանակ Ամալիան ցաքուցրիվ պատմեց, թե ինչպես էր ապշել իշխան Ռոմանի ասածներից, ճանապարհային տան մեջ:

— Բույնոսո՞վն է դուրս տվել,— սպառնագին հարցրեց Պյոտրը:— Ո՞րը: Էն ծաղրածո՞ն: (Ամալիան, աչքերից արցունք ցայտեցնելով, գլխով արեց:) Էն տխմարի՞ն ես հավատացել: Դեռ խելոք աղջկա համբավ էլ ունես մեզ մոտ... Թաշկինակն առ ու երեսդ սրբիր... (Պյոտրը զգում էր, որ Ամալիան, կամքին հակառակ, լսում է իրեն, խաղաղվում է:) Այդպես էլ կգրես հորդ. երբեք չեմ համաձայնի անարդարացի պատերազմ սկսել, մշտական հաշտությունը չեմ խախտի

Կատոլուսի հետ: Իսկ եթե լեհաց թագավորը Ռիգան էլ գրավի, քաղաքը չի մնա նրան, կխլեմ ճանկերից... Երդվում եմ աստծով...

Պյոտրն անկեղծորեն կլորացրեց աչքերը: Ալեքսանդր Դանիլովիչը գլուխը կախեց ի հաստատումն, միայն բերանը ծածկեց մատներով, քանզի որևէ քմծիծաղ անպատեհ կլիներ այդ դեպքում:

Ամալիան այտերին հպեց թաշկինակը, շփոթված ժպտալով: Պյոտրը ուրախ-ուրախ ետ ընկավ աթոռի կաշվե թիկնակին:

— Իշխան Ռոման,— կանչեց,— մի դեսդ արի:

Մատուցած օձաձկան ատիթով իրար անցած ծաղրածուների ծղրտոցից (գլխկոնձի տալով, միմյանց բերանից փախցնում էին օձաձկան պատառները) Ռոման Բորիսովիչն իսկույն չլսեց ցարի ձայնը՝ ծիծաղից գկոտում էր: Անտոնիդան և Օլգան սարսափած աչքերով նշաններ էին անում նրան՝ կանչում է... Իշխանուհի Ավդոտյան քաշեց շալվարից. «Գնա, ողորմածությունն ստացիր, գնա, արժանացանք, տեր իմ...»:

Վազեվազ գնաց Ռոման Բորիսովիչը, սուսերով կամզոլի փեշը տնկած, գլուխ խոնարհեց. «Ահա և ես, մեր հույս ու ապավեն, բոնն եմ հոգով ու մարմնով»: Պյոտրը նույնիսկ դեմքը չդարձրեց նրա կողմը, և ասաց Ամալիային.

— Այրը սույն պատվական քաղաքագետ է ու քաջարի: Զգիտեմ, գեներալիսիմուս թե կարգեմ, վախենամ շատ արյուն թափի: Թե՞ վերցնեմ տնային գործածության համար...

Եվ հանկարծ այնպես շրջվեց Ռոման Բորիսովիչի կողմը, որ կարմիր մշուշ իջավ վերջինիս աչքերին:

— Լսել եմ, կոմի ես պատրաստվում: Գրավելու մեր հինավուրց լիվոնյան փոտչինաները: Հարց եմ տալիս՝ էդպե՞ս է:

Ռոման Բորիսովիչն աչքերը ճպճպացրեց, սրտխառնուքը փորից ծնկներն իջավ...

— Համարձակ գեներալներ են մեզ պետք: Մեծ խիզախության համար քեզ կարգում եմ համայն ծաղրածուական զորքի գեներալիսիմուս:

Վեր թռչելով, Պյոտրը, Ռոման Բորիսովիչի ձեռքից բռնած, քարշ տվեց հարթակի մոտ, ուր իշխան-պապը, ձեռքերը կախած, ուռած դեմքը թթվեցրած, մռնչում էր քնի մեջ, ասես մեռնելով: Պյոտրը ցնցեց նրան... «Գրողի ծոցը կորի»,— մրթմրթաց իշխան-պապը: Հյուրերը, նոր զվարճանքի կանխազգացումով, խմբվեցին հարթակի շուրջը: Խեղկատակները ոտքերի արանքով սողոսկեցին, նստեցին աստիճաններին: Իշխան-պապի մի ձեռքը խաչաձև կապած երկու ծխամորճ տվեցին, մյուսը՝ հում ձու: Ռոման Բորիսովիչին ծունկ չոքեցրին: Մի կերպ արթնացած իշխան-պապը փսլինքն էր սրբում:

— Օձե՞մ,— հարցրեց:— Հերն էլ անիծած, օձեմ...

Եվ ձուն ճխլեց Ռոման Բորիսովիչի գլխին՝ դեղնուցը ծորաց կեղծամի վրայով, ծխամորճները խոթեց բերանն ու ոտքով հրեց նրան: Խեղկատակները ծուղրուղու կանչեցին: Իշխան Ռոմանին թարս նստեցրին աթոռի վրա, խոզապուխտի կրծած ոսկոր տվեցին ձեռքը, քարշ տվեցին սեղանների մեջտեղը: Ռոման Բորիսովիչը քարացել էր՝ ոսկորը սեղմած, բերանը բաց արած: Հյուրերը, մատով ցույց տալով, ճոճվում էին ծիծաղից: Զրնգուն ծիծաղում էր և Ամալիա Կնիպերկրոնը՝ նրա բոլոր կասկածները, սիրտը մաշող ցավը զվարճանքով վերջացավ:

Անտոնիդան և Օլգան իրապես այն ժամանակ հասկացան միայն կատարված աղետը, երբ շրջվելով, իրենց մոտ չտեսան կավալերներին՝ Լեոպոլդուս Միրբախը և Բարթուղիմեոս Բրամը պարապարահ տանող դռան մեջ հարբածի համառությամբ ու գետնաչափ խոնարհվում էին Ծախովսկայա չարալեզու իշխանադուստրերին: Ութ իշխանադուստրերը, հոլանի ձեռքերը կլորացրած, շպարազարդ կեղծամները տարուբերելով, ծնկծալ էին անում վրա-վրա, հանդգնությամբ նայելով Բուլնոսով օրիորդներին:

2.

Վոլկովներն այն ձմեռ այդպես էլ Ռիգա չհասան: Զմեռային լայն ճանապարհը Սմոլենսկից Օրշայի վրայով տանում էր Կոայցբուրգ: Լեհական սահմանից անդի մոսկովյան թագավորության պես չէր (գյուղից գյուղ մեկ օրվա ճանապարհ՝ խուլ անտառներով), հանախ էին գյուղեր հանդիպում, բարձրադիր մի տեղ եկեղեցին կամ կոստյոլը և տիրունական, որոշ տեղերում նաև քարաշեն ամրոց՝ պարսպով ու խանդակներով: Ռուսական դաստակերտներում մանրակալվածք պաշտոնավորներ էին ապրում կամ էլ որևէ շնորհազուրկ բոյարին էր խլուրդի պես նստում մռայլված, բարձր ցցապատերի ետևում: Լեհ պաները ուրախ, շռայլ էին ապրում:

Ալեքսանդրա Իվանովնան անասելի անհամբեր էր, ուզում էր ճանապարհիը թեքվել ու մտնել այդ զարմանալի ամրոցներից մեկը, որոնց սրակատար գրաֆիտե տանիքներն ու հսկայական լուսամուտները երևում էին դարավոր լորենիներից այն կողմ: Վոլկովը բարկանում էր. «Թագավորական մարդիկ ենք մենք, հավատարմագրեր ենք տանում, վայել չէ մեզ առաջ գցենք, հասկացիր վերջապես...»:

Առաջ ընկնելու հարկ չեղավ: Մի անգամ ուշ երեկոյան մտան մի մեծ, ասես մեռած գյուղ՝ նույնիսկ շները չէին հաչում: Կանգ առան պանդոկի մոտ: Մինչ պանդոկապանը՝ բարձրահասակ, կորամսկակ, աղվեսի մորթու գլխարկ դրած մի ծեր հրեա, դժվարությամբ կբացեր դարպասը, Ալեքսանդրա Իվանովնան իջավ սահակառքից, ձյան վրա թմրած ոտքերը շարժելու: Նայում էր կիսալուսնին, որի տարտամ լույսը աստղերը չէին հանգցրել: Ինչ-որ բան էր տանջում Սանկային... Դանդաղ քայլում էր փողոցով... Ոչ մեծ խրճիթները համարյա բոլորը կիսափոլ էին, շատերն՝ անտանիք, միայն ձողագերաններն էին սևին տալիս լուսնկա երկնքում: Հասավ եղյամակալած լացող ուռենուն, որի տակ փոքր մատուռ կար: Փակ դռնակի մոտ, դեմքն ափերով ծածկած, սպիտակ վերնազգեստով մի կին էր չոքել գլխահակ: Շշրջվեց ձյան ճռճռոցից: Սանկան կանգնեց, հոգոց

հանեց, հեռացավ: Ծարունակ թվում էր, թե երաժշտության ձայներ են գալիս հեռուներից:

Վոլկովը ձայն տվեց: Պանդոկ մտան երկարուկ, տակառիկներով ու չանելով լի նախասրահի միջով: Պանդոկապանը լուսավորում էր ճարպամոմով, խիտ մորուքը տնկված էր փոքր դեմքի վրա, աչքերը ծեր էին ու մռայլ:

— Մլակ չկա, լավ կքնեք,— ասաց նա բելոռուսերեն:— Միայն թե պան Մալախովսկու մտքով չանցնի պանդոկ մտնել: Օ՜հ, աստված, աստված...

Ծոգ պանդոկում թթվի հոտ կար: Պատռված վարագույրի ետևում ճոճի մեջ պառկած երեխան էր լաց լինում: Սանկան հանեց մուշտակը, թիկն տվեց դրսից բերած ատաղձ բարձերին՝ իր լացն էլ եկավ: Աչքերը կկոցած, զգում էր՝ սրտից աջ (ուր հոգին է լինում) անտանելի խռովք կար... Կամ խղճում էր ինչ-որ մեկին, կամ սիրել էր ուզում:

Պանդոկի դուռը բոպեն մեկ շրխկում էր. ելումուտ էին անում տանտերը, ինչ-որ մարդիկ: Մանկիկը լալիս էր միապար... «Էլի գիշերը չեմ քնելու...»: Ամուսինը ձայն տվեց. «Սանչա, ընթրելո՞ւ ես»: Զեվզացրեց, թե քնած է: Աչքին երևաց ճերմակ զգեստով կնոջ մեջքն աղոտ լուսավորող պակասող լուսինը: Ուզեց վանել, չեղավ... Անցյալն երևաց աչքին. մոր սարսափելի աչքերը, երբ մեռնում էր... Վառվում էր մարխը, շապիկները թրջած փոքր եղբայրները գլուխները կախել են վառարանի վրայից, լսում են, թե ինչպես է տնքում մայրը, ճախարակի ստվերին են նայում գերանակապ պատի վրա՝ ասես բարակ վզով ծերուկ լինի, այծի մորուսով... «Սանչա՜, Սանչա՜,— միայն հեռցով կանչում էր մայրը,— Սանչա, դրա՜նք են մեղք»:

Վոլկովն անշտապ լափշա էր խպշտում: Դուռը նորից դխկաց, զգուշությամբ ներս մտավ ինչ-որ մեկը, հոգոց հանեց: Սանկան արցունքներն էր կուլ տալիս. «Ահա և այսպես կանցնես երջանկության կողքով»: Ամուսինը նորից՝ «Սանչա, գոնե կաթ խմեիր»:

Դռան մոտից կանացի ձայն լսվեց. «Գթասիրտ պան, երկնի տիրուհին քեզ պահապան, երեք օր է ոչինչ չենք կերել, մի կտոր հաց ողորմա»: Սանչայի հոգին ասես շամփրվեց՝ նստեց թախտին: Դռան մոտ մի կին էր ծունկ չոքել, սպիտակ վերնազգեստի տակից երևում էր կողքի պառկած մանկիկի խղճուկ դեմքը: Սանկան թռավ տեղից, տապակած սագի մատուցարանը վերցրեց: «Առ,— տվեց ու ակամա գեղջկուհու պես գլխով արեց նրան:— Գնա, գնա»:

Կինը գնաց, Սանկան սեղանի մոտ նստեց. սիրտն այնպես էր բաբախում, որ կաթ նույնիսկ չկարողացավ խմել: Վոլկովը հրեա պանդոկապանին հարցրեց.

— Ի՞նչ է, երա՞շտ է եղել ձեզ մոտ, թե ինչ:

— Չէ, աստված դրան չհասցրեց: Պան Մալախովսկին լավ բերք հավաքեց ու տարել է արդեն Քյոնիգսբերգ...

— Տես է,— զարմացավ Վոլկովն ու դրեց պատառաքաղը:— Քյոնիգսբերգում են ծախում: Ու լա՞վ գին են տալիս:

— Օհ, գի՜նը, գի՜նը:— Թաղիքանման մորուքը տմբացնելով, տնքտնքաց պանդոկապետը, մոմակալը դրեց թախտին, բայց սիրտ չարեց նստել:— Քյոնիգսբերգի վաճառականները հիմա լավ հասկանում են, որ իրենցից բացի, էլ ոչ մեկի մոտ ցորեն տանել չեն կարող: Ռիգա տանել չի լինի, ով կուզենա մաքս վճարել շվեդներին: Ու մի գուլդեն են տալիս...

— Գուլդե՞ն: Փթի՞ն:— Վոլկովն անվստահությամբ չոռեց երկնագույն աչքերը:— Չլինի՞ սուտ ես ասում:

— Աստված վկա, չեմ ստում, ինչ ունեմ ստելու պայծառափայլ պանին: Ջահել ժամանակս ցորենը Ռիգա էինք տանում, մեկուկես երկու գուլդեն տալիս էին: Պանը չի՞ բարկանա, եթե նստեմ: Օ՜հ, աստված, աստված... Այդ պան Մալախովսկու կատակնե՞րը... մեր հարևան Ալտերին թրի քաշեց պան Բադովսկու գյուղում: Պան Բադովսկին էլ այն պաններից է, որ մի հատարակ հավի համար պատրաստ է ոտքի հանել իր ամբողջ ավերիչ շլյախտան, իսկ Ալտերը նրա միջնորդն էր: Ուրեմն, պան Բադովսկին իր շլյախտայով հարձակվեց պան Մալախովսկու վրա: Ատրճանակ էր որ կրակում էին: Օ՜հ, աստված, աստված... Հետո պան Մալախովսկին իր շլյախտայով հարձակվեց պան Բադովսկու վրա: Թե ինչքա՜ն վատող ծախսեցին՝ այդ ամենը մի սպանված հրեայի համար... Հետո հաշտվեցին ու հիսուն տակառիկ գարեջուր խմեցին: Պան Մալախովսկու շլյախտիչները լցվեցին այստեղ, ինձ բռնեցին, մեր հրեաներից հինգ հոգու էլ բռնեցին, գցեցին մի սելի մեջ, ձողերով սեղմեցին ու կապկպեցին, կարծես խուրձ տեղափոխեին, ու տարան պան Բադովսկու կալվածքը... Պան Մալախովսկին ծիծաղից փորն էր բռնել. «Էս էլ քեզ, պան Բադովսկի, մի ջհուդի փոխարեն՝ վեցը»: Ցանկել Կագանի կողը ջարդեցին սելի մեջ պառկած, Մոիսել Լեվիդի լարդը փշացրին, իմ էլ ոտքերս են թուլացել դրանից հետո...

— Լավ, եթե սուտ չես ասում,— հարցրեց Վոլկովը, կաթ լցնելով կավե ամանի մեջ,— ինչի՞ց է ձեր գյուղը չքավոր:

— Իսկ ինչի՞ց պիտի յուղ կապեին մուժիկները:

— Չկապեին, ինչի՞ համար: Մուժիկին չպետք է թողնես, որ շատ հարստանա... Բայց դե գոնե խրճիթներին ծածկ քաշեիք: Ի՞նչ է կատարվում ձեզ մոտ, տեսնում եմ, որ անասունն ավելի լավ է ապրում... Երևում է, բահրատու բոլորովի՞ն չկա:

— Մեր բոլոր մուժիկները կոռի վրա են:

— Ու քանի՞ օր են կոռի վրա:

— Վեց օրն էլ պանի համար են աշխատում:

Վոլկովը նորից զարմացավ... «Մեզ մոտ ցարական գանձարանը չէր թույլ տա՝ էս տեսակ տկլոր մարդկանցից կես գոռշ էլ չես վերցնի...»:

— Իսկ ո՞վ է ձեր գանձարանին տուրք վճարում: Չլինի՞ պաները:

— Չէ, պաները տուրք չեն վճարում: Մենք ենք պաներին վճարում...

— Այ քեզ պետությու՛ն։— Վոլկովը քթի տակ ծիծաղեց, գլուխն օրորեց։— Սանչա, ինչ ազատություն են տվել է՞ պաներին...

Բայց Սանկան չէր լսում։ Աչքերը չոված էին, բիբերը՝ անշարժացած։ Թեքվել էր դեպի լուսամուտը, դեմքը կպցրել թաց ապակուն։ Երաժշտության, զանգուլակների, մարդկանց ձայներն ավելի ու ավելի էին սաստկանում փողոցում։ Պանդոկապանը, անհանգստացած, վերցրեց մոմակալը, կորամեջք ու բատքստալով գնաց դեպի դուռը.

— Ասացի չէ, որ պան Մալախովսկին չի թողնելու քնենք...

Պանդոկի առաջ մի տասնյակ սահնակներ կանգ առան։ Հրեաները ջութակ էին ճզվզացնում, խոխոտացնող կլարնետներ փչում։ Գորգերի վրա փռված, ոտքերը չոած շլյախտիչները քրքջում էին, բղավում, միմյանց բորբոքելով։ Բեխավոր կարճիկ քուրքով մեկը պար էր գալիս տրորված ձյան վրա՝ մեկ փքված առաջանում էր՝ բեխերը սղալելով, մեկ մոլեգնած պտտվում էր, թուրը ցից պտտվում էր ետևից։

Հասան ջահակիր ձիավորները, ցած թռան։ Խավարի միջից չորս հուժկու ձիեր երևացին, ցից բաշերին սիրամարգի փետուրներ։ Բաց սահնակի մեջ կանայք էին նստած։ (Սանկան կպել էր ապակուն, աչքերը պլշած օտար կանանց վրա. բոլորը թավշյա նեղ մուշտակներով էին, մորթեբոլոր օձիքներով, պստիկ գլխարկները թեք դրած։) Ջահերով լուսավորված կանայք ծիծաղում էին։ Նստիքի վրայից պնդակազմ մի պան իջավ, օրորվելով քայլեց դեպի պանդոկ, պատուհանի ապակու ետևից տեսավ Սանկայի դեմքը։ «Հայդա՞»՝ ձեռքով արեց շլյախտային։ Պանը, ետևից շլյախտիչները՝ ոմանք հասարակ, ոմանք էլ լրիվ պատառոտված քուրքերով, բայց բոլորը թուր ու ատրճանակներով, ներս թափվեցին պանդոկ։ Պղնձյա կաթսայի պես կարմրած պանը ափը տարավ բեխերի վրայով՝ այնքան երկար էին, որ տեղ չարեցին բռի մեջ։ Սևագորշ աղվեսի մորթիով կուլտուշը ձնոտ էր, երևում է, որ պանը քանիցս ընկել էր նստիքի վրայից։ Թուրը շխկշխկացնելով, աչքերը Սանկայի վրա փայլեցնելով, խոսեց փքուն, հարբածի լարումով.

— Իմ ողորմած պանի իշխանուհի, անիծված պանդոկապանն ինձ ուշ հայտնեց ձեր գալստյան մասին։ Ինչպես թե։ Այսչափ գեղեցիկ, բարձրատոհմիկ իշխանուհին գարշելի պանդոկո՞ւմ գիշերի։ Չենք թույլ տա։ Շլյախտա, ոտքերն ընկեք, պանի իշխանուհուն խնդրեք դղյակ գալ...

Շլյախտիչները, որոնց մեջ ալեհեր, դեմքի վրա թրի հարվածից մնացած սպիներ ունեցողներ էլ կային, պանդոկը խմիչքի թունդ հոտով լցնելով, մի ծնկով ընկան Սանկայի առաջ, գլխարկները պոկելով գլխներից, ափերով խփելով կրծքներին։

— Ողորմածագույն պանի իշխանուհի, կմեռնեմ, չեմ վեր կենա ձեր աստվածային ոտքերի մոտից, համեցիր պան Մալախովսկուն հյուր։

Ալեքսանդրա Իվանովնան, ճամփորդական շալն ուսից գցելով, վեր թռավ սեղանի մոտից ու կանգնել էր այդպես ծնկաչոք շլյախտայի դիմաց՝ գունատ, հոնքերը վեր, միայն ռունգերն էին թրթռում։ Պանդոկապանը բարձրացրեց մոմը։ Պան Մալախովսկին, նայելով այդ գեղեցկուհուն, մեկ-մեկ հրեց շլյախտիչներին և մոտենալով, ծանր-ծանր ընկավ ծնկի.

— Խնդրում եմ։

Սանկան, այնուամենայնիվ, խելք արեց նայել ամուսնուն։ Վասիլին սաստիկ վախեցել էր, դողացող ձեռքով արձակում էր օձիքի կոճակները, ծոցից հանելով հավատարմագրերի տոպրակները և վկայագիրը, որ ինքն անձեռնմխելի անձ է։ Որոշ հապաղումով, բայց երգեցիկ ձայնով Սանկան ասաց.

— Երջանիկ կլինեմ ծանոթություն հաստատել...

Երկրորդ շաբաթն էր խնջույքի մեջ էր պան Մալախովսկին, աղմկում էր Օրշանսկի վոյեվոդությամբ մեկ։ Կինը՝ պանի Ավգուստան, այնքան էր սիրում զվարճություն ու պարեր, որ պարացնելով ուշագնացության էր հասցնում կավալերներին։ Եթե ուժասպառ մեկը թաքնվում էր մի պուճախում, արթնացնում, կիսաքուն բերում էին այնուհաշար դահլիճ, ուր վերնասրահում վերջին ուժերը հավաքած, նվագում էին վտիտ, լապտերդակ հագած երաժիշտները, նոխ պատկերազարդ առաստաղից կախ վենետիկյան ջահերից մոմ էր կաթում քրտնած կեղծամների, ծածանվող շրջազգեստների վրա, հարևան սենյակներում ոգևորված երգում ու բղավում էր ավերիչ շլյախտան։

Գիշերվա կեսին հանկարծ պանի Ավգուստան՝ փոքրամարմին, գանգրամազ, պլտափոսիկներով այդ տիկինը, նոր զվարճանք հորինելով, ծափ էր զարկում. «Գնացի՞նք»։ Լցվում էին սահնակները, ջահերը վառած սլանում հարևանների մոտ, ուր վերստին՝ հունգարական գինու տակառիկներ, խորոված ամբողջ ոչխարներ բարձրաստիճան հյուրերի համար, սյուտորով փորոտիքի հսկայական ամաններ՝ շլյախտայի համար։ Գավաթներ էին դատարկում գեղեցիկ կանանց, լեհական պատվամոլության, Ռժեչ Պոսպոլիտայի վեմ կամքի կենացը։

Կամ էլ պանի Ավգուստայի մտքով անցնում էր հյուրերին թուրքի, հույնի, հնդիկի շորեր հագցնել, մուր էր քսում չունևոր շլյախտիչների դեմքերին։ Գիշերը զվարճանալով, լուսաբացին դիմակավորված գնում էին մոտակա մենաստանը, որի ախորժալուր զանգերը հնչում էին ծառերից այն կողմ, բլրակի վրա։ Ժամերգությանը կանգնելուց հետո, ճերմակ սեղանատանը բուխարու մեջ վառվող ձողաններով տաքացված հարյուրավոր մեղրախմիչք էին խմում, կատակում բուրավետ շուրջառներով և սուսերակիր նրբակիրթ վանականների հետ՝ դեսից-դենից։

Սանկան հոգու ամբողջ հրդեհով նետվեց այդ ուրախության մեջ։ Միայն զգեստներն ու թրջված շապիկներն էր փոխում, շփվում էր հոտավետ օդիով ու կրկին՝ նիհարած, բարձրահասակ, ամբողջովին

երաժշտությամբ տոգորված, հպարտությամբ գլուխ էր տալիս մենուետ պարելիս, խելագարի պես պտտվում լեհական շուրջպարերին:

Վասիլին սկզբում իրեն զսպում էր, բայց նրան կցեցին ամբողջ Լեհաստանում հայտնի երկու ածդահայի, երևելի ուտող և խմող պան Խոդկովսկուն և պան Դոմորացկուն: Այնպիսի շլյախտիչներ էին, որ մի շնչով չորս կվարտանոց գարեջրի գավաթներ էին դատարկում, սալորով տապակած մի ամբողջ սագ ուտում, վրայից՝ մի աման վարենիկի, վրայից՝ ճնգական շիշ հունգարական գինի: Վասիլին օրուգիշեր պաչպչվում էր նրանց հետ: Երբ սթափվում էր, տրտմահայաց փնտրում էր կնոջը. «Սանեչկա, հոգյակս, ճամփա ընկնենք, բավական է»: Սանկան վրան էլ չէր նայում: Պան Խոդկովսկին գրկում էր Վոլկովի ուսերը, օրորվելով շարունակում էին...

Վասիլին մնչում էր, գլուխը բարձի մեջ թաղած՝ ինչ-որ մեկը ուսն էր ցնցում: (Ծորերով էր քնել, միայն կափտանն ու սուսերն էր հանել:) Գլուխը կարծես կապարից լիներ՝ բարձրացնել չէր լինում: Ցնցում էին համառորեն, եղունգները մաշկի մեջ խրած... «Օխ, է՞լ ինչ է պետք»:

— Գնանք ինձ հետ պարիր... Դե, արի, արի,— շտապ-շտապ կրկնում էր Սանկայի ձայնը, այնքան տարօրինակ, որ Վասիլին կոթնեց բազկին: Մահճակալի մոտ կանգնած Սանկան գլխով էր անում, շպարազարդ կեղծամը շարժելով... Աչքերն այնպես էին, ասես հրդեհ էր ընկել տունը, աղետ էր կատարվել...— Չե՞ս ուզում ինձ հետ պարել:

— Ցնդե՞լ ես, ալ կնիկ... Լույսը հիմա կբացվի...

Սանկայի փոխված դեմքը, հոլանի ուսերը երկնագույն էին թվում թափանցիկ բարձր լուսամուտից ընկնող արշալույսի մեջ... «Ի՞նչ օրն է գցել իրեն, արյան նշույլ չկա երեսին»:

— Ավելի լավ է, պառկես քնես:

— Չես ուզում, չես ուզում... Ա՛հ, Վասիլի...

Նա թափով նստեց բարձր աթոռին, կախ գցեց մերկ ձեռքերը: Ֆրանսիական անուշ օծանելիքի, մի օտար հոտ էր բուրում նրանից: Անթարթ նայում էր ամուսնուն, գունդ էր կանգնել կոկորդին:

— Վասյա, ինձ սիրո՞ւմ ես:

Եթե մեղմությամբ, սովորականի պես հարցներ՝ չէ՞, ասես սպառնանքով հարցրեց: Վասիլին զայրույթից բռունցքը թաղեց բարձի մեջ.

— Ինձ գոնե թող հանգիստ ապրեմ:

Սանկան նորից կուլ տվեց գունդը.

— Ասա, ինձ ինչպե՞ս ես սիրում:

Ի՞նչ պատասխան տար: Կնկա փուչ գլուխ: Խումհարից այդպես չճաքեր գլուխը, Վասիլին անպայման հայհոյելու էր: Բայց ոչ ուժ ուներ, ոչ տրամադրություն՝ լուռ էր, կշտամբալից քմծիծաղով կնոջն էր զննում: Սանկան կամացուկ ծափ զարկեց.

— Տեր չկանգնե՞ս... Մեղքը քո վիզը...

Վեր կացավ, ոտքով ետ շպրտեց զգեստի երկար փեշը, գնաց:

— Դուռը փակիր, Սանյա...

Այդպես էլ չկարողացավ քնել Վասիլին՝ տնքտնքում էր, շուռումուռ գալիս, ներքևի դահլիճներից եկող հեռավոր երաժշտությունը լսելով: Չէր ուզում, բայց մտածում էր. «Վատ է, վատ, լավ չէ»: Նրատել էր անկողնին, գլուխը բռնած... «Ամենևին պետք չէ այսպես ապրել...»: Հագնվեց, ետնամուտքով իջավ ծառայատուն, տեսնելու՝ սահակառքը կարգի՞ն է: Կառաջնորդի մոտ տեսավ կառապան Անտիպին (Սմոլենսկի վոյեվոդայից վաթսուն ռուբլով էր գնել, Վյազմայի տակ կորածի փոխարեն), ուրախացավ յուրային մեկին տեսնելով.

— Է ինչ, Անտիպ, վաղը կգնանք:

— Ախ, Վասիլի Վասիլևիչ, լավ կլիներ, լրիվ զզվեցինք Էստեղից.

— Իրիկունը գնա պանդոկապանի մոտ, ձիերի համար:

Վասիլին դանդաղ վերադառնում էր պուրակի միջով: Մաքուր ձյուն էր տեղում, հանդիսավոր խշշում էին ազոտավաբներով լի ծառերը: Լճակի մոտ բազմաթիվ մուժիկներ ու գեղջկուհիներ էին աշխատում, երևում է՝ ամբողջ գյուղը քշել էին ձյունը մաքրելու, ձողեր էին տնկում դրոշակներով, որոնք պտպտում էին քամու տակ: «Փուչ բաներ ու զվարճանք, ուրիշ ոչինչ»: Վասիլին հանկարծ կանգ առավ, ասես մեկը բռնեց ուսերից՝ խոժոռվեց: Սիրտը խփում էր: Գլխի ընկավ՝ նա՛ է: Հարբածության մուժի միջից քանի-քանի անգամ էր տեսել, միայն նոր հասկացավ՝ նա՛ է, փարիզյան նարնջագույն թավշյա կափտանով, թիկնեղ ու գեղեցկատես պան Վլադիսլավ Տոլկինսկին: Ալեքսանդրան միշտ նրա հետ է. մենուետը նրա հետ, կոնտրդանսը կամ մազուրկան նրա հետ:

Վասիլին ցած էր նայում: Ձյունը խփվում էր այտերին, լցվում ծոծրակը: Սակայն ցոլաց այդ շանթող կանխազգացումը, և ամեն ինչ նորից խումհարի շշմածությամբ շղարշվեց: Վճիռ չկայացրեց: Իսկ նրան արդեն փնտրում էին՝ նախանաշի տանելու: (Այստեղի սովորությունն էր. ուրախ գիշերից հետո վաղ նախանաշ, ու քնում էին մինչև նաշ:) Զանձրացրած ընկերները՝ պարծենկոտ, ցմփոր սուտասաններ Խոդկովսկին և Դոմորացկին թևանցուկ արեցին. «Ի՞նչ բիգոս են մատուցել, պան Վասիլի...»: Ալեքսանդրան սեղանի մոտ չէր, նա էլ չընկար... Վասիլին թունդ ստարկա խմեց, բայց սթափ էր...

Ելավ սեղանի մոտից, գնաց պարադահլիճ՝ դատարկ էր: Վերնասրահում, թուրքական թմբուկին հենված, քնել էր լողող ու ոսկրոտ հրեան: Վասիլին զգուշորեն բացեց հայելապատ սրահ տանող երկփեղկ դուռը. գույնզգույն թղթերով կեղտոտված մոմած մանրահատակի վրայով, լուսամուտների մոտով քայլում էին նարնջագույն կափտանի փեշը սուսերով լկտիաբար ցցած պան Վլադիսլավը և Ալեքսանդրան: Տաք-տաք բաներ էր ասում կնոջը, կամակորությամբ թափահարելով կեղծամը: Ալեքսանդրան լսում էր գլխահակ: Խոնար-

հած վզից աղջկական ու անպաշտպան ինչ-որ բան զգաց Վասիլին· անփորձ ու անխելք՝ արտասահման են բերել, մենակ ձգել, կնեղացնեն ու արցունքները կուլ կտա միայն...

Հարկ էր, որ Վասիլին մոտենար մոլեգնած, բավարարություն պահանջեր գոռոզամիտ լեհից, բայց միայն նայեց դռան ճեղքից, տառապելով խղճահարությունից... «Էհ, վատ պաշտպան ես դու, Վասիլի»: Մինչ այդ պան Վլադիսլավը ձեռքի գեղեցիկ շարժումով ցույց տվեց կողքի դուռը, Սանկայի թիակները փոքր-ինչ վեր բարձրացան, թեթևակի ճոճեց գլուխը: Ծրջվեցին, գնացին ձմեռային այգի: Կամքից անկախ Վասիլին ձգվեց, թեքերը քշտելու... Թեք չկար, ժանյակներ էին միայն: Սուսերն էլ էր վերևում թողել... Ա՜, գրողը տանի...

Նա թափով ետ տարավ դռան փեղկը, բայց ետևից վրա պրծան աղմկոտ գիրուկները՝ Խոդկովսկին և Դոմորացկին...

— Պան Վասիլի, հապա փորձիր, տաք-տաք բլիթ թթվասերով...

Նորից նստեց սեղանի մոտ՝ խոռվված: Ամոթ էր զգում ու զայրույթ: Ակնհայտ պայմանավորվածություն կար: Այս որկրամոլներն իրեն խմացնում են... Վազեր սուսերն առներ ու մենամարտե՞ր: Ինչ թագավորական դեսպանորդ եմ ասել: Է՜, կնոջ պատճառով կռիվ է սարքում, ինչպես մուժիկը գինետանը... Ա՜, թող այդպես լինի: Վերջը նույնն է:

Դեն հրեց մատուցած բաժակը, արագ դուրս եկավ ճաշասենյակից: Վերևում, ատամները սեղմած, սուսերն էր փնտրում... Գոռավ Սանյայի շրջազգեստների կույտի տակից... Ամբողջ ուժով ձգեց լանջագոտին: Ցած վազեց քարե աստիճաններով: Դղյակում արդեն պատկում էին քնելու: Վազեվազ շրջեց ձմեռային այգում՝ ոչ ոք չկար: Բախվեց մի աղախնի, ցածր ծնկեցով խոնարհվելով, աղջիկը ծլվլաց.

— Պանի իշխանուհին, պանի Մալախովսկայան և պան Տրլիլինսկին գնացին զբոսնելու, ասացին մինչև երեկո իրենց չսպասենք...

Վասիլին նորից վեր բարձրացավ ու մինչև մութն ընկնելը պատուհանի մոտ նստած, ճանապարհին էր նայում: Նույնիսկ այն բանին հասավ, որ սկսեց մեղայական նամակ հորինել, ուղղված Պյոտր Ալեքսեևիչին: Բայց թուղթ ու գրիչ չգտավ:

Հետո պարզվեց, որ Սանկան վաղուց վերադարձել ու հանգստանում է պանի Ավգուստայի ննջասենյակում: Ընթրիքից հետո լճակի ափին դիմակահանդես ու հրավառություն էր պատրաստվում: Վասիլին իջավ կառաջնակի մոտ, Անտիպին կարգադրեց կամաց-կամաց ձիերը լծել և որոշ տուփեր սահակառք տեղափոխել: Մոայլված վերադառնում էր դղյակ: Քիվերի վրա ճրագաթասեր էին վառվում՝ քամին վազում էր կրակների վրայով: Ջնաբեր ամպերը ցրվել էին, երկնագույն գիշեր էր, լուսինը կտրված էր կողքից:

Ջնաջնակ քարե արձաններով այգու տաղավարի մոտից Վոլկովը խոպոտ բղավոցներ լսեց, հևիհև շնչառություն, թրերի շեղբերի շխկշխկոց: Պիտի անցներ գնար՝ հետաքրքիր չէր: Տաղավարի անկյունում (նետակիր կուպիդոնի պատվանդանի մոտ) մի կին էր կանգնած, վրան գցած մուշտակը օձիքի ծայրերից բռնած, ճերմակ կեղծամը գլխին: Ուշադիր նայեց՝ Ալեքսանդրան էր: Մոտ վազեց: Քիչ հեռվում, լուսնի լույսի տակ թրերով մենամարտում էին պան Վլադիսլավը և պան Մալախովսկին: Ոտքերը ճողած ցատկում էին, դոփդոփելով վրա պրծնում, կատաղորեն փնչացնելով, թուր թրի շրխկացնելով:

Սանկան նետվեց դեպի Վասիլին, գրկեց, գլուխը դրեց կրծքին, դեմքը ետ գցեց ու աչքերը կկոցեց, ատամների արանքից ասելով.

— Տար ինձ, տար...

Բեխավոր Մալախովսկին բարձրաձայն բղավեց, Վոլկովին տեսնելով: Պան Վլադիսլավը վրա պրծավ նրան. «Քոնը չէ, թույլ չենք տա»: Պուրակի միջով վազեվազ հասան թրերը մերկացրած շլախտիչները, պաներին բաժանելու...

Վոլկովը հանգստացավ, երբ մի հիսուն վերստ հեռացել էին պան Մալախովսկուց: Ոչ մի խոսքով չկշտամբեց Սանկային, ոչինչ չհարցրեց, սակայն խիստ էր: Սանկան նստած էր սահակառքի մեջ՝ աչքերը փակ, սակված: Հարուստ կալվածատերերը շրջանցում էին:

Մի անգամ նստիքին տեղավորված ուղեցույցը, սառած մատները քուրքի նեղ թեքերի մեջ մտցնելով, իրար եկավ, բլրակի վրայից ցույց տալով ճամփամերձ մատուռի կոմինդրե տանիքը: Անտիպը գլուխը խցկեց սահակառքի մեջ.

— Վասիլի Վասիլևիչ, էստեղ ուզած-չուզած պիտի կանգնենք:

Պարզվեց, որ այդ մատուռը (ի պատիվ սուրբ Յան Պոմուկայի) նշանավոր պան Բորեյկոն է կառուցել. նրա գիրության, որկրամոլության և հյուրընկալության մասին առասպելներ էին պատմում: Պանի տունը ճանապարհից հեռու էր ընկած, մթին անտառակից դենը: Առանց դժվարության բաժակակիցներ հրապուրելու համար նա մատուռ էր կառուցել ճիշտ ճանապարհի վրա. կից մի շինությունը խոհանոցն էր և նկուղը, մյուսը՝ սեղանատունը: Այստեղ մշտապես ապրում էր կապուցինը՝ հաստլիկ ու զվարթաբարո մի մարդ: Ժամերգությունն անում, մնացած ձանձրալի ժամերին պանի հետ թուղթ էր խաղում, ու երկուսով անցնող-դարձողին էին հսկում:

Ով անցնելիս լիներ՝ տոհմիկ պան, թե վերջին շապիկը խմելու տված անհոգ շլախտիչ, կամ քաղքենի-վաճառական մերձակա գյուղաքաղաքից, ճորտերը ճոպան էին ձգում ճանապարհի լայնքով, պան Բորեյկոն ճոճվելով ու խոխոտացնելով, գինու թաս էր մատուցում ճամփորդին (ճորտերը շտապ-շտապ արձակում էին ձիերը), շվարած ճամփորդին տանում էին մատուռ, կապուցինն աղոթք էր անում, անցնում էին կերուխումի: Պան Բորեյկոն չարություն չէր պատճառում, բայց չհարբած բաց չէին թողնում, ոմանց անգիտակից վիճակում սահնակն էին նստեցնում, ոմանք էլ, ուշքի չգալով, հոգիներն էին ավանդում կապուցինի խլաձայն խոստովանախոսքի տակ...

— Հապա ի՞նչ ենք անելու, Վասիլի Վասիլևիչ,- հարցրեց Անտիպը:

— Ծուռ տուր, դաշտով քշիր ինչքան կարող ես արագ:

Ըստ երևույթին, պանների ուղեղում միայն մի բան կար՝ զվարճանք, թվում էր, թե ամբողջ Ռժեչ Պոսպոլիտայան անհոգ խրախճանքի մեջ է: Գյուղերում ու գյուղաքաղաքներում հենց մի երևելի տուն էր հանդիպում, ուրեմն, դարպասը կրնկի վրա բաց պիտի լիներ, առմուտքին՝ հարբած շլախտան կոկորդ պատռելիս: Դրա փոխարեն քաղաքների փողոցները մաքուր էին, շատ լավ խանութներ ու վաճառաշարքեր կային: Խանութների և վարսավիրանոցների, արհեստավորական համքարությունների վրա, փողոցի լայնքով նկարազարդ ցուցանակներ էին կախված. կամ կին էր նկարած՝ բոստրոգը հագին, կամ հեծյալ ասպետ, կամ պղնձյա կոնք՝ վարսավիրանոցի վրա: Դռան մոտ կանգնած բարեհամբույր կծկտար հախճապակյա ծխամորճով որևէ գերմանացի, կամ ընտիր մուշտակը հագած հրեան աներեսի պես չէր խնդրի անցնող-դարձողին ներս մտնել, նայել: Մոսկվան չէր, որ խանութպանի կնիկը գնորդի փեշից քաշեր իր աղքատիկ խուցը, ուր նեխած ապրանքից բացի ոչինչ չկար, այն էլ եռակի թանկ: Այստեղ որ խանութն էլ մտնեիր, աչքերդ շաղ կգային: Փող եթե չունենայիր, պարտքով կտային:

Որքան մոտենում էին լիֆլյանդական սահմանին, ավելի հաճախ էին քաղաքներ մտնում: Բլրակների վրա ջրաղացները թևերն էին պտտում: Գյուղերում արդեն դաշտ էին կրում թրիքը: Ամպամած երկնքում գարնան բույր կար: Սանկայի աչքերը վերստին սկսեցին փայլել: Մոտենում էին Կայցբուրգին: Բայց այստեղ կատարվեց այն, ինչ չէին սպասում:

Իշևանատանը, միջնորմից այն կողմ, հանգստանում էր պալատական Պյոտր Անդրեևիչ Տոլստոյը: (Մոսկվա էր վերադառնում արտասահմանից:) Ռուսերեն խոսք լսելով, քուրքը վրան գցած դուրս եկավ՝ ճաղատ գլխին մետաքսյա փուլյար էր կապել:

— Ներեցեք ծերուկիս,— հարգանքով խոնարհվեց Ալեքսանդրա Իվանովնային:— Անչափ ուրախ եմ հաճելի հանդիպման համար...

Սամույրի պոչի պես սև հոնքերի տակից նայում էր մուշտակը հանող Սանկային՝ ակնապիշ և քնքշությամբ: Հիսունին մոտ, նիհար ու կարճլիկ, բայց ջղուտ մարդ էր: Մոսկվայում չէին սիրում Տոլստոյին, ցարը նրան ներել չէր կարող անցյալը, երբ Խովանսկու հետ նա ոտքի էր հանում ստրելեցներին՝ Սոֆյային պաշտպանելու: Բայց Տոլստոյը կարողանում էր սպասել: Արտասահմանում դժվարին հանձնարարություններ էր ստանձնում և գերազանց կատարում: Լեզուներ գիտեր, գրականություն, հարմար գնով յուղաներկ կտավ կարող էր գնել (Մենշիկովի պալատի համար), օգտակար որևէ գիրք ձեռք բերել, բանիմաց մարդ վարձել աշխատանքի համար: Առաջ չէր խցկվում: Շատերն սկսել էին վախենալ նրանից:

— Արդյոք Ռիգա չե՞ք ուղևորվում,— հարցրեց Ալեքսանդրա Իվանովնային: Կալմիկ աղախինը նրա վալենկաներն էր հանում: Սանկան տրտմությամբ պատասխանեց.

— Փարիզ ենք շտապում:

Տոլստոյը հանեց եղջյուր ծխատուփը, միջնամատով կտկտացրեց, քթախոտը մտցրեց մսեղ քթի մեջ:

— Գլխացավանքի մեջ կընկնեք, ավելի լավ է Վարշավայով գնացեք: (Քամահար դեմքը շփելով, Վոլկովը հարցրեց. «ինչո՞ւ»:) Լիվոնիայում պատերազմ է, Վասիլի Վասիլևիչ, Ռիգան պաշարված է:

Սանկան ձեռքերն այտերին տարավ: Վոլկովը վախեցած թարթեց աչքերը.

— Սկսել է: Ինչպե՞ս թե: Չլինի՞ Ավգուստը մենակ...

Եվ կարկամեց՝ Պյոտր Անդրեևիչը խիստ սառն ու զգուշացնող, ծակող հայացք նետեց նրա վրա: Բարձրացրեց քթախոտով կեղտոտված քիթը: Փոշտաց, փուլյարե գլխակապի ծայրերը բարձրացան, ականջների պես:

— Խորհուրդ եմ տալիս ձեզ, սիրելի Վասիլի Վասիլևիչ, հիմա թեքվել դեպի Միտավա: Այնտեղ է Ավգուստ թագավորը: Նա ուրախ կլինի տեսնել ձեզ, հատկապես ձեր տիկնոջը՝ այդչափ շարման և սիմպատիկ...

Տոլստոյը որոշ բաներ հայտնեց սկսված պատերազմի մասին: Դեռևս աշնանից Ավգուստ թագավորի սաքսոնյան գումարտակները սկսել են մոտենալ լիֆլյանդական սահմանին, դեպի Ցանիշկա և Միտավա: Ռիգայի նահանգապետ Դալբերգը (որը երեք տարի առաջ պատվազուրկ էր արել մոսկովյան մեծն դեսպանախումբը, Պյոտր Ալեքսեևիչի հետ) ոչինչ չէր կամեցել տեսնել, կամ էլ արհամարհել էր այդ դիվերսիան: Ռիգան կարելի էր գրավել մի թափով: Սակայն վենուսական զվարճանքով ու խելացնոր թեթևամտությամբ կորցրել էին թանկագին ժամանակը. սաքսոնյան գլխավոր հրամանատար, երիտասարդ գեներալ Ֆլեմինգը սիրահարվել էր պան Սապեգայի ազգականուհուն՝ ամբողջ ձմեռ խնջույքներ արել նրա դղյակում: Զինվորներն իրենց հերթին էին տրվել հարբեցողության, թալանել կուլյանդական գյուղերը, մուժիկները փախել էին Լիֆլյանդիա, և Ռիգայում վերջապես ուշքի էին եկել: Նահանգապետն ամրացրել էր քաղաքի պաշտպանությունը:

— Գեներալ Կաղովիչի զորաբանակ ժամանումից հետո, փառք աստծո, ռազմական գործողություններն սկսվել էին,— պատմում էր Պյոտր Անդրեևիչը, սափրած շրթունքները հավաքելով, բառերն ընտրելով:— Սակայն Վենուսն ու Բաքոսը, ավաղ, նեգիժե են գնդակների սուլոցի հանդեպ. գեներալ Ֆլեմինգն ավելի ջերմ մարտեր է փնտրում: Փոխանակ շվեդների մատույցներն անցնելու, խիզախորեն հաղթահարում է չքնաղ լեհուհու ամրաշինությունները, արդեն Դրեզդեն է տարել նրան և շուտով հարսանիքը կլինի այնտեղ...

Ամբողջ պատմածից Վոլկովը հասկացավ, որ Ավգուստ թագավորի գործերը ձախ են գնում: Մտածեց՝ որևէ անփութությունից խուսափելու համար, որ հետո ստիպված չլինի պատասխան տալ Պյոտր Ալեքսեևիչին, հարկ է գնալ Միտավա:

— Ո՞ւր են ձեր ասպետները, պարոն: Ո՞ւր են ձեր տասը հազար զրահավորները: Հապա ձեր երդումնե՞րը, պարոն: Դուք ստել եք թագավորին:

Ավգուստը վառված աշտանակը թափով դրեց հայելու առաջ, բմբլազնդերի, ձեռնոցների, օծանելիքի սրվակների արանքում, մոմերից մեկն ընկավ ու հանգավ: Ետուառաջ էր քայլում ննջասենյակի արծաթավուն գորգի վրայով: Պրկված զորեղ ձկնամկանները գայրագին ցնցվում էին: Ցոհան Պատկուլը կանգնած էր նրա առաջ՝ գունատ, մռայլ, գլխարկը ճմրթելով:

Մարդկային ուժերի սահմաններում ամեն ինչ արել էր նա, ամբողջ ձմեռ սաղրիչ նամակներ էր գրել, գաղտնի կերպով ուղարկել լիֆլյանդական կալվածքները՝ ասպետներին, և Ռիգա: Արհամարհելով շվեդական օրենքի սպառնալիքը, վաճառականի անվան տակ սահմանն էր անցել ու եղել ֆոն Բենկենդորֆի, ֆոն Սիվերսի, ֆոն Պալենի դղյակներում: Ասպետները նրա նամակները կարդում ու լալիս էին, հիշելով միաբանության երբեմնի հզորությունը, բողոքում էին հացահատիկային մաքսից, իսկ նրանք, ովքեր ռեդուկցիայով զրկվել էին հողերի մի մասից, երդվում էին կյանքները չխնայել: Բայց երբ վերջապես սաքսոնյան զորքը Լիֆլյանդիա ներխուժեց՝ շվեդական լուծը թոթափելու մասին Ավգուստի մանիֆեստներով, ասպետներից և ոչ մեկը չհամարձակվեց ձի հեծնել, ավելի վատ՝ շաները, բյուրգերների հետ, անցան Ռիգան ամրացնելուն և պաշտպանելուն, թալանի ծարավի թագավորական վարձկաններից:

Պատկուլն այսօր Միտավա էր բերել ոչ սփոփիչ այդ լուրերը: Թագավորն ընդհատել էր ճաշը, սեղանից վերցրել աշտանակը, Պատկուլի ձեռքը բռնել ու թափով եկել էր ննջասենյակ...

— Դուք ինձ դրդեցիք այս պատերազմին, պարոն, դո՞ւք: Ես թուր մերկացրեցի, հենվելով ձեր երդումներին ու խոստումներին: Եվ դուք հանդգնում եք հայտարարել, թե լիֆլյանդական ասպետությունը՝ այդ հարբեցողներն ու լարդոյթոքի երշիկ խժռողները դեռևս տատանվում են:

Վիթխարահասակ ու գեղեցկատես, գինվորական ճերմակ կափտանով Ավգուստը, բռունցքները սեղմած, մոտեցավ Պատկուլին, մոլեգնած թափահարում էր ժանեկազարդ թեզանիքները, և ավելորդ շատ բաներ բղավեց:

— Ո՞ւր է դանիական օծանդակ զորքը: Դուք ինձ խոստացել էիք: Ո՞ւր են Պյոտր ցարի գինվորական հիսուն գնդերը: Ո՞ւր է ձեր երկու հարյուր հազար չերվոնեցը: Լեհերն սպասում են այդ դրամին, գրողը տանի: Լեհերն իմ հաջողությանն են սպասում, որ թուր առնեն, կամ իմ ձախողմանը, որ չտեսնված երկպառակություններ սկսեն...

Փրփուր էր թափվում նրա կտրուկ գծագրված շրթունքներից, խնամված դեմքը ցնցվում էր... Աչքերը փախցնելով, Պատկուլը պատասխանեց, կոկորդը սեղմող զայրույթը զսպելով.

— Արքա, ասպետները կկամենային երաշխիք ստանալ, որ շվեդական լուծը թոթափելուց հետո չեն ենթարկվի մոսկովյան բարբարոսների ասպատակությանը: Կարծում եմ, դա է տատանման պատճառը...

— Հիմարությո՞ւն է: Սին երկյուղնե՞ր... Պյոտր ցարը խաչելությամբ է երդվել Յամբուրգից այն կողմ չանցնել՝ ռուսներին հարկավոր է Ինգրիան և Կարելիան: Նրանք նույնիսկ Նարվան չեն վերցնի:

— Արքա, ես վախենում եմ ուխտադրժությունից: Ինձ հայտնի է, որ Մոսկվայից լրտեսներ են ուղարկվել Նարվա և Ռեվել, ապրանք գնելու պատրվակով, և նրանց հրամայված է այդ ամրոցների գծագրերը նկարել:

Ավգուստը ետ քաշվեց: Խոշոր, ներկած եղունգներով ձեռքն ընկավ թրի երախակալին, կլոր կգակը ցցվեց գոռոզավարի:

— Պարոն ֆոն Պատկուլ, թագավորական խոսք եմ տալիս ձեզ. ոչ Նարվան, ոչ Ռեվելը, ոչ առավել ևս Ռիգան ռուսների երեսը չեն տեսնի: Ինչ էլ կատարվի, այդ քաղաքները ետ կխլեմ Պյոտր ցարի ճանկերից...

Թագավորն անասելի ձանձրանում էր Միտավայում, հերցոգի պալատում: Նրա ներկայությունը զորաբանակում չարագացրեց իրադարձությունները: Հաջողվեց գրավել միայն Կոբերշանց փոքր ամրոցը: Երկու անգամ ոմբակոծեցին Ռիգան, բայց ապարդյուն: Լիֆլյանդական ասպետները դեռ մտածում էին՝ ձի հեծնեն, թե՝ ոչ: Լեհ մագնատները զգուշացած սպասում էին, ըստ երևույթին առաջիկա սեյմում հարց նախապատրաստելով թագավորին. ի՞նչ նպատակներով է նա Լեհաստանը ներգրավել այդ վտանգավոր պատերազմի մեջ:

Միտավայում եղանակն անտանելի էր: Փողը քիչ էր: Կուրլյանդիայի կալվածատերերն անտաշ էին, նրանց կանայք ավելի շատ ծանրած կովերի էին նման, քան գայթակղիչ սեռի ներկայացուցիչների: Կուրլյանդական երիտասարդ հերցոգ Ֆրիդրիխ-Վիլհելմը՝ մի սնապարծ հարբեցող, անտանելի ձանձրույթ էր հարուցում: Եթե չլինեին ջանքերը նոր բարեկամի՝ Ատալիա Դեսմոնտի, որը թագավորի հետ թողել էր ուրախ Վարշավան, Ավգուստի պոռթկուն խառնվածքը մեյամաղձոտության մեջ կթաղվեր:

Ատալիա Դեսմոնտը պարահանդեսներ էր սարքում և որս, Վարշավայից բերել տվեց իտալացի դերասաններին, դրամ էր մսխում անհասկանալի ալնպիսի շռայլությամբ, որ մեկ-մեկ Ավգուստը նույնիսկ քիթն էր քաշում՝ կոմսուհու համար այսքան ոսկյա դուբլոն հայթայթելու կարգադրությունն անելով պալատի մինիստրին: Խրստաշունչ եղանակից իտալացի դերասանները փոշտում ու հազում էին: Նրբագեղ հղացմամբ պարահանդեսներին ընտիր վալելքներին անհաղորդ տեղական ազնվականությունը միայն աչքերն էր չռում պերճանքի վրա, մտքում հաշվելով, թե ինչ է արժեցել այդ ամենը թագավորին:

Մի անգամ Ավգուստը ճաշում էր: Ըստ սովորության, մենակ էր փոքր սեղանի մոտ, մեջքն արած բուխարու կրակին: Ցինկապակ նստած էին ոսկեզօծ աթոռակների վրա՝ կիսաշրջանաձև, նրա դիմաց: Ոչ մեծ,

նուրբ կեղծամ կար թագավորի գլխին, թեթև ծաղկանախշ կափտան, բատիստե վերնաշապկի ժանյակներն իջնում էին փորից ցած: Մատովակը՝ մագաղաթանման, ներկած բեխերով մի ծերուկ, տաքացրած գինի էր լցնում: Ընդունելությանն այսօր ներկա էին տեղական վեց բարոնուհի, ճակնդեղի պես կարմիր այտերով, վեց մարմնեղ բարոններ լարված կանգնած էին իրենց կանանց՝ ալյուր ցանած կեղծամների ետևում: Երկու աթոռակ գբաղված չէր:

Ավգուստը, լցոնած նապաստակի միսը ծամելով, պղտորված հայացքով նայում էր տիկնանց: Ծարնատում էին փայտերը: Բարոնները և բարոնուհիները չէին շարժվում, հավանորեն երկյուղելով քիթը քաշելու պես անվայել հնչյուններից: Լռությունը չափազանց երկարեց: Ավգուստը, բազուկներին հենվելով, շրթունքները սրբեց, անձեռոցիկը գցեց սեղանին:

— Տիկնայք և պարոնայք, ես պիտի անձանձիր կրկնեմ այն բարձր գոհունակությունս, որը զգում եմ ձեր սքանչելի քաղաքի հյուրը լինելով: (Հաստատեց դա դաստակի թեթևակի շարժումով:) Կուլյանդական ազնվականության բարոյական բարձր հատկանիշները հարկ է օրինակ ծառայեցնել. վեհ մտածելակերպը սթափ գործնականությանը բարեպատեհ զուգորդելն է դա...

Բարոններն արժանապատիվ գլուխ խոնարհեցին ձիու մազի կեղծամներով, բարոնուհիները քիչ հապաղելով (քանզի վատ էին հասկանում ֆրանսերեն), փարթամ հետույքները բարձրացնելով, ծնկծալ արեցին:

— Տիկնայք և պարոնայք, ավաղ, մեր գործնական դարում նույնիսկ թագավորները, իրենց հպատակների բարձր բարօրությունը հոգալով, երբեմն ստիպված են հողին իջնել: Այդ ճշմարտությունը ոչ բոլորն են հասկանում, ավաղ (հոգոց հանելով, աչքերը մոթեց): Դառնությունից զատ, ինչ կարող է հարուցել գոռոզությամբ փքված ոմն պանի անհեռատես ու թեթևամիտ զեղխությունը, որը ոսկի է ցրիվ տալիս խնջույքների և որսի, հարբեցողներ ու պորտաբույծներ կերակրելու վրա, այն ժամանակ, երբ իր թագավորը, հասարակ զինվորի պես, թուրը ձեռքին ոտքի ամրությունը գրոհելու է գնում...

Ավգուստը մի ումպ գինի խմեց: Բարոնները լարված լսում էին.

— Ընդունված չէ հարց տալ թագավորներին: Սակայն թագավորներն իրենց հպատակների հոգու խորքն են կարդում հայացքների մեջ: Պարոնայք, այդ պատերազմը ես սկսեցի մենակ, իմ տասը հազար գվարդիականներով: Պարոնայք, ես սկսեցի պատերազմը հանուն վեհ սկզբունքի: Լեհաստանը բզկտված է պառակտումներով: Բրանդենբուրգյան կուրֆյուրստը՝ այդ գիշատիչ գայլը, մեր կողն է կրծում: Ծվեդները Բալթիական ծովի տիրակալներն են: Կարլոս թագավորն այլևս տղա չէ, հանդուգն է նա: Եթե առաջինը Լիֆլյանդիա չներխուժեի, վաղը շվեդներն արդեն այստեղ կլինեին, կուլյանդական հացահատիկի վրա հնգապատիկ մաքս կդնեին և ռեդուկցիան ձեր հողերի վրա էլ կտարածեին:

Նրա պայծառ աչքերը լայնացան: Բարոնները սկսեցին ֆսֆսացնել, տիկնայք ներս քաշեցին գլուխները:

— Ասված առաքելություն է դրել իմ ուսերին՝ Էլբայից մինչև Դնեպր, Պոմերանիայից մինչև Ֆիննական ծովափ խաղաղություն ու բարօրություն հաստատել միասնական մեծ տերության մեջ: Դիտէ մեկը պիտի ուտի պատրաստված ապուրը: Ծվեդական, բրանդենբուրգյան, ամստերդամյան վաճառականները գդալներն են մեկնում: Ես ազնվական եմ, պարոնայք: Ես ուզում եմ, որ ապուրը դուք ուտեք հանգիստ... (Նա աչքերը հառեց առաստաղին, ասես չափելով տարածությունը, որտեղից հարկ էր իջնել:) Երեկ ես հրամայեցի կախել երկու խոտ մթերողի, նրանք մի քանի ֆերմա էին թալանել բարոն Իկսկուլի կալվածքում... Բայց պարոնայք... Իմ զինվորներն արյուն են թափում, նրանց ոչինչ պետք չէ, փառքից բացի... Բայց ձիերին վարսակ ու խոտ է պետք, գրողը տանի... Ես ստիպված եմ հնարատեսության կոչել նրանց, ում համար մենք արյուն ենք թափում...

Բարոնները շառագունեցին, նոր հասկանալով, թե խոսքն ինչին է հանգում: Նրանց լռությամբ ավելի ու ավելի բորբոքվելով, Ավգուստը զինվորական բառեր խառնեց ճառին: Ներս մտավ Ատալիա Դեսմոնտը՝ կիսախուփ կոպերից նրա թխադալուկ դեմքը կրքոտ էր թվում: Գեղանի անբոնազբոսությամբ ծունկը ծալեց թագավորի առաջ, սադափե հովհարը թափահարելով (բարոնուհիները աչքերը պլշեցին փարիզյան այդ զարմանալի նորույթի վրա), խոնարհվեց ու ասաց.

— Արքա, թույլ տվեք մոսկովյան Վեներային ձեզ ներկայացնելու երջանկությունն ունենամ...

Հսկայական քդանցքը քարշ տալով, մոտեցավ դռանը և ձեռքից բռնած ներս բերեց Ալեքսանդրա Իվանովնային. հիրավի, նրա բոլոր ձեռնարկումներից դա ամենապարզունն էր թերևս: Առաջինն իմանալով Վոլկովների գալստյան մասին, Ատալիան նրանց ներկայացավ իշխանատանը, գնահատեց Ալեքսանդրայի արժանիքները, տարավ իր պալատը, իրար խառնեց նրա հագուստները, խստիվ արգելելով մոսկովյան որևիցէ բան հագնել. «Բարեկամս, սրանք սամոյեդների հագուստ են: (Լավագույն զգեստների մասին, յուրաքանչյուրին հարյո՛ւր չերվոնեց վճարած:) Կեղծամնե՛րը: Բայց նախորդ դարում էին դնում սրանք: Վերսալում հավերժահարսերի տոնախմբությունից հետո կեղծամ չեն դնում, փոքրիկս»: Աղախնին կարգադրեց բոլոր կեղծամները բուխարին նետել: (Սանկան այնքան էր վախեցել, միայն աչքերն էր թարթում, ամեն ինչի համաձայնելով:) Ատալիան բացեց իր սնդուկները և Ալեքսանդրային հագցրեց, որպես «երեկոյան զգեստով ֆամ դը կալիտե»:

Ավգուստը հաճելի զարմանքով էր նայում մոսկովյան Վեներային՝ մոխրա-շիկավուն վարսերի երկու ալիք խոնարհած գլխի վրա, խոր բացված կրծքին ընկած գանգուր մազափունջ, մի քանի ծաղիկ մազերի մեջ և համեստ, առանց կողափոթերի, հունական տունիկի նման զգեստի վրա, ուսի վրայից ոսկեկար թիկնոցն էր, որ ձգվում էր գորգի վրայով:

Ավգուստը բռնեց նրա մատների ծայրերից, կռանալով համբուրեց: (Ալեքսանդրան միայն թռուցիկ տեսավ բարոնուհիների շառագունած դեմքերը:) Ահա այդ երանելի ժամը: Թագավորը կարծես յոթ սար, յոթ ձոր հեռուներից լիներ՝ խոշոր, շքեղ, սիրալիր, կարմրաշուրթ, սամույրի մորթու նման, բարձր հոնքերով: Սանկան հմայված նայում էր նրա վստահությամբ շողացող աչքերին. «Դե կորա»:

Շուտով մի շաբաթ կլիներ, որ Վասիլին նստած էր իշևանատանը: Սանկային տարել էին, իսկ իր մասին մոռացել: Գնում էր պալատ՝ տեղեկանալու, թագավորի համհարզն ամեն անգամ սիրալիր հավաստիացնում էր, որ վաղը թագավորն անհապաղ կընդունի նրան: Վասիլին ձանձրույթից ցերեկը շրջում էր քաղաքում, ծուռումուռ փողոցներում: Նեղ, մռայլ տները՝ սրակատար տանիքներով, երկաթյա դռներով, մեռած էին թվում, մեկ-մեկ բարձր պատուհանի ապակուն բարկացած ու գդակավոր ինչ-որ դեմք կհպվեր: Ծուկանների հրապարակներում համարյա բոլոր խանութները փակ էին: Երբեմն նիհարած, քառոլոշ ձիերով, խոշոր սալարկը դղրդացնելով թնդանոթներ քարշ կտային: Մոայլադեմ հեծյալները բրդյա թիկնոցներով էին փաթաթված, քամուց պաշտպանվելով: Միայն մուրացկաններն էին՝ մուժիկներ, լացակումած կանայք, ցնցոտիապատ մանկիկներ, որ խումբ-խումբ թափառում էին փողոցներում, գլխարկները հանած, պատուհաններին նայելով:

Երեկոները, ընթրելուց հետո, Վասիլին նստում էր՝ մոմը վառած, ձեռքն այտին հենած: Մտածում էր կնոջ մասին, Մոսկվայի, անհանգիստ ծառայության մասին: Ինչպես էին սովորեցնում հայրերը, պապերը՝ հնազանդ եղիր, աստվածավախ, հարգիր մեծերին— հիմա այդ ամենով հեռուն չես գնա: Վեր են մագլցում նրանք, ովքեր ճանկ ու ատամ ունեն: Ալեքսանդր Մենշիկովը՝ հանդուգն ու լկտի, վերջերս դեռ սպասյակ էր, հիմա նահանգապետ է, շքանշանակիր, առիթի է սպասում, որ երկու գլուխ առաջ նետվի բոլորից: Այլոշկա Բրովկինին գորք հավաքելու համար գվարդիայի կապիտանի կոչում են շնորհել՝ վոյեվոդաների կեղծամները լավ քաշքշել է: Ցաշկա Բրովկինը՝ հաստակրունկ մի մուժիկ, չար ու կոպիտ, նավապետ է... Սանկա՞ն: Ա՜խ, Սանկան, աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ... Մեկ ուրիշ ամուսին մտրակով վերից վար կձաղկեր նրա մեջքը...

Ուրեմն, ինձ ևս հարկ է ինչ-որ բաներ հասկանալ: Ներկայումս սուսուփուս մարդիկ հարգի չեն: Ուզած-չուզած պիտի մագլցես... (Տրտմած աչքերով նայում էր մոմի բոցին... Առաջվա պես հոգին խաղաղվեր լոին դատակերտում, բքի ոռնոցը ձնածածկ տանիքից վեր... Վառարան լիներ, ճոիկներ, մեկ էլ անշտապ, դուրեկան մտորումներ:) Չսկսի՞ Պուֆֆենդորֆ կարդալ: Թե՞ առևտրով զբաղվի, ինչպես Ալեքսանդր Մենշիկովը կամ Շաֆիրովը: Դժվար կլինի՝ սովոր չէ: Պատերազմը շուտ սկսվեր... Վոլկովները խոնարհ ու հեզ են, բայց որ ձի հեծան, այն ժամանակ կտեսնեք, թե ով է առաջինը, Ցաշկա ու Այլոշկա Բրովկիննե՞րը:

Մոսխոն այդպիսի մի երեկո իշևանատանը հայտնվեց թագավորական համհարզը, և պատվական սիրալիրությամբ, ներողություններ հայտնելով, Վոլկովին խնդրեց անմիջապես ներկայանալ պալատ: Վասիլին, հուզվելով, շտապ հագնվեց: Գնացին կառքով: Ավգուստը նրան ընդունեց ճնշասենյակում: Ձեռքերը պարզեց ընդառաջ, թույլ չտվեց ծնկի գալ, գրկեց ու կողքը նստեցրեց:

— Ոչինչ չեմ հասկանում, իմ պատանի բարեկամ: Մնում է միայն ներողություն հայտնեմ իմ պալատական անկարգության համար... Հենց նոր, ճաշին իմացա ձեր գալստյան մասին: Կոմսուհի Ատալիան՝ ամենաթեթևամիտը կանանցից, հրապուրվել է ձեր տիկնոջով, խլել ամուսնու գրկից և մի ամբողջ շաբաթ, բոլորից թաքցնելով, նրա մտերմությունն է վայելում...

Վոլկովը չէր հասցնում խոնարհվել ի պատասխան, ուզում էր ոտքի կանգնել, բայց Ավգուստը սեղմում էր նրա ուսը: Խոսում էր բարձրաձայն ծիծաղելով: Թեև շուտով դադարեցրեց ծիծաղը:

— Դուք գնում եք Փարիզ, գիտեմ: Ուզում եմ ձեզ, իմ բարեկամ, առաջարկել գաղտնի նամակներ տանել եղբայր Պյոտրին: Ալեքսանդրա Իվանովնան կատարյալ անվտանգության մեջ կպասի ձեզ կոմսուհի Ատալիայի մոտ: Վերջին դեպքերը ձեզ հայտնի՞ են:

Նրա դեմքից կարծես ջնջեցին ծիծաղը՝ չար կնճիռներ գոյացան բերանի անկյուններում...

— Ոիգայի տակ գործերը վատ են՝ լիֆլյանդական ասպետությունն ինձ դավաճանեց: Իմ լավագույն գեներալ Կաղովիչը երեք օր առաջ ընկավ հերոսի մահով...

Նա ափով ծածկեց դեմքը, բոպեական կենտրոնացմամբ վերջին տուրքը մատուցեց տարաբախտ Կաղովիչին...

— Ես վաղը Վարշավա եմ գնում, սեյմ՝ կանխելու մտքերի սարսափելի խմորումը... Վարշավայում ձեզ կհանձնեմ նամակները և թղթերը... Դուք ուժ չեք խնայի, դուք կապացուցեք ռուսական բանակի անհապաղ առաջխաղացման անհրաժեշտությունը...

Գիշերվա կեսին Ատալիան արթնացնում էր աղախնին՝ վառում էին մոմերը, վառում էին բուխարին, սեղան բացում մրգերով, պաշտետներով, որսամսով ու գինիով: Ատալիան և Սանկան իջնում էին ընդարձակ անկողնուց, միայն գիշերաշապիկներով ու ժանեկազարդ գլխանոցներով նստում ընթրելու: Սանկան սաստիկ քնել էր ուզում (հապա ինչ. ամբողջ օրը մի բոպե դադար չուներ, ամեն ինչ օտարոտի, շարունակ աչալուրջ, հենց այնպես ոչ մի խոսք չպետք է ասեր), բայց ուռած աչքերը տրորելով, արիաբար գինի էր խմում օճառի պղպջակի պես գույնզգույն ըմպանակից, ժպտում, շուրթերի անկյունները ձգելով: Արտասահման էր եկել ոչ թե քնելու, այլ «ռաֆինե» սովորելու: Այդ «ռաֆինե» կոչվածը (ինչպես Ատալիան էր բացատրում) նույնիսկ ոչ բոլոր արքունիքներում են հասկանում. հենց Վերսալում բավականին շատ է թե կոպտությունը, թե խոզությունը...

— Պատկերացրու, հոգիս, խոնավ երեկոներին լուսամուտ բացել

չի լինում՝ այնպիսի գարշահոտություն է պալատի շուրջը, թփուտներից և անգամ պատշգամբներից... Պալատականները, նեղվածքի մեջ ծվարած, քնում են մի կերպ, փնթի, օձանելիք են լցնում վրաները, որ կեղտոտ սպիտակեղենի հոտը չգա... Ահ, ես ու դու Իտալիա պիտի գնանք... Դա մի սքանչելի երազ կլինի... Ամեն տեսակ ռաֆիների հայրենիքն է դա... Քեզ կնուազեն պոեզիան, երաժշտությունը, կոքերի խաղը, մտքի նրբին վայելքները...

Արծաթյա դանակով Ատալիան խնձոր էր կնպում: Ոտքը ոտքին գցած, մաշիկն էր ճոճում, գինի խմում աչքերը կիսախուփ:

— Ռաֆիներ մարդիկ կյանքի իրական արքաներն են... Լսիր, թե ինչպես է ասված. «Լավ հողագործը քայլում է արորի ետևից, ջանադիր արհեստավորը ջուլհակի դազգահի մոտ է նստած, անվախ վաճառականը, կյանքը վտանգելով, առագաստ է բարձրացնում իր նավի վրա... Ինչի՞ համար են աշխատում մարդիկ: Չէ որ մեռել են աստվածները... Ո՛չ, վարդագունող ամպերի միջից այլ աստվածներ եմ ես տեսնում Օլիմպոսի վրա»:

Սանկան լսում էր հմայված ճագարի պես: Ատալիայի ճակատը կնճռոտվեց: Դատարկ ըմպանակը պարզեց. «Լցրու» և խոսեց.

— Բարեկամս, այնուամենայնիվ չեմ հասկանում, թե ինչու եք վախենում Ավգուստի սերն ընդունելուց՝ նա տառապում է... Առաքինությունը լոկ խելքի պակասության հատկանիշ է: Առաքինի կինը քաղաքում է բարոյական այլանդակությունը, ինչպես իսպանական թագուհին՝ թորշոմած կուրծքը փակ զգեստով... Բայց դուք խելացի եք, դուք փայլուն եք... Դուք սիրահարված եք ձեր ամուսնուն: Ոչ ոք չի խանգարում նրա հանդեպ դրսևորել ձեր պոռթկուն զգացմունքները, միայն թե բացահայտ մի արեք դա: Ծիծաղելի մի դառնաք, բարեկամս: Օրինավոր քաղաքացին կիրակի օրերը գբոսնելու է ելնում իր տիկնոջ հետ, գոտկատեղից ցած գրկած, որ ոչ ոք չհամարձակվի իրենից խլել այդ գանձը... Բայց մենք ռաֆիներ կանայք ենք, դա պարտավորեցնում է...

Գլխանոցի եզրաժանյակների տակից չէր երևում Սանկայի խոնարհած դեմքը: Ի՞նչ պիտի ասեր նա: Կարող էր թեկուզ լրիվ օրուգիշեր պարել առանց նստելու, ինչ ձևի հունական աստվածուհի ասես դառնալ, մի գիշերում գիրքը կարդալ վերջացնել, ոտանավորներ անգիր անել... Սակայն որոշ բան չէր կարողանում հաղթահարել իր մեջ. ամոթից կվռնվեր, հետո կտառապեր, եթե Ատալիան համոզեր իրեն կնոջ պես խղճալ թագավորին... («Այդ ամենը կլինի, կլինի, իհարկե, բայց ոչ հիմա»:) Ինչպե՞ս բացատրեր: Հո չէ՞ր խոստովանելու, որ Պառնասում չի ծնվել, այլ կով է արածացրել, որ պատրաստ է հրաժեշտ տալ առաքինությանը, բայց դեռ անուժ է միջից ինչ-որ բան պոկել, ասես մոր սարսափելի աչքերը պահպանում են նվիրական, ուղնուծուծի պես ինչ-որ բան...

Ատալիան չէր պնդում: Սանկայի այտը կմթելով, խոսակցությունը փոխեց.

— Իմ երազանքն է տեսնել Պյոտր ցարին: Օ՜, ես երկյուղածությամբ կհամբուրեի այդ ձեռքը, որը կարող է մուրճ ու սուր բռնել: Պյոտր ցարն ինձ հիշեցնում է Հերկուլեսին, նրա տասներկու սխրանքները. նա կռվում է հիդրայի դեմ, նա մաքրում է ավգյան ախոռները, նա ուսերի վրա է առնում երկրագունդը... Արդյո՞ք հեքիաթ չէ, իմ բարեկամ, որ մի քանի տարվա մեջ Պյոտր ցարը հուժկու նավատորմ և անպարտելի բանակ ստեղծեց: Ես ուզում եմ իմանալ բոլոր մարշալների, բոլոր գեներալների անունները: Ձեր թագավորը արժանի հակառակորդ է Ավգուստ արքային: Եվրոպան սպասում է, թե վերջապես երբ է մոսկովյան արծիվը մագիլները խրելու շվեդական առյուծի բաշի մեջ: Դուք պետք է հաղորդ տաք իմ հետաքրքրասիրությանը...

Ամեն անգամ Ատալիան խոսքը դարձնում էր մոսկովյան գործերին: Սանկան գիտցածի պես պատասխանում էր: Չէր հասկանում, թե ինչու է տհանություն զգում ընկերուհու զգուշացած, շողոմ ձայնից... Հետո անկողնում վերմակը քթին քաշելով, երկար ժամանակ չէր կարողանում քնել, գիշերային խոսակցություններից բորբոքված: Ահ, դյուրին բան չէր այդ «ռաֆիներ» կոչվածը...

3.

«...Եվ վերջապես, այդ ամբողջ կոալիցիան ընդամենը մի թերթ թուղթ է, ի զորու վախեցնել հարգարժան սենատորներին, և ոչ թե ձեր պոռթկուն քաջարիությունը... Դանիացիք չեն համարձակվի դրժել հաշտությունը՝ հավատացեք կանացի խորաթափանցությանը: Պյոտր ցարը կաշկանդված է հաշտության բանակցություններով՝ նա հանդես չի գա, մինչ թուրքերը նրա ձեռքերը չարձակեն: Բայց դա չի կատարվի: Ուկրաինցև ատենադպիրը սամույրե բոլոր մուշտակներն արդեն բաժանել է վեզիրներին, այլևս ասելու բան չունի: Պյոտր ցարը ձգտում էր վախեցնել թուրքերին, վորոնեժյան նոր նավատորմը ջուրն իջեցնելով, դրա փոխարեն ստիպեց խիստ անհանգստանալ անգլիացիներին և հոլանդացիներին: Կոստանդնուպոլսի նրանց դեսպանները լսել անգամ չեն ուզում Սև ծովում ռուսական նավերի մասին: Բոլորից անհաշտը լեհաց դեսպան Լեշչինսկին է, Ավգուստի ոխերիմ թշնամին: Հանուն Ռժեչ Պոսպոլիտայի նա աղաչել է սուլթանին, որ լեհերին օգնի ռուսներից խլելու Ուկրաինան, Կիևով և Պոլտավայով:

Ահա վերջին նորությունները կամ բամբասանքները՝ ինչպես ձեզ ավելի դուր կգա, որոնցով լի է Վարշավան: Ավգուստի հետ քիչ դրամ չենք ծախսում պարահանդեսների և զվարճանքների վրա, ավաղ, թագավորի համբավը շարունակում է ընկնել: Նա կատաղած է և իրեն ծիծաղելի դրության մեջ է դնում, քարշ գալով մի հասարակ ռուս կնոջ ետևից...

Եվ այսպես, պատմության համընթաց քամին ձեր առագաստներն է ուռեցնում, պարանասարքերի մեջ սուլելով մոտակա փառքի երգը: Այժմ կամ երբեք: Ձեզ հավատարիմ Ատալիա»:

Այս նամակը Կառլոսը ստացավ Կունգսյորի անտառում: Կարդում էր ծառին ելնված: Խշշում էին կեչիները, մարտյան երկնքով ցածր-

ընթաց ամպեր էին պատնում: Ցածում, մշուշապատ կիրճում, կաղկանձում էին որսաշների, նրանց անհամբեր ձայներից պարզ էր, որ խոշոր գազան են հետապնդում: Ծերուկ եգերը, քարերի արանքի ձյունը տրորելով, մի քանի քայլ իջավ, սպասողաբար շրջվեց: Թագավորը նորից ու նորից էր կարդում նամակը: Սուրհանդակը, որ նամակն էր բերել, բռնել էր ձիու սանձը, և սա մանուշակագույն աչքը խեթել էր շների հաչոցի ուղղությամբ:

Կիրճից երևաց եղջերուն՝ ուժգին ցատկերով ելնում էր դարնիվեր: Կառլոսը մուշկետը չբարձրացրեց: Ծյուղավոր պոզերը ետ գցած, եղջերուն պատնեշ ծառերի միջով: Հիսուն քայլի վրա կրակոց լսվեց, այնտեղից, ուր ֆրանսիական դեսպանն էր կանգնած իր հատվածում: Կառլոսը չշրջվեց՝ նամակը թրթռում էր նրա կարմրած ձեռքի մեջ: Ծնոտի կնճիռները կաշվե օձիքի մեջ թաղելով, եգերը ետ եկավ տեղը, փոքր գլխով ու նեղ դեմքով, ձողի պես նիհար, որմզդեղնի մորթու կափտանով ու երկարուկ մեջքով այդ պատանու ետևում:

— Ձեզ ո՞վ է հանձնել այս նամակը,— հարցրեց Կառլոսը:

Սանձը բաց չթողնելով, սպան մի քայլ մոտեցավ:

— Կոմս Պիպերը, և հրամայեց ձերդ մեծությանը բանավոր հայտնել խիստ կարևոր լուրեր, որոնք դեռևս հայտնի չեն սենատին:

Կարմրայտ ու պարարտ դեմքով սպայի մոխրագույն աչքերը հարցական էին և հանդուգն: Կառլոսը շրջվեց: Պարոնայք ազնվականները, ճիշտ ահա այսպես և բոլորով սպասողաբար իրեն են նայում՝ ամբողջ գվարդիան, ինչպես սոված որսաշների մի ոհմակ:

— Հատկապես ի՞նչ է հրամայված ձեզ ինձ հայտնելու:

— Դանիական զորքը՝ տասնհինգ կամ քսան գումարտակ, անցել է հոլշտինյան սահմանը:

Կառլոսը դանդաղ ճմեց Ատալիայի նամակը: Որսաշների կաղկանձը կրկին մոտենում էր: Անտառի կիրճից արջի մռնչյուն լսվեց: Կառլոսը բարձրացրեց ծառին հենած մուշկետը և ուսի վրայով նետեց սպային:

— Ձին փոխեք, վերադարձեք Ստոկհոլմ: Կոմս Պիպերին ասեք, որ այստեղ մենք զվարճանում ենք, ինչպես երբեք չենք զվարճացել: Երեք ածդահա արջ ենք պաշարել: Ես շուրջկալի եմ հրավիրում կոմս Պիպերին, գեներալ Ոյոնշելդին, գեներալ Լեվենհաուպտին, գեներալ Ցլիպպենբախին: Գնացեք և շտապեք:

Մշտապես գունատ դեմքին կարմիր բծեր երևացին: Ձենթարկվող մատով քաշեց հրահանը: Վճռական քայլերով մոտեցավ զառիթափ ին, շփշփացնելով սառած ճտքերը: Սպան քմծիծաղով նայեց նրա տղայական կոր մեջքին, ինքնասիրահարված ու պրկված ծոծրակին, թռավ թամբի վրա, խոր ձյան մեջ լայն ցատկերով չքացավ անտառում:

Սպանեցին և ցանցը գցեցին տասնչորս արջ: Կառլոսը տղայի պես զվարճանում էր ցանցն ընկած արջի ձագերի կատաղի մռնչոցով. դաբաղած կաշվի գոտիներով նրանց կապկպեցին, Ստոկհոլմ ուղարկելու համար: Այդ օրը լուսաբացին տեղ հասած Պիպերը, Ոյոնշելդը,

Լեվենհաուպտը և Ցլիպպենբախը (կաշվե կափտաններով, մայրեհավի փետուրներով զարդարված գլխարկներով) յուրաքանչյուրը մեկական արջ որսացին գեղարդով: Ֆրանսիական դեսպան Գիսկարը անձամբ սպանեց յոթ ֆուտ հասակով մի ածդահա:

Հոգնած որսորդները վերադարձան փայտաշեն ամրոցը, որը կառուցված էր կիրճի խորքի սառույցների մեջ խշշացող ջրվեժից վեր: Մաշասենյակում շոգ էր սոճենու բոցավառվող կոճղերից: Պատերի վրա պսպղում էին եղջերուների և որմզդեղնների գլուխների ապակյա աչքերը: Կարճլիկ, կարմիր գինուց տոգած Գիսկարը, բեխերը ոլորելով, կարճ ձեռքերը թափ տալով, ոգևորված պատմում էր, թե ինչպես գազանը, փոթորկի պես ձյունը ցրիվ տալով, դուրս պրծավ որջից ու արդեն պատրաստ էր իջնել իրեն. «Դեմքիս վրա արդեն զգում էի նրա գարշահոտ շունչը: Բայց շատ հաջող ետ ցատկեցի, նշան բռնեցի: Չկրակեց... Մի վայրկյանում կյանքս անցավ աչքիս առջևով... Մյուս մուշկետը վերցրեցի...»:

Լռակյաց շվեդները լսում էին, խմում ու ժպտում: Կառլոսը նույնիսկ ընթրիքի ժամանակ մեկ ումպ գարեջուր չխմեց: Երբ ֆրանսիական դեսպանին դժվարությամբ տարան ննջասենյակ, Կառլոսը հրամայեց ժամապահ կարգել դռան մոտ, նստեց կրակի առաջ: Պիպերը և գեներալները մոտեցան նրա աթոռին:

— Ես ձեր կարծիքն եմ ուզում իմանալ, պարոնայք,— ասաց նա և ամուր սեղմեց շրթունքները: Տղայական քամահար քիթը կարմրել էր կրակի շողքերից:

Գեներալները գլուխները կախեցին: Ամեն գործում, նման խնդրում՝ հատկապես, հարկ էր լավ մտածել: Պիպերը դանդաղ շփեց քառակուսի կզակը:

— Սենատը վախենում է և պատերազմ չի ուզում: Մեր մեկնելու նախօրյակին արտակարգ նիստ գումարվեց: Լեհաց թագավորի՝ Լիվոնիա ներխուժելու, հատկապես դանիացիների ռազմական գործողություններ սկսելու լուրերը խռովել են Ստոկհոլմը: Նավատերերը, փայտեղենի և հացահատիկի վաճառականները պատվիրակներ են ուղարկել սենատ: Նրանց ուշադիր լսել են և սենատորներից ոչ մեկը ձայն չի հանել հօգուտ պատերազմի: Վճռված է դեսպաններ ուղարկել Վարշավա և Կոպենհագեն՝ ամեն գնով հաշտությամբ ավարտելու նպատակով:

— Իսկ սույնի մասին իրենց թագավորի կարծի՞քը,— հարցրեց Կառլոսը:

— Սենատն, ըստ երևույթին, ենթադրում է, որ ձերդ մեծության պատվախնդրությունը բավարար չափով գոհացված է արջի որսով:

— Գերազա՛նց,— Կառլոսը լուսանի պես արագ իր նեղ դեմքը դարձրեց Ոյոնշելդին: Գեներալ Ոյոնշելդը խոր շունչ քաշեց ցցված քթի լայն ռունգերով:

— Ես կարծում եմ,— ասաց նա, անկեղծորեն նայելով իր կլոր, ջինջ աչքերով,— ես կարծում եմ, որ բանակում ջահել քիչ ազնվականներ չկան, ում համար նեղվածք է Ծվեդիայում... Սրով փառք

ձեռք բերել ցանկացողներ կգտնվեն: Եթե թագավորն առաջնորդի աշխարհի ծայրը, կգնանք աշխարհի ծայրը: Առաջին անգամ չէ շվեդներիս համար...

Նրա ուղիղ բերանը բարեհոգի ժպտում էր: Գեներալները գլուխներն էին ճոճում, հաստատելով. «Առաջին անգամ չենք հարազատ քարաժայռերից հեռանում օտար երկրներ՝ ոսկի և փառք ձեռք բերելու»: Երբ դադարեցրին գլուխ ճոճելը, Պիպերն ասաց.

— Սենատը մի փարտինգ անգամ չի տա պատերազմի համար: Թագավորական գանձարանը դատարկ է: Սա հարկ է քննարկել:

Գեներալները լուռ էին: Կառլոսը շրթունքներն էր կրծոտում: Բուխարու կրակակալին հենած բոտֆորտների ներքանքներից գոլորշի էր բարձրանում:

— Դրամ պետք է միայն առաջին օրերի համար՝ զորքը նավերը նստեցնելու և Դանիա տեղափոխելու: Այդ գումարն ինձ կտա Ֆրանսիական դեսպանը: Նա ինձ կտա այն պատճառով, որ այլապես անգլիացիներից կվերցնեմ... Մեր հետագա ռազմական գործողությունները պիտի հոգա դանիական թագավորը: Նա՛ կվճարի:

Գեներալները կիպ մոտեցան թագավորի աթոռին, հաստատելով. «Այդպես, այդպես»: Պիպերն արագ-արագ շարժում էր ճակատի մաշկը՝ նորից էր ստիպված զարմանալ այդ տղայի վրա:

— Եթե նույնիսկ մենք չգնայինք այս պատերազմին, տերությունները մեզ կստիպեին,— ասաց Կառլոսը:— Ավելի լավն անենք՝ առաջինը հարձակվենք... Վսեմաշուք Ավգուստը մեծ կայսրություն է երազում: Նա նույնպես փող չունի, ինչպես և ես, Պյոտր ցարից չերվոնեցներ է մուրում ու խմելու տալիս լրբերի հետ: Բալագանի կարգին դերասան դուրս կգար Ավգուստից: Ավելի քիչ ինձ մոսկովյան ցարն է վախեցնում. դաշնակիցներից նա կգրկվի, նախքան մուժիկական իր գնդերին մուշկետ կրակել սովորեցնելը... Պարոնայք, ես ձեր քննարկմանն եմ ներկայացնում հետևյալը...

Նույն երեկո, Կառլոսի ծնկներին փռված քարտեզի վրա գեներալները զորքերի տեղադրումը նշեցին. Նարվայի նահանգապետ Վելլինգն ընդունում է Էստլանդիայում և Լիֆլանդիայում շվեդական զորքերի հրամանատարությունը և օգնության հասնում Ռիգային: Լեվենհաուպտն ու Շլիպենբախը զորախաղերի պատրվակով գվարդիան և բանակը մոտեցնում են Լանդսկրոնային՝ ռազմական նավահանգիստ էր Զունդում: Պիպերը հարկ եղած ամեն ինչ անում է Ստոկհոլմում՝ սենատի ուշադրությունն այդ նախապատրաստություններից շեղելու համար:

Սոճենու կոճղեր նետեցին կրակը, դռան ժամապահին ազատ արձակեցին: Ընթրիքի սեղան գցեցին: Քունն առած մսյո Գիսկարը հայտնվեց ճաշասենյակում, ձեռքերը շփելով: Կառլոսը նրան տեղ առաջարկեց կրակի մոտ և հազալով, ասես բառերը կոկորդին էին մնում, ասաց.

— Թանկագին բարեկամ, դուք կարող եք վստահ լինել իմ եղբոր ու ձեր տիրակալի հանդեպ իմ ջերմ ու հավատարիմ սիրուն... (Գիսկարը դանդաղ շփեց ափերը, զգուշանալով:) Հյուսիսային ծովերում Ծվեդիան ֆրանսիական շահերի հավատարիմ պահապանը կմնա: Իսպանական գահի շուրջ եղած վեճում իմ տուրը Լյուդովիկոսին եմ հանձնում: (Գիսկարը խոր գլուխ տվեց, կարճ ձեռքերը տարածելով:) Սակայն թաքցնել չեմ ուզում. անգլիացիներն ամեն ինչ անում են, Ծվեդիան իրենց կողմը գրավելու համար... Թագավորից բացի, Ծվեդիայում սենատ էլ կա, և ես նրանց մտքերը չեմ կարդում... Ավաղ, ներկայիս աշխարհը լի է հակասություններով... Այսօր եմ իմացել՝ անգլիական նավատորմը հայտնվել է Զունդում... Ճակատագրական սխալը կանխելու համար, ձեր բարեկամության իրենեն ապացույցներն են ինձ պետք, մսյո Գիսկար...

Մոնչացող արջաձագերին սայլով տանում էին Ստոկհոլմի փողոցներով: Ետևից գալիս էին հեծյալ Կառլոսը, որսորդները և եգերները: Պղնձյա փողեր էին փչում, շների ոռմակներն էին հաչում: Օրինավոր մարդիկ, պատուհաններին մոտենալով, գլուխներն էին ճոճում. «Այնքան էլ հաջող ժամանակ չի ընտրել թագավորը զվարճանքի համար»:

Տագնապալի լուրեր էին խոսվել բազմամյա խաղաղությանն ընտելացած քաղաքը: Զունդի ջրերում անգլիական և հոլանդական նավատորմեր էին երևացել՝ ինչի՞ համար... Ո՞չ արդյոք դանիացիներին միանալու, որ հյուսիսային ծովերում վերջ դնեն շվեդական հզորությանը: Անձայրածիր Լեհաստանը սպառնում է Բալթիական ափերից ջնջել շվեդական կայազորները: Արևելքում մոսկովյան հազարամյա սահմանը համարյա պաշտպանված չէ, եթե չհաշվենք Նիենշանց փոքր ամրոցը Նևայի գետաբերանին և Նոտեբուրգ ամրոցը՝ Լադոգա լճի ելքի մոտ:

Մտածելն էր սարսափելի՝ պատերազմել համարյա ամբողջ Արևելյան Եվրոպայի հետ, ունենալով քսանհազարանոց ոչ մեծ բանակ և խելառ մի թագավոր: Խաղաղություն, անշուշտ, խաղաղություն, թեկուզ նվազագույնը զիջելով, հիմնականը փրկելու համար:

Կառլոսը հայտնվեց սենատում, առանց որսորդական կափտանը հանելու, ամբարտավան ցրվածությամբ հայրական ճառեր ունկնդրեց այս ժամին Ծվեդիայի վրա բարձրացրած աստծո աջի, ողջախոհության և առաքինության մասին: Դաշույնի ոսկրյա կոթը խաղացնելով, նա պատասխանեց, որ զբաղված է Կունգսլոր դղյակում գարնանային դիմակահանդեսը կազմակերպելով, և միայն տոնախմբությունից հետո կխոսի օտարերկրյա քաղաքականության մասին: Ավագագույն սենատորը, ոտքի ելնելով, խոր գլուխ տվեց ու պատվական արտահայտություններով անհոգ զվարճանք ցանկացավ թագավորին:

Թագավորն ուսերը թոթվեց ու դուրս եկավ: Մի քանի օր անց իրոք մեկնեց Կունգսլոր: Այնտեղ, ձիերը փոխելով, Ռյոնշելդի և գվարդիայի մեկ տասնյակ սպաների ուղեկցությամբ արշավեց դեպի Լանդսկրոնա: Ճանապարհին, համարյա առանց հանգստանալու, ոչ ձիերն էր խնայում, ոչ մարդկանց: Կարծես մի ուրիշ մարդ էր բուն դրել նրա մեջ՝ կրքերն ու կամքը մի միտք էր պաշարել:

Գարնանային անամպ մի առավոտ շվեդական նավերը, տասնհինգ հազար ընտիր զորքով, հասան Զունդ։ Կեսօրին, արևողող ծիանքի շերտին երևացին սև, ասես ծովի ու ջինջ երկնքի եզրին կախված նավերի, բեռնանավերի ու թիանավերի ուրվագծերը։ Հարյուրավոր վիմպելներ էին փողփողում։ Անգլո-հոլանդական կանգնած նավատորմն էր։

Երբ շվեդական առաջապահ եռակայմ ռազմանավի վրա բարձրացավ թագավորական դրոշը, ծխի ճերմակ քուլաներ պոկվեցին նավակողերից, թնդանոթների կրակոցներ լավեցին, ծուխը շղարշի պես քաշվեց հարավ։ Անգլիական և հոլանդական ծովակալները, ոսկեկար զգեստներով, նավակներով հասան առաջապահ ռազմանավ։

Կառլոսը կանգնած սպասում էր կամրջակի վրա՝ մոխրագույն-կանաչ մահուդե կափտանով էր, կիպ կոճկած սև փողկապի տակ, ճարպ քսած լայնհիտք բոտֆորտները պատրաստ էին դիմագրավել ճակատագրի բոլոր անակնկալներին։ Փոքր, եզրածալ գլխարկի տակ կեղծամը հյուսել և ծայրը կաշվե տոպրակի մեջ էր մտցրել։ Ձեռքը հենված էր երկար թրի վրա, ձեռնափայտի պես։ Այս տեսքով էր նա երկար ճամփա ընկել՝ Եվրոպան նվաճելու։

Այդ փչացած պատանու մասին շատ բան լսած ծովակալները զարմացած էին նրա արտասովոր վճռականությամբ ու զսպվածությամբ։ Նա խոսեց անտանելի վիրավորանքների մասին, որ լեհական ու դանիական թագավորներն էին իրեն հասցրել, և մեծահոգաբար համաձայնեց ընդունել անգլո-հոլանդական նավատորմի օգնությունը՝ դանիացիների ուխտադրժությունը պատժելու համար։

Նույն օրը միացյալ երեք նավատորմ, առագաստներով ծովը ծածկելով, ուղղություն վերցրեցին դեպի Կոպենհագեն։

4.

Անձրևը կտրվեց, ամպերը ցրվեցին։ Տաք երեկո էր, խոտերի, ծխի հոտ էր տարածվել։ Հեռվում, Գերմանական արվարձանում, կիրխեի զանգն էր ծլնգում։

Պյոտրը նստած էր փեղկը բարձրացրած լուսամուտի առաջ՝ մոմերը դեռ չէին վառել, վերջին խնդրագրերն էր կարդում։ Ննջասենյակի խորքում դռան մոտ, առանց շարժվելու, ճաղատ գանգը փայլեցնելով կանգնած էր Նիկիտա Դեմիդովը՝ տուլացի դարբինը։

«...Իսկականից, տեր թագավոր, ժողովուրդը խեղճանում է կատարելուց ու մի քիչ թույլերը մտածում են, թե ամեն ինչ հնին է դառնալու... (Գրում էր շահույթ քննող, եկամուտի գործիչ Ալեքսեյ Կուրբատովը։) Վաճառական հանքարությունից Մատվեյ Ծուատովը իր առուտուրի և ունեցածի մասին հեքիաթներ էր հորինել ու տվել, ու գրել էր, իբր թե ունեցած-չունեցածը երկու հազար ռուբլի է մենակ ու սնանկացած է վերջնական։ Ինձ հայտնի է, որ Զարյադյեում, Մատվեյի տանը, պեսքարանի հատակի տակ, ուր մտնելն էլ է ամոթ, դեռ պապական ունեցածից մի քառասուն հազար ոսկի չերվոնեց կա թաղած։ Եվ այդ Մատվեյը թույլ մարդ է, հարստությունը հարբեցողության վրա է ծախսում ու ոչ թե ավելացնելու, ու եթե դեմը չառնվի, մինչև վերջ կսպիտացնի։ Մեծն թագավոր, հրամանատար, աստիճանավոր ու մի քանի զինվոր ուղարկեն Զարյադյե, Մատվեյի տուն, ու նա ոսկին կհանի կտա...»։

Պյոտրը ցնցեց գլուխը, խնդրագիրը դրեց լուսամտագոգին, ձախից՝ ի կատարումն։ Հաջորդը դատավոր Միշկա Բեկլեմիշևից էր, գրված դողացող ձեռքով, հազիվ կարդաց. «...ծառայել եմ քո հորը և քո եղբորը և շատ տեղեր եմ ծառայել ու հրամանք է տրված, որ մոսկովյան Դատական վարչատանը դատավոր նստեմ։ Մինչև օրս էլ ընտրած եմ որպես անշահախնդիր դատավոր... Այդ անշահախնդրությունից պարտքերի մեջ եմ ընկել ու աղքատացել վերջնական։ Մեծն թագավոր, ողորմա, անշահախնդիր ծառայության համար վոյեվոդա ուղարկիր թեկուզ Պոլտավա...»։

Պյոտրը հոգոնչեց, խնդրագիրը շպրտեց թղթերի կույտի վրա, աջ կողմը։ Բելգորոդից և Սեվսկից տեղեկացումներ կային, որ գնդերի, քաղաքների ու ամեն տեսակ աստիճանավոր մարդիկ ու ճորտերը և գյուղացիները չեն ուզում ծառայել թագավորին, չեն ուզում ծովային նավեր կառուցելու և անտառ կտրելու գործին լինել ու բոլոր տեղերից փախչում են Դոնի կազակական բնակավայրերը... Թղթի անկյունում նշեց. «Կանչել Բելգորոդի և Սեվսկի վոյեվոդաներին, հարցաքննել տանջանքով»։

Աղերսագին խնդրագիր կար արքունի գյուղացիներից Կունգուրի վոյեվոդա Սուխոտինի մասին, որ բոլոր տուրքերից բացի սկսել է յուրաքանչյուր ծխից ութական ալտին վերցնել իր օգտին ու հրամայում է խրճիթներն ու բաղնիքները կնքել, որից հետո ինչ ուզում ես, արա. օրերը՝ ցուրտ, շատ ծննդկաններ գոմերում են ծննդաբերում, նորածինները ժամանակից շուտ մեռնում են, գեմստվոյի խրճիթում էլ վոյեվոդան մի քանի կանանց կրծքերից ու պտուկներից բռնել, արյուն է բերել սեղմելով, ուրիշ չարություններ արել, մարդկանց վնաս հասցնելով...

Պյոտրը ծոծրակը քորեց։ Ամբողջ երկիրը ողբի մեջ էր՝ մի վոյեվոդային հանում էին, մյուսն ավելի վատ էր գժվում։ Որտեղի՞ց մարդ գտներ... Գողը գողի վրա։ Սագի փետուրից թանաք ցայտեցնելով սկսեց գրել. «Կունգուր ուղարկել...»։

— Նիկիտա,— շրջվեց։— Քեզ վոյեվոդա որ դնեն, գողություն կանե՞ս։

Նիկիտա Դեմիդովը, դռնից չհեռանալով, զգուշորեն հոգոց հանեց.

— Սովորականի պես, Պյոտր Ալեքսեևիչ, պաշտոնն է էդպես։

— Մարդ չկա։ Հը՞։

Նիկիտան ուսը թոթվեց՝ այսինքն, իհարկե, մի կողմից, մարդ չկա...

— Ցցի ես հանում... Ոռնիկն ես շատացնում... Գողանում են... (Թաթախում, գրում էր, չնայած լրիվ մութ էր։) Խիղճ չկա։ Պատիվ չկա... Ծաղրածու են դարձել... Ինչի՞ց։ (Ծուռ եկավ։)

— Կուշտն ավելի շատ է գողանում, Պյոտր Ալեքսեևիչ, ավելի անվախ...

— Դե, դե, շատ անվախացար...

— Մարդու լաց է գալիս, Պյոտր Ալեքսեևիչ... Միտք էիր անում, թե մարդ չկա... Ինձնից էլ գործի ամենաթեժ ժամանակ տասնմեկ ինգի ամենազավ դարբինները առան ու տարան գինվոր...

— Ո՞վ տարավ:

— Քո ողորմած բոյարին Զեմոդանովը՝ ատենավորի հետ Տուլա էր եկել մարդահամարի... (Նիկիտան կմկմաց, զննելով. Պյոտրի դեմքը չէր երևում, լրիվ շրջել էր դեպի լուսամուտը:) Քեզնից ինչ պահեմ՝ էն տեսակ գործեր եղան Տուլայում: Ով կարեցավ փողը տալ՝ բոլորը պրծան... Փոխատենավորին իմ գործարանն էր ուղարկել... Թե Տուլայում կլինեի էն ժամանակ, հինգ հարյուր ռուբլի կխնայեի՞ էդ տեսակ վարպետների համար... Ողորմած եղիր, մի կերպ արա... Ախր, բոլորն էլ գինագործ են, անգլիացիներից պակաս վարպետ չեն...

Ատամների արանքից Պյոտրն ասաց.

— Խնդրագիր տուր...

— Լսում եմ... Զէ, Պյոտր Ալեքսեևիչ, մարդիկ կգտնվեն, խոսք չկա...

— Լավ... Գործից խոսիր...

Նիկիտան զգուշությամբ սկսեց: Մեծ էր գործը: Այս ձմռանը Ուրալ էր գնացել, Ակինֆիյ որդու և հանքային գործով զբաղվող երեք բանիմաց աղանդավոր մուժիկների հետ՝ Դանիլայի մենաստանից: Նեվյանսկից մինչև Զուսովյան գյուղաքաղաքները շրջեցին ուրալյան լեռնաշղթայով: Երկաթի սարեր գտան, պղինձ գտան, արծաթի հանք, ասբեստ: Հարստությունները փոված են անօգուտ: Չորս կողմը՝ ամայություն: Միակ թուջաձուլական գործարանը Նեյվա գետի վրա, որ երկու տարի առաջ Պյոտրի հրամանով էր կառուցվել, հազիվհազ հիսուն փութ էր ձուլում, և այդ չնչին քանակությունն էլ դժվար է տեղափոխել, ճանապարհազրկության պատճառով: Կառավարիչը՝ բոյարի զավակ Դաշկովը, ձանձրույթից իրեն տվել է հարբեցողության, Նեվյանսկի վոյեվոդա Պրոտասևը՝ նույնպես: Գործավորներից որը առողջ էր, թողել փախել էր, մնացել էին տկար ու նվազները: Հանքարանները փլել էին: Չորսդին՝ դարավոր անտառներ, լճակներից ու գետակներից էլ թեկուզ շերեփով ավազը հանիր, թեկուզ ոչխարենու մուշտակի վրա լվա, ոսկի գտիր: Այնտեղ Նիկիտա Դեմիդովի Տուլայի գործարանի պես չէր, ուր հանքն էլ է նվազ, անտառն էլ է քիչ (անցյալ տարվանից արգելել են կաղնի, հացենի ու թխկենի կտրել՝ ածուխ սարքելու համար), ու ամեն տեսակ քթի մազ փոխատենավոր էլ գա ու կախվի դռնիցդ: Ամենի լայնարձակություն կար այնտեղ: Բայց գործն սկսելը դժվար է՝ շատ փող է պետք: Ուրալն անմարդաբնակ է:

— Պյոտր Ալեքսեևիչ, ախր մեզնից բան դուրս չի գա... Խոսեցի Սվեշնիկովի հետ, Բրովկինի հետ, մի քանիսի հետ էլ... Գցում-բռնում են էդ գործի մեջ փայատեր մտնե՞ն, թե՝ չէ... Ինձ համար էլ է

անպատիվ, ոնց որ դրանց գործակատարը լինեմ... Ինչքա՞ն քրտինք պիտի թափվի Ուրալը ոտի կանգնեցնելու համար...

Պյոտրը հանկարծ կոշիկը զարկեց հատակին:

— Քեզ ի՞նչ է պետք: Փո՞ղ: Մա՞րդ: Նստիր... (Նիկիտան շտապ նստեց աթոռի եզրին, փոս ընկած աչքերը հառեց Պյոտրի վրա): Էս ամառ ինձ հարյուր հազար փութ թուջե արկ է պետք, հիսուն հազար փութ երկաթ: Ժամանակ չունեմ սպասելու, մինչև դուք մտածեք, տաք ու առնեք... Վերցրու Նեվյանսկի գործարանը, ամբողջ Ուրալը վերցրու... Հրամայում եմ... (Նիկիտան առաջ բերեց գնչուական մորուքը, և Պյոտրը մոտեցավ նրան:) Փող չունեմ, բայց դրա համար փող կտամ... Վոլոստներ կկցեմ գործարանին: Քեզ հրաման կտամ բոյարական վոտչինաներից մարդիկ առնես... Բայց տես... (Երկար մատը բարձրացրեց, երկու անգամ թափ տվեց:) Ծվեդներին մի ռուբլի եմ տալիս երկաթի փթին, դու ինձ երեսուն կոպեկով կտաս...

— Զեռնտու չի,— շտապ-շտապ ասաց Նիկիտան:— Չի լինի: Հիսունով...

Թե նա էր նայում, կապտագույն սպիտակուցները չոած, թե Պյոտրն էր մի ոտպեի չափ կատաղած պլշել: Հետո ասաց.

— Լավ: Էդ՝ հետո: Մի բան էլ ասեմ՝ ես քեզ լավ գիտեմ, գողի մեկը... Ամեն ինչ ինձ կվերադարձնես երեք տարում՝ թուջով ու երկաթով... Աստված վկա, համարձակ մարդ ես... Լավ հիշիր, աստված վկա, գելարանի վրա ոսկորներդ կփշրեմ...

Նիկիտան կամացուկ հազաց ու կոկորդը խոխոտացնելով, ասաց.

— Էդ փողը քեզ ավելի շուտ ետ կտամ, աստված վկա...

Մի երեկո էլ այնպես պատահեց, որ բան չուներ անելու... Ուզեց ասել, որ մոմերը վառեն, աչքը գցեց չկարդացած թղթերին, լուսամտագոգին փոված, գլուխը դուրս հանեց:

Արդեն գիշեր էր, բայց կարծես ավելի էր տաքացել եղանակը: Կաթկթում էր տերևներից: Խոտի վրա թեթև մշուշ կար... Պյոտրը ռունգերով ներծծում էր թարմ օդը՝ լիաթոքոց հյութերի բույր էր գալիս: Մի կաթիլ ընկավ ծոծրակին, դող անցավ մարմնով: Ափով դանդաղ շփում էր վզի թաց տեղը:

Գարնան լռության մեջ ամեն ինչ զգուշավոր քուն էր մտել: Ոչ մի տեղ և ոչ մի կրակ, միայն հեռուներից, զինվորական արվարձանից, ժամապահի երկարուձիգ կանչը լսվեց. «Էսի-ի-ի-իիիի՞ր»: Մարմինը խոնջացած էր, ասես կապկպել էին: Լսվում էր, թե ինչ սաստիկ է զարկում լուսամտագոգին սեղմված սիրտը: Մնացել էր դա միայն՝ առամները սեղմած սպասել:

Սպասել, սպասել... Ինչպես գիշերվա լռության մեջ ճամփին մարդ ունեցող կնիկն է սպասում, գլուխը տաք բարձից պոկելով, ականջը պահած թվացող դռփյունին... Ամբողջ օրը գործ չկարողացավ անել: Խնդրեցին ընթրիքի գնալ Մենշիկովի տուն՝ չգնաց... Այնտեղ հիմա քեֆի մեջ կլինեն: Դեռ երբեք այսքան դժվար չէր եղել, հիմա ամբողջ ուժը սպասելու մեջ է, սպասել կարողանալու... Ավգուստ թագավորը

կովի մեջ մտավ տաքացած, չսպասելով, ու խրվեց-մնաց Ռիգայի տակ... Դանիական Քրիստիանը նույնպես չսպասեց՝ ինքն է մեղավոր...

— Ինքն է մեղավոր, ինքն է մեղավոր,— մրթմրթում էր Պյոտրը, աչքերը չռած եղրևանու մթնած, անձրևից հետո ծանրացած թփերի վրա: Այնտեղ ինչ-որ բան էր շարժվում՝ հավանորեն, սպասյակն էր մի աղախնի հետ... Այսօր գնդապետ Լանգենն էր եկել, տագնապալի լուրեր բերելով Ավգուստ թագավորից. շվեդական կորյունը անսպասելիորեն ցույց էր տվել ժանիքները... Հակայական նավատորմով հայտնվել էր Կոպենհագենի ամրոցների առաջ, պահանջել հանձնել քաղաքը: Սարսափահար Քրիստիանը, մարտ չկռվելով, բանակցություններ էր սկսել: Մինչ այդ Կաղլոսը տանինգ հազարանոց հետևակ զորք էր իջեցրել հոլշտինյան ամրոցը պաշարած դանիական բանակի թիկունքում: Շվեդները Դանիա էին ներխուժել հողմի պես սրընթաց: Ոչ սեփական, ոչ օտար ուղեղները մտածել անգամ չէին կարող, որ սույն չարաբաստիկ, երեսառած պատահին կարճ ժամանակում իսկական զորավարի խելք ու խիզախություն հանդես կբերի:

Լանգենը նաև հայտնեց Ավգուստի խնդրանքը՝ փող ուղարկել. Լեհաստանն իբր կարելի է պատերազմի հանել, եթե մի քանի հազար չերվոնեց տա պրիմասին ու թագավորական գետմանին՝ պաներին բաժանելու համար: Լանգենն ապցունքն աչքերին աղաչում էր Պյոտրին՝ չսպասել թուրքերի հետ հաշտությանը, սկսել...

Այդ բոլոր պատմություններից մաշկն ամբողջովին սկսեց քոր գալ: Բայց՝ չէր կարելի: Չի կարելի կովի մեջ մտնել, քանի դեռ Ղրիմի խանը պոչիցդ կախված է: Սպասիր, սպասիր քո ժամին... Փիչ առաջ Իվան Բրուվկինն էր նկել, պատմում էր, որ Բուրգիստրական պալատում մեծ աղմուկ-աղաղակ է եղել. Ավեշնիկովը և Շորինը գաղտնի կերպով սկսել են ցորեն գնել, ջրով ու ցամաքով քշել դեպի Նովգորոդ ու Պսկով: Ցորենը միանգամից երեք կոպեկով թանկացել է: Ռեյակինը բղավել է նրանց վրա, թե՝ ինչ եք խելքներդ թոցրել, Ինգրիան դեռ մերը չէ, ու ե՞րբ է մերը լինելու: Իզուր տեղը ցորենը փտեցնելու եք Նովգորոդում ու Պսկովում... Նրանք էլ պատասխանել են, թե՝ աշնանը մերը կլինի Ինգրիան, առաջին ձյան հետ հաց կտանենք Նարվա...

Թաց թփերը հանկարծ ճոճվեցին, կաթիլների անձրև թափվեց: Երկու ստվեր պոկվեցին... «Օ՜յ, չէ՜, հոգիս, պետք չի, պետք չի...»: Կարճ ստվերը ետ-ետ էր գնում, վազեց թեթև, ոտաբոբիկ... Մյուսը՝ երկարը (սպասյակ Միշկան էր) ետևից ճչմփճչմփացնում էր բոտֆորտներով: Էրենու տակ կանգնեցին կրոք-կրոքի, և հորից՝ «Օ՜յ, չէ՜, հոգիս...»:

Պյոտրը համարյա մինչև գոտկատեղ դուրս պարզվեց լուսամուտից: Ցածրուտում, ալեհեր ուռենիների ետևից բարձրանում էր մշուշապատ խոշոր լուսինը: Հարթավայրում երևում էին դեզերը, ցախի կիտուկները, գետակի կաթնածիր շերտը: Ամեն ինչ ասես դարավոր լիներ՝ անշարժ, անփոփոխ, խոռվքով լի... Մութ լորենու տակ այդ երկու ստվերները հևասպառ շշնջում են էլի նույն բաներից...

— Հանգի՜ստ,— թավամայն թնդաց Պյոտրը:— Մի՜շկա: Կաշիդ կքերթեմ:

Աղջիկը թաքնվեց ծառի ետևում: Մի բոպե չանցած, սպասյակը ոտնաթաթերի ծայրին վեր սուրաց նոնոաբեղ սանդուղքներով, դուռ կամացուկ թխկացրեց:

— Մոմ բեր,— ասաց Պյոտրը:— Ծխամորճ:

Ծխում էր, քայլում: Սեղանի վրայից թուղթ էր վերցնում, մոտեցնում մոմին, մի կողմ շպրտում: Գիշերը նոր-նոր էր սկսվում: Պառկել քնելու մասին մտածել անգամ չէր կարելի... Ծխամորճի ծուխը բաշվում էր պատուհանի կողմը, կորանում շրջանակի տակ, ցրվում թարմաշունչ գիշերվա մեջ...

— Մի՜շկա: (Սպասյակը նորից ներս ընկավ դռնից՝ լիքը-լիքը այտերով, կնճռոտ, աչքերն ապուշ կտրած:) Աղջիկների հետ՝ տես հա՜... Սա ի՜նչ բան է: (Մոտեցավ նրան, բայց ըստ երևույթին, Միշկայի ուշքը գլուխը չէր գալիս, թեկուզ խփեր ինչով ասես:) Վազ տուր, ասա երկանիվը բերեն: Ինձ հետ ես գալու:

Լուսինը ելել էր հարթավայրի վրա, գորշավուն իոտերի մեջ կաթիլներ էին շողշողում: Ձին, խռփացնելով, աչքը պլշում էր տարտամ թփուտների կողմը, Պյոտրը խիրում էր երեսաններով: Անիվներից ցեխ էր շպրտվում, ազատելով հալեպանման անվադիները: Անցան Կուկույի քնած փողոցով, ուր հեղձուցիչ անուշությամբ, ինչպես շատ տարիներ առաջ, ծխախոտի ծաղիկներն էին բուրում նախապատուհաններում: Փարթամորեն աճած կաղամախիների ետևում, Աննա Մոնսի լուսամուտների վրա լուսավորված էին սրոտաձև փորված անցքերը՝ յուրաքանչյուր փակոցափեղկինն առանձին:

Աննա Իվանովնան, պատոր Շտրումպֆը, Կենիգսենը և հերցոգ ֆոն Կրուին խաղաղ, երկու մոմի լույսի տակ թուղթ էին խաղում: Ժամանակ առ ժամանակ պատոր Շտրումպֆը, բթախոտ առնելով բիթը, հանում էր վանդականման թաշկինակը և հատուցով փոշատում, խոնավացած աչքերը զվարթորեն պտտեցնելով գրուցակիցների վրա: Հերցոգ ֆոն Կրուին, խաղաթղթերը զննելով, կենտրոնացած ճգնացնում էր անարտահանելի կոպերը, նշանավոր տասնհինգ ճակատամարտերի մասնակից ու կախ ընկած բեխերը, վեր աճելով, ռունգերն էին մտնում արդեն: Աննա Իվանովնան, տնային երկնագույն զգեստով, մինչև արմունկները բաց գիրացած ձեռքերով, ադամանդյա կաթիլը ականջներից կախ և վզի թավշակապի վրա, թեթևակի կնճռոտել էր ճակատը, խաղաթուղթ ընտրելով: Կոկիկ, հագած-կապած, շպարագած Կենիգսենը մեկ ժպտում էր քնքշորեն, մեկ շրթունքների շարժումով աննկատելիորեն աշխատում օգնել նրան:

Անկասկած, բոլոր փոթորիկներն այդ խաղաղ սենյակի կողքով էին անցնում, ուր վանիլի և հիլի դուրեկան հոտ կար, ուր բազկաթոռներն ու բազմոցներն արդեն պարուսիեն ծածկոցների մեջ էին և դանդաղ տկտկում էր պատի ժամացույցը:

— Մենք համեստորեն ասում ենք՝ իաչ ունենք,— հոգոց հանեց պատոր Շտրումպֆը, հայացքն առաստաղին հառելով:

— Ագռավ,— ասաց հերցոգ ֆոն Կրուին, ասես կիսով դուրս քաշելով ժանգոտած սուրը:

Կենիգսեկը, տեղից բարձրանալով, որ ետևից Աննա Իվանովնայի թղթերին նայի, քաղցրաձայն ասաց.

— Մենք նորից՝ փոսիկ:

Ետնամուտքից մտնելով, Պյոտրն անապասելիորեն բացեց դուռը: Խաղաթղթերն ընկան Աննա Իվանովնայի ձեռքից: Տղամարդիկ փութով ոտքի ելան: Ոչքան էլ իրեն տիրապետեց Աննա Իվանովնան՝ թե բերկրալից բացականչեց, թե ժպիտն ամբողջ դեմքին փայլեցնելով, ուներանս արեց, համբուրելով Պյոտրի ձեռքը, սեղմեց գլխաշորով կիսով ծածկված կրծքին, այդուհանդերձ, որպես թռուցիկ ցոլացում նրա թափանցիկ կապույտ աչքերի մեջ սարսափ նկատեց Պյոտրը: Մեջքը կոր, շրջվեց դեպի բազմոցը.

— Խնայեցեք, ես կծիեմ էստեղ:

Բայց Աննա Իվանովնան, սուր կրունկների վրա վազելով սեղանի մոտ, արդեն խառնել էր խաղաթղթերը:

— Ջրադվում էինք ձանձրույթից... Ա՛հ, Պիտեր, ինչ հաճելի է, դուք միշտ ուրախություն ու բերկրանք եք բերում այս տունը... (ծաի զարկեց մանկավարի:) Ընթրենք...

— Ուտել չեմ ուզում,— մրմնջաց Պյոտրը: Ծխամորճի կոթն էր կրծում: Հասկանալի չէ, թե ինչու, չարությունը սկսեց սեղմել կոկորդը: Աչքն էր խեթում պարուսինե ծածկոցների, բրդյա թելի կծիկներով բարգահի վրա... Անխենի հարթ ճակատին խոր կնճիռ էր գոյացել (առաջ դա չէր նկատվում):

— Օ՜, Պիտեր, այդ դեպքում մենք մի որևէ ուրախ խաղ կհորինենք... (Ու նորից խղճալի ինչ-որ բան՝ աչքերի մեջ:)

Պյոտրը լուռ էր: Պատոր Շտրումպֆը, նայելով պատի ժամացույցին , հետո իր գրպանի ժամացույցին, «Ասված իմ, երկուսն անց է արդեն» ասաց և յուսամտագոգի վրայից վերցրեց ատոթագիրքը: Հերցոգ ֆոն Կրուին և Կենիգսեկը նույնպես վերցրեցին օլխարկները: Ավելի խղճալի ձայնով, բան բազարարության համար էր պահանջվում, Անխենը բացականչեց, մատները կոտրատելով.

—Օ՜, մի գնացեք...

Պյոտրը ֆսֆսացրեց՝ ծխամորճից կայծեր թափվեցին: Ոտքերն սկսեցին ձգվել: Վեր թռավ: Արագ քայլերով դուրս եկավ, շրխկացրեց դուռը: Անխենի շնչառությունն արագացավ, արագացավ, դեմքը ծածկեց թաշկինակով: Կենիգսեկը ոտնաթաթերի վրա շտապեց ջուր բերելու: Պատոր Շտրումպֆը զգուշորեն գլուխն էր օրորում: Հերցոգ ֆոն Կրուին սեղանի մոտ խաղաթղթերն էր խառնում:

Տախտակապատ տանիքներից, չորացող փողոցից գոլորշի էր բարձրանում, ջրափոսերի մեջ անհատակ կապույտն էր արտացոլված: Ձանգերը զարկում էին, կիրակի էր՝ Կանաչ կիրակի, և կանչում էին

կարկանդակ ու մեղրախմիչք ծախողները: Պարապ-սարապ ժողովուրդ էր գնում գալիս՝ մեծ մասը հարբած: Քաղաքի ծեփաթաի պարսպի արանքում, նոր շապիկ հագած տղաները ծայրին ճիլոպ կապած ձողեր էին թափահարում՝ աղավնի թռցնելով: Մերմակ թռչունները թրրթռում էին կապույտի գրկում, խաղեր էին անում՝ գլխկոնձի տալիս, ընկնում պտտվելով: Ամենուրեք՝ բարձր ցանկապատերի ետևում, գիշերվա անձրևից լվացված լորենիների ու մոխրագույն ուռենիների տակ ճոճանակներ էին ճոճվում. մեկ աղջիկներն էին թռչում նյուդերի միջով, հյուսքերը ծանանելով, մեկ ջահելությունը հիշած ճաղատ մի ծերուկ, ճոճում էր տախտակին նստած ու ճղճղացող հաստիկ կնոջը:

Պյոտրը կամքով դանդաղ շարժվում էր փողոցով: Աչքերը փոս ընկած էին, դեմքը՝ խոժոռ: Արևն այրում էր մեջքը: Ամբողջ գիշեր երկանիվի մեջ նրան սպասած Միշկան գլուխը ետ էր գցում, որ չննջի: Ժողովուրդը ձիու մռութի առաջ էր ճանապարհ բացում, միայն հազվադեպ որևէ անցորդ, ճանաչելով ցարին, գլխարկը հանում ու գետնահաս խոնարհվում էր ետևից:

Գիշերը Աննա Մոնսի մոտից Պյոտրը գնաց Մենշիկովի տուն: Բայց միայն նայեց մեծ ու վարագուրված պատուհաններին, որտեղից երաժշտություն, հարբած բղավոցներ էին լսվում: «Գրոդի ծոցը դրրանց»՝ շրմփացրեց երասանները, բակից ելավ և դարձրեց ուղիղ դեպի Մոսկվա, Ստրելեցյան արվարձան: Արագ վարգով էին գնում, հետո ձին թողեց քառատրոտի:

Արվարձանում կանգ առան մի հասարակ տան առաջ, որի դարպասից վեր ծղոտի խրձով ձող կար տնկած: Պյոտրը Միշկային տվեց երասանները, թակեց դռնակը: Անհամբերությունից դոփոփում էր ճպճպացող թրիքի մեջ: Բռունցքներով թակեց: Մի կին բաց արեց: (Միշկան հասցրեց տեսնել՝ մարմնեղ, կլորերես, մուգ սարաֆան հագած կնիկ էր:) «Այս» արեց, այտերը բռնեց: Պյոտրը կոացավ, բակ մտավ, դռնակը շրխկացրեց:

Երկանիվի մեջ կանգնած Միշկան տեսավ, թե ինչպես դարպասից այն կողմ, գերանակապ խրճիթում լույս վառվեց երկու բարձր պատուհանների մեջ: Հետո այն կինը շտապ ելավ առմուռք, ձայն տվեց.

— Լուկա՜, ա՛յ Լուկա...

Ծերունական մի ձայն պատասխանեց.

— Ինչ կա...

— Լուկա, մարդու ներս չթողնես, լսեցի՞ր:

— Բա որ դուռը ջարդե՞ն:

— Բա էլ ի՞նչ տղամարդ ես:

— Լավ, էս ձեռիս կեռով մի բան կանեմ:

Միշկան մտածեց. «Ամեն ինչ հասկացանք»: Որոշ ժամանակ անց նրբանցքից ստրելեցի գդակով երեք հոգի ելան, նայեցին լուսնի լույսով ողողված դատարկ փողոցը, և՝ ուղիղ դեպի դարպասը: Միշկան խստորեն ասաց.

— Գնացեք, գնացեք...

Ստրելեցները չարացած մոտեցան երկանիվին.

— Է՞ս ով էր: Էս ժամին ի՞նչ գործ ունես արվարձանում:

Միշկան ցածրաձայն, ապառնագին ասաց.

— Տղերք, շուտ արեք, գնացեք էստեղից...

— Ինչի՞ որ,— ոխով լի բղավեց մեկը, որ մյուսներից ավելի էր հարբած:— Ի՞նչ ես վախեցնում: Մենք գիտենք, թե որտեղից... (Մյուս երկուսը բռնցքին ուսերից, ականջին շշնջացին:) Քո գլուխն էլ է մացից կախված... Սպասեք, սպասեք.. (Ընկերներն արդեն քարշ էին տալիս նրան, չթողնելով, որ թաքերը բշտի:) Բոլորին չե՞ք կախել... Դեռ առա՞ջ ունեք... Ցցի թե չնանկեր... (Նրա վզակոթին հասցրեցին, գլխարկն ընկավ, քարշ տվեցին նրբանցքով:)

Լուսամուտների լույսը շուտով հանգավ: Բայց Պյոտրը դուրս չէր գալիս: Այս կողմում մեկ-մեկ Լուկան գարկում էր թակով: Ծուտով այնպիսի լռություն տիրեց, որ հոգնած ձին նույնիսկ կախեց գլուխը: Դիրքի միջից Միշկան լսում էր, թե ինչպես են կանչում աքաղաղները: Լուսնի լույսը պաղեց: Փողոցի ծայրին դեղնում ու վարդագունում էր ադշալույսը: Երկրորդ անգամ նա արթնացավ շշնջոցից՝ երկաթիվի չորս դոդը փոքր տղաներ էին հալաքել, մի բանիսն անշարժար: Բայց հենց բացեց աչքերը, բոլորը ցրիվ եկան՝ թաքերը թափ տալով, սև կրունկները վեր-վեր թոցնելով: Արևն արդեն շատ էր բարձրացել:

Պյոտրը դուրս եկավ դռնակից, գլխարկը քաշեց աչքերին: Մի կուշտ հազաց, երասանները վերցրեց:

— Էս գործն էլ էսպես.— թնդաց, ձին քշեց վարգով:

Երբ Մոսկվայից եկան կանչ դաշտ՝ հեռվում Գնրմանական արվարձանի սրահատար տանիքներն էին, ավելի հեռվում, հողի պռնկին սրտկած ձմեռնի ամպերը, և Պյոտրն ասաց.

— Ձգ՝ ապապակներիդ, էդպես է պետք... Իսկ թե սկսես գիշերները չարություն անել, կգցեմ խորդանոցն ու կկիսեմ:— Եվ ծիծաղեց, գլխարկը ծոծրակին տանելով:

Գորշագույն անմոռնի կաֆտանները կես վաշտ զինվոր, բոլորի ոտքերից խոտի ու ծղոտի փնջեր կապած, քայլում էին խառնիխուռն, բազինետներն իրար գարկելով: Սերժանտը հուսալքուր բղավեց... «Ձգա՞ատ»: Պյոտրն իջավ կառքից, մեկ մեկ բռնում էր զինվորների ուսերից, շրջում էր, շոշափում կոշտուկոպիտ մանուղը:

— Քա՞ք է,— բղավեց, աչքերը չռած պզուկոտ սերժանտի վրա:— Ո՞վ է կաֆտանները բերել:

— Պարոն բոմբարդիր, կաֆտանները սուխարևյան արհեստանոցից են տվել:

— Հանվիր,— Պյոտրը բռնեց երրորդ՝ արաքիր, վտիտ մի զինվորից: Բայց սա կարծես սարսափից շնչահեղձ եղավ, տեսնելով իր վրա կախված բոմբարդիրի կլոր, սև խոզանականման բեխերով դեմքը: Կողքը կանգնած ընկերները ձեռքից առան հրացանը, արձակեցին ուսագոտին, ուսերից իջեցրին կաֆտանը: Պյոտրը խլեց ձեռքից, շպրտեց երկաթիվի մեջ, ու ալևս ոչ մի բառ չասելով, նստեց ու քշեց Մենշիկովի պալատի կողմը:

Մերկացած զինվորը, ամբողջ մարմնով դողալով, հմայված նա-

յում էր խոտածածկ ճանապարհով հեռացող երկաթիվին: Սերժանտը ձեռնափայտով հրեց նրան.

— Գոլիկով, շարքից դուրս եկ, ետևից արի... Ձգա-ա՞ատ: (Երախը բաց արած, գլուխը ետ գցեց ու գոռաց դաշտով մեկ): Ձախ ոտը խոտն է, աջ ոտը՝ ծղոտը: Էս գիտությունը հիշեք... Քայլո՛վ՝ խո՛տ-ծղո՛տ, խո՛տ-ծղո՛տ...

Սուխարևյան զինվորական արհեստանոցին մանուղ էր մատակարարում Իվան Բրովկինի նոր գործարանը, կառուցված Նեգլինայա գետակի վրա, Կուզնեցկի կամրջի մոտ: Գործին փայատեր էին դարձել Մենշիկովը և Շաֆիրովը: Պրեոբրաժենյան վարչատունը վաղորոք հարյուր հազար ռուբլի էր վճարել՝ կաֆտանի մանուղ մատակարարելու համար: Մենշիկովը պարծենալ էր Պյոտրի առաջ, թե հանբուրգյանից ոչ վատ մանուղ են մատակարարելու: Կոշտուկոպիտ, խուռնուրդով սի բան էին տվել: Ալեքսաշկա Մենշիկովը՝ գողության մեջ ծնված, գող եղել ու գող էլ մնացել էր: «Լավ, սպասիր»,— մտածում էր Պյոտրը, անհամբերությամբ ցնցելով երասանները:

Ալեքսանդր Դանիլովիչը նստած էր մահճակալին. թթվաջուր էր խմում երեկվա գինարբուքից հետո (մինչև յոթը քեֆ էին արել), կապույտ աչքերը պղտորված էին, կոպերն ուռած: Վարունգի թթվաջրով ամանը նրա դիմաց բռնել էր տնական դպիրը՝ Պեդրիլա կոչված գազանաձայն ու գազանակերպ մի մարդ՝ սաժենից վերշոկ պակաս հասակով, տակառաձև մարմնով: Ախուվախ անելով, մատները խոթում էր ամանի մեջ.

— Մի կտոր վարունգ կծի, ատ...

— Գրողի ծոցը կորի...

Ծոխ ու փարթամ մահճակալի առաջ նստել էր Պյոտր Պավլովիչ Շաֆիրովը՝ քաղցր-մեղցր, բլիթի պես կակղած դեմքով, ծխատուփը բաց ու պատրաստ: Նա խորհուրդ էր տալիս մի կես բաժակ արյուն թողնել կամ տզրուկ դնել վզին...

— Ահ, Ալեքսանդր Դանիլովիչ, աչքիս լույս, ուղղակի ինքներդ ձեզ սպանում եք ջերմացնող խմիչքների անսահման գործածումով...

— Դու էլ նույն տեղը կորի...

Դպիրն առաջինը տեսավ Պյոտրին լուսամուտից. «Ինչ որ ջղայնացած է եկել»: Չէին հասցրել ուշքի գալ, Պյոտրը մտավ ննջասենյակ և առանց բարև տալու, ուղիղ Ալեքսանդր Դանիլովիչին մոտեցավ, զինվորական կաֆտանը քիթը խոթելով.

— Համբուրգյանից լավն է՞ս է: Սո՛ւս, գողի մեկը, ձե՛նդ, արդարանալու տեղ չունես:

Բռնեց օձիքից, ժանեկազարդ շապկից, քարշ տվեց պատի մոտ, և երբ Ալեքսանդր Դանիլովիչը, բերանը բացած, հակառակվեց, սկսեց ապտակել մի այտին, մյուսին՝ Մենշիկովի գլուխը միայն տարուբերվում էր: Տաքացած վերցրեց բուխարուն հենած ձեռնափայտն ու կոտրեց Մենշիկովի գլխին: Նրան թողնելով, դարձավ Շաֆիրովին՝ սա խո-

նարդ ու ծնկաչոք սպասում էր բազկաթոռի մոտ, և Պոտրը միայն շնչեց գլխավերևում.

— Վեր կաց: (Ծափիրովը ոտքի ցատկեց:) Վատ մահուդը լրիվ կծախես Լեհաստան, Ավգուստ թագավորին էն գնով, որ ես եմ ձեզ տվել... Մի շաբաթ ժամանակ եմ տալիս: Զծախեցիր, շապիկդ հանած, մտրակել եմ տալու գերանին կապած: Հասկացա՞ր:

— Կծախեմ, ավելի շուտ կծախեմ, ձերդ ցարական մեծություն...

— Իսկ ինձ համար Վանկա Բորովկինի հետ փոխարենը ընտիր մահուդ կտաք:

— Մին իմաց, տեր աստված,— ասաց Ալեքսաշկան, փպինքն ու արյունը սրբելով,— էդ երբ ենք մենք ձեզ խաբել... Ախր, էս մահուդն էլ ոնց եղավ..

— Լավ... Ասա նախահաշ տան..

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

I.

Ծոգ էր: Քամի չկար: Կոստանդնուպոլսի կղմինդրե տանիքները գունաթափվել էին: Քաղաքի վրա տապի շղարշն էր փռված: Ստվեր չկար նույնիսկ սուլթանական պալատի գորշ ու փոշոտ պարտեզներում: Պարսպապատերի տակ, հայելանման ջրի մոտ, քարերի վրա գջլոտ մարդիկ էին քնած: Քաղաքը սսկվել էր: Միայն բարձր մինարեների կատարներից գիր ու ձիգ կանչեր էին հնչում՝ ի վշտալի հիշատակումն: Մին էլ շներն էին գիշերները հաչում խոշոր ատաղձի վրա:

Արդեն մի տարի մեծն դեսպան Եմելյան Ուկրաինցևը և դպիր Չերեդեևը նստած էին Պերայի իջևանատանը: Քաղաքերեք կոնֆերանս էր հրավիրվել, բայց ոչ ռուսներն էին շարժվել ետ կամ առաջ, ոչ թուրքերը՝ ետ կամ առաջ: Օրերս սուրհանդակ էր եկել Պոտրից, շտապ հաշտություն կայացնելու հրամանով՝ թուրքերին գիջել հնարավոր ամեն ինչ, Ազովից բացի, տիրոջ դաղտի մասին ավելի լավ է ընդհանրապես չհիշատակել, կաթոլիկներին չգրգռելու համար և գիջելով, այս անգամ արդեն շատ ամուր դիրք բռնել:

Քաղաքերեքերորդ կոնֆերանսին Ուկրաինցևն ասաց. «Ահա մեր վերջին խոսքը... Յարեգրադում մեզ մնաց երկու շաբաթ.. Հաշտություն չեղավ, ինքներդ ձեզ մեղադրեք. մեծն թագավորի նավատորմն անցյալ տարվանը չէ... Կարծեմ, լրած կլինեք..»: Վախեցնելու համար, մեծն դեսպանախումբը իջևանատնից նավ տեղափոխվեց: «Կրեպոստն» այնքան երկար էր անգործ կանգնել, որ կողերին բորբոսի շերտ էր կապել, ուտիճ ու մլակ էր լցվել նավախցերը, նավապետ Պամբուրգը միանգամայն թոշնել էր ձանձրույթից:

Ուկրաինցևը և Չերեդեևը արթնանում էին լույսը չբացված, բորբրրվում ու տնքտնքում էին հեղձուկ նավախցում: Ողղակի ներքնաշորերի վրայից թաթարական խալաթները հագնում ու ելնում էին տախտակամած... Դեռևս խավար Բոսֆորի վրա, արևախանձ բլրակներին սփռվում էր տապ խոստացող անամպ այգաբացը՝ տրտում մի պատկեր: Նստում էին ուտելու: Մի ասան կվաս լիներ նկուղից... Սատանան տանի՝ հոտած ձուկ էին ուտում, քացախ խառնած ջուր խմում. ամեն ինչ անհամ: Նավապետ Պամբուրգը, սոված փորին մի բաժակ գլուխը քաշելով, միայն ոտաշորով գնում-գալիս էր չորացած տախտակամածի վրայով: Դուրս էր լողում նարնջագույն արևը: Ու շուտով անտանելի էր դառնում նայելը հոսող ջրին, ափի մոտ դանդաղ ճոճվող, սեխ ու ձմերուկ բարձած նավակներին, մեչիդների կավճե գմբեթներին, կապույտի մեջ թաղված կիսալուսնի ծակող աչքերին: Լսվում էր Ղալաթայի նեղլիկ նրբանցքներում առևտուր անողների խոսակցությունը, բղավոցները, զանգերի ձայնը:

— Եմելյան Իգնատևիչ, լավ, ինձնից քեզ ինչ օգուտ,— ասում էր դպիր Չերեդեևը,— բաց թող ինձ... Ոտով կգնամ...

— Շուտով, շուտով տուն ենք գնալու, դիմացիր, Իվան Իվանովիչ,— պատասխանում էր Ուկրաինցևը, աչքերը փակելով, որ ինքը նույնպես չտեսնի ձանձրալի դարձած քաղաքը:

— Եմելյան Իգնատևիչ, մի բանի կհամաձայնեի. բանջարանոցում, խոտերի մեջ, հովին պառկած լինեի... (Չերեդեևի առանց այն էլ եր-կարուկ, ճնշվորուս դեմքը բոլորովին չորացել էր շոգից ու կարոտից, աչքերը փոս էին ընկել:) Սուզդալում մի փոքր տուն ունեմ... Բանջարանոցում երկու հին կեչի կա՝ երազիս եմ տեսնում... Առավոտը վեր ես կենում, որ գնաս անասունին օրվա քաշես, բայց արդեն քշած են լինում արոտ: Գնում ես մեղվանոց՝ խոտը մեջքիդ հավասար... Մուժիկները, ուռկաններն առած, գետն են գնում... Կնանիք շփշփացնում են լվացքի թակերով: Դուրեկան բան է...

— Այ, այ, այ, հա, հա, հա,— կնճռոտ դեմքն էր տմբացնում մեծն դեսպանը:

— Մաշին՝ լոքոլով խմոր...

Ուկրաինցևը, ճոճվելով, աչքերը չբացելով, թե՝

— Լոքոն մի թիչ լոլոռ է, Իվան Իվանովի... Ամռանը բոտվինյա կուտեն... Անանուխով կվաս..

— Աքերինով ձկնապուրն էլ է լավ, Եմելյան Իգնատևիչ...

— Ու աքերինը չպիտի մաքրես, ոնց կա, գլխով-բանով պիտի եփես: Որ եփեցիր, էլ ի՞նչ թառափ, ի՞նչ բան...

— Ի՞նչ երկիր ենք է, աստված իմ: Լավ, իսկ Էստե՞դ, Եմելյան Իգնատևիչ: Իսկականից որ բաստուրման են: Մառախուղի պես մի բան: Էստեդի հույն կնանիք իսկական անոթ են զարշանքի...

— Այ, դրանից պիտի որ դու խոսասպես, Իվան Իվանովիչ:

Չերեդեևի խոշոր քթին հուլունքի պես քրտինք էր շարվել: Աչքերն ավելի խորն էին գնացել: Ափից դեպի նավ էր գալիս վեցաթի, գորգապատ մի սանդալ: Նավապետ Պամբուրգը հանկարծ բղավեց խոպոտաձայն.

— Բոցմանե՛ր, բոլորին վեր կանչեք: Նավասանդուղքը մոտեցրե՛ք:

Սանդալով եկել, նավասանդուղքով ոտնամանները քստքստաց-

ձեռով բարձրանում էր Սոլոմոնը՝ մեծն վեզիրի փոխատեղավորներից, մաքով ու մարմնով արագաշարժ մեկը, խոշոր այտոսկրերով, ճապաղ քթով: Աչքերն արագ մաղ ածեց նավով մեկ, ափն ապագ տարավ ճակատին, շրթունքներին, ստին, խոսեց ռուսերեն.

— Մեծն վեզիրը խնդրեց ողջությունդ հարցնեմ, Եմելյան Իգնատիչ... Վախենում է, թե քեզ համար նեղվածք կլինի նավի մեջ: Ինչի՞ ջղայնացար մեզ վրա:

— Բարև, Սոլոմոն,— պատասխանեց Ուկրաինցնը հնարավորին չափ անշտապ,— դու էլ ասա մեծն վեզիրի առողջությունից... Ձեզ մոտ ամեն ինչ փառք աստծո՞ւ է: (Այս խոսքերի հետ մի քիչ բացեց սուր աչքը:) Մեզ համար այստեղ էլ է լավ: Տանը կարոտել ենք: Այստեղի մեր տունն էլ՝ հիսուն փութ տակներս:

— Եմելյան Իգնատիչ, կարելի՞ է մի կողմ քաշվենք:

— Ինչի՞ չէ, կարելի է և մի կողմ քաշվենք,— հազալով, ասաց Ներեդենին և Պամբուրգին.— Մեզնից հեռացեք,— իսկ ինքը մտավ առագաստի սուվերի տակ:

Սոլոմոնը ծղտաց ու բացեց ծակուծուռ լեղերը.

— Եմելյան Իգնատիչ, ես ձեր իսկական բարեկամն եմ, ձեր թշնամիներին մատներիս հաշվով գիտեմ... (Մատները խաղացրեց Ուկրաինցևի քթի տակ, վերջինս միայն ասում էր. «Այդպես, այդպես»:) Ծիծաղում եմ դրանց նենգությունների վրա... Եթե ես չլինեի, Դիվանը ձեզ հետ կդադարեցներ խոսակցությունը... Ինձ հաջողվեց գործը շուտ տալ՝ մեծն վեզիրը թեկուզ վաղը հաշտությունը կստորագրի... Բախշիշ պիտի տալ մեկին..

— Էդպե՞ս,— կրկնեց Ուկրաինցևը: Հիմա ամեն ինչ հասկանալի էր: Իրենից ոռճիկ ստացող մի հույն երեկ հայտնել էր, որ Փարիզից Կոստանդնուպոլիս է վերադարձել ֆրանսիական դեսպանը, և Դիվանը՝ սուլթանական մինիստրները հավաքվել են ու մեծ-մեծ նվերներ ստացել: Ամբողջ գիշեր շոգից և ուտիճներից տանջվելով, Եմելյանը մտածում էր. «Ի՞նչ է նշանակում սա: Ոչ այլ ինչ, քան թուրքերին նորից հրավիրում են ավստրիական կայսեր դեմ պատերազմելու: Ուստիև թուրքերին պետք է, որ ձեռքերն ազատ լինի մոսկովյան գործերից...»:

— Է ի՞նչ, բախշիշը չէ կարևոր... Մեծն վեզիրին կգնաս ու կասես, որ մենք մենակ հաջող քամու ենք սպասում: Հաշտություն կլինի՝ լավ, չի լինի՝ մեզ համար ավելի լավ... Իսկ հաշտությունն այսպես պիտի լինի... (Ալեհեր հոնքերի տակից հաստատակամ նայեց Սոլոմոնին:) Դենեպրի փոքր քաղաքները մենք կդատարկենք, ինչպես պայմանավորվել ենք... Բայց փոխարենը Ազովի չորս կողմը ռուսական հող է լինելու տասն օրվա ձիու գնացած ճամփի չափով: Էս մեկը՝ հաստատ...

Սոլոմոնը՝ վախեցած, որ բախշիշը ձեռքից գնում է (ռուսներն, ըստ երևույթին, ավելի շատ գիտեին, քան պետք էր), բռնեց մեծն դեսպանի թևքերից: Սկսեց վիճել: Իշան նավախուց: Պամբուրգը, գիտենալով, որ շատ աչք է հիմա հեռադիտակով «Կրեպոստը» գնում,

նավաստիներ ուղարկեց կայմերի վրա, իբր առագաստները նախապատրաստելու, որ ճանապարհ ընկնեն: Եմելյանը մի պահ երևաց նավախցից.

— Իվան Իվանովիչ, հագնվիր, քաղաք ենք գնալու...

Ծուտով ինքն էլ դուրս եկավ՝ կեղծամով ու սուսերով: Սոլոմոնը նրա արմունկներից էր բռնում, երբ նավասանդուղքով սանդալ էին իջնում:

Կեսօրից հետո, բազում օրեր անց առաջին անգամ մի նեղլիկ վիմպել ծոլորեն ծանանկեց նավի վրա: Հեռավոր բլրակներն անգույն մշուշով պարուրվեցին: Երկնքի կապույտը կարծես փոշիով էր նագեցնում, քաղաքը վարագուրելով: Սկսեց քամի փչել անապատից:

Հաջորդ օրը հաշտությունը ստորագրվեց:

2.

Իվան Մեծ զանգը թնդում էր Մոսկվայի վրա՝ քանչորս ջահել վանականներ ճոճում էին նրա պղնձյա լեզվակը: Մաղթանք էր արվում՝ ռուսական զենքին հաղթություն շնորհելու թշնամյաց վրա: Այսօր ժամերգությունից հետո դումայական ատենադպիր Պրոկոֆի Վոզնիցինը, ըստ հին սովորության՝ ռուսական մուշտակով, մորթյա գլխարկով, սենկ սապոգներով, ելավ մանճապետների առմուտք (որ եղինջ ու կուստուկ էր բուսել), խոնված բազմության համար հասանելի կարդաց ցարական հրամանագիրը. զինվորական մարդիկ կովի ելնեն ավելական քաղաքների վրա: Բոլոր պալատականները, պաշտոնյաները, մոսկվացի ազնվականները, բնակիչներն ու զինվորական գործը սովորելու համար ցուցակագրվածները ձի հեծնեն, պատրաստ լինեն:

Վաղուց էին դրան սպասում, բայց և այնպես Մոսկվան ալեկոծվեց խորքից: Առավոտից, փողոցները փոշով ծածկելով, անցնում էին գնդերն ու գումակները: Զինվորների կանայք վազում էին կողքերից, երկար թևքերը փութով թափահարելով: Պուսարկանները մեծ մասամբ սեղմվել էին ցանկապատերին, գերանների վրայով ցնցվող թնդանոթներից վախեցած: Հնագույն փոքր եկեղեցիներից ահեղաձայն թնդացնում էին սարկավագները: «Հաղ-թու-թյո՛ւն...»: Բացվում էին բոյարական տների դարպասները, հեծյալներ էին ելնում, ոմանք հնաձև զրահներով ու այծենակաճներով, ձիերը խթանելով, մտրակ էին բազմության մեջ, մտրակն իջեցնելով մարդկանց գլխներին: Իրար էին խփվում սայլերը, ճոճում սոնիները, կռվշտում, վրնջում էին ձիերը:

Ուսպենսկի տաճարում, բազմաթիվ մոմերի լույսի տակ թուլակազմ պատրիարք Ադրիանը, խնկի ծխով պարուրված, լալիս էր, ափերը վեր պարզած: Բոյարները, նրանցից հետո հոծ շարքով երևելի վանականներն ու լավագույն առևտրականները ծունկ էին չոքել: Բոլորը լալիս էին, տեսնելով վեհի՝ գմբեթին դարձրած դեմքն ի վար հոսող արցունքները: Ավագ սարկավագը, երախը բաց արած, քնե-

ռակներն ուռեցրած, Ամեղ դատաստանի փողի պես հաղթություն կոչելով, խլացրել էր պատրիարքական երգչախմբի ձայները: Սև էր պատրիարքի թիկնոցը, սև էին սրբապատկերները ոսկյա դրվագների մեջ՝ ոսկով ու փառքով էր շողշողում տաճարը:

Վանառականությունն առաջին անգամ էր այս քանակությամբ ներկա գտնվում Ուսպենսկի տաճարում՝ բոյարական այդ պատվարում: Բուրմիստրական պալատն այդ, առթիվ քանհինգ փութ մեղրամոմ էր ընծայել, երևելիներից շատերն առանձին էին մոմերը դրել՝ ոմանք կես փութ, ոմանք մեկ փութ: Սարկավագներին խնդրել էին խունկ չխնայել:

Իվան Արտեմիչ Բրովկինը, արցունքից ֆսֆսացնելով, կրկնում էր. «Փա՜ռք, փա՜ռք...»: Մի կողմում պրեզիդենտ Միտրոֆան Շորինն ինքնամոռաց ձայնակցում էր երգչախմբին, մյուս կողմում Ալեքսեյ Սվեշնիկովը գնչուի աչքերով այնպիսի անկշռությամբ էր կլանում պատկերակալի, շուրջառների ու պսակների ոսկին, կարծես այդ ամբողջ գորությունն իր գործը լիներ... «Հաղթությո՜ւն»՝ կամարները ցնցելով թնդաց շքեղ հագնված ավագ ասրկավագը, պարեգոտին գործած կարմիր վարդերը քոլանոցներով պարուրվեցին:

Շարժվեցին դեպի խաչը: Առաջինը գիրուկ, ալեհեր իշխանկայար Ֆյոդոր Յուրևիչը մի բոպեի չափ համբուրեց խաչը, անուշ ուսերը ցնցելով: Նրանից հետո իշխաններն ու բոյարները՝ մեկը մյուսից ծեր (երիտասարդներն արդեն բոլորը ծառայության մեջ էին, երթի եկած): Մոլեռանդությամբ առաջացավ փանտանականությունը: Մեծ մատուցարանը բռնած երեցփոխի առաջ զրնգոցով ներվոնեցներ էին գցում, մատանիներ, մարգարտի թելեր: Տաճարից ելնում էին, գլուխները բարձրացնելով: Մուտքի առաջ հսկայական սրբապատկերի կողմը մի անգամ էլ խաչակնքելով, մազերն էին շտկում, դնում գլխարկները, խոտածածկ, տեղ-տեղ հողապատ հրապարակով գնում Բուրմիստրական պալատ՝ կրունկները խրոխտ կտկտացնելով, տիրոջ պես նայելով հասարակ ժողովրդի բազմությանը, վարչատների լուսամուտներին:

Դուրս գալիս Իվան Արտեմիչի թավշյա փեշերը տասնյակ սեվացած, ծուռտիկ ձեռքեր բռնեցին. «Իշխա՜ն, իշխա՜ն... Մի կոպե՜կ տուր... Մի կտո՜-ռ-ռոռ՜ր...» աղաղակում էին փոչոտած, անատամ, մերկանդամ, թարախակալած վերքերով մարդիկ... Սողում էին, ձգվելով, ցնցոտիները թափահարում. «Իշխա՜ն, իշխա՜ն»: Սարսափահար Իվան Արտեմիչը շորս կողմն էր նայում, «Ինչ եք ասում, ապուշներ, մուրացկաններ, ես ի՜նչ իշխան...»: Երկու գրպանները էլ շրջեց, կոպեկանոցներ գցեց... ճաղատ մի կրոնախև, խաչերկաթները ցրնգելով, անմարդկային ձայնով բացականչեց. «Վասվող ածուխ եմ ուզում...»:

Հենց այդտեղ, աչքերի ճեղքով ժպտալով, ցանցառ մորուքը քաշքշելով, կանգնած էր Վասկա Ռեյակինը: Փեշերը մի կերպ պոկելով, Իվան Արտեմիչը հարցրեց նրան.

— Էս քո գործը չի՞, վանառական... Ավելի լավ կանեիր ճակատիդ խաչ անեիր էս տեսակ օրվա համար...

— Մերը մեռոնն է, Իվան Արտեմիչ,— ձեռքերը փորին դնելով, Ռեյակինը գլուխ տվեց,— մեռոնով ենք խաղաղվում... Աշխարհը թշվառ է, մենք՝ աստծունը...

— Թյո՛ւհ: Ծո՛ւհ, տիրացու... Իսկական շուն...— Իվան Արտեմիչը հեռացավ, ետևից այծի պես մկկաց կրոնախևը:

3.

Ձիավորները շարունակ ստիպված էին լինում, ուժ տալով, ցեխից հանել սայլերը և թնդանոթները: Օրեր շարունակ քամին փչում էր արևմուտքից, դեպի ուր դանդաղորեն, հարյուրավոր վերստեր ձգված, շարժվում էին գեներալներ Վեյդեի և Ավտոմոն Գոլովինի զորքերը: (Ռեյնինյան դիվիզիան դեռ ոչ մի կերպ չէր կարողանում շարժվել Մոսկվայից:) Գնում էին քառասունհինգ հազար հետևակ ու հեծյալ և մի տասը հազար սայլ:

Սառնաշունչ մշուշներ էին ձգվում անտառի կատարներով: Անձրևը կեչիների և կաղամախիների վերջին տերևներն էր պոկոտում: Ավերված ճանապարհների կապտավուն ցեխի մեջ անիվները խրվում էին մինչև կուռդը, ձիերը ոռքերն էին ջարդում: Ճանապարհի երկարությամբ ձիու չեշեր էին ընկած՝ փքված փորերով ու չոված ոտքերով: Մարդիկ լուռ նստում էին առվաթմբերի վրա՝ կուզես սպանիր ծեծելով: Առանձնապես փսփսկասուն էին օտարերկրացի սպաները՝ վազում էին իջել թամբերից, թաց թիկնոցներով, թաց կեղծամներով դողացնում էին սայլերի խսիրե ծածկերի տակ, քուրջ ու փալասների մեջ:

Մոսկվայից զորքերը ելնում էին հագած-կապած, փեռոազարդ գլխարկներով, կանաչ կաֆտաններով, կանաչ գուլպաներով, շվեդական սահմանին էին մոտենում ոտարոտիկ. մինչև վիզը ցեխի մեջ թաղված, ցաքուցրիվ: Երբ շրջանցում էին Իլմեն-լիճը, վարարած ջրերը, հեղեղելով արոտավայրերը, գումակային բազմաթիվ սայլեր քշեցին-տարան:

Մեծ անկարգությունից գումակները չէին հասցնում, խառնվում էին: Կանգառներին խարույկ վառել չէր լինում՝ վերևից անձրևն էր, ներքևից ճահճուտները: Ոտերիմ թշնամուց ավելի վատ էին ազգալական աշխարհազորի հեծյալ հարյուրյակները՝ մորեխի պես սրբում էին ուտելիքը շրջակա գյուղերից: Հետևակի կողքով անցնելիս, բղավում էին. «Մի կողմ քաշվե՛ք, անտաշներ»: Ալեքսեյ Բրովկինը, որ կապիտան էր ֆոն Շվեդենի առաջապահ գնդում, հայհոյում էր ու քանիցս ձեռնափայտով հարձակվեց հեծյալ ազգվականների վրա: Գործն ու զրկանքը շատ էր, կարգուկանոնը՝ քիչ:

Առաջապահ զորքը ցեխից ելավ միայն սահմանամերձ Լուգա գետի մոտ, և այստեղ միայն ճամբար խփեց, սպասելով գումակներին: Վրաններ կանգնեցրին, մի կերպ չորացան: Ձիավորները հիշում էին

ազոկյան արշավանքները, որոշ զորականներ Վասիլի Գոլիցինի դրիմյան արշավանքն էլ էին հիշում: Համեմատելու բան չէր՝ արձակ տափաստաններով գնում էին դեպի հարավ... Երգելով էին գնում՝ հիշեցին... Իսկ սա՞ ինչ երկիր է: Մոայլ ճահիճներ, ամպ ու քամի: Շատ արցունք ստիպված կլինեն թափել այս աղքատ հողը նվաճելու համար:

Վրանների մոտ կծու ծուխ էին արձակում խարույկները: Զինվորները կարկատում էին հագուստը, սկսում զառիթափով գետն իջնում՝ լվացք անելու: Բոլորի պետական կոշիկները պոկվեցին-մաշվեցին, ով տրեխ ու փաթաթաց գտավ՝ լավ, մյուսները քուրջ ու փալաս էին կապում ոտքերին: Այստեղ, առանց պատերազմ, նոյեմբեր չմտած, գորքի կեսը կոչնչանար: Հեծյալները երբեմն օղապարանով չուխոն էին բռնում-բերում, որպես լեզու: Շրջապատում, հարցուփորձ էին անում ոտներն ու թաթարերեն՝ ինչպե՞ս են ապրում էստեղ: Հիմար ժողովուրդ էին չուխոնները՝ միայն կովի արտահայտությունները կնճռոտացնեին: Տանում էին Ալեքսեյ Բրովկինի վրանը՝ հարցաքննելու: Այդ լեզուներին հազվադեպ էին ազատ արձակում, կապկում, ուղարկում էին գումակ, վաճառում երեք քանհինգնոցով, շատ առողջներին ավելի թանկ գընով նպարավաճառներին էին ծախում, վերջիններս էլ նրանց վերավաճառում էին Նովգորոդում, ուր նստած էին ռազմական մատակարարների գործակատարները:

Ալեքսեյ Բրովկինը խստորեն էր վարում վաշտի տնտեսությունը. նրա զինվորները կուշտ էին, զուր տեղը չէր նեղացնում, ուտում էր զինվորական կաթսայից, բայց անկարգություն, թափթփվածություն թույլ չէր տալիս. ամեն օր մեկնումեկը, հետույքը բաց պառկած նրա վրանի մոտ, կրդավեր մահակի հարվածներից: Գիշերվա կեսին արթնանում էր. անձամբ ստուգում դեռքերը: Մի անգամ, անչափելի մոտենալով անտառի բացատին, ականջ դրեց. կամ ծառ էր ճռռում, կամ ինչ-որ գազան էր վնգստում: Զայն տվեց կամացուկ: Աղոտ երևում էր կոճղին նստած մի զինվոր, հրացանի փողը գրկել, գլուխը հենել էր երկաթին: Ալեքսեյը հարցրեց.

— Ո՞վ է դեռքի վրա:

Զինվորը վեր թռավ, հազիվ լսելի ասաց.

— Ես եմ...

— Ո՞վ է դեռքի վրա,— թնդաց Ալեքսեյը:

— Գոլիկով Անդրյուշկան:

— Դո՞ւ էիր վնգստում:

Զինվորը տարօրինակ նայեց նրա դեմքին.

— Ինչ գիտենամ...

— Ինչ գիտենա՞մ... Էհ, մեծապասականներ...

Ինչ խոսք, ծեծել էր պետք նրան... Ալեքսեյը հիշեց անտառից վեր թռած բոցը փչված աղոթատան, կենդանի-կենդանի այրվածների վրա, և լուսավորված ձյան վրա ձեռքերը կոտրատող այս տղային: Այն ժամանակ Ալեքսեյը հրամայեց ընկնավոր մուժիկի և հայր սուրբ Նեկտարիի հետ նրան էլ վերցնել, ճանապարհին Նեկտարին փախավ՝ սա-

տանան գիտե, թե ինչպես, գիշերով, երբ կանգ էին առել եղևնիների տակ: Անդրյուշկա Գոլիկովը ասենակի մեջ, խրիի տակ պառկած էր ուշագնաց վիճակում, չէր ուտում, չէր խոսում: Պոկենեցում, զեմստվոյի խրճիթում, երբ հարցաքննելիս սպառնացին մտրակահարել, հանկարծ խոսեց. «Ինչի՞ համար եք տանջում: Տանջել եք արդեն... Այդպիսի տանջանքներ դեռ չկան...», ու սկսեց պատմել ամեն ինչ (փոքրավորը չէր հասցնում թաթախել փետուրը), կապան պոկելով, ցույց տվեց ծեծից ստացած վերքերը: Ալեքսեյը տեսավ, որ սովորական մարդ չէ, գրագետ է, հրամայեց խուզել մազերը, լողացնել բաղնիքում, զինվոր դարձնել:

— Կարելի՞ է զինվորին վնգստալ... Հիվանդ հո չե՞ս:

Գոլիկովը չէր պատասխանում, կանգնել էր ձգված, վայելուչ: Ալեքսեյը ձեռնափայտով սպառնաց, հեռացավ: Գոլիկովը հուսահատ կանչեց.

— Պարոն կապիտան...

Մթությանմեջ այդ ձայնից Ալեքսեյը ցնցվեց մի տեսակ՝ ինքն էլ էր ժամանակին այդպես: Կանգ առավ: Խստաձայն հարցրեց.

— Հը՞: Է՞լ ինչ ունես ասելու:

— Մթան մեջ սարսափելի է, պարոն կապիտան. գիշերվա ամայությունից եմ վախենում... Մեզ ինչո՞ւ են քշել-բերել այստեղ:

Ալեքսեյն այնպես զարմացավ, որ նորից մոտեցավ Գոլիկովին.

— Էդ ինչեր ես մտածում, թափառական: Էդ տեսակ խոսքերի համար գիտե՞ս...

— Տեղնուտեղն ինձ սպանեք, Ալեքսեյ Իվանովիչ... Ինքս ինձ թշնամուց էլ վատ եմ... Այսպես ապրեր՝ անասունը՝ վաղուց սատկած կլիներ... Աշխարհն ինձ չի ընդունում... Ամեն ինչ փորձեցի՝ մահն էլ չի տանում... Անիմաստ է... Հրացանը վերցրեք, խոցեք սվինով...

Ալեքսեյը, ատամները սեղմելով, ի պատասխան, հացրեց Անդրյուշկայի ականջին՝ գլուխը ցնցվեց, բայց ծպտուն իսկ չհանեց...

— Գլխարկդ վերցրու: Դիր: Վերջին անգամ եմ հետդ կարգին խոսում, աղանդավոր... Հայր սուրբերից բանե՞ր է սովորել... Խելք եմ սովորեցրել... Դու զինվոր ես: Հրամայված է արշավի գնալ՝ գնա՛: Հրամայված է մեռիր՝ մեռի՛: Ինչի՞: Որովհետև էդպես է պետք: Մինչև լույս կկանգնես էստեղ: Մեկ էլ վնգստացիր, լսեցի, պրծում չունես...

Ալեքսեյը, առանց ետ նայելու, գնաց: Վրանում պառկեց չոր խոտի վրա: Դեռ շատ կար մինչև լուսաբաց: Խոնավ էր, բայց ոչ անձրև կար, ոչ քամի: Ծածկոցը քաշեց գլխին: Հոգոց հանեց. «Իհարկե, ամենքը էլ սուս են մնում, բայց ախր մտածում են... Օ՜հ, մարդիկ, մարդիկ...»:

Կորամեջք մի զինվոր՝ մոայլված Կեղտանմուտ Ֆեդկան, ջուր էր լցնում շերեփով. Ալեքսեյը ֆինչացնում էր սառցասառն ջրի մեջ, սմբողջ մաշկը ցնցելով: Ցուրտ առավոտ էր, պառկած խոտերի վրա կապտավուն եղյամ էր կապել, բոտֆորտների տակ կպչում ցեխն էր խշրտվում: Խարույկների ծխերը բարձր կանգնած էին վրանների արան-

քում: Կիսաքուն պրապորշչիկ Լեոպոլդուս Միրբախը՝ տրեզվակար կափտանի վրայից ոչխարենու կիսամուշտակը գցած ինչ-որ բան էր բղավում երկու գինվորների վրա, որոնք կանգնած էին գլուխները վախից ցցած:

— Ծեծե՛լ, ծեծե՛լ,— կրկնում էր նա խոպոտած:— Պիո՛ւյ: Խոժե՞ր:— Բռնեց մեկի երեսը, սեղմեց ու բոթեց: Ուղղելով ուսից կախ կիսամուշտակը, գնաց Ալեքսեյի վրանը: Վաղուց չսափրած դեմքը կրքվել էր, աչքերն ուռած էին:— Տաք ջուր՝ չկա... Ուտելու՝ չկա:... Էս պատերազմ չի... Իսկական պատերազմը՝ որ սպան զոհ լինի... Ես զոհ չլինի... Զզվելի զոլդաթներ ունեք...

Ալեքսեյը ոչինչ չպատասխանեց, չարացած սրբում էր այտերը սրբիչով: Թնչացրեց, կեղտոտ շապիկով մեջքը դեմ արեց Ֆեդկային. «Սկսիր...— Ֆեդկան սկսեց ափերով հարվածել:— Ավելի ուժեղ»:

Այդ ժամանակ անտառից մի ծանր կառք ելավ՝ պարուսինե ծածկով: Տարազույն ձիերի վեցնյակից գոլորշի էր ելնում: Ետևից քեիսակոլոլ թիկնոցներով մի տասը ձիավոր էին գալիս: Տրորված խոզանի միջով դեսուդեն օրորվող կառքը մոտենում էր ճամբարին: Ալեքսեյն առավ կափտանը՝ շտապելուց թևքը չէր գտնում, սուրը վերցրեց ու վազեց դեպի վրանները.

— Թմբկահարներ, տագնա՞պ:

Կառքը կանգնեց: Իջավ Պյոտրը, ականջակալներով ու մորթյա կարտուզ դրած: Աստղանձև խթաններն իրարից պոկելով, իջավ Մենշիկովը՝ սամույրի մորթիներով մորևգույն լայն թիկնոցով: Ձիավորներն էլ իջան: Պյոտրը, կնճռոտված, նայում էր ճամբարին՝ կարմրած ձեռքերը կիսամուշտակի գրպանն էր մտցրել: Թափանցիկ օդի մեջ երգեց շեփորը, կտկտացին թմբուկները: Ձինվորներն իջնում էին սայլերից, դուրս վազում վրաններից, կոճկվում, կապում ուսագոտիները: Ծարվեցին քառանկյունաձև: Գծի երկայնքով վազեվազ անցնում էին պրապորշչիկները, ձեռնափայտով բոթբոթելով, գերմաներեն հայհոյելով: Ալեքսեյ Բրովկինը՝ ձախ ձեռքը սրին, աջ ձեռքում գլխարկը, կանգնեց Պյոտրի առաջ: (Շտապելուց կեղծամը չէր գտել:)

Նրա խոիվ մազերից վեր նայելով, Պյոտրն ասաց.

— Գլխարկդ դիր: Արշավի ժամանակ գլխարկը չեն հանում, անխելք: Ձեր վառոդի գումակն ո՞ւր է:

— Իլմեն-լճում է մնացել, ամբողջ վառոդը թրջված է, պարոն բոմբարդիր:

Պյոտրն աչքերը տարավ Մենշիկովի վրա: Սա ծուլորեն ծոմոնց սափրած դեմքը:

— Հանեցեք պատասխանել,— ասաց նա, նույնպես Այոշկայի գլխից վեր նայելով,— ո՞ւր են գնդի մյուս վաշտերը: Ո՞ւր է գնդապետ ֆոն Ծվեդենը:

— Գետի հունով դեպի ցած, ցրիվ կանգնած են, պարոն գեներալ...

Մենշիկովը, նույն ծուռ քմծիծաղով, գլուխն օրորեց, Պյոտրը միայն խոժոռվեց:

Երկուսն էլ սաժենանոց հասակներով, խոզանի կոշտերի վրայով գնացին դեպի քառանկյունաձև շարքը: Ձեռքերը գրպաններից չհանելով, Պյոտրն ասես ցրված զննում էր գինվորների մոխրագույն, նիհար դեմքերը, վատ եղանակներից ձևափոխված, վատ լմված գլխարկները, գգգգված կափտանները, ոտքերի քրջերն ու պոկոտված ոտնամանները: Միայն օտարերկրացի պրապորշչիկներն էին ձգված կտրիճավարի: Այդպես երկար կանգնած էին շարքի առաջ: Պյոտրը, գլուխը վեր ցցելով, ասաց.

— Ողջույն, տղերք...

Պրապորշչիկները կտրուկ շրջվեցին գծի վրա: Ծարքերով խառնիխուռն հնչեց.

— Ողջություն ենք ցանկանում, պարոն բոմբարդիր:

— Ո՞վ բողոք ունի:— Պյոտրն ավելի մոտեցավ:

Ձինվորները լուռ էին: Պրապորշչիկները (ձեռքը կողք թեքած ձեռնափայտի վրա, ձախ բոտֆորտն առաջ պարզած) աչքերը մեխել էին ցարի վրա: Պյոտրն ավելի հատու կրկնեց.

— Ով բողոք ունի, թող դուրս գա, չվախենա:

Հանկարծ ինչ-որ մեկը խոր հոգոց հանեց հեծկլտախառն (Ալեքսեյը տեսավ Գոլովինին. հրացանն իրար էր գալիս ձեռքում, բայց իրեն տիրապետեց, լուռ մնաց:)

— Վազը գնում ենք Նարվայի վրա: Գործ շատ ունենք, տղերք: Ինքը՝ ավելական թագավոր Կառոլուսն է դեմառդեմ գալիս: Նրան հաղթել է պետք: Մեզ չի կարելի հայրենիքը տալ ուրիշի: Այստեղ Ցամքաղաքը, Իվան-քաղաքը, Նարվան՝ ամբողջ հողը մինչև ծով մեր նախկին հայրենիքն է: Ծուտով կհաղթենք ու շուտով կհանգստանաք ձմեռային կացարաններում: Հասկացա՞ք, տղերք:

Խստադեմ չոռեց աչքերը: Ձինվորները լուռ նրան էին նայում: Չհասկանալու բան չկար: Մի մռայլ ձայն շարքերի միջից խոխոջացրեց. «Կըհաղթենք, դրա համար մարդ շատ ունենք»: Մենշիկովն իսկույն առաջ քաշվեց, տեսնելու համար, թե ով էր ասողը: (Ալեքսեյի սիրտը թուլացավ. ասողը Կեղտանմուտ Ֆեդկան էր, ամենաանհուսալի գինվորը:)

— Պարոն կապիտան... (Ալեքսեյը մոտ վազեց:) Վաշտում կարգուկանոնի համար շնորհակալություն եմ հայտնում քեզ... Մնացածի համար մեղավոր չես: Հանեցեք մարդկանց եռակի բաժին օղի տալ:

Պյոտրը գնաց դեպի կառքը, գլուխը կախած: Մենշիկովն աչքով արեց Ալեքսեյին (այս անգամ բարեհաճեց հիշել հին ընկերոջը), մորթեպատ թիկնոցի տակից հանեց փափկասուն ձեռքը, թփթփացրեց մեջքին ու կուցավ ականջին.

— Պյոտր Ալեքսեևիչը, ոչինչ, զոհ էր: Ուրիշների նման չէր քո վաշտը... Նարվայի տակ աչքի ընկար, գնդապետ կդառնաս... Իվան Արտեմիչին տեսա Նովգորոդում, հրամայեց բարև անել քեզ...

— Շնորհակալ եմ ձեզանից, Ալեքսանդր Դանիլովիչ...

— Հաջողություն: (Առջևից թիկնոցը բռնած, Մենշիկովը վազքով հասավ Պյոտրին: Նստեցին կառքը, ափով գնացին այնտեղ, ուր ցուրտ երկինքն արտացոլած գետը թեքվում էր եղևնու անտառի տակ):

Նարվայից երկու վերստի վրա, գետի հունով ցած, երկարուկ և խրուտ Կամպերգոլմ կոչին գոտևորող Նարովայի երկու բազուկներից ներքև լողացող կամուրջ սարքեցին: Վրայով անցան Շերեմետևի հեծյալ գնդերը և շարժվեցին դեպի Ռեվելի ճանապարհը, թշնամու դեմ անսպասելի հարձակում գործելու: Նրանց ետևից ձախ ափ անցան Տրուբեցկոյի դիվիզիայի զորամասերը: Նարվայի բարե բաստիոններից մեկ վերստ հեռու գտնվող պաշտպանված ելանգ առան: Նարվայի կայազորը գնասանցը չէր խանգարում՝ ըստ երևույթին, սակավաթիվ լինելով, վախենում էին բաց դաշտ ելնել:

Սեպտեմբերի բաներեքին առաջավոր ամբոխ զորքը, յամգորոդյան ճանապարհից թեքվելով, ելավ բլրաշատ մի հարթավայր, և Իվանգորոդի՝ Իվան Անեղի երբեմնի պատվարի ցանցիկ, խոտածածկ աշտարակների և գետից այն կողմ ընկած Նարվայի երկհազարյանի խիտ, սրամասար կիրիեներին ու կղմինդրե տանիքներին ի տես շարժվեց դեպի Կամպերգոլմ կոչին ու սկսեց խարիսխ կամուրջներով անցնել պտտոր և արքնաց գետը:

Խաղաղ օր էր: Արևը ցնազ էր, չտաքացնող: Նարվայի և Իվանգորոդի աղյուսաշեն եկեղեցիներում դղրդում էր անազանգը:

Ավազապատ ու տրորված լայն ճանապարհով կամուրջների մոտ էին խոնվում շարախախտ զինվորները, ստրելեցները՝ Պյոտրին ատելի աղվեսի մորթու բոլորքով գդակներով, ջարդոմխուրդ, մի կերպ կապկպած սայլակներ, տակառիկներով, տոպրակներով, արկղներով, հացի կանաչած կլորակներով բեռնված, ճանապարհին կատարելապես զբոսած սայլապան-մուժիկները մարակում էին նիհարած, անուրի տակ ուժով մտցրած յաբուներին, կոթին փաթաթած դրոշ կամ նիզակի ծայրին ճոճվող զինանշան էին տանում, կամ փարտիչն էր ելնում-իջնում զորամասը կորցրած թնդանոթաձիգի ուսին: Զինանիզակի ծայրին ճոճվող զինանշան էին տանում, կամ փարտիչն էր խցկվում, հայ-հույով, պապական գրահի վրայից արձակ մուշտակ հագած բոյարի գավակ էր գալիս, նրա ետևից՝ իր մարդիկ, յաբուները ճնշած, մգդակած թաղիքի տակառանման կաֆտանններով, թաթարական աղեղներով ու կապարճը մեջքներին...

Անցնելիս բոլորը շրջվում էին դեպի լերկ թումբը՝ ճանապարհից հեռու, թմբի վրա, մոխրագույն ձին հեծած, երկաթյա գրահով ցարն էր կանգնած ու նայում էր հետադիտակով: Ասպանդակն ասպանդակին, սնսթույր ձիով Մենշիկովն էր ձեռքերը կողերին կանթել՝ նայում էր գվարթ, քամին խաղացնում էր նրա ոսկեզօծ սատսվարտի փետուրները:

Ամրոցի դիմաց զորքերը կիսաշրջանաձև էին տեղաբաշխվել՝ թնդանոթի կրակոցի հեռավորության վրա, թեքով բինված Նարովային: Քաղաքից վեր, գետի հունով նանգնած էին Վեյրեի դիվիզիայի զորամասերը, կենտրոնում՝ Գերմանբերգ անուտուպտա բլրի ստորոտում Ավտոմոն Գոլովինի դիվիզիան էր, ձախ թևում, Կամպերգոլմ կոչու կամրջի մոտ սենյոնովցիներն էին, պրեոբրաժենցիները և Տրուբեցկոյի սորեեցյան գնդերը: Հենց այդտեղ էլ հերոս Ֆոն Կրուիի

վրանն էր խփված, որը գալիս էր զորքի հետ, որպես բարձրագույն խորհրդական: Պյոտրը և Մենշիկովը ուղղակի կոչու վրա էին իջևանել, ձկնորսական խրճիթում:

Ամբողջ գծի երկարությամբ սկսեցին խոր փոս փորել՝ դեպի դուրս ուղղված լյունետներով, ռեդուններով ու բաստիոններով. ռեվելյան ճանապարհով շվեդների մոտենալն պարագան նկատի առնելով: Նարվայի բաստիոնների դիմաց ուղղաձիգ էին բարձրացնում, պարապարդ հրետանին տեղադրելու համար: Պաշարման աշխատանքները ղեկավարում էր ինժեներ Գալլարտը: Բերդամարտություններից ծխի քուլաներ էին արձակվում, աշնան խոնավության մեջ մոլեգնած ճայթում էին թնդանոթները, բարձր ու ծխածիր աղեղներով գալիս էին արկերը, ընկնում, պայթում սայլերի, վրանների կողքին, փոսերի մեջ, որտեղից դուրս էին վազում զինվորները: Հումբերից մի քանի ազարակներ վառվեցին այգիների ու բանջարանոցների մեջ: Հրդեհների ու բազմաթիվ յաբուկների ծուխը սպիտակ ամպ դարձավ ընդաթի վրա, որտեղից բոցկլտում էին թնդանոթային կրակոցների հրեղեն լեզուները: Նարվայի պարիսպը փորձառու և քաջարի զինվորական, գնդապետ Գոռնն էր:

Այգիների մեջ ու շինությունների տակ պատսպարվելով, Պյոտրը և ինժեներ Գալլարտը ձիերով անցնում ու գնում էին Ֆոմա, Գլորիա, Կրիստեվալ, Տրիումֆ բաստիոնները: Երբեմն ատիպլան էին լինում այնքան մոտենալ, որ հրակնատներից երևում էին շվեդ թնդանոթաձիգների խիստ դեմքերը: Առանց իրարանցման, բայց արագ մոտեցնում էին, նշան բռնում, աչալուրջ սպասում: Կրա՛կ: Արկը, անդիմադրելի սեղմելով օդը, թշշալով անցնում էր գլխների վրայով: Պյոտրի աչքերը չռվել էին, այտոսկրերի ելունդները փքվել, բայց արկերից չէր վախենում: Ինժեներ Գալլարտը՝ ընկած-ելած մի մարդ (գործնական, հանգիստ ու ճանճրալի), ժամանակին խթանում էր ձին, մի կողմ քաշվում: Պերճաշուք Մենշիկովը՝ ամեն անգամ հենց նրան էլ նշան էին բռնում, միայն սադակարտի փետուրներն էր ցնցում, պարծենկոտ ձայն տալիս թնդանոթաձիգներին. «Վատ է, վատ, կամբուռներ», սյար եկող հովատակի պարանոցը թփթփացնելով: Թիկնեղ ու բեխավոր հիսուն դրագուն անշարժ սպասում էին, թե որ մեկի վրա է շրմփալու սև գնդակը:

Բերդապատերը բարձր էին: Կիսակլոր ելուստավոր բաստիոնները գլաքարերից էին շարված և այնքան ամուր էին, որ թուջե արկն ընկույզի պես ետ էր շպրտվում: Աշտարակների ճեղքերից ու հրակնատներից ծանր թնդանոթներ էին ելնում՝ երեք հարյուրից ոչ պակաս այդպիսի թնդանոթ կար ամրոցում, կայազորը կազմված էր երկու հազար հետևակից, հեծելազորից ու զինված քաղաքացիներից: Հետախույզները ստել էին, թե Նարվան մի գրոհով կարելի է գրավել:

Պյոտրն իջավ ձիուց, նստեց թմբուկին, ծնկների վրա մի թերթ թուղթ փռեց: Սպասյակ Միշկան մոտեցրեց թանաքամանը: Գալլարտը պպզեց կողքը՝ տարածությունն աչքաչափով էր ասում: Պյոտրի խոշոր. սագի փետուր բռնած ձեռքը զգուշորեն դողացող գծեր էր քաշում:

Կիսաշրջանաձև կանգնած հեծյալ դրագունների առջևով գնում-գալիս էր Մենշիկովը:

— Ամեն բաստիոնին տասնհինգական պարապաջարդ թնդանոթ, ճեղքման համար հարկավոր է ընդամենը վաթսուն հատ քառասունութ ֆունտանոց պղնձյա թնդանոթ,— ասում էր Գալլարտը համաչափ, անտարբեր ձայնով:— Հարյուր քսան հազար արկ՝ նվազագույնը...

— Շատ լավ է,— ասաց Պյոտրը:

— Քաղաքում հրդեհներ գցելու համար գրոհից առաջ կպահանջվի քառասունից ոչ պակաս հրասանդ՝ յուրաքանչյուրին հազարական ռումբ...

— Ահա թե ինչպես են Եվրոպայում դատում,— ասաց Պյոտրը, թվերը գրելով:

— Տասը խոշոր տակառ քացախ՝ թնդանոթները սառեցնելու համար... Միայն անընդմեջ հրաձգությամբ, բոլոր մարտկոցների սարքած իսկական դժոխքից է կործանվում պաշարվածների հաստատակամությունը՝ սովորեցնում է մարշալ Լյուքսամբուրը... Տասնհինգ հազար ձեռքի նոնակ է պետք: Տասներկուարշինանոց պաշարողական հազար սանդուղք, ու այնքան թեթև, որ մի հատը երկու մարդ վագելով կարողանան տանել: Հինգ հազար պարկ բուրդ...

— Դա՞ ինչի համար...

— Զինվորին մուշկետի գնդակից պաշտպանելու համար: Դյունկիրխենի պաշարմանը մարշալ Վոբանը, այդպիսի պարկերով պաշտպանելով, կարողացավ ընդհուպ մոտենալ դարպասին, որքան էլ անխնա էր գնդակոծումը, քանի որ գնդակը հեշտությամբ խրվում-մնում է բրդի մեջ...

— Լավ,— անկստան ասաց Պյոտրը, նշելով թղթի վրա:— Դանիլիչ, հինգ հազար պարկ բուրդ է պետք գալու...

Հոած ծնկներին հենված, Մենշիկովը կռացավ քամուց թրթռացող թղթի վրա: Շրթունքները ծռմռեց.

— Ավելորդ բաներ են, միմ խեռց: Մեկ էլ՝ որտեղի՞ց բուրդ գըտնենք: (Դարձավ Գալլարտին:) Ազոփի տակ մենակ թրերով էինք պարիսպը բարձրանում, բայց քաղաքը գրավեցինք...

Ետևում՝ դրագունների շարքում, մի ձի ջղաձգվեց, խուլ տնքաց հեծյալը: Գորշաներմակ ձին, ոտքերը ձգելով, կատաղորեն ցնցում էր բաշը՝ ռունգերից վեր մատնաչափ շիթով սև արյուն էր ցայտում: Բեխավոր դրագունները վախեցած խեթեցին թփուտների կողմը, որտեղից հարյուր քայլի վրա, ծխի քուլաներ էին պոկվում: Պյոտրը, ինչպես բարձրացրել էր փետուրը բռնած ձեռքը, այդպես էլ քարացավ, թմբուկի վրա նստած:

Անակնկալորեն, թնդանոթաձգության որոտի տակ, բերդաշտարակի դարպասից (որ այստեղից չէր երևում՝ Գլորիա բաստիոնի ելուստի ետևն էր) եգերների մի ջոկատ էր դուրս եկել ու անցել բանջարանոցների ցանկապատերի տակով: Նրանց ետևից դեղին ու ծանր ձիերով մի հիսուն ռեյտար դուրս պրծան՝ երկաթյա գրահներով, աչքերին քաշած սաղավարտներով: Սրերը բարձրացրած, հավասարգով լի դաշտով ցրիվ եկած, գալիս էին շրջանցելու ձախ կողմից:

Ալեքսանդր Դանիլովիչը, մի վայրկյան, ոչ ավելի, աչքերը չոած նայեց հակառակորդի դիվերսիային, նետվեց դեպի սևաթույր հովատակը, արձակեց ու դեն շպրտեց թիկնոցը, թռավ թամբին. «Սրերը քաշի՞ր»՝ բղավեց, կարմրատակելով: Սուրը մերկացրեց, աստղաձև խթանները խրեց ձիու կողերը, ընկավ ծառս ելած հովատակի պարանոցին, տեղից պոկեց ամբողջ թափով. «Դրագուննե՛ր, իմ ետևի՛ց»՝, և ուրիշ ոչինչ: Մենշիկովը և դրագունները, շրջանցելով թմբուկի մոտ կանգնած Պյոտրին, պլացան կտրելու ռեյտարների դեմը, որոնք արդեն սկսել էին ընթացքը դանդաղեցնել ու ետ դառնալ...

Գալլարտը, մտահոգ սեղմելով շրթունքները, Պյոտրին մոտեցրեց նրա մոխրագույն, սևաթաշ, անհանգստացած մատակը.

— Ձեզ խնդրում եմ դուրս գալ գնդակոծության դաշտից, ձերդ մեծություն:

Թամբի վրա բարձրանալիս, Պյոտրը ցատկոտեց մի ոտքի վրա, նայում էր, թե ինչպես են մոտենում դրագունները և ռեյտարները: Ռուսները հոծ խմբով էին արշավում, առջևից Ալեքսաշկայի շողշողուն սաղավարտի փետուրներն էին ցնցվում, շվեդները լավ ձգվել էին դաշտով մեկ, և հիմա եգերները, կտրուկ շրջվելով, խթանում ու սրերով խփում էին ձիերին: Բայց օդակել չկարողացան: Պյոտրը տեսավ՝ Ալեքսաշկայի սևաթույր հովատակը կրծքով խփեց մի դեղին ձիու, ռեյտարը գլորվեց, բաշից բռնած... Կարմիր փետուրները թրթռացին երկաթյա սաղավարտների արանքում: Բայց արդեն ամբողջ հեղեղով վրա արծան դրագունները, և առանց դանդաղեցնելու, շարունակում էին սրշավել (կարծես կատակով էին թափահարում սրերը): Նրանց ետևից դաշտում պառկած մարդիկ մնացին. մեկը թափահարում էր կախ գցած գլուխը, ջանալով ոտքի ելնել, մյուսը վեր տնկած ծնկներն էր ցնցում: Անհեծյալ մի քանի ձի վազվզում էին դաշտում:

Գալլարտը համառորեն բաշում էր սանձը. «Ձերդ մեծություն, այստեղ վտանգավոր է»: Մոխրագույն մատակը ճկում էր, գավակը պտտում: Պյոտրը խփում էր կրունկներով: Ետ-ետ գնալով, շարունակ շրջվում էր: Ռեյտարները հիմա ամբողջ ուժով փախչում էին ռուսներից. աջից, քաղաք տանող նրանց ճանապարհը կտրելով, խոզանի գորշ շերտերի վրայով, թաթարական կտրիճությամբ կեռ թրերը թափահարելով տարագույն ու տարազգեստ հեծյալներ էին պլանում՝ ազնվական անկանոն գնդից մի քանի հարյուրյակ: Բերդապարսպի տախտակյա ծածկի տակից կրակում էին նրանց վրա:

Մտան կեչուտ՝ Պյոտրը բերանով մեկ շունչ քաշեց: Ձին թողեց քայլքի: «Այո, հեշտ չի լինելու»,— պատասխանեց իր իսկ մտքերին: Գալլարտը ասաց.

— Կարող եմ ձեզ շնորհավորել, ձերդ մեծություն, գերազանց հեծելակներ ունենք:

— Դրանից ինչ, գործի կեսն է դա... Ջղայնանալ, արշավել, թրատել... Մենակ դրանով ամրոց գրավել չի լինի...

Բարձրացավ թմբի վրա, սանձը քաշեց ու երկար, ճակատը կընճռոտած նայում էր զորքերի և գումակների՝ մի յոթ վերստ ձգված գծին: Ամենուրեք, փոսերի միջից հողի գուղձեր էին դուրս գցում ծուլորեն: Բղավոց, հայհոյանք: Ինչ-որ մարդիկ՝ անգործ ընկած խարույկների, լծարձակ սայլերի մոտ: Նիհար, ոտները կապած ձիեր: Քրջեր թփերի վրա: Թվում էր, թե զորքերի այդ ամբողջ վիթխարությունը շարժվում ու ապրում է դանդաղությամբ, մեծ դժկամությամբ:

— Նոյեմբերից շուտ մտածել իսկ պետք չէ,— ասաց Պյոտրը,— մինչև ցրտերը չընկնեն, պարապաջարդ թնդանոթները մոտեցնել չենք կարող: Մի քանի է թղթի վրա, մի ուրիշ բան՝ իրականում...

Նորից քայլի թողնելով ձին, սկսեց հարցուփորձ անել Գալլարտին նշանավոր մարշալներ Վոբանի և Լյուքսամբուրի արշավանքների ու պաշարումների մասին: Հարցնում էր Ֆրանսիայի զինագործարանների և թնդանոթային գործարանների մասին: Ցնցում էր կտավե փողկապ կապած բարակ վիզը:

— Ինքնըստինքյան... Այնտեղ ամեն ինչ դասավորված է, ամեն ինչ ձեռքի տակ... Նրանք էլ կասեն ճանապարհ ունենք, մենք էլ...

Փոսերի վրայով ցատկելով, մոտ քշեց Մենշիկովը՝ դեռևս ամբողջովին տաքացած, ատամները զվարթությամբ բաց արած, վայրի փայլ աչքերի մեջ... Սաղավարտի վրա միայն մի փետուր էր ցցված, պղնձյա գրանի վրա հարվածների հետքեր կային: Կանգնեցրեց ահուկները ծանր-ծանր շարժող ձին:

— Պարոն բոմբարդիր... Թշնամին ետ է շպրտված, զոհերով, ռեյտարների հարիվ կեսը փսխավ մեզնից... (Տաքացած ստեց, իհարկե:) Մերոնցից երկու հոգի են սպանված, մի քանիսն էլ ճանկոված ունեն...

Ալեքսաշկային նայելու հաճույքից Պյոտրի քիթը կնճռոտվեց:

— Լավ,— ասաց,— ապրես:

Երեկոյան գեներալները հավաքվեցին հիրցոգ ֆոն Կրոյի վրանում՝ փքված, չափազանց խստահայաց Ավտոմոն Գոլովինը (ռազմախաղի զորքի առաջին ստեղծողը), հաղթանդամ ու հարուստ բոյարին, ատրելեցյան գնդերի սիրելի, իշխան Տրուբեցկոյը, որոտաձայն կոկորդով ու ծանր բոունքքներով հայտնի, գվարդիայի հրամանատար Բուտուլինը և միանգամայն հիվանդ ու ճաղատ, ոչխարենու քուրքի մեջ սրբսրթացող Վեյդեն: Երբ ֆելան Պյոտրը, Մենշիկովը և Գալլարտը, հերցոգը խնդրեց սեղան նստել ու ընթրել երթային պայմաններում: Հազվագյուտ, նույնիսկ չտեսնված ուտեստեղեններ բերեցին (հերցոգի հանձնակատարը գտել էր Ռեվելում), ֆրանսիական ու հունական գինիներ էին մատուցում առատորեն:

Հերցոգն իրեն զգում էր, ինչպես ձուկը ջրում: Հրամայեց շատ մոմեր վառել: Ոսկրոտ ձեռքերը տարածելով, պատմում էր նշանավոր ճակատամարտերի մասին, որոնց ժամանակ ինքը՝ բարձրում, արյունաներկ մարտի դաշտից վեր, ոտքը դրած ջարդված թնդանոթին, հրամաններ է արձակել՝ զրահավորները ճեղքեն քառանկյունը, եգերները կործանեն թևերը: Ամբողջ դիվիզիաներ է խեղդել գետում, քաղաքներ կրակ տվել...

Ռուսները, գլուխները մայլորեն կախ գցած, ծնոտները և հանրագյան պաշտոնեներ էին ուղում: Պյոտրը ցրված նայում էր հերցոգի երկարաքիթ, թաց բեխերով դեմքին: Սեղանն էր սկսում կոտկացնել կամ թիակներն էր պտտում, կարծես քոր գալիս լինեին: (Արշավի սկզբից նկատվում էր Պյոտր Ալեքսեևիչի այդ ցրված հայացքը:)

— Նարվա՞,— բացականչեց հերցոգը, սպասելիին պարզելով դատարկ գավաթը:— Նարվա՞: Մեկ օրվա լավ ոմբանդոնություն և կարճատև գրոհ հարավային բաստիոնների վրա... Արծաթյա մատուցարանով Նարվայի բանալիները ձերը կլինեն, տեր արքա: Ոչ մեծ կայազոր կլցողնենք այստեղ և բոլոր ուժերով, հենելազորը բերելով ծավալած, կնարձակվենք Կարլոս թագավորի վրա: Թերսիանդ Ռեվելում կդիմավորենք, ազնիվ խոսք եմ տալիս...

Պյոտրը ելավ սեղանից, քայլեց կուացած, որ գլուխը չդիպչի վրանի կտավին, հատակից ծղոտ վերցրեց, թիկն տվեց հերցոգի անկողնու վրա (մոտակա ագարակից էին բերել): Ծղոտով ատամները ոչխորեց:

— Գալլարտն ինձ ցուցակ է տվել,— ասաց, և բոլորը, ուտելը թողած, նրա կողմը դարձան:— Ցուցակի մեջ եղած ամեն ինչն ունենանք, Նարվան կգրավենք: Պարապաջարդ վիթխարն թնդանոթ է պետք... (Նստելով մահճակալին, ծոցից հանեց ճմրթված թուղթը, շպրտեց սեղանի վրա, Գոլովինին:) Կարդա... Առայժմ ոչ մի կարգին թնդանոթ չունենք ռեդուտներում: Ռեպնինը պաշարողական թնդանոթներով ցեխերի հետ է կռիվ տալիս Տվերի տակ... Հրասանդները խրվել-մնացել են Վարշավում՝ այնտեղ իմացա... Վատողի գումակը մինչև հիմա Իլմեն-լճում է... Ի՞նչ եք մտածում այս մասին, պարոնայք գեներալներ...

Գեներալները, մոմը մոտեցնելով, գլուխները կուացրին ցուցակի վրա: Միայն Մենշիկովն էր հեռվում նստել՝ չար քմծիծաղով, լի գավաթն առաջը:

— Ճամբար հո չէ՝ թափառախումբ է,— լռությունից հետո նույնքան խիստ ու անշտապ խոսեց Պյոտրը:— Երկու տարի պատրաստվում էինք... Ու ոչինչ պատրաստ չէ... Ավելի վատ է, քան Ազովի տակ: Ավելի վատ է, քան Վասկա Գոլիցինի ժամանակ... (Ալեքսաշկան խթանը զնգացրեց, ատամները բացեց մինչև ականջները չարախնդությամբ): Ճամբա՞ր: Զինվորները թրև են գալիս գումակներում... Է՛ մեր կնանիք, է՛ չոխոն կնանիք լիքն են գումակում... Ղժղժո՞ց... Անկարգությո՞ւն... Աշխատում են ալարելով, մարդ ուզում է թքի դրբանց արածի վրա... Հացը նեխած է... Մի քանի գնդերում աղ դրած մսի երկու օրվա պաշար կա... Որտե՞ղ է ամբողջ աղ դրած միսը: Նովգորոդո՞ւմ: Ինչի՞ չի էստեղ: Անձրևները որ սկսվեցին՝ ո՞ւր են գետնատորները զինվորների համար:

Վրանում միայն մոմերն էին ճռճռում: Հերցոգը, վատ հասկանա-

լով, թե խոսքն ինչի մասին է, աչքերը հետաքրքրությամբ տանում-բերում էր Պյոտրի և գեներալների վրա:

— Երկու ամիս է գալիս ենք Մոսկվայից, տեղ հասնել չենք կարողանում: Աշալա՞նք: Հայտնի է ձեզ՝ Կառլոս թագավորը Քրիստիանին խայտառակ հաշտությունն է պարտադրել, ստիպել է երկու հարյուր հիսուն հազար ոսկյա դուկատ վճարել որպես ռազմատուգանք: Կառլոսը հիմա ամբողջ զորքով իջել է Պեռնովում և ուղիղ գալիս է Ռիգայի վրա... Իսկ եթե հիմա Ռիգայի տակ ջախջախի Ավգուստ թագավորին, նոյեմբերին պետք է նրան սպասել այստեղ, մեզ մոտ... Ինչպե՞ս սիտի դիմավորենք:

Աստիճանով ավագ Ավտոնոն Գոլովինը, աչեխառն հոնքերը կախած, գլուխ խոնարհեց:

— Աստծո օգնությամբ, Պյոտր Ալեքսեևիչ...

— Թնդանոթնե՞ր են պետք,— ընդհատեց Պյոտրը, ճակատի երակը փքվեց:— Ռումբե՞ր: Հարյուր քսան հազար պարապաջարդ արկ է պետք: Աղ դրած միս է պետք, տխմար ծերուկ...

Երկու շաբաթ անդադար անձրև եկավ նորից, անթափանց մշուշներ բերելով ծովից: Ձիավորների գետնափորները ջրով լցվեցին, վրանները կաթում էին, խոնավությունից և գիշերվա ցրտից պատըսպարվելու տեղ չկար: Ամբողջ ճամբարը պորտանաս ճանճի մեջ էր կանգնած: Մարդիկ լուծ ընկան, դողէրոցք սկսվեց՝ ամեն գիշեր սայլերով դիակներ էին տանում դաշտ:

Ամրոցից անընդմեջ պաշարողներին խփում էին թնդանոթներով և փոքր հրազենով: Այդպարանոցներին ավելի հաճախակի դարձան արտագրոհները՝ շվեդները վերացնում էին պահակներին, սողեսող մոտենում գետնափորներին, ձեռքի նռնակներ շպրտում քնածների վրա: Պյոտրն ամեն օր շրջում էր ամրությունների ամբողջ գծով մեկ: Թաց թիկնոցով, եղերը կախ գլխարկով, լուռ ու մռայլ, մոխրագույն մատակը հեծած հայտնվում էր անձրևի շղարշի միջից, կանգ էր առնում, նայում ապակյա աչքերով ու կոխկրտված դաշտով շարունակում էր ճամփան, մշուշի միջով:

Գումակները դանդաղ էին մոտենում: Ճանապարհից հայտնեցին, որ խնդիրը սայլերն են. մուժիկներից ամեն ինչ վերցված է, ստիպված են կալվածատերերից ու մենաստաններից վերցնել: Ձիերը նվազ են, կերը՝ փչացած, և օրըստօրե վիճակը ծանրանում է հորդառատ անձրևներից ու ավերված ճանապարհներից: Լուր տարածվեց, թե Պյոտրը կղզու իր ձկնորսական տնակում անձամբ ծեծել է գեներալ-մթերապետին, ուշագնացության հասցնելով, իսկ նրա օգնականին հրամայել է կախել: Սնունը կարծես փոքր-ինչ բարելավվեց: Մի քիչ էլ կարգուկանոն հաստատվեց ճամբարում: Հրամանատարներն էին վատ. ռուսները՝ դանդաղկոտ, հին ձևով ապրելուն սովոր, շատախոս և անհասկացող: Օտարերկրացիներն էլ միայն մի բան գիտեին՝ խոնավությունը պատճառ բռնած օդի խմել ու տեղի-անտեղի հասցնել ատամներին:

Իսկությամբ հայտնի դարձավ. Կառլոս թագավորը, ափ իջնելով Պեռնովում, շրջվել է դեպի Ռիգա: Սոսկ իր հայտնվելով հպատակեցրել է լիվոնյան ասպետներին և Ավգուստ թագավորի զորքերը ետ քշել Կուրլյանդիա: Ավգուստը նստած էր Վարշավայում, երկպառակությունների բորբոքված պաճների մեջ ու այնտեղից սուրհանդակներ էր ուղարկում Պյոտրին, խնդրում էր փող, կազակներ, թնդանոթներ, հետևակ... Նարվայի տակ հասկանում էին՝ շվեդներին հարկ է սպասել առաջին ասոնամանիքներին:

Հեծյալ չորս անկանոն գնդերի հետ, որոնք թշնամու վրա հանկարծակի հարձակումների էին ուղարկված, Շերեմետևը հասավ Վեզենբերգ և շատ բարեհաջող պիտի ջախջախեր շվեդների խափանիչ ջոկատը, բայց հանկարծակի նահանջեց Պիգաիոկիի ծովամերձ կիրճերը՝ Նարվայից քառասուն վերստի վրա, և այնտեղից գրեց Պյոտրին.

«...Նահանջել եմ ոչ թե վախից, այլ լավ նպատակով... Վեզենբերգի տակ չտեսնված ճահիճներ կան ու անտառներն են շատ խորը: Կերը ոչ միայն այստեղ, այլ չորս կողմը փչացված է: Իսկ ամենից շատ վտանգ ունեի, որ մեզ չշրջանցեն, Նարվայի կողմը փակելով... Իսկ որ ջղայնացած ես, թե գյուղեր եմ վառում ու չուխոններին կոտորում, կասկած չունենաս. գյուղեր քիչ են վառված ու միայն նրա համար, որ հակառակորդը կացարան չունենա: Իսկ այսօր հրամայեցի, որ առանց հրամանի երկիրը չավերեն այսուհետև... Պիգաիոկայի տակ, ուր կանգնել եմ, թշնամին գաղտնի անցնել չի կարող մեր մոտով, էլ չեմ նահանջելու, այստեղ էլ գլուխներս կդնենք, դրանում ոչ մի կասկած չունենաս...»:

Վերջապես, բարեբախտաբար, թե դժբախտաբար, քամին փչեց հյուսիսից: Մի օրվա մեջ ցրեց թաց մշուշը, ցածրիկ արևը ծլատորեն լուսավորեց ցեխերի մեջ թաղված ճամբարը, քաղաքում, եկեղեցու ծայրաձողին շողշողաց ոսկյա աքաղաղը: Հողը սառեց: Սկսեցին տեղ հասնել վառոդի պաշարներով գումակները: Ամենքին տասը զույգ եզ լծած բերեցին երեք հարյուր քառասուն փութ կշռող նշանավոր «Առյուծ» և «Արջ» թնդանոթները, որ հարյուր տարի առաջ Նովգորոդում Անդրեյ Չոխովը և Սեմյոն Դուբինկան էին ձուլել: Կրիսների պես, լայն ու ցածր անիվների վրա սողում էին հաուբիցները, երեքփթանոց արկեր արձակող կարճ հրասանդները: Ամբողջ զորքը մարտական վիճակում էր, հեծյալ բոլոր գնդերը ձի նստած, թրերը մերկացրած էին՝ շվեդների արտագրոհը ետ մղելու համար:

Երկու հարյուր հոգի, ճոպաններով բռնած, «Առյուծն» ու «Արջը» քաշեցին միջին ռեդուտ, ամրոցի հարավային բաստիոնների դիմաց: Ամբողջ գիշեր մարտկոցներում հաուբիցներն ու հրասանդները էին տեղադրում: Ամրոցում նույնպես քնած չէին, պատրաստվում էին գրոհի՝ պատերի վրայով սողում էին լապտերների կրակները, միմյանց ձայն էին տալիս ժամապահները:

Նոյեմբերի հինգի լուսաբացին հերցոգի և գեներալների հետ Պյոտրը բարձրացավ Գերմանաբերգ բլուրը: Ծակող քամի էր փչում: Ճամբարը դեռ աղջամուղջով էր պատված, արևի կարմիր լույսն ըն-

կել էր քաղաքի սրակող տանիքների և պարապի ատամների վրա: Ներքևում երկարապոչ կրակներ բոցավառվեցին, ցնցելով հարթավայրը, տնքացին ու թնդացին հրանոթները՝ կայծակնացայտ ալեկոծներով ոռմբերը քաղաք էին շպրտվում: Ծխով պատվեց թե՛ ճամբարը, թե՛ պարիսպը: Պյոտրն իջեցրեց հեռադիտակը և ոռնգերն ուռեցրած, գլխով ասեց Գալլարտին: Վերջինս մոտ քշեց ձին, լեզուն ճտտացրեց.

— Վատ է: Չեն հասնում: Վառոդը բանի պետք չէ...

— Ի՞նչ անել: Հենց հիմա...

— Լիցքն ավելացնել... Միայն թե զենքերը դիմանան...

Պյոտրն իջավ բլրից, բարձրացնովի կամուրջի վրայով, կաղնեգերաանկերից սարքված դարպասի միջով ալացավ շտապատի ու ալգեալափակոցի հանր: Մեջտեղի մարտկոցում թնդանոթաձիգները քացախառն ջուր էին լցնում «Առյուծի» և «Արջի» երկար փողերի վրա: Մարտկոցի հրամանատար հոյանդացի Յակով Վենտերշիվերկը՝ ցածրահասակ ու ծեր մի ճավատի, օձիքի տակից ելնող մորուքով, Պյոտրին մոտենալով, սառնասրտորեն ասաց.

— Սա մի բանի պետք չէ... Այս վառոդով մենակ ննջողուկների վրա կարելի է կրակել՝ ծոխ ու մուր է եղածը...

Պյոտրը վրայից գցեց թիկնոցը, կափտանը, թևքերը քշտեց, փարտիչն առավ թնդանոթաձիգից, ուժեղ շարժումներով մաքրեց մրոտած փողը...

— Լի՞ցք:

Մարտկոցի ընկուղից սկսեցին մոխրագույն թղթի տոպրակներով վառոդ շպրտել՝ ձեռքից ձեռք: Պյոտրը պատռեց մեկը, հատիկներն ափի մեջ լցրեց, միայն ֆնչացրեց՝ կատվի պես, չարացած: Վեց տոպրակ լցրեց փողի մեջ...

— Վառանգավոր կլինի,— ասաց Յակով Վինտերշիվերկը:

— Ջե՛նդ, ձե՛նդ... Ա՛րկը:

Ծանրութեթև արեց փթանոց կլոր արկը, մտցրեց փողը, ընկնելով փարտիչի վրա, ամուր խցկեց: Պպզեց ճշանացույցի տակ՝ պտուտակն էր դաստակում.

— Պատրո՛ւյգը... Բոլորը թնդանոթից հեռո՛ւ:

Ականջ խլացնելով, «Արջը» կրակ ժայթքեց, ծանր-ծանր ետ պոկվեց իր թուջե անիվներով. կնճիթը թաղելով: Փոքրացող գնդակի պես պլացավ արկը՝ Գլորիա բաստիոնի աշտարակի վրա ցրիվ եկան քարերը, մի ատամ փուլ եկավ...

— Օ՜, վատ չէր.— ասաց Յակով Վինտերշիվերկը...

— Էապե՛ս կրակեք...

Կափտանը վրան գցելով, Պյոտրը ալացավ հաուբիցների մարտկոց: Բոլոր մարտկոցներին հրաման տրվեց՝ մեկուկես անգամ ավելացնել լիցքը: Հարյուր հոսուն թնդանոթի դղրդյունից վերատին ցնցվեց հողը: Սարսափելի բոց էր թռչում ցից կանգնած հրասանդներից: Երբ ծխի ամպերը ցրվեցին, տեսան, որ քաղաքում երկու տուն է վառվում: Երկրորդ համազարկն ավելի հաջող էր: Սակայն շուտով իմացան. արևմտյան մարտկոցում պայթել են երկու հաուբից, որոնք վերջերս էև Կիրիլովիչի Տուլայի գործարանում էին ձուլվել, մի քանի թընդանոթների հարթակների սոնիներն էին ճաքել: Պյոտրն ասաց. «Հետո կպարզենք... Մեղավորներին կգտնենք... Այդպես կրակեք»:

Այսպես սկսվեց Նարվայի ռմբակոծումը և առանց դադարի շարունակվեց մինչև նոյեմբերի տասնհինգը:

Ցարսկան խոհարար Ֆելտենը, քթի տակ դնդնալով, ընդհատակին, ծպեղների կրակով ձվածեղ էր անում: Դժվարությամբ էին մի տապ ձու գտել՝ խոհանոցի ծառան ձիով հասարյա Ճամբուրգ էր հասել՝ բոլորն էլ հոտած դուրս եկան...

— Ի՞նչ ես մրթմրթում, Ֆելտեն, ապաղեղը շատ արա, պրծիր...

— Լսում եմ, ձերդ մեծություն... Տարդեղը:

Պյոտրը նստած էր տաք վառարանի մոտ: Մենակ աջտեղ էր տաք (միջնորմից այն կողմ, ուր բնում էին Ալեքսաշկայի հետ, լավ լսում էր պատից): Հիմա, կեսգիշերին, քամու ոռնոցն էր լսվում, մեկ էլ նրգու տնակի մոտի հողմադացի թևերի ճռռոցը: Կեչու ծպեղները լավ ճարճատում էին: Կարգիկ, բարկացած Ֆելտենը նախահնոցին դրեց եղած ուտելիքը, շարունակ հոտոտում էր, ու նրա մեջ բոլ վրա կրակի անդրադարձումներն էին ցոլում:

— Մեկ էլ տեսար, շվեդները քեզ գերի բռնեցին, ի՞նչ կանես, Ֆելտեն...

— Ես ձեզ լսում եմ, ձերդ մեծություն...

— Ընը՛, կասեն, ցարի խոհարա՛րն է: Ու ոտքերիդդ կախ կտան...

— Թող կախեն, ես իմ պարտականությունը գիտեմ...

Մաքուր սիրոց գցեց տախտակյա խախուտ սեղանին: Դրեց պղպեղդու կավե տափաշիշը, բարակ շերտերով կտրատեց սև ու քարթու հացը: Պյոտրը, կամացուկ փտացնելով ծխամորճը, նայում էր, թե ինչքան ճարպիկ, փափուկ, հարմար է շարժվում Ֆելտենը՝ վալենկաներով, վրայից գոգնոց կապած բամբակյա բաճկոնով:

— Ծվեդների մասին կատակ չեմ անում... Տնտեսությունդ հավաք պահեիր...

Ֆելտենը շեղակի նայեց՝ հասկացավ, որ չի կատակում: Կրակի վրայից ձվածեղի տապակը սեղանին դրեց, տափաշշից օղի լցրեց սնապակ գավաթի մեջ:

— Համեցեք սեղանի մոտ, ձերդ մեծություն...

Տնակն ամբողջովին ցնցվեց քամուց: Մոմի բոցը տատանվեց: Դռից աղմուկով ներս մտավ Մենշիկովը.

— Էս ինչ եղանակ է...

Կնճռոտվելով, արձակեց լանջազոտու կապը: Հնոցատակին, վառվող ծպեղների վրա ձեռքերն էր տաքացնում:

— Հիմա կգա...

— Ի՞նչ էր,— հարցրեց Պյոտրը:

— Քնած էր: Մահճակալից հանեցի, առանց երկար-բարակ...

Ալեքսաշկան դիմացը նստեց: Ստուգեց՝ սեղանը պի՞նդ է կանգ-

նած։ Լցրեց, խմեց, գլուխը ցնցեց։ Որոշ ժամանակ լուռ ուտում էին։ Պյոտրը ցածրաձայն ասաց.

— Ուշ է... Այլևս ոչինչ ուղղել չի լինի...

Ալեքսաշկան, դժվարությամբ կուլ տալով, ասաց.

— Եթե նա հարյուր վերստի վրա է, ու Շերեմետևն էլ դեմը չառնի, վաղը չէ մյուս օրն Էստեղ է լինելու... Դուրս գանք բաց դաշտ՝ կարո՞ղ է չնաղթենք հնձելազորով։ (Արձակեց օձիքը, դարձավ Ֆելտենին։) Շշի չի մնացե՞լ։ (Երկրորդ գավաթը լցրեց։) Նրա ամբոխը ուժը մի տասը հազար կլինի՝ գերիները Ավետարանով են երդվում... Ուրեմն, էդքա՞ն անճարակ ենք... Վիրավորական է...

— Վիրավորական է,— կրկնեց Պյոտրը։— Երկու օրում մարդկանց խելք չես սովորեցնի... Նարվայի տակ վատ սատացվեց, Պսկովում ու Նովգորոդում կկանգնեցնենք նրան...

— Մին խեղոց, էդ մասին մեղք էլ է մտածելը...

— Լավ, լավ...

Լռեցին։ Ֆելտենը, պպզած, փչում էր ածուխների վրա՝ պղնձյա կաթսայի մեջ գարեջուր էր տաքացնում։

Վատ էին գործերը Նարվայի տակ։ Երկու շաբաթ ռմբակոծում էին, ականներ պայթեցնում, ապրոշներ փորելով մոտենում էին՝ այդպես էլ պարիսպը չխորտակեցին ու քաղաքը չհրդեհեցին։ Գեներալները սիրտ չէին անում գրոհի ելնել։ Հարյուր երեսուն թնդանոթներից կեսը պայթեց ու փչացավ։ Երեկ սկսեցին հաշվել՝ ճկուղներում այդպիսի հրաձգության մեկ օրվա վառոդ ու ռումբ էր մնացել, իսկ վառոդի գումակները դեռ քարշ էին գալիս Նովգորոդի մոտերքում։

Ծկեղական բանակը արագ երթերով մոտենում էր ռեվելյան ճանապարհով և հիմա թերևս Շերեմետևի հետ էր բախվել պիգգիոկյան կիրճերում։ Ռուսները մի տնական աքցանի մեջ էին հայտնվելու՝ բերդի հրետանու և մոտեցող Կաղլոսի արանքում։

— Շա՜տ աղմկեցինք... Էդ մի բանը կարողանում ենք,— Պյոտրը շպրտեց գդալը։— Կռվել դեռ չենք սովորել։ Հակառակ ծայրից բռնեցինք... Էս գործը երբեք էսպես չի լինի։ Որպեսզի թնդանոթն էստեղ կրակի, հարկավոր է Մոսկվայում լցնել... Հասկացա՞ր։

Ալեքսաշկան ասաց.

— Նոր դալիս էի, առաջին վաշտի խարույկի մոտ զինվորները խոսում էին։ Ծկեղներին են ապատում՝ ամբողջ ճամբարը թնդում է։ Գեներալներին հո չե՞ն հայհոյում... Լսեմ, մեկն ասաց. «Առաջին գնդակը պրապորշչիկին եմ պահել»...

— Գեներալնե՞րը։ (Պյոտրի աչքերը կրակվեցին։) Խաչվառնե՞ն ասած պարիսպների վրայով մամ գան։ Վոյեվոդանե՞րը... Հիմ քոթուկնե՞ր...

Այդ ժամանակ Ալեքսաշկան զգուշորեն, աչքերը ցած գցած, ասաց.

— Պյոտր Ալեքսեևիչ... Էս երեք օրը զորքն ինձ տուր... Ատված վկա... Հը՞...

Ասես չլսելով, Պյոտրը ձեռքը գրպանը տարավ՝ քսակը հանելու։ Ֆսֆսացնելով, ծխախոտն էր մշրում մատով։

— Վաղվանից գլխավորագույն հրամանատար է նշանակվում հերցոգ ֆոն Կրոին։ Տխմարը տխմար է, բայց գործը Եվրոպայի ձևով գիտե, մարտական է... Մեր օտարերկրացիներն էլ ավելի շարժուն կլինեն նրա ձեռքի տակ... Լսիր, դու պատրաստվիր, մինչև լուսաբաց գնալու ենք...

Ֆսֆսացնում էր։ Մոմը մոտեցրեց, ծխամորճը կպցրեց։ Ալեքսաշկան կամացուկ հարցրեց.

— Պյոտր Ալեքսեևիչ, ո՞ւր ենք գնալու։

— Նովգորոդ։

Պյոտրը վերջապես նայեց Ալեքսաշկայի՝ չտիզանց գարմանքից չոված թափանցիկ-կապույտ աչքերին։ Հանկարծ թունդ կարմրեց (քրտնած ճակատի լայնությամբ փքվեց երակը) և գայթուլթը գսպելով, ասաց.

— Էն լակոտը կորցնելու բան չունի, իսկ ես ունեմ... Կարծում ես Նարվայի տակ է սկիզբն ու վերջը։ Պատերազմի սկիզբն է միայն... Պիտի հաղթենք... Իսկ էս զորքով հաղթողը չենք... Հասկացա՞ր։ Պետք է սկսել թիկունքից, գումակի սայլերից... Թուրը քաշած արշավելը ամենավերջին գործն է... Հիմար, Կաղլոսից ավելի քա՞շ ես ուզում լինել։ Աչքե՛րդ իջեցրու։ (Դեմքով կատաղություն անցավ։) Շհամարձակվես ինձ նայել։

Ալեքսաշկան չլսեց, աչքերը չիջեցրեց, այլող ամոթից արցունք էր հավաքվել աչքերի մեջ, ձգված այտի վրայով սողաց կաթիլը։ Պյոտրը նեղ բիբերը հառել էր նրա վրա։ Երկուսն էլ չէին շնչում։ Պյոտրը հանկարծ ծիծաղեց քթի տակ։ Եռ ընկնելով պատին, ձեռքերը խոր մտցրեց գրպանների մեջ։

— «Մին խե՞ղ»,— տնազ արեց Ալեքսաշկայի ձայնով։— Սրտակից իմ ընկեր... Ամաչեցի՞ր ինձ համար։ Համբերիր, մի բան էլ որ լինի, բոլորը քիթումոլոթներն են շրջելու։ Կաղլոսից վախեցավ... Զորքը լքեց... Քշեց Նովգորոդ, ճիշտ ինչպես էն ժամանակ՝ Տրոիցե... Լավ... Երեսդ սրբիր։ Գնա դիմավորիր, պարոնայք գեներալները ժամանեցին...

Ժամապահների բղավոցներ։ Պայտերի դոփյուն սառած հողի վրա։ Ջահերի լույսը՝ պատուհաններից այն կողմ։ Խթանները զնգացնելով, մտան հերցոգը և գեներալները՝ քամուց կարմրած, անհանգստացած՝ ի՞նչ է պատահել այս ուշ ժամին... Պյոտրը գլխով արեց նրանց, մոտենալով հերցոգին, գրկեց։ Մենշիկովին նշան արեց, որ մոմը վերցնի, ու գնաց տախտակյա միջնորմի ետևը։

Մենշիկովն ալտեղ մոմը դրեց թղթերով ու ծխախոտի փշուրներով ծածկված սեղանին։ Բոլորը կանգնած էին։ Պյոտրը նստեց, վերցրեց թուղթը, շրթունքները շարժելով մտքում կարդաց վրան մոխիր ցանած, գրած-ջնջած տողերը։ Հազաց և առանց որևէ մեկին նայելու.

— Իմ գոտանամ, հանուն աստուծո,— սկսեց կարդալ խուռածայն, հաստատուն։— Քանզի նորին ցարական մեծությունը կարևորագույն գործերով հեռանում է զորքից, այդ իսկ պատճառով զորքը հանձնում

ենք նորին իշխանական պայծառափայլություն հերցոգ ֆոն Կրուիին, ներքոհիշատակյալ կետերով... (Ուղիղ սեղանի մոտ կանգնած հերցոգը ցնցեց ազդրը: Պյոտրը նայեց որմզդեղնի սպիտակ կաշվի մեջ ձգված նրա նիհար ազդրին, ապա սրի ոսկյա կոթը բռնած չոր ձեռքերին:) Կետ առաջին. նորին պայծառափայլությունը գլխավորագույն հրամանատար է կարգվում... Երկրորդ՝ բոլոր գեներալները, սպաները, մինչև անգամ զինվորները գտնվում են նրա, ինչպես նորին ցարական մեծության հրամանի ներքո... Երրորդ... (Ձայնը բարձրացրեց:) Անհապաղ և բոլոր միջոցներով գրավել Նարվան և Իվան-գորոդը... Չորրորդ... Գեներալների, սպաների և զինվորների չենթարկվելու դեպքում պատժել նրանց որպես հպատակների, մինչև իսկ մահապատիժ սահմանելով...

Հերցոգի կողքով գեներալներին նայեց Վեյդեն, հավանություն տալով, գլխով էր անում, իշխան Տրուբեցկոյի բրտնած դեմքն ուռել էր, Բուտուլինի ալեհեր, խուզած մազերը շարժվում էին նեղ ճակատի վրա, Ավտոնոմ Գոլովինը գլուխը կախել էր շատ ցած, ասես խայտառակությունն ու փորձանքն արդեն ուսերին էին բարդվել:

— Նորին պայծառափայլությունը նմանապես խիստ պիտի հետաքրքրվի շվեդներին հասնող օժանդակությամբ: Երբ հավատի կտեղեկանա Կառուլուս թագավորի տեղ հասնելու մասին և եթե նա շատ ուժեղ կլինի, խստիվ պիտի հսկի, որ Նարվա քաղաք չմտնի, և ամենօր օգնությամբ ապպատակելու միջոցներ որոնի... Բայց ավելի լավ է սպասել, եթե հնարավոր եղավ, մինչև օգնությունը հասնի... (Թերթիկն իջեցրեց և ասաց հերցոգին:) Ռենսնինը և գետմանը կազակներով ու զինամթերքի գումակները մի քանի օրվա ճանապարհի վրա են... (Գոլովինին:) Նստիր, մաքրագրիր...

Նախասենյակից դուռը ծեծեցին: Մենշիկովը, մտահոգված, խոհանոց խցկվեց: Ինչ-որ մեկը ներս մտավ՝ բաց դռնից քամու աղմուկի հետ բազում և հեռավոր բղավոցներ լսվեցին: Ինչ-որ մեկին հրելով, Պյոտրը խոհանոց մտավ:

— Ի՞նչ է պատահել,— բղավեց սարսափելի ձայնով:

Նրա դիմաց մի պատանի էր կանգնած՝ նիհարած, օրիորդի պես վարդագույն դեմք ուներ, կնատ էր, աչքերը՝ համարձակ, ականջի վրա շեկ մազերը իրար էին կպել լերդացած արյունով...

— Պավել Ցագուժինսկին է, Բորիս Պետրովիչ Շերեմետևի պորուչիկը,— արագ ասաց Մենշիկովը:

— Է՞:

Պատանու դեմքը ցնցվեց: Քիթը վեր ցցելով հարցրեց.

— Տեր արքա, Բորիս Պետրովիչն ուղարկել է հարցնեմ՝ որտե՞ղ կանգնեն գնդերը:

Պյոտրը լուռ էր: Գեներալները վախեցած խռնվել էին միջնորմի դռան մոտ:

Մենշիկովը, շտապ հագնելով կիսամուշտակը, նետեց.

— Խայտառակ փախել են Պիգաիոկի մոտից... Գլխարկնե՞րն էին շպրտում... Ազնվականնե՞ր...

Նոյեմբերի տասնյոթի առավոտյան ժամապահներից իմանալով, որ շվեդական հեծելապարեկները գիշերով, ծովի ափով անցել են կիրճերի մոտով, ելնելով թիկունք՝ ոեվելյան ճանապարհը, ազնվական աշխարհազորի անկանոն գնդերը խառնվել են իրար և չլսելով Բորիս Պետրովիչ Շերեմետևին, սկսել են հեռանալ Պիգաիոկից, վախենալով կտրվել գլխավոր զորքից: Շերեմետևը մոտեցել է շարախախտ հարյուրյակներին, բռնել սանձերից, ձայնը կտրվել է գոռալուց, մտրակով խփել է ձիերին ու մարդկանց՝ ետևից սեղմել են, նահանջողների ալիքի տակ նրա ձին ընդամենը պտտվել է տեղում: Հաջողվել է միայն մի քանի հարյուրյակ հավաքել, թիկունքը պաշտպանելու և զինվորական գումակի մի մասը փրկելու համար շվեդներից, որոնք հայտնվել են արևածագին՝ երկաթյա գրահներով ու շերտավոր սաղավարտներով, ժայռապատ բոլոր բլուրների վրա: Ծվեդները չեն հետապնդել: Ազնվական գնդերը հեռացել են ոչ արագ: Եվ գիշերով հայտնվել են Նարվայի ճամբարի ցցապատնեշի առաջ: Հողապատնեշի պահակները, մթության մեջ հակառակորդի տեղ դնելով, կրակ են բացել: Զինվորները հուսակտուր բղավել են. «Ձերոնցից ենք, ձերոնք ենք...»: Հետո արթնացել ու աղմկել էր ամբողջ ճամբարը:

Ցցապատնեշից ներս թողեցին պորուչիկ Պավել Ցագուժինսկուն, որը պացավ ցաթի մոտ: Մոլեգնել էր սառնաշունչ քամին: Ձիերից իջած ատիճանավորները կանգնել էին փոսի մյուս կողմում, բարձրացրած կամրջակների մոտ: Ցցապատնեշի վրայից բղավում էին. «Կալվածատերեր, էս ի՞նչ շուտ վազեցիք-եկաք... Ուզում եք պաշարման ենտե՞ք, հարազատներ...»: Ճամբարով մեկ թմբուկներ զարկեցին, լապտերակիր ձիավորներ թռան դեսուդեն: Գնդերում և հարյուրյակներում դրոշների տակ կարգում էին զորքը փառապանծ և անպարտելի կայսրական հերցոգ ֆոն Կրուիին հանձնելու մասին ցարական հրամանագիրը: Զորքը լուռ էր, զարմանքից ու սարսափից քարացած: Շուտով թև առած լուր տարածվեց, որ ցարն այլևս ճամբարում չէ և շվեդները, ամբողջ ուժերը հավաքած, հինգ վերստի վրա են:

Ոչ ոք չէր քնել: Խարույկներ էին վառում՝ քամին ցրիվ էր տալիս: Լուսադեմին Շերեմետևի հեծելազորը տարան աջ թև: Ցցապատնեշից չանցնելով, գնդերը կանգնեցին հենց ափին, այնտեղ, ուր Նարովան, քաղաքից վեր, կատաղած խշշում էր սահանքների կղզյակների արանքում: Լուսացավ՝ շվեդները չէին երևում: Ուղարկված դետքերը մոտակայքում ոչ մի տեղ թշնամի չհայտնաբերեցին, չնայած շերեմետևականները երդվում էին, որ թշնամին կրնկակոխ հետապնդում էր Պիգաիոկից սկսած:

Եղջերափողերի խռպոտ կանչերի տակ, շքեղ թիկնոցով, մարշալական գավազանը կողին հենած հերցոգը, նրանից կես ձիաչափ ետ ընկած գեներալներ Գոլովինը, Տրուբեցկոյը, Բուտուլինը, Իմերեթյան արքայազն և իշխան Յակով Դոլգոռուկին շրջեցին ճամբարում: Ձեռնոցի կողով կախ ընկած բեխերը ցցելով, հերցոգը բղավում էր

զինվորներին. « Ողջույն, քաջեր: Կը մեռնենք անուն մեր տեր ցառի»: Բոլոր գնդերում թմբկազարկի տակ հրաման կարդացին.

«...Գիշերը զորքի կեսը կազմ ու պատրաստ լինի... Լուսաբացից առաջ զինվորներին բաժանել քսանչորսական փամփուշտ գնդակներով: Արևածագին ամբողջ բանակը շարվի և երեք թնդանոթազարկի նշանով նվագախումբը նվագի, թմբուկները զարկեն, բոլոր դրոշները կանգնեցնեն ռետրանշեմենտներին: Չկրակել, մինչև հակառակորդը չմոտենա երեսուն քայլի վրա...»:

Գիշերը քամին փոխվեց դեպի արևմուտք, ծովից էր փչում: Տաքացավ: Մթության մեջ շվեդական գեներալ-մայոր Ռիբինգը երկու ռեյտարների հետ, հրամայելով ձիերի սմբակները թաղիքով փաթաթել, գաղտնի մոտեցավ ցցապատնեշին, չափեց խանդակի խորությունը և պատնեշի բարձրությունը:

Ծաղ պես քաղցած, ամբողջովին քամահար Ալեքսեյ Բրովկինը քայլում էր հողապատնեշի վրայով՝ երեք քայլ առաջ, երեք քայլ ետ, վաշտի զինանշանի մոտ: Հողապատնեշը ձգվում էր յոթ վերստ, զինվորները ցանցառ շարքով էին կանգնած: Եղջրափողերը կանչեցին, թմբուկները զարկեցին: Թնդանոթները, մուշկետները լցված էին, պատրույգները մխում էին: Քամին ծածանում էր դրոշների պատառները: Առավոտյան ժամը տասնմեկն էր...

Ալեքսեյն ամբողջ ուժով ձգեց գոտին: Նոր գլխավորագույն հրամանատարը ամեն ինչ հոգացել էր, միայն կերակրելն էր մոռացել: Քանիերորդ օրն էր զինվորները, շարային հրամանատարները՝ նույնպես, պաքսիմատ էին ծամում, պայուսակներից փշուրները հավաքելով: Այդ գիշեր պաքսիմատ էլ չէին տվել: Զինվորները խրտվիլակների պես էին ցցված հողապատնեշի վրա (Բրովկինի վաշտից ութսուն առողջ զինվոր էր մնացել:) Կար ժամանակ, որ Ալեքսեյն, օ՜հ, ինչպես էր սպասում մարտին, վաշտն առաջնորդեր թնդանոթի ծխերի միջով, անձամբ ձեռքը գցեր հակառակորդի դրոշի կոթին... («Շնորհակալ եմ, Ալեքսեյ, քեզ գնդապետի կոչում եմ շնորհում...»): Այսօր միայն մի բան էր ուզում՝ մտներ գետնափորի տաք գարշահոտության մեջ, ջրիկ վոդկա գդալեր ամանից, որ կոկորդը վառեր...

Քամուց աչքերը կկոցած, Ալեքսեյը բղավեց ամենամոտ կանգնածի վրա՝ Գոլիկովն էր.

— Ինչ ես բերանդ բացել, խրոխտ կանգնիր:

Գոլիկովը չլսեց՝ պատառոտված ուսերը տնկած, սրաքիթ դեմքը պարզել էր, ասես մահն էր տեսել... Մյուս զինվորները նույնպես բուրդը ցից շների նման նայում էին Գերմանաբերգ բլրի կողմը: Արագ թռչող ամպերի մեջ երևում ու ծածկվում էր ցածրիկ արևը: Կոճղերի ու մերկացած կեչիների արանքով ծանր բեռնված մարդիկ էին շարժվում, ավելի ու ավելի շատանալով անտառի խորքերից: Ուսերից գցում էին պարկերը և հակերը, առաջ վազում, լայն ու հոծ շարասյուներ կազմելով: Վեցալուծ ձիերով ելնում էին թնդանոթները, մի մասը ուղիղ դեպի ներքև, մեջտեղի ռեդուտի կողմը, մի մասը գետակի վրայով,

քառատրոփ, դեպի Վերդեի ուժեղ ամրությունները, մնացածը դեպի աջ էր սլանում հարթավայրով: Հետևակ վեց շարասյուն շարվեց Գերմանաբերգ բլրի վրա: Կրկնակի աղոտ երկաթյա շարքերով անտառից ելավ հեծելազորը:

Ալեքսեյը բղավեց, ձայնը փոխված.

— Թմբկահարնե՞ր, մարտական տագնա՛պ:

Հողապատնեշի վրա բարձրացան բեխավոր ենթասպաները, հոնքերին քաշելով եռանկյունի գլխարկները, որ քամին չթոցնի: Կտկտացին թմբուկները... Լեոպոլդուս Միրբախը, հայտնի չէ թե ինչից ուրախացած, մատով ցույց էր տալիս ու բղավում Ալեքսեյին. «Տեսեք, ա՜յ, այն ձիու վրայինը Կայոս թագավորն է»: Շվեդների շարասյուները՝ սարսափելի իրենց ուղիղությամբ, կանոնավորությամբ, ասես ոչ թե մարդիկ լինեին, այլ անգգա ու անմահ արարածներ, սև-կապույտ շարքերը հոնելով, իջնում էին բլուրից... Այնտեղ, բարձրում, հինգ-վեց հեծյալ էին կանգնած, և բարակիրան մեկը առջևում ձեռքն էր թափ տալիս, նրա մոտ էին շտապում հեծյալները և սլանում ցած, դեպի շարասյուները:

Քամին ճկում էր դրոշների ու զինանշանների կոթերը հողապատնեշի վրա, հոգի ծվատելով ճարճատում էին թմբուկները: Կապարաձնագույն մի ամպ ելավ ծովի կողմից, արագորեն ծածկեց երկինքը: Վեցալուծ չորս թնդանոթ, խանդակից երկու հարյուր քայլի վրա կանգ առան, հանեցին քարշակները, Բրովկինի վաշտի դիմաց, միանգամից շրջեցին, մոտ բերեցին լիցքի կանաչ արկղները, գնացին: Մուգ կապույտ մունդիրներով ամրակազմ մարդիկ ցած թռան ձիերից, կանգնեցին թնդանոթների մոտ: Վազքով, շարքի ուղիղությունը չխախտելով, մոտեցավ հետևակ շարասյունը՝ սպիտակ թևքաձալերով մի քանի հոգի առաջ պոկվեցին... Փայլատակող թրերի շարժման տակ շվեդների շարքերը զույգ դարձան, տարածվեցին մարտկոցի երկու կողմում, կռացան, և հողի գուղձեր սկսեցին վեր թռչել...

Ալեքսեյը, ձեռքերը բերանին դրած, բղավում էր քամու տակ. «Պարոնայք պրապորշչիկներ... Հայտնեք ենթասպաների՞ն... Հայտնեք զինվորների՞ն... Առանց հրամանի չկրակե՛լ՝ մահվան սպառնալիքով...»: Լեոպոլդուս Միրբախը երկար բոտֆորտներով վազ տվեց հողապատնեշի վրայով, գերմաներեն բղավելով, սպառնալով ձեռնափայտով... Կեղտանմուռ Ֆեդկան (մորուքն աճած, կեղտոտ, իսկը խրտվիլակ) չարացած բացեց ատամները՝ Լեոպոլդուսը խփեց նրա գլխին... Քամին պոկում էր կաֆտանների փեշերը, ինչ-որ մեկի գլխարկը թռավ շատ բարձր...

Ալեքսեյը շրջվեց սեփական մարտկոցի կողմը. «Դե, դե... Շուտ արեք»: Վերջապես ծանր դղրդյունից ականջները բռնվեցին... «Սատանաներ... Կրակել չգիտեն...»: Ի պատասխան, շվեդական չորս թնդանոթները, ետ շպրտվելով, կրակ ժայթքեցին... Կես վերստ հեռվից, առանձնահատուկ և հանդիսավոր, թնդացին «Ադոնիս» ու «Արջը»... «Օհ, մերոնք ինչքան են դանդաղում...»: Չորս լուծը կրկին մոտեցավ, թնդանոթներն առավ ու ավելի մոտեցրեց հողապատնեշին: Թնդանո-

թանձիգները վազքով էին մոտենում. մաքրեցին, լցրեցին, ետ ընկան՝ երկուսը անիվների մոտ, երրորդը պպզեց, պատրույգը բռնած։ Սպիտակ թեքածալով մարդը բարձրացրեց սուրը... Համազա՛րկ... Չորս արկ շրմփացին ցցապատնեշի սոճենու գերանների, երկաթյա ճզլոցով պատառոտեցին, ցրիվ եկան տաշեղները։ Ալեքսեյը ետ-ետ գնաց, ընկավ։ Վեր թռավ... Թռուցիկ, բայց զարհուրելի հստակ (հետո հիշում էր ամբողջ կյանքում) տեսավ. գուղձապատ դաշտով, փոսի երկայնքով, գորշաճերմակ ձիով պանում էր ուղիղ, մատի պես բարակ մի պատանի, փոքր եռանկյունի գլխարկով, որի տակից կաշվե տոպրակի մեջ դրած մազափունջն էր ելնում-իջնում, ոտքերը ոչ ռուսական ձգված էին առաջ, մինչև կրունկը ասպանդակների մեջ խրած, ճեղ դեմքը արհամարհանքով ուղղված էր ցցապատնեշից կրակողներին կողմը, ետևից երկու տասնյակ զույգ ու հավասար շարքերով գրահակիրներ էին արշավում բավական ոսկրոտ ձիերով, գլուխ-գլխի... «Տեր աստվա՛ծ, ողորմա»՝ լսվեց Գոլիկովի հուսակտուր ճիչը...

Ցածրընթաց ամպը արագորեն ծածկեց ամբողջ երկինքը։ Օրն արագ մթնեց։ Ջլան շղարշը պարուրեց ճամբարը, սրարշավ գրահակիրների շարքերը, շվեդական շարժվող շարասյուները։ Քամու ոռնոցի միջից կաղկանձում էին թնդանոթները՝ աղոտ ցոլքերով բռնկվում էր բոցը։ Ծոնում, քանդվում էր ցցապատնեշը։ Արկերը կատաղորեն սուլում էին գլխավերևում։ Բուքը պտտահողմ դարձավ, շեղ ու ծակող ձյունը խփում էր դեմքերին, լցվում աչքերը։ Չէր երևում ոչ այն, ինչ առջևում էր, փոսի մյուս կողմում, ոչ այն, ինչ արդեն քառորդ ժամ ծայր էր առել ճամբարում։

Ալեքսեյի վրա ընկավ գլխապատառ վազող, կռացած, ոչ իր վաշտի մի զինվոր... Ալեքսեյը բռնեց նրա կողերից... Զինվորն ադեկտուր բղավեց. «Ծախեցի՛ն...», պոկվեց, չքացավ բքի մեջ... Միայն այդ ժամանակ Ալեքսեյը նկատեց, թե ինչպես պտտվող շղարշի միջից փոսի մեջ ընկնել սկսեցին կարծես թե ջախի կապուկներ։ Երեսից ձյունը սրբելով, բղավեց.

— Կրա՛կ... Կրա՛կ...

Փոսի մեջ արդեն իրար էին անցել ճարպիկ մարդիկ...

(...Շվեդական գրենադերները, որոնց մեջքին էր խփում ձյունը, մոտ վազելով, սկսեցին փոսը լցնել ջախով, ու դրանց վրայով, առանց սանդուղքի, ելան ցցապատնեշի վրա...)

...Ալեքսեյը տեսավ նաև. ետ-ետ գնալով, կրակեց Գոլիկովը, սվինը շարժում էր առաջ բռնած... Խոշոր, ձնածածկ մի մարդ ոտքը գցեց ցցապատնեշի վրայով, բռնեց սվինը՝ Գոլիկովը մուշկետն իրեն էր քաշում, այն մարդը՝ իրեն... Ալեքսեյը դժժաց խոզի պես, երբ նրան խոցեց սուսերով։ Նորից ու նորից մարդիկ էին լցվում, ասես ձնահողմն էր նրանց քշում-բերում... Ալեքսեյը խոցում էր, թե վրիպելով, թե փափուկ ինչ-որ բանի դեմ առնելով... Ցավ ժայթքեց աչքերից՝ գանգը, ամբողջ դեմքը ճապաղվեց հարվածից...

...Գոլիկովը չէր հիշում, թե ինչպես գլորվեց փոսը... Չորեքթաթ սողում էր, համակված կենդանական սարսափով... Կողքով, ձեռքերը

թափ տալով վազեց ինչ-որ մեկը, ետևից՝ սվինները պարզած երկու շվեդ, մոլեգնած, լայնամարմին... Գոլիկովը պառկեց բզեզի պես։ «Ախ, ի՜նչ տեսակ են մարդիկ...»։ Բարձրացրեց գլուխը՝ ձյունը լցվեց բերանը։ Վեր թռավ, օրորվելով, իսկույն դեմ ընկավ երկու հոգու... Կեղտաճմռուտ Ֆեդկան փորով ընկած էր Լեոպոլդուս Միրբախի վրա, մատները հասցնում էր կոկորդին... Լեոպոլդուսը պոկոտում էր Ֆեդկայի մորուքը... «Չէ՜, սատանա»,— խոխոջացնում էր Ֆեդկան, ուսերով վրա ընկնելով... Անդրեյը վազեց... «Ախ, ի՜նչ տեսակ են մարդիկ...»։

Շվեդների մեջտեղի շարասյունը՝ չորս հազար գրենադեր, ամբողջ մոլեգնությամբ հարձակվեց Ավտոմոն Գոլովինի դիվիզիայի վրա... Ցցապատնեշի վրա մարտը քառորդ ժամ տևեց։ Բքից կուրացած, սովատանջ ռուսները, չհավատալով հրամանատարներին, չհասկանալով, թե հանուն ինչի պիտի մեռնեն այս ձնե դժոխքում, ընկրկեցին հողապատնեշից... «Տղե՛րք, մեզ դավաճանե՞լ են... Խփե՛ք սպանելին...»։ Անկանոն կրակելով, վազում էին ճամբարում, միմյանց ոտատակ տալիս փլչած փոսերի մեջ ու մարտակոցների հողասակառների վրա... Ճզմեցին ու իրենց հետ տարան Տրուբեցկոյի գնդերը։ Հազարավոր մարդիկ փախչում էին դեպի կամուրջները, դեպի գետանց...

Շվեդները շատ չհետապնդեցին նրանց, վախենալով բքի մեջ կորել այդ վիթխարի ճամբարում... Խոպոտ շեփորները հրամայական կանչում էին՝ դեպի ետ, դեպի հողապատնեշ... Բայց գրենադերների մի մասը դեմ առավ արգելափակոցի՝ այն կողմը գումակներն էին... Գրենադերները բղավեցին. «Միթ գոտս հիլֆ, հանուն աստուծո...» և գրոհով գրավեցին գումակը։ Զնածածկ խարիների տակ գտան աղ դրած նեխած մսի տակառներ ու օղու տակառիկներ։ Ավելի քան հազար գրենադեր մինչև մարտի ավարտն այդտեղ էլ մնաց, կոտրած տակառիկների մոտ... Սայլերի արանքներում վազվզող ռուսներից ոմանց սրախողխող արեցին, ոմանց քշեցին դեմ։

Հետևակից հետո շարդուփշուր դարպասով ճամբար խուժեց հեծելազորը՝ ուղիղ դեպի գլխավոր ռեդուտ։ «Աղյուծ» և «Արջ» թնդանոթները գրավեցին լծած վիճակում, սպասարկող անձնակազմը թրատեցին, գլխից վիրավորված հրամանատարը՝ Յակով Վինտերշիվերկը հանձնեց սուրը։ Թնդանոթները շրջեցին դեպի արևելք ու սկսեցին ոմբակոծել Վեյդեի ամրությունները։ Շվեդներն այստեղ համառ դիմադրության հանդիպեցին. ամբողջ դիվիզիան Վեյդեն հանել էր ցցապատնեշի վրա, քառաշարք ու հոծ, ինքն էլ սպայական տեգով խոցում էր վեր մագլցող շվեդներին։ Զինվորները ետևում լցնում էին մուշկետները, առջևինները կրակում էին հերթաշար... Ամբողջ խանդակը լիքն էր սպանվածներով և վիրավորներով։ Երբ արկերը սկսեցին տեղալ գլխավոր ռեդուտից ու ճանաչեցին «Աղյուծի» և «Արջի» ձայները, Վեյդեն, ձի նստած, անցավ հողապատնեշի վրայով. «Տղե՛րք, պինդ կացեք...»։ Միշտ ձիու տակ ռումբ պայթեց, ու տեսան՝ թռչող ձյան, ծխի մեջ նրա ձին ծառս ելավ, շրջեց ու ընկավ...

Ծերեմետևի հեծյալ գնդերը կանգնած էին՝ սեղմված գետին, Վեյդեի ցցապատնեշի ու անտառի արանքում: Ձնե փոթորիկ էր շպրտվում դեմքներին, թիկունքում ոռնում էր Նարովան: Աջից հեռվից ա:ելի հաճախ էին կրակում թնդանոթները... Շատ մոտիկից, ցցապատնեշի վրա մուշկետային փոխհրաձգություն սկսվեց, այնպիսի բղավոցներ ու մահաբերուտ աղաղակներ հնչեցին, որ բոյարական զավակների մազերը ցցվեցին մորթե գդակների տակ...

Բորիս Պետրովիչը բլրի վրա էր, իր զորքի կենտրոնում: Հեռադիտակը գրպանն էր դրել՝ ձիու ականջներն էին հազիվ երևում... Հասկանալի չէր, թե ինչ է կատարվում ճամբարում: Ապարդյուն սպասում էր գլխավոր հրամանատարի հրամանին: Բայց նա կամ մոռացել էր ազնվական հեծելազորի մասին, կամ չէին գտնում իրենց, կամ մի վատ բան էր եղել...

Կրակոցներ լսվեցին ձախ թևից, թերևս անտառից: Բորիս Պետրովիչն ականջ էր դրել, ասպանդակների վրա կանգնած: Կանչեց երիտասարդ իշխան Ռոստովսկուն.

— Վերցրու չորս հարյուրյակ, հոգյակս, մտեք անտառ, թշնամուն դուրս քշեք այնտեղից... Ասված ձեզ հետ...

Ծղագրանով ու երկաթյա սաղավարտով սառույց կտրած իշխանը անհասկանալի ինչ-որ բան պատասխանեց, իջավ բլրից... Եվ անտառից ճայթեց թնդանոթը: Մի ձայն մահացու ոռք էր սկսել: Ու միանգամից՝ աջից, ձախից, դիմացից ճարճատեցին մուշկետները: Բորիս Պետրովիչը շուրջը նայեց, որ «Սրերը քաշե՞լ, ատոծո օգնությամբ առա՞ջ...» հրամայի: Սակայն մարդ չկար, որ հրամայեր. ձիու գավակներ էին շարժվում բլուրն ի վեր... «Կորանք, կորանք, փախեք գետի վրայով»՝ բղավեցին հազարավոր ձայներ: Բորիս Պետրովիչին մի բան էր մնում. ոտատակ չգնալու համար ձին թեքել. աչքերը խփեց, լաց եղավ, երասանը ձգելով...

Ոռնոց, վայրի բղավոցներ... Ձիերի տնկած գլուխների, փռչոտ բաշերի, ձյունով ծածկված մեջքերի ալիքվող հեղեղ էր սուրում դեպի գետը: Ափը գառիթափ էր, ձիերն իջնում էին գավակներին ճկուած, դեմ տալով առջևի ոտները, ետևից եկողները մխրճվում էին զանգվածի մեջ, ցատկում ընկնողների վրայից... Բքի շղարշի տակ դեղին ջրի մեջ պտտվեցին ձիերի մոռթները, մարդկային խեղդվող դեմքեր, ջրապտույտների միջից ձեռքեր էին երևում, որոնք ջղաձգորեն օդն էին բռնում... Ձիավորների նորանոր հարյուրյակներ էին լցվում Նարովան՝ լողում էին, պայքարում հոսանքների դեմ, խեղդվում...

Բորիս Պետրովիչի ընտիր ձին ելավ գետի մեջտեղի կղզյակը, կողերը շարժելով կանգնեց, զգուշորեն նորից մտավ ջուրը, ատամները մերկացրած լողաց, հասցրեց մյուս ափը...

Մարտի դաշտը պատած բուքը շվեդների համար թերևս ավելի վտանգավոր էր, քան ռուսների: Հարձակվող զորասյուների միջև կապը խախտվել էր, հանձնակատարներն ապարդյուն թափառում էին ձնաճոռոմի մեջ, փնտրելով գեներալներին և թագավորին: Ծեշտակի

հարվածներով հակառակորդի թևերը խորտակելու, շրջապատելու և դեպի բերդը, բաստիոնների կրակի տակ սեղմելու համարձակ պլանը չհաջողվեց. ռուսների կենտրոնը իսկույն ճեղքվեց՝ Ավտոմոն Գոլովինի զորքերը խառնիխուռն նահանջեցին, կորան ձնաճոռոմի մեջ, սակայն թևերը պաշտպանվում էին անսպասելի համառությամբ, հատկապես աջը, ուր լավագույն Սեմյոնովյան և Պրեոբրաժենյան գնդերն էին:

Չորրորդ ժամն էր արդեն, կրակոցները չէին մեղմվում: Ձյունը թափվում էր պտտվելով: Մինչև մութն ընկնելը հարկ էր մարտն ավարտել հաղթությամբ, այլապես ճամբարի կենտրոն խուժած շվեդների բզկտված ու հոգնած չորս գումարտակները կարող էին իրենց հերթին շրջապատվել ու ոչնչացվել, եթե ռուսները վերջապես համարձակվեին ելնել ցցապատնեշի ետևից. թևերում համեստ հաշվարկներով տասնհինգ հազար թարմ զորք ունեին:

Ճակատամարտի սկզբին Կառլոսը, գրահակիրների երեք էսկադրոնով, գտնվում էր Շտենբոկի և Մայդելի զորասյուների արանքում, կենտրոնի և աջ թևի գրոհը միաժամանակ տեսնելու համար: Եվ հենց այստեղ բուքը վրա տվեց: Հարձակվող զորասյուները ծածկվում էին ձյան շղարշով, չէին երևում նույնիսկ հրանոթների արձակած բոցերը: Քիթը տնկած, ատամները սեղմած Կառլոսը ունկնդրում էր մարտի սարսափեցնող ձայները: Գեներալ Ռոնշելդի համարգը թափով կանգնեցրեց ձին և զեկուցեց, որ գրենադերները ճեղքել են կենտրոնը և ռուսներին քշում են ճամբարի խորքը: Բռնելով սպայի ուսից, Կառլոսը բղավեց նրա ականջին.

— Ասացեք գեներալին՝ թագավորը հրամայում է դադարեցնել հետապնդումը, գրավել կենտրոնական ռեդուտը, պատրաստվել պաշտպանության, սպասել հրահանգների...

Մեկը մյուսի ետևից սուրհանդակներ էր ուղարկում աջ թև՝ Ծիպենբախին, որն ապարդյուն գրոհում էր Վեյդեի ամրությունների գիծը... «Հայտնեք գեներալին՝ թագավորը զարմացած է»: Հրամայեց պահեստային երկու վաշտ ուղարկել նրան որպես օժանդակ ուժ, բայց այդ վաշտերը չգտան և չուղարկեցին: Շվեդները կատաղորեն գրոհում էին կիսավեր ցցապատնեշը, գեներալ Վեյդեն վիրավորված էր ոտքի բեկորից, ռուսները ձեռքն ընկածով շարունակում էին պաշտպանվել...

Վտանգը մեծանում էր րոպե առ րոպե: Երեկ ռազմական խորհրդում բոլոր գեներալները դեմ հանդես եկան Նարվայի տակ այդ խելահեղ օպերացիային. տասը հազար քաղցած, տանջահար, պարկերով բեռնված (շտապ հարձակման պարագային ստիպված էին թողնել գումակները) զինվորներով նետվել ուժեղ ամրությունների ետևում կանգնած տասնհինգհազարանոց բանակի վրա... Դա անզգույշ բան կլիներ... Սակայն Կառլոսն ասաց. «Ծահում է հարձակվողը, վտանգը բազմապատկում է ուժերը, վաղն իմ վրանը կբերեք Պյոտր ցարին...»: Նա գեներալներին շարադրեց իր դիսպոզիցիան՝ ամեն ինչ կանխատեսված ու հաշվի էր առած, բացի ձնաքքից...

Քիթը տնկած, թամբի վրա ձգված, ամբողջովին ձնակոլոլ, ականջ

էր դրել մարտի ձայներին: Վտանգն արբեցնում էր նրան: Այս խաղն անհամեմատելի էր նույնիսկ Կունգպոր անտառում արջի որսին: Քամին առանձնահատուկ ուժով էր տեղ հասցնում ձախ թևի կրակոցները, ուր գեներալ Լեվենհաուպտի գրենադերների երկու գումարտակ գրոհում էին սեմյոնովցիների ու պրեոբրաժենցիների դիրքերը: Մի՞թե այնտեղ ևս, ամենապատասխանատու տեղում, դեռևս հաջողություն չկա:

Շրջվելով, Կաղլոսը բռնեց ինչ-որ մեկի ձիու սանձը (ձին և հեծյալը չէին երևում ճնահողմից), բղավեց, որ պահեստի ուժերից չորս վաշտ ուղարկեն՝ Լեվենհաուպտին օգնության: Ձիու մռութը ցնցվեց, չքացավ: (Այդ վաշտերը նույնպես չգտնվեցին ու չուղարկվեցին:) Ձախից կրակոցներն ավելի էին սաստկանում: Ձյան ամպերի միջից ճնաձածկ մի հեծյալ դուրս պրծավ.

— Արքա... Գեներալ Լեվենհաուպտը օժանդակ ուժեր է խնդրում...

— Ես չորս վաշտ եմ ուղարկել նրան... Ես զարմացած եմ...

— Արքա... Ցցապատնեշը ջարդված է, փոսերը լցված են ջախով ու դիակներով... Բայց ռուսները քաշվել են ուղեփակոցների ետևը... Նրանք կատաղել են սարսափից ու արյունից... Հայհոյանքներ են բղավում ու նետվում սվինների վրա... Գեներալ Լեվենհաուպտը մի քանի վերք է ստացել և ձին կորցրած շարունակում է կռվել գինվորների առջևում...

— Ցույց տուր ճանապարհը...

Կաղլոսը հրեց ձին, ձյան և քամու տակ կռացավ, ասպանդակն ասպանդակին արշավեց ուղարկված սպայի հետ, ձախ թևի կրակոցների ուղղությամբ: Մարմինը թափանցող քամին կարծես երգում էր սրտում... Քամու, ձյան, կրակոցների թնդյունների այդ արբեցման մեջ հարկավոր էր զգալ կենդանի մարմնի մեջ խրվող շեղբի դիմադրությունը... Սպան ինչ-որ բան բղավեց, ցույց տալով դիմացը, ուր ձյան վրա դեղին մի բիծ էր տարածվել... Գետակի ճնաձածկ հունն էր դա: Կաղլոսը սեղմեց խթանները, ձին ծանր ցատկով անցավ դեղին ձյան վրայով ու խրվեց ճահճուտում, դուրս պրծնել փորձելով, ավելի թաղվեց գավակով՝ ռունգերը ճնախառն քամուն արած, խռխռացրեց: Կաղլոսը ցած թռավ՝ ձախ ոտքը մինչև աճուկը խրվեց տիղմի մեջ... Քաշեց, ոտքը հանեց բոտֆորտի միջից, չորեքթաթ, գլխարկը և սուսերը կորցրած, սողաց մյուս ափը, ուր ձիուց իջած սպան կանգնած ձեռքն էր պարզել...

Այդպես, մի բոտֆորտով, անգլխարկ, Կաղլոսը նստեց նրա դողդողացող, սառցե կեղևով ծածկված նիհար ձին, մի խթանով խփելով, արշավեց մոտակա կրակոցների, վայրենաձայն բղավոցների կողմը: Ձին ցատկոտում էր ձյունն թմբիկների վրայով՝ սպանվածներ էին կամ վիրավորներ... Առջևում աղոտ ստվերներ էին վազվզում: Կրակ ժայթքելով, որոտաց թնդանոթը... Անսպասելի մոտիկից նա տեսավ իր գրենադերների խառնիխուռն ամբոխը՝ զենքերին հենված, մռայլադեմ կանգնած, նայում էին այնտեղ, ուր կոխկրտված, արյունաշաղախ ձյան, սպանվածների կորացած մարմինների ետևում շեղակի տնկված

էին արգելապատերի սուր ցցերը: Ռուսների պատն էր ալիք տալիս մյուս կողմում: Ինչ-որ բան էին բղավում, սպառնալով մուշկետներով ու բունգքներով: Ըստ երևույթին, հենց նոր էին ետ մղել գրոհը...

Ձին քշեց գրենադերների վրա. «Սո՜ւր տվեք» գոռաց՝ կրակոցի պես: ...Շրջվեցին նրա կողմը, ճանաչեցին... Թամբի վրա կռացած, ձեռքը պարզած, չոել էր մատները. «Սո՜ւր: (Ինչ-որ մեկը երախակալը խոթեց նրա ձեռքը:) Զինվորնե՜ր: Ձեր թագավորի պատիվն այստեղ է, այս ցցապատնեշի վրա... Պետք է գրավել... Դուք այդ կեղտոտ բարբարոսներին կլցնեք Նարովան: (Բարձրացրեց սուրը, և իսկույն զիլ կանչեց շեփորը, միացավ երկրորդը, մեկ ուրիշը ևս՝ անտեսանելի, ճնահողմի ետևներում:) Զինվորնե՜ր... Ձեզ հետ է աստված և ձեր թագավորը... Ես գնում եմ ձեր առջևից... Իմ ետևի՜ց...»

Նա սլացավ արյունաշաղախ ձյան վրայով: Ետևից մռայլ ձայներ թնդացին. «Հանուն աստուծո՜»: Ցցապատնեշից այն կողմ հատուկենտ կրակոցներ լսվեցին: Մեկին աչքադրեց Կաղլոսը՝ հսկայահասակ ռուս էր, գլուխը կռացրած, կանգնել էր արկերից փշրտված ցցապատնեշի մոտ... Քթի տակ ծիծաղելով Կաղլոսը ձին ծառս արեց, գազանացած դեմքով ռուսը եղանի պես սվինը խրեց ձիու կուրծքը... Կաղլոսն ընկավ ձիու մեջքին, սահելով, ամբողջ ուժով ձգվեց և սուրը խրեց հրսկայի կուրծքը...

Սակայն ձիուց թռչելիս, նա օրորվեց... (Չորս կողմը ոռնացող բերաններ էին, երկաթի շաչյուն, խշրտուն հարվածներ:) Նրան հրեցին՝ ընկավ: Ծանր մի սապոգ սեղմեց մեջքը, թաղեց ձյան մեջ... Անմիջապես բռնեցին թագավորին, բարձրացրեցին, տարան... Մտքերը խառնվել էին... Կաղլոսն ուշքի եկավ թնդանոթի հարթակի վրա, գարշահոտ մի շինելի տակ: Շեփորները երկարուձիգ մարտավարտ էին փչում: Շինելը դեն նետելով, նստեց.

— Մեկնումեկի սապոգները բերեք, բոբիկ եմ ես... Սապոգ և ձի...

Գոլովինի և Տրուբեցկոյի խառնված գնդերը, գետանցից կտրվելու սարսափից, վազեվազ ափ հասան և այնպես խոնվեցին կամրջի վրա, որ լաստակամուրջները նստեցին՝ արևմտյան քամուց վարարած Նարովայի դեղին ջրերը լցվեցին ճաղերի վրայով: Այնտեղ, փրփրած ջրերի մեջ, ձյան վարագույրի տակ Շերեմետևի հեծելազորի ձիերի և մարդկանց դիակներն էին լողում, որոնք խեղդվել էին հինգ վերստ դեպի վեր, գետն անցնելիս: Ձիերի մարմինները խցանվել, կիտվել էին նստած կամրջի մոտ: Ափից սեղմում էին բղավող մարդիկ: Խախուտ կամուրջն ավելի թեքվեց աջ կողմով, ջուրը հորդաց տախտակների վրա, ճաղերը ճարճատեցին, կանեփե ճոպաններն սկսեցին կտրվել, մեջտեղի լաստակամուրջները ամբողջապես թաղվեցին ու բաժանվեցին: Ծաչող հոսանքի մեջ, ուր ձիերի և մարդկանց դիակներ էին պտտվում, թափվեցին նրանք, ովքեր կամրջի վրա էին: Աղաղակ բարձրացավ, բայց ետևից շարունակվում էին սեղմել՝ զինվորները հարյուրներով թափվում էին Նարովան, մինչև որ կամրջի պոկված կեսը խրվեց ճահճոտ ափի մեջ:

Այնտեղ, գետի մոտ հերցոգ Ֆոն Կրուիի վրանն էր կանգնած, Պրեոբրաժենյան և Սեմյոնովյան գնդերի թիկունքում: Ճամբարի հարավային և արևմտյան կողմերի ցցապատնեշների վրա ընթացող կատաղի մարտի երրորդ ժամն էր: Ընդեղեն այդ դժոխքում ոչ դեկավարել կարելի էր, ոչ տնօրինել... Վրանում, սեղանի մոտ, գլուխը ձեռքերի մեջ առած, նստած էր պրեոբրաժենյան գիրուկ գնդապետ Բլյումբերգը, մերթ ընդ մերթ քիթն էր քաշում: Նրա դիմաց սրտնեղված Գալլարտը արտնանունքներն էր թարթում մոմի վրա, հանգիստ սպասելով, թե երբ է հարկ լինելու սուրը հանձնել շվեդացի սպային՝ երախակալը առաջ, խոնարհվելով:

Վրան մտավ հերցոգը, գրահի վրայից եղջերվենու ձնակոլոլ մուշտակով. երեսկալը բարձրացրած էր, բեխերը սառած-կախված էին, շրթունքները դողդողում էին...

— Թող սատանան կովի այս ռուս խոզերի հետ,— բղավեց հերցոգը:— Մայոր Կունինգամը և մայոր Գաստը խեղդված են խրամատներում... Կապիտան Վալբրեխտը մորթված պառկած է այստեղ, վրանից տասներկու քայլի վրա... Ցարը գիտեր, թե ինչ է տալիս ինձ՝ բանա՞կ: Խաժամո՛ւժ, սրիկանե՛ր...

Գալլարտը շտապ ոտքի ելավ ու ետ գցեց գորգը՝ ձնափոշի լցվեց ներս: Բազմահազար ամբոխի ոռնոցը խլացրել էր կրակոցների ձայնը: Հերցոգը դուրս նետվեց վրանից: Ներքևում աղոտ երևում էր դեպի ափ քշվող կամուրջը, որի վրա բղավում էին մարդիկ: Աջից, ուր ճամբարի պատնեշը գետին էր հասնում, անհամար մարդիկ էին իրար անցել...

— Կենտրոնը ճեղքված է,— ասաց Գալլարտը,— դրանք Գոլովինի գնդերն են...

Զինվորները մագլցում էին պատնեշի վրայով, առանձին խմբեր վազում էին դեպի վրանը...

— Օ՜, սատանա՜,— բղավեց հերցոգը:— Ձի նստեք, պարոնայք:— Եղջերվենու մուշտակը վրայից պոկեց, գրահը խանգարում էր շարժումներին:— Օգնեք՝ հապա, օ՜, սատանա:

Հերցոգը, Գալլարտը և Բլյումբերգը ձիերը նստեցին, իջան դեպի ջուրը և խրուտ ափով ծանր-ծանր արշավեցին արևմուտք, շվեդների կրակոցներին ընդառաջ՝ գերի հանձնվելու, որ դրանով փրկեն իրենց կյանքը գազազած զինվորներից:

Մթնեց, քամին խաղաղվեց, փափուկ ձյուն էր տեղում: Երբեմն առանձին կրակոց էր լսվում: Ռուսական ճամբարում լուռ էր, ինչպես գերեզմանատանը, ոչ մի կրակ չկար... Միայն կենտրոնում, գրաված գումակում, շվեդացի հարբած գրենադերները երգում էին խռպոտ ձայներով: Վառվող տակառների բոցը լուսավորում էր ձյան շղարշը, որ իջնում էր սաստիկ հարբած և մեռած մարդկանց վրա:

Ավտոմոն Գոլովինը, Տրուբեցկոյը, Բուտուլինը, Իմերեթյան արքայազն Ցակով Դոլգոռուկին, տասը գնդապետներ (նրանց մեջ էին փառապանծ գեներալ Գորդոնի որդին և Ֆրանց Լեֆորտի որդին), փոխգնդապետներ, մայորներ, կապիտաններ և պրոուչիկներ՝ ութսուն նրամանատարներ, հեծյալ և հետիոտն, հավաքվել էին գետնափորի մոտ, ուր խորհրդակցում էին գեներալները: Հենց նոր բանագնացներ էին ուղարկվել թագավոր՝ մոտ՝ իշխան Կոզլովսկին և մայոր Պիլը, բայց դեռ էին սառել իրենց իսկ զինվորներին, նրանց ճանաչել ու սպանել էին...

Գետնափորում, մարմնի լույսի տակ, խոսում էր Ավտոմոն Գոլովինը.

— Ամրությունները ճեղքված են, գլխավոր հրամանատարը փախել է, կամուրջներն ավերված են, վառոդի գումակները շվեդների ձեռքին են... Վաղը չենք կարող մարտը շարունակել... Քանի դեռ գիշերով շվեդները չեն տեսնում մեր աղետալի վիճակը, թագավորից կարող ենք ժեներոզ պայմաններ պահանջել, պահպանել զենքն ու զորքը... Իվան Իվանովիչ (խոնարհվեց Բուտուլինին), դու գնա թագավորի մոտ, հոգյակս, ասա նրան, որ չկամենալով քրիստոնեական արյուն հեղել, ուզում ենք բաժանվել. մենք մեր հողերը գնանք, ինքն էլ թող գնա իր հողերը...

— Իսկ թնդանոթնե՞րը: Տա՛նք,— խռխռացրեց Բուտուլինը:

Ոչ ոք չպատասխանեց, գեներալները կախել էին գլուխները: Հպարտ Գոլովինի դեմքն ամբողջովին կծկվել էր լացակումած: Հաստաշուրթ, սևահեր Ցակով Դոլգոռուկին, հոնքերը վերուվարելով, ասաց.

— Զուր տեղը ջուր ենք ծեծում... Խաղտառակությունն ընդունենք մինչև վերջ... Ողորմածությանն ենք հանձնվում...

Բուտուլինը շրխկացրեց երկու ատրճանակների կայծքարերը, խրեց գոտու տակ, գլխարդն աչքերին քաշեց, ելավ գետնափորից.

— Շեփորահա՛ր:

Սպաները մոտեցան նրան.

— Իվան Իվանովիչ, ի՞նչ կասես: Հանձնվո՞ւմ ենք:

— Մենք պատրաստ ենք մեռնել, Իվան Իվանովիչ... Փոխանակ մերոնց ձեռքով սպանվենք...

Ռուսական ճամբարից մի վերստ հեռու, ազարակում, Կառլոսը և գեներալներն ընդունեցին Բուտուլինին: Շվեդները, ինչպես և ռուսները, վախենում էին վաղվանից: Հանուն պատվի ձգձգելով, համաձայնեցին Նարովայի մյուս ափը թողնել ռուսական ամբողջ զորքը՝ զենքով ու դրոշներով, սակայն առանց թնդանոթների և գումակի: Որպես պատանդ, պահանջեցին ազարակ բերել բոլոր գեներալներին և սպաներին, իսկ զինվորները, աստված իրենց հետ, թող գնան իրենց տները... Բուտուլինը փորձեց վիճել: Կառլոսը քթի տակ ծիծաղելով ասաց.

— Եղբայր Պյոտր ցարի հանդեպ տածած սիրուց նրա փառապանծ գեներալներին փրկում եմ զինվորների մոլեգնությունից: Նարվայում ավելի հանգիստ ու կուշտ կլինեք, քան զորքի հետ...

Ստիպված էին համաձայնել ամեն ինչի: Զրահակիրների ջոկատն արշավեց բերելու պատանդներին: Շվեդացի սակրավորները, ափին

խարույկներ վառելով, սկսեցին կամուրջ գցել, որ ռուսներին հնարավորին չափ շուտ ուղարկեն մյուս ափը: Ծանբարն առաջինը թողեցին սեմյոնովցիներն ու պրեոբրաժենցիները՝ դրոշներով ու զենքով, թրմբկազարկով անցան կամուրջները. զինվորները բոլորը թիկնեղ էին, բեխավոր, մոայլադեմ: Ուսերի վրա տանում էին վիրավորներին: Երբ անցնում էր Վեյդեի դիվիզիան, շվեդացի գրահակիրները սպառնագին մոտեցան, պահանջեցին հանձնել զենքը: Զինվորները, հայհոյելով, նետում էին մուշկետները: Մյուս գնդերը քշեցին արդեն ավելի հասարակ ձևով՝ կրակոցներով...

Լուսադեմին ռուսական քառասունհինգ հազարանոց բանակի մնացորդները՝ ոտաբոբիկ, քաղցած, առանց հրամանատարների, առանց շարքի, շարժվեցին ետդարձի ճանապարհով: Նրանց ետևից Իվան-գորոդի ամրոցի բաստիոններից մի քանի ռումբ արձակեցին...

4.

Նարվայի ջախջախման լուրը Պյոտրին հասավ այն օրը, երբ Նովգորոդ էր մտնում, վոյեվոդայի բակը: Ցարական կառքից հետո բաց դարպասից օրորվող ձիու վրա մտավ Պավել Յագուժինսկին, ցած թռավ ամմուտքի մոտ, և փայլուն աչքերով ցարին էր նայում:

— Այնտեղի՞ց,— խոժոռվելով, հարցրեց Պյոտրը:

— Այնտեղից, պարոն բոմբարդիր:

— Ի՞նչ կա այնտեղ:

— Խայտառակություն, պարոն բոմբարդիր...

Պյոտրն արագ կախեց գլուխը: Ոտքերը ձգմգելով, մոտեցավ Մենշիկովը, իսկույն հասկացավ ամեն բան. ինչ էր հարցվել, ինչ՝ պատասխանվել: Վոյեվոդա Լադըյժենսկին՝ դուրս պրծած աչքերով մի ծերուկ, ներքևի աստիճանի վրա կանգնած, բերանն էր բացել՝ ծակող քամին բարձրացրել էր նրա ցանցառ մազերը:

— Լավ... Գնանք, պատմիր:— Պյոտրը ոտքը դրեց աստիճանին ու հանկարծ շրջվեց վոյեվոդայի կողմը, կարծես մեծ զարմանքով զննելով Նովգորոդյան կառավարչին:— Ամեն ինչ պատրաստե՞լ ես պաշտպանության համար:

— Մեծն թագավոր... Գիշերները չեմ քնում, մի գլուխ մտածում եմ, թե ոնց գոհացնեմ քեզ...— վոյեվոդա Լադըյժենսկին ծնկի էր իջել, շան աչքերով աղերսում էր, թրթռացնելով շրջված կոպերը:— Որտեղի՞ց պաշտպանեմ... Թույլ քաղաք է, խանդակները փուլ են եկել, Վոլխովի կամուրջը լրիվ փտել է... Մուժիկներին գյուղերից քշել-բերել չի լինում, բոլոր ձիերը տարել են բեռ կրելու... Ողորմա...

Վոյեվոդան չէր խոսում, այլ ողբում էր, բռնելով թագավորի ոտքերը: Պյոտրը դեռ հրեց նրան, մտավ նախասենյակ: Այնտեղ նստած տեղերից վեր թռան վանականներ, կույսեր, տերտերներ, խաչգողակներով հայր սուրբեր: Մերկ մարմնի վրա շղթաները զնգացնող մեկը մտավ թախտի տակ...

— Ի՞նչ մարդիկ են սրանք...

Սև փարաջավորներն ու տերտերներն իրանները էին ճոճում: Խստադեմ, կուշտուկոտ կուսակրոն քահանան սկսեց խոսել, աչքերը ճակատը թոցնելով.

—... Մի թոլ ամայանան մենաստաններն ու աստծո տաճարները, մեծն արքա: Քո հրամանով կարգադրված է ամեն մենաստանից տասն ու ավելի սպա և մարդիկ վերցնել, երկաթյա բահերով, որքան հնարավոր է, և նրանց սնունդը... Ու ամեն համայնքից էլ մարդիկ և սայլեր ապահովել... Իսկապես սույնը վեր է մարդկային ուժերից, մեծն արքա... Մենակ ողորմությամբ ենք ապրում ի սեր Քրիստոսի...

Պյոտրը լսում էր, դռան շրջանակը բռնած, խոնարհվողներին էր նայում աչքերը չռած.

— Խնդրատուները բոլոր մենաստանների՞ց են:

— Բոլոր,— միանգամից առուլգված պատասխանեցին վանականները:— Բոլորի՞ց, բոլորի՞ց,— ողոթաձայն ու երգեցիկ ասացին կույսերը...

— Դանիլիչ, ոչ մեկին դուրս չթողնես, ժամապահ դիր...

Ճաշասենյակ մտնելով, Յագուժինսկուն հրամայեց պատմել խայտառակության մասին: Զնստեց, գնում-գալիս էր ցածրիկ, շոգ սենյակում, սեղանի վրայից թթու վարունգ էր վերցնում, ծամում, շտապ-շտապ հարցեր տալիս: Պավել Յագուժինսկին պատմեց ամբողջ հրետանու կորստի մասին, Նարովայում շերեմետևյան այրուձիի հազար ձիավորների խեղդվելու մասին, խորտակված կամրջի վրա հինգ հազար զինվորների կործանման մասին, իսկ ավելի շատ սպանվել էր մարտի ժամանակ, յոթանասունինը գեներալների և սպաների (այդ թվում և վիրավոր Վեյդեի) գերի հանձնվելու մասին, զորքերի չարաղետ նահանջի մասին՝ առանց հրամանատարների և գումակների (մնացել էին մենակ կրտսեր սպաներն ու ենթասպաները, այն էլ գլխավորապես գվարդիական գնդերում)...

— Հերցոգն առաջի՞նն է հանձնվել: Կեսարականի՞ն տես, հերո՞ս, շան որդի: Բլյումբե՞րգն էլ էր հետը: Ալեքսաշկա, հասկանալ կարո՞ղ ես: Հարազատ եղբայր Բլյումբերգը քշել է շվեդների մոտ... Դավաճա՞ն, դավաճա՞ն: (Պյոտրի բերանից վարունգի սերմեր էին թռչում:) Յոթանասունի՞նը դավաճան: Գոլովինը, Դոլգոռուկին, Բուտուրլին Վանկան, գիտեի, որ հիմար է... բայց դավաճա՞ն: Տրուբեցկո՞յը, կոտած խո՞զը: Ինչպե՞ս են հանձնվել...

— Գեներալներին է մոտեցել կապիտան Վռանգելը զինակիրներով, մերոնք սրերը նրան են հանձնել...

— Ու գոնե մեկնումե՞կը...

— Մի քանիսը լաց են եղել...

— Լա՞ց են եղել: Հերոսնե՞ր: Ինչի՞ վրա է հույսները, որ սույն խայտառակությունից հետո հաշտությո՞ւն եմ խնդրելու:

— Հիմա հաշտություն խնդրելը մահվան է հավասար,— ցածրաձայն ասաց Ալեքսաշկան...

Պյոտրը կանգնեց փայլարե լուսամուտի առաջ՝ ցածրիկ կամարի խորքում, ոտքերը չռած, սեղմում ու բացում էր մեջքին դրած մատները:

— Խայտառակությունը լավ դաս է... Մենք փառք չենք փնտրում... Ու մի տասն անգամ էլ կշարդեն, հետո արդեն մենք կհաղթենք։ Դանիլիչ... Քաղաքը հանձնում եմ քեզ։ Գործը կսկսես այսօրվանից՝ խանդակները փորել, ցցապատնեշները կանգնեցնել, շվեդներին Նովգորոդից դուրս թողնել չի կարելի, թեկուզ բոլորս էլ մեռնենք... Մեկ էլ ասա, որ զտնեն ու անմիջապես մտտս լինեն Բրովկինը, Սվեշնիկովը, Նովգորոդցի կարգին վաճառականներ թե կան, նրանք էլ... Վոյեվոդային պաշտոնազուրկ արեք... (Ալեքսաշկայի ետևից։) Հրամայիր վզակոթին տան, դուրս անեն։ (Մենշիկովն արագ դուրս գնաց։ Պյոտրը դարձավ Յագուժինսկուն։) Գնա մի երեք հարյուր սայլ գտիր, նոր թխած հաց բարձիր, երեկոյան դուրս արի զորքին ընդառաջ։ Հասկացա՞ր։

— Ի կատար կածվի, պարոն բոմբարդիր...

— Տերտերներին կանչիր...

Նստեց դռան դիմաց, թախտին՝ անբարյացակամ, իսկական մի ցեղ։ Ներս մտան հոգևորականները։ Առանց այդ էլ հեղձուկ էր, շնչելու օդ չմնաց։

— Լսեք ասեմ, ատոծ ծառաներ,— ասաց Պյոտրը,— գնացեք ձեր վանքերն ու համայնքները. հենց այսօրվանից բոլորը դուրս գան, հող փորելու։ (Վեղարի տակից թավ հոնքերը խաղացնող կուսակրոնին ասաց սպառնագին։) Սուտ մնա, հայր սուրբ... Երկաթյա բահերով ու ձիերով ոչ միայն փոքրավորները դուրս գան, այլ բոլոր վանականները, ընդհուպ մինչև վարդապետաց դասը, ու բոլոր սնազգեստ կույսերը, տերտերները, դպիրները, տերտերակիներն ու դպրակիները... Աշխատեցեք ի փառս ատոծ... Ասացի՝ ձեն չհանե՛ս, կուսակրոն... Ես՝ կաղոթեմ բոլորիդ փոխարեն, այս դեպքի համար ինձ կոստանդնուպոլսյան պատրիարքն է օծել... Պորուչիկ եմ ուղարկելու մենաստաններն ու եկեղեցիները. ում գտավ անգործ, քշելու է հրապարակ, սյան մոտ, մահակի հիսուն հարված.. Այդ մեղքն էլ եմ իմ վրա վերցնում։ Քանի դեռ խանդակները փորված չեն, ցցապատնեշը կանգնեցված չէ, եկեղեցիներում ժամերգություն չանել, բացի Սոֆիյայի տաճարից... Գնացեք...

Բռնեց թախտի եզրից, վիզը ձգեց՝ կլոր թշերի վրա մազեր էին բուսնել, բեխերը ցցված էին։ Օ՜հ, սարսափելի՜ էր։ Հոգևորականները, ետ-ետ քաշվելով ու հրմշտվելով, դուրս եկան։ Պյոտրը բղավեց.

— Ով կա նախասենյակում, ժամապահներին արձակեք...

Մի բաժակ օղի լցրեց ու նորից գնաց-եկավ... Որոշ ժամանակ անց դրսի դուռը շրխկաց։ Նախասենյակում կիսաձայն հարցրեցին. «Ինքն ո՞ւր է։ Ջղայնացա՞ծ է։ Օ՜ֆ, այ քեզ գո՜րծ, այ քեզ գո՜րծ...»։

Ներս մտան Բրովկինը, Սվեշնիկովը և Նովգորոդցի հինգ մանր վաճառական՝ վերջիններս գլխարկներն էին ճմլում, վախեցած թարթելով աչքերը։ Պյոտրը թույլ չտվեց ձեռքը հարբուրել, ինքն էր ուրախուրախ գրկում ուսերը, ճակատները հարբուրում, Բրովկինի շրթունքները հարբուրեց.

— Ողջույն, Իվան Արտեմիչ, ողջույն, Ալեքսեյ Իվանովիչ։ (Նովգորոդցիներին։) Բարև ձեզ, պատվելիներ... Նստեք... Տեսնում ես, ուտելիք-խմելիքը սեղանի վրա, տանտիրոջը հրամայեցի վոնդել։ Ա՜հ, ո՞նց դառնացրեց ինձ վոյեվոդան. ես էլ հույս ունեի, որ խանդակներն էլ են պատրաստ էստեղ, ցցապատնեշն էլ... Գոնե մի բահ խփած լինեին...

Բոլորին օղի լցրեց։ Նովգորոդցիները, բաժակները վերցնելով, վեր թռան տեղներից։ Պյոտրն առաջինը խմեց, մի լավ թնչացրեց, դատարկ բաժակը շրխկացրեց սեղանին.

— Սկզբի համար խմեցինք...— Ծիծաղեց։— Է, հետո՞, վաճառականներ, լսած կլինեք։ Ծվեդական թագավորը մի թեթև ջարդեց մեզ... Սկզբի համար ոչինչ... Մի ջարդվածն երկու չջարդված արժե, էդպե՞ս է...

Վաճառականները լուռ էին. Իվան Արտեմիչը, շրթունքները սեղմած, սեղանին էր նայում, Սվեշնիկովը, զարհուրելի հոնքերը կիտած, նույնպես փախցնում էր աչքերը։ Նովգորոդցի վաճառականները հագիվ լսելի հոգոցներ էին հանում...

— Ծվեդներին էստեղ պիտի սպասել մի շաբաթվա մեջ։ Նովգորոդը թե հանձնեցինք, Մոսկվան էլ կհանձնենք, այն ժամանակ բոլորս էլ կկորչենք։

— Օխո-խո՜...— ծանր տնքաց Բրովկինը։ Սևամորուք Սվեշնիկովի դեմքը դեղնեց փայտպուղի պես։

— Ծվեդներին կանգնեցրինք Նովգորոդի մոտ, մինչև ամառ կբհավաքենք ու առաջվանից ավելի ուժեղ՝ զորք կվարժեցնենք... Երկու անգամ ավելի շատ թնդանոթ կձուլենք... Նարվայի թնդանոթնե՛րը։ Խնդրեմ, վերցրու, քեզ լինի. անպետք թնդանոթներ էին... Էդ տեսակ թնդանոթ էլ չենք ձուլելու... Գեներալները գերի են՝ ուրախ եմ դրա համար... Ծերուկները ոնց որ քար լինեին ոտքերիցս կախած։ Ջահել, նոր գեներալներ են պետք։ Ամբողջ պետությունը ոտքի կկանգնեցնենք... Խայտառակությունն ընդունեցինք՝ լա՞վ։ Հիմա էլ պատերազմ ենք սկսում... Իվան Արտեմիչ, Ալեքսեյ Իվանովիչ, պատերազմի համար մի ռուբլի տաք, երկու տարի հետո տասը կվերադարձնեմ...

Ետ ընկնելով, բռունցքներով խփեց սեղանին.

— Էդպե՞ս է, թե չէ, վաճառականներ։

— Պյոտր Ալեքսեևիչ,— ասաց Սվեշնիկովը,— բայց հենց էդ ռուբլի՞ն որտեղից վերցնենք։ Մեր սնդուկներում էլ ի՞նչ փող։ Մկներն են...

— Ճիշտ որ, օխո-խո՜խ, ճիշտ որ,— տնքտնքացին Նովգորոդցի վաճառականները։

Պյոտրը մի հայացք նետեց նրանց վրա։ (Կծկվեցին։) Ափը ծանր-ծանր դրեց Իվան Արտեմիչի կարճլիկ մեջքին.

— Դո՜ւ ինչ կասես։

— Աստված մեզ մի կապով է կապել, Պյոտր Ալեքսեևիչ, ուր դու, էնտեղ էլ՝ մենք։

Բրովկինի հաստլիկ դեմքը հստակ էր, անկեղծ։ Սվեշնիկովը նույն-

իսկ ընդարմացավ. հենց նոր էին պայմանավորվել, որ փողը պահեն, ու հանկարծ ճարպիկ Վանկան առաջ ընկավ...Պոտրը գրկեց նրա ուսերը, քրտնած դեմքը մոտեցրեց կրծքին, պղնձյա կոճակներին.

— Քեզնից ուրիշ պատասխան չէի սպասում, Իվան Արտեմիչ...՝ Խելոք ես, համարձակ, շատ բան կհատուցվի քեզ դրա համար... Վաճառականներ, փողը պետք է անմիջապես Մի շաբաթում Նովգորոդը պիտի ամրապնդենք ու պաշարման ենթարկենք Անիկիտա Ռեպնինի դիվիզիան...

«...Փոսեր փորեցին ու եկեղեցիներ քանդեցին... Հրանկնատներով ցցապատնեշ կանգնեցրին, իսկ պատնեշի երկու կողմից ճիմապատեցին...

Եվ աշխատում էին դրագուններ ու զինվորներ, ու բոլոր դասերի մարդիկ, ու հոգևորականներ ու եկեղեցական բարձր դասի մարդիկ՝ արական, թե իգական սեռի... .

Եվ աշտարակները հողով ծածկեցին, վրայից ճիմ փռեցին՝ գործը հողածածկով արեցին: Աշտարակների փայտյա ծածկը և պարիսպների փայտյա ծածկը լրիվ ջարդեցին... Ու նույն ժամանակ բացի տաճարից ուրիշ եկեղեցիներում ժամերգություն չէր լինում...

Պեչերսկու մենաստանում հրամայված էր գործի մեջ լինել փոխգնդապետ Շենշինին: Եվ թագավորն եկավ մենաստան ու այնտեղ չգտնելով Շենշինին, հրամայեց անխնա մտրակահարել հրապարակում և ուղարկել գունդ, որպես զինվոր...

Իսկ Նովգորոդում կախեցին կառավարիչ Ալեքսեյ Պոսկոչինին, որովհետև փող էր վերցրել սայլերից, հնգական ռուբլի՝ ազատելու համար, որ սայլերը գործի մեջ չլինեն...»:

5.

Պրեոբրաժենսկոյեի պալատի առմուտքին պահակախմբի սպան բոլորին պատասխանում էր.

— Հրամայված է ոչ ոքի չթողնել, անցեք...

Բակում մեծ քանակությամբ կառքեր ու երկանիվներ էին հավաքվել: Դեկտեմբերյան քամին ձնե փոշի էր լցնում սև անվակոսների մեջ: Խշշում էին սառցակալած ծառերը, ճոճում հողմացույցները պարապի խարխուլ տանիքների վրա: Այդպես, կառքերի ու երկանիվների մեջ առավոտից նստած էին միհիստրները և բոյարները՝ ամբողջ օրը: Վեցալուծ ոսկեզօծ կառքով եկավ Մենշիկովը, նրան էլ դարձրեցին՝ քեռը դուրս...

Երեկոյան, ժամը տասնմեկին եկավ Ռոմոդանովսկին: Պահակախմբի սպան ցնցվեց, տեսնելով իշխան-կայսրին՝ արջի մորթու մուտակով, շորորաքայլ բարձրանում էր աղյուսե մաշված աստիճաններով: Թողներ՝ ցարի հրամանն էր խախտելու, չթողներ՝ իշխան-կայսրն իր իշխանությամբ, առանց ցարին հարցնելու, կհրամայեր մտրակածեծ անել...

Ռոմոդանովսկին պալատ մտավ՝ ամեն դռան մոտ պահակ կար կանգնած, ծանր քայլք լսելով, թաքնվեցին: Մինչև ցարական ննջասենյակ հասնելը երեք անգամ նստեց, շունչ առավ: Եղունգով կտկտացնելով, ներս մտավ, հին կարգով գլուխ խոնարհեց:

— Էս ինչի՞ ես էստեղ հասել, քեռի,— Պոտրը գնում-գալիս էր ծխամորճը բերանին, ծխի մեջ կորած. դժգոհ շուռ եկավ, չպատասխանեց ողջույնին:— Ասել եմ, որ ոչ ոքի ներս չթողնեն:

— Ոչ ոքի ներս չեն թողնում, Պոտր Ալեքսեևիչ: Իսկ ինձ քո ծնող հայրն էլ էր առանց հայտնելու ներս թողնում: (Պոտրը ուսը թոթվեց, շարունակում էր քայլել, ծխամորճի կոթը կրծելով:) Պոտր Ալեքսեևիչ, ինչի՞ մասին ես օրուգիշեր մտածում: Քո ծնող հայրն ու քո ծնող մայրը քեզ խրատ տվեցին, որ խորհուրդս լսես: Արի իրար հետ մտածենք... Մեկ էլ տեսար մի բան մտածեցինք...

— Հերիք դատարկ բաներ ասես... Ինքդ գիտես... Ինչի մասի՞ն...

Ֆյոդոր Յուրևիչը միանգամից չպատասխանեց՝ նստեց, մուշտակն արձակեց (ծերուկի համար դժվար էր այդ հեղձուկի մեջ շնչելը), գունավոր թաշկինակով երեսը սրբեց.

— Կարող է դատարկ բաներ ասելու չեմ եկել... Ինչ ~~[illegible]~~ ինչ իմանաս...

Պոտրը, ինքն իր ձայնը չլսելով, հանկարծ այնպես բարձր սկսեց բղավել, որ պատից այն կողմ, խավար գահադահլիճներում ժամապահը վախից գցեց հրացանը.

— Բուրմիստրական պալատում մեծահարուստներն սկսել են դատողություններ անել. Նարվայի տակ մենք մեզ ցույց տվեցինք, շվեդի դեմ պատերազմել չենք կարող... Հաշտվել է պետք... Աչքերիս չեն նայում... Նրանց հետ ա՛յ էսպես խոսեցի... (Բռնեց Ֆյոդոր Յուրևիչի օձիքից, կաֆտանից, թափ տվեց): Լաց են լինում: «Հրաման տուր գլուխներս կտրեն, մեծն թագավոր, բայց փող չկա, աղքատացել ենք...»: Ինչի՞ մասին եմ մտածում... Փո՞ղ է պետք: Օրուգիշեր մտածում եմ՝ որտեղի՞ց վերցնեմ: (Թողեց օձիքը:) Հը՞: Քեռի...

— Ես լսում եմ, Պոտր Ալեքսեևիչ, իմ ասելիքը հետո կասեմ:

Պոտրն աչքերը կկոցեց. «Հը՞մմ»: Գնաց-եկավ, խեթելով իշխան-կայսրին, և արդեն ավելի մեղմ ձայնով.

— Պղինձ է պետք... Ավելորդ զանգերը դատարկ զնգոց են արձակում, առանց դրա յոլա կգնան, զանգերը կհանենք, կձուլենք... Ակինֆիյ Դեմիդովը Ուրալից գրում է. հիսուն հազար փութ թուջ գարնանը կաղապարների մեջ կլինի... Բայց փո՞ղը... Նորից պոսադականներից, մուժիկների՞ց պոկենք: Ու շա՞տ բան կպոկենք: Առաջ այդ էլ հազիվ են շնչում, մի տարուց շուտ տուրքը հավաքել չի լինի... Բայց չէ որ կա ոսկի ու արծաթ, կա՛, գուր տեղը պահած... (Պոտր Ալեքսեևիչը խոսքը չէր վերջացրել, Ֆյոդոր Յուրևիչի աչքերը խեցգետնի պես դուրս պրծան): Գիտեմ թե ինչ պատասխան ես տալու, քեռի Դրա համար էլ մարդ չեմ ուղարկել, որ քեզ կանչեն... Բայց փողը ես կվերցնեմ...

— Վանքական գանձարանին հիմա ձեռք տալ չի կարելի, Պյոտր Ալեքսեևիչ...

Պյոտրը բղավեց աքլորաձայն.

— Ինչի՞ համար:

— Ժամանակը չէ... Այսօր վտանգավոր է... Քեզ չեմ էլ ասում, թե համարյա ամեն օր ինչ տեսակ մարդկանց են քարշ տալիս մոտս... (Ֆյոդոր Յուրևիչի՝ ծնկներին դրած հաստ մատներն սկսեցին անհանգիստ շարժվել:) Մոսկովյան վանականությունն առայժմ քո հավատարիմ ծառաներն են... Է՛ ինչ, վախեցել են Նարվայից... Ով ասես, կվախենա... Կխոսեն ու կլռեն՝ պատերազմը նրանց շահավետ է... Փող էլ կտան, մենակ մի տաքանա... Իսկ հիմա եթե վանքերին՝ ընթանց պատվարի՞ն ձեռք տաս... Բոլոր հրապարակների վրա գծերը կբղավեն, ինչ մի քանի օր առաջ Գրիշկա Տալիցկին էր բղավում շուկայում, կտրի գլխից: Գիտե՞ս: Ասածս էդ է... Վանքական գանձարանը հարկավոր է ծածուկ վերցնել, առանց աղմուկի...

— Խորամանկություն ես անում, քեռի...

— Ես ձեր մարդ եմ, խորամանկելու պետք չունեմ...

— Փողն անմիջապես է պետք՝ թեկուզ թալանով լինի...

— Քեզ շա՞տ է պետք:

Ֆյոդոր Յուրևիչը հարցրեց ու թեթևակի ծիծաղեց քթի տակ: Պյոտրը նորից «հըմմ» արեց, արագ-արագ քայլեց փոքր ննջասենյակում, ծխամորճը կպցրեց մոմից, մի քուլա արձակեց, երկչորդը և հաստատ ասաց.

— Երկու միլիոն:

— Մի քիչ քիչ չի՞ լինի:

Պյոտրը նորից «հըմմ» արեց, արագ-արագ քայլեց փոքր ննջասենյակում.

— Հերիք եղավ չարչարես... Արի էսպես անենք՝ վանքերին առայժմ ձեռք չեմ տա... Լա՞վ: Փող կա՞: Շա՞տ է:

— Վաղը կտեսնենք...

— Հիմա... Գնանք...

Ֆյոդոր Յուրևիչը վերցրեց գլխարկը, ծանր-ծանր վեր կացավ.

— Լավ, աստված քեզ հետ... Եթե արդքան խիստ է կարիքը... (Արջավարի շորորաց դեպի դուռը:) Մենակ թե ոչ ոքի չվերցնես հետդ, երկուսով կգնանք...

Սպասսկի աշտարակի զանգը զարկեց՝ ժամը մեկն էր, իշխան-կայսրի կաշեպատ կառքը Կրեմլ մտավ, նեղ ու մութ նրբանցքներով պտույտ տվեց վարչատների հին շենքերի արանքով ու կանգ առավ աղյուսե ցածրիկ մի շինության առաջ: Գեղեցահաս առմուտքի աստիճանին լապտեր կար դրված, երկաթյա դռանը հենված, քուրքի մեջ փաթաթված մի մարդ էր խոմփացնում: Պյոտր Ալեքսեևիչից հետո կառքից իջնելով, իշխան-կայսրը բարձրացրեց լապտերը (ճարպամոմը, հալվելով, մխում էր), ոտքով հրեց քուրքի տակից դուրս

ցցված տրեխը: Քունը գլխին մարդը՝ «Ի՞նչ կա, ի՞նչ ես ուզում» մրթմրթաց, կոթնեց, ոչխարենու օձիքը դեն տարավ, ճանաչեց ու վեր թռավ:

Դռնից հեռացնելով նրան, իշխան-կայսրն իր բանալիով բացեց դուռը, ներս թողեց Պյոտրին, ինքն էլ մտավ ու դուռը կողպեց ներսից: Լապտերը բռնած, ճոճվելով բայլեց ցուրտ ու տաք նախասրահների միջով ու հասավ ցածրիկ, կամարակապ, ծեփաթափ պատերով սրահը Գաղտնի գործերի վարչատան, որ դեռ Ալեքսեյ Միխայլովիչ ցարն էր հիմնել: Փոշու, չոր բորբոսի և մկան հոտ էր գալիս: Վանդակապատ երկու պատուհան սարդոստայնով էին պատված: Բացվեց մի դուռ ու սարսափահար դուրս նայեց ներքին, վստահելի պահակի ծերունական գլուխը.

— Ո՞վ կա այստեղ: Ի՞նչ մարդիկ եք:

— Մոմ բեր, Միտրիչ,— նրան ասաց իշխան-կայսրը:

Խորքի պատի տակ կաղնեփայտից պատրաստված ցածրիկ սյահարաններ էին դրված, կոփածո կողպեքներով (ոչ թե ձեռք տալ, այլ հետաքրքրվել, թե ինչ գործեր են այնտեղ պահված, արգելված էր, կյանքից զրկվելու սպառնալիքով): Պահակը երկաթյա մոմակալով մոմ բերեց: Իշխան-կայսրը ցույց տվեց մեջտեղի պահարանը.

— Պատից դեն տար... (Պահակը թափահարեց գլուխը:) Ե՛ս եմ հրամայում... Ե՛ս եմ պատասխանատու...

Պահակը մոմը դրեց հատակին: Վտիտ ուսը դեմ արեց՝ պահարանը չշարժվեց: Պյոտրը շտապ հանեց կիսամուշտակը, գլխարկը, կպավ պահարանին՝ վիզը կարմրատակեց, դեն հրեց: Պահարանի հատակից մի մուկ փախավ: Պահարանի ետևում, պատի մեջ, սարդոստայնի փոշոտ փաթիլներով ծածկված երկաթյա դռնակ կար: Իշխան-կայսրը երկֆունտանոց մի բանալի հանեց, ֆսֆսացնելով ասաց. «Միտրիչ, լույս արա, չի երևում», անվարժ շարժումներով բանալին անցքն էր մտցնում: Երեք տասնամյակի ընթացքում կողպեքը ժանգոտել էր, չէր բացվում: «Վայ թե լինգով բացենք, Միտրիչ, գնա բեր»:

Մոմի լույսի տակ դռնակն էր զննում Պյոտրը.

— Էնտեղ ի՞նչ է:

— Կտեսնես, որդի... Պալատական ցուցակներով էնտեղ գաղտնի գործեր են պահվում: Իշխան Գոլիցինի Ղրիմի արշավանքի ժամանակ քո քույր Սոֆյան մի անգամ գիշերով էստեղ էր եկել... Ես էլ, այ էսպես, բացել չկարողացա... (Իշխան-կայսրը անհկատելի ծիծաղեց թաթարական բեխերի տակից:) Կանգնեց-կանգնեց ու գնաց Սոֆյան...

Պահակը լինգ ու կացին բերեց: Պյոտրը սկսեց քաշքշել կողպեքը, կացնի պոչը կոտրեց, պլոկեց մատի մաշկը: Ծանր լինգով սկսեց խփել դռան եզրին: Հարվածները խուլ արձագանք էին տալիս ամայի շենքի մեջ՝ իշխան- կայսրը տագնապած մոտեցավ լուսամուտին: Վերջապես հաջողվեց լինգի ծայրը մտցնել ճեղքի մեջ: Վրա ընկնելով, Պյոտրը ջարդեց կողպեքը՝ երկաթյա դռնակը ճռնչոցով բացվեց: Անհամբերությամբ վերցնելով մոմը, առաջինը մտավ կամարակապ անլուսամուտ նկուղը:

Սարդոստայլներ, փոշի: Պատի երկայնքով, դարակների վրա դրված էին դրվագանախշ, լայնաշուրթ ենդովաներ՝ Իվան Ահեղի ու Բորիս Գոդունովի ժամանակներից, իտալական բարձրոտիկ գավաթներ, արծաթյա կոնքեր՝ մեծ արարողությունների ժամանակ ցարի ձեռքերը լվալու համար, ոսկյա բաշերով ու փղոսկրյա ատամներով արծաթյա երկու առյուծ, ոսկյա ափսեների դիզուկներ, արծաթյա կոտրտված կանթեղներ, զմրուխտյա աչքերով, ձուլածո ոսկուց մի մեծ սիրամարգ՝ ժամանակին բյուզանդական կայսրների գահի կողքերին կանգնած սիրամարգերից մեկն էր, որի ներքին մեխանիզմը փչացած էր: Ներքևի դարակների վրա կաշվե տոպրակներ էին, մի քանիսի փտած կարերի արանքից հոլանդական եֆիմոկներ էին թափվել: Դարակների տակ կիտված էին սամույրի մորթիներ, ուրիշ այլ մորթիներ, թավիշ և մետաքս՝ ամեն ինչ ցեցը կերած, փտած:

Պյոտրը վերցնում էր իրերը, մատը թքոտելով, տրորում. «Ոսկի... Արծաթ...»: Հաշվեց եֆիմոկներով տոպրակները՝ քառասունհինգ հատ էին, թե ավելի... Վերցնում էր սամույրի մորթիները, աղվեսի պոչերը, թափ տալիս.

— Քեռի, այս ամենը ալար փտել է:

— Փտել է, բայց չի կորել, որդի...

— Առաջ ինչի՞ չէիր ասում ինձ:

— Խոսք էի տվել... Քո ծնող հայրը՝ Ալեքսեյ Միխայլովիչը, տարբեր ժամանակներ արշավանքների էր գնում և վստահելով ինձ էր տալիս ավելորդ փողն ու գանձերը՝ պահելու: Կյանքի վերջին քո հայրը կանչեց ինձ ու ավանդեց, որ ժառանգներից և ոչ մեկին չտամ սա, միայն՝ եթե տերությանը խիստ անհրաժեշտ լինի պատերազմի ժամանակ...

Պյոտրը շոմփացնում էր ազդրերին.

— Փրկեցիր, այ թե փրկեցիր հա՞... Սա ինձ հերիք է... Վանականները քեզ շնորհակալ պիտի լինեն... Սիրամա՞րգ՝ մի գունդ կը-հագցնեմ, կգինեմ ու Կաղոսին կդնգսեն, ինչպես պետքն է... Բայց քեռի, զանգերի համար ասեմ, որ զանգերը, մեկ է, իջեցնելու եմ, չջղայնանաս...

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1.

Եվրոպայում ծիծաղեցին ու շուտով մոռացան բարբարոսների ցարի մասին, որը համարյա վախեցրել էր մերձբալթյան ժողովուրդներին՝ տեսիլքի պես ցաքուցրիվ եղան նրա ոջլոտ զորքերը: Նարվայի տակից նրանց վայրի Մոսկովիա շպրտելուց հետո, ուր և հավերժորեն պիտի փտեին նրանք իրենց վաղնջական բրտության մեջ (քանզի նշանավոր ճանապարհորդների խոսքերից հայտնի է ռուսների անազնիվ ու ստոր բնույթը), Կաղոսը թագավորը ոչ երկար ժամանակով դարձավ եվրոպական մայրաքաղաքների հերոսը: Ամստերդամում քաղաքապետարանը և բորսան դրոշներով զարդարեցին՝ ի պատիվ Նարվայի հաղթության: Փարիզում գրավաճառների մոտ բրոնզե երկու մեդալ էր ցուցադրված՝ մեկի վրա պատկերված էր Փառքը, որը պսակ էր դնում շվեդական դեռատի թագավորի գլխին. «Վերջապես հաղթանակեց արդար գործը», մյուսի վրա կայմիկական գդակը կորցրած, փախչում էր Պյոտր ցարը: Մոսկվայում ավստրիական նախկին դեսպան Իգնատի Գվարիենտը Վիեննայում լույս ընծայեց իր քարտուղար Յոհանն Գեորգ Կորբի նոթերը կամ օրագիրը, ուր չափազանց կենդանի նկարագրված էր մոսկովյան պետության ծիծաղելի և անկիրթ պատմությունները, ինչպես նաև՝ ստրելեցների արյունալի մահապատիժը 98 թվականին: Վիեննական արքունիքում բարձրաձայն խոսում էին Պսկովի տակ ռուսների նոր պարտության մասին, փոքրաթիվ մարդկանցով Պյոտրի փախուստի մասին, Մոսկվայում ծագած ապստամբության և մենաստանից արքայադուստր Սոֆյայի ազատման մասին, որը պետության կառավարումը վերստին իր ձեռքն է վերցրել:

Բայց այդ մանր-մունր դեպքերը շուտով պատնեշվեցին վերջապես փոթորկված ռազմական ամպրոպով: Մահացավ իսպանական թագավորը՝ Ֆրանսիան և Ավստրիան ձեռք պարզեցին ժառանգելու: Միջամտեցին Անգլիան և Հոլանդիան: Փառապանծ մարշալներ Ջոն Չերչիլ կոմս Մալբորոն, արքայազն Եվգենի Սավոյացին, հերցոգ Վանդոմը սկսեցին երկրներ ասպատակել ու քաղաքներ հրդեհել: Իտալիայում, Բավարիայում, սքանչելի Ֆլանդրիայում, բոլոր ճանապարհների վրա գինված թափառաշրջիկներ էին թրև գալիս, բռնանալով խաղաղ բնակչության վրա, ուտելիքի և խմելիքի պաշարներ ոչնչացնելով: Հունգարիայում և Սեվեննեներում խռովություններ բռնկվեցին: Մեծ երկրների ճակատագիրն էր որոշվում՝ թե ով ում նավատորմն է իշխելու օվկիանոսներում: Արևելքի գործերը ստիպված եղան թողնել ինքնահոսի:

Նարվայից հետո տաքացած Կաղոսը պատրաստվում էր նետվել Պյոտրի ետևից Մոսկովիայի խորքը, բայց գեներալները խնդրեցին նրան երկրորդ անգամ ճակատագրի հետ չխաղալ: Հոգնած և բզկտված զորքը տարան ձմեռային կացարաններ, Դորպատին մերձակա Լաիսա բնակավայրում: Այդտեղից թագավորը գոռոզամիտ մի նամակ գրեց սենատ, պահանջելով համալրում և փող: Ստոկհոլմում, նրանք, ովքեր պատերազմ չէին ուզում, լռեցին: Սենատը նոր հարկեր դրեց և գարնանամուտին Լաիսա ուղարկեց քսան հազար հետևակ և հեծելազոր: Լատիներեն լույս ընծայվեց «Մոսկովյան ցարի դեմ Շվեդիայի պատերազմի պատճառների մասին» գիրքը, որը եվրոպական արքունիքներում զոհունակությամբ ընթերցեցին:

Հիմա Կաղոսը Եվրոպայի ուժեղագույն բանակներից մեկն ուներ: Հարկ էր վճռել՝ դեպի որ կողմն ուղղի հարվածը. դեպի արևելք, ասենք՝ Մոսկո՞վիա, ուր աղքատիկ և հատուկենտ քաղաքներ նվազ, ավար ու փառք էին խոստանում, թե՝ դեպի հարավ-արևմուտք, ուխտա-

դրում Ավգուստի դեմ, դեպի Լեհաստանի խորքը, Սաքսոնիա, Եվրոպայի սիրտը: Այնտեղ արդեն դղրդում էին մեծ մարշալների թնդանոթները: Կառլոսի գլուխը պտտվեց երկրորդ Կեսարի փառքի կանխազգացումից: Մովահենների սերունդ նրա գվարդիականների աչքերին երևում էին Ֆլորենցիայի փարթամ մետաքսները, Էսկուրիալի մերքնահարկերի ոսկին, Ֆլամանդիայի շիկավարս կանայք, բավառական ճանապարհների խաչմերուկների պանդոկները...

Երբ բացվեց ամառային ճանապարհը, Կառլոսը ութհազարանոց մի կորպուս առանձնացրեց՝ Ցիպպենբախի հրամանատարությամբ, հրամայեց գնալ ռուսական սահման, ինքն ամբողջ բանակով, կարճ երթերով անցավ Լիֆլյանդիան, Ռիգայից երկու վերստ վեր, հակառակորդի աչքի առաջ, բեռնանավերով անցավ Դվինան և գլխովին ջախջախեց Ավգուստ թագավորի սաքսոնական զորքը: Այդ ճակատամարտին, հոլիսի ութին, վիրավորվեց Յոհանն Ռեյնհոլդ Պատկուլը՝ ձիով մագապուրծ փախչելով թագավորական գինակիրներից. այս անգամ խուսափեց գերությունից ու մահապատժից:

Ռիգայի տակ ջախջախված էին ոչ թե ինչ-որ ոջլոտ ռուսներ, այլ Եվրոպայում փառաբանված սաքսոնական գինվորները: Թվում էր, թե Փառքի թևերն են բացվել նրա ուսերին: «Կառլոս թագավորն այլևս ոչ մի բանի մասին չի մտածում, միայն և միայն պատերազմի... (Նրա մասին այսպես էր գրում գեներալ Ստենբոկը՝ Ստոկհոլմ ուղարկած նամակում:) Այլևս խելացի խորհուրդներ չի լսում... Նա այնպես է խոսում, կարծես աստված անմիջականորեն հետագա հրացումներ է ներշնչում իրեն... Նա տոգորված է մեծամտությամբ ու խելացնորությամբ... Կարծում եմ, եթե հազար մարդ մնա ձեռքի տակ, այդքանով կնեռվի մի ամբողջ բանակի դեմ... Նա չի հոգում անգամ, թե ինչով են սնվում իր գինվորները: Եթե մերոնցից մեկնումեկին սպանում են, դա այլևս չի հուզում նրան...»:

Ռիգայից Կառլոսը նետվեց Ավգուստին հետապնդելու: Լեհաստանում արյունահեղ երկպառակություն ծայր առավ պաների մեջ, ոմանք պաշտպան էին Ավգուստին և դեմ շվեդներին, մյուսները բղավում էին, թե միայն շվեդները կարող են կարգուկանոն հաստատել և օգնել ետ բերելու աջափնյա Ուկրաինան, Կիևի հետ, և որ Լեհաստանին նոր թագավոր է պետք (Ստանիսլավ Լեշչինսկին): Ավգուստը փախավ Վարշավայից: Կառլոսն, առանց մարտի, մայրաքաղաք մտավ: Ավգուստը Կրակովում հապճեպ նոր զորք էր հավաքում...

Սկսվեց մի եզակի որս՝ թագավորը թագավորի ետևից: Եվրոպական արքունիքներում նորից ծափահարում էին պատանի հերոսին. նրա անունը արքայազն Եվգենիի և Մալբորոյի հետ էին տալիս: Ասում էին, որ Կառլոսը թույլ չի տալիս ոչ մի կնոջ մոտենալ իրեն, որ նույնիսկ քնելիս թոտֆորտները չի հանում, որ ճակատամարտի սկզբին հայտնվում է զորքի առաջ՝ հեծյալ, գլխաբաց, անփոփոխ մոխրագույն-կանաչ, մինչև օձիքը կոճկած կաֆտանով, և աստծո անունը տալով առաջինն է նետվում հակառակորդի վրա, իր ետևից տանելով զորքը...

Տաղտկալի Արևելքում Պյոտր ցարին հաղթելը նա թողել է գեներալ Ցիպպենբախի տնօրինությանը:

Ամբողջ ձմեռ Պյոտրն անցկացրեց Մոսկվա, Նովգորոդ և Վորոնեժ գնալ-գալով (այնտեղ սնվում նավատորմի նավերն էին կառուցվում լարված աշխատանքով): Ինքնուն հազար փութ զանգի պտինձ բերվեց Մոսկվա: Նոր հրետանի ձուլելու գործի գլուխը կարգվեց լեռնային գործի գիտակ, դումայական ծեր ատենավոր Վինիուսը: Մոսկվայում, ձուլագործարանին կից նա դպրոց հիմնեց, ուր բոյարական, պոսադական և ստորին, սակայն աչքաբաց դասի երկու հարյուր հիսուն զավակներ ձուլման գործ էին սովորում, մաթեմատիկա, ֆորտիֆիկացիա և պատմություն: Կարմիր պտինձ էր հարկավոր զանգի պտնձին ավելացնելու համար՝ Պյոտրը Վինիուսին Սիբիր ուղարկեց, հանք որոնելու: Անդրեյ Արտամոնովիչ Մատվեևը (Ծքադրան մոտ սպանված բոյարին Մատվեևի որդին) Լեժում ավելի քան տասնհինգ հազար նորագույն հրացաններ գնեց, արագաձիգ թնդանոթներ, հեռադիտակներ, սպայական գլխարկների համար ջայլամի փետուր: Մոսկվայում աշխատում էին մահուդի և կտավի հինգ մանուֆակտուրաներ՝ լավ ոռճիկով վարպետներ էին վարձում ամբողջ Եվրոպայից: Լուսաբացից լուսաբաց ռազմական ուսուցումներ էին ընթանում: Բոլորից դժվարը սպաների խնդիրն էր. նրանք պիտի զինվորներին սովորեցնեին և իրենք սովորեին. աստիճան ստանալուց հետո ոմանք խելքը թոցնում էին իշխանությունից, կամ էլ իրենց տալիս շվայտության ու հարբեցողության...

Այն ժամանակ, Նարվայի ճակատամարտից երկու շաբաթ անց Պյոտրը գրեց Բորիս Պետրովիչ Շերեմետևին, որը Նովգորոդում հավաքում էր հեծյալ գնդերի բգկտված մնացորդները (ոմանք անձի էին, ոմանք առանց թուր, ոմանք էլ՝ բոլորովին տկլոր).

«...Խելացի բան չէ դժբախտության դեպքում ամեն ինչից զրկվելը... Հանուն դրա հրամայում եմ. ստանձնած ու սկսած գործդ հետևյալու ևս կգլխավորես,այսինքն՝ հեծելազորը, որով մոտակա տարածությունները կպաշտպանես հետագայի համար, ու առաջ կշարժվես հակառակորդին ավելի մեծ վնասներ տալու համար: Պատճառ բռնելու բան չունես, վասն զի մարդիկ բավականացնում են, նաև գետերն ու ճահիճներն են սառած... Մեկ էլ եմ հիշեցնում. պատրվակներ մի բռնիր, մինչև անգամ հիվանդություն... Փախստականներից շատերը հիվանդություն են ձեռք բերել, որոնցից մայոր Լոբանովը կախաղան է հանված այդ հիվանդության համար...»:

Սակայն ազնվական անկանոն հեծելազորը հուսալի չէր. փոխարենը սկսեցին հավաքել ամեն կարգի մարդկանց՝ թե մուժիկների, թե ազատների, կամավոր կերպով, տարեկան տասնմեկ ռուբլի ռոճիկ և ուտելիքով, դրագունյան տասը գնդերի համար: Մորտագրերից ու մուժիկի տքնությունից այնքան ցանկացող եղավ հեծելազորում ծառայելու համար, որ ստիպված էին քնտրել ամենաառողջներին ու պնդակազմներին: Վարժեցված դրագունների հարյուրյակները գնում

էին Նովգորոդ, որ գեներալ Անիկիտա Ռեպնինը կարգավորում ու վարժեցնում էր Նարվայի տակ եղած դիվիզիաները:

Մինչև նոր տարի ամրապնդեցին Նովգորոդը, Պսկովը և Պեչորսկի մենաստանը: Հյուսիսում ամրապնդեցին Խոլմոգորն ու Արխանգելսկը, որտեղից տասնհինգ վերստ այն կողմ, Բերյոզովսկոյե գետաբերանի վրա շտապ-շտապ քարաշեն ամրոց կառուցեցին՝ Նովո-Դվինսկան: Ամռանը Արխանգելսկ եկան ապրանքով բեռնված բազմաթիվ նավեր Անգլիայից և Հոլանդիայից՝ հունիսյան տոնավաճառի: (Այս տարի օտարերկրացիների հետ առևտրի նոր, նախկինից տարբեր ապրանքներ էին վերցվել հօգուտ գանձարանի. ծովային գազաններ, ձկնասունձ, կուպր, պոտաշ, մոմ... Ցարական վաճառականներն ամեն ինչ վերցնում էին հօգուտ գանձարանի, մանր վաճառականներին մնում էին թերևս միայն կաշվեղեն ապրանքներ ու փորագրած ոսկորը:) Հունիսի քսանին Հյուսիսային Դվինայի գետաբերան ներխուժեց շվեդական ռազմական նավատորմը: Տեսնելով նորակառույց ամրոցը, չհամարձակվեց անտեսելով անցնել դեպի Արխանգելսկ, և Նովո-Դվինսկայի ամրոցների վրա կրակ բաց արեցին բոլոր թնդանոթներից: Շվեդական չորս ֆրեգատներից մեկը այդ դիվերսիայի ընթացքում հենց ամրոցի առաջ նստեց ծանծաղուտին, ետևից էլ՝ մի թեթև առագաստանավ: Ռուսները լցվեցին նավակները և կռվով գրավեցին թե ֆրեգատը, թե առագաստանավը, մնացած նավերն անփառունակ ետ լողացին դեպի Սպիտակ ծով:

Ամբողջ ամառ Շերեմետևի և Շլիպպենբախի առաջավոր ջոկատների միջև ընդհարումներ էին տեղի ունենում: Շվեդները շրջում էին Պեչորսկի մենաստանի մոտերքում, բայց մենակ շրջակա գյուղերը վառեցին, ամրությունը չգրավեցին: Շլիպպենբախը տագնապած գրում էր Կարլոս թագավորին, ևս ութ հազար զորք խնդրելով՝ ռուսներն ամսե ամիս ավելի հանդուգն են դառնում, ըստ երևույթին, Նարվայի ջախջախումից արագ են ուշքի եկել, հակառակ ապատածի, և նույնիսկ առաջադիմել են ռազմական արվեստի ու ապառագինության մեջ, ներկայումս երկու բրիգադով հեշտ չէ ռուսական զորքը ջախջախելը... Կարլոսն այդ ժամանակ Կրակովն էր գրավում և Ավգուստին քշում էր Սաքսոնիա՝ նա խոլ էր ու չէր լսում ողջախոհության ձայնը:

Գործերն այսպես ընթացան մինչև հազար յոթ հարյուր մեկ թվականի դեկտեմբերը:

Խոր ձմռանը Բորիս Պետրովիչ Շերեմետևը գերի վերցված լեզվից իմացավ, որ գեներալ Շլիպպենբախը ձմեռային բնակատեղի է կանգնել Էրեստֆեր ագարակում, Դորպատի տակ: Իմանալով, ինքն էլ վախեցավ հանդուգն մտքից. այն է՝ անսպասելիորեն մտնել հակառակորդի երկիրը և թշնամուն հանկարծակի բերել հանգստանալիս: Եզակի դեպք էր: Նախկինում, անշուշտ, Բորիս Պետրովիչը ավելի հարմար կգտներ խախտած բախտի հետ չխաղալ, բայց այս տարի Պյոտր Ալեքսեևիչը շատ էր խստացել. ոչ մեկին հանգիստ ու դադար չէր տալիս, մեղավոր էր համարում ոչ միայն արածի համար, այլև՝ որ կարող էիր լավ բան անել, բայց չարեցիր...

Ստիպված էր բախտը փորձել: Բորիս Պետրովիչը կիսամուշտակ ու վալենկա հագցրեց տասը հազար նորակոչիկ ու նորավարժ զինվորների, սահնակների վրա տեղադրած տասնհինգ թեթև թնդանոթներով, շուտափույթ, սակայն մեծ զգուշությամբ, առաջ ուղարկելով չերքեզների, կալմիկների և թաթարների հեծյալ թեթև գնդեր, երեք օրում մոտեցավ Էրեստֆերին: Այի գետակի բարձրադիր ու ձնապատ ափին շվեդներն ուշ նկատեցին ականջավոր, աղեղներով ու նիզակներին ձիու պոչեր կպցրած հեծյալներին: Փոխգնդապետ Լիվենը գետակին մոտեցավ երկու վաշտով և մի թնդանոթով: Մյուս ափին շեղաչք բարբարոսները բարձրացրեցին կոր աղեղները, նետերի տարափ տեղացին, սահագնացող, ասես գայլի ոռնոց բարձրացավ, աջից ու ձախից թեք ձնաթմբերի վրայով, գետակն անցնելով ու ձնափոշի բարձրացնելով սուրացին շերտավոր խալաթներով թաթարները՝ կեռ թրերով, կապույտ ժուպաններով չերքեզները՝ նիզակներով ու օղապարաններով, ճակատից հարվածեցին ճոճոան կալմիկները: Լիվենի էսկադրոնական երեք հարյուր հրաձիգները և ինքը՝ փոխգնդապետը սրի քաշվեցին, նիզակահար արվեցին, տկլորացվեցին մինչև վերջին շապիկը:

Իրար խառնվեց ամբողջ շվեդական ճամբարը: Նոր ջոկատը վեց թնդանոթներով գետից հեռացրեց հեծյալ հետախույզներին: Շլիպպենբախը փողհարի հետ արշավում էր ճամբարում, շվեդները՝ ում հագին ինչ կար, դուրս էին թռչում խրճիթներից ու գետնափորերից, խոր ձյան միջով վազում դեպի իրենց զորամասերը: Ամբողջ զորքը շարվեց ագարակի առաջ, հրետանային կրակով դիմավորեց մոտեցող ռուսական բանակին: Բորիս Պետրովիչը մաճառդե կափտանով, եռագույն ուսակապը վրան, ձին նստած առաջանում էր քառանկյունու մեջտեղում:

Շվեդների կրակը իրարանցում առաջացրեց դրագունների առաջապահ հարյուրյակների մեջ, որոնք դեռ կռիվ չէին տեսել: Շվեդներն առաջ նետվեցին: Սակայն սահնակների վրա մոտեցած տասնհինգ թեթև թնդանոթներն այնպիսի տեղատարափ կրակ բացեցին հրետառումբերով, որ շվեդները մոլորվեցին, նրանց շարքերը կանգ առան տարակուսած: Թևերից նրանց վրա էին արշավում Կոռպոտովի, Զբլբինի և Գուլիցայի ուշքի եկած դրագունյան գնդերը: «Եղբայրնե՛ր,— խզված ձայնով բղավում էր Շերեմետևը քառանկյան կենտրոնում:— Եղբայրնե՛ր: Մի լա՛վ հացրեք շվեդին»:... Սվիններն ամրացրած, առաջ շարժվեցին ռուսները: Մթնշաղն արագ իջնում էր՝ լուսավորված կրակոցների ցոլքերով: Շլիպպենբախը հրամայեց նահանջել ագարակի շինությունների ծածկերի տակ: Բայց հագիվ էին տխրաձայն փողերը նահանջ փչել, դրագունները, թաթարները, կալմիկները, չերքեզները նոր թափով, բոլոր կողմերից վրա պրծան ետ քաշվող շվեդների ցից-ցից քառանկյուններին, ոտատակ տվեցին: Կոտորած սկսվեց... Մթության մեջ գեներալ Շլիպպենբախը ձիով հագիվ փախավ Ռեվել:

Մոսկվայում առաջին հաղթանակի առթիվ հրավառություն եղավ ու տրանսպարանտներ վառեցին: Կարմիր հրապարակում օղու և գարե-

ջրի տակառներ դրեցին, խարույկների վրա ամբողջ ոչխարներ էին խորովվում, ժողովրդին կալաչ էին բաժանում: Սպասսկի աշտարակից շվեդական դրոշներ կախեցին: Մենշիկովը սլացավ Նովգորոդ, Բորիս Պետրովիչին ալմաստներով զարդարված ցարական պարսունա. կամ դիմանկար ևվիրելու, նաև գեներալ-ֆելդմարշալի դեռևս չլսված կոչում շնորհելու: Հաղթությանը մասնակից բոլոր գինվորներին մեկական արծաթ ռուբլի ևվիրեցին (մոսկովյան Դրամահատարանում նախկին փողի փոխարեն նորադրոշմ դրամն էր):

Բորիս Պետրովիչը լացակումած շնորհակալություն հայտնեց և Մենշիկովի հետ Պյոտրին նամակ ուղարկեց, խնդրելով Մոսկվա թողնել իրեն, անհետաձգելի գործերով... «Կինս մինչև օրս ուրիշի տանն է իջևանած, հարկավոր է գոնե մի տուն գտնել նրա համար, որ գլուխը դնելու տեղ ունենա...»: Պյոտրը պատասխանեց. «Պարոն գեներալ-ֆելդմարշալ, Մոսկվայում լինել ձեզ պետք չէ... Բայց թողնում եմ ձեր հայեցողությանը...Իսկ լինելու դեպքում, այնպես, որ չարչարանաց շաբաթին գաս, ջրօրհնեքին ետ գնաս...»:

Վեց ամիս անց Բորիս Պետրովիչը նորից հանդիպեց գեներալ Շլիպենբախին, Գումելսհոֆի մերձակայքում՝ շվեդներն այդ արյունահեղ մարտում յոթ հազարից հինգուկես հազար սպանված թողեցին: Լիվոնիան պաշտպանող չկար՝ ծովափնյա քաղաքների ճանապարհը բաց էր: Եվ Ծերեմետևը գնաց երկիրը, քաղաքները, ագարակներն ու ասպետների հինավուրց ամրոցները ասպատակելու... Աշնանամուտին գրեց Պյոտրին.

«...Ամենազոր աստված ու սուրբ աստվածամայրը քո ցանկությունը կատարեցին. թշնամու երկիրն էլ ասպատակելու բան չմնաց, ամեն ինչ ոտատակ ենք տվել ու ամայացրել, անվնաս են մնացել Մարիենբուրգը, մեկ էլ Նարվան, մեկ էլ Ռեվելն ու Ռիգան: Ու մի հոգս էլ ունեմ. ի՞նչ անեմ գերիներին: Թե ճամբարները, թե բանտերը, թե կառավարիչների տները լիքը չուխոն են, ամեն տեղ... Մեկ էլ վտանգավոր է, որ մարդիկ շատ են չարացած... Հրաման տուր, որ ամենալավ չուխոններին, որ գիտեն կացին բանացնել, կամ որ նկարիչ են, ուղարկեմ Վորոնեժ կամ Ազով, գործի համար...»:

2.

Տասներկու օր ռմբակոծում էին Մարիենբուրգ հնամենի ամրոցը: Որևէ կողմից մոտենալ չէր լինի՝ փոքր կղզյակի վրա էր (Պոյպ լճում), բարե պարիսպներն ուղղակի ջրից էին բարձրանում, պաշարողական կողպեքով փակ դարպասից ելնող կամուրջը հարյուր սաժենի չափ քարուքանդ էր արված հենց շվեդների կողմից:

Ամրոցում տարեկանի մեծ պաշարներ կային: Քայքայված Լիֆլանդիայում քաղցած ռուսներին այդ պաշարները շատ էին հարկավոր: Բորիս Պետրովիչը հրամայեց կամավորներ հավաքել, ելավ կանգնեց դիմացներն ու այսպես ասաց. «Ամրոցում խմելիք ու կանայք կան, տը-

ղերք, լավ կովեք, կթողնեմ մի օր քեֆ կքաշեք»: Գինվորներն առափնյա արվարձանում անմիջապես մի քանի գերանակապ խրճիթ քանդեցին, բերեցին, լաստեր կապեցին, ձողերով հրելով լաստերը, մոտ լողացին ամրոցի պարսպին: Ծվեդական ռումբերը պայթում էին լաստերի վրա:

Բորիս Պետրովիչը, առմուտքին կանգնած, հեռադիտակով նայում էր: Ծվեդները կատաղած էին, մոլեգնած՝ մի՞թե ետ կմղեն: Ամենևին չէր ուզում պաշարումով գրավել՝ մինչև խոր աշուն պիտի գլուխ ցավեցներ: Հանկարծ տեսավ. ամրոցի դարպասի մոտ հողի տակից մի մեծ բոց արձակվեց՝ աշտարակի գերանաշեն վերնահարկը ճոճվեց: Դարպասի մի մասը քանդվեց: Լաստերն արդեն մոտենում էին բացվածքին: Այդ ժամանակ ամրոցի լուսամուտից իշավ ու կախվեց ճերմակ պաստառը: Բորիս Պետրովիչը հոդավոր հեռադիտակը սեղմեց, գլխարկը հանեց, խաչակնքեց:

Ավերված կամրջի ցցագերանների վրայով ամրոցի բնակչությունը սկսեց մի կերպ ափ իջնել: Գրկած բերում էին երեխաներին, կապոցներ ու արկղներ: Կանայք լաց լինելով շրջվում էին լքված տների կողմը, սարսափահար նայում ավարը գնող ռուսներին: Սակայն երբ վերջին փախստականները թողեցին ամրոցը, կոփածո դարպասը դղրդյունով փակվեց, նեղլիկ հրակնատներից ծխի ամպիկներ թռան՝ առաջինը սպանվեց նավակով մոտեցած պորուչիկը, որը գնում էր ռուսական դրոշը բարձրացնելու ամրոցի վրա: Ի պատասխան, ափից հարվածեցին հրասանդները: Մարդիկ իրար անցան կամրջի վրա, ջուրը գցելով կապոցներն ու արկղները: Վիթխարի մի բոց վեր թռցրեց ամրոցի տանիքները, պայթյունը ցնցեց լիճը, քարեր թափվեցին մարդկանց վրա: Ամրոցը և պահեստները հրդեհով բռնվեցին: Պարզվեց, որ պրապորշչիկ Վոլֆը և շտիկ-յունկեր Գոտշլիխը անզոր կատաղությամբ իջել են վառոդի նկուղը և վառել պատրույգը: Վոլֆը չէր հասցրել փախչել պայթյունից: Շտիկ-յունկերը՝ վառված և արնաշաղախ, հայտնվեց պատնեշի բացվածքում, ընկավ ջրի մոտ նրան նավակի մեջ առան:

Ամրոցի պարետը սպաների հետ մտնելով խրճիթ, ուր ծանրուժեծ, մեջքը պատուհանին արած, ճաշի համար գցած սեղանի մոտ նստած էր գեներալ-ֆելդմարշալ Ծերեմետևը, հանեց գլխարկը, հարգանքով խոնարհվեց ու մեկնեց սուրը: Նույնն արեցին և սպահները: Բորիս Պետրովիչը, սրերը շպրտելով թախտի վրա, սկսեց չարացած քշավել շվեդների վրա. ինչի համար ավելի շուտ չէին հանձնվում, անտանելի այդքան նեղություն ու մահ պատճառեցին մարդկանց, նենգությամբ պայթեցրին ամրոցը... Խրճիթում կանգնած էին չսափրված, արևառ, հեծելազորի կտրիճ գնդապետներ, որոնք չարությամբ էին նայում: Այնուամենայնիվ, պարետը արիաբար պատասխանեց գեներալ-ֆելդմարշալին.

— Մերոնց մեջ շատ կանայք ու երեխաներ կան, ինչպես նաև գեր-

պաշարապետ, հարգարժան պատոր Էռնստ Գլյուքը կնոջ և դստերի հետ... Խնդրում եմ նրանց ազատ արձակել, զինվորների ձեռքը չընտալ... Կանայք և երեխաները քեզ պատիվ չեն բերի...

— Ոչինչ չեմ ուզում իմանալ,— բղավեց Բորիս Պետրովիչը... Նրա փափլիկ, ավելի շատ տնական նիստուկացի սովոր, սափրված դեմքը քրտնել էր զայրույթից: Փորը ներս քաշելով, վեր կացավ սեղանի մոտից:— Պարոն պարետին և պարոնայք սպաներին բանտարկել:— Շտկեց եռագույն լանջագոտին, մորեգույն մահուդե կարճ թիկնոցը մարտականորեն գցեց ուսերին, գնդապետների ուղեկցությամբ դուրս եկավ զորքի առաջ:

Ամրոցից սև ծուխ էր ելնում, արևի դեմը բռնել էր: Ծուրջ երեք հարյուր գերի շվեդ կանգնած էին ափին: Ռուս զինվորները, դեռ չիմանալով, թե ինչ են հրամայելու անել գերիներին, միայն գնում-գալիս էին լիվոնցի զայրացած մուժիկների մոտով. արանք երկու շաբաթ առաջ էին փախել Մարիենբուրգ, հարձակումից պաշտպանվելու: Խոսեցնում էին կապոցների վրա նստած, գլուխները վշտագին ծնկներին իջեցրած կանանց: Փող փչեցին: Հանդիսավորությամբ գալիս էր գեներալ-ֆելդմարշալը, երկար, աստղաձև խաչանները զնգզնգացնելով:

Ձիերից իջած դրագունների ետևից նրան նայեցին ինչ-որ մեկի աչքերը՝ երկու փոքր կրակի պես վառեցին սիրտը... Պատերազմական ժամանակներում կնոջ աչքերը մեկ-մեկ սուր են լինում սրի սայրից: Բորիս Պետրովիչը ծանրումեծ հազաց՝ «հըմմ» արեց ու շրջվեց... Ձիմվորական փոշեկոլոլ կաֆտանների ետևում երկնագույն շրջազգեստ... Խոժոռվեց, ծնոտն առաջ տնկած, տեսավ այդ աչքերը՝ սևորակ, արցունքից փայլող, աղերսագին ու ջանել... Ձիմվորների ուսերի վրայից, ոտնաթաթերի վրա ձգված ֆելդմարշալին էր նայում տասնյոթամյա մի աղջիկ: Բեխավոր դրագունը զգեստի վրայից զինվորական ճմրթված թիկնոց էր գցել նրա վրա (օգոստոսյան օրը գով էր) ու հիմա աշխատում էր ուսով ծածկել նրան ֆելդմարշալից: Աղջիկը յուր ձգել էր վիզը, սարսափից տանջահար ու թարմ դեմքը ջանում էր ծպտալ, շուրթերը սեղմվել էին: «Հը՞մմ»՝ մի անգամ էլ թնչացրեց Բորիս Պետրովիչը, կողքով անցավ գերիների մոտ...

Մթնշաղին, ճաշից հետո հանգստանալով, Բորիս Պետրովիչը թախտին նստած, տնքտնքում էր... Նրա մոտ խրճիթում միայն Ցագուժինսկին էր նստած, փետուրն էր ճոճացնում սեղանի եզրին...

— Տես, աչքերդ չփչացնես,— կամացուկ ասաց Բորիս Պետրովիչը:

— Վերջացնում եմ, պարոն ֆելդմարշալ....

— Լավ ,վերջացնում ես, վերջացրու: (Եվ արդեն միանգամայն ինքն իրեն:) Էս է մեր գործն էլի... Է՞հ, է՛հ... Ա՜խ, տեր իմ աստված...

Ամբողջ ափով թեթևակի խփում էր սեղանին, նայում պղտորված պատուհանից դուրս: Լճի վրա, ամրոցում դեռ կրակ կար... Ցագուժինսկին ուրախ-հեգնական, աչքի պոչով նայում էր պարոն ֆելդմարշալին. տես է, ինչպես է խեղճացել, վիզը փքվել է, դեմքը՝ մոլոր:

— Հրամանագիրը կտանեմ գնդապետին,— ասաց Բորիս Պետրովիչը,— մեկ էլ կմտնեմ դրագունների երկրորդ գունդը, կարծեմ... Անունն ինչ էր, ուրյադնիկ Օսկա Դյոմինին կգտնեմ: Նրա հետ գումակում մի աղջիկ կա... Մեղք է, կկորչի, դրագունները կինչացնեն... Կբերես նրան ինձ մոտ... Սպասիր... Օսկային էլ, առ, մի ռուբլի կընտաս, կասես նվիրում եմ...

— Ամեն ինչ ի կատար կածվի, պարոն ֆելդմարշալ...

Խրճիթում մենակ մնալով, Բորիս Պետրովիչը տնքտնքաց, գլուխն էր տարուբերում: Ինչ կարող ես անել. առանց մեղքի, որքան էլ կամենաս, ապրել չի լինի... Իննսունչորս թվականին Նեապոլ էր գնացել... Մի սևուկ կին էր սիրտը մտել... Հնար չկար... Վեզուվի լանջերն էլ բարձրացավ, դժոխային կրակին նայեց, Կապրի կղզում զարհուրելի ժայռերն էլ բարձրացավ, տեսավ հռոմեական եղկելի աստվածների կուռքերը, բարեխղճորեն շրջեց կաթոլիկ մենաստաններում, տեսավ ու ձեռքերով շոշափեց փայտը, որի վրա Հիսուսն էր նստել ու լվացել աշակերտների ոտքերը, խորհրդավոր ընթրիքից մնացած հացի կտորը, փայտե խաչը, որի վրա Քրիստոսի պորտի ու թլպատման մասնիկները կային, Քրիստոսի հնամաշ ոտնամանը, Հովհաննն Նախակարապետի հոր՝ Զաքարե մարգարեի գլուխը, և խիստ զարմանալի ու հրաշալի շատ այլ բաներ... Բայց չէ, ամեն ինչ պատմեցել էր այդ խայտակն Ջուլկան, որը պարում էր դափով, երգում... Ուզում էր հետը Մոսկվա բերել, աղջկա ոտքերն էր ընկել... Ահ, աստված իմ, աստված իմ...

Ցագուժինսկին, ինչպես միշտ, մի շնչով գնաց-եկավ, թեթևակի ներս հրեց քիչ առաջվա աղջկան՝ երկնագույն զգեստով, սպիտակ մաքուր գուլպաներով, գլխաշորը խաչաձև կապել էր կրծքին, գանգուր սև մազերի մեջ ծղոտի մնացորդներ կային (ըստ երևույթին, գումակում արդեն փորձել էին սայլերի տակ ճմլել նրան)... Աղջիկը շեմի մոտ ծնկի իջավ, գլուխը կախեց՝ մարմնացյալ հնազանդություն էր ու խնդրանք:

Ցագուժինսկին, առույգ թնչացնելով, դուրս եկավ: Բորիս Պետրովիչը որոշ ժամանակ գնում էր աղջկան... Բահեկազմ էր, երևում է՝ ճարպիկ էր, պարանոցը, ձեռքերը նուրբ էին, ձերմակ... Անչափ գրավիչ էր: Գերմաներեն խոսեց հետը.

— Անունդ ի՞նչ է:

Աղջիկը թեթև, կարճ հոգոց հանեց.

— Էլենե Էկատերինե...

— Կատերինա... Լավ... Հա՛յրդ ով է:

— Որբ եմ... Պատոր Էռնստ Գլյուքի տանը ծառայող էի...

— Ծառայող... Շատ լավ... Լվացք անել կարո՞ղ ես:

— Լվացք անել կարող եմ... Շատ բան կարող եմ անել... Երեխա խնամել...

— Գիտես ինչ կա... Սպիտակեղենս լվացող չունեմ... Է, հետո՞, աղջի՞կ ես:

Կատերինան փղձկաց, գլուխը չբարձրացրեց.

— Չէ արդեն... Նոր եմ պսակվել...

— Ա-ա-ա՜... Ո՞ւմ հետ:

— Թագավորական գինակիր Յոհան Ռաբեի...

Բորիս Պետրովիչը խոժոռվեց: Անբարյացակամորեն հարցրեց գինակրի մասին՝ իսկ ո՞ւր է, գերիների մե՞ջ է: Կարող է սպանվա՞ծ է:

— Ես տեսա, Յոհանը երկու գինվորների հետ իրենց գցեցին ջուրը, որ լողալով անցնեն լիճը... Հետո էլ չտեսա...

— Պետք չի լաց լինել, Կատերինա... Ջահել ես... Ռրիշին կգտնես... Ուտել ուզո՞ւմ ես:

— Շատ,— պատասխանեց կինը բարալիկ ձայնով, բարձրացրեց նիհարած դեմքն ու նորից ժպտաց՝ հնազանդ, վստահող: Բորիս Պետրովիչը մոտեցավ նրան, ուսերը բռնեց, բարձրացրեց, համբուրեց նուրբ ու տաքուկ մազերը: Ուսերն էլ էին տաքուկ, քնքուշ...

— Նստիր սեղանի մոտ: Կկերակրենք: Չենք նեղացնի: Խմո՞ւմ ես:

— Չեմ խմանում:

— Ուրեմն, խմում ես...

Բորիս Պետրովիչը ձայն տվեց սպասյակին, խստորեն (որ գինվորն ուրիշ-ուրիշ բաներ չմտածի, ատված չանի, քթի տակ չծիծաղի) հրամայեց ընթրիքի սեղան գցել: Ընթրելիս ինքը ոչ այնքան ուտում, որքան Կատերինային էր նայում. ինչքա՞ն էլ տված է: Քաղաքավարի էր ուտում, վարժ շարժումներով, խոնարհ աչքերով նայում էր Բորիս Պետրովիչին, երախտապարտությամբ բաց անում ճերմակ ատամները: Ուտելուց և խմածից այտերը շառագունել էին...

— Ծորերդ վայ թե լրիվ վառվե՞լ են...

— Ամեն ինչ կորավ,— անհոգ պատասխանեց նա:

— Ոչինչ, կառնենք... Էս շաբաթ կգնանք Նովգորոդ, քեզ համար ավելի լավ կլինի: Էսօր երթալին ձևով կքնենք՝ վառարանի վրա...

Կատերինան արտաանունքների տակից մութ հայացքով նրան նայեց, շիկնեց, երեսը թեքեց, ձեռքով ծածկեց...

— Մի տես է... Կատերինա, Կատերինա...— Այդ աղախինը սատանի դուր էր գալիս Բորիս Պետրովիչին... Սեղանի վրայով ձգվելով, բռնեց նրա դաստակը: Կատերինան շարունակ դեմքն էր ծածկում ձեռքով, մատների արանքից զմայլելի փայլում էր աչքը:— Լավ, լավ, լավ, քեզ ճորտ չենք դարձնի, մի վախենա... Վերնասենյակներում կապրես... Ինձ վաղուց տնտեսուհի էր հարկավոր...

3

Երբ Նարվայի տակ ջախջախված զորքերը Նովգորոդ էին գալիս, գինվորներից շատերը փախան՝ որը դեպի հյուսիս, աղանդավորների ճգնարանները, որը մեծ գետերը՝ Դոն, Վոլգա, Դնեպրի ստորին ավազանը... Փախավ նաև Կեղտամտուտ Ֆեդկան՝ մռայլադեմ, գլխովը շատ բան անցած մուժիկը... (Ամեն դեպքում գլուխն ուսերին չէր մնալու պորուչիկ Միրբախին սպանելու պատճառով:) Փախուստի դրդեց Անդրյուշկա Գոլիկովին՝ այնուամենայնիվ, ժամանակին Ծեկունայի վրա միասին բեռնանավեր էին քաշել, ամիսներ շարունակ նույն կաթսայից կերել: Նարվայի տարսափներից հետո Անդրյուշկայի համար միևնույն էր, թե ուր է գնալու, միայն թե զենքի տակ չընտներ...

Գիշերով գնդի յաբուն փախցրեցին կապած տեղից, մենաստանին ծախեցին հիսուն կոպեկով, փողը բաժանեցին, քրջերի մեջ պահեցին: Մեծ ճանապարհից ելան, գյուղեգյուղ մուրացկանություն, տեղ-տեղ էլ գողություն անելով գնացին՝ տերտերի բակից հավ թրջրին, Օստաշկովում, բուրմիստրի բակից լծասարքն ու թամբը տարան, ծախեցին պանդոկապանին: Երկու անգամ հաջողվեց եկեղեցու փողամանը կտրել, մեկը դատարկ էր, մյուսի մեջ մի կոպեկ էր ընկած:

Ձմեռն անցկացրեցին Վալդայում, ձնաթաղ ու անծխնելույզ խրճիթներում, շմոլքից շշված երեխաների, ճոճերի մեջ գիշերային քամու ոռնոցի տակ բղավող նորածինների հետ... Անդրյուշկա Գոլիկովը գիշերները հանախ արթնանում, նստում էր, մերկ ոտնաթաթերը բռնած: Կողքին, գարշահոտ ծղոտի վրա հորթն էր որոնում: Մուժիկն էր խոմփացնում թախտի վրա: Հատակին, հնոցատակի մոտ, ծնկներն իրենց քաշած, տան կնիկն էր քնած լինում: Քնի մեջ շմոլքահար երեխաներն էին մրթմրթում վառարանի վրա: Ուտիճները կծոտում էին մանկիկների մատների ծայրերն ու այտերը: Ճոճի մեջ պատկած մանկիկը լալիս էր՝ ու-ա-ա՜, ու-ա-ա՜... Հայտնի չէ, թե ինչի համար է ծնվել, հայտնի չէ, թե ինչի են կծոտում ուտիճները նրան...

— Անդրեյ, ինչի՞ չես քնում,— կհարցներ Ֆեդկան (նա էլ չէր քնում, մտածում էր:)

— Գնանք էստեղից, Ֆեդյա...

— Ուր գնանք, անխելք, գիշերով, բքի բերան...

— Վատ է, Ֆեդյա...

— Շան հոտ է էստեղ, շնչել չի լինում: Անասունից էլ վատ են ապրում: Հրեն, ոնց է խոմփացնում մուժիկը: Կխոմփացնի, մի շերեփ ջուր կխմի ու կգնա բանելու, ձիու պես, օրնիբուն... Իրիկունը հարցրեցի՝ ամբողջ գյուղը կոռի տակ է բանում: Ջահել կալվածատերը զորքի հետ է գնացել, բայց ծնողն էստեղ է, գյուղում, ձորից էն կողմ, կարգին տներ ունի: Ժլատ, կովարար հալիվոր է: Մուժիկներից ամեն ինչ սրբում-տանում է, մենակ մոչախոտն է թողնում... Ու բոլոր մուժիկներն էլ անխելք են: Ով մի քիչ խելքով կամ աչքաբաց է լինում, դնում է սելը տանում Վալդայ ու շուկայում ծախում է հենց սելի վրայից, ու ինքն է ծախում: Խելքովներին լրիվ ծախել է՝ էդպես ավելի հանգիստ է իր համար: Էստեղ երեխեքն էլ են անխելք ծնվում, անլեզու...

Բոքիկ, սառած ոտնաթաթերը սեղմելով, Անդրյուշան նայում էր, ճոճվում: Տասը մարդու լիուլի կբավականացներ քսանչորս տարվա ընթացքում Անդրյուշկայի քաշածը: Դիմացկուն էր... Եվ նույնիսկ ոչ թե տկար մարմնով էր դիմացկուն, այլ խավարից պրծնելու անմարելի ցանկությամբ... Սովատանջ, բզկտված, ասես ճեղքում էր հողմակործան անտառը, սարսռազդու վայրերը, տարին տարու վրա, վերստ վերստի ետևից հավատալով, որ մի տեղ լուսաշող երկիր կա, ուր

ինքը կհասնի այնուամենայնիվ, կհատի-կանցնի կյանքի միջով: Որտե՞ղ է այդ երկիրը, ինչպիսի՞ն է:

Հիմա էլ անա, վատ լսելով, թե ինչ է ասում կողքին, ծղոտի վրա պառկած Ֆեդկան, Անդրեյը բացեց աչքերը խավարի մեջ... Կամ հիշում էր, կամ աչքին էր երևում. կանաչ բլրակ ու մի կեչի, որը բոլոր ճյուղերով, բոլոր տերևներով դողում, սրսփում էր տաք գեփյուռից... Օհ, ինչպիսի՞ բերկրանք... Ու չքվեց ծառը... Մի դեմք լողաց, որ երբեք չէր տեսել, ավելի մոտեցավ, դեմ-դիմաց, բացեց աչքերն ու Անդրյուշկային նայեց՝ անչափ կենդանի... Եթե հիմա տախտակ, վրձին ու ներկ լիներ, կնկարեր դեմքը... Քմծիծաղ տվեց, չքացավ... Երկնագույն մշուշի միջից քաղաք երևաց աչքին... Անչափ զարմանալի, անչափ զմայլելի, օհ, ի՜նչ քաղաք էր: Որտե՞ղ փնտրի այդ քաղաքը, փնտրի սրսփացող սաղարթով այն կեչին, ծպտացող զմայլելի դեմքը:

— Առավոտը ուղիղ կբշենք կալվածատուն, բոյարինին ստեր կըփչենք՝ ինչքան ուզեցավ, մեկ էլ տեսար ծառայատանը ուտելու բան տվեցին,— խոխոջացրեց Ֆեդկան: Ունևոր տներում նա միշտ սկսում էր պատմել Նարվայի աղետի մասին, փչում էր եղած-չեղածից, ունկընդիրներից հատկապես արցունք քամելով(մեկ-մեկ ձանձրույթից կալվածատերն էլ էր մտնում ծառայատուն՝ վշտով համակված, ձեռքն այտին դրած), երբ պատմում էր, թե ինչպես Կառլոս թագավորը շրջում էր ձիով ճակատամարտի վայրում, ուղղափառ զինվորների անհամար քանակություն ջարդելուց հետո...

«... Երեսը պայծառ էր, ձախ ձեռքին՝ ոսկեխաչ աշխարհագունդը, աջ ձեռքին սուր սրած թուրը, ինքը՝ ոսկու, արծաթի մեջ, ձին՝ գորշ ու սպիտակ, փրփրած, մինչև փորատակը մարդու արյունով ներկված, ձիու սանձից էլ բռնած երկու քաջ գեներալ էին գալիս... Ես էլ պառկած էի, գնդակը կրծքիս մեջ... Չորս կողմս շվեդներ էին ընկած տոպրակների պես, սպանված: Թագավորը մոտ քշեց, կանգնեց ու հարցրեց. «Էս ի՞նչ մարդ է սպանված»: Գեներալները պատասխանեցի, թե «Ռուս քաջ զինվոր է պառկած, ուղղափառ հավատի համար էր կռվում մենակը, մերոնցից տասներկու գրենադեր է սպանել»: Թագավորն ասաց նրանց. «Քաջի մահով է մեռել»: Գեներալները, թե՝ «Չէ, մեռած չի, գնդակն է կրծքի մեջ»: Ու ինձ վեր կացրին, ես էլ ոտքի ելա, հրացանս առա ու իսկական պատվի բռնեցի, ոնց որ պետք է թագավորի առաջ: Ու նա ասաց. «Ապրես,— գրպանից մի ոսկի չերվոնեց հանեց:— Առ, ասաց, քեզ լինի, ռուս քաջ զինվոր, հանգիստ գնա քո հայրենիքը ու ռուսներին ասա. աստծո հետ կռիվ մի արեք, հարուստների հետ դատի մի մտեք, շվեդի հետ մի պատերազմեք...»:

Նման պատմությունից հետո Ֆեդկային, նրա հետ նաև Անդրեյին, անպայման թողնում էին ծառայատանը գիշերելու, կերակրում էին: Բայց դժվար էր ունևոր տուն ընկնելը: Մարդիկ անվստահ էին դարձել: Տարեցտարի ավելի շատ ժողովուրդ էր փախչում զինվորագրումից, ռազմական ու զեմստվոյական պարտիքից, թաքնվում էին անտառներում, ավազակություն անում մենակ կամ խմբերով... Այնպիսի փոքր քաղաքներ կային, ուր միայն ծերերն էին մնացել, պառավներն ու փոքր երեխաները, ում մասին հարցնեիր, կասեին, թե էս մեկին դրագուն են վերցրել, էն մեկին Ուրալ են տարել հող փորելու, մեկ ուրիշն էլ, որ վերջերս շուկայում խանութ ուներ՝ պատվով, աստվածապաշտ մարդ էր, կին ու երեխա թողել, լախտն առած ավազակություն է անում ճամփեզրի ձորերում...

Ֆեդկան քանիցս մտածել էր՝ չմիանա՞ն ավազակներին, թալանով զբաղվեն: Բայց ասենք այդպես՝ ո՞ւր էին գնալու: Ինչքան պիտի թափառեին տնետուն՝ հերիք չէ՞ր... Սակայն Անդրեյը ոչ մի կերպ չէր համաձայնում... Պնդում էր՝ գնանք, մի կես օրով գնանք աշխարհի ծայրը... Ֆեդկան նրան ասում էր. «Լավ, ասենք, գնացինք հասանք, էնտեղ էլ են մարդիկ, չէ՞, ձրի ո՞վ է հաց տալու, ստիպված պիտի բատրակություն անենք կազակների մոտ կամ ստրուկ դառնանք կալվածատիրոջը, մեջք ծռենք... Իսկ թե մեզ տանք թալանի, մեկ էլ տեսար մարդա հարյուր ռուբլի կարեցինք գլխարկներիս մեջ: Էդքան փողով վաճառական էլ կդառնանք: Արդեն ոչ դրագունը, ոչ ատենավորը, ոչ էլ կալվածատերը բկիցդ չի բռնի, ինքդ քո գլխի տերը...»:

Մի անգամ, ամառ էր, մայրամուտին նստած էին դաշտում: Չոր թրիքից կրակ էին արել, ծուխը ելնում էր, քամին ցողունները թեքել, սվսվացնում էր: Անդրյուշկան նայում էր մայր մտնող արևին՝ երկրի պռնկին մի աղոտ շերտ էր մնացել:

— Ֆեդյա, քեզ մի բան եմ ասելու, էն էլ մի անգամ... Մեջս մի ուժ կա, ի՜նչ ուժ է, մարդու ուժից վեր... Լսում եմ, քամին սվսվացնում է խոտերի արանքում, էնպես եմ հասկանում ամեն ինչ, սիրտս կտոր-կտոր է լինում... Նայում եմ՝ արևը մայր է մտնում, մթնշաղ է, ու ամեն ինչ հասկանում եմ, ինքս էլ ցրիվ կգայի երկնքով մայրամուտի հետ, էնքան տխրություն ու ուրախություն կա մեջս...

— Մեր գյուղում մի խելառ կար, սագարած էր,— ասաց Ֆեդկան, ճյուղով խառնելով փշրվող ածուխները,— էնպիսի բաներ կասեր, որ մեկ-մեկ ոչինչ չէինք հասկանա... Եղեգնից փողեր էր սարքում, լավ նվագում էր՝ ամբողջ գյուղով կգնայինք լսելու.... Էն ժամանակ մարդ էին մահ գալիս, որ տանեն լուսահոգի Ֆրանց Լեֆորտի տուն՝ երաժիշտ, ու ինչ ես կարծում, նրան տարան...

— Ֆեդյա, Նարվայի տակ Բորիս Պետրովիչի ճորտերից մեկն ինձ պատմեց իտալական երկրի մասին... Նկարիչների մասին... Թե ոնց են ապրում, ոնց են նկարում... Ես չեմ հանգստանա, էդպիսի մի նկարչի վերջին ճորտը կդառնամ՝ ներկը կտրորեմ... Ֆեդյա, ես գիտեմ... Փայտե, կաղնե տախտակ ես վերցնում, լավ շփում ես յուղով, կամ ներկով աստառը քաշում.... Ամանների մեջ ներկ ես բացում, կամ որ յուղով, կամ որ ձվով... Վրձիններն առնում ես... (Գոլիկովը շատ ցածրաձայն էր խոսում, քամու սվսվոցը չխանգարելով:) Ֆեդյա, օրը կբացվի ու կմթնի, բայց իմ տախտակի վրա միշտ լուսավոր կմնա... ծառ է, ասենք, սոճի կամ կեչի՝ ի՞նչ կա դրա մեջ: Բայց որ նայես իմ տախտակի վրայի նկարածին, ամեն ինչ կհասկանաս, լացդ կգա...

— Իսկ որտե՞ղ է էդ երկիրը։
— Չեմ իմանում, Ֆեդյա... Հարցնենք՝ կասեն։
— Կարելի է էնտեղ էլ գնալ... Մեկ է։

4.

Յոթ հարյուր երկու թվականի գարնանը նավով Արխանգելսկ հասան ջրարգելակների տասը վարպետ, որոնց Անդրեյ Արտամոնովիչ Մատվեևն էր վարձել Հոլանդիայում, մեծ ոոմիկով (ամսական տասնյոթ ռուբլի քսան կոպեկ, պետությանն սնունդով)։ Վարպետների կեսին ուղարկեցին Տուլայի մոտերքը, Իվանովսկոյե լիճ, Դոնի և Օկայի միջև Ուպա և Ծատ գետակների վրայով երեսունմեկ քարաշեն ջրարգելակ կառուցելու (ինչպես ծրագրված էր անցյալ տարի։) Վարպետների մյուս մասը գնաց Վոլգայի Վոլոչեկ՝ Տվերիցայի և Մստայի միջև ջրարգելակներ կառուցելու։

Վոլգինովոյեչեկյան ջրարգելակով Կասպից ծովը պիտի միացվեր Լադոգա լճին, Իվանովսկոյեի ջրարգելակներով՝ Լադոգան ու ամբողջ Պովոլժյեն Սև ծովին։

Պյոտրը Արխանգելսկում էր, ուր Դվինայի գետաբերանն էին ամրացնում և ֆրեգատներ կառուցում սպիտակծովյան նավատորմի համար։ Տեղի արդյունահանողները նրան պատմեցին, որ վաղուց ի վեր հայտնի է Սպիտակ ծովից Լադոգա տանող ճանապարհը՝ Վոլգի, Օնեգո-լճի և Սվիրի վրայով։ Դժվար ճանապարհ է՝ գետագալարներն ու սահանքները շատ են, բայց եթե միացնող գետակներ փորվեն ու ջրարգելակներ դրվեն մինչև Օնեգո-լիճ, սպիտակծովյան ամբողջ ափն ապրանքը ուղղակի բեռնալողով կհասցնի Լադոգա։

Այնտեղ, Լադոգա լիճն էին մտնում երեք մեծ ճանապարհ երեք ծովերից՝ Վոլգան, Դոնը և Սվիրը։ Չորրորդ՝ Բալթիկ ծովից Լադոգան բաժանում էր Նևայի ոչ մեծ գետանցը, որ երկու ամրոց էին պաշտպանում՝ Նոտեբուրգը և Նիենշանցը։ Հոլանդացի ինժեներ Իսահակ Աբրահամը ասում էր Պյոտրին, ցույց տալով քարտեզը. «Ջրարգելակներով ջրանցքներ փորելով, դուք կկենդանացնեք մեռած ծովերը, և ձեր հարյուրավոր գետերը, ամբողջ երկրի ջուրը կհորդա Նևայի մեծ հոսանքն ու ձեր նավերը կհասնի բաց օվկիանոս»։

Յոթ հարյուր երկու թվականի աշնանից ջանքերն ուղղվեցին Նևան նվաճելուն։ Ապրակսինը՝ ծովակալի որդին, ամբողջ ամառ ասպատակում էր Ինգրիան, հասավ մինչև Իժորա, և ծովափնյա մոայլ հարթավայրով ոլոր-մոլոր հոսող արագընթաց գետակի ափին ջախջախեց շվեդական գեներալ Կոռնգիորտին, ետ շպրտեց Դոդերհոֆյան բլրաշար, որտեղից էլ նա, խայտառակված, նահանջեց Նևայից այն կողմ, Նիենշանց ամրոցը՝ Օխտայի վրա։

Ապրակսինն իր զորքով Լադոգա գնաց ու կանգ առավ Նազիա գետի մոտ։ Բորիս Պետրովիչ Շերեմետևն էլ էր Նովգորոդից այնտեղ գնում, մեծաքանակ հրետանիով ու զումակներով։ Սեմյոնովցիների և պրեոբրաժենցիների հինգ զումարտակներով Պյոտրը Արխանգելսկից նավակներով հասավ Օնեգո-լճի խորշը և ափ իջավ Նյուխչա ձկնորսական ավանի մերձակայքում։ Կապիտան Ալեքսեյ Բրովկինին (ամուսնանն Իվան Արտեմիչին հաջողվել էր որդուց փոխանակել շվեդացի գերի փոխգնդապետի հետ, ինքն էր գնացել Նարվա, երեք հարյուր եֆիմոկ էլ վրայից էր տվել) այդտեղից ուղարկեց Սորոկա՝ աղանդավորական ավան, որը Վոլգի գետաբերանին էր։ Ամբողջ Վոլգը նավակով պիտի անցներ Ալեքսեյը և տեսներ՝ գետը հարմա՞ր է ջրարգելակավորման։

Զորքերը Նյուխչայից Պոլ-լճով և Վոժմոալմա ավանով գնացին Պովենեց՝ անտառներով, ճեղանուղիներով ու կամուրջներով։ Այդ ճանապարհը երեք ամսում կառուցել էր սերժանտ Շչեպոտևը, գործի լծելով գյուղացիներին և Կեմի մենաստանի մոնթերին, Սումսկոյի պոսադականներին, ճգնարանների ու ավանների աղանդավորներին։ Զինվորները գլանիվների վրա քարշ տալով տանում էին կազմուպատրաստ երկու առագաստանավ։ Գնում էին ճահիճների միջով, ուր ընկած ծառերն էին փտում և մոծակները բզզում, և վիթխարի քարաժայռերը մամուռով էին պատված, մուշտակի պես։ Տեսան սքանչելի Վոլգ-լիճը, անտառապատ բազում կղզիներով, որոնց ցից-ցից սապատները, հրեշների պես, բարձրանում էին արևողող ջրերի վրա։ Դժգույն երկընքում ամպի պատառիկ չկար, լիճը և ափերն ամայի էին, ասես կենդանի ամենայն ինչ թաքնվել էր թավուտներում։

Ռազմական այդ ճանապարհից տասը վերստի վրա Վոլգորեցկու Դանիլովյան մենաստանում օրուգիշեր աղոթում էին, ինչպես չարչարանաց շաբաթին։ Տղամարդիկ ու կանայք, կտավե պատանքները հագած, աղոթում էին ծնկաչոք, մոմերը վառվում էին անմար։ Զորս դարպասներն ամուր գոցված էին, պահատնակներում ու աղոթարանների շուրջը ծղոտի շեղջերը և կուպրը պատրաստված էին։ Այդ օրերին ճրագնումից դուրս էր եկել հայր սուրբ Նեկտարին։ Համայնքը վառելուց ու փախուստից հետո, իր ծուխը չունենալով, եկել ու բնակվել էր մենաստանում։ Բայց Անդրեյ Դենիսովը նրա հանդեպ բարյացակամ չէր ու ժողովրդին մոտ չէր թողնում։ Զայրացած Նեկտարին լռության ուխտով փոսը մտավ ու երկու տարի անխոս նստած էր։ Ծյուղերով ու ճիմով ծածկված փոսին եթե մեկնումեկը մոտենում էր, ծերուկը կղկղանք էր շպրտում վրանները։ Այսօր ինքնագլուխ հայտնվել էր ժողովրդի առաջ. նեղլիկ մորուսը ասել-հասել էր ծնկներին, թիկնոցը որդերն էին կերել, պատուհածքների տակից դեղնած կողերն էին երևում։ Զորացած ձեռքերը վեր պարզելով, նա բղավեց. «Անդրյուշկա Դենիսովը սնկաբլիթո՞վ է ծախել Քրիստոսին... Ի՞նչ եք նայում։ Ինքը՝ նեռն է մեզ մոտ եկել, չորսուների վրա երկու նավ քարշ տալով.... Խոզերի պես ձեզ լցնելու են մեջը, տանեն զարհուրելի դժոխք... Փրկվե՞ք... Մի լսեք Անդրյուշկա Դենիսովին... Տեսեք, թե ինչպես է քիթումոռթը տոզացրել, պատուհանից նայում... Պյոտր ցարը լցոնած թխվածք է ուղարկել նրան...»։

Անդրեյ Դենիսովը, տեսնելով, որ գործը վատանում է ու թերևս

գտնվեն իսկապես վառվել կամեցողներ, սկսեց կշտամբել ծերունուն ու բղավում էր իր ցի պատուհանից. «Փոսի մեջ ոնց որ թե խելքդ թոցրել ես, Նեկտարի, քեզ թողնեն մենակ մարդկանց վառես, ամբողջ աշխարհը կրակ ես տալու... Ցարը մեզ ձեռք չի տալիս, թող ինքն իր ճամփով գնա, մենք էլ մեր... Իսկ ինչ գալիս է, որ բլիթով ես մեղադրում ինձ, ինքդ ինձնից շատ ես խժռել քո կյանքում: Մենք գիտենք, թե գիշերները քեզ ով էր հավի միս բերում փոսդ, մենաստանում էլ հավ չմնաց, ամբողջ փոսդ լիքը ոսկոր է»:

Այդ ժամանակ ոմանք գնացին փոսը, և իրոք, անկյունում հավի ոսկորներ էին թաղված: Իրարանցում սկսվեց: Անդրեյ Դենիսովը գաղտագողի ելավ մենաստանից ու մի լավ ձի հեծած գետն անցավ, զորքը գտավ խարուլկների կրակով, ձիերի խրխնջոցով, երեկոյան օրավարտ փչող պղնձյա փողերի ձայներով:

Պյոտրը Անդրեյ Դենիսովին ընդունեց կտավե վրանում՝ սպաների հետ երթային սեղանի մոտ նստած, ծխամորճ էին ծխում, մոծակներին դրանով քշելով: Կապայով ու խաչգդակով երիտասարդ մարդուն տեսնելով, բթի տակ ծիծաղեց Պյոտրը.

— Բարև, Անդրեյ Դենիսով, ի՞նչ լավ բան կասես: Էլի՞ երկու մատով եք ինձնից պաշտպանվում:

Դենիսովը, ինչպես հրամայեցին, սեղանի մոտ նստեց, առանց կնճռոտվելու, միայն բթի տակից քշելով ծուխը, ասաց անկեղծորեն, շիտակ նայելով ցարի աչքերին.

— Ողորմած թագավոր, Պյոտր Ալեքսեևիչ.... Մենք գործը սկսել ենք անմարդաբնակ ու խուլ մի տեղ, խավարամիտ ժողովուրդ է հավաքվել էստեղ, ամեն տեսակի մարդիկ կան: Կան որ սիրաշահելով ենք հնազանդեցրել, կան, որ վախեցնելով: Կներես, եղել է, որ քո անունով ենք վախեցրել... Մեծ գործի մեջ պակաս բան կլինի: Ինչ ասես եղել է, էն տեսակ բաներ, որ չարժե հիշել...

— Իսկ հիմա՞ ինչ կա,— հարցրեց Պյոտրը:

— Հիմա մեր տնտեսությունը հաստատ է, ողորմած թագավոր: Հինգ հարյուր դեսյատինից ավելի վարելահող ենք մաքրել, էդքան էլ արոտավայր: Կովերի նախիրը հարյուր քսան գլուխ է: Ձկնորսություն ենք անում, ապխտում, կաշի ենք մշակում, թաղիք լմում: Մեր հանքերն ունենք: Հանքի վարպետներ ու դարբիններ ունենք, որ Տուլայում էլ չկան...

Պյոտր Ալեքսեևիչն արդեն առանց քմծիծաղի էր հարցուփորձ անում՝ որտեղ ինչ հանքեր կան: Իմանալով, որ երկաթը Օնեգո-լճի ափերին է և նույնիսկ Պովենեցում էլ մի տեղ կա, ուր մի փութ հանքաքարից կես փութ երկաթ են հալում, ծխամորճը բորբոքեց.

— Իսկ ինձնի՞ց ինչ եք ուզում, անտերտերականներ:

Դենիսովը մտածեց ու ասաց.

— Ողորմած թագավոր, զորքի համար քեզ երկաթ է պետք: Հրաման տուր, որտեղ հարմար եղավ, հնոցներ ու դարբնոցներ սարքենք: Մեր երկաթը Տուլայինից լավն է ու ավելի էժան կնստի... Ակինֆիյ Դեմիդովը Ուրալում հիսունով է հաշվում...

— Սուտ ես ասում, երեսունհինգով կհաշվենք: Բայց դե, Ուրալը հեռու է, մենք՝ մոտ... Էստեղ պղինձ էլ կա: Պովենեցի տակ, Արջասարում կայմածառեր կան՝ քառասուն արշինանոց կայմ կտան, փետն էլ զնգում է պնդությունից... Նևան քոնն եղավ, լաստերը կբշենք Հոլանդիա: Մի բանից ենք վախենում՝ տերտեր ու դպրաչորից... Մեզ պետք չեն... Ինձ կներես, ոնց կարողանում, խոսում եմ... Թող մենք մեր կարգով ապրենք... Շատ է վախենալի... Մենաստանում գործը երեք օր թողել են լրիվ, պատանքները հագել ու սաղմոսներ են երգում... Անասունը ոչ ջրած, ոչ խոտ տված, գոմերում քառաչում է: Տերտեր ուղարկեցիր մեզ, օտար խաչով, հաղորդությունով, բոլորը կթողնեն, դեսուդեն կփախչեն... Պահել չի լինի... Տանջված, չարչարված ժողովուրդ են: Նորից կփախչեն խորքերն ու գործը կմնանի...

— Զարմանալի է,— ասաց Պյոտրը:— Իսկ ձեր մենաստանում շա՞տ ժողովուրդ կա:

— Հինգ հազար աշխատող արական ու իգական սեռի, մեկ էլ հալիվորները, մեկ էլ փոքրերը...

— Ու բոլորն ազա՞տ են:

— Ճորտությունից են փախել...

— Է, ի՞նչ անեմ ձեզ հետ... Լավ, պատանքներդ հանեք... Երկու մատով խաչակնքեք, թեկուզ մեկով, կրկնակի տուրք կվճարեք ամբողջ տնտեսությունից...

— Համաձայն ենք, ամբողջ սրտով...

— Նավակ սարքող կարգին վարպետներ կուղարկեք Պովենեց: Ինձ մեծ ու միջին նավակներ են պետք, հինգ հարյուր հատ...

— Ամբողջ սրտով...

— Դե, Անդրեյ Դենիսով, խմիր իմ առողջության կենացը:— Թիթեղյա շտոֆից լիքը գավաթ օղի լցրեց, գլուխը հակած մատուցեց: Դենիսովը գունատվեց: Պայծառ աչքերը թրթռացին: Բայց արժանապատվությամբ ոտքի ելավ: Լայն շարժումներով, դանդաղ, երկու մատը սեղմած խաչակնքեց: Գավաթը վերցրեց: (Պյոտրը ակնապիշ նրան էր նայում:) Մինչև վերջին կաթիլը խմեց: Խաչգդակը հանեց, կարմիր շրթունքները գդակով սրբեց:

— Ծնորհակալ եմ ողորմածության համար:

— Մի քիչ էլ ծուխ՝ վրայից:

Պյոտրը նրան մեկնեց ծխամորճը՝ թքոտած պոչն առաջ: Այս անգամ Դենիսովի աչքերում ժպիտ ցոլաց, առանց տատանվելու ուզում էր վերցնել: Պյոտրը ձեռքը դեն տարավ:

— Իսկ որտեղ... (Խոսեց այնպես, կարծես ոչինչ չէր եղել:) Իսկ որտեղ էլ հանք գտաք, կողքի հողերով, ինչքան պետք եկավ, չափեք ու պուները տնկեք: Դրա մասին գրեք Մոսկվա՝ Վիլիուսին: Ես նրան կասեմ, որ հանքերից ու հալող վառարաններից տասը տարի տուրք չառնի... (Դենիսովը հոնքերը բարձրացրեց:) Քի՞չ է: Տասնհինգ տարի տուրք չենք առնի: Երկաթի գնի մասին կպայմանավորվենք:

Անմիջապես սկսեք աշխատելը: Թե մարդ պետք եկավ, կամ ուրիշ բան, գրիր Վինիուսին... Փող չուզեք... Մի բաժակ էլ խմիր, տուրբ մարդ...

Սեպտեմբերի վերջին, ամպամած օրերին, երեք զորաբանակներն ի մի գալով Նազիայի ափին, շարժվեցին դեպի Նոտեբուրգ: Հինավուրց ամրոցը կանգնած էր կղզու վրա, Լադոգայից ելնող Նևայի մեջտեղում: Երկու բազուկներով, ամրոցի մոտով նավերը գետ կարող էին մտնել միմիայն բաստիոններից տասը սաժեն հեռավորությամբ, թնդանոթների փողերի տակ:

Զորքերը ելան հրվանդան, Նոտեբուրգի դիմաց: Անձրևաբեր, ցածրընթաց ամպերի միջից երևում էին քարաշեն աշտարակները՝ կոնաձև տանիքներին հողմացույցներ: Պատերն այնքան բարձր էին և ամուր, որ հրվանդանում զիգզագ խրամատներ ու մարտկոցների համար ուղուտներ փորող ռուս զինվորներն ընդամենը հոգոցներ էին հանում: Զուր չէր, որ ամրոցը կառուցած նովգորոդցիների օրոք անունն Ընկույզ էին դրել՝ հեշտ կոտրվող բան չէր: Ծվեդները կարծես թե երկար էին մտածում: Պարիսպների վրա ոչ ոք չէր երևում: Կապարե տանիքները մոայլ ամպերով էին պարուրվում: Բայց անա ամրոցի կլոր աշտարակի կայմաձողով վեր շուլալվեց թագավորական առյուծապատկեր դրոշը, քամուց փողփողաց: Ծանր մի թնդանոթ պլնձյա բոմբիլունով կրակեց՝ արկը թշշալով ընկավ հրվանդանին, իրամատների առաջ: Ծվեդները մարտն ընդունեցին:

Նևայի աջ ափը, որ ամրոցի մյուս կողմում էր, խիստ էր ամրացված, լճից այնտեղ ընկնելը դժվար էր ճահիճների պատճառով: Վաղորդ, հավաքած ամբողջ զորքը Նոտեբուրգով բերելը, ձախ ափով, լճից հրվանդանի վրայով դեպի Նևա տանող անտառուղի էին բացել: Հիմա մի քանի հազար զինվոր ճոպաններով փոքր նավեր էին բերում Լադոգայից, քարշ տալով անտառի միջով և իջեցնում Նևան, ամրոցից ցած: Հիսնական հոգի, ճոպանի ծայրը բռնելով, քաշում էին, մյուսները պահում էին կողերից, որ նավը հատակով սահի գերանների վրայով: «Մի՜ հատ էլ: Մի՜ հատ էլ: Միասի՜ն»,— բղավում էր Պյոտրը: Կաֆտանը հանել էր, շապիկը թրջված էր, փողկապ կապած երկար վզի երակները փքվել էին, ոտքերի կոճերն արյունոտել, գերանների ատամքն ընկնելուց... Բռնում էր ճոպանից, աչքերը չռում. «Միանգամի՜ց: Հո՜ւպ տուր»: Երեկվանից բան չէին կերել մարդիկ, ձեռքերի ափերն արնոտել էր: Բայց սատանան առանց դադարի բղավում էր, հայհոյում, կռվում էր ու քաշում... Գիշերվա դեմ հիսուն ծանր նավակ, թթերին ու խեղերին հրաձիգների համար սարքած հարթակներով, հաջողվեց քարշ տալով Նևա իջեցնել: Մարդիկ ուտել անգամ չուզեցին՝ ով որտեղ ընկավ, քնեց թաց մամուռի, գոռների վրա:

Թմբուկները ճարճատեցին լույսը չբացված: Պրապորշչիկները ցնցում էին մարդկանց, ոտքի հանում: Հրամայված էր մուշկետները լցնել, երկու փամփուշտ (անձրևից պաշտպանելով) ծոցը դնել, երկու գնդակ բերանի մեջ պահել: Կաֆտանների փեշերով փականքները

ծածկելով, զինվորները բարձրանում էին ճոճվող նավակների հարթակների վրա: Ալիքն էր զարկում: Մթության մեջ թիավարելով, անցան արագահոս գետի աջ ափը: Այնտեղ աղմկում էր անտառը: Զինվորները ցած թռան եղեգնուտի մեջ: Շշնջաձայն հայհոյում էին սպաները, վաշտերը խմբելով:

Սպասում էին: Քամոտ արշալույսը բացվում էր՝ մորեգույն շերտեր էին լողում թոչող մշուշի միջից: Կապարագույն գետով մոտեցավ թիերով միակայմ նավակը: Միջից թռան Պյոտրը, Մենշիկովը և Կենիգսեկը: (Սաքսոնյան դեսպանորդը կամավոր ցանկացել էր արշավին մասնակցել ու ցարի հետ էր լինում:) «Պատրաստվե՛լ»՝ հնչեցին ձայները երկարուձիգ: Պյոտրը, թփերից բռնելով, բարձրացավ զառիվեր ափը: Քամին բարձրացնում էր նրա կարճ կաֆտանի փեշերը: Աղոտ ու երկար ստվերի պես քայլեց նա, զինվորներն արագ-արագ հետևում էին ցարին: Ձախ կողմում Մենշիկովն էր, ատրճանակները բռնած, աջ կողմում՝ Կենիգսեկը: Հանկարծ կանգ առան: Զինվորների առաջին շարքը, շարունակելով քայլել, անցավ նրանցից: Պյոտրը հրամայեց. «Մուշկետներն ի զե՞ն... Հրահանները քաշե՛լ... Կրակել շարաներթո՞վ...»: Շարքերում հատու շխկշխկացին կայծքարները... Երկրորդ շարքն առաջ անցավ, Պյոտրին ետևում թողնելով: «Դիմացներդ նայեք,— վայրենաձայն բղավեց Պյոտրը:— Առաջին շարաներթը: Կրա՜կ»: Հրացաններից արձակված բոցերով լուսավորվեցին ճոճվող միայնակ սոճիներն ու քիչ հեռվում, կոնդերից այն կողմ ընկած հարթավայրում շվեդական խրամատների ցածրիկ հողաթմբերը: Այնտեղից էլ կրակեցին, բայց անվստահ: «Երկրորդ շարաներթը... Կրա՜կ»: Երկրորդ շարքը, առաջինի պես, կրակելով, ծնկի իջավ... «Երրորդը... Երրորդը,— բղավում էր խզված ձայնը:— Սվիններն առա՜ջ... Վազքո՜վ...»:

Պյոտրը վազեց դարուփոս դաշտով: Զինվորները, շարքերը խառնելով ավելի ու ավելի բարձր և չարացած բղավելով, հազարամարդ բորբոքված հորձանքով, սվիններն առաջ պարզած, խուժեցին հողապատնեշի վրա: Խրամատներից արդեն հանձնվողների վեր պարզած ձեռքերն էին ցցվել: Ծվեդների մի մասը փախչում էր անտառի կողմը:

Աջափնյա ամրությունները գրավվեցին: Երբ լրիվ լուսացավ, գետի վրայով տեղափոխեցին հրասանդները: Ու հենց նույն օրը գետի երկու ափերից սկսեցին ռմբակոծել Նոտեբուրգը:

Երկու շաբաթ անխնա ռմբակոծության ենթարկված ամրոցում մեծ հրդեհ ծագեց և պայթեցին հրետանային նկուղները, որից փուլ եկավ պարսպի արևելյան կողմը: Այդ ժամանակ տեսան քթին սպիտակ դրոշով նավակը, որը արագ մոտենում էր հրվանդանի խրամատներին: Ռուսական մարտկոցները լռեցին: Հրասանդերից, որոնց փողերին ջուր էին լցնում, գոլորշի էր բարձրանում: Նավակից իջավ բարձրահասակ, դալկադեմ մի ապա, գլուխն արյունոտ չաթով փաթաթած: Անվստահ շուրջը նայեց: Խրամատի վրայից ցատկելով, մոտեցավ Ալեքսեյ Բրովկինը, հանդգնորեն նայելով հարցրեց.

— Ի՞նչ լավ բան ես եկել ասելու։

Սպան արագ-արագ խոսեց շվեդերեն, ցույց տալով խաղաղ երկինք բարձրացող ծխի հսկայական ամպը։

— Ռուսերեն խոսիր՝ հասկանո՞ւմ եք, թե՝ չէ,— բարկացած ընդհատեց Ալեքսեյը։

Օգնելու մոտեցավ Կենիգսենը՝ հագած-կապած, քաղաքավարի, հարգանքով հանեց գլխարկը, խոնարհվեց սպային և հարցը կրկնելով, թարգմանեց ասածը. պարետի կինը և սպաների կանայք խնդրում են իրենց թույլ տալ դուրս գան ամրոցից, ուր անհնար է մնալ ծխի և կրակի պատճառով։ Ալեքսեյը սպայից վերցրեց Բորիս Պետրովիչ Շերեմետևին ուղղված նամակը տվյալ խնդիրքով։ Շտապում տվեց։ Հանկարծ այլայլվեց չարությունից, նամակը շպրտեց սպայի ոտքերի տակ, ցեխի մեջ։

— Ֆելդմարշալին չեմ զեկուցի... Սա ի՞նչ բան է։ Կանանց դուրս թողնենք ամրոցից։ Մենք էլ երկու շաբաթ նորից մարդ կոտորենք գրոհելով... Հենց հիմա հանձնվեք միանգամից, և ուրիշ ոչ մի խոսակցություն...

Կենիգսենն ավելի քաղաքավարի էր. նամակը վերցրեց, սրբեց կափտանով, վերադարձրեց սպային, բացատրելով, որ խնդիրքն իզուր է։ Սպան, ուսերը թոթվելով ու զայրացած, նավակ նստեց, նրա հետևանքով պես թնդացին Գոշկայի, Գինտերի և Պյոտր Ալեքսեևիչի մարտկոցների քառասուներկու հրասանդները։

Ամբողջ գիշեր հրդեհը մոլեգնում էր։ Աշտարակների վրա հալվեցին կապարե տանիքները, և վառվող ծպեղները փչում էին, բոցի լեզուներ արձակելով։ Հրացոլքը լուսավորել էր գետը, ռուսների երկու բանակատեղիները և հոսանքով դեպի ցած՝ ափին կազմուպատրաստ կանգնած հարյուրավոր նավակները, հարթակներին հոծ շարքերով կանգնած, կողերի լայնքով գրոհասանդուղքները դրած կամավորներին։ Կեսգիշերն անց հրաձգությունը դադարեց, լսվում էր միայն մոլեգնած կրակի բվվոցը։

Արևածագից երկու ժամ առաջ ցարական մարտկոցից մի թնդանոթ կրակեց։ Թմբուկները թափով զարկեցին։ Նավակները, ավելի ու ավելի լուսավորվելով հրդեհի բոցերով, թիավարելով շարժվեցին դեպի ամրոց։ Առաջնորդում էին երիտասարդ սպաները՝ Միխայլա Գոլիցինը, Կարպովը և Ալեքսանդր Մենշիկովը։ (Ալեքսաշկան երեկ լացակումած ասել էր Պյոտրին. «Մին խեռ, Շերեմետևը տվեց-հասավ ֆելդմարշալի... Մարդիկ վրաս ծիծաղում են. գեներալ-մայո՞ր, պսկովյան նահանգապե՞տ։ Իսկականից՝ սպասյակ եղել եմ, սպասյակ էլ մնացել... Գործի դիր, զինվորական աստիճան ստանամ...»)։

Պյոտրը ֆելդմարշալի և գնդապետի հետ հրվանդանում էր, մարտկոցի մոտ։ Հեռադիտակներով նայում էին։ Նավակները արագ մոտենում էին արևելյան կողմից, այնտեղ, ուր քանդվել էր պարիսպը, շիկացած արկեր էին թռչում նրանց վրա։ Առաջին նավակը խրվեց ափի մեջ, կամավորները սիսեռի պես թափվեցին հարթակի վրայից, քարշ տվեցին սանդուղքները, բարձրացան։ Բայց սանդուղքները

չէին հասնում պարսպի ծայրին, նույնիսկ բացվածքի վրա։ Մարդիկ բարձրանում էին միմյանց մեջքերի վրայով, մագլցում ելուստներից կառչելով։ Վերևից քարեր էին թափվում, հալած արճիճ։ Վիրավորները պոկվում-ընկնում էին երեք սաժենանոց բարձրությունից։ Արկերից բոցավառված մի քանի նավակ, կրակի լույս արձակելով, լողում էին հոսանքով։

Պյոտրը ագահորեն նայում էր հեռադիտակով։ Երբ վառոդի ծուխը ծածկում էր նակատամարտի վայրը, հեռադիտակը թևատակն էր դնում, սկսում ոլորել կափտանի կոճակները (մի քանիսն արդեն սրկել էր)։ Դեմքը հողագույն էր, շրթունքները սևացած, աչքերը փոս ընկած...

— Սա ինչ բան է, ինչ բան է սա,— խլաձայն կրկնում էր, վիզը շարժելով, Շերեմետևին դառնալով։ (Բորիս Պետրովիչը միայն հոգոց էր հանում անշտապ՝ այս երկու տարվա ընթացքում ավելի զարհուրելի բաներ էր տեսել)։

— Էլի ոռմբ խնայեցինք... Մերկ ձեռքերո՞վ կգրավենք։ Չի կարելի էդպես...

Բորիս Պետրովիչը պատասխանեց, աչքերը փակելով.

— Ատված ողորմած է, էդպես էլ կգրավենք...

Ոտքերը չոլելով, Պյոտրը հեռադիտակը դրեց ձախ աչքին։

Շատ վիրավորներ ու սպանվածներ էին թափված պարսպի տակ։ Արևն արդեն բարձրացել էր, շղարշված ամրոցի աշտարակներից բարձրացող ծխով, բայց ինչպես երևում էր, հրդեհը նվազել էր։ Կամավորների մի նոր ջոկատ, արևմտյան կողմից նավակներով մոտենալով, թռավ սանդուղքների վրա։ Բոլորի ատամների արանքում վառվող պատրույգներ կային, տոպրակների միջից նռնակներ էին հանում, ծայրերը կծում-գցում, վառում էին ու շպրտում։ Ոմանց հաջողվեց բացվածքի մեջ լցվել, բայց այնտեղից գլուխ դուրս հանել չէր լինի։ Շվեդները համառորեն էին դիմադրում։ Թնդանոթների կրակոցներ, նռնակների ճայթյուն, գետի վրայից հասնող թույլ բղավոցներ՝ այս ամենը մեկ մեղմվում, մեկ նորից էր բորբոքվում։ Այդպես տևեց մեկ ժամ, երկու ժամ...

Թվում էր, թե բոլոր հույսերը, դժվարին բոլոր կանխանշումների ճակատագիրը սանդուղքներով իրար անցած մագլցող, պարսպի ելուստների տակ շունչ առնող, շվեդական հրետառումբերից քարերի ետևում թաքնվող ու կրակող այդ փոքր մարդուկների համառության մեջ էր... Ոչնչով օգնել չէր կարելի։ Մարտկոցները ստիպված անգործության էին մատնված։ Ավել նավակներ ունենային, մի երկու հազար զինվոր էլ տեղափոխեին օգնության։ Սակայն ազատ նավակներ չկային, սանդուղքներ էլ չկային, նռնակները չէին հերիքում...

— Այ հոգիս, գնայիր վրան, մի բան խմեիր, հանգստանայիր։ Ինչի ես իզուր տեղը սիրտդ մաշում,— կնկա պես հոգոց հանելով ասում էր Բորիս Պետրովիչը։

Հեռադիտակը չիջեցնելով, Պյոտրն անհամբերությամբ մերկացրեց ատամները։ Այնտեղ, պարսպի վրա երևաց բարձրահասակ, ճերմակամորուս մի ծերունի՝ երկաթյա զրահով, հնամենի սաղավարտով։ Ցույց

տալով ցած, ռուսներին, լայն բացեց բերանը՝ բղավում էր, ըստ երևույթին: Շվեդները խիտ շրջապատելով նրան, նույնպես բղավում էին, հավանորեն ինչ-որ բանի շուրջ վիճելով: Նա հրեց մեկին, մյուսին խփեց ատրճանակի կոթով՝ նկուստների վրայով ծանր-ծանր իջավ բացվածքի մեջ: Մի հիսուն մարդ հետևեց նրան: Բացվածքի մեջ մոլեգնած կծիկ դարձան շվեդները և ռուսները: Մարդկային մարմինները տոպրակների պես գլորվում էին ցած... Պյոտրը երկարերկար տնքաց:

— Մերուկը պարետն է՝ Երիկ Շլիպպենբախը, գեներալ Շլիպպենբախի մեծ եղբայրը, որին ես ջարդեցի,— ասաց Բորիս Պետրովիչը:

Շվեդներն արագ գրավեցին բացվածքը, այնտեղից ճարճատեցին նրանց մուշկետները: Սանդուղքներով ցած էին թափվում, սրերը մերկացրած հարձակվում ռուսների վրա: Բարձրահասակ, զրահավոր ծերուկը, բացվածքի մեջ կանգնած, ոտքը գետին էր խփում, ձեռքերը աքլորի թևերի պես թափահարելով... («Շվեդը կատաղել է, մահից էլ չի վախենում»,— ասաց Բորիս Պետրովիչը:) Ռուսների մնացորդները նահանջում էին դեպի ջուրը, դեպի նավակները: Ինչ-որ մեկը, դեմքը լաթով փաթաթած, դեսուդեն էր ընկել, զինվորներին քշելով նավակների մոտից, որ չնստեն, ցատկոտում էր, խփում... Ընկնելով նավակի քթին, դատարկ նավակը հրեց ափից, թռավ մյուս նավակի կողմը՝ նորից հրեց... («Միշկա Գոլիցինն է,— ասաց Բորիս Պետրովիչը,— պակաս տաքգլուխը չի»:) Ջեռնամարտը հենց նավակների մոտ էր բորբոքվել...

Տասներկու մեծ նավակ, թիերը ճկելով, հոսանքին հակառակ լողում էին դեպի ամրոց: Վերջին օժանդակ գորամասն էր, Մենշիկովի ջոկատը: Ալեքսաշկան, առանց կափտանի, վարդագույն մետաքսի շապկով, անգլիարկ, սուրը մի ձեռքին, ատրճանակը՝ մյուս, առաջինն ափ ցատկեց... («Պարծենկո՞տ, պարծենկո՞տ»,— մրթմրթաց Պյոտրը:) Հակառակորդի թարմ ուժերը տեսնելով, շվեդները վազեցին դեպի պարիսպ, բայց միայն մի մասը կարողացավ վեր մագլցել, մյուսներին սրախողխող արեցին: Ու կրկին պարսպի վրայից քարեր, գերաններ թափվեցին, հրետառումբեր արձակվեցին: Ռուսները նորից մագլցեցին սանդուղքներով: Պյոտրը հեռադիտակով հետևում էր վարդագույն շապկին: Ալեքսաշկան՝ աներկյուղ, կոչում և փառք էր նվաճում իր համար... Բարձրանալով բացվածքի կատարը, վրա պրծավ ծեր Շլիպպենբախին, խույս տվեց ատրճանակի գնդակից, սրամարտի բռնվեց՝ ծերուկին հազիվհազ փրկեցին յուրայինները, վերև տարան... Շվեդները թուլացան այդ նոր գրոհից... («Ա՜յ քեզ սատանա»,— բղավեց Պյոտրը ու բոտֆորտով խփեց հողին:) Ալեքսաշկայի վարդագույն շապիկն արդեն ամենավերևում էր երևում, պարսպի առամնեբի արանքում:

Հեռադիտակով վատ էր երևում: Հյուսիսային մայրամուտի վիթխարի, շիկացած հրացոլքը սփռվել էր ամրոցի ետևներում:

— Պյոտր Ալեքսեևիչ, ոնց որ թե սպիտակ դրոշը կախեցին,— ասաց

Բորիս Պետրովիչը:— Ժամանակն է արդեն, տասներեք ժամ է կռվում ենք:

Գիշերը Նևայի ափին մեծ խարույկներ էին վառվում: Ճամբարում ոչ ոք քնած չէր: Պղնձյա կաթսաների մեջ շիլան էր բլթբլթում, ձողերի վրա ամբողջ ոչխարներ էին խորովվում: Կեսից սղոցած տակառների մոտ բեխավոր եֆրեյտորներ էին կանգնած, բոլորին լիքի խմիչք էին տալիս, ով ինչքան կամենար:

Տասներեքժամյա մարտից դեռ շունչ չառած կամավորները, համարյա բոլորը արյունոտ լաթերով փաթաթված, կոճղերի, եղևնու ճյուղերի վրա խարույկների շուրջ նստոտած, տխրալի դիպվածներ էին պատմում ճակատամարտի, վերքերի, ընկերների սպանվելու մասին: Պատմողների ետևում շուրջանակի կանգնած, բերանները բացած մարտին չմասնակցած զինվորներն էին անշարժացել: Լսելով, շրջվում ու նայում էին գետի վրա սևին տվող վառված աշտարակներին: Այնտեղ ամայացած ամրոցի պատերի տակ, կույտերով սպանվածների դիակներ էին ընկած:

Ավելի քան հինգ հարյուր կամավոր էր սպանվել, գումակի սայլերի վրա և վրանների տակ շուրջ հազար վիրավորներ էին տնքտնքում: Զինվորները, հոգոց հանելով, կրկնում էին. «Էս էլ քեզ Ընկույզը՝ ջարդեցինք»:

Գետակից այն կողմ, բարձունքի վրա, ցարական լուսավորված վրանից բղավոցներ էին լսվում, եղջերափողերի նվագ: Կենաց գավաթների վրա չէին կռկռում՝ օրվա ընթացքում շատ էին կրակել: Վրանից ստեպ-ստեպ ելնում էին հարբած սպաները՝ պետքերը հագած: Մոտենալով գետի ափին, մի գնդապետ երկար պլշել էր մյուս ափին վառվող զինվորական խարույկների վրա, և հարբած թնդաց.

— Ապրեք, տղերք, լավ կռվեցիք:

Մի քանի զինվոր գլուխները բարձրացրեցին, փնթփնթացին.

— Ինչ ես գոռում, գնա խմի քո համար, քաջ զինվոր Եռուլան:

Վրանից նույնպես պետքի համար ելավ Պյոտրը: Ճոճվելով միզեց: Ճամբարի կրակները լողում էին աչքի առաջ. հուզվադեպ էր հարբում, բայց այսօր ճոճվում էր: Ետևից ելավ Մենշիկովը և Կենիգսեկը:

— Մին խեղ, գուցե մո՞մ բերեմ քեզ, երկար մնացիր,— հարբած ձայնով հարցրեց Ալեքսաշկան:

Կենիգսեկը ծիծաղեց՝ «ա՛հ, ա՛հ», հավի պես սկսեց պար գալ, ետևից կափտանի փեշերը բարձրացրած:

Պյոտրը նրան դիմեց.

— Կենիգսեկ...

— Այստեղ եմ, ձերդ մեծություն...

— Ինչ էիր գլուխ գովում սեղանի վրա...

— Գլուխ չէի գովում, ձերդ մեծություն...

— Սուտ ես ասում, ամեն ինչ լսեցի... Ի՞նչ էիր փչում Ցերեմե-

տևին. «Այդ իրն ինձ համար հոգու փրկությունից թանկ է...»: Էդ ի՞նչ իր ուներ

— Լիֆլյանդուհի մի ճորտ ունի Շերեմետևը, նրանով էր պարծենում, ձերդ մեծություն: Իսկ ես չեմ հիշում, որ...

Կենիգսեկը լռեց, կարծես միանգամից լրջացավ: Պյոտրը, բերանը քմծիծաղով բացած, վերևից ներքև, արագիլի պես նայում էր նրա վախեցած դեմքին...

— Ահ, ձերդ մեծություն... Ըստ երևույթին, ծխատուփի մասին եմ ասել, ֆրանսիական աշխատանք է, իմ գումակում է... Գնամ բերեմ...

Երերուն վազքով իջավ դեպի գետակը, սարսափահար արձակելով կամզոլի փոքրիկ կոճակները կրծքի վրա... «Տե՞ր աստված, տե՞ր աստված, ինչպե՞ս իմացավ: Թաքցնեմ, անմիջապես դեն նետեմ...»: Մատները խճճվեցին ժանյակների մեջ, գտավ մետաքսյա քուղով մեդալիոնը, ուժ տվեց, որ պոկի, քուղը մտավ վզի մեջ, ցավեցրեց... (Պյոտրը ցցված էր բարձունքի վրա, նայում էր ետևից:) Կենիգսեկը վստահեցնելով, գլխով էր անում՝ իբր, հիմա կբերեմ... Գրանիտե գլաքարերի մեջ աղմկող խորունկ գետակի վրա, ափից ափ գերան էր դրված: Կենիգսեկը քայլեց գերանի վրայով, կավապատ ոտնամանները սայթաքում էին: Շարունակ քուղն էր ձգում, որ պոկի: Գայթեց, ձեռքերը հուսակտուր թափահարեց, մեջքի վրա ընկավ գետակը:

— Հարբած անխելք,— ասաց Պյոտրը:

Սպասում էին: Ալեքսաշկան խոժոռվեց, մտահոգ իջավ բարձունքից:

— Պյոտր Ալեքսեևիչ, ոնց որ թե փորձանքի մեջ ընկավ... Մարդ պիտի կանչենք...

Կենիգսեկին միանգամից չգտան, չնայած գետակի խորությունն ընդամենը երկու արշին էր: Ըստ երևույթին, ընկնելիս ծոծրակը քարերին էր խփել ու անմիջապես սուզվել: Զինվորները նրան քարշ տվեցին վրանի առաջ, դրեցին խարույկի մոտ: Պյոտրը սկսեց իրանը ճկելբացել, ձեռքերը սեղմել-թողնել, փչեց բերանի մեջ... Կյանքն անհետեթ ավարտեց դեսպանորդ Կենիգսեկը... Հագուստի կոճակներն արձակելով, Պյոտրը նրա կրծքից կախ մի մեդալիոն գտավ, մանկան ձեռքի ափի մեծության: Գրպանները քրքրեց՝ մի տրցակ նամակ հանեց: Իսկույն ևեթ Ալեքսաշկայի հետ վրան մտավ:

— Պարոնայք սպաներ,— բարձրաձայն ասաց Ալեքսաշկան,— կերուխումը վերջացրեք, թագավորը քնել է ուզում...

Հյուրերը շտապ թողեցին վրանը (մի քանիսին ստիպված էին քարշ տալ թեատակերից, խթանները հողին քսելով:) Տեղնուտեղը թերմացքներով լի ամանների, հանգչող մոմերի արանքում Պյոտրը բաց արեց թրջված նամակները: Եղունգով պոկեց մեդալիոնի կափարիչը՝ Աննա Մոնսի դիմանկարն էր, հիանալի մի աշխատանք. Անխենն, ասես կենդանի, ժպտում էր երկնագույն անմեղ աչքերով, հավասարաշար ատամներով: Դիմանկարի շուրջ, ապակու տակ եզերված էր մազերի մի փունջ, որ բազմիցս հանբուրել էր Պյոտր Ալեքսեևիչը: Կապարիչի ներսի կողմից ասեղով փորագրված էր՝ «Սեր և հավատարմություն»:

Ապակին նույնպես պոկելով, Պյոտրը շոշափեց մազերի փունջը, մեդալիոնը շպրտեց սփոռցին լճացած գինու մեջ: Սկսեց ժամակները կարդալ: Բոլորն Աննան էր գրել Կենիգսեկին, տխմար, քաղցր-մեղցր, կակղած կնկա նամակներ էին:

— Էսպես,— ասաց Պյոտրը: Կոթնեց բազկին, մոմին էր նայում:— Դե, ասա խնդրեմ: (Քթի տակ ծիծաղելով, գլուխն էր օրորում:) Փոխարինե՞լ էր... Զեմ հասկանում... Սուտ էր ասում: Ալեքսաշկա, ո՞նց էր ստում... Ամբողջ կյանքում, չլինի՞ հենց առաջին անգամից... Զեմ հասկանում... «Սեր և հավատարմություն»...

— Լեշի մեկն էր, մին խեռց, լիրբ, գինետան կնիկ... Վաղուց էի ուզում քեզ ասել...

— Ձե՛նդ, ձե՛նդ, էդ մեկը չհամարձակվես... Դուրս կորի:

Ծխամորճը լցրեց: Նորից կոթնեց, ծուխ արձակելով: Նայում էր գինու մեջ ընկած դիմանկարին՝ «Ցանկապատերի վրայով էի գալիս մոտդ... քանի անգամ եմ անունդ կրկնել... վստահելով, ընել եմ քո տաք ուսի վրա... Տխմա՞ր, տխմա՞ր... Հավ պիտի պահես դու... Լա՛վ... Վերջացա՛վ...»: Պյոտրը ձեռքը թափ տվեց, վեր կացավ, շպրտեց ծխամորճը: Ընկնելով ճոճռան մահճակալին, ծածկվեց ոչխարենու քուրքով:

5.

Նոտեբուրգ ամրոցը վերանվանեցին Շլիսսելբուրգ՝ բանտի-բաղաք: Բացվածքը լցրեցին, փայտյա ծածկ կապեցին հրդեհված աշտարակների վրա: Կայազոր թողեցին տեղում: Զորքերը գնացին ձմեռային բանակատեղի: Պյոտրը Մոսկվա վերադարձավ:

Մյասնիցկիյե դարպասի մոտ, զանգերի ղողանջի ներքո, երևելի առևտրականներն ու վաճառականների հարյուրյակը խաչվառներով դիմավորեցին Պյոտրին: Մյասնիցկայան հարյուր սաժէն երկարությամբ կարմիր մահուդով էր ծածկված: Վաճառականները գլխարկները վեր էին շպրտում, օտարերկրացիների պես «Վիվատ» բղավում: Պյոտրը գալիս էր, ռազմական ոսկեզօծ մարտակառքի մեջ կանգնած, ետևից շվեդական գետնաճակ դրոշներն էին քարշ տալիս, գերիներն էին քայլում գլուխները կախ: Մի բարձր կառքով փայտյա ասյուծ էին բերում, որին իշխան-պապ Նիկիտա Զոտովն էր հենած, թիթեղյա խույրով, ալ կարմիր թիկնոցով, թուրն ու օղու շտոփը բռնած:

Երկու շաբաթ խրախճանքի մեջ էր Մոսկվան, ինչպես և վայել էր տվյալ պարագային: Հարգարժան շատ քաղաքացիներ հիվանդացան ու մեռան այդ խնջույքներից: Կարմիր հրապարակում լցոնած թխվածք էին թխում ու բաժանում պոսադականներին և քաղաքացիներին: Լուր տարածվեց, թե ցարը հրամայել է վլազմայական նախշած պրյանիկ ու թաշկինակ բաժանել, բայց բոյարները խաբել են ժողովրդին՝ պրյանիկ ստանալու համար հեռավոր գյուղերից մարդիկ էին գալիս: Ամեն գիշեր կրեմլյան աշտարակների վրայից հրթիռներ էին արձակվում, պատերի վրա կրակացայտ անիվներ էին պտտվում: Լիուրջ խրախճանք արեցին ու զվարճացան մինչև Աստվածածին, մինչև մեծ հրդ-

դեմը: Կրակը բռնկվեց Կրեմլում, տարածվեց Կիտայ-գորոդում, քամին ուժեղ էր, և խանձողները քշում-տանում էր Մոսկվա գետից այն կողմ: Կրակն ալիք-ալիք տարածվեց քաղաքում: Ժողովուրդը վազեց դեպի ուղեփակերը: Տեսան, թե ինչպես ծուխ ու կրակի մեջ կորած, Պյոտրն արշավում է հոլանդական հրշեջ խողովակը հենած: Ոչինչ փրկել չէր լինի: Կրեմլը հիմնովին վառվեց՝ բացի Հաղարապահեստներից և Կոլոչկինի պալատից, վառվեց հին ապարանքը (հազիվ կարողացան փախցնել արքայադուստր Նատալյային և արքայազն Ալեքսեյին), բոլոր վարչատները, վանքերը, զինամթերքի պահեստները, Իվան Մեծից ընկնում էին զանգերը, ամենամեծը՝ ութ հազար փթանոցը, ճաքեց:

Հետո մոխրակույտերի վրա մարդիկ ասում էին. «Թագավորիր, թագավորիր, դեռ ինչեր ես տեսնելու...»:

Հոլանդիայից Գավրիլա որդու զալատյան կապակցությամբ, ժամերգությունից հետո Բրովկինների տանը ամբողջ ընտանիքը հավաքվել էր սեղանի շուրջ. վերջերս փոխգնդապետի կոչում ստացած Ալեքսեյը, մայլադեմ, կոպտաձայն, ոտից գլուխ ծխախոտի հոտ բռնած Յակովը՝ վորոնեժյան ղեկապետը, Դեսպանական վարչատանը Շաֆիրովի մոտ թարգմանիչ աշխատող Արտամոշան, կնոջ՝ Նատալյայի հետ: Նատալյան երրորդ անգամ էր հղիացել, գեղեցկացել, ալարկոտ դարձել ու լենքին էր տվել. Իվան Արտեմիչը նայում ու չէր կըշտանում հարսից: Ռոման Բորիսովիչն էլ էր ներկա, աղջիկների հետ: Այս աշնանը Անտոնիդային էլ հաջողվեց կնության տալ պորուչիկ Բելչինին՝ ցածրատոհմ էր, բայց ցարի հովանավորությունն էր վայելում (ներկայումս Ինգրիայում էր:) Օլգան դեռ հալումաշ էր լինում՝ տանը մնացած:

Ռոման Բորիսովիչը զառամել էր այս տարիների ընթացքում, գլխավորապես հարկադրյալ շատ խմելու պատճառով: Չէր հասցնում քունն առնել խնջույքից հետո, խոհանոցում արդեն որևէ զինվոր էր նստած լինում, հրամանը ձեռքին՝ այսօր ներկա լինել այսինչ տեղում... Ռոման Բորիսովիչը վերցնում էր ճիլոպե բեխերը (որ ինքն էր հորինել ու սարքել) և փայտյա թուրը: Գնում էր ցարական ծառայության:

Սեղանակից նման բոյարները վեց հոգի էին, բոլորն էլ մեծատոհմիկ, գվարճանքի կարգված որը հիմարության, որը չար սադրանքի հետևանքով: Նրանց գլխավորում էր իշխան Շախովսկոյը՝ հարբեցող և որևէ մեկի բարին չկամեցող, չորչորուկ մի ծերուկ, նաև չարախոս: Առանձնապես ծանր ծառայություն չէր. սովորաբար, հինգերորդ կերակրատեսակից հետո, երբ բավականաչափ գինովցած էին լինում, Պյոտր Ալեքսեևիչը, ձեռքերը սեղանին դնելով ու վիզը ձգելով, աչքերն ոլորելով, բարձրաձայն ասում էր. «Տեսնում եմ, մեզ հիմնավոր հաղթում է Իվաշկա Խմելնիցկին, խայտառակ չլինենք հանկարծ»: Այդ ժամանակ Ռոման Բորիսովիչը պիտի ելներ տեղից, ճիլոպե բեխերը կախեր քթի տակ ու նստեր փայտե ցածրիկ ճոճուն ձին: Գինու օգավոր կմատուցեին նրան, պետք է թուրը բարձրացրած, ուրախ-զվարթ խմեր, որից հետո բացականչեր. «Մեռնում ենք, բայց չենք հանձնվում»: Գահաճները, գծերը, ծաղրածուները, կուզիկները ծղրտոցով վրա կպրծնեին, ձի հեծած Ռոման Բորիսովիչին կպտտեցնեին սեղանի շուրջը: Այս էր ամբողջ ծառայությունը, եթե մի նոր զվարճանք չմտներ Պյոտր Ալեքսեևիչի ուղեղը:

Իվան Արտեմիչի տրամադրությունն այսօր լավ էր. ընտանիքը՝ հավաքված, գործերը՝ ավելի լավ պետք էլ չէր, հրդեհն անգամ վնաս չհասցրեց Բրովկինների տանը: Չկար միայն սիրելի աղջիկը՝ Ալեքսանդրան: Հենց նրա մասին էր պատմում Գավրիլան՝ Ամստերդամի նավագնացության դպրոցի երիտասարդ, լրջմիտ շրջանավարտը:

Ալեքսանդրան հիմա Հաղագայում էր ապրում (Անդրեյ Արտամոնովիչ Մատվեևի դեսպանության հետ), բայց ամուսնու հետ բնակվում էին ոչ թե դեսպանական նստավայրում, այլ առանձին տուն էին վարձել: Զտարյուն ձիեր, կառքեր էին պահում, նույնիսկ երկկայմ գբոսանավ... («Ախ, ախ»,— զարմանում էր Իվան Արտեմիչը, չնայած ձիերի և գբոսանավի համար, Պյոտր Ալեքսեևիչից գաղտնի, քիչ փող չէր ուղարկում Սանկպետերբուրգ:) Վոլկովները Վարշավայից մեկնել էին ավելի քան մեկ տարի առաջ, երբ Ավգուստ թագավորը փախել էր շվեդներից: Բեռլինում էին եղել, բայց ոչ երկար, Ալեքսանդրան գերմանական արքունիքը չէր հավանել. թագավորը՝ կծծի, գերմանացիներն ապրում են տաղտկալի, հաշվենկատ, ամեն պատառը համրելով...

— Հաղագայի նրա տունը լիքն է հյուրերով,— պատմում էր Գավրիլան,— երևելի մարդիկ, ինչ ասեմ, քիչ են, ավելի շատ չունևոր մարդիկ են՝ արկածախնդիրներ, նկարիչներ, երաժիշտներ, աչքի սուրմա թոցնող հնդիկներ... Նրանց հետ նավով լողում է ջրանցքների վրա, տախտակամածին, պատիկ աթոռի վրա նստած, տավիղ է նվագում...

— Սովորե՞լ է,— ափերն իրար զարկեց Իվան Արտեմիչը, տնեցիներին նայելով:

— Որ փողոց է դուրս գալիս, ման գալու, բոլորը խոնարհվում են, իսկ նա մենակ գլխով է անում, էպես... Ամեն անգամ չէ, որ Վասիլիին թողնում է հյուրերին երևալ, նա էլ ուրախ է դրանից՝ շատ է սուսուփուս դարձել, մտքերի մեջ ընկած, գիրքը շարունակ ձեռքին, նույնիսկ լատիներեն է կարդում, գնում է նավաշինարանները, թանգարաններն ու բոսա՝ նայում է, զննում...

Գավրիլայի գալուց առաջ Սանկան ասել էր, որ ի վերջո, Հաղագան էլ է իրեն հոգնեցրել. հոլանդացիները միայն առևտրից ու դրամից են խոսում, կանանց հանդեպ իսկական ռաֆինե չկա, պարելիս ոտքերդ են տրորում... Ուզում է Փարիզ գնալ...

— Անպայման պիտի միանվետ պարի ֆրանսիական թագավորի հետ: Ա՛յ, աղջիկ եմ ասել է՞,— տխրվախ էր անում Իվան Արտեմիչը, բայց աչքերը հանույքից կկոցել էր:— Բա ե՞րբ է ուզում տուն գալ: Դրանից խոսի...

— Մեկ-մեկ բախտախնդիրներն էլ են հոգնեցնում նրան, ինձ ասեց. «Գոշկա, գիտես, մեր բանջարանոցի կոկորոշն եմ ուզում... Մոսկվա գետի մոտ, այգում հո չէի ճոճվի ճոճանակով...»:

— Ուրեմն, հորական տունը ոչնչով չի փոխարինվի...

Իվան Արտեմիչն ամբողջ օրը պատրաստ էր լսել Ալեքսանդրա դստեր մասին: Ճաշի կեսից եկան Պյոտրն ու Մենշիկովը: (Պյոտրը հանախ էր հանփան թեքում այս կողմ:) Գլխով արեց տնեցիներին, իրար անցած հոմաՀ Բորիսովիչին ասաց. «Նստիր, էսօր ծառայություն չկա»: Կանգնեց պատուհանի մոտ ու երկար նայում էր հրդեհատեղերին: Դեռ վերջերս եռուզեռով լի փողոցներում մոխրակույտերի միջից ցցված էին վառարանների ծխնելույզներ ու անգմբեթ, վառված փոքր եկեղեցիներ: Մռայլաշունչ քամին մոխրի կույտեր էր քշում-տանում:

— Կորած տեղ է,— ասաց նա հատ-հատ:— Արտասահմանում քաղաքները հազար տարով կանգուն են մնում, իսկ սա, չեմ էլ հիշում, թե երբ չի վառվել... Մոսկվա՞...

Տրտմած նստեց սեղանի մոտ, որոշ ժամանակ լուռ կերավ՝ բավական շատ: Գավրիլային մոտը կանչեց, սկսեց խստորեն հարցափորձ անել՝ ինչ է տվորել Հոլանդիայում, ինչ գրքեր է կարդացել: Հրամայեց թուղթ ու թանաք բերել, որ նավի մասեր, առագաստներ նկարի, ծովային ամրությունների գծագրեր ցուցադրի: Մի տեղ վեճի բռնվեց, բայց Գավրիլան իրենն էր պնդում: Պյոտրը շոյեց նրա գլուխը. «Տեսնում եմ, հորդ փողերն իզուր չեն կերել»: Իվան Արտեմիչն, այդ լսելով, զսպեց երջանկության արցունքները:) Ծխամորճը վառեց ու պատուհանին մոտեցավ Պյոտրը:

— Արտեմիչ,— ասաց,— նոր քաղաք է պետք կառուցել...

— Կսարքեն, Պյոտր Ալեքսեևիչ, մի տարի հետո նորից տները կբարձրանան:

— Էստեղ չէ...

— Բա որտե՞ղ, Պյոտր Ալեքսեևիչ: Փորձած, տաքացրած, հնուց եկած տեղ է՝ Մոսկվա՞ն է: (Գլուխը վեր տնկած, կարճլիկ ու հաստլիկ, աչքերն էր ճկճկացնում արագ-արագ:) Պյոտր Ալեքսեևիչ, գործն արդեն սկսել ենք... Հինգ հազար մուժիկ եմ վարձել, որ անտառ կըտրեն... Խրճիթները տեղում կսարքենք, Շեկսնայով, Շեյոնայով լաստերին բարձած կբերենք. առ ու տունտեղ դարձիր, խրճիթը դարպասով, փոքր դռնով՝ հինգ ռուբլի... Դրանից լավ բա՞ն: Ալեքսանդր Դանիլիչը փայատեր է գալիս...

— Էստեղ չէ,— կրկնեց Պյոտրը, դուրս նայելով:— Լադոգայի վրա է պետք քաղաք հիմնել, Նևայի վրա... Անտառ կտրողներիդ քշիր էնտեղ...

Իվան Արտեմիչի կարճ ձեռքերն իրենից անկախ ետ գնացին մեջքի վրա, մատները խաղացնելու...

— Կարելիա...— ասաց բարակիկ ձայնով:

— Մին խեռց, պառավ Մոնսիխան էլի մոտս էր եկել... Լաց էր լինում, խնդրում, որ իրեն ու աղջկան գոնե կիրիսե թողնեն, աղոթելու,— զգուշորեն ասաց Մենշիկովը...

Բրովկինների տնից էին ելել իրիկնադեմին, հրդեհատեղերի մոտով գնում էին: Քամին մոխիրը շպրտում էր կառքի կաշեպատ կողերին: Պյոտրը ետ ընկավ կառքի խորքը, Ալեքսաշկայի ասածը կարծես չէր էլ լսել...

Շլիսսելբուրգից հետո միայն մի անգամ, արդեն Մոսկվայում էր հիշել Աննա Մոնսին. Ալեքսաշկային հրամայել էր գնալ նրա մոտ, վերցնել աղամանդներով զարդարված, վզից կախելու իր դիմանկարը, թանկարժեք մյուս իրերին, ինչպես և դրամին ձեռք չտալ ու թողնել, որ ապրի իր ապրած տեղում (կուզենա, թող գյուղ գնա), բայց որ այլևս ոչ մի տեղ դուրս չգա ու մարդամեջ չելնի:

Որպես մոլախոտի մի թուփ արմատախիլ արեց այդ կնոջը, դեն նետեց սրտից: Մոռացավ: Եվ հիմա (կառքի մեջ) մի մկան անգամ չշարժվեց դեմքի վրա:

Աննա Իվանովնան գրում էր նրան՝ անպատասխան: Մորը նվերներով ուղարկեց Մենշիկովի մոտ, աղաչելով, որ թույլ տան ընկնի նորին մեծության ոտքերը, միակ մարդու, ում սիրել է ամբողջ կյանքում... Իսկ մեդալիոնն իր Կենիգսեկն էր գողացել իրենից: (Դեսպանորդի գրպանից հանած նամակների մասին նա չգիտեր:)

Մենշիկովը տեսնում էր, որ մին խեռցը կանացի գուրգուրանքի խիստ կարիք է զգում: Ցարական սպայակները (բոլորն էլ Մենշիկովից էին ոռճիկ ստանում) հայտնում էին, որ Պյոտր Ալեքսեևիչը գիշերները վատ է քնում, տնքտնքում է, ոտքերը պատեպատ տալիս: Նրան ոչ թե պարզապես կին էր պետք, այլ կարգին ընկերուհի: Ալեքսաշկան հիմա Աննա Մոնսի մասին խոսք բացեց՝ ստուգելու համար: Պյոտրը ոչ մի արձագանք չտվեց: Գերանաշար փողոցից իջան փափուկ ճանապարհ, Ալեքսաշկան հանկարծ ինքն իրեն ծիծաղեց, գլուխը օրորեց: Պյոտրը սառնությամբ ասաց.

— Զարմանում եմ, թե ոնց եմ քեզ դիմանում, չեմ իմանում...

— Ես ի՞նչ եմ ասում որ... Աստված վկա, ախր...

— Ամեն գործի մեջ անպայման մի խարդախություն պիտի անես... Հիմա էլ ես պոչ խաղացնում, տեսնում եմ:

Ալեքսաշկան քիթը քաշեց: Որոշ ժամանակ լուռ գնում էին: Մենշիկովը նորից սկսեց, քթի տակ ծիծաղելով.

— Բորիս Պետրովիչի հետ մի վեճ ունեցանք... Քեզ դեռ բողոքելու է... Հո չէ՞ր պարծենում իր տնտեսությամբ... Իբր, մի ռուբլով է առել դրագունից... «Բայց տասը հազարով էլ չեմ տա, ասեց... Էնքան ծիր, ուրախ կին է, ասեց, կրակի կտոր... Ամեն ինչ ձեռքից գալիս է... Է, ես էլ գնացի... Մի քիչ խմեցինք, ասի՝ ցույց տուր... Շեմուշում արեց, չեմ իմանում ուր է գնացել՝ ասեց... Ես զոռեցի... Ծերուկս նեղվեց, դես ընկավ, դեն ընկավ, կանչեց... Միանգամից էնքան դուրս եկավ, էլ չասած, քաշած պատկեր չէ, չէ՞... Դուրեկան, ձենը զնգուն, աչքերը թոթուռ, մազերը գանգուր... Ասի՝ հին սովորությամբ պետք է որ հյուրին գավաթ տա ու պաչի: Բորիս Պետրովիչը մթնեց, կինը ծիծաղեց: Գավաթը լցրեց ու գլուխը կախ բերեց: Խմեցի ու շրթունքները պաչեցի: Մին խեռց, պաչեցի շրթունքները, հո չվառեց, էլ բան չերևաց

աչքիս, արյունս եռաց... «Բորիս Պետրովիչ, ասի, աղջկան ինձ տուր... Պալատս կտամ, վերջին շապիկս կհանեմ, կտամ... Դու ի՞նչ պիտի անես նրա հետ: Նրան ջահել մարդ է պետք, որ սիրի... Դու մենակ գրգռելու ես անօգուտ... Բացի դրանից, ասի, մեղք ես անում՝ կնկա, երեխի տեր ես... Ու հետո Պյոտր Ալեքսեևիչն ինչպե՞ս կնայի քո ես անառակությանը...»: Նեղը լծեցի ծերուկին... Ֆսֆսաց: «Ալեքսանդր Դանիլովիչ, վերջին ուրախությունս ես ինձնից խլում...»: Ձեռքը թափ տվեց, լաց եղավ... Աստված վկա, ծիծաղս եկավ... Գնաց, մենակ փակվեց ննջարանում... Տեղնուտեղը խոսեցի տնտեսուհու հետ, կառքը բերել տվեցի, կապոցներն առավ, ու բերեցի ինձ մոտ... Մյուս օրն էլ՝ Մոսկվա: Մի շաբաթ լաց եղավ, բայց կարծեմ թե ձև էր թափում... Հիմի ոնց որ թռչուն լինի, պալատումս է...

Հասկանալի չէր. Պյոտրը լսում է, թե՝ ոչ... Վերջում հազաց: Ալեքսաշկան անգիր գիտեր նրա այդ հազերը: Հասկացավ, որ Պյոտր Ալեքսեևիչը ուշադիր լսում էր:

6.

Բրովկինը, Սվեշնիկովը, պալատի վաճառական Զատրապեզնին, թագավորական վաճառականներ Դուբրովսկին, Շչեգոլինը, Եվրեինովը Յաուզայի և Մոսկվա գետի վրա մահուդի, կտավի, մետաքսի գործարաններ հիմնեցին, թղթի, ճոպան ոլորելու արհեստանոցներ: Կալվածատնային վարչատնից (որի տնօրինության տակ էին անցնում պատերազմում սպանվածների կամ շնորհազուրկ արվածների վոտչինաները) շատ գործարանների գյուղեր կցեցին՝ առհավետ:

Վաճառականությունն արթնանում էր նիրհից: Հրդեհից հետո արագ վերակառուցած Բուրմիստրական պալատի շքամուտքի մոտ հավաքված, խոսում էին միայն նոր նվաճված Ինգրիայից, ուր հարկ էր այս ամռանը կատարելապես հիմնավորվել ծովի ափին: Նկուղներից հանում էին չերվոնեցներով ու եֆիմոկներով լի պապական կճուճները: Գործակատարներ էին ուղարկում շուկաներն ու օղետները՝ գործավոր մարդկանց վարձելու:

Իվան Արտեմիչը ձմռան ընթացքում մեծ գործեր բռնեց: Մենշիկովի միջոցով իրավունք ստացավ Ռոմոդանովսկու բանտերից կոնդակիր կալանավորներ վերցնել՝ հաստատուն ստացականներով, և ոմանց շղթայակապ, ոմանց էլ հենց այնպես աշխատանքի լծեց իր մահուդի ու կտավի գործարաններում, որոնք ջրանիվներով էին աշխատում Յաուզայի վրա: Քրեական վարչատնից լոթ հարյուր ռուբլով գնեց նշանավոր դարբին վարպետ Ժեմովին (եռաձիով բերել տվեց Վորոնեժից), և հիմա նա Սոկոլնիկիում, Իվան Արտեմիչի նոր սղոցագործարանում կրակով ու կաթսայի գոլորշիով աշխատող մի չտեսնված մեքենա էր տեղադրում:

Ոչ մի տեղ աշխատող ձեռքը չէր հերիքում: Կցագրված գյուղակներից աճագին ժողովուրդ փախավ ամայի հեռուները այդ նոր ճորտությունից: Ծանր էր գյուղում աշխատելը՝ կոռի տակ, երբեմն ձիու

համար ավելի հեշտ էր, քան մուժիկի: Սակայն առավել անելանելի էր թվում այդ գործարանային ճորտությունը՝ բանտից ավելի էր վատ թե՛ կալանավորի, թե վարձվածի համար: Չորս կողմը բարձր ցանկապատեր, դարպասի մոտ՝ շներից ավելի կատաղած պահակներ: Մութ խցերում, չխկչխկացող դազգահների վրա կռացած, երգ ասել չէր լինում՝ օտարերկրացի վարպետը մեջքդ կդաղեր մտրակով կամ կապանար փոսի մեջ նստեցնել: Գյուղում մուժիկը գոնե ձմռանը քունն առնում էր վառարանի վրա: Այստեղ ձմեռ թե ամառ, ցերեկ թե գիշեր մաքոքները պիտի տանեիր-բերեիր: Ոռնիկ, հագնելիք՝ վաղուց խմելու էր տրված: Ճորտությո՛ւն: Բայց ամենասարսափելի և անարկու լուրերը Ակինֆիյ Դեմիդովի ուրալյան գործարանների և հանքերի մասին էին պտտվում: Նրան կցված գավառներից մարդիկ գլխապատառ փախչում էին հենց միայն սարսափից:

Ակինֆիյ Դեմիդովի գործակալ-վարձողները շրջում էին շուկաներում ու օղետներում, առատաձեռն հյուրասիրում բոլորին, քաղցրալեզու նկարագրում հարուստ հեշտ կյանքը: Իբր անծայրածիր հողեր կան այնտեղ, մի տարի աշխատեցիր, փողերդ գլխարկիդ մեջ կարեցիր, գնա, ատտված քեզ հետ, պահող չկա... Կուզես, ոսկի ման արի, ոսկին էնտեղ՝ ոնց որ ոտի տակի թրիք:

Հարմար մեկին գտնելով ու հարբեցնելով, գործակատարը կամ համոզելով, կամ խաբելով, պանդոկապան-վկայի ներկայությամբ ճորտագիր էր կազմում՝ թանաքով մի խաչ դիր ա՛յ էստեղ, հոգիս: Ու կործանվում էր մարդը: Նստեցնում էին սայլը, եթե շատ էր համը հանում, շղթայում էին, տանում հազար վերստ հեռու, Վոլոգդայից այն կողմ, կիրգիզական օշինդրապատ տափաստաններից, անտառապատ սարերից այն կողմ՝ Նեվյանսկի գործարան, հանքարանները:

Իսկ այնտեղից հատուկենտ մարդիկ էին ետ գալիս: Մարդկանց այնտեղ գամում էին գնդանոցներին, ձուլման վառարաններին: Ընթոստներին ճիպտածեռ էին անում:

Փախչելու տեղ չկար՝ հեծյալ կոզակները օղապարաններով հսկում էին բոլոր ճանապարհներն ու անտառային կածանները: Իսկ խռովությունն բարձրացնողներին խորունկ հանքահորերն էին գցում, խեղդամահ անում լճերում:

Ծննդյան տոներից հետո նոր գորահավաք սկսվեց: Բոլոր քաղաքներում ցարական զինվորագրողները հյուսներ, քարհատներ ու հողափորներ էին հավաքում: Մոսկվայից Նովգորոդ սայլապարհակի ցուցակագրեցին բոլորին անխտիր:

7.

— Ինչի՞ չես Կատերինային ինձ ցույց տալիս:

— Ամաչում է, մին խեղ.... Էնքան սիրեց ինձ, կապվեց, աչքը չի բարձրացնում, թե մեկին նայի... Քիչ է մնում պակկվեմ հետը...

— Ինչի՞ չես պակկվում:

— Բայց ախր ոնց կլինի...

Մենշիկովը նստեց մոմած հատակին, դեմքը թեքած վառվող խանձողներն էր խառնում: Քամին վնգում էր ծխնելույզի մեջ, շիկշիկացնում թիթեղյա տանիքը: Ջուն էր շպրտում բարձր լուսամուտների վրա: Մեղրամոմի երկու լեզվակները տատանվում էին սեղանի վրա: Պյոտրը ծխում էր, գինի խմում, անձեռոցիկով սրբում կարմրած դեմքը, թաց մազերը: Հենց նոր էր վերադարձել Տուլայից՝ գործարաններից, և Պրեոբրաժենսկոյե չմտած, ուղիղ եկել էր Մենշիկովի տուն, բաղնիքում լողանալու: Երեք ժամ շոգեհարվում էր: Ալեքսաշկայի բուրավետ սպիտակեղենով, նրա մետաքսյա կափտանը հագած, առանց վզի թաշկինակի, կոլոքը բաց, նստեց ընթրելու (հրամայեց, որ փոքր սեղանատանը ոչ ոք չլինի, նույնիսկ ծառաները), հարցուփորձ արեց զանազան փուչ ու դատարկ բաներից, ծիծաղում էր: Ու հանկարծ հարցրեց Կատերինայից (կառքի մեջ եղած այն խոսակցությունից հետո առաջին անգամ էր հիշում նրա մասին):

— Պյոտր Ալեքսեևիչ, իմ չեղած ազգուտակով պսակվեմ, էն էլ գերու հետ... Չեմ իմանում... (Խաչերկաթով խառնում էր, կայծերը շաղ տալով:) Ավդոտյա Արսենևային են խնամախոսում ինձ համար: Հիմա տոհմ է, Ոսկե հորդայից է գալիս... Ինչքան էլ չլինի, պակաս տեղ կծածկի: Պալատումս մշտական օտարերկրացիներ են լինում, առաջին հերթին հարցնում են, թե ում հետ եմ պսակված, ինչ տիտղոս ունեմ: Մեր հաստաքամակ մեծատոհմերն էլ հո ուրախ չե՞ն փսփսալ նրանց ականջներին, թե փողոցից վերցրած մեկն է...

— Միշտ է,— ասաց Պյոտրը: Անձեռոցիկով սրբվեց: Աչքերը փայլում էին:

— Գոնե մի կոմսի-բանի տիտղոս ստանայի:— Ալեքսաշկան գցեց խաչերկաթը: Կրակը պատնեշեց պղնձյա ցանցով, եկավ սեղանի մոտ:— Ի՞նչ բուք է, ի՞նչ բուք: Միգ խեղց, մտքովդ չանցնի տուն գընաս:

— Ես չեմ էլ մտածում:

Մենշիկովը վերցրեց ըմպանակը, դողաց ձեռքի մեջ: Նստած, աչքերը չէր բարձրացնում:

— Էս խոսակցությունը ես չեմ սկսել, դու ես սկսել,— ասաց Պյոտրը:— Գնա, կանչիր...

Ալեքսաշկան գունատվեց: Ընդոստ շարժումով վեր կացավ: Դուրս եկավ: Պյոտրը, նստած, ոտքն էր ճոճում: Տան մեջ լռություն էր տիրում, միայն բուքն էր ոռնում բարձր ձեղնահարկերում: Հոնքերը բարձրացրած, Պյոտրն ականջ էր դրել: Ոտքը ճոճվում էր, աչքերն լարվի լինեն: Նորից ոտնաձայն լսվեց՝ արագ, ջղային: Ալեքսաշկան ետ գալով, կանգնեց բաց դռան մոտ, շրթունքներն էր կրծոտում.

— Հիմա կգա:

Պյոտրի ականջները լարվեցին՝ լսեց. տան լռության մեջ կարծես զվարթ ու անհոգ կանացի թեթև ոտքեր էին թռչում, կտկտացող կրունկների վրա:

— Ներս արի, մի վախենա,— Ալեքսաշկան ներս թողեց Կատերինային: Կինը թեթևակի կկոցեց աչքերը, միջանցքի մթությունից մերի լույսին նայելով: Ասես հարցնելով, Ալեքսաշկային նայեց (նրա ուսից կլիներ, ականներ, խաղացկուն հոնքերով), նույնքան թեթևաքայլ, անհերկյուղ մոտեցավ Պյոտրին, խոր ծնկծալով, իրի պես բռնեց սեղանին դրած նրա խոշոր ձեռքը, համբուրեց: Պյոտրը զգաց նրա շուրթերի ջերմությունը և հավասարաշար սպիտակ ատամների սառնությունը: Ապա ձեռքերը դրեց ճերմակ գոգնոցի տակ, կանգնեց Պյոտրի բազկաթոռի առաջ: Այնքան թեթևաքայլ նրան այստեղ բերող ոտքերը շորջազգեստների տակից մի քիչ չոված էր դրել: Աչքերին էր նայում ջինջ, զվարթ հայացքով:

— Նստիր, Կատերինա:

Պատասխանեց ռուսերեն, կոտրատված, բայց այնքան դուրեկան ձայնով, որ Պյոտրը միանգամից հարմարավետ ու ջերմ մի բան զգաց բուխարուց, ոռնացող քամուց, ականջները թուլացան, դադարեց ոտքը ճոճել: Կատերինան պատասխանեց.

— Կնստեմ, շնորհակալ եմ:— Իսկույն նստեց աթոռի ծայրին, ձեռքերն առաջվա պես փորին, գոգնոցի տակ դրած:

— Գինի խմո՞ւմ ես:

— Խմում եմ, շնորհակալ եմ:

— Հո վատ չե՞ս ապրում գերության մեջ:

— Վատ չէ, շնորհակալ եմ...

Ալեքսաշկան խոժոռված մոտեցավ, երեք բաժակներն էլ գինի լցրեց.

— Ի՞նչ ես քոքել՝ շնորհակալ եմ, շնորհակալ եմ: Մի բան պատմիր:

— Ինչպես պատմեմ, ինքը հո սովորական մարդ չէ:

Ձեռքերը գոգնոցի տակից հանեց, վերցրեց ըմպանակը, աչքերը շողացնելով ժպտաց Պյոտրին.

— Ինքը գիտի, թե ինչպես խոսք սկսի...

Պյոտրը ծիծաղեց: Վաղուց այդպես բարիացած չէր ծիծաղել: Հարցուփորձ արեց Կատերինային՝ որտեղացի է, որտեղ է ապրել, ինչպես է գերի ընկել: Պատասխանելով, Կատերինան ավելի խոր նստեց աթոռին, մերկ բազուկները դրեց սփոցին՝ շողում էին սևորակ աչքերը, մետաքսի պես փայլում էին երկու փնջով թեթև շնչող կրծքին փրված սև գանգուրները: Եվ թվում էր, թե նույնքան թեթև, ինչպես քիչ առաջ այստեղ, սանդուղքների վրա, վազելով էր անցել իր կարճ կյանքի բոլոր ձախորդությունների վրայով...

Ալեքսաշկան շարունակ լցնում էր ըմպանակները: Նոր փայտ դրեց բուխարին: Կեսգիշերային բուքն էր ոռնում: Պյոտրը ձգմգվեց, կարճ քիթը կնճռոտելով, նայեց Կատերինային.

— Է, ինչ, չքնե՞նք: Ես գնամ... Կատյուշա, մոմը վերցրու, արի, որ լույս անես...

Մոայլադեմ մուժիկ Կեղտաճմուռ Ֆեդկան թարմ, կարմիր խարանը ճակատին, բարձր իշոտնուկի վրա շղթայակապ ոտքերը չոած, կաղնեփայտի մուրճի երկար պոչը բռնած, հետ քաշելով հարվածում

էր ցցագերանի գլխին... Առողջ մուժիկ էր: Մյուսները՝ որը ձեռնասալլակն իջեցրած, որը գոտկահաս ջրի մեջ մորուքը տնկած կանգնած, որն ուսից գերանը ցած գցած, նայում էին, թե ցցագերանն ինչպես է ամեն հարվածի հետ մտնում խրուտ ափի մեջ:

Ափն ամրացնող առաջին ցցագերանն էին խփում Ցանգիսաարիի (ֆինններեն՝ Նապաստակի կղզի) փոքրիկ կղզյակի եզրին: Երեք շաբաթ առաջ ռուսական զորքերը միանգամից գրավել էին Նիենշանց հողաշեն ամրոցը, Նևայից երկու վերստ դեպի վեր: Ծվեդները, Նևայի ափերը թողած, անցել էին Սեստրա-գետը: Ծանծաղուտներից վախենալով, շվեդական նավատորմը առագաստներն էր պարզել նեղուցի խորքում, արևաշող ծփանքից այն կողմ: Երկու ոչ մեծ նավ սիրտ արեցին մտնել Նևայի գետաբերանը, մինչև Խիրվիսաարի կղզին, ուր կտրած անտառում թաքնված էր կապիտան Վասիլևի մարտկոցը, բայց թիանավերը շրջապատեցին ու գրավեցին նավերը աբորդաժով:

Արյունահեղ ջանքերով Լադոգայից արձակ ծով տանող անցումը բաց էր: Արևելքից ձգվեցին անհամար գումակներ, գործավորների ու կալանավորների բազմություններ: (Պյոտրը գրում էր Ռոմոդանովսկուն. «...մարդկանց խիստ կարիք ունենք, հրաման տուր բոլոր քաղաքներին, վարչատներին ու քաղաքապետարաններին, գող ու ավազակ հավաքեն, ուղարկեն այստեղ»:) Հազարավոր վերստեր կտրած հազարավոր գործավորների լաստերով ու նավակներով տեղափոխում էին Նևայի աջ ափը, Կոյբուսաարի կղզին, որի ափին քողտիկներ ու գետնափորներ էին ափված, խարույկներ էին ծխում, կացիններ թրխկթրխկում, սղոցներ զնգում: Այստեղ, աշխարհի ծայրն էին գնում ու գալիս գործավորները անվերադարձ: Կոյբուսաարիի դիմաց, Նևայի վրա ճանճապատ Ցանգիսաարի կղզու վրա, ռուսաց հողի առևտրական բոլոր ճանապարհների թանկ գնով ձեռք բերած գետաբերանը պաշտպանելու համար վեց բաստիոնով ամրոց էին սկսել կառուցել: («...Դիտի կառուցեն վեց կառավարիչներ. առաջին բաստիոնը կառուցում է բոմբարդիր Պյոտր Ալեքսեևը, երկրորդը՝ Մենշիկովը, երրորդը՝ իշխան Տրուբեցկոյը, չորրորդը՝ իշխան-պապ Զոտովը...»): Հիմքը դնելուց հետո, Պյոտրի գետնափորում մեծ խնջույքին, կենաց բաժակներ բարձրացնելով ու թնդանոթ կրակելով, վճռեցին ամրոցը կոչել Պիտերբուրխ:

Բաց ծովն այստեղից շատ մոտ էր: Քամին զվարթ ծփանք էր տվել ջրերին: Արևմուտքում, շվեդական նավերի առագաստներից այն կողմ, ծովային բարձրագնա ամպեր կային՝ ասես ուրիշ աշխարհների ծուխ լիներ: Այդ ոչ ռուսական ամպերին, ջրերեն լայնարձակությանը, մայրամուտի սարսռազդու հրդեհումներին միայն դևտքի զինվորներն էին նայում ամայի Կոտլին կղզում: Հացը չէր հերիքում: Քայքայված Ինգրիայից, ուր ժանտախտ էր սկսվել, մատակարարում չկար: Արմտիք էին ուտում, ծառի կեղև մշրում: Պյոտրը գրում էր իշխան-կայսրին, խնդրելով էլի մարդ ուղարկել՝ «խիստ շատ են հիվանդանում այստեղ, շատերն էլ մեռել են»: Գալիս ու գալիս էին գումակները, գործավորներ, կալանավորներ...

Կեղտաճմուռ ֆեղկան, մազերը գցած բորբոքված թաց ճակատին, կաղնեփայտի մուրճով խփում ու խփում էր ցցագերաններին...

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1.

Ցիսուր էր Մոսկվայում: Ճաշի ժամին, հուլիսյան տապի մեջ, անտուն շներն էին միայն թափառում ծուռումուռ փողոցներում, պոչերը կախ, հոտոտելով ամեն տեսակի աղբ, որ մարդիկ շպրտում էին դարպասներից դուրս: Հրապարակներում նախկին հրմշտոցն ու աղմուկը չկար, երբ պատվարժան որևէ մեկի փեշերը կպոկեին՝ կրպակ մտցնելու համար, կամ գրպանները կդատարկեին, նախքան այդ խառնիճաղանջ տեղում մի բան գնելը: Առաջ մեկ-մեկ, դեռ մինչ այգաբաց, արբատյան, սուխարևյան ու զամոսկվորեչյան բոլոր արվարձաններից գործվածքեղենի, երկաթեղենի, կաշվեղենի լիքը սայլակներ կբերեին, կնումներ, ամանեղեր, թասեր, քաղցրահաց, հատապտղով լի մաղեր ու ամեն տեսակի բանջարեղեն, վրան տրեխներ կախ տված ձողեր, թիվածքի վաճառարկղներ, հրապարակներում շտապ-շտապ տեղ կբռնեին սայլակների ու վրան բացելու համար: Դատարկվեցին ստրելեցյան արվարձանները, բակերը լքյալ էին, խիստ եղինջով ծածկված: Հիմա անագին ժողովուրդ էր աշխատում նոր բացված մանուֆակտուրաներում, կալանավորների ու ճորտագրվածների հետ: Այնտեղից մահուդն ու կտավը ուղիղ գնում էր Պրեոբրաժենյան վարչատուն: Մոսկովյան բոլոր դարբնոցներում սրեր, նիզակներ, ասպանդակներ ու խթաններ էին կռում: Մոսկվայում կանեփի պարան գնել չէր լինի, ամբողջ կանեփը գանձատունն էր վերցրել:

Զանգահարության նախկին՝ հատակից հատակ, ղողանջն այլևս չկար. բոլոր եկեղեցիների մեծ զանգերը հանել ու Զոլարան էին տարել թնդանոթ ձուլելու: Ծեր Պիմենի եկեղեցու ժամհարը, երբ ծխախոտի ծխի հոտ արձակող դրագունները նրա զանգակատնից իջեցրին մեծ զանգը, սաստիկ հարբեց և ուզում էր կախվել զանգը պահող ձողից, իսկ հետո կապկպված ու սնդուկի վրա պառկած, մթագնված բղավում էր, որ Մոսկվան հոչակված էր ախորժելի ղողանջով, իսկ հիմա հոգեմաշ է դառնալու Մոսկվայում:

Առաջներում բոյարական ամեն մի տան, դարպասի առաջ կանգ-

ված, գլխարկներն ականջներին թեքած նորտ ծառաները կզազրախոսեին, գաճախաղ ու փող կխաղային կամ պարզապես ճամփա չէին առ ոչ հեծյալ, ոչ հետիոտն անցորդներին՝ քրքջոց, կատակներ, քաշքշոց: Հիմա դարպասներն ամուր գոցված էին, ընդարձակ բակերում լռություն էր, մարդկանց տարել էին պատերազմ, բոյարական զավակներն ու փեսաները կամ ենթասպաներ էին գնդերում, կամ ուղարկված անդրծովյան երկրներ, անչափահասներին էլ դպրոցներ էին տվել, որ նավագնացություն, մաթեմատիկա և ֆորտիֆիկացիա սովորեն, ինքը՝ բոյարինն էլ անգործ նստած բաց պատուհանի մոտ, ուրախ կլիներ, որ գոնե կարճ ժամանակով Պետր ցարը մեկնել է ու չի պարտադրում ծխախոտ ծխել, մորուքը սափրել կամ ծնկներին հասնող սպիտակ գուլպաներով ու կնկա մազերից սարքած, պորտահաս կեղծամով ոտուձեռ ցնցել ու ծալել:

Անուրախ, հոգեմաշ մտքերի մեջ էր ընկնում պատուհանի մոտ նստած բոյարինը... «Մեկ է, իմ Միշկային մաթեմատիկա սովորեցնել չի լինի, Մոսկվան առանց մաթեմատիկա սարքեցին, փառք աստծո, հինգ հարյուր տարի ապրում էինք անմաթեմատիկա՝ հիմիկվանից էլ լավ, էս պատերազմից ապասելիք չունենք, բացի վերջնական աղքատանալուց, ինչքան կուզեք Մոսկվայով մեկ Նեպտուն ու Վեներկա քարշ տվեք ոսկի կառքերով, ի փառս Նևայի վրա տարած պանծալի վիկտորիայի... Շվեդը մեկից մեկ ջարդելու է մեր զորքը, չհաշված թաթարները, որ վաղուց են դրան սպասում, հորդայով Ղրիմից կգան, Օկան կանցնեն... Օ՜-խո՜-խո՜»:

Բոյարինը հաստ մատը տարավ մորենու ափսեին՝ անիծած բոռերը ափսեն ու ամբողջ լուսամտագոգը բռնել էին: Աֆոնից բերված գեյթունի կորիզի տերողորմյան քաշելով, բոյարինը բակ նայեց: Բարձիթողի վիճակ: Քանի՜ տարի է, ծրագրումների ու զվարճանքների ետևից ընկած, սեփականի մասին մտածել չի լինում... Մառան ու խորդանոց ծուվել են, ընկուզների ճիմապատ կտուրները նստել, չորս կողմը անիծյալ մոլախոտն է բռնել... «Հավերն էլ, մի տես է, կարծես հաստատոտ են դարձել, բադերն են փոքրացել, կուզիկ խոճկորները իծաշարուկ գնում են մերունի ետևից՝ կեղտոտ, ցիհար: Օ՜-խո՜-խո՜...»: Բոյարինը հասկանում էր, որ անասուն, հավուճիվ պահող կնանց պիտի կանչեր ու հենց լուսամուտի տակ ճիպոտեր, շորները վեր քշտել տալով: Այդպիսի տապին բղավելուց ու ջղայնանալուց առաջ ինքդ քեզ պիտի խղճաս:

Բոյարինն աչքերը վեր տարավ՝ ցանկապատից, ճերմակ-դեղին ծաղիկների ու գվվացող մեղուների մեջ կորած լորենիներից այն կողմ: Ոչ շատ հեռվում Կրեմլի քանդքնդված պարիսպն էր երևում, որի ատամների արանքում թիեր էին աճել: Չես իմանում ծիծաղես, թե լաց լինես՝ ինչի հասավ Պետր Ալեքսեևիչի թագավորությունը: Տրոիցկիյե դարպասից սկսած, բերդախանդակը, ուր աղբակույտեր էին լցված, լրիվ ճանճակալել էր, հա՛վը կանցներ վրայով, ու ի՞նչ գարշահոտություն... Նեգլինննայա գետակն էլ է ծանծաղել, աջ կողմից Լաթեղենի շուկան է, ուր հենց ձեռի վրա ամեն տեսակ գողացած ապրանք են ծախում, իսկ ձախ ափին, պարսպի տակ կեղտոտ շապիկներով

լակոտներ են նստած, կարթերը ձեռքերին, ու ոչ ոք չի քշում նրանց այնտեղից...

Կարմիր հրապարակի առևտրական շարքերում խանութպանները խանութները փակում, ճաշելու էին գնում, փթանոց կողպեքներ կախ տալով դռներից՝ մեկ է, առևտուր չկար: Ժամանակն էլ դռները փակեց, այծի մորուքը տմբացրեց մուրացկանների վրա, կամաց-կամաց ինքն էլ տուն գնաց, սոխով կվաս ու չորացած ձուկ ուտելու, հետո էլ թանթրվենու հովին պառկած քիթը ֆսֆսացնելու: Մուրացկանները, անդամալույծներն ու ամեն տեսակ պակասավորներն էլ դուրս եկան գավթից, միջօրեի տապի տակ ցրվեցին, ամեն մեկն իր ճամփով գնաց...

Իսկապես, ճաշելու ժամանակն էր, թե չէ թմբիրը հաղթում էր, խիստ էր տաղտկալի: Բոյարինը նայեց ուշադիր, ձգեց վիզն ու սեղմեց շրթունքները, նույնիսկ բարձրացավ աթոռակի վրայից ու ձեռքի ափը դրեց ճակատին՝ աղյուսաշեն կամրջով, որը Տրոիցկիյե դարպասից, Նեգլիննայայի վրայով Լաթեղենի շուկա էր տանում, արևից շողշողացող, ապակեպատ ու քառաձի մի կառք էր գալիս, մոխրագույն ձիերը շարալուծ, մոբեգույն զգեստով հայդուկը հորիզոնի հեծած: Արքայադուստր Նատալյան էր, Պետր ցարի սիրելի քույրը, եղբոր պես անդադրում խառնվածքով՝ ելել էր շրջելու: Իսկ ո՞ւր գնաց, տեր աստված: Թաշկինակով բարկացած քշելով բոռերին, բոյարինը գլուխը հանեց պատուհանից:

— Գրիշո՜ւտկա,— բղավեց կտավե երկար, թևատակերին կարմիր կարկատաններով բլուզը հագին կարճլիկ տղային, որը ջրհորի եզրին ջրափոսի մեջ ոտքերն էր ճպճպացնում,— ինչքան ուժ ունես, վազ տուր, թե չէ... Ցվերևայայի վրա ոսկեգույն մի կառք տեսար, ետևից վազ կտաս կասես, թե ուր գնաց...

2.

Ականջատակերին կարմիր վետրանիշներով, պղնձյա ճարմանդներով ու զանգակաձև լծասարքով մոխրագույն չորս ձիերը ծանր դոփյունով կառքը տարան լայնարձակ մարգագետնով ու կանգ առան իգմայլովյան հին պալատի մոտ: Դեռևս Ալեքսեյ Միխայլովիչ ցարն էր կառուցել, որը սիրում էր ամեն տեսակ բաներ սարքել իր Իզմայլովո գյուղում, ուր մինչև հիմա էլ նախորի հետ ձեռնասուն որմզդեղներ էին արուծում, փոսերի մեջ արջեր կային նստած, թռչնանոցներում սիրամարգեր էին շրջում, որոնք ամռանը քնելու էին թառում ծառերի վրա: Գերանակապ, ժամանակից մռայլած պալատի վրա գույնզգույն ու կլայեկած անթիվ-անհամար տանիքներ կային սրահների, միջանցքների ու աստիճանների վրա՝ թեք, սանրաձև, տակառաձև, կիսակլոր վահանաձև: Միջօրեի լռության մեջ դրանց վրայով օդն էին թրջում կատաղած ջրաժիծառները: Պալատի բոլոր լուսամուտները գոց էին: Աստիճանի մի ոտի վրա ննջել էր պառաված սպասավորը, և երբ կառքը մոտեցավ, աքլորն ուշքի եկավ, կանչեց, վազեց ու բոլոր առ-

մուտքերի տակ կչկչացին հավերը, ասես հրդեհ էր բռնկվել։ Այդ ժամանակ բացվեց նկուղի ցածրիկ դռնակը, և գլուխը հանեց նույնպես պառաված պահակը։ Կառքը տեսնելով, ծնկի եկավ ու ճակատը հրպեց հողին։

Արքայադուստր Նատալյան, գլուխը կառքից հանելով, անհամբեր հարցրեց.

— Բոյարուհիներն ո՞ւր են, այ պապ։

Մերուկը վեր կացավ, գորշ մորուքը տնկեց, շրթունքները ձգեց.

— Բարև, տիրուհի, բարև գեղեցկուհի արքայադուստր Նատալյա Ալեքսեևնա,— և քնքշությամբ նրան նայեց աչքերը ծածկած հոնքերի տակից,— ա՛խ, աստծու շնորհ, ա՛խ, բարի ու գեղեցիկ... Հարցնում ես, թե ո՞ւր են բոյարուհիները։ Չեմ իմանում որտեղ են, չեմ տեսել։

Նատալյան ցած թռավ կառքից, գլխից հանեց ծանր, մարգարտաճուռ, ճյուղավոր պսակը, ուսերից գցեց դիպակե թիկնոցը՝ հին մոսկովյան զգեստ հագնում էր միայն դուրս գալիս, ու մերձավոր բոյարուհին՝ Վասիլիսա Մյասնայան, դրանք տարավ կառքի մեջ դնելու։ Բարձրահասակ, գեղակազմ, արագաշարժ, հոլանդական թեթև զգեստ հագած Նատալյան մարգագետնով գնաց անտառակի կողմը։ Այնտեղ՝ գոմի մեջ, աչքերը կկոցեց. ծաղկող լորենին թունդ ու անուշ բույր էր տարածել։

— Առ՜ւ,— ձայն տվեց Նատալյան։ Մոտերքից, այնտեղից, ուր ճյուղերի ետևում անտանելի փայլ էր արձակում արևը ջրի մեջ, կանացի մի ալարկոտ ձայն պատասխանեց։ Լճակի ափին, ջրին մոտ, ավազի ու կամրջակների կողքին գույնզգույն վրան էր խփած, որի ստվերում, բարձերի վրա նվաղած չորս երիտասարդ կին էին պառկած։ Փութով վեր կացան Նատալյային ընդառաջ՝ ընդարմացած էին, հյուսքներն արձակ։ Ամենապավագը, ցածրահասակ ու սրաքիթ Անիսիա Տոլստայան, առաջինը մոտ վազեց ու ափերն իրար զարկեց, ծիր աչքերը տանել-բերելով։

— Մեր աչքի լույս, Նատալյուշկա, արքայադուստր տիրուհի, ա՜հ, ա՜հ, հագուստը արտասահմանյան։ Ա՜հ, ա՜հ, աստվածուհի։

Մյուս երկուսը՝ Ալեքսանդր Դանիլովիչ Մենշիկովի քույրերը, դեռահաս օրիորդներ Մարֆան ու Աննան էին, որոնց վերջերս Պյոտրի հրամանով հայրական տնից Իզմայլովյան պալատ էին բերել, Անիսիա Տոլստայայի հսկողության տակ պոլիտես ու գրագիտություն սովորելու, երկուսն էլ փարթամ, դեռևս անտաշ՝ փամփլիկ բերանները բացեցին ու աչքերը չռեցին, թափանցիկ հայացքով արքայադստերը նայելով։ Զգեստը հոլանդական էր. կարմիր, նուրբ բրդյա գործվածքից լայն շրջազգեստ, փեշին ոսկեկար եռակի երիզով ու չտեսնված նեղ քթանակ, պարանոցը և ուսերը մերկ էին, ձեռքերը մինչև արմունկները՝ նույնպես բաց։ Նատալյան ինքն էլ էր հասկանում, որ միայն աստվածուհու հետ կարելի էր համեմատել իրեն, ասենք՝ Դիանայի. կլորավուն դեմքը, եղբոր պես կարճ, ցից քիթը, փոքրիկ ականջները, փոքրիկ բերանը՝ ամեն ինչը չինչ, դեռատի, հանդուգն։

— Զգեստը երեկ են բերել ինձ, Հաագայից Սանկան, Ալեքսանդրա Իվանովնա Վոլկովան է ուղարկել... Գեղեցիկ է, մարմնի համար էլ հանգիստ։ Իհարկե, կարևոր տեղերի համար չէ, բայց դաշտի, զբոսանքի, գվարդիանքի համար լավ է։

Նատալյան պատվում էր, որ լավ տեսնեն իրեն։ Չորրորդ շաբել կինը քիչ հեռվում էր կանգնած, կախ գցած ձեռքերը համեստորեն դրած փորից ցած, ժպտում էր բալի պես թարմ շրթունքներով, աչքերն էլ էին բալի նման, դյուրաթրթիռ, կանացի։ Կլոր այտերը կարմրել էին շոգից, սև ու գանգուր մազերը նույնպես խոնավ էին։ Հիացմունքի բացականչությունների ու ափզարկումների տակ պտտվելով, Նատալյան մի քանի անգամ նրան նայեց, ներքևի շրթունքը կամակորությամբ առաջ բերած՝ դեռ ինքն էլ չէր հասկանում. իր համար դուրեկան, թե անդուր է սայլի տակից գինվորական կափտանով ֆելդմարշալ Շերեմետևի վրանը տարված, Մենշիկովի կողմից գնված ու մի գիշեր էլ, վառվող բուխարու մոտ, գինու բաժակը ձեռքին հնազանդորեն Պյոտր Ալեքսեևիչին տրված մարիենբուրգցի այդ գերուհին։

Նատալյան կույս էր, ի տարբերություն իր արյունակից քույրերի, հարազատ քույրերի՝ մենաստանում բանտարկված կառավարչուհի Սոֆյայի, Կատկա և Մաշկա արքայադուստրերի, որոնց ամբողջ Մոսկվան էր ծաղրում։ Պոռթկուն ու անհաշտ բնավորություն ուներ նա։ Քանիցս լիրբ ու կով էր անվանել Կատկային ու Մաշկային, բորբոքվելով ապտակել։ Պալատական հին սովորությունները, զանազան հացփորի կանանց անվայել ու տաք-տաք փսփսոցները նա կտրել էր իր պալատից։ Եղբորը՝ Պյոտր Ալեքսեևիչին նույնպես կշտամբում էր, երբ մի ժամանակ, իրենից ընդմիշտ հեռացնելով անամոթ սիրուհի Աննա Մոնսին, շատ անխրատական ու հասարակ էր դարձել կանանց հանդեպ։ Սկզբում Նատալյան մտածում էր, որ սա գինվորական գերուհին նույնպես, մի ժամով է պետք եղբորը, կհագենա ու կմոռանա։ Ոչ, Պյոտր Ալեքսեևիչը չմոռացավ Մենշիկովի տան այն երեկոն, երբ փոթորկվել էր քամին ու Եկատերինան, մոմը ձեռքին, լույս տարավ ցարի ննջասենյակը։ Մենշիկովի տնտեսուհու համար հրամայվեց ոչ մեծ տուն գնել Արբատում, ուր Ալեքսանդր Դանիլովիչն ինքը տարավ նրա անկողինը, կապոցներն ու տուփերը, իսկ որոշ ժամանակ անց այնտեղից նրան բերեցին Իզմայլովյան պալատ, Անիսիա Տոլստայայի հսկողության տակ։

Եկատերինան այստեղ անհոգ էր ապրում, մշտապես ուրախ էր, բարեհոգի, թարմ, թեև ժամանակին գինվորական սայլի տակ էր պառկել։ Պյոտր Ալեքսեևիչը հաճախ հարբած առիթով նրան կարճ ու զվարճալի նամակներ էր ուղարկում՝ մեկ Սվիրից, ուր սկսել էր հավատում կառուցել Բալթիկ ծովի համար, մեկ նոր քաղաք Պիտերբուրգից, մեկ Վորոնեժից։ Պյոտրը կարոտում էր նրան։ Հեգելով կարդալով նրա նամակները, Կատերինան ավելի ու ավելի էր փթթում։ Նատալյայի հետաքրքրասիրությունը շարժվեց. ինչո՞վ է նա հմայել եղբորը։

— Կուզե՞ս քեզ էլ այսպիսի զգեստ կարել տամ, թագավորի

գալստյանը,— հարցրեց Նատալյան, խստորեն նայելով նրան: Կատերինան շփոթված ծնկծալ արեց, ասաց.

— Ծատ եմ ուզում... Ծնորհակալ եմ...

— Ձեզնից վախենում է, մեր աչքի լույս Նատալյուշկա,— շշնջաց Անիսիա Տոլստայան,— մի վատիր նրան հայացքով, մի քիչ ավելի փափուկ եղիր հետը... Քո բարությանն մասին ինչ ասես պատմել եմ, իրենն է պնդում. «Արքայադուստրն անմեղ է, ես՝ մեղավոր, ոչնչով արժանի չեմ բարության... Այն, որ թագավորն ինձ սիրեց, ասում է, դա էլ է ինձ համար զարմանալի, ոնց որ ամպրոպը պարզ եղանակին, ուշքս գլուխս չի գալիս...»: Իմ այս երկու անխելքներն էլ շարունակ հարցուփորձ են անում, թե ի՞նչ է եղել նրա հետ, ինչպե՞ս է եղել: Խստորեն արգելեցի նրանց այդ մասին խոսել ու մտածել: Ահա՛ ձեզ, ասացի, հունական աստվածներն ու ամուրները, նրանց արկածների մասին խոսեք ու մտածեք... Չէ որ չէ՝ գյուղի այդ սովորությունը մեջներն է, ամեն տեսակ գեշ բաների մասին բլբլացնել... Առավոտից երեկո մի բան եմ կրկնում դրանց համար. ճորտ եք եղել, դարձել եք աստվածուհի:

Շոգից ծղրիդներն այնպես էին ճռճռում հնձած խոտի մեջ, որ ականջները զնգում էին: Հեռվում, լճակի մյուս ափին, սոճենու սև անտառը կարծես կատարներն էր թաղել մշուշի մեջ: Ճպռոներ էին նստած բոշխին, անգույն ջրի վրա սարդեր էին թռռել: Նատալյան մտավ վրանի ստվերի տակ, հանեց քոթանակը, մուգ խարտյաշ մազերը փաթաթեց գլխի շուրջը, արձակեց շրջազգեստի կոճակները, ցած թողեց, ոտքերը հանեց միջից, իջեցրեց բարակ շապիկը և ճիշտ ինչպես հոլանդական տպագիր թերթերի վրա, որ ժամանակ առ ժամանակ գրքերի հետ ուղարկում էին Պալատական վարչությունից, մերկությունից չամաչելով, գնաց կամրջակների վրա:

— Բոլորդ լողացեք,— ձայն տվեց Նատալյան, շրջվելով դեպի վրանը և շարունակելով փաթաթել մազերը: Մարֆան և Աննան կոտրատվում էին հանվելիս, մինչև որ Անիսիա Տոլստայան բղավեց վրանները. «Ինչ եք պպզում, հաստլիկներ, ոչ ոք ձեր սքանչելիքները չի փախցնի»: Կատերինան նույնպես ամաչում էր, նկատելով, որ արքայադուստրն ուշադիր զննում է իրեն: Նատալյան կարծես թե՛ խորշում էր նրանից, թե՛ հիանում նրանով: Երբ գանգրամազ գլուխն իջեցրած, հնձած խոտի վրայով զգուշորեն քայլեց Կատերինան, և տապը ոսկեգծեց կլոր ուսերով, ձիգ կոնքերով, առողջությամբ և ուժով լեցուն այդ կնոջը, Նատալյան մտածեց, որ հյուսիսում նավեր կառուցող եղբայրը, հարկավ, պիտի կարոտի նրան, հավանորեն, ծխախոտի ծխի արանքից աչքին երևում է, թե ինչպես նա, գեղեցիկ ձեռքերով գրկած, ահա նորածին մանկիկին մոտեցնում է պիրկ կրծքերին... Նատալյան խոր շունչ քաշեց և աչքերը փակած, նետվեց սառը ջուրը... Այդտեղ աղբյուրներ էին խփում լճակի հատակից...

Կատերինան հանգիստ, կողքանց իջավ կամրջակից, ավելի ու ավելի համարձակ սուզվելով, ուրախությունից ծիծաղեց, ու այստեղ միայն Նատալյան վերջնականապես հասկացավ, որ թերևս պատրաստ

է սիրել նրան: Մոտ լողաց և ձեռքերը դրեց նրա թուխ ուսերին:

— Գեղեցիկ ես, Կատերինա: Ես ուրախ եմ, որ եղբայրս սիրում է քեզ:

— Շնորհակալ եմ, տիրուհի...

— Կարող ես ինձ Նատաշա ասել...

Նա համբուրեց Կատերինայի սառնավուն, կլոր ու թաց այտը, նայեց նրա բալեգույն աչքերի մեջ:

— Խելացի եղիր, Կատերինա, ես քեզ բարեկամ կլինեմ...

Մարֆան և Աննան, փոխնիփոխ ջուրը մտցնելով ոտքերը, դեռ վախենում էին ու ծվծվում կամրջակի վրա: Անիսիա Տոլստայան, բարկանալով, երկու փարթամ օրիորդներին ջուրը հրեց: Բոլոր սարդերը ցրիվ եկան, բոլոր ճպռոները բոշխուտից պոկվելով թռան ու խոնվեցին լողացող աստվածուհիների գլխավերևում:

3.

Վրանի ստվերում թաց մազերը փաթաթելով, նկուղից հենց նոր բերված հատապտղի ջրեր, տանձի հյութ ու թթվաշ կվաս էր խմում Նատալյան: Շաքարած պրյանիկի փոքր կտոր դնելով բերանը, ասաց.

— Ցավալի է տեսնել ձեր անկրթությունը: Փառք աստծո, ուրիշ ժողովուրդներից հիմար չենք, մեր աղջիկները բարեկազմ են ու գեղեցիկ, ինչպես և ոչ ոք, բոլոր օտարերկրացիներն են դա ասում, ընդունակ են ուսման և պոլիտեսի մեջ: Եղբայրս քանի տարի է տանջվում է, մարդկանց ուժով դուրս քաշելով տներից, փտածության միջից... Համառում են, ու ոչ թե աղջիկները, այլ հայրերն ու մայրերը: Պատերազմ գնալիս եղբայրս ինչպե՞ս էր ինձ խնդրում. «Նատաշա, խնդրում եմ, դադար մի տուր դրանց՝ մեր հնապաշտ մորուքավորներին... Թե բարի կամքով չուզեցան, նեղը լծիր... ճահիճը մեզ կուլ կտա...»: Ես չարչարվում եմ, ես մենակ եմ... Շնորհակալ եմ Պրասկովյա թագուհուն, վերջերս ինձ օգնում է, չնայած դժվար է իր համար հինը փշրելը, բայց և այնպես աղջիկներին նոր կարգերի է սովորեցնում. կիրակի օրերը ժամերգությունից հետո ֆրանսիական զգեստ են հագնում, կոփել են խմում, երաժշտական արկղիկ լսում ու աշխարհիկ բաներից խոսում... Իսկ իմ մոտ, Կրեմլում աշնանը մի այնպիսի՞ նորություն է լինելու:

— Այդ ի՞նչ նորություն է, մեր աչքի լույս,— հարցրեց Անիսիա Տոլստայան, սրբելով քաղցրացած շրթունքները:

— Արտակարգ նորություն... Թատրոն... Իհարկե, ոչ լրիվ ֆրանսիական արքունիքի պես... Այնտեղ, Վերսալում, աշխարհով մեկ հրաչակված դերասաններ կան, ու պարողներ, ու նկարիչներ, ու երաժիշտներ... Իսկ այստեղ մենակ ես եմ, ողբերգություններն էլ եմ ես փոխադրում ֆրանսերենից ռուսերեն, պակաս տեղերն էլ եմ ինքս հորինում, դերասանների հետ էլ եմ ես գբաղվում...

Երբ Նատալյան ասաց «թատրոն», թե Մենշիկովա երկու օրիորդները, թե Անիսիա Տոլստայան, թե Եկատերինան, որը պղտորված հայացքը նրա վրա էր հառել, միմյանց նայեցին, ափերը զարկելով..

— Սկզբից, որ շատ չվախեցնեմ, «Հնոցային գործողություն» պիտի ներկայացնենք, ոտանավորների երգեցողությամբ... Իսկ Նոր տարուց առաջ, երբ թագավորը գա տոնակատարություններին ու մարդիկ հավաքվեն Պիտերբուրգից, կներկայացնենք «Խրատական գործողությունը անառակ հեշտասեր Դոն Ժուանի մասին, կամ Ինչպես հողը մտավ նա...»: Այդ ժամանակ կհրամայեմ, որ բոլորը թատրոնում լինեն, սկսեցին համառել, դրագուն կուղարկեմ ետևներից... Ափսոս, Մոսկվայում չէ Ալեքսանդրա Իվանովնա Վոլկովան՝ շատ կօգներ նա... Անա՛, օրինակի համար, նա՝ ամենավերջին մուժիկի ընտանիքից, հայրը կեմի գոտի էր կապում, ինքը գրել-կարդալ սովորեց ամուսնանալուց հետո... Երեք լեզվով ճարտար խոսում է, ոտանավորներ հորինում, հիմա Հաագայում է, մեր դեսպան Անդրեյ Արտամոնովիչ Մատվեևի հետ: Կավալերները նրա համար սրերով են մենամարտում, սպանվածներ էլ կան... Ու նա պատրաստվում է Փարիզ գնալ, Լյուդովիկոս Տասնչորսերորդի պալատը՝ փայլելու... Ձեզ հասկանալի՞ է սովորելու օգուտը:

Անիսիա Տոլստայան տեղնուտեղը կոշտ պտղունցով բոթեց Մարֆայի և Աննայի կողերը:

— Ձեր ուզածն ստացա՞ք: Այ, որ թագավորը եկավ, մեկ էլ տեսար քեզ կամ քեզ կավալերի հետ կնանոթացնի ու ինքն էլ ականջ կդնի, թե ինչպես ես խայտառակվում...

— Հանգիստ թող նրանց, Անիսիա, շոգ է,— ասաց Նատալյան,— լա՛վ, մնաք բարով: Դեռ պետք է Գերմանական արվարձան գնամ: Էլի բողոք կա քույրիկներիս վրա: Վախենում եմ, թագավորի ականջին հասնի: Ուզում եմ շատ կտրուկ խոսել հետները:

4.

Եկատերինա և Մարյա արքայադուստրերը վաղուց արդեն, Սոֆյային Նովոդևիչյեի մենաստանում բանտարկելուց հետո, արտաքսված էին Կրեմլից, աչքից հեռու՝ Պոկրովկայում: Պալատական վարչատունն ապահովում էր նրանց ուտելիքը և ամեն տեսակ հաճույքները, ոռնիկ վճարում նրանց երգիչներին, ձիապաններին ու ամբողջ աղխին, բայց արքայադուստրերի ձեռքը փող չէին տալիս, նախ, կարիքը չկար, բացի դրանից, վտանգավոր էր՝ գիտենալով նրանց անխելքությունը:

Կատկան քառասունին մոտ էր, Մաշկան՝ մի տարով ջահել: Ամբողջ Մոսկվան գիտեր, որ Պոկրովկայում անբանությունից հղփացել են քույրերը: Ուշ արթնանում, օրվա կեսը չսանրված ու անլվա նստում են պատուհանների մոտ ու այնքան հորանջում, որ արցունք է գալիս աչքներից: Իսկ մութն ընկնելուն պես նրանց վերնասենյակն են գալիս երգիչները, դոմրաներով ու փողերով: Խնձորի պես կարմրացրած թշերով, մրով հոնքերը սևացրած, զուգված արքայադուստրերը երգեր են լսում, քաղցր թրմօղիներ խմում ու մինչև ուշ գիշեր թոչկոտում, պար են գալիս այնպես, որ գերանակապ հին տունը հիմքից ցնցվում է: Իբր, արքայադուստրերն ապրում են այդ երգիչների հետ, երեխաներ ծնում նրանցից ու տանում Կիմրա քաղաքը, որ մեծացնեն այնտեղ:

Այդ երգիչներն այնքան էին երես առել, որ սովորական օրերին ման էին գալիս մորեգույն մետաքսյա շապիկներով, կզաքիսի բարձրակող գլխարկներով ու սեկե սապոգներով, մշտապես դրամ էին պոկում արքայադուստրերից և խմելու տալիս Պոկրովսկիյե դարպասին մերձակա պանդոկում: Փող հայթայթելու համար արքայադուստրերը էլաթեղենի շուկա էին ուղարկում կիմրեցի մի կնոջ՝ Դոմնա Վախրամեևային, որն ապրում էր նրանց տան խորդանոցում, սանդուղքի տակ, ու նրանց հին շորերն էր վաճառում շուկայում: Բայց այդ փողն էլ չէր հերիքում, ու արքայադուստր Եկատերինան երազում էր պահած գանձ գտնել, այդ նպատակով հրամայում էր Դոմնա Վախրամեևային երազներ տեսնել թաքցրած գանձերի մասին: Դոմնան նման երազներ տեսնում էր, և արքայադուստրը հույս ուներ հարստանալ:

Նատալյան վաղուց էր պատրաստվում կտրուկ խոսել քույրերի հետ, բայց ժամանակ չէր լինում՝ կամ տեղատարափ անձրև էր գալիս կայծակով, կամ մի ուրիշ բան էր խանգարում: Երեկ նրան պատմել էին քույրերի նոր արկածների մասին. արքայադուստրերը սովորություն էին դարձրել Գերմանական արվարձան գնալ: Բաց կառքով գնացել էին հոլանդական դեսպանորդի տուն, և մինչ նա, զարմացած, կեղծամը կդներ, կաֆտանը կհագներ ու սուրը կկապեր, Կատկան ու Մաշկան, նրա հյուրասենյակում աթոռների վրա ցցված փսփսացել ու ծիծաղել էին: Երբ դեսպանորդը խոնարհվել էր նրանց, ինչպես կարգն է բարձրաստիճան անձանց առաջ, գլխարկը հատակին քսելով, պատասխանել չէին կարողացել, միայն հետույքներն էին կտրել աթոռներից ու նորից շնթոկել, առանց դեսուդեսի հարցնելով... «Էստեղ որտե՞ղ է ապրում շաքար ու անուշեղեն ծախող գերմանացի կնիկը», իբր հենց դրա համար են եկել դեսպանորդի տուն:

Հոլանդացին սիրահոժար առաջնորդել էր արքայադուստրերին ուղիղ անուշեղեն վաճառողի տուն: Այնտեղ, ձեռք գցելով ամեն ինչի, շաքար, անուշեղեն, թխվածք, մարցիպանով խնձոր ու հավկիթ էին հավաքել նրանք՝ ինն ռուբլու: Մարյան ասել էր.

— Ծուտ տարեք, դրեք կառքը:

Անուշեղեն վաճառողն ասել էր.

— Առանց փողը տալու չեմ տանի:

Արքայադուստրերը բարկացած փսփսացել ու ասել էին.

— Փաթաթիր ու թող, հետո կուղարկենք:

Այնտեղից, ամոթը միանգամայն կորցրած, գնացել էին նախկին ֆավորիտուհի Աննա Մոնսի մոտ, որն ապրում էր Պյոտր Ալեքսեևիչի կառուցած նույն տանը: Միանգամից ներս չէին թողել նրանց, ստիպված երկար թակել էին դուռը, շղթայակապ շներն էին ոռնացել: Նախկին ֆավորիտուհին նրանց ընդունել էր անկողնու մեջ, հավանորեն, դիտավորյալ էր պառկել: Նրանք ասել էին Մոնսին.

— Բարև քեզ, Աննա Իվանովնա, երկար կյանք ունենաս, գի-

տեսնք, որ տոկոսով փող ես տալիս, գոնե հարյուր ռուբլի տուր մեզ, չնայած երկու հարյուր կուզենայինք:

Մոնսիխան կատարյալ չորությամբ պատասխանել էր.

— Առանց գրավի չեմ տա:

Եկատերինան նույնիսկ լաց էր եղել.

— Վատ ենք, գրավ դնելու բան չունենք, կարծում էինք, հենց էնպես կխնդրեինք:

Եվ արքայադուստրերը ֆավորիտուհու տնից հեռացել էին:

Այդ ժամանակ ուտել էին ուզել: Հրամայել էին կառքը կանգնեցնել մի տան առաջ, ուր բաց պատուհաններից տեսել էին, թե ինչպես են գվարճանում հյուրերը: Լիվոնիայում պատերազմի գնացած սերժանտ Դանիլա Յուդինի կինը երկվորյակ էր ունեցել, որոնց կնունքն էին կատարում: Արքայադուստրերը տուն էին մտել և խնդրել, որ իրենց կերակրեն, ու պատիվ էին արել նրանց:

Երեք ժամ անց, երբ սերժանտի կնոջ տնից հեռացել էին, ճանապարհով եկող անգլիացի վաճառական Վիլյամ Պիլլը ճանաչել էր նրանց կառքի մեջ, կանգ էին առել ու հարցրել, թե վաճառականը չի՞ ուզում ճաշով հյուրասիրել իրենց: Վիլյամ Պիլլը գլխարկը վեր էր շպրտել, ուրախ-ուրախ ասել. «Ամենայն բավականությամբ»: Արքայադուստրերը գնացել էին նրա տուն, կերել, անգլիական օղի և գարեջուր էին խմել: Իրիկնադեմին, Պիլլի տնից դուրս գալով, շրջել էին արվարձանում, լուսավորված պատուհաններից ներս նայելով: Եկատերինան ուզել էր մի տուն էլ մտնել և ընթրիք խնդրել, բայց Մարյան չէր թողել: Այդպես զվարճացել էին, մինչև մութն ընկնելը:

5.

Նատալյայի կառքը քառատրոփ պտտում էր Գերմանական արվարձանում, աղյուսաշենի պես վարպետորեն ներկած փայտյա տնակների, վաճառականական ցածրիկ ու երկարուկ պահեստների երկաթակուռ դարպասների, նախապարտեզներում հետաքրքիր ձևերով խուզված կարմ ծառերի մոտով: Ամենուրեք, փողոցի լայնքով, ներկած ցուցանակներ էին կախած, խանութների դռները բաց էին, տեսակտեսակ ապրանքներ քաշ արած: Նատալյան նստած էր, շրթունքները սեղմած, ոչ ոքի չէր նայում, տիկնիկի պես՝ ճյուղավոր պսակով, ուսերին գցած ամառային թիկնոցով: Նրան գլուխ էին խոնարհում տաբատակալներով և գործած գդակներով պարարտ բաղաքացիներ, ծողոտն գլխարկներով պատկառելի կանայք նրա կառքն էին ցույց տալիս երեխաներին, ճանապարհից մի կողմ ցատկեց կողերը ցից փեշերով կաֆտան հագած ոմն պճնամոլ, գլխարկով պաշտպանվելով փոշուց: Նատալյան համարյա լաց էր լինում ամոթից, լավ հասկանալով, որ Մաշկան և Կատկան ծաղրի առարկա են դարձել արվարձանում և, իհարկե, բոլորը՝ հոլանդացի, շվեյցարացի, անգլիացի, գերմանացի կանայք խոսում են այն մասին, որ Պյոտր ցարի քույրերը բարբարոսներ են, քաղցած մուրացկաններ:

Քույրերի բաց կառքը նա տեսավ մի նեղ նրբանցքում, պրուսական դեսպանորդ Կայզերլինգի տան կարմիր-դեղին շերտերով ներկած դարպասի մոտ: Դեսպանորդի մասին ասում էին, որ նա ցանկանում է ամուսնանալ Աննա Մոնսի հետ և միայն Պյոտր Ալեքսեևիչից է դեռևս վախենում: Նատալյան մատանիներով թակեց դիմացի ապակին, կառապանը դարձրեց սեփ-սև մորուքը, բարձրաձայն բղավեց. «Փը՞ռռռ, աղունիկներս»: Մոխրագույն ձիերը կանգնեցին, ծանրծանր շարժելով կողերը: Նատալյան ասաց մերձավոր բոյարուհուն.

— Վասիլիսա Մատվեևնա, գնա գերմանական դեսպանորդին ասա, որ Եկատերինա Ալեքսեևնան և Մարյա Ալեքսեևնան ինձ շատ պետք են... Չթողնես մի պատառ անգամ կուլ տան, թեկուզ ուժով էլ լինի, դուրս բեր...

Վասիլիսա Մյասնայան, ցածրաձայն տնքալով, իջավ կառքից: Նատալյան ետ ընկավ, մատները կոտրատելով սպասում էր: Ծուտով առմուտքից ցած վազեց դեսպանորդ Կայզերլինգը՝ նիհար, փոքրամարմին, հորթի արտևանունքներով մի մարդ: Կրծքին սեղմելով հապշտապ վերցրած գլխարկն ու ձեռնափայտը, ամեն աստիճանի վրա խոնարհվում էր, կարմիր գուլպա հագած ոտքերը ծռմռելով, սուր քիթն առաջ էր պարզել ծիծաղելի, աղաչում էր արքայադստերը տուն մտնել, սառը գարեջուր ճաշակել:

— Ժամանակ չունեմ,— չոր-չոր պատասխանեց Նատալյան:— Եվ քո տանը գարեջուր չեմ խմի ես.... Ամոթալի գործեր ես բռնում, պատվելիս... (Չթողնելով, որ բերանը բաց անի:) Գնա, գնա, շուտ այստեղ ուղարկիր արքայադուստրերին...

Եկատերինա Ալեքսեևնան և Մարյա Ալեքսեևնան վերջապես ելան տնից, ասես երկու խուրձ լինեին՝ ծալք ու փոթերով լայն շորերով, երկուսի կլոր դեմքերն էլ վախեցած, անմիտ, ներկած, սեփական մազերի փոխարեն սև ու բարձր-ոլորուն սանրվածքով, հուլունքներ կախկխված կեղծամներով (Նատալյան նույնիսկ տնքաց ատամների արանքից): Ուռած աչքերն արևի տակ կկոցեցին, ետևից բոյարուհի Մյասնայան թշշացրեց. «Խայտառակ մի արեք, շուտ նստեք նրա կառքը»: Կայզերլինգը, գլուխը խոնարհելով, բացեց դռնակը: Մոռանալով հրաժեշտ տալ նրան, արքայադուստրերը մտան ու հագիվ տեղավորվեցին Նատալյայի դիմացի նստարանին: Կարմիր անիվներով փոշի բարձրացնելով ու ճոճվելով, կառքը ամայուտով սուրաց դեպի Պոկրովկա: Ամբողջ ճանապարհին լուռ էր Նատալյան, արքայադուստրերը զարմացած թափահարում էին թաշկինակները: Եվ միայն նրանց վերնասենյակը մտնելուց ու հրամայելուց հետո, որ դռները պինդ կողպեն, Նատալյան ասաց իր ասելիքը.

— Անամոթնե՞ր, ի՞նչ է, լրի՞վ եք ցնդել, թե՞ ուզում եք մենաստանում բանտարկվել: Մոսկվայում քի՞չ անուն հանեցիք: Դեռ ամբողջ աշխարհի առա՞ջ պիտի խայտառակվեք: Ո՞վ է ձեզ սովորեցրել դեսպանորդների տները գնալ: Հապա հայելու մեջ նայեք, կշտությունից թշներդ են պայթում, մտքներովդ անցել է գերմանական ու հոլանդա-

կան խորտիկնե՞ր ճաշակել: Ի՞նչ խելք եք արել, որ գնացել ու երկու հայրդար ռուբլի եք խնդրել փչացած Աննա Մոնսովայից: Նա շատ գոհ է մնացել, որ վռնդել է ձեզ՝ մուրացկանների, Կայզերլինգն այդ մասին անպայման նամակ կգրի պրուսական թագավորին, իսկ թագավորն ամբողջ Եվրոպայում կտարածի: Ուզել եք շաքարավանառ կնոջից անփող ապրանք թոցնել, ուզել եք, մի հակառակվեք: Լավ է, որ հասկացել ու անփող չի տվել: Տեր աստված, հիմա ի՞նչ պիտի ասի թագավորը: Ի՞նչ անի ձեզ հետ, կովե՞ր: Գլուխներդ խուզի ու Պեչորա, Պուստոզե՞րսկ ուղարկի...

Առանց պսակը և թիկնոցը հանելու, Նատալյան քայլում էր սենյակում, հուզված սեղմելով ձեռքերը, շանթող հայացք նետելով Կատկայի և Մաշկայի վրա. սկզբում նրանք կանգնած էին, հետո ոտքերը հոգնեցին ու նստեցին, քթերը կարմրել էր, գիրուկ դեմքերը ցնցվում էին, ուզում էին բարձրաձայն լաց լինել, բայց սարսափում էին ծրպտուն հանել:

— Թագավորն ուժասպառ եղած մեզ դուրս է քաշում անդունդից,— ասում էր Նատալյան:— Անքուն, անկերակուր, ինքն է տախտակ սղոցում, մեխ խփում, գլուխը դրած ռումբերի, գնդակների տակ, մենակ թե որ մարդ դարձնի մեզ... Թշնամիները միայն դրան են սպասում, որ անպատիվ անեն ու կործանեն: Իսկ սրա՞նք: Ոչ մի ոխերիմ թշնամու մտքով չէր անցնի այն, ինչ դուք եք արել... Եվ ես երբեք չեմ հավատա, ես կիմանամ, թե ձեզ ով է գլխի գցել Գերմանական արվարձան գնալ... Պառաված կնանիք, դանդալոշներ, ինչ պիտի խնամալիք...

Այստեղ Կատկան ու Մաշկան, ուռած շրթունքները բացելով, լաց եղան.

— Մեզ ոչ ոք գլխի չի գցել,— վնգաց Կատկան,— գետինը մտնենք, թե...

Նատալյան բղավեց.

— Սո՛տ ես ասում: Շաքարավանառի մասին ո՞վ է ձեզ ասել: Իսկ ո՞վ է ասել, որ Մոնսիխան տոկոսով փող է տալիս...

Մաբյան նույնպես վնգաց.

— Կիմբեցի կնիկն է մեզ ասել, Դոմնա Վախրամեևան: Շաքար ծախողին երազին էր տեսել, մենք էլ նրան հավատում ենք, մարցիպան ուզեցինք...

Նատալյան նետվեց, դուռը բացեց, մի ծերուկ ետ թռավ դռան տակից՝ կնոջ շորով խեղկատակ էր, ետ քաշվեցին հացփոքի, պակասավոր կանայք, ծաղրածու կնանիք, շաղգամի փրերը մազերի մեջ խըրած: Նատալյան բռնեց մաքուր հագնված, փափկամարմին, սև գլխաշորով մի կնոջ ձեռքից.

— Դո՞ւ ես կիմբեցի կնիկը:

Մոլեռանդությամբ ու լուռ, ամբողջ մարմնով խոնարհվեց նա.

— Արքայադուստր տիրուհի, ճիշտ է, Կիմբա քաղաքից եմ, խեղճ այրի Դոմնա Վախրամեևան եմ...

— Դո՞ւ ես հանդգնել արքայադուստրերին, որ Գերմանական արվարձան գնան: Պատասխան տուր...

Վախրամեևայի սպիտակ դեմքը ցնցվեց, երկար շրթունքները ծրտմրվեցին.

— Ես մի ցավի եկած կնիկ եմ, իմ տիրուհի, ուշքս գլուխս չեղած ժամանակ անխելք բաներ եմ ասում, բարեգործ արքայադուստրերն իմ անխելք խոսքերից մխիթարվում են, ես էլ ուրախանում եմ դրանով... Գիշերները անպատմելի երազներ եմ տեսնում: Ու հավատում, թե չեն հավատում իմ երազներին բարեգործ արքայադուստրերը, էդ մեկը չեմ իմանում... Գերմանական արվարձանում օրումս չեմ եղել, շաքար ծախողի երեսը տեսած չկամ:— Նորից խոնարհվելով Նատալյային, այրի Վախրամեևան ուղղվեց, ձեռքերը դրեց փորին, գոգնոցի տակ,— կուզես կրակ տուր, վառիր...

Նատալյան մոլլված ձայնեց քույրերին՝ Կատկան ու Մաշկան միայն փղձկում էին կամացուկ, տանջվելով շոգից: Դռնից ներս խցկվեց ծաղրածու մի ծերուկ՝ քթի փոխարեն միայն ռունգերն էին, բեխ ու մորուս զզզզված, շրթունքները շրջված:

— Հը՞, ծիծաղեցնե՞մ:— Մարյան բարկացած նրա վրա թափահարեց թաշկինակը: Բայց արդեն մյուս կողմից տասնյակ ձեռքեր բռնել էին դուռը, և ցնցոտիապատ, գլխաբաց, ծաղրածուի սարաֆաններով, կոկոշիկներով խեղկատակ ու պակասավոր կանայք, ծերուկին հրմշտելով, սենյակ լցվեցին: Ծակամուտ ու անամոթ, սկսեցին ցատկոտել, բղավել, կուշտել իրար հետ, մազեր քաշքշել, ծեծկռտվել: Ծերուկը հեծավ մի կուզիկ կնոջ, տրեխները ցցեց կարկատաններով շրջազգեստի տակից, ոնգաձայն բղավեց. «Էս էլ գերմանացին գերմանուհուն հեծած, գնաց գարեջուր խմելու...» Նախասենյակում հավաքված երգիչները պարեղանակ թնդացրին, սուլոցներով: Դոմնա Վախրամեևան մի կողմ քաշվեց ու կանգնեց վառարանի ետևը, գլխաշորն աչքերին քաշելով:

Ջայրացած, կատաղած Նատալյան կարմիր կոշիկներով հատակն էր դոփում «կորե՞ք»,— բղավեց նա գլխկոնծի տվող այդ թափթփուկների վրա՝ «կորե՞ք»: Բայց խելառներն ու ծաղրածուները ավելի բարձր ծղրտացին: Մենակ ի՞նչ կարող էր անել նա այդ ցնդած խաժամուժի դեմ: Ամբողջ Մոսկվան էր լիքը դրանցով, բոյարական յուրաքանչյուր տան մեջ, ամեն մի գավթում այդ մղձավանջն էր գալարվում... Նատալյան զզվանքով քաշեց փեշը, հասկացավ, որ դրանով ավարտվեց քույրերի հետ իր խոսակցությունը: Հեռանալն էլ հիմարություն կլիներ հիմա՝ Կատկան և Մաշկան, լուսամուտից գլուխները հանելով, ծիծաղելու էին իր կառքի ետևից...

Հանկարծ աղմուկի և իրարանցման միջից ձիերի դոփյուն և անիվների դղրդոց լսվեց բակում: Նախասրահում երգիչները լռեցին: Ծերուկ ծաղրածուն, ատամները բացելով, բղավեց. «Փախե՞ք», բոլորն առնետների պես նետվեցին դեպի դուռը: Տան մեջ կարծես ամեն ինչ մեռավ: Փայտյա սանդուղքը ճռճռաց ծանր քայլերի տակ:

Փնչացնելով սենյակ մտավ մի գեր մարդ, արծաթակուռ գավազանն ու գլխարկը բռնած: Հին մոսկովյան, մինչև հատակը հասնող, հապալասագույն լայն արմկակ էր հագին, լայն ու թուխ դեմքը սափրված

էր, սև բեխերը ոլորած լեհավարի, բացգույն, արցունքոտ աչքերը չոել էր խեցգետնի պես: Նա լուռ խոնարհվեց՝ գլխարկը հատակին կպցնելով, Նատալյա Ալեքսեևնային, ծանր-ծանր շրջվեց ու նույնպես խոնարհվեց Կատերինա և Մարյա արքայադուստրերին, որոնք շնչահեղձ էին եղել սարսափից: Հետո նստեց նստարանին, կողքը դնելով գավազանն ու գլխարկը:

— Ո՞ւխ,— ասաց նա,— էս էլ ե՛ս, եկա:— Ծոցից հանեց գունավոր մեծ թաշկինակը, սրբեց դեմքը, վիզը, ճակատին սանրած թաց մազերը:

Ամենաառաքինի մարդն էր Մոսկվայում՝ իշխան-կայսր Ֆյոդոր Յուրևիչ Ռոմոդանովսկին:

— Լսել ենք, լսել ենք, վատ գործեր են էստեղ սկսվել: Ա՛յ, ա՛յ, ա՛յ:— Թաշկինակը խոթելով արմկակի ծոցը, իշխան-կայսրը աչքերը տարավ Կատերինա և Մարյա արքայադուստրերի վրա:— Մարցիպա՞ն էիք ուզում: Էդպես, էդպես, էդպես... Բայց ախր հիմարությունը դավաճանությունից էլ վատ բան է... Մեծ աղմուկ է բարձրացել:— Կուռքի պես, լայն դեմքը դարձրեց Նատալյային:— Նրանց ուղարկել են Գերմանական արվարձան փողի՝ էդպես է: Ուրեմն, մեկնումեկը փողի կարիք ունի: Զբաղկանաս վրաս, ստիպված եմ քույրերիդ տան մոտ պահակներ դնել: Նրանց խորդանոցում կիմրեցի մի կնիկ է ապրում ու թաքուն ուտելիք է տանում բանջարանոցի ետևը, քանդած բաղնիքը: Էդ բաղնիքում փախստական կարգալուց տերտեր Գրիշկան է ապրում... (Կատերինան և Մարյան այստեղ սպիտակեցին, այտերը բռնեցին:) Էդ կարգալուց Գրիշկան, ուրեմն, բաղնիքում իբր սիրային թուրմ է սարքում, հղիանալու դեմ էլ է թուրմ սարքում, որ պտուղը վիժեն: Լա՛վ: Մեզ հայտնի է, որ կարգալուց Գրիշկան դրանից բացի բաղնիքում գաղտնի դավաճանական նամակներ է գրում, և գիշերները գնում է Գերմանական արվարձան, մի քանի դեսպանորդների տները, նաև գընում է վանքական մի կույս կնկա տուն, որն էլ Նովոդևիչեի մենաստանում է լինում, էնտեղ հատակ լվացող է, ու նախկին կառավարչուհի Սոֆյայի հատակն էլ է ինքը լվանում.. (Իշխան- կայսրը խոսում էր ոչ բարձրաձայն, դանդաղ, սենյակում ոչ ոք չէր շնչում:) Էնպես որ ես մի քիչ կմնամ էստեղ, սիրելի Նատալյա Ալեքսեևնա, իսկ դու մի կեղտոտվիր էս գործերով, իրիկվա զոկն ընկել է, գնա տուն....

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1.

Սեղանի մոտ Բրովկին երեք եղբայրներն էին նստած՝ Ալեքսեյը, Յակովը և Գավրիլան: Ներկա ժամանակներում հազվագյուտ բան էր այդպես հանդիպելը, մի գավաթ գինու շուրջ միմյանց հետ խոսելը: Ներկայումս ամեն ինչ շտապողական էր, ժամանակ չկար, այսօր այստեղ ես, վաղն արդեն հազար վերստ հեռու ես պանում սահնակով, քուրքով փաթաթված, ծղոտի տակ թաղված... Պարզվեց, որ քիչ են մարդիկ, չեն հերիքում...

Յակովն եկել էր Վորոնեժից, Գավրիլան՝ Մոսկվայից: Երկուսին էլ հանձնարարված էր Նևայի ձախ ափին, Ֆոնտանկայի գետաբերանից վեր ամբարներ կամ ցեյխհաուզներ, ջրի ափին կառանատեղեր, ջրի վրա բոներ կառուցել և ամբողջ ափն ամրացնել ցցաշերտաններով, սպասելով բալթիական նավատորմի առաջին նավերին, որոնք ամենայն շտապողականությամբ կառուցվում էին Սվիրի գետի վրա, Նավադաշտի մոտերքում: Անցյալ տարի այնտեղ էր գնացել Ալեքսանդր Դանիլովիչ Մենշիկովը, հրամայել էր կայմագերանի ծառեր կտրել ու հենց ջրօրհնեքի շաբաթին առաջին նավաշինարանն էր հիմնել: Այնտեղ էին տեղափոխել Ոլոնեցկի նահանգի հռչակված հյուսներին և Ուստյուժինա Ժելեզոպոլսկայայի դարբիններին: Երիտասարդ նավաշինարարվարպետները, որ գործն Ամստերդամում էին սովորել, Վորոնեժից և Արխանգելսկից եկած հին վարպետները, Հոլանդիայից և Անգլիայից եկած հռչակավոր վարպետները Սվիրիի վրա քսան թնդանոթանի ֆրեգատներ, շնյավներ, գալիոտներ, բրիգանտինաներ, բուերներ, գալերներ ու շմակներ էին կառուցում: Պետր Ալեքսեևիչն այնտեղ էր գնացել դեռևս սահնակի ճամփով, և շուտով նրան ապասում էին այստեղ՝ Պետերբուրգում:

Ալեքսեյը, առանց կափտանի, հոլանդական կտավի մեկտակ, կիրակնօրյա մաքուր շապկով, ժանեկազարդ թեզանիքները ոլորած, դանակով աղ դրած միս էր փրթում տախտակի վրա: Եղբայրների առաջ տաք շչիով կավե կճուճ էր դրված, շտոֆով օղի, անագե երեք փոքր բաժակ, ամենքի առաջ տաբեկանի քարթու հացի մի-մի կտոր:

— Աղ դրած մսով շչին Մոսկվայում մի բան չէ,— եղբայրներին էր ասում շառագունած, մաքուր ածիլված, բացգույն վեր ոլորած բեխերով ու խուզած գլխով Ալեքսեյը (կեղծամը կախված էր պատից, փայտյա գամից),— էստեղ մենակ տոն օրերին ենք աղ դրած միս ուտում: Թթու կաղամբ էլ Ալեքսանդր Դանիլովիչի նկուղում կա, Բոյուտ. տանը, մեկ էլ կարծեմ ինձ մոտ, ու վերջ... Էն էլ, որ ամռանը գլխի ընկանք, բանջարանոցում կաղամբ ցանեցինք: Դժվար ենք ապրում, դժվար: Ու թանկ է ամեն ինչ, բան չենք կարողանում ճարել:

Փրթած միսը տախտակի վրայից կճուճի մեջ շրջեց Ալեքսեյը, բաժակները լցրեց: Եղբայրները, միմյանց գլուխ տալով, շունչ առան, խմեցին ու սկսեցին դանդաղ գդալել:

— Վախենում են էստեղ գալուց, կնիկ համարյա չկա, ապրում ենք ոնց որ անապատում, ատտված վկա... Զմռանը ոչինչ՝ դեսուդեն ընկած, սատիկ բքեր էին, խավար ու շատ էլ գործ կար... Բայց էսօրվա պես, որ գարնան քամին էլ փչեց, ամոթ է ասելը, թե ինչ մտքեր էն գալիս գլուխդ... Ու շատ էլ խիստ են պահանջում էստեղ մեզնից, ախչերս...

Կոճիկը դրճացնելով, Յակովն ասաց.

— Հա՛, մոայլ տեղեր են:

Ի տարբերություն եղբայրների, Յակովը չէր հետևում իրեն. դարչնագույն կաֆտանը կեղտոտ էր, կոճակները՝ կտրված, սև փողկապը հարպոտել էր մազոտ վզի վրա, ամբողջովին կանուպեր-ծխախոտի հոտ էր բռնել: Մազերն իրենց էին, ուսերին հասած, վատ սանրված:

— Ինչ ես ասում, Յակով,— պատասխանեց Ալեքսեյը,— նույնիսկ շատ սիրուն ու սիրտ բացող տեղեր ունենք. ծովեզրով մի քիչ ցած, ու դեպի մյուս կողմը, ուր Դուդերհոֆի ագարակն է: Խոսը՝ գոտկից, կեչու անտառները բարձր, վեր նայես, գլխարկդ կընկնի, տարեկան էլ է աճում, տեսակ-տեսակ բանջարեղեն, հատապտուղ... Նևայի բուն լեռնաբերանը, ինչ խոսք, ճահճոտ է, խուլ տեղ է: Բայց չես իմանում թե ինչի թագավորը հենց էդ տեղն ընտրեց քաղաքի համար: Տեղը ռազմական տեղ է, հարմար: Մի բանն է փորձանք՝ շվեդները շատ են անհանգստացնում: Անցյալ տարի հո վրա չտվեցին Սեստրա-գետից ու ծովից՝ նավերով, հոգիներս բերանները էր եկել: Բայց ետ քշեցինք: Հիմա արդեն ծովից էլ չեն գա: Հունվարին Կոտլին կղզու մոտ քարերով լիքը գերանավանդակներ ենք գցել սառույցի տակ, ու ամբողջ ձմեռ քար ենք կրել ու լցրել: Գետը դեռ չբացված, մի կլոր բաստիոն պատրաստ կլինի, հիսուն թնդանոթով: Պյոտր Ալեքսեևիչը դրա համար գծագրեր է ուղարկել Վորոնեժից ու իր սեփական մոդելը, հրամայել է բաստիոնը կոչել Կռոնշլոտ:

— Ոնց չէ, լավ գիտեմ,— ասաց Յակովը,— էդ մոդելի համար Պյոտր Ալեքսեևիչի հետ վիճեցինք: Ես ասի՝ բաստիոնը ցածր է, ալիք բարձրացավ, թնդանոթները կմնան ջրի տակ, մի քսան վերշոկ էլ պիտի բարձրացվի: Փայտով մի հատ հասցրեց: Առավոտյան կանչեց. «Յակով, ասեց, դու ճիշտ էիր, ես՝ սխալ»: Ուրեմն, մի բաժակ օղի տվեց, թխվածք: Հաշտվեցինք: Ու էս ծխամորճն էլ նվեր տվեց:

Զանազան բաներով լիքը գրպանից Յակովը հանեց վառված, կոթը կրծոտած ծխամորճը: Լցրեց ու ֆսֆսացնելով սկսեց կայծ տալ աբեթին: Կրտսերը՝ եղբայրներից ավելի բարձրահասակ ու ամրակազմ, պատանեկան այտերով, մուգ բեխերով, խոշորաչափ, Սանկա քրոջը նման Գավրիլան հանկարծ սկսեց շարժել շշիով լի գդալը և միանգամայն անտեղի-անհարկի ասաց.

— Այլոշա, տես, ուտիճ եմ բռնել:

— Ածխի կտոր է, անխելք:— Ալեքսեյը գդալի միջի սև բանը հանեց ու գցեց սեղանի տակ: Գավրիլան գլուխը ետ գցեց ու ծիծաղում էր, ի ցույց դնելով շաբարի պես ճերմակ ատամները:

— Ի՛նկը լուսամոգի մայրիկը: Հայրիկը մեկ-մեկ գդալը կշպրտեր. «Էս ինչ խայտառակություն է, ճաշի մեջ ուտիճ կա»: Մայրիկն էլ, թե «Ածխի կտոր է, հոգիս»: Չէինք իմանա, ծիծաղենք, թե լաց լինենք: Դու մեծ էիր, Այլոշա, Յակովը կհիշի՝ ոնց էինք ամբողջ ձմեռ անշալվար ապրում վառարանի վրա: Սանկան մեզ զանազան-զարմանազան հեքիաթներ կպատմեր: Է՛հ, ինչե՛ր եղան...

Եղբայրները գդալները ցած դրեցին, կոթենեցին բազուկներին, մի պահ մտածմունքի մեջ ընկան, ասես հեռուներից տրտմության շունչը փչեց յուրաքանչյուրի վրա: Ալեքսեյը բաժակները լցրեց ու նորից անշտապ խոսակցություն ծայր առավ: Ալեքսեյն սկսեց տրտնջալ, ամբոցում հետևում է աշխատանքներին, ուր տախտակ են ադոցում կառուցվող սուրբ Պյոտրի ու սուրբ Պավելի տաճարի համար, կացին ու ադոց չի հերիքում, հետզհետե դժվարանում է հաց, ձավար, աղ հայթայթելը զորավորների համար, կերի պակասությունից սատկում են ձիերը, որոնք սահնակներով քար ու փայտ էին տեղափոխում ֆիննական ափից: Հիմա էլ սահնակով գնալ-գալ չի լինի, սայլեր են պետք, անիվներ չկան...

Հետո, մի-մի բաժակ էլ լցնելով, եղբայրները սկսեցին քննել եվրոպական պոլիտիկը: Զարմանում էին ու դատապարտում: Թվում է, թե լուսավորյալ պետություններ են աշխատեին ու ազնիվ առևտուր անեին: Չէ որ չէ: Ֆրանսիական թագավորը ծովում ու ցամաքում կռվում է անգլիացիների, հոլանդացիների ու կայսեր դեմ, և այդ պատերազմի վերջը չի երևում: Թուրքերը Միջերկրական ծովը Վենետիկի ու Իսպանիայի հետ չկիսեցին, մեկը մյուսի նավատորմն է կրակ տալիս: Մենակ պրուսական թագավոր Ֆրիդրիխն է, որ առայժմ խաղաղ նրատած, քիթն է դեսուդեն տանում, հոտոտելով, թե որտեղից ինչ փախցնի: Սաքսոնիան, Սիլեզիան և Լեհաստանը Լիտվայի հետ ծայրեծայր բռնկված են պատերազմով ու երկպառակությամբ, նախանցյալ ամիս Կառլոս թագավորը լեհերին հրամայել է նոր թագավոր ընտրել, ու հիմա երկու թագավոր կա Լեհաստանում՝ Ավգուստ Սաքսոնացին և Ստանիսլավ Լեշչինսկին: Լեհ պաներից ոմանք Ավգուստի կողմն են բռնել, ոմանք՝ Ստանիսլավի, բորբոքվում են, սրամարտում իրենց պստիկ սեյմերում, շլյախտա հալաքում, մեկը մյուսի գլուղակներն ու կալվածքները հրդեհում, իսկ Կառլոս թագավորը զորքով շրջում է Լեհաստանում, կերակրվում, թալանում, քաղաքներ ասպատակում ու սպառնում, որ երբ ամբողջ Լեհաստանը ճզմեց, կդառնա Պյոտր ցարին ու կրակ կտա Մոսկվան, կամայացնի ռուսաց տերությունը և այդ ժամանակ իրեն նոր Ալեքսանդր Մակեդոնացի կհռչակի: Կարելի է ասել, թե ամբողջ աշխարհը խելագարվել է...

Հանկարծ մի մեծ սառցալուլա շրխկոցով ընկավ դրսում, ծեփած պատի խորշի բացված քառապակի լուսամուտի վրայից: Եղբայրները շրջվեցին ու տեսան անհատակ ու կապույտ խոնավ երկինքը՝ ինչպես միայն այստեղ է լինում, ծովեզրին, լսեցին տանիքից թափվող կաթիլների շառաչած կտկտոցն ու ճճճղուկների ծլվլոցը մերկացած թփի վրա: Այդ ժամանակ խոսեցին իրենց կյանքից:

— Ահա երեք եղբայր ենք,— մտազբաղ ասաց Ալեքսեյը,— երեք թշվառ անտիրական: Շապիկներս սպասյակս է լվանում ու կոճակները կարում սլեթք եկած ժամանակ, բայց դա ինչ է որ... Կնոջ ձեռք չի... Ասածս հո շապիկը չէ, շապիկն էլ, ինքն էլ... Ուզում եմ, որ մեկը լուսամուտի մոտ նստած ինձ սպասի, փողոց նայի: Գալիս ես հոգնած, սառած, ընկնում ես չոր անկողնուն, քիթդ խրում բարձի մեջ, շան նըման, մեն-մենակ էս աշխարհում... Բայց որտեղի՞ց կին գտնես...

— Էդ է որ կա՝ որտեղի՞ց,— ասաց Յակովը, արմունկները դնելով սեղանին ու վրա-վրա երեք քուլա արձակեց ծխամորճից:— Ախպորս

սանեմ, անհուսալի մարդ եմ ես: Անգրագետ տխմարի մեկին չեմ առնի, որ հետը խոսելու բան չունենամ: Սպիտակ թաթիկներով բոյարուհին էլ, ում պտտեցնում ես ասամբլեյաներին ու կոմպլիմենտներ ասում Պյոտր Ալեքսեևիչի հրամանով, ինքն ինձ չի առնի... Դրա համար էլ, որ չեմ դիմանում, գլխիս ճարը մի կերպ տեսնում եմ... Վատ է, ինչ խոսք, կեղտ է: Բայց ինձ համար մենակ մաթեմատիկան թանկ է աշխարհի բոլոր կանանցից:

Ալեքսեյը ցածրաձայն ասաց նրան.

— Մեկը մյուսին չի խանգարում...

— Ուրեմն, խանգարում է, եթե ասում եմ: Հրեն, ննջողուկ է նստած ճյուղին, ուրիշ զբաղմունք չունի, մեկիկ-մեկիկ էգերի վրայով անցնի.. Իսկ աստված մարդուն ստեղծել է, որ նա մտածի:— Յակովը նայեց կրտսեր եղբորն ու խոխոտացրեց ծխամորճը:— Մեր Գավրյուշկան է կարծես ժիր էդ հարցերում:

Պարանոցից սկսած, Գավրիլայի ամբողջ դեմքը կարմրատակեց, քմծիծաղը դանդաղ գծագրվեց, աչքերը խոնավացան, շփոթմունքից չընգիտեր ուր թաքցնի:

Յակովն արմունկով բոթեց նրան.

— Պատմիր: Ես էդ խոսակցությունները սիրում եմ:

— Լավ, լավ, վերջացրեք... Պատմելու բան չկա... Զահել եմ դեռ...

Բայց Յակովը, ապա և Ալեքսեյը ձեռ չքաշեցին. «Մենք ու մերոնք ենք, անխելք, ինչ ես ամաչում...»: Գավրիլան երկար չեմուչում էր անում, հետո հոգոց հանեց ու վերջում ահա թե ինչ պատմեց եղբայրներին:

Ծննդյան տոներից առաջ, իրիկնադեմին, պալատական սուրհանդակ եկավ Իվան Արտեմիչենց տուն և ասաց, որ «Իվանի որդի Գավրիլա Բրովկինին հրամայված է անմիջապես ներկայանալ պալատ»: Գավրիլան սկզբում համառեց, չնայած ջահել էր, բայց ցարի վստահությունը վայելող անձ էր, դրանից բացի վորոնեժյան նավաշինարանի համար երկտախտակամած նավի ավարտած գծագիրն էր եզերում չինական տուշով և ուզում էր այդ գծագիրը ցույց տալ իր աշակերտներին Սուխարևկայա աշտարակում տեղավորված նավագնացության դպրոցում, ուր Պյոտր Ալեքսեևիչի հրամանով ազնվական դեռահասներին նավագնացություն էր սովորեցնում: Իվան Արտեմիչը խստորեն կշտամբեց որդուն. «Գավրուշա, ֆրանսիական կաֆտանդ հագիր, գնա, ուր քեզ հրամայված է, էդ գործերում կատակ չեն անի»:

Գավրիլան հագավ ճերմակ մետաքսե կաֆտանը, կապեց լանջագոտին, ծանյակները դուրս բերեց կզակի տակից, մուշկով օծեց սևաթույր կեղծամը, խթաններին հասնող թիկնոցն ուսերին գցեց և հոր եռաձի սահնակով, որին ամբողջ Մոսկվան էր նախանձում, գնաց Կրեմլ:

Սուրհանդակը նրան տարավ նեղլիկ սանդուղքներով, մութ միջանցքներով դեպի վեր, քարաշեն հինավուրց պալատները, որոնք չէին տուժել հրդեհից: Այնտեղ բոլոր սենյակները ցածրառաստաղ էին, կամարակապ, ոսկեգույն, կարմիր կամ կանաչ դաշտերում գանգան խոտ ու ծաղիկներ նկարած պատերով ու որմերով: Մոմի, հին խնկի հոտ էր գալիս, հախճապլուսե վառարաններից շոգ էր փչում, ամեն տապճակի վրա մի-մի ալարկոտ անգործական կատու կար պառկած, պահարանների փայլարապատ դռնակների ետևում փայլում էին ենդովաներ ու սափորներ, որոնք թերևս Իվան Անեղն էր բանացրել, բայց հիմա արդեն չէին օգտագործում: Այդ հնության հանդեպ ամենայն արհամարհանքով լցված Գավրիլան խթաններն էր զրնգացնում քարե նախշած սալերի վրա: Վերջին դռան մոտ կռացավ, քայլ արեց առաջ, ու տաքության պես մի զմայլանք պարուրեց նրան:

Աղոտ ոսկեփայլ կամարի տակ թևավոր գրիֆոնների պես ոտերով սեղանի վրա մոմեր էին վառվում, որոնց դիմաց մերկ բազուկները ցաքուցրիվ թերթերին դրած, երիտասարդ մի կին էր նստած, մորթե բոթանակը կիսամերկ ուսերին գցած: Մեղմ լույս էր ընկած նրա նուրբ, կլոր դեմքին: Նա գրում էր, ապա դրեց կարապի փետուրը, մատանեզարդ մատները տարավ խարտյաշ մազերին, ուղղեց ոլորած հյուսքը և Գավրիլայի վրա բարձրացրեց թավշանման աչքերը: Արքայադուստր Նատալյա Ալեքսեևնան էր:

Գավրիլան չընկավ ոտքերը, ինչպես թերևս պիտի աներ բարբարոսական սովորության համաձայն, այլ ֆրանսիական պոլիտեսի բոլոր կանոններով ձախ ոտքը խփեց հատակին և շատ ցածր տարավ բերեց գլխարկը, դեմքը ծածկած սևաթույր կեղծամի գանգուրներով: Արքայադուստրը ժպտաց իր փոքրաշուրթ բերանի անկյուններով, սեղանի մոտից ելավ, կողքերից մի քիչ բարձրացրեց մարգարտաշար ատլասե լայն շրջազգեստի փեշերը և խոր ծնկծալ արեց:

«Դո՞ւ ես Գավրիլան, Իվան Արտեմիչի տղան,— հարցրեց արքայադուստրը, մոմերից փայլող աչքերով նրան նայելով վարից վեր, քանի որ տղան բարձրահասակ էր, կեղծամը համարյա կտմարին էր քսվում:— Բարև: Նստիր: Քույրդ՝ Ալեքսանդրա Իվանովնան, Հաագայից ինձ նամակ է ուղարկել, գրում է, որ իմ գործերի համար շատ օգտակար կարող ես լինել: Փարիզում եղե՞լ ես: Փարիզի թատրոնները տեսե՞լ ես»:

Գավրիլան ստիպված էր պատմել, թե ինչպես նախանցյալ տարի երկու նավագնացների հետ Հաագայից Փարիզ գնաց բարեկենդանին ու թե ինչ հրաշքներ տեսավ այնտեղ՝ թատրոններ ու փողոցային դիմակահանդեսներ: Նատալյա Ալեքսեևնան ուզում էր ամեն ինչ իմանալ մանրամասն, անհամբերությամբ դոփում էր կրունկով, երբ Գավրիլան կմկմում էր, չկարողանալով ամեն ինչ բացատրել: Մոտ էր նստել՝ զմայլված, լայնացած բիբերով նայելով, նույնիսկ բերանն էր բացել, ֆրանսիական սովորույթներից զարմացած:

«Ահա,— ասաց,— մարդիկ մենավորի պես նստած չեն իրենց տներում, կարողանում են ուրախանալ և ուրիշներին ուրախացնել, փողոցներում էլ են պարում, կատակերգություններ էլ լսում հանուլքով... Նման բան մեզ մոտ էլ պետք է մտցնել: Ասում են, ինձ՞ենե՞ր ես: Հենց քեզ էլ կհրամայեմ պալատներից մեկը վերակառուցես՝ թատրոնի համար եմ աչքադրել: Մոմը վերցրու, գնանք...»:

Վառվող մոմով ծանր աշտանակը վերցրեց Գավրիլան, Նատալյա Ալեքսեևնան թեթևասահ քայլերով, զգեստը խշխշացնելով գնաց նրա առջևից կամարակապ սենյակներով, ուր տաք տապակների վրա արքունական, մեջքներն էին կորացնում անգորական կատուներն ու նորից պառկում տեղները, ուր այս ու այն կողմից մոսկովյան ցարերի չոր ու խիստ դեմքերն էին անհաշտ խոժոռությամբ նայում արքայադուստր Նատալյայի ետևից, որը տարտարոս էր առաջնորդում թե՛ իրեն, թե՛ սատանայի պես կոտոշավոր կեղծամով այդ պատանուն, նաև մոսկովյան նվիրական համայն հնամենիությունը:

Թեք ու նեղ սանդուղքի վրա, որը դեպի խավար էր տանում, Նատալյա Ալեքսեևնան երկնչեց, ապա մերկ ձեռքը մտցրեց Գավրիլայի բազկի տակ, տղան զգաց նրա տաք ուսը, մազերի, քրթանակի մորթու բույրը: Փեշի տակից հանում էր սեկե բթածայր ոտնամանի քիթը, կռանալով մթության մեջ, ավելի ու ավելի զգուշությամբ էր իջնում: Ներքին մանրիկ դող մտավ Գավրիլայի մարմինը, ձայնն էլ խոլ դարձավ, և երբ ցած իջան, արքայադուստրն արագ և ուշադիր նրա աչքերին նայեց.

«Այ, այդ դուռը բացիր,— ասաց, ցույց տալով ցեցակեր մանուռդով պատված մի ցածրիկ դռնակ: Բարձր շեմի վրայից Նատալյա Ալեքսեևնան առաջինն անցավ այն կողմ՝ տաքուկ մթության մեջ, ուր մկան և փոշու հոտ կար: Մոմը բարձր բռնած, Գավրիլան տեսավ մի մեծ, կամարակապ, չորս հաստաբետ սյուների վրա հենված սրահ: Այստեղ հնում ճաշասենյակ էր եղել, ուր հեզաբարո Միխաիլ Ֆյոդորովիչ ցարը նաշել էր Զեմսկի Սոբորի հետ: Կամարների և սյուների ոլմնանկարները թափվել էին, ճոճում էր տափատակյա հատակը: Խորքում, մեխերից կախված էին ճիլոպե կեղծամներ, բամբակյա կտորից թիկնոցներ և դերասանական այլևայլ հնոտիք, անկյունում նիտված էին թիթեղյա թագեր ու զրահներ, գայիսոններ, փայտյա սրեր, ջարդված աթոռներ՝ այն ամենն, ինչ մնացել էր անմտության և մեծագույն անվայելչության պատճառաբանությամբ Կարմիր հրապարակում գործող Յոհանն Կոնշտի վերջերս վերացրած թատրոնից:

«Այստեղ կլինի իմ թատրոնը,— ասաց Նատալյան,— այս կողմից հարթակ կսարքես դերասանների համար՝ վարագույրով ու ճրագաթասերով, իսկ այստեղ նստարաններ կդնես նայողների համար: Կամարները հարկավոր է շքեղ նկարազարդել, որ եթե զվարճանալու բան է լինելու, իսկապես զվարճալի լինի...»:

Նույն ճանապարհով Գավրիլան արքայադուստրը վեր տարավ, ու Նատալյան ազատ արձակեց նրան, թողնելով, որ ձեռքը համբուրի: Տղան տուն եկավ կեսգիշերն անց և ինչպես կար՝ կեղծամով ու կոֆտանով, ընկավ անկողնում ու նայում էր առաստաղին, ասես կիսայրված մոմի աղոտ լույսի միջից դեռևս տեսնում էր թավշանման ուշադիր աչքերով կլորավուն դեմքը, բառեր արտասանող փոքրաշուրթ բերանը, բուրավետ մորթիով ծածկված քնքուշ ուսերը, և աչքի առջևով շարունակ տաք խավարի մեջ էին թռչում մարգարտաշար շըրջազգեստի ծանր ծալքերը:

Հաջորդ երեկո արքայադուստր Նատալյան նորից հրամայեց իր մոտ գնալ և կարդաց «Հնոցային գործողություն» իր դեռևս կիսավարտ կատակերգությունը, վառվող հնոցը գցած երեք պատանիների մասին: Մինչև ուշ գիշեր Գավրիլան լսում էր, թե կարապի փետուրը թափահարելով, ինչպես է նա կարդում սահուն չափածոն և թվում էր նրան. առդյո՞ք ինքը այդ երեք դեռահասներից մեկը չէ, որը պատրաստ է խելացիորեն աղաղակել երջանկությունից, մորե մերկ կանգնած վառվող հնոցի մեջ...

Հին պալատի վերակառուցմանը նա ձեռնամուխ եղավ խիստ փութաջանորեն, թեև Պալատական վարչատան փոխատեղավորներն իսկույն սկսեցին խոչընդոտներ և վարչատնային զանազան պատրվակներ հարուցել շինափայտի, կրի, մեխի և այլ պետքերի խնդրում: Իվան Արտեմիչը լռում էր, չնայած տեսնում էր, որ Գավրիլան թողել է գծագրերը և չի գնում նավագնացության դպրոց, հաճի ժամանակ գդալը չառնելով, հիմարացած աչքերը հառում է դատարկ մի կետի, իսկ գիշերը, երբ մարդիկ քնում են, ամբողջ մի մոմ է վառում, գինը մեկ ալտին: Միայն մեկ անգամ, մեջքին դրած մատները խաղացնելով, շրթունքները ծամծմելով ասաց որդուն. «Մի բան կասեմ, Գավրուշա. կրակի կողքով ես գնում, զգույշ մնա. .»:

Մեծ պահին Վորոնեժից Մոսկվայով Սվիրի էր շտապում Պյոտր ցարը, և Գավրիլային հրամայեց իր Յակով եղբոր հետ Պիտերբուրգ գնալ՝ նավահանգիստ կառուցելու: Դրանով էլ ավարտվեց թատրոնի հետ նրա գործը... Դրանով էլ Գավրիլան ավարտեց իր պատմությունը: Վեր կացավ սեղանի մոտից, հոլանդական բանկոնակի բազմաթիվ կոճակներն արձակեց, կուրծքը բացեց և ձեռքերը կարճ, փուչիկի պես ուռած շալվարի գրպանները մտցրած, գնաց-եկավ կավածեփ հյուղակում՝ դռնից լուսամուտ և ետ:

Ալեքսեյն ասաց.

— Ու չե՞ս կարդալիս նրան մոռանալ:

— Չէ... Ու չեմ էլ ուզում մոռանալ, թեկուզ կառափնարանով սպառնան...

Եղունգներով սեղանին խփելով, Յակովն ասաց.

— Անդադար սիրտ մեր մորից ենք ժառանգել... Սանկան էլ է էդպես... Ինչ կարող ես անել՝ սույն հիվանդությունը բուժելու բան չէ: Եկեք, եղբայրներ, լցնենք ու խմենք մեր ծնող մոր՝ Ավդոտյա Եվդոկիմովայի հիշատակի համար...

Այդ ժամանակ հաշտում սապոգներ ու խթաններ դուիեցին՝ վրուի ցեխը մաքրելով, դուռը թափով բացվեց և սև, ցեխակոլոլ թիկնոցով, արծաթյա երիզով սև գլխարկով ներս մտավ Պրեոբրաժենսկայա գնդի բոմբարդիր-պորուչիկ, Ինգրիայի, Կարելիայի և Էստլյանդիայի գեներալ- նահանգապետ, Շլիսսելբուրգի նահանգապետ Ալեքսանդր Դանիլովիչ Մենշիկովը:

2.

— Տեր աստված, էս ոնց եք ծխել, ոնց որ արջաբուն լինի: Նըստեք, նստեք, առանց պաշտոնականության: Ողջույն,— կոպիտ ու զվարթ ասաց Ալեքսանդր Դանիլովիչը:— Չգնա՞նք գետ: Հը՞:— Եվ թիկնոցը վրայից գցելով, հսկայական կեղծամի հետ գլխարկը գլխից պոկելով, նստեց սեղանի մոտ, նայեց կրծած ոսկորներին, դատարկ կճուճի մեջ:— Սիրտս նեղվել էր, շուտ ճաշեցի, մի ժամ քնեցի, վեր կացա, տեսնեմ տանը մարդ չկա՝ ոչ հյուր, ոչ ծառա: Լքել են գեներալ-նահանգապետին... Քնիս մեջ կարող էի մեռնել, ու ոչ ոք չէր իմանա:— Աչքով արեց Ալեքսեյին:— Պարոն փոխգնդապետ, մի պղպեղօղի մատուցիր ու կաղամբն էլ մի խնայիր, գլուխս ոնց որ թե ցավում է... Է, ձեր գործե՞րն ինչպես են, նավ սարքող եղբայրներ: Պետք է, պետք է շտապել: Վաղը կգամ, կնայեմ:

Ալեքսեյը հաշտից կաղամբ բերեց ու մի շտոփ: Ալեքսանդր Դանիլովիչը ադամանդյա խոշոր մատանի դրած ճկույթը ցցեց, զգուշությամբ լցրեց միայն իր բաժակը, ափսեից պտղունցով կաղամբ վերցրեց՝ սառույցը հետը, աչքերը կկոցած, գավաթը գլուխը քաշեց ու աչքերը բացելով, սկսեց դրճացնել թթու կաղամբը:

— Կիրակի օրվանից գեշ բան չկա, էնպես եմ տխրում կիրակի օրերը, էլ չասած: Թե՞ էստեղի գարունն է վնասակար... Մարմինս լրիվ ջարդջրդվում ու ձգվում է... Կնիկ չկա՝ պատճառն էդ է... Էս էլ քեզ՝ նվաճողներ: Նվաճեցինք պրծանք: Քաղաք սարքեցինք, կնիկ չկա: Աստված վկա, Պյոտր Ալեքսեևիչն եկավ, հրաժարվելու եմ, ինձ գեներալ-նահանգապետություն պետք չի ու պետք չի... Ավելի լավ կլինի Մոսկվայում, առևտրական շարքում մի բան ծախեմ, գլուխս պահեմ... Ի՞նչ աղջկերք կան Մոսկվայում: Վենուսներ են: Աչքերը չարաճճի, թշերը վառվող, իրենք էլ փափուկ ու կչկչան... Լավ, գնացինք գետը, շունչս կտրվեց էստեղ...

Ալեքսանդր Դանիլովիչը երկար մի տեղ նստել չէր կարողանում, ժամանակը երբեք չէր բավականացնում նրան, ինչպես և բոլոր նրանց, ովքեր Պյոտր ցարի հետ էին աշխատում. մի բան խոսում էր, ուրիշ-ուրիշ բաների մասին մտածում: Նրան հարմարվելը շատ դժվար էր, ու վտանգավոր մարդ էր նա: Նորից գլխին դրեց կեղծամն ու գլխարկը, սամույրի փորատակի մորթիով թիկնոցը գցեց ուսերին և հյուղակից ելավ Բրովկին եղբայրների հետ: Իսկույն դեմքներին խփեց գարնանային ուժեղ, խոնավ քամին: Ֆոնտին կղզիով մեկ (հնում էին այդպես կոչում, իսկ հիմա՝ Պիտերբուրգյան կողմ) սոճիներն էին խշշում այնքան փափուկ և հուժկու, ասես երկնքի կապույտ խորխորատներից գետ էր թափվում ցած... Կռռում էին ասրմնագռավները, պտույտ տալով մերկ, հատուկենտ կեչիների վրա:

Ալեքսեյի հյուղակը կտրած անտառի ու արմատախիլ արած կոճղերի տեղում էր, Տրոիցկայա անվանված հրապարակում, վերջերս կառուցված առևտրական շարքից ոչ հեռու: Խանութները մեխված էին խաչաձև տախտակներով, վաճառականները դեռ չէին եկել, աջ կողմում երևում էին ձնից մերկացած հողաբմբերը և ամրոցի բաստիոնները: Ներկայումս դրանցից միայն մեկի՝ բոմբարդիր Պյոտր Ալեքսեևի բաստիոնն էր կիսով քարապատված, այնտեղ կայմաձողի վրա ծածանվում էր անդրեևյան խաչով ծովային ճերմակ դրոշը՝ սպասվելիք նավատորմի նախակարապետը:

Ամբողջ հրապարակում քամուց ծփում էր ջուրը: Ալեքսանդր Դանիլովիչը, առանց նայելու, շլմփացնում էր բոտֆորտներով, շեղակի քայլելով դեպի Նևա: Պիտերբուրգի գլխավոր հրապարակն առաջվա խոսակցությունների մեջ էր ու գծագրերի վրա, որ Պյոտր Ալեքսեևիչն էր գծագրում իր նոթատետրի մեջ: Այստեղ ընդամենը գերանակապ, մամուռով խծծված մի ժամատուն կար՝ Տրոիցկի եկեղեցին, մեկ էլ քիչ հեռվում, գետին մոտ կանգնած էր Պյոտր Ալեքսեևիչի տունը՝ երկու վերնասենյակով մաքուր սարքված մի խրճիթ, դրսից բարակ տախտակով պատված ու աղյուսանման ներկված, տանիքին, զարդաձիու կողքերին փայտյա ներկած հրանոթներ էին դրված և երկու ռումբ, իբր վառվող պատրույգներով:

Հրապարակի մյուս կողմում հոլանդական մի ցածրիկ տուն կար՝ ներս մտնելու համար խիստ տրամադրող: Ծխնելույզից մշտապես ծուխ էր բարձրանում, լուսամուտի պղտոր ապակիներից երևում էր ներսի անագե ամանեղենն ու կախ արած երշիկները, մուտքի դռանը մի զարհուրելի դեկապետ էր նկարված, ծովահենի մորուքով, մի ձեռքում գարեջրի գավաթը, մյուսում զառերը, մուտքից վեր, ձողի վրա ճոճվում էր ցուցանակը՝ «Չորս ֆրեգատների առաստերիա»:

Երբ հասան գետին, քամին ծածանեց թիկնոցները, բարձրացրեց կեղծամների գանգուրները: Նևայի վրա սառույցը կապույտ էր, մեծ-մեծ սառցահալ տեղերով, արդեն ուռած ու թրիքապատ ճանապարհներով: Ալեքսանդր Դանիլովիչը հանկարծ գայրացավ.

— Երկու հազար ռուբլի են տվել բոլոր աշխատանքների համար: Ահ, ես ձեր պաս պահող հերն եմ անիծել, սունկ ուտողներ: Թքել եմ ատենավոր ու փոխատենավորի, բոլոր վարչատների վրա՝ Մոսկվայում կես գոռշի վրա դողում են, թուղթ մրոտում: Ես եմ էստեղ տերուտիրականը: Փող ունեմ, ձիեր ունեմ, ինչքան պետք եղավ, թափով մուժիկներ կարող եմ գտնել, թե որտեղից՝ իմ գործն է... Լավ հիշեք, Բրովկին եղբայրներ, քնելու չեք եկել էստեղ... Անքուն, թե կիսատված, մայիսի վերջին բոլոր կառանատեղերը, բոներն ու ամբարները պատրաստ պիտի լինեն... Ու ոչ միայն ձախ ափին, որտեղ ձեզ հրամայել են... Էստեղ, Պիտերբուրգյան կողմում էլ հարմարություններ պիտի լինեն, որ մեծ նավը կարողանա մոտենալ, կառանվել...— Ալեքսանդր Դանիլովիչը արագ քայլում էր ափով, ցույց տալով, թե որտեղ պիտի սկսեն ցցագերան խփելը, որտեղ հիմնեն կառանատեղերը:— Ծովային հաղթանակից հետո ֆլագմանը կրակելով, ծակծկված առագաստներով կմոտենա, ու ի՞նչ, Ֆոնտանկայի գետաբերանի՞ն կառանվի: Չէ՞, էստե՛ղ,— բոտֆորտով դուփում էր ջրափոսի մեջ:— Կամ էլ՝ Անգլիայից, Հոլանդիայից մի երևելի հյուր եկավ, է՛ս Պյոտր Ալեքսեևիչի տունը, է՛ս իմ տունը, համեցեք...

Ալեքսանդր Դանիլովիչի տունը, կամ գեներալ-նահանգապետի պալատը ցարական խրճիթից հարյուր սաժեն էր հեռու, գետի հունով դեպի վեր կառուցված էր հապշտապ, կավաշեն էր ու հարթանեկ, հոլանդական բարձր տանիքով, որ գետի վրա երևում էր հեռուներից: Ճակատի մեջտեղում, երկու տափակ սյուների վրա առմուտքն էր, սյունասրահով, որի աջ թեքվածքին փայտյա ոսկեզօծ Նեպոմուկն էր պառկած, եռաժանիով, ձախ թեքվածքին խոշորաստինք Նայադան արմունկով կոթնել էր շրջված ծաղկամանին: Սյունասրահի եռանկյունու մեջ «Ա. Մ.» անվանագիրն էր, օձանախշով պարուրված: Տանիքին կայմաձողի վրա գեներալ-նահանգապետի դրոշն էր, առմուտքի առաջ երկու թնդանոթ:

— Տունն ամոթ չի օտարերկրացիներին ցույց տալ... Ահ, ինչ լավն են ծովի աստվածները: Լիր՛, կարծես ծովից ելել ու պառկել են իմ տան առաջ... Նավատորմն էլ որ Սվիրից եկավ ու էստեղով անցա՛վ, թնդանոթներից էլ կրակեցի՛նք... Ի՞նչ սիրուն բան կլինի, ինչ սիրուն...

Կապույտ աչքերը կկոցած, Ալեքսանդր Դանիլովիչը հիանում էր իր տնով: Հետո շրջվեց ու բարկացած թնչացրեց, նայելով հեռավոր ձախ ափին, ուր քամին ճոճում էր միայնակ կեչիները՝ սառցահալ տեղերի ու կոճղերի արանքում:

— Ահ, ցավալի է... Էստեղ մի քիչ փչացրել են շտապելուց...— Ձեռնափայտով ցույց տվեց այն տեղն, ուր Ֆոնտանկան ելնում էր Նևայից:— Ի՞նչ հեռանկար կբացվեր պատուհաններիս առաջ՝ անտառը սարի պես կանգնած, ամառային զբաղմունքների համար մի պլեզիր կսարքեինք էնտեղ... Կտրեցին... Էհ, գրողը տանի, միշտ էսպես է... Լավ, գնանք ինձ մոտ, մի բան կսարքենք, կիմենք...

— Պարոն գեներալ-նահանգապետ,— ասաց Ալեքսեյը,— նայեք, վերևից Նևայի վրայով կարծես թե շատ սահնակներ են գալիս... Թագավորը չի՞ արդյոք:

Ալեքսանդր Դանիլովիչը միայն նայեց, «Նա է» ասաց ու իրար անցավ: Բրովկին եղբայրները, հրամաններ ստացած, տարբեր կողմեր վազեցին, իսկ ինքը տուն շտապեց, բարձրաձայն կանչելով մարդկանց: Եվ կարճ ժամանակ անց նորից կանգնած էր ափին, կամրջակների վրա, միայն պրեոբրաժենյան մունդիրով, ոսկեկար ու վիթխարի թեքածալերով, մետաքսյա լանջազոտին գցած, սուրը կողքից կախ, հենց այն սուրը, որով անցյալ տարի աբորդաժի էր նետվել շվեդական ֆրեգատի վրա, Նևայի գետաբերանին:

Նևայի փոր տված սառույցի վրայով, որին նայելն իսկ սարսափելի էր, երկարասպոչ գումակ էր մոտենում: Կես հարյուրյակ դրագուն սկսեցին խթանել հոգնած ձիերին ու ափին մոտեցան, վախենալով սառցահալ տեղերից: Նրանց ետևից, համարյա ջրի միջով, կրաշեպատ ու ծանր մի սահնակաոք թեքվեց ու կանգնեց կամրջակների մոտ: Սահնակաոքի խորքից, արջամորթու ծածկոցների տակից, բոտֆորտով երկար ոտքը երևալուն պես դղրդացին գեներալ- նահանգապետի տան մոտի երկու թնդանոթները: Բոտֆորտից հետո քուրքի երկու թևք երևացին, կոշտ եղունգներով մատները դուրս եկան, բռնեցին սահակաոքի կաշվե պատյանից, և խլավուն մի ձայն հնչեց.

— Դանիլիչ, օգնիր, գրողը տանի, դուրս գալ չի լինում...

Ալեքսանդր Դանիլովիչը կամրջակներից թռավ ծնկահասա ջրի մեջ և դուրս քաշեց Պյոտր Ալեքսեևիչին: Այդ ժամանակ Պետրոպավլովսկի ամրոցի բոլոր բաստիոնները ծուխ ու բոց արձակեցին, դղրդյունը սփռվեց Նևայի վրայով: Ցարական տնակի կայմաձողն ի վեր շուռալվեց դրոշակը:

Պյոտր Ալեքսեևիչը ելավ կամրջակի վրա, ձգմգվեց, ուղղեց մարմինը, ծոծրակին իջեցրեց մորթե գդակն ու առաջին հերթին Դանիլիչին նայեց, ուրախությունից շիկնած նրա երկարուկ դեմքին, թրթռացող հոնքերին: Բոնեց այտերից, սեղմեց.

— Բարև, կամրադ... Չբարեհաճեցիր մոտս գալ, ես էլ սպասում էի... Էս է՝ ինքս եկա... Քուրքս քաշիր: Անպետք ճանապարհ էր, Ցիխսելբուրգից ցած քիչ մնաց ջրի տակն անցնեինք, ամբողջ մարմինս կոտրատվեց դարուփոսերի վրա, ոտքերս մզմզում են...

Պյոտր Ալեքսեևիչը մնաց սկյուռի մորթիով կարճ կաֆտանով, քամուն պարզելով կլոր, չսափրած, գզգզված բեխերով դեմքը, նայեց գարնանային գալարուն ամպերին, մարգագետինների ու սառցահալ տեղերի վրայով թռչող արագընթաց սուվերներին, Վասիլևսկի կղզուց այն կողմ ամպերի արանքից մոլեգնորեն լուսավորող, անբուն արևին: Ռունգները փքվեցին, փոքր բերանի անկյուններում փոսիկներ առաջացան:

— Պարադի՞զ,— ասաց:— Աստված վկա, Դանիլիչ, պարադի՛զ է, երկրային դրախտ... Ծովի հոտ է գալիս...

Հրապարակով, ջրափոսերի մեջ ճլմփացնելով, մարդիկ էին վազում: Վագոնների ետևից կոշիկները դոփելով, շարաքայլ գալիս էին կանաչ նեղ կաֆտաններով, սպիտակ գանգապանակներով պրեոբրաժենցիները և սեմյոնովցիները, բաց սվիններով հրացաններն առաջ պարզած:

3.

—... Վարշավայում, կարդինալ Ռաձեևսկու տանը սեղանի շուրջ նա ասել է. մի հատիկ տաշեղ էլ չեմ թողնի Նևա մտնի, մոսկովցիները թող հույս չունենան, թե ծովի ափին նստելու են... Ավգուստին ջախջախելուց հետո Սանկտ-Պիտերբուրքը բալի պես կուլ եմ տալու, կորիզն էլ թքեմ...

— Բայց ինչ հիմարն է, ես դրա մերը,— Ալեքսանդր Դանիլովիչը, տկլոր նստած նստարանին, գլուխն էր օճառում:— Դաշտում դեմ դիմաց գալիք, էդ հերոսին բալի կորիզ ցույց տայի...

— Մեկ էլ ասել է. ոչ մի անգլիական նավ չեմ թողնի Արխանգելսկ մտնի, մոսկովյան վաճառականների ապրանքը թող փտի ամբարներում:

— Բայց մեր ապրանքը չի փտում, հը՞, մին խեց։

— Անգլիական երևուներկու նավ, քարավանով, պահպան չորս ֆրեգատով, աստծո օգնությամբ Արխանգելսկ հասան անվնաս, բերեցին երկաթ, պողպատ, թնդանոթի պղինձ, տակառով ծխախոտ ու էլի շատ բան, որ մեզ պետք չէ, բայց ստիպված գնեցինք։

— Ինչ կա որ, մին խեց, վնասով չենք մնա... Նրանք էլ մի շահ պիտի ունենան՝ տեղ են հասել անվախ... Կուզե՞ս մի քիչ կվաս շփել տամ։ Նա՛ստով,— բղավեց Ալեքսանդր Դանիլովիչը, նորատաշ տախտակյա հատակի վրա շլմփացնելով հասավ նախաբաղնիքի ցածրիկ դռանը։— Քեզ ի՞նչ եղավ, Նարտով, ծխահարվեցի՞ր։ Կվասի ամանն առ ու մի լավ շփիր...

Նիհար ձնկները ցցած Պյոտր Ալեքսեևիչը պառկած էր ճիշտ առաստաղի տակի թախտին և ավելն էր թափ տալիս իր վրա։ Սպասյակ Նարտովն արդեն երկու անգամ շոգեհարել ու սառցասառը ջրով ցողել էր նրան, հիմա պառկած վայելում էր։ Բաղնիք մտավ գալուն պես, որ հետո արդեն ախորժակով ընթրի։ Լորենու տախտակից էր բաղնիքը, հարմար ու թեթև։ Պյոտր Ալեքսեևիչը չէր ուզում այստեղից գնալ, չնայած արդեն երկու ժամ գեներալ-նահանգապետի ճաշասենյակում ցարի հայտնվելուն և սեղան նստելուն էին սպասում հյուրերը։

Նարտովը բացեց վառարանի պղնձյա դռնակը, մի կողմ ցատկելով, շերեփով կվասը շփեց խորքի շիկացած քարերի վրա։ Ուժգին ու փափուկ մի դմփոց լսվեց, շոգը խանձեց մարմինը, հացի բույր սփռվեց։ Պյոտր Ալեքսեևիչը թնչացրեց, կեչու տերևի ավելը թափ տալով կրծքի վրա։

— Մին խեց, Գավրիլա Բրովկինը պատմում էր, որ Փարիզում, օրինակ, շոգեհարվել ու էն էլ կվասով՝ չեն հասկանում ինչ բան է, ժողովուրդն էլ մանր-մունր է։

— Էնտեղ ուրիշ բան են հասկանում, որ չէր խանգարի մենք էլ իմանայինք,— ասաց Պյոտր Ալեքսեևիչը։— Մեր վաճառականները մաքուր քարքարոս են՝ ինչքան եմ դրանց հետ կռիվ տվել Արխանգելսկում։ Առաջին հերթին նրան պետք է նեխած ապրանքը ծախել, երեք տարի սուտ կասի, երդում-պատառ կլինի, արցունք կթափի, նեխած ապրանքը դեմ անելով, մինչև որ թարմ ապրանքն էլ նեխացնի.... Հյուսիսային Դվինայում էնքան ձուկ կա, որ թիակը ջուրը մտցնես, ջրի երեսին կմնա, ձկան էնպիսի վտառներ կան... Բայց ամբարների մոտով անցնել չի լինում գարշահոտությունից... Բոլոմիստրական պալատում հետևները խոսեցի, սկզբից սիրով, հետո ստիպված ջղայնացա...

Ալեքսանդր Դանիլովիչը տխուր հոգոց հանեց.

— Էդ մեկը ճիշտ է, մին խեց... Խավար մարդիկ են... Սատանա են վաճառականները, ազատություն թե տվեցիր, ամբողջ պետությունը խայտառակ կանեն... Նարտով, սառը գարեջուր բեր...

Երկար ոտքերը կախելով, Պյոտր Ալեքսեևիչը նստեց թախտին, գլուխը կուացրեց, գանգուր սև մազերից քրտինք էր կաթկթում...

— Լավ էր,— ասաց նա։— Շատ լավ էր։ Էսպիսի բաներ, սիրելի կամրադ... Առանց Պիտերբուրգի մենք՝ ոնց որ մարմինն առանց հոգու։

4.

Այստեղ, ռուսաց հողի եզրին, նվաճած ծովախորշի մոտ, Մենշիկովի սեղանի շուրջ հավաքվել էին նոր մարդիկ, նրանք, ովքեր Պյոտր ցարի «հետապնդումը տոհմիկությունը պիտանիությամբ հաշվել» հրամանով, միայն իրենց տաղանդով էին դուրս պրծել անծխնելույզ խրճիթից, տրեխները հանել և ճարմանդավոր, տափակքիթ յուֆտե ռուսական մաներ էին հագել ու, փոխանակ դառնագին միտք անելու, թե «տեր աստված, ինչի՞ համար ես ինձ դատապարտել սովից ու ցրտից ոռնալու», նստել էին, ինչպես հիմա ասա, լիքը մատուցարանների շուրջ, պետության մասին մտածելու և խոսելու՝ այդպե՛ս էր։ Այստեղ էին Բրովկին եղբայրները, Ֆեդոսեյ Սկլյանը և Գավրիլա Ավդեևիչ Մենշիկովը՝ նավաշինարար երևելի վարպետները, որոնք Պյոտր Ալեքսեևիչի հետ էին Վորոնեժից մինչև Սվիրի, Նովգորոդցի կապալառու Երեմեյ Նեգոմորսկին, կատվի պես գիշերով աչքերը փայլեցնող Տերենտի Բուդա՝ խարիսխ պատրաստող վարպետը և Եֆրեմ Տարականովը՝ հռչակված փայտ փորագրողը և ոսկեզօծողը։

Սեղանի շուրջ միայն անտոհմ մարդիկ չէին նստած. Պյոտր Ալեքսեևիչի ձախ կողմում թագավորական տոհմից սերված, ոսկրոտ դեմքով ու բարակ, կատաղությամբ սեղմած շրթունքներով շոտլանդացի Ռոման Բրյուսն էր նստած՝ մաթեմատիկոս և գրքեր կլանող, ինչպես և եղբայրը՝ Յակով Բրյուսը։ Նրանք Մոսկվայում, Գերմանական արվարձանում էին ծնվել, Պյոտր Ալեքսեևիչի հետ էին դեռևս պատանեկան տարիներից ու նրա գործն իրենց գործն էին համարում։ Նստած էր բազեի աչքերով, նվաղկոտ ու գոռոզ նայվածքով, բարակ քթի տակ բեխերը թելի պես ատիրած, գվարդիայի գնդապետ իշխան Միխայլա Միխայլովիչ Գոլիցինը, որն իր փառքը ձեռք էր բերել Շլիսելբուրգի գրոհով և գրավումով։ Բոլորի պես նա նույնպես քիչ չէր խմում, գունատվելով և սեղանի տակ խթանը գնգացնելով։ Նստած էր բալթիական սպասվող նավատորմի փոխծովակալ Սոռնեյ Կրեյսը՝ ծովային մի թափառաշրջիկ, դաբաղամաշկ դեմքի վրա խստատես կնճիռներով, ջրագույն աչքերով՝ նույնքան տարօրինակ, որքան և ծովային սառն անդունդը։ Նստած էր ամրակազմ, կոշտ դեմքով, կոր քթով գեներալ-մայոր Զամբերսը՝ նույնպես թափառաշրջիկ, մեկն այն մարդկանցից, ով հավատալով Պյոտր ցարի բախտին, նրան տվեց իր ամբողջ ունեցածը՝ սուրը, խիզախությունը և գինվորական պատիվը։ Նստած էր Գավրիլա Իվանովիչ Գոլովկինը, ցարական ննջարանապետը, հեռատես ու խորամանկ մտքի տեր մի մարդ, Մենշիկովի օգնականը քաղաքի և ամրոցի շինարարության գործում։

Հյուրերն արդեն խոսում էին բոլորը միանգամից, աղմկելով, ոմանք դիտավորյալ բղավում էին, որ թագավորն իրենց լսի։ Բարձրաստա-

տաղ սենյակում խոնավ ծեփի հոտ կար, սպիտակ պատերի վրա պը-ղընձյա հայելակողերով եռամոմ աշտանակներ էին վառվում, գույնգ-գույն ափոցի վրա նույնպես շատ էին դատարկ շտոֆների բերանը խրած մոմերը, կավե և անագե մատուցարանների մեջ առատորեն լցված էր ալն ամենն, ինչով կարողացել էր հյուրերին պատվել գեներալ-ճանանգապետը. ազդրամիս ու լեզու, սպիտած երշիկներ, տապակած բադեր ու նապաստակներ, կաղամբ, բողկ, թթու վարունգ, ոռ այդ ամենը Ալեքսանդր Մենշիկովին նվեր էր բերել կապալառու Նեգոմորսկին:

Ամենից շատ վեճ ու աղմուկը պարենն ու անասնակերը բաժանելու պատճառով էր՝ ով ումից ավելի շատ էր պոկելու: Պարենամթերքն այստեղ էր գալիս Նովգորոդից, պարենամթերքի գլխավոր վարչատնից. ամռանը նավակներով Վոլխովի և Լադոգայի վրայով, ձմռանը՝ թավուտ անտառների միջով նոր բացած ճանապարհով, գալիս ու լցվում էր Ծիսանկբուրգի պահեստները, բերդի ամուր պարսպի պաշտպանության տակ: Այնտեղ պահեստներում զեմստվոյական ցելովալնիկներից լավագույններն էին նստած որպես կոմիսարներ, և ըստ պահանջի ապրանք էին բաց թողնում Պիտերբուրգ՝ Վիբորգսկի կողմում, հողաշեն բանակատեղում կանգնած զորքի համար, շինարարությանը զբաղված զանազան վարչատների համար, զեմստվոյական գործավոր-մուժիկների համար, որոնք երեք հերթափոխով էին գալիս այստեղ՝ ապրիլից սեպտեմբեր ամիսները, հողփորների, անտառամատների, հյուսների, բարտաշների, տանիքագործների համար: Նովգորոդից եկող ճանապարհը դժվարին էր, այս կողմերը պատերազմից քայքայված էին, մոտերքում ոչինչ չէր ճարվում, պաշարները մշտապես չէին բավականացնում, և թե՛ Բրյուսը, թե՛ Շամբերսը, թե՛ Կրեյսը, նաև պակաս կարևոր այլ անձինք, յուրաքանչյուրն իրենն էր պոկում և հիմա, սեղանի շուրջ նստած, բորբոքվել և հաշիվներ էին մաքրում:

Պյոտր Ալեքսեևիչին տաք կերակուր մատուցեցին՝ լափշա: Տարբեր ուղղություններով ուղարկված զինվորներին հաջողվել էր այդ լափշայի համար մի աքլոր գտնել Ֆոնտանկայի ափին, խուտորում, չուխոն ձկնորսի տանը, որը առիթից օգտվելով հինգ ալտին էր պոկել պատաված աքլորի համար: Ուտելուց հետո Պյոտր Ալեքսեևիչը սեղանին դրեց խոշորաթաթ երկար ձեռքերը, որոնց վրա ուռել էին երակները բաղնիքից հետո: Նա քիչ էր խոսում, ուշադիր լսում էր, ուռած աչքերը խիստ էին, մի քիչ սարսափելի, իսկ երբ ծիամորցը լցնելիս կամ մեկ այլ պատճառով իջեցնում էր, կարճ թթով, ժպտացող փոքր բերանով, կլոր այտերով դեմքը բարեհոգի էր թվում՝ հանարձակ մտեցիր, գավաթդ գավաթին խփիր. «Քո կենացը, պարոն բոմբարդիր»: Եվ նա, իհարկե, նայելով մարդուն, մեկին չէր պատասխանում, մյուսին գլուխն էր շարժում ի պատասխան, ներքևից վերև, ցնցելով մուգ, բարակ ու գանգուր մազերը: «Հանուն Բաքոսի»՝ ասում էր թավաձայն ու խմում, ինչպես Հոլանդիայում ղեկապետներն ու նավաստիներն էին սովորեցրել նրան. շրթունքներին գավաթը չկպցնելով, այլ ատամների արանքից ուղիղ կոկորդը լցնելով:

Պյոտր Ալեքսեևիչն այսօր գոհ էր թե՛ նրանից, որ Դանիլիչը շվեդ-

ների ջգրու այսպիսի լավ տուն էր կառուցել՝ Նեպոուսնով ու ջրահարսով, թե՛ որ սեղանի շուրջ նստած բոլորը յուրայիններ էին և խոսում ու տաքացել էին մեծ գործի վրա, առանց մտածելու, թե ինչքան է վտանգավոր և կհաջողվի՞ արդյոք, սիրտը հատկապես այն էր ուրախացնում, որ այստեղ, ուր ի մի էին եկել հեռավոր ծրագրումներն ու դժվարին նախաձեռնումները, ամենայն ինչ, որ հիշելու համար անընթեռնելի գրառում էր կրծոտած մատիտի, ծխամորճի ու ծխախոտի քրտնակի հետ գրպանը խոթած հաստ նոթատետրի մեջ, իրական էր դարձել ահա՝ քամին ամրոցի բաստիոնի դրոշն էր ծածանում, ափերի խրուտներում ցցագերաններն են տնկված, ամենուրեք մարդիկ են գնում- գալիս՝ հոգս ու գործի մեջ և քաղաքն արդեն քաղաք է դառնում, դեռ մեծ չէ, բայց ամեն ինչ ունի:

Ծխամորճի սաթը կրծելով, Պյոտր Ալեքսեևիչը լսում ու չէր լսում, թե ինչ էր բոբոացնում բարկացած Բրյուսը փտած ծղոտի մասին և թե ինչ էր բղավում հարբած Շեմբերսը, ճգնելով հասցնել պարզած գավաթը... Ցանկալի, սիրելի տեղ էր սա: Իհարկե, լավ էր Ազովի ծովի վրա, իր ճերմակությամբ ու տաքությամբ, և մեծ դժվարությամբ էր ձեռք բերվել, լավ էր Սպիտակ ծովի վրա, ուր սառնաշունչ ալիքներն էին ծփում կախված մշուշի տակ, բայց չէին հասնի Բալթիկ ծովին՝ զարմանալի քաղաքներ, հարուստ երկրներ տանող լայն ճանապարհին: Այստեղ մարդու սիրտն էլ է առանձնահատուկ բաբախում, մտքերն էլ են թավվորվում, ուժն էլ է կրկնապատկվում...

Ալեքսանդր Դանիլովիչը ստեպ-ստեպ նայում էր, թե գնալով ինչպես են փքվում մին խեոցի ոունգերը, թանձրանում է ծխամորճից ելնող ծուխը:

— Դե, հերիք եղավ ձեզ,— հանկարծ բղավեց նա հյուրերի վրա:— Քոքե՞լ են՝ վարսակ, ձավար, վարսակ, ձավար: Պարոն բոմբարդիրն էստեղ չի եկել վարսակ ու ձավարի մասին լսելու:— Մենշիկովն ամբողջ այտով աչքով արեց հաստիկ, անուշ ժպտացող, կարճ ու չոված կախտան հագած մի մարդու:— Ֆեյտեն, հոնոսյան լցրու, էն մեկից,— և սպասողաբար դարձավ Պյոտր Ալեքսեևիչին: Ինչպես միշտ, Մենշիկովը կռահել, ցարի մթնած աչքերի մեջ կարդացել էր, որ ահա՝, հասել է պահը, երբ վաղուց խմորվող, գնդվող, տանջվող, գլխի մեջ այսպես ու այնպես դարձող ամեն ինչ հստակորեն ու այլևս անհողդողդ կամք է դարձել... Եվ այստեղ վինել, կամքին հակառակվել չէր կարելի:

Սեղանի շուրջ լռեցին: Միայն գինին էր քլթքլթում, ցմփոր շշից գավաթները լցվելով: Պյոտր Ալեքսեևիչը, ձեռքերը սեղանի վրայից չընվերցնելով, ետ ընկավ ոսկեզօծ աթոռի թիկնակին:

— Կարլոս թագավորը քաջ է, բայց խելացի չէ, ընդամենը խիստ է բարձրամիտ,— սկսեց նա դանդաղ, մոսկովյան խոսվածքով:— Յոթ հարյուր թվականին իր բախտը ձեռքից թողեց: Իսկ թե ձեռքում պահեր, մենք էստեղ հոնոսյան գինի չէինք խմի: Նարվայի տակ ունեցած խայտառակությունը շատ օգտակար եղավ մեզ: Ծեծվելուց երկաթը ամրանում է, մարդս քաջանում: Շատ բան՝ սովորեցինք, որ մտքներովս էլ չէր անցնի: Մեր գեներալները, Բորիս Պետրովիչ Շերեմետևի,

Անիկիտա Իվանովիչ Ռեպնինի հետ ամբողջ աշխարհին ցույց տվեցին, որ շվեդները արտակարգ չեն ու նրանց կարելի է ջարդել բաց դաշտում էլ, պարապի մեջ էլ։ Իմ արտի գավակներ, սրբազան սույն տեղը դուք գրավեցիք ու շենացրիք։ Ծովի խորքերն ալեկոծող Նեպտուն աստվածը, նավերին սպասելով, բազմել է սույն ազնվազարմ պարոնի տան տանիքին, ինչի համար բոլորս աշխատել ենք մեզ չխնայելով։ Բայց խելացի՞ կլինի արդյոք, հաստատվելով Պետերբուրգում, մշտապես պաշտպանվենք շվեդներից Սեստրա-գետի վրա և Կոտլին կղզում։ Սպասենք, թե Եվրոպայից իր զորքերը ե՞րբ է մեզ վրա բերելու երազներում տեսած ու ծրագրած բաների դեմ կռվելուց հոգնած Կառլոսը։ Այդ ժամանակ Նեպտուն աստվածն էլ թերևս մեզ չօգնի։ Այստեղ մեր սիրտն է, իսկ Կառլոսի դեմն առնել է պետք հեռու եզրերում, պինդ ամրոցներում։ Մենք պետք է համարձակ լինենք ու ինքներս հարձակվենք։ Հենց սառույցը հալվեց, պետք է գնալ Կեկսհոլմը գրավել շվեդներից, որպեսզի Լադոգա լիճը, ինչպես հին ժամանակներում, նորից մերը դառնա, մեր նավատորմն էլ հյուսիսից անվտանգ գնա ու գա։ Հարկավոր է Նարովա գետն անցնել, Նարվան գրավել, այս անգամ առանց խալտառակության։ Արշավանքի է պետք պատրաստվել անմիջապես, կամրադներ։ Դանդաղումը մահվան է հավասար։

5.

Միսախոտի ծխի, պատուհանների մանր ապակիների միջից Պյոտր Ալեքսեևիչը տեսավ, որ ծվեն-ծվեն մշուշի արանքով շարունակ փախչող կարված եզրով լուսինը կանգ առավ ու կախվեց։

— Նստիր, նստիր, Դանիլիչ, ուղեկցել պետք չէ, գնամ, մի քիչ օդ շնչեմ, գամ։

Սեղանի մոտից վեր կացավ ու ելավ առմուտք, Նեպտունի և ոսկյա ծաղկամանով խոշորաստինք ջրահարսի տակ։ Սուր հոտ արձակող թեթև քամին ռուզգերը լցվեց։ Պյոտր Ալեքսեևիչը գրպանից հանեց ծխամորճը։ Տան պատից, այգն ետևից անգլխարկ, արմյակով ու տրեխավոր մի մարդ պոկվեց, ծնկի իջավ ու մի թերթ թուղթ պարզեց գլխից վեր։

— Ի՞նչ ես ուզում,— հարցրեց Պյոտր Ալեքսեևիչը։— Ո՞վ ես։ Վեր կաց, հրամանը չգիտե՞ս։

— Տեր թագավոր,— ասաց մարդը մեղմ, թափանցող ձայնով,— քեզ խնդիրք է անում խեղճ ու աղքատ, անպաշտպան ու անօգնական մեկը, Անդրյուշկա Գոլիկովը... Կործանվում եմ, տեր թագավոր, ողորմած եղիր...

Պյոտր Ալեքսեևիչը բարկացած քաշեց քիթը, բարկացած վերցրեց խնդրագիրը, մի անգամ էլ հրամայեց ոտքի կանգնել.

— Գործի՞ց ես փախչում։ Հիվա՞նդ ես։ Սոճու կոներով օդի տալի՞ս են ձեզ, ինչպես հրամայել եմ։

— Առողջ եմ, տեր թագավոր, գործից չեմ փախչում, քար եմ կրում, հող փորում, գերան եմ սղոցում... Տեր թագավոր, մեջս մի զարմանալի ուժ է կորչում... Նկարիչ եմ ես, Գոլիկովների գերդաստանից, Պալեխի սրբանկարիչներից։ Պարսունա կարող եմ նկարել, որ կարծես կենդանի մարդ լինի, որ չի ծերանում ու չի մեռնում ու հոգին ապրում է մշտական... Կարող եմ ծովի ալիքներ նկարել ու նավեր, առագաստները բաց ու թնդանոթի ծխի մեջ՝ շատ գեղեցիկ...

Պյոտր Ալեքսեևիչը մի անգամ էլ փնչացրեց, բայց արդեն ոչ բարկացած.

— Նա՞վ կարող ես նկարել։ Բայց ինչպես հավատամ քեզ, որ սուտ չես ասում։

— Կարող էի գնալ բերել, բայց պատին, ծեփի վրա է նկարած, ու ոչ թե ներկով, այլ ածուխով... Ներկ ու վրձին չկա։ Երազում եմ տեսնում... Թեկուզ մատնոցաչափ ամաններով ներկերի ու մի քանի վրձնի համար, տեր թագավոր, ծառադ կլինեմ ու կրակը կգցեմ ինձ...

Պյոտր Ալեքսեևիչը երրորդ անգամ թնչացրեց կարճ քթով.« Գրանք», և բոտֆորտների տակ խշրտացող ջրափոսերի բարակ սառույցը լուսավորող լուսնին դարձնելով դեմքը, ինչպես միշտ քայլեց սրընթաց։ Անդրեյ Գոլիկովը վազեվազ հետևում էր նրան, աչքը խեթելով Պյոտրի արտակարգ երկարուկ ստվերին, ջանալով չկոխել ստվերը։

Անցան հրապարակը, թեքվեցին հատուկենտ սոճիների տակ, հասան Մեծ Նևկա, ուր շինարարների ճիմածածկ, ցածրիկ գետնափորերն էին։ Դրանցից մեկի մոտ իրեն կորցրած Գոլիկովը, խոնարհվելով ու շշնջաձայն աղոթելով, բացեց փուշտապատ դուռը։ Պյոտր Ալեքսեևիչը կռացավ, ներս մտավ։ Տախտամածների վրա մի քանի մարդ քնած կլիներ՝ կիսամուշտակների, խսիրների տակից բոբիկ ոտքեր էին տնկված։ Գուտկից վեր մերկ, հսկայական մորուքով մի մարդ ցածրիկ նստարանին նստած, վառվող մարխի տակ շապիկն էր կարկատում։

Նա չզարմացավ, Պյոտր ցարին տեսնելով, ասեղը խրեց, շապիկը ցած դրեց, վեր կացավ ու դանդաղ խոնարհվեց, ինչպես եկեղեցում, սրբապատկերներին։

— Բողոք արա— ընդոստ ասաց Պյոտրը։— Ուտելիքը վա՞տն է։

— Վատն է, տեր թագավոր,— պատասխանեց մարդը պարզ ու հրստակ։

— Վա՞տ եք հագնված։

— Աշունը շոր տվեցին, ձմռանը, տեսնում ես, մաշվել են։

— Հիվանդանո՞ց եք։

— Հիվանդացողը շատ է, տեր թագավոր, շատ դժվար տեղ է։

— Դեղատունը ձեզ չի՞ օգնում։

— Դեղատան մասին լսած կանք, ճիշտ է։

— Ձե՞ք հավատում դեղատանը։

— Ոնց ասեմ քեզ, ինքներս մեզ կարծես թե լավանում ենք։

— Որտեղացի՞ ես։ Ո՞ր խմբով ես եկել։

— Կերենսկ քաղաքից եմ եկել, երրորդ խմբով, աշնանը... Պոսադական եմ։ Էս գետնափորում բոլորս էլ ազատ ենք...

— Ինչի՞ ես ձմռանն էլ մնացել։

— Չուզեցա ձմեռով տուն դառնալ, մեկ է տվից ոռնալու էի վա-

ռարանի վրա: Վարձով եմ մնացել, գերան ենք կրում, պետական հաց ենք ուտում: Մի հատ նայիր, թե ինչ հաց են տալիս:— Կիսամուշտակի տակից մուժիկը սև հացի կտոր հանեց, ճմլեց, կիսեց չծալվող մատներով:— Բորբոս է: Դեղատունը արան ինչո՞վ օգնի:

Անդրեյ Գոլիկովն անձայն փոխեց մարխակալի մարխը. ցածրիկ, կավածեփ, տեղ-տեղ ապիտակեցրած գետնափորն ավելի լուսավորվեց: Խսիրի տակերից մի քանիսը բարձրացրեցին գլուխները: Պյոտր Ալեքսեևիչը նստեց տախտամածին, ծունկը բռնեց, ակնապիշ նայեց մորուքավոր մուժիկին.

— Իսկ տանը, Կերենսկո՞ւմ ինչ ես անում:

— Մեղրախմիչք սարքող եմ: Բայց հիմա քիչ են խմում, ոչ մեկը փող չունի:

— Մեղավորը ես եմ, բոլորին պլոկել եմ: Էդպե՞ս է:

Մորուքավորը մերկ ուսերը բարձրացրեց, իջեցրեց, վեր կացավ, ճիճաբ կրծքի վրա կախվեց պղնձյա խաչը, գլուխը ճոճեց քմծիծաղով:

— Ճի՞շտն ես ուզում իմանալ... է, ինչ, ճիշտ խոսքից վախեցողը չենք, տանջված մարդիկ ենք... Խոսք չկա, հին-հին տարիներին ժողովուրդն ավելի հեշտ էր ապրում: Էս տեսակ փող ու տուրք չկար... Հիմի փող է որ պիտի տաս... Առաջ տալիս էինք ծխից, արորից, մեծ մասը խմբովի, պայմանավորվել կար, հետ գցել կար՝ հարմար էր... Հիմի հրամայել ես, որ բոլորը շնչից տան, բոլորին գրել ես տվել, ամենքիս գլխին կումխար ու ցեղվաղնիկ է պտույտ տալիս, թե տուր: Վերջին տարիներս էլ ամառները երեք հերթով քառասուն հազար հոգի պիտի գան Պետերբուրխ աշխատելու... Հե՞շտ է: Մեզ մոտ տասը ծրխից մի հոգի են վերցնում՝ կացնով, դուրով, կամ բահով ու սղոցով: Մնացած ինքից ուտելու փողն են հավաքում՝ ամեն տնից տասներեք ալտին ու երկու կես պղինձ... Դե արի ու գոհիր... Ծուկալում ինչքան ուզում ես կոկորդ պատռիր. «Տաք մեղրախմիչք, տաք մեղրախմիչք»: Կարող է խմող էլ լիներ, մենակ թե գրպանում բան չկա, «շնորհակալ եմ»-ից բացի: Տղերքիս տարել ես դրագուն, տանը մնացել է պառավը ու չորս աղջիկ, մեկը մյուսից փոքր... Ինչ ասեմ, տեր թագավոր, դու ավելի լավ գիտես, թե ինչն ինչոց է...

— Էդ ճիշտ էր, որ ես ավելի լավ գիտեմ,— չոր-չոր ասաց Պյոտր Ալեքսեևիչը:— Էդ հացը տուր տեսնեմ:— Վերցրեց բորբոսնած կտորը, կիսեց, հոտ քաշեց, գրպանը դրեց:— Նեսա բացվեց, նոր շորեր կբերեն, տրեխներ: Այլուր կրերեն, հացն էստեղ կթխենք:— Քայլեց դեպի դուռը, Գոլիկովին մոռացած, բայց վերջինս տեղից պոկվեց ու պլնքան աղիողորմ նայեց, որ Պյոտր Ալեքսեևիչը քմծիծաղով ասաց.— Դե՞, սուրբ նկարող: Ցույց տուր...

Տախտամածների արանքի պատի մի հատված խնամքով հարթեցված ու սպիտակեցրած էր, խսիրով ծածկած: Գոլիկովը զգուշությամբ հանեց խսիրը, մոտ բերեց ծանր մարխակալը, մի մարխ էլ վառեց ու դողացող ձեռքով բռնած, բարակիկ ձայնով բացականչեց.

— Հույժ փառապանծ ծովային վիկտորիան Նևայի գետաբերանին, հազար յոթ հարյուր երեք թվականի մայիսի հինգի օրը. հակառակորդի «Աստրել» շնյավան՝ տասնչորս թնդանոթանի և ծովակալական «Գեղան» բոտը՝ տասը թնդանոթանի, հանձնվում են բոմբարդիր Պյոտր Ալեքսեևիչին և պորուչիկ Մենշիկովին:

Սվաղած պատին վարպետորեն, բարակ ածխով պատկերված էին փրփրադեզ ալիքների վրա թնդանոթի ծխով պարուրված շվեդական երկու նավ, որոնց կողերն ի վեր աբորդաժի էին բարձրանում ռուս գինվորները, հակառակորդին շրջապատած նավակներից: Նավերից վեր, ամպերի միջից երկու ձեռք էր պարզված, որոնք արտասանված գրությամբ երկարուկ վիմպելն էին բռնել: Պյոտր Ալեքսեևիչը պպզեց: «Այ քեզ բա՜ն»՝ ասաց նա: Ամեն ինչ ճշգրիտ էր՝ թե նավերի պարանասարքը, թե՝ փքված առագաստները, թե՝ դրոշները: Նույնիսկ զանազանեց ատրճանակն ու սուրը բռնած Ալեքսաշկային, որը մագլցում էր սանդուղքով, իրեն էլ նանաչեց՝ չափից ավելի էր պճնված, բայց, իրոք, այն ժամանակ կանգնած էր հակառակորդի նավի ճիշտ քթի տակ, նավակի պոնկին, բղավում ու նոնակներ էր շպրտում:

— Այ քեզ բան: Որտեղի՞ց գիտես սույն վիկտորիայի մասին:

— Այն ժամանակ ես քո նավակի մեջ էի, թիավարներից էի...

Պյոտր Ալեքսեևիչը մատը տարավ նկարի վրայով: (Գոլիկովը կամացուկ տնքաց նրա ետևում:)

— Կարող է քեզ Հոլանդիա ուղարկեմ՝ սովորելու: Քեզ խմելու չե՞ս տա: Թե չէ գիտեմ ձեզ, սատանաներ...

...Պյոտր Ալեքսեևիչը ետ եկավ գեներալ-նահանգապետի մոտ, նորից նստեց ոսկեզօծ աթոռին: Մոմերը հանգչելու վրա էին: Հյուրերն արդեն լավ գինովցած էին: Սեղանի մյուս ծայրին նավաշինարարները գլուխ-գլխի եկած, աղիողորմ երգ էին երգում: Միայն Ալեքսանդր Դանիլովիչն էր զվարթ: Իսկույն նկատեց, որ մին խեռցի բերանի անկյունը ցնցվում է, և փութով մտածում էր՝ ինչի՞ց կարող է լինել:

— Ա՛ռ, կե՛ր,— հանկարծ բղավեց Պյոտր Ալեքսեևիչը, գրպանից հանելով բորբոսնած հացի կտորը:— Ա՛յ, սրանով խմիր օղիդ, պարոն գեներալ-նահանգապետ...

— Մին խեռց, էստեղ ես չեմ մեղավոր, հացի մատակարարումով Գոլովկինն է զբաղվում, նա պիտի ուտի ու խեղդվի էդ կտորով... Ախ, գողի մեկը, ախ, անամոթի մեկը...

— Կե՛ր,— Պյոտր Ալեքսեևիչի աչքերը մոլեգնած չովեցին:— Մարդկանց աղբով ես կերակրում, ի՛նքդ կեր, Նեպտուն: Էստեղ ամեն ինչի համար դո՛ւ ես պատասխանատու: Ամե՛ն մեկի հոգու համար...

Ալեքսանդր Դանիլովիչը նկատած, մեղանչագին հայացքը տարավ մին խեռցի վրայով ու սկսեց ծամել հացը, դիտմամբ լացակումածի պես կուլ տալով...

6.

Պյոտր Ալեքսեևիչը քնելու գնաց իր տնակը, որովհետև գեներալ-նահանգապետի սենյակները բարձր էին, իսկ նա ցածր առաստաղներ էր սիրում ու փոքր, հարմար սենյակներ: Սաարդամում եղած

ժամանակ քնում էր դարբին Կիստի պահարանի մեջ, որտեղ ոտքերն անգամ երկարել չէր լինում, այնուհանդերձ, նրա դուրը գալիս էր:

Սպասյակ Նարտովը լավ վառել էր վառարանը, երկարուկ պատուհանի առաջ, որից դուրս կռանալով էր պետք նայել, սեղանի վրա շարել էր գրքեր ու տետրակներ, թուղթ և գրելու պիտույք, գծագրական, ատաղձագործական և բժշկական գործիքների տուփերը՝ հատ կաշվե պայուսակների մեջ, հեռադիտակներ, կողմնացույցներ, ծխախոտ և ծխամորճներ: Ծովային պարուսիճով էր պատռված վերնասենյակը: Անկյունում դրված էր կես մարդաբոյ պղնձյա լապտերը, որ Պետրոպավլովսկի ամրոցի փարոսի աշտարակի համար էր բերված, մի քանի խարիսխներ՝ փոքր նավերի համար, ճոպանի կտրած ծայրեր, ճախարակներ:

Բաղնիքից ու լավ ընթրիքից հետո Պյոտր Ալեքսեևիչին մնում էր անուշ քուն մտնել փայտյա մահճակալի վրա, հյուսադրվագ չորս սյուների վրա պահվող ներկած վարագույրի տակ, գլխին քաշելով կտավե գիշերագդակը: Բայց քունը չէր տանում: Քամին էր աղմկում տանիքում՝ պոռթկումներով, ծխնելույզի մեջ վնգալով, փակոցափեղկերը ցնցելով: Հատակին, թաղիքի վրա, ծակ-ծակ ու կլոր լապտերը կողքին դրած, սրտակից ընկերը՝ Ալեքսաշկան էր նստած ու պատմում էր Ավգուստ թագավորի դրամական նեղություններից, որոնց մասին գրավոր և սուրհանդակների միջոցով շարունակ հայտնում էր լեհական արքունիքում դեսպան նստած Գրիգորի Ֆյոդորովիչ Դոլգոռուկին:

Ավգուստ թագավորին վերջնականապես սնանկացրել էին ֆավորիտուհիները, իսկ դրամ չկար: Սաքսոնիայում հպատակները նրան էին տվել այն ամենն, ինչ հնարավոր էր, և ասում են, թե այնտեղ հարյուր թալեր պարտք անել չի լինի: Սանդոմիրում լեհերը հրաժարվել են փող տալ սեյմի նիստին: Ավգուստը կես գնով իր դղյակը վաճառել է պրուսական թագավորին, և նորից կամ սատանան, կամ էլ Կարլոս թագավորը նրան են հրամցրել Եվրոպայի առաջին գեղեցկուհուն՝ կոմսուհի Ավրորա Կենիգսմարկին, ու թագավորն այդ դրամը մսխել է գեղեցկուհու պատվին հրավառությունների և պարահանդեսների վրա: Իսկ երբ կոմսուհին հասկացել է, որ թագավորի գրպանները դատարկ են, կումպլիմենտ է արել ու հեռացել, մի լիքը կառք թավիշ, մետաքս ու արծաթյա ամանեղեն տանելով իր հետ: Ուտելու բան անգամ չունի: Եկել է իշխան Գրիգորի Ֆյոդորովիչ Դոլգոռուկիի մոտ, արթնացրել նրան, ընկել բազկաթոռին ու լաց է եղել. «Իմ սաքսոնյան զորքն, ասել է, երկրորդ շաբաթն է, մենակ պաքսիմատ է կրծում, լեհաց զորքը, ոոճիկ չստանալով, թալանով է զբաղված... Լեհերը բոլորովին խելագարվել են, նման հարբեցողություն և երկպառակություն չեն էլ հիշում Լեհաստանում, պաներն իրենց շլյախտաների հետ իրարից քաղաքներ ու դղյակներ են խլում, գրոհով, գյուղակներ կրակ տալիս, թաթարներից ավելի վատ այլանդակություններ են անում, Ռեչ Պոսպոլիտայի հետ գլուխ չունեն... Օ՜, ես դժբախտ թագավոր եմ: Օ՜, ավելի լավ է, սուրս հանեմ, ինքս իմ փորը խրեմ»:

Իշխան Դոլգոռուկին՝ բարեսիրտ մի մարդ, լսել, լսել, ինքն էլ է արտասվել այդ դժբախտությունից ազդված և առանց ստացականի իր փողից տասը հազար եֆիմոկ է տվել Ավգուստին: Վերջինս իսկույն տուն է դարձել, ուր նրան նոր ֆավորիտուհին՝ կոմսուհի Կոզելսկայան է սպասելիս եղել փրփրած, ու նորից սկսել խնջույքները...

Ալեքսանդր Դանիլովիչը մոտեցրեց երկաթյա լապտերը, հանեց նամակը և մոտեցնելով լուսարձակ ծակերին, կմկմալով կարդաց, քանի որ դեռ այնքան էլ չէր առաջադիմել գրագիտությամբ.

— Մին խեռց, օրինակի համար, ահա թե ինչ է գրում Գրիգորի Ֆյոդորովիչը Սանդոմիրից. «Լեհաց զորքը լավ կռիվ է տալիս պանդոկներում գավաթը բռնած, իսկ հակառակորդի դեմ նրան դաշտ դուրս բերելը դժվար է... Ավգուստ թագավորի սաքսոնյան զորքը կարգին զորք է, միայն թե շվեդների դեմ լցված չեն: Լեհաստանի կեսը շվեդը վերջնական քայքայել է, չեն խնայել ոչ կոստյուները, ոչ գերեզմանները: Բայց լեհ պաները ոչ մի բանի չեն նայում, ամենքը մենակ իր մասին է մտածում: Չգիտեմ, թե ինչպես կարող է կանգուն մնալ նման պետությունը: Մեզ ոչ մի օգուտ չի բերելու, միայն հակառակորդին զբաղեցնելը թերևս...»:

— Ավելի օգուտի հույս չունեմ էլ,— ասաց Պյոտր Ալեքսեևիչը,— իսկ Դոլգոռուկիին գրեցի, որ ինչպես կուզենա, թող իր տասը հազար եֆիմոկն առնի, ես դրա պատասխանատուն չեմ... Մի ֆրեգատ կառուցելի էր կառուցել էդ փողով:— Նա հորանջեց, ատամները շխկացնելով:— Եվայի՜ ցեղ: Ինչե՞ր են բերում մեր գլխին: Ամստերդամում մեկը կար, մոտս էր գալիս պանդոկից, սուտասան, ճարպիկ կնիկ էր, բայց ոչինչ... Էժան չնստեց վրաս...

— Մին խեռց, էդ հարցում Ավգուստի հետ ոտ մեկնել չես կարող: Մենակ Ավրորա Կենիգսմարկը կես միլիոն է նստել նրա վրա: Պանդոկի կնկան, լավ հիշում եմ, երեք թե հինգ հարյուր նվիրեցիր՝ ընդամենը...

— Իսկապե՞ս հինգ հարյուր: Ա՛յ-ա՛յ-ա՛յ... Գլխիս տվող մարդ չկար... Ավգուստն ինձ համար օրինակ չէ, մենք պետական մարդիկ ենք, մեր փողը չունենք: Ալեքսաշկա, էդ «ընդամենը» ասելուց զգուշացիր, պետական փողը հեշտ մի ծախսիր...— Նա լռեց:— Մի մարդ ունեմ էստեղ, գերան է կրում... Ի՞նչ տաղանդ է տվել աստված...

— Զլինի՞ Անդրյուշկա Գոլիկովն է:

— Իզուր է նա էստեղ, իր գործը չի անում... Հարկավոր է Մոսկվա ուղարկել... Թող մի անձնավորության պարտունակ նկարի:— Պյոտրը Ալեքսեևիչը աչքերը խեթեց. Ալեքսաշկան կարծես թե ատամներն էր ուզում բացել:— Որ վեր կացա է՞, փետով էնքան կտամ, քավոր ախպեր, որ կիմանաս, թե ծիծաղելն ինչ բան է... Կարոտում եմ Կատերինային, ու վերջ... Աչքերս փակում եմ, նրան եմ տեսնում, ոնց որ կենդանի, աչքերս բացում եմ, թթով նրա հոտն եմ առնում... Ամեն ինչ ներում եմ նրան, իր բոլոր տղամարդկանց, քեզ էլ հետը... Եվայի ցեղ է, ուրիշ ինչ ասեմ...

Պյոտր Ալեքսեևիչը հանկարծ լռեց ու շրջվեց երկարուկ, արշա-

լույսից աղոտացած պատուհանի կողմը: Ալեքսանդր Դանիլովիչը թեթև-թեթև վեր թռավ թաղիքի վրայից: Դրսում քամու աղմուկին մի ուրիշ աղմուկ էր խառնվել՝ ճաքճքող, կոտրատվող, դիզվող սառույցի դղրդյունն էր:

— Նևան շարժվեց, մին խեռց:

Պյոտր Ալեքսեևիչը ոտքերը հանեց արջի բրդի վերմակի տակից.

— Չէ հա: Հիմա էլ մեզ քնել չկա:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1.

Կեկսհոլմի արշավն ընդհատվեց հենց սկզբից: Նախապես երթի եկած հետևակ գնդերը և գիվերական գումակները դեռ չէին անցել Շլիսսելբուրգի կես ճանապարհը, հեծելազորը նոր էր անցել Օխտա գետակը, պրեոբրաժենցիներով ու սեմյոնովցիներով բեռնված ծանր թիանավերը հինգ վերստ էլ չէին լողացել Նևայով վեր, երբ ափին կոտրատված եղևնուտից մի ձիավոր դուրս թռավ ու սկսեց եռանդագին թափահարել գլխարկը: Պյոտր Ալեքսեևիչը լողում էր թիանավերի ետևից, լսելով ինչպես է բղավում այդ մարդը. «Է-է՛յ, թիավարներ, ո՞ւր է թագավորը: Պաշտոնագիր կա», առագաստը թեքեց ու մոտ լողաց ափին: Հեծյալը թռավ ձիուց, մոտ վազեց ջրին, երկու մատները խրեց սպայական թաղիքե գլխարկի կատարին, վարդագույն դեմքը՝ պատրաստակամ-վախեցած աչքերով, առաջ պարզած, խոպոտ ձայնով ասաց.

— Պարոն բոմբարդիր, մերձավոր պալատական Պյոտր Մատվեևիչ Ապրակսինից:

Կարմիր ու կեղտոտված թևքածալի տակից հանեց կարած, մոմով կնքած նամակը, հանձնեց, ետ քաշվեց: Պորուչիկ Պաշկա Յագուժինսկին էր:

Պյոտր Ալեքսեևիչը ատամներով կտրեց թելը, աչքի անցկացրեց նամակը, մի անգամ էլ ուշադիր կարդաց, խոժոռվեց: Աչքերը կկոցած սկսեց նայել այնտեղ, ուր արևողող ծփանքի վրայով ծանր բեռնված նավակներ էին լողում, միասին շարժելով թիերը:

— Ջին տուր նավաստուն, նավակ նստիր,— ասաց նա Յագուժինսկուն և հանկարծ բղավեց նրա վրա.— Ջուրը մտիր, չես տեսնում, ծանծաղուտի վրա ենք, նավակը հրիր, հետո թռի մեջը:

Ամբողջ ճանապարհը, մինչև Պիտերբուրխյան կողմ, ուր ստիպված էին լողալ քամուն հակառակ մանևրելով, լուռ էր: Նա հմտորեն մոտեցրեց նավակը կամրջակներին, երկու նավաստի արագ իջեցրին մեծ առագաստը, կոշիկները թխկթխկացնելով նետվեցին քթի կողմը, ուր կապ ընկած կլիվեր-շկոտի վրա փոփոում էր կտավը: Պյոտր Ալեքսեևիչը լուռ փայլեցնում էր բիբերը, մինչև նրանք ըստ կարգի փաթաթեցին առագաստը և հավաքեցին ամբողջ պարանաարքը: Միայն այդ ժամանակ քայլեց դեպի իր տնակը: Անմիջապես այնտեղ հավաքվեցին անհանգստացած Մենշիկովը, Գոլովկինը, Բրյուսը և փոխծովակալ Կրեյսը: Պյոտր Ալեքսեևիչը կիսաբաց արեց լուսամուտը, նստեց սեղանի մոտ և նրանց համար կարդաց նամակը, եկած Պյոտր Մատվեևիչ Ապրակսինից, որը Նարվայից քսան վերստ դեպի հյուսիս ընկած Յամբուրգ ամրոցի կայազորի պետն էր.

«Ինչպես հրամայել էիր, տեր արքա, գարնան սկզբին հետևակ երեք գնդով ու հեծյալ հինգ վաշտով ես եկա Յամբուրգից դեպի Նարովայի գետաբերան ու կանգ առա այնտեղ, ուր թափվում է Ռոսսոն վտակը: Ծուտով շվեդական հինգ նավ եկան, նաև վիմպելներ էին երևում հեռու ծովում: Թույլ քամու տակ երկու ռազմանավ մտան գետաբերան և սկսեցին թնդանոթներով գնդակոծել մեր գումակը: Փառք աստծո, դաշտային թնդանոթներից մենք հիմնավոր պատասխան տվեցինք, շվեդների մի նավը փշրեցինք արկերով և հակառակորդին դուրս շպրտեցինք Նարովայի գետաբերանից:

Այդ մարտից հետո շվեդներն արդեն երկու շաբաթ խարիսխ են գցել ծովեզրին՝ հինգ ռազմանավ և տասնմեկ բեռնանավ, ինչ բավական կասկածելի է թվում ինձ: Ես շարունակ հեծելապարեկներ եմ ուղարկում ամբողջ ծովափով, շվեդներին չթողնելով ոչինչ բեռնաթափել չոր ափ: Ինչպես նաև դրագուններ եմ ուղարկում ռեվելյան ճանապարհով ու մինչև Նարվա, ոչնչացնելով թշնամու պահախմբերը: Լեզուներն ասում են, որ Նարվայում ամեն ինչի կարիքի մեջ են ու շատ վշտացած, որ քո իմաստուն հրամանով գրավել ենք Նարովայի գետաբերանը:

Մեր կամավորները, մոտենալով ընդհուպ Նարվայի դարպասին, գիշերը բռնել էին Ռեվելի ճանանգապետից Նարվայի պարետ Գոռնին ծածկագիր նամակ տանող սուրհանդակին: Սույն սուրհանդակը խիստ հայտնի գերդաստանից է, գվարդիայի կապիտան Ստաֆ ֆոն Հոլշտեյնը. Կառլոս թագավորի սիրելի անձնավորությունը: Սկզբում նա ոչինչ չուզեց պատասխանել, բայց հենց մի քիչ բղավեցի վրան, պատմեց, որ շուտով Նարվայում սպասում են իրեն՝ Շլիսսելենբախին, մեծ զորքով, և շվեդներն արդեն երեսունհինգ նավով քարավան են ուղարկել այնտեղ, որը բերում է հաց, աղիկ, տառեխ, ապխտած ձուկ և աղ դրած միս: Քարավանի հրամանատարն է ֆրանսիացի փոխծովակալ դը Պրուն, որի ձախ ձեռքը պոկված է և փոխարենը արծաթյա ձեռք հարմարեցրած: Նրա նավերի վրա ավելի քան երկու հարյուր թնդանոթ կա և ծովային հետևակ:

Ես չգիտեի, հավատամ կապիտան Հոլշտեյնի ասած այդ մեծ ու սարսափելի գործին, բայց տեր թագավոր, այսօր վաղ առավոտյան ծովի մշուշը ցրվեց ու մենք տեսանք ամբողջ հորիզոնը առագաստների մեջ կորած և ավելի քան քառասուն վիմպել հաշվեցինք: Իմ ուժերը նվազ են, հեծելազորը շատ քիչ է, ընդամենը հինգ թնդանոթ,

մեկն էլ այսօր տրաքեց կրակելուց... Վերջնական ոչնչացումից բացի, ուրիշ ոչինչ չեմ սպասում... Օգնիր, տեր թագավոր...»:

— Դե՞: Ի՞նչ կասեք,— ընթերցելը վերջացնելուց հետո հարցրեց Պյոտր Ալեքսեևիչը:

Բրյուսը կզակը կատաղորեն խրեց սև փողկապի մեջ: Կոռնելիուս Կրեյսի դաբաղամաշկ դեմքը ոչինչ չարտահայտեց, միայն բիբերը նեղացրեց, ասես այստեղից տեսնում էր շվեդական տասնյակ վիմպելները Նարվայի ծովախորշում: Միշտ արագ պատասխանող Մենշիկովը այսօր նույնպես լուռ էր, խոժոռ:

— Պարոնայք ռազմական խորհուրդ, հարցնում եմ, համարե՞նք, որ սույն խորամանկ խաղով Կառլոս թագավորն ինձնից քար տարավ, Նարվայի կողմը կատարած ճարպիկ մի քայլով պաշտպանեց Կեկսհոլմը: Թե՞ շարունակենք հասնել գտնվել՝ գվարդիան տանենք Կեկսհոլմ, Նարվան տալով Շլիսպենբախին:

Կոռնելիուս Կրեյսը դեմքը ցնցեց, ծովակալական իր դիրքին անհամապատասխան, ծխատուփից տաքդեղով ու ռոմով եփված նավաստիական ծխախոտի մի կտոր հանեց ու դրեց այտի տակ:

— Ո՛չ,— ասաց նա:

— Ո՛չ,— ասաց Բրյուսը հաստատակամ:

— Ո՛չ,— ասաց Ալեքսանդր Դանիլովիչը, խփելով ծնկանը:

— Կեկսհոլմը գրավելը մեզ համար դժվար չի լինի,— սթափ ձայնով խոսեց Գավրիլա Իվանովիչ Գոլովկինը,— բայց հանկարծ Կառլոս թագավորը այդ ժամանակ մեզնից երկրորդ քարը չվերցնի՝ այս անգամ թագուհին:

— Այդպես,— ասաց Պյոտր Ալեքսեևիչը:

Եվ առանց խոսքի հասկանալի էր, որ Շլիսպենբախի կորպուսը թողնել Նարվա, կնշանակեր հրաժարվել գլխավոր՝ Նարվա և Յուրյև ամրոցները գրավելուց, առանց որոնց բաց կմնային Պիտերբուրգի մատույցները: Ոչ մի ժամ հապաղել չէր կարելի: Որոշ ժամանակ անց սուրհանդակներն արշավեցին շլիսսելբուրգյան ճանապարհով և Նևայի երկայնքով, տանելով հրամանը՝ զորքերը և թիանավերի սորմիոը ետ բերել Պիտերբուրգ:

Պորուչիկ Պաշկա Յագուժինսկին, որը երեք օրուգիշեր թամբից չէր իջել, հասցրեց միայն սպասյակ Նարտովից ցարական պղպեղօղու մի շերեփ և աղ արած հացի մի կտոր ուզել, և ետ գնաց Պյոտր Մատվեևիչ Ապրակսինի ճամբարը, ում հրամայվեց՝ առանց երկմտանքի, տխրությունը թողնել տեր աստծուն և զորքով ամուր կանգնել ընդդեմ շվեդական նավատորմի, նույնիսկ մինչև վերջին շունչը: Յագուժինսկուն բաց թողնելով, Պյոտր Ալեքսեևիչը բռնեց նրա ձեռքը, քաշեց, ճակատը համբուրեց.

— Բերանացի կհայտնես նրան. մի շաբաթ անց բոլոր զորքերով Նարվայի տակ կլինեմ...

2.

Կառլոս թագավորին արթնացրեց աքաղաղի երկարաձիգ ծուղրուղուն: Վրանի կիսամութի մեջ աչքերը բացելով, լսում էր, թե աքաղաղն ինչպես խեղդվելով կոկորդն է պատռում: Աքաղաղը տնեղափոխում էին գումակում և գիշերները վանդակով դնում էին թագավորի վրանի մոտ: Հետո եղջրափողը գիլձայն այգաբաց նվագեց՝ թագավորը հիշեց մշուշապատ կիրճը, որսափողերի ձայնը, շների հաչոցը և գազանի արյունը հեղելու անհամբերությունը... Հենց վրանի տակ մի շնիկ կաղկանձեց, ձայնից դատելով, անպետք բան էր, այն շնիկներից, որոնց տիկնայք են ման ածում կառքերում... Ինչ-որ մեկը ֆշշացրեց շան վրա, սա աղիողորմ կլանչեց: Թագավորն իր համար նշեց. «Իմանալ, թե որտեղից է շնիկը»: Ոչ հեռվում, ձիերը կապելու տեղից դոփդոփեցին ձիերը, մեկը խրխնջաց վայրենաձայն: Թագավորը նշեց. «Ափսոս է, բայց ըստ երևույթին Նեպտունին պետք է կոտել»: Համաչափ, ծանր ոտնաձայն լսվեց: Թագավորն ականջը սրեց, լսելու համար պահակախումբը փոխվելու ժամանակ տրվող հրահանգը: Վրանի վերևով թռչուններ անցան, սուլոցով պատռելով օդը: Նշեց. «Լավ օր է լինելու»: Հնչյուններն ու ձայներն ավելի հստակ էին դառնում: Բոլոր տեսակի վիոլաներից, տավիղներից, կլավեսիններից ավելի քաղցր էր արթնացող ճամբարի այդ առույգ, առնացի երաժշտությունը:

Թագավորն իրեն գերագանց էր զգում սառն անկողնում, ճանապարհի փոշու և ձիու քրտինքի հոտ բռնած շինելի տակ կարճատև քնիչ հետո: Օ՜ այո, հազար անգամ ավելի լավ կլիներ արթնանալ աքաղաղի կանչից, երբ դաշտի հակառակ ծայրում հակառակորդը կանգնած լիներ և խոնավ մշուշի միջից թշնամու խարույկների ծուխը հասներ իրեն... Այնժամ մի ցատկով կելներ անկողնուց, բոտֆորտները կհագներ ու ձի կհեծներ... Եվ հանգիստ քայլքով, աչքերի փայլը զսպած, իր զորքին կմոտենար, որոնք մարտից առաջ արդեն շարված կլինեին՝ բեխավոր, խստահայաց...

Գրո՛ղը տանի: Կլիսսովի մոտ ճակատագրական մարտից հետո Ավգուստ թագավորը, բոլոր թնդանոթները և դրոշները կորցնելով, նահանջում է միայն, ահա արդեն մի ամբողջ տարի նահանջում է, անծայրածիր Լեհաստանում հետքը խճճելով նապաստակի պես... Օ՜ վախկոտ, օ՜ սուտասան, բանսարկու, դավաճան, այլասերված: Դեմմադեմ հանդիպելուց վախենում է, իր հակառակորդին ստիպում Նարվայի, Ռիգայի և Կլիսսովի հաղթանակների շռնդալից փառքը մանրել սաքսոնյան սովալուկ հրացանակիրների և լեհ հարբած հուսարների ետևից ապարդյուն հետապնդման վրա... Իր ախոյանին նա ստիպում է ամբողջ առավոտը կուրտիզանուհու նման անկողնու մեջ թավալվել...

Կառլոս թագավորը երկու մատը շրթունքներին դրեց ու սուլեց: Անմիջապես բացվեց պարուսինի եզրը և վրան մտան ցից քթիկին գորտնուկ ունեցող կամեր-յունկեր բարոն Բերկենգելմը և բանբերթիկնապահը՝ վրանի կատարին քսվող հասակով: Վերջինս բերեց

մաքրած բոտֆորտները և մուգ կանաչ սերթուկը, որը տեղ-տեղ լցակարված էր՝ գնդակների և արկերի բեկորների պատռված տեղերն էին։

Կառլոս թագավորը ելավ վրանից ու ափերն առաջ պարզեց՝ բանբերը զգուշորեն ջուր լցրեց արծաթյա ամանից։ Թռչող արկերին Կառլոս թագավորը դյուրությամբ վարժեցրեց իրեն, բայց սառը ջրից վախենում էր, երբ վզին կամ ականջների ետևն էր լցվում։ ...Սրբիչը նետելով բանբերին, սանրեց կարճ կտրած մազերը, առանց նայելու բարոն Բերկենգելմի բռնած հայելուն։ Շտկեց մինչև պարանոցը կոճկած սերթուկը և նայեց դեպի գետակն իջնող կանաչ լանջին փռված վրանների հավասար շարքերին։ Վրանների ետևում, ձիերը կապկու տելերում սովորական իրարանցումն էր, թնդանոթաձիգները լաթերով սրբում էին թնդանոթների պղնձյա փողերը։ Կառլոսն արհամարհանքով նշեց. «Ինչքա՜ն ավելի հոյակապ է՝ ցեխի շիթերը հարթակների վրա և վառոդից սևացած պղինձը»։ Ցածում, գետակի ափին զինվորները շապիկներն էին լվանում, կախ տալով ցածրիկ ուռուտի ճյուղերից։ Գետակի մյուս ափին ճահճի մեջ հանդիսավոր ձևում էին աստվածաբանության պրոֆեսորների նմանվող արագիլները։ Ավելի այն նողմ հրդեհված գյուղի մերկ ծխնելուղներ էին, ապա՝ թմբի վրա, դարավոր ծառերից դեռը դեղնին էին տալիս կոստյոլի ծեփաթափ կատարները։

Կառլոս թագավորին անտանելի ձանձրացրել էր քանիցս կրկնված այդ տաղտկալի բնապատկերը։ Երեք տարի պտույտ տալ նզովյալ Լեհաստանում։ Երե՜ք տարի, որոնք իրեն կես աշխարհը կարող էին տալ՝ Վիլայից մինչև Ուրալ։

— Ձերդ արքայական մեծությունը կբարեհաճի՞ նախաճաշել,— ասաց Բերկենգելմը, նուրբ ու խնամված ձեռքով ցույց տալով վրանի ետ տարած փեշերը։ Այնտեղ վառոդի դատարկ, ձյունաներկակ քաթանով ծածկված տակառի վրա, արծաթյա պնակի մեջ բարակ շերտերով կտրված հաց կար, մի ամաս խաշած գազար և մեկ ուրիշ աման՝ անարով զինվորական շիլա։ Ուրիշ ոչինչ։ Թագավորը վրան մտավ, նստեց, ծնկների վրա բացեց անձեռոցիկը։ Բարոնը կանգնեց նրա ետևում, չդադարելով զարմանալ թագավորական հանատ տարօրինակությունների վրա՝ առողջությունը քայքայել այսպիսի անուշ սնունդով։ Թերևս դա անհրաժեշտ է հետագա հուշագրությունների՞ համար։ Թագավորը պատվասեր է... Կլիստովի ճակատամարտից հետո Ավգուստ թագավորի հավաքածոյից վերցված, մեծ վարպետ Բենվենուտո Չելինիի աշխատանքը հանդիսացող ոսկեզօծ գավաթի մեջ գետակի գորտանոտ ջուրն էր լցված։ Անկասկած, հանաշխարհային փառքը դյուրին բեռ չէ։

— Որտեղի՞ց է ճամբարում հայտնվել այդ անպետք շինկը, որևէ մե՞կն է եկել,— հարցրեց Կառլոսը, գազարը ծամելով։

— Ձերդ մեծություն, ուշ գիշերով ճամբար եկավ Ավգուստ թագավորի ֆավորիտուհի կոմտուհի Կոզելսկայան, հուսով, որ ողորմածություն հանդես կբերեք, կընդունեք իրեն...

— Կոմս Պիպերը գիտե՞ նրա գալստյան մասին։

Բարոնը դրական պատասխան տվեց։ Վերջացնելով անշուք նախաճաշը, Կառլոս թագավորը արիաբար խմեց գավաթի ջուրը, ճմրթեց անձեռոցիկը և դուրս եկավ վրանից, եռանկյունի փոքր, անտրեզ գլխարկը աչքերին քաշելով։ Հարցրեց, թե որտեղ է կոմտուհու կառքը և քայլեց ընկուզենու թփերի ուղղությամբ։ Այնտեղ ճյուղերի արանքից արևի տակ փայլում էին կառքի վերևը զարդարող ոսկեզօծ կուպիդոնը և աղավնիները...

Կոմտուհի Կոզելսկայան քնած էր կառքի մեջ, բարձերի և ծանյակների մեջ թաղված։ Փարթամ մարմնով, դեռևս թարմ կին էր, անչափ ճերմակ մաշկով ու խարտյաշ գանգուրներով, որոնք դուրս էին թափվել ճմրթված գիշերագլխարկի տակից։ Արթնանալով թագավորի բոտֆորտի տակ ընկած շինկի վնգստոցից, նա բաց արեց խոշոր, գմրուխտագույն սլավոնական աչքերը, որոնց տեր տղամարդկանց Կառլոսն արհամարհում էր, կանանց ատում։ Կոմտուհին տեսավ կառքի դռնակի ապակուն սեղմված հողագույն հիհարիկ դեմքը, տղայական արհամարհական բերանով և խոշոր մեղ քթով. նա ճչաց ու ձեռքերով ծածկեց դեմքը։

— Ինչո՞ւ եք եկել,— հարցրեց թագավորը։— Հրամայեք անմիջապես լծել ձեր ձիերը և ետ գնացեք ամբողջ արագությամբ, այլապես ձեզ կընդունեն որպես կեղտոտ անամոթ Ավգուստ թագավորի լրտեսի... Դուք ինձ լսո՞ւմ եք։

Կոմտուհին լեհուհի էր՝ նրան վախեցնելը հեշտ չէր։ Բացի դրանից, թագավորն իսկույն խոսակցությունը տարավ ոչ հօգուտ իրեն. անքաղաքավարությունից և սպառնալիքից սկսեց... Կոմտուհին դեմքից հեռացրեց իր փափլիկ, մինչև արմունկները մերկ ձեռքերը, կոթնեց բարձերին և ժպտաց նրան հմայիչ բացարտությամբ.

— Bonjour, sir,— ասաց նա գեղանի եղանակով,— հազար ներողություն եմ խնդրում, որ վախեցրի ձեզ իմ ճիչով... Սեղավորը բիժում է, իմ շինկը, այնքան է վախեցնում ինձ, անհարկի ոտքի տակ ընկնելով... Ես նրան կառքից իջեցրել էի, որ հացի մի կտոր գտնի կամ հավի ոսկոր... Սիր, երկուսս էլ մեռնում ենք քաղցից... Երեկ ամբողջ օրը սլացել ենք անապատով, ավերված գյուղերի և այրված դղյակների մոտով, մի կտոր հաց չենք կարողացել գտնել, հավկիթի համար մի չերվոնեց էի առաջարկում... Բարեսիրտ լեհերը, որոնք դուրս էին գալիս զանազան որջերից, միայն ձեռքերն էին տարածում երկինք... Սիր, ես ուզում եմ նախաճաշել... Ես ուզում եմ ինքս ինձ վարձահատույց լինել ուղևորության բոլոր տանջանքների դիմաց, ձեր բարությունը, ձեր մեծահոգությունն եմ վկայակոչում, թույլ տվեք ինձ նախաճաշել ձեր ներկայությամբ։

Առանց դադարի խոսելով ընտիր ֆրանսերենով, ասես ամբողջ կյանքը վերսալում էր անցկացրել, կոմտուհին հասցրեց այդ ընթացքում հարդարել մազերը, ներկել շրթունքները, դիմափոշի քսել, օծվել

և գիշերագլխարկի փոխարեն իսպանական ժանյակ գցել գլխին... Կառլոս թագավորը զուր էր ջանում մի խոսք ասել, կոմսուհին դուրս թռավ կառքից և թևանցուկ արեց նրան.

— Օ՜, իմ թագավոր, ամբողջ Եվրոպան խելագարվում է ձեզ համար, այլևս չեն խոսում արքայազն Եվգենի Սավոյացու, հերցոգ Մալբորոյի մասին, Եվգենին և Մալբորուկը ստիպված են փառքի պսակը գիջել շվեդների արքային... Կարելի է ներել իմ հուզմունքը, ձեզ՝ մեր երազների հերոսին մի րոպե տեսնելու համար ես պատրաստ եմ կյանքս տալ խելահեղորեն... Մեղադրեք ինձ ինչով կուզեք, սիր, վերջապես լսում եմ ձայնը, ես երջանիկ եմ...

Կոմսուհին բարձրացրեց ոտքերի տակ ընկած պնչատ, բրդոտ շինիկին և այնքան ամուր կպավ թագավորի բազկից, որ նա ստիպված կլիներ ծիծաղելի վիճակի մեջ ընկնել, այդ տիկնոջը իրենից պոկելով:

— Ես բանջարեղեն եմ ուտում և միայն ջուր խմում,— կերկեր ձայնով ասաց նա,— կասկածում եմ, թե դրանով բավարարվեք Ավգուստ թագավորի ճոխություններից հետո... Գնացեք իմ վրանը...

Ամբողջ շվեդական ճամբարը քիչ զարմացած չէր, տեսնելով իր թագավորին, որը վաղորդյան գովից ծածանվող թեթև փեշերով ու ժանյակներով, փարթամ մի գեղեցկուհի էր բարձրացնում կաղնուտից: Թագավորն առաջնորդում էր նրան, քիթը չարությամբ բարձրացրած: Վրանի մոտ սպասում էին նրբագեղ կեցվածքով, ոսկյա լոնետով, վիթխարի կեղծամով բարոն Բերկենգելմը և գեղջկատիպ, վիթխարի, հանդարտ ու ծաղրական տեսքով կոմս Պիպերը:

Կոմսուհուն վրան մտցնելով, Կառլոս թագավորը ատամների արանքից նրան ասաց.

— Սա ես շուտ չեմ ների ձեզ:— Դարձավ Բերկենգելմին.— Գրողը տանի, տավարի մսի մի կտոր գտեք այս տիկնոջ համար...

Թագավորը նստեց թմբուկին կոմսուհու դիմաց, Կոզելսկայան՝ բարոնի մատուցած բարձրերի վրա: Վառոդի տակառի վրա գցած նախաճաշի սեղանը բոլոր սպասումները գերազանցեց՝ պաշտետ էր, սագի փորոտիք, սառը դրսամիս և Բենեդեկտո Զելինիի պատրաստած գավաթի մեջ գինի էր լցված: Ծրթունքները սեղմելով, թագավորն իր համար նշեց. «Հիանալի է: Հիմա գիտեմ, թե ինչով է սնվում այդ սրիկա Բերկենգելմն իր վրանում...»: Կոմսուհին ախորժակով կլլում էր նախաճաշը, ոսկորները գցելով շինիկին ու շարունակելով բլբլացնել.

— Ախ, Ցեգուս-Մարիա, ո՞ւմ է պետք անհարկի ձևացնելը... Սի՛ր, դուք կարդում եք իմ մտքերը... Ես այստեղ եմ եկել միակ հույսով՝ փրկել Ռեչ Պոսպոլիտայան... Դա է իմ առաքելությունը, սրտիս թելադրանքը... Ես ուզում եմ Լեհաստանին վերադարձնել նրա անհոգությունը, նրա զվարճանքը, նրա փառապանծ խնջույքները, նրա շքեղ որսորդությունները... Լեհաստանն ավերակների մեջ է: Սիր, մի խոժոռեք ձեր հոնքերը, ամեն ինչի մեղավորը Ավգուստ թագավորի թեթևամտությունն է: Օ՜, ինչպես է հիմա նա զղջում, որ մի չար ժամի

լսեց այդ դևին՝ Ցոհան Պատկուլին, և ձեր թշնամին դարձավ... Ավգուստի չար կամքը չէր, հավատացեք ինձ, միայն քառահատման արժանի Պատկուլն էր, որը սկսեց այդ տարաբախտ կռիվը Լիվոնիայի համար: Պատկուլը, միայն Պատկուլը ստեղծեց Ավգուստ թագավորի այդ հակաբնական դաշինքը դանիական թագավորի և վայրենի հրեշ Պյոտր ցարի հետ... Բայց մի՞թե սխալներն անուղղելի են... Մի՞թե բոլոր առաքինություններից բարձրագույնը մեծահոգությունը չէ... Օ՜, սիր, դուք մեծ մարդ եք, դուք մեծահոգի եք...

Կոմսուհու սլավոնական աչքերը խոնավ գմրուխտների նմանվեցին: Սակայն ախորժակը չկորցրեց: Նրա մտքերը սուրում էին մի այնպիսի քառատրոփով, որ Կառլոս թագավորը դժվարությամբ էր հետևվում դրանց, ու հենց մտադրվում էր կտրուկ պատասխան տալ, հարկ էր լինում նոր առարկության: Բերկենգելմը զսպում էր հոգոցները: Ծանր ոտքերը վրանի անկյունում չռած, պայուսակը փորին սեղմած Պիպերը ծպտում էր նրբորեն:

— Հաշտություն, միայն հաշտություն է ուզում Ավգուստ թագավորը և պատրաստ է թեթևացումով պատռել խայտառակ դաշնագիրը Պյոտր ցարի հետ: Բայց բոլորից շատ ձեզնից հաշտություն ենք աղերսում մենք՝ կանայք... Երեք տարի պատերազմ է ու խառնակություն՝ դա չափազանց շատ է մեր կարճ կյանքի համար...

— Ոչ թե հաշտություն, այլ կապիտուլյացիա,— վերջապես խոսեց Կառլոս թագավորը, դեղնավուն աչքերը կոմսուհու վրա հառած:— Ես մտադիր եմ խոսել ոչ այստեղ՝ Լեհաստանում, որն արդեն Ավգուստին չի պատկանում, այլ Սաքսոնիայում, նրա մայրաքաղաքում: Դուք կշտացա՞ք, տիկին: Այլևս ինձ կշտամբելու բան չունե՞ք...

— Սիր, խելքս բոլորովին թոցրել եմ,— շտապ-շտապ ասաց կոմսուհին, հիանալի տապակած մորակտցարը վերջացնելուց հետո վարդագույն մատները լպստելով:— Մոռացա ձեզ հայտնել ամենակարևորը, ինչի համար գլխապատառ այստեղ եմ սլացել:— Ապարանջանից կախ ոսկյա փոքրիկ տուփից ոլորած մի թուղթ հանեց և բացեց:— Սիր, ահա աղավնատիպոստով եկած մի ճեպագիր, որը երեկ առավոտյան է ստացվել: Պյոտր ցարը մեծ ուժերով շարժվել է Նարվայի վրա: Իմ պարտքն է ձեզ զգուշացնել մոսկովյան բռնապետի այդ վտանգավոր երթի մասին...

Կոմս Պիպերը դադարեց ծպտալ, մոտեցավ թագավորին, և երկուսով սկսեցին կարդալ ճեպագրի մանրիկ տառերը: Կոմսուհին չքնաղ աչքերը գցեց Բերկենգելմի վրա, թեթև շունչ առավ ու Բենեդեկտո Զելինիի գավաթը բարձրացնելով, խմեց...

3.

Ավգուստ Վեհապանծ թագավորը, ում բնությունը կարծես ստեղծել էր ճոխ տոնախմբությունների, արվեստներ հովանավորելու, Եվրոպայի գեղեցկագույն կանանց հետ սիրային վայելքների, Վիեննայից, Մադրիդից կամ Վերսալից ոչ պակաս թագավոր ունենալ կամեցող Ռեչ Պոսպոլիտայի սնափառության համար, ներկայումս հոգեկան խիստ ընկճված վիճակում էր: Արքունիքը տեղավորվել էր Լվովի վոյեվոդության Սոկալ անշքմար գյուղաքաղաքի կիսավեր դղյակում և ներդությունների մեջ էր: Այստեղ նույնիսկ կիրակնօրյա շուկա չկար, որովհետև մերձակա գյուղերի ուկրաինացի բնակչությունը կամ անտառներում էր թաքնվել պատերազմի ավարտին սպասելով, կամ սատանան գիտե, թե ուր էր չքվել, ավելի հավանական է մերձդնեպրյան հարթավայրերը, որտեղից տագնապալի լուրեր էին գալիս հայդամակների ծայր առած շարժման մասին...

Դատարկ ստամոքսով չքնելու համար Ավգուստ թագավորը ստիպված էր լինում ընթրիքի հրավերքներ ընդունել տեղական կալվածատերերից, ֆրանսիական հանդիսախոսություններ անել ծայրամասային տիկնանց ու գարշելիագույն գինի խմել: Ցանկացած լեհ պանը, փարթամ բեխերը ոլորելով ու հպարտությամբ նայելով սեղանի մյուս՝ «գոդշ» ծայրին, ուր թրեր և գավաթներ էր շրխկացնում ենթակա շվայտ շլյահտան, իրեն ավելի շատ էր թագավոր զգում, քան Ավգուստ թագավորը: Վարշավայի սեյմը նրան թագազուրկ էր հայտարարել: Ճիշտ է, լեհական վոյեվոդությունների կեսը չէր ընդունել դա, բայց և այնպես Վարշավայում, նրա պալատում նստած էր լեհաց երկրորդ թագավորը՝ Ստանիսլավ Լեշչինսկին, վիրավորական ունիվերսալներ էր գրում և Ավգուստի օգտագործած դիպակե կաֆտաններն ու փարիզյան գոլպաներն էր նվիրում իր աղխին: Ամբողջ արևելքը՝ Դնեպրի աջ ափը, Վիննիցայից մինչև Պոդոլիա, մուժիկական ապստամբությամբ էր բռնկված, ոչ պակաս արյունահեղ, քան Բոգդան Խմելնիցկու ժամանակ: Եվ շրջապատումը գոցած, այստեղից ոչ հեռու, Լվովի և Ցարոսլավի արանքում Կառլոս թագավորն էր կանգնած, երեսունհինգ հազարանոց ընտիր զորքով, Ավգուստի նահանջի ճանապարհը կտրած դեպի իր հարազատ Սաքսոնիան:

Ավգուստը կորցնում էր ինքնավստահությունը նողկալի վախից առ Կառլոս թագավորը՝ փոշոտ սերթուկով ու մաշված բոտֆոլտաներով, ներքինու դեմքով և վագրի աչքերով այդ կատաղած լակոտը: Կառլոսին հնարավոր չէր ոչ գնել, ոչ գայթակղել՝ կյանքից ոչինչ չէր կամենում նա, թնդանոթների որոտից ու ծխից, խաչաձևվող երկաթի շաչյունից, վիրավոր զինվորների աղաղակներից, խանձահոտ ու արյունահոտ բռնած կոխկրտված դաշտի տեսարանից բացի, որով զգուշորեն, դիակների վրայով առաջանա պիտի իր կախազավակ ձին: Միակ գրքույկը, որ Կառլոսն իր բարակ բարձի տակ էր պահում, Կեսարի

մեկնություններն էին: Պատերազմը նա սիրում էր միջնադարյան նորմանի մոլուցքով: Նա կգերադասեր քսանֆունտանոց ռումբի պայթյունն իր գլխի վրա, քան թեկուզև ամենաշահավետ հաշտություն կնքելն իր թագավորության համար:

Ավգուստ թագավորն այսօր առավոտից սպասում էր կոմսուհու վերադարձին: Հույս չուներ, թե կանացի իր ամբողջ ճարպկությամբ հանդերձ, նրան հաջողվելու է հաշտության տրամադրել Կառլոսին: Սակայն աղավնափոստով Լիվոնիայից հասած տեղեկությունները Պյոտր ցարի առաջխաղացման մասին այնչափ կարևոր ու սպառնալի էին, որ Կառլոսը կարող էր և գեներալ Շլիպենբախի մեկ կորպուսի վրա հույս չդնել ու տատանվել՝ շարունակի՞ արդյոք Ավգուստի անհամաստ հետապնդումը, թե զորքերը դարձնի Մերձբալթիկա, դեպի ուր Պյոտր ցարի հետ նրան գոտեմարտի էին մղում տասնյակորեն բոլորը. և՛ ավստրիական կայսրը, որն անտանելի վախենում էր, թե Կառլոսը հանկարծ դաշն չկնքի ֆրանսիական թագավորի հետ ու իր զորքերը շրջի դեպի Վիեննա, և՛ ֆրանսիական թագավորը, որը երկյուղ ուներ, թե հանկարծ վիեննական դիվանագետները Կառլոսին չքաշեն կայսեր կողմն ու ռազմական մի զբոսանք առաջարկեն դեպի Ֆրանսիայի սահմանները, և՛ պրուսական թագավորը, որը բացարձակորեն բոլորից էր վախենում, առավելապես խելացնոր Կառլոսից, ում համար ոչինչ չարժեր Բրանդենբուրգյան Պրուսիա ներխուժելը, Քյոնիգսբերգը գրավելն ու իր ձեռքն ու ոտքը կապկպելն այնպես, որ շարժվել չկարողանար:

Հետո եկավ սաստիկ չարացած Յոհան Պատկուլը՝ վատ կարված, կարմիր թևքածալերով ռուսական գեներալական կանաչ մունդիրից ավելի գեր էր թվում նա: Խոխոտացնում էր, կնճիռներ հավաքում բարձր ճակատի վրա, որը չափազանց նեղ էր նրա ճարպակալած ու գոռոզ դեմքի համար, և նողկալի ֆրանսերենով տրտնջում էր Պյոտր ցարի վախկոտությունից, որը խուսափում է Կառլոս թագավորի հետ վճռական ճակատամարտից:

«Ցարը երկու մեծ բանակ ունի: Նա պետք է ներխուժի Լեհաստան և մեզ միանալով, ջախջախի Կառլոսին, ցանկացած զոհերի գնով,— ասում էր Պատկուլը, շառագունած այտերը ցնցելով:— Դա համարձակ և խելացի քայլ կլիներ: Ցարն ազահ է, ինչպես բոլոր ռուսները: Նրան թողեցին Ֆիննական ծովածոց, ուր տղայական շտապողականությամբ իր անշքմար քաղաքն է կառուցում, նա ստացել է Ինգրիան և երկու հիանալի ամրոց՝ Յամը և Կոպորյեն: Ուրեմն, գոհացիր և պատերազմ կատարիր Եվրոպայի հանդեպ: Բայց նրա ախորժակը բացվել է Նարվայի և Յուրյևի վրա, բերանը բացել է, Ռեվելն էլ կուլ տալու: Դրանից հետո Լիվոնիան և Ռիգան կցանկանա: Ցարին հարկավոր է սահմանների մեջ պահել... Բայց այս մասին նրա մինիստրների հետ խոսելն անօգուտ է... Անտաշ մուժիկներ են, ներկած մալանչի կեղծամներով, Եվրոպան նրանց համար նույնն է, ինչ մաքուր անկողինը կեղտոտ խոզի համար... Եվ չափից ավելի կոպիտ ու անկեղծ եմ խոսում, ձերդ

մեծություն, բայց ինձ համար ցավալի է... Ես մի՛ բան եմ ուզում, որ իմ Լիվոնիան վերադառնա ձերդ արքայական մեծության գայիտոնի տակ: Սակայն ամենուրեք՝ Վիեննայում, Բեռլինում և այստեղ՝ ձեզ մոտ, կատարյալ անտարբերության եմ հանդիպում... Ես շփոթված եմ. վերջիվերջո, ո՞վ է ավելի շատ թշնամի Լիվոնիային. Կառլոս թագավո՞րը, որն ուզում է անձամբ քառահատել ինձ, թե՞ Պյոտր ցարը, որն ինձ այնչափ շոյիչ վստահություն է ցուցաբերել, ընդհուպ մինչև գեներալ-լեյտենանտի կոչումը: Այո, ես ռուսական մունդիր եմ հագել և այս խաղը ազնվորեն կտանեմ մինչև վերջ... Սակայն իմ զգացմունքներն իմ զգացմունքներն են մնում... Իմ սրտի ցավը խորանում է ձերդ մեծության քարացածությամբ և անգործությամբ: Բարձրացրեք ձեր ձայնը, ցարից զորքեր պահանջեք, պնդեք, որ վճռական մարտ ունենա Կառլոսի հետ...»:

Ուրիշ ժամանակ Ավգուստ թագավորը պարզապես դռնից դուրս կշպրտեր այդ անպատկառին: Հիմա ստիպված էր լռել, ծխատուփը խաղացնելով մատների մեջ: Վերջապես գնաց Պատկուլը: Թագավորը ձայն տվեց հերթապահին՝ ռոտմիստր Տանոնովսկին էր, և ասաց, որ հարյուր չերվոնեց (որը չուներ) կնվիրի նրան, ով առաջինը կհայտնի կոմսուհի Կոզելսկայայի վերադարձի մասին: Մոմերը բերեցին կանաչած եռաբուն աշտանակով, որը հավանորեն սինագոգից էին վերցրել: Թագավորը մոտեցավ հայելուն և սկսեց մտազբաղ զննել իր փոքր-ինչ նիհարած դեմքը, որը երբեք չէր ձանձրացնում նրան: Որովհետև ստույգ պատկերացնում էր, թե ինչպես պիտի սիրեն կանայք անտիկ արձանի գծագրությամբ, փոքր-ինչ զգայական բերանը՝ ամուր ատամներով, խոշոր ազնվացեղ քիթը, գվարթ փայլը գեղեցիկ աչքերի՝ հոգու ջահերի... Թագավորը բարձրացրեց կեղծամը. այդպես էր որ կար՝ ճերմակած մազեր: Աչքերից քունքերն էին գնում կնճիռները... Նգովյա՜լ Կառլոս:

— Թույլ տվեք հիշեցնել, ձերդ մեծություն,— ասաց դռան մեջ կանգնած ռոտմիստրը,— պան Սոբեշչանսկին երրորդ անգամ է շլյախտիչ ուղարկում ասելու, որ պանը և պանին սեղան չեն նստում, ձերդ մեծությանը սպասելով... Նրանց կերակուրներն այնպիսին են, որ կարող են թթվել...

Թունդ մշկաբույր արձակող մետաքսյա կամզոլի գրպանից թագավորը հանեց դիմափոշու տուփը, կարապի փետրագնդով քսեց դեմքին, կրծքի ժանյակների վրայից թափ տվեց փոշին ու ծխախոտը, անփութորեն հարցրեց.

— Առանձնահատուկ ի՞նչ ունեն ընթրիքին:

— Շլյախտիչից հարցրեցի, ասաց, որ երեկվանից պանի տանը խոնկոր, հավ ու սագ են մորթում, երշիկներ լցնում: Իմանալով ձերդ մեծության նրբին ճաշակը, պանին անձամբ սագի արյունով տապակած տգրուկներ է պատրաստել...

— Ծատ բարի... Սուրս բեր, ես գնում եմ...

Պան Սոբեշչանսկու դաստակերտը քաղաքից հեռու չէր: Ամպրոպաբեր ամպը ծածկել էր մայրամուտի աղոտացող շերտը, ճանապարհի փոշու և դեռ չկսված անձրևի ուժեղ հոտ էր գալիս, երբ Ավգուստ թագավորը, բոլոր ձախորդություններից բավականաչափ խուճացած, կաշեպատ կառքով մոտեցավ դաստակերտին: Նրա ժամանման մասին հայտարարեց առջևից գնացող շլյախտիչը: Դարավոր ծառուղու մթին ճյուղերի տակ կառքին ընդառաջ էին վազում ջահեր բռնած մարդիկ... Կառքը շրջանցեց ծաղկաթումբը և շների կաղկանձի տակ կանգ առավ միհարկանի երկարուկ, եղեգնյա տանիքով տան առաջ: Այստեղ նույնպես դեսուդեն էին ընկել ոտաբոբիկ, պատռված շապիկներով, զգգզված մազերով, ջահեր բռնած ծառաները: Ուղիղ շքամուտքի մոտ խոնվել էին մի քանի տասնյակ ենթակա, պան Սոբեշչանսկու տան հացն ուտող շլյախտիչներ՝ պանական կոիվների սարտազդու սպիները դեմքերին ալեհեր վետերաններ, յուղած, բզի պես կոշտ, առնվազն մեկ քառորդ երկարությամբ բեխերով ցմփոր որկրամոլներ, ուրիշի մաշված կաֆտաններ հագած, սակայն դրանից պակաս չաքլորացած պատանյակներ: Բոլորը կանգնած էին մի ձեռքը կողերին կանթած, մյուսը թրերի երախակալներին դրած՝ ի ապացույց իրենց շլյախտական ազատության: Իսկ երբ Ավգուստը, խոշոր մարմինը կռացրած, իջավ կառքից, բոլորը միանգամից լատիներեն ողջույն բղավեցին նրան: Ջեռները տարածած, առմուտքից իջավ տարեց պան Սոբեշչանսկին, այդ դոպեին պատրաստ լեհական լայնսիրտ հյուրընկալությամբ հյուրին ընծայել այն ամենն, ինչ կկամենար. որսաշներ, ձիեր ախոռից, իր ամբողջ աղխը, եթե հարկավոր էր հյուրին, հագի բաց կապույտ մահուդե, մորթեբոլոր կունտուշը: Թերևս չէր տա միայն երիտասարդ պանի Սոբեշչանսկայային... Պանի Աննան կանգնած էր ամուսնու ետևում՝ այնքան սիրունիկ, ճերմակ, քթիկը ցից, աչքերը զարմացած, սրակատար ու փետրազարդ իսպանական գլխարկով, որ Ավգուստ թագավորի սրտից չքացավ ամբողջ մելամաղձոտությունը:

Խորը խոնարհումով նա բռնեց պանի Աննայի մատների ծայրերից և մի քիչ բարձրացնելով տիկնոջ ձեռքը, ինչպես պոլոնեզի պարաքայլին, առաջնորդեց ճաշասենյակ: Նրա ետևից գալիս էր պանը, խանդաղատանքից խոնավացած աչքերով, պանից հետո այծի հոտ արձակող, կապտության աստիճան ածիլված, ոտաբոբիկ, գոտկատեղին պարան փաթաթած հոգևորականը, ապա ամբողջ շլյախտան՝ ըստ աստիճանի:

Սեղանը, որի վրա ափոցի տակ ծղոտ էր փռված, իսկ երեսից ցրիվ տված ծաղիկներ կային, հիացմունքի ճիչեր հարուցեց. երկարահասակ, մերկ մարմնի վրա կունտուշ հագած մի շլյախտիչ նույնիսկ գլուխը բռնեց մնչալով ու ճոճվելով, ինչ համընդհանուր ծիծաղ առաջացրեց: Արծաթե, անագե, նախաշազարդ մատուցարանների վրա զանազան երշիկների, տապակած թռչնեղենի շեղջեր էին լցված, հորթի

և խոզի ազդրամսեր, ապխտած կես-ձկներ կամ կես-թռչուններ, լեզուներ, թթվեղեն, թրջած պտուղ ու արմտիք, մուրաբաներ, հացիկներ, բլիթներ, բուրլիկներ, թխվածքներ, կանաչ ապակուց ուկրաինական արջանման շշեր կային՝ օղիով լի, հունգարական գինու տակառիկներ, գարեջրի սափորներ... Մոմեր էին վառվում, որոնցից զատ լուսամուտների առաջ ծխացող ջահեր էին բռնել նորտերը, որոնք պղտոր ապակիներից նայում էին, թե ինչ փառավոր խնջույք է անում իրենց պանը:

Ավգուստ թագավորը հույս ուներ, որ իր ներկայությունը տանտիրոջը կստիպի հրաժարվել հյուրերին այնպես խմացնելու սովորությունից, որ ոչ մեկը չկարողանա իր ոտքով գնալ: Բայց պան Սոբեշչանսկին հաստատուն պաշտպանն էր հին լեհական սովորույթի: Քանի հյուր կար սեղանի շուրջ, այնքան անգամ ափով սղալելով ալեհեր բեխերը, ոտքի կանգնեց, բարձրաձայն տվեց անունը՝ սկսած թագավորից, վերջացրած սեղանի ծայրի վերջին մարդով (երկարահասակ այն շլյախտիչն էր, որը պարզվեց՝ սապոգ էլ չունի) ու կենացները խմեց հունգարական գինով: Ամբողջ սեղանը ոտքի էր կանգնում, «վիվատ» բղավում: Տանտերը լիքը գավաթ էր պարզում հյուրին և սա, ի պատասխան, խմում էր պանի և պանիի կենացը... Իսկ երբ բոլորի կենացը խմեցին, պան Սոբեշչանսկին նորից սկսեց շրջանը, խմելով նախ Ռեչ Պոսպոլիտայի, ապա Լեհաստանի գերողորմած թագավոր Ավգուստի կենացը, «միակ թագավորի, ում կտանք մեր արերն ու մեր արյունը»... «Վիվա՛տ: Կորչի Ստանիսլավ Լեշչինսկին»՝ մոլեգնած բղավում էր շլյախտան... Ապա մի վերամբարձ կենաց ասվեց շլյախտական անբակտելի ազատության պատվին: Այստեղ արդեն տաքացած գլուխները կատարելապես գժվեցին՝ հյուրերը քաշեցին սրերը, սեղանը ճոնվեց, մոմեր ընկան: Պնդակազմ, միաչքանի մի շլյախտիչ, բղավելով «Այսպե՛ս կկործանվեն մեր ոսոխները՝ հերձվածողներն ու մոսկալները», թրով կտրիճավարի կիսեց երշիկներով լի հսկա մատուցարանը:

Ավգուստ թագավորից ձախ, սրտի կողմում նստած էր վարդի պես շիկնած պանի Սոբեշչանսկայան: Հիանալի կարողանում էր հարցուփորձ անել թագավորին՝ Վերսալի հարշտակիչ սովորությունների մասին, այնտեղ ունեցած նրա արկածների մասին, մանրիկ ծիծաղում էր, թագավորին հպվելով մեկ բազկով, մեկ ուսով, միաժամանակ հետևում էր հյուրերին, հատկապես սեղանի «գորշ» եզրին, ուր շլյախտիչներից մեկնումեկը, խմածից շշմած, ապխտած լեզու կամ տապակած կես-սագ էր խոթում կտավե լայն շալվարի գրպանը, ծակող հայացքով մոտ էր կանչում սպասավորներին, հրահանգներ տալիս:

Թագավորն արդեն քանիցս փորձել էր գրկել տանտիրուհու բարակ իրանը, բայց ամեն անգամ պան Սոբեշչանսկին «վիվատի» համար լիքը գավաթ էր պարզում նրան. «Ձեր ձեռքն եմ հանձնում, ամենաողորմած արքա»: Ավգուստը փորձում էր կիսատ խմել, կամ անկատելիորեն շրջել սեղանի տակ, բայց ոչինչ չէր օգնում, գավաթն անմիջապես լցնում էր աթոռի ետևում կանգնած ծառան, կամ մյուս ծառան, որը շիշը ձեռքին, սեղանի տակ էր նստած: Վերջապես թանկագին հյուրին մատուցվեց տապակած տզրուկների նշանավոր կերակուրը՝ տանտիրուհին իր ձեռքով լիքը պնակ դրեց նրա առաջ:

— Իրավ, ես ամաչում եմ, երբ գովում եք այսպիսի գեղջկական կերակուրը,— ասում էր նա հասարակ ձայնով, բայց կնոջ աչքերի մեջ թագավորը բոլորովին ուրիշ բան էր կարդում,— դժվար չէ պատրաստելը, միայն թե սագը ջահել պիտի լինի և ոչ շատ ճարպոտ... Երբ տզրուկները տոգում են ծծած արյունից, սագի հետ մեկտեղ մտցնում են ջեռոցը, տզրուկները պոկվում են սագի կրծքից ու ընկնում տապակի մեջ...

— Խե՜ղճ սագ,— ասաց թագավորը, երկու մատով վերցնելով տզրուկն ու շրխկոցով կծելով:— Ինչե՞ր չեն անի սիրունիկ կանայք, վայելելու համար:

Պանի Անանան ծիծաղում էր, սրակատար, թեք դրած գլխարկի փետուրը ցնցվում էր: Թագավորը տեսավ, որ գործը գլուխ է գալիս: Միայն սպասում էր պարերի սկզբին, անարգել բացատրվելու համար: Այդ ժամանակ, դռան մեջ խոնված հարբած շլյախտիչներին բոթելով, ներս ընկավ փոշուց սևացած, քրտնամխաց, պատռված կունտուշով, խիստ վախեցած մի մարդ:

— Պա՜ն, պա՜ն, դժբախտությո՜ւն,— բղավեց նա, ծնկի գալով պանի աթոռի առաջ:— Ինձ որ ուղարկեցիք մենաստան հին մեղրի տակառը բերելու... Ամեն ինչ տեղը տեղին արեցի... Սատանան դրդեց ինձ շրջանցել, մեծ ճանապարհով գալ... Ամեն ինչը կորցրեցի՝ մեղրն էլ, տակառն էլ, ձին էլ, թուրն էլ, գլխարկն էլ...Հազիվ փրկեցի գլուխս... Ջարդեցին ինձ: Անհամար զորք է մոտենում Սոկալին:

Ավգուստ թագավորը խոժոռվեց: Պանի Անանան եղունգները խրեց նրա ձեռքի մեջ: Ուրիշ ինչ զորք կարող էր հիմա Սոկալ մտնել՝ միայն Կառլոս թագավորն իր հանկարծ հեռապնդումով... Շլյախտան վայրենաձայն բղավեց. «Ծվեդնե՜ր: Փրկեցե՜ք»: Պան Սոբեշչանսկին բռունցքն այնպես խփեց սեղանին, որ գավաթները վեր թռան:

— Լռությո՜ւն, ձերդ ողորմած պաներ: Ում հարբածությունը հենց հիմա չթողեց, կհրամայեմ մարակի հիսուն հարված հասցնել, զորքի վրա պառկեցնելով... Ի՛նձ լսեք, շան որդիներ... Թագավորն իմ հյուրն է, և ես իմ ալեհեր գլուխը խայտառակությամբ չեմ ծածկի... Թող շվեդները այստեղ գան թեկուզ ամբողջ զորքով, իմ հյուրին նրան չենք հանձնի...

— Չե՜նք տա,— բղավեց շլյախտան, շրխկոցով հանելով սրերը պատյաններից:

— Ձիերը թամբե՜ք... Ատրճանակները լցրե՜ք... Կմեռնենք, լեհական փառքը չե՜նք խայտառակի...

— Չե՜նք խայտառակի... Վիվա՜տ...

Ավգուստ թագավորի համար պարզ էր, որ միակ ողջամիտ վճիռը

կլինի անհապաղ թոչել թամբի վրա ու փախչել, լավ է, որ մութ գիշեր էլ է... Բայց ինքը՝ Վեհապանծ Ավգուստը, լքելով ուրախ ընթրիքը և սքանչելի տիկնոջը, որը դեռ բաց չէր թողնում իր ձեռքը, ողորմելի մի վախկոտի պես փախչի՞: Կառլոսը դեռ չի կարող իրեն դրդել այդպիսի ստորացման... Գրողի ծո՛ցը ողջամտությունը:

— Հրամայում եմ ձեզ, ողորմած պարոնայք, նորից սեղան նստել: Շարունակենք խնջույքը,— ասաց և նստեց, բորբոքված այտերից ետ գցելով կեղծամի գանգուրները: Ի վերջո, եթե այստեղ հայտնվեն շվեդները, իրեն կթաքցնեն մի տեղ, կտանեն՝ թագավորներին վատ բան չի լինում... Նա գինի լցրեց, բարձրացրեց գավաթը, նրա խոշոր, գեղեցիկ ձեռքը ամուր էր... Պանի Աննան նրան էր նայում զմայլանքով՝ հանուն նման հայացքի, իրոք, կարելի էր թագավորությունը տալ...

— Բարի: Թագավորը հրամայում է մեզ խնջույք անել:— Պան Սոբեշչանսկին ծափ զարկեց և երշիկով մատուցարանը փշրած շլյախտիչին հրամայեց ընկերների հետ գնալ մեծ ճանապարհի վրա հսկելու, մնացածին, ընդհուպ մինչև «գորշ» եզրը, կարգադրեց հունգարական ընտիր գինի լցնել ու խմել, մինչև որ վերջին տակառի տակը երևա, նկուղներից ու մառաններից բերել տանը եղած բոլոր բարիքները, երաժիշտներ կանչել...

Խնջույքը նոր ոգևորությամբ թեժացավ: Պանի Աննան ելավ թագավորի հետ պարելու: Այնպես էր պարում, կարծես անձամբ Պետրոս առաքյալին էր գայթակղում, որ դրախտի այգին բանա իր համար: Գլխարկը ծռվել էր, մազուրկայի հնչյունները թրթռում էին խոպոպների մեջ, կարճ փեշերը փոփոում ու պլլվում էին պլացիկ ոտքերին, կարմրակրունկ կոշիկները մեկ դուփդուփում էին, մեկ թռչում, ասես հատակին չքսվելով... Հոյակապ էր և նրա հետ պարող արքան՝ պարթևահասակ, շքեղ, գինուց և ցանկությունից գունատված...

— Ես գլուխս կորցնում եմ, պանի Աննա, գլուխս կորցնում եմ ես, հանուն բոլոր սրբությունների, խղճացեք ինձ,— ասում էր նա ատամների արանքից, և կինը հայացքով պատասխանում էր, որ խնայում չի լինելու և դրախտի դռները բաց են արդեն...

...Դրսում, խավարի մեջ լսվեցին ծառաների վախեցած ձայները, ձիեր խրխնջացին... Երաժշտությունն ընդհատվեց... Ոչ ոք չհասցրեց նույնիսկ թորը քաշել կամ ատրճանակի հրահանը ետ տանել... Միայն թագավորը, որի աչքերի առաջ ամեն ինչ պտտվում էր, ամուր գրկեց պանի Աննային և քաշեց սուրը...

Խնջույքի սրահ մտան երկու հոգի. մեկը վիթխարահասակ էր, միաչքանի, ոչխարենու բարձր փափախ էր դրել, ոսկյա ծոփքը կախ, բացգույն ու կախ բեխեր ուներ, խոշոր քիթ, մյուսը՝ հասակով ավելի ցածրը, իշխանատեսք էր, դուրեկան ու մեղմ դեմքով, մունդիրը փոշեկոլոլ էր, գեներալական լանջագոտին ուսից գցած:

— Այստեղ է արդյոք գտնվում նորին արքայական մեծություն Ավգուստ թագավորը,— հարցրեց նա և տեսնելով սպառնալի դիրքով, սուրը ձեռքին կանգնած Ավգուստին, հանեց գլխարկը, խոր գլուխ տվեց:— Ամենաողորմած թագավոր, ընդունեք զեկույցս. Պյոտր Ալեքսեևիչ թագավորի հրամանով եկել եմ ձեր տնօրինության տակ, ինձ հետ հետևակ տասնմեկ գունդ և հեծյալ կազակական հինգ գունդ:

Կիևի նահանգապետն էր, օժանդակ զորքի հրամանատար Դմիտրի Միխայլովիչ Գոլիցինը, շլիսելբուրգյան հերոս Միխայլա Միխայլովիչի ավագ եղբայրը: Մյուսը՝ հապալասագույն կաֆտանով և կրունկներին հասնող այծենականով բարձրահասակը, կազակական նշանակովի ատաման Դանիլա Ապոստոլն էր: Այդ կազակին ի տես, շլյախտայի բեխերը սպառնագին շարժվեցին: Նա կանգնած էր շեմին, ձեռքերն անփութորեն կանթած, մականը խաղացնելով, գեղեցիկ շրթունքներին քմծիծաղ կար, հոնքերը նետերի էին նման, միակ աչքի մեջ՝ հպդամակլան գրոհների հրդեհներով լուսավորված գիշերը:

Ավգուստ թագավորը ծիծաղեց, սուրը պատյանը դրեց, գրկեց Գոլիցինին և ձեռքը պարզեց ատամանին, որ հանդուրի: Երրորդ անգամ սեղան գցեցին: Ձեռքից ձեռք անցավ հունգարական գինու կես կվարտա պարունակող գավաթը: Խմեցին Պյոտր ցարի կենացը, որը չէր դրժել Ուկրաինայից օգնություն ուղարկելու խոստումը, խմեցին տեղ հասած գնդերի կենացը և շվեդների կործանման համար: Կովազան շլյախտիչները հատկապես ուզում էին հարբեցնել ատաման Դանիլա Ապոստոլին, բայց նա հանգիստ դատարկում էր գավաթ գավաթի ետևից, միայն հոնքերը բարձրացնելով՝ նրան գետնելն անհնար էր:

Լուսադեմին, երբ արդեն ստիպված էին շլյախտիչներից շատերին քարշ տալով բակ տանել ու դնել ջրհորի մոտ, Ավգուստ թագավորն ասաց պանի Աննային.

— Ես գանձեր չունեմ ձեր ոտքերի տակ նետելու համար: Ես մի արտաքսյալ եմ, որը ողորմությամբ է սնվում: Բայց այսօր վերստին ուժեղ եմ և հարուստ... Պանի Աննա, ես ուզում եմ, որ դուք կառք նստեք ու հետևեք իմ զորքին: Պետք է ելնել հիմա ևեթ, ոչ մի ժամ չհապաղել... Լակոտի պես քթից բռնած ման կածեմ այդ Կառլոս թագավորին... Աստվածային պանի Աննա, ես ուզում եմ մատուցարանի վրա ձեզ ընծայել իմ Վարշավան...— Եվ ոտքի կանգնելով, ձեռքը թափ տալով, դիմեց սեղանի շուրջ այն նստածներին, ովքեր դեռ աչքերն էին չռում ու յուղած բեխերը ցցում:— Պարոնայք, առաջարկում եմ ձեզ ու հրամայում, թամբեք ձեր ձիերը, բոլորիդ վերցնում եմ իմ անձնական շքախումբը:

Որքան էլ Դմիտրի Միխայլովիչ Գոլիցինը՝ քաղաքավարությամբ ու անչափ մարդկային, փորձեց ապացուցել նրան, որ զորքին մի երեք օր հանգիստ է պետք, ձիերը պիտի կերակրվեն ու գումակները խրմվեն, Ավգուստ թագավորն անհողդողդ մնաց: Արևը դեռ չէր չորացրել շաղը, նա վերադարձավ Սոկալ, Գոլիցինի և ատամանի ուղեկցությամբ: Քաղաքի փողոցներում ամենուրեք սայլեր էին կանգնած, ձիեր, թրնդանոթներ, խոտերի վրա քնած էին ռուս հոգնած զինվորները: Ծխում էին խարույկները: Թագավորը կառքի լուսամուտից նայում էր քնած հետևակներին, սայլերի վրա փռված կազակներին:

— Ի՞նչ զինվորներ են,— կրկնում էր նա:— Ի՞նչ զինվորներ են, դյուցազուններ:

Դղյակի դռան մոտ նրան դիմավորեց ռոտմիստր Տատոնովսկին և վալեցած շշռանչով հայտնեց.

— Կոմսուհին վերադարձել է, չի կամենում պառկել հանգստանալու, խիստ բարկացած է...

— Ա՛հ, դատարկ բան է,— թագավորն ուրախ-ուրախ մտավ կամարակապ, խոնավ ննջարանը, ուր սինագոգից բերված, հաղված շիթերը կախ աշտանակի մոմերն էին վառվում: Կոմսուհին նրան դիմավորեց կանգնած, լուռ նայելով դեմքին, սոսկ առաջին բառին սպասելով, որ հարկը եղածի պես պատասխանի:

— Սոֆի, վերջապես,— ասաց Ավգուստը առավել շտապողականությամբ, քան կկամենար:— Է՞, ինչպե՞ս էր: Դուք տեսա՞ք Կառլոս թագավորին:

— Այո, ես տեսա Կառլոս թագավորին, շնորհակալ եմ...— Նրա դեմքին կարծես այլուր էր ցանած, և ուտած ու տգեղ էր թվում:— Կառլոս թագավորն ուրիշ ոչինչ չի կամենում, քան կախել ձեզ առաջին պատահած ծառից, ձերդ մեծություն... Եթե ձեզ պետք են թագավորի հետ իմ զրույցի մանրամասները, կպատմեմ... Բայց հիմա ուզում եմ հարցնել. ինքներդ ինչպե՞ս եք որակում ձեր վարմունքը: Որպես հետևյալ մի ամսա լվացողի, ինձ ուղարկում եք ձեր կեղտոտ գործերը կարգավորելու... Ես վիրավորանքներ եմ կրում, ճանապարհին հազար անգամ բռնաբարվելու, մորթվելու, կողոպտվելու վտանգի ենթարկվում... Իսկ այդ ընթացքում դուք զվարճանում եք պանի Աննայի գրկում... Շլյախտիչի այդ անշնամար կնոջ, ում ես կվիրավորվեի որպես նաժիշտ պահել...

— Դատարկ բան է, Սոֆի:

Ավգուստ թագավորի կողմից անզգուշություն էր այդ բացականչությունը: Կոմսուհին մոտեցավ նրան և ճարպկորեն, ինչպես կատուն իր թաթով, ապտակեց արքային...

ԳԼՈՒԽ ՔՈՐՐՈՐԴ

1.

Թմբի վրա, ուր կանգնեցված էր պահաշտարակը, Պյոտր Ալեքսեևիչը ցած թռավ ձիուց և թեք չորսուների վրայով վեր մագլցեց, հարթակին կանգնելու: Նրան հետևեցին Զամբերսը, Մենշիկովը, Անիկիտա Իվանովիչ Ռեպնինը, վերջում՝ Պյոտր Մատվեևիչ Ապրակսինը: Վերջինիս շատ էր խանգարում գիրությունը, նաև գլխապտույտը. կատակ բան չէր գետնից տասը սաժեն բարձր այդ վախենալի տեղը մագլցելը: Կայմեր մագլցելու սովոր Պյոտր Ալեքսեևիչի շունչն իսկ չէր արագացել, գրպանից հանեց հեռադիտակը, ոտքերը չոեց ու սկսեց նայել:

Նարվան երևում էր, ասես կանաչ մատուցարանի վրա՝ բոլոր ցածրիկ աշտարակները, դարպասներով ու բարձրացնովի կամուրջներով, տաշած քարով շարած բաստիոնների ելուստները, վառոդի կլոր աշտարակով հին ամրոցի զանգվածը, քաղաքի ծուռումուռ փողոցները, կիրխեների՝ սուր, մեխի պես երկինք ցցված տանիքները: Գետի մյուս կողմում կապարե ծածկերով ութ մոայլ աշտարակներ էին բարձրանում ու դեռևս Իվան Ահեղի կառուցած Իվան-գորոդի ամրոցի արկերով ծակծկված բարձր պարիսպը:

— Քաղաքը մերն է լինելու,— ասաց Մենշիկովը, որը նույնպես նայում էր հեռադիտակով:

Պյոտր Ալեքսեևիչն ատամների արանքից նետեց.

— Ջուրը մտնելուց առաջ ես բռնկանում:

Քաղաքից գետի հունով ցած, դեպի այնտեղ, ուր Ռոսսոն վտակի վրա Պյոտր Մատվեևիչ Ապրակսինի հողաշեն ամրոցն էր կանգնած, դանդաղ շարժվում էին գումակներն ու զորքերը, որոնք վատ էին զանազանվում բարձրացրած փոշու միջից: Անցան լողացող կամուրջը, հեծյալ ու հետևակ գնդերը տեղավորվեցին ձախ ափին, քաղաքից հինգ վերստի վրա: Այնտեղ արդեն սպիտակին էին տալիս վրանները, բամի չկար, և ծուխը վեր էր բարձրանում, մարգագետիններում թափառում էին թամբազերծ ձիերը... Կացինների թխկթխկոց էր լսվում՝ կատարները ցնցելով, դարավոր սոճիներ էին տապալվում:

— Մենակ սայլերով ու իրաչայուններով ենք պատնեշվել, ապահովության համար չե՞ս հրամայի խանդակներ փորել, ցցապատնեշ կանգնեցնել,— հարցրեց իշխան Անիկիտա Իվանովիչ Ռեպնինը: Զգուշավոր, խելացի և զինվորական գործերում հմուտ մարդ էր, խիզախ առանց խենթության, սակայն պատրաստ նաև աննահանջ մեռնել, եթե հարկ լիներ մեծ գործի համար: Միայն դեմքն ու կազմվածքն էր անբարետես, թեև իր տոհմը Պյոտր ցարի տոհմից էլ հին էր համարում, տխեղծ էր ու կարճատես, բայց կկոցած կոպերի տակից մանրիկ աչքերը շատ խելացի արտահայտություն ունեին:

— Խանդակ ու ցցապատնեշ չեն փրկի: Ձենք հասել էստեղ, ցցապատնեշի ետևը նստելու,— թնդաց Պյոտր Ալեքսեևիչը, հեռադիտակը թեքելով հեռուները, դեպի արևմուտք:

Զամբերսը, որ սովորություն ուներ առույգանալու համար առավոտից մի լիքը բաժակ օղի կոնծել, կոկորդը խռխռացրեց.

— Կարելի է հրամայել զինվորներին քնել առանց կոշիկները հանելու, զենքերով... Դատարկ բան է: Եթե արժանահավատ է, որ գեներալ Շլիպենբախը կանգնած է Վեզենբերգում, մի շաբաթից շուտ նրա սիկուրսին սպասել պետք չէ...

— Մի անգամ արդեն էստեղ շվեդական սիկուրսին սպասել եմ... Շնորհակալ եմ, սովորեցինք,— տարօրինակ ձայնով պատասխանեց Պյոտր Ալեքսեևիչը:

Մենշիկովը կարճ ու կոպիտ ծիծաղեց:

Արևմուտքում, դեպի ուր աննհագորեն նայում էր Պյոտր Ալեքսեևիչը, ծովն էր տարածվում, նվազագույն քամի անգամ չէր ծածանում նրա մոխրագույն, լույսի հեղեղի մեջ ննջած թաղանթը: Այնտեղ ծովի

եզրի հատակ գծի վրա տեսողությունը լարելով կարելի էր զանազանել հավաքած առագաստներով մեծաքանակ նավակայմեր: Մեռյալ հանդարտության մեջ արծաթաձեռք ծովակալ դը Պրոի նավատորմն էր կանգնած:

Խախուտ հարթակի բազրիքից կառչած Ապրակսինն ասաց.

— Պարոն բոմբարդիր, ինչպես կարող էի չվախենալ այսքան ուժից՝ հիսուն նավ ու շատ խիզախ ծովակալ... Միշտ որ աստված փրկեց ինձ, անիծածին ծովից փչող քամի չտվեց...

— Ինչքա՞ն բարիք է փչանում, ա՛խ,— Մենշիկովը հորիզոնի վրա կայմերն էր հաշվում:— Նավամբարները վայ թե լիքը լցված են ապրխտած օձաձկով, ուրիշ ձկներով, ռեվելյան ապուխտով... Ի՞նչ ապուխտ ունեն, տեր աստված: Ռեվելի պես ուրիշ ոչ մի տեղ չեն ուտում: Ամեն ինչ հոտելու է էս շոգին, միձեռնանի սատանան ամեն ինչ ջուրն է գցելու... Ապրակսին, Ապրակսին, ծովի ափին էլ նստած էիր, ցամաքի հաստաբամակ: Ինչի՞ նավակներ չունես: Էս հանդարտ եղանակին մի վաշտ գրեենադեր լցնեինք նավակները, դը Պրոն ո՞ւր պիտի ծլկեր...

— Ծովորոր նստեց ավազին,— հանկարծ բղավեց Պյոտր Ալեքսեևիչը:— Աստված վկա, նստեց:— Դեմքը կրակվեց, աչքերը կլորացան:— Տասը եֆիմոկ գրազ եմ գալիս, փոթորիկ է լինելու... Ո՞վ է ուզում գրազ գալ: Ձեր ինչն եմ ասել, ծովայիններ: Դանիլիչ, մի տնքտնքա, շատ հնարավոր է, որ ծովակալի ապուխտից էլ փորձենք:

Եվ ծխամորճը ծոցը խոթելով, արագ-արագ իջավ դիտաշտարակից: Գնդապետ Ռենին, որն ընդառաջ վազեց օգնելու, ասաց, «Մի էսկադրոն ուղարկիր առաջ, մյուսով ինձ հետևիր»: Իրեն գցեց թամբի վրա ու քշեց Նարվայի ուղղությամբ: Նրա բարձրահասակ, մեծականք աշխատ մատակը Շերեմետևի նվերն էր, որն այդ ձին Էրեստֆերի ճակատամարտին էր խլել, այն էլ իբր հենց Շլիպենբախի տակից: Ձին խոշորաքայլ վարգով էր գնում: Պյոտր Ալեքսեևիչն այնքան էլ չէր սիրում ձիավարություն և վարգի ժամանակ վեր-վեր էր թռչում: Այնինչ, Ալեքսանդր Դանիլովիչը բորբոքում էր թթվասերի պես ճերմակ իր հովատակը, որը նույնպես շվեդներից էր խլված, և խայտակն ձին ու ձիավորը կարծես խաղ էին անում, մեկ կողքանց, սեղմ քառատրոփով անցնելով թարմ մարգագետնով, մեկ գավակն իջեցնելով, ձին օդն էր պատռում սև ամբակներով, ծառս լինելով, թափահարվելով, սուրալով: Ալ կարմիր մաճառդ կարճ թիկնոցը՝ գցած մի ուսին, ծածանվում էր Ալեքսանդր Դանիլովիչի մեջքին, ցնցվում էին գլխարկի փետուրները, մետաքսյա լանջագոտու ծայրերը: Թեև շոգ, բայց հիանալի օր էր՝ փոքրիկ անտառակներում, ներկայումս լքված այգիներում թռչուններն էին ծլվլում ու ճռվողում:

Անիկիտա Իվանովիչ Ռեպնինը, որը փոքրուց սովոր էր թաթարավարի քշել ձին՝ հանգիստ, մի քիչ ծուռ նստած, թափահարվում էր փոքրամարմին խնամված ձիուկի բարձր թամբի վրա: Ապրակսինի հրակայտական կեղծամի տակից քրտինք էր թափվում, և ռուս մարդու համար այդ կեղծամը ոչ հարմար էր, ոչ էլ գեղեցիկ: Շատ առջևում թրփուտների մեջ ցրիվ եկած դրագունների էսկադրոնն էր առաջանում: Ետևից շարքերով գալիս էր երկրորդ էսկադրոնը, գեղեցկատես ու խմող գնդապետ Ռենի գլխավորությամբ, որը գեներալ Զամբերսի պես, աշխարհում իր բախտը որոնելով, Պյոտր ցարին էր տվել պատիվն ու սուրը:

Կողքով գնացող Զամբերսին Պյոտր Ալեքսեևիչը ցույց էր տալիս փոսերն ու խանդակները, մոլախոտ ու մացառով պատված բարձր հողաթմբերը, կիսափտած ցցերը, որոնք ամենուր տնկված էին հողի մեջ:

— Այստեղ կործանվեց իմ բանակը,— ասաց նա սովորական:— Այս տեղերում Կառլոս թագավորը մեծ փառք գտավ, իսկ մենք՝ ուժ: Այստեղ մենք սովորեցինք, թե շաղգամը որ ծայրից են ուտում և հավերժ թաղեցինք հինը, որից քիչ էր մնացել վերջնական կործանման հասնեինք...

Նա երեսը դարձրեց Զամբերսից: Շուրջը նայելով, ոչ հեռվում նկատեց փուլ եկած տանիքով լքված մի տնակ: Ձիու սանձը քաշեց: Նրա կլոր դեմքը չարացավ: Մենշիկովը, մոտենալով, ուրախ-ուրախ ասաց.

— Էն տնակն է, մին խեռ: Հիշեցի՞ր:

— Հիշեցի...

Խոժոռվելով, Պյոտր Ալեքսեևիչը խփեց ձիուն ու նորից վերուվարվեց թամբի վրա: Ինչպես կարող էր չհիշել ջախջախմանը նախորդող անքուն այն գիշերը: Այն ժամանակ նստած էր տնակում, նայելով մարմրող մոմերին, թաղիքի վրա պառկած Ալեքսաշկան լուռ լաց էր լինում: Դժվար էր իր մեջ զսպել թե՛ հուսալքությունը, թե՛ խայտառակությունը, թե՛ անուժ չարությունը, դժվար էր ընդունել, որ Կառլոսը վաղը անպայման ջարդելու է իրեն... Դժվար էր անլուր, անտանելի վճիռ կայացնելը՝ նման մի ժամի թողնել բանակը, սահակառք նստել ու սլանալ Նովգորոդ, այնտեղից ամեն ինչ սկսելու համար... Փող գտնել, հաց, երկաթ... Հաջողացնել օտարերկրացի վանատականներին վերջին շապիկը ծախել, գենք գնելու համար: Թնդանոթներ, արկեր ձուլել... Եվ ամենակարևորը՝ մարդիկ, մարդիկ, մարդիկ: Մարդկանց դուրս քաշել դարավոր ճահճից, աչքերի քողը պատռել, կողերը հրհրելով առաջ մղել... Կռիվ տալ, կոտրել, սովորեցնել: Հազարավոր վերստեր սլանալ ձների ու ցեխերի միջով... Քանդել, կառուցել... Եվրոպական քաղաքականության հազար փորձանքներից խույս տալ: Ետ նայելով սարսափել. «Դեռ ի՞նչ վիթխարի զանգված է մնացել շուռ տալու...»:

Առաջապահ դրագունները սոճիների տաք ստվերի տակից դուրս պրծան Նարվայի՝ շրով լի խանդակից ելնող պարսպի դիմաց փռված լայնարձակ մարգագետինը: Վախեցած բնակիչները, վազվզելով ու բղավելով, նախիրն արագ-արագ քշեցին քաղաք: Մարգագետինը դատարկվեց, շղթայով կամուրջը դղրդաց, ծանր-ծանր բարձրացավ ու փակեց դարպասը: Պյոտր Ալեքսեևիչը քայլքով բարձրացավ բլրակը: Նորից բոլորը հանեցին հեռադիտակները և սկսեցին զննել տեղ-տեղ խոտածածկ, քարերի արանքներում ճեղքեր ունեցող բարձր ու ամուր պարիսպները:

Դարպասի աշտարակի վրա կանգնած էին երկաթե սաղավարտներով, կաշեպատ զրահներով շվեդները: Մեկի ձգված ձեռքում դրոշ կար:

Մյուսը՝ բավական բարձրահասակ, մոտեցավ աշտարակի պռնկին, արմունկը հենեց քարե ելուստին և նույնպես նայեց հեռադիտակով, նախ՝ բլրակի վրա կանգնած ձիավորներին, ապա փողն անշարժացրեց ուղիղ Պյոտր Ալեքսեևիչի վրա։

— Ի՞նչ հաղթանդամ մարդիկ են, աշտարակի վրայից էլ որ երևան, կզարգանդես,— գլխարկով հով անելով, ցածրաձայն ասաց Ապրակսինը Անիկիտա Իվանովիչ Ռեպնինին։— Հիմա ինքդ էլ ես տեսնում, թե ինչեր եմ քաշել Նարվայի գետաբերանին մենակ, ինը թնդանոթով, երբ նավատորմը վրա տվեց... Իսկ այդ երկարը, որ հեռադիտակով նայում է, օխ, ի՞նչ անպետք մարդ է... Ձեր գալուց առաջ դաշտում դեմ դիմաց ելանք, ուզում էի վերջը տալ... Բայց ո՞ւր...

— Ո՞վ է աշտարակի վրայի բարձրահասակ մարդը,— խոպոտած հարցրեց Պյոտր Ալեքսեևիչը։

— Տեր արքա, ինքն է որ կա, գեներալ Գոռնը, Նարվայի պարետը...

Ապրակսինն այդ անունը տվեց թե չէ, Ալեքսանդր Դանիլովիչը խթանեց ձին ու մարգագետնով արշավեց դեպի աշտարակը... «Տղեմա՛ր»,— ետևից բղավեց կատաղած Պյոտր Ալեքսեևիչը, բայց Ալեքսաշկան ականջների մեջ սուլող քամուց չլսեց ձայնը։ Համարյա դարպասի մոտ ձին կանգնեցրեց, գլխարկը հանեց և թափահարելով, բղավեց, հնչյունները ձգելով.

— Է՛յ, ով կա աշտարակի վրա... Է՛յ, պարոն պարետ... Քաղաքից ձեզ դուրս կթողնենք պատվով, դրոշներով, զենքով ու երաժշտությամբ... Խաթրով դուրս արի...

Գեներալ Գոռնն իջեցրեց հեռադիտակը, ականջ դնելով, թե իրեն ինչ է բղավում ձիու վրա պար եկող, խորոզի պես պճնված այդ ռուսը։ Դարձավ շվեդներից մեկին, ըստ երևույթին, որ թարգմանեն։ Թերուսական խիստ դեմքը խոժոռվեց, ասես թթու էր կերել, նա կռացավ ելուստի վրայից ու թքեց Մենշիկովի կողմը...

— Ահա՛ քեզ իմ պատասխանը, հիմա՛ր,— բղավեց նա։— Հիմա մի ավելի թունդ բան կստանաս։

Աշտարակի վրա ծաղրաբար քրքջացին շվեդները։ Կրակ ժայթքեց, ապիտակ ծուխ թռավ, և արկը, օդը ճեղքելով, ֆշշոցով անցավ Ալեքսանդր Դանիլովիչի գլխի վրայով։

— Է՛-է-է՛յ,— բլրակի կատարից բարակ ձայնով բղավեց Անիկիտա Իվանովիչ Ռեպնինը,— վատ եք կրակում, շվեդներ, թնդանոթաձիգներին ուղարկեք, սովորեցնենք...

Բլրակի վրա նույնպես միանգամից ծիծաղեցին բոլորը։ Ալեքսանդր Դանիլովիչը, գիտենալով, որ միևնույն է, Պյոտր Ալեքսեևիչի մտրակից պրծում չունի, պտտվում ու պար էր գալիս ձիու վրա, գլխարկն էր թափահարում և ատամները բաց անում, մինչև որ երկրորդ արկը պայթեց շատ մոտ, և ձին, մի կողմ շպրտվելով, հեռացրեց նրան աշտարակից։

Ամրոցի չորսբոլորը զննելուց, պարիսպների վրա առնվազն երեք հարյուր թնդանոթ հաշվելուց հետո, Պյոտր Ալեքսեևիչը ետդարձի

ճանապարհին թեքվեց արժանահիշատակ տնակի կողմը, իջավ ձիուց և հրամայելով բոլորին սպասել, Մենշիկովին կանչեց այն նույն սենյակը, ուր չորս տարի առաջ ամոթ ու խայտառակություն կրեց նա, հանուս ռուսական պետության փրկության։ Այստեղ ժամանակին կարգին վառարան կար, հիմա սևացած աղյուսի շեղջ էր թափված, հատակին կեղտոտ ծղոտ էր լցված, ըստ երևույթին, զինվորներն այստեղ էին քշում այծերին ու ոչխարներին։ Նստեց քանդված լուսամուտի գոգին։ Ալեքսաշկան մեղավոր տեսքով կանգնած էր նրա առաջ։

— Լավ, հիշիր, Դանիլիչ, ասուված է վկա, մի անգամ էլ տեսա քո ոչխար լուպազությունը, կաշիդ մտրակով եմ քերթելու,— ասաց Պյոտր Ալեքսեևիչը։— Ձենդ կտրի, չպատասխանես... Էսօր ինքդ քո բախտը գրաչեցիր... Մտածում էի... ում տամ պաշարող զորքի հրամանատարությունը, քե՞զ, թե ֆելդմարշալ Օգիլվիին։ Ուզում էի էս գործում իմ մարդուն գերապատվություն տալ օտարերկրացու առաջ.. Ինքդ ամեն ինչ փչացրեցիր, արտակից ընկեր, ծաղրածուի պես պար էիր գալիս գեներալ Գոռնի առաջ։ Խայտառակությո՞ւն։ Դեռ չե՞ս կարողանում մոռանալ մոսկովյան շուկաները։ Մի գլուխ ուզում ես կատակներ անել, ոնց որ սեղանի շուրջ։ Ալար Եվրոպա՞ն է քեզ նայում, հիմա՛ր։ Սո՛ւս, չպատասխանես։— Նա ֆսֆսացնում էր, ծխամորճը լցնելով.— Ու երկրորդը՝ էլի նայեցի պարիսպներին ու շվարեցի, Դանիլիչ... Երկրորդ անգամ Նարվայից նահանջել չի կարելի.. Նարվան ամբողջ պատերազմի բանալին է... Եթե Կառլոսը դեռ չի հասկանում դա, ես հասկանում եմ... Վաղը քաղաքը կշրջապատենք ամբողջ զորքով, որ ծիտն անգամ միջից չթռչի... Երկու շաբաթ հետո տեղ կհասնեն պաշարողական թնդանոթները... Իսկ հետո՞։ Պարիսպներն ամուր են, գեներալ Գոռնը՝ համառ, Ցլիպպենբախը կպած է թիկունքներիս... Էստեղ եթե շատ մնանք, Լեհաստանից Կառլոսին էլ կքաշենք-կբերենք ամբողջ զորքով... Քաղաքը պետք է շուտափույթ գրավել, ու մեր արյունն էլ շատ թափել չեմ ուզում... Ի՞նչ կասես, Դանիլիչ։

— Ինչ ասեմ, մի խրամանկ բան մտածել կլինի... Հասարակ գործ է... Բայց որ ֆելդմարշալ Օգիլվին է էստեղ գլխավորը, թող գրքերի միջից մի բան գտնի, թե ոնց անենք... Թե չէ ես ի՞նչ ասեմ... Էլի մի անխելք բան եմ դուրս տալու մուժիկավարի։— Մենշիկովը ոտքերը էր քստքստացնում, մոլ տալիս, ու բարձրացրեց աչքերը՝ Պյոտր Ալեքսեևիչի դեմքը հանգիստ էր ու տրտում. հազվադեպ էր նրան այդպես տեսել... Խղճահարությունը դանակի պես մխրճվեց Ալեքսաշկայի սիրտը։— Միգ խեղ,— շշնջաց նա, հոնքերը ծռմռելով,— միգ խեղ, ի՞նչ եղավ քեզ։ Մինչև իրիկուն ժամանակ տուր, կգամ վրանդ, մի բան կմտածեմ... Ինչ է, չգիտես մերոնց... Հիմա հո չոթ հարյուր թվականը չէ՞... Շատ մի տանջվիր, ասուված կսիրես...

2.

Կտավե ընդարձակ վրանում Նարտովի ջանքերով, այնպես, ինչպես պիտերբուրգյան տնակում, երթալին սեղանի վրա դասավորված էին գծագրատուփերը, գործիքները, թղթեր, ռազմական քարտեզներ։

Բարձրացրած եզրերի տակից վառարանի ջերմությամբ շոգ էր ելնում հողից, և ծղրիդներն էին սուր ու զիլ ճռռում խոտերի մեջ՝ ականջներդ պիտի խցանեիր, որիշ ելք չկար:

Պյոտր Ալեքսեևիչն աշխատում էր կուրծքը բաց, մեկտակ շապկով, հոլանդական ծնկից վեր շալվարով, կոշիկները բոբիկ ոտքերին: Ժամանակ առ ժամանակ ելնում էր սեղանից, և վրանի անկյունում Նարտովը նրա գլխին մի շերեփ աղբյուրի ջուր էր լցնում: Նարվայի արշավանքի այդ օրերի ընթացքում, ինչպես և միշտ, անհետաձգելի բազմաթիվ գործեր էին կուտակվել:

Քարտուղարը՝ Ալեքսեյ Վասիլևիչ Մակարովը, աննկատ մի երիտասարդ, ում վերջերս էին ծառայության վերցրել, սեղանի մոտ, դարսած թղթերի առաջ կանգնած, գործերն էր տալիս թագավորին, շրթունքները շարժելով և ճիշտ այնքան բարձր ասելով, որ խլացնի ծղրիդների ճռռոցը. «Հրաման Ալեքսեյ Սիդորովիչ Սինյավինին՝ Մոսկվայում և որիշ քաղաքներում վճարովի բաղնիքները տնօրինելու մասին»՝ ձախ կողմում հրամանագրի սյունակով թերթը հանգիստ դնում էր թագավորի առաջ: Պյոտր Ալեքսեևիչը, աչքերը տանելով տողերի վրայով, կարդում էր, սագի փետուրը թաթախում թանաքամանի մեջ և խոշոր տառերով, թեք, անընթեռնելի, շտապելուց տառերը բաց թողնելով գրում թերթի աջ եզրին. «Բաղնիքներում ուր որ հնարավոր է, սափրիչանոցներ բացել մարդկանց սափրվելուն ընտելացնելու համար, ինչպես նաև կոշտուկ կտրող կարգին վարպետներ պահել»:

Մակարովը նոր թերթ դրեց նրա առաջ. «Հրաման Պյոտր Վասիլևիչ Կիկինին՝ ամբողջ պետության մեջ ձկնորսությունը և ջրաղացները տնօրինելու մասին...»: Պյոտր Ալեքսեևիչի ձեռքը՝ թանաքի կաթիլը փետուրի ծայրին, կախվեց թղթի վրա.

— Ո՞վ է պատրաստել հրամանը:

— Հրամանն ուղարկված է Մոսկվայից, իշխան կայսրի կողմից, ողորմած թագավոր, ձեր անձնական ստորագրությանը...

— Մոսկվան լիքը ձրիակեր, պատուհանների մոտ նստած, անգործությունից թթու հաղարջն ուտեն ու գործի համար մարդ չգտնեն... Լավ, փորձենք Կիկինին, գողություն արեց, կմտրակեմ, էդպես էլ կգրես իշխան-կայսրին, որ ես կասկածանք ունեմ...

— Պիտերբուրգից սուրհանդակով փոխգնդապետ Ալեքսեյ Բրովկինից զեկուցագիր,— շարունակեց Մակարովը:— Մոսկվայից, Տիխոն Իվանովիչ Ստրեշնևից, ձերդ ողորմածության Պիտերբուրգյան կողմի բանջարանոցի համար վեց թուփ պիոն է բերվել անվնաս, միայն թե այգեպան Լեվոնովը, չհասցնելով տնկել, մեռել է:

— Ինչպե՞ս թե մեռել է,— հարցրեց Պյոտր Ալեքսեևիչը:— Դատարկ բաներ ես ասում...

— Նեապոլում լողանալիս խեղդվել է...

— Է, անպայման խմած է եղել... Կարգին մարդիկ երկար չեն ապրում... շատ լավ այգեպան էր. ափսոս... Գրիր...

Պյոտր Ալեքսեևիչը գնաց վրանի անկյունը, գլուխը ջրով ցողելու, և փնչացնելով ասում էր Մակարովին, որը սեղանի անկյունին դրած թղթի վրա վարժ գրում էր, կանգնած:

— «Ստրեշնևին... Ձեր պիոններն անվնաս ստացել ենք, միայն ափսոս, որ քիչ ես ուղարկել: Բարի եղիր չհապաղել, Իզմայլովից ամեն տեսակ ծաղիկ ուղարկիր, ավելի շատ հուտավետները. մեխակ, անանուխ ու հատիրուկ... Մի այգեպան էլ ուղարկիր, ընտանիքավոր լինի, որ չտխրի... Ասածս սիրուն, գրիր, թե Իզմայլովում ինչպես է Կատերինա Վասիլևիսկայան Անիսիա Տոլստայայի հետ ու մյուսները... Զմոռանաս այդ մասին հանախակի գրել... Նաև բարի եղիր, տեղեկություն տուր դրագունների գնդերում զինվորագրելու վերաբերյալ, մի գունդ հնարավորին չափ շուտափույթ հավաքել՝ լավագույն մարդկանցից և ուղարկել այստեղ...»:

Եր եկավ սեղանի մոտ, կարդաց Մակարովի գրածը, բթի տակ ծիծաղեց ու ստորագրեց:

— Է՞յ, ինչ կա: Հերթով մի տուր, կարևորները տուր...

— Գրիգորի Դոլգոռուկիի նամակն է, Սոկալից, մեր զորքերի բարեհաջող տեղ հասնելու մասին:

— Կարդա՛:— Պյոտր Ալեքսեևիչը փակեց աչքերը, վիզը ձգեց, խոշոր, ճանկռոտված, ուժեղ ձեռքերը հանգչեցին սեղանին: Դոլգոռուկին գրում էր, որ ռուսական զորքերը Սոկալ հասնելուն պես Ավգուստ թագավորը նորից չափազանց խիզախ է դարձել և մարտի դաշտում հանդիպում է որոնում Կարլոս թագավորի հետ, որպեսզի ասածն օգնությամբ գլխավոր ճակատամարտով ռեվանշ վերցնի Կլիսսովի խայտառակության փոխարեն: Այդ խելահեղությանը նրան հատկապես դրդում են ֆավորիտուհիները, հիմա երկուսն ունի, և կենցաղը խիստ անհանգիստ է դարձել: Դմիտրի Միխայլովիչ Գոլիցինին մեծ դժվարությամբ հաջողվել է նրան ետ կանգնեցնել Կարլոսի հետ անհապաղ հանդիպումից (որը գիշատիչ գայլի պես հենց դրան է սպասում) ու ցույց տալ Վարշավայի ճանապարհը, որը Կարլոսը թողել է փոքրաթիվ պաշտպանների հսկողության տակ: Այդ ամենից ինչ կստացվի՝ միայն աստծուն է հայտնի...

Պյոտր Ալեքսեևիչը համբերատար լսեց երկար նամակը, տափակ բեխով վերևի շրթունքը բարձրացավ, մերկացնելով ատամները: Վիզը ցնցելով, մրթմրթաց. «Դաշնակի՞ց»: Մի թերթ թողք քաշեց առաջը, ծոծրակը քորեց և մտքով առաջ անցնելով ձեռքից, սկսեց գրել՝ պատասխան Դոլգոռուկիին.

«...Նաև հիշեցնում եմ ձերդ ողորմածությանը, որ անդադար ետ պահես նորին մեծություն Ավգուստ թագավորին չար ու կործանարար մտադրությունից: Նա շտապում է գլխավոր ճակատամարտ փնտրել, հույսը դրած ճակատագրի, այսինքն երջանկության վրա, բայց սույնը միայն բարձրյալի ձեռքին է... Իսկ մենք՝ մահկանացուներս, խելացի պիտի լինենք մեր աչքի առաջ եղածը տեսնել, ինչ կա երկրիս վրա... Կարճ ասած, գլխավոր ճակատամարտ փնտրելը նրա համար խիստ է վտանգավոր, քանզի մեկ ժամում կարելի է ամեն ինչ կորցնել... Գլխավոր ճակատամարտը եթե ձախողվեց, ինչից աստված ազատի թե՛

նրան, թե՛ մեզ բոլորիս, նորին մեծություն Ավգուստ թագավորը ոչ միայն թշնամու պատնառած մելամաղձոտության մեջ կընկնի, այլև սեփական հայրենիքից զրկված, և կատաղած լեռները խայտառակ կերպով կվռնդեն նրան ու կզրկվի իր գահից.. Ինչի՞ համար անձամբ նետվել նման փոքրանշի մեջ: Իսկ ինչ գրում է ձերդ ուղղությունը ֆավորիտուհիների մասին, ճիշտն ասած այդ տենդը բուժելու միջոց չկա... Մի բան կասեմ՝ աշխատիր այդ տիկինների հետ սիմպատիս և պյանա անել...»:

Ծխախոտի ծխի քուլաներից շնչելու օդ չէր մնացել: Պյոտր Ալեքսեևիչը թանաքը ցայտեցնելով ստորագրեց «Петръ» և վրանից ելավ անտանելի տապի տակ: Այստեղից, բլրակի կատարից, Նարվայի կողմից փոշու ամպ էր երևում, որը ճամբարից շարժվող գումակներն ու զորքերն էին բարձրացրել, ամրոցի առաջ մարտական դիրքեր գրավելու: Պյոտր Ալեքսեևիչը ափը դանդաղ տարավ կրծքի ներսակ մաշկի վրայով. դանդաղ, ուժեղ բաբախում էր սիրտը: Սկսեց նայել այն կողմն, ուր ապակենման անծայրածիր ծովում, այստեղից դժվար զանազանելի, անշարժացել էին ծովակալ դը Պրուի նավերը՝ լի մթերքով, որը կբավականացներ ամբողջ ռուսական բանակին: Երկիրը, երկինքը և ծովը անձուկի, սպասումի մեջ էին, ասես ժամանակը կանգ էր առել: Հանկարծ անհաշիվ սև թռչուններ խառնիխուռն թռան բլրակի վրայով դեպի անտառ: Պյոտր Ալեքսեևիչը վեր պարզեց գլուխը՝ այդպես էր որ կար: Հարավ-արևմուտքից արագորեն թիթեղի պես շիկացած երկինքը էին բարձրանում ամպերի թափանցիկ շերտերը:

— Մակարով,— կանչեց նա:— Տասը եֆիմոկով գրագ կգա՞ս:

Սրաքիթ, հոգնածությունից և անքնությունից մազաղաթանման դարձած, անժպիտ և ուղիղ բեղանով Մակարովն անմիջապես ելավ վրանից ու քսակը հանեց գրպանից.

— Ինչպես կհրամայես, տեր արքա...

Պյոտր Ալեքսեևիչը ձեռքը թափ տվեց նրա վրա:

— Գնա Նարտովին ասա, թող տա նավաստու բանկոնս, զյուդվեստկան ու բոտֆորտներս... Մեկ էլ թող լավ պնդացնեն վրանը, թե չէ կքշի կտանի... Չտեսնված փոթորիկ է լինելու:

Ծովը միշտ հմայում, միշտ քաշում էր նրան: Կաշվե գլխարկը քաշած ծոծրակին, լայն բանկոնով, կես էսկադրոն դրագունների ուղեկցությամբ, արագ վարգով քշում էր դեպի ծովափ: (Ապրակսինի ճամբարը մարդ էին ուղարկել երկու թնդանոթ բերելու և գրենադերներին կանչելու:) Արևը խայթում էր մեռնող կարիճի պես: Փոշու սյուներ էին պտտվում ճանապարհների վրա: Ծովի մակերևույթ շերտ-շերտ քամիներ էին ակոսում: Մթնած հորիզոնի ետևից սև ամպ բարձրացավ: Եվ ծովը վերջապես ջրիմուռների ու ձկնաթեփի հոտ փչեց մարդկանց դեմքերին: Քամին, սաստկանալով, սուլեց, ոռնոց դարձավ...

Զյուդվեստական բռնած, զվարթացած Պյոտր Ալեքսեևիչը ատամները էր բացել: Ձիուց թռավ ավազին, արևը վերջին անգամ շողաց գնդված ամպի տակից, ապակե լույս ցոլաց փրփրադեզ ալիքների վրա: Միանգամից ամեն ինչ մթնեց: Ավելի ու ավելի էին բարձրանում ալիքները, ջրի փոշի մաղելով: Դղրդացող ամպը ծայրից ծայր լուսավորվեց պղտոր բոցկլտումներով, ասես կրակ տվեցին ներսից: Զիգզագ կայծակը կուրացրեց, թաղվեց մոտերքում, ջրի մեջ: Որոտն այնպես թնդաց, որ ափին կանգնած մարդիկ պպզեցին՝ երկինքը փուլ եկավ...

Պյոտր Ալեքսեևիչի կողքին հայտնվեց Մենշիկովը, նույնպես զյուդվեստկայով, գլխարկով:

— Ա՛յ փոթորիկ: Ա՛յ քեզ լյու-լյու-լյու,— բղավեց Պյոտր Ալեքսեևիչը նրան:

— Միգ խեղց, ինչքան հնարամիտ ես է՞...

— Նոր հասկացա՞ր:

— Ավար կունենա՞նք:

— Սպասիր, սպասիր...

Երկար սպասելու հարկ չեղավ: Կայծակի փայլատակումների տակ ոչ հեռվում երևացին ծովակալ դը Պրուի ռազմական և առևտրական նավերը, փոթորիկը նրանց քշում էր ափ, ծանծաղուտի վրա: Կարծես պար էին գալիս նավերը՝ ճոճվում էին անառագաստ կայմերը, ծանծանվում էին առագաստների մնացորդները, վեր ցցվում նեպտուններով ու ծովահարսներով զարդարված բարձր քթերը: Թվում էր, թե ուր որ է ցաքուցրիվ ամբողջ քարավանը մխրճվելու է ափի մեջ:

— Ապրե՞ս, ապրե՞ս,— բղավեց Պյոտր Ալեքսեևիչը:— Տես, թե ի՞նչ է անում: Ա՛յ ծովակալ եմ ասել: Բոմ-կլիվերն է բարձրացնում: Ֆորստենգա-ստակսելն է բարձրացնում, ֆոկա-ստակսելը: Տրիսելնե՞րը: Է՛հ, սատանա: Դանիլի՛չ, սովորիր:

— Օ՞խ, փախչելու է, օ՞խ, փախչելու է,— տնքում էր Մենշիկովը:

Քամի՞ն թեթևակի փոխվեց, թե ծովի հետ գոտեմարտի մեջ ծովակալական արվեստը հաղթեց, դը Պրուի նավերը, փոթորկի առագաստներով մանևրելով, կամաց-կամաց նորից սկսեցին հեռանալ դեպի հորիզոն: Միայն երեք բեռնանավ ծանր-ծանր շարունակում էին քշվել դեպի ավազոտ ափը: Ճոճոալով, առագաստակալները ճոճացնելով, պատռված առագաստները փոփոխելով, երեքն էլ նստեցին ծանծաղուտին, ափից երեք հարյուր քայլի վրա: Հսկայական ալիքները խրվեցին ու շրջեցին նավերը, վրայից անցնելով, սրբեցին տախտակամածի նավակները, տակառները, կոտրեցին կայմերը:

— Կրակեք դրանց վրա, բայց որ չհասնի, կախեցնելու համար,— բղավեց Մենշիկովը թնդանոթաձիգներին:

Թնդանոթները որոտացին, և ռումբերը ջուրը վեր շպրտեցին բեռնանավերից մեկի կողի մոտ: Ի պատասխան, ատրճանակի կրակոցներ լսվեցին այնտեղից: Պյոտր Ալեքսեևիչը հեծավ ձին ու քշեց ծովի մեջ: Նրա ետևից բղավելով վազեցին գրենադերները: Մենշիկովը ստիպված իջավ ձիուց՝ հովատակը համառել էր, և քայլեց պղտոր ալիքների միջով, թքոտելով ու բղավելով.

— Է՞յ, շվեդնե՞ր: Թռեք ջուրը: Հանձնվե՞ք:

Հավանորեն, շվեդներին վախեցրեց ալիքների միջով եկող ձիավորի տեսքը և ածդահա բեխավոր գրենադերները, որոնք աբորդաժի էին գնում ծնկահաս ջրի միջով, հայհոյելով ու սպառնալով ծխացող

նռնակներով: Բեռնանավերի վրայից սկսեցին ջուրը նետվել նավաստիներն ու զինվորները: Նրանք պարզում էին ատրճանակներն ու աբորդաժի սրերը. «Մոսկով, մոսկով, բարեկամ»,— և քայլեցին դեպի ափ, ուր նրանց շրջապատեցին հեծյալ դրագունները: Մենշիկովը գրենադերների հետ բարձրացավ բեռնանավի վրա, փորագրանախշ խելի մոտ գերի վերցրեց նավապետին և տեղնուտեղը, ներողամտորեն թփթփացրեց մեջքին ու դաշույնն առնելով, բղավեց այնտեղից.

— Պարոն բոմբարդիր, նավամբարներից նեխածի հոտ է գալիս, բայց նավապետը հավատացրեց, որ տառեխն ու աղ դրած միսը կուտվի:

3.

Զորքերը շրջապատեցին Նարվան պայտաձև, հենվելով գետին՝ քաղաքից վեր ու վար: Մյուս ափին ճիշտ նույնպես շրջապատված էր Իվան-գորոդը: Խրամատներ էին փորում, ճղապատերով ու խաչասուներով պատնեշվում: Ռուսական ճամբարն աղմկոտ էր, ծխապատ, փոշեպատ: Շվեդները բարձր պարիսպների վրայից նայում էին մոայլված: Դը Պրուի նավատորմը ցաքուցրիվ արած փոթորկից հետո շատ էին չարացել և թնդանոթ էին արձակում նույնիսկ առանձին ձիավորների վրա, որոնք մարգագետնի միջի կարճ ճանապարհով անցնում էին անարկու բաստիոնների մոտով:

Պյոտրի հրամանով բեռնանավերից դատարկված տառեխի և աղ դրած մսի տակառները, շվեդներին ի տես, բերեցին ճամբար: Ցուղերով զարդարված սայլերի ետևում զինվորները գեր ու տկլոր, ջրիմուներով փաթաթված մի տղամարդ էին մաշ ածում, անվայել երգ բղավելով ծովակալ դը Պրուի և գեներալ Գոռնի մասին: Տակառները բաժանեցին վաշտերին ու մարտկոցներին: Սվիններին խրած տառեխը կամ ճարպի կտորը թափ տալով, զինվորները կանչում էին. «Է՞յ, շվեդ, ուտելիքը կա՞»: Այդտեղ շվեդները չդիմացան: Փողերը փչեցին, թմբուկները զարկեցին, մի էսկադրոն զրահակիրներ ելան դարպասից: Ծերտավոր սաղավարտները կոացրած, լայնշեղ սրերը ձիերի ականջների արանքով պարզած, ծանր-ծանր արշավեցին ռուսական խրամատների վրա: Ռուսները ստիպված եղան, մթերքը թողած, ձեռքն ընկած ցցերով, փարտոցներով ու բահերով պաշտպանվել: Տուրուդրմփոց սկսվեց, աղմուկ բարձրացավ: Զրահակիրները տեսան թիկունքից սլացող դրագունների, ցցապատնեշի վրայով մագլցող սարսափազդու գրենադերների և ձիերը ետ դարձրին: Միայն մի քանիսը մնացին մարգագետնում, մեկ էլ անհեծյալ ու վախեցած ձիերն էին երկար ժամանակ վազվզում դաշտում, ետևներից ռուս զինվորներն էին ընկել:

Այսպիսի փոքր արտագրոհներից զատ, շվեդներն առանձին անհանգստություն չցուցաբերեցին: Ինչպես հայտնում էին լեզուները, գեներալ Գոռնն իբր ասել է. «Ես ռուսներից չեմ վախենում, թող իրենց Անպարտելի Գեորգիի օգնությամբ սիրտ անեն գրոհել, ավելի լավ կհյուրասիրեմ, քան յոթ հարյուր թվականին...»: Բավականաչափ հաց, վառոդ և արկեր ուներ, բայց ամենից շատ հույսը Ցիպպենբախի վրա էր, որն օժանդակ ուժերի էր սպասում, ռուսների դեմ անողոք սիկուրսն իրականացնելու համար. կանգնած էր ռեվելյան ճանապարհի վրա, Վեզենբերգ փոքր քաղաքում: Դա հաստատեց Ալեքսանդր Դանիլովիչը, որը անձամբ էր գնացել հետախուզության:

Անգործության էին մատնված նաև ռուսական զորքերը, պաշարողական ամբողջ հրետանին՝ պարսպաջարդ հսկայական թնդանոթներն ու հրասանդերը քաղաքը հրդեհելու համար, դեռևս քարշ էին գալիս Նովգորոդից, անանցանելի ճանապարհներով: Առանց ծանր հրետանու, գրոհի մասին մտածել անգամ չէր կարելի:

Ֆելդմարշալ Բորիս Պետրովիչ Շերեմետևից եկող լուրերն էլ այնքան քաջալերիչ չէին. Ցուրյևը պաշարել էր, խրամատավորվել, պատնեշվել, պարիսպը պսպղեցնելու համար ստորերկրյա անցք էր փորել ու սկսել քաղաքի ռմբակոծումը: «Մեզ խիստ են նեղում շվեդները,— գրել էր Նարվայի ճամբար, Ալեքսանդր Դանիլովիչին,— մինչև հիմա չեմ կարողանում հակառակորդի թնդանոթաձգությունից պաշտպանվել: Կրակում են բազմաթիվ թնդանոթներից համազարկերով, անիծածները միանգամից տասը ռումբ են գցում մարտկոցների վրա, ամենից շատ նշան բռնելով գումակներին: Նմանապես չարչարվում ու չենք կարողանում մի լեզու բռնել քաղաքից, միայն երկու մարդ են փախել մեզ մոտ՝ չուխոներ են, որոնք հաստատ ոչինչ չգիտեն, մի բան են բզբզացնում, որ Ցիպպենբախը իր շուտափույթ սիկուրսով հույս է տալիս քաղաքին...»:

Ցիպպենբախն, իսկապես, մի փուշ էր դարձել, որը հնարավորին չափ շուտ պետք էր քաշել-հանել: Պյոտր Ալեքսեևիչի բոլոր մտքերն այդ ուղղությամբ էին գործում: Այն գիշեր Մենշիկովը չքաղեց, վրան ննջելով ու բոլորին, նույնիսկ Նարտովին դուրս հանելով, պատմեց, թե ինչ խորամանկ խաղ է հնարել գեներալ Գոռնի հույսը Ցիպպենբախից կտրելու: Համար: Պյոտր Ալեքսեևիչը սկզբում նույնիսկ բարկացավ. «Հո խմած ժամանակ չե՞ս մտածել...»: Բայց ծիսամորթը փստացնելով գնաց-եկավ վրանում ու հանկարծ ծիծաղեց.

— Բայց վատ չէր լինի ծերուկին հիմար դրության մեջ գցեինք:

— Միգ խեռ, կգցենք, ատոված վկա:

— Էդ քո «ատոված վկա»-ն դեռ գին չունի... Իսկ եթե բան դուրս չեկա՞վ: Քավոր ախպեր, լուրջ պատասխան կտաս:

— Ինչ արած, կտամ... Առաջին անգամ չէ... Ամբողջ կյանքս պատասխան տալով եմ ապրում:

— Գործի անցիր:

Նույն գիշեր պորուչիկ Պաշկա Յագուժինսկին, ճամփի թասը խմելով սլացավ Պսկով, ուր զինվորական պահեստներն էին: Արտակարգ ձեռներեցությամբ այնտեղից եռաձի կառքերով բերեց այն ամենն, ինչ պետք էր ծրագրված գործի համար: Վաշտային և էսկադրոնային դերձականոցները երկու գիշեր վերակարում ու ձևափոխում էին կաֆտանները, թիկնոցները, սպայական լանջագոտիները, դրոշները, զինվորական եռանկյունի գլխարկների եզրերին սպիտակ երիզներ կպցնում:

Այդ կարճ գիշերների ընթացքում Էսկադրոն Էսկադրոնի ետևից գաղտնի, Ասաֆևի և Գորբովի դրագունական երկու գնդերը, Սեմյոնովսկի և Ինգերմանլանդսկի երկու գնդերը կանաչի փոխարեն դեղին ներկած հարթակավոր թնդանոթներով հեռացան ռեվելյան ճանապարհով ու տեղավորվեցին Տարվիեգի անտառակում: Դերձականոցներում ձևափոխված ամբողջ հագուստն աչքտեղ տարան: Ծվեդները ոչինչ չնկատեցին:

Հունիսի ութի պայծառ առավոտյան Նարվայի պարսպի տակ ռուսական ճամբարում հանկարծ իրարանցում սկսվեց: Տագնապալի զարկեցին թմբուկները, թնդացին հսկայական գոտեր, կոկորդ պատռելով դեսուդեն սլացան սպաները: Քողտիկներից, վրաններից դուրս էին թռչում զինվորները, կոճկելով կափտանների և զանգապանների կոճակները, ետ տանելով եռանկյունի գլխարկների տակից կախված մազերը ու շարվում երկու շարագծով: Թնդանոթաձիգները բղավելով քաշում էին թնդանոթները և շրջում ռեվելյան ճանապարհի ուղղությամբ: Ձիավորները դաշտից ճամբար, սայլերի ետևն էին բշում գումակային երամակները:

Պարսպի վրայից շվեդները զարմացած նայում էին ճամբարում տիրող փութկոտ իրարանցմանը: Դրսի քարե աստիճաններով դարպասի աշտարակը բարձրացավ գլխաբաց գեներալ Գոռնը և հեռադիտակն ուղղեց ռեվելյան ճանապարհին: Այնտեղից թնդանոթի երկու կրակոց լսվեց, մի րոպե անց՝ ևս երկու կրակոց, այդպես վեց անգամ: Այդ ժամանակ շվեդները հասկացան, որ մոտեցող Շլիպենբախի ազդանշաններն են, և Գլորիա բաստիոնից անմիջապես պատասխանեցին թագավորական նշանաբանով, քսանմեկ թնդանոթներից: Քաղաքի բոլոր կիրխեների զանգերը տոնականորեն զողանջեցին:

Պաշարման երկար օրերի ընթացքում խստադեմ գեներալ Գոռնն առաջին անգամ քմծիծաղով կնճռոտեց շրթունքները, տեսնելով, թե ինչպես խրամատներից այն կողմ, երկու շարագիծ կազմող մոսկովյան զորքերի առաջ, սպիտակ ձիու վրա այծավարի ցատկոտում է պճնված Մենշիկովը՝ ամենապիրշը բոլոր ռուսներից: Իր իսկական փորձառու զորավար, սրի շարժումով հրամայում է ետևի շարագծին դեմքով դառնալ դեպի ամբոցը, և զինվորները վագրով, նախրի պես վազում ու տեղ են գրավում խրամատներում, ցցապատի ետևում: Անհա նա ծառս արեց ձին ու սլացավ դեմքով ռեվելյան ճանապարհի կողմը կանգնած զինվորների առջևի գծի երկայնքով: Ամեն ինչ հասկանալի էր տարիների և փառապանծ կռիվների փորձություններով իմաստնացած գեներալ Գոռնի համար, կարմիր թիկնոցով ու ջայլամի փետուրներով պճնված այդ խորոզը հիմա անուղղելի հիմարություն է անելու. իր հետևակի ցանցառ, ձգված շարքն ընդառաջ է տանելու Շլիպենբախի երկաթյա գրահակիրներին, որը ռումբեր կտեղա նրա գլխին, կը-թրատի, կորորի ու կոչնչացնի: Գեներալ Գոռնը խոր ներշնչեց մազապատ ռունգերով: Տասներկու հեծյալ Էսկադրոն և հետևակ չորս գումարտակ կանգնած էին փակ դարպասների ետևում, որ Շլիպենբախի հայտնվելուն պես թիկունքից նետվեն ռուսների վրա:

Մենշիկովը, ասես շտապելով մահին ընդառաջ, միանգամայն անհարկի գլխարկը գլխից պոկեց ու թափահարելով ստիպեց պար եկող իր ձիու ետևից թեթև վագրով առաջացող գումարտակներին «ուռա» բղավել: Գոռոցը հասավ Նարվայի պարիսպներին, և նորից քթի տակ ծիծաղեց ծերուկ Գոռնը: Սոճուտից, դեպի ուր շարժվում էին Մենշիկովի գումարտակները, սկսեցին ետ փախչել ռուս ձիավորները, գլուխ ազատելով հրացանազարկերից: Եվ վերջապես ծառերի ետևից, բոլոր կողմերից, գեղեցիկ և ուս-ուսի, ինչպես շքերթի ժամանակ, սվիններ հագցրած հրացաններն առաջ պարզած, երևացին Շլիպենբախի գվարդիական վաշտերը: Երկրորդ շարքն ընթացքից շարահերթ կրակում էր առաջին շարքի գլուխների վրայից, երրորդ շարքը հրացաններն էր լցնում ու տալիս կրակողներին: Ծածանվում էին բարձր բռնած թագավորական դեղին դրոշները: Ծերուկ Գոռնը մի պահ իջեցրեց հեռադիտակը, կողապայուսակից հանեց կտավե թաշկինակը, թափ տվեց ու աչքերը սրբեց: «Պատերազմի աստվածներ»՝ մրմնջաց նա...

Գլխարկը բռնած Մենշիկովը սլացավ ճակատի գծով ու կանգնեցրեց իր գումարտակները: Թևերից արագ բերում էին վեցալոծ թնդանոթները և երկլոծ լցարկղները: Ռուս հրետաձիգներն արագաշարժ էին, ինչ-որ բան սովորել էին այս տարիների ընթացքում: Ցուրաքանչյուր թևում ութական, լավ փայլեցրած թնդանոթների վողերն արագ շրջեցին շվեդների վրա (լծաքարշերն անջատեցին, ձիերը հեռացան) և միանգամից սպիտակ, թանձր ծուխ ժայթքեց փողերից՝ լավորակ վառոդի նշան էր դա: Քսան քայլ էլ չէին առաջացել շվեդները, թնդանոթները նորից կրակեցին: Նման արագազարկությունը զարմանալի էր: Ծվեդները կանգ առան: Սա ի՞նչ բան էր: Թնդանոթաձգությունից կարկամելը Շլիպենբախին նման չէր: Կամ սպասում է գրոհի համար առաջ թողնել զինակիրներին, կամ՝ իր հրետանուն է սպասում: Գոռնը հեռադիտակով փնտրում էր Շլիպենբախին, բայց մարտի դաշտն ավելի ու ավելի պարուրող ծուխը խանգարում էր: Նրան նույնիսկ թվաց, թե շվեդները կարկամեցին հրետանումբերի առաջ... Բայց սպասում էր... Վերջապե՞ս. անտառից երևացին դեղին հարթակավոր շվեդական թնդանոթները և հուժկու պատասխան տվեցին... Այդ ժամանակ՝ գեներալը հստակ տեսավ. Մենշիկովի շարքերը խառնվեցին... ժամանա՞կն է... Գոռնը կնճռոտ դեմքը թեքեց հեռադիտակից և դեղին ատամները մերկացրած այնպես, որ լսեցին երևացին, ասաց իր օգնական, գնդապետ Մարկվարտին.

— Հրամայում եմ. դարպասները բացել և գրոհել ռուսների աջ թևը:

Ճոնչացին կամուրջները, չորս դարպասից միանգամից դուրս եկան գրահակիր էսկադրոնները, նրանց ետևից հետևակը՝ վագրով: Գնդապետ Մարկվարտը Նարվայի սեպաձև շարված կայազորն առաջնորդում էր այնպես, որ ռուսների ցցապատնեշն ու խաչապատները ճեղքելով, թիկունքից հարվածի Մենշիկովի թևին, սեղմի Շլիպենբախին և ճզմի երկաթյա աքցանների մեջ:

Այն, ինչ տեսավ Գոռնը հեռադիտակով, սկզբում ուրախացրեց, հետո շփոթեցրեց: Գնդապետ Մարկվարտի ջոկատը արագ, առանց մեծ կորուստների, ոտատակ տալով ռուսական արգելաշերտը, անցավ ցցապատնեշն ու հայտնվեց խրամատների մյուս կողմում: Նրանց ետևից դարպասներից ելան Նարվայի բնակիչները՝ հետիոտն ու սայլերով, ռուսական ճամբարը թալանելու: Մենշիկովի՝ հրացաններից անկանոն կրակող գումարտակներն անսպասելի և քիչ հասկանալի մի տեղաշարժ սկսեցին. աջ թևը, որը գրոհում էր Մարկվարտը, ամենայն շտապողականությամբ սկսեց նահանջել դեպի իր ցցապատնեշները, իսկ հեռավոր, ձախ թևը նույն շտապողականությամբ հետևեց դեպի Շլիպենբախի շարքերը, կարծես մտադիր գերի հանձնվելու: Երկու կողմերի թնդանոթները հանկարծակի լռեցին: Փայլուն գրոհ ձեռնարկած Մարկվարտը հայտնվեց արձակ դաշտում, Մենշիկովի և Շլիպենբախի զորքերի արանքում: Զրահը շողացնող էսկադրոնները զբաղեցին ձիերին, կիսաղեղ կազմեցին ու կանգ առան անվճռական: Կանգ առավ նաև վազեվազ հասած հետևակը...

— Ոչի՞նչ չեմ հասկանում: Ի՞նչ պատահեց, գրողը տանի այդ Մարկվարտին,— բղավեց Գոռնը: Կողքը կանգնած համհարզ Բիստրեմը պատասխանեց.

— Ես նույնպես քիչ բան եմ հասկանում, պարոն գեներալ:

Հետո, հեռադիտակը փութով այս ու այն կողմ շարժելով, Գոռնը տեսավ Մենշիկովին՝ այդ խորոզը ամբողջ թափով պլանում էր շվեդների կողմը: Ինչի՞ համար: Գերի՞ հանձնվելու: Ճանաչելով նրան, երկու զրահակիրների հետ, ոուսի ճամփան կտրելու ետևվեց Մարկվարտը: Բայց Մենշիկովն առաջ անցավ և խոտածածկ թմբի վրա ձիուց ցած թռավ մի խումբ սպաների մոտ. թիկնոցներից ու ծառս ելած առյուծով դեղին դրոշից դատելով, Շլիպենբախի շտաբն էր դա... Բայց ո՞ւր է ինքը՝ Շլիպենբախը: Հեռադիտակի մի շարժումով, ու Գոռնը տեսավ, թե ինչպես Մենշիկովին հետապնդող Մարկվարտը, սպաների նույն խմբի մոտ ձեռքը թափ տվեց տարօրինակ մի ձևով, ասես տեսիլքից պաշտպանվելով և փորձեց ետ դառնալ, բայց հասան ու նրան իջեցրին թմբի վրայից... Խոշոր, կախականջ ձիով բլրակն ի վեր բարձրանում էր մի ձիավոր՝ դրոշը թեքեցին նրա առաջ: Դա կարող էր միայն Շլիպենբախը լինել... Արցունքի կաթիլը պղտորեց ծերունի Գոռնի աչքը, բարկացած սրբեց և պղնձե կլորակը խրեց աչքի մեջ: Կախականջ ձին նստած հեծյալը նման չէր Շլիպենբախին... Ավելի շատ նման էր...

— Պարոն գեներալ, դավաճանությո՞ւն,— շշնջաց համհարզ Բիստրեմը:

— Առանց ձեզ էլ տեսնում եմ, որ Պյոտր ցարն է, շվեդական մտադիր հագած... Քթիցս բռնած, ինձ մաս ածեցին, հասկանում եմ առանց ձեր օգնության... Հրամայեք ինձ տան զրահս և սուրս..— Գեներալ Գոռնն այլևս անօգուտ հեռադիտակը թողեց և ջահելի պես ցած վազեց դարպասի աշտարակի թեք աստիճաններով:

Այնտեղ, ծպտյալ մարտի դաշտում ծայր էր առել այն, ինչ և պիտի լիներ, երբ զորավարի քթից բռնած, մաս են ածում: Շվեդական համազգեստ հագած սեմյոնովցիներն ու ինգերմանլանդացիները, Ասաֆևի և Գորբովի դրագունները, որ մինչ այդ անտառում թաքնված էին, մյուս կողմից Մենշիկովի գումարտակները ամբողջ կատաղությամբ երկու կողմից հարձակվեցին տարաբախտ Մարկվարտի շվեդների վրա: Վերջինս, սուրը հանձնելով Պյոտր ցարին, սաղավարտը նետելով խոտերի մեջ, կանգնած էր թմբի վրա, ոուս սպաների կողքին, ամոթահար, հուսալքված ու գլխահակ, որ չտեսնի, թե ինչպես է կործանվում իր փայլուն ջոկատը՝ կայազորի առնվազն մեկ երրորդը:

Հետևակը պաշտպանող նրա զրահակիրները որոշ ժամանակ նահանջում էին, շարքը չխախտելով, դեմ կանգնելով կարճատև գրոհներով: Բայց երբ թիկունքից, կեչու անտառակից դրագունների դարանակալած էսկադրոններով գնդապետ Ռենը հարձակվեց, սկսվեց կոտորածը: Կրակոցները դադարեցին: Միայն ոուսների մոլեգնած բղավոցներն էին լսվում, որոնք թրատում էին ընթացքից, կոտորվող շվեդների խոպոտ ճիչերը, գրահ ու սաղավարտի խփվող սրերի շաչյունը: Ծառս էին լինում միմյանց կրծոտող ձիերը: Ընկավ թագավորական դրոշը: Առանձին հեծյալներ դուրս էին պրծնում իրարանցման միջից, կուրացածի պես արշավում դաշտում, զարկվում, ձեռքերը թափահարելով ընկնում էին... Ռուսական ամբողջ զորքը խրամատներից ելել էր, և ինչպես բարեկենդանի ժամանակ, երբ ժողովուրդը խոնվում է նայելու՝ արջ բռնելուն, զինվորները հայ-հայ էին անում, պար գալիս, եռանկյունի գլխարկները վեր-վեր նետելով:

Շվեդական ջոկատի մի փոքր մասին հաջողվեց Նարվա ընկնել: Այն ամենն, ինչ կարող էր անել գեներալ Գոռնը, դարպասները պաշտպանելն էր, որ ոուսները մի թափով քաղաք չներխուժեն: Թալանի ելած բնակիչները սայլերով դեսուդեն էին ընկել խանդակի առաջ: Զինվորներն անցնում էին ցցատանեշները և, պարիսպների վրայից հրացանազարկ լինելուց չվախենալով, քիչ նարվացիների չբռնեցին՝ սայլերով ու ձիերով, բերեցին ճամբար պարոնայք սպաներին ծախելու համար:

Երեկոյան Մենշիկովի մեծ վրանում ուրախ ընթրիք էր: Խմում էին ծովակալ դր Պրուի բոցեղեն ռոմը, ուտում էին ռեվելյան ապուխտոր և ապխտած տափակաձուկ՝ բչերն էին նման բան տեսել: Զուկը մի քիչ հոտած էր, բայց լավն էր: Ալեքսանդր Դանիլովիչի ամբողջ մեջքը կապտացրել էին, նրա խորամանկության պատվին խմելով: «Իմաստուն Գոռնի քթից բռնած, լավ մաս ածեցիր: Իսկապես քո օրն է էսօր»,— ուսերը ծիծաղից ցնցելով, թնդում էր սաստիկ հարբած Պյոտր Ալեքսեևիչը, և բռունցքով, մուրճի նման հասցնում թիակների արանքին: «Գրազ եմ գալիս, որ կարող էիր Ոդիսևսին էլ խորամանկել,— բղավում էր Զամբերսը և նույնպես խփում գեներալ-նահանգապետի մեջքին:— Ռուսներից ավելի խորամանկ մարդ պատկերացնել չի լինի»:

Միայնաց ընդհատելով, հյուրերը մի քանի անգամ սկսեցին ուղերձ հորինել զեներալ Գոռնին, «Մեծ Քթի» շքանշան շնորհելու մասին: Սկիզբը հարմար էր ստացվում. «Քեզ՝ Նարվայում տիտիկ արած, շալվարը թրջած ձեր տխմարիդ, աղյուծավարի մոնչացող կոտած կատվիդ...»: Ապա հարբած գոռգոռոցի միջից այնպիսի թունդ խոսքեր էին բղավում, որ քարտուղար Մակարովը չգիտեր նույնիսկ, թե ինչպես գրի թղթի վրա:

Անիկիտա Իվանովիչ Ռեպնինը, այծի ձայնով հարկը եղածին չափ ծիծաղելուց հետո, ասաց.

— Պյոտր Ալեքսեևիչ, իսկ արժե՞ խայտառակել ծերունուն: Գործն էլ դեռ չենք վերջացրել...

Բռունցքներ խփվեցին սեղանին, գոռացին նրա վրա: Պյոտր Ալեքսեևիչը կիսատ նամակը վերցրեց Մակարովի ձեռքից, ճմրթեց, գըրպանը խոթեց.

— Ծիծաղեցինք, պրծանք...

Նա ոտքի ելավ, ճոճվեց, Մակարովի ուսը բռնեց, կլոր երեսի հարթված դիմագծերը լարումով պնդացան, երկար վիզը շարժելով, ինչպես միշտ, տիրապետեց իրեն.

— Խնջույքը վերջացրեք:

Ռ դուրս եկավ վրանից: Լուսանում էր: Առատ ցողից խոտը ճերմակած էր թվում, ճամբարի ծուխը տարածվել էր գետնի վրա: Պյոտր Ալեքսեևիչը խոր ներշնչեց վաղորդյան թարմ օդը.

— Է՛, բարի ճանապարհ... Ժամանա՛կն է:— Եվ իսկույն ետևում կանգնած զինվորների խմբից նրան մոտեցան Անիկիտա Իվանովիչ Ռեպնինը և գնդապետ Ռենը:— Մի անգամ էլ եմ կրկնում երկուսիդ. ինձ ճոխ զեկույցներ պետք չեն հաղթանակների մասին: Ձեմ սպասում: Ծանր գործ է առջևում: Հարկավոր է այնպես ջարդել նրան, որ էլ չկարողանա ուժ հավաքել: Այսպիսի գործի համար ձեր սրտերը պիտի չարանան... Գնացեք...

Անիկիտա Իվանովիչ Ռեպնինը և գնդապետ Ռենը, խոր գլուխ տալով, ծնկահաս, փարթամ խոտերի միջով գնացին դեպի մթին անտառը, ուր նորից իրենց զգեստները հագած, ոգևորված էին սպասում դրագունների գնդերն ու սոլդերին նստած հետևակը՝ երկու ծպտյալ մարտի բոլոր մասնակիցները: Այսօր հեշտ գործ չէ սպասվում նրանց. Վեզենբերգի տակ պիտի շրջապատեին ու ոչնչացնեին Շլիպենբախի կորպուսը:

4.

— Եվ այսպես, պարոնայք, նախկին թագավոր Ավգուստը, ում մենք ոչնչության դուռը հասած էինք համարում, օգնություն է ստացել ռուսներից և արագ երթով շարժվում է դեպի Վարշավա,— ասաց երիտասարդ թագավոր Ստանիսլավ Լեշչինսկին, բացելով ռազմական խորհուրդը: Թագավորը հոգնած էր իրեն պարտադրված պետական գործերից, նրա նուրբ ու գոռոզ, չար դեմքը կապտության աստիճան գունատ էր, արտևանունքներն իջեցրած: Աչքերը չէր բարձրացնում, որովհետև խորշանք էր զգում և ձանձրացել էր պալատականներից, փքված դեմքերից, պատերազմի, դրամի, փոխառությունների մասին անվերջ խոսակցություններից... Նվազ ձեռքով բաշում էր տերևորդյան: Նա լեհական զգեստ էր հագել, ինչ տանել չէր կարողանում. բայց այն օրից ի վեր, երբ Վարշավայում կանգնեց շվեդական կայազորը գնդապետ Արվեդ Գոռնի՝ Նարվայի հերոսի ազգականի գլխավորությամբ, լեհ մագնատներն ու երևելի պաները իրենց կեղծամները հագցրեցին կաղապարներին, ֆրանսիական կափտանների վրա ծռախոտ ցանեցին ու պահեցին, և շրջում էին թևքածալ ժուպաններով, կղբենու գլխարկներով, զնգզնգոն խթաններ ունեցող փափուկ սապոգներով և սուսերի փոխարեն պապական ծանր ֆրերն էին կապում:

Վարշավայում ուրախ ու անհոգ էին ապրում, Արվեդ Գոռնի հուսալի պաշտպանությամբ, նրան ներելով բրտությունը, երբ նա սեյմին ստիպեց թագավոր ընտրել այդ սակավ երևելի, բայց նրբակիրթ դատարակություն ստացած ջահելին: Շվեդացի սպաները կոպիտ էին ու գոռոզամիտ, սակայն գինի և մեղրախմիչք ըմպելիս լեհերին չէին դիմանում, իսկ պարերի մեջ ըստ ամենայնի գիջում էին մազուրկա պարողներին՝ պերճաշուք Վիշնևեցկուն կամ Պոտոցկուն: Ցավը մեկն էր՝ հետզհետե ավելի քիչ փող էր գալիս պատերազմից քայքայված կալվածքներից, սակայն այդ հանգամանքը նույնպես անցողիկ էր թվում. Կառլոսը հավերժորեն տերուտնօրինություն չէր անելու Լեհաստանում, երբևիցե այստեղից պիտի հեռանար դեպի արևելք՝ Պյոտր ցարի հետ իր հաշիվները մաքրելու:

Եվ ահա որտեղից որտեղ, Վարշավայի վրա անսպասելի սև ամպեր կիտվեցին: Ավգուստն առանց կովի վերցրեց հարուստ Լյուբլինը և արընթաց, Վիսլայի ձախ ափով դեպի Վարշավա էր շարժվում, լեհական հեծյալ աղմկաշատ զորքի հետ: Միաչքանի հրեշ, ատամանն Դանիլա Ապոստոլը, դնեպրյան կազակներով, անցել էր Վիսլայի աջ ափը և մոտենում էր Վարշավայի արվարձան Պրագային, իսկ արևմուտքից քաղաքի վրա էր գալիս ֆելդմարշալ Շուլենբուրգի սաքսոնյան կորպուսը, որը հնարամիտ մանևրով խաբել էր իրեն ուրիշ ճանապարհի վրա փնտրող Կառլոս թագավորին:

— Վկա է աստված և սուրբ աստվածածինը, ես չէի ձգտում լեհական թագը գլխիս դնել, սեյմի կամքն էր դա,— առանց աչքերը բարձրացնելու, արհամարհալի դանդաղ խոսում էր Ստանիսլավը: Գորգի վրա, ոտքերի մոտ մոռթը թաթերին դրած, գերագնվացեղ ճերմակ մի էգ քերծե էր պառկած:— Նեղություններից ու անախորժություններից զատ, առայժմ ոչինչ չեմ զգացել իմ բարձր աստիճանի վրա: Ես պատրաստ եմ գահը ցած դնել, եթե սեյմը, զգուշության և ողջախոհության նկատառումներով, ցանկանա դա, Վարշավան Ավգուստի չարացածության գոնը չդարձնելու համար: Անկասկած, նա բազում հիմքեր ունի իր լարդը փչացնելու: Նա պատվասեր է ու համառ: Նրա դաշնակիցը՝ Պյոտր ցարը, ավելի համառ է ու խորամանկ,

նրանք կոկելու են, մինչև հասնեն իրենց կամեցածին, մինչև բոլորս վերջնականապես չկործանվենք:— Սեկե սապոգով ոտքը դրեց շան մեջքին, սա մանուշակագույն աչքերը հառեց թագավորի վրա:— Իրավ, ես ոչինչ չեմ պնդում, հանուլթով կգնամ Իտալիա... Զբաղումները Բոլոնիայի համալսարանում սքանչացնում են ինձ...

Ծալովի աթոռի վրա թագավորի դիմաց նստած, շառագունած, կատաղած ու սառն աչքերով, հնամաշ ու կանաչ, պիրկ գրկած կափտանով գնդապետ Արվեդ Գոռնը փնթփնթաց.

— Սա ռազմական խորհուրդ չէ, այլ խայտառակ կապիտուլյացիա...

Ստանիսլավ թագավորը դանդաղ ծռմռեց բերանը: Կարդինալ պրիմաս Ռաձինսկին՝ Ավգուստի ոխերիմ թշնամին, չլսելով շվեդի անվայել դիտողությունը, խոսեց այն շողոմ, սթափ ու հրամայական ձայնով, որը ջանադրաբար սովորեցնում են հիզվիտական ճեմարաններում, Իգնատի Լոյոլայի ժամանակներից: Նա ասաց.

— Պայքարից խուսափելու ձերդ արքայական մեծության ցանկությունը բոպեական թուլություն է ընդամենը... Ձեր հոգու ծաղիկները թոշնել են խստաշունչ քամուց՝ մենք զարմանում ենք... Սակայն կաթոլիկ արքայի թագը, ի տարբերություն գլխարկի, ընկնում է միմիայն գլխի հետ: Ամենայն քաջարիությամբ խոսենք բռնապետ և եկեղեցու թշնամի մեկին դիմադրելու մասին, ինչպիսին սաքսոնյան կուրֆյուրստ Ավգուստն է, վատահամբավ կաթոլիկը: Մենք կլսենք, թե ինչ կասի գնդապետ Գոռնը:

Կարդինալ պրիմասը ծիրանագույն, մոմած հատակի վրա ապտացոլվող շքեղ պարեգոտի մետաքսը խշխշացնելով, ծանր-ծանր թեքվեց շվեդի կողմը և ձեռքով արեց այնքան նրբակիրթ, կարծես ամենահամեստ անուշեղենն էր առաջարկում նրան: Գնդապետ Գոռնը հրեց աթոռակը, ձիթած բոտֆորտներով ամրակազմ ոտքերը չռեց (մաշված սերթուկ և լայնգիտք ու կոպիտ բոտֆորտ, բոլոր շվեդների պես, հագնում էր Կառլոս թագավորին նմանեցնելով), կոկորդը մաքրելով չոր հազաց.

— Ես կրկնում եմ. ռազմական խորհուրդը ռազմական խորհուրդ պիտի լինի, ոչ թե խոսք ու գրույց ծաղիկների մասին: Մինչև վերջին զինվորը պաշտպանելու եմ Վարշավան՝ դա է իմ թագավորի կամքը: Ես հրամայել եմ իմ հրացանակիրներին՝ մութն ընկնելուց հետո կրակել դարպասներից դուրս եկող յուրաքանչյուր մարդու վրա: Ոչ մի վախկոտի դուրս չեմ թողնի Վարշավայից, վախկոտներն էլ պիտի կուլեն իմ ձեռքի տակ: Ինձ համար ծիծաղելի է, Ավգուստից քիչ զորք չունենք մենք: Այդ մասին ինձնից լավ գիտե մեծն գետման իշխան Լյուբոմիրսկին... Ինձ համար ծիծաղելի է՝ Ավգուստը շրջապատո՞ւմ է մեզ: Դա նշանակում է սոսկ, որ նա մեզ հնարավորություն է տալիս ջախջախել իրեն մաս առ մաս. հարավում՝ նրա հարբած շլյախտայական հեծելազորը, Վարշավայից արևելք ատաման Դանիլա Ապոստոլին, որի կազակները թեթև են զինված ու չեն դիմանա զրահակիր հուսարների հարվածին... Ֆելդմարշալ Շուլենբուրգն իր

գերեզմանը կգտնի, Վարշավային չհասած՝ նրան, անկասկած, հետապնդում է իմ թագավորը: Միակ նշանակալի վտանգը իշխան Գոլիցինի ռուսական տասնմեկ գնդերն են, բայց մինչ նրանք ոտքով քարշ են գալիս Բրեստից, մենք կոչնչացնենք Ավգուստին, և ռուսները ստիպված կլինեն կամ նահանջել, կամ մեռնել: Ես առաջարկում եմ իշխան Լյուբոմիրսկուն հենց այս գիշեր Վարշավայում հավաքել հեծյալ բոլոր գնդերը: Ձերդ մեծությանը ես առաջարկում եմ հիմա, քանի դեռ չեն վերջացել այս մոմերը, պոսպոլիտյան ռուշենիե*) հայտարարել... Թող սատանան ինձ տանի, եթե Ավգուստի պոչի բոլոր փետուրները չքաշենք...

Շեկ բեխերը շարժելով, Արվեդ Գոռնը ծիծաղեց ու նստեց: Հիմա նույնիսկ թագավորը բարձրացրեց աչքերը մեծն գետման Լյուբոմիրսկու վրա, որը լեհական և լիտվական բոլոր զորքերի հրամանատարը էր: Խոսակցության ամբողջ ընթացքում նա նստած էր թագավորի ձախ թևի տակ, ոսկեզօծ բազկաթոռի մեջ, ճակատն ափերին հենած այնպես, որ միայն խուզած, մազափնջով կլոր գլուխն էր երևում, որի վրա ասես տաքդեղ ցանած լինեին, մեկ էլ կախ ընկած, ցանցառ ու երկար բեխերը:

Երբ լռություն տիրեց, նա կարծես արթնացավ, տնքաց, ուղղվեց՝ հաղթանդամ էր, պնդոսկր, թիկնեղ: Ձեռքը դանդաղ դրեց գործած ու թանկարժեք գոտու տակ խրած ադամանդակուռ մականի գլխին: Կոր քթով, ծաղկատար ու փոս ընկած այտերով, այտոսկրերի վրա պրկված բորբոքված մաշկով նրա դեմքն այնքան մարդախույս էր, հպարտ ու մռայլ, որ թագավորի կոպերը թրթռացին և կռանալով նա սկսեց շոլել շանը: Մեծն գետմանը դանդաղ ոտքի ելավ: Նրա համար հասել էր հատուցման բաղձալի ժամը:

Լեհաստանի ամենաերևելի մագնատն էր, իր ընդարձակ տիրույթներում շատ ավելի տիրակալ, քան ցանկացած թագավորը: Երբ նա ուղևորվում էր սեյմ կամ Ձենստոխով՝ ուխտագնացության, նրա կառքի առջևից ու ետևից հինգ հազարից ոչ պակաս շլյախտիչներ էին գնում ձիերով, կառքերով ու սայլերով, հագնված մեկը մյուսի պես՝ բաց կապույտ թևքածալերով մորեգույն ժուպանների: Պոսպոլիտյան ռուշենիեների ժամանակ՝ ապստամբած Ուկրաինայի կամ թաթարների դեմ ելնելուց, նա իր հուսարական երեք գնդերն էր հանում, պողպատյա զրահներով ու մեջքաթևերով: Ծնունդով լինելով Պյաստ, լեհական գահի առաջին հավակնորդն էր համարում իրեն, Ավգուստին տապալելուց հետո: Այն ժամանակ՝ անցյալ տարի, սեյմի պատվիրակների երկու երրորդն արդեն, սրերը գետնին խփելով, բղավում էին. «Լյուբոմիրսկո՞ւն ենք ուզում»: Սակայն դա չուզեց Կառլոս թագավորը, որին խամաճիկ էր պետք: Գնդապետ Գոռնը փոթորկվող սեյմը շրջապատեց իր հրացանակիրներով, որոնք վառեցին պատրույգներն ու հանդիսավորությունն անարգեցին թմբուկների զարկով: Կրունկներով ասես մեխ խփելով հատակին, Գոռնը մոտեցավ թա-

*) Պատերազմի դեպքում լեհ թագավորի կողմից ժողովրդական աշխարհազոր նավախելը՝ սեյմի համաձայնությամբ (Ծան. Ա. Ն. Տոլստոյի):

փուր գահատեղին ու բղավեց. «Առաջարկում եմ Ստանիսլավ Լեշչինսկուն»։

Մեծն գետմանը ոխը պահել էր։ Ոչ ոք երբեք չէր համարձակվել նրա պատվին դիպչել։ Դա արեց Կառլոս թագավորը, ում վարելահողերն ու ոսկյա ամանեղենը հավանորեն քիչ էին Լյուբոմիրսկու ունեցածից։ Վայրենաձայաց ու մթնած, մականի խնձորակը եղունգներով բշտորելով, խոսեց մոլեգնած, օձի պես բաղաձայները թշշացնելով.

— Ես վատ լսեցի կամ ինձ թվաց. ինձ՝ մեծն գետմանիս, ինձ՝ իշխան Լյուբոմիրսկուս, համարձակվեց հրամայել կայազորի պարետը։ Կատա՞կ էր։ Թե՞՝ լկտիություն։ (Թագավորը բարձրացրեց ձեռքը և տերողորմյան, կարդինալն առաջ հակվեց աթոռի վրա, ցնցելով իր բվեճի, լխկած դեմքը, բայց գետմանը միայն ձայնը բարձրացրեց սպառնագին։) Այստեղ սպասում են իմ խորհրդին։ Ես լսեցի ձեզ, պարոնայք, ես ակամա դրեցի իմ խղճին... Ահա՛ իմ պատասխանը։ Մեր զորքերը հուսալի չեն։ Նրանց ստիպելու համար, որ իրենց և եղբայրական արյունը հեղեն, հարկ է, որ յուրաքանչյուր շլյախտիչի սիրտը ցնծա հրճվանքից, իսկ գլուխը պտտվի գայրույթից... Մի՞թե Ստանիսլավ թագավորը մարտական նման մի կոչ գիտի։ Ես չգիտեմ... «Հանուն աստծո, հառա՞ջ, հանուն Լեշչինսկիների փառքի...»։ Չեն գնա։ «Հանուն աստծո, հառա՞ջ, հանուն շվեդաց արքայի փառքի...»։ Սրերը կգցեն։ Զորքերն առաջնորդել ես չե՛մ կարող։ Ես այլևս գետման չեմ։

Գետմանի այլայլված դեմքը շառագունեց մինչև թավ հոնքերը։ Անզոր զսպել իրեն, գոտու տակից հանեց մականը և շպրտեց լակոտ-թագավորի ոտքերի տակ։ Սպիտակ քերծեն աղիողորմ վնգստաց...

— Դավաճանությո՞ւն է,— կատաղած բղավեց Գոռնը։

5.

«Բերսերկիեր» բառը (ասել է թե կատաղությունից դիվահար) խորհրդանշանից է գալիս, հյուսիսարևնակ մարդկանց՝ ճանճասպան սկզով արքենալու սովորությունից։ Հետագայում, միջին դարերում, նորմանները բերսերկիեր էին կոչում կռվի ժամանակ կատաղությունից դիվոտողներին, որոնք կռվում էին առանց օդագրահի, վահանի և սաղավարտի, միայն կտավե շապիկներով և այնքան սարսափելի էին, որ ըստ ավանդության, օրինակ, կոնունգ Կանուտի որդիները՝ տասներկու բերսերկիերներ, լողում էին առանձին նավով, քանի որ նորմաններն իրենք էին վախենում նրանցից։

Կառլոս թագավորի կատաղության նոպան կարելի էր միայն բերսերկիերություն կոչել, այն աստիճան վախեցած ու ճնշված էին այդ պահին նրա վրանում գտնվող պալատականները, իսկ կոմս Պիպերը նույնիսկ ապրել չէր ուզում... Կոմսուհի Կոզելսկայայից աղավնատոտով եկած նամակը ստանալուց հետո, Կառլոսը, հանկարակ Պիպերի, Ֆելդմարշալ Ռյոնշելդի և մյուս գեներալների կարծիքի, անհողդողդ մնաց իր վրիժառու ցանկության մեջ՝ հենց հիմա ջախջախել Ավգուստին, ամբողջ Լեհաստանը հնազանդեցնել Ստանիսլավ Լեշչինսկուն, լավ հանգիստ տալ զորքերին և մյուս տարի, ամառային մի ռազմարշավով, Պյոտրի բոլոր զորքերի ջախջախմամբ, փայլուն ավարտել արևելյան պատերազմը։ Նարվայի և Ցուրյևի ճակատագրով չէր անհանգստանում՝ հուսալի կայազորներ և ամուր պարիսպներ կային այնտեղ, մոսկովցիների հաղթահարելիքը չէր, նաև այնտեղ էր քաջարի Շլիպենբախը։ Իսկ բացի դրանից, կտուժեր նրա՝ Ալեքսանդր Մակեդոնացու և Կեսարի փառքի ժառանգորդի հպարտությունը, եթե իր մեծ ծրագրումները խափաներ աղավնափոստով եկած ինչ-որ նամակի պատճառով, այն էլ ստացված ոմն անառակ կուրտիզանուհուց...

Ռուսական օժանդակ զորքի Սոկալ հասնելու և Ավգուստի անպսակելի հեռանալու լուրը դեպի Վարշավա, Կառլոսի ճիշտ քթի տակից (որը կշտացած առյուծի պես ծուլորեն չէր շտապում ժանիքները խրել լեհերի դատապարտված թագավորի կոկորդը) բերեց հենց այն շլյախտիչը, որը պան Սոբեշչանսկու խնջույքին սրով փշրեց երշիկով լի մատուցարանը։ Կոմս Պիպերը շփոթահար գնաց արթնացնելու թագավորին՝ լուսանում էր։ Ձեռքերը կրծքին խաչած Կառլոսը հանգիստ քնած էր երթային անկողնում։ Պղնձե ճրագի աղոտ լույսը լուսավորում էր նրա կոր ու խոշոր քիթը, փոս ընկած ասկետական այտերը, ամուր սեղմած շրթունքները։ Նույնիսկ քնած ժամանակ նա կամենում էր արտակարգ լինել։ Սարկոֆագի մեջ պառկած ասպետի քարե արձանի էր նման նա։

Սկզբում կոմս Պիպերը հույսը դրեց արքայական աքաղաղի վրա, որի կոկորդով մեկ ծուղրուղու կանչելու ժամանակն էր։ Սակայն աքաղաղը ստիպված էր թագավորի հետ միասին ապրել ճգնավորական կացարանում, և թռչունը միայն շուռումուռ եկավ վրանի դարուսինից այն կողմ, վանդակի մեջ ու խոխոջի պես մի հնչյուն արձակեց կոկորդից...

— Ձերդ մեծություն, արթնացեք,— հնարավորին չափ մեղմ ասաց կոմս Պիպերը, բարձրացնելով ճրագի լույսը,— ձերդ մեծություն, տրհամ լուր է եկել (Կառլոսը, առանց շարժվելու, բացեց աչքերը)... Ավգուստը հեռացել է...

Կառլոսն իսկույն գորգի վրա դրեց ոտաշորով ու բրդյա գուլպաներով ոտքերը, և բոունցքներին հենված նայում էր Պիպերին։ Վերջինս պալատական հմուտ զգուշավորությամբ պատմեց Ավգուստի ճակատագրի բարեբաստիկ փոփոխության մասին։

— Բոտֆորտնե՛րս, շալվա՛րս,— դանդաղ ասաց Կառլոսը, էլ ավելի սարսափելի չդնելով անթարթ աչքերը, որոնք նույնիսկ ցոլցլալ սկսեցին, կամ էլ մթալ սկսող ճրագի կրակի արտացոլումն էր դա։ Պիպերը դուրս թռավ վրանից և անմիջապես ետ եկավ կեղծամը մի կերպ դրած Բերկենգելմի հետ միասին։ Վրան էին մտնում գեներալները։ Կառլոսը հագավ շալվարը, ոտքերը ձգելով բոտֆորտներն էլ հագավ, երկու եղունգ կոտրելով կոճկեց սերթուկը, և այդժամ միայն ազատություն տվեց իր կատաղությանը։

— Դուք ժամանակ եք անցկացնում կեղտոտ լրբերի հետ, դուք ճաշպակալել եք կաթոլիկ վանականի պես,— կաղկանձուն ձայնով (որովհետև ծնոտները ջղաձգվել էին և ատամներն իրար էին զարնվում) բղավում էր նա միանգամայն անմեղ գեներալ Ռոգենի վրա։— Այսօր ձեր խայտառակության օրն է,— կարծես սրի հարված հասցնելու համար շրջվելով, բղավեց գեներալ Լեվենհաուպտի վրա,— ձեզ հարմար կգար ատորին կոչումով քարշ գալ մի բանակի գումակում։ Ո՞ւր է ձեր հետախուզությունը։ Ես նորություններն իմանում եմ բոլորից ուշ... Կարևորագույն նորությունները, որոնցից Եվրոպայի ճակատագիրն է կախված, ես իմանում եմ ոմն հարբած շլյախտիչից։ Իմանում եմ կուրտիզանուհիներից։ Ես ծիծաղելի եմ։ Ես դեռ զարմանում եմ, թե ինչու ինձ քնած-քնած վրանից քարշ չեն տվել կազակներն ու պարանը վիզս գցած Մոսկվա չեն տարել։ Իսկ ձեզ, պարոն Պիպեր, խորհուրդ եմ տալիս գերբի կոմսական թագը փոխարինել ծաղրածուի գդակով։ Կոցար, լոր ու այլևայլ թռչուն խժռող եք դուք, հարբեցող և ավանակ։ Չհամարձակվեք վիրավորվածություն արտահայտել... Ես հանուքով ձեզ գելարան կբարձրացնեմ ու կքառահատեմ։ Ո՞ւր են ձեր լրտեսները, հարցնում եմ։ Ո՞ւր են ձեր բանբերները, որոնք դեպքերի մասին կատարվելուց մեկ օր առաջ պիտի հայտնեն ինձ։ Գրողի ծո՛ցը։ Ես լքում եմ բանակը, մասնավոր անձ եմ դառնում։ Ինձ համար նողկալի է ձեր թագավորը լինել։

Հետո Կառլոսը պոկոտեց իր սերթուկի բոլոր կոճակները։ Բոտֆորտի հարվածով ծակեց թմբուկը։ Ծվեն-ծվեն արեց բարոն Բերկենգելմի գլխից պոկած կեղծամը։ Նրան ոչ ոք չէր առարկում, թագավորը դեսուդեն էր նետվում վրանում, ետ քաշվող պալատականների արանքում։ Երբ սկսեց մեղմվել բերսերկիերության նոպան, Կառլոսը ձեռքերը դրեց մեջքին, գլուխը կախեց ու ասաց.

— Հրամայում եմ անհապաղ, տագնապով ոտքի հանել բանակը։ Պարոնայք, ձեզ երեք ժամ եմ տալիս պատրաստվելու համար։ Ես շարժում եմ իմ զորքերը։ Ամեն ինչ կիմանաք իմ հրամանից։ Հեռացեք իմ վրանից։ Բերկենգելմ, գրիչ, թուղթ և թանաք։

6.

— Սա անտանելի է... Կանգնել մնացել ենք հուր հավիտյան... Քիչ ավելի վճռականություն, մի լավ գրոհ, և այսօր կարող էինք գիշերել Վարշավայում,— տրտնջալով ասում էր կոմսուհի Կոզելսկայան, նայելով կառքի պատուհանից դուրս, խարույկների անհամար քանակությանը, որոնք լայն աղեղով եզերել էին գիշերվա մթության մեջ չերևացող քաղաքը։ Կոմսուհին անչափ ու անասելի հոգնած էր։ Ոսկյա կուպիդոնով նրա շքեղ կառքը կոտրվել էր գետակն անցնելիս, և ստիպված տեղափոխվել էր պանի Աննա Սոբեշչանսկայայի անհարմար, թափահարվող, այլանդակ ճանապարհակառքը։ Կոմսուհին այնպես էր չարացած, պանի Աննան այնքան չնչին անձնավորություն էր թվում նրան, որ նույնիսկ սիրալիր էր ծայրամասաբնակ այդ լեհուհու ընկատմամբ։

— Թագավորի կառքը մեր առջևում է, բայց ինքն այստեղ չէ... Թե ինչ է մտածում, միայն աստծուն է հայտնի... Ոչ մի նախապատրաստություն ոչ ընթրիքի, ոչ հանգստի...

Կոմսուհին դժվարությամբ, փոկը քաշքշելով, իջեցրեց կառքի պատուհանի ապակին։ Ձիու քրտինքի տաք հոտ և գինվորական խոհանոցների գրգռիչ ծուխ կար դրսում։ Ճամբարային աղմուկով լի գիշեր էր՝ ձայների փոխկանչ, իրար կպած սայլերի ճռռիչ, բղավոցներ, հայհոյանք, քրքիջ, ձիու դոփյուն, հեռավոր կրակոցներ։ Կոմսուհուն ձանձրացրել էին երթային այդ հանուքները, նա բարձրացրեց ապակին։ Ետ ընկավ կառքի խորքը։ Ամեն ինչ խանգարում էր նրան՝ թե՛ ճմրթված ու տեսքից ընկած զգեստը, թե՛ արկղների կողերը, հանուքով կկծոտեր մեկնումեկին, արյուն կթափեր...

— Վախենում եմ, որ թագավորական պալատը գտնենք ամենակատարյալ բարձիթողի, թալանված վիճակում.... Լեշչինսկիների տոհմը հռչակված է իր ագահությամբ, և ես շատ լավ եմ ճանաչում Ստանիսլավին՝ սուտ բարեպաշտ, կծծի ու մանրախնդիր մեկն է... Վարշավայից փախած կլինի ոչ միայն աղոթագիրքը գրպանը դրած։ Ձեզ խորհուրդ եմ տալիս, սիրելիս, մի որևէ մասնավոր տուն նկատի ունենաք, եթե, իհարկե, Վարշավայում կարգին ծանոթներ ունեք... Ավգուստ թագավորի վրա շատ հույս մի դրեք... Տեր աստված, ի՞նչ սրիկան է։

Պանի Աննան վայելում էր զրույցները կոմսուհու հետ՝ աշխարհիկ դաստիարակության բարձրագույն դպրոց էր դա։ Պանի Աննան դեռ վաղ օրիորդությունից, երբ գիշերաշապկի տակ նոր-նոր սկսեցին նկատվել սքանչելի կլորությունները, անսովոր կյանք էր երազում։ Դրա համար արժեր միայն հայելուն նայել. սիրունիկ էր, այն էլ ոչ պարզապես սիրունիկ, այլև հմայքով, խելացի, սրամիտ, ճարպիկ ու անխոնջ։ Ծնողական տունը չքավոր էր։ Հայրը սնանկացած մի շլյախտիչ, տոնավաճառներում կամ էլ հարուստ պաների տներում թղթախաղով էր զբաղվում։ Տանը հազվադեպ էր լինում։ Ամենօրյա կարճիկ կաֆտանով, հոգնած, դաղրած դեմքը ճմլված, նստում էր լուսամուտի մոտ ու անխոս նայում իր աղքատիկ տումուտեղին։ Աննան՝ միակ և սիրելի դուստրը, երեսն էր պնդում, որ նա իր արկածները պատմի։ Մեկ-մեկ դժկամությամբ, ապա ոգևորվելով, հայրը սկսում էր պարծենալ քաջագործություններով և ազդեցիկ ծանոթություններով։ Կախարդական հեքիաթի պես Աննան իրական ու հորինովի պատմություններ էր լսում իշխաններ Վիշնևեցկիների, Պոտոցկիների, Լյուբոմիրսկիների, Զարտորիյսկիների հրաշագեղ ու պերճաշուք կյանքի մասին... Երբ հայրը, թղթախաղի պարտքը վճարելու համար տան վերջին լաթուն ծախեց ու վերջին քոսոտ հավը կերավ, աղջկան ամուսնացրեց տարեց պան Սոբեշչանսկու հետ, և Աննան չընդդիմացավ, հասկանալով, որ այդ ամուսնությունն ընդամենը ապագայի հուսալի քայլ է։ Դառնացնում էր սոսկ այն, որ ամուսինը չափազանց պոռթկուն, տարիքին անհամապատասխան սիրահարվեց։

Բարի սիրտ ուներ նա, որն, ի դեպ, լիովին ենթարկված էր գիտակցությանը:

Եվ ահա դիպվածը նրան միանգամից հասցրեց երջանկության սանդուղքի ամենավերին աստիճանին: Թագավորը նրա ցանցն ընկավ: Պանի Աննայի գլուխը չպտտվեց. հիմարի մեկը չէր. նրա սուր միտքը պրպտուքների մեջ էր, ինչպես մուկը խավար նկուղում՝ ամեն ինչ հարկ էր կանխատեսել ու ծրագրել: Պան Սորեշչանսկուն, որը սիրահարված բոլոր ամուսինների պես ոչինչ չէր հասկանում ու տեսնում, քնքշորեն ասաց. «Հոգնել եմ գյուղական այս խղճուկ վայրից: Յոզեֆ, ինքներդ պիտի երջանիկ լինեք ինձ համար. հիմա ուզում եմ առաջին տիկինը լինել Վարշավայում: Ոչ մի բանի մասին մի մտածեք, ձեր խնջույքներն արեք ու երկրպագեք ինձ»:

Ուրիշ բարդություն կար՝ խորամանկել կոմսուհի Կոգելսկայային և սուտուփուս թաղել նրան՝ վերջապես, ամենանուրբ խնդիրը՝ բոպեական հաճույքի համար չծառայել թագավորին, այլ ամուր կապերով կապել նրան...

Դրա համար միայն կանացի հմայքը քիչ էր, փորձառություն էր պետք: Պանի Աննան, ժամանակ չկորցնելով, կոմսուհուց կորզում էր գայթակղելու գաղտնիքները:

— Ա՜հ, ոչ, սիրելի կոմսուհի, Վարշավայում ես պատրաստ եմ ապրել հյուղակում, միայն թե ձեր կողքին, ինչպես գորշ մեղուն վարդի մոտ,— ասում էր պանի Աննան, ոտքերը ծալած, կառքի մուս անկյունում նստած, թռուցիկ նայելով աչքերը փակ կոմսուհու դեմքին, որը մեկ վարդագունում էր խարույկների ցոլքերից, մեկ ստվերի տակ մտնում (ասես լուսին լիներ ամպերի մեջ):— Չէ որ ես դեռ կատարյալ երեխա եմ: Մինչև հիմա դողում եմ, երբ թագավորը սկսում է խոսել ինձ հետ, չեմ ուզում որևէ հիմար կամ անպատեհ բան պատասխանել:

Կոմսուհին սկսեց խոսել, ասես պատասխանելով քացախի պես անդուր իր մտքերին.

— Երբ թագավորը սոված է, նույն հաճույքով խժռում է տարեկանի հաց և ստրասբուրգյան բլիթներ: Ճանապարհամերձ մի պանդոկում կպավ ծաղկատար դեմքով մի կազակուհուց, որը կայծակի պես բակով վազում էր նկուղ ու ետ՝ սափորները տանել-բերելով.... Թագավորը նրա մեջ կի՞ն տեսավ... Միայն դա նշանակություն ունի նրա համար... Օ՜, հրեշի մեկը: Կոմսուհի Կենիգսմարկը հրապուրեց թագավորին երանով, որ պարի ժամանակ ցուցադրում էր կապիչները՝ սև թավշյա բարակ ժապավեններ են, որոնք կապում են վարդագույն գուլպաների վրա...

— Յեզո՜ւս-Մարիա, ու դա այդպես ազդո՞ւմ է,— շշնջաց պանի Աննան:

— Անասունի պես սիրահարվեց ռուս բոյարուհի Վոլկովային. պարահանդեսի ժամանակ բոյարուհին մի քանի անգամ փոխում էր զգեստն ու շապիկը: Նա ներս ընկավ սենյակ, վերցրեց նրա շապիկը և սրբեց քրտնած դեմքը... Նախորդ հարյուրամյակում այդպիսի պատմություն

եղել է Ֆիլիպ Երկրորդի՝ Ֆրանսիայի թագավորի հետ... Բայց այնտեղ դա վերջացավ երկարատև կապվածությամբ, իսկ բոյարուհի Վոլկովան, ի ընդհանուր գոհունակություն, ծնեց նրա քթի տակից...

— Ես սարսափելի հիմար եմ,— բացականչեց պանի Աննան,— չեմ հասկանում, թե ինչ կապ ունի այդ կնոջ շապիկը:

— Ոչ թե շապիկը, կարևորն այն կնոջ մաշկն է, իրեն հատուկ հոտը... Կնոջ մաշկը նույնն է, ինչ ծաղկի բույրը, այդ մասին գիտեն կանանց մենաստաններին կից դպրոցների բոլոր աշակերտուհիները... Այնպիսի մի սանտուկի համար, ինչպիսին մեր սիրելի թագավորն է, քիթն է որոշում բոլոր համակրանքները...

— Օ՜, սուրբ աստվածածին:

— Դուք ուշադիր նայե՞լ եք նրա վիթխարի քթին, որով շատ է հպարտանում, գտնելով, որ Հենրիխ Հոյրորդին նմանվում է դրանով... Նա շարունակ փքում է ռունգերը, կաքավի հոտ առած որսաշան պես...

— Ուրեմն, առանձնապես կարևոր են օծանելիքները, հոտավետ դիմափոշին և բուրավետ շփումնե՞րը: Ճի՞շտ հասկացա, սիրելի կոմսուհի:

— Եթե դուք կարդացել եք Ոդիսականը, պետք է հիշեք, որ կախարդ Կիրկեյան տղամարդկանց խոզ էր դարձնում... Միամիտ մի ձևացեք, սիրելիս... Թեև այս ամենը բավականաչափ նողկալի է, ձանձրալի և ստորացուցիչ...

Կոմսուհի՞ն լռեց: Պանի Աննան մտորում էր, թե իրականում ով ում խորամանկեց: Կառքի լուսամուտից երևաց սև պուշներից փրփփուր թափող ձիու մուրը: Թագավորն էր մուտեցել: Նա թռավ թամբից, բացեց դռնակը, ռունգերը փքված էին, խոշոր, աշխուժացած դեմքին ժպիտն էր շողում: Ջիլավորի բռնած ջահի լույսի տակ այնքան հայկական էր ոսկեգօծ ու թեթև, երեսկալը ետ տարած սաղավարտով, ուսին գցած ծիրանեգույն շքեղ թիկնոցով տեսքը, որ պանի Աննան ինքն իրեն ասաց. «Ոչ, ոչ, և ոչ մի հիմարություն...»: Թագավորը զվարթ բացականչեց.

— Դուրս եկեք, տիկնայք, պատմական տեսարանի պիտի ներկա գտնվեք...

Պանի Աննան անմիջապես, բարակ ձայնով բացականչելով, դուրս թռավ կառքից: Կոմսուհին ասաց.

— Գոտկատեղս ջարդվել է, ինչին անկասկած ձգտում էիք, ձերդ մեծություն: Ես հագնված չեմ ու կմնամ այստեղ սոված փորով ննջելու:

Թագավորը կտրուկ պատասխանեց.

— Եթե ձեզ պատգարակ է պետք, կուղարկեմ...

— Պատգարա՞կ, ի՞նձ:— Նրա չոռած աչքերի կանաչ լույսի հարվածից Ավգուստը թեթևակի ընկրկեց: Ռումբի պես դուրս թռավ կառքից կոմսուհին՝ դեղձագույն իր բուռնուսով, ականջների, պարանոցի, մատների վրա թրթռացող թանկարժեք քարերի ցոլցլումներով, խառնված, բայց դրանից հետո էլ սքանչելի սանրվածքով:— Միշտ

ձեր տրամադրության տակ,— ու մերկ ձեռքը մտցրեց թագավորի բազկի տակ: Պանի Աննան մի անգամ էլ հասկացավ, թե ինչ մեծ է այդ կնոջ արվեստը...

Երեքով գնացին դեպի թագավորական կառքը, ուր ջահերի լույսերի տակ շլյախտայական ընտրյալ հեծելազորի էսկադրոնն էր կանգնած ձիերի վրա, երկաթյա գոտկապերով մեջքներին կարապի ճերմակ փետուրներ ամրացրած զրահներով: Ավգուստը և տիկնայք՝ երկու կողմերում ու քիչ ետ, նստեցին գորգի վրա դրված բազկաթոռներին: Պանի Աննայի սիրտը խփում էր, նրան թվում էր, թե իրենց շրջապատած թանավոր, զրահ ու սաղավարտի վրա ցոլցլացող կրակներով բարձրահասակ ձիավորները աստծո հրեշտակներ են, որոնք երկիր են իջել Ավգուստին վերադարձնելու իր վարշավյան պալատը, փառքը և դրամը... Նա փակեց աչքերը և կարճ աղոթք արեց.

— Թագավորը թող իմ ձեռքերում լինի, գառան պես...

Ձիերի դոփյունը լսվեց: Էսկադրոնը ետ քաշվեց: Խավարի միջից մոտենում էր գետման Լյուբոմիրսկին իր պահախմբով, որոնք նույնպես թևեր ունեին մեջքներին, միայն թե սև փետուրներից: Ընդհուպ մոտենալով թագավորին, մեծն գետմանը քաշեց սանձը, այծենակաճը ծածանելով թռավ խռխռացող ձիուց և գորգի վրա ծալեց մի ծունկը Ավգուստի առաջ.

— Թագավոր, եթե կարող ես, ներիր իմ դավաճանությունը...

Նրա խած ու վառվող աչքերը հաստատակամ էին, բորբոքված դեմքը մռայլ էր, ձայնը խզվում էր: Նա կոտրում էր իր հպարտությունը: Ադամանդյա փնջով մորթե գլխարկը չհանեց, միայն չորչորուկ ձեռքերն էին դողում...

— Իմ դավաճանությունը քո հանդեպ իմ խելացնորությունն էր, գիտակցության մթագնումը... Հավատա, որ այնուամենայնիվ, ոչ մի ժամ թագավոր չեմ ճանաչել Ստանիսլավին... Վիրավորանքը կրծում էր ներսս: Ես հասա իմ ուզածին... Ես իմ մականը շպրտեցի նրա ոտքերի տակ... Թքեցի և դուրս եկա նրա մոտից... Արքայական պալատում իմ վրա հարձակվեցին պարետի զինվորները... Փառք աստծո, ձեռքս դեռ ամուր է բռնում թուրը, նզովյալների արյամբ հաստատեցի խզումս Լեշչինսկու հետ... Ես իմ կյանքը քեզ եմ տալիս...

Լսելով նրան, Ավգուստը դանդաղ հանում էր երկաթյա ձեռնոցները: Գցեց գորգի վրա, նրա դեմքը պայծառացավ: Կանգնեց, պարզեց ու թափահարեց ձեռքերը.

— Հավատում եմ քեզ, մեծն գետման... Ամբողջ սրտով ներում ու գրկում եմ քեզ...

Եվ ամբողջ ուժով նրա դեմքը սեղմեց կրծքին, իտալական կրծքագրահին դրոշմված պղնձյա մարդաձիերին ու ջրահարսերին: Այդպես սեղմած պահելով հարկ եղածից ավելի, Ավգուստը հրամայեց մի աթոռ ևս մատուցել: Բայց աթոռն արդեն դրված էր: Մեծն գետմանը, ճնշված այտը շփելով, սկսեց պատմել վարշավյան իրադարձությունները, որոնք կատարվել էին Ավգուստի և ռուսների դեմ հանդես գալուց իր հրաժարվելուց հետո:

Վարշավայում իրարանցում էր սկսվել: Կարդինալ պրիմաս Ռաձիևսկին, որն անցյալ տարի լյուբլինյան սեյմում, խաչելության առաջ ծնկաչոք, հավատարմության երդում էր տվել Ավգուստին և Ռեչ Պոսպոլիտայի ազատությանը, իսկ մեկ ամիս անց, Վարշավայում համբուրել էր լյութերական Ավետարանը՝ ի հավատարմություն Կարլոս թագավորի և նույնիսկ փրփուր ի բերան պահանջել Ավգուստի գահազրկումը և գահի թեկնածու առաջադրել իշխան Լյուբոմիրսկուն, ապա տեղնուտեղը, Արվեդ Գոռնի պահանջով, ծախել էր նրան նույնպես, այդ երիցս դավաճանը առաջինն էր փախել Վարշավայից, ընդսմին կարողանալով եկեղեցական գանձարանից մի քանի սնդուկ տանել հետը:

Ստանիսլավ թագավորը երեք օր դեգերել էր պալատում՝ ամեն առավոտ ավելի ու ավելի քիչ պալատականներ էին ներկայացել թագավորի հայտնվելուն: Արվեդ Գոռնը աչքը չէր հեռացրել նրանից, երդվել էր Վարշավան պաշտպանել միայն իր կայազորով: Քանի որ ըստ կարգի չէր կարող ներկա լինել թագավորի սեղանին, ճաշին ու ընթրիքին նստել էր հարևան սենյակում ու խթանները զրնգացրել: Ստանիսլավը, զայրացուցիչ զրնգոցը չլսելու նպատակով. ինքն իր համար, կերակուրները փոխելու արանքում, Ապուլեյի ոտանավորներն էր կարդացել լատիներեն, բարձրաձայն: Չորրորդ գիշերն, այնուամենայնիվ, ծլկել էր պալատից, իր ծառայի և վարսավիրի հետ՝ գեղջկական հագուստով, դնովի մորուքով: Քաղաքի դարպասից ելել էր կարի երկու տակառ բարձած սայլով, որոնց մեջ թագավորական գանձարանն էր լցրել: Արվեդ Գոռնը չափազանց ուշ էլ գլխի ընկել, որ Ստանիսլավ թագավորը, որպես իսկական Լեշչինսկի, այդ օրերի ընթացքում Ապուլեյ կարդալուց և շահ հետ դատարկ սրահներում տրտմագին դեգերումներից բացի, նաև ուրիշ գործերով էր զբաղվել... Արվեդ Գոռնը պոկել ու ոտի տակ էր գցել թագավորական անկողնու վարագույրները, սրահապահ արել պալատական արարողապետին և գնդակահարել գիշերային պահակախմբի պետին: Բայց հիմա արդեն ոչինչ չէր կարող կանգնեցնել Լեշչինսկու հետ այս կամ այն կերպ կապված երևելի պահների փախուստը Վարշավայից:

Ավգուստը քրջում էր այդ պատմությունները լսելով, բռունցքներով խփում էր բազկաթոռի բռնակներին ու դառնում տիկնանց: Կոմսուհի Կոզեյկազայի աչքերը միայն սառն արհամարհանք էին արտահայտում, այնինչ պանի Աննան կչկչում էր արծաթյա զանգակի պես:

— Իսկ ի՞նչ խորհուրդ կտաս ինձ, մեծն գետման: Պաշարո՞ւմ, թե անհապաղ գրոհ:

— Միայն գրոհ, ողորմած արքա: Արվեդ Գոռնի կայազորը մեծ չէ: Վարշավան պետք է գրավել մինչ Կարլոս թագավորի մոտենալը:

— Անհապաղ գրոհ, գրողը տանի: Իմաստուն խորհուրդ է:— Ավգուստը մարտականորեն շխկշխկացրեց երկաթյա ուսակալները:— Որպեսզի գրոհը հաջողվի, հարկավոր է լավ կերակրել զորքը, թեկուզև եփած սագի մսով: Համեստ հաշիվներով՝ հինգ հազար սագ... Հրմ:— Նա կնճռոտեց քիթը:— Վատ չէր լինի նաև ոռճիկները տալ... Իշխան

Դմիտրի Միխայլովիչ Գոլիցինը կարողացավ միայն քսան հազար եֆիմոկ տալ ինձ... Գոռշնե՞ր...Ինչ վերաբերում է դրամին, Պյոտր ցարն առատաձեռն չէ, ո՛չ, առատաձեռն չէ: Ես հույս ունեի կարդինալական և պալատական գանձարանի վրա... Գողացվա՞ծ է,— բղավեց նա, շառագունելով:— Հո չեմ կարող ինքս իմ մայրաքաղաքի վրա ռազմատուգանք դնել:

Իշխան Լյուբոմիրսկին այդ ամենը լսեց, աչքերը ցած հառած և ցածրաձայն ասաց.

— Իմ զորարշավի սնդուկը դեռ դատարկ չէ... Միայն հրամայիր...

— Շնորհակալ եմ, հաճույքով կօգտվեմ,— քիչ ավելի փութկոտ, բայց գուտ վերապալան շուքով պատասխանեց Ավգուստը:— Ինձ պետք է հարյուր հազար եֆիմոկ... Կվերադարձնեմ գրոհից հետո.. — Դեմքը շողացնելով՝ նա կանգնեց ու նորից գրկեց գետմանին, այտը այտին կպցնելով:— Գնա, իշխան, ու հանգստացիր: Մենք էլ ենք ուզում հանգստանալ:

Գետմանը թռավ ձիու վրա, առանց շրջվելու, սլացավ մթության մեջ: Ավգուստը դարձավ կանանց.

— Տիկնայք, այսպիսով ձեր հոգնեցուցիչ ուղևորությունը կհատուցվի... Ասացեք միայն ձեր ցանկությունները... Ամենաառաջինը և ամենահամեստը, կոահում եմ՝ ընթրիքն է... Մի կարծեք, որ մոռացել եմ ձեր հարմարությունների և զվարճանքի մասին... Թագավորի պարտքն է երբեք և ոչինչ չմոռանալ.... Խնդրում եմ, իմ կառքը՝ նստեք...

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1.

Գավրիլա Բրովկինը, առանց դադար առնելու, Մոսկվա էր սլանում, ցարական ճանապարհային վկայականով, եռաձի, երկաթահեց փոքր սայլակի ձիերը փոխելով: Նա թագավորի փոստն էր տանում և հանձնարարություն կեսար-կայսրին՝ երկաթյա գանգազան ապրանքների առաքումը Պիտերբուրգ արագացնելու մասին: Նրա հետ էր նաև Անդրեյ Գոլիկովը: Հրամայված էր ճանապարհին չհապաղել: Ի՞նչ հապաղել: Եռաձիուց հազար աաժեն առաջ էր ընկել Գավրիլայի անհամբեր սիրտը: Հասնելով հերթական յամաև, կամ ինչպես հիմա էին սկսել անվանել՝ փոստատունը, ամբողջովին փոշու մեջ կորած Գավրիլան վազքով ելնում էր առմուտք ու դուռը թակում մտրակի կոթով. «Կոմիսար,— բղավում էր, աչքերը ոլորելով,— հենց հիմա երեք ձի», և վրա պրծնում զեմստվոյական քնաթաթախ աստիճանավորին, որի կոմիսար լինելու մատնանշումը տրեզավոր գլխարկն էր միայն: Շոգի պատճառով ոտաբոբիկ էր լինում, ոտաշորով ու գոտին արձակ շապկով. «Մի շերեփ կվաս տուր, ու մինչև խմելս լծած լինի...»: Անդրեյ Գոլիկովը նույնպես խանդավառ ոգևորություն էր ապրում: Ատամները սեղմած, չգլորվելու ու չիեղանդամվելու համար սայլի կողից կառչած, մեջքին ծածանվող մազերով, թռչնի պես քիթն առաջ տրնկած, ասես առաջին անգամ աչքերը բացել ու նայում էր ընդառաջ լողացող, խեժաբույր տաքությամբ շնչող անտառներին, թունավոր մուգ կանաչով եզերված, ամպեր ու ամառվա ամպիկներ արտացոլող ճահճային կլոր լճակներին, ոլոր-մոլոր գետակներին, որոնց սևավուն ջրերից որսի զանազան թռչուններ էին բարձրանում, երբ անիվները դդրդում էին կամրջի վրա: Ցնցվող աղեղից կախ զանգակը տրտմագին դողանջ էր արձակում հեռավոր անվանման ճամփանների մասին: Կառապանը քշում ու քշում էր եռաձին, կորացած մեջքին գգալով մտրակը ձեռքում բռնած մոլեգնորեն շտապող ուղևորի շունչը:

Հազվադեպ հանդիպում էին գյուղեր՝ կիսավեր ու սակավամարդ, խղճուկ հյուղակներով, լուսամուտների փոխարեն երկու բռաչափ ծակեր, թաղանթով ծածկված, դռան վրայի ցածրիկ ծխապատ անցքով, ապա ճղակոտոր ուռենու տակ մի ծածկ՝ սրբապատկերի վրա, որ գոնե մի տեղ լիներ աստծուն դիմելու համար այդ խուլ վայրերում: Որոշ գյուղերում երկու կամ երեք ծուխ էր մնացել, մյուսների նվազ կտուրները նստել էին, դարպասներն ընկել, չորսբոլորը եղինջ էր աճել: Մարդկանց էլ պիտի փնտրեիր անանցանելի անտառներում, սատանան գիտե, ինչ անհայտ հողերի վրա հյուսիսում, Դվինայի կամ Վոլգի ափերին, կամ էլ փախել էին Ուրալից դեն ու ստորին Դոն:

— Ախ, ի՞նչ աղքատ գյուղեր են, ախ, ի՞նչ աղքատ են ապրում,— ջղնջում էր Գոլիկովը, և կարեկցանքից նեղլիկ ափն այտին դրեց: Գավրիլան պատասխանեց ծանրակշիռ.

— Մարդիկ քիչ են, իսկ թագավորությունը ծայրից ծայր անցնելու համար տասը տարին էլ չի հերիքի, չքավորությունը դրանից է. ամեն մեկից շատ են պահանջում: Օրինակ, ես եղա Ֆրանսիայում... Տեր աստված, մուժիկներին փչես կընկնեն, խոտ են ուտում ու թթու գինի, էն էլ ոչ բոլորը... Բայց որ մարքիզը կամ ուրիշ իշխանազուն որսի ելավ, սայլերով են որս խփում... Ա՛յ, էնտեղ է չքավորությունը: Բայց պատճառն ուրիշ է էնտեղ...

Գոլիկովը չհարցրեց, թե պատճառն ինչն է, որ ֆրանսիական մուժիկներին փչես, կընկնեն... Միտքը լուսավորյալ չէր, պատճառները չէր զանազանում. իր աչքերով, իր ականջներով, իր ռունգերով նա ընկալում էր կյանքի քաղցր ու տտիպ գինին, և ուրախանում ու դառնանում էր չափազանց...

Վալդայի սարերում պատկերը փոխվեց, զվարթացավ. երևացին անցյալ տարվա խոտի դեզեր՝ ցինը կատարին, անտառային կաճանձեր, որոնք չքանում էին թավուտներում, կանչելով հատապտուղ հավաքելու, անտառների ադմուկն էլ փոխվեց, դարձավ ավելի մեղմ, լիակուրծք: Գյուղերն ավելի հարուստ էին, ամուր դարպասներով, փորագրանախշ առմուտքերով: Ջրհորի մոտ կանգ առան, ձիերը ջրելու՝ տասնվեցամյա մի աղջնակ տեսան կեղևաշերտի կոկոշնիկով, ամեն առամիկի վրա երկնագույն հուլունքաշարով: Այնքան սիրունիկ

էր, որ ճնում էր միայն իջնել սայլակից ու շուրթերը համբուրել: Գոլիկովը գոհությունը հանեց: Իսկ Գավրիլան ուշադրություն չդարձնելով ամենատոր այնպիսի մի էակի վրա, ինչպիսին գեղջկուհին էր, սառաց նրան:

— Ի՞նչ ես կանգնել, աչքերդ չոել: Մեր տունն ջարդվել է, վազ տուր դարբնին կանչիր:

— Հա,— մեղմ ձայնեց նա, դուլերն ու անկոտին ցած գցեց ու վազեց կանաչ խոտի միջով, կտավե ասեղնակար փեշի տակից վարդագույն կրունկները երևցնելով: Թերևս մեկնումեկին ասել էր, և շուտով եկավ դարբինը: Այդպիսի մուժիկին ի՞նչ ես, յուրաքանչյուր ոք գոհունակությամբ կասեր՝ ի՞նչ ածդանա մարդ է: Գանգուր մորուքով կոշտակոպիտ դեմք, շրթունքներին քմծիծաղ, կարծես տակ ներողամտության մղումով էր մոտեցել եկվոր անխելքներին: Երկփթանոց կշռաքարով սառնը վնաս հասցնելու կարելի էր խիել նրա կրծքին, հուժկու ձեռքերը կարվե զոգնոցի տակ էր դրել:

— Հը՞, ոնի՞ն է կոտրվել,— ծաղրաբար հարցրեց նա երգեցիկ ու բարձր ձայնով:— Երևում է, մոսկվացու սարքած է:— Գլուխն օրորելով, շրջանցեց սայլակը, տակը նայեց, ետևից բռնեց ու հեշտությամբ ցնցեց նստածների հետ մեկտեղ:— Լրիվ ջարդված է, սրանով ցախ կրեն, թե չկրեն:

Գավրիլան, բարկանալով, վեճի բռնվեց: Գոլիկովը գմայլված էր նայում դարբնին՝ բոլոր հրաշքներից թերևս ամենազարմանալին էր նա: Ինչպե՞ս չկարոտեր վրձիններին ու ներկերին, հոտավետ կաղնեփայտի տախտակին: Ամեն, ամեն ինչ թռչում է աչքի առջևով, մշուշապատ մոռացման գիրկն անցնում անվերադարձ: Միայն նկարիչն է իր արվեստով տախտակի ներսակ նախաշերտին անշարժացնում խելահեղ անհետացումը:

— Լավ, իսկ երկա՞ր կտևի սարքելդ,— հարցրեց Գավրիլան:— Ամեն ժամն ինձ համար թանկ է, ցարական հրամանն եմ տանում:

— Կարելի է, որ երկար տևի, կարելի է, որ կարճ,— պատասխանեց դարբինը:

Գավրիլան խստորեն նայեց իր մտրակին, հետո խոթեց դարբնին.

— Լավ... Ինչքա՞ն ես ուզում:

— Ինչքա՞ն,— դարբինը ծիծաղեց:— Իմ արած գործը թանկ արժի: Ինչքան պետք է, թե ուզեցի, փողդ չի հերիքի: Բայց ախր ես քեզ ճանաչում եմ, Գավրիլա Իվանովիչ, գարնանն ախպորդ հետ անցար Էստեղով, իմ տանն էլ քնեցիր: Մոռացե՞լ ես: Ախպերդ խելքով մարդ է: Պյոտր ցարին էլ եմ լավ ճանաչում, ինքն էլ ինձ, ամեն անգամ ճամփին թեքում, դարբնոց է գալիս: Նա էլ է խելքով: Ինչ ասեմ, թեքեք եկեք դարբնոց, մի բան կանենք:

Դարբնոցը մեծ ճանապարհի վրա էր, գառիթափի վրա՝ ցածրիկ, հսկա գերանների շինված, հողե տանիքով, ձի պայտելու երեք պատվանդանով: Հորսրոլորը անիվներ, արորներ ու տափանոներ էին թափված: Դուռն մեջ զոգնոցներով, կաշվե գանգուր մազերին կապած փոկերով երկու կրտսեր եղբայրներն էին կանգնած և ավագը՝ մոտենալ

դեմ մորուքավոր մի ածդանա, մրճահարն էր: Անշտապ, բայց վարժ, խաղ անելով գործի անցավ դարբինը: Ինքն արձակեց ձիերին, սայլակը շրջեց, հանեց անիվները, դուրս քաշեց սոնիները: «Տես է, երկուսն էլ ճաք տված են, էս սոնին առնես ու մոսկվացի դարբնի կատարին մի լավ հանցնես...»: Սոնիները մտցրեց քուրան, մի տոպրակ ածուխ լցրեց, ձայն տվեց կրտսեր եղբորը. «Վանյուշա, կարգին փչիր: Է՛հ, գործն սկսենք, ուժ չենայենք...»: Ու գործը եռաց եղբայրների ձեռքում: Ծխամորճը փստացնելով, Գավրիլան հենվեց դռանը: Գոլիկովը նստեց բարձր շեմին: Հարցրեցին, թե չօգնե՞ն, որ արագ լինի: Դարբինը ձեռքը թափ տվեց... «Հանգիստ նստեք, գոնե մի անգամ նայեք, թե ոնց են աշխատում վալդայցի դարբինները»:

Վանյուշան փուքսն էր փչում՝ կայծերը հողմի պես պտտվում էին առաստաղի տակ: Դրանց ցոլքերի տակ մորուքավոր ավագ եղբայրը կանգնած էր կուռքի պես, ձեռքերը դրած փթանոց մուրճի երկար կոթին: Դարբինը սոնին էր շուռումուռ տալիս շիկացած քուրայի մեջ:

— Ուրեմն, որ իմացած լինեք, մեզ Վորոբյովներ են ասում,— սկսեց դարբինը, շարունակելով բեխերի տակ ծիծաղել:— Դարբին ենք, գինագործ, գանգ սարքող... Ձեր աղեղի տակինը մեր ձուլածի դուրեկան զնգոցն է... Անցյալ տարի Պյոտրա ցարը հենց էդպես ընտած էր շեմին ու հարցնում էր. «Կոնդրատի Վորոբյով, թխկուշիկդ վերջացրու, առաջուց մի պատասխան տուր ինձ. ինչի՞ց է, որ քո զանգերի ձենը դուրեկան է, ինչի՞ քո սարքած սրի բերանը ծվում, բայց չի կոտրվում: Ինչի՞ համար վորոբյովական ատրճանակները քսան քայլ հեռու են խփում ու փուստ չեն տալիս»: Ես էլ պատասխանեցի՝ թագավորն ապրած կենա,Պյոտր Ալեքսեևիչ, մեր զանգերի ձենն էդպես է, որովհետև պղինձն ու անագը կշեռքով ենք չափում, ինչպես մեզ սովորեցրել են իմացող մարդիկ ու անփուչիկ ենք ձուլում: Մեր սուրը ծվում ու չի կոտրվում, որովհետև կարմրացնում ենք մինչև մորու գույն դառնալն ու ջրմխում ենք կտավատի ձեթի մեջ: Ատրճանակներն էլ հեռու են խփում ու փուստ չեն տալիս, որովհետև մեր ծնող հերը, Ստեպան Ստեպանովիչը, աստված հոգին լուսավորի, որ փոքր էինք, ճիպոտով դաղում էր ամեն փոքր բանի համար ու ասում. վատ արած գործը գողությունից էլ է վատ... Ա՛յ էդպես...

Կոնդրատին սոնին աջացանով քաշեց քուրայի միջից ու դրեց ջրնդանին, բոցավառվող ածելով սրբեց կոանթափուկը և մորուքը տրմբացրեց ավագ եղբոր կողմը: Սա մի քայլ ետ գնաց, ետ ընկնելով ու առաջ գալով, մուրճով շրջան գծելով, սկսեց ծեծել երկաթը՝ շիկացած ցայտքերը պատին էին խփվում: Կոնդրատին գլխով արեց միջնեկ եղբորը՝ «Ստյոպա, հը՛...»: Սա ավելի փոքր մուրճն առած, կանգնեց մյուս կողմում, ու սկսվեց շխկոց-թխկոցը, կարծես զատկական զոդանջ լիներ. ավագը մեծ մուրճով էր հարցնում մի հատ, Ստյոպան՝ երկու հատ, Կոնդրատին, երկաթը շուռումուռ տալով, իր մուրճն էր խաղացնում: «Վե՛րջ»,— բղավեց նա և կոած սոնին գցեց հողե հատակին: «Վանյա, կրակը թեժացրու...»

— Ուրեմն, ինձ ասեց,— ափի հակառակ կողմով քրտինքը սրբելով, շարունակեց դարբինը. «Կոնդրատի Վորոբյով, լսե՞լ ես տուլացի դարբին Նիկիտա Դեմիդովի մասին: Էսօրվա օրը Ուրալում իր գործարաններն ունի, իր հանքերը, մուժիկներ էլ են տվել, տներն էլ իմիցից հարուստ են, բայց ախր քեզ պես դատարկ տեղից սկսեց... Ժամանակն է, որ դու էլ մտածես մեծ գործի մասին, մինչև կյանքիդ վերջը ճամփի վրա ձի չես պայտելու... Փող չունես սկսելու համար, չնայած ես էլ եմ նեղված, բայց կտամ: Զենքի գործարան բաց արա Մոսկվայում, ավելի լավ կլինի Պիտերբուրխում... Դրախտ տեղ է...»: Ու էնքան լավ էր ինձ պատմում, որ տեսնեմ արդեն հարստանալու է, հարստանալու է... Է՞հ, պատասխան տվեցի, թագավորն ապրած կենա, ասեցի, Պյոտր Ալեքսեևիչ, ճամփի վրա շատ ուրախ ենք ապրում... Մեր ծնող հերն ասում էր. «Ավել պատառը փոր չի ծակի, կուշտ կերեք, պինդ քնեք, համերաշխ բանեք...»: Նրա ասածով էլ ապրում ենք... Ամեն ինչ փուրով ունենք: Աշնանը բրագա ենք եփում, էնքան թունդ, որ տակառի կապերը ճռճռում են, ու քո կենացն ենք խմում, թագավորն ապրած կենա: Գործած թաթմանները հագնում, փողոց ենք դուրս գալիս, բոնցքակռիվ տալիս, ուրախանում... Չենք ուզում էստեղից գնալ: Էդպես էլ պատասխան տվեցի: Ու նա հո չջղայնացա՞վ. «Ինձ ավելի վատ պատասխան չէիր կարող տալ, Կոնդրատի Վորոբյով: Ով ամեն ինչից գոհ է ու չի ուզում լավից ավելի լավին հասնել, ամեն ինչ կկորցնի: Ախ, ասեց, ալարկոտ սատանեք, ե՞րբ եք էս մի բանը հասկանալու...»: Հանելուկ դարձավ գլխիս մեջ...

Դարբինը լռեց, խոժոռվեց, գլուխը կախեց: Կրտսեր եղբայրները նայեցին նրան. իհարկե, նրանք նույնպես կուզեին ինչ-որ բան ասել այդ կապակցությամբ, բայց չհամարձակվեցին: Դարբինը գլուխն օրորեց, ինքն իրեն ծիծաղեց.

— Այ էդպես բոլորի միտքը պղտորում է... Տես է՞, մենք էլ դարձանք ալարկո՞տ: Բայց աչի ու տես, որ ալարկոտ ենք:— Նա արագ թեքվեց դեպի քուրան, ուր երկրորդ տունն էր շիկանում, աջքանն առավ ու դարձավ եղբայրներին.— Կանգնեք:

Մեկուկես ժամ անց սալակը պատրաստ էր, հավաք, ձիգ ու թեթև: Կեղևաշերտի կոկոշնիկով աղջիկն ամբողջ ժամանակ պտույտ էր տալիս դարբնոցի շուրջը: Կոնդրատին վերջապես նկատեց նրան.

— Մաշուտկա:— Աղջիկը հյուսքը ետ գցեց ու կանգնեց մեխվածի պես:— Գնա, ասաց կաթ բեր բոյարներին, խմեն ու ճամփա ընկնեն:

Գավրիլան, նայելով, թե աղջիկն ինչպես է կրունկները խաղացնելով վազում, հարցրեց.

— Քո՞ւրդ է: Շատ լավ աղջիկ է...

— Չէ հա,— ասաց դարբինը:— Գնակելու համար կարծես շուտ է, մեղք է: Տանը մի բանի պետք չէ, ոչ գործել գիտի, ոչ կով կթել, ոչ սագ արածացնել: Ուշքումիտաքը մի բան է՝ կապույտ կամ ունենք, արորի ու զբաղվի՝ շանը հեծած կատու սարքի կամ փեռը բռնած պառավ, ոնց որ կենդանի, էդ մեկը հաստատ... Թռչում ու գազան է սարքում՝ չտեսնված: Վերևի սենյակը լիքն է դրանցով: Ուզեցանք թափենք, մի ձեռ գցեց, մի լաց դրեց: Թողեցինք...

— Ատվա՞ծ իմ, ատվա՞ծ իմ,— կամացուկ ասաց Գոլիկովը,— պետք է հենց հիմա նայեմ:— Եվ ասես սրբազան սարսափով աչքերը բացեց՝ դարբնին նայելով: Սա ձեռքերը ազդրերին խփեց, ծիծաղեց: Վանյուշան և Ստեպան զուսպ ծիծաղեցին քթի տակ, թեև երկուսն էլ կուզենային լիաթոք ծիծաղել: Կոկոշնիկով աղջիկը մի կճուճ կաթ բերեց: Կոնդրատին նրան ասաց.

— Մաշկա, էս մարդն ուզում է սարքածներդ նայի, թե ինչի՝ չեմ իմանում: Ցույց տուր...

Աղջիկը քարացավ, կաթի կճուճը դողաց նրա ձեռքերի մեջ.

— Օ՜ճ, պետք չի, ցույց չեմ տա,— կճուճը դրեց խոտին, շրջվեց ու գնաց քնածի պես, անհետացավ դարբնոցի ետևում: Այստեղ արդեն բոլոր եղբայրները բռնեցին կողերը, ծիծաղից մազերը ցնցելով... Չէր ծիծաղում միայն Գոլիկովը՝ քիթը ցցած, նայում էր այնտեղ, ուր չքացավ աղջիկը: Գավրիլան ասաց.

— Կոնդրատի Ստեպանովիչ, վերջն ինչբա՞ն պիտի տանք:

— Ինչբա՞ն:— Դարբինը սրբեց թրջված աչքերը, սղալեց բեխերը և արդեն մտազբաղ, հարթեց մորուքը:— Պյոտրա ցարին տեսար, ինձնից բարև կանես... Քո կողմից էլ կավելացնես, ինչ հարմար տեսնես: Ու կասես՝ Կոնդրատի Վորոբյովը խնդրեց, որ իր վրա չջղայնանաս, Կոնդրատի Վորոբյովից անիծելը մարդ չկա... Թագավորն իմ պատասխանը կհասկանա...

2.

Ալիքվող դաշտերից, կեչու անտառակներից, տարեկանի արտերից, հեռուներում փռված կապույտ անտառից դենը ծիածան էր կապվել, մի ոտը խփված էր անձրևոտ հեռացող ամպի մեջ, իսկ այնտեղ, ուր մյուս ոտն էր թաղված հողի մեջ, ոսկե կաղներ էին շողշողում ու թրթռում:

— Անդրյուշկա, տեսնո՞ւմ ես:

— Տեսնում եմ...

— Մոսկվան է...

— Գավրիլա Իվանովիչ, սա ոնց որ նախանշանակ լինի... Ծիածանը լուսավորեց մեզ...

— Ինքս էլ չեմ հասկանում, թե ինչից է Մոսկվան էսպես շողշողում... Իսկ դու ուրախ ես, չէ՞, որ Մոսկվա հասանք:

— Բա ոնց... Ուրախ եմ ու վախենում եմ...

— Հասանք թե չէ, ուղիղ բաղնիք... Առավոտյան կգնամ իշխանական մոտ... Հետո քեզ կտանեմ արքայադուստր Նատալյա Ալեքսեևնայի մոտ...

— Հենց դրանից եմ վախենում...

— Կառապան, լսիր,— ասաց Գավրիլան, այս անգամ կարծես նույնիսկ փաղաքուշ տոնով,— հուպ տուր, հոգիս, մարդավարի եմ խնդրում, հուպ տուր...

Անձրևից հետո ճանապարհը տափանվել, հեշտացել էր: Պայտերից գուղձեր էին թռչում: Փայլում էր կեչիների սաղարթը: Ջեփյուռը հոտավետ դարձավ: Դիմացից ձգվեցին սայլերը՝ մուժիկներով, չծախած կովը կամ կաղ ձին ետևից կապած: Լողաց-անցավ վերստացույց, արծվակիր ու թվակիր սյունը՝ մինչև Մոսկվա 34 վերստ է մնացել... Ճամփեզրին նորից աղքատիկ խրճիթներ, որը կողքով կանգնած, որը ետևով, գերեզմանոցի ճերմականերարթ ուռենուց այն կողմ ծամատան ծեփաթափ գմբեթն էր: Ու նորից փողոցի մեջտեղով, հենց եռաձիու առջևից փորը բաց մի տղեկ էր վազում, մազերը ծածանելով, իբր ինքն էր ձին: Կառապանը կռացավ, մտրակով դաղեց նրա կծոտած հետույքը, բայց մանչուկի պետքն էլ չէր, միայն քիթը քաշեց, կլոր աչքերով ուղեկցելով սայլակը:

Եվ դարձյալ՝ ելան իջան, ելան իջան: Աջ նայեիր, ուր թփերի արանքից գետակն էր փայլում, մորուքավոր, երկար շապիկներով մուժիկներն էին, մեկը մյուսից առաջ ընկած, ոտքերը լայն-լայն գցելով առաջանում մարգագետնում, ու հավասար շողում էին գերանդիները: Զախ նայեիր, անտառի բացատում, ատվերի պոնկին, նախիրն էր պառկած, և տավարած տղան մտրակն առած վազում էր գորշասպիտակ ցլիկի ետևից, ու խոտերի մեջ ականջները թափահարելով խելոք շինկն էր հետևում նրան... Նորից շերտավոր վերստացույցը՝ 31 վերստ... Գավրիլան տնքաց.

— Կառապան, ախր երեք վերստ անցանք ընդամենը:

Կառապանը նրան դարձրեց ուրախ դեմքը, անհոգ ու ցից քթով, որ կարծես վարդագույն թշերի մեջ տեղ էր արել միմիայն բաժակի մեջ կախվելու համար:

— Բոյարին, վերստերը սյուներով մի հաշվիր, գինետներով հաշվիր, սյուները ճիշտ չեն... Տես, էս է՝ հասա՞նք...

Հանկարծ երկարուձիգ բղավեց. «Ը՞յ-օ՞յ-օ՞յ, անցին ձիերս...», ետ ընկավ, երասանները բաց թողեց, խոշորագույխ, տարաթույր ձիերը չափ ընկան, կտրուկ թեքվեցին ու կանգ առան օդեստան առաջ: Հին ու երկարուկ խրճիթ էր, դարպասի վրա տնկած բարձր ուղեձողով, գրանանուչների համար ցուցանակով. դռան վրա երկնագույն դաշտ էր նկարած ու թունդ կարմրով գրած. «Къобакъ»...

— Բոյարին, ինչ կուզես արա, ձիերը սատկեցին,— ուրախ-ուրախ ասաց կառապանը և հանեց բարձրակատար, թաղիքե գլխարկը,— կուզես ծեծկվով սպանիր, բայց ավելի լավ կլինի ասես մի բաժակ բան բերեն:

Հնաոտ հագնված պանդոկապանը՝ ճաղատ գանգից վեր կանգնած օձիքով հապալասագույն կաֆտանն ուսերին, արդեն կանգնած էր խարխուլ առմուտքին՝ հանկատար ու թարմ, մատուցարանին դրած երեք բաժակ կանաչ օդի, խաշխաշով երեք բլիթ... Հնար չկար, ստիպված էին իջնել սայլակից, մի քիչ շարժվելու, ոտքերը բացելու...

Մոսկվա մտան խոնավ աղջամուղջին: Դասատակերտների, գյուղակների, անտառակների, ժամատների, ցանկապատերի վերջը չէր երևում: Աղեղը երբեմն դիպչում էր լորենու ճյուղերին, և անձրևի կաթիլներ էին թափվում նրանց վրա... Ամենուրեք տաք ճրագներ էին վառվում թաղանթապատ կամ փայլուն լուսամուտներից այն կողմ, գավիթներում դեռ նստած էին մուրացկանները, ներմուծվելիս էին կոխում զանգակատների անցքերում: Անիվները դիկդիկացին փայտյա սալարկի վրայով... Կառապանի ուսը բռնած, Գավրիլան ցույց էր տալիս, թե ծոտումուտ որ նրբանցքներով քշի... «Հրեն, ցանկապատի տակ մարդ կա պառկած, դիմացով մտիր... Կանգնիր, կանգնիր, հասանք...»: Նա դուրս թռավ սայլակից ու ծնծեց սնդուկի պես, երկարաչա, կլայնկած շերտերով գամված դարպասը: Ի պատասխան կատաղի հաչոց ու շղթաների զնգզնգոց բարձրացրեցին բրովկինյան հայտնի գելիսեղդները:

Երկար բացակայությունից հետո լավ է հայրական տուն գալը: Ներս ես մտնում, ամեն ինչ սովորական է, ամեն ինչ նորովի ծանոթ: Ցուրտ նախասենյակում, լուսամտագոգին մոմ է վառվում, այստեղ պատերի տակ խնդրատուների համար փորագրանախշ նստարաններ են դրված, որ նստեն ու հանգիստ սպասեն մինչև տանտիրոջ մոտ կանչելը, ապա ձմեռային դատարկ նախասրահը՝ երկու վառարանով, այստեղ միջանցիկ քամուց տատանվող մոմը հատակին է դրված, դեպի ձախ տանող մահուդապատ դռնից այն կողմ հոլանդական դատարկ սենյակներն են՝ երեկի հյուրերի համար, աջ դուռը դեպի տաքուկ, ցածրառաստաղ սենյակներն է տանում, ուրիշ գնալու դեպքում պիտի անցնեիր թեք սանդուղքներով, որոնք կլնում էին վեր, իջնում ցած, ուր ապրեն խոհոդանոցներն էին, մառանները, նկուղները, սանդուղքատակ պահարանները... Եվ հորական տան հոտն էլ է առանձնահատուկ, դուրեկան, հարմարաբեր... Մարդիկ ուրախ են քո գալստյամբ, խոսում ու նայում են սիրալիր, սպասում են, որ ցանկություններդ կատարեն...

Հայրը՝ Իվան Արտեմիչը, տանը չէր, գնացել էր իր մանուֆակտուրաները: Գավրիլային դիմավորեցին մառանապետուհին՝ հաղթանդամ (ինչպես և պիտի լիներ) պատկառելի մի կին, ծանր ձեռքով ու երգեցիկ ձայնով, ավագ գործակատարը, ում մասին Իվան Արտեմիչն ինքն էր ասում, թե սատանայի մեկն է, և վերջերս արտասահմանից վարձված մաժորդոմ Կարլան: Ազգանունը ոչ ոք չէր կարողանում արտասանել, երկարահասակ ու մռայլադեմ տղամարդ էր, անգործությունից և ռուսական ուտելիքից կախ-կախ թշերով, հուժկու կրծքով, դուրս պրծած ճակատով, որ մեծ խելքի նշան էր, միայն մի պակասություն ուներ, ինչի համար էլ Մոսկվա էր ընկել, ձեռնտու ոռճիկով՝ քթի տեղը թավշյա սև շոր էր կապում ու մի քիչ ոնգախոս էր:

— Ոչինչ չեմ ուզում, մենակ բաղնիք,— նրանց ասաց Գավրիլան:— Ընթրիքին էլ որ դոնդող լինի, տավարի մսով խմոր, սագ ու էլի համով, յուղալի բաներ... Պիտերբուրգում լրիվ մաշվեցինք հոտած ու աղ դրած միս և պաքսիմատ ծամելով...

Մառանապետուհին տարածեց թմբլիկ դաստակները, փորին դրեց. «Հիսուս Քրիստոս, էդ ո՞նց ես դրանք ծամել»: Սատանա գործակատարը՝ այ-այ-այ, այծի մորուքը տմբացրեց խղճահարված: Մաժորդոմը,

որ ոուսերեն ոչ մի բառ չէր հասկանում, կանգնած էր կուռքի պես, արհամարհական գոռոզությամբ հսկայական հարթ ոտնաթաթն առաջ պարզած, ձեռքերը մեջքին: Մառանապետուհին մաքուր սպիտակեղեն էր հանում բաղնիքի համար ու երգեցիկ ձայնով պատմում.

— Բաղնիքում լավ կլողացնենք, կշոգեհարենք, կուտացնենք ու կարապի փետուրով տեղաշորում կպառկեցնենք, հորական տան քունն անուշ է... Էստեղ էլ ամեն ինչ՝ փառք աստծուն, շատ ու փորձանքից տունը հեռու է... Հոլանդական կովերը մեկիկ-մեկիկ ծնեցին, ագլիցական խոզերը ամենքն էլ տասնվեց-տասնվեց ճուտ բերեցին, մինչև անգամ իշխան-կայսրն էր եկել, տեսնի ու զարմանա... Անհաշիվ պտուղ ու բալ հավաքեցինք... Դրախտ է, հո տուն չի քո հոր տունը... Մենակ թե դատարկ է՝ ա՜խ, ա՜խ... Հերդ՝ Իվան Արտեմիչը, սենյակներում մահ կգա, մահ կգա. «Տխրում եմ, Ագապովնա, կասի խեղճը, էլի չգնա՞մ մանուֆակտուրաները...»: Փողն էնքան է, որ հաշիվը կորցրել է, Սենկան չլիներ,— աչքով արեց սատանա գործակատարի կողմը,— թիվ ու չափը չէր իմանա... Մեր ցավն էս սեքիթն է... Միշտ է, հիմի մեր տունն առանց էս տեսակ մարդու չի լինի, Մոսկվայում խոսում են, որ Իվան Արտեմիչին կարող է տիտղոս տան... Հա, ուրեմն, սա կարմիր փետրավոր գլխարկը կդնի, գավազանը կտա գետնով, ասքն էլ հետը, ասելու բան չունեմ, երևելի է... Պրուսական թագավորի մաժորդոմն է եղել, մինչև որ քիթը կարծեմ կծել-պոկել են... Սկզբից փախնում էինք, ինչքան չլինի օտար տեղից եկած մարդ է: Ջիապան Իգնաշկան սրան բալալայկա նվագել սովորեցրեց... Էդ օրվանից առավոտ-իրիկուն տնկացնում է, հոգիներս հանել է... Լավ էլ ուտող է... Պոչիցս կպած կգա. «Մայրիկ, ուտելիք...»: Էնքան անիծելք տեսած չկալինք: Ձնալած կարող է հենց էդ էլ պետք է իր գործի համար: Իվան-Կուպալայի օրը մեծ հրավերք ունեինք, թագուհի Պրասկովյա Ֆյոդորովնան էր եկել, ու առանց Կաղալայի մեր քանը դժվար էր լինելու: Կապիտանը հագավ, վրան մի տասը ֆունտ ծոփք ու թել կախ տված կլիներ, սպիտակ կաշվից մատ-մատ ձեռնոցները հագավ, ոսկի սանձն առնում, հազար ռուբլիանոց ոսկի բաժակը վերցնում ու ծունկ չոքելով տալիս էր թագուհուն: Մի ավելի թանկ ամաս ու բաժակ էր վերցնում ու տալիս արքայադուստր Նատալյա Ալեքսեևնային...

Մինչ տնտեսուհին կպատմեր, սենյակի ծառայողը, որը տանը մաժորդոմ երևալուց հետո սենեկապետ էր կոչվում հիմա, հանեց Գավրիլայի փոշոտ կապտանը, կամզոլը, բացեց փողկապը և տընքտնքալով սկսեց քաշել բոտֆորտները: Գավրիլան հանկարծ ոտքերը ցնցեց, վեր թռավ ու բղավեց.

— Արքայադուստրը մեր տա՞նն է եղել: Ի՞նչ ես դուրս տալիս:

— Եղել է, եղել է գեղեցկուհին, Իվան Արտեմիչի ձախ կողքն էր նստած աննմանը... Ամենքը նրան էին նայում, չէին կշտանում, ուտելն ու խմելը մոռացան... Մատնիքները մատներին, ապարանջաններով, ուսերը կարապի նման, կոծքի վերևը մի խալ կար, գարու հատիկի չափ, ամենքը տեսան... Հագի շորը ոնց որ ծաղկած վուշ, օդից էլ թեթև, կողքերից լավ փոթ տված, փեշի վրայով մետաքսի վարդեր, գլխին՝ անմահական թռչունի պոչ...

Գավրիլան այլևս չէր լսում... Ոչխարենու կիսամուշտակը ուսերին գցած, թաթարական չստերը քստքստացնելով, միջանցքներով ու սանդուղքներով ելնել-իջնելով, բաղնիք էր գնում: Խոնավ նախաբաղնիքում հանկարծ հիշեց.

— Ագապովնա, իմ հետ եկած մարդն ո՞ւր է:

Պարզվեց, որ Անդրյուշկա Գոլիկովին մաժորդոմը ներս չէր թողել, ու նա դեռ նստած էր բակում, լծարձակ սայլակի մեջ: Ի դեպ, այնտեղ էլ էր իրեն լավ զգում, իր խոհերի հետ: Սև տանիքից վեր աստղերն էին շողում, խոհանոցի, խոտանոցի անդորրաբեր հոտ էր գալիս ու մեկ-մեկ հեռուներից ծաղկած լորենու բույրն էր սփռվում: Դրանից առանձնապես էր արագանում սրտի զարկը: Անդրյուշկան, արմունկին կոթնած, աստղերին էր նայում: Այդ ինչ կրակներ էին, խիտ սփռված մութ-մանուշակագույն հարթության վրա, շա՞տ են արդյոք հեռու և ինչի համար են այնտեղ վառվում՝ ինքը չգիտեր ու չէր մտածում այդ մասին: Սակայն իր հոգին անդորրով էր լեցվում այնտեղից: Եվ ինչքան պստիկ էր ինքը՝ Անդրեյը այս սայլակի մեջ: Բայց, իմիջիայլոց, ոչ այնպիսի պստիկ, ինչպես ժամանակին հայր սուրբ Նեկտարին էր սովորեցնում՝ ոչ թե խոնարհ մի ճիճու, ողորմելի մի մարմին էր զգում ինքն իրեն... Թվում էր, թե անասունն անգամ չէր դիմանա այս ամենին, ինչ իր կարճ կյանքում կրել էր Անդրյուշկան. ստորացրել էին, ծեծել, խոշտանգել, սովատանջ արել ու սառնամանիքին կանգնեցրել, իսկ ինքն անհա, որպես արքայից արքա, աչքերը հառած տիեզերական կրակներին, իր ներսում գաղտնի ձայն է լսում. «Գնա, Անդրեյ, մի ընկնվիր, մի խոտորվիր, շուտով, շուտով կկենդանանա, կխայտա քո զարմանալի ուժը, ամեն ինչ կդառնա հնարավոր, այլանդակից աստանչելի աշխարհ կկերտես քո երևակայության մեջ...»:

Օ՜հ, օ՜հ: Դիվական նման ձայնի համար, հայր սուրբի մոտ ապրելիս, քառասուն օր շղթայակապ կնստեր մի շերեփ ջրի հույսին, արնածոր վերքերին ճրագի ձեթ քսելով գողունի: Մտածելով այդ մասին, Անդրեյն անչար ժպտաց: Հիշողության մեջ արթնացավ, թե ինչպես մի անգամ իրեն՝ արքայից արքային, Վարվառկայում, ծխակոլոլ պանդոկում առանձնահատուկ մոլեգնությամբ ծեծեցին ինչ-որ պոսպաղականներ, ոտքերից բռնած քարշ տվեցին սամուռք ու շպրտեցին թրիքախառն ձյան մեջ: Ինչի՞ համար ծեծեցին՝ չէր հիշում: Սարսափելի այն ձմռանն էր, երբ կիտայգորոդյան, կրեմլյան պարիսպներից կախ ճոճվում էին ստրելեցները: Այն ժամանակ Անդրեյը քաղցած, մերկ մարմնի վրա պատառոտված մի արմյակով, ոտաբոբիկ, հուսալքված ու տրտում թափառում էր պանդոկներում, ուտող-խմողներից մի բաժակ կանաչ օղի մուրում, գաղտնի հուսալով, որ ի վերջո կսպասեն իրեն՝ այն ձմեռ տանջալիորեն դա էր ուզում, անասելի խղճալով ինքն իրեն... Այնտեղ, պանդոկում էլ հանդիպեց սուրբ նահատակ Վարվառայի հարթած, կկոցած աչքերով, քիթը ճոթած, ցից մազափնջով ժամանակին: Հենց նա էլ համոզեց Անդրեյին դրախտային անդորր որոնել, մարմինը

գազանային խոշտանգման տանել ճայր սուրբ Նիկոտարիի մոտ... «Հիմարնե՞ր,— շշնջաց Անդրեյը:— Մարմի՞նը խոշտանգել: Ախ, ի՞նչ լավ բան է մարմինը...». Հիշողության մեջ ցոլաց-սնցավ. խաղաղ երեկո էր Պալեխում, գյուղում, ոսկի փոշի էր կանգնած, մնչում էին իրենց գոմերը թեքվող կուլերը: Մայրը՝ նիհար, տղամարդու ուսերով, գնում էր դեպի դարպասը, որ վաղուց էր պետք նորոգել, տունուտեղը՝ չքավոր, բարձիթողի: Անդրեյն ու եղբայրները՝ մեկը մյուսից փոքր, նստած էին անիվները ճանած ու շրջած սայլի վրա: Սպասում էին, դիմանում. մայրը խիստ էր, հար չունեին... Նա բացեց ծռված դարպասը: Լայն կողերը դարպասի փեղկերին քսելով, կարճ մնչալով մտավ Բուրենկան՝ կերակրողը: Մոր դեմքը մթնած էր, չարացած, տրտում, Բուրենկայի մոռթը՝ տաք, ճակատը գանգուր, պինչը խոնավ, աչքերը խոշոր, մանուշակագույն: Բուրենկան չէր նեղացնի: Ծնչեց տղաների վրա ու մոտեցավ ջրհորին՝ խմելու: Ու հենց այդտեղ, ջրհորի մոտ, մայրը նստեց ու սկսեց կթել: Ծը՛փ-ը՛փ, ը՛փ-ը՛փ՝ Բուրենկայի կաթը գլվում էր կովկիթը: Սայլին նստած տղաները դիմանում էին: Մայրը կապե պուտուկները բերեց և լայն շիթով լցնում էր կովկիթից: «Հը, եկեք,»— չարացած ասաց նա: Նոր կթած կաթն առաջինը Անդրեյը խմեց, քանի դեռ դիմանալ լինում էր, եղբայրները նայում էին, թե ինչպես է խմում, կրասերը նույնիսկ կարճ հոգոց հանեց, որ վերջինն էր խմելու...

— Էյ, ճամփորդ, իջիր սայլակից,— Անդրեյն ուշքի եկավ: Դիմացը մի պատանյակ էր կանգնած, բարկացած դեմքով՝ սենեկապետն էր,— Գավրիլա Իվանովիչը կանչում է քաղնիք... Էստեղ հանվիր, կաֆտանդ ու գլխարկդ գցիր սայլի տակ... Բոյարական տների պես չէ մեզ մոտ, ջապկով տուն ենք թողնում...

Քաղնիքից հետո գոհացած, սրբիչները վզներին գցած, Գավրիլան և Անդրեյը նստեցին ընթրելու: Ագապովնան մածորդոմին ուղարկեց իր խուցը, որ չխանգարի: Նրա ճերմակ ու փամփլիկ ձեռքերը սեղանից չէին կտրվում, շարունակ ափսեների մեջ էր դնում համեղ պատառներ, վենետիկյան ըմպանակների մեջ լցնում այս թանկ առիթով անկյուններից հանած իր զանազան թրմօղիները: Երբ մոմերը վառվեցին, Գավրիլան անկյունի աթոռի վրա դրված, կտավով ծածկված մի շրջանակ տեսավ: Ագապովնան վշտացած, ափը հենեց այտին.

— Չգիտեմ էլ, թե օտար մարդու մոտ քեզ ոնց ցույց տամ... Քույրիկդ՝ Սանյուշկան էր ուղարկել Հռանդիայից, հենց Իվան-Կուպալայի օրվանը... Իվան Արտեմիչը, հոգի մարդ է. մեկ կկախի պատից, մեկ էլ կդարդոտի, կհանի ու կտավը կգցի վրան... Սանյուշկան հետը նամակ էր դրել. «Հայրիկ, ի սեր աստծո, մի ամաչեք, իմ պարտությանն առանց վախենալու կախեք ճաշասենյակում, Եվրոպայում Էսպիսի բաներ չէ, որ կախում են, բարբարոս հո չեք...»:

Գավրիլան ելավ սեղանից, մոմը վերցրեց ու կտավը քաշեց աթոռին դրված շրջանակի վրայից: Գոլիկովը ոտքի ելավ, նրա շունչը կտրվեց նույնիսկ... Բոյարուհի Վոլկովայի դիմանկարն էր՝ անասելի գեղեցիկ ու անասելի գայթակղիչ...

— Այ քեզ բան,— ընդամենն ասաց Գավրիլան, մոմով լուսավորելով կտավը:

Նկարիչը Ալեքսանդրա Իվանովնային պատկերել էր վաղորդյան ծոպի մեջ, այիբի կատարին, դեղձենի մեջքին մորթ մերկ պառկած, միայն մարգարտանման եղունգներով ձեռքով առաջն էր ծածկել, մյուս ձեռքում խաղողով լի սկահակ էր բռնել, որի պոնկին երկու աղավնի խաղողն էին կոտրում: Գլխավերևում՝ աջից ու ձախից, երկու տռուզ մանկիկ, ոտները վեր տնկած, թշերն ուռեցրած, ծովախեցիներ էին փչում: Ալեքսանդրա Իվանովնայի դեռատի, ջրագույն աչքերով դեմքին, շրթունքների վեր բարձրացրած անկյուններին շատ խաղացկուն ժպիտ կար...

— Այ Սանկա՛,— ասաց Գավրիլան, նույնպես ոչ քիչ զարմացած:— Անդրյուշկա, ախր քեզ նրա մոտ ենք ուղարկելու, Հռանդիա... Տես հա, հանկարծ սատանան գլխիդ խաղ չխաղա... Վենուս, մաքուր Վենուս... Հասկանալի է, որ կավալերները նրա համար մենամարտում են, ու սպանվածներ էլ կան...

3.

Մոսկվայի պահապանը՝ իշխան-կայսրն ապրում էր պապական ընդարձակ դաստակերտում, Լուբյանկայա հրապարակի մոտ, Մյասնիցկայա փողոցի վրա: Հենց այստեղ իր եկեղեցին ուներ՝ տերտերներով, մահուդ լմելու, կտավի, կաշվի, երկաթեղենի արհեստանոցներ, ախոռներ, կովանոցներ, շնանոցներ, թռչնանոցներ, ամենայն բարիքով լեցուն շտեմարաններ ու նկուղներ, ու ամեն ինչ կառուցված էր հաստաբետ գերաններից, հարյուր տարվա համար: Տունն էլ էր այդպես առանց անմիտ պանուճանքների (որոնցով սկսել էին պատծենալ Մոսկվայում, Ալեքսեյ Միխայլովիչի ժամանակներից), տեսք չուներ, բայց ամուր էր սարքված, կավարապատ տանիքով, ուր հնությունից մամուռ էր բռնել, փոքր ու գետնից բարձր պատուհաններով: Տան նիստուկացն ու սովորությունը հնի պես էր: Բայց եթե մեկնումեկը ծանծաղ խելքի բերումով հրապուրված, ներկայանար հնի պես՝ կրունկներին ըսկող մուշտակով, երկար թևքերով, դեռ չասած՝ մորուքավոր, թեկուզ Ռյուրիկի տոհմից լիներ, շուտով պիտի հեռանար տնից, ռոմոդանովյան աղիի քրքջոցի տակ. մուշտակը մինչև ծնկները կտրած կլինեին, այտերի վրա խուզված մազափնջեր, կտրած մորուքը գրպանը խցկած, որ դուզաղի մեջ դնի, եթե ամաչելու է աստծուց... Երբ իշխան-կայսրը մեծ հրավերք էր անում, կանչվածներից շատերը ծանր հոգոցներով էին նախապատրաստվում գնալուն՝ այնքան ստիպողական բաներ կային նրա ինջուլքներին, անվայել չարություներ, զանազան ծանր կատակներ: Վարժեցրած մի արջ ի՛նչ կաներ. կմոտենար ըմբոստ հյուրին, թաթերի մեջ պղպեղօղու խոշոր բաժակը մատուցարանով բռնած, կմռնչար, պահանջելով, որ խմի, իսկ եթե հյուրը դիմադրեր ու չուզենար խմել, արջը մատուցարանը կշպրտեր ու կսկսեր լրջորեն ջարդել ու կոտրել հյուրին: Իսկ իշխան-կայսրը

միայն սեղանը կցնցեր իր փորով, իշխանական ծաղրածուն՝ խելացի, չար, շիլ մեկը, անատամ բերանի մեջ մի հատիկ ժանիքով, կբղավեր. «Արջը գիտի, թե ինչ անասուն գցի ուտի տակ...»:

Վաղ առավոտյան վեր կենալով, ներկած քաթանի մուգ շապկով, Հիսուսի աղոթքն ասելնագործած շորն գոտին կրծքի տակ կապած, սեկն գույնզգույն սապոգներով, առավոտյան աղոթքը կաներ: Երբ արևի շողը կթափանցեր խնկի ծխի միջով, մոմերի ու նրագների լույսերը կիամրեին և վախվորած տերտերը դողդոջ ձայնով «ամեն» կասեր իշխան կայսրը ծունկ կչոքեր փոքր գորգի վրա, ծանր տնքալով ճակատը կհպեր նոր լվացված հատակին, հետո ձեռքերից բռնած կբարձրացնեին նրան, կհամբուրեր սառը խաչն ու կգնար ճաշատուն: Այնտեղ, հարմար նստելով, սև բեխերը սղալելով, պղպեղոջի կխմեր այնպիսի բաժակով, որ եթե ոչ ոուս մեկը խմեր, բերանը երկար ժամանակ բաց պիտի մնար, և աղ արած հացի մի կտոր կգցեր բերանը, հետո կսկսեր ուտել. բոտվինյա, գանգաուն դոնդողներ, թրջած, թթու դրած բաներ, լաֆշա, տապակած միս, մուժիկավարի կուտեր՝ անշտապ: Տնեցիները, իշխանուհին ինքը՝ Անաստասիա Ֆյոդորովնան, Պրասկովյա թագուհու հարազատ քույրը, սեղանի վրա լուռ կմնային, կամացուկ կդնեին գդալները, ուտելիքը մատուցարաններից պտղունցով կվերցնեին: Պատուհաններին դրած վանդակների մեջ կսկսեին ծլվլալ լորերն ու վարժեցրած սարյակները, մեկը նույնիսկ հստակ ասում էր. «Հոպար, օղի...»:

Հետո մի շերևի կվաս կխմեր, փոքր-ինչ հապաղելով, վեր կկենար իշխան-կայսրը, հատակի տախտակները ճռճռացնելով նախասենյակ կգնար, այնտեղ նրան կհագցնեին ընդարձակ մահուդե կափտանը, գավազանն ու գլխարկը կմատուցեին: Երբ ծածկավոր առմուտքի պղտոր ապակիների միջից երևացող նրա ստվերը աստիճաններով սկսեր իջնել, բակում, մոտերքում եղած բոլոր մարդիկ ցրիվ կգային, ով որտեղ պատահեր: Մենակ կքայլեր բակով, աղյուսապատ արահետով: Վիզը հաստ էր, գլուխը շրջելը նրա համար դժվար էր, այնուամենայնիվ չոած աչքի պոչով ամեն ինչ կնկատեր. ով ուր փախավ, որտեղ պահվեց, որտեղ ինչ մանր-մունր անկարգություններ կան: Ամեն ինչ կհիշեր: Սակայն բազում մեծ ու փոքր պետական գործեր ուներ և մանր բաներին ձեռքը հասնելս չէր հասնում: Կանցներ ցանկապատի երկայնս դռնակով դեպի հարևան բակը՝ Պրեոբրաժենյան վարչատուն: Այնտեղ, կիսախավար երկար միջանցքներում նրա առաջ ատենավորներն ու աստիճանավորները լուռումունջ գլխարկները կպոկեին գլխներից, գինվորները կձգվեին պատվի առած:

Պրեոբրաժենյան վարչատան ատենավոր Պրոխոր Չիչերինը կդիմավորեր նրան գրասենյակի դռան առաջ, ու երբ իշխան-կայսրը կնստեր բորբոսակալած կամարի ներքո, լուսամուտի տակ դրված սեղանի մոտ, իսկույն կսկսեր խոսել գործերի մասին, հերթականությամբ. երեկ Տուլայից բերված է պղնձյա չորս թնդանոթ, նույնքան էլ թուջածույլ ու շատ լավ: Անմիջապես ուղարկել ո՞ւր՝ Նարվա՞, թե՝ Ցուրյև: Նաև երեկվա օրը լրիվ հագցրել են նորակազմ գնդի առաջին

վաշտը, միայն թե գինվորները դեռ բոբիկ են, անճարմանդ կոշիկները կբերեն մյուս շաբաթ, Բուրմիստրական պալատում կոշկի վանառաշարքի վանառականներ Սոպլյակովն ու Սմուռովը պատրաստ են խաչով երդվել, որ չեն խաբի: Ի՞նչ անել: Վառոդ, պատրույգ, տոպրակներով գնդակ, տոպրակներով կայծքար է ուղարկված Նարվա, հրամանի համաձայն: Զեռքի նոնակ չհաջողվեց ուղարկել, քանի որ պահեստապետ Երոշկա Մաքսիմովը երկրորդ օրն է հարբած է, բանալին ոչ ոքի չի տալիս, ուզել են ուժով վերցնել, խելքը թոցրած վրա է պրծել մարդկանց, կաղամբ փրթելու կացնով... Ի՞նչ անել: Այդպիսի շատ գործերի մասին ասաց Չիչերինը, վերջում, մտենալով լուսամուտին, կամարի տակ, վերցրեց գաղտնի գործերի պանակաթերթերը (ատենավորների գրառումները առանց ծեծի հարցաքննությունների ու խոշտանգումներով հարցաքննությունների) և սկսեց կարդալ: Իշխան-կայսրը, ձեռքերը ծանր-ծանր դրած սեղանին, հասկանալի չէր՝ լսո՞ւմ էր, թե՝ ննջում, թեև Չիչերինը լավ գիտեր, որ բուն էությունն անպայման կլսի...

— «Լքված բաղնիքում, ուր թաքնվում էր կարգալույծ տերտեր Գրիշկան, արքայադուստրեր Եկատերինա Այեքսեևնայի և Մարյա Այեքսեևնայի բակում, հատակի տակ գտնված է մեկ քառորդը մնացած, մատնաչափ հաստությամբ տետրակ,— պանաթերթն էր կարդում ատենավոր Չիչերինն այնպիսի միապաղաղ ձայնով, ասես չոր սիսեռ էր շաղ տալիս Ռոմոդանովսկու գլխին:— Տետրակի առաջին էջի ներքևում գրված է. «Հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո... Մի տեսակ խոտ կա՝ զելեզեկա են ասում, ձորերում ու այրուտներում է աճում, ինքը փոքր է, ծաղիկները ինը թերթիկավոր, տերևը երեք գույն. ծիրանի, ալ կարմիր ու կապույտ, այդ խոտը անչափ ուժեղ խոտ է, պիտի քաղել նորալուսնին, սղկել, եփել ու երեք անգամ խմել՝ կողքդ կտեսնես ջրային ու օդային դևերին... Հմայական խոսք կասես նրանց «ընցդոյչնդսի», և ցանկությունդ կկատարվի...»:

Իշխան-կայսրը խոր շունչ քաշեց, բարձրացրեց կիսախուփ կոպերը.

— Էդ խոսքը մի անգամ էլ կրկնիր պարզ:

Չիչերինը, ճակատը քորելով ու կնճռոտվելով, չարացած հազիվ արտասանեց՝ ընցդոյչնդսի... Նայեց իշխան-կայսրին, վերջինս գլխով արեց: Ատենավորը շարունակեց կարդալ.

«Օ՜, իշխաններ, իշխանազուններ, օ՜, արցունք ու հառաչանք: Ո՞րն է բաղձալին: Բաղձում ենք զսպել ներկա ժամանակը, նրա թափը, որ կրկին գան առտնին օրեր...»:

— Ահա՛, ահա՛, ահա՛:— Իշխան-կայսրը շարժվեց աթոռի վրա, ուռած աչքերի մեջ քմծիծաղ ու կուսհում ցոլաց-անցավ:— Զելեզեկա խոտը հասկացանք: Ի՞նչ է, կարգալույծ Գրիշկան ընդունե՞ց տետրակը:

— Գրիշկան այսօր ժամը երեքին, տանջելուց հետո ընդունեց տետրակը: Իբր Կիսլովկայում է առել անծանոթ մարդուց, չորս կոպեկով: Իսկ թե ինչի՞ է թաքցրել բաղնիքի հատակի տակ: Ասաց, որ մտքի տկարությունից:

— Իսկ դու հարցրե՞ի՞ր, թե ինչպես հասկանանք. «Որ կրկին գան առտնին օրեր»-ը:

— Հարցրեցի: Հինգ մտրակ խփեցին, պատասխանեց, սեւորակն իրր ասել է թղթի համար, վրան նշխարք թխելու, իսկ թե մեջն ինչ է գրած, չի կարդացել, չգիտի:

— Ախ, գողի մկնը, գող:— Իշխան-կայսրը դանդաղ թքոտում էր մատը, շրջելով տետրի քրքրված էջերը: Մի քանի բան կիսաձայն կարդաց. «Վախարիա խոտը, գույնը կարմրադեղին, եթե մարդուն թունավորված ուտելիք տան, խմացրու, շուտով դուրս կթափի բերանից ու ետևից...»:— Օգուտակար խոտ է,— ասաց իշխան-կայսրը: Ապա՝ եղունգը տողերի վրայով տանելով.— «Կիրիլի գրքում գրված է. կգա քաղցրաղեգուն ու կգայթակղեցնի: Նրա գալստյան կանխանշաններն են Գիլոցիան խոտը, իմա՝ ծխախոտը, կնրամայեն վառել ու ծուխը կուլ տալ, ու տրորել, փոշի դարձնել ու հոտ քաշել, ու սաղմոս երգելու փոխարեն անդադար այդ փոշին կքաշեն ու կփոշտան: Մյուս կանխանշանն է մորուք ածիլելը...»:— Է, ինչ,— իշխան-կայսրը փակեց տետրը,— գնանք, հարցնենք, թե ով է ցանկանում զսպել ներկա ժամանակը: Կարգալույծը ճարպիկ, ընկած-ելած մարդ է, էս տետրի մասին վաղուց գիտեի, Մոսկվայի կեսին կարդացել է:

Նեղլիկ, խոնավությունից քայքայված աղյուսե աստիճաններով իջնելով ներքնահարկ, գնդանը, Չիչերինն ինչպես միշտ, դանդաղ ասաց.

— Գետնի տակից է էս շուրը բարձրանում, աղյուսը փտել է, մի օր էլ ընկնելու ենք, ջարդվենք, նոր սանդղոք է պետք դնել...

— Հա, պետք է,— պատասխանեց իշխան-կայսրը:

Առջևից, մոմը բռնած, գնում էր փոխատեղավոր-գրագիրը, որը Չիչերինի պես օտարերկրյա, բայց անասելի մաշված կաֆտանով էր, պղնձյա թանաքամանը վզից կախ, կիսապատռոտված գրպանից թղթի գալարն էր ցցվել, ցածր գետնափոռում նա մոմը դրեց կաղնեփայտե սեղանին, և մի քանի առնետ ստվերի պես ծլկեցին իրենց բները:

— Առնետներն էլ են շատ շատացել,— ասաց ատենավորը,— ամեն օր ուզում եմ դեղատնից մկնդեղ ուզել:

— Հա, պետք է...

Գազանակերպ երկու տղամարդ, կամարների տակ կոտնալով քարշ տալով բերեցին աչքերը ետ գնացած, բրդի պես զգզված մորուքով Գրիշկային՝ դեմքը կանաչավուն էր, շրթունքը կախ: Իրո՞ք, այլևս չէր կարողանում տիրապետել ոտքերին: Կեռը ծայրին կախ պարանի տակ դրեցին նրան, ընկավ ու մնաց մեռածի պես: Ատենավորը կամացուկ ասաց. «Հարցաքննել ենք առանց խեղանդամելու, ու իր ոտքով գնաց...»:

Իշխան-կայսրը որոշ ժամանակ նայում էր Գրիշկայի զգզված մազերի արանքից երևացող ճաղատին:

— Հայտնի է,— ասաց նա քնած ձայնով,— նախանցյալ տարի Զվենիգորոդում, Եղիա մարգարե եկեղեցուց տարել ես սրբապատկերների արծաթյա ծածկոցները, Ավետման եկեղեցու գանձանակն ես կտրել, նույն տեղում խորանից գողացել ես տետրերի քարքն ու վա-

լենկաները: Տարածը ծախել ես, խմելու տվել, քեզ բռնել են ու պահակներից փախչելով, եկել ես Մոսկվա, ուր մինչև օրս թաքնվում էիր տարբեր բոյարների տներում, հետո էլ արքայադուստրերի տան բակում, բաղնիքում... Ընդունո՞ւմ ես: Պատասխանելո՞ւ ես... Չէ՞: Լա՛վ... Էս գործերը դեռ քեզ համար շատ վտանգավոր չեն...

Իշխան-կայսրը լռեց: Գազանակերպ տղամարդկանց ետևում անձայն երևաց վայելչատես, հյուծված, մոմի պես դալուկ դեմքով, հարթ բեխերի ու գանգուր մորուքի արանքում կարմրին տվող խոշոր բերանով դահիճը:

— Հայտնի է,— նորից սկսեց իշխան-կայսրը,— գնացել-եկել ես Գերմանական արվարձան, Ուլյանա անունավոր վանքական կույսի մոտ, նամակ ու փող տվել նրան ոմն անձնավորություններից... Այդ Ուլյանա կոչեցյալը նամակները տարել է Նովոդևիչյե, հայտնի անձնավորությանը... Նրանից նամակ ու կապոցներ է վերցրել ու դու տարել ես վերոհիշյալ անձնավորություններին... Եղե՞լ է: Ընդունո՞ւմ ես:

Ատենավորը թեքվեց սեղանի վրայով, աչքերով Գրիշկային ցույց տալով, շշնջաց իշխան-կայսրին.

— Ասուված վկա, զգուշացավ, ականջներից եմ տեսնում...

— Չե՞ս ընդունում: Լավ... Համառում ես... Բայց իզուր... Մեզ համար էլ է ավելորդ գլխացավանք, քեզ համար էլ ավելորդ տանջանք... Լավ... Հիմա սա թե ինչ ասա ինձ... Հատկապես ո՞ւմ տներն ես գնացել: Հատկապես ո՞ւմ համար ես այս տետրից կարդացել ներկա ժամանակը, նրա թափը զսպելու, կրկին առտնին օրեր գալու մասին...

Իշխան-կայսրը կարծես ընից արթնանալով, հոնքերը բարձրացրեց, նրա դեմքը փքվեց: Դահիճը փափուկ քայլերով մոտեցավ բերանբացվայր պառկած Գրիշկային, ձեռք տվեց, գլուխն օրորեց.

— Իշխան Ֆյոդոր Յուրևիչ, չէ,էսօր նա խոսողը չի: Իզուր տեղը պիտի չարչարենք: Գելարանից ու հինգ մտրակից քարացել է... Պետք է թողնել վաղվան:

Իշխան-կայսրը եղունգներով թխկթխկացրեց սեղանը: Բայց դահիճ Սիլանտին փորձված էր՝ եթե մարդը քարացել է, թեկուզ կես անես, ճիշտ խոսք չես լսի: Իսկ գործը հույժ կարևոր էր. կարգալույծ տետրեր Գրիշկային բռնելով, իշխան-կայսրն ընկել էր եթե ոչ ուղղակի դավադրության, համենայն դեպս, մոսկվացի առանձին անձնավորությունների չարամիտ փնթփնթոցի և հանդուրժության հետքի վրա, ովքեր դեռ ափսոսում էին արքայադուստր Սոֆյայի օրոք ունեցած իրենց բոյարական ազատությունները և ցավում, որ մինչև օրս նա տանջվում է Նովոդևիչյեում, սև վեղարի տակ: Բայց ուրիշ ելք չկար՝ իշխան-կայսրը ոտքի ելավ ու բարձրացավ իարխուլ սանդուղքով: Չիչերինը մնաց Գրիշկայի մոտ, մի բան կորզելու:

4.

Խոնավ, տաք, մշուշոտ առավոտ էր: Նրբանցքներում թաց ցանկապատերի և վառարանների ծխելուզգների հոտն էր տարածվել: Ձին ցլմփացնում էր ջրափոսերի մեջ: Գավրիլան իջավ Պրեոբրաժենյան

վարչատան դարպասի մոտ, և երկար ժամանակ չէր կարողանում տեսնել պահակախմբի ապային:

«Ո՞ւր է կորել սատանան»,— բղավեց նա դարպասի մոտ կանգնած բեխավոր զինվորի վրա: «Ո՞վ գիտի, ամբողջ ժամանակ էստեղ էր, մի տեղ գնացած կլինի...»:— «Վազ տուր, զոհիր...»:— «Ոչ մի դեպքում բացակայել չեմ կարող...»:— «Ուրեմն, թող ես գնամ...»:— «Հրամայված է ոչ մեկին ներս չթողնել...»:— «Ուրեմն, ինքս կգնամ»,— Գավրիլան հրեց նրան, որ մտնի դարպասի դռնակով, զինվորն ասաց. «Դռնակը բացեցիր թե չէ, ոնց որ արտիկուլն է ասում, սվինը փորդ կխրեմ...»:

Այդ ժամանակ վերջապես աղմուկի վրա դուրս եկավ պահակախմբի ապան, որը դարպասի մյուս կողմի տնակում անգործ նստած էր՝ պեպենոտ մեկն էր, փոքր դեմքով ու անորոշ հայացքով: Գավրիլան նետվեց նրա վրա, բացատրելով, որ Պիտերբուրգից փոստն է բերել և պետք է անձամբ հանձնի իշխան Ֆյոդոր Յուրևիչին:

— Որտե՞ղ կարող եմ տեսնել իշխան-կայսրին: Հիմա վարչատա՞նն է:

— Ոչինչ հայտնի չէ,— պատասխանեց ապան, նայելով շերտավոր խոշոր կատվին, որն արհամարհանքով հատում էր թաց փողոցը:— Իշխանի տան կատուն է,— ասաց զինվորին,— ինչ ձեռ էին գցել, իբր կորել է, հրեն արիկան...

Հանկարծ դարպասի փեղկերը ճռնչացին, բացվեցին ու թափով դուրս թռավ շարժուն, սևաթույր քառաձին, փիրուզեգույն լծասարքով: Գավրիլան հազիվ ետ ցատկեց, հսկայական, ոսկեզօծ, ցածր անիվներով կառքի լուսամուտից նրան նայեց Ռոմոդանովսկին՝ խեցգետնի իր աչքերով: Գավրիլան փութով հեծավ ձին, կառքին հասնելու համար, պահակախմբի ապան կանչեց սանձից՝ սատանան գիտե, կամ ի՞նչ կեղտոտ մարդ էր, կամ էլ, իրոք, ըստ կանոնադրության, իշխան-կայսրի ետևից ընկնել չէր կարելի...

— Թող,— կատաղած բղավեց Գավրիլան, սանձն առավ, խթանեց, ծաոս արեց ձին, ապան սանձից կախվեց ու ընկավ... «Հասեք: Բռնեք, բռնեք»,— արդեն հեռվից լսեց Գավրիլան, դուրս թռչելով Լուբյանսկայա հրապարակ:

Կառքին չհասավ, բարկացած թքեց ու Նեգլինննայայի կամրջով թեքվեց Կրեմլ, Սիբիրյան վարչատուն:

Վարչատան ցածրիկ, երկարուկ, ժանգոտած տանիքով շենքը, որ դեռ Բորիս Գոդունովն էր կառուցել, զառիթափի վրա էր, պարապից բարձր, հետնամասը Մոսկվա գետին էր նայում: Նախասրահներում ու միջանցքներում մարդիկ էին խռնված, նստած ու պատերի տակ պառկած հատակին, ճռճռան դռներից դուրս էին թռչում երկարափեշ, սեղանաձևերին շարունակ քսմսելուց կարկատած արմունկներով նաֆտաններ հագած փոխատեղավորները, սագի փետուրները սկանջների ետևը խրած: Թղթերը թափանցելով, բարկացած բղավում էին խոժոռանայաց վիբիրցիների վրա, որոնք հազարավոր վերստեր հատած էին կտրել, արդարություն գտնելու աշխարհի ստեղծման օրից դեռ չտեսնված կաշառակեր ու ինքնակամ վոյեվոդայի վրա, կամ հանքերի,

ռակեխուզության, մորթեղենի ու ձկեղենի գործ բացելու արտոնություն ստանալու: Փորձվածները, այդ հայհոյանքը կուլ տալով, աչքերը սիրալիր կկոցելով, կասեին փոխատեղավորին. «Ա՛յ հոգի, ա՛յ բարեգործ, արի մի հանդիպենք, սրտներս բացենք ուտել-խմելու մի տեղ, կամ որտեղ որ հրամայես...»: Անփորձը թողնում ու գնում էր, գլուխը կախած, որպեսզի վաղն ու բազում օրեր, իջևանատանը սնվելով, գա պատեղ, ապասի, ձանձրացնի...

Իշխան-կայսրը զենքերի գործերի բաժանմունքում էր: Գավրիլան էլ չհարցրեց՝ կարելի է, թե չէ, մոտեցավ դռանը, ինչ-որ մեկը կափտանը քաշեց. «Ո՞ւր, ո՞ւր, չի կարելի...»: Արմունկով հրեց, ներս մտավ: Իշխան-կայսրը մենակ նստած էր հեղձուկ, ցածրառաստաղ սրահում, փեղկը կիսաբաց պատուհանի մոտ, գույնզգույն թաշկինակով վիզն էր սրբում: Հրամանների, խնդրագրերի, բողոքների մի կույտ էր դրված սեղանի վրա: Գավրիլային տեսնելով, կշտամբանքով գլուխքն օրորեց.

— Ծատ համարձակն ես, Իվան Արտեմիչի տղա: Տես է՞: Հասարակ ոսկորը հիմա ինքն է դռները բաց անում... Ի՞նչ ունես:

Գավրիլան հանձնեց փոստը: Ասաց, որ իրեն հրամայված է բերանացի ասել երկաթեղեն տարբեր ապրանքներ, հատկապես մեխ հայցնել Պիտերբուրգ, շուտափույթ... Իշխան-կայսրը մոմե կնիքը պոկելով, հատ մատներով բացեց թղթավորի նամակը և աչքերից հեռու բռնած, սկսեց շրթունքները շարժել... Պիտերը գրում էր.

«Տիր: Ձերդ մեծությանը տեղեկացնում եմ, որ մեզ մոտ՝ Նարվայի ասակ, զարմանալի բան եղավ՝ հիմարները խելոքներին խաբեցին... Ծերերի աչքերի դեմ հպարտության պատն էր բռնել, որի ետևից չտեսան մեր խաղը... Ծպծալ սույն մարտի մասին, ուր սպանվեց և գերի վերցվեց Նարվայի կայազորի մեկ երրորդը, կլսեք ականատեսից, գվարդիայի պոռուչիկ Յագուժինսկուց, որը շուտով ձեզ մոտ կլինի... Ինչ վերաբերում է դեղատան համար բուժիչ խոտերը Պիտերբուրգ ուղարկելուն, մինչև հիմա մի մխալ չի ուղարկվել... Այս մասին բազմիցս գրել եմ Անդրեյ Վինիուսին, որն ամեն անգամ ինձ մոսկովյան անմիջապես է պատվել... Որի մասին հաճեք իրեն հարցնել. ինչի համար է թափթփվածությամբ արվում կարևոր գործը, որը նրա հազար գլխից էլ թանկ է... Պտր...»:

Կարդալուց հետո իշխան-կայսրը շրթունքներին մոտեցրեց նամակի այն տեղն, ուր ստորագրությունն էր: Ծանր հոգոց հանեց:

— Ծոգ է,— ասաց նա:— Ծոգ է, մշուշ... Շատ գործ կա: Օրվա մեջ կեսն էլ չի լինում անել... Օգնականներս, ա՜խ, իմ օգնականները... Քիչ մարդ կա, որ ուզում է աշխատել, ամենքն ուզում են մի կերպ գլուխ պրծացնեն: Ու մեծ կտոր պոկեն, տանեն... Դո՞ւ ինչի հս զուգվել, կեղծամ դրել... Չլինի՞ արքայադստեր մոտ ես գնում: Նա պալատում չէ, Իզմայլովսկում է... Որ տեսար, չմոռանաս ասես. Պետրովկայում, պանդոկի լուսամուտին մի թանկարժեք սարյակ կա դրած, էնքան լավ ռուսերեն է խոսում, որ կողքով անցնող բոլոր մարդիկ կանգնում, լսում են: Կառքի միջից երեկ ինքս եմ լսել: Կարելի է առ-

նել, եթե արքայադուստրն ուզենա... Գնա... ճամփին ատենավոր Նեստերովին ասա, մարդ ուղարկեն Անդրեյ Վինիուսին կանչեն ու մոտս բերեն իսկույն... Առ, ձեռքս հանթուրիր...

5.

Կեսօրից հետո անձրև կաթկթաց, Անիսիա Տոլստայան տրտմելուց խուսափելու համար առաջարկեց գնդակ խաղալ դատարկ գահադահլիճում, որ շատ տարիներ ոչ ոք չէր լինում:

Աննա ու Մարֆա Սենշիկովների ուշքն ու միտքը որևէ բան խաղալն էր՝ ժապավենները ծածանելով, մինչև արմունկը բաց ու թմբլիկ ձեռքերը պարզած, ծորտալով ընկել էին գնդակի ետևից, նոնուացնելով հատակի տախտակները: Նատալյա Ալեքսենևան այսօր չգիտես ինչու տրտում էր, խաղը չէր ուրախացնում... Երբ շատ փոքր էր, այս դահլիճում, հատակից բարձր լուսամուտներից կարմիր, դեղին, կապույտ ապակիների միջից արևն էր թափանցում և ոսկենկար կաշին էր շողշողում պատերի վրա: Կաշիները պոկել-տարել էին և պատերի գերանները էին երևում, արանքների խծուծը կախկխված: Տանիքի վրա անձրևն էր կոկտում: Նատալյան ասաց Կատերինային.

— Իզմայլովյան պալատը չեմ սիրում, մեծ է ու դատարկ, իսկը հանգուցյալ... Գնանք մի տեղ, սուսուփուս նստենք:

Նա ձեռքը դրեց Կատերինայի ուսին ու տարավ ներքև, հանգուցյալ մոր՝ Նատալյա Կիրիլովնայի փոքր, նույնպես լքված ու մոռացված ննջարանը: Ինչքան ժամանակ էր անցել, բայց այստեղ թեկուզև թույլ, խունկի ու մուշկի բույր կար: Նատալյա Կիրիլովնան մինչև կյանքի վերջին օրերը արևելյան բույրեր էր սիրում:

Նատալյան նայեց հյուսկեն սյուներով դատարկ, անվարագույր մահճակալին, պատի քառակուսի, աղոտ հայելուն, շրջեց ու հրեց պատուհանի խունացած շրջանակը: Սենյակ լցվեց լուսամուտի տակ աճող եղրևանու, կռատուկի ու եղինջի վրա թափվող անձրևի հոտը...

— Նստենք, Կատկա:— Եվ նրանք նստեցին բաց պատուհանի մոտ:— Այո,— հոգոց հանեց Նատալյան:— Ահա, ամառն էլ է վերջանում, մեկ էլ կտեսնենք, աշուն է արդեն... Քեզ համար ինչ... Տասնինն տարեկանում օրերը չեն հաշվում, թող թռչունի պես թռչեն, անցնեն... Իսկ ես գիտե՞ս քանի տարեկան եմ: Պետրուշա եղբորիցս հինգ տարով եմ փոքր... Հապա հաշվիր... Մայրիկը տասնյոթ տարեկան է ամուսնացել, հայրիկը քառասունին մոտ էր... Գեր մարդ էր, մորուքից միշտ անանուխ հոտ էր գալիս, ու միշտ հիվանդ էր... Ես նրան քիչ եմ հիշում... Ջրգողությունից մահացավ... Անիսիա Տոլստայան մի անգամ թրմոցի էր խմել ու սկսեց ինձ գաղտնի բաներ պատմել: Ջահել ժամանակ մայրիկը ուրախ, անհոգ ու պոռթկուն բնավորություն է ունեցել... Հասկանո՞ւմ ես: (Նատալյան մշուշված նայեց Կատերինայի աչքերին:) Նրա մասին ինչե՞ր չհորինեցին Սոֆյայի կամակատարներն ու պնակալեզները... Իսկ մի՞թե նրան կարելի է մեղադրել: Հին հավատքով ամեն ինչ մեղք է, որ կին ես, արդեն մեղք է, դիվական

անոթ ես, դժոխքի դուռ... Իսկ նոր կարգով, մեր կարգով՝ սքանչելի ամուրը թեին տված նկով ու խոցեց նետով... Է ի՛նչ, դրանից հետո գիշերով քարը վիզդ գցես ու աշնանային լի՛ճն ընկնես: Ոչ թե կինը, ամուրն է մեղավոր... Անիսիան պատմում էր, որ այն ժամանակ Մոսկվայում ապրելիս է եղել բոյարի որդի Մուսին-Պուշկինը, հրեշտակի, ավելի լավ է ասել, սատանայական գեղեցկության տեր մի տղամարդ, անվախ, քաջարյուն, ձի և խնջույք սիրող... Բարեկենդանի շաբաթին Մոսկվա գեղի սառույցի վրա ամենքին կանչում էր լոնցբուկոիվ տալու... Բոլորին ծեծում էր... Մայրիկը գնդտնի գնացել է այնտեղ, հաստաբակ սահակառքով ու նայել նրա քաջությանը... Հետո վերցրել է իր պալատը, որպես մատուակ... (Նատալյա Ալեքսենևան գեղեցիկ գլուխը դարձրեց որբացած մահճակալին, հոնքերի արանքում կնճիռ գոյացավ:) Ու մեկ էլ՝ նրան ուղարկել են Պուստոզերսկ, վոյեվոդա... Եվ այլևս երբեք նրան չի տեսել մայրիկը... Կատերինա, իսկ ես դա էլ չուզեմ:

Անձրևը շարունակում էր ալարկոտ մաղմղել: Հեղձուկ էր: Մշուշից այն կողմ տարտամ գծագրվում էին հսկա ծառերը, որոնք նման չէին իզմայլովյան ծառերին: Բոլոր թռչունները պատսպարվել էին տանիքի տակ, չէին ծլվլում, չէին երգում: Միայն զզզվված մի ագռավ էր ցածից թռչում ապիտակած մարգագետնի վրայով: Կատերինան տրտում հայացքով հետևում էր թռչունին, շատ էր ուզում ասել արքայադստերը, որ գող ագռավը նորից թռչնանոց է գնում, երևկվա նման, դեղնակտուց մի ճուտ գողանալու: Նատալյա Ալեքսենևան արմունկները դրեց լուսամտագոգին, գլուխը թեքվեց դորած հյուսքի ծանրությունից: Այդ ժամանակ Կատերինան նայելով նրա վզին ու ծոծրակի աղվամազին, մտածեց. «Մի՞թե սա ոչ ոք չի համբուրել: Ի՞նչ դառը բան է»,— ու հազիվ լսելի տնքաց:

Բայց Նատալյան լսեց այդ տնքոցը, ուսը կամակոր շարժեց, ծնոտը ափին հենեց.

— Հիմա էլ դու պատմիր քո մասին... Միայն թե ճշմարիտն ասա... Հանի՞ ամանոտ ես ունեցել, Կատերինա:

Կատերինան գլուխը դարձրեց ու շշնջաց.

— Երեք...

— Ալեքսանդր Դանիլովիչի մասին գիտենք: Իսկ մինչ նա՞: Ծերեմետևը եղե՞լ է:

— Չէ, չէ— աշխույժով պատասխանեց Կատերինան:— Պարոն Ֆելդմարշալի համար հատգրեցի մենակ էստոնական, քաղցր սուլ եփել՝ կաթով, ու ապիտակեղենը լվացի... Ահ, չհավանեցի նրան: Էաց լինելուց վախենում էի, բայց ինքս ինձ հաստատ ասացի, վատարանը կխառեմ ու շմոլքից կխեղդվեմ, բայց նրա հետ չեմ ապրի... Ալեքսանդր Դանիլովիչը հենց նույն օրն ինձ տարավ... Նրան շատ սիրեցի... Շատ ուրախ մարդ է ու շատ էր կատակում ինձ հետ, շատ էինք ծիծաղում... Նրանից բոլորովին չէի վախենում...

— Իսկ եղբորիցս վախենո՞ւմ ես:

Կատերինան սեղմեց շրթունքները, թավշանման հոնքերը կիտեց, ազնվորեն պատասխանելու համար.

— Այո... Բայց ինձ թվում է, շուտով էլ չեմ վախենա:

— Իսկ երրորդ ամանոն ո՞վ էր:

— Օ՜, Նատաշա, երկրորդը ամանոն չէր, ռուս գինվոր էր, բարի մարդ, միայն մի գիշեր սիրեցի նրան... Ինչպե՞ս կարելի էր մերժել, նա ինձ խլեց աղվեսի մորթու գլխարկով ու կեռ թրերով սարսափելի մարդկանցից... Նրանք ինձ դուրս քաշեցին վառվող տնից, շորերս պատռեցին, մորակով խփում էին, որ չճանկռտեմ, ուզում էին թամբին նստեցնել... Նա վրա ընկավ, հրեց մեկին, հրեց մյուսին, ու շատ էլ ուժեղ էր. «Ես ձեր ինչն եմ ասել, ձիու կաթ խմողներ, ասաց, աղջկան բա կնեղացնե՞ն»: Գրկեց ու տարավ զումակ... Ուրիշ ոչնչով չէի կարող երախտահատույց լինել: Արդեն մութ էր, պառկած էինք ծղոտի վրա:

Նատալյան, ռունգերը թրթռացնելով, չոր-չոր հարցրեց.

— Սայլի տա՞կ:

— Այո... Նա ինձ ասաց. «Ինչ որ ինքդ կուզես... Էն ժամանակ է քաղցր լինում, որ աղջիկն է գրկում...»: Դրա համար էլ նրան ամանոն եմ հաշվում...

— Երրո՞րդն ով էր:

Կատերինան ծանրումեծ պատասխանեց.

— Երրորդը ամուսինս էր՝ Յոհան Դարեն, նորին մեծություն Կառլոս թագավորի գրահակիրներից էր մարիենբուրգյան կայազորում... Տանվեց տարեկան էի, պաստոր Գլյուքն ասաց. «Ես քեզ դաստիարակել եմ, Էլեն Կատերին, ես ուզում եմ հանգուցյալ մորդ տված խոստումս կատարել, և ամուսին եմ գտել քո համար...»:

— Մորդ, հորդ լավ հիշո՞ւմ ես,— հարցրեց Նատալյան:

— Վաղ... Հայրս Իվան Սկավրոշչուկն էր: Ջահել ժամանակ Լիտվայից, Մինսկից Էստլյանդիա էր փախել պան Սապեգայից ու Մարիենբուրգի մոտ մի փոքր ագարակ վարձել: Բոլորս էլ այնտեղ ենք ծնվել՝ չորս եղբայր, երկու քույր և ամենափոքրը՝ ես... Ժանտախտը որ սկսվեց, ծնողներս ու ավագ եղբայրս մահացան: Ինձ իր մոտ վերցրեց պաստոր Գլյուքը, ինձ համար նա երկրորդ հայր է: Նրա տանն եմ մեծացել... Մի քույրս Ռեվելում է ապրում, մյուսը՝ Ռիգայում, իսկ թե եղբայրներս որտեղ են, չգիտեմ: Պատերազմը բոլորին ցրիվ է տվել...

— Ամուսնուդ սիրո՞ւմ էիր:

— Հեռացրեցի... Իվան-Կուպալայի օրն էր մեր հարսանիքը... Օ՜, ինչպես էինք ուրախանում: Գնացինք լիճ, Իվանի կրակը վառեցինք ու պսակներով պարում էինք, պաստոր Գլյուքը ջութակ էր նվագում: Գարեջուր էինք խմում, հիլով մանր երշիկ տապակում... Մի շաբաթ անց ֆելդմարշալ Շերեմետևը պաշարեց Մարիենբուրգը... Երբ ռուսները պարիսպը պայթեցրին, Յոհանին ասացի. «Փախի՛ր...»: Նա նետվեց լիճը և լողաց, էլ չտեսա նրան...

— Նրա մասին պետք է մոռանաս...

— Շատ բան պիտի մոռանամ, իսկ ես հեշտ եմ մոռանում,— ասաց Կատերինան ու երկչոտ ժպտաց, բալենագույն աչքերն արցունքով լի էին:

— Կատերինա, ինձնից ոչինչ չթաքցրեցի՞ր:

— Մի՞թե կհամարձակվեմ քեզնից բան թաքցնել,— ջերմորեն ասաց Կատերինան, և արցունքներ հոսեցին նրա դեղձագույն այտերի վրայով:— Որ հիշեի, ամբողջ գիշեր չէի քնի, լույսը չբացված կգայի ու կասեի:

— Բայց և այնպես դու երջանիկ ես:— Նատալյան ձեռքն այտին հենեց ու նորից նայեց լուսամուտից, վանդակն ընկած թռչունի պես: Նույրբ պարանոցն ի վեր մի գունդ բարձրացավ:— Մեզ՝ արքայադուստրերիս համար, ինչքան էլ թվոանք, մի համփա կա՝ մենոատան... Մեզ չեն ամուսնացնում, կնությանն չեն վերցնում: Կամ էլ անամոթավարի քեզ պիտի տաս ատոծու կրակին, Մաշկայի ու Կատկայի պես... Սոֆյան իզուր չէր կատաղած վագրի նման կռվում իշխանության համար...

Կատերինան նոր էր կուացել, դառնացածությունից սեղմած ու երկնագույն երակները պրկած նրա ձեռքը համբուրելու, մարգագետնում բարձրահասակ մի հեծյալ երևաց, բաշը թաց արշալանիով, թիկնոցն էլ էր թաց, գլխարկից թաց փետուրներն էին կախված: Նատալյա Ալեքսեևնային տեսնելով, ցած թռավ ձիուց, բաց թողեց, մոտեցավ լուսամուտին, գլխարկը հանեց, մի ծունկը ծալեց խոտի վրա և գլխարկը տարավ կրծքին...

Նատալյա Ալեքսեևնան թափով վեր կացավ, հատ հյուսքն ընկավ պարանոցին, դեմքը կրակվեց, ամբողջ մարմնով դողաց, աչքերը փայլեցին, շրթերը բացվեցին...

— Գավրիլա,— ասաց կամացուկ:— Դո՛ւ ես: Բարև, պատվելիս... Ցուն արի, ինչ ես կանգնել անձրևի տակ...

Գավրիլայի ետևից մի երկանիվ կառք մոտեցավ, կառապանի կողքին սրաքիթ, վախեցած մի մարդ էր նստած, տոպրակը գլխին գցած, անձրևից պաշտպանվելու համար: Նա իսկույն հանեց գլխարկը, բայց չիջավ: Գավրիլան, խած աչքերը Նատալյա Ալեքսեևնայից չընկտրելով, ընդհուպ մոտեցավ եղևանուն:

— Բարև քեզ, երկար կյանք,— ասաց արդեն համարյա շշնջապառ:— Թագավորի հանձնարարությամբ եմ եկել... Վարպետ ընկարիչ եմ բերել, սիրասուն մի անձնավորության պարտունան նկարելու հրամանով... Նրան հետո պիտի արտասահման ուղարկել՝ սովորելու... Նստած է կառքի մեջ... Թույլ տուր նրա հետ գամ...

6.

Դատաներից մեկին Անիսիա Տոլստայան ձիով ուղարկեց Կրեմլ, մթերապահեստից ընթրիքի համար զանազան ուտեստեղեն ու անուշեղեն բերելու, «մեկ էլ՝ մոմ, շատ մոմ...»: Մյուսը պացավ Գերմանական արվարձան՝ երաժիշտներ կանչելու: Խոհանոցի ծխնելուղից

թանձր ծուխ բարձրացավ. խոհարարի՝ մագերը խուզած օգնականները չիկչիկացրեցին դանակները: Փեշերը գոտկի տակ խրած աղջիկները թաց խոտերի մեջ ընկել էին ճտերի ետևից: Անգործությունից ծուլացած պալատական ձկնորսները, սակառներն ու ցանցերն առած, լճերը գնացին, հատակի տիղմերի մեջ կողքի պառկած ու ոչ պակաս ծուլ ծածան բռնելու:

Խոտ ու թփով պատած լճակներից մշուշ բարձրացավ անձրևից հետո, ծածկեց մեծ, փտած կամուրջը, որի վրայով արդեն ոչ ոք չէր անցնում, ծառերի արանքով սողոսկեց պալատի առաջ փռված մարգագետին, և հին պալատն աստիճանաբար թաղվել սկսեց մշուշի մեջ, մինչև տանիքը:

Դեռևս Ալեքսեյ Միխայլովիչ ցարի ժամանակներից ծառայություն արած ծերերը, խոհանոցի դռանը, ծառաների խրճիթի մոտ նստած, նայում էին, թե ինչպես մշուշապատ պալատի մեկ այս, մեկ այն պատուհանին երևում ու անհետանում է մոմի սահող փայլը, ոտնաձայն ու քրքջոց էր լսվում... Չեն թողնում հին տունը հնանա ու փտի մինչև վերջ, գերանակապ պատերը դեմ արած ձյանը ու կարկուտին, բարակ տանիքները՝ հորդառատ անձրևներին... Այստեղ նույնպես ներխուժեց խենթ ջահելությունը, իր նոր կարգերով... Վազվզում են սանդուղքներով, ձեղնահարկերից նկուղները... Այնտեղ ի՞նչ պիտի գտնեն՝ միայն սարդերն են անկյուններում և մկներն են դնչիկները բներից հանել...

Նատալյա Ալեքսեևնան իսկապես դիվահարի պես էր՝ առավոտից տրտում էր, Գավրիլայի գալուց հետո շառագունեց, զվարթացավ, սկսեց զանազան խաղեր հորինել, որ ոչ մեկը ոչ մի բոպե հանգիստ չնստի: Անիսիա Տոլստայան չգիտեր, ինչ անի: Արքայադուստրը նրան ասաց.

«Այսօր Բալթազարի խնջույք ենք անելու, դիմակավորված ենք ընթրելու»:

«Աչքիս լույս, ախր շատ կա մինչև Ծննդյան տոները... Մեկ էլ՝ չգիտեմ, չեմ տեսել, թե Բալթազար թագավորն ինչպես էր խնջույք անում...»:

«Պալատում կփնտրենք, ինչ զարմանալի բան գտանք, ամեն ինչ կբերեք ճաշասենյակ... Այսօր ինձ մի բարկացրու, մի հակառակիր...»:

Ճոճոացին հին սանդուղքները, ճռնչացին վաղուց չբացված դռների ծանգոտած ծխնիները... Ամբողջ պալատում վազվզոց սկսվեց. առջևից Նատալյա Ալեքսեևնան էր գնում, ետևից Գավրիլան, մոմը ձեռքին՝ վախից աչքերն անշարժացել էին: Վախն առաջացել էր այն պահից, երբ ձիու վրայից տեսավ լուսամուտի մոտ նստած Նատալյա Ալեքսեևնային՝ ձեռքը այտին դրած, տրտմագին: Կարծես այն հեքիաթից լիներ, որ փոքր ժամանակ Սանկան պատմել էր վառարանի վրա՝ Աննման Գեղեցկուհի արքայադստեր մասին... Հեքիաթի արքայազն Իվանը, ձին հեծած, կանաչ ծառի վրայով թռավ, կապույտ ամպի տակով թռավ, հասավ վանդակված լուսամուտին և Աննման Գեղեցկուհու սպիտակ ձեռքերից մպտանին փախցրեց...

Անդրեյ Գոլիկովի գլուխն էլ էր պտտվում (նրան նույնպես հրամայեցին բոլորի հետ գալ:) Երեկվա երեկոյից հետո, երբ Գավրիլայի քրոջ դիմանկարը տեսել էր դելֆինի վրա, ամեն ինչ նրան ոչ իրական էր թվում, ոչ էլ երազ... Ծունչը կտրվելու աստիճան նրան շփոթեցնում էին բաց խարտիշահեր, կլորերես Մենշիկովաները, այնքան գեղեցիկ ու փարթամ, որ զգեստի և ոչ մի ծալք ու փոթով հնարավոր չէր նրանց մարմնական հրապույրները կոծկել: Եվ խնձորի բույր էր գալիս նրանցից, ու անհնար էր նրանց չնայելը:

Նկուղներում ամեն տեսակ հնոտիք գտան, զգեստներ ու զարդարանքներ, որոնք հիմա չէին էլ հիշում. բյուզանդական դիպակից լայնլայն մուշտակներ, պատմուճաններ, տեղիկներ, կափտաներ, փթանոց մարգարտապսակներ՝ այդ ամենը սաղախիները գիրկ-գիրկ բերում էին ճաշասենյակ: Նկուղներից մեկում, ճիշտ առատատի տակ մի փոքր դռնակ տեսան: Նատալյան մոմը վերցրեց, ձգվեց ոտնաթաթերի վրա, գլուխը ետ գցեց:

— Իսկ եթե նա այնտե՞ղ է:

Աննան ու Մարֆան սարսափած շշնջացին միասին.

— Ո՞վ:

— Տնային ոգին,— դանդաղ ասաց Նատալյան:

Աղջիկներն այտերը բռնեցին, բայց չգուսատվեցին, միայն աչքերը լայն-լայն չռեցին: Բոլորը վախեցան: Ծեր հնոցապանը ելարան բերեց, դեմ արեց պատին: Գավրիլան անմիջապես բարձրացավ. հիմա ուր ասես կնետվեր... Դռնակը բացեց ու անհետացավ խավարի մեջ: Թվաց, թե երկար սպասեցին՝ չէր պատասխանում այնտեղից ու չէր շարժվում: Սարսռազդու ձայնով Նատալյան հրամայեց. «Գավրիլա՜: Իջի՜ր»: Այդ ժամանակ երևացին նրա բոստիրոտների ներբանները, կափտանի չոված փեշերը, ոտից գլուխ սարդոստայնի մեջ կորած իջավ:

— Ի՞նչ տեսար այնտեղ:

— Էնպես, մոխրագույն մի բան էր, կարծես բրդոտ լիներ, փսփսուկ-փսփսուկ երեսս շոյեց...

Բոլորը «ախ» արեցին... Ոտնաթաթերի վրա շտապեցին ելնել նկուղից ու վազքով բարձրացան սանդուղքները, ու միայն վերջում Մարֆան և Աննան սկսեցին ծղրտալ: Նատալյա Ալեքսեևնայի մտքով անցավ տնային ոգի խաղալ: Գաղտնի դռնակներ էին փնտրում, զգուշությամբ բաց անում սանդուղքատակ խորդանոցները, նայում բոլոր վառարանների հնոցատակերը՝ վախից չէին շնչում... Եվ իրենց ուզածին հասան. սարդոստայնով պատված մի մութ տեղ երկու կանաչ աչք տեսան, որոնք դժոխային կրակով էին վառվում... Գլխապատառ փախան... Նատալյան գայթեց ու ընկավ Գավրիլայի ձեռքերի մեջ՝ տղան պինդ գրկեց, ու Նատալյան նույնիսկ լսեց, թե ինչպես է զարկում նրա սիրտը՝ դանդաղ, խուլ, տղտմարդավարի... Ուսը ցնցեց, կամացուկ ասաց. «Թող»:

Հետո գնացին Բալթազարի խնջույքին պատրաստվելու: Դեղնած մորուքով, ասես տնային ոգին ինքը լիներ, շապկի վրայից պղնձյա խաչը կախ, նոր վալենկաներով հնոցապանը նորից բերեց ելարանը:

Ճաշասարանի գերանապակ, վաղուց պլոկած պատերից ցեցը կերած գորգեր կախեցին: Սեղանը հանեցին, ընթրիքն ուղղակի հատակին պիտի անեին, գորգի վրա: Բոլորին ասվեց, որ բաբելոնյան ձևով են նստելու, Բալթազար թագավորը Գավրիլան էր լինելու: Դիպակե կաֆտան հագցրեցին նրան, որը չնայած հին էր, բայց գեղեցիկ՝ ոսկեկար գրիֆոններ ալ կարմրի վրա, ուսերին մուշտակ գցեցին, որպիսին հարյուր տարի առաջ էին հագնում, մարգարտակուռ պսակ դրեցին գլխին՝ թագուհի-տատիկինն էր թերևս: Նատալյա Ալեքսանդրային հագցրեցին Շամիրամի պես՝ ոսկեկար պատմուճան, ծանր հյուսքերին գույնզգույն թաշկինակներ կապեցին, աղախիններին ուղարկեցին աբաղաղների պոչերից ամենագեղեցիկ փետուրները պոկելու և տնկեցին այդ փաթթոցի վրա...

Մտածում էին՝ ովքե՞ր են լինելու Մարֆան և Աննան: Նատալյան հրամայեց նրանց դուրս գալ, հանել զգեստները և մնալ շապկանց, և լավ էր, որ շապիկները նուրբ կտավից էին, երկար ու նոր: Աղախինները նորից վազեցին լճակ, ջրաշուշաններ բերեցին, փաթաթեցին Մենշիկովա օրիորդների պարանոցներին, ձեռքերին, մազերին, երկար ցողունները որպես զոտի կապեցին, և նրանք դարձան Տիգրիս և Եփրատ գետերի ջրահարսեր: Կատերինային հեշտ էր հագցնելը՝ միրգ ու բանջարեղենի աստվածուհի էր լինելու, բաբելոնյան Աստարտա, կամ հունարեն՝ Ֆլորա: Աղջիկները նորից վազեցին, գազար, մաղադանոս, կանաչ սոխ, սիսեռ քաղեցին, խնձորներ բերեցին: Բարթաքված, շուրթերը բաց, երջանկությունից կլորացած աչքերով ու ալևոր չերկնչող Կատերինան, ինչպես միշտ, զրնգուն ծիծաղում էր չնչին առիթով, դարձել էր իսկական Ֆլորա, սիսեռի, սամիթի թփերը վրան փաթաթած, բանջարեղենից հյուսված պսակով, հատապտղով ու կարմիր մոշով լի զամբյուղը ձեռքին...

— Իսկ նկարի՞չն ով է լինելու,— հանկարծ հիշեց Նատալյան:— Հարցը չունենք, թող լինի հարեշական թագավոր:

Մի նոր հրաշք սկսվեց Ադրյուշկա Գոլիկովի հաշտ, կանացի ձեռքերը՝ քուն էր, թե արթուն, սկսեցին նրան ցնցել, շտապեցնել, մեռածս և դիպակ փաթաթել վրան, դեմքին մուր քսեցին, քիթը սեղմեցին պղնձյա օղակով ու ասեցին, որ անպայման այդպես պիտի նստի... Թվում էր, որ եթե աստված հրեշտակի թևեր տար նրան, այդպիսի երանություն չէր ապրի... Խոր գլուխ տալով, ներս մտան Գերմանական արվարձանից եկած երեք երաժիշտները՝ ջութակահարը, սրնգահարը և շրթհարմոն նվագողը: Նրանց նույնպես մի կերպ հագցրեցին:

— Հիմա՝ ընթրելու: Նստեք գորգերին, ծազապատիկ, մեղրախմիչը ու գինի խմեք խեցիներից...

Թե ինչպես էին Բալթազարի խնջույքը խաղալու, ստույգ ոչ ոք չգիտեր: Նստեցին մատուցարանների, մոմերի առաջ, իրար նայեցին, ժպտացին, ոչ ոք ուտել չէր ուզում... Այդժամ Նատալյա Ալեքսանդրան, աբաղաղի փետուրները ցնցելով և շուրթերն ուռեցնելով, սկսեց արտասանել հենց այն տողերը, որոնք Գավրիլան ձմռան գիշերով արդեն լսել էր նրանից, շոգ վառած պալատում, ոսկենկար կամարների տակ.

Աստվածներն են ապրում վսեմ՝ բարձր ու մեծ լեռան վրա
Եվ նետերից Կուպիդոնի սուր խոցված են դարձյալ նրանք...
Յուպիտերն է անգամ հեծում,— տատապում եմ, օ՜, եղուկ ինձ,
Էլ ոչ մի դեղ, հնար չունեմ, գրկվել եմ ես հանգստից,
Պապակվում եմ ու տոչորվում, ծով ծարավից չեմ հագենում,
Ախ, իզուր եմ ես՝ խղճուկս, սիրո հողմի դեմ պայքարում...
Ավաղ, նույնիսկ աստվածներն են պարտվում անխիղճ Կուպիդոնից...

Ո՞ւմ մոտ արդյոք մարդիկ փնտրեն պաշտպանություն այդ խենթ ուժից:

Լավ չէ՞ միթե զվարճանալ և թախիծը նետել մի կողմ
Ու նետերը թունավորված փառաբանել բաղցր գինով...

Արտասանելու ժամանակ Նատալյայի դեմքը գունատ էր վիթխարի փաթթոցի տակ: Մի կում գինի խմեց ու սկսեց պոկել պարել Անիսիա Տոլստայայի հետ: Երաժիշտները բարձր չէին նվագում, բայց այնպես, որ մարմնի յուրաքանչյուր երսկ խաղում ու թրթռում էր:

— Գնա, Կատերինայի հետ պարիր,— բղավեց Նատալյան, աչքերը շողացնելով Գավրիլայի վրա:

Տղան վեր թռավ, ուսերից գցեց Բալթազարի մուշտակը՝ օրուգիշեր կարող էր պարել: Կատերինայի մեջքը տաք էր, ձեռքը հնազանդ, թեթևուտն էր նա, պտտվելիս գլխի և ուսերի վրայից սիսեռի պատիճներ, բալի հատիկներ էին պոկվում-ընկնում: Գավրիլան արագացնում էր, երաժիշտները՝ նույնպես: Աննան և Մարֆան նույնպես պտտվեցին, ձեռք-ձեռքի տված: Գորգի վրա, մոմերի դիմաց նստած մնաց միայն Գոլիկովը, ուտել կամ խմել չէր կարող քթի օղակի պատճառով, սակայն դա էլ չէր խանգարում նրա երանելի վիճակին, ականջներում, սրնգի սույտի տակ, դեռ հնչում էին արքայադստեր արտասանած տողերը օլիմպիական աստվածների մասին... Եվ աչքերի առաջ լողում ու լողում էր դելֆինի մեջքին պառկած մերկ աստվածուհին, գայթակղությամբ լեցուն սկահակը բռնած...

Գավրիլան միամիտ էր. ասել էին Կատերինայի հետ պարիր, ինքն էլ պարում էր, կրունկները չխնայելով: Ու թեև մի քանի անգամ ցրան թվաց, որ Նատալյան ուրիշ կերպ է ժպտում, առանց աչքերի նախկին փայլի, չհասկացավ, որ վաղուց ժամանակն է Կատերինային տեղը նստեցնել, դդումների և գազարների մոտ... Մի անգամ էլ ցոլաց-անցավ արքայադստեր՝ ասես ցավից սեղմած ատամներով դեմքը... Հանկարծ Նատալյան նոճվեց, կանգ առավ, բռնեց Անիսիայից, աբաղաղի փետուրներով փաթթոցը գլխից ընկավ... Անիսիան վախեցած բղավեց.

— Արքայադստեր գլուխը պտտվեց,— ու ձեռքը թափ տվեց երաժիշտների վրա, որ չնվագեն...

Նատալյա Ալեքսանդրան պոկվեց նրանից, պատմուճանը քարշ տալով, ելավ սրահից: Դրանով էլ ավարտվեց Բալթազարի խնջույքը: Աննան և Մարֆան իսկույն ամաչեցին իրենց շապիկներից, փափաքեցին ու դուրս վազեցին: Կատերինան վախեցած նստեց տեղը, սկսեց

բանջարեղենը պոկոտել վրայից։ Գավրիլան խոժոռվեց, ոտքերը չոռած, կանգնել էր գորգի մոտ և մռայլված, աչքերն էր թարթում մոմերի վրա։ Անիսիան դուրս թռավ արքայադստեր ետևից, շուտով ետ եկավ, նշանգներով բռնեց Գավրիլայի ձեռքը.

— Գնա նրա մոտ,— շշնջաց,— նակատդ գետնին տուր, անխելք...

Նատալյա Ալեքսեևնան կանգնել էր դռան ետևում, միջանցքում, բաց պատուհանից նայում էր անտեսանելի լուսնի լույսով ողողված մշուշին։ Գավրիլան մոտեցավ։ Լսվում էր տանիքից տերևների վրա թափվող կաթիլների ձայնը։

— Երկա՞ր ժամանակով ես Մոսկվա եկել,— հարցրեց Նատալյան առանց շրջվելու։ Գավրիլան չէր ուզում պատասխանել, շնչահեղձ էր։— Մոսկվայում դու անելիք չունես։ Վաղը գնա, որտեղից եկել ես...

Ասաց, և նրա ուսերը բարձրացան։ Գավրիլան պատասխանեց.

— Քեզ ինչո՞վ բարկացրի։ Տեր աստված, եթե իմանայիր... Եթե միայն իմանայիր։

Այստեղ Նատալյան շրջվեց, և դեմքը, մրով սևացրած հոնքերն ընդհուպ մոտեցան տղային.

— Ես քո պետքը չունեմ, լսո՞ւմ ես, գնա, գնա...

Կրկնելով «գնա, գնա», ձեռքերը բարձրացրեց, որ հրի, բայց թերևս հասկացավ, որ այդ ածդահային հրել չի կարող, Շամիրամի ապարանջաններով զնգզնգացող ձեռքերը դրեց տղայի ուսերին, և գլուխն ավելի ու ավելի կախվեց։ Գավրիլան, նույնպես չհասկանալով, թե ինչ է անում, շրթունքները հազիվ հպելով, համբուրում էր նրա տաքուկ վարսաբաժանը։ Նատալյան կրկնում էր.

— Չէ, չէ, գնա, գնա...

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

1.

Պյոտր Ալեքսեևիչը հանեց ու շպրտեց պարուսինե բաճկոնը, քըշտեց շապկի թևքերը, ծայրին խաղողի տերև ասեղնագործած կարմիր թաշկինակը, որ նվեր էր Իզմայլովսկից, գլխին կապեց պորտուգալացի ծովահենների պես, ինչպես մի անգամ փոխծովակալ Պամբուրգն էր սովորեցրել։ Մի քանի տարի առաջ նաև կբոկանար, անողորկ տախտակամածի տաքությունը ներբաններով զգալու համար։ Մեղմ քամին ուռեցրեց առագաստները, երկկայմանի «Կատերինա» նավը սահում էր հնազանդ ու թեթև, կարծես օդի միջով։ Նավահետքով գալիս էր «Ռելիտնա» բրիգանտինան, և ջրի ու երկնքի սահմանագծին, մշուշի մեջ իր բոլոր առագաստներն էր բացել «Վախտմայստեր» ֆրեգատը։

Այդ նավերը վերջերս էին գրավել շվեդներից՝ անսպասելի ու փառավոր հաղթանակ եղավ. ռուսներին հասավ տասներկու բրիգանտինա և ֆրեգատ՝ կոմանդոր Լեշերտի ավազակային լրիվ նավախումբը, որը երկու տարի շարունակ փոքր նավակ անգամ չէր թողնում Զոտ լիճ, թալանում էր ծովափնյա գյուղերն ու ագարակները, և Յուրյևը պաշարած Շերեմետևին սպառնում թիկունքից։ Խիզախ նավաստի էր կոմանդորը։ Այդուհանդերձ, ռուսները խաբեցին նրան։ Մութ գիշերով, ամպրոպի ժամանակ, վախենալով փոթորկից կամ մեկ այլ պատճառով, նավախումբը նա մտցրել էր Էմբախայի գետաբերանը և անհոգ-անհոգ, սաստիկ հարբել ֆլագմանական «Կառուլուս» առագաստանավի վրա։ Երբ լուսադեմին դժվարությամբ բացեց կոպերը, հարյուրավոր նավակներ, լաստեր ու իրար կապած տակառներ ափերից լողում էին դեպի նավերը... «Երկու կողերից կրա՞կ ռուսական հետևակի վրա»,— բղավեց կոմանդորը։ Շվեդները չհասցրեցին վառոդ լցնել թնդանոթների հրանցքերը, չհասցրեցին կտրատել խարիսխների ճոպանները, չորս կողմից ռուսները պաշարեցին նավերը և նավակների, լաստերի ու տակառների վրայից նոնակներ նետելով, ատրճանակներից կրակելով, նետվեցին աբորդաժի... Մեծ խայտառակություն էր՝ հետևակը գերեվարեց նավախումբը։ Կոմանդոր Լեշերտը կատաղությունից թռավ վառոդի նկուղը և պայթեցրեց առագաստանավը՝ բոցը դուրս թռավ բոլոր ճեղքերից ու հրակնատներից, կայմերը, առագաստակալները, տակառները, մարդիկ ու ինքը՝ կոմանդորը, զարհուրելի պայթյունով ու ծխի քուլաներով երկինք շարտվեցին...

Այնն այրում էր մեջքը, քամին դեմքն էր շոյում, թեք ալիքը կուրացնում էր պեծպծալով, և Պյոտր Ալեքսեևիչն աչքերը կկոցեց։ Ղեկի մոտ կանգնած, հովանալու համար լայն բացեց ոտքերը։ Ծոպանասարքը երգում էր ու սուլում, ծովորդները խոպոտ կոչում էին ջրի փրփրած հետքի վրա։ Առագաստները, ինչպես ճերմակ կրծքեր, լի էին ուժով։

Պյոտր Ալեքսեևիչը դեպի Նարվա էր լողում հաղթանակած, միջակայմի տակ լցված շվեդական դրոշներ էր տանում՝ նախանցյալ օրը գրոհով գրավել էին Յուրյևը։ Կառլոս թագավորի պոչից մի փետուր էլ էին պոկել։ Կայսերը, անգլիական և ֆրանսիական թագավորներին հրովարտակներ ուղարկվեցին, առ այն, որ «աստծո օգնությամբ ետ վերցրեցինք մեր հնամենի վոտչինան՝ Յուրյև քաղաքը, որ յոթ հարյուր տարի առաջ մեծն իշխան Յարոսլավ Վլադիմիրովիչն էր կառուցել, ռուսաց հողի ուկրաինացիներին պաշտպանելու համար...»։

Թեև Պյոտր Ալեքսեևիչի մտքով երբեք չէր անցնում իրեն համեմատել Ալեքսանդր Մակեդոնացու հետ, ինչպես օրինակ սիրասուն եղբայր Կառլոս թագավորը, պատերազմն էլ նա համարում էր ծանր ու դժվարին գործ, արյունահեղ առօրյա պայքար, պետական կարիք, բայց Յուրյևի տակ այս անգամ հավատաց ռազմական իր տաղանդին, իրենից անչափ գոհ մնաց ու հպարտ էր. տասն օրվա ընթացքում (այնտեղ հասնելով Նարվայից) արեց այն, ինչ ֆելդմարշալ Շերեմետևին և նրա օտարերկրացի ինժեներներին՝ փառապանծ մարշալ Վոբանի աշակերտներին, միանգամայն անհնար էր թվում։

Նաև հանույթն էր առկա. նայելով հեռավոր անտառապատ ափին ու գիտնալ, որ վերջերս շվեդական համարվող ափը հիմա մերն է, և Զոտ լիճը նորից ամբողջությամբ մերն է։ Բայց այդպիսին է մարդը՝ շատ բան վերցրեց, ավելին է ուզում։ Թվում էր, թե առավել հանելի

ոչինչ չէր կարող լինել. ջինջ առավոտյան լողալ սքանչելի առագաստանավով, Կաղոսի ջգրու բարձր խելին ծածանելով Անդրենյան հակա դրոշը: Բայց ոչ: Հենց այսօր, դողէրոցքի ջերմությամբ, իր սիրո տենչանքի մասին մտածեց... Այլ կերպ կոչել նրան չէր կարելի՝ ոչ տիկին, ոչ կնիկ, այլ սիրո տենչանք, աչքի լույս Կատերինա... Թիակները շապկի տակ խաղացնելով, խոնավ օդն էր ներշնչում ռունգերով... Ջրից ու նավափայտից լողարանի հոտ էր գալիս, և աչքին երևաց, թե Կատերինան ինչպես է լողանում այս շոգ օրով... Խաղողի տերև ասեղնագործած թաշկինակը թերևս հմայել էր նա, կանացի բույր էր տվել, մեջքին փչող քամին տուտերը փոփոխացնում, ստեպ-ստեպ քիթն ու շրթունքներն էր խողտացնում... Գիտե՞ր, թե ինչ է անում գանգրամազ ու զվարթ լիվոնյան կախարդուհին: Յուրյևի՝ մանու չափ վախեցած բնակչուհիներն ինչքան ավելի սիրունիկ էին... բայց և ոչ մեկը Կատերինային չէր հասնի, ոչ մեկի հագին շերտավոր շրջազգեստն այնպես չէր խաղում, ինչպես նրա պիրկ կոնքերին... Ոչ մեկի այտերը բոնել չուզեց, աչքերի միջով ներսը նայել, ատամներն ատամներին սեղմել չկամեցավ:

Պյոտր Ալեքսեևիչն անհամբեր շարժումով բութքիթ կոշիկի կրունկը խփեց տախտակամածին: Տեղնուտեղը ընդհանուր նավասենյակում ինչ-որ մեկը, հավանորեն քնաթաթախ, պոկվեց տեղից, դուռը շրխկացրեց՝ Ալեքսեյ Վասիլևիչ Մակարովը վազելազ բարձրանում էր նավասանդուղքով.

— Այստեղ եմ, ձերդ ողորմածություն...

Պյոտր Ալեքսեևիչը, աշխատելով չնայել նրա կարմիր կոպերով մագաղաթատիպ դեմքին, որ անհարիր էր նավի պայմաններին, հրամայեց ատամների արանքից.

— Գրելու բան բեր...

Մակարովը շտապեց, գնալիս գայթեց սանդուղքի վրա: Պյոտր Ալեքսեևիչը կատվի պես փոթկացրեց ետևից: Մակարովը շուտով ետ եկավ աթոռակով, թուղթ ու թանաքաման բերեց, սագի փետուրները խրված էին ականջի ետևը: Պյոտր Ալեքսեևիչը վերցրեց դրանցից մեկը.

— Կանգնիր դեկի մոտ, պինդ բռնիր, ցամաքի մարդ ես, էապես բռնիր: Առագաստները խառնել ես, կճիպտեմ...

Աչքով արեց Մակարովին, նստեց ծալովի աթոռին, թուղթը դրեց ծնկին ու գլուխը ծռած նայեց միջնակայմի կատարի գնդին, որտեղ երկարապոչ վիմպելն էր ծածանվում, և սկսեց գրել:

Թերթի մի էջին նշեց. «Տիկնայք Անիսիա Տոլստայային և Եկատերինա Վասիլեֆսկայային...»: Մյուս էջին, թանաքը ցայտեցնելով ու տառերը բաց թողնելով. «...Բարև ձեզ, ու երկար կյանք ունենաք... Ձեր ողջության մասին եմ ուզում լսել... Մենք գործերի ու դժվարության մեջ ենք... Լվացող, թափող չունենք, ամենից շատ՝ առանց ձեզ տխուր է... Մենակ նախանցյալ օրը շվեդների հետ կարգին պար բռնեցինք, որից Կաղոս թագավորի աչքերը մթնած պիտի լինեն... Ատված վկա, իմ թագավորած օրից էդքան փառավոր խաղ չէի տեսել... Կարճ ասած, աստծո օգնությամբ գրավեցինք Յուրյևը... Ինչ

վերաբերում է ձեր առողջությանը, ապա ատված չանի, եթե գրեք այդ մասին, այլ բարի եղեք շուտափույթ մոտս գալ: Որ ավելի շատ ուրախանամ... Կհասնեք Պսկով, էնտեղ հրամանի սպասեք, թե ուր գաք, թշնամին մոտերքում է... Պիտեր...»:

— Ծալիր, առանց կարդալու, կնքիր,— ասաց Մակարովին ու դեկը բռնեց:— Առաջին սուրհանդակով կուղարկես:

Կարծես փոքր-ինչ թեթևացավ: Ձրնգուն զույգ հարվածով խփեցին զանգերը: Տեղնուտեղը վերևի տախտակամածից դղրդաց թնդանոթը, շփշփացին առագաստները, վառոդի ծխի դուրեկան հոտ տարածվեց: Կամրջակ բարձրացավ նավապետը՝ կապիտան Նեպլյունը, ջահել ու ոսկրոտ, հանդուգն դեմքով, կարճ թուրը բռնած, երկու մատը տարավ եռանկյունի գլխարկին:

— Պարոն բոմբարդիր, ծովակալական ժամն է, հաճեք մի բաժակ խմել...

Նեպլյունից հետո բարձրացավ կարճլիկ, դեմքը քրտնած Ֆելտենը, գործած կանաչ կաֆտանով: Նավի վրա խոհարարի գլխարկի փոխարեն նույնպես ծովահենի նման գլուխը սպիտակ թաշկինակով էր կապել: Կլայեկած մատուցարանով մոտեցրեց արծաթյա բաժակը և խաշխաշով բլիթը:

Պյոտր Ալեքսեևիչը ձեռքի մեջ ծանրութեթև արեց բաժակը, նավաստու նման կատաղած կլլեց թնդագույն, հոտ արձակող հացօղին և շտապ-շտապ բերանը գցելով բլիթի կտորները, ասաց Նեպլյունին.

— Գիշերը խարիսխ կգցենք Նարովայի մոտ, ես ափին եմ քնելու... Հատակը չափե՞լ ես:

— Նարովայի վտակի մոտ աջ ափից ավազի խրուտ է, ձախից՝ տասնմեկ ֆուտ...

— Լավ... Գնա...

Պյոտր Ալեքսեևիչը նորից մենակ մնաց տաք տախտակամածին, դեկի մոտ: Խմած օղուց մարմնով դուրեկան զվարթություն անցավ, և մերթ ֆսֆսացնելով, մերթ ժպտալով սկսեց հիշել նախանցյալ օրվա փառավոր գործը, որից Կաղոս թագավորի աչքերը պիտի մթնեն զայրույթից...

Ը.

Ֆելդմարշալ Շերեմետևը Յուրյևի պաշարումը եռանդով չէր վարում. առանձնապես նեղություն չէր տալիս ոչ իրեն, ոչ զորքին, հուսալով սովամահությամբ հաղթել շվեդներին: Նրա երկարաշունչ նամակները Պյոտր Ալեքսեևիչը ճմրթում ու շպրտում էր սեղանի տակ: Սատանան էր շրջել ֆելդմարշալին՝ երկու տարի պատերազմում էր անվախ ու դաժան, հիմա պառավ կնկա պես աղոթք էր անում շվեդական պարսպի տակ: Երբ վերջապես Նարվայի ճամբար հասավ ֆելդմարշալ Օգիլվին, ում Պատկուլի հորդորներով Վիեննայից մոսկովյան ծառայության էին վերցրել ոչ քիչ ոռճիկով՝ տարեկան երեք հազար ոսկի եֆիմոկ, բացի կերակրումից, խմիչքի և այլ մթերքների

ապահովումից, Պյոտր Ալեքսեևիչը հրամանատարությունը նրան հանձնեց ու անհամբեր հայտնվեց Ցուրլևում:

Ֆելդմարշալը նրան չէր սպասում, միջօրեի տապին, ճաշից հետո խմփիացնում էր իր վրանում, որը բարձր թմբի ետև կանգնած գումակում էր ու արթնացավ, երբ ցարը քաշեց ճանճերից պաշտպանվելու համար երեսին գցած թաշկինակը:

— Ապահով տեղդ գտել ու քնել ես,— բղավեց ու խելացնոր աչքերը ոլորեց:— Արի, պաշարողական գործերդ ցույց տուր:

Սարսափից ֆելդմարշալի լեզուն բռնվեց. չէր հիշում, թե ոտքերն ինչպես մտցրեց շալվարի փողքերը, չգտավ ոչ կեղծամը, ոչ սուրը ու այդպես գլխաբաց էլ ձի նստեց: Վազելով եկավ ռազմական ինժեներ Կոբերտը՝ քնաթաթախ, ֆրանսիական կաֆտանի կոճակները սխալ կոճկելով: Այս պաշարման ընթացքում մի լավ գործ թե արել էր, ռուսական շչիի հաշվին թշերը հաստացնելն էր եղել: Պյոտրը չարացած գլխով արեց նրան ձիու վրայից: Երեքով գնացին դիրքերը:

Այնտեղ ոչ մի բանի հավանություն չտվեց Պյոտր Ալեքսեևիչը... Արևելյան կողմից, որտեղից Շերեմետևի զորքը պաշարումն էր իրականացնում, պարիսպները բարձր էին, ցածրիկ աշտարակները նորոգել ու ամրացրել էին, ռավելինները աստղաձև խրված էին դաշտի մեջ ու առջևի խանդակները լի էին ջրով: Արևմուտքից քաղաքը հուսալի պաշտպանում էր Էմբախա հորդառուս գետը, հարավից՝ մամռապատ ճահիճը: Շերեմետևը քաղաքի պարսպին էր մոտենում խորունկ, ուղիղ ու զիգզագաձև խրամատներով, չափազանց զգույշ ու ոչ շատ մուտ, վախենալով շվեդական թնդանոթներից: Էլ ավելի հիմարավարի էին տեղադրված նրա մարտկոցները՝ երկու հազար ռումբ էր նետել քաղաք, մեկ-երկու փոքր տնակ վառել, պարիսպը չէին քերծել նույնիսկ:

— Պարոն ֆելդմարշալ, ձեզ հայտնի՞ է, թե քանի ալտին է նստում ինձ վրա մի ռումբը,— մռայլված ասաց Պյոտր Ալեքսեևիչը:— Ուրալից ենք բերում... Իսկ չե՞ս ուզում էդ երկու հազար անօգուտ ռումբի փողը ոռճիկիցդ տալ:— Նրա թևատակից քաշեց հեռադիտակը և սկսեց զննել պարիսպները:— Հարավային պատը խարխուլ է ու ցածր: Այդպես էլ կարծում էի...— Եվ արագ նայեց ինժեներ Կոբերտին:— Այստեղ է պետք ռմբակոծել, այստեղ է պետք պարիսպն ու դարպասը փշրել: Այստեղից է պետք քաղաքը գրավել: Ոչ թե արևելքից: Ոչ թե հարմարություն փնտրել, քանի որ այն կողմը չոր է... Հաղթանակը գտնել մինչև կոկորդը ճահճի մեջ խրված...

Շերեմետևը չհամարձակվեց առարկել, միայն հաստ լեզուն էր շարժում. «Ինքնըստինքյան... Դուք ավելի լավ գիտեք, պարոն բոմբարդիր... Մենք մտածեցինք, բայց չգտանք...»: Ինժեներ Կոբերտը հարգալիր, կարեկցական ժպիտով թշերն էր խաղացնում:

— Ձերդ մեծություն, հարավային պարիսպը, ինչպես նաև աշտարակի դարպասը, որ «Ռուսական դարպաս» է կոչվում, խարխուլ են, բայց միաժամանակ անմատչելի, քանզի դրանց մոտենալ կարելի է միայն ճահճի միջով... Ճահիճն անանցանելի է:

— Ո՞ւմ համար է ճահիճն անանցանելի,— բղավեց Պյոտր Ալեքսեևիչը, ցնցեց երկար վիզը, ոտքը գետին խփեց ու խթանն ընկավ:— Ռուս զինվորի համար անանցանելի տեղ չկա... Շախմատ չենք խաղում, այլ մահվան խաղ:

Ցած թռավ ձիուց, քարտեզը փռեց խոտի վրա, որ քաղաքի պլանն էր, գրպանից հանեց գծագրատուփը, միջից՝ կարկինը, քանոնը և մատիտը: Սկսեց չափել ու նշել: Ֆելդմարշալը և Կոբերտը պպզել էին կողքին:

— Այ որտեղ դիր քո բոլոր մարտկոցները,— ցույց տվեց ճահճի եզրը «Ռուսական դարպասի» դիմաց:— Գետի մյուս ափին էլ պարսպաշարդ թնդանոթներն ավելացրու...— Նա սկսեց հմտորեն գծել, թե արկերն ինչպես են թռչելու «Ռուսական դարպասի» վրա: Նորից չափեց կարկինով: Շերեմետևը մրմնջում էր. «Ինքնըստինքյան... Մատչելի տարածություն է»: Կոբերտը նուրբ ժպտում էր:— Դիրքերը փոխելու համար երեք օր եմ տալիս... Յոթին սկսում եմ հրանգությունը:— Կարկինը և քանոնը դրեց տուփի մեջ և կաֆտանի գրպանն էր մտցնում, բայց ալ կարմիր, խաղողի թուփ ասեղնագործած թաշկինակն այնտեղ էր, թաշկինակը հանեց ու բարկացած դրեց ծոցը:

Երեք օրուգիշեր մարդկանց քուն ու դադար չտվեց: Ցերեկն ամբողջ զորքը շվեդների աչքի առաջ շարունակում էր պաշարողական նախկին աշխատանքը, գնդակների և ռումբերի տարափի տակ խրամատներ էին փորում, ելարաններ կապում: Գիշերները, գաղտնի, առանց կրակ վառելու, եզները լծում էին թնդանոթներին և հրասանդերին ու տանում նոր տեղերը՝ ճահճի եզրին և լողացող կամրջով գետից այն կողմ, մարտկոցները քողարկելով ճղապատնեշների ու թմբերի ետևում:

Արևը նոր էր երևացել անտառի վրա, հարավային պարսպի խարխուլ ծածկը լուսավորվեց, ճահճային մշուշի միջից երևացին «Ռուսական դարպասի» աշտարակի քարե ատամները, կապտին տվեցին վառարանների ծուխերը քաղաքի վաղորդյան լռության մեջ, և հենց այդ ժամանակ վաթսուն պարսպաջարդ թնդանոթ ու ծանր հրասանդեր ցնցեցին երկինք ու գետին, երկփթանոց արկերը, պատրուգավոր ռումբերը թշշոցով թռան ճահճի վրայով: Դղրդացին գետի մյուս ափի մարտկոցները: Վառոդի ծխի ծածկույթի տակ Իվան Ժիդոկի գնդի գրենադերները, ճյուղերի խրձերն առած, վազեցին ճահճի վրայով ճեղանուղի գցելու:

Պյոտր Ալեքսեևիչը հարավային մարտկոցում էր: Ստիպված չէր բղավել, սոլորեցնել, ջղայնանալ. հագիվ էր հասցնում հրետաձիգներին նայելով, գլուխը ցնցել, արդեն ասում էր. «Ա՛յ-յո՛ւ-յո՛ւ, ա՛յ-յո՛ւ-յո՛ւ...»: Մինչև հասցնեիր «Հայր մեր»-ը արագ կարդալ՝ փարտոցներով փողերը մաքրած, վառոդի տոպրակները լցրած, արկերը խրած, հրանցքերը պատրաստ, նշանը բռնած էր լինում...

— Բոլոր մարտկոցներո՞վ,— արնակոխ աչքերը չռելով, բղավում էր գնդապետ Նեչաևը, գլխարկն ու կեղծամը առաջին իսկ համազարկից թռել էր:— Տարածությունը նախկի՞նը: Պատրուգները դնե՞լ...

Կրա-սա՞կ:— Մարտկոցների հրամանատարները երկարուձիգ կրկնում էին նրա ետևից. «Կրաա-սա՞կ»:

Երևում էր, թե ինչպես են ընկնում արկերը, փշրվում էին աշտարակի ատամները, ծիաց ու կրակ բռնեց պարապի ծածկը, քաղաքի տնակներն սկսեցին վառվել ռումբերից: Սրակատար կիրխեներում զնգացին զանգերը: Մոխրագույն կարճլիկ մունդիրներով շվեդ գինվորները դարպասից դուրս պրծան, պայթյուններից դեսուդեն շպրտվելով, սկսեցին միջնապատնեշի խանդակը փորել, գերաններ, տակառներ ու պարկեր քարշ տալ.. Այդուհանդերձ, մինչև օրվա վերջը դարպասի աշտարակն ու պարիսպն անհորտակ կանգնած էին: Պյոտր Ալեքսեևիչը հրամայեց մարտկոցներն ավելի մոտեցնել:

Վեց օր տևեց հրետանգությունը: Իվան Ժիդոկի գրենադերները մինչև ծնկները, գոտկատեղերը ճահճի մեջ խրված ճեղանուղի էին գցում, հակառակորդի արկերից ու գնդակներից շարժական, հող լցրած զամբյուղներով պաշտպանվելով: Ծվեդները հասկացան սպառնացող վտանգը, մյուս աշտարակներից այստեղ բերեցին թնդանոթների մի մասը, և օրըստօրե սաստկացնում էին կրակը: Քաղաքը ծխով էր պարուրվել: Վառոդի ամպերի միջից խանձում էր կարմրավուն արևը:

Պյոտր Ալեքսեևիչը չէր հեռանում մարտկոցից, վառոդից սևացել էր, չէր լվացվում, ուտում էր ոտի վրա, ձեռքն ընկածը, ինքն էր օդի բաժանում թնդանոթաձիգներին: Մի ժամով պառկում էր քնելու հրետանգության դդրդյունի տակ, հենց այդտեղ, հրետանայլերի տակ: Իգնատ Կոբերտին ուղարկեց մեծ գումակ, քանի որ թեև գիտուն մարդ էր, բայց խիստ էր զգաստ, «իսկ մեզ էստեղ զգաստ մարդիկ հարկավոր չեն»...

Հուլիսի տասներկուսի երեկոյան, մթնշաղին կանչեց Շերեմետևին: Այդ օրերին ֆելդմարշալը ամբողջ զորքով աղմկում էր արևելյան կողմից, ըստ կարելվույն վախեցնելով շվեդներին: Նորից կայտառացել էր, ձիուց չէր իջնում, կովում էր ու հայհոյում: Պյոտր Ալեքսեևիչին նա գտավ դադար տված մարտկոցի մոտ: Զորս կողմը բեխավոր հրետանձիգներ էին կանգնած, բոլորը հին ծանոթներ էին, նրանցից, ովքեր ռազմախաղերի ժամանակ փայտյա թնդանոթներից Պրեշբուրգ քաղաքի մատուցներում շաղգամ ու կավե ռումբեր էին տեղում իշխանկայսրի հեծելազորի վրա: Մի քանիսի ճակատը լաթերով էր փաթաթված, մունդիրները պատառոտված էին:

Պյոտր Ալեքսեևիչը նստած էր ամենամեծ՝ «Սալամանդրա» թնդանոթի հրետանայլին. պղնձյա թնդանոթ էր, Տուլայի ձուլվածք, սառեցնելու համար մի քանի դույլ քացախ էին լցնում վրան, բայց մեկ է, թշշում էր: Պյոտրը հաց էր ծամում և բառերը շտապ-շտապ արտասանելով, օրվա կատարածն էր վերլուծում: Հարավային պարիսպը վերջապես երեք տեղից ճեղքված էր, այդ փլվածքները հիմա չէր կարող պատնեշել հակառակորդը: Հրետանձիգ Իգնատ Կուտոչկինը մեկը մյուսի ետևից մի քանի շիկացած ռումբ էր գցել աշտարակի դարպասի ձախ անկյունին...

— Ոնց որ մեխեց: Էդպես չի՞: Հը՞,— աքլորի պես բղավեց Պյոտր

Ալեքսեևիչը: Աշտարակի անկյունը փլվել էր, և ուր որ է ամբողջ աշտարակն էր քանդվելու:

— Իգնատ, որտե՞ղ ես, չեմ տեսնում, մոտ արի:— Եվ նա թնդանոթաձիգին տվեց կրծած կոթով ծխամորճը:— Չեմ նվիրում... մոտս ուրիշը չկա, բայց ծխիր... Գոհ եմ քեզնից... Կենդանի մնացինք, չեմ մոռանա:

Փարթամ բեխերով, պատկառազդու Իգնատ Կուտոչկինը հանեց եռանկյունի գլխարկը, զգուշությամբ վերցրեց ծխամորճը, եղունգով քչփորեց, և ամբողջ դեմքը խորամանկ կնճիռներով ծածկվեց:

— Բայց մեջը հեչ ծխախոտ չկա, ձերդ մեծություն...

Մյուս հրետանձիգները ծիծաղեցին: Պյոտր Ալեքսեևիչը հանեց քսակը, այնտեղ էլ ոչ մի փշուր չկար: Հենց այդ ժամանակ մոտեցավ ֆելդմարշալը: Պյոտր Ալեքսեևիչը ուրախացած դիմեց նրան.

— Բորիս Պետրովիչ, ծխելիք ունե՞ս: Մեր մարտկոցում ոչ օդի կա, ոչ ծխախոտ: (Թնդանոթաձիգները նորից ծիծաղեցին:) Մի բարի գործ արա... (Շերեմետևն ակնածանքով, խոնարհվելով նրան պարզեց հուլունքաշար գեղեցիկ քսակը:) Ահ, շնորհակալ եմ... քսակը ոմբաձիգ Կուտոչկինին տուր... Իգնատ, նվիրում եմ, բայց ծխամորճը ետ կտաս, չմոռանաս...

Նա արձակեց հրետանձիգներին և որոշ ժամանակ դրճդրճացնելով չոր հաց էր ծամում: Ֆելդմարշալը, գավազանը կողքին հենած, լուռ կանգնած էր նրա առաջ:

— Բորիս Պետրովիչ, այլևս սպասել չի կարելի,— մեկ ուրիշ ձայնով սկսեց Պյոտրը:— Մարդիկ ջղայնացել են... Գրենադերները քանի օր է ճահճի մեջ պառկած են... Դժվար է: Կպրով լիքը տակառները կվառեմ, ամբողջ գիշեր կոմբակոծենք... Անմիջապես ինձ մոտ ուղարկիր Սամոիլովլովի գնդի մոսկովյան հրաձիգների գումարտակը՝ խիստ ու քաջ մարդիկ են... Ինքդ քո գործն արա, ի սեր աստծո, մենակ զուր տեղը մարդ չկոտորես... Լուսաբացին գրոհի եմ գնալու... (Շերեմետևը գավազանը բռնած ձեռքն իջեցրեց ու խաչակնքեց:) Գնա, հոգիս:

Երբ ճահճի եզրին ու գետի մյուս ափին բոցավառվեցին տակառները, բոլոր մարտկոցներից շարահերթ այնպիսի կրակ բացվեց, որպիսին շվեդները դեռ չէին տեսել: Դարպասը փուլ եկավ: Միջնապատնեշը, ցանկապատերը և խաչգերանները ցրիվ եկան: Ծվեդները գրոհին սպասում էին այդ գիշեր՝ պարապի ճեղքվածքների մեջ, կարի կրակների հրացոլքի միջից երևում էին սվինների, սաղավարտների, դրոշների ճոճվող ուրվագծերը... Քաղաքով մեկ ահազանգ էին խփում...

Պյոտր Ալեքսեևիչը ծնկները ծալած, առվի միջից, ճղապատնեշի ետևից նայում էր հեռադիտակով: Կողքը կանգնած էր երիտասարդ գնդապետ Իվան Ժիդոկը՝ օրյոլցի էր, գնչուի նման, սև աչքերը չոր փայլ էին արձակում, շրթունքները ցնցվում էին կատաղությունից, ինքն էլ չնկատելով, ատամներն էր կրճտացնում: Գիշերը կարճ էր, անտառից այն կողմ արդեն կանչում էր արևելքը և չքացել էին աստղերը: Այլևս անհնար էր սպասել: Բայց Պյոտր Ալեքսեևիչը դեռ

հապաղում էր: Հանկարծ Իվան Ժիդոկը որովայնի խորքերից մի տրրամագին տնքոց արձակեց ու թափահարեց կախած գլուխը: Պյոտր Ալեքսեևիչը բռնեց նրա ուսից.

— Շարժվիր:

Իվան Ժիդոկը թոավ ճղապատնեշի վրայով և կռանալով, վազեց ճահճով: Անմիջապես թշշաց, ճախրեց, տրաքեց ու կանաչ կրակներ շաղ տվեց հրթիռը, հետո երկրորդը, երրորդը: Թնդանոթները լռեցին: Լռությունն ա սնջ էր խլացնում: Ճահճի կարմիր-սև գուղձերի արանքներից մարդիկ բարձրացան, տիղմի մեջ խրվելով, ծանր-ծանր շարժվեցին դեպի դարպասը: Ամբողջ ճահիճը շարժվեց, խլրտաց զինվորներով: Ափից, սլիթները պարզած նրանց օգնության էին գնում մոսկովյան հրաձիգների վաշտերը... Պյոտր Ալեքսեևիչն իջեցրեց հեռադիտակը, շունչ քաշեց ատամների արանքից, դեմքը կնճռոտեց. «Օ՞խ, օ՞խ»: Փլված միջնապատնեշից Իվան Ժիդոկի հարձակվող գրենադերների վրա ուղիղ նշանառությամբ կրակ ժայթքեցին անվնաս մնացած հինգ թնդանոթ: Ճահճի վրա միայնակ մի ձայն հուսակտուր բղավեց. «Ուռա-աա՜ա»: Պարսպի ճեղքվածքից դուրս էին թռչում շվեդները, ասես ամեհի ուրախությամբ վազում ռուսներին ընդառաջ: Իրար խառնվեցին, բղավոց, ոռնոց, շաչյուն բարձրացավ: Շուրջ չորս հազար մարդ զարնվեցին պարսպի և դարպասի մոտ...

Պյոտր Ալեքսեևիչը ելավ առվի միջից, ծանր բոտֆորտները ճղպացնելով քայլեց մամուռի վրայով, ձեռքերը շարունակ տանել-բերելով մարմնի վրա՝ ծխամորճն էր որոնում, թե զենքը... Կարճլիկ գնդապետ Նեչաևը հասավ նրան.

— Տեր թագավոր, էնտեղ չի կարելի...

Եվ երկուսն էլ սկսեցին նայել այնտեղ:

Պյոտր Ալեքսեևիչն ասաց.

— Ուղարկիր օժանդակ ուժեր կանչեն...

— Տեր թագավոր, պետք չէ...

— Ասում եմ, ուղարկիր...

— Պետք չէ... Մերոնք արդեն թնդանոթներն են խլում...

— Սուտ ես ասում...

— Տեսնում եմ...

Եվ իսկապես, դարպասի կողմը կրակ ժայթքեց թնդանոթներից մնկը, հետո մյուսը... Կովողների հոծ ամբոխը տատանվեց ու ճեղքվածքների միջով քաղաք խուժեց...

Պլշած աչքերն արցունքակալած Նեչաևն ասաց.

— Տեր թագավոր, հիմա արդեն սկսվեց կոտորածը...

Գրենադերները և մոսկովյան հրաձիգները մոլեգնած, որ այդքան դժվար էր ու զուր տեղն այդքան մարդ էին կոտորել շվեդները, թրատում, խոցում ու քաշում էին ոսոխին նեղլիկ փողոցներով մինչև քաղաքի հրապարակ: Այնտեղ կատաղությունից սպանեցին չորս թմբկահարների, որոնց Ցուրյևի պարետն էր ուղարկել շամադ՝ անձնատուր լինելու զարկ զարկելու: Եվ միայն ամրոցի աշտարակին կանգնած փողհարը, թոքերը պատռելով, անձնատուր լինելու խոսքն ազդանշան շեփորելով, դժվարությամբ ու ոչ միանգամից կանգնեցրեց կոտորածը...

6.

Առագաստներն իջեցրած, առագաստակալներից կախված նավաստիներով «Կատերինան» որոշ ժամանակ սառում էր ափի մոտով, անտառի կանաչ ստվերի մեջ: Թնդանոթի կրակոցից հետո շխկշխկաց խարիսխի շղթան: Անմիջապես մոտեցավ նավակը: Մեջը կանգնած էր Մենշիկովը՝ երկար թիկնոցով, փետուրները գլխարկի վրա ցցված: Տասն արշինից ոչ պակաս անգլիական բալեգույն մահուդ գնացած կլիներ պենամոլի թևքածալերի վրա: Ֆալշբորտին կռնթած Պյոտր Ալեքսեևիչը նրան էր նայում վերևից: Ալեքսանդր Դանիլովիչը ձեռքը կորացրած մոտեցրեց աջ ականջին, հանեց գլխարկը և երեք անգամ կողք տանելով, բղավեց.

— Վիվա՜տ: Պարոն բոմբարդիրին՝ վիվա՜տ, մեծ վիկտորիայի առթիվ...

— Սպասիր, հիմա կիջնեմ,— ցածր ու թավաձայն պատասխանեց Պյոտր Ալեքսեևիչը:— Ձեզ մո՞տ ինչ նոր բան կա:

— Մենք էլ առանց վիկտորիայի չենք...

— Էդ լավ է... Նամակով ինչ խնդրել էի, պատրաստե՞լ եք: Գարեջուր ասածդ բանն էլ չկար մեզ մոտ...

— Երեք տակառիկ հոլանդական երեկ ստացա,— թնդաց Մենշիկովը:— Մեր բանակատեղին Շերեմետևինը չէ՝ ոչ մերժել կա, ոչ ուշացնել...

— Պարծեցիր, պարծեցիր,— Պյոտր Ալեքսեևիչը կանչեց կապիտան Նեպլյուևին և հրամայեց, որ վաղը, հենց նավերի վրա դրոշ բարձրացավ, երկու կողերից թնդանոթաձգության տակ ազդանշանի վիմպել բարձրացնեն՝ «Գրավված են խիզախ մարտով», ապա թմբկազարկի ուղեկցությամբ ափ, զորքի առաջ բերեն շվեդական դրոշները: Երիտասարդ կապիտանի համար նման հրամանը պատիվ էր, նա կարմրեց: Պյոտր Ալեքսեևիչը, ակնդետ հայացքով նրան շփոթեցնելով, նաև ասաց.

— Լավ լողացինք, կոմանդոր:

Նեպլյուևը շառագունեց ու քրտնեց, նրա ծակող աչքերը լարումից խոնավացան՝ ցարը իրեն կոմանդոր նշանակեց, նավախմբի հրամանատար... Պյոտր Ալեքսեևիչն այլևս ոչինչ չավելացրեց, երկար ոտքերը պարզելով և կոշիկներով ճանկոտելով կարած կողը, նավակ իջավ: Նստեց Մենշիկովի կողքին, արմունկով բոթեց.

— Ուրախ եմ, որ դիմավորեցիր, շնորհակալ եմ... Ուրեմն, դուք էլ վիկտորիա ունեք: Շլիսլիսելբուրգի՞ ջարդեցի՞ք...

— Էն էլ ոնց, մին խեղդ... Անիկիտա Ռեպնինը սայլերով վրա պրծավ նրան Վենդենի տակ, իսկ գնդապետ Ռենը՝ հեծելազորով, ինչպես էն ժամանակ խորհուրդ տվեցի, քաղաք տանող ճանապարհը

պակեց... Ուզած-չուզած շվեդը պիտի բաց դաշտում մարտն ընդուներ... Շլիպպենբախին էնպես ջարդեցինք, որ էդ հերոսը մի տասը գինակրի հետ հազիվ փախավ Ռեվել:

— Բայց և այնպես էս անգամ էլ փախավ... Ախ, սատանաներ:

— Շատ ուժեղ պլստացող է... Բայց փուչ բան է հիմա՝ առանց թնդանոթ, առանց դրոշ, առանց զորք... Անիկիտա Իվանովիչը հետո խմած-խմած լաց էր լինում. «Էնքան ափսոս չի գալիս, որ Շլիպպենբախին չբռնեցի, ինչքան որ ձին չառա՝ ծիտ էր, ծիտ»: Էդ ասածի համար ինչատողություն արեցի. «Անիկիտա Իվանովիչ, ասի, դու հո Ղրիմի թաթար չես, որ պարանով ձի փախցնես, դու ռուս գեներալ ես, պետական մտածողականություն պիտի ունենաս...»: Լավ կովեցինք իրար հետ... Մի նորություն էլ ունեմ՝ Վարշավայից լուր բերեցին, որ Ավգուստ թագավորը մեծն դեսպան է ուղարկում մոտդ... Լավ կլիներ էդ դեսպանին հենց Նարվայի մեջ ընդունեինք... Հը՞, մին խեղ:

Պյոտր Ալեքսեևիչը լսում էր նրա շաղակրատանքը, աչքերը կկոցած կանաչ ջրերի վրա, եղունգն էր կրծում:

— Մոսկվայից լուր կա՞:

— Էլի գլխացավանք ունես. իշխան-կայսրի մոտից մարդ էր եկել, մի մեծ տուփ նամակ ու հրամանագիր է բերել... Պիտերբուրգ գնալու ճամփին Գավրիլա Բրովկինն էր եկել, Իզմայլովսկից նամակ է բերել:— Պյոտր Ալեքսեևիչն արագ նայեց նրան:— Մոտս է, մին խեղ: Մեկ էլ ջերմոցի չորս հատ սեխ բերեց, քուրքի մեջ փաթաթած դրած է, ընթրիքին կուտենք... Պատմում էր, որ Իզմայլովսկում շատ են սպասում քեզ, արցունքն աչքերին...

— Էդ մեկը սուտ:— Նավակը կողքով մոտեցավ ավազին: Պյոտր Ալեքսեևիչը ափ թռավ, ուր ջրի մոտ Մենշիկովի վրանն էր խփած:

Ընթրելու նստեցին վրանում, երկուսով: Թիկնաբարձերին նստելուց կռացած, Պյոտր Ալեքսեևիչը շատ կերավ՝ Շերեմետևի մոտ կարգին սովածացել էր: Մենշիկովը մատներով բիչումիչ վերցնում էր մատուցարաններից, ավելի շատ խմում էր, ձեռքի ափը դրած փորին փաթաթած ատլասե գոտու վրա՝ սիրալիր էր, շիկնած, մոմերի լույսն արտացոլվում էր կապույտ ու փաղաքուշ աչքերի մեջ: Զգուշությամբ, Պյոտր Ալեքսեևիչի հիհարած ու հանգիստ դեմքի վրա նվազագույն դժգոհություն բացատրելու ջանքերով պատմում էր նոր ֆելդմարշալ Օգիլվիի մասին.

— Խոսք չունեմ, ուսումնական մարդ է: Հորթի կաշվի կազմերով մի սել գիրք է բերել Վիեննայից, վրանում լցված են: Առաջին հերթին մի տեսակ հպարտ ու կտրուկ մեզ ասաց, որ մեր կերածից ոչինչ չի ուտելու... Հենց վեր կացավ, օղու բաժակի փոխարեն շնկոլադ ու կոֆեյ պիտի տանք իրեն, ցորենի սպիտակ հաց, ճաշին թարմ ձուկ, էն էլ ոչ թե ամեն տեսակ, մենակ նալիմ է ուտում, հետո որսի միս, հորթի միս: Որ հակառակվեցինք, հրամայեց, թե պիտի ճարել... Մի չուխոն ուղարկեցի Ռեվել, որ շեկոլադ ու կոֆեյ բերի, հինգ չերվոնեց իմ փողից եմ տվել... Կով ենք կապել ցցից, մենակ նրա համար,մի

մաքուր աղջիկ էլ գտանք, որ կթի, կարագ հարի... Վրանի ետևը արտաքնոց ենք սարքել, կողպեք կախել... Արտաքնոցի բանալին էլ ոչ մեկին չի տալիս...

Պյոտր Ալեքսեևիչը շտապ կուլ տվեց պատառը, ծիծաղեց.

— Բա էլ ինչի՞ համար եմ երեք հազար եֆիմոկ տալիս, հրեն, սովորեցնում է մեզ՝ ասիացիներիս...

— Հա՛, սովորեցնում է... Մյուս օրը բոլոր գնդերի գնդապետներին կանչեց, ոչ անուն հարցրեց, ոչ հայրանուն, ոչ մեկին ձեռով չբարևեց, ու սկսեց հպարտ-հպարտ պատմել, թե կայսրն ինչպես է իրեն սիրում, ինչ զորքեր է առաջնորդել, ինչ քաղաքներ պաշարել, մարշալ Վռքանն ինչպես է իրեն ասել. «Դու իմ ամենալավ աշակերտն ես» ու ծխատուփ նվիրել... Մեզ ցույց տվեց բոլոր շքանշաններն ու ծխատուփը, վրան մի աղջիկ էր նկարած, թնդանոթը գրկած, ու բաց թողեց բոլորիս... Զևի համար գոնե շեկոլադ հրամեցեք ասեր՝ չէ՞..., «Ես շուտով դիսպոզիցիան կգրեմ, ասեց, կիմանաք, թե Նարվան ինչպես է պետք գրավել...» Մինչև էսօր գրում է...

— Է՞, է՞...— Պյոտր Ալեքսեևիչն անձեռոցիկով սրբեց ձեռքերը, ոսկեզօծ աստվածներով զարդարված, կոկոսյան արմավենուց պատրաստված մագդեբուրգյան գավաթը վերցրեց, շրթունքներն ուրախ շարժելով ասաց՝ նրա մգավուն աչքերը հազվադեպ էին ծիծաղում.— Ինչպես Կուկույում, անցած գնացած օրերին, փառաբանենք, սրտակից իմ ընկեր, մեր հայր Բաքոսին ու մեր մայր անդադրում Վենուսին... Նամակը տուր, տեսնեմ...

Մոմով կնքած, ասեղնագործ թաշկինակի անուշ ու կանացի նույն բույրն ունեցող փոքր նամակը Կատերինա Վասիլեֆսկայայից էր (թեև Անիսիա Տոլստայայի ձեռքով գրված, քանի որ Կատերինան գրել չգիտեր):

«Աչքիս լույս, իմ ուրախություն թագավորին... Տեր թագավոր, աչքիս լույս և իմ ուրախություն, ձեզ նվեր եմ ուղարկում սեխեր, որ Իզմայլովսկում ապակու տակ են հասել, շատ քաղցր են... Աչքիս լույս և իմ ուրախություն թագավոր, կերեք, անուշ լինի... Ու նաև ձեզ տեսնել եմ ցանկանում...»:

— Քիչ է գրել... Բայց վայ թե երկար է մտածել, հոնքերը կիտել, գոգնոցը ճմրթել,— կատակախառն, կամացուկ ասաց Պյոտր Ալեքսեևիչը: Դատարկեց գավաթը: Մենկերին խփելով, վեր կացավ ու ելավ վրանից:— Դանիլիչ, Մակարովին ձեն տուր, իրար հետ մոսկովյան փոստը նայեք, մի քիչ թարմանամ:

Երեկոն հեղձուկ էր, սև անտառակից տաք խեժի բույր էր գալիս: Սփռված վերջալույսը հանգչում էր մոայլված, լույսը քիչ էր: Մենավոր գիշերահավքերի կանչելու, մարդու վրայով չղջիկների անլսելի թռիչքների ժամանակն էր: Մարգագետնում տեղ-տեղ դեռ պլպլում էին խարույկները, և Մենշիկովի հետ եկած պահակախմբի ձիերի պսիսուրցն էր զրնգում: Խոտի մեջ մինչև ծնկները թրջելով գուլպաները, Պյոտր Ալեքսեևիչը քայլում էր գետի ափով: Կանգ էր առնում, ավելի խոր ներշնչելու համար: Դեպի գետն իջնող ցածրոտի պոնկին

նորից կանգնեց՝ ներքևից փտածության ու մեղրի հոտ էր գալիս, բարակ ծուխ էր ելնում, կամ գարեջուր էին եփում գաղտնի, և մի հստակ ձայն էր լսվում՝ պետք է որ ձիապան զինվորներից լիներ, այն սպախոսներից, որոնք չեն թողնում մարդկանց քնեն, միայն թե լսեն իր եղած-չեղած պատմությունները: Պյոտր Ալեքսեևիչն ուզում էր շրջվել, սակայն ականջին հասավ.

— Փուչ բան է էդ ամենը՝ կախա՜րդ, հա կախա՜րդ: Հասարակ ճորտ աղջիկ էր, սնուկ, շապիկը ծակ... Հենց էդպես էլ բռնել էին: Ամեն մուժիկ չէր, որ կուզենար նրա հետ պառկել... Միշտ չեմ ասո՞ւմ, Միշկա: Ես իրան տեսա, որ ֆելդմարշալի մոտ էր ապրում... Վրանից դուրս թռավ, լվացքաջուրը թափեց, գոգնոցով ձեռքերը սրբեց ու ետ գնաց, ոտները գցելով՝ տրպ-տրպ-տրպ... Թմփլիկ էր, թովուան... Էն ժամանակից մտածեցի, որ էդ տիկնիկը չի կորի... Շատ թովուան էր:

Մի տխմարավուն ձայն հարցրեց.

— Քեռի, բա հետո՞ ինչ եղավ դրան:

— Չգիտե՞ս որ: Միշտ են ասում է, թե անխելքի հետ ճամփա չը-գնաս... Հիմի նա մեր ցարի հետ է ապրում, քաղցր բաներ է ուտում, պրյանիկն էլ վրայից, օրվա կեսը քնում է, մյուս կեսն էլ ճմլկոտում...

Տխմարավուն ձայնը զարմացած էր.

— Քեռի, ուրեմն մի ուրիշ տեսակ բան ունի:

— Միշկայից հարցրու, քեզ կպատմի նրա բաներից:

Թավ ու քնաթաթախ մի ձայն պատասխանեց.

— Դե կորեք, գնացեք, իսկի չեմ էլ հիշում...

Պյոտր Ալեքսեևիչը դժվարությամբ էր շնչում... Դեմքը կրակվում էր ամոթից... Զայրույթից արյունը սևացել էր կարծես... Թագավորի պատվի դեմ նման խոսքերի համար իշխան-կայսրը շրթա էր դնում ոտքերին... Բռնե՛լ դրանց: Խայտառակությո՞ւն, խայտառակությո՞ւն: Հապա ծիծա՜ղը: Ինքն է մեղավոր, որ արդեն ամբողջ զորքն է ծիծաղում... «Միշկայի տակից աղջիկ է տարել...»: Եվ Պյոտրը, գլուխը կախած, քայլեց ցած, ալարկոտ մուժիկի կողմը, որն առաջին քաղցրությունն էր առել Կատերինայից... .Բայց կարծես փափուկ մի ուժ կանգնեցրեց, բանտեց մարմնի բոլոր անդամները: Շունչը տեղը բերելով, ձեռքը դրեց թաց ճակատին... «Անառակ տիկնիկ, Կատերինա..» Եվ նա պարզորոշ կանգնեց Պյոտրի դիմաց... Թխամաշկ, դուրեկան, ջերմ, բարի ու ոչ մի մեղք էլ չունի... «Գրողը տանի, չէ որ ամեն ինչ գիտեիր նրա մասին, երբ մոտդ տարար... Զինվորի մասին էլ գիտեիր...»:

Ոտքերը բարձր-բարձր գցելով խոտերի մեջ, ծանր-ծանր իջավ ցած: Ծխի միջից երեք հոգի վեր կացան... «Ո՞վ է եկողը»,— կոպտաձայն բղավեց մեկը: Պյոտր Ալեքսեևիչը մրթմրթաց. «Ես եմ եկողը...»: Զինվորները թեև սաստիկ վախեցան, բայց ճարպկորեն, մի վայրկյանում զենքերն առան ու անշարժ կանգնեցին: Հրացաններն առաջ բրոնված, թթերն ուրախ տնկած, աչքերը չռած ցարի վրա, պատրաստ կրակը նետվել, մեռնել հանուն նրա:

Պյոտր Ալեքսեևիչը, նրանց չնայելով, կոշիկը խրեց հանգած խարույկի մեջ.

— Ածուխ տվեք:

Մեջտեղի զինվորը՝ պատմող սրախոսը, ընկավ ծնկներին, մոխիրը ետ տարավ, վառվող ածխիկը դրեց ափին ու գցել-բռնելով ապատում էր, թե պարոն բոմբարդիրը երբ է լցնելու ծխամորճը: Կպցնելիս Պյոտր Ալեքսեևիչը հոնքերի տակից խեթեց կողքի զինվորին... «Էս մեկն է...»: Բարձրահասակ, առողջ, թիկնեղ... Դեմքը չկարողացավ զանազանել...

— Հասակդ քանի՞ վերշոկ է: Ինչի՞ համար գվարդիայում չես: Անունդ ի՞նչ է:

Զինվորը պատասխանեց ճշգրիտ՝ ըստ կանոնագրքի, բայց մոսկովյան ձգված առոգանությամբ, և այդ հանդուգն երանգից Պյոտր Ալեքսեևիչի բեխերը շարժվեցին...

— Բլուդով Միշկա, Նևսկի դրագունյան գնդի վեցերորդ վաշտի ձիապան, զորակոչված վեց հարյուր իննսունինը թվին, հասակս երեք արշինից երեք վերշոկ պակաս, պարոն բոմբարդիր...

— Իննսունիններից կովում ես, կոչում չես ստացել: Ծո՞ւլ ես: Անխե՞լք:

Զինվորն անկեղծան ձայնով պատասխանեց.

— Միշտ այդպես, պարոն բոմբարդիր, ծուլ եմ ու անխելք...

— Հիմար:

Պյոտր Ալեքսեևիչը փչեց, թոցրեց ածխիկը վառված ծխամորճի վրայից: Գիտեր, որ չհեռացած, զինվորներն իրար են նայելու հասկացող հայացքներով, ծիծաղել չեն համարձակվի, բայց կնայեն... Բարակ ձեռքերը մեջքին դրած, դեմքը վեր պարզած, ծխամորճից կայծեր թոցնելով, նա հեռացավ ցածրուտից: Վրան մտնելով, նստեց սեղանի մոտ, մոմը հեռու տարավ իրենից: Կոկորդը չորացել էր, ագահորեն գինի խմեց: Ծխամորճի ծիսով պարուրվելով, ասաց.

— Դանիլիչ... Նևսկի գնդի վեցերորդ վաշտում գվարդիական չափսերի մի զինվոր կա... Ի՞նչ կարգ է...

Մենշիկովի կապույտ աչքերի մեջ ոչ զարմանք հայտնվեց, ոչ խորամանկություն, միայն սրտագին ըմբռնում կար.

— Միշկա Բլուդովը... Ինչպե՞ս չէ... Վաղուց եմ ճանաչում... Պարգևատրված է մի ռուբլով Մարիենբուրգը գրավելու համար... Էսկադրոնի հրամանատարը չի ուզում բաց թողնել՝ ձի շատ է սիրում, ձիերը էլ՝ իրեն, վեցերորդ Էսկադրոնի ձիերի պես կայտառ ձիեր ամբողջ բանակում չկան:

— Նրան կտեղափոխես Պրեոբրաժենյան գունդ, առաջին վաշտը՝ աջթևային:

4.

Գեներալ Գոռնը իջավ աշտարակից և քայլեց շուկայի հրապարակով: Երկարահասակ էր, նիհար ոտքերին՝ տափակ ոտնամաններ: Ինչպես միշտ, շատ ժողովուրդ կար խանութների մոտ, բայց, ավաղ, օրըստօրե նվազում էր որևէ ուտելիք գնելու հնարավորությունը. մի

կապ բողկ, ճագարի փոխարեն մաշկած կատու, մի քիչ ապիտած ձիու միս: Զայրացած բնակչուհիներն արդեն չէին խոնարհվում գեներալին ողջույնի ծնկծալով, ոտանք թիկունք էին դարձնում, Քանիցս տրտնջոց էր լսել. «Անձնատուր եղիր ռուսներին, ծեր սատանա, ինչու ես զուր տեղը մարդկանց կոտորում...»: Սակայն գեներալին վրդովեցնելն անհնար էր:

Երբ քաղաքային ժամացույցը ժամը ինը զարկեց, նա մոտեցավ իր կոկիկ տնակին և կոշկատակերը սրբեց աստիճանին օգած փոռցի վրա: Մաքրասեր աղախինը բացեց դուռը և խոր ծնկծալով վերցրեց նրա սաղավարտը և սուսերակալից արձակած ծանր սուրը: Գեներալը ձեռքերը լվաց և արժանապատիվ ու դանդաղաքայլ ճաշասենյակ մտավ, ուր ցածրադիր լուսամուտների բշտիկավոր, ամբողջ պատը բռնած կլոր ապակիներից աղոտ թափանցում էր կանաչ և դեղին լույսը:

Սեղանի մոտ կանգնած գեներալին էր սպասում կինը՝ ծնյալ կոմսուհի Շպեոլինգը, ծանր բնավորության տեր մեկը, կորամեջք ու նոսրամազ երեք աղջնակ, հոր պես երկար քթերով, և փքված մի տղեկ՝ մոր սիրեցյալը:

Գեներալը նստեց և բոլորը նստեցին, ձեռքերը ծալած լուռ աղոթք արեցին: Երբ անագե ամանի կափարիչը բարձրացրին, գոլորշի ելավ, սակայն գոլորշուց բացի հրապուրիչ և ոչինչ չկար մեջը. վարսակաձավարի նույն խաշիլն էր, առանց կաթի և աղի: Տրտմահայաց աղջիկները հագիվ էին կոլ տալիս, փքված տղեկը, պնակը հրելով, շշնջում էր մորը, «Չեմ ուտի, չեմ ուտի...»: Երկրորդ ճաշատեսակը մատուցեցին՝ երեկվա պառաված ոչխարի ոսկորներն էին ու մի քիչ սիսեռ: Զուր խմեցին գարեջրի փոխարեն: Գեներալը անվրդով ծամում էր միսը, խոշոր ու դեղնած ատամներով:

Կոմսուհի Շպեոլինգը խոսեց արագ-արագ, պնակի վրա մանրելով հացի կողը.

— Տասնչորս տարվա ամուսնական կյանքի ընթացքում ինչքան փորձեցի, ձեզ հասկանալ չկարողացա, Կաղ... Ձեր մեջ մի կաթիլ կենդանի արյուն կա՞: Հոր և ամուսնու սիրտ ունե՞ք դուք: Թագավորը Ռեվելից ձեզ նավերի քարավան է ուղարկում, բարձած ապուխտ, շաքար, ձկնեղեն, մսեղեն ու թխվածք... Ձեր տեղն ինչպե՞ս պիտի վարվեր չորս երեխաների հայրը: Սուրը ձեռքին հասնել նավերին ու քաղաք բերել.... Իսկ դուք գերադասեցիք անվրդով նայել աշտարակից, թե ռուս զինվորներն ինչպես են խժռում ռեվելյան ապուխտը... Իսկ իմ երեխաները ստիպված են խեղդվելով վարսակաձավար ուտել... Ես չեմ դադարի կրկնելուց. քար է դրված ձեր սրտի փոխարեն: Դուք հրեշ եք: Հապա կեղծ ճակատամարտի չարաբաստիկ դե՞պքը... Հիմա ինձ չի կարելի հայտնվել Եվրոպայում... «Ահ, դուք կինն եք այն գեներալ Գոռնի, ում քթից բռնած խաբեցի՞ն ռուսները, ինչպես տոնավաճառում մի խելապակասի...»:— «Ավաղ, ավաղ»,— պիտի պատասխանեմ ես: Դուք նույնիսկ չգիտեք, որ քաղաքում ամեն մի խանութպան կին ձեզ անվանում է աշտարակին թառած ծեր արագիլ... Վերջապես մեր միակ հույսը՝ գեներալ Շլիպենբախը, ցանկանալով մեզ օգնել, ջախջախվում է Վենդենի տակ, իսկ դուք, իբր ոչինչ էլ չի պատահել, նստել և անվրդով ծամում եք ոչխարի ջլերը, կարծես այսօր ձեր կյանքի ամենաերջանիկ օրն է... Ոչ, բավական է: Դուք պետք է բաց թողնեք ինձ երեխաների հետ, գնամ Ստոկհոլմ, թագավորի պալատը...

— Ուշ է, տիկին, չափազանց ուշ,— ասաց Գոռնը, և պատուհանին հառած նրա սպիտակավուն աչքերը թվում էր նույնքան քիչ լույս են կլանում, ինչքան և այդ բշտիկավոր ապակիները:— Մենք ամուր փակված ենք Նարվայում, ինչպես մկան թակարդի մեջ:

Կոմսուհի Շպեոլինգը երկու ձեռքով բռնեց ժանեկազարդ շորագլխարկը և քաշեց հոնքերին:

— Հիմա եմ հասկանում, թե ինչի էիք ձգտում դուք, որ ես իմ դժբախտ երեխաների հետ խոտ ուտեմ և առնետ:

Փքված տղեկն անպասելի ծիծաղեց ու նայեց մորը, լացակումած աղջիկները քթերը կախեցին պնակների վրա: Գեներալ Գոռնը թեթևակի զարմացավ, ինքը չէր ձգտում, որ իր երեխաները խոտ ու առնետ ուտեն: Բայց նույնքան անվրդով ավարտեց նախաճաշը:

Դռան ետևում վաղուց արդեն զնգզնգում էին համհարգ Բիստրեմի խթանները: Ըստ երևույթին, ինչ-որ բան էր կատարվել: Բոխարու վրայից Գոռնը վերցրեց կավե ծխամորճը, լցրեց, կրակ հանեց կայծքարից, պատրույգից վառեց թուղթը, կպցրեց ու նոր միայն հեռացավ ճաշասենյակից:

Բիստրեմը նրա սաղավարտն ու սուրն էր բռնել, թեթևակի հնասպառ էր.

— Ձերդ գերազանցություն, ռուսական ճամբարում հանկարծակի շարժում է սկսվել, որի իմաստը չենք կարողանում հասկանալ...

Գեներալ Գոռնը նորից անցավ հրապարակով, որը լի էր հուզված ամբոխով: Գլուխը բարձր էր քայլում, չցանկանալով նայել քաղաքացիների դեմքերին, որոնք իրեն ծեր արագիլ են կոչում: Մաշված աստիճաններով բարձրացավ աշտարակ: Իսկապես, ռուսական ճամբարում անսովոր բան էր կատարվում. քաղաքը սեղմած պաշարողական ամրությունների կիսաշրջանով մեկ երկշար շարվում էին զորքերը: Արևելքից արագ մոտենում էր փոշու ամպը: Սկզբից կարելի էր միայն զանազանել կարմիկ ձիերով արշավող դրագուններին: Նրանցից որոշ հեռավորության վրա գալիս էին Պյոտր ցարը և Մենշիկովը: Էսկադրոնի պայտերից բարձրացող դեղնավուն փոշին այնքան թանձր էր, որ գեներալ Գոռնը ցավագին կնճռոտեց դեմքը... Ցարի և Մենշիկովի ետևից արշավում էին զինվորները, բարձր բռնած տասնութ դեղին ատլասե դրոշ, որոնց ծալքերի մեջ գալարվում էին թաթերը զայրացած չռած թագավորական տասնութ առյուծները...

Էսկադրոնները, ցարը, Մենշիկովը, շվեդական դրոշները սուրբ-ցին-անցան զորքի առջևով, և զորքերը, բարբարոսական կոկորդներով մեկ բղավում էին՝ «Ուռռռաաա՞»....

Ռուսական ճամբարում ուրախանում էին: Գլորիա բաստիոնից լավ երևում էր, ինչպես ցարական վրանի շուրջը կրակում էին թնդանոթները. հանդազարկերով կարելի էր հաշվել, թե քանի վիվատ են խմել: Գիտնալով ռուսների պարծենկոտությունը, գեներալ Գոռնը սպասում էր, որ այնտեղից դեսպան է գալու, գոռոզ խոսքեր ասելու: Այդպես էլ եղավ: Ցարի վրանից հանկարծ մի քառասուն հոգի ելան, գավաթները ու բաժակները թափահարելով, նրանցից մեկը ձին հեծավ ու քշեց դեպի Գլորիա բաստիոնը, ետևից շեփորահարն էր հասնում: Ձիու հետ խույս տալով կրակոցներից, այդ դեսպանը հասնեց թաշկինակը, լարեց հանած սրի ծայրին ու կանգ առավ աշտարակի ստորոտին: Թամբի վրա նստ ընկած փողհարը ամբողջ ուժով շեփորում էր, վախեցնելով թռչող ագռավներին:

— Լսեցե՞ք, լսեցե՞ք,— բղավեց դեսպանը:— Խոսում է Պրեոբրաժենսկի գնդի փոխգնդապետ Կարպովը՝ հարբած էր, կարմրած, քամին գանգուրներն էր ծածանում: Գեներալ Գոռնը, աշտարակի վրա կանգնած, պատասխանեց.

— Խոսիր, լսում եմ: Կհասցնենք քեզ սպանել:

— Հայտնում եմ,— զվարթ գլուխը տնկած, բղավում էր փոխգնդապետը:— Անցյալ շաբաթվա ուրբաթ օրը Յուրյև քաղաքը ասածո օգնությամբ գրավված է Ֆելդմարշալ Շերեմետևի կողմից: Պարետի աղեկտուր խնդիրքը նկատի առնելով, քաջարի պաշտպանությունը հարգելով, սպաներին թողնված են իրենց սրերը, զինվորների մեկ երրորդին՝ զենքն առանց լիցքի... Գրոշներից ու նվագախմբից զրկվել են...

Բիսարեմը բարձրաձայն թարգմանում էր, Գոռնի ետևում կանգնած սպաները զայրացած միմյանց էին նայում, մեկը՝ իրեն կորցրած, բղավեց. «Սուտ է ասում, ռուս շունը»: Փոխգնդապետ Կարպովը ձեռքի լայն շարժումով ցույց տվեց վրանը, ուր դեռ կանգնած էին մարդիկ, գավաթները բռնած.

— Պարոնայք շվեդներ, ավելի լավ չէ՞ հաշտությունը, քան Շլիսելբուրգի, Նիենշանցի և Յուրյևի խայտառակ ճակատամարտերը... Սույնը հասկանալով, գլխավոր հրամանատար ֆելդմարշալ Օգիլվին ձեզ առաջարկում է հանձնել Նարվան՝ ազնիվ պայմանով... Բանակցությունների համար դեսպաններն անհապաղ թող գան վրան: Գավաթները լցված են, թնդանոթները վիվատի համար պատրաստ...

Գեներալ Գոռնը խլաձայն պատասխանեց.

— Ո՛չ: Ես կռվելու եմ:— Փոս ընկած այտերով, ծերությունից խոշորացած քթով դեմքին արյան նշույլ չկար, ջղուտ ձեռքերը դողդողում էին:— Գնա: Երեք րոպե անց կհրամայեմ կրակ բացել...

Կարպովը պատվի առավ սրով, փողհարին ձայնեց. «Հեռացիր», իսկ ինքը հեռանալու փոխարեն, պար եկող ձիու վրա անցավ աշտարակի մյուս կողմը: Սպաները նետվեցին դեպի պարապի ատամները, փոխգնդապետը բղավեց.

— Ձեզնից ո՞ր մի գող ու անկիրթն ինձ՝ ռուս սպային վիրավորեց, թե սուտ եմ ասում: Թարգմանիչ, շուտ թարգմանիր... Եթե այդքան համարձակ ես, հապա դուրս արի դաշտում հանդիպենք դեմ առ դեմ...

Սպաները բղավեցին: Մեկը՝ գեր ու շառագունած, բռունցքները թափահարեց, պոկվելով ընկերների ձեռքից... Զրնկացին հրահանները: Ձիու մեջքին պառկած, Կարպովը հեռու սլացավ աշտարակից, ետևից կրակոցներ հնչեցին, գնդակների սուլոց... Երկու հարյուր բայի վրա կանգ առավ և ձին բորբոքվելով ու զսպելով, սպասեց հակառակորդին... Ոչ այնքան շուտով ճոնչացին դարպասի ծխնիները, կամուրջն ընկավ, ու գեր սպան դաշտով սլացավ դեպի Կարպովը: Ավելի բարձրահասակ էր, ձին էլ էր խոշոր, շվեդական սուրն էլ էր երկու վերշոկ երկար ռուսականից: Մենամարտի համար երկաթյա գրան էր հագել, իսկ Կարպովի արձակ կաֆտանի տակից ժանյակն էր փքվել:

Ըստ սովորության, հակառակորդները, նախքան բախվելը, սկսեցին հայհոյել միմյանց, մեկը կատաղած հաչում էր դժնի խոսքեր, մյուսը մոսկովյան ուշունցի շուտասելուկն էր զլել... Լծաթամբի փոկից կախ պատյաններից երկուսն էլ հանեցին ատրճանակները, խթանեցին ձիերն ու հարձակվեցին միմյանց վրա: Մեկտեղ կրակեցին: Շվեդը սուրը շատ առաջ էր մեկնել, Կարպովը նրա ձիու քթի տակ թաթարավարի խույս տվեց, շուրջը պտտվեց ու կրակեց երկրորդ ատրճանակից: Շվեդն ատամները կրճտացրեց, մրթմրթաց ու նորից վրա պրծավ այնպիսի չարությամբ, որ Կարպովը կարողացավ փրկվել միայն ձին դեմ անելով, հակառակորդի սուրը խոր խրվեց կենդանու պարանոցը... «Էհ, ձիս կորցրի,— մտածեց փոխգնդապետը,— անձի չեմ դիմադրի...»: Սակայն շվեդը, քնածի պես, թողեց կրակակալը, ճոճվեց, ձախ ձեռքով փնտրելով ատրճանակը պատյանի մեջ: Ընկնող ձիուց ցած ցատկելով, Կարպովը մի քանի անգամ սուր շեղբով խփեց նրա կողին, գրանի տակ ու նայում էր, թե շվեդն ինչպես շունչը կտրվելով ավելի ու ավելի է ճոճվում թամբի վրա... «Առողջ է սատանան, մեռնել չի ուզում»,— և կաղին տալով վազեց յուրայինների մոտ...

...Գիշերվա ստվերը ծածկեց դաշտը, ցող իջավ, վաղուց դադարել էին կրակոցները, խոհարարների խարույկները ծխացին, կենդանի ամենայն արարած քուն էր մտնում, բայց ռուսական ճամբարում դեռ դադար չկար: Արևմտյան եզրին, ուր կամուրջ էր սարքված, ավելի ու ավելի շատ կրակներ էին շարժվում, հրամանների ձայներն էին լսվում և միստեղ երկարուձիգ բղավոց. «Ռուուուռ՝ խխխ...»: Խարույկները, ջահերի և լապտերների կրակները տեղափոխվեցին հեռու, Նարովայի աջ ափը, ուղիղ Իվան-գորոդի տակ, և շուտով այդ անշարժ ու շարժվող կրակներն ավելի շատ էին, քան օգոստոսյան երկնքի մեծ-մեծ աստղերը:

Լուսաբացին Նարվայի աշտարակներից տեսան, որ Ցամգորոդյան ճանապարհով դեռ շարժվում են պարապաջարդ վիթխարի թնդանոթները և պաշարողական հրասանդները, որ եզներն էին քաշում:

Մի մասը տեղափոխեցին կամրջով, իսկ մեծ մասը շրջեցին ու կանգնեցրին աջ ափին, կիտված զորքերի մեջ։

Գեներալ Գոռնն այդ առավոտ ձիով գնաց հին քաղաքը, Գոնոր բաստիոնը, որ գետափին էր նայում։ Այնտեղ բարձրացավ աղյուսաշար բարձր ռավելինը, որն անմատչելի էր համարվում։ Այստեղից անզեն աչքով կարող էր տեսնել ձուլածո անիվներով պղնձյա հրեշները, կարող էր հաշվել դրանք և առանց դժվարության հասկացավ Պյոտր ցարի մտադրությունն ու իր սխալը։ Ռուսները մի անգամ ևս խորամանկեցին իրեն՝ ծեր և փորձառու զինվորականին։ Պաշտպանությանը աչքաթող էր արել երկու ամենաթույլ կետերը՝ անմատչելի համարվող Գոնորը, որը ռուսների պարսպաշարդ նոր թնդանոթները ցաքուցրիվ կանեն մի քանի օրում, և քաղաքը գետի կողմից պաշտպանող Վիկտորիա բաստիոնը՝ նույնպես աղյուսաշեն, խարխուլ, Իվան Ահեղի ժամանակներում կառուցված։ Երկու ամիս ռուսները ուշադրություն էին շեղում, իբր պատրաստվում են նոր քաղաքի հզոր ամրությունները գրոհելու։ Բայց գրոհն արդեն այն ժամանակ, անշուշտ, պատրաստվում էր այստեղից։ Գեներալ Գոռնը նայում էր, թե ինչպես ռուս հազարավոր զինվորներ ամենայն շտապողականությամբ հողն են փորում և տեղադրում պարսպաշարդ մարտկոցները Գոնորի, Վիկտորիայի և գետանցը պաշտպանող Իվան-գորոդի դիմաց։ Ռուսները գրոհը նախապատրաստում էին գետի մյուս կողմից, լողակամուրջներով գետն անցնելով...

«Շատ լավ, ամեն ինչ պարզ է, հիմար կատակները վերջացան, կռվելու ենք,— մրթմրթում էր Գոռնը, քայլելով առույգացած։— Մեր կողմից շվեդական արիությունը դեմ կանենք... Դա քիչ բան չէ»։ Նա դարձավ սպայախմբին.

— Դժոխքը լինելու է այստեղ,— և բոտֆորտը գետնին խփեց։— Այստեղ կուրծքներս դեմ կանենք ռուսների արկերին։ Ռուսները շտապում են, մենք պետք է շտապենք։ Հրամայում եմ քաղաքում հավաքել բոլոր նրանց, ովքեր ի վիճակի են բահ բանացնել։ Պարիսպներն ընկան, կկռվենք դեմառդեմ, խրամատներում, կկռվենք փողոցներում... Նարվան ռուսներին ես չեմ հանձնի...

Ուշ երեկոյան գեներալ Գոռնը տուն եկավ և, սեղանի մոտ նստած, խոշոր ատամներով ջլոտ միս էր ծամում։ Կոմսուհի Ծպեռյինգն այնքան էր վախեցած շուկայական խռսակցություններից, որ զայրույթից խեղդվելով լռում էր։ Փքված տղեկը, թքոտած մատը տանելով պնակի եզրով, ասաց.

— Տղաներն ասում են, որ ռուսները բոլորիս կոտորելու են...

Գեներալ Գոռնը մի կում ջուր խմեց, մոմից կպցրեց ծխամորճը, ոտքը ոտքին գցեց ու ասաց որդուն.

— Է ինչ, զավակս, մարդը պետք է իր պարտքը կատարի, իսկ մնացյալը թող աստծու ողորմածությանը։

6.

Նման երկարաշունչ ու ձանձրալի ամեն մի պաշտոնագիր Պյոտր Ալեքսեևիչը սեղանի վրայից կշպրտեր քարտուղար Մակարովին. «Կարդա ու հասկանալի շարադրիր», սակայն այս մեկը ֆելդմարշալ Օգիլվիի դիսպոզիցիան էր։ Եթե հաշվենք, որ ոռճիկը մայիսի մեկից էր ստանում և ուրիշ ոչինչ մինչև հիմա չէր արել, դիսպոզիցիան գանձարանի վրա յոթ հազար եֆիմոկ էր նստել, չհաշված պարենամթերքն ու այլ բաներ։

Ծպճպացնելով խոխոտացող ծխամորճը, հետն էլ տնքտնքալով, Պյոտր Ալեքսեևիչը համբերությամբ կարդում էր ֆելդմարշալի ստեղծագործությունը գերմաներեն։

Մոմերի շուրջբոլորը դեղնավուն մժղուկներ էին պտտվում, սարսափելի երկարոտ մոծակներ եկան, թևերը խանձելով ընկան սեղանին թափված թղթերի վրա, իլիկաձև, կես ճճղուկի չափ մի թիթեռ մոմը պիտի հանգցներ իր փոռոցով (Պյոտր Ալեքսեևիչը ցնցվեց, արտասոց ու անօգուտ միջատներ, հատկապես ուտիճներ չէր սիրում նա)։ Մակարովը կեղծամը հանեց, թուչկոտելով, թիթեռը դուրս քշեց վրանից։

Պյոտր Ալեքսեևիչի կողքին, կարճլիկ ազդրերը չոած, նստել էր Պյոտր Պավլովիչ Ծաֆիրովը, որը Մոսկվայից էր եկել ֆելդմարշալի հետ։ Ցածրահասակ, խոնավ ու ժպտուն աչքերով, պատրաստ էր ամեն ինչ հասկանալ միանգամից։ Պյոտրը վաղուց էր զննում նրան՝ բավականաչա՞փ խելացի է արդյոք, նվիրված լինելու համար, արդյո՞ք շատ է խորամանկ, չափից դուրս ագահ չէ՞։ Վերջին ժամանակներս Ծաֆիրովը հասարակ թարգմանչից Դեսպանական վարչատանը երևելի անձնավորություն էր դարձել, թեև առանց աստիճանի էր։

— Էլի խառնել ու խճճել է,— կնճռոտվելով ասաց Պյոտր Ալեքսեևիչը։ Ծաֆիրովը մատանիներով զարդարված կարճ ձեռքերը թափահարեց, վեր թռավ տեղից, կռացավ ու շուտով ստույգ թարգմանեց անհասկանալի տեղը։

— Ա՜, եղած-չեղածը դա էր, ես էլ կարծում էի մի իմաստուն բան կլինի,— Պյոտրը սագի փետուրը մտցրեց թանաքամանի մեջ և լուսանցքում մի քանի բառ գրոտեց։— Մեր լեզվով ավելի հասարակ է... Պյոտր Պալիչ, ֆելդմարշալի հետ մի փութ աղուհաց կերած կաս, խելքը գլխի՞ն մարդ է։

Ծաֆիրովի լավ ածիլված դեմքը լայնացավ, ատամանայի պես խորամանկ էր։ Նա ոչինչ չպատասխանեց, նույնիսկ ոչ զգուշավորությունից, բայց և գիտեր, որ Պյոտրի անթարթ աչքերը առանց դրա էլ կկարդան իր մտքերը։

— Մերոնք բողոքում են, որ չափից դուրս գոռոզ է։ Զինվորին մոտ չի գնա՝ զզվում է... Չգիտեմ, թե ռուս զինվորից ինչի պիտի զզվի մարդ՝ մարմինը մաքուր, սպիտակ։ Ոչիլ էլ կարծեմ մենակ գումակի մուժիկ-

ների վրա կա... Ա՛խ, կեսարականներ: Էսօր առավոտ մտա մոտը, մի փոքր թասի մեջ լվացվում էր, մի ջրով ձեռքերն էլ լվաց, երեսն էլ ու մեջն էլ թքեց... Իսկ մեզնից զզվում է: Բաղնիքում էլ Վիեննայից գալուց հետո չի եղել:

— Չի եղել, չի եղել...— Շաֆիրովն ամբողջ մարմնով ցնցվում էր ծիծաղից, մատների ծայրերով բերանը ծածկելով:— Գերմանիայում,— պատմեց,— երբ պարոնն ուզում է լողանալ, մի գուռ ջուր են բերում, որի մեջ պետք եղած այս կամ այն անդամն է լվանում... Իսկ բաղնիքը բարբարոսների սովորություն է... Ամենից շատ պարոն ֆելդմարշալը բարկանում է, որ մեզ մոտ շատ են սխտոր ուտում՝ ծեծած, կտրտած, ուղղակի այնպես, հավասարապես թե՛ ճորտը, թե՛ բոյարները... Առաջին օրերը քիթը թաշկինակով բռնում էր...

— Չէ հա,— զարմացավ Պյոտրը:— Ինչի՞ չէիր առաջ ասում... Ոչ ճիշտ է, որ սխտոր շատ ենք ուտում, իմիջիայլոց սխտորն օգտակար բան է, թող վարժվի...

Նա սեղանին շպրտեց կարդացած դիսպոզիցիան, ձգմգվեց, հոդերը ջարդջրդեց, ու հանկարծ դարձավ Մակարովին.

— Բարբարոս, սեղանի վրայից էդ գարշանքը սրբիր, մժղուկներին... Ասա, որ գինի բերեն ու ֆելդմարշալի համար աթոռ... Մակարով, մի սովորություն էլ ունես, լսելիս սխտորահոտը փչում ես մարդու դեմքին... Շուտ եկած շնչիր...

Վրան մտավ ֆելդմարշալ Օգիլվին դեղին կեղծամով, ոսկեկար տրեզով զինվորական սպիտակ կաֆտանով, ծնկներից ցած փափուկ բոտֆորտներով: Մի ձեռքով գլխարկը, մյուսով ձեռնափայտը բարձրացրած, խոնարհվեց և անմիջապես ուղղեց երկար հասակը: Պյոտր Ալեքսեևիչը, առանց վեր կենալու, բոլոր մատները չոռած, ցույց տվեց աթոռը. «Նստիր: Առողջությունդ ո՞նց է»: Շաֆիրովը, մոտ գալով, անուշ ժպիտով թարգմանեց: Արժանապատվությամբ լի ընտեց ֆելդմարշալը, մի քիչ թիկն տալով ու փորը ցցելով, ձեռքը կողք պարզեց, ձեռնափայտին դրած: Դեմքը դեղնավուն էր, լիքը-լիքը, բայց թթված, բարակ շրթունքներով, հայացքը խիզախ էր՝ խոսք չկար:

— Դիսպոզիցիադ կարդացի, ոչինչ, խելացի է, խելացի:— Պյոտր Ալեքսեևիչը սեղանի տակից հանեց քաղաքի հատակագիծը, բացեց, անմիջապես մժղուկներ ու երկարոտ մոծակներ թափվեցին վրան:— Մենակ մի տեղ ունեմ վիճելու. Նարվան պետք է գրավել ոչ թե երեք ամսում, այլ երեք օրում: (Նա գլխով արեց, շրթունքները սեղմելով):

Ֆելդմարշալի դեղին դեմքը ձգվեց, կարծես ետևը կանգնած ինչոր մեկը օգնեց նրան, շեկ հոնքերը թռան կեղծամի տակ, բերանի անկյունները կախվեցին, աչքերը զայրույթ էին արտահայտում:

— Լավ, լավ: Երեք օրը տաքացած ասի... Մի քիչ որ տանք-առնենք, մի շաբաթվա վրա կկանգնենք... Բայց ավելի շատ չեմ տա քեզ:— Զայրացած Պյոտր Ալեքսեևիչը պլնդրեկներով քշում էր միջատներին քարտեզի վրայից:— Մարտկոցների տեղը խելոք ես ընտրել... Բայց կներես, առավոտյան ինքս եմ հրաման տվել, որ գետի մյուս կողմի բոլոր մարտկոցները դարձնեն Վիկտորիա ու Գոնոր բաստիոնների վրա, քանի որ հենց այդտեղ է գեներալ Գոռնի աթիլեսյան գարշապարը...

— Ձերդ մեծություն,— իրեն կորցրած բացականչեց Օգիլվին,— ըստ դիսպոզիցիայի մենք սկսում ենք Իվան-գորոդի ոմբակոծումից և սույնը գրոհելուց...

— Հարկավոր չի... գեներալ Գոռնի ամբողջ հույսն էն է, որ մինչև աշուն Իվան-գորոդով զբաղվենք: Իսկ դա մեզ խանգարող բան չի, սաենք կարող է կրակել մեր շարժակամուրջների վրա... Հետո, խելացի է, խելացի է, որ երկյուղ ունես Կառլոս թագավորի սիկուրսից... Ցոթ հարյուր թվականին նրա սիկուրսի երեսից իմ բանակը կործանեցի էս նույն դիրքերում.... Դու կոնտրսիկուրս ես պատրաստում, բայց դա թանկ կարժենա ու բարդ է, շատ էլ ժամանակ ես տալիս դրան... Իսկ իմ կոնտրսիկուրսն էն կլինի, որ Նարվան շուտ գրավեմ... Արագության մեջ փնտրենք հաղթանակը, ոչ թե զգուշության... Քո դիսպոզիցիան ռազմական գիտության և Արիստոտելյան տրամաբանության իմաստուն արգասիք է... Իսկ Նարվան ինձ պետք է հիմա, ոնց որ սոված մի կտոր հացի չոր կողը... Սոված մարդը չի սպասի...

Օգիլվին մետաքսյա թաշկինակը հպեց դեմքին: Նրա համար դժվար էր մտքով հետևել երիտասարդ բարբարոսի հետևաբանություններին, բայց արժանապատվությունը թույլ չէր տալիս համաձայնել առանց վիճաբանության: Առատ քրտինքից թրջվեց նրա թաշկինակը:

— Ձերդ մեծություն, նախախնամությունը բարեհաճ է եղել, ինձ երջանկություն պարգևելով տասնմեկ ամրոց ու քաղաք գրավելիս,— ասաց նա և թաշկինակը նետեց գորգի վրա դրած գլխարկի մեջ:— Նամյուրի գրոհի ժամանակ մարշալ Վոբանը, գրկելով, ինձ անվանեց իր լավագույն աշակերտը և հենց այդտեղ դաշտում, տնքացող վիրավորների մեջ, ծխատուփ նվիրեց ինձ: Կագմելով այս դիսպոզիցիան, ես ոչինչ բաց չեմ թողել իմ պատերազմական փորձից, ամեն ինչ հաշված ու կշռված է այդտեղ: Համեստ վստահությամբ ես հաստատում եմ, որ նվազագույն շեղումն իմ հետևություններից կործանարար հետևանքների կհանգեցնի: Այո, ձերդ մեծություն, պաշարման ժամկետը ես երկարացրել եմ, բայց սոսկ այն մտահոգությունից, որ ռուս զինվորն առայժմ դեռ զինվոր չէ, այլ գենք վերցրած մուժիկ: Նա դեռ նվազագույն ըմբռնում չունի կարգուկանոնի և կարգապահության մասին: Դեռ շատ փայտ է պետք ջարդել նրա մեջքին, ստիպելու համար, որ ենթարկվի առանց մտածելու, ինչպես հարկ է զինվորին: Այդժամ ես կարող եմ վստահ լինել, որ իմ գուրգի շարժումով նա կկերցնի ելարանը ու գնդակների կարկտի տակ պարիսպը կմագլցի...

Օգիլվին հանույթով լսում էր ինքն իրեն, թռչունի պես աչքերը կոպերով ծածկելով: Շաֆիրովը ողջախոհ ռուսերենի էր թարգմանում

նրա դիդակտիկ, դարպդարված դատողությունները։ Իսկ երբ Օգիլվին վերջացնելուց հետո նայեց Պյոտր Ալեքսանիչին, իր արժանապատվությանը անհամապատասխան արագությամբ ոտքերը տարավ աթոռի տակ, փորը ներս քաշեց ու իջեցրեց ձեռնափայտը բռնած ձեռքը։ Պյոտրի դեմքը սարսափելի էր՝ վիզը կարծես կրկնակի էր ձգվել, սեղմած բերանի եզրերին փքվել էին մոլեգնած ելունդները, չոված աչքերից՝ աստված մի արասցե, աստված մի արասցե, պատրաստ էին թունավոր օձեր դուրս պրծնել... Նա ծանր էր շնչում։ Խոշոր ու ջղուտ կարճ թևքով ձեռքը սատկած մոծակների մեջ ինչ-որ բան էր փնտրում... գտավ սագի փետուրը, ջարդեց...

— Ահա թե ինչ, ահա թե ինչ, ռուս զինվորը զենք վերցրած մուժիկ է,— խոսեց նա սեղմված կոկորդով։— Վատ բան չեմ տեսնում... Ռուս մուժիկը խելացի է, ուշիմ, համարձակ... Իսկ զենքը ձեռքին՝ սարսափելի է թշնամու համար... Այդ ամենի համար փետով չեն ծեծում։ Կարգուկանո՞ն չգիտե։ Կարգուկանոն գիտե։ Իսկ երբ չի իմանում, ոչ թե ինքն է վատը, սպան է վատը... Իսկ երբ իմ զինվորին հարկավոր է փետով ծեծել, ես ինքս կծեծեմ, իսկ դու չես ծեծի նրան...

...Վրան մտան գեներալ Զամբերսը, գեներալ Ռեպնինը և Ալեքսանդր Դանիլովիչ Մենշիկովը։ Մակարովից մեկական գավաթ գինի վերցնելով, նստեցին ուր պատահեց։ Պյոտրը, նայելով փելդմարշալի ձեռագրին ու իր նշումներին, քարտեզի վրա մատիտով գծելով ու նշելով (մոմերի առաջ կանգնած և մժղուկները քշելով), ռազմական խորհրդին կարդաց այն դիսպոզիցիան, որը մի քանի ժամ անց շարժման մեջ դրեց բոլոր զորքերը, մարտկոցներն ու գումակները։

7.

Գլխաբաց կանայք նետվեցին դեպի գեներալ Գոռնի ձին։ Բռնեցին երասանը, ասպանդակները, ճանկեցին կաշվե կափտանի փեշերը... Նիհարած, հրդեհների մրից սևացած, աչքերը չոած, բղավում էին. «Հանձնի՞ր քաղաքը, հանձնի՞ր քաղաքը...»։ Մոայլադեմ գրահակիրների նրա պահախումբը, նույնպես բանտված, չէր կարողանում գեներալին մոտենալ... Ռուսական թնդանոթների որոտը ցնցում էր տները հրապարակի վրա, որը լի էր ածխացած գերաններով, ջարդված կղմինդրով։ Հրետանգության յոթերորդ օրն էր։ Գոռնը երեկ խրստորեն մերժել էր փելդմարշալ Օգիլվիի ողջամիտ և բարեկիրթ առաջարկությունը՝ քաղաքը չենթարկել գրոհի սարսափներին և ներխուժած զորքերի մոլեգնությանը։ Պատասխանի փոխարեն փելդմարշալի նամակը գեներալը ճմրթել ու շպրտել էր բանագնացի դեմքին։ Այդ մասին իմացել էր ամբողջ քաղաքը։

Հատ ընկածի պես խավար աչքերով գեներալը նայում էր բղավող կանանց դեմքերին, որոնք այլայլված էին սարսափից ու քաղցից՝ պատերազմի դեմքն է դա։ Գեներալը պատյանից հանեց սուրը

և տափակ կողմով սկսեց խփել գլուխներին ու խթանեց ձին։ Բղավեցին. «Սպանի՞ր, սպանի՞ր։ Ոտատակ տուր, սպանի՞ր...»։ Նա ճոճվեց՝ թամբից քաշում էին... Այդ ժամանակ չլսված մի դղրդյուն թընդաց, նույնիսկ նրա երկաթե սիրտը ցնցվեց։ Հին քաղաքի կղմինդրածածկ կտուրներից այն կողմ ծխախառն բոցի սև-դեղին սյունը բարձրացավ՝ պայթեցին վառոդի նկուղները։ Հին քաղաքապետարանի բարձր աշտարակը ճոճվեց։ Աղեկտուր ճիչեր լսվեցին, մարդիկ նետվեցին նրբանցքները, հրապարակն ամայացավ։ Թամբի լայնքով սուրը բռնած, գեներալը ձին քշեց դեպի Գոռնոր բաստիոնը։ Գետի այն ափից շեղ թռիչքով գալիս էին հետզհետե խոշորացող գնդերը, թշնամուն ընկնում տների տանիքներին, որոնց ճակատները կախված էին փողոցների վրա, ծուռումուռ նրբանցքներում, պտտվում էին ու պայթում... Գեներալը խթանները խփում ու խփում էր դեսուդեն ընկնող ձիու արնածոր կողերին...

Գոռնոր բաստիոնը ծածկված էր փոշիով ու ծխով։ Գեներալը զանազանում էր աղյուսի կույտերը, շրջված թնդանոթները, ձիերի վեր տնկված ոտները և ռուսների կողմը նայող վիթխարի բացվածքը։ Պարիսպը հիմքից փուլ եկավ։ Մոտեցավ դեմքը վիրավոր, փոշուց մոխրագույն դարձած գնդի հրամանատարը։ Գեներալն ասաց. «Հրամայում եմ՝ թշնամուն ներս չթողնել...»։ Հրամանատարը նրան նայեց կշտամբանքով, թե արհամարհանքով... Գեներալը շրջվեց, ձին շարժեց տեղից ու նեղ նրբանցքներով քշեց Վիկտորիա բաստիոնի կողմը։ Մի քանի անգամ ստիպված էր կաշվե թևքով դեմքը ծածկել վառվող տնակների բոցերից։ Մոտենալով, լսեց թռչող արկերի սուլոցը։ Ռուսները դիպուկ էին կրակում։ Բաստիոնի կիսավեր պատերն ուռչում էին, վեր բարձրանում ու փլվում։ Գեներալն իջավ ձիուց։ Կլորադեմ, կաթնա-վարդագույն դեմքով զինվորը, որ սանձը վերցրեց նրանից, համառորեն չէր նայում աչքերին։ Գեներալը ձեռնոց քաշած բռունցքով տակից խփեց նրա ծնոտին և թափվող աղյուսի վրայով բարձրացավ պարսպի կանգուն մնացած հատվածի վրա։ Այստեղից տեսավ, որ գրոհը սկսվել է...

Մենշիկովը վազում էր լողացող կամրջի վրայով, ինգերմանլանդական գնդի կարճահասակ զինվորների արանքով, կոկորդով մեկ բղավելով։ Բոլոր հրաձիգներն էին կոկորդով մեկ բղավում։ Իվանգորոդի բարձր պարսպից նրանց վրա կրակում էին թուջե թնդանոթները, ռումբերը թափվում էին ջուրը, թշշալով անցնում գլուխների վրայով։ Մենշիկովը վազեվազ հասավ ձախ ափ, շրջվեց ու ոտքը գետնով էր տալիս, թափահարում թիկնոցի փեշը... «Առա՜ջ, առա՜ջ...»։ Ուսապայուսակներից սապատավոր դարձած հրաձիգները հոծ ամբոխով վազում էին նստած կամրջի վրայով, այնինչ նրան թվում էր, թե դանդաղում են... «Արա՜գ, արա՜գ...», և հարբածի պես տեղնուտեղ մի հայհոյանք էր շպրտում։

Այստեղ, ձախ ափին, Վիկտորիա բաստիոնի խանձած բերդապա-

րբապի և գետի արանքի նեղ շերտի վրա քիչ տեղ կար, գետն անցածները խոնվել էին հրմշտվելով, դանդաղեցրել վագքը, քրտինքի սուր հոտ էր գալիս: Մինչև ծնկները ջրի մեջ խրված, Մենշիկովը վազեց, շարասյունից առաջ անցնելու. «Թմբկահարները՝ առա՛ջ: Դրոշը՝ առա՛ջ...»: Իվան-գորոդի թնդանոթները հիմա գետի վրայով դարձյանն էին խփում, արկերը շրմփում էին ափին, ջուրը շարտում պարսպի վրա, բեկորները այրում էին, անձայն ու փափուկ խոցելով մարդկանց... Առջևի շարքերը, սայթաքելով, ձեռքերը թափահարելով, աղյուսի կտորտանքի վրայով արդեն բարձրանում էին փլվածքն ի վեր... ճարճատեցին թմբուկները... Բարձրացող հրաձիգների շարասյան վրայով գնալով հուժկու դարձավ բղավոցը... Այնտեղ, կատարից շվեդացու մի խոպոտ ձայն գոռաց... Թնդաց համազարկը... Մուխը պարուրեց ամեն ինչ... Հրաձիգները բացվածքի վրայով քաղաք ներխուժեցին:

Գրոհող երկրորդ շարասյունն անցնում էր գեներալ Զամբերսի մոտով: Նա նստած էր բարձրահասակ ձիու վրա, որը գլուխն էր թափ տալիս թմբկազարկի տակտով: Պղնձյա, աղյուսափոշիով փայլեցրած զրահ էր հագել, որ առանձնահատուկ, հանդիսավոր դեպքերում էր անում, ծանր սաղավարտը բռնել էր ձեռքին, որ զինվորները կարողանան լավ տեսնել գեներալի կարմրած, կեղբիթ, շիկացած ռումբի նմանվող դեմքը: Խոպոտ, անզգա ձայնով կրկնում էր. «Քաջարի ռուսներ՝ հառա՛ջ... Քաջարի ռուսներ՝ հառա՛ջ...»:

Շարասյան առջևից, մարգագետնի միջով արագ քայլքով դեպի Գոնոր բաստիոնն էր գնում պրեոբրաժենցիների գումարտակը՝ ընտրովի բարձրահասակ ու թիկնեղ, բեխավոր, կուշտ, եռանկյունի փոքր գլխարկները հոնքերին իջեցրած, սվինները փողերին ամրացրած, քանի որ հրաման էր եղել՝ չկրակել, այլ սվինահարել: Գումարտակն առաջնորդում էր գնդապետ Կարպովը: Գիտեր, որ իրեն են նայում թե յուրայինները, թե՛ բացվածքի մեջ թաքնված շվեդները: Քայլում էր, աղավնու պես կուրծքը պարծենկոտ ցցած, քիթը վեր, գումարտակի կողմը չշրջվելով: Նրա ետևից, սիրտ ալեկոծելով, չորս թմբկահար էին գալիս թմբկազարկով: Մի հիսուն քայլ էր մնացել աղյուսե հաստ պատի լայն բացվածքին հասնելու, և Կարպովը չարագացրեց քայլերը, միայն ուսերը բարձրացան: Տեսնելով դա, զինվորները, քայլքը խախտելով, սեղմեցին՝ ետևի շարքերն առաջիններին: «Ռոոոոոա՛ տա, ռոոոոա՛ տա»՝ ճարճատում էին թմբուկները: Բացվածքի մեջ դանդաղ բարձրացան երկաթյա սաղավարտները, հրազենի փողերը... Կարպովը բղավեց. «Զենքերը գցե՛ք, սրիկանե՛ր, հանձնվե՛ք...»: Եվ սուրն ու ատրճանակը պարզած, վազեց համազարկին ընդառաջ... Բոց արձակվեց, տրաքեց, վառոդի ծուխը դեմքին զարկեց... «Ողջ մնացի՛»՝ ուրախացավ Կարպովը... Եվ հաղթահարվող վախը թոթափեց, որից իր ուսերն էին բարձրանում... Սիրտը կռիվ ուզեց... Բայց զին-

վորներն անցան նրանից, և գնդապետն իզուր էր փնտրում, թե ում վրա հարձակվի սուրը բարձրացրած... Միայն պրեոբրաժենցիների լայն թիկունքներն էր տեսնում, որոնք սվինները շարժում էին եղանների պես՝ մուժիկավարի...

Անիկիտա Իվանիչ Ռեպնինի երրորդ շարասյունը պաշարողական ելարաններով նետվեց Գլորիա կիսավեր բաստիոնը գրոհելու: Վերևից շարահերթ կրակում էին, քարեր ու գերաններ թափում, կպրի տակառներ վառեցին, որ լցնեն պաշարողների վրա: Անիկիտա Իվանիչը բորբոքված դեսուդեն էր ընկել կարճիկ ձիու վրա, դարպասի աշտարակի տակ, հսկայական թեքածալերը բարձրացրած բռունցք էր թափահարում ու բարակ ձայնով բղավում, քաջալերելով: Վախենում էր, որ հանկարծ զինվորները կկարկամեն ելարանների վրա: Մեկն ընկավ կատարից՝ խոցված, մի քանիսն էլ... Բայց աստված ողորմած էր, զինվորները ելարաններով բարձրանում էին խիտ-խիտ ու չարացած: Ծվեդները չհասցրեցին շրջել հրահեղուկ տակառները՝ ոուսներն արդեն պարսպի վրա էին...

Կոմսուհի Շպեղինցը երեխաների ձեռքերն էր բռնում, ասես ամեն անգամ հաշվելով նրանց: Դուրս էր թռչում, ականջ դնում, կրակոցները հետզհետե մոտենում էին, կովողների կատաղած աղաղակներն էին լսվում... Նա պարզում էր ձեռքերը, ծռված բերանով մոլեգնած շշնջում. «Սա՛ էր ուզածդ, հրեշ, դո՛ւ էիր, դո՛ւ, համառ ու անսիրտ մարդ...»: Աղջիկները, լաց լինելով, գոռում էին. «Մամա, լռիր, պետք չէ...»: Տղան բռունցքը բերանը խոթած նայում էր, թե ինչպես են լալիս քույրերը...

Մոտերքում անիվներ դիկդիկացին, կոմսուհին նետվեց լուսամուտի մոտ. ոտը կոտրած մի ձի բարձած սայլ էր քարշ տալիս, ետևից վազում էին կապոցներ գրկած կանայք... «Դեպի ամրո՛ց, ամրո՛ց: Փախե՛ք»՝ բղավում էին նրանք... Չորս զինվոր պատգարակ տարան... Ու դարձյալ պատգարակներ էին տանում, պատգարակներ՝ վիրավորների մոմեղեն դեմքերով... Հետո նա տեսավ կորաքամակ մի ծերունու, տոպրակն ուսին. հայտնի հարուստներից էր, վաշխով փող տվող: Ոտքերը շտապ-շտապ քստքստացնելով, ոծոծացող մի խոճկոր էր տանում... Հանկարծ զցեց խոճկորն ու տոպրակը և վազեց... Շատ մոտ տեղ զրնգոցով թափվեց ապակին... «Օ-օ՛»՝ տանջող մի ձայն ճղվեց... Հրապարակի հեռավոր ծայրին կոմսուհին տեսավ գեներալ Գոռնին... Նա ձեռքն էր թափահարում և ինչ-որ բան ցույց տալիս... Նրա մոտով ծանր-ծանր արշավեցին զինակիրները... Գոռնը մի քանի անգամ շեղբով խփեց ճոճվող ձիու կողերին, նրա սևացած դեմքի վրա երևում էին բոլոր ատամները, ասես գայլ լիներ, և բարձր-բարձր վերուվարվելով, քառատրոփ հեռացավ նրբանցքում... «Կա՛ռլ, Կա՛ռլ,—

կոմսուհին նախասենյակ վազեց, բացեց փողոցի դուռը,— Կա՞ռլ, Կա՞ռլ...»: Եվ այստեղ տեսավ ռուսներին՝ նրանք տների մոտով առաջանում էին ամայացած հրապարակով և լուսամուտներից ներս նայում... Լայն դեմքեր ունեին, երկար մազեր, գլխարկների վրա՝ պղինձյա արծիվներ...

Կոմսուհին այնպես վախեցավ, որ կանգնել ու նայում էր, թե ինչպես են նրանք մոտենում, ցույց տալով իրեն և դռան վրայի պարետական դրոշակը: Չինովորները շրջապատեցին կոմսուհուն, մատները ցցած, խոսեցին բորբոքված ու զայրացած.. Մեկը՝ տափակ դեմքով հրեշ էր, հրեց ու տուն մտավ... Երբ հրեցին իրեն, որպես շուկայի մի հասարակ կնոջ, ամբողջ ատելությունը, որ այդքան երկար խեղդում էր նրան թե՛ հանդեպ ծեր ու կյանքը կերած ամուսինը, թե՛ այսքան տառապանք ու սարսափ պատճառած ռուս բարբարոսների հանդեպ, դուրս հորդաց... Նա ճանկեց տափակերես չինովորի օձիքը, քաշեց նրան նախասենյակից, ֆշշացնելով ու կցկտուր բառերից խեղդվելով, այտերն ու աչքերն էր ճանկռոտում, կծոտում և ծնկներով խփում... Չինովորը շշմած պաշտպանվում էր կատաղած կնոջից... Իրար փաթաթված ընկան քարերի վրա... Ընկերները, զարմացած կնոջ կատաղությունից, սկսեցին ետ քաշել նրան, բարկացած վրա ընկան, իսկ երբ ետ քաշվեցին, կոմսուհին պառկած էր թերանքսիվայր, գլուխը թեքած, դեմքը կապտած էր, անկենդան... Չինովորներից մեկը շրջազգեստը քաշեց մերկացած ոտքերի վրա, մյուսը զայրացած դարձավ դռան մեջ կանգնած երեք աղջիկներին ու տղային.... Տղան, ոտքերը դոփդոփելով, բղավում էր անձայն, անարցունք... Չինովորն ասաց. «Էս վիժվածքների հերն էլ անիծած, գնանք էստեղից, տղերք...»:

Երեք քառորդ ժամում ամեն ինչ վերջացավ: Փոթորկի պես հին Նարվայի հրապարակներն ու փողոցները ներխուժեցին ռուսները: Նրանց կանգնեցնել կամ ետ շպրտելն անհնարին էր: Գեներալ Գոռնը զորքերին հրամայեց նահանջել հողապատնեշ, որը հին ու նոր քաղաքները բաժանում էր իրարից: Պատնեշը բարձր էր ու լայն, հույս ուներ, որ Պյոտր ցարի զորքերն այստեղ առատ արյուն կհեղեն թեք լանջերի վրա:

Գեներալը նստած էր գլուխը համարյա պայտերին իջեցրած ձիու վրա: Բարձրացած թարմ քամին ծածանում էր նրա անձնական դեղին ու երկարակոթ սև դրոշակը: Հիսուն գրահակիր կիսաշրջանաձև կանգնած էին նրա ետևում՝ մռայլ ու անշարժ: Բարձր պատնեշից գեներալը տեսնում էր մի քանի փողոցներ ծայրեծայր: Այդ փողոցներով պիտի նահանջեին զորքերը, սակայն փողոցները շարունակում էին ամայի մնալ: Գեներալը նայում ու սպասում էր, կնճռոտ շրթունքները ծամելով: Ահա, փողոցներից մեկի, ապա մյուսի ծայրին վազող մարդիկ երևացին: Չէր կարողանում հասկանալ, թե ինչ մարդիկ են և ինչու են վազում: Ետևում կանգնած գրահակիրները սկսեցին խլաձայն փնթփնթալ: Հայտնվեց գլխապատառ արշավող մի սուրհանդակ, ձիուց թռավ պատնեշի ստորոտին և աջ ձեռքով բռնած արնաթաթախ ձախ ձեռքի դաստակը, բարձրացավ թեք լանջով: Համարգ Բիստրեմն էր, առանց սրի, առանց ատրճանակի, առանց գլխարկի, մունդիրի փեշը պատռված...

— Գեներա՞լ,— խելագար դեմքը վեր բարձրացրեց:— Գեներա՞լ: Օ՜, տեր աստված, տե՜ր աստված:

— Ես ձեզ լսում եմ, պորուչիկ Բիստրեմ, հանգիստ խոսեք...

— Գեներալ, մեր զորքերը շրջապատված են: Ռուսները մոլեգնել են... Նման կոտորած ես չեմ տեսել... Գեներալ, փախեք ամրոց...

Գեներալ Գոռնը շփոթվեց: Հիմա հասկացավ, թե ինչ մարդիկ էին, որ վազում էին փողոցի ծայրին: Նրա դանդաղընթաց մտքերը, որ միշտ հաստատ վճռի էին հանգեցնում, խառնվեցին... Նա չէր կարող ոչինչ վճռել: Ոտքերը ելան ասպանդակներից ու կախվեցին ձիու փորի վրա: Նա ուշքի չեկավ նույնիսկ իր գրահակիրների կցկտուր, տագնապալի բացականչություններից... Լայն պատնեշի երկու կողմերից, ամբողջ թափով, ահագնացող բղավոցով, սուրում էին մորուքավոր կազակները, սարսռազդու բարձր, անանջներին քաշած ոչխարենու փափախներով: Նրանք թափահարում էին կեռ թրերն ու նշան բռնում երկարափող հրացաններով: Բիստրեմը, այդ սարսափը չտեսնելու համար, դեմքը հպեց գեներալի ձիուն: Միմյանց նայելով, գրահակիրները հանեցին սրերը, գցեցին ցած ու իջան ձիերից:

Առաջինը տեղ հասավ բորբոքված գնդապետ Ռենը և բռնեց գեներալի ձիու սանձը.

— Գեներալ Գոռն, դուք իմ գերին եք:

Այժմ նա, քնածի պես, բարձրացրեց սուրը բռնած ձեռքը, և գնդապետ Ռենը, սուրը վերցնելու համար ստիպված էր ուժով բացել երախակալին կառչած գեներալի մատները...

Եթե ֆելդմարշալ Օգիլվին այնտեղ չլիներ, Պյոտր Ալեքսեևիչը վաղուց էր արշավել զորքերի մոտ՝ երեք քառորդ ժամվա ընթացքում նրանք արեցին այն, ինչին ինքը չորս տարի նախապատրաստվում էր, ինչ տանջում ու մտահոգում էր իրեն, չդարմանվող վերքի պես... Բայց, սատանան իրենց հետ, ստիպված էր իրեն պահել թագավորին արժանավայել, եվրոպական եղանակով: Պյոտր Ալեքսեևիչը հանդիսավոր նստած էր ճերմակ ձիու վրա՝ պրեոբրաժենյան կաֆտանով էր, լանջագոտիով, նոր, խավոտ կոկարդավոր եռանկյունի գլխարկով, հեռադիտակը բռնած աջ ձեռքը սեղմել էր կողին՝ այստեղից, Ֆլրակի վրայից նայելու ոչինչ չկար, դեմքին աճեղ ու վեհ արտահայտություն կար... Եվրոպական գործ էր. կատակ բան չէր աշխարհի ամենաանանուն ամրոցներից մեկը գրոհով գրավելը:

Մոտ էին սլանում սպաները, և Պյոտր Ալեքսեևիչը գլխի շարժումով

ցույց էր տալիս Օգիլվիին. ֆելդմարշալին զեկուցում էին ճակատամարտի ընթացքի մասին... Գրավված է այսքան փողոց և հրապարակ... Մերոնք պատի պես շարդելով առաջանում են, հակառակորդն ամենուրեք նահանջում է խառնիխուռն... Վերջապես Գլորիայի խորտակված դարպասից դուրս թռան ու ամբողջ թափով այս կողմ սլացան երեք սպա... Օգիլվին մատը բարձրացրեց և ասաց.

— Օ՜: Լավ լուրեր են, ես կուսհում եմ...

Առաջինը հասած կազակական խորունդին ընթացքից ցատկեց ձիուց, և սև մորուքը Պյոտր ցարին պարզած, թնդաց.

— Նարվայի պարետ գեներալ Գոռնը հանձնեց սուրը... ,

— Հիանալի է,— բացականչեց Օգիլվին և սպիտակ կաշվե ձեռնոցով ձեռքի նրբագեղ շարժումով հրավիրեց Պյոտր Ալեքսեևիչին:— Ձերդ մեծություն, հանեցեք առաջ շարժվել, քաղաքը ձերն է...

Պյոտրը թափով մտավ ամրոցի կամարակապ ասպետական դահլիճը... Ավելի բարձրահասակ էր թվում, մեջքը ձիգ էր, կուրծքը ելնում-իջնում էր շնչելուց... Մերկացրած սուրը ձեռքին էր... Կատաղած նայեց Ալեքսանդր Դանիլովիչին՝ վերջինիս երկաթյա զրահը տեղ-տեղ փոս էր ընկած գնդակների հարվածից, դեմքը սրվել էր, մազերը թաց էին, շրթունքները չորացած: Նայեց կարճլիկ Ռեպնինին, որն անուշ ժպտում էր իր ճեղք-աչքերով, նայեց կարմրած, արդեն մի բաժակ խմած գնդապետ Ռենին, նայեց անվանակոչիկի պես իրենից գոհ գեներալ Չամբերսին:

— Ես ուզում եմ իմանալ,— նրանց վրա բղավեց Պյոտր Ալեքսեևիչը,— հին քաղաքում մինչև հիմա ինչո՞ւ չի դադարեցված կոտորածը: Ինչո՞ւ է թալան գնում քաղաքում:— Նա պարզեց սուրը բռնած ձեռքը:— Ես խրեցի մեր զինվորներից մեկին... Հարբած էր և մի աղջիկ էր քարշ տալիս...— Սուրը շպրտեց սեղանին:— Պարոն բոմբարդիր պորուչիկ Մենշիկով, քեզ նշանակում եմ քաղաքի պարետ... Մի ժամ ժամանակ եմ տալիս՝ դադարեցնել արյունահեղությունն ու թալանը... Ոչ թե մեջքով, գլխով պատասխան կտաս...

Մենշիկովը գունատվեց և անմիջապես դուրս եկավ, քարշ տալով պատված թինկոցը: Անիկիտա Ռեպնինը մեղմանայն ասաց.

— Հակառակորդն, ախր, շատ ուշ հայտնեց իր ներողությունը, դրա համար էլ մերոնց դժվար է զսպելը, շատ են ջղայնացած... Սպաներ ուղարկեցի, մազներից բռնած ետ են քաշում, բաժանում... Իսկ քաղաքում թալանը հենց իրենք են անում՝ բնակիչները...

— Բռնել ու վախեցնելու համար կախել:

Պյոտր Ալեքսեևիչը նստեց սեղանի մոտ, բայց իսկույն վեր կացավ: Ներս մտավ Օգիլվին, ապա երկու զինվոր սպաների հետ բերում էին գեներալ Գոռնին: Լռություն տիրեց, միայն կամացուկ զրնգում էին Գոռնի խթանների աստղիկները: Նա մոտեցավ Պյոտր ցարին, բարձրացրեց գլուխը, պղտորված աչքերով մի կողմ նայելով, ու նրա շրթունքները ծռմռվեցին քմծիծաղից... Բոլորը տեսան, թե ինչպես սեղանի կարմիր մահուդի վրայից պոկվեց Պյոտրի բռունցք դարձած ձեռքը (Օգիլվին վախեցած քայլ արեց դեպի նա), թե ինչպիսի խորշանքով ցնցվեցին նրա ուսերը, Պյոտրը այնքան երկար լռեց, որ բոլորը դադարեցին չշնչել...

— Ինձնից պատիվ չես տեսնի դու,— ոչ բարձրաձայն ասաց Պյոտրը:— Տխմա՛ր: Պառաված գա՛յլ: Հաստակո՛ղ գիշատիչ...— Եվ հայացքը դարձրեց գնդապետ Ռենին:— Սրան տար բանտ, ոտքով, ամբողջ քաղաքի միջով, որ տեսնի իր արած գործի տխրալի պատկերը...

1929—1944

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՖԻՐԱ ԱՌԱՋԻՆ

Էջ 7— ...տարին մեկ նոր նակազ...— այստեղ՝ հրամանագիր։

Էջ 11— ...տասը ալտին...— ռուսական առօրյայի մեջ ալտինը մտել և թաթարերեն «տսկին» կամ «վեց» բառերից։ Արծաթյա նախկին (XV դարից սկսած) դրամական միավոր, մոսկովյան 6 կամ նովգորոդյան 3 փողի արժեքով (նովգորոդյանը հետագայում դարձավ կոպեկ)։ 1654 թ. թողարկվել են պղնձյա, 1704թ. արծաթյա ալտիններ։ 1841—1916թթ. դրվագվում էին պղնձյա և արծաթյա ալտիններ։

Էջ 12— ...Պոսադի մարդիկ անխիղճ հարկերից...— X-XIVդդ. քաղաքի կամ ամրոցի պարիսպներից դուրս արվարձանատիպ բնակավայրեր, որոնք հետագայում մտան քաղաքների մեջ։ Ռուսական պետության սահմաններում պոսադականները (կամ՝ պոսադի մարդիկ, պոսադական մարդիկ) գերազանցապես զբաղվում էին առևտրով և արհեստներով, վճարելով զանազան հարկեր և բնամթերքի տուրք։ 1775 թ. բաժանվեցին վաճառականների և քաղքենիների դասերի։

Էջ 13— ...նոր ֆերյազ ու տեղիկներ...— ֆերյազը ռուսական հնագույն երկարափեշ զգեստ է, երկար ու նեղ թևքերով. անօձիք։ Կանայք նույնպես հագել են ֆերյազ՝ անթևք, սարաֆանի նման, ըստ որում՝ թե ամռանը, թե ձմռանը։ Տեղիկը թաթարական ծագում ունեցող երկարափեշ կաֆտանի տարատեսակ է, կարճ թևքերով, սեղմովի գոտկատեղով։

Էջ 14— ...թե չէ՝ կաղաչը կկծեմ...— այստեղ՝ պաղը կխախտեմ։

Էջ 17— ...լեհական կունտուշով...— տղամարդու, առավելապես լեհական վերնազգեստ. երբեմն՝ մորթեբոլոր, քուղերով կապվող, թևքածալերով։

Էջ 20— ...Նիկոնականները հին հավատը պղծեցին...— 1652 թ. ռուսական պատրիարք Նիկոնի (Նիկիտա Մինով (1605-1681 թթ)) եկեղեցական ռեֆորմները աղանդավորության նոր ալիք առաջ բերեցին։ Պատրիարքի՝ «հոգևորականությունը վեր է ցարից» դրույթը ենթադրում էր պատրիարքի միջամտությունը պետության ներքին և արտաքին գործերին։ 1658թ. Նիկոնը թողեց պատրիարքությունը, աքսորվեց։ Նիկոնականները նրա հետևորդներն էին։

Էջ 23— ...երեն որևիցե յառիգա...— XVI-XVIIIդդ. ազգաբնակչության ամենաչքավոր շերտերի ներկայացուցիչներ, օրավարձով ապրող մարդիկ, նաև՝ հարբեցողներ, ապահասարակական տարրեր։ Յառիգա էին կոչվում ոստիկանական ստորին ծառայողները՝ ցրիչներ և այլք։ Այստեղ՝ առաջին նշանակությամբ։

Էջ 26— ...պոմորներից տասը տարով...— поморье, բառացի՝ ծովափնյա շրջան, այստեղ՝ Պոմերանիա. Սպիտակ ծովի արևմտյան ափից դեպի հարավ ընկած տարածքի բնակիչներ. արևմտյան սլավոնական ցեղերի ներկայացուցիչներ։

Էջ 29— ...Խովանսկին էր՝ վոյեվոդա...— զորապետ, սլավոնական ժողովուրդների մոտ՝ հրամանատար։ XVIդ. սկսած Ռուսաստանում, փոքր վոյեվոդա էին կոչվում նաև առանձին փոքր զորամիավորումների, ինչպես նաև քաղաքների, նահանգների գլուխ կանգնած ատիճանավորները։

Էջ 33— ...գիպուն համար...— ռուսական հնագույն գեղջկական վերնազգեստ, տնայնագործական կոշտ մահուդից, թևքով կամ անթևք. անօձիք, շեղակի իջնող փեշերով։ Հագնում էին նաև կանայք։

Էջ 34— ...վեր է թռել ու դռռացել «խոսք ու գործ»...— Պետր I-ի թագավորության շրջանում ցարին բանավոր վիրավորելը, անպատվելը, նրա գործողությունների մասին ժխտական կարծիք հայտնելը պետական հանցագործություն էր համարվում, մահապատժի սպառնալիքով։ Այդ հանցանքները կոչվում էին «թագավորական խոսք և գործ»։ Չհայտնել «խոսքի և գործի» մասին, այլ կերպ ասած՝ չմատնելը նույնպես հանցագործություն էր,

և մեծ տարածում էր գտել «հայտնելը». քանի որ շատերն էին վախենում մեղադրանքից. ուստիև մահապատժից:

Էջ 35— ...**եֆիմոկ է, որ կլցվի**...— Ռուսաստանում սկզբնական շրջանում այսպես էին կոչում արևմտաեվրոպական արծաթյա լոխիմսթալերը, որից XVII—XVIII դդ. Ռուսաստանում արծաթյա դրամ էին հատում: 1654 թ. դրվագված ռուսական արծաթյա ռուբլին նույնպես եֆիմոկ էր կոչվում, իսկ 1704թ. ընդունվեց որպես արծաթյա ռուբլու կշռային միավոր:

Էջ 48— ...**կամ լիֆլյանդացիներից**...— XIII—XX դդ. Լիվոնիայի գերմաներեն անվանումը: XIII-XX դդ. Հյուսիսային Լատվիայի և հարավային Էստոնիայի տարածքների պաշտոնական անվանումը:

Էջ 49— ...**կարդում էին սոլովեցկյան տետրակները**...— Սոլովեցկի մենաստանում 1668-1676 թթ. խռովություն բարձրացավ, որին մասնակցում էին նիկոնական ռեֆորմի (տես) հակառակորդները. գյուղացիներ, պոսադականներ, փախստական ստրելեցներ, զինվորներ, Ստ. Ռազինի՝ կենդանի մնացած աջակիցներ: Մեծաքանակ զորքը մենաստանը գրավեց ութնամյա պաշարումից հետո: Սոլովեցկյան տետրակները աղանդավորական մտքեր, մատեր, «խռովարարական» կոչեր էին բովանդակում:

...**և օկոլնիչիները**...— XIII դ. մինչև XVII դ. սկիզբը ռուսական պետության մեջ պալատական աստիճան և պաշտոն: Օկոլնիչիները գլխավորում էին ատյաններ, վարչատներ. գնդեր: XVI դ. երկրորդ կեսից Բոյարական դումայի դումայական երկրորդ աստիճանն էր համարվում:

Էջ 57— ...**Մարիա Նեգայան էր ապրում**...— XIV-XVII դդ. բոյարական և ազնվականական գերդաստան, Մարիա Ֆյոդորովնա Նեգայան (1612 թթ.) Իվան Ահեղի յոթերորդ կինն էր, արքայազն Դմիտրիի մայրը:

Էջ 59— ...**գերմանական կիրխեի սուր ծայրը**...— (գերմ. Kirche) ռուսերեն ասում են նաև կիրկա (кирка). լութերական եկեղեցի:

...**նատեց գրելու պոլուուստավով**...— սլավոնական հնագույն ձեռագրություն: Ուստավը ենթադրում էր բոլոր տառերի հստակ գծագրում, առանց կրճատումների, իսկ պոլուուստավը պարզեցված ձեռագրաոճ է, որն ապահովում է գրառման արագությունը (կրճատումների հաշվին), Ռուսաստանում օգտագործվել է XIV դարից:

...**Ադիցիայի օրինակ**...— բազմապատկման օրինակ:

Էջ 62— ...**կունչուլյուկներ ցույց կտան**...— այստեղ՝ եզակի, զարմանալի իրեր:

Էջ 64— ...**բոյարական վոտչինաները**...— տոհմական անշարժ կալք, որը փոխանցվում էր ժառանգաբար: Առաջ է եկել X-XI դդ. (իշխանական, թիուրական, մենաստանապատկան), XV դ. վերջերից վոտչինաները և

կալվածքները գոյություն ունեին զուգահեռաբար, XVIII դ. սկզբից, որպես հողատիրական ընբռնում գերիշխեց կալվածքը:

Էջ 74— ...**հնգական չետվերտ վարսակ**...— սորում մարմնի ծավալի ռուսական չափ. հավասար է 209,91 լ.:

Էջ 77— ...**ծանրումեռ մենուետներ, աշխույժ անգլեզներ**...— **մենուետը** ֆրանսիական ժողովրդական հնագույն պար է, XVII դարի կեսերից՝ պարդահանդեսային պար, անգլեզ էին կոչվում XVII-XIX դդ. Եվրոպայում տարածված բոլոր անգլիական պարերը:

...**տակառի պես փարթամ ֆիժմաներով**...— (գերմ. Fischbein-ից՝ կետի բեխ) զանգաձև, փոքրերով շրջազգեստ. որի կլորությունը պահպանվում էր կետի բեխերից պատրաստված կմախքի վրա:

Էջ 78— ...**անցան կոնտրդանսի**...— անգլիական ժողովրդական պարը, որը Եվրոպայում տարածվեց որպես պարահանդեսային պար:

Էջ 83— ...**յասավոլները ձիերն էին հեծնում**...— յասավոլ թուրքերեն նշանակում է պետ, հրամանատար, դարձավ պաշտոն (XVI դ.) և աստիճան (XVIII դ.) կազակական զորքերում, 1798թ. հավասարեցվեց հեծելազորի ոտմիստրի կոչմանը:

Էջ 85— ...**ամենայն զինվորական կլեյնոդներ**...— (գերմ. Kleinod-ից՝ թանկարժեք իր) կազակական զորքերում այդպես էին կոչվում զորամասերի դրոշները, մականները, շեփորները, գոտերը, կնիքը: Միաժամանակ դա իշխանության խորհրդանիշ էր. օրինակ, լեհ և ուկրաինացի գետմանների, կազակական առամանների գորգերը:

Էջ 86— ...**գաղյաչցի գնդապետին**...— Պոլտավայի մերձակայքում գտնվող Գադյաչ քաղաքավայրում գետման Ի. Վիգովսկու և Լեհաստանի թագավորի միջև պայմանագիր կնքվեց, ըստ որի Ուկրաինան անցնում էր Լեհաստանի հրամանատարության տակ: Վիգովսկու տապալումից հետո, 1659 թ., չեղյալ հայտարարվեց:

...**մոխրագույն ավիտկա էր հագել**...— կանանց և տղամարդկանց երկարաձակ զգեստ, որ հագնում էին ռուսները, ուկրաինացիները և բելոռուսները, բնական գույնի տնայնագործական մահուդից, կարմիրը տոնական գույնն էր:

...**մոլուք էր թողել՝ կոզլայի պես**...— մալոռուսների կողմից վելիկոռուսներին տրված մականուն. նաև՝ մոսկալ, որ ավելի քան վերաբերում էր ռուս զինվորին, զինվորականին:

...**ամենուրեք կոստյոլներ կկառուցեն**...— (լեհ. Kosciol) կաթոլիկ եկեղեցու լեհերեն անվանումը:

Էջ 87— ...**Ֆորվերտս... Լումպեն**...— (գերմ. Vorwarts, Lumpen) Առաջ... Թշվառական...

Էջ 88— **...աստղագիտության հետ վարվելու ձևը...**— անկյունաչափ տարբ, որով մինչև XVIII դ. որոշում էին աշխարհագրական լայնությունները և երկարությունները, նաև՝ հորիզոնական ուղղանկյունը հողաչափական աշխատանքների ժամանակ:

Էջ 92— **...ջանադիր կնիքսենով...**— (գերմ. Knieksen), օրիորդի հարգալիր խոնարհումը՝ ծնկծածալով:

Էջ 97— **...Ակցիումում հռոմեացիները...**— խորշ Իոնական ծովում: Մ. թ. ա. 31թ. Օկտավիանոսի նավատորմը Ակցիումում ջախջախեց Անտոնիոսի և Կլեոպատրայի նավատորմը:

...ցիստը տասնհինգ և քառորդ վերշոկ...— երկարության ռուսական չափ, հավասար է $1^3/_4$ դյույմի (4,45 սմ.), սկզբնական շրջանում հավասարեցնում էին ցուցամատի ծայրի ծալվածքին:

Էջ 99— **...երմոներ երգեցին...**— մ. թ. I դարի վերջի հռոմեացի քրիստոնյա Երմոսը (կամ Երմասը), ում մասին հիշատակված է Պողոս առաքյալի «Ողջ» առ հռովմայեցիս»-ում (XVI. 14). համարվում է քրիստոնեական նախնական «Հովիվ» գրքի հեղինակը, ուր կային աղոթքներ, սաղմոսներ:

Էջ 101— **...դումայական երկու պրիստավ...**— XV-XVIIդդ. Ռուսաստանում պրիստավը պաշտոնատար անձ էր, ում ուղարկում էին այս կամ այն անձնավորությանը կանչելու իշխանական կամ ցարական դատի, 1782 թվականից դարձավ ոստիկանական պաշտոն, որոնք քաղաքներում կոչվում էին «частный» («часть» բառից), գյուղերում՝ «становой»:

Էջ 102— **...յամաներ էլ կապրեն...**— XIII—XIX դդ. այսպես էին կոչվում փոստային ճանապարհների վրա գտնված բնակավայրերը. իսկ բնակիչների մեծ մասը, որոնք կառապաններ էին՝ յամշչիկներ:

Էջ 107— **...ճյուղավոր կիկայի տակ...**— կնոջ գլխի զարդարանք, երբեմն՝ եղջյուրներով:

Էջ 111— **...օպաշեն հագցին...**— տղամարդու, նաև՝ կնոջ ամառային հնագույն վերնազգեստ, կափտանի նման, սակայն կարճ ու լայն թևքերով:

Էջ 137— **...լոխտերով ու չեկանեներով...**— մարտական կացնիկ՝ նեղ ու սուր շեղբով, մրնձան գլխիկով: Ռուսաստանում տարածված է եղել XV-XVIIդդ., չեկանը միաժամանակ իշխանության խորհրդանիշ կարող էր լինել:

Էջ 140— **...Կուսաֆյա աշտարակի դռնից...**— Կրեմլի աշտարակներից մեկը, իր անվանումը ստացած նմանողությամբ: Кутафья ճշանակում է անճոռնի հագնված կին:

Էջ 148— **...առևտրական և սև հարյուրյակները...**— Նովգորոդի արվարձանների բնակիչները հնում, բուս զբաղմունքի և արհեստների. բաժանվում էին հարյուրյակների, այդպես էլ գրվում էր՝ առևտրական հարյուրյակ, մանուֆակտուրաների հարյուրյակ և այլն: Բնորոշումը արմատավորվեց Ռուսաստանում: Սև հարյուրյակը (չշփոթել սևհարյուրյակայինների հետ) չքավոր, ստորին դասն էր զատում:

Էջ 157.— **...դրագունները և ռեյտարները...**— (ֆր. dragon) եվրոպական և ռուսական բանակներում հեծելազորի տարատեսակ, XVII-XXդդ., որոնք պիտի գործեին թե որպես հեծյալ, թե որպես հետևակ զորք: Ռեյտարները (գերմ. Reiter) ծանր հեծելազորայիններ էին եվրոպական բանակում, XVI-XVIIդդ: Ռուսաստանում զորքի մաս կազմեցին XVII դարում. մեծ մասամբ վարձկան գերմանացիներ էին:

Էջ 164— **...ութ խռոնակ տարիներին...**— պատմագրության մեջ «Խռոնակ տարիներ» են կոչվում XVIդ. վերջի և XVIIդ. սկզբի իրադարձությունների ժամանակաշրջանը:

Էջ 174— **...Կրոմվելի սարսափից...**— Օ. Կրոմվել (1599-1655 թթ.) անգլիական բուրժուական հեղափոխության գործիչ. պառլամենտական բանակի գլխավոր կազմակերպիչը, նա արձակեց պառլամենտը, թագավորի մահապատիժը կազմակերպեց և 1649թ. հանրապետություն հռչակեց, իշխանությունը կենտրոնացնելով իր ձեռքում:

Էջ 175— **...բոլոր էլլինգներում...**— (հոլ.helling) ծածկված շինություն՝ նավեր կառուցելու և նորոգելու, զբոսանավերը, հետագայում նաև դիրիժաբլները կանգնեցնելու համար:

...տասը հազար յարդից...— (անգլ. yard) երկարության անգլիական միավոր, 1 յարդը հավասար է 3 ֆուտի՝ 0,9144 մ.:

Էջ 177— **...երբեք և ոչ մի բիլլ չեն հատատի...**— (անգլ. bill, լատ. bulla-ից՝ կնիք, կնքած փաստաթուղթ) Անգլիայում, ապա ԱՄՆ-ում և մի քանի երկրներում պառլամենտի քննությանը ներկայացվող օրենքի նախագիծ, ինչպես նաև առանձին օրենքների հավաքածու:

Էջ 179— **...ազբ, բուկին, վեդին...**— ռուսական այբուբենի առաջին երեք տառերի (а, б, в) անվանումը:

Էջ 187— **...Իվան Կուպալայից առաջ...**— նաև՝ Իվանի օր, ամառային արևադարձի (հին տոմ. հունիսի 24-ը) հնագույն տոն, արևելյան պատկերները Իվան-Կուպալա են ասում Հովհաննես Մկրտչին, որի հետ ուղղափառ եկեղեցին կապում էր երկրագործական, բերք, առատություն, բարեկեցություն ապահովելու ժողովրդական հնագույն ծեսերը:

Էջ 192— **...«Թաքուն աչք» ես չի՞...**— ատաղձ՝ լրտես:

Էջ 204— **...ուրախ բոմբարդիր էր...**— (գերմ.՝ Bombardier, թնդանոթաձիգ, հրետանիզ): Ազովյան արշավանքի սկզբին Պետր I-ը թնդանոթաձիգի

կոչում ուներ, ավարտից հետո թեև կապիտանի կոչում շնորհեցին. բայց «Բոմբարդիր»-ը մնաց միակը մերձավորների հրամար:

Էջ 205 —...**սրբազնագույն կիր...**— տիտղոս. որն օգտագործում էին միայն Ռուսիայում, համապատասխանում է «տյար»-ին: Այսպես, տարեգրություններում Վսեվոլոդի որդուն կոչում են Կիր-Միխաիլ:

Էջ 206 —...**կապուցին էր հագնում...**— (իտ. cappuccio-ից՝ կապյուշոն, կնգուղ), 1525թ. Իտալիայում հիմնադրված կաթոլիկ վանականների միաբանություն, Ֆրանցիսկյան միաբանության ճյուղը. որն ինքնուրույն դարձավ 1619 թվականից: Կապուցինը տվյալ միաբանության անդամ վանականն է:

Էջ 207 —...**յոթ կարբասների մեջ...**— (հուն. karabos՝ նավ) բեռնատար ոչ մեծ թիանավ կամ առագաստանավ:

...**բարկասներն էին լողում...**— (հոլ. barkas) նավի վրայի ամենամեծ նավակը (14-22 թիանի), նաև՝ բեռնատար գետանավի տեսակ:

Էջ 215— **առաջին կոմերցիենռատը...**— (գերմ. Kommerzienrat) առևտրական խորհրդական:

Էջ 228 —...**Աղավնագրքում է գրված...**— Голубиный կոչվող գրքերին ժողովուրդը голубиный (Աղավնագիրք) էր ասում, սուրբ հոգու խորհրդանիշ աղավնին նկատի ունենալով: Բովանդակել են աշխարհի ընտեղծման պարզունակ մեկնություններ, խորհուրդներ, առասպելներ, ասքեր, երգեր, դարմանման միջոցներ, կանխանշաններ և այլն:

Էջ 232 —...**կողոպտեցին բոլոր դեհուսները...**— երեք սրբապատկեր՝ Ամենափրկչի, Աստվածածնի և Նախակարապետի դիմանկարները, որոնք սովորաբար միասին էին դրվում:

Էջ 234 —...**Գոստոմիպի ժամանակները չեն...**— նովգորոդյան սլավեն-ների առասպելական առաջնորդը, առաջին իշխանը (IXդ. առաջին կես):

Էջ 241 —...**պղիտես ու պարել թող սովորեցնի...**— այստեղ՝ բարեկիրթ վարվեցողություն. պահված.:

Էջ 247 —...**ռեդուտների հնգանկյունները...**— (ֆր. redoute) ինքնուրույն դաշտապանության ի վիճակի դաշտային ռազմական ամրություն, որը կառուցվում էր ուղղանկյուն կամ բազմանկյուն (XVIդ. մինչև XXդ. սկիզբը) Ամրացված դիրքերի հենակետերն էին ռեդուտները:

...**ապրոշները կփորենք...**— (ֆր. approches) ամրոցների պաշարման ժամանակ խրամատների միջև հաղորդակցության ճանապարհներ: XIX դարի սկզբին դուրս եկավ գործածությունից:

Էջ 248— ...**մարկիտանտ-աղջիկներ չունե՞ս...**— (գերմ. Marketender) մանր առևտրականներ, փերեզակներ, որոնք ուղեկցում էին զորքերին արշավների ժամանակ: XVIIIդ. նրանց իրավունքները սահմանափակվեցին կանոնագրքով, իսկ XXդ. սկզբին այլևս գոյություն չունեին:

Էջ 262 —...**չորս բրանդեր...**— (գերմ. Brander) վառելանյութով ու պայթուցիկով բեռնված նավ. որը վառում և բռնու ուղղությամբ կամ հոսանքով ուղղում էին հակառակորդի նավերի վրա:

Էջ 265 —...**Ֆորտիֆիկացիա, նավաշինություն և...**— (լատ. fortificatio՝ ամրություն) ռազմա-ինժեներական գիտության ճյուղ, որն ընդգրկում է պաշտպանական և այլ ամրությունների կառուցումը, ռազմական նպատակներով դրանց օգտագործումը:

Էջ 268 —...**մեկնեց Կուռլանդիա...**— (գերմ. Kurland) Կուրզեմի (Լատվիայի մի հատվածը) դպրոցական անվանումը մինչև 1917թ.:

...**Իվաշկա Խմելնիցկիմ ձիաղից կոտորվեցին...**— փոխաբերական առումով՝ հարբեցողությունն է այսպես կոչվում համարում:

Էջ 269 —... **Ֆրիդրիխը՝ բրանդենբուրգյան կուրֆյուրստը...**— (գերմ. Kurfürst) գերմանական իշխան (աշխարհիկ կամ հոգևոր), որն իրավունք ուներ մասնակցելու կայսեր ընտրությանը այսպես կոչված «Գերմանական ազգի հռոմեական սրբազան կայսրությունում», որը ձևականորեն գոյություն ունեցավ մինչև 1806թ.:

Էջ 270 —...**թուլացրեց շկոլոները...**— (հոլ. school) առագաստների դիրքը և բարձրությունը կարգավորող սահող ճոպան:

Էջ 278 —...**նամակագրություն ունեք Լայբնիցի հետ...**— Գ. Վ. Լայբնից (1646-1716թթ.), գերմանացի իդեալիստ փիլիսոփա, մաթեմատիկոս, ֆիզիկոս, լեզվաբան, Բրանդենբուրգյան գիտական ընկերության հիմնադիրը և նախագահը (1700թ.): Պյոտր I-ի խնդիրքով Ռուսաստանում կրթության և պետական կառավարման զարգացման նախագծերը կազմեց:

Էջ 283 —...**անգլիական էլ...**— (անգլ. ale) անգլիական բացգույն, թանձրը գարեջրի տեսակ:

Էջ 288 —...**փողոցներում պլեզիր է լինում...**— (ֆր. plaisir, հանույթ) այստեղ՝ հանելի, վայելելի իրադարձություն. զբոսանք:

Էջ 289 —...**հասակը հասնում յոթ ֆուտ...**— (անգլ. foot, բառացի՝ ոտնաթաթ) երկարության անգլիական միավոր, հավասար է 12 դյույմի՝ 0,3048 մ:

Էջ 292 —...**բակաուտով ու հացենիով...**— (հոլ. pokhout) արևադարձային, «երկաթյա» կոչվող ծառ, մինչև 15 մ բարձրությամբ: Ծառ. ամուր

փայտն օգտագործվում է նույնիսկ առանձնավոր անիվներ պատրաստելու համար։

Էջ 308 —... **Ուռած էր... պուդրոմանտելով...**— ծանկոց, որը գցում էին ուսերին դեմքը շպարելու և կեղծամը փոշիով օծելու ժամանակ։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Էջ 314 —...**գեմստվոյի խրճիթում...**— քաղաքներում, վոլոստներում տեղական ինքնավարության ընտրովի մարմին (գեմսկի սվագ, գեմսկի ատենավոր, ցելովալնիկ (տես)), ըստ Իվան Ահեղի ռեֆորմի։ XVIդ. վերջին և XVIIդ. սկզբին գոյություն ուներ վոյեվոդական կառավարչությանը զուգահեռ, փաստորեն ենթարկվելով վերջինիս։ Ինքնավարության այդ մարմինները 1721-1724 թթ. փոխարինվեցին մագիստրատներով և ռատուշաներով։

Էջ 319— **Ժուպանի համար**— Հիմնականում լեհական, ուկրաինական, տղամարդու և կնոջ մահուդե վերնազգեստ (մեծ մասամբ՝ մոխրագույն և երկնագույն)։ Ծալովի օձիքով կիսակափտան, կոճակներով կամ ճարմանդներով։

Էջ 325 —...**գերմանական ռոբաները...**— (գերմ. Robe) բղանցքով, երկարափեշ զգեստ։

Էջ 327 —...**բալալայկայով կուրտաժե էր անում...**— (ֆր. courtage) բառացի՝ վարձատրություն կատարածի համար. այստեղ՝ տարվածի դիմաց բալալայկա էր նվագում։

...**կուաֆյան կեռոսկրով է...**— (ֆր. coiffure. վարսավիր, սանրվածք), այստեղ՝ (աղավաղված) սանրվածք։

Էջ 332 —...**տուշինյան գողը չտվե՞ց...**— նկատի ունի Կեղծ Դմիտրի II-ին (?-1610 թթ.), որն անհայտ ծագման տեր ինքնակոչ էր, 1607 թ. ներկայանում էր որպես փրկված Դմիտրի ցար։ 1608-1609 թթ. Տուշինոյում ճամբար խփեց, որտեղից ապարդյուն փորձում էր գրավել Մոսկվան (այստեղից՝ «տուշինյան գող»)։ Լեհական ներխուժումից հետո ստիպված էր փախչել Կալուգա, ուր և սպանվեց։

Էջ 343 —...**իրենց բուրմիստրները...**— նախկինում՝ կալվածատիրոջ կողմից վոտչինայի գործերը հանձնարարված վերակացու (գյուղացիներից)։ 1699 թ. Պյոտր I-ը բուրգոմիստրներ կամ բուրմիստրներ ընտրելու կարգ սահմանեց քաղաքներում, որոնք գտնվում էին Բուրմիստրական պալատի ենթակայության տակ։

Էջ 353 —...**ճավատորմի շատուրենախտ...**— (հոլ. Schaut bij nacht, բառացի՝ նայիր գիշերով) Նախկինում ծովային կրոնական գեներալի ատենաֆ,

փոխծովակալին համապատասխան։ Պյոտր I-ը մտցրեց այդ աստիճանը և ինքն էլ կրում էր։ Նավատորմի առաջին նավի վրա պիտի գտնվեր շատուրենախտը և աչալուրջ լիներ հատկապես գիշերը։

Էջ 354 —...**շպանգոուտները բացվեցին...**— (հոլ. spanhout) նավի կողերը, որոնց վրա ամրացվում, «կարվում» է արտաքին իրանը, շերտը։

Էջ 357 —...**կոմանդորական ներքսպան...**— (ֆր. commandeur) հոգևորասպետական միաբանություններում բարձրագույն կոչում, նավատորմում՝ նավախմբի հրամանատար. յախտ-ակումբներում՝ նախագահ։

Էջ 360 —...**մոլդավական և վալախյան գոսպոդարները...**— XIV-XIX դդ. Մոլդավիայի և Վալախիայի կառավարիչների տիտղոսը, փաստորեն՝ թագավոր։

Էջ 361 —...**գալիոտ և... բրիգանտինա, սկամպավեյներ...**— տարբեր մեծության և հզորության, առագաստների տարբեր քանակությամբ կամ թիերի տարբեր քանակ ունեցող ռազմական նավեր, բեռնանավեր։

Էջ 370 —...**բարձրացնել ֆոր-բոմ-բրամսելները...**— բոլորը ծովային տերմիններ են, առագաստների շարքերի, կայմերի նկատմամբ դրանց ուղղվածության, նավերի մանևրելուն անհրաժեշտ դասավորվածության անվանումներ (հիմնականում հոլանդերեն և անգլերեն)։

...**Եվքսինյան Պոնտոսով...**— բառացի՝ հյուրընկալ ծով, Սև ծովի հին հունարեն անվանումը։

Էջ 385 —...**կունստկամերա ուղարկել...**— (գերմ. Kunstkammer՝ եզակի իրերի սենյակ, թանգարան) Նախկինում այսպես էին կոչվում պատմական, գեղարվեստական, բնագիտական, գիտական այլևայլ արժեքների հավաքածները, դրանց ցուցադրման, պահպանման տեղերը։

Էջ 386 —...**մագնատների դղյակներում...**— ֆեոդալական Լեհաստանում, նաև Հունգարիայում խոշոր հողատերերին, տոհմիկ և երևելի անձանց մագնատ էին կոչում։ Հետագայում՝ արդյունաբերական և ֆինանսական կապիտալի խոշոր ներկայացուցիչներ։

Էջ 390 —...**Սենայդերսի նկարն էր...**— Ֆ. Սնայդերս (1579-1657 թթ.) ֆլամանդական նկարիչ, գերազանցապես մոնումենտալ դեկորատիվ նատյուրմորտների, բնության հարստությունն ու փարթամությունը պատկերող կտավների հեղինակ։

Էջ 391 —...**էռլերը և բարոնները...**— (անգլ. earl) վաղ միջնադարյան տոհմիկ ազնվականություն Անգլիայում (ի տարբերություն հասարակ մարդկանց, որոնք կոչվում էին կէոլ)։ XI դ. «էռլ» տիտղոսը համապատասխանում է կոմսին։ Բարոնը միջնադարյան Եվրոպայում թագավորի անձնական վասալ։

ունկն էր համարվում, հետագայում ազնվական տիտղոս դարձավ, Պյոտր I-ը դա արմատավորեց Ռուսաստանում։

...**միաբանությունների գրոսմայստերներ**...— կամ **մեծ մագիստրոս**, կաթոլիկ հոգևորական-ասպետական միաբանությունը գլխավորող անձը, որն ընտրվում էր ցմահ՝ միաբանության կողմից, հաստատվում Հռոմի պապի ստորագրությամբ, և կնիքով։

...**Ստեֆան Բատորիի ժամանակներից**...— Ս. Բատորի (1533-1586 թթ.) Լեհաստանի թագավորն էր 1576 թ., զորավար 1558-1583 թթ. Լիվոնյան պատերազմի մասնակից, 1579 թ. հիմնեց Վիլնոյի ակադեմիան։

Էջ 398 —...**Պուֆֆենդորֆի պատմությունը**...— Ս. Պուֆֆենդորֆ (1632-1694 թթ.) գերմանացի իրավագետ, բնա-իրավագիտական ուսմունքի ներկայացուցիչ։ Ժամանակին տպագրված էր նրա «Պատմությունը»։

Էջ 401 —...**այնպիսի պուբսե էր**...— Իշխանուհի Օլգան թերևս ամտեղի օգտագործում է ֆրանս. «succes» (հաջողություն) բառը։

...**Մալբրուկի կինը**...— Ջոն Մալբորո, հետագայում կոմս և հերցոգ (1650-1722 թթ.), զորավար և պետական գործիչ։ Ամուսնությունը արքայադստեր (հետագայում թագուհի) Ֆրեյլինա Աննայի հետ շատ նպաստեց նրա առաջխաղացմանը։

Էջ 409 —...**Ռասին էր կարդում**...— Ժ. Ռասին (1639-1699 թթ.) ֆրանսիացի թատերագիր, կլասիցիզմի հայտնի ներկայացուցիչ։ Մի շարք ողբերգություններ («Ֆեդրա». «Միտրիդատ», «Անդրոմաքե», «Բրիտանիկ» և այլն) ներկայացնում են միահենճանության և նրա զոհերի բախումը, շոշափում բարոյական խնդիրներ։

...**գվարդիական սպայի կոլետ**...— (ֆր. collet՝ օձիք, լատ. collum՝ պարանոց) եվրոպական որոշ բանակներում ընդունված կարճ մունդիր, գերազանցապես սպիտակ մահուդից։

...**Մոլիերի բեմադրած ֆեերիայում**...— Ժ. Բ. Մոլիեր (1622-1673) ֆրանսիացի թատերագիր, դերասան, թատերական գործիչ, բեմական արվեստի վերափոխիչ։ Ժողովրդական թատրոնի ավանդույթները զուգորդելով կլասիցիզմին, ստեղծեց սոցիալ-կենցաղային կատակերգության ժանրը, ծաղրի ենթարկելով ազնվականության, բուրժուազիայի դասային սահմանափակությունները («Քաղքենին ազնվական», «Ակամա ամուսնություն», «Տարտյուֆ», «Ժլատ մասպետը», «Դոն Ժուան» և այլն)։ Ֆեերիան (ֆր. feerié, fee-ից՝ կախարդուհի) բեմական ներկայացում է, որի ֆանտաստիկ տեսարանների համար օգտագործվում են զանազան էֆեկտներ։ Առաջացել է Իտալիայում, XVII դ.։

...**մի քանի պէերը**...— (ֆր. pair, անգլ. peer) Անգլիայում և Ֆրանսիայում բարձրագույն արիստոկրատիայի ներկայացուցիչների կոչում։ Ֆրանսիայում վերացվեց 1789 թ. հեղափոխության ժամանակ (վերականգնվեց 1814 թ., կրկին վերացվեց 1848 թ.)։ Պէռի կոչումը Անգլիայում իրավունք է տալիս լորդերի պալատի անդամ դառնալ։

Էջ 41(—...**Գորին մեծության կամեր-յունկերը**...— (գերմ. Kammer-junker) պալատական տտորին կոչում Գերմանիայի և ցարական Ռուսաստանի արքունիքներում։

...**գահաթերթի վերանայման մասին**...— (լատ. list civile) միապետական կարգերում այսպես է կոչվում գումարը, որն ըստ պետական բյուջեի նախատեսվում է գահակալ ընտանիքի ծախսերը հոգալու համար։

Էջ 412—...**և ոչ մի ֆարտինգ**...— (անգլ. farthing) անգլիական ամենամանր դրամը, $^1/_4$ պենսի։

Էջ 414 —...**կիսամաշ կացավեյկայով**...— (լեհ. kacabajka) կնոջ կարճ և արձակ կոֆտա, մորթեթոլոր կամ ներսը մորթուց։

Էջ 419 — ...**զինվորական արտիկուլները**...— (լատ. articulus՝ բաժին, հոդված) Պյոտր I-ի հրատարակած Զինվորական կանոնագիրքը։

Էջ 423 — ...**կտավե պատանքներ գցած**...— երկարափետ շապիկ (саван), որով երբեմն թաղում էին հանգուցյալներին։ Աղանդավորները աղոթատուն էին մտնում այդպիսի շապիկներով, ձմռանը՝ արտահագուստի վրայից։

Էջ 428 —...**Զեռյա-Մինեյան կկարդա**...— («ամենամյա ընթերցումներ») ուղղափառ եկեղեցու աղոթագիրք, որը համապատասխանում է «վարք սրբոց»-ին. յուրաքանչյուր սրբի մեծարման օրվա կարգով, ամսեամիս զետեղված են աղոթքներ, նկարագրություններ։

Էջ 436 — ...**ռատուշայի առաջ**...— (գերմ. Rathaus, լեհ. ratusz) Եվրոպայի, հետագայում նաև Ռուսաստանի քաղաքային ինքնավարության մարմին, ինչպես նաև շենքը, ուր տեղավորված էր տվյալ մարմինը։

Էջ 453 — ...**սեկտ խմեցնելով**...— եվրոպական մի շարք երկրներում ընդունված գինու տեսակ (թույլ)։

Էջ 461— ...**լապտերդակ հագած երաժիշտները**...— տղամարդու հրեական վերնահագուստ, սերթուկի մի տեսակը։

Էջ 463 — ...**ինչ բիգոս են մատուցել**...— մսով (մեծ մասամբ խոզի) և խմորով պատրաստված կերակուր։

Էջ 466 — ...**բուտսրոզը հագին**...— (գերմ. Bootsrock) տղամարդու կարճ, անթևք բանկոն, Ռուսաստանի մի քանի նահանգներում նաև կնոջ մգդակած, լայն, ճարմանդակապ վերնահագուստ։

...**մետաքսյա ֆուլյար**...— (ֆր. foulard) մետաքսյա փափուկ գործվածք, միագույն կամ տպանախշ, նաև՝ այդ գործվածքից կարված հագուստներ։

Էջ 467 —...**նեգլիժե են... հանդեպ**...— (ֆր. négligé. լատ. negligere՝ արհամարհել) այստեղ օգտագործված է այդ իմաստով։

Էջ 469 —...**հարկավոր է Ինգրիան...**— XII-XVIII դդ. Նևայի ափերին և Լադոգայի հարավ-արևմտյան տարածքներում ապրող իժորների երկիրը կոչվում էր նաև Ինգրիա: 1228 թ. Մեծ Նովգորոդի տիրույթն էր, 1478 թ. Ռուսական պետության մասը կազմեց: 1581 թ. Շվեդիան զավթեց այդ հողերը: 1702-1703 թթ. Պյոտր I-ը գրավեց այդ հողերը. 1708 թ. մտավ Պետերբուրգյան նահանգի մեջ: Կոչվել է նաև Ինգերմանլանդիա:

Էջ 471 — ...**երևելոյան զգեստով ֆամ դը կալիտե...**— (ֆր. femme de qualite) տոհմիկ տիկին, ազնվազարմ կին:

Էջ 473 —...**«ռաֆինե» սովորելու...**— (ֆր. raffiné) այստեղ՝ նրբակիրթ վարվեցողություն, շարժուձև, պահվածք:

Էջ 484 — ...**տա պրիմասին...**— (լատ. primas՝ առաջինը հանդիսացող) կաթոլիկ և անգլիական եկեղեցիներում գլխավորագույն եպիսկոպոսների պատվո տիտղոսը:

Էջ 484— ...**բագինեանների իրար զարկելով...**— միջնադարյան Եվրոպայի բանակներում գործածվող սվինի տեսակ, որը պահվում էր հրացանից առանձին, ամրացվում հարկ եղած դեպքում:

Էջ 491 — ...**բոտվինյա կուտեմ...**— բազուկի փրերից (ботва) կվասով եփած սառը ապուր, մեջը գցում են նաև սոխ, թթու վարունգ. մանրած ձուկ:

Էջ 496— ...**չուխոն էին բռնում...**— մինչհեղափոխական շրջանում էստոնացիներին, ինչպես նաև Պետերբուրգի մերձակա տարածքներում ապրող կարելո-ֆիննական ազգաբնակչությանը կոչում էին չուխոններ:

Էջ 501 — ...**ուղղված լյունետներով, ռեդաններով...**— (ֆր. lunette, բառացի՝ փոսիկ) թիկունքից բաց, դիմացից խանդակով, եզրերից հողապատնեշով ռազմական ամրություն: Ռեդանը (ֆր. redan) հակառակորդին սուր անկյունով նայող. դաշտային ժամանակավոր ռազմական ամրություն է:

Էջ 514 — ...**կանգնեցնեն ռետրանշեմենտներին...**— պաշտպանական ներքին շերտ, որը կառուցվում էր գլխավոր պատնեշին զուգահեռ: Կրակի նշանառությունն այստեղից կարող էր ուղղված լինել միայն գլխավոր պատնեշին, հակառակորդի գրոհով բացված ճեղքվածքը վնասազերծելու համար:

Էջ 523 —...**ժենեռոզ պայմաններ...**— (ֆր. généreuse) այստեղ՝ օգտավետ, ձեռնտու պայմաններ:

Էջ 532 — ...**լայնաշուրթ ենդովաներ...**— հին ռուսական փայտյա կամ մետաղյա, նավականման, զարդարված ու դրվագված սափոր, որն օգտագործում էին խնջույքների ժամանակ որպես խմիչքի աման:

Էջ 534— ...**Էկատերինայի ներքնահարկերի ասկին...**— Մադրիդին մերձակա բնակավայր, իսպանական թագավորների նստավայրը. կառուցված Ֆիլիպ II-ի համար (XVI դ.):

Էջ 539 —...**շտիկ-յունկեր Գոտշլիխը...**— XVII-XVIII դդ. սպայական կոչեր աստիճան հրետանու զորքերում, հետևակում՝ համապատասխան պրապորշչիկին:

Էջ 566 — ...**գրավեցին նավերն աբորդաժով...**— (ֆր. abordage) մինչև XIX դարը թիանավերով ու առագաստանավերով մարտ մղելու եղանակ, երբ գրոհող նավը կեռերով բանտում էր նավը, ապա կամրջակներով անցնում էր հակառակորդի նավը՝ ձեռնամարտ մղելու:

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Էջ 574— ...**«Հնոցային գործողություն» պիտի ներկայացնեք...**— վառվող հնոցից երեք ղեռահասների փրկվելու՝ աստվածաշնչյան պուծեն ներկայացնող ծիսական թեմադրում:

Էջ 581 — ...**ջրի վրա բռներ կառուցել...**— (հոլ. boon՝ գերան, պատնեշ) լողանների, գերանների, ցանցերից. կախվող քարերից լողացող պատնեշ՝ ծովախորշերը և նավահանգիստները հակառակորդի նավերից պաշտպանելու համար:

...**ֆրեգատներ, շնյավներ...** և այլն— (տես 361 էջի ծան.)

Էջ 586 — ...**նաշել էր Զեմսկի Սոբորի հետ...**— դասային-ներկայացուցչական հաստատություն Ռուսաստանում, XVI դ. երկրորդ կեսից մինչև XVII դ. վերջը: Զեմսկի Սոբորում քննարկվում էին համապետական նշանակություն ունեցող կարևորագույն հարցեր:

Էջ 590 —...**Նայադաս արմունկով կոթնել էր...**— (հուն. naias) հունահռոմեական դիցաբանության մեջ՝ ջրահարսեր, ստորաբաժանվում էին ծովերի, գետերի, աղբյուրների, լճերի ջրահարսերի:

Էջ 591 —...—**Դարպոդիզ,— ասաց...**— այստեղ՝ դրախտ:

Էջ 594 — ...**նստած էին որպես կոմիսարներ...**— ցարական Ռուսաստանում բանակային պարենամթերքի, նաև հանդերձանքի բաշխումը հսկող աստիճանավոր, վերակացու:

Էջ 602 — ...**կիվեր-շկոտի վրա...**— առաջնակարգի շեղ, եռանկյունի առագաստի պարանասարքը կարգավորող հարմարանք:

Էջ 606 —...**Բենվենուտո Չելլինիի աշխատանքը...**— Բ. Չելլինի (1500-1571 թթ.) իտալացի քանդակագործ, ոսկերիչ-ակնագործ, գրող: Բարձրանաշակ, եզակի սրվեստով պատրաստված բազմաթիվ զարդերի, ամանեղենի, պերճանքի առարկաների անգերազանց վարպետ: Հայտնի են նաև նրա հուշագրությունները:

Էջ 610 —...**հայդամակների ծայր առած շարժման մասին...**— աջափնյա Ուկրաինայում ազգային-ազատագրական պայքարի մասնակիցներ:

...**վիրավորական ունիվերսալներ էր գրում...**— ֆեոդալական Լեհաստանում այսպես էին կոչվում մանիֆեստի բնույթ ունեցող փաստաթղթերը:

Էջ 617 — ...**կես կվարտա պարունակող...**— (լատ. quarta, քառորդ) եվրոպական երկրներում 1 կվարտան հավասար է գալոնի, կամ 2 պինտի, այսինքն հեղուկը հավասար է 0,9463 լ-ի: Լեհական կվարտան հավասար է 1 լիտրի:

Էջ 619 — ...**սիկուրսին ապասել պետք չէ...**— ֆեոդալական Եվրոպայի ռազմական գիտության մեջ՝ օժանդակ զորամիավորումների անհրաժեշտի հայտնվելը ռազմական թատերաբեմում:

Էջ 626 — ...**սիմպատիա և այլանս անել...**— այստեղ՝ հանդուրժել ու չգժտվել:

Էջ 627 —...**բոմ-կլիվերն է բարձրացնում... և այլն...**— առագաստների կամ դրանց խմբերի անվանումներ:

Էջ 636 — ...**Իգնատի Լոյոլայի ժամանակներից...**— Ի. Լոյոլա (1491-1556 թթ.) ճիզվիտների միաբանության հիմնադիր, որը մշակել է միաբանության կազմակերպական և բարոյական սկզբունքները:

Էջ 637 — ...**ծննդյամբ լինելով Պյաստ...**— (լեհ. Piasty) լեհ իշխանների (960-1025 թթ.) և թագավորների (1025-1079թթ. 1295-1370թթ. ընդմիջումներով) առաջին դինաստիան, որը հիմնել է առասպելական անվագործ գեղջուկ Պյաստը:

Էջ 638 — ...**կոնունգ Կանուտի որդիները...**— (նորվ. konungr) սկանդինավյան ժողովուրդների մոտ՝ զորապետ, հետագայում Շվեդիայում, Նորվեգիայում և Դանիայում, պետություններ երևան գալուց հետո, թագավոր:

Էջ 645 — ...**Ապոլեյի ռազմավորներն էր կարդացել...**— հին հռոմեական գրող, սոփեստ (մոտ 24թ. մ. թ.-?), հայտնի են նրա «Կերպափոխություններ XI գրքով» («Ոսկյա ավանակը») արկածային-հեքիաթանման վեպը՝ էրոտիկ մոտիվներով. կենցաղային երգիծանքի, միստիկ տարրերով, նաև «Ապոլոգիան» (ճառ ի սեփական պաշտպանություն, ընդդեմ մոգության դեմ մեղադրանքի):

Էջ 650 — ...**քրագա ենք եփում...**— հին ռուսական թույլ ոգելից խմիչք:

Էջ 665— ...**բանի՞ ամանոտ ես ունեցել...**— (ֆր. amant) ապօրինի ամուսին, սիրեկան:

Էջ 666 — ...**փախել էր պան Սապեգայից...**— XVII դ. իշխանական տոհմ Լեհաստանում: Նկատի ունի Կազիմիր Լև Սապեգային (1609-1656 թթ.) ռուս-լեհական 1654-1667 թթ. պատերազմի ակտիվ մասնակից:

Էջ 676 —...**ռավելինները աստղաձև խրված էին...**— (ֆր. ravelin) ռազմաճարտարապետական անկյունաձև կառույց, որ սովորաբար լինում էր ամրոցի խանդակի առաջ, բաստիոնների միջև ընկած տարածություններում:

Էջ 681 — ...**ֆալշբորտին կոթնած...**— (գերմ. Falschbord) նավակողի մեռաղաշերտի շարունակությունը վերին տախտակամածի վրա՝ տախտակամածը պաշտպանելու նպատակով:

Էջ 699 —...**խորունժին ընթացքից ցատկեց...**— (լեհ. chorazy) նախնական իմաստով՝ դրոշակակիր, լեհական զորքում հետագայում դարձավ զինվորական աստիճան, ռուսական բանակի կազակական զորամիավորումներում՝ սպայական ստորին աստիճան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գիրք առաջին 5

Գիրք երկրորդ 313

Գիրք երրորդ 563

Մանրամասնություններ 702

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ալեքսեյ Տոլստոյ
ՊԵՏՐ ԱՌԱՋԻՆ
Վեպ

Алексей Толстой
ПЕТР ПЕРВЫЙ
Роман
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1987

Խմբագիր՝ Գ. Գ. Խաչատրյան
Նկարիչ՝ Ռ. Զուլֆակյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերատեսող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

ИБ 5844

Հանձնված է շարվածքի 20. 05. 87 թ.։ Ստորագրված է տպագրության 4. 12. 87 թ.։ Ֆորմատ 84×108¹/₃₂։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ Նորք։ Տպագրություն՝ բարձր, 37,8 պայմ. տպ. մամ., 38,11 պայմ. ներկ. թերթ. 47,1 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 50000։ Պատվեր՝ 1610։ Գինը՝ 4 ռ. 10 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն. Երևան— 9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван—9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալավերդյան 65։

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-10, ул. Алавердяна, 65.